Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

А.П. ЧЕХОВ

Избранные произведения

РАССКАЗЫ, ПОВЕСТИ, ПЬЕСЫ

ЕРЕВАН
«СОВЕТАКАН ГРОХ» 1987

Է.Պ. ՉԵԽՈՎ

Ընտիր գրքեր

ՊՈՒՏՎԱԾՔՆԵՐ, ՎԵՊԵՐԵՐ, ՊԻԵՍՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1987

ԳՄԴ 84Ռ1
Չ 344

Կազմեց
ԴՈՐԱ ԵՍԱՅԱՆԸ

Չեխով Ա. Պ.
Չ 344 Ընտիր երկեր (Անտոն Պավլովիչ Չեխով; Եր.։ Սովետ. գրող, 1987.— 864 էջ.— (Ռուս դաս. գ-րան).
ISBN 5-280-00000-0
Ժողովածուն ընդգրկում է Ա. Պ. Չեխովի պատմվածքները, վիպակները և «Երկք քույր» ու «Բալի այգին» պիեսները։

Չ 4702010100(137) / 705(01) 87 87 «3» ԳՄԴ 84Ռ1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1987

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՉԻՆՈՎՆԻԿԻ ՄԱՀԸ

Մի հիանալի երեկո, ո՛չ պակաս հիանալի էկզեկուտոր Իվան Դմիտրիչ Չերվյակովը նստած էր պարտերի երկրորդ կարգում և հեռադիտակով դիտում էր «Կորնևվիլյան զանգերը»։ Նա դիտում և գերագույն երանություն էր զգում։ Բայց հանկարծ... Պատմվածքներում այդ «բայց հանկարծը» հաճախ է պատահում։ Հեղինակները իրավացի են. կյանքն այնպե՞ս լի է անակնկալներով։ Բայց հանկարծ նրա դեմքը կնճռոտվեց, աչքերը չռվեցին, շնչառությունը կանգ առավ... Նա հեռադիտակը հեռացրեց աչքերից, կռացավ ու... ափչիհա՜։ Փռշտաց, ինչպես տեսնում եք։ Փռշտալ ոչ ոքի և ոչ մի տեղ չի արգելվում։ Փռշտում են թե՛ մուժիկները, թե՛ ոստիկանապետերը և թե՛ երբեմն էլ նույնիսկ գաղտնի խորհրդականները։ Բոլորն էլ փռշտում են։ Չերվյակովը ոչ մի անհարմարություն չզգաց, թաշկինակով սրբեց թքի ցայտքերը և իբրև քաղաքավարի մարդ՝ իր շուրջը նայեց. արդյո՞ք իր փռշտոցով մեկնումեկին չանհանգստացրեց։ Բայց այստեղ նա արդեն անհարմարություն զգաց։ Նա տեսավ, որ իր առջևը պարտերի առաջին շարքում նստած մի ծերուկ ձեռնոցով խնամքով սրբում է իր ճաղատն ու պարանոցը և ինչ-որ բան է քրթմնջում։ Չերվյակովը ճանաչեց ծերուկին. այդ քաղաքացիական գեներալ Բրիզժալովն էր, որ ծառայում էր հաղորդակցության ճանապարհների գերատեսչությունում։

«Թուքս ցայտել է նրա վրա,— մտածեց Չերվյակովը։— Իմ պետը չէ, ուրիշի պետ է, բայց, այնուամենայնիվ, անհարմար է։ Ներողություն պետք է խնդրել»։

Չերվյակովը հաղաց, մարմինն առաջ մղեց ու շշնջաց գեներալի ականջին.

— Ներեցե՛ք, ձերդ գերազանցություն, իմ թուքը ցայտեց ձեր վրա... ինձնից անկախ։

— Ոչինչ, ոչինչ...

— Ներեցեք, ի սեր աստուծո։ Ես հո... ես չէի՞ ուզում։

— Ա՜խ, նստեցեք խնդրեմ։ Թողե՛ք լսենք։

Չերվյակովը շփոթվեց, հիմարաբար ժպտաց ու սկսեց բեմին նայել։ Նայում էր նա, բայց այլևս երանություն չէր զգում։ Անհանգստությունն սկսել էր տանջել նրան։ Ընդմիջումին նա մոտեցավ Բրիզժալովին, մի քիչ քայլեց նրա կողքից և, երկչոտությունը հաղթահարելով, մրմնջաց.

— Իմ թուքը ցայտեց ձեր վրա, ձերդ գերազանցություն... Ներեցե՛ք... Ախր ես... ոչ թե...

— Ա՜խ, բավական է... Ես արդեն մոռացել էի, իսկ դուք դարձյալ նույնն եք կրկնում,— ասաց գեներալը և անհամբերությամբ շարժեց ներքևի շրթունքը։

«Մոռացել է, իսկ աչքերում թաքցրած դժգոհություն կա,— մտածեց Չերվյակովը՝ կասկածամիտ հայացքներ գցելով գեներալի վրա։— Խոսել էլ չի ուզում։ Պետք է նրան բացատրել, որ ես բնավ չեմ ցանկացել... որ այդ՝ բնության օրենք է, ապա թե ոչ կկարծի, թե ես ցանկացել եմ թքել։ Եթե այժմ էլ չմտածի, հետո կմտածի...

Տուն գալով, Չերվյակովը պատմեց կնոջն իր անքաղաքավարության մասին։ Կինը, ինչպես Չերվյակովին թվաց, չափազանց թեթևամիտ վերաբերվեց կատարվածին. նա միայն վախեցավ, իսկ հետո, երբ իմացավ, որ Բրիզժալովը իր «սեփական» պետը չի, հանգստացավ։

— Բայց դու, այնուամենայնիվ, անցիր նրա մոտ, ներողություն խնդրիր,— ասաց կինը.— կկարծի, թե դու հասարակության մեջ քեզ պահել չգիտես։

— Բանն էլ հենց այդ է, է՞։ Ես ներողություն խնդրեցի, բայց նա մի տեսակ տարօրինակ... Ոչ մի կարգին բան չասաց։ Ասենք, խոսելու ժամանակ էլ չկար։

Հետևյալ օրը Չերվյակովը հագավ իր նոր վիցմունդիրը, մազերը մկրատով սաքքել տվեց ու գնաց Բրիզժալովի մոտ բացատրվելու... Մտնելով գեներալի ընդունարանը, նա այնտեղ տեսավ բազմաթիվ խնդրատուներ, իսկ խնդրատուների

մեջ նաև՝ գեներալին, որն արդեն սկսել էր դիմումներ ընդունումը։ Մի քանի խնդրատուների հարցուփորձ անելով, գեներալը հայացքը բարձրացրեց նաև Չերվյակովի վրա։

— Երեկ «Արկադիայում», եթե կհիշեք, ձերդ գերազանցություն,— սկսեց շարադրել էկզեկուտորը,— ես փոշտացի ու... անակնկալ կերպով թուքս ցայտեց... Ներ...

— Ի՞նչ դատարկ բան... Աստվա՜ծ գիտե՝ ինչ։ Դուք ի՞նչ եք ուզում,— դարձավ գեներալը հետևյալ խնդրատուին։

«Խոսել չի՞ ուզում,— մտածեց Չերվյակովը՝ դունատվելով.— ուրեմն բարկանում է... ո՜չ, այս այսպես թողնել չի կարելի... Ես նրան կբացատրեմ...»։

Երբ գեներալը վերջացրեց զրույցը վերջին խնդրատուի հետ և քայլերն ուղղեց դեպի խորքի սենյակները, Չերվյակովը քայլեց նրա հետևից ու մրմնջաց.

— Ձե՞րդ գերազանցություն։ Եթե ես հանդգնում եմ անհանգստացնել ձերդ գերազանցությանը, ապա, կարող եմ ասել, հատկապես զղջման զգացումից դրդված... Դիտավորյալ չի եղել, ինքնե՞րդ էլ կհաճեք իմանալ։

Գեներալը դեմքին տխուր տեսք տվեց ու ձեռքը թափահարեց։

— Է՜, դուք պարզապես ծաղրում եք, հարգելի պարոն,— ասաց նա, ներս գնալով ու դուռը ծածկելով։

«Այստեղ ի՞նչ ծաղր կա,— մտածեց Չերվյակովը։— Այստեղ բնա՜վ էլ ոչ մի ծաղր չկա։ Գեներա՜լ է, բայց չի կարողանում հասկանալ։ Որ այդպես է, ես ինչո՞ւ պետք է նորից ներողություն խնդրեմ այդ ֆանֆարոնից։ Գրո՞ղն իր հետ։ Նամակ կգրեմ իրեն, բայց ինքս չե՞մ գնա։ Աստվա՜ծ վկա, չեմ գնա»։

Այսպես էր մտածում Չերվյակովը տուն գնալիս։ Գեներալին նամակ նա չգրեց։ Մտածեց, մտածեց ու ոչ մի կերպ չկարողացավ այդ նամակը հորինել։ Ստիպված եղավ մյուս օրը գալ՝ անձամբ բացատրելու։

— Ես երեկ եկել էի ձերդ գերազանցությանն անհանգստացնելու,— մրմնջաց նա, երբ գեներալն աչքերի հարցական հայացքը նրա վրա բարձրացրեց.— ոչ թե ծաղրելու դիտավորությամբ, ինչպես դուք հաճեցիք ասել։ Ես ներողություն էի խնդրում այն բանի համար, որ փոշտալիս թուքս ցայտել էր... իսկ ծաղրել իմ մտքով էլ չէր անցել։ Մի՞թե ես կհամարձակ-

վեմ ծաղրել։ Եթե մենք էլ ծիծաղենք, ուրեմն այն ժամանակ նշանակում է էլ ոչ մի հարգանք դեպի պերսոնաները... չի մնա...

— Դո՜ւրս կորիր,— կապտելով ու դողալով, հանկարծ ծղրտաց գեներալը։

— Ինչ հրամայեցի՞ք,— շշնջյունով հարցրեց Չերվյակովը, սարսափից կարկամելով։

— Դո՜ւրս կորիր,— կրկնեց գեներալը, ոտքերը գետին զարկելով։

Չերվյակովի ներսում ինչ-որ բան կտրվեց։ Ոչինչ չտեսնելով, ոչինչ չլսելով, նա ետ-ետ գնաց դեպի դուռը, փողոց դուրս եկավ ու, հազիվհազ քարշ գալով, քայլեց... Մեքենայաբար տուն գալով, առանց վիցմունդիրը հանելու, նա պառկեց բազմոցի վրա ու... մեռավ։

1883

ՀԱՍՏԼԻԿՆ ՈՒ ՆԻՀԱՐԸ

Նիկոլաևյան երկաթգծի կայարանում հանդիպեցին երկու ծանոթ մարդիկ՝ մեկը հաստլիկ, մյուսը նիհար։ Հաստլիկը հենց նոր էր ճաշել կայարանում, և նրա յուղոտ շրթունքները հասած բալի պես փայլում էին։ Նրանից գալիս էր խերեսի ու ֆլյոր-դ՝ օրանժի բուրմունք։ Իսկ նիհարը նոր էր դուրս եկել վագոնից ու ծանրաբեռնված էր ճամպրուկներով, կապոցներով ու տուփերով։ Նրանից գալիս էր խոզի ապուխտի ու սուրճի հոտ։ Նրա ետևում կանգնած էին երկար կզակով մի նիհար կին՝ նրա կինը, և աչքի մեկը կկոցած մի բարձրահասակ գիմնազիստ՝ տղան։

— Գորֆիրի՜,— բացականչեց հաստլիկը, նկատելով նիհարին։— Այդ դո՞ւ ես։ Սիրելի՜ս։ Ինչքա՞ն ժամանակ է, որ միմյանց չենք տեսել։

— Աստված իմ,— զարմացավ նիհարը։— Մի՜շտ։ Մանկությանս ընկե՜ր։ Որտեղի՞ց հայտնվեցիր։

Բարեկամները երեք անգամ համբուրվեցին և իրար վրա ուղղեցին արցունքով լի աչքերը։ Երկուսին էլ համակել էր հաճելի զարմանքը։

— Սիրելիս,— համբուրվելուց հետո սկսեց նիհարը։— Բոլորովին չէի սպասում։ Ա՜յ սյուրպրիզ։ Ապա մի լավ նայիր ինձ։ Նույն սիրուն տղան ես, ինչպես որ առաջ։ Նույն պաշտելին ու կոկիկ հագնվելու սիրահարը։ Տե՜ր իմ աստված։ Դե, ինչպե՞ս ես։ Հարո՞ստ ես։ Ամուսնացե՞լ ես։ Ես, ինչպես տեսնում ես, արդեն ամուսնացել եմ... Ահա սա կինս է՝ Լուիզան, ծագումով Վանցենբախ... լութերական... Իսկ սա տղաս է՝ Նաֆանաիլը, III դասարանի աշակերտ։ Սա, Նաֆանաիլ, մանկությանս ընկերն է։ Գիմնազիայում միասին էինք սովորում։

Նաֆանաիլը մի պահ մտածեց ու հանեց գլխարկը։

— Գիմնազիայում միասին էինք սովորում,— շարունակեց նիհարը։— Հիշո՞ւմ ես, թե ինչպես էին քեզ ծաղրում։ Քեզ անվանում էին Հերոստրատ այն բանի համար, որ դու պետական գիրքը ծխախոտով այրեցիր, իսկ ինձ՝ էֆիալտ, որովհետև սիրում էի շարախոսել։ Հը՜, հը՜... Երեխաներ էինք։ Մի՜ վախենա, Նաֆանյա, մոտեցիր նրան... Իսկ սա իմ կինն է, ծագումով Վանցենբախ... լութերական...

Նաֆանաիլը փոքր-ինչ խորհեց ու թաքնվեց հոր ետևում։

— Դե, դու ո՞նց ես ապրում, սիրելիս,— հարցրեց հաստլիկը, հիացմունքով նայելով ընկերոջը։— Ծառայո՞ւմ ես որևէ տեղ։ Աստիճան ունե՞ս։

— Ծառայում եմ, սիրելի բարեկամս։ Երկրորդ տարին է, որ կոլեգիական ասեսոր եմ, Ստանիսլավի շքանշան ունեմ։ Ռոճիկս անբավարար է... դե՛, ինչ արած։ Կինս երաժշտության դասեր է տալիս, ես մասնավոր կերպով փայտից ծխախոտի տուփեր եմ պատրաստում։ Հիանալի տուփեր։ Հատը մեկ ռուբլով եմ վաճառում։ Եթե որևէ մեկը վերցնում է տասը հատ կամ ավելի, նրան, երևակայիր, զեղչ եմ անում։ Մի կերպ յոլա ենք գնում։ Ծառայում էի, ուրեմն, դեպարտամենտում, իսկ այժմ փոխադրել են այստեղ դիվանապետի պաշտոնով, նույն գերատեսչության գծով... Այստեղ պետք է ծառայեմ։ Իսկ դու ինչպե՞ս ես։ Հավանաբար, արդեն պետական խորհրդական ես։ Հը՞։

— Ո՜չ, սիրելիս, ավելի վեր բարձրացիր,— ասաց հաստլիկը։— Ես արդեն գաղտնի խորհրդականի աստիճան ունեմ... Երկու աստղով եմ պարգևատրվել։

Նիհարը հանկարծ գունատվեց, քարացավ, բայց շատ չանցած նրա դեմքը խսպառ ծռմռվեց ընդարձակ ժպիտով. թվում էր, թե նրա դեմքից ու աչքերից կայծեր թափվեցին։ Նա կրծկրվեց, կորացավ, դարձավ նեղ... Նրա ճամպրուկները, կապոց-

ներն ու տուփերը կուչ եկան, խորշոմեցին... Կնոջ երկար կզակն ավելի երկար դարձավ. Նաֆանաիլը դիք ձգվեց ու կոճկեց մուն-դիքի բոլոր կոճակները...

— Ես, ձերդ գերազանցություն... Շա՜տ ուրախ եմ։ Մանկության, այսպես ասած, ընկերս ու հանկարծ դարձել եք մեծ իշխանավոր։ Հի՜-հի՜...

— Դե, վերջ տուր,— խոժոռվեց հասալիկը։— Ո՞ւմ է պետք այդ տոնը։ Մենք մանկության ընկերներ ենք և այդպիսի աստիճանավորության կարիք չկա։

— Ներեցեք... Ինչպե՞ս կարելի է...— քծնանքով ծիծաղեց նիհարը՝ ավելի ևս կծկվելով։— Ձերդ գերազանցության բարեհաճ ուշադրությունը... մի տեսակ կենարար թարմություն է... Ահա սա, ձերդ գերազանցություն, իմ որդի Նաֆանաիլն է... Կինս՝ Լուիզան, լութերական, որոշ տեսակետով...

Հաստլիկը ցանկացավ հակաճառել, սակայն նիհարի գեմքին դրոշմված այնքան ակնածանք, քաղցրություն և հարգանաց թթվություն կար, որ գաղանի խորհրդականի սիրտը խառնեց։ Նա իր գեմքը շուռ տվեց նիհարից ու հրաժեշտի համար մեկնեց ձեռքը։

Նիհարը սեղմեց նրա երեք մատը, խոնարհվեց ամբողջ մարմնով ու չինացու պես ծիծաղեց՝ «հի՜-հի՜-հի՜»։ Կինը ժպտաց։ Նաֆանաիլը մեծարանքով քստքստացրեց ոտքերը ու ձեռքից վայր գցեց գլխարկը։ Նրանց երեքին էլ համակել էր հաճելի զարմանքը։

1883

ԽԻՐՈՒՐԳԻԱ

Զեմստվոյի հիվանդանոց։ Բժշկի բացակայության պատճառով, որ գնացել է ամուսնանալու, հիվանդներին ընդունում է բուժակ Կուրյատինը՝ քառասունին մոտ մի հաստ մարդ, մաշված չեսունչա բաճկոնակով և տրիկոյի պատառոտված անդրավարտիքով։ Դեմքին՝ պարտքի գիտակցության ու հաճելիության արտահայտություն։ Ձախ ձեռքի ցուցամատի և միջամատի արանքում՝ սիգարետ, որ գարշահոտություն է տարածում։

Ընդունարան է մտնում դպիր Վոնմիգլասովը՝ դարչնագույն փարաջա հագած և մեջքին կաշվե լայն գոտի կապած բարձրահասակ, ամրակազմ մի ծերուկ։ Աջ աչքի վրա հաստ կա և աչքը կիսախուփ է, քթի վրա խալ կա, որը հեռվից նման է մեծ ճանճի։ Մի ակնթարթ դպիրը հայացքով սրբապատկեր է որոնում և, սրբապատկեր չգտնելով, երեսը խաչակնքում է՝ կարբոլյան լուծույթի մեծ շշին նայելով, ապա կարմիր թաշկինակի միջից նշխար է հանում և, գլուխ տալով, դնում բուժակի առաջ։

— Ա-ա-ա՜... Հարգա՜նքս ձեզ,— հորանջում է բուժակը։— Ի՞նչ առիթով եք շնորհ բերել։

— Ձեր կիրակին շնորհավոր, Սերգեյ Կուզմի՜չ... Նկել եմ հրամանոցդ մոտ... Շշմարիտ և ուղիղ է ասված ռազմոստրանում, հեռու ձեզնից. «Ջրմպելի իմ արտասվոք խառնեցի»։ Այս երկու օրս պառավիս հետ նստեցի թեյ խմելու ու ո՜չ ասածով խնդալ, ո՜չ հացի ու թացի ձեռք տալ,— թեկուզ պառկիր ու մեռիր... Կում եմ անում մի պուտիկ— ու էլ վրաս հալ չի՜ մնում։ Իսկ բացի նրանից, ինչ ատամիս մեջն է, այս ամբողջ կողմն էլ... Ցավո՜ւմ է հա՜ ցավում, ցավո՜ւմ է հա՜ ցավում։ Ցավն ականջիս է տալիս, հեռու ձեզնից, ասես մեջը մեխ կամ թե մի ուրիշ բան լինի. խրո՜ւմ է հա՜ խրում, խրո՜ւմ է հա՜ խրում։ Անօրինեցաք և հանցեաք[1]... Ոչ ապաքեն մեղոք ամոթալյոք զոգիս ապականեցի և հեղգությամբ զկյանքս իմ անցուցի[2]... Մեղքերիս համար է, Սերգեյ Կուզմի՜չ, մեղքերի՜ս համար։ Հայր ավագերեցը պատարագից հետո հանդիմանեց ինձ. «Ծանրալեզու ես դարձել դու, Եֆի՜մ, ու գնդղնգան։ Երգում ես, ու երգիցդ մարդ բան չի հասկանում»։ Բայց, ինքներդ դատեցեք, էլ ի՞նչ երգեցողություն, երբ բերանդ բաց անել չես կարող, ամբողջովին ուռել է, հեռու ձեզնից, ու գիշերը չեմ քնել...

— Ըմ-հա՜... Նստեցե՛ք... Բերաններդ բաց արե՛ք։

Վոնմիգլասովը նստում է և բերանը բաց անում։

Կուրյատինը խոժոռվում է, նայում բերանի մեջ և ժամանակից ու ծխախոտից դեղնած ատամների մեջ նկատում է լայն ու խոր խոռոչով զարդարված մի ատամ։

— Հայր սարկավագը պատվիրեց արաղով ծովաբողկ դնել, չօգնեց։ Գլիկերիա Անիսիմովնան, ասված իրան առողջություն

1 Ես մեղք գործեցի և անօրինություն արեցի։

2 Չէ՞ որ ամոթալի մեղքերով հոգիս աղտոտեցի և ծուլությամբ կյանքս անցկացրի։

տա, Աֆոնա սարից բերած թել տվեց ձեռքիս կապելու, պատվիրեց ատամս տաք կաթով ողողել, բայց ես, խոստովանք լինի, թելը, ճիշտ է, կապեցի, բայց կաթի վերաբերյալ պատվերը չկատարեցի. աստծուց վախեցա, պաս է...

— Նախապաշարմունք է... (դադար)։ Այդ ատամը պետք է հանել, Եֆիմ Միխեի՛չ։

— Դուք ավելի լավ գիտեք, Սերգեյ Կուզմի՛չ։ Դրա համար էլ դուք ուսում եք առել, որ այդ բանը հասկանաք ինչպես հարկն է, թե ի՛նչը պետք է քաշել ու ի՛նչը կաթիլներով կամ մի ուրիշ բանով... Դրա համար էլ դուք, բարերարներդ, կարգված եք, աստված ձեզ առողջություն տա, որպեսզի մենք ձեզ համար զոր ու գիշեր, հարազատ հայրե՛ր... մինչև մեր կյանքի գերեզմանը...

— Դատարկ բան է...— համեստություն է անում բուժակը՝ մոտենալով պահարանին և գործիքներ փնտրելով։— Խիրուրգիան դատարկ բան է... Այստեղ ամեն ինչ կախված է վարժությունից, ամուր ձեռք ունենալուց... մի թո՛ւ արեցիր, ու պատրաստ է... Այս օրերս, ահա, ինչպես հիմա դուք, կառքով հիվանդանոց եկավ կալվածատեր Ալեքսանդր Իվանիչ Եգիպետսկին... Նրա էլ ատամն էր... Կրթված մարդ է. ամեն ինչ հարցուփորձ արեց, ամեն բանի մեջ թափանցեց, թե ինչ է ու ինչպես։ Սեղմեց ձեռքս, անուն-հորանունով մեծարեց... Պետերբուրգում յոթ տարի է ապրել, բոլոր պրոֆեսորների տաքն ու հովն իմացել... Մենք այստեղ նրա հետ երկար էնիք արեցինք... Քրիստոս-աստծու անունով աղաչեց՝ քաշեք էդ իքը, Սերգեյ Կուզմի՛չ։ Ինչո՞ւ չքաշել։ Քաշել կարելի է։ Միայն թե բանը հարկավոր է հասկանալ, առանց հասկանալու չի կարելի... Տարբեր ատամներ են լինում։ Մեկը աքցանով ես քաշում, մյուսը՝ այծոտնուկով, երրորդը՝ բացհանիչով... Ում ինչպես հարմար կլինի։

Բուժակը վերցնում է այծոտնուկը, մի րոպե հարցական նայում վրան, հետո ցած է դնում ու վերցնում է աքցանը։

— Դե՛, բերաններդ լայն բացեք...— ասում է նա՝ աքցանը ձեռքին դպիրին մոտենալով։— Մենք այն իսկույն... էնիք կանենք... մի թո՛ւ արեցիր, ու պատրաստ է... Միայն պետք է լինդը ճեղքել... ուղղահայաց առանցքի գծով տրակցիա կատարել... ու վերջ... (ճեղքում է լինդը) ու վերջ...

— Բարերարներն եք դուք մեր... Մեր, հիմարներիս, մըտքովն էլ չէր անցնի, բայց ձեր միտքը տերն ինքը լուսավորել է։

— Դատողություն մի՛ արեք, երբ ձեր բերանը բաց է... Սրա քաշելը հեշտ է, բայց պատահում է, որ միայն արմատներն են լինում... Այս, մի թո՛ւ արեցիր, ու պատրաստ է։ (Աքցանն ատամին բռնացնելով)։ Կացե՛ք, մի՛ ձգվրտվեք... Անշարժ նստեցե՛ք... Մի ակնթարթում... (տրակցիա է կատարում)։ Գլխավորը խորքից բռնեցնելն է (քաշում է)... որպեսզի պսակը չկոտրվի։

— Մե՛ր հայրերը... Ամենասուրբ մայր աստվածածի՛ն... Վվվ...

— Մի... մի... ը՛ը... Ձեռքերով մի՛ բռնեք։ Ձեռքերս բաց թողե՛ք. (քաշում է)։ Իսկո՛ւյն... Ահա՛, ահա՛... Ախր հեշտ բան չի, է...

— Բարերար... հայրե՛ր... (բղավում է)։ Ո՞վ հրեշտակներ։ Օ- հո՛-հո՛... Դե՛, հանի՛ր, է՛, հանի՛ր։ Ի՞նչ ես հինգ տարի ձգում։

— Ախր, գիտես ինչ բան է, խիրուրգիա է... Մեկ անգամից չի կարելի... Ահա՛, ահա՛...

Վոնմիգլասովը ծնկները բարձրացնում է մինչև արմունկները, շարժում է մատները, չոռում աչքերը, ընդհատ-ընդհատ շնչում... Նրա կաս-կարմիր դեմքը քրտինքով է ծածկվում, աչքերում արցունքներ կան։ Կուրյատինը ֆսֆսացնում է, դոփդոփում դպիրի առաջ և ձգում ատամը... Անցնում է խիստ տանջալի կես րոպեն և աքցանը սահում-պոկվում է ատամից։ Դպիրը վեր է թռչում և մատները կոխում է բերանը։ Բերանում շոշափում, տեսնում է՝ ատամն իր տեղում է։

— Ձգում էիր,— ասում է նա բուժակին լացող և միևնույն ժամանակ ծաղրական ձայնով։— Բարո՛վ քեզ այն աշխարհում այդպես ձգեն։ Շա՛տ շնորհակալ եմ։ Երբ հանելու շնորհք չունես, հանձն մի՛ առնի։ Լույս աշխարհը գլխիս մթնեց...

— Իսկ դու ինչո՞ւ ես ձեռքերով բռնում,— բարկանում է բուժակը։— Ես քաշում եմ, իսկ դու հրում ես թևս ու զանազան հիմար բառեր ես ասում։ Տխմա՛ր։

— Դու ինքդ ես տխմար։

— Գեղջուկի մեկը, դու կարծում ես, ատամ քաշելը հեշտ բան է։ Հապա մի փորձի՛ր։ Այդ քո զանգատունը չի, որ բարձրանաս ու զանգերը տնկլտացնես։ (Տնազ է անում). «Շնորհք չունե՞ս, շնորհք չունե՞ս»։ Ասե՛ք խնդրեմ, ի՞նչ խրատատու է

լույս ընկել։ Տեսնո՞ւմ ես... Պարոն Եգիպետսկունը՝ Ալեքսանդր Իվանիչինը, քաշեցի, մինչև անգամ նա ոչինչ, ո՛չ մի վատ խոսք... Քեզնից հո բարձր մարդ է, բայց ձեռքերով չէր բռնում... Նստի՛ր։ Նստի՛ր, քեզ ասում եմ։

— Աշխարհը մթնել է գլխիս... Թո՛ղ մի շունչ քաշեմ... Օ՞ֆ (նստում է)։ Միայն թե երկար մի ձգիր, այլ թափով քաշիր։ Դու մի ձգիր, այլ թափով քաշիր... Միանգամից։

— Գիտունին խելք սովորեցրու։ Ինչ անկիրթ ժողովուրդ է, տե՛ր աստված։ Արի ու այսպիսիների հետ ապրիր... ապուշ կկտրես։ Բերանդ բաց արա... (աքցանը հագցնում է ատամին)։ Խիրուրգիան, ախպե՛ր, հանաք բան չի... Այդ եկեղեցու դասից կարդալ չի... (տրակցիա է կատարում)։ Մի՛ ձգվրտվիր... Ատամդ, բանից դուրս է գալիս, հնացած է, արմատները խորն է քշել... (ձգում է)։ Մի՛ շարժվիր... Այդպե՞ս... այդպե՞ս... Մի՛ շարժվիր... Դե՛, դե՛... (խրթոց լսվում է)։ Այդպե՞ս էլ գիտեի։

Վոնմիգլասովը մի բոպե նստած է անշարժ, ասես անըզգայացած։ Նա շշմել է... Նրա աչքերը բութ հայացքով նայում են տարածության մեջ, գունատ դեմքին քրտինք կա։

— Ես պետք է այծոտնուկով անեի...— քրթմնջում է բուժակը։— Ա՛յ քեզ օյին։

Ուշքի գալով՝ դպիրը մատները կոխում է բերանը և հիվանդ ատամի տեղում գտնում է երկու ցցուն ելուստ։

— Գարշելի՜ սատանա...— ասում է նա,— նստեցրել են այստեղ ձեզ, հրեշներիդ, ի կործանում մեր։

— Դու դեռ մեկ էլ հայհոյի՛ր...— փնթփնթում է բուժակը, աքցանը պահարանը դնելով։— Տգե՛տ... Հգևոր դպրոցում ողորմելու ճիպոտներով քեզ քիչ են դաղդղել... Պարոն Եգիպետսկին՝ Ալեքսանդր Իվանիչը, Պետերբուրգում յոթ տարի է ապրել... Կրթված... մենակ կոստյումը մի հարյուր մանեթ արժի... ու մինչև անգամ նա չհայհոյեց... Իսկ դու ի՞նչ սիրամարգ հավք ես։ Քո հա՛խն է, չե՞ս սատկի։

Դպիրը սեղանի վրայից վերցրեց իր բերած նշխարը և, ձեռքով այտը բռնած, տուն գնաց։

1884

ՔԱՄԵԼԵՈՆ

Շուկայի հրապարակով անցնում է ոստիկանության վերահսկիչ Օչումելովը՝ նոր շինել հագած ու մի կապոց ձեռքին։ Նրա հետևից քայլում է շիկահեր ոստիկանը՝ ձեռքին քթոց, որ պոնկեպոռնկ լիքն է բռնագրված հաղարջով։ Շուրջբոլորը լռություն է տիրում... Հրապարակում՝ ոչ մի շունչ արարած... Խանութների ու պանդոկների բաց դռները քաղցած երեխաների պես նայում են արար աշխարհին. դրանց մոտ նույնիսկ մուրացիկներ չկան։

— Կծում ես, հա՞, նզովյա՛լ,— հանկարծ լսում է Օչումելովը։— Տղե՛րք, դրան բաց չթողնեք։ Հիմի կծելն օրենք չի։ Պի՛նդ բռնի։ Ա՛... ա՛...

Շան վնգստոց է լսվում։ Օչումելովը նայում է մի կողմ ու տեսնում. վաճառական Պիչուգինի ցախատնից դուրս է վազում մի շուն՝ երեք ոտի վրա ցատկոտելով ու ետ-ետ նայելով։ Սրա հետևից է ընկել մի մարդ՝ չթե օսլայած բլուզով և արձակված ժիլետով։ Սա հետապնդում է շանը և, մարմինն առաջ գցելով, վայր է ընկնում ու բռնում շան ետևի ոտքերից։ Նորից լսվում են շան վնգստոց և «պի՛նդ բռնիր» կանչը։ Խանութներից դուրս են գալիս քնատ կերպարանքներ, և իսկույն ցախատան մոտ, ասես գետնի տակից բուսնած, բազմություն է կուտակվում։

— Կա-չկա անկարգություն է կատարվում, ձերդ ազնվություն,— ասում է շիկահեր ոստիկանն Օչումելովին։

Օչումելովը թեքվում է ձախ և քայլում դեպի խռնված ամբոխը։ Հենց ցախատան դռների մոտ նա տեսնում է, թե ինչպես վերը նկարագրված մարդն աջ ձեռքը բարձրացրել է վեր և ամբոխին ցույց է տալիս արնոտված մատը։ Նրա կիսահարբած դեմքին ասես գրված լինի՝ «Զեռիցս չե՛ս պրծնի, ստանա՛», և հենց մատն էլ հաղթական դրոշի տեսք ունի։ Ի դեմս այդ մարդու, Օչումելովը ճանաչեց ոսկերիչ Խրյուկինին։ Կենտրոնում, բազմությամբ շրջապատված, առջևի ոտքերը չոած և դողահար, նստած էր հենց ինքը՝ այդ իրարանցումի մեղավորը՝ սրադունչ, սպիտակ, մեջքին դեղին նշան ունեցող մի քերծե, որի արցունքոտած աչքերն արտահայտում են թախիծ ու սարսափ։

— Սա ի՞նչ գործ ունի այստեղ,— հարցնում է Օչումելովը, սեպի պես խրվելով ամբոխի մեջ։— Ի՞նչ գործ ունի։ Դու ի՞նչ ես մատդ տնկել... Ո՞վ էր ճչում։

— Գնում եմ ինձ համար, ձերդ ազնվություն, մարդու ձեռք չեմ տալիս...— սկսում է Խրյուկինը, բռունցքի մեջ հաղալով։— Փայտի հաշվով, Միտրի Միտրիչի մոտ, և հանկարծ էս սատկածը, ոչ դես, ոչ դեն, վեր թռավ ու կպավ մատիցս... Ներող եղեք, ես աշխատող մարդ եմ... իմ աշխատանքը մանր բաների հետ է։ Էնպես որ թող ինձ վճարեն, թե չէ էս մատս, կարող է, մի շաբաթ էլ չշարժվի... Ձերդ ազնվություն, օրենքով էսպես բան չկա, որ մարդ անասունից տուժի... Թե որ ամենքը կծեն, լավ է մարդ չապրի աշխարհում...

— Հը՛մ... լա՛վ,— ասում է Օչումելովը խստորեն, հազալով և հոնքերը վերուվար անելով։— Լա՛վ... Ո՞ւմ շունն է։ Ես այս գործն այսպես չեմ թողնի։ Ես ձեզ շներ բաց թողնել ցույց կտամ։ Ժամանակն է ուշադրություն դարձնել որոշումներին չենթարկվող նմանօրինակ պարոնների վրա։ Հենց որ տուգանես դրան, սրիկայի՛ն, նոր կիմանա ինչ բան է շունը և այլ թափառական անասուններ։ Ես նրա հերը կանիծեմ... Ելդիրին,— ոստիկանության վերահսկիչը դառնում է քաղաքային ոստիկանին,— իմացիր ում շունն է և արձանագրություն կազմիր։ Իսկ շանը պետք է ոչնչացնել։ Առանց ուշացնելու։ Կարող է կատաղած լինել... Ո՞ւմ շունն է, հարցնում եմ։

— Վայ թե գեներալ Ժիգալովի շունը լինի,— ասում է ինչ-որ մեկն ամբոխի միջից։

— Գեներալ Ժիգալովի՞։ Հը՛մ... Հանիր վերարկուս, Ելդիրին... Շոգ հո չի, պատիժ է, պատիժ։ Երևում է անձրև պիտի գա... Մի բան միայն չեմ հասկանում՝ սա ո՞նց կարող էր կծել քեզ,— դառնում է Օչումելովը Խրյուկինին։— Սա կհասնե՞ր քո մատին։ Այսքան պստիկ շուն, իսկ դու ահագին տղամարդ։ Երևի, դու դիտմամբ մատդ մեխով ծակել ես, իսկ հետո մտքովդ անցել է փող պոկել ուրիշից։ Քեզ էլ գիտենք... Գիտենք ինչ ժողովուրդ եք, ամենքիդ էլ գիտենք։

— Նա, ձերդ ազնվություն, ծխախոտով դաղել է շան դունչը հանաքի համար, դե շունն էլ, դդում հո չի, վրա է պրծել... Անխելք մարդ է, ձերդ ազնվություն։

— Սո՛ւտ ես ասում, հարամ հոգի։ Որ չես տեսել, ի՞նչ ես դուրս տալիս։ Պարոն ոստիկանապետը խելոք պարոն է և լավ է հասկանում, թե ով է ստում, ով է խղճմտանքով խոսում, ինչպես աստծու առաջ... Թե որ սուտը ես եմ, թող հաշտարար դատավորը որոշի։ Նրա մոտ օրենքի մեջ գրված է... Հիմի բոլորն

էլ հավասար են... Իմ եղբայրն էլ ժանդարմ է... Թե որ կուզենաք իմանալ...

— Լռե՛լ։ Ոչ մի խոսք։

— Չէ, սա գեներալի շունը չի...— խորամտորեն նկատում է շիկահեր ոստիկանը։— Գեներալի շներն ուրիշ տեսակ են։ Բոլորն էլ մեծ, որսի շներ են...

— Հաստա՞տ գիտես։

— Հաստա՛տ, ձերդ ազնվություն...

— Ես էլ գիտեմ։ Գեներալինը ցեղական, թանկարժեք շներ են, իսկ սա՝ սատանան գիտե ինչ է։ Ո՛չ բուրդ ունի վրան, ո՛չ տեսք... ստոր անասուն... Սրան ինչո՞ւ պիտի պահեն։ Խելքդ գլխի՞դ է։ Սրա նման շուն որ Պետերբուրգում կամ Մոսկվայում բռնեն, գիտե՞ս ինչ կանեն։ Իսկի օրենքին էլ չեն նայի, տեղնուտեղը վերջ կտան։ Դու, Խրյուկին, տուժած կողմ ես և գործն այսպես չթողնես... Պետք է դաս տալ դրանց։ Վաղուց ժամանակն է...

— Մեկ էլ տեսար գեներալինը եղավ...— բարձրաձայն միտք է անում շիկահեր ոստիկանը։— Դնչին հո չի գրված... Վերջերս սրա նման մի շուն եմ տեսել նրա բակում։

— Կա-չկա գեներալինն է,— ամբոխի միջից լսվում է մի ձայն։

— Հը՛մ... Հագցրու վերարկուս, եղբայր Ելդիրին, կարծես քամի փչեց... Մրսում եմ... Շանը կտանես գեներալի մոտ ու հարցում կանես։ Կասես, որ ես եմ գտել և ուղարկել... Եվ ասա, որ փողոց չթողնեն... Սա, կարող է, թանկարժեք շուն է, իսկ եթե ամեն մի խոզ քիթը ծխախոտով դաղի, շունը կվնասվի, ձեռից կգնա։ Շունը զգայո՛ւն արարած է... Իսկ դու, դդումի գլուխ, իջեցրու ձեռքդ։ Ի՞նչ ես ցուցադրում քո հիմար մատը։ Դո՛ւ ես մեղավորը։

— Գեներալի խոհարարը գալիս է, իրենից իմացիր... Էյ, Պրոխոր։ Մոտ արի, սիրելիս։ Մի նայիր այս շանը... Ձե՞րն է։

— Ո՞վ հնարեց։ Մեզ մոտ դրապեսները իսկի չեն լինում։

— Էլ ի՞նչ եք երկար-բարակ հարցուփորձ անում,— ասում է Օչումելովը։— Թափառական շուն է։ Երկար խոսելու բան էլ չկա... Եթե ասում եմ՝ թափառական շուն է, ուրեմն, թափառական է... Ոչնչացնե՛լ, պրծավ-գնաց։

— Սա մերը չի,— շարունակում է Պրոխորը։— Սա գեներ-

բալի եղբոր շունն է, էն որ վերջերս է եկել։ Մեր գեներալը քերծե շներ չի սիրում, եղբայրն է դրանց սի...

— Եղբայրը եկե՞լ է, ուրեմն, Վլադիմիր Իվանի՞չը,— հարցնում է Օչումելովը, և նրա դեմքը ողողվում է խանդաղատանքի ժպիտով։

— Տես, է՜։ Իսկ ես չեմ իմացել։ Տե՜ր աստված։ Հյո՞ւր է եկել։

— Հյուր է եկել, հյուր...

— Մի տես, է՜... Աստվա՜ծ իմ... Կարոտել է եղբորը... Իսկ ես չեմ էլ իմացել։ Ուրեմն իրե՞նց շունն է, ասում ես։ Շա՜տ ուրախ եմ... Դե վերցրու... Ոչինչ, վատ շնիկ չէ... Այնքան էլ ժիրն է... Հա՜մփ է արել սրա մատը։ Հա՜-հա՜-հա՜... Դե, ի՞նչ ես դողում։ Ռ-ռ-ռ... ռռ... Ոնց էլ բարկանում է անպիտանը... Ա՛յ դու չարաճճի...

Պրոխորը ձայն է տալիս շանը և նրա հետ հեռանում ցախատան մոտից... Ամբոխը քրքջում է Խրյուկինի վրա։

— Ես քեզ դեռ ցո՛ւյց կտամ,— սպառնում է նրան Օչումելովը և, շինելի մեջ փաթաթվելով, շարունակում է ճամփան շուկայի հրապարակով։

1884

ՄԱՆՐՈՒՔ

«Ողորմած տեր, հայր և բարերար,— շնորհավորական նամակի սևագիր էր հորինում չինովնիկ Նեիրազիմովը։ «Ցանկանում եմ, որ ինչպես այս լուսավոր օրը, այնպես էլ գալիք շատ օրեր, անցնեք առողջությամբ և բարեկեցությամբ։ Նմանապես և ձեր ընտանիքին ցան...»։

Լամպը, որի նավթը վերջանալու վրա էր, ծուխ էր անում և մրահոտ արձակում։ Սեղանի վրա, Նեիրազիմովի գրող ձեռքի մոտ, վազում էր անհանգստորեն մոլորված մի տարական։ Հերթապահությունից երկու սենյակ այն կողմ շվեյցար Պարամոնը, արդեն երրորդ անգամ, սրբում էր իր տոնական կոշիկները այնպիսի եռանդով, որ նրա թքոցների և վաքսի խոզանակի աղմուկը լսվում էր բոլոր սենյակներում։

«Նման էլի ի՞նչ բան գրել այդ սրիկային»,— մտածեց Նեիրազիմովը, աչքերը գցելով մրոտած առաստաղին։

Առաստաղի վրա նա տեսավ մի բոլորակ՝ լուսամփոփի ստվերը։ Ավելի ցած կային փոշոտած քիվեր, քիչ ավելի ցած պատերն էին՝ վաղուց ներկված թուխ կապտավուն գույնով։ Եվ հերթապահության սենյակը նրան այնպես ամայի թվաց, որ նա սկսեց խղճալ ոչ միայն իրեն, այլ անդամ տարականին։

«Ես, դե, կհերթապահեմ ու դուրս կգամ այստեղից. իսկ սա իր բլոջային ամբողջ կյանքը կհերթապահի այստեղ,— մտածեց նա ճմլկոտելով։— Զանձրալի է։ Հը՞, կոշիկնե՞րս մաքրեմ, թե ոնց»։

Մեկ անգամ էլ ճմլկոտելով, Նեիրազիմովը ծուլորեն քարշ գալով գնաց ծառաների սենյակ։ Պարամոնը կոշիկներն այլևս չէր մաքրում... Մի ձեռքում խոզանակը բռնած, իսկ մյուսով աղոթելով, նա կանգնած էր բաց օդանցքի առաջ և ականջ էր դնում...

— Զանգերը տալիս են,— շշնջաց նա Նեիրազիմովին, նայելով նրան անշարժ, լայն բացած աչքերով։— Արդե՜ն։

Նեիրազիմովը ականջը դրեց օդանցքին ու սկսեց լսել։ Օդանցքից գարնանային թարմ օդի հետ սենյակ էր խուժում զատկական զանգահարությունը։ Զանգերի հոնդոցը խառնվում էր կառքերի աղմուկին և այս հնչյունային քաոսից առանձնանում էր միայն մոտակա եկեղեցու աշխույժ, տենորային զողանջը և ինչ-որ մեկի բարձր, սուր ծիծաղը։

— Իսկ ինչքա՜ն ժողովուրդ է,— հոգոց հանեց Նեիրազիմովը՝ դեպի ներքև՝ փողոց նայելով, ուր վառվող ճրագաթասերի մոտ իրար հետևից տեսանելի էին դառնում մարդկային ստվերները։— Բոլորը վազում են առավոտյան ժամերգության... Հիմի երևի մերոնք խմել են ու թրև են գալիս քաղաքում։ Դու հիմի ծիծա՜ղը տես, խոսակցություններ՝ը։ Միայն ես եմ էսպես դրժբախտ, որ ամեն էս տեսակ օր պիտի նստեմ էստեղ։ Ու ամեն տարի սա հենց ի՞նձ է վիճակվում։

— Իսկ ո՞վ է ձեզ ստիպում վարձվել։ Չէ՞ որ էսօր դուք չեք հերթապահը, Զաստուպովը իրեն փոխարինող ձեզ վարձեց։ Ոչ քեֆ անել ուզի՝ դուք եք վարձվում... Ագահությո՛ւն։

— Չէ մի գրո՛ղ, ագահությո՞ւն։ Ագահության համար բա՞ն էլ չկա, ընդամենը երկու ռուբլի փող, վրան էլ մի փողկապ... Կարի՛ք և ո՛չ ագահություն։ Բայց լավ կլիներ հիմի, գիտես,

խմբով գնալ ժամերգության, իսկ հետո պասը ուտել... Մի լավ խմել, ուտել, հետո ընկնել-քնել... Նստած ես սեղանի առաջ, սեղանին օրհնած կուլիչ է, ինքնաեռը ֆշշում է և կողքիդ մի որևէ էնպիսի օբժեուհի է[1]... Մի ըմպանակ խմեցիր ու կղակիցը բռնեցիր, և հենց այդ էլ զգայականը... քեզ մարդ ես զգում... է՜հհ... կորա՛վ կյանքը։ Այ, մի ինչ-որ ստահակ անցավ կառքով, իսկ դու էստեղ նստիր ու մտքեր որոճա...

— Ամեն մեկին՝ իրենը, Իվան Դանիլիչ։ Աստված տա դուք էլ ծառայելով հասնեք էնտեղ, որ կառքով պտտվեք։

— Այդ ե՞ս։ է՜հ, չէ՛, ախպերս, կատա՛կ ես անում։ Ես, թեկուզ ճաքեի՛ր, տիտուլյարից դենը չեմ անցնի... Ես անուսում եմ։

— Մեր գեներալն էլ առանց մի ուսումի է, համա...

— Է՜, գեներալը մինչև դրան հասնելը հարյուր հազար գողացավ։ Հետո նրա կեցվա՛ծքը, եղբայր, այն չէ, ինչ ի՛մն է... Իմ կեցվածքով հեռու չե՛ս գնա։ Ազգանունս էլ ստորագրվի՝ Նեիրազիմով։ Մի խոսքով, եղբայր, անել գրություն է։ Ուզում ես՝ ապրիր այդպես, չես ուզում՝ կախվի՛ր...

Նեիրազիմովը օդանցքից հեռացավ և տխուր քայլեց սենյակներով։ Ջանգերի մռնչոցը դառնում էր ավելի ու ավելի ուժգին... Լսելու համար այլևս պետք չէր կանգնել պատուհանի մոտ։ Որքան ավելի պարզ էր լսվում զողանչը, որքան բարձր էին դոփում կառքերը, այնքան ավելի մուգ էին երևում թուխ պատերը և մրոտ քիվերը, այնքան ավելի էր ծխում լամպը։

«Արդյոք չփախչե՞լ հերթապահությունից»,— մտածեց Նեիրազիմովը։

Բայց այդ փախուստը ոչ մի լավ բան չէր խոստանում... Վարչությունից դուրս գալուց և քաղաքում թափառելուց հետո Նեիրազիմովը կուզվեր դեպի իր բնակարանը, իսկ նրա բնակարանն ավելի խոնավ էր ու վատ, քան հերթապահության սենյակը... Ընդունենք, թե օրը լավ անցկացրեց, բարեհաջող, իսկ հետո՞։ Նորից նույն գորշ պատե՛րը, նույն վարձով հերթապահությո՛ւնը և շնորհավորական նամակնե՛րը...

Նեիրազիմովը կանգնեց հերթապահության սենյակում ու մտքի մեջ ընկավ։

Նո՛ր, լա՛վ կյանքի պահանջը անասելի ցավով սեղմեց նրա

[1] Ֆրանս. objet — իր բառից է։

սիրտը։ Նա բուռն ցանկություն ունեցավ հանկարծ դանվել փողոցում, ձուլվել կենդանի ամբոխի հետ, մասնակից լինել տոնին, որի համար մռնչում էին բոլոր զանգերն ու դղրդում էին կառքերը։ Նա ցանկացավ այն, ինչ ապրել էր մի ժամանակ, մանուկ հասակում. ընտանեկան շրջան, մոտիկների հանդիսավոր կերպարանքներ, սպիտակ սփռոց, լույս, տաքություն... Նա հիշեց այն կառքը, որով հենց նոր անցավ այն տիրուհին, վերարկուն, որով ցուցամոլությամբ պճնվում է կատարածուն, ոսկե շղթան, որ զարդարում է քարտուղարի կուրծքը... Հիշեց տաք անկողին, Ստանիսլավ շքանշան, նոր կոշիկներ, չմաշված արմունկներով վիցմունդիր... հիշեց նրա համար, որ այդ բոլորը նա չուներ...

«Արդյոք չգողանա՞լ,— մտածեց նա։— Ասենք, գողանալը դժվար չէ, բայց, ա՛յ, խնդիրը թաքցնե՛լն է... Ասում են՝ գողացածով Ամերիկա են փախչում։ Բայց սատանան գիտե, թե ուր է այդ Ամերիկան։ Չէ՞ որ գողանալու համար նույնպես պետք է ուսում ունենալ»։

Զողանչը հանդարտվեց։ Միայն լսվում էր կառքերի հեռավոր աղմուկը և Պարամոնի հազը, իսկ Նեիրազիմովի տխրությունն ու զայրույթը գնալով ավելի էր սաստկանում, դառնում անտանելի։ Հիմնարկության ժամացույցը խփեց տասներկուս և կեսը։

«Մատնությո՞ւն անեմ, ինչ է, Պրոշկինը մատնություն արեց և բարձրացավ վեր...»։

Նեիրազիմովը նստեց իր սեղանի առաջ և մտասուզվեց։ Լամպը, որի մեջ նավթը արդեն բոլորովին վերջացել էր, ծխում էր ու սպառնում հանգչել։ Մոլորված տարականը սեղանի վրա դեռ այս ու այն կողմ էր վազում ու չէր գտնում ապաստարան...

«Մատնություն կարելի՛ է անել, բայց և ինչպե՞ս սարքել։ Հարկավոր է բոլոր տեսակի երկիմաստ ակնարկներով, մոտեցումներով, ինչպես Պրոշկինը... Բայց որտեղի՞ց ինձ էդքան կարողություն։ Էնպես մի բան կանեմ, որ հետո հենց ինձ կդիպչի։ Բթամի՛տ եմ, գրողը ինձ տանի»։

Եվ Նեիրազիմովը, անել վիճակից դուրս գալու միջոցների վրա միտքը չարչարելով, հայացքը հառեց իր գրած սևագիր նամակին։ Այդ նամակը գրված էր մի մարդու, որին ամբողջ հոգով ատում էր, որից, ահա տասը տարի է, աշխատում էր

ոտոնալ տեղափոխում տասնվեց ռուբլիանոց տեղից՝ տասնութ ռուբլիանոցը...

— Հ՛ը... վազո՞ւմ ես այստեղ, սատանա՛,— նա չարությամբ ափով խփեց տարականին, որը դժբախտություն էր ունեցել նրա աչքին ընկնել։— Զզվելի՛ արարած։

Տարականն ընկավ մեջքին և սկսեց հուսահատորեն շարժել ոտքերը... Նեիրազիմովը բռնեց նրա մի ոտքից և գցեց լամպի ապակու մեջ։ Ապակու մեջ տեղի ունեցավ բռնկում և ճտտոց...

Եվ Նեիրազիմովը իրեն թեթևացած զգաց։

1885

ՇԵՐԵՓԱԶՈՒԿ

Ամառային առավոտ է։ Օդում հանդարտություն է, միայն գետափին ճռռում է ծղրիդը, մեկ էլ ինչ-որ տեղ երկչոտ մոռում է ալպիական ցինը։ Երկնքում անշարժ կանգնած են ցրիվ տված ձյան նման փետրավոր ամպերը... Կառուցվող լողարանի մոտ, ուռուտի կանաչ ճյուղերի տակ, ջրի մեջ, թպրտում է հյուսն Գերասիմը՝ բարձրահասակ, նիհար մի գյուղացի, շիկակարմիր գանգրահեր գլխով և մազերը ներկած դեմքով։ Նա փնչացնում է, հևում և, աչքերը խիստ թարթելով, աշխատում է ինչ-որ բան հանել ուռուտի արմատների տակից։ Նրա դեմքը ծածկված է քրտինքով։ Գերասիմից մի սաժեն այն կողմը, մինչև բուկը ջրի մեջ, կանգնած է հյուսն Լյուբիմը, երիտասարդ սապատավոր գյուղացի՝ եռանկյունի դեմքով և նեղ, չինական աչքերով։ Ինչպես Գերասիմը, այնպես էլ Լյուբիմը, երկուսն էլ շապիկներով և ոտքի փաթաթաններով են։ Երկուսն էլ ցրտից կապտել են, որովհետև արդեն երկու ժամից ավելի է ջրի մեջ են։

— Դե ի՞նչ ես շարունակ ձեռքով անում,— գոռում է սապատավոր Լյուբիմը, տենդով բռնվածի նման դողալով։— Դդումի՛ գլուխ, դու նրա՞ն բռնի, թե չէ դուրս կպրծնի, նզովյալ։ Բռնի՛, ասում եմ։

— Ջի՛ գնա... Ո՞ւր պիտի գնա։ Նա մտել է կոճղի տակ,— ասում է Գերասիմը խոպոտած, խուլ բասով, որ դուրս էր գալիս ոչ կոկորդից, այլ փորի միջից։— Կպրծուն է մասխարան, բռնելու տե՛ղ չունի։

— Դու վռիկների՛ց բռնի, վռիկների՛ց։

— Ախր խռիկները չեն երևում... Սպասիր, ինչ-որ բանից բռնեցի... Շրթունքից եմ բռնել... Կծում է մասխարան։

— Շրթից բռնած մի՛ քաշի, բաց կթողնես։ Նրա վռիկների՛ց բռնի։ Վռիկներից բռնի նրա։ Էլի սկսեցիր ձեռքով անել։ Այ թե անհասկացող գեղացի է, հա՛, դու ինձ ներիր, սուրբ Աստվածածին։ Այ մարդ, բռնի՛։

— «Բռնի՛»,— տնազում է Գերասիմը։— Ինչ հրամանատար է գտնվե՛լ... Արի ի՛նքդ բռնի, կուզ դև... Ի՞նչ ես կանգնել։

— Ես կբռնեի, թե հնար լիներ... Բայց իմ էս կոլոտ բոյով հնա՞ր է կանգնել ափի տակ։ Էնտեղ խո՛րն է։

— Ոչինչ, որ խորն է... Դու լողալով...

Կուզիկը թևերը թափահարում է, լոզալով մոտենում է Գերասիմին ու բռնում ճյուղերից։ Կանգնելու առաջին իսկ փորձին, նա գլխովին ընկղմվում է և ջրի երեսին պղպջակներ թողնում։

— Ջի՞ ասում, որ խորն է,— ասում է նա, բարկացած աչքերը ոլորելով։— Քո վզի՛ն նստեմ, ի՞նչ է։

— Դու էլ կոճղին կանգնի... կոճղերը շա՞տ, ասես սանդուղք լինեն...

Կուզիկը ոտքի թաթով շոշափում է կոճղը և մի քանի ճյուղերից ամուր կառչելով՝ կանգնում է նրա վրա։ Հավասարակշռությունը պահելով և նոր դիրքում ամրանալուց հետո նա ճկվում է և, աշխատելով, որ բերանը ջուր չլցվի, սկսում է աջ ձեռքով փնտրել կոճղերի մեջ։ Ծոլասեղերում խճճվելով և մամուռի վրայով սահելով, նրա ձեռքը դեմ է ընկնում խեցգետնի ծակող շանչերին...

— Սատանա՛, դո՛ւ էիր էստեղ պակաս,— ասում է Լյուբիմն ու չարությամբ ափ է նետում խեցգետնին։

Վերջապես նրա ձեռքը շոշափում է Գերասիմի ձեռքը և, նրա վրայից իջնելով, հասնում է մինչև ինչ-որ սահուն, սառը բանի։

— Ըհհը՛, նա՛ է,— ժպտում է Լյուբիմը։— Լավ մեծն է մասխարա՞ն... Մատներդ թո՛ղ, ես նրան հրմի՛... Նրա վռիկների՛ց... սպասի՛, մի՛ հրի արմունկով... ես նրան հրմի՛... հրմի՛, թող մի բռնե՛մ... Կոճղի տակ խորն է խցկվել մասխարան, բրոնելու տեղ չկա... Գլխին հասնել չի լինում... Հենց մենակ փորն է երևում... Վզիս վրայի մոծակը սպանի՝ դաղում է ինձ։ Ես

Հրմի... վոիկների տակի՛ց... Կողքի՛ց մոտեցիր, բրդի՛ դրան, բրդի՛։ Մշկի՛ դրան մատով։

Կուզիկը թշերն ուռցրած, շունչը պահած, աչքերը չռում է և երևի արդեն մատները մտցնում է «վոիկների տակ», բայց այդտեղ ճյուղերը, որոնցից կառչած էր նրա ձախ ձեռքը, պոկվում են ու նա, հավասարակշռությունը կորցնելով, թրմ՛մփ, ընկնում է ջուրը։ Ալիքավոր օղակները, կարծես վախեցած, փախչում են ափից, ու նրա ընկած տեղում վեր են ցայտում պղպջակներ։ Կուզիկը լողալով դուրս է գալիս ջրի տակից և փնչացնելով բռնում է ճյուղերից։

— Հիմի մեկ էլ տեսար խեղդվեցիր, սատանա, քեզ համար պիտի պատասխան տալ,— խոպոտ ձայնով ասում է Գերասիմը։— Դուրս եկ, գրողը քեզ տանի։ Ես ինքս կհանեմ։

Սկսվում է հայհոյանքը... Իսկ արևը դաղում է ու դաղում։ Ստվերները գնալով փոքրանում են և խխունջի եղջյուրների պես գնում են իրենք իրենց մեջ... Բարձր խոտը, արևից տաքացած, սկսում է արձակել թանձր, սիրտ խառնող մեղրահոտ։ Արդեն շուտով կեսօր կդառնա, իսկ Գերասիմն ու Լյուբինը ղեռ թպըրտում են ուռուտի տակ։ Խոպոտ բասն ու սառած, ճղճղան տենորը անդադար խանգարում են ամառային օրվա լռությունը։

— Քաշի՛ր դրան, վոիկների՛ց քաշիր։ Սպասի, ես դրան դուրս կհանեմ։ Դե ո՞ւր ես խցկվում էդ մեծ բռունցքովդ։ Դու մատո՛վ և ո՛չ թե բռունցքով, ռե՛խ։ Կողքի՛ց եկ։ Ձախո՛վ եկ, թե չէ աջում զառիթափ հոր է, սատանի փայ կդառնաս։ Պռունկի՛ց քաշի։

Լսվում է մտրակի շրխկոց... Զառիվայր ափով ծուլորեն քարշ է գալիս Հովիվ Եֆիմի հոտը։ Հովիվը, մի զառամյալ ծերունի՝ մեկ աչքով և ծռված բերանով, գնում է գլուխը կախ և նայում իր ոտքերի տակ։ Առաջ ջրին են մոտենում ոչխարները, նրանց հետևից՝ ձիերը, ձիերի հետևից՝ կովերը։

— Տակի՛ց հրմշտի,— լսում է նա Լյուբիմի ձայնը։— Կոխի՛ մատդ։ Վա՜հ, խո՜լ ես, ի՞նչ է, դև՛։ Թո՛ւ։

— Էդ դուք ո՞ւմ եք, ախպեր, էդպես,— գոռում է Եֆիմը։

— Շերեփաձկին։ Ոչ մի ձևով չենք կարողանում դուրս քաշել, կոճղի տակ է խցկվել։ Անցի կողքի՛ց։ Անցի՛, անցի՛։

Եֆիմը մի բոպե աչքերը կկոցում է, հետո հանում է տրեխները, մեջքից ներքև գցում պարկը ու հանում շապիկը։ Չի համբերում շալվարը հանել ու երեսը խաչակնքելով, նիհար, սև

ձեռքերով հավասարակշռությունը պահպանելով, շալվարով մտնում է ջուրը... Նա հիսուն քայլ անցնում է տղմոտ հատակով, իսկ հետո սկսում է լողալ։

— Սպասե՛ք, տղեք,— գոռում է նա։— Սպասե՛ք։ Դրան ղուր մի քաշեք, բաց թողեք։ Գիտենալ է պետք։

Եֆիմը միանում է մյուսներին ու երեքը միասին ստմունկներով ու ծնկներով իրար հրելով, փնչացնելով ու հայհոյելով քաշքշվում են նույն տեղում... Սապատավոր Լյուբիմը շնչասպառ է լինում, և օդը թնդում է սուր, ջղաձիգ հազով։

— Ո՞ւր է հովիվը,— ափից լսվում է մի կանչ։— Եֆի՛մ։ Հովի՛վ։ Ո՞ւր ես։ Հոտը այգի՛ մտավ։ Քշի՛ր, քշի՛ր այգո՛ւց։ Քշի՛ր։ Բայց ո՞ւր է նա, ծեր ավազակը։

Լսվում են տղամարդկանց, ապա կանանց ձայներ... Տիրական այգու ցանկապատի հետևից երևում է տերը՝ Անդրեյ Անդրեիչը, պարսկական շալից խալաթով և ձեռքին լրագիր... Նա հարցական նայում է գետից լսվող աղաղակների ուղղությամբ, ապա արագ մանրաքայլով գնում դեպի լողարանը։

— Ի՞նչ է պատահել։ Ո՞վ է ճչում,— հարցնում է նա խրատությամբ՝ ուռուտի ճյուղերի միջից տեսնելով ձկնորսների երեք թաց գլուխները.— Ի՞նչ եք այդտեղ վխտում։

— Ձը՛կ... ձկնի՛կ ենք որսում...— թոթովում է Եֆիմը՝ գլուխը չբարձրացնելով։

— Ես հիմա քեզ ձկնի՛կ ցույց կտամ։ Հոտը այգի է մտել, իսկ նա ձկնիկ... Հապա լողարանը ե՞րբ պատրաստ կլինի, սատանի՛ ծնունդներ։ Արդեն երկու օր է ինչ աշխատում եք, իսկ ձեր աշխատանքը չի՛ երևում։

— Կը՛... կլինի՛... պատրա՞ստ,— տնքում է Գերասիմը։— Ամառը երկար է, կհասցնես լողանալ, ձերդ բարեծնություն... Ֆո՛ւ՛ռ... ա՛յ, էստեղ ոչ մի ձևով չենք կարողանում շերեփաձկի հախիցը գալ... Մտել է կոճղի տակ, ասես բնի մեջ, ու ոչ դե՛ս է գալիս, ոչ դե՛ն...

— Շերեփաձո՞ւկ,— հարցնում է տերն ու նրա աչքերը փայլում են։— Դե ուրեմն շո՛ւտ քաշեցեք։

— Թե որ մի կես մանեթ տա՞ս... թե սրտով կպչե՞նք... մե՞ծ շերեփաձուկ է, չա՜ղ, ոնց որ ուղածդ վաճառականի կնիկը... Արժի՛, ձերդ բարեծնություն, կե՛ս մանեթ... աշխատանքի՛ համար... Մի՛ ճմլի դրան, Լյուբի՛մ, մի՛ ճմլի, հոգին կհանես։ Ներքևի՛ց դեմ տուր։ Քա՛րշ տուր դեպի վեր... մարդ աստծու, ո՞նց

է անունդ։ Դեպի վե՛ր, ոչ վար, դե՛։ Ոտքերով թափ մի՛ տվեք։

Անցնում է հինգ բոպե, տասը... Տիրոջ համբերությունը հատնում է։

— Վասի՛լի,— գոռում է նա՝ շրջվելով դեպի դաստակերտը։— Վա՛սկա։ Մի ինձ մոտ դրկի Վասիլիի՛ն։

Վազելով գալիս է կառապան Վասիլին։ Նա ինչ-որ բան է ծամում և ծանր շնչում։

— Մտիր ջո՛ւրը,— հրամայում է նրան տերը։— Օգնիր նրանց դուրս քաշել շերեփաձուկը... Չեն կարողանում մի շերեփաձուկ դուրս քաշել։

Վասիլին արագ հանվում է ու մտնում ջուրը։

— Ես հիմի՛...— մոթմոթում է նա։— Ո՞ւր է շերեփաձուկը։ Ես հիմի՛... Մենք էդ բանը միանգամի՛ց։ Իսկ դու, Եֆիմ, լավ կանես գնաս։ Ի՞նչ պետք է ծեր մարդուն՝ իրեն չվերաբերող գործի մեջ խառնվելը։ Ո՞րն է էստեղ շերեփաձուկը։ Ես նրան հիմի՛... Ըհհը՛ նա՛... Ձեռքերդ թողե՛ք։

— Վե՛, ինչի՞, թողեք ձեռներդ։ Ինքներս գիտենք, թե՛... ձեռներդ թողե՛ք։ Դե գո՛ւրս էլի՛։

— Էսպես նա դուրս չի քաշվի։ Հարկավոր է գլխի՛ց բռնել։

— Իսկ գլուխը կոճղի տա՛կ է։ Մեզ ճանա՛չ գործ է, հիմա՛ր։

— Դե՛, մի՛ հաչի, թե չէ կգա՛։ Շա՛ն որդի։

— Պարոն տիրոջ մոտ ու էդ տեսակ խոսքե՛ր...— թոթովում է Եֆիմը։— Չէ՛, չե՛ք հանի, ախպե՛ր. նա շա՛տ խորամանկ է նստել էնտեղ։

— Սպասեցե՛ք, ես հիմա՛,— ասում է տերը և սկսում է շտապ հանվել։— Ձորս հիմար չե՛ք կարողանում մի շերեփաձո՛ւկ դուրս քաշել։

Հանվելուց հետո Անդրեյ Անդրեիչը մի քիչ սպասում է, որ մարմինը հովանա, ապա մտնում է ջուրը։ Բայց և նրա միջամտությունը ոչնչի չի հանգեցնում։

— Հարկավոր է կոճղը տակից կտրել։— Վերջապես վճռում է Լյուբիմը։— Գերասիմ, գնա կացինը բեր։ Կացի՛ն տվեք։

— Ձեր մատները չկտրեք,— ասում է տերը, երբ լսում է կացնի՝ կոճղին տրվող սատրջրյա հարվածների ձայնը։— Եֆիմ, կորի՛ր այստեղից։ Սպասեցե՛ք, ե՛ս շերեփաձուկը դուրս կքաշեմ։ Դուք այնպես չե՛ք անի։

Կոճղը կտրված է։ Մի քիչ էլ են ջարդում, և Անդրեյ Անդրեիչը մեծ հաճույքով զզում է, ինչպես իր մատները մտնում են շերեփաձկի խռիկների մեջ։

— Քաշո՛ւմ եմ, եղբայրնե՛ր։ Մի՛ հավաքվեք... հեռո՛ւ կանգնեցեք... հանո՛ւմ եմ։

Ջրի երեսին երևում է շերեփաձկի մեծ գլուխը և նրա հետևից սև, արշինանոց մարմինը։ Շերեփաձուկը պոչը ծանր շարժում է ու աշխատում է դուրս պրծնել։

— Կատակ ես անում... Դատարկ բանե՛ր են։ Ընկա՞ր։ Պրծա՛վ։

Բոլորի դեմքերը ողողվում են մեղրածոր ժպիտով։ Լուռ անցնում է հայեցողության մի րոպե։

— Երևելի՛ շերեփաձո՛ւկ է,— թոթովում է Եֆիմը՝ անրակի տակը քորելով։— Ով գիտի տա՛սը ֆունտ լինի...

— Ըհը՛,— համաձայնում է տերը։— Իսկ լյարդն էլ շարունակ ուռչո՛ւմ է։ Ներսից հա՛ հուփ է տալիս։ Վա՛յ... Ա՛խ։

Հանկարծ շերեփաձուկը պոչով անսպասելի խիստ շարժում է կատարում դեպի վեր, ու ձկնորսները լսում են ուժեղ ճողփյուն... բոլորը մեկնում են ձեռքերը, բայց արդեն ուշ է. շերեփաձուկը անհետ լողաց։

1885

ՋԻՈՒ ԱԶԳԱՆՈՒՆԸ

Պաշտոնաթող գեներալ-մայոր Բուլդեևի ատամները ցավեցին։ Նա բերանը ողողում էր օղիով, կոնյակով, հիվանդ ատամին ծխախոտի փոշի, ափիոն, բևեկնախեժ, նավթ էր դնում, թշին յոդ էր քսում, ականջների մեջ կար սպիրտով թրջված բամբակ, բայց այդ ամենը կամ չէին օգնում, կամ սրտխառնոց առաջացնում։ Եկավ բժիշկը։ Նա փորփրեց ատամը, հինայի դեղատոմս գրեց, բայց այդ էլ չօգնեց։ Գեներալը մերժեց ատամը հանելու առաջարկը։ Բոլոր տնեցիները՝ կինը, երեխաները, սպասավորները, նույնիսկ խոհարարի օգնական Պետկան, յուրաքանչյուրն իր միջոցն էր առաջարկում։ Իմիջիայլոց, Բուլդեևի գործակատարն էլ՝ Իվան Եվսեիչը, եկավ նրա մոտ և խորհուրդ տվեց կախարդությամբ բուժվել։

— Այստեղ, մեր գավառում, ձերդ գերազանցություն,—

տոց նա,— մի տասը տարի առաջ ծառայում էր աքցիզային չինովնիկ Յակով Վասիլիչը։ Հաջողությամբ կախարդում էր ատամները։ Մեկ էլ տեսար շուտ եկավ դեպի պատուհանը, մի քիչ փսփսաց, թքեց,— ու ատամի ցավը կորվեց։ Նրան այդպիսի զորություն է տրված...

— Իսկ որտե՞ղ է նա հիմա։

— Աքցիզային պաշտոնից նրան արձակելուց հետո ապրում է Սարատովում, զորանոցի մոտ։ Հիմա հենց միայն ատամներ բուժելով է ապրում։ Թե որ որևէ մարդու ատամը ցավեց, գնում է նրա մոտ, ու նա օգնում է... Այնտեղի բնակիչներին՝ սարատովցիներին, իր տանն է բուժում, իսկ ովքեր որ ուրիշ քաղաքներից են՝ հեռագրով։ Ձերդ գերազանցություն, նրան մի հեռագիր ուղարկեցեք, թե այսպես ու այսպես... աստծո ծառա Ալեքսիի ատամները ցավում են, խնդրում եմ մի ճար անել։ Իսկ բուժման համար փողը փոստով կուղարկենք։

— Դատարկ բան է։ Խաբեբայություն է։

— Բայց դուք փորձեցեք, ձերդ գերազանցություն։ Շատ է սիրում արաղ խմել, ապրում է ոչ թե իր կնոջ, այլ մի գերմանուհու հետ, լավ հայհոյել գիտե, բայց կարելի է ասել, հրաշագործ պարոն է։

— Հեռագրիր, Ալյոշա,— աղերսեց գեներալի կինը,— այ, դու չես հավատում կախարդության, իսկ ես ինձ վրա եմ փորձել։ Թեև դու չես էլ հավատում, բայց ինչո՞ւ չհեռագրել։ Ձեռքներս հո դրանից չե՞ն կոտրվի։

— Դեհ լավ,— համաձայնեց Բուլդեևը։— Այսպիսի ժամանակ մարդ ոչ միայն աքցիզային չինովնիկին, այլև սատանային էլ հեռագիր կուղարկի... Ախ, էլ ուժ չկա։ Հը՛, որտե՞ղ է ապրում քո աքցիզային չինովնիկը։ Ինչպե՞ս պետք է գրել նրան։

Գեներալը նստեց սեղանի մոտ ու վերցրեց գրիչը։

— Սարատովում նրան ամեն մի շուն ճանաչում է,— ասաց գործակատարը։— Բարեհաճեցեք, ձերդ գերազանցություն, գրել՝ Սարատով քաղաք, հա՛, ուրեմն... նորին բարեծնություն պարոն Յակով Վասիլիչ... Վասիլիչ...

— Հետո՞։

— Վասիլիչ... Յակով Վասիլիչ... Իսկ ազգանունը... է՛, ազգանունը մոռացա... Վասիլիչ... Գրո՛ղը տանի... Բա ազգանո՞ւնը։ Քիչ առաջ, երբ այստեղ էի գալիս, մտքումս էր... Թույլ տվեք...

Իվան Եվսեիչը աչքերը հառեց առաստաղին ու սկսեց շարժել շրթունքները։ Բուլդեևն ու իր կինն անհամբեր սպասում էին։

— Հը՛, դեհ շուտ հիշիր։

— Հիմա... Վասիլիչ... Յակով Վասիլիչ... Մոռացել եմ։ Եվ այնպիսի հասարակ ազգանուն է... ասես մի տեսակ ձիու ազգանուն լինի... Կոբիլի՞ն. ոչ, Կոբիլին չէ։ Սպասեցեք... Գուցե Ժերեբցո՞վ։ Ո՛չ, ժերեբցով էլ չէ։ Հիշում եմ, ձիու ազգանուն է, իսկ թե ինչպիսի՞ն՝ մտքիցս թռել է։

— Ժերեբյատնիկո՞վ։

— Ոչ։ Սպասեցեք... Կոբիլիցին... Կոբիլյատնիկով... Կոբելև...

— Այդ արդեն շան ազգանուն է և ոչ թե ձիու։ Ժերեբչիկո՞վ։

— Ոչ, ժերեբչիկով էլ չէ։ Լոշադինին... Լոշակով... Ժերեբկին... չէ, այդ չի։

— Լավ, բա ես ինչպե՞ս գրեմ նրան։ Մտածի՛ր։

— Իսկույն։ Լոշադկին... Կոբիլկին... Կորեննոյ...

— Կորեննիկո՞վ,— հարցրեց գեներալի կինը։

— Ո՛չ։ Պրիստյաժկին... Չէ, այդ չի. մոռացա։

— Որ մոռացել ես, էլ ինչո՞ւ ես քիթդ խոթում ամեն բանի մեջ քո խորհուրդներով, գրողի՛ տարած,— բարկացավ գեներալը։— Կորի՛ գնա այստեղից։

Իվան Եվսեիչը դանդաղ դուրս գնաց, իսկ գեներալը բռնեց թուշն ու սկսեց քայլել սենյակից սենյակ։

— Ա՜խ, մեռա,— հեծկլտում էր նա,— վա՜յ ամա՜ն։ Օ՜ֆ, աչքերս մթնում են։

Գործակատարը մտավ պարտեզը և աչքերը դեպի երկինք հառած՝ փորձում էր մտաբերել աքցիզային չինովնիկի ազգանունը։

— Ժերեբչիկով... Ժերեբկովսկի... Ժերեբենկո... Ո՛չ, այդ չի։ Լոշադինսկի... Լոշադևիչ... Ժերեբկովիչ... Կաբիլյանսկի...

Մի քիչ հետո նրան կանչեցին պարոնների մոտ։

— Հիշեցի՞ր,— հարցրեց գեներալը։

— Ոչ, ձերդ գերազանցություն։

— Գուցե Կոնյավսկի՞, Լաշադնիկո՞վ. ո՞չ։

Եվ տանը բոլորն էլ իրար առաջ կտրելով սկսեցին ազգանուններ հնարել։ Թվեցին ձիերի բոլոր հասակները, սեռն ու ցեղերը, հիշեցին բաշը, սմբակները, ձիաստարը... Տանը, պարտեզում, սպասավորների սենյակում ու խոհանոցում մարդիկ քայ-

լում էին անկյունից անկյուն, ու ճակատները քորելով, ազգանուն էին փնտրում...

Գործակատարին ստեպ-ստեպ տուն էին կանչում։

— Տաբունո՞վ,— հարցնում էին նրան։— Կապիտի՞ն, Ժերեբովկի՞։

— Ոչ, ոչ,— պատասխանում էր Իվան Եվսեիչը, ու գեպի վեր նայելով, շարունակում էր մտածել ու ասել.— Կոնենկո... Կոնչենկո... Ժերեբեև... Կոբիլև...

— Հայրի՛կ,— կանչում էին մանկասենյակից,— Տրո՛յկին, Ուզդե՛չկին։

Ամբողջ ազարակը հուզված վիճակում էր։ Անհամբեր, տանջված գեներալը խոստացավ հինգ ռուբլի տալ նրան, ով կհիշի իսկական ազգանունը ու մարդիկ ամբողջ խմբերով սկսեցին ման գալ Իվան Եվսեիչի հետևից։

— Գնեդով,— ասում էին նրան։— Ռիսխատիյ, Լոշադիցկի։

Բայց օրը մթնեց, իսկ ազգանունը դեռ չէր գտնվել։ Այնպես էլ քնելու պառկեցին առանց հեռագիր ուղարկելու։

Գեներալն ամբողջ գիշերը չքնեց, անկյունից անկյուն էր քայլում ու տնքում... Գիշերվա ժամը երեքին նա տնից դուրս եկավ ու ծեծեց գործակատարի պատուհանը։

— Մերինով հո չի՞,— հարցրեց նա լացակումած ձայնով։

— Ոչ, Մերինով չի, ձերդ գերազանցություն,— պատասխանեց Իվան Եվսեիչը և մեղավորի պես հոգոց հանեց։

— Բայց գուցե ոչ թե ձիու, այլ մի որևէ ուրիշ ազգանուն է։

— Ազնիվ խոսք, ձիու ազգանուն է, ձերդ գերազանցություն... Ես այդ նույնիսկ շատ լավ եմ հիշում։

— Էհ, ինչ մոռացկոտն ես, բարեկամ... Հիմա ինձ համար այդ ազգանունը, թվում է, աշխարհում ամեն ինչից էլ թանկ է։ Հոգիս դուրս եկավ։

Գեներալն առավոտյան էլի մարդ ուղարկեց բժշկին կանչելու։

— Թող հանի,— որոշեց նա,— այլևս ուժ չկա համբերելու...

Բժիշկը ժամանեց ու հանեց հիվանդ ատամը։ Ցավն իսկույն դադարեց, ու գեներալը հանգստացավ։ Կատարելով իր գործը և ստանալով իր աշխատանքի վարձատրությունը, բժիշկը նստեց իր կառքն ու մեկնեց տուն։ Դուրս գալով դարպասից, դաշտում նա հանդիպեց Իվան Եվսեիչին... Գործակատարը կանգնել էր ճա-

նապարհի եզրին ու մտասույզ նայելով գետնին, ինչ-որ բանի մասին էր մտածում։ Դատելով կնճիռներից, որ ակոսել էին նրա ճակատը, ու նրա աչքերի արտահայտությունից, նրա մտքերը լարված էին, տանջալից...

— Բուլանով... Ջերեղսեդելնիկով,— մոթմոթում էր նա,— Ջաստուպոնին... Լոշադսկի...

— Իվա՛ն Եվսեիչ,— դիմեց նրան բժիշկը։— Ջե՞մ կարող արդյոք, սիրելիս, ձեզնից մի հինգ չեմվերտ վարսակ գնել։ Մեր գյուղացիներն ինձ վարսակ ծախում են, բայց շատ վատն է...

Իվան Եվսեիչը բուռ հայացքով նայեց բժշկին, մի տեսակ վայրի ժպտաց և ոչ մի բառով չպատասխանեց, ձեռները զարկեց իրար, վազեց դեպի ազարակը այնպիսի արագությամբ, կարծես կատաղած շուն էր ընկել ետևից։

— Մտաբերեցի, ձերդ գերազանցություն,— ուրախ, արտասուց ձայնով գոչեց նա՝ վազելվազ մտնելով գեներալի կաբինետը։— Մտաբերեցի, աստված առողջություն տա բժշկին։ Օվսո՛վ[1], Օվսով է աքցիզային չինովնիկի ազգանունը։ Օվսո՛վ է, ձերդ գերազանցություն։ Հեռագիրն ուղարկեցեք Օվսովին։

— Ա՛ռ քեզ,— արհամարհանքով ասաց գեներալը ու երկու անգամ նրա դեմքին մոտեցրեց մատների հայհոյանշանը։— Հիմա քո ձիու ազգանունն ինձ պետք չի։ Ա՛ռ քեզ։

1885

ՁԱՐԱՄԻՏԸ

Դատական քննիչի առջև կանգնել է մի փոքրիկ, չափազանց նիհար գյուղացի՝ խայտաբղետ քաթանի վերնաշապիկով և կարկատած ոտաշորով։ Նրա մազակալած ու ծաղկատար դեմքը և աչքերը, որոնք հազիվ են երևում խիտ, կախ հոնքերի տակից, ունեն մռայլ դաժանության արտահայտություն։ Նրա գլխի վրա դիզվել է վաղուց արդեն չսանրած, խճճված մազերի մի ամբողջ կույտ, որը նրան տալիս է սարդի դաժանություն։ Նա բոբիկ է։

— Դենիս Գրիգորև,— սկսում է քննիչը։— Մոտ եկ և պա-

[1] Օվյոս — վարսակ։

տասխանիր իմ հարցերին։ Սույն հուլիսի յոթին երկաթգծի պահակ Իվան Սեմյոնով Ակինֆովը, առավոտյան գծերով անցնելիս, 141-րդ վերստի վրա քեզ բռնել է ռելսերը փայտակոճերին ամրացնող պտուտակամերը քանդելիս։ Ահա այն... Հենց այդ պտուտամերը ձեռքիդ նա բռնել է քեզ։ Այդպե՞ս է եղել արդյոք։

— Ի՞նչ։

— Այդպե՞ս է եղել արդյոք, ինչպես բացատրում է Ակինֆովը։

— Գիտեմ, եղել է։

— Լավ. իսկ ինչի՞ համար էիր քանդում պտուտակամերը։

— Ի՞նչ։

— Դու քո այդ «ինչը» թող և պատասխանիր հարցիս. ինչի՞ համար էիր քանդում պտուտակամերը։

— Թե որ պետք չլիներ, չէի քանդի,— խոպոտ ձայնով ասում է Դենիսը, աչքի ծայրով նայելով առաստաղին։

— Իսկ քեզ ինչի՞ համար էր հարկավոր։

— Պտուտակամե՞րը։ Մենք դրանք ուղղանին ծանրություն ենք դարձնում։

— Այդ ո՞վ՝ մենք։

— Մենք՝ ժողովուրդը... Այսինքն՝ Կլիմովայի գյուղացիներս։

— Լսիր, եղբայր, դու ինձ մոտ ապուշ մի ձևանա, այլ ասա պարզ։ Իզուր ես ծանրության մասին ստում։

— Ի ծնե չեմ ստել, իսկ հիմի ստո՞ւմ եմ...— մռթմռթում է Դենիսը՝ աչքերը թարթելով։— Բայց մի՞թե, ձերդ բարեծննդություն, կարելի է առանց ծանրության։ Եթե դու խայծը կամ լողափայտը կարթի վրա ամրացնես, ապա մի՞թե դա առանց ծանրության ջրի տակ կգնա։ Ստո՞ւմ եմ...— քմծիծաղեց Դենիսը։— Ինչի՞ է պետք դա՝ այդ խայծը, եթե ջրի երեսին պիտի լողա։ Պերկեսը, դայլաձուկը, շերեփաձուկը միշտ ջրի տակով են գնում, իսկ եթե մեկնումեկը երեսանց է լողում, ուրեմն գուցե շիլիշպեր բռնես, այն էլ՝ հազվադեպ... Մեր գետում շիլիշպեր չի լինում... Այդ ձուկը բաց տեղ է սիրում։

— Դու ինչի՞ համար ես ինձ շիլիշպերի մասին պատմում։

— Ի՞նչ։ Դե ախր դուք ինքներդ եք հարցնում։ Մեզ մոտ աղաներն էլ են այդպես որսում։ Ամենահետին տղան առանց ծանրության չի որսա։ Իհարկե, ով չի հասկանում, նա առանց ծանրության էլ կգնա որսալու։ Հիմարի օրենք չկա գրված...

— Ուրեմն դու ասում ես, այս պտուտակամերը քանդել ես քեզ համար ծանրություն սարքելո՞ւ։

— Բա էլ ինչի՞ համար։ Հո վեգ չէի՞ խաղալու։

— Բայց ծանրության համար դու կարող էիր վերցնել արճիճ, գնդակ... որևէ մեխ...

— Արճիճը ճամփի վրա չես գտնի, պետք է գնել, իսկ մեխն անպետք է։ Պտուտակամերից ավելի լավը չես ճարի... Համ ծանր է, համ էլ ծակ ունի։

— Ի՞նչ հիմարն է ձևանում։ Կարծես երեկ է ծնվել կամ երկրնքից է ընկել։ Մի՞թե չես հասկանում, հիմարի գլուխ, թե ուր է տանում այդ պտուտակամերը քանդելը։ Պահակը որ չնկատեր, ուրեմն, գնացքն ախր կարող էր ռելսերից դուրս գալ, մարդիկ պիտի սպանվեին։ Դու մարդկանց պիտի սպաներիր։

— Աստված ազատի, ձերդ բարեծննդություն։ Ինչո՞ւ սպանել։ Մի՞թե մենք, լավ պարոն, անկնունք կամ չարագործ ենք։ Փառք քեզ աստված, մենք մեր ողջ կյանքում ոչ թե սպանել, այդպիսի միտք էլ չենք ունեցել գլխներումս... Ներիր ու ողորմա, երկնային թագուհի... Այդ ինչե՞ր եք ասում։

— Իսկ քո կարծիքով, ինչի՞ց է պատահում գնացքների խորտակումը։ Քանդիր երկու-երեք պտուտակամեր՝ ահա քեզ և խորտակում։

Դենիսը քմծիծաղ է տալիս և թերահավատորեն աչքերը կկոցում է քննիչի վրա։

— Չէ՞ մի։ Արդեն քանի տարի է, որ ողջ գյուղով պտուտակամեր ենք քանդում և աստված պահպանել է, իսկ հիմա՝ խորտակում... Մարդկանց սպանե՞լ... Եթե ես ռելս վերցնեի կամ, ասենք թե, նրա ճամփի դեմ գերան դնեի, դե, այն ժամանակ երևի շուտ կգար գնացքը, թե չէ... Թո՛ւ, պտուտակամեր։

— Ախր հասկացիր, դրանցով ռելսերն ամրացված են փայտակոճերին։

— Մենք դա հասկանում ենք... Մենք բոլորը հո չե՞նք քանդում։ Թողնում ենք... Առանց խելքի չենք անում... Հասկանում ենք։

Դենիսը հորանջում և խաչակնքում է բերանը։

— Անցյալ տարի այստեղ գնացքը ռելսերից դուրս եկավ,— ասում է քննիչը։— Այժմ հասկանալի է, թե ինչու...

— Ինչ բարեհաճեցի՞ք։

— Այժմ ասում եմ, հասկանալի է, թե ինչու անցյալ տարի գնացքը ռելսերից դուրս եկավ... Ես դա հասկանում եմ։

— Հենց դրա համար էլ դուք կրթված եք, որ հասկանաք, մեր բարերարներ... Ասված գիտեր, թե ում էր հասկացողություն տալիս... Այ, դուք ասում եք, թե ինչը ինչոց է, իսկ պահակը նույնպիսի գյուղացի է, առանց որևէ հասկացողության, բռնում է վզակոթիցդ ու քարշ է տալիս... Ախր նախ քննիր, հետո քարշ տուր։ Ասված է գյուղացի՝ գյուղացու էլ խելք... Գրեցեք նույնպես, ձերդ բարեծննդություն, որ նա երկու անգամ խփեց ատամներիս ու կրծքիս։

— Երբ քեզ մոտ խուզարկություն կատարեցին, մի պտուտակամեր էլ գտան... Դա որտեղի՞ց ես քանդել և երբ։

— Դուք այն մեկի՞ մասին եք ասում, որ կարմիր սնդուկի տակն էր ընկած։

— Չգիտեմ, թե որտեղ էր ընկած, միայն թե գտանք։ Դու այդ ե՞րբ ես քանդել։

— Դա ես չեմ քանդել, դա ինձ տվել է Իգնաշկան՝ շիլ Սեմյոնի տղան։ Ես դա ասում եմ սնդուկի տակն ընկածի մասին։ Իսկ այն, որ բակում, սահնակի մեջ է, ես Միտրոֆանի հետ եմ քանդել։

— Ո՞ր Միտրոֆանի։

— Միտրոֆան Պետրովի... Մի՞թե չեք լսել։ Ուռկաններ է սարքում մեզ մոտ և աղաներին է ծախում։ Նրա մոտ այդ պտուտակամերների մեծ պահանջ կա։ Ամեն մի ուռկանի վրա, հաշվիր, մի տասը հատ...

— Լսիր... պատիժների օրենսգրքի 1081-րդ հոդվածն ասում է, որ երկաթուղուն հասցված ամեն մի դիտավորյալ վնասի համար, երբ դա կարող է վտանգի ենթարկել այդ ճանապարհով անցնող տրանսպորտը, և մեղավորը իմացել է, որ դրա հետևանքը պետք է լինի դժբախտությունը... հասկանո՞ւմ ես՝ իմացել է,— իսկ դու չէիր կարող չգիտենալ, թե դեպի ուր է տանում այդ պտուտակամեր քանդելը,— դատապարտվում է աքսորի տաժանակիր աշխատանքի։

— Իհարկե դուք ավելի լավ գիտեք... Մենք խավարամիտ մարդիկ ենք... Մի՞թե մենք հասկանում ենք։

— Դու ամեն ինչ հասկանում ես։ Դու այդ ստում ես, ձևացնում։

— Ինչո՞ւ ստել։ Հարցրեք գյուղում, եթե չեք հավատում...

Առանց ծանրության միայն սպիտակաձուկ են որսում, իսկ խարակաձկից վատ ի՞նչ կա, բայց նա էլ չի բռնվի առանց ծանրության։

— Դու մեկ էլ դեռ շիլիշպերի մասին պատմիր,— ժպտում է քննիչը։

— Մեզ մոտ շիլիշպեր չկա... Կարթի ձողն առանց ծանրության բաց ենք թողնում ջրի երեսով՝ թիթեռնիկով, մոտենում է ծածանը, այն էլ՝ սակավ։

— Դե՛, լռի՛ր...

Տիրում է լռություն։ Դենիսը փոխում է ոտքը, նայում է կանաչ մահուդով սեղանին և արագ թարթում է աչքերը, կարծես իր աչքերի առաջ ոչ թե մահուդ է տեսնում, այլ արև։ Քննիչն արագ գրում է։

— Ես գնա՞մ,— հարցնում է Դենիսը՝ մի քիչ լռելուց հետո։

— Ո՛չ։ Ես պետք է քեզ կալանքի վերցնեմ և բանտ ուղարկեմ։

Դենիսը դադարում է աչքերը թարթելուց և բարձրացնելով խիտ հոնքերը, հարցական նայում է չինովնիկին։

— Այսինքն՝ ինչպե՞ս թե բանտ, ձերդ բարեծննդություն։ Ես ժամանակ չունեմ, ես տոնավաճառ պիտի գնամ՝ Եգորից ճարպի համար երեք ռուբլին ստանալու...

— Լռի՛ր, մի խանգարիր։

— Բա՞նտ... Եթե պատճառ լիներ՝ կգնայի, իսկ եթե չէ՝ այսպես... Ողջ մնաս... ինչի՞ համար։ Կարծեմ ոչ գողություն եմ արել, ոչ կռիվ... Իսկ եթե դուք պարտքի վրա եք կասկածում, ձերդ բարեծննդություն, մի հավատաք տանուտերին... Դուք պարոն անփոփոխ անդամին հարցրեք... Հավատ ու խիղճ չունի նա, այդ տանուտերը...

— Լռի՛ր։

— Ես առանց այն էլ լուռ եմ...— փնթփնթում է Դենիսը։— Իսկ որ տանուտերը հաշվի մեջ սուտ է փչել, ես նույնիսկ երդում կտամ... Մենք երեք եղբայր ենք... Ասել է թե՝ Կուզմա Գրիգորև, Եգոր Գրիգորև, և ես՝ Դենիս Գրիգորև...

— Դու ինձ խանգարում ես... է՛յ, Սեմյո՛ն,— բղավում է քննիչը։— Տանե՛լ սրան։

— Մենք երեք եղբայր ենք,— փնթփնթում է Դենիսը, երբ երկու ամրակազմ զինվորներ առնում են նրան և տանում սենյակից։— Եղբայրը եղբոր համար պատասխանատու չէ... Կուզ-

ման չի վճարում, իսկ դու, Դենիս, պատասխան տուր... Դատավորնե՞ր են։ Հանգուցյալ աղա-գեներալը մեռել է, երկնային թագավորություն նրան, թե չէ նա ցույց կտար ձեզ՝ դատավորներիդ... Պետք է գիտենալով դատել, ոչ թե իզուր... Ուզում ես՝ ծեծիր, միայն թե տեղին լինի, խղճմտանքով...

1885

ՈՒՆՏԵՐ ՊՐԻՇԻԲԵԵՎ

— Ունտեր-օֆիցեր Պրիշիբե՛և։ Դուք մեղադրվում եք այն բանում, որ սույն սեպտեմբերի 3-ին խոսքով ու գործողությամբ վիրավորել եք ուրյադնիկ Ժիգինին, տանուտեր Ալյապովին, հարյուրապետ Եֆիմովին, վկաներ Իվանովին ու Գավրիլովին, նաև վեց գյուղացու, ըստ որում առաջին երեքին դուք վիրավորանք եք հասցրել իրենց պաշտոնական պարտականությունը կատարելիս։ Ձեզ մեղավոր ճանաչո՞ւմ եք։

Պրիշիբեևը, դեմքը կնճռոտ ու փշաքաղված, ձեռները ձգում է ազդրերն ի վար և պատասխանում խռպոտ, խեղդված ձայնով, յուրաքանչյուր խոսքը շեշտելով, կարծես հրաման է արձակում։

— Ձերդ բարեծնություն, պարոն հաշտարար դատավոր։ Ուրեմս, օրենքի բոլոր հոդվածների համաձայն, դուրս է գալիս ամեն մի հանգամանք համարել փոխադարձաբար։ Մեղավորը ես չեմ, այլ բոլոր մյուսները։ Այս ամբողջ գործն սկսվեց, ողորմի իրան, մեռած դիակի պատճառով։ Ամսիս երեքին ես կնոջս՝ Անֆիսայի հետ, գնում եմ հանգիստ, ազնվաբար, տեսնեմ՝ ափին ամեն տեսակ մարդկանց մի խումբ։ Ի՞նչ լիակատարյալ իրավունքով է այստեղ ժողովուրդ հավաքվել,— հարցնում եմ։ Ինչի՞ համար։ Մի՞թե օրենքում ասված է, որ ժողովուրդը պետք է նախիրով ման գա։ Ու գոռում եմ,— ցրվեցե՛ք։ Սկսեցի բացատրել ժողովրդին, որ ցրվեն, գնան իրենց տները, հարյուրապետին հրամայեցի վզակոթերին տալով քշել...

— Ներողություն, դուք չէ՞ որ ո՛չ ուրյադնիկ եք և ոչ էլ տանուտեր. ժողովուրդ ցրելը մի՞թե ձեր գործն է։

— Իհարկե՛, նրա գործը չի, իհարկե՛,— լսվում են ձայներ սենյակի այս ու այն անկյունից։— Կյանք չունենք դրա ձեռքից, ձերդ բարեծնություն։ Տասնհինգ տարի է հոգիներս հանում է։ Մառայությունից եկավ թե չէ, էդ օրվանից մարդ ուզում է գեղից փախչի։ Բոլորիս տանջել է։

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծնություն,— ասում է վկա տանուտերը։— Գեղովի գանգատավոր ենք։ Դրա հետ ոչ մի կերպ չի կարելի ապրել։ Սրբապատկերներ ենք ման ածում, հարսանիք է, ասենք, կամ թե մի ուրիշ բան. դա ամեն տեղ գոռում-գոչում է, շարունակ կարգ ու կանոն է հաստատում։ Երեխաների ականջը քաշում է, կանանց հետևից մտիկ է տալիս, թե մի բան չպատահի, կարծես սկեսուր է, ինչ է... էս քանի օրը տնետուն էր գնում, հրամայում, որ երգեր չասեն, ճրագներ չվառեն։ Էդպես, ասում է, օրենք չկա, որ երգ ասեն։

— Սպասեք, դուք դեռ ժամանակ կունենաք ցուցմունք տալու,— ասում է հաշտարարը,— իսկ հիմա թող Պրիշիբեևը շարունակի։ Շարունակեցեք, Պրիշիբեև։

— Լսում եմ,— ասում է ունտերը խռպոտ։— Դուք, ձերդ բարեծնություն, բարեհաճում եք ասել, թե ժողովուրդ ցրելն իմ գործը չէ... Լա՜վ... Իսկ եթե անկարգությո՞ւն են անում։ Մի՞թե կարելի է թույլ տալ, որ ժողովուրդն անկարգություն անի։ Էդ ո՞ր օրենքում է գրված, որ ժողովրդին ազատություն տանք։ Ես չեմ կարող թույլ տալ։ Եթե ես էլ նրանց չցրեմ, կարգի չհրավիրեմ, էլ ո՞վ է անելու։ Ոչ ոք իսկական կարգ ու կանոն չգիտի. ամբողջ գյուղում, կարելի է ասել, ձերդ բարեծնություն, մենակ ես գիտեմ, թե ինչպես պետք է վարվել հասարակ կոչում ունեցող մարդկանց հետ, և, ձերդ բարեծնություն, ես կարող եմ ամեն ինչ հասկանալ։ Ես մուժիկ չեմ, ես ունտեր-օֆիցեր եմ, պաշտոնաթող կապիտենարմուս, ծառայել եմ Վարշավայում, շտաբում, իսկ հետո, երբ ծառայությունը թողի, հրշեջ եղա, իսկ դրանից հետո, հիվանդության թուլության պատճառով հեռացա հրշեջներից, և երկու տարի արական կլասիկական գիմնազիայում բարապան եղա... Բոլոր կարգերը գիտեմ։ Իսկ մուժիկը հասարակ մարդ է, նա ոչինչ չի հասկանում, և պետք է ինձ լսի, որովհետև իր օգտի համար է։ Վերցնենք հենց էդ գործը, օրինակ... Ցրում եմ ժողովրդին, իսկ ափին ավազի վրա մեռած մարդու խեղդված դիակ է։ Սա ի՞նչ հիման վրա է, ասում եմ, այստեղ պառկած։ Մի՞թե սա կարգ է։ Ինչի՞ է ուրյադնիկը կանգնել ու նայում։ Դու ինչո՞ւ, ուրյադնիկ, ասում եմ, իշխանությանը իմաց չես տալիս։ Գուցե թե, այս ջրահեղձ հանգուցյալը ինքն իրեն է ջրահեղձ եղել, բայց գուցեև այս բանից Սիբիրի հոտ է գալիս։

Գուցե թե, այստեղ քրեական մարդասպանություն կա... Բայց ուրյադնիկ Ժիգինը՝ ո՛չ մի ուշադրություն, միայն պապիրոս է քաշում։ «Սա ի՞նչ, ասում է, խրատ տվող է ձեզ մոտ։ Որտեղի՞ց է, ասում է, սա հայտնվել ձեր մեջ։ Մի՞թե առանց սրան, ասում է, մենք մեր գործը չգիտենք»։ Նշանակում է, ասում եմ, չգիտես, հիմար, քանի որ կանգնել ես այդպես և առանց ուշադրության։ «Ես, ասում է, դեռ երեկ հայտնել եմ պրիստավին»։ Ինչո՞ւ, ասում եմ, պրիստավին։ Օրենքների ժողովածուի ո՞ր հոդվածի համաձայն։ Մի՞թե այսպիսի գործերում, երբ ջրահեղձներ կամ խեղդվածներ և այլ նման բաներ կան, մի՞թե այսպիսի գործերում պրիստավը կարող է։ Այստեղ, ասում եմ, քրեական, քաղաքացիական գործ է... Այստեղ, ասում եմ, շուտով էստաֆետ պետք է ուղարկել պարոն քննիչին և դատավորներին։ Եվ առաջ ու առաջ դու պետք է, ասում եմ, արձանագրություն կազմես և ուղարկես հաշտարար դատավորին։ Իսկ նա, ուրյադնիկը, լսում է ու ծիծաղում։ Եվ գյուղացիները՝ նույնպես։ Բոլորը ծիծաղում են, ձերդ բարեծնություն։ Սա էլ էր ծիծաղում, սա էլ, Ժիգինն էլ։ Ի՞նչ եք, ասում եմ, հոհոում ատամներդ բաց արած։ Իսկ ուրյադնիկը թե. «Հաշտարար դատավորին, ասում է, այսպիսի գործերը ենթակա չեն»։ Այդ խոսքերից մինչև անգամ բարկությունս եկավ, քրտինքս վրա տվեց։ Ուրյադնիկ, դու այս խոսքերն ասիր, չէ՞,— դառնում է ունտերը ուրյադնիկ Ժիգինին։

— Ասի։

— Բոլորը լսեցին, թե ինչպես դու այս ասիր ամբողջ ժողովրդի առաջ. «Հաշտարար դատավորին այսպիսի գործերը ենթակա չեն»։ Բոլորը լսեցին, թե ինչպես դու այդ... Ես, ձերդ բարեծնություն, քրտնեցի, բարկացա, և մինչև անգամ ապուշ կտրեցի։ Կրկնիր, ասում եմ, կրկնիր, ա՛յ դու էսպես ու էնպես, թե ինչ ասիր։ Նա էլի այդ խոսքերը... Ես մոտեցա դրան։ Ինչպե՞ս, ասում եմ, կարող ես դու այդպես բացատրություն տալ պարոն հաշտարար դատավորի մասին։ Դու, ոստիկանական ուրյադնիկ, և իշխանությանը հակառա՞կ ես։ Հա՞։ Բայց դու գիտե՞ս, ասում եմ, որ եթե պարոն հաշտարար դատավորը կամենա, կարող է քեզ այդ խոսքերի համար նահանգական ժանդարմական վարչությունն ուղարկել քո անբարեհույս վարքի պատճառով։ Բայց դու գիտե՞ս, ասում եմ, այդ տեսակ քաղաքական խոսքերի համար քեզ քշել կարող է պարոն հաշտարար դատավորը։ Իսկ տանուտերը, թե. «Հաշտարարն, ասում է, իր սահմաններից դուրս ոչինչ չի կարող անել։ Նրան ենթարկվում են մանր գործերը»։ Այսպես էլ ասավ, բոլորը լսեցին... Այդ ինչպե՞ս ես դու, ասում եմ, համարձակվում իշխանությունը ոչնչացնել։ Դե, ասում եմ, ինձ հետ հանաքներ մի՛ անի, թե չէ բանը, ախպերս, վատ կլինի։ Պատահում էր, Վարշավայում, կամ երբ բարեպան էի արական կլասիկական պրոգիմնազիայում, հենց որ այդպիսի անհարմար խոսքեր էի լսում, փողոց էի նայում, թե արդյոք ժանդարմ չի՞ երևում. արի, ասում էի, այստեղ, կավալեր,— ու բոլորը զեկուցում էի նրան։ Իսկ այստեղ՝ գյուղում, ո՞ւմ ասես... Բարկությունս բռնեց։ Ինձ վիրավորված զգացի, որ այսօրվա ժողովուրդը դարձել է իր ասածի ու անհնազանդ, և ես փայտս վրա բերի և... իհարկե, ոչ թե պինդ, այլ այնպես, ճիշտ է, թեթև, որ չհամարձակվի ձերդ բարեծնության մասին այդպես խոսքեր ասել... տանուտերին պաշտպանել ուզեց ուրյադնիկը։ Ես, ուրեմն, ուրյադնիկին էլ... Ու սկսվեց... Տաքացա, ձերդ բարեծնություն, դե, առանց էն հս չի՞ կարելի, որ չխփենք։ Հիմար մարդուն եթե չխփես, հենց ինքդ քո հոգուն մեղք կանես։ Ուրիշ բան է, եթե գործի համար է... Իսկ եթե անկարգություն է...

— Ներողությո՛ւն։ Կարգապահությունը հսկելու համար կան հատուկ մարդիկ՝ ուրյադնիկ, տանուտեր, հարյուրապետ...

— Ուրյադնիկն ամեն բան չի կարող նայել-տեսնել, և ուրյադնիկը չի հասկանում այն, ինչ ես եմ հասկանում...

— Բայց ըմբռնեցեք, որ դա ձեր գործը չէ։

— Ինչպե՞ս։ Ինչպես թե իմ գործը չէ։ Հրաշալի՛ է... Մարդիկ անկարգություն են անում, և իմ գործը չէ։ Ուրեմն ես նրանց գովե՞մ, ի՞նչ է։ Դրանք հրես գանգատվում են, թե ես երգ ասելն արգելում եմ... Իսկ ի՞նչ լավ բան կա այդ երգերում։ Փոխանակ մի գործով զբաղվելու՝ նրանք երգե՞ր... Մեկ էլ հրեն նոր մոդա են հնարել՝ իրիկունները ճրագ վառել նստել։ Պետք է պառկելքնել, իսկ նրանք զրուցում են ու ծիծաղում։ Մոտս դրած ունեմ։

— Ի՞նչ ունեք գրած։

— Թե ո՛վ է ճրագով նստում։

Պրիշիբեևը գրպանից հանում է յուղոտած մի թուղթ, ակնոցը դնում է քթին ու կարդում.

— «Ո՛ր գեղացիներն են նստում ճրագով՝ Իվան Պրոխորովը, Սավվա Միկիֆորովը, Պյոտր Պետրովը։ Այրի Շուստրովան անբարոյական ապօրինությամբ ապրում է Սեմյոն Կիսլովի հետ։ Իգնատ Սվեչկոն զբաղվում է կախարդանքով, իսկ նրա կինը՝

Մավրան, ջադու է, գիշերները գնում է ուրիշի կովերը կթում»։

— Բավակա՛ն է,— ասում է դատավորը և սկսում հարցաքննել վկաներին։

Ունտեր Պրիշիբեևը ակնոցը բարձրացնում է ճակատի վրա և զարմացած նայում հաշտարարին, որն, ըստ երևույթին, իր կողմը չի։ Նրա չոված աչքերը փայլում են, քիթը դառնում է վառ կարմիր։ Նայում է նա հաշտարարին, վկաներին և ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչու դատարանի բոլոր անկյուններից մերթ տրտունջ է լսվում, մերթ՝ զսպված ծիծաղ։ Անհասկանալի է նրան և դատավճիռը՝ կալանք մի ամիս ժամանակով։

— Ինչի՞ համար,— ասում է նա ձեռքերը տարակուսանքով տարածելով։— Ո՞ր օրենքով։

Եվ նրա համար պարզ է, որ աշխարհը փոխվել է, և որ աշխարհում ապրելն արդեն ոչ մի կերպ հնարավոր չէ։ Նրան պաշարում են մռայլ ու տխուր մտքեր։ Բայց դատարանից դուրս գալով և տեսնելով գյուղացիներ, որ խմբված խոսում են ինչ-որ բանի մասին, նա ըստ սովորության, որ այլևս հաղթահարել չի կարողանում, ձեռքերը ձգում է աղդրն ի վար և գոռում խռպոտ, բարկացած ձայնով.

— Ժողովուրդ, ցրվեցե՛ք։ Իրար գլխի մի հավաքվեք։ Գնացե՛ք ձեր տները։

1885

ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ

Խառատ Գրիգորի Պետրովը, որ վաղուց հայտնի է իբրև հոյակապ վարպետ և միաժամանակ փուչ, անպետք գյուղացի ամբողջ Գալչինյան գավառում, իր հիվանդ պառավին սայլով տանում է զեմստվոյի հիվանդանոցը։ Նա պետք է մի երեսուն վերստ գնա, մինչդեռ ճանապարհը սարսափելի է, որի հետ արքունական փոստատարն էլ գլուխ չի կարող հանել, ուր մնաց մի այդպիսի ծույլ, անճարակ մարդ, ինչպես խառատ Գրիգորին է։ Ուղիղ դիմացից խփում է կտրող, ցուրտ քամին, օդում, ուր էլ նայես, պտտվում են ձյան փաթիլների ամբողջ ամպեր, այնպես որ չես իմանում՝ ձյունը երկնքից է թե գետնից։ Ձյան մեգի հետևում չեն երևում ո՛չ դաշտերը, ո՛չ հեռագրասյուները, ո՛չ անտառները, իսկ երբ Գրիգորիի վրա թռչում է քամու առանձնապես ուժեղ

պոռթկումը, այն ժամանակ տեսանելի չի լինում անգամ սայլի աղեղը։ Ձառամ, թուլակազմ զամբիկը հաղիվհազ է քարշ գալիս։ Նա ողջ եռանդը թափում է խոր ձյունից ոտները դուրս քաշելու և գլուխը ցնցելու վրա։ Խառատը շտապում է։ Նա անհանգիստ վեր-վեր է թռչում սահնակի կողափայտի վրա և մի գլուխ ձաղկում է ձիու մեջքը։

— Լաց մի լինի, Մատրյոնա...— մոթմոթում է նա։— Համբերի՛ մի քիչ։ Աստված կտա, կհասնենք հիվանդանոց, ու ձեռաց էն իքը... Պավել Իվանիչը քեզ կաթիլներ կտա կամ կհրամայի արյուն բաց թողնել, կամ, կարող է, ողորմած մարդ է, բարեհաճել մի սպիրտով-բանով քեզ տրորել տալ, ու էն է... կողիցդ ցավը դուրս կքաշի։ Պավել Իվանիչը կաշխատի... Կգոռա, ոտները կխփի գետնին, բայց արդեն կաշխատի... Պատվական պարոն է, վարվեցող, աստված նրան առողջություն տա... Հիմի հենց որ տեղ հասնենք, առաջ ու առաջ դուրս կպրծնի իր ֆատերից ու կսկսի վրաս բղավելը. «Ինչպե՞ս։ Սա ինչ բան է,— կգոռա,— ինչո՞ւ ժամանակին չեկար։ Շո՞ւն եմ, ի՞նչ եմ, որ ողջ օրը ձեր գործի ետևից ման գամ։ Ինչո՞ւ առավոտը չեկար։ Կորի՛ գնա։ Հոտդ կտրիր էս տեղերքից։ Վա՛ղը արի»։ Ես էլ կասեմ. «Պարո՞ն բժիշկ։ Պավե՛լ Իվանիչ։ Ձե՛րդ բարձրազնվություն»։— Դե դու էլ գնա է՞, սատանա։ Նո՞։

Խառատը ձաղկում է լղարիկ ձիուն և, չնայելով պառավին, շարունակում է քթի տակ մոթմոթալ.

— «Ձե՛րդ բարձրազնվություն. ճշմարիտ, էն աստվածը, էն խաչը վկա, ճամփա եմ ընկել հազիվ հենց լույսը բացված։ Էլ էստեղ ո՞նց ժամանակին հասնես, թե որ տեր աստված... Աստվածածինը... չարացավ ու բորան ուղարկեց։ Ինքներդ ձեր բարի աչքով տեսեք... Ինչ ազնվացեղ կարգին ձի կուզես բեր, նա էլ ճամփա չի ընկնի, իսկ իմը, ինքներդ ձեր աչքով տեսեք, ձի չի, խայտառակ բան է»։ Իսկ Պավել Իվանիչը ունքերը կկիտի ու կգոռա. «Ճանաչո՞ւմ ենք ձեզ։ Միշտ էլ արդարացում կգտնեք։ Մանավանդ դու, Գրիշկա։ Քեզ վաղուց եմ ճանաչում։ Վա՛խիլ մի, մի հինգ անգամ ոտդ գինետուն գցած կլինես»։ Ես էլ նրան կասեմ. «Ձե՛րդ բարձրազնվություն։ Բա ես չարսիրտ մա՞րդ եմ, ինչ եմ, թե ոչ քրիստոնյայի մեկը։ Պառավը հոգին աստծուն է տալիս, մեռնում է, իսկ ես գինետները կընկնե՞մ։ Ի՞նչ եք ասում, աստված սիրեք։ Քանդվե՞ն էդ գինետները»։ Էդ ժամանակ Պավել Իվանիչը կհրամայի, որ քեզ ներս տանեն հիվանդանոց։ Ես

էլ կընկնեմ ոտքերը... «Պավե՛լ Իվանիչ։ Ձե՛րդ բարձրազնվություն։ Երկնուց գետին շնորհակալ ենք։ Ներողությո՛ւն արա, հիմա՛ր ենք, չնչահավատ ենք, մի՛ մեղադրեք մեզ, դեղացիներ ենք։ Մեր վզակոթին մի լավ պետք է տալ, բայց դուք բարեհաճել, նեղություն եք տալիս ձեզ, ոտներդ ձյան մեջ կեղտոտում եք»։ Իսկ Պավել Իվանիչը մի էսպես մտիկ կտա, ոնց որ թե խփել է ուզում, ու կասի. «Անխելք խոսելու տեղակ, ավելի լավ է, հիմա՛ր, օդի չլակես և պառավին պահես։ Քեզ թակել է պետք»։— «Դրուստ որ թակել, Պավել Իվանովիչ, աստված թակի ինձ։ Բա մենք ո՞նց ոտներդ չընկնենք, չխոնարհվենք, քանի որ մեր տերտիրականը դուք եք։ Ձերդ բարեձնություն, դրուստ եմ ասում, այ հենց ինքը աստված վկա... թքեք երեսիս, թե սուտ ասեմ, հենց որ իմ Մատրյոնան, ինքը կառողջանա, ոտքի կկանգնի, հենց սրտներդ ինչ-որ կուզենա, էն էլ կանեմ։ Մխախոտատուփ, թե կուզեք կարմիր կեչուց... կրոկետի գնդակներ, կեգլիներ կարող եմ շինել իսկական արտասահմանի... ձեզ համար ամեն ինչ կանեմ։ Մի կոպեկ չեմ վերցնի ձեզնից։ Մոսկվայում ձեզնից էդպիսի պորտսիգարի համար չորս ռուբլի կվերցնեին, համա ես ոչ մի կոպեկ։ Բժիշկը կծիծաղի ու կասի. «Լավ է, լավ, իմանում եմ։ Մենակ ափսոս, որ հարբեցող ես...»։ Ես, ախպեր, պառավս, իմանում եմ, թե պարոնների հետ ոնց է պետք։ Էնպիսի պարոն չկա, որի հետ խոսել չիմանամ։ Մենակ աստված մի ճար անի, ճամփից դուրս չգամ։ Տես մի ոնց է բուքը վեր կացել, աչք ու երես փակում։

Եվ խառատը թոնթորում է քթի տակ, լեզվին է տալիս անվերջ, որպեսզի կարողանա ծանր զգացումը մի փոքր խլացնել։ Լեզվին շատ խոսք է գալիս, բայց մտքեր ու հարցեր շատ կան գլխում։ Դժբախտությունը խառատին վրա հասավ հանկարծ, անսպասելի, և հիմա նա ոչ մի կերպ չի կարողանում սթափվել, խելքը գլուխը հավաքել, մի բան մտածել։ Ապրել է մինչև հիմա անվրդով, միշտ գինուց կիսամոռաց, չիմանալով ո՛չ դժբախտություն, ո՛չ ուրախություններ, և հանկարծ հիմա սիրտը մի սարսափելի ցավ է ընկել։ Անհոգ, խմող, անբան մի մարդ, առանց այլևայլության հայտնվեց զբաղվող, հոգացող, շտապող և անդամ բնության դեմ մարտնչող մարդու դրության մեջ։

Խառատը հիշում է, որ դժբախտությունն սկսվեց երեկ երեկոյից։ Երբ երեկ երեկոյան վերադարձավ տուն՝ ըստ սովորության խմած, և հին սովորության էլ սկսեց նախատելն ու բռունցքներ բանացնելը, պառավն իր կովարար մարդուն այնպես նայեց, ինչպես առաջ երբեք չէր նայել։ Սովորաբար նրա պառավական աչքերի արտահայտությունը տանջվածի էր, հեզ, ինչպես այն շներինը, որոնց շատ են ծեծում և վատ են պահում. իսկ այժմ նա նայում էր խստորեն և անքթիթ, ինչպես սրբերն են նայում սրբապատկերներից կամ մեռնողները։ Հենց այդ տարօրինակ, վատ աչքերից էլ սկսվեց դժբախտությունը։ Շշկլված խառատը հարևանից ձի խնդրեց և հիմա պառավին հիվանդանոց է տանում, այն հույսով, որ Պավել Իվանիչը դեղափոշիներով ու քսուքներով կվերադարձնի պառավի առաջվա հայացքը։

— Ինչ եմ ասում, Մատրյոնա, դու էն ինքը...— մռթմռթում է նա։— Թե, բան է, Պավել Իվանիչը կհարցնի քեզ ծեծում էի թե չէ, ասա. իսկի՞... Ես էլ քեզ չեմ ծեծի։ Է՛ն խաչը։ Էն էլ որ ծեծում էի, գիտես թե չարությո՞ւնից էր։ Հենց էնպես, զուր ծեծում էի։ Սրտումս սիրում եմ քեզ։ Ուրիշի հենց պետքն էլ չէր լինի, բայց ես, տես, քեզ հիվանդանոց եմ տանում... աշխատում եմ։ Բուքն էլ հա փչում է ու փչում։ Տեր աստված, դու գիտես։ Աստված տար մի ճամփից դուրս չգայի։ Հ՞ը, կողքդ ցավում է։ Մատրյոնա, ի՞նչ ես ասկել։ Քեզ եմ հարցնում. կողքդ ցավո՞ւմ է։

Տարօրինակ է նրա համար այն, որ պառավի երեսին ձյունը չի հալչում, տարօրինակ է, որ երեսը հենց մի տեսակ սրվել է, գունատ-գորշ է դառել, մուգ մոմագույն և խիստ լուրջ։

— Ա՛յ թե ցանցառն ես,— մռթմռթում է խառատը,— ես քեզ սրտից-հոգուց բան եմ ասում, իսկ դու էն իքը... այ թե ցանցառն ես։ Մեկ էլ տեսար չեմ տանի Պավել Իվանիչի մոտ։

Խառատը բաց է թողնում սանձերը և սկսում մտածել։ Ետ նայել պառավին սիրտ չի անում. սարսափելի է։ Նրան հարց տալը և պատասխան չստանալն է՛լ ավելի սարսափելի է։ Վերջապես, որպեսզի վերջ տա անհայտությանը, նա, առանց պառավին նայելու, շոշափում է նրա սառը ձեռքը։ Բարձրացրած ձեռքը վայր է ընկնում մտրակի պես։

— Էս հո մեռե՛լ է։ Տեսա՞ր բանը։

Եվ խառատը լաց է լինում։ Այնքան չի խղճում նրան, որքան բարկությունն է գալիս։ Դժբախտությունը հենց նոր սկսածչսկսած, արդեն ահա վախճանը վրա հասավ։ Դեռ չէր սկսել ապրել պառավի հետ, մի խոսք ասել, խղճացել նրան, որ նա ահա արդեն մեռավ... Ապրեց նրա հետ քառասուն տարի, բայց ախր այդ քառասուն տարիներն անցան ինչպես մշուշի մեջ։ Հարբե-

ցողության, ծեծի և կարիքի հետևում չզգացվեց կյանքը։ Եվ հակառակի պես պառավը մեռավ հենց այն ժամանակ, երբ նա զգաց, որ խղճում է նրան, առանց նրա ապրել չի կարող, սարսափելի մեղավոր է նրա առաջ։

— Ախր, նա դռնեդուռ ընկած մուրում էր,— հիշում է նա։— Ես ինքս էի ուղարկում նրան մարդկանց մոտ մուրալու, դու բանի՞ն նայի։ Հիմարը մի տասը տարի էլ ապրեր, թե չէ, հենց էն է, մտածում է, թե ես ճիշտ որ էդպես եմ։ Տեր աստված, էս ես ո՞ր գրողի ծոցն եմ գնում։ Հիմի էլ բժշկել պետք չի, հարկավոր է թաղել։ Ե՛տ դառի։

Խառատը սահնակը ետ է դարձնում և ամբողջ ուժով խփում է ձիուն։ Ճանապարհը ժամառժամ քանի գնում ավելի վատանում է։ Հիմա արդեն սահնակի աղեղն էլ բոլորովին չի երևում։ Հազիվ երբեմն սահնակը մատղաշ եղևնու վրա է գնում, մի սև բան ճանկռում է խառատի ձեռքերը, արագ երևում-կորչում է նրա աչքերի առաջ, և տեսադաշտը կրկին դառնում է սպիտակ, պտրտվում է։

«Ա՛յ մի նորից ապրեի»,— մտածում է խառատը։

Հիշում է նա, որ Մատրյոնան քառասուն տարի առաջ ջահել էր, գեղեցիկ, ուրախ, հարուստ օջախից։ Նրան խառատին տվին նրա համար, որ խաբվեցին նրա վարպետությունից։ Բոլոր տվյալները կային լավ կյանքի համար, բայց ցավն այն էր, որ նա ինչպես որ կուշտ խմեց հարսանիքից հետո, վեր ընկավ գյուղական վառարանի վրա, այնպես էլ կարծես մինչև հիմա չարթնացավ։ Հարսանիքը չի հիշում, իսկ թե ի՞նչ եղավ հարսանիքից հետո, որ սպանես, ոչինչ չի հիշում, բացի գուցե նրանից, որ ուտում էր, պառկում էր, կռվում էր։ Հենց այդպես էլ կորան քառասուն տարիները։

Սպիտակ ձյան ամպերը սկսում են քիչ-քիչ գորշանալ։ Մութը վրա է հասնում։

— Ախր էս ո՞ւր եմ գնում,— ուշքը վրան է հավաքում խառատը։— Թաղել պետք է, իսկ ես հիվանդանոց եմ տանում... Ցնդել եմ կարծես։

Խառատը կրկին ետ է դարձնում սահնակը և կրկին խփում է լղարիկ ձիուն։ Ձամբիկը լարում է իր բոլոր ուժերը և փնչացնելով վազում է մանր վարգով։ Խառատը վրա-վրա ձաղկում է նրա մեջքը... Հետևից լսվում է ինչ-որ թխկոց, և նա, թեև ետ չի նայում, բայց գիտե, որ դա հանգուցյալի գլուխն է, որ թխկացնում

է սահնակին։ Իսկ շուրջը քանի գնում մթնում է ու մթնում, քամին դառնում է ավելի ցուրտ ու կտրող։

«Ա՛յ մի նորից ապրեի...— մտածում է խառատը։— Նոր գործիք ձեռք բերեի, պատվերներ վերցնեի... պառավին փող տայի... հա՞»։

Եվ ահա նա ձեռքից վայր է գցում սանձերը։ Փնտրում է, ուզում է վերցնել և ոչ մի կերպ չի կարողանում. ձեռքերը չեն գործում...

«Միևնույն է...— մտածում է նա,— ձին ինքնիրեն կգնա, ճանապարհը գիտի։ Քնե՛մ մի... Մինչև թաղումը կամ հոգեհանգիստը թե՛ք ընկնեմ...»։

Խառատը փակում է աչքերը և նիրհում է։ Մի փոքր անց զգում է, որ ձին կանգ է առել։ Նա բաց է անում աչքերը և տեսնում է իր առջև ինչ-որ մի սև բան, խրճիթի կամ խոտի դեզի նման...

Կուզեր սահնակից դուրս գալ և իմանալ բանն ինչ է, բայց ամբողջ մարմնի մեջ այնպիսի ծուլություն է զգում, որ ավելի լավ է սառչել, քան տեղից շարժվել... Եվ նա անդորր քնում է։

Զարթնում է նա ներկած պատերով մի մեծ սենյակում։ Պատուհաններից լցվում է արևի պայծառ լույսը։ Խառատը տեսնում է իր առջև մարդկանց և առաջին հերթին ուզում է իրեն ցույց տալ, ծանր, հասկացող մարդու պես։

— Հոգեհանգիստ է պետք պառավի համար, եղբայրներ,— ասում է նա։— Տեր հորը մի ասեիք...

— Լա՜վ, լա՜վ, պառկի՛ր դեռ,— կտրում է նրան մի ինչ-որ ձայն։

— Վա՜յ, հայրի՜կս, Պավել Իվանիչ,— զարմանում է խառատը, իր առջև տեսնելով բժշկին։— Ձե՜րդ բարեձեռնդություն։

Նա ուզում է ցատկել վեր և բժշկության առջև ոտքերը շրջիկացնել կանգնել, բայց զգում է, որ ձեռքերն ու ոտքերը չեն հնազանդվում իրեն։

— Ձե՜րդ բարեձեռնդություն. որտե՞ղ են ոտքերս։ Ձեռքերս որտե՞ղ են։

— Մնաս բարո՛վ ասա ձեռքերիդ ու ոտքերիդ։ Կենդանի մնացիր, փա՛ռք տուր աստծուն։ Վնաս չունի, վաթսունը ապրեցիր— քեզ հերիք է։

— Ցավի մեջ եմ... Ձերդ բարեձեռնդություն, ախր ցավի մեջ

եմ։ Ներողություն արեք բարի սրտով։ Մի հինգ-վեց տարի է՛լ...

— Ինչի՞ համար։

— Ձին ուրիշինն է, պետք է տիրոջը տալ... Պառավին թաղել... Եվ ո՞նց էլ ամեն բան շուտ է լինում էս աշխարհքում։ Ձե՛րդ բարեծննդություն։ Պա՛վել Իվանիչ։ Ծխախոտատուփ կշինեմ կարմիր կեչուց, ամենալավը։ Կրոկետի՛կ կտաշեմ։

Բժիշկը թափ է տալիս ձեռքը և դուրս է ելնում հիվանդասենյակից։ Խառատի բանը՝ հոգոցն հանգուցելոց։

1885

ՎԻՇՏԸ

Кому повем печаль мою?

Իրիկնային աղջամուղջ է։ Ձյունի խոշոր, թաց փաթիլները հանդարտ պտտվում են հենց նոր վառված լապտերների շուրջը և բարակ, փափուկ շերտով նստում կտուրներին, ձիերի մեջքերին, մարդկանց ուսերին ու գլխարկներին։ Կառապան Իոնա Պոտապովը ամբողջովին սպիտակել է ինչպես ուրվական։ Նա կծկվել է, ինչքան կարող է կծկվել մարդկային մարմինը, և սահնակի վրա նստել է իր տեղը ու չի շարժվում։ Եթե նրա վրա մի ամբողջ ձյունակույտ էլ թափվի, թվում է, նույնիսկ այդ դեպքում նա անհրաժեշտ չի համարի իր վրայից թափ տալ ձյունը... Նրա լղարիկ ձին էլ սպիտակ է ու անշարժ։ Իր անշարժությամբ, մարմնի ձևերի անկյունավորությամբ և ոտքերի փայտանման ուղիղությամբ նա նույնիսկ մոտիկից նման է մի կոպեկանոց կարկանդակ-ձիու։ Ամենայն հավանականությամբ, նա խորասուզվել է մտքերի մեջ։ Ում որ պոկել են գութանից, սովորական, գորշ պատկերներից և նետել այստեղ՝ այս հորձանուտի մեջ, որ լի է հրեշային լույսերով, անլռելի աղմուկով ու շտապ վազվզող մարդկանցով, նա չի կարող չմտածել...

Իոնան և իր ձին արդեն վաղուց է տեղից չեն շարժվում։ Նրանք իջևանի բակից դուրս են եկել դեռ ճաշից առաջ, սակայն առաջին վաստակը դեռ չկա ու չկա։ Բայց ահա, քաղաքի վրա իջնում է իրիկնային մշուշը։ Լապտերների լույսերի գունատությունն իր տեղը զիջում է աշխույժ գույներին, և փողոցի եռուզեռը դառնում է ավելի աղմկոտ։

— Կառապա՞ն, դեպի Վիբորգյա՞ն,— լսում է Իոնան։— Կառապա՞ն։

Իոնան ցնցվում է և ձյունով ծեփված թերթերունքների միջից նկատում է կնգուղավոր շինելով մի զինվորականի։

— Դեպի Վիբորգյա՞ն,— կրկնում է զինվորականը։— Քնա՞ծ ես, ի՞նչ է։ Դեպի Վիբորգյան։

Ի նշան համաձայնության, Իոնան ձգում է սանձերը, թափվում են ձյան շերտերը ձիու մեջքից և իր ուսերից... Զինվորականը նստում է սահնակ։ Կառապանը շրթունքներով չպպացնում է, կարապի նման վիզը երկարացնում ու մի փոքր բարձրանում տեղից, և ավելի շուտ ըստ իր սովորության, քան թե անհրաժեշտությունից, թափահարում է մտրակը։ Ձին նույնպես երկարացնում է վիզը, ծռում իր փայտանման ոտքերը և անվճռական շարժվում է տեղից...

— Ո՞ւր ես քշում, վայրենի՛,— հենց սկզբից Իոնան բացականչություններ է լսում ետ ու առաջ շարժվող խավար բազմության միջից։— Ո՞ւր է շտապում գրողի տարածը։ Ա՛չ պահիր։

— Քշել չե՛ս կարողանում։ Ա՛չ պահիր,— բարկանում է զինվորականը։

Հայհոյում է կառապանը կառեթի վրայից, անցորդը, որ վազում է ճանապարհով, և ուսը դիպել էր ձիու դնչին, նայում է չարությամբ ու իր թևից թափ է տալիս ձյունը։ Իոնան անհանգստանում է իր տեղում, ինչպես ասեղների վրա նստած, արմունկները թափահարում է կողքի, պտտեցնում է աչքերը ինչպես ցնորված, կարծես չի հասկանում, թե որտե՞ղ է ինքը և ինչո՞ւ է այդտեղ։

— Ի՞նչ սրիկաներ են բոլորը,— սրախոսում է զինվորականը։— Հենց մի գլուխ ուզում են ընդհարվել քեզ հետ կամ ձիու տակ ընկնել։ Երևում է՝ խոսքը մեկ են արել։

Իոնան նայում է նրան և շրթունքները շարժում... Ըստ երևույթին ուզում է ինչ-որ բան ասել, բայց նրա կոկորդից ոչինչ դուրս չի գալիս, բացի ֆսսոցից։

— Ի՞նչ,— հարցնում է զինվորականը։

Իոնան ժպիտով ծռում է բերանը, լարում է կոկորդը ու կերկերում.

— Ախր էս շաբաթ, աղա, էս շաբաթ տղաս մեռավ։

— Հը՛մ... Իսկ ինչի՞ց մեռավ։

Իոնան ամբողջ մարմնով շուռ է գալիս նրա կողմը, ասում.

— Դե, ո՛վ է իմանում։ Երևի ջերմախտից... Երեք օր պառկեց հիվանդանոցում ու մեռավ... Աստծու կամքն էր։

— Այն կողմը շուտ տուր, դև՛,— լսվում է խավարի միջից։— Թոկի՞ց է փախել, ի՞նչ է, քավթառ շո՛ւնը։ Աչքդ բաց արա՛։

— Քշի՛ր, քշի՛ր...— ասում է զինվորականը։— Այսպես մենք մինչև վաղն էլ տեղ չենք հասնի։ Ձափ գցի՛ր ձին։

Կառապանը նորից երկարացնում է վիզը, մի փոքր բարձրանում ու ծանր նազանքով շարժում է մտրակը։ Հետո մի քանի անգամ նայում է ուղևորին, բայց նա փակել է աչքերը և, ըստ երևույթին, տրամադիր չէ լսելու։ Նրան իջեցնելով Վիբորգում, Իոնան կանգ է առնում մի պանդոկի մոտ, կծկվում է սահնակի վրա ու նորից անշարժանում... Թաց ձյունը նորից սպիտակ է ներկում նրան էլ, ձիուն էլ։ Անցնում է մի ժամ, երկու ժամ...

Կրկնակոշիկները ամուր թփթփացնելով և իրար հայհոյելով, մայթով անցնում են երեք երիտասարդ. նրանցից երկուսը բարձրահասակ են ու նիհար, երրորդը փոքր է ու սպատավոր։

— Կառապա՞ն, դեպի Ոստիկանական կամուրջը,— խուլ ղողանջուն ձայնով կանչում է սպատավորը։— Երեքի՛ս... քսան կոպե՛կ։

Իոնան ձգում է սանձերը և շրթունքներով չպպացնում։ Քսան կոպեկը ձեռնտու գին չէ, բայց նրա հոգսը այժմ գինը չէ... Մի ռուբլի է թե հինգ կոպեկ՝ այժմ միևնույն է նրա համար, միայն թե ուղևոր լինի... Երիտասարդները իրար հրելով ու հայհոյելով մոտենում են սահնակին և երեքն էլ միանգամից բարձրանում են նստարանին։ Սկսվում է վճռվել այն հարցը, թե ո՛ր երկուսը պիտի նստեն և ո՛ր երրորդը կանգնի։ Միմյանց երկար նախատելուց, համառելուց և լուտանքներ թափելուց հետո գալիս են այն վճռին, որ պետք է կանգնի սպատավորը, որպես ամենափոքրը։

— Դե՛, քշի՛ր,— խուլ ղողանջում է սպատավորը, տեղավորվելով և շնչելով Իոնայի ծոծրակին։— Թակի՛ր։ Ա՛յ թե գլխարկ ունես, հա՞, ախպեր։ Ամբողջ Պետերբուրգում ավելի վատը չի ճարվի...

— Հի՛-հի՛... հի՛-հի՛,— ծիծաղում է Իոնան։— Ճիշտ ու ճիշտ...

— Դե՛, դու, ճիշտ ու ճիշտ, քշի՛ր։ Այսպե՞ս պիտի գնաս ամբողջ ճանապարհը։ Հա՞։ Իսկ վզակոթի՞դ։

— Գլուխս տրաքվում է...— ասում է երկարահասակներից մեկը։— Երեկ Դուկմասովների մոտ ես ու Վասկան երկուսով չորս շիշ կոնյակ խմեցինք։

— Չեմ հասկանում, թե ինչո՛ւ ստել,— զայրանում է մյուս երկարահասակը։— Ստում է, ոնց որ անասուն։

— Աստված ինձ պատժի, ճշմարիտ եմ ասում...

— Դա այնքան է ճշմարիտ, որքան այն, թե ոջիլը հազում է։

— Հի՛-հի՛,— ծիծաղում է Իոնան,— ա՛յ թե ուրախ պարոններ են։

— Թո՛ւ, գրողի տարած,— վրդովվում է սպատավորը։— Քշելո՞ւ ես թե չէ, քավթառ, խոլերա։ Այսպե՞ս են քշում։ Շրբխկացրո՛ւ մտրակով։ Նո՛ւ, սատանա։ Նո՛ւ։ Մի լավ հասցրու դրան։

Իոնան իր թիկունքում զգում է սպատավորի մարմնի պտույտ գալը ու ձայնի թրթռոցը։ Նա լսում է իրեն ուղղած հայհոյանքը, մարդիկ է տեսնում, և մենակության զգացումը քիչ-քիչ սկսում է հեռանալ սրտից։ Սպատավորը հայհոյում է այնքան, մինչև որ ճզմվում է մի վեցհարկանի պճնազարդ հայհոյանքի տակ և բռնում է հաղը։ Երկարահասակները սկսում են խոսել ինչ-որ Նադեժդա Պետրովնայի մասին։ Իոնան նայում է նրանց։ Սպասելով մի փոքր դադարի, նա նորից նայում է ու մոթմոթում։

— Ախր էս շաբաթ... է՛հ, էս շաբաթ տղա՛ս մեռավ։

— Բոլորս էլ մեռնելու ենք...— հառաչում է սպատավորը՝ հազից հետո շրթունքները սրբելով։— Դե՛հ, քշի՛ր, քշի՛ր։ Պարոնայք, ես վճռականապես չեմ կարող այլևս այսպես գնալ։ Ե՞րբ է մեզ տեղ հասցնելու։

— Իսկ դու մի թեթև աշխուժացրու դրան... Վզակոթին տուր։

— Լսո՞ւմ ես, քավթառ խոլերա։ Ախր վիզդ կջարդեմ... Քեզ նմանների նազը տանելը՝ մեկ է թե ոտքով գնալ... Լսո՞ւմ ես, վիշապ օձ։ Թե՞ թքել ես մեր խոսքերի վրա։

Եվ Իոնան ավելի շատ լսում, քան թե զգում է իր վզակոթին իջնող հարվածների ձայնը։

— Հի՛-հի՛...— ծիծաղում է նա։— Ուրախ պարոններ են... աստված կյանք տա։

— Կառապան, դու ամուսնացա՞ծ ես,— հարցնում է երկարահասակը։

— Ե՞ս։ Հի՛-հի՛... ուրախ պարոններ են։ Հիմա ես մի կին

ունեմ՝ խոնավ հողը... Հի՜-հի՜-հի՜... Այսինքն՝ գերեզմանը... Այ, տղա՛ս մեռավ, իսկ ես ապրում եմ... Զարմանալի բան է, մահը դռները շփոթել է... Փոխանակ ինձ մոտ գալու, տղիս մոտ եկավ...

Եվ Իոնան շուտ է գալիս, որ պատմի, թե ինչպես մեռավ իր տղան, բայց այդ ժամանակ սապատավորը թեթև հառաչում է ու հայտնում, թե՝ փառք աստծու, վերջապես տեղ հասան։ Ստանալով քսան կոպեկը, Իոնան երկար նայում է զվարճասերների հետևից, որ անհետանում են մի մութ դռնով։ Նորից մենակ է Իոնան, ու նորից լռություն է իջնում նրա շուրջը... Կարճ ժամանակ խաղաղված վիշտը նորից է հայտնվում և ավելի մեծ ուժով է ճնշում սիրտը։ Իոնայի աչքերը տագնապով ու տանջահար սահում են փողոցի երկու կողմում թափառող ամբոխի վրայով։ Արդյոք այդ հազարավոր մարդկանց մեջ չի՞ լինի թեկուզ մեկը, որ լսի իրեն։ Բայց ամբոխը վազում է, չնկատելով ո՛չ նրան, ո՛չ նրա վիշտը... Մեծ է վիշտը, սահմաններ չունի։ Եթե պայթի Իոնայի կուրծքը և դուրս թափվի վիշտը, ապա, թվում է, կլցնի ամբողջ աշխարհը, բայց, չնայած դրան, չի երևում։ Նա կարողացել է տեղավորվել մի այնպիսի չնչին կեղևի մեջ, որ օրը ցերեկով ճրագով էլ չես տեսնի նրան... Իոնան տեսնում է պարկը ձեռքին դռնապանին և վճռում է խոսել նրա հետ։

— Սիրելի, ժամը քանի՞սը կլինի հիմա,— հարցնում է նա։

— Տասը... Ի՞նչ ես կանգնել այստեղ։ Անցի՛ր։

Իոնան քշում է մի քանի քայլ և կռանում ու հանձնվում իր վշտին... Մարդկանց դիմելը նա համարում է արդեն անօգուտ։ Բայց մի հինգ րոպե չանցած՝ նա ուղղվում է, գլուխը ցնցում, կարծես սուր ցավ է զգում և ձգում է սանձը... Ծանր է անասելի։

«Իշևան գնամ,— մտածում է Իոնան։— Իշևան գնամ»։

Եվ լղարիկ ձին, կարծես հասկանալով նրա միտքը, սկսում է թեթև վազել։ Ժամուկես հետո Իոնան արդեն նստած է մեծ, կեղտոտ վառարանի մոտ։ Վառարանի վերևում, նստարանների վրա ու հատակին խոմփում են մարդիկ։

Օդը թանձրացած է ու հեղձուկ... Իոնան նայում է քնածներին, քորվում է և ափսոսում, որ այդքան շուտ վերադարձավ տուն...

«Վարսակի փող էլ չհանեցի,— մտածում է նա։— Վիշտն էլ հենց դրանից է։ Այն մարդը, որ իր գործը գիտի... որ ինքն էլ է կուշտ, իր ձին էլ, միշտ հանգիստ կլինի...»։

Անկյուններից մեկում վեր է կենում մի երիտասարդ կառապան, քնկոտ կռնչում ու մեկնվում է դեպի ջրով լի դույլը։

— Ծարավե՞լ ես,— հարցնում է Իոնան։

— Տեսնում ես, ծարավել եմ։

— Այդպես... Անուշ լինի... Իսկ իմ տղան, ախպերս, մեռավ... Լսե՞լ ես... Էս շաբաթ, հիվանդանոցում... Պատմելու բան է։

Իոնան նայում է, թե ինչ տպավորություն թողին իր խոսքերը, բայց ոչինչ չի տեսնում։ Երիտասարդը ամբողջովին ծածկվել ու արդեն քնել է։ Ծերունին հառաչում է ու քորվում... Ինչպես երիտասարդը խմել էր ուզում, այնպես էլ ինքը խոսել է ուզում։ Շուտով մի շաբաթ կլինի, որ մեռել է տղան, իսկ ինքը ոչ ոքի հետ դեռ կարգին չի խոսել։ Պետք է մի կարգին խոսել, երկար ու բարակ պատմել... Պետք է պատմել, թե ինչպես հիվանդացավ տղան, ինչպես էր տանջվում, ինչ ասաց մեռնելուց առաջ, ինչպես մեռավ... Պետք է նկարագրել թաղումը և թե ինչպես հիվանդանոց գնաց հանդուցյալի շորերը բերելու։ Գյուղում մնաց աղջիկը՝ Անիսյան... Նրա մասին էլ պետք է ասել... Եվ քի՞չ բան կա պատմելու։ Լսողը պետք է հառաչի, ախ ու վայ քաշի, ողբա... Բայց կնանոց հետ խոսելն ավելի լավ է։ Նրանք թեև հիմար են, բայց երկու խոսքից լաց ու կոծ են բարձրացնում։

«Գնամ ձիուն նայեմ,— մտածում է Իոնան։— Քնել միշտ էլ կարելի է... Քունդ, ասենք, միշտ էլ կառնես...»։

Նա հագնվում ու գնում է ախոռ, որտեղ կապած է իր ձին։ Իոնան մտածում է վարսակի մասին, խոտի ու եղանակի... երբ մենակ է, իր տղայի մասին մտածել նա չի կարող... Որևէ մեկի հետ նրա մասին խոսել կարելի է, բայց ինքն իրեն մտածել և պատկերացնել նրան՝ անչափ սարսափելի է։

— Ուտո՞ւմ ես,— հարցնում է Իոնան իր ձիուն՝ տեսնելով նրա փայլփլուն աչքերը։— Դե, կե՛ր, կե՛ր... Քանի որ վարսակի փող չենք հանել, խոտ ենք ուտելու... Այո՛... Քշելու համար ես արդեն ծերացել եմ... Տղաս պիտի քշեր, ոչ թե ես... Նա իսկական կառապան էր... Մենակ թե ապրեր...

Իոնան մի փոքր լռում է, ապա շարունակում.

— Է, այդպես, ձիուկ ախպերս... Չկա Կուզմա Իոնիչը... Կյանքը քեզ բաշխեց... Վերցրեց ու իզուր մեռավ... Հիմա, ասենք թե, դու քուռակ ունես, դու էլ էդ քուռակի հարազատ մերն ես...

Ու հանկարծ, ասենք թե, էդ քուռակը արևը քեզ բաշխի... Չէ՞ որ ափսոս է։

Զին ուտում է, լսում ու շնչում է իր տիրոջ ձեռքերին...

Իոնան տարվում ու ամեն ինչ պատմում է նրան...

1886

ԻՐԱՐԱՆՅՈՒՄ

Մաշենկա Պավլեցկայան, ինստիտուտի դասընթացը դեռ նոր ավարտած մի ջահել աղջիկ, զբոսանքից վերադառնալով Կուշկինների տուն, որտեղ նա ապրում էր որպես տնային դաստիարակչուհի, մի արտասովոր իրարանցում տեսավ։ Դուռը նրա առաջ բացող բարապան Միխայլոն հուզված էր ու խեցգետնի պես կարմրած։

Վերևից աղմուկ էր լսվում։

«Երևի տանտիրուհու նոպան է բռնել...— մտածեց Մաշենկան,— կամ ամուսնու հետ է կռվել...»։

Նախասենյակում և միջանցքում նա հանդիպեց սպասուհիներին։ Նրանցից մեկը լաց էր լինում։ Հետո Մաշենկան տեսավ, թե ինչպես իր սենյակից դուրս վազեց ինքը՝ տանտեր Նիկոլայ Սերգեյիչը, որ մի փոքրամարմին, դեռևս ո՛չ այնքան ծեր մարդ էր՝ թառամած դեմքով և լայն ճաղատով։ Նա կարմրատակած էր և ցնցվում էր... Դաստիարակչուհուն չնկատելով՝ նա անցավ նրա մոտով և ձեռքերը վեր բարձրացնելով գոչեց.

— Օ՜, ի՜նչ սոսկալի բան։ Ինչպիսի՜ սանձարձակություն, ինչպիսի՜ հիմարություն։ Զզվելի՜ է։

Մաշենկան մտավ իր սենյակը և այստեղ առաջին անգամ իր կյանքում ստիպված եղավ ամբողջ սրությամբ ապրելու այն զգացմունքը, որ այնքան ծանոթ է հարուստ ու անվանի մարդկանց հացով ապրող կախյալ ու ամոթխած մարդկանց։ Նրա սենյակը խուզարկում էին։ Տանտիրուհի Ֆեդոսյա Վասիլևնան, որ մի հաստամարմին, լայնաթիկունք անճոռնի կին էր՝ թավ ու սև հոնքերով, գլխաբաց ու մազերը խռիվ, հազիվ նկատելի բեղիկներով ու կարմիր ձեռքերով, դեմքով ու շարժումներով նման հասարակ խոհարարուհու, կանգնել էր նրա սեղանի մոտ և նորից հասարակ պայուսակի մեջ էր լցնում դուրս թափած թելի կծիկները, շորի կտորտանքն ու թղթերը... Ըստ երևույթին դաստիարակչուհու երևալն անսպասելի էր նրա համար, որովհետև ետ նայելով ու նրա դունատ, զարմացած դեմքը տեսնելով՝ տիրուհին թեթևակի շփոթվեց ու մրմնջաց.

— Pardon, ես... պատահաբար թափել էի... թևքս կպել էր ու շուռ տվել...

Եվ էլի ինչ-որ բան ասելով, մադամ Կուշկինան երկար փեշը խշխշացնելով դուրս գնաց։ Մաշենկան մի զարմացած հայացք գցեց իր սենյակի վրա և չիմանալով, թե ինչ մտածի, ուսերը թոթվեց, վախից սառավ... Ի՞նչ էր որոնում Ֆեդոսյա Վասիլևնան իր պայուսակում։ Եթե իսկապես, ինչպես ասում էր, պատահաբար թևքն էր դիպել ու ցած թափել, հապա ինչո՞ւ Նիկոլայ Սերգեյիչը սենյակից դուրս թռավ այնպես կարմրած ու հուզված։ Ինչո՞ւ սեղանի դարակը մի փոքր դուրս է քաշված։ Ինչո՞ւ բաց էր այն փոքրիկ տուփը, որի մեջ դաստիարակչուհին սպիտակ դրամ ու նամականիշներ էր պահում։ Այդ տուփը բաց էին արել, բայց փակել չէին կարողացել, թեպետև ամբողջ փականը քերծմրծել էին։ Դրադարակը, սեղանի երեսը, անկողինը՝ ամեն ինչ իր վրա խուզարկության թարմ հետքեր էր կրում։ Սպիտակեղենի զամբյուղը նույնպես։ Սպիտակեղենը դարսված էր կանոնավոր, բայց ո՛չ այն կարգով, ինչպես թողել էր Մաշենկան տնից դուրս գնալիս։ Նշանակում է, իսկապես խուզարկություն է եղել, ամենախսկական խուզարկություն, բայց ինչո՞ւ, ի՞նչ բանի համար։ Ի՞նչ է պատահել։ Մաշենկան հիշեց բարապանի հուզմունքը, իրարանցումը, որ դեռ շարունակվում էր, լացող սպասուհուն։ Արդյոք այդ ամենը կապ չունի՞ հենց նոր իր մոտ կատարված խուզարկության հետ։ Արդյոք իրեն չե՞ն խառնել ինչ-որ սարսափելի գործի։ Մաշենկան սփրթնեց և ամբողջովին պաղած ընկավ սպիտակեղենի զամբյուղի վրա։

Ներս մտավ սպասուհին։

— Լիզա, դուք չգիտե՞ք, թե այս ինչու են ինձ... խուզարկել,— հարցրեց նրան դաստիարակչուհին։

— Տիրուհու երկու հազար ռուբլիանոց կրծքազարդն է կորել...— ասաց Լիզան։

— Լավ, բայց ի՞նչ կարիք կար ինձ խուզարկելու։

— Բոլորին խուզարկել են, օրիորդ։ Ինձ էլ ամբողջովին խուզարկել են... Բոլորի շորերը հանել տվին ու խուզարկեցին... Բայց ես, օրիորդ, այ, ոնց որ աստծո առաջ... Ոչ թե նրանց

կրծքազարդին, այլ նույնիսկ արդուզարդի սեղանին էլ մոտ չեմ դնացել։ Ես ոստիկանատանն էլ նույնը կասեմ։

— Բայց... ինձ ինչո՞ւ խուզարկել,— տարակուսանքով շարունակում էր դաստիարակչուհին։

— Կրծքազարդն են գողացել, ասում եմ... Տիրուհին ինքն իր ձեռքով է ամեն տեղ անտղել։ Նույնիսկ բարապան Միխայլոյին էլ ինքն է խուզարկել։ Իսկական խայտառակություն։ Նիկոլայ Սերգեյիչը հենց միայն նայում է ու կոկոում հավի պես։ Իսկ դուք, օրիորդ, իզուր եք դողում։ Ձեզ մոտ ոչինչ չեն գտել։ Թե որ կրծքազարդը դուք չեք վերցրել, ուրեմն վախենալու էլ բան չունեք։

— Բայց չէ՞ որ դա ստոր բան է, Լիզա... վիրավորական,— ասաց Մաշան զայրույթից խեղդվելով։— Ախր դա ստորություն է։ Նա ի՞նչ իրավունք ունի կասկածելու ինձ և փորփրելու իմ իրերը։

— Օտարի տանն եք ապրում, օրիորդ,— հառաչեց Լիզան։— Թեպետև դուք օրիորդ եք, բայց և այնպես... ծառայի նման եք... Սա մայրիկի ու հայրիկի մոտ ապրելու նման չէ...

Մաշենկան ընկավ անկողնու վրա և դառն հեկեկաց։ Դեռ երբեք նրա նկատմամբ այնպիսի բռնություն չէին գործադրել... երբեք նրան այնպես խոր չէին վիրավորել, ինչպես այժմ... Նրան, այդ բարեկիրթ, զգայուն աղջկան, ուսուցչի դստերը, կասկածել էին գողության մեջ, խուզարկել էին ինչպես մի փողոցային կնոջ։ Դրանից ավելի մեծ վիրավորանք կարծես չի էլ կարելի մտածել։ Եվ վիրավորանքի այդ զգացումին միանում էր նաև ծանր երկյուղը. հիմա ի՞նչ է լինելու։ Նրա գլուխն էին գալիս ամեն տեսակ անհեթեթություններ։ Եթե կարողացել են իրեն կասկածել գողության մեջ, նշանակում է այժմ էլ կարող են ձերբակալել, մերկացնել ու խուզարկել, հետո պահակախմբի հսկողությամբ տանել փողոցով, բանտ գցել, նստեցնել մկներով ու խոնավահիճուներով լի մի խցիկում, ճիշտ այնպիսի խցիկում, որի մեջ նստած է եղել իշխանուհի Տարականովան։ Ո՞վ պաշտպան կկանգնի իրեն։ Ծնողներն ապրում են հեռավոր գավառում. իր մոտ գալու համար նրանք փող չեն ունենա։ Մայրաքաղաքում նա մենակ է, ինչպես ամայի դաշտում, առանց հարազատների ու ծանոթների։ Ինչպես ուզենան, այնպես էլ կվարվեն իր հետ։

«Վազեմ բոլոր դատավորների ու դատապաշտպանների մոտ...— մտածում էր Մաշենկան դողալով։— Ես կբացատրեմ

նրանց, կերդվեմ... Նրանք կհավատան, որ ես գող լինել չեմ կարող»։

Մաշենկան հիշեց, որ իր զամբյուղում, սավանների տակ քաղցրեղեններ կան, որոնք նա ինստիտուտում ունեցած սովորությամբ ճաշի ժամանակ պահել էր գրպանում և տարել իր սենյակը։ Այն մտքից, որ իր այդ փոքրիկ գաղտնիքն արդեն հայտնի է տերերին, նրա երեսը վառվում էր, նա ամաչում էր, և այդ ամենից՝ վախից, ամոթից ու վիրավորանքից սկսվեց սրտի ուժեղ բաբախյուն, որ անցնում էր քունքերին, ձեռքերին, որովայնին։

— Բարեհաճեցեք ճաշելու,— կանչեցին Մաշենկային։

«Դնա՞լ թե ոչ»։

Մաշենկան մազերն ուղղեց, թաց սրբիչով երեսը շփեց և գնաց սեղանատուն։ Այնտեղ արդեն սկսել էին ճաշել... Սեղանի մի ծայրին նստել էր Ֆեդոսյա Վասիլևնան՝ հպարտ, բութ ու լուրջ դեմքով, մյուս ծայրին նստել էր Նիկոլայ Սերգեյիչը։ Երկու կողմերում նստած էին հյուրերն ու երեխաները։ Ճաշը մատուցում էին ֆրակ ու սպիտակ ձեռնոցներ հագած երկու սպասավոր։ Բոլորը գիտեին, որ տանն իրարանցում է եղել, որ տիրուհին վշտի մեջ է, և լուռ էին։ Լսվում էին միայն ծամելու ձայնը և դդալների չխկչխկոցը ափսեներին։

Խոսակցությունն սկսեց ինքը տանտիրուհին։

— Ի՞նչ է երրորդ տեսակը,— հարցրեց նա սպասավորին նվաղկոտ ու տանջալի ձայնով։

— Էստուրժոն ալյա ույուս,— պատասխանեց սպասավորը։

— Այդ, Ֆենյա, ես եմ պատվիրել...— շտապեց ասել Նիկոլայ Սերգեյիչը։— Սիրտս ձուկ ուզեց։ Եթե քեզ դուր չի գալիս, թող չմատուցեն։ Դե ես այդ հենց այնպես... իմիջիայլոց...

Ֆեդոսյա Վասիլևնան չէր սիրում այն ուտելիքները, որ ինքը չէր պատվիրել, և այժմ նրա աչքերը լցվեցին արյունով։

— Լավ, թողնենք հուզվելը,— քաղցր ձայնով ասաց նրա ընտանեկան բժիշկ Մամիկովը, ձեռքը թեթևակի դիպցնելով նրա ձեռքին և նույնպիսի քաղցրությամբ ժպտալով։— Մենք առանց այդ էլ բավական նյարդային ենք։ Մոռանանք կրծքազարդը։ Առողջությունը երկու հազարից թանկ է։

— Ես երկու հազարը չեմ ափսոսում,— պատասխանեց տանտիրուհին, և արցունքի մի խոշոր կաթիլ գլորվեց նրա այտի

վրայով։— Ինձ վրդովում է փաստը։ Ես չեմ կարող զողեր հանդուրժել իմ տանը։ Ես չեմ ափսոսում, ես ոչ մի բան չեմ ափսոսում, բայց գողանալ ինձանից՝ դա այնպիսի մի ապերախտություն է, որ... այդպե՞ս են հատուցում իմ բարությունը...

Բոլորը նայում էին իրենց ափսեներին, բայց Մաշենկային թվաց, թե տանտիրուհու խոսքերից հետո բոլորն իրեն նայեցին։ Հանկարծ կոկորդը կծկվեց, նա լաց եղավ և թաշկինակը սեղմեց երեսին։

— Pardon,— մրմնջաց նա։— Ես չեմ կարող։ Գլուխս ցավում է։ Գնամ։

Եվ նա վեր կացավ սեղանից աթոռն անհարմար թխկացնելով ու ավելի շփոթվելով և արագ դուրս գնաց։

— Աստված գիտե, թե սա ինչ բան է,— խոսեց Նիկոլայ Սերգեյիչը երեսը կնճռոտելով։— Թե ի՞նչ կարիք կար խուզարկել նրան։ Իսկապես... որքան անհարմար բան ստացվեց։

— Ես չեմ պնդում, թե զարդը նա է վերցրել,— ասաց Ֆեդոսյա Վասիլևնան,— բայց մի՞թե դու կարող ես երաշխավորել նրա համար։ Ճիշտն ասած, ես քիչ եմ հավատում այդ աղքատ ուսումնականներին։

— Իսկապես, Ֆենյա, անհարմար էր... Ներիր ինձ, Ֆենյա, բայց ըստ օրենքի դու խուզարկություն կատարելու ոչ մի իրավունք չունես։

— Ես չգիտեմ ձեր օրենքները։ Միայն այն գիտեմ, որ իմ զարդը կորել է, պրծավ գնաց։ Եվ ես կգտնեմ այդ զարդը,— նա պատառաքաղը զարկեց ափսեին, և աչքերը ցասումով շողացին։— Իսկ դուք կերեք և իմ գործերին մի՛ խառնվեք։

Նիկոլայ Սերգեյիչը հնազանդորեն ցած գցեց հայացքը և հառաչեց։ Մինչև այդ, Մաշենկան, հասնելով իր սենյակը, ընկավ անկողնու մեջ։ Նա այլևս ոչ սարսափում էր, ոչ ամաչում. նրան տանջում էր մի ուժեղ ցանկություն՝ գնալ և շրխկացնել այդ չոր, ամբարտավան, բթամիտ ու բախտավոր կնոջ այտերին։

Պառկած վիճակում նա շնչում էր բարձի մեջ ու երազում, թե որքան լավ կլիներ այժմ գնալ, ամենաթանկ զարդը գնել ու բերել շպրտել այդ ինքնահավան կնոջ երեսին։ Օ՜, եթե աստված տար Ֆեդոսյա Վասիլևնան աղքատանար ու գնար մուրացկանություն անելու և հասկանար աղքատության ու ենթակա վիճակի ամբողջ սարսափը, և եթե վիրավորանք կրած Մաշենկան ողորմություն տար նրան։ Օ՜, եթե ինքը մեծ ժառանգություն ստանար,

մի կառք գներ, մեջը նստեր ու աղմուկով քշեր նրա լուսամուտների մոտով, որպեսզի նա նախանձեր։

Բայց դրանք բոլորը երազանքներ էին, իրականը մնում էր միայն մեկ բան՝ շուտ հեռանալ, ոչ մի ժամ չմնալ այստեղ։ Ճիշտ է, սարսափելի բան էր տեղից զրկվել, նորից գնալ ծնողների մոտ, որոնք ոչինչ չունեն, բայց ի՞նչ արած։ Մաշենկան այլևս չէր կարող տեսնել ոչ տիրուհուն, ոչ իր փոքրիկ սենյակը, այստեղ խեղդուկ էր նրա համար, զարհուրելի։ Ֆեդոսյա Վասիլևնան հիվանդություններով և իր երևակայական արիստոկրատիզմով գժված՝ այնքան զզվելի էր, որ կարծես աշխարհում ամեն ինչ կոպիտ ու անհրապույր էր դարձել հենց նրանից, որ այդ կինն ապրում է։ Մաշենկան մահճակալից վեր թռավ և սկսեց իր իրերը հավաքել։

— Կարելի՞ է ներս գալ,— դռան հետևից հարցրեց Նիկոլայ Սերգեյիչը։ Նա դռանը մոտեցել էր անլսելի և խոսում էր մեղմ, փափուկ ձայնով։— Կարելի՞ է։

— Մտեք։

Նիկոլայ Սերգեյիչը ներս մտավ և դռան մոտ կանգ առավ։ Նրա աչքերը նայում էին խամրած հայացքով և կարմիր քիթը պսպղում էր։ Ճաշից հետո նա դարեջուր էր խմել, և այդ նկատելի էր նրա քայլվածքից, թույլ, ալարկոտ ձեռքերից։

— Սա՞ ինչ բան է,— հարցրեց նա զամբյուղը մատնացույց անելով։

— Իրերս եմ հավաքում։ Ներեցեք, Նիկոլայ Սերգեյիչ, բայց ես այլևս ձեր տանը մնալ չեմ կարող։ Այդ խուզարկությունը ինձ խորապես վիրավորել է։

— Հասկանում եմ... Միայն թե դուք իզուր եք... Ինչի՞ համար։ Խուզարկել են, դե դուք էլ... Ի՞նչ վնաս ձեզ դրանից։ Ձեզանից մի բան չի պակսի։

Մաշենկան լուռ շարունակում էր իրերը դասավորել։ Նիկոլայ Սերգեյիչը ձգմռեց իր բեղերը, ասես մտածում էր, թե էլի ինչ ասի և աղաչական ձայնով շարունակեց.

— Ես, իհարկե, հասկանում եմ, բայց հարկավոր է զիջողամիտ լինել։ Գիտե՞ք, իմ կինը նյարդային է, անխոհեմ, խիստ դատել չի կարելի...

Մաշենկան լուռ էր։

— Եթե դուք այդքան վիրավորված եք,— շարունակեց Նի-

կոլայ Սերգեյիչը,— ապա խնդրեմ, ես պատրաստ եմ ներողություն խնդրելու ձեզանից։ Ներեցեք։

Մաշենկան ոչինչ չպատասխանեց, այլ միայն ավելի ևս կռացավ դեպի զամբյուղը։ Այդ ցամաքած, անվճռական մարդը տան մեջ ոչ մի նշանակություն չուներ։ Նույնիսկ ծառաները նրան փալասի և ավելորդ մարդու տեղ էին դնում, և նրա ներողություն խնդրելը ոչինչ չէր նշանակում։

— Հը՞մ... Լռո՞ւմ եք։ Այդքանը քի՞չ է ձեզ համար։ Այդ դեպքում ես կնոջս կողմից եմ ներողություն խնդրում։ Կնոջս անունից... Նա անտակտ է վարվել, ես այդ ընդունում եմ որպես ազնվական...— Նիկոլայ Սերգեյիչը մի անգամ անցուդարձ արավ, հառաչեց ու շարունակեց.

— Ձեզ, ուրեմն, հարկավոր է նաև, որ իմ, ահա, այստեղս, սիրտս քրքրվի... Ձեզ հարկավոր է, որ խի՞ղճս տանջի ինձ...

— Ես գիտեմ, Նիկոլայ Սերգեյիչ, դուք մեղավոր չեք,— ասաց Մաշենկան իր խոշոր, արտասվաթոր աչքերով ուղիղ նայելով նրա դեմքին։— Դուք ինչո՞ւ պիտի տանջվեք։

— Իհարկե... Բայց և այնպես դուք... Մի՛ գնացեք... խընդրում եմ ձեզ։

Մաշենկան բացասաբար օրորեց գլուխը։ Նիկոլայ Սերգեյիչը կանգ առավ լուսամուտի մոտ և թմբկահարեց ապակուն։

— Ինձ համար այսպիսի թյուրիմացություններն իսկական տանջանք են,— ասաց նա։— Ի՞նչ է, ծո՞ւնկ չոքեմ ձեր առաջ, թե ինչ։ Ձեր հպարտությունը վիրավորել են և դուք լաց եղաք, պատրաստվում եք գնալու, բայց չէ՞ որ ես էլ հպարտություն ունեմ, իսկ դուք իմ հպարտությունը չեք խնայում։ Թե՞ ուզում եք, որ ես ձեզ ասեմ այն, ինչ խոստովանանքի ժամանակ էլ չեմ ասի։ Ուզո՞ւմ եք։ Լսեցեք, դուք ուզում եք, որ խոստովանեմ այն, ինչ նույնիսկ մահիցս առաջ չէի՞ խոստովանի։

Մաշենկան լուռ էր։

— Ծ՛ս եմ վերցրել կնոջս կրծքազարդը,— արագ-արագ ասաց Նիկոլայ Սերգեյիչը։— Հիմա գո՞հ եք։ Բավարարվա՞ծ եք։ Այո, ե՛ս... ե՛ս եմ վերցրել... Միայն, իհարկե, ես հույս եմ դնում ձեր համեստության վրա... Ի սեր աստծո, ոչ ոքի ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ։

Մաշենկան զարմացած ու վախեցած շարունակում էր իրերը հավաքել։ Նա վերցնում էր իր շորերը, տրորում ու անկանոն խցկում ճամպրուկի ու զամբյուղի մեջ։ Այժմ, Նիկոլայ Սերգեյիչի անկեղծ խոստովանությունից հետո, նա չէր կարող մնալ ոչ մի րոպե և արդեն չէր հասկանում, թե առաջ ինքն ինչպես է կարողացել ապրել այս տանը։

— Եվ զարմանալու բան չկա...— շարունակեց Նիկոլայ Սերգեյիչը փոքր-ինչ լռելուց հետո։— Սովորական պատմություն է։ Ինձ փող է հարկավոր, իսկ նա... չի տալիս։ Ախր այս տունը և ամեն ինչ իմ հայրն է վաստակել, իմ հայրը, Մարիա Անդրեևնա։ Ամեն ինչ իմն է, կրծքազարդն էլ իմ մորն էր պատկանում և... ամեն ինչ իմն է։ Իսկ նա ամեն բան իր բուռն է հավաքել, ամեն ինչի տեր դառել... Դե հո չեմ կարող դատարան տալ նրան, ինքներդ եք հասկանում... Թախանձագին խնդրում եմ ձեզ, ներեցեք... և մնացեք։ Tout comprendre, tout pardonner[1]։ Մնացեք։

— Ո՛չ,— վճռաբար ասաց Մաշենկան սկսելով դողալ։— Թողեք ինձ, աղաչում եմ ձեզ։

— Դե՛հ, աստված ձեզ հետ,— հառաչեց Նիկոլայ Սերգեյիչը, նստելով ճամպրուկի կողքի փոքրիկ աթոռին։— Ճիշտն ասած, ես սիրում եմ նրանց, ովքեր դեռ կարողանում են վիրավորվել, արհամարհել և այլն։ Հավիտյան կնստեի ու ձեր ցասումնալից դեմքին կնայեի... Այդպես, նշանակում է, չե՞ք մնում։ Հասկանում եմ... Ուրիշ կերպ էլ չպետք է լինի... Այո՛, իհարկե... Ձեզ համար լավ է, բայց ա՛յ, ես, ո՜ւ-ո՜ւ... Ոչ մի քայլ չեմ կարող հեռանալ այս նկուղից։ Մարդ վեր կենար ու գնար մեր կալվածքներից որևէ մեկը, բայց այնտեղ էլ ամենուրեք կնոջս սինլքորներն են նստած... կառավարիչներ, դյուղատնտեսներ, գրողը տանի նրանց։ Ամեն տեղ փակում են ճամփաս... Ջուկ չորսալ, խոտը չտրորել, ծառերը չկոտրատել...

— Նիկոլայ Սերգեյի՜չ,— դահլիճից լսվեց Ֆեդոսյա Վասիլևնայի ձայնը։— Ագնյա՜, կանչիր պարոնին։

— Ուրեմն չե՞ք մնում,— հարցրեց Նիկոլայ Սերգեյիչը արագ վեր կենալով և գնալով դեպի դուռը։— Լավ կլիներ մնայիք, աստված վկա... Երեկոյան ես կգայի ձեզ մոտ... կզրուցեինք... Հը՞, մնացեք։ Դուք էլ որ գնաք, ամբողջ տանը ոչ մի մարդկային դեմք չի մնա։ Ախր դա սոսկալի է։

Նիկոլայ Սերգեյիչի գունատ, ցամաքած դեմքն աղաչում էր,

[1] Ամեն ինչ հասկանալ, ամեն ինչ ներել (Ֆրանս.)։

բայց Մաշենկան բացասաբար շարժեց գլուխը, և նա ձեռքը թափ տալով դուրս գնաց։

Կես ժամ հետո Մաշենկան արդեն ճանապարհին էր։

1886

ՎՀՈՒԿԸ

Գիշերվա մոտ էր։ Տիրացու Սավելի Գիկինը պառկել էր իր համար եկեղեցու պահականոցում՝ ահագին անկողնում և չէր քնում, թեպետ միշտ սովորություն ուներ քնելու հավերի հետ։ Ճարպոտած, բազմագույն չթի կտորտանքով կարած վերմակի մի ծայրից նայում էին նրա շիկակարմիր, կարծր մազերը, մյուս ծայրի տակից ցցվել էին խոշոր, վազուց չլվացած ոտքերը։ Նա ականջ էր դնում... Նրա պահականոցը խրվել էր պարսպի մեջ, և միակ պատուհանը դուրս էր գալիս դեպի դաշտը։ Իսկ դաշտում մի իսկական պատերազմ էր։ Դժվար էր հասկանալ, թե ով ում էր ջնջում աշխարհից և ում կործանման համար էր բնության մեջ շիլափլավ եփվում, բայց դատելով անլռելի, չարագույժ թնդյունից, ինչ-որ մեկի բանը շատ վատ էր։ Ինչ-որ մի անհաղթելի ուժ մեկի հետևից էր ընկել դաշտում, մոլեգնում էր անտառում և եկեղեցու կտրանը, չարությամբ բռունցքներով ծեծում էր պատուհանը, գցում, քրքրում էր, իսկ ինչ-որ մի հաղթված բան ոռնում էր և լաց լինում... Աղիողորմ լացը լսվում էր մերթ պատուհանի հետևը, մերթ կտուրի վրա, մերթ էլ վառարանում։ Դրա մեջ լսվում էր ոչ թե օգնության կոչ, այլ թախիծ, մի գիտակցություն, որ արդեն ուշ է, փրկություն չկա։ Ձյան թմբերը թեթև ծածկվել էին սառցե բարակ կեղտով, դրանց և ծառերի վրա արցունքներ էին դողում, ճանապարհների և շավիղների վրա շաղվում էր ցեխի և հալած ձյան խյուսը։ Մի խոսքով, գետնի վրա հալչոց էր, բայց երկինքը մութ գիշերի միջով չէր տեսնում այդ և ինչքան ուժը պատում էր, թափում էր հալած գետնի վրա նոր ձյան փաթիլները։ Իսկ քամին զբոսնում էր հարբածի պես... Նա չէր թողնում, որ ձյունը նստի գետնին և պտտեցնում էր մթության մեջ ինչպես ուզում էր։

Գիկինը ականջ էր դնում այդ երաժշտությանը և մռայլվում էր։ Բանն այն էր, որ նա գիտեր կամ գոնե գլխի էր ընկնում, թե դեպի ո՛ւր էր թեքվում այս խառնաշփոթը և ո՛ւմ արածն էր այդ բոլորը։

— Ես գի-իտե՞մ,— մոթմոթում էր նա մատով սպառնալով ինչ-որ մեկին վերմակի տակ։— Ես բոլորը գիտեմ։

Պատուհանի մոտ, տաբուրետի վրա նստած էր տիրացուի կինը՝ Ռահսա Նիլովնան։ Թիթեղյա լամպը, որ դրած էր մյուս տաբուրետին, կարծես վախվխելով և չվստահելով իր ուժերին, թույլ, առկայծող լույս էր արձակում նրա լայն ուսերի, մարմնի գեղեցիկ, հրապուրիչ ռելիեֆի և հաստ ծամի վրա, որը կպչում էր գետնին։ Տիրացուի կինը կոշտ կտավից ջվալներ էր կարում։ Նրա ձեռքերը արագ շարժվում էին, բայց, այնուամենայնիվ, նրա մարմինը, աչքերի արտահայտությունը, հոնքերը, գեր շրթունքները, սպիտակ վիզը թուլացել էին, թաղվելով միօրինակ, մեքամաղձոտ աշխատանքի մեջ, և թվում էր, թե քնել էին։ Հազվադեպ միայն նա բարձրացնում էր գլուխը, որ հանգստություն տա հոգնած ուսին, թեթևակի նայում էր պատուհանին, ոչի ետև մոլեգնում էր բուքը, և կրկին կռանում էր կոշտ կտավի վրա։ Ո՛չ ցանկություններ, ո՛չ տխրություններ, ո՛չ ուրախություններ. ոչինչ չէր արտահայտում նրա վեր ցցված քթով և այտերին փոսիկներով գեղեցիկ դեմքը։ Այդպես ոչինչ չի արտահայտում գեղեցիկ շատրվանը, երբ չի ցայտում։

Բայց ահա նա վերջացրեց մի ջվալ, նետեց մի կողմ և քաղցր ձգվելով, իր աղոտ, անշարժ հայացքը հառեց պատուհանին... Ապակիների վրա արցունքներ էին լողում և սպիտակին էին տալիս ոչ երկարակյաց փաթիլները։ Փաթիլը ընկնում է ապակու վրա, մտիկ է տալիս տիրացուի կնոջը և հալչում է...

— Արի պառկի՛ր,— մոթմոթաց տիրացուն։

Տիրացուի կինը լռում էր։ Բայց հանկարծ նրա արտևանունքները շարժվեցին, և աչքերում փայլեց ուշադրությունը։ Սավելին, որ ամբողջ ժամանակ վերմակի տակից դիտում էր նրա դեմքի արտահայտությունը, գլուխը դուրս հանեց և հարցրեց.

— Ի՞նչ է։

— Ոչի՛նչ... Կարծես ճամփորդ է գնում,— կամաց պատասխանեց տիրացուի կինը։

Տիրացուն ձեռքերով ու ոտքերով վրայից դեն նետեց վերմակը, չոքեց անկողնում և բութ նայեց կնոջը։ Լամպի երկչոտ լույսը լուսավորեց նրա մազմզոտ, ծաղկատար դեմքը և սահեց կիսախոով, կոշտ գլխի վրայով։

— Լսո՞ւմ ես,— հարցրեց կինը։

Բքի միալար ոռնոցի միջից նա լսեց հազիվ լսելի բարակ, հնչող նվոց, նման մոծակի տզզոցին, երբ նա ուզում է նստել այտի վրա և բարկանում է, որ խանգարում են իրեն։

— Փոստն է...— մոթմոթաց Սավելին, կրնկների վրա նստելով։

Եկեղեցուց երեք վերստ հեռու ընկած էր փոստի ճանապարհը։ Քամու ժամանակ, երբ այն փչում էր մեծ ճանապարհից եկեղեցու կողմը, պահականոցի բնակիչները լսում էին զանգակի ձայնը։

— Տեր աստված, խելքներին էլ փչում է ճանապարհ գնալ այս եղանակին,— հառաչեց տիրացուի կինը։

— Արքունի գործ է։ Ուզում ես, չես ուզում, գնա...

Նվոցը փոքր-ինչ տևեց և նվաղեց։

— Անց կացավ,— ասաց Սավելին պառկելով։

Բայց դեռ նա չէր ծածկվել վերմակի տակ, որ ականջին հասավ պարզ զանգակի հնչյունը։ Տիրացուն անհանգիստ նայեց կնոջը, ցած թռավ անկողնուց և կողեկող ընկնելով, քայլեց վառարանի մոտով։ Զանգակը հնչեց մի փոքր և կրկին նվաղեց, կարծես կտրվեց։

— Չի լսվում...— մոթմոթաց տիրացուն կանգ առնելով և աչքերը կկոցած նայելով կնոջը։

Բայց այդ պահին քամին խփեց պատուհանին և հասցրեց մի բարակ, հնչուն տնքոց... Սավելին գունատվեց, կոնչացրեց և կրկին շփշփացրեց մերկ ոտքերը հատակի վրա։

— Փոստը պտտեցնում է,— խռպոտ ձայնով ասաց նա, շարությամբ ծուռ-ծուռ նայելով կնոջը։— Լսո՞ւմ ես, փոստը պրատեցնում է... Ես... ես գիտեմ։ Ի՞նչ, ես չե՞մ... չե՞մ հասկանում,— մոթմոթաց նա։— Ես ամեն բան հասկանում եմ, փչանա՛ս դու։

— Ի՞նչ գիտես,— կամաց հարցրեց տիրացուի կինը, աչքերը չհեռացնելով պատուհանից։

— Հենց այն գիտեմ, որ այս բոլորը քո արածներն են, վհո՛ւկ։ Քո արածներն են, փչանա՛ս դու։ Այս բուքն էլ, այս փոստը, որ պտտեցնում է, այս բոլորը դու ես արել։ Դո՛ւ։

— Կատաղում ես, հիմա՛ր...— հանդարտ նկատեց տիրացուի կինը։

— Ես քո մեջ վաղուց եմ այդ նկատում։ Ամուսնացա թե չէ, հենց առաջին օրը նկատեցի, որ արյունդ շան արյուն է։

— Թո՛ւ,— զարմացավ Ռախսան, ուսերը սեղմելով և խաչակնքելով։— Խա՛չ հանիր երեսդ, տխմա՛ր։

— Վհուկը հենց վհուկ է ու կա,— շարունակեց Սավելին խուլ, լացող ձայնով, շտապ քիթը սրբելով շապկի փեշով։— Թեև դու իմ կինն ես, թեև հոգևոր կոչում ունես, բայց ես քո մասին հենց բացեիբաց այդպես էլ կասեմ, թե ինչպիսին ես դու... Ապա ինչպե՞ս։ Տեր աստված, դու հասիր օգնության։ Անցյալ տարի Դանիել մարգարեի և երեք պատանիների օրը բուք էր և ի՞նչ. վարպետը եկավ տաքանալու։ Հետո Ալեքսեանոսի, աստծո մարդու օրը, գետը բացվեց և ուրյադնիկին բերեց... Ամբողջ գիշեր այստեղ հետդ, անիծածը, սիլի-բիլի արեց ու երբ առավոտը դուրս եկա ու նրան մտիկ տվեցի, աչքերի տակին օղակներ էին և այտերը ներս էին ընկել։ Հը՞։ Սպասովկի օրը երկու անգամ մրրիկ եղավ, և երկու անգամն էլ որսորդը եկավ գիշերելու։ Ես ամեն բան տեսա, գետի՛նը մտնի։ Ըհը՞, խեցգետնից էլ ավելի կարմրեցիր։ Հա-բա՞։

— Ոչինչ չես տեսել...

— Կասես հա՞։ Իսկ այս ձմեռ Կրետեի տասը նահատակների ծննդյան գիշերը, երբ բուքը գիշեր ու զօր փչում էր... միտդ է. պարագլխի գրագիրը ճանապարհը կորցրեց և շունը այստեղ ներս ընկավ։ Եվ ինչո՞վ հրապուրվեցիր։ Թո՛ւ, գրագրո՞վ։ Արժեր նրա համար աստծու եղանակը խառնել իրար։ Սատանի՛ կտոր, փսլնքո՛տ, գետնի վրա չի երևում, ողջ ոեխը բշտիկների մեջ կորած, վիզն էլ ծուռ... էլի բան էր՝ գեղեցիկ լիներ, թե չէ՝ թո՛ւ, սատանա՛։

Տիրացուն շունչ քաշեց, շրթունքները սրբեց և սկսեց ականջ դնել։ Զանգակը չէր լսվում, միայն քամին էր կտուրի վրա շառաչում. բայց պատուհանի ետևը մթության մեջ կրկին զնգզնգոց լսվեց։

— Հիմա էլ նույնը,— շարունակեց Սավելին։— Զուր տեղը չի պտտեցնում այս փոստը։ Թքիր աչքերիս, թե փոստը քեզ չի որոնում։ Հը՞, սատանան գիտե իր բանը, լավ օգնական է։ Կպտտեցնի, կպտտեցնի ու այստեղ կբերի։ Դի՞-ի՞տեմ, տե՞-ե՞սնում եմ։ Չես կարող ծածկել, սատանի՛ բոժոժ, կուռքային վավաշանքդ։ Հենց որ բուքն սկսվեց, ես ձեռաց հասկացա մտքերդ։

— Ա՛յ հիմար,— [illegible]ծիծաղեց տիրացուի կինը։— Ի՞նչ, քո կարծիքով, հիմար խելքովդ, ե՞ս եմ վատ եղանակ անում։

— Հը՞մ... Քմծիծա՛ղ տուր։ Դու ես, թե դու չես, բայց միայն ես նկատում եմ, հենց որ արյունը մեջդ եռում է, վատ եղանակ է սկսվում, իսկ հենց որ վատ եղանակ է սկսվում, մի անխելք մեկին այստեղ է բերում։ Ամեն անգամ այսպես է լինում։ Ասել է՝ դու ես։

Տիրացուն է՛լ ավելի համոզիչ դարձնելու համար մատը դրեց ճակատին, փակեց ձախ աչքը և արտասանեց երգեցիկ ձայնով.

— Անմտությո՛ւն, Հուդայի նզո՛վք։ Եթե դու իսկապես մարդ ես, ոչ թե վհուկ, խելքդ կհավաքեիր, կմտածեիր։ Ի՞նչ կանես, եթե եկողները վարպետ, որսորդ, գրագիր չլինեին, այլ սատանան նրանց կերպարանքով։ Հը՞։ Մի մտածի՛ր։

— Ախր դու հիմար ես, է՛, Սավելի,— հառաչեց տիրացուի կինը, խղճահար նայելով ամուսնուն։— Հայրս որ կենդանի էր և այստեղ էր ապրում, շատ ժողովուրդ էր գալիս նրա մոտ դողէրոցքից բուժվելու. գյուղից էլ, գաղթեցրածների բնակավայրերից, հայերի գյուղերից։ Հաշվիր որ ամեն օր գալիս էին, և ոչ ոք նրանց սատանա չէր ասում։ Իսկ երբ մեզ մոտ վատ եղանակին, տարին մի անգամ մարդ է գալիս տաքանալու, դու էլ զարմանում ես, հիմար, ձեռաց տեսակ-տեսակ մտքեր են գալիս գլուխդ։

Կնոջ տրամաբանությունը դիպավ Սավելիին։ Նա ոտքերը իրարից հեռու դրեց, գլուխը կոացրեց և սկսեց մտածել։ Նա դեռ պինդ հավատացած չէր իր գլխի ընկած բաների մեջ, իսկ տիրացուի կնոջ խոսելու անկեղծ, անտարբեր եղանակը նրան բոլորովին մոլորեցրեց, բայց, այնուամենայնիվ, մի քիչ մտածելով, նա գլուխը շարժեց և ասաց.

— Ձասենք ծերերը կամ էն տեսակ անճոռնիները, այլ երիտասարդներն են խնդրում գիշերելու տեղ... Ինչի՞ցն է։ Եվ թող միայն տաքանային, բայց նրանք սատանայական գործի վրա էին։ Չէ, կնիկ, ձեր կնիկարմատի ցեղից ավելի խորամանկ արարած չկա աշխարհիս երեսին։ Իսկական խելք ձեր մեջ, աստված իմ, սարյակի խելքից էլ քիչ է, բայց դրա տեղը խորամանկությունը սատանայական է, հա՛, աստված հեռու տանի։ Հրես փոստը ճնկճնկացնում է։ Բուքը դեռ նոր էր սկսվել, ես արդեն քո բոլոր մտքերը հասկանում էի։ Սատանայական բաներ շատ սարքեցիր, օձ արարած։

— Դո՞ւ ինչ ես հետևիցս ընկել, [illegible]նիծված,— համբերությունից դուրս եկավ տիրացուի կինը։— Ի՞նչ ես հոգուս կպել ձյութի պես։

— Այն եմ կպել, որ եթե գիշերս, աստված չանի, բան պատահի՞... լսի՞ր... եթե բան պատահի, վաղը լույսը չբացված կգնամ Դյակովո, հայր Նիկոդիմի մոտ ու ամեն բան կբացատրեմ։ Այ, այսպես, այսպես բան կասեմ, հայր Նիկոդիմ, վեհանձնաբար ներեցեք, բայց նա վհուկ է։ Ինչո՞ւ։ Հը՞մ... ցանկանո՞ւմ եք իմանալ ինչու։ Համեցե՛ք... Այսպես, այսպես բան։ Եվ վա՛յ քեզ, կնի՛կ։ Ոչ մենակ ահեղ դատաստանի ժամանակ, այլև երկրային կյանքի մեջ պատժված կլինես։ Ձուր տեղը չի, որ ցեղի համար ժամագրքում աղոթքներ են գրած։

Հանկարծ պատուհանին մի թիկոց լսվեց, այնպես ուժեղ և արտասովոր, որ Սավելին գունատվեց և վախից պպզեց։ Տիրացուի կինը՝ վեր թռավ տեղից և նույնպես գունատվեց։

— Ի սե՛ր աստծո, նե՛րս թողեք տաքանանք,— լսվեց մի դողդողացող, թանձր բաս ձայն։— Ո՞վ կա այդտեղ, բարությո՛ւն արեք։ Ճանապարհը կորցրել ենք։

— Իսկ դուք ո՞վ եք,— հարցրեց տիրացուի կինը, վախենալով պատուհանին նայել։

— Փոստն է,— պատասխանեց մի ուրիշ ձայն։

— Ձուր տեղը սատանություններ չարիր,— ձեռքը թափ տվեց Սավելին։— Հենց այդ է որ կա։ Ես ճիշտ ասացի... Դե, հիմա ի՞նձ մտիկ։

Տիրացուն երկու անգամ վեր թռավ անկողնու մեջ, փռվեց փետրաներքնակի վրա և, բարկացած փնչացնելով, երեսը դարձրեց պատին։ Շուտով նրա մեջքին փչեց ցուրտ օդը։ Դուռը ճռնչաց և շեմքին երևաց մի բարձրահասակ մարդկային կերպարանք, ոտքից գլուխ ձյան մեջ կորած։ Նրա հետևից հազիվ աչքի առաջ երևաց նույնպիսի սպիտակ մեկը...

— Հա՛ներն էլ ներս բերե՞մ,— հարցրեց երկրորդը խռպոտ բասով։

— Այնտեղ հո չե՞նք թողնի։

Այս ասելով, առաջինն սկսեց բաշլուղն արձակել և, չսպասելով, որ արձակվի, պոկեց գլխարկի հետ միասին և շարությամբ շտապեց վառարանի մոտ։ Հետո վրայից վերարկուն քաշելով, նա նետեց նույն տեղը և բարևելով, սկսեց քայլել պահականոցում։

Դա մի երիտասարդ, խարտյաշ փոստատար էր՝ մաշված,

համազգեստային սերթուկիկով և շիկակարմիր, ցեխոտ սապոգներով։ Քայլելով տաքացնելով իրեն, նա նստեց սեղանի մոտ, ձգեց ցեխոտ ոտքերը ջվալների կողմը և գլուխը դիմհար արեց բռունցքին։ Նրա գունատ, կարմիր բծերով դեմքը դեռ կրում էր հենց նոր ապրած ցավի և վախի հետքերը։ Չարությունից այլանդակված, մի քիչ առաջվա ֆիզիկական և բարոյական տառապանքի թարմ հետքերով, հալած ձյունը հոնքերին, բեղերին և կլոր, փոքր մորուքին՝ նա գեղեցիկ էր։

— Շան կյանք է,— մոթմոթաց փոստատարը, աչքերը պտտեցնելով պատերի վրայով և կարծես չհավատալով, որ տաք տեղ է ընկել։— Քիչ մնաց կորչեինք։ Եթե ձեր կրակը չլիներ, էլ չեմ իմանում, թե ինչ կլիներ... Եվ սատանան գիտե, թե այս բոլորը երբ կվերջանա։ Վերջ չկա այս շան կյանքին։ Ո՞ւր ենք ընկել,— հարցրեց նա, ցածրացնելով ձայնը և աչքերը գցելով տիրացուի կնոջ վրա։

— Գուլյաևի թումբը, գեներալ Կալինովսկու կալվածը,— պատասխանեց տիրացուի կինը ցնցվելով և կարմրելով։

— Լսո՞ւմ ես, Ստեպան,— շրջվեց փոստատարը կառապանին, որ կանգնել-մնացել էր դռան մեջ՝ մեծ կաշվե հակը ուսին։— Մենք Գուլյաևի թումբն ենք ընկել։

— Հա... հեռու է։

Արտասանելով այս խոսքը խռպոտ, ընդհատվող հառաչանքով, կառապանը դուրս գնաց և քիչ անց ներս բերեց ուրիշ մի ավելի փոքր հակ, ապա կրկին դուրս գնաց և այս անգամ ներս բերեց փոստատարական թուրը լայն փոկով, որ ձևով նման էր այն երկար տափակ սրին, ինչպիսին որ լուբոկ պատկերներում նկարվում է Հուդիթը Ողոփերնի մահճի մոտ։ Հակերը դարսելով պատի երկայնքով, նա դուրս գնաց հաշտը, նստեց այնտեղ և սկսեց ծխամորճ ծխել։

— Ճամփից եկած եք, գուցե թեյ կխմեք,— հարցրեց տիրացուի կինը։

— Ի՞նչ թեյ խմելու ժամանակ է,— մռայլվեց փոստատարը։— Հրես պետք է շուտ տաքանալ ու ճանապարհ ընկնել, եթե ոչ փոստային գնացքից կուշանանք։ Մի տասը բոպե կնստենք ու ճանապարհ կընկնենք։ Միայն դուք շնորհ արեք, ճանապարհը ցույց տվեք մեզ։

— Աստված վատ եղանակով պատժեց,— հառաչեց տիրացուի կինը։

— Հըմ, այո... Իսկ ինքներդ այստեղ ո՞վ եք։

— Մե՞նք։ Տեղացիներ ենք, եկեղեցու մոտ... Մենք հոգևոր կոչումով ենք... Հրեն իմ ամուսինը պառկել է։ Սավե՛լի, վեր կաց մի, ե՛կ բարև տուր։ Այստեղ առաջ եկեղեցու ծուխ էր, բայց տարիուկես առաջ վերացրին։ Դե, իհարկե, երբ պարոնները այստեղ էին ապրում, մարդիկ էլ էին լինում, ծուխ պահելը արժեր, բայց հիմի առանց պարոնների, ինքներդ դատեցեք, ինչով ապրի հոգևորականությունը, եթե ամենամոտ գյուղը այստեղ Մարկովկան է, և այն էլ դեռ հինգ վերստ է։ Հիմի Սավելին արտահատիքային է և... պահակի տեղ է։ Նրա վրա են դրել եկեղեցուն հսկելը...

Եվ փոստատարը հենց տեղնուտեղը իմացավ, որ եթե Սավելին գնար գեներալի կնոջ մոտ և խնդրեր, որ իրեն մի գրություն տա սրբազանի վրա, նրան լավ տեղ կտային, չի գնում նա էլ գեներալի կնոջ մոտ, որովհետև ծույլ է և վախենում է մարդկանցից։

— Այնուամենայնիվ, մենք հոգևոր կոչում ունենք...— ավելացրեց տիրացուի կինը։

— Ապա ինչո՞վ եք ապրում,— հարցրեց փոստատարը։

— Եկեղեցու մոտ խոտհարք կա ու բոստաններ։ Մենակ թե դրանից մեզ քիչ բան է գալիս...— հառաչեց տիրացուի կինը։— Դյադկինի հայր Նիկոդիմը նախանձոտ աչք ունի, ծառայում է այստեղ ամռան Նիկոլի ժամանակ, մեկ էլ ձմռան Նիկոլի ժամանակ և դրա համար համարյա բոլորը ինքն է վերցնում։ Պաշտպանող չկա։

— Ստում ես,— խռպոտ ձայնով ասաց Սավելին։— Հայր Նիկոդիմը սուրբ հոգի է, եկեղեցու ճրագն է, իսկ եթե վերցնում է, կանոնագրքի համաձայն է վերցնում։

— Ի՜նչ բարկացկոտն է քո մարդը,— քմծիծաղեց փոստատարը։— Իսկ վաղո՞ւց է ամուսնացած ես։

— Բուն բարեկենդանի կիրակի օրը չորս տարին անցավ։ Այստեղ առաջ իմ հայրն էր տիրացու, իսկ երբ նրա մեռնելու ժամանակը եկավ, նա, որպեսզի տեղը ինձ մնա, գնաց կոնսիստորիա և խնդրեց, որ չամուսնացած մեկին փեսացու ուղարկեն ինձ։ Ես էլ ամուսնացա։

— Ահա՛, ասել է, թե դու մի թրխկանով երկու ճանճ սպանեցիր,— ասաց փոստատարը, նայելով Սավելիի մեջքին։— Թե՛ տեղ ստացար և թե՛ կին ունեցար։

Սավելին անհամբեր կերպով թափահարեց ոտքը և ավելի մոտ շարժվեց դեպի պատը։ Փոստատարը սեղանի մոտից հեռացավ, ձգվեց և նստեց փոստի հակի վրա։ Մի փոքր մտածելով նա ձեռքով տրորեց հակերը, թուրը ուրիշ տեղ դրեց և մեկնվեց, մի ոտքը կախելով հատակին։

— Շան կյանք է...— մոթմոթաց նա, ձեռքերը դնելով գլխատակին և աչքերը փակելով։— Ամենավատ թաթարին էլ այսպիսի կյանք չեմ ցանկանում։

Շուտով տիրեց լռություն։ Միայն լսելի էր, թե ինչպես փնչացնում էր Սավելին, մեկ էլ ինչպես քնած փոստատարը, համաչափ ու դանդաղ շնչելով ամեն մի արտաշնչման ժամանակ թավ, ձգվող «կ-խ-խ-խ» ձայն էր հանում։ Երբեմն-երբեմն էլ նրա կոկորդում ճռնչում էր մի փոքրիկ անիվ, մեկ էլ հակի վրա շրշում էր ցնցվող ոտքը։ Սավելին շուռ եկավ վերմակի տակ և դանդաղորեն նայեց չորս կողմը։ Տիրացուի կինը նստել էր տաբուրետին և այտերը ափերի մեջ սեղմած, նայում էր փոստատարի դեմքին։ Նրա հայացքը, ինչպես զարմացած, վախեցած մարդու հայացքը, անշարժ էր։

— Է, ի՞նչ ես աչքդ տնկել— բարկացած շշնջաց Սավելին։

— Քե՞զ ինչ։ Պառկի՛ր,— պատասխանեց կինը, աչքը չպոկելով խարտյաշ գլխից։

Սավելին բարկացած դուրս շնչեց կրծքի միջից ողջ օդը և կտրուկ կերպով շրջվեց դեպի պատը։ Մի երեք րոպե անց նա կրկին անհանգիստ շուռ եկավ, չոքեց անկողնում և ձեռքերով հենվելով բարձին, խեթ նայեց կնոջը։ Կինը դեռ չէր շարժվում և նայում էր հյուրին։ Նրա այտերը գունատվել էին և հայացքը վառվում էր ինչ-որ տարօրինակ կրակով։ Տիրացուն կռնչացրեց, անկողնից սողաց փորի վրա և, մոտենալով փոստատարին, դեմքը ծածկեց թաշկինակով։

— Դա ինչո՞ւ համար ես անում,— հարցրեց տիրացուի կինը։

— Որպեսզի կրակը նրա աչքերին չընկնի։

— Դու էլ կրակը բոլորովին հանգցրու։

Սավելին անվստահորեն նայեց կնոջը, երկարացրեց շրթունքները լամպին, բայց խկույն ուշքի եկավ և ձեռքերն իրար զարկեց։

— Դե ասա, սատանայական խորամանկություն չէ՞ միթե

սա,— բացականչեց նա։— Հը՞։ Կնոջ ցեղից էլ խորամանկ արարած կա՞։

— Պոչավոր սատանա,— շշնջաց տիրացուի կինը, բարկությունից կնճռոտվելով։— Դե սպասի՛ր։

Եվ ավելի հարմար նստելով, նա կրկին աչքը ղցեց փոստատարի վրա։

Ոչինչ որ դեմքը ծածկված էր։ Նրան այնքան դեմքը չէր զբաղեցնում, որքան ընդհանուր տեսքը, այն մարդու նորությունը։ Նրա կուրծքը լայն էր, հուժկու, ձեռքերը գեղեցիկ, բարակ, բայց մկանուտ, գեղանկար ոտքերը շատ ավելի գեղեցիկ էին և առնական, քան Սավելիի երկու «ցցափայտերը»։

— Թեև ես պոչավոր եմ, անմաքուր հոգի,— խոսեց մի փոքր լռելուց հետո Սավելին,— բայց նրանց քնելը այստեղ պետք չի... Այո... Նրանց գործը պետական է, մենք պատասխան պիտի տանք, թե ինչո՞ւ նրանց այստեղ պահեցինք։ Թե փոստ ես տանում, դե տար, իսկ քնել պետք չի։ Էյ, դո՛ւ,— բղավեց Սավելին հաշտի կողմը։— Դո՛ւ, կառապա՛ն... Ինչպե՞ս է անունդ։ Ուղեկցեմ ձեզ դուցե։ Վե՛ր կաց, փոստի հետ քնել պետք չի։

Եվ զսպել չկարողանալով, Սավելին վրա վազեց փոստատարին և քաշեց նրա թևից։

— Է՛յ, ձերդ բարեծննդություն։ Թե գնալ է՝ գնացեք, իսկ թե գնալ չկա, էլ պետք չի էն իքը... Քնելը չեղավ։

Փոստատարը վեր թռավ, նստեց, պղտոր հայացքը պտտեցրեց պահականոցում և կրկին պառկեց։

— Բա ե՞րբ եք գնում,— թմբկահարեց լեզվով Սավելին, քաշելով նրա թևը։— Փոստը հենց նրա համար է, որ իր ժամանակին հասնի, լսո՞ւմ ես։ Ես կուղեկցեմ։

Փոստատարը աչքը բաց արեց։ Տաքացած և թուլացած առաջին քաղցր քնից, դեռ ոչ բոլորովին արթնացած, տեսավ, կարծես մշուշի մեջ, տիրացուի կնոջ սպիտակ վիզը և անշարժ, յուղալի հայացքը, փակեց աչքերը և ժպտաց, կարծես այդ բոլորը նա երազում էր տեսնում։

— Ախր այս եղանակին ո՞ւր գնան,— լսեց նա մեղմ կանացի ձայնը։— Կքնեիք ձեզ համար ու անուշ կանեիք։

— Իսկ փո՞ստը,— անհանգստացավ Սավելին։— Փոստը ո՞վ կտանի։ Չլինի՞ դու կտանես։ Դո՞ւ։

Փոստատարը կրկին աչքերը բացեց, նայեց տիրացուի կնոջ դեմքի վրա շարժվող փոսիկներին, հիշեց, թե որտեղ է ինքը,

Հասկացավ Սավելիին։ Այն միտքը, որ իրեն սպասվում է ճանապարհ գնալ ցուրտ մթության մեջ, ինչպես սառը մրջյուններ, գլխից անցավ ողջ մարմնի վրայով, և նա կծկվեց։

— Էլի մի հինգ րոպե կարելի է քնել...— հորանջեց նա։— Միևնույն է, ուշացել ենք։

— Եվ կարող է պատահել, որ հենց իսկը ժամանակին հասնենք,— հաշտից լսվեց մի ձայն։— Տես հա, ով իմանա ինչ պատահի և հենց գնացքն էլ մեր բախտից ուշանա։

Փոստատարը վեր կացավ և, քաղցր ձգվելով, սկսեց վերարկուն հագնել։

Սավելին տեսնելով, որ հյուրերը պատրաստվում են մեկնել, բավականությունից մինչև անգամ խրխնջաց։

— Օգնիր, ի՞նչ կլինի,— բղավեց կառապանը, հատակից վերցնելով հակը։

Տիրացուն մոտ վազեց նրան և նրա հետ միասին կրեց փոստային բեռը։ Փոստատարն սկսեց քանդել բաշլուղի վրայի հանգույցը։ Իսկ տիրացուի կինը նայում էր նրա աչքերին և կարծես ուզում էր մտնել նրա հոգու մեջ։

— Թե՛յ խմեիք ախր...— ասաց նա։

— Ես՝ ոչինչ... բայց ահա նրանք պատրաստվեցին,— համաձայնվում էր նա։— Միևնույն է, ուշացել ենք։

— Իսկ դուք մնացեք,— շշնջաց տիրացուի կինը, աչքերը ցած գցելով և դիպչելով նրա թևքին։

Փոստատարը վերջապես քանդեց հանգույցը և անվճռականությամբ բաշլուղը գցեց արմունկի վրա։ Նա ջերմություն էր զգում կանգնելով տիրացուի կնոջ մոտ։

— Ինչպիսի՞ պարանոց ունես...

Եվ նա երկու մատները դիպցրեց կնոջ պարանոցին։ Տեսնելով, որ իրեն չեն դիմադրում, շոյեց պարանոցը, ուսը...

— Ո՞ւֆ, ինչպիսին է...

— Մնայի՞ք... Թեյ խմեիք...

— Որտե՞ղ ես դնում։ Մեղրով հատիկ,— լսվեց բակից կառապանի ձայնը։— Լայնքսի վրա դիր։

— Մնայի՞ք ախր... Տես ի՞նչ եղանակ է։

Եվ դեռ ոչ բոլորովին արթնացած, չկարողանալով վրայից թափ տալ թարմ խոնջալից քնի հմայքը, փոստատարին հանկարծ տիրեց այն ցանկությունը, որի սիրուն մոռանում են փոստային հակերը... ամեն բան աշխարհում։ Վախեցած, ոնց որ ցանկանար փախչել կամ թաքնվել, նա նայեց դռանը, արագ բռնեց տիրացուի կնոջ իրանը և արդեն թեքվեց լամպի վրա, որ կրակը հանգցնի, երբ հաշտում սապոգները թրխկացրին, և շեմքին երևաց կառապանը... Նրա ուսի վրայով նայում էր Սավելին։ Փոստատարը արագ իջեցրեց ձեռքերը և կանգ առավ կարծես մտածմունքի մեջ ընկած։

— Ամեն բան պատրաստ է,— ասաց կառապանը։

Փոստատարը կանգնեց մի փոքր, ուժգին շարժեց գլուխը, կարծես վերջնականապես արթնացած, և գնաց կառապանի հետևից։ Տիրացուի կինը մնաց մենակ։

— Ինչ կա, նստի՞ր հետներս, ճանապա՞րհ ցույց տուր,— լսեց նա։

Ցույլ հնչեց մի զանգակը, հետո՝ մյուսը, և հնչող ձայները մանր, երկար շղթայով գնացին հեռացան պահականոցից։

Երբ նրանք կամաց-կամաց լռեցին, տիրացուի կինը տեղից պոկվեց և ներվայնորեն անցավ անկյունից անկյուն։ Սկզբում նա գունատ էր, հետո ամբողջովին կարմրատակեց։ Նրա դեմքը այլակերպվեց ատելությունից, շնչառությունը դողաց, աչքերը փայլատակեցին վայրի, կատաղի շարությամբ, և ինչպես վանդակի մեջ քայլելով, նա նմանվեց էգ վագրի, որին վախեցնում են շիկացած երկաթով։ Մի րոպե կանգ առավ և նայեց իր կացարանին։ Համարյա սենյակի կեսը բռնել էր անկողինը, որ ընկած էր ամբողջ պատի տակ և բաղկացած էր կեղտոտ փետրաներքնակից, գորշ ու կոշտ բարձերից, վերմակից և զանազան անանուն փալասներից։ Այդ անկողինը ներկայացնում էր մի տձև, տգեղ գունդ, համարյա այնպիսին, որպիսին տնկված էր միշտ Սավելիի գլխի վրա, երբ նրա քեֆը ուզում էր յուղել գլխի մազերը։ Անկողնուց մինչև դուռը, որ դուրս էր գալիս ցուրտ հաշտը, ձգված էր սևացած վառարանը՝ կճուճներով և վրայից կախած սրբիչներով։ Ամեն բան, չբացառած նաև հենց նոր դուրս գնացած Սավելին, կորած էր կեղտի, ճարպի մեջ, մրոտած էր, այնպես որ տարօրինակ էր այդպիսի դրության մեջ տեսնել կնոջ սպիտակ ուսը և նուրբ, քնքուշ մաշկը։ Տիրացուի կինը վազեց դեպի անկողինը, ասես կամենալով ցրիվ տալ, ոտքի տակ տրորել և քրքրել այդ բոլորը, բայց հետո կարծես վախենալով կեղտին դիպչելուց, ետ ցատկեց և կրկին սկսեց քայլել։

Երբ երկու ժամի չափ անց ձնակոլոլ ու չարչարված Սավելին

վերադարձավ, տիրացուի կինը արդեն հանվել պառկել էր անկողնում։ Նրա աչքերը փակ էին, բայց դեմքի վրա խաղացող մանր ջղաձգություններից Սավելին հասկացավ, որ նա չի քնել։ Տուն վերադառնալիս, նա խոսք էր տվել իրեն մինչև վաղը լռել և ձեռք չտալ կնոջը, բայց այս րոպեին չհամբերեց, որ մի խայթի։

— Զուր էիր գլխահան անում. գնա՛ց,— ասաց նա, շարախընդորեն քմծիծաղելով։

Տիրացուի կինը լռում էր, միայն նրա կզակը ցնցվեց։ Սավելին դանդաղ հանվեց, կնոջ վրայով անցավ և պառկեց պատին մոտ։

— Ա՛յ, վաղը կբացատրեմ հայր Նիկողիմին, թե դու ինչպիսի կին ես,— մոթմոթաց նա, կծկվելով։

Տիրացուի կինը արագ շրջվեց ամուսնու կողմը և աչքերը պսպղացրեց նրա վրա։

— Քեզ այսքան տեղն էլ հերիք է,— ասաց նա,— իսկ թե կին ես ուզում՝ գնա փնտրի անտառում։ Ի՞նչ կին եմ ես քեզ համար։ Ճաքե՛ս դու, հա՛։ Դեռ գլխիս էլ կապվել ես, դմբլո՛, անհո՛գի մարդ, մեղա՛ քեզ աստված։

— Դե՛, դե՛... Քնի՛ր։

— Անբա՛խտ եմ,— սկսեց հեկեկալ տիրացուի կինը։— Դու որ չլիներիր, ես ով գիտի մի վաճառականի կգնայի կամ կարգին մեկին։ Դու որ չլիներիր, ես հիմա ամուսնուս կսիրեի։ Մի ձյունն էլ չթաղեց քեզ, մեծ ճանապարհին չսառեցիր էլ, անօրեն։

Տիրացուի կինը երկար ժամանակ լաց էր լինում։ Վերջիվերջո նա խոր հոգոց հանեց և հանդարտվեց։ Պատուհանի մոտ դեռ շատանում էր բուքը։ Վառարանում, խողովակի մեջ, բոլոր պատերից այն կողմ ինչ-որ մի բան լաց էր լինում, և Սավելիին թվում էր, որ դա իր մեջ և ականջներում է կատարվում։ Այս երեկո նա վերջնականապես համոզվեց կնոջ նկատմամբ ունեցած իր ենթադրությունների մեջ։ Որ իր կինը սատանայական զորությամբ կարգադրում էր քամիներին և փոստային տրոյկաներին, այդ բանում նա արդեն չէր կասկածում։ Բայց ի մեծ ցավ նրա, այդ խորհրդավորությունը, այդ գերբնականությունը, վայրի ուժը նրա կողքին պառկած կնոջը մի առանձին անհասկանալի հմայք էր տալիս, որը նա առաջ չէր նկատում։ Եվ դրա համար էլ, իր հիմարության պատճառով, ինքն էլ այդ չնկատելով, բանաստեղծացրեց նրան, նա դառավ կարծես ավելի սպիտակ, ավելի կոկ, ավելի անառիկ...

— Վհո՛ւկ,— զայրացավ նա։— Թո՛ւ, գարշելի՛։

Սակայն մի որոշ ժամանակ սպասելով, երբ տեսավ, որ կինը հանդարտվեց և սկսեց հավասար շնչել, նա մատները կայցրեց նրա ծոծրակին... բռան մեջ պահեց նրա հաստ ծամը։ Կինը չէր զգում... Այդ ժամանակ նա ավելի համարձակ դառավ և շոյեց նրա պարանոցը։

— Դե՛նը,— ճչաց կինը և արմունկով այնպես խփեց Սավելիի քթարմատին, որ նրա աչքերից կայծեր թռան։

Քթարմատի ցավը շուտով անցավ, բայց տանջանքը դեռևս շարունակվում էր։

1886

ԿԱՏԱԿ

Ցմեռային պայծառ կեսօր... Ճոճռան, սաստիկ սառնամանիք է, և ինձ թևանցուկ արած Նադենկայի խոպոպիկները և վերին շուրթի վրայի աղվամազը պատվում է արծաթե եղյամով։ Մենք կանգնած ենք մի բարձր սարի գագաթին։ Մեր ոտքերի մոտից մինչև գետին ձգվում է մի հարթ ու հղկված ճանապարհ, որ արևի տակ փայլում է հայելու պես։ Մոտերքում վառ կարմիր մահուդով պատած փոքրիկ սահնակներ։

— Սահենք ցած, Նադեժդա Պետրովնա,— խնդրում եմ ես։— Մի, միա՛յն մի անգամ։ Հավատացնում եմ, մենք ողջ ու անվնաս կմնանք։

Բայց Նադենկան վախենում է։ Իր փոքրիկ կրկնակոշիկներից մինչև սառցապատ սարի ստորոտն ընկած ամբողջ տարածությունը նրան թվում է մի ահավոր, անհունորեն խոր անդունդ։ Երբ նայում է ցած ու հենց որ ես առաջարկում եմ սահնակ նստել, նրա հոգին կուչ է գալիս ու շունչը կտրվում է։ Բայց ի՞նչ կլինի որ, եթե հանդգնի անդունդ նետվել։ Կմեռնի, խելքը կթռցնի։

— Աղաչում եմ,— ասում եմ ես։— Վախենալու բան չկա։ Հասկացեք, դա փոքրոգություն է, վախկոտությո՛ւն։

Նադենկան, վերջապես, տեղի է տալիս, և ես դեմքին նայելով տեսնում եմ, որ զիջում է՝ կյանքը վտանգի տակ դնելով։ Ես գունատ ու դողահար Նադենկային նստեցնում եմ սահնակ, գրկում, և իր հետ միասին գահավիժում անդունդը։

Սահնակները թռչում են գնդակի պես։ Ճեղքվող օդը խփում է դեմքներիս, սուլում մեր ականջներում, քաշում, դաղում է շարությամբ, ուզում է գլուխդ պոկել ուսերիցդ։ Քամու ճնշումը շնչելու ուժ չի թողնում։ Կարծես սատանան ինքն է մեզ առել իր թաթերի մեջ ու ոռնոցով դեպի դժոխքն է քաշում։ Շրջապատի առարկաները միաձուլվելով, դարձել են երկարաձիգ, սրընթաց գահավիժող մի շերտ... Ահա, ահա ես մի պահ, և թվում է՝ կորած ենք։

— Ես սիրում եմ ձեզ, Նադյա,— ասում եմ կիսաձայն։

Սահնակը սուրում է ավելի ու ավելի դանդաղ, քամու ոռնոցը և սահնակի դժժոցն այնքան սարսափելի չեն այլևս, շունչներս տեղն է գալիս, և մենք, վերջապես, հասնում ենք ցած։ Նադենկան ոչ մեռած է, ոչ կենդանի։ Գունատ է, հազիվ է շնչում... Ես օգնում եմ, որ ոտքի ելնի։

— Մյուս անգամ ոչ մի գնով չեմ սահի,— ասում է նա՝ լայն բացված, սոսկումով լի աչքերն ինձ դարձնելով։— Ոչ մի գնով, թեկուզ աշխարհն ինձ տան։ Քիչ էր մնում մեռնեի։

Քիչ անց նա ուշքի է գալիս և արդեն հարցական նայում է աչքերիս. ե՞ս էի, արդյոք, որ ասացի այն հինգ բառը, թե՞ դրանք հենց այնպես ականջվն ընկան քամու աղմուկի մեջ։ Իսկ ես կանգնել եմ իր կողքին, ծխում եմ և ուշի-ուշով զննում ձեռնոցս։

Նա ինձ թևանցուկ է անում, և մենք երկար զբոսնում ենք սարի մոտակայքում։ Երևում է, հանելուկը նրան հանգիստ չի տալիս։ Ասվե՞լ էին այն բառերը թե ոչ։ Այո՞ թե ոչ։ Դա ինքնասիրության, պատվի, կյանքի, բախտի հարց է, շատ կարևոր հարց, ամենակարևորն աշխարհում։ Նադենկան անշտապ, տրտմությամբ, թափանցող հայացքով նայում է դեմքիս, պատասխանում է ակամա, սպասում է, ես չե՞մ խոսի արդյոք։ Օ՜, ի՜նչ խաղ է կարդացվում այդ սիրելի դեմքին, ի՜նչ խաղ։ Ես տեսնում եմ, թե նա ինչպես է կռվում իր հետ, նա ուզում է ինչ-որ բան ասել, ինչ-որ բան հարցնել, բայց բառեր չի գտնում, անհարմար է զգում, վախենում է, հրճվանքն է խանգարում...

— Գիտե՞ք ինչ,— ասում է առանց ինձ նայելու։

— Ի՞նչ,— հարցնում եմ։

— Եկեք նորից... սահենք։

Մենք սանդուղքով բարձրանում ենք սարն ի վեր։ Ես գունատ, դողդոջուն Նադենկային նորից սահնակ եմ նստեցնում, մենք նորից ենք գահավիժում ահավոր անդունդը, նորից է ոռնում

քամին և դժժում սահնակը, և նորից թռիչքի ամենասրընթաց և աղմկալի պահին ես ասում եմ կիսաձայն.

— Ես սիրում եմ ձեզ, Նադենկա։

Երբ սահնակները կանգ են առնում, Նադենկան մի հայացք է գցում սարի վրա, որով քիչ առաջ սահել էինք, հետո երկա՜ր-երկար զննում է իմ դեմքը, ականջ դնում իմ անտարբեր ու անկիրք ձայնին, և նրա ամբողջ, ամբողջ կերպարանքը, նույնիսկ իր ձեռնամուշտակն ու բաշլուղը, իր ամբողջ փոքրիկ կերպարանքը արտահայտում են ծայրահեղ տարակուսանք։ Եվ իր դեմքին գրված է.

«Սա ի՞նչ բան է։ Ո՞վ արտաբերեց այն բառերը։ Սա՞, թե պարզապես ականջովս ընկան»։

Այս անհայտությունն անհանգստացնում է իրեն, հանում համբերությունից։ Խեղճ աղջիկը հարցերիս չի պատասխանում, խոժոռվում է, քիչ է մնում լաց լինի։

— Տուն չգնա՞նք,— հարցնում եմ։

— Իսկ ինձ... սահելն ինձ դուր է գալիս,— ասում է նա շառագունելով։— Մի անգամ էլ չսահե՞նք։

Նրան սահելը «դուր է գալիս», մինչդեռ, սահնակ նստելիս, նա առաջվա պես գունատ է, վախից հազիվ է շնչում, դողում է։

Մենք ցած ենք սահում երրորդ անգամ, և ես տեսնում եմ, թե նա ինչպես է նայում երեսիս, հետևում իմ շուրթերի շարժմանը։ Բայց ես թաշկինակը մոտեցնում եմ շուրթերիս, հազում եմ և, երբ հասնում ենք սարի կեսին, հասցնում եմ շշնջալ.

— Ես սիրում եմ ձեզ, Նադյա։

Եվ հանելուկը հանելուկ էլ մնում է։ Նադենկան լռում է, միտք անում ինչ-որ բանի մասին... Ես նրան սահարանից ուղեկցում եմ տուն, նա ջանում է ավելի անշտապ գնալ, դանդաղեցնում է քայլերը և սպասում ու սպասում՝ չե՞մ ասի, արդյոք, այն բառերը։ Եվ ես տեսնում եմ, թե ինչպես է տանջվում նրա հոգին, ինչպիսի ճիգ է թափում, որպեսզի չասի.

«Հո չի՞ կարող պատահել, որ քամին ասեր։ Եվ ես չեմ ուզում, որ քամին ասած լիներ»։

Մյուս օրն առավոտյան երկտող եմ ստանում. «Եթե այսօր գնալու լինեք սահարան՝ ինձ էլ տարեք։ Ն.»։ Եվ այդ օրվանից ես և Նադենկան սկսում ենք ամեն օր գնալ սահարան և սահնակով ցած սուրալիս ես ամեն անգամ կիսաձայն շշնջում եմ ճիշտ նույն բառերը.

— Ես սիրում եմ ձեզ, Նադյա։

Շուտով Նադենկան ընտելանում է այդ դարձվածքին, ինչպես ընտելանում են գինուն կամ մորֆիին։ Առանց դրա նա չի կարող ապրել։ Ճիշտ է, սարից գահավիժելն առաջվա պես սոսկալի է, բայց հիմա արդեն վախն ու վտանգը մի առանձին հրապույր են տալիս սիրո խոսքերին, որոնք առաջվա պես հանելուկ են մնում և արբեցնում հոգին։ Կասկածի տակ են նույն երկուսը՝ ես և քամին... Այդ երկուսից ո՞վ է նրան սեր խոստանում՝ նա չգիտե, բայց, ըստ երևույթին, իր համար մեկ է այլևս. ինչ սափորից էլ ըմպվի, միևնույն է, միայն թե արբեցում լինի։

Ինչպես պատահեց, մի անգամ, կեսօրին, ես մենակ գնացի սահարան. խառնվելով բազմությանը, տեսա, թե ինչպես է Նադենկան մոտենում սարին, ինչպես է աչքերով որոնում ինձ... Հետո երկյուղով բարձրանում է սանդուղքով... Սոսկալի է մենակ սահելը, օ՜, շատ է սոսկալի։ Նա ձյան պես գունատ է, դողում է վախից, առաջ է գնում ասես դեպի կառափնարան, բայց գնում է, գնում առանց ետ նայելու, վճռականությամբ լի։ Նա, ըստ երևույթին, վճռել է, վերջապես, փորձել՝ կլսվե՞ն այն զարմանահրաշ, քաղցրալուր բառերը, երբ ես չկամ։ Ես տեսնում եմ, թե ինչպես նա գունատ, սոսկումից բերանը բաց արած, նստում է սահնակ, աչքերը փակում և, առհավետ հրաժեշտ տալով աշխարհին, պոկվում է տեղից... «Ժ-ժ-ժ»... դժժում են սահնակի կողերը։ Նադենկան լսո՞ւմ է այն բառերը, ես չգիտեմ... Տեսնում եմ միայն, որ սահնակից վեր է կենում թույլ ու հոգնատանջ։ Ու դեմքի արտահայտությունից երևում է, որ ինքն էլ չգիտի՝ լսե՞լ է ինչ-որ բան թե ոչ։ Գահավիժման երկյուղը նրանից խլել է լսելու, ձայները տարբերելու, հասկանալու ընդունակությունը...

Բայց ահա եկավ մարտ ամիսը... Արևը դարձել է ավելի բարեհամբույր։ Մեր սառցալեռը մգվում է, կորցնում իր փայլը և հալչում վերջապես։ Մենք այլևս չենք սահում։ Այլևս չկա այն տեղը, ուր խեղճ Նադենկան պիտի լսեր այն բառերը. ասենք, դրանք ասող էլ չկա, քանի որ քամին դադարել է, իսկ ես պետք է մեկնեմ Պետերբուրգ՝ երկար ժամանակով, գուցեև առմիշտ։

Մի անգամ, մեկնելուցս երկու օր առաջ, մթնշաղին նստած եմ պարտեզում, իսկ այն բակից, ուր ապրում է Նադենկան, պարտեզն անջատված է բարձր ցանկապատով... Դեռ բավական ցուրտ է, ձյունը գոմաղբի տակ դեռ չի հալվել, ծառերը դեռ կենդանություն չեն առել, բայց արդեն գարնան բույր է գալիս և,

քուն մտնելուց առաջ, սերմնաքաղ ագռավները զիլ ճիչեր են արձակում։ Ես մոտենում եմ ցանկապատին և նայում ճեղքից։ Տեսնում եմ, թե ինչպես Նադենկան տանից դուրս է գալիս և իր թախծոտ, կարոտալի հայացքը դարձնում երկինք... Գարնանային քամին փչում է նրա դժգույն, տրտմալի դեմքին... Դա նրան հիշեցնում է այն քամին, որ այն ժամանակ ոռնում էր մեր ականջներում սարից իջնելիս, երբ նա լսեց այն հինգ բառը, և նրա դեմքն այժմ դառնում է ավելի ու ավելի տրտում, այտերից արցունքներ են հոսում... Ով խեղճ աղջիկն առաջ է մեկնում ձեռքերը, ասես այդ քամուց խնդրելով վերստին բերել այն բառերը։ Ով ես, սպասելով, որ քամին ուժեղանա, ասում եմ կիսաձայն.

— Ես սիրում եմ ձեզ, Նադյա։

Տե՜ր իմ աստված, ինչ է կատարվում Նադենկայի հետ։ Նա մի ճիչ է արձակում, ժպտում ամբողջ դեմքով, և ձեռքերը մեկնում քամուն ընդառաջ՝ հրճվալից, երջանիկ, այնքա՜ն գեղեցիկ։

— Իսկ ես գնում եմ մեկնելու պատրաստություն տեսնելու...

Դա շատ վաղուց էր։ Հիմա Նադենկան ամուսնացած կին է. պսակե՞լ են իրեն, թե իր կամքովն է ամուսնացել՝ միևնույն է, ազնվական խնամակալության քարտուղարի հետ, և հիմա արդեն երեք երեխա ունի։ Այն, թե ինչպես էինք մի ժամանակ գնում սահարան և ինչպես էր քամին իրեն հասցնում «Ես սիրում եմ ձեզ, Նադյա» բառերը՝ չի մոռացվել. հիմա դա իր կյանքի ամենից երջանիկ, ամենից սրտառուչ ու սքանչելի հուշն է...

Իսկ ես հիմա, երբ հասակ եմ առել, արդեն չեմ հասկանում՝ ինչո՞ւ էի ասում այդ խոսքերը, ինչո՞ւ էի կատակում...

1886

ԱԳԱՖՅԱՆ

Երբ ես Ս-ի գավառումն էի, հաճախ լինում էի Դուբովի բանջարանոցներում, Սավկա Ստուկաչի մոտ, որին ուղղակի Սավկա էին կոչում։ Այդ բանջարանոցները իմ սիրած վայրն էին, այսպես կոչված՝ «գլխավոր» ձկնորսության համար, երբ տնից դուրս գալիս չես իմանում, թե որ օրն ու որ ժամին կվերադառնաս, հետդ վերցնում ես ձկնորսական բոլոր պարագաները և ուտելիքի պաշար։ Ճիշտ ասած՝ ինձ այնքան ձկնորսությունը չէր

հրապուրում, որքան անվրդով թափառումները, ո՛չ ժամանակին ուտելը, Սավկայի հետ զրուցելը և ամառային երկար գիշերների հետ առերեսումները։ Սավկան մոտ քսանհինգ տարեկան բարձրահասակ, գեղեցիկ ու կայծքարի պես պնդակազմ երիտասարդ էր։ Նա խելացի ու բանիմաց մարդու համբավ ուներ, գրագետ էր, օրի հազվադեպ էր խմում, բայց որպես աշխատավոր՝ այդ երիտասարդ և ուժեղ մարդը մի քոռ գրոշ էլ չարժեր։ Պարանի պես պիրկ նրա մկանների մեջ ուժի հետ միասին հորդում էր նաև մի ծանր, անհաղթահարելի ծուլություն։ Ինչպես բոլորը, նա էլ ապրում էր գյուղում, իր սեփական խրճիթում, հողաբաժին ուներ, բայց ոչ վարում էր, ոչ ցանում և ոչ մի արհեստով չէր զբաղվում։ Նրա պառավ մայրը մուրացկանություն էր անում, ինքն էլ ապրում էր երկնային թռչունի պես. առավոտյան չգիտեր, թե կեսօրին ինչ է ուտելու։ Ոչ թե կամքն ու եռանդն էր պակասում նրան կամ խղճահարությունը մոր նկատմամբ, այլ հենց այնպես, աշխատանքի սեր չուներ և չէր գիտակցում նրա օգուտը... Նրա ամբողջ կերպարանքից փչում էր հենց միայն բնածին անդորրություն, պարապ-սարապ, ձեռքերը ծալած ապրելու համարյա արտիստական կիրք։ Իսկ երբ Սավկայի ջահել, առողջ մարմինը ֆիզիոլոգիապես մկանների աշխատանքի մղում էր ունենում, ապա երիտասարդը կարճ ժամանակով ամբողջովին անձնատուր էր լինում որևէ ազատ, բայց հիմար պրոֆեսիայի, ինչպիսին է՝ ոչ ոքի պետք չեկող բիրեր սրելը կամ թե կալանց հետ առաջկտրուկի վազվզելը։ Նրա ամենասիրելի դիրքը կենտրոնացած անշարժությունն էր։ Նա կարող էր ամբողջ ժամեր անշարժ կանգնել մի տեղ և նայել մի կետի։ Բայց տեղից շարժվում էր ներշնչումով, այն էլ միայն այն ժամանակ, երբ առիթ էր լինում որևէ արագ շարժում անել թափով. առջևից վազող շան պոչը բռնել, որևէ կնոջ գլխաշոր պոկել, լայն փոսի վրայով ցատկել։ Ինքնին հասկանալի է, որ շարժումների այդպիսի ժլատության պայմաններում Սավկան մերկ ու տկլոր էր և ամեն մի անտիրական մարդուց ավելի վատ էր ապրում։ Ժամանակի ընթացքում նրա պարտքերը պետք է շատանային, և նրան՝ այդ ջահել ու առողջ տղային, հասարակությունն ուղարկել էր ծերունական աշխատանքի, պահակության՝ որպես համայնքի բանջարանոցների խրտվիլակ։ Որքան էլ ծիծաղում էին նրա վրա իր այդ վաղաժամ ծերության համար, նա բանի տեղ

չէր դնում։ Հենց իսկը նրա սրտովն էր այդ տեղը, որ անդորր էր ու հարմար անշարժ դիտումների համար։

Պատահեց, որ մայիսյան մի մեղմ երեկո ես ահա հենց այդ Սավկայի մոտ եղա։ Հիշում եմ, պառկած էի մի մաշված, պատրոտված թաղիքի վրա ուղիղ քողտիկի մոտ, որից չոր խոտի անուշ բուրմունք էր գալիս։ Ձեռքերս գլխիս տակ դրած՝ նայում էի առաջ։ Իմ ոտքերի մոտ ընկած էր մի փայտե եղան։ Նրանից այն կողմ ինչպես մի սև բիծ պառկած էր Սավկայի շունը՝ Կուտկան, իսկ Կուտկայից մի երկու սաժեն այն կողմը մի դարափուլ էր դեպի գետակը։ Պառկած վիճակում ես գետը տեսնել չէի կարող։ Տեսնում էի միայն այդ ափին խիտ բուսած ուռենիների գագաթները և մեկ էլ դիմացի ափի գալարուն, կարծես կրծմրծված եզերքը։ Ափից հեռու, մթին բլրակի վրա վախեցած կաքավների պես իրար էին սեղմվել այն գյուղի խրճիթները, որտեղ ապրում էր իմ Սավկան։ Բլրակի հետևը մարում էին մայրամուտի շողերը։ Մնացել էր միայն մեկ դժգույն կարմրավուն շերտ, և ահա այն էլ սկսեց թրթռալ մոխրապատ շեղջի պես։

Բանջարանոցի աջ կողմը մեղմ սոսափյունով և հանկարծահաս քամուց երբեմն խշխշալով սևին էր տալիս լաստենու անտառը, դեպի ձախ փռված էր անծայրածիր դաշտը։ Այնտեղ, ուր մթնշաղի պատճառով աչքն այլևս չէր կարող դաշտը տարբերել երկնքից, մի պայծառ լույս էր առկայծում։ Ինձնից քիչ հեռու նստած էր Սավկան։ Թուրքական ձևով ծալապատիկ արած և գլուխը կախ գցած՝ նա մտախոհ նայում էր Կուտկային։ Մեր կարթերը խայծերի հետ միասին վաղուց արդեն գետի մեջ էին, և մեզ ոչինչ չէր մնում անելու, բացի հանգստին անձնատուր լինելուց, որ այնքան սիրում էր երբեք չհոգնող և մշտապես հանգստացող Սավկան։ Մայրամուտի շողերը դեռ բոլորովին չէին մարել, իսկ ամառային գիշերը արդեն իր քնքուշ, թմրաբեր շոյանքով ընդգրկում էր բնությունը։

Ամեն ինչ թմրել էր առաջին խոր քնի մեջ, միայն ինձ անծանոթ ինչ-որ գիշերային թռչուն անտառում երկարաձիգ ու ծուլորեն հատընդհատ ծորուն ձայն էր արձակում, որով կարծես ասում էր. «Դու Նի-կի-տին տեսա՞ր», և իսկույն էլ ինքն իրեն պատասխանում էր. «Տե-սա՛, տե-սա՛»։

— Այս ինչո՞ւ այսօր սոխակները չեն երգում,— հարցրի ես Սավկային։

Նա դանդաղորեն շուռ եկավ իմ կողմը։ Նրա դիմագծերը

խոշոր էին, բայց վճիտ, արտահայտիչ ու մեղմ, ինչպես կնոջ դիմագծեր։ Հետո նա իր հեզ, մտախոհ աչքերով նայեց անտառին, ուռենիներին, դրպանից դանդաղորեն հանեց շվին, դրեց բերանը և ճլվլացրեց էգ սոխակի պես։ Եվ իսկույն, որպես նրա ճլվլոցին պատասխան, դիմացի ափից ձայն տվեց ջրահավը։

— Ահա ձեզ սոխակ...— քմծիծաղ տվեց Սավկան։— Ճի՜վ-ճի՜վ, ճի՜վ-ճի՜վ։ Կարծես կեռիկ է կտցահարում, բայց երևի կարծում է, թե երգում է ինքը։

— Ինձ այդ թռչունը դուր է գալիս,— ասացի ես։— Դու գիտե՞ս. չվելու ժամանակ ջրահավը չի թռչում, այլ վազում է գետնի վրայով։ Թռչում է միայն զեռերի ու ծովերի վրայով, մնացած ճանապարհը ոտքով է գնում։

— Տեսնո՞ւմ ես դու շանը...— մոթմոթաց Սավկան, հարգանքով նայելով ճվացող ջրահավի կողմը։

Իմանալով, թե Սավկան որքան է սիրում պատմություններ լսել, ես պատմեցի նրան ամեն բան, ինչ որ ջրահավի մասին գիտեի որսորդական գրքերից։ Ջրահավից աննկատելիորեն անցա թռչունների չվելուն։ Սավկան առանց աչքերը թարթելու լսում էր ինձ ուշադիր և շարունակ գոհունակությամբ ժպտում։

— Իսկ թռչունների համար ո՞ր երկիրն է հարազատ,— հարցրեց նա։— Մե՞րը, թե այնտեղինը։

— Իհարկե մերը։ Այստեղ թռչունն ինքն էլ է ծնվում, ճուտեր էլ է հանում, սա նրա հայրենիքն է, իսկ այնտեղ թռչում է միայն նրա համար, որ չսառչի։

— Հետաքրքի՞ր է,— ծոր տվեց Սավկան։— Ինչի մասին խոսես՝ հետաքրքիր է։ Թռչունը վերցնես, մարդը, թե այս քարը, ամեն բանի մեջ իր իմաստը կա... Է՜հ, աղա, թե որ իմանայի դուք գալու եք, էսօր չէի թույլ տա, որ կնիկ գար այստեղ... Էսօր մեկը խնդրել է, որ գա...

— Ա՜խ, ոչինչ, ոչինչ, ես չեմ խանգարի,— ասացի։— Ես անտառում էլ կարող եմ պառկել։

— Բա՞ն ասացիք։ Չէր մեռնի, եթե վաղը գար... Եթե գոնե նստեր այստեղ ու զրույցը լսեր, թե չէ՝ ապուշ է կտրելու։ Նրա մոտ մի խելքը գլխին բան խոսել չի լինի։

— Դու Դարյայի՞ն ես սպասում,— հարցրի ես մի պահ լռելուց հետո։

— Չէ... էսօր մի նորն է ցանկություն հայտնել, որ գա... Ագաֆյա Ստրելչիխան...

Սավկան այս ասաց իր սովորական անտարբեր, փոքր-ինչ խուլ ձայնով, կարծես խոսում էր ծխախոտի կամ քաշովու մասին, բայց ես զարմանքից վեր թռա։ Ագաֆյա Ստրելչիխային ես ճանաչում էի... Դա դեռ բոլորովին ջահել, տասնինն-քսան տարեկան մի կին էր, ոչ ավելի, քան մի տարի առաջ ամուսնացած երկաթուղային սլաքավարի հետ, որը մի ջահել ու պարթև երիտասարդ էր։ Ագաֆյան ապրում էր գյուղում, իսկ ամուսինը ամեն գիշեր երկաթգծից գնում էր նրա մոտ գիշերելու։

— Վատ կվերջանա, ախպերս, քո այդ բոլոր պատմությունները կանանց հետ,— հառաչեցի ես։

— Է՜հ, ինչ ուզում է՝ թող լինի...

Եվ փոքր-ինչ մտածելուց հետո Սավկան ավելացրեց.

— Ես ասել եմ կնանոնց, չեն լսում... Նրանք, այդ հիմարները, կարծես քիչ դարդ ունեն։

Լռություն տիրեց... Մինչ այդ մթնշաղն ավելի խտացավ և առարկաները կորցրին իրենց ձևը։ Բլրակի հետևի շերտն արդեն բոլորովին մարել էր, իսկ աստղերն ավելի վառ, ավելի պայծառ էին դառնում... Ծղրիդների միալար թախծոտ ճռռոցը, ջրահավի ճլվլումը և լորի կանչը չէին խախտում գիշերային լռությունը, այլ, ընդհակառակն, ավելի մեծ միապաղաղություն էին տալիս։ Թվում էր, թե մեղմիկ կանչում ու մեր լսողությունը դյուրթում էին ոչ թե թռչունները, ոչ թե միջատները, այլ՝ երկնքից մեզ նայող աստղերը...

Լռությունն առաջինը խզեց Սավկան։ Նա իր հայացքը սև Կուտկայից դանդաղորեն դարձրեց իմ կողմը և ասաց.

— Տեսնում եմ, աղա, որ դուք ձանձրանում եք։ Եկեք ընթրենք։

Եվ առանց իմ համաձայնությանն սպասելու, նա փորի վրա սողաց քողտիկի մեջ և սկսեց ինչ-որ բաներ փնտրել այնտեղ, որի ժամանակ ամբողջ քողտիկը թպրտում էր տերևի պես։ Հետո նա ետ սողաց, առջևս դրեց իմ օղին և մի կավե թաս։ Թասի մեջ կային խաշած ձվեր, տարեկանի ալյուրից ճարպով թխված բլիթներ, սև հացի կտորներ և էլի ինչ-որ բաներ... Մենք խմեցինք ծուռտիկ բաժակով, որ կանգնել չէր կարողանում, և սկսեցինք ուտել... Մոխրագույն, խոշոր աղ, կեղտոտ, ճարպոտ բլիթներ, ռետինի պես պինդ խաշած ձվեր, բայց որքա՜ն համով էին դրանք։

— Ապրում ես մերկ ու տկլորի պես, բայց որքա՜ն տեսակ-

տեսակ բաներ ունես,— ասացի ես, ցույց տալով թասը։— Այս որտեղի՞ց է։

— Կնանիքն են բերում,— մռնչաց Սավկան։

— Բայց ինչո՞ւ են բերում։

— Հենց այնպես... ինձ խղճալուց...

Սավկայի ոչ միայն ուտելիքը, այլև հագուստը կանացի «խղճահարության» հետքեր էր կրում։ Այսպես, այդ երեկո ես նրա վրա նկատեցի մի նոր գարուսե գոտի և թունդ կարմիր մի ժապավեն, որով նրա կեղտոտ վզից կախված էր մի պղնձե խաչ։ Ես գիտեի, թե գեղեցիկ սեռը ինչպիսի թուլություն ունի Սավկայի նկատմամբ և գիտեի, որ նա սիրով չի խոսում դրա մասին, ուստի չշարունակեցի իմ հարցուփորձը։ Ասենք, խոսելու ժամանակն էլ չէր... Կուտկան, որ քմսվում էր մեր կողքին և համբերությամբ սպասում մեր պատասխաններին, հանկարծ ականջները խլշեց ու գոմռաց։ Հեռվից ջրի ընդհատուն ճղփոց լսվեց։

— Մեկն անցնում է ծանծաղուտով,— ասաց Սավկան։

Մի երեք րոպե անց Կուտկան նորից գոմռաց և հալի նման մի ձայն արձակեց։

— Թի՛թ,— սաստեց նրան տերը։

Խավարի մեջ խուլ, երկչոտ քայլեր լսվեցին, և անտառից դուրս եկավ մի կնոջ կերպարանք։ Չնայած մութ էր, բայց ես ճանաչեցի նրան. դա Ագաֆյա Ստրելչիխան էր։ Նա անհամարձակ մոտեցավ մեզ, կանգ առավ և խոր շունչ քաշեց։ Շնչասպառ էր լինում նա ոչ այնքան քայլելուց, որքան, երևի, վախից ու անախորժ զգացմունքից, որ ամեն ոք զգում է գիշեր ժամանակ ծանծաղուտով անցնելիս։ Քողտիկի մոտ մեկի փոխարեն երկու մարդ տեսնելով՝ նա թույլ ճիչ արձակեց և մի քայլ ետ գնաց։

— Ա՜... դո՞ւ ես,— ասաց Սավկան բլիթը բերանը ճխտելով։

— Է... ես եմ,— մրմնջաց կինը գետին գցելով մի ինչ-որ կապոց և խեթ նայելով իմ կողմը։— Ցակովը բարև է ուղարկել ձեզ և պատվիրել է ձեզ տալ... ահա այդ...

— Լա՜վ, ի՛նչ կարիք կա փչելու. Ցակո՜վը,— քմծիծաղ տվեց Սավկան։— Փչելու կարիք չկա, աղան գիտե, թե ինչի ես եկել դու։ Նստիր, մեր հյուրը կլինես։

Ագաֆյան խեթ-խեթ նայեց ինձ և վարանմունքով նստեց։

— Իսկ ես կարծում էի էսօր չես գա...— ասաց Սավկան

երկար լռությունից հետո։— Դե ի՞նչ ես նստել, մի բան կեր։ Թե՞ կուզեիր մի քիչ արաղ խմել։

— Բա՛ն հնարեց,— խոսեց Ագաֆյան։— Ինչ էլ մի խմո՜ղն ես գտել...

— Խմի՛ր, խմի՛ր... Հոգիդ կտաքանա... Դե՛հ։

Սավկան Ագաֆյային տվեց ծուռտիկ բաժակը։ Կինը դանդաղորեն խմեց օղին, բերանը բան չդրեց, այլ միայն ուժեղ արտաշնչեց։

— Բան-ման ես բերել...— շարունակեց Սավկան կապոցը բանալով և իր ձայնին ներողամիտ—կատակի երանգ տալով։— Չի կարող պատահել, որ կնիկը մի բան չբերի։ Ա՜, թխվածք ու կարտոֆիլ... Լավ են ապրում,— հառաչեց նա դառնալով դեպի ինձ։— Ամբողջ գյուղում միայն սրանց մոտ է, որ ձմեռվանից կարտոֆիլ է մնացել։

Մթության մեջ ես Ագաֆյայի դեմքը չէի տեսնում, բայց նրա ուսերի ու գլխի շարժումից էլ ինձ թվում էր, որ նա հայացքը չէր հեռացնում Սավկայի երեսից։ Այդ տեսակցության ժամանակ երրորդ անձ չլինելու համար ես որոշեցի գնալ զբոսնելու և վեր կացա։ Բայց հենց այդ ժամանակ սոխակն անտառում անսպասելիորեն ծոր տվեց երկու ցածր նոտա։ Կես րոպե անց, ձայնը բարձրացրեց կլկլոցով և այսպիսով իր ձայնը փորձելով սկսեց երգել։ Սավկան վեր թռավ ու ականջ դրեց։

— Սա երեկվանն է,— ասաց նա։— Դե սպասիր...

Եվ տեղից պոկվելով, նա անաղմուկ վազեց դեպի անտառ։

— Լավ, ինչի՞դ է պետք,— ձայն տվի ես նրա հետևից։— Չեռ քաշի։

Սավկան ձեռքը թափ տվեց,— այսինքն թե՝ մի գոռացեք,— և անհետացավ խավարի մեջ։ Սավկան, երբ ցանկանում էր, և՛ հիանալի որսորդ էր, և՛ ձկնորս, բայց այստեղ էլ նրա տաղանդն իզուր էր կորչում, ինչպես ուժը։ Շաբլոնի համար նա ծույլ էր, բայց իր ամբողջ որսորդական կիրքը նվիրում էր դատարկ ֆոկուսների։ Այսպես, սոխակներ նա որսում էր անպայման ձեռքով, գայլաձկան վրա մանրագնդակ էր կրակում կամ, պատահում էր, ժամերով կանգնում էր գետի մոտ և ամբողջ ուժով ջանում էր խոշոր կարթերով մանր ձկներ որսալ։

Ագաֆյան ինձ հետ մենակ մնալով, հազաց և մի քանի անգամ ձեռքը ճակատին քսեց... Խմած օղուց նա արդեն սկսել էր հարբել։

— Ինչպե՞ս ես, Ագաշա,— հարցրի ես նրան երկար լռությունից հետո, երբ արդեն անհարմար էր լռել։

— Փառք աստծո... Բայց դուք ոչ ոքի չպատմեք, աղա...— հանկարծ ավելացրեց նա շշուկով։

— Դե լա՛վ, լա՛վ,— հանգստացրի ես նրան։— Բայց և այնպես ի՞նչ անվախն ես դու, Ագաշա... Իսկ եթե Յակովն իմանա՞։

— Չի իմանա...

— Բայց է՛լի, եթե հանկարծ իմանա։

— Չէ... Ես նրանից շուտ տանը կլինեմ։ Հիմա նա գծումն է և կվերադառնա փոստատար գնացքը ճամփելուց հետո, իսկ այստեղից լսվում է, թե գնացքը երբ է անցնում...

Ագաֆյան նորից ձեռքը ճակատին քսեց և նայեց Սավկայի գնացած կողմը։ Սոխակը երգում էր։ Ինչ-որ գիշերային թռչուն շատ ցածր թռավ հենց գետնի երեսով և մեզ նկատելով ցնցվեց, թևերը խշխշացրեց ու թռավ գետի մյուս կողմը։

Շուտով սոխակը լռեց, բայց Սավկան չէր վերադառնում։ Ագաֆյան վեր կացավ, մի քանի անհանգիստ քայլ արեց և նորից նստեց։

— Ախր այդ ի՞նչ պատահեց նրան,— անհամբեր ասաց նա։— Գնացքը հո վաղը չի՛ գալու։ Ես պետք է հենց հիմա գնամ։

— Սավկա՞,— ձայն տվի ես։— Սավկա՞։

Նույնիսկ արձագանքը չպատասխանեց ինձ։ Ագաֆյան անհանգիստ շարժումներ արեց և նորից վեր կացավ։

— Գնալուս ժամանակն է,— խոսեց նա հուզված ձայնով։— Հիմա գնացքը կգա։ Ես գիտեմ, թե գնացքները երբ են անցնում։

Խեղճ կինը չէր սխալվել։ Մի քառորդ ժամ էլ չանցած՝ հեռավոր աղմուկ լսվեց։

Ագաֆյան մի երկար հայացք գցեց անտառի վրա և անհամբերությամբ ձեռքերը շարժեց։

— Ախր ո՞ւր կորավ,— խոսեց նա ջղային ծիծաղով։— Սատանան ո՞ւր տարավ նրան։ Ես կգնամ, աստված վկա, աղա, կգնամ։

Մինչ այդ, աղմուկն ավելի ու ավելի պարզ էր լսվում։ Արդեն կարելի էր անիվների չխկչխկոցը տարբերել շոգեքարշի ծանր հևքից։ Ահա սուլոց լսվեց, գնացքը խուլ չխկչխկոցով անցավ կամուրջով... էլի մի րոպե և ամեն ինչ լռեց։

— Էլի մի րոպե կսպասեմ...— հառաչեց Ագաֆյան վճռականորեն նստելով։— Թող այդպես լինի, կսպասեմ։

Վերջապես մթության մեջ Սավկան երևաց։ Նա բոբիկ ոտքերով անաղմուկ քայլում էր բանջարանոցի փխրուն հողի վրա և քթի տակ ինչ-որ բան էր մմռում։

— Մի տեսեք, թե ի՞նչ բախտ էր,— ուրախ ծիծաղեց նա։— Հենց նոր էր մոտեցել թփին, և ես նոր էի սկսել ձեռքով նշան բռնել, երբ նա լռեց։ Ա՜խ դու, քաչալ շուն։ Սպասեցի, սպասեցի, մինչև նորից երգի ու այդպես էլ թքեցի, թողի...

Սավկան անճոռնաբար գետնին ընկավ Ագաֆիայի մոտ և հավասարակշռությունը պահելու համար երկու ձեռքով բռնեց նրա մեջքը։

— Իսկ դո՞ւ ինչ ես քիթդ կախել, կարծես մորքուրդ է ծնել քեզ,— հարցրեց նա։

Չնայած իր փափկասրտությանն ու պարզամտությանը՝ Սավկան կանանց արհամարհում էր։ Նա անփույթ էր վարվում նրանց հետ, վերևից էր նայում և նույնիսկ այնքան էր իջնում, որ արհամարհանքով ծիծաղում էր իր անձի նկատմամբ նրանց տածած զգացմունքի վրա։ Ով գիտե, գուցե հենց այդ անփույթ, արհամարհական վերաբերմունքն էր պատճառը, որ նա այդպիսի ուժեղ և անհաղթահարելի հմայք ուներ գեղջուկ սիրուհիների վրա։ Նա գեղեցիկ էր ու բարեկազմ, նրա աչքերի մեջ միշտ, նույնիսկ իր արհամարհած կանանց նայելիս կայծկլտում էր մի մեղմ փաղաքշանք, բայց միայն արտաքին հատկություններով չի կարելի բացատրել նրա հրապույրը։ Բացի երջանիկ արտաքինից և վերաբերմունքի յուրահատուկ ձևերից, պետք է կարծել, կանանց վրա ազդեցություն էր գործում նաև Սավկայի հուզիչ դերը, քանի որ բոլորը նրան ձախորդ մարդ էին համարում և խեղճին հարազատ խրճիթից քշել էին բանջարանոց։

— Հապա մի ասա աղային, թե ինչի համար ես դու այստեղ եկել,—շարունակեց Սավկան դեռևս Ագաֆյայի մեջքը բռնած։— Հապա մի պատմիր, մարդավոր կնիկ։ Հա՛-հա՛... ի՞նչ կասես, Ագաշա, էլի արաղ չխմե՞նք։

Ես վեր կացա և, մարգերի միջով անցնելով, քայլեցի բանջարանոցի երկարությամբ։ Մթին մարգերը նմանվում էին խոշոր, տափակած գերեզմանների։ Նրանցից փորված հողի հոտ էր գալիս, և նուրբ խոնավություն էր բերում բույսերից, որոնք սկսել էին ցողով ծածկվել... Ձախ կողմում դեռևս մի կարմիր կրակ էր

կայծկլտում։ Նա ասես սիրալիր աչքով էր անում և ժպտում։

Ես մի երջանիկ ծիծաղ լսեցի։ Այդ Ագաֆյան էր ծիծաղում։

«Իսկ գնա՞ցքը,— հիշեցի ես։— Գնացքն արդեն վաղուց է անցել»։

Մի քիչ էլ սպասելուց հետո ես վերադարձա քողտիկի մոտ։ Սավկան ծալապատիկ նստել էր անշարժ և կամացուկ, հագիվ լսելի մռմռում էր ինչ-որ երգ, որ բաղկացած էր հենց միայն միավանկ բառերից, մոտավորապես այսպես։ «Թո՛ւհ, դու... ախ դու... ես ու դու...»։ Ագաֆյան օղուց, Սավկայի արհամարհական փաղաքշանքից ու գիշերվա տոթից հարբած՝ նրա կողքին պառկել էր գետնին և ջղաձգորեն դեմքը սեղմում էր նրա ծնկին։ Նա այնքան հեռուն էր գնացել իր զգացմունքների մեջ, որ իմ գալը չնկատեց էլ։

— Ագաշա, ախր գնացքը վաղուց է անցել,— ասացի ես։

— Ժամանակն է, ժամանակն է, որ գնաս,— իմ միտքը լրացրեց Սավկան, գլուխը թափահարելով։— Ի՞նչ ես ձգվել այստեղ, անամո՛թ։

Ագաֆյան ցնցվեց, գլուխը բարձրացրեց նրա ծնկից, նայեց ինձ և նորից հպվեց նրան։

— Վաղուց ժամանակն է,— ասացի ես։

Ագաֆյան շուռ եկավ և բարձրացավ մի ծնկի վրա... Նա տանջվում էր... Մի կես րոպե նրա ամբողջ էությունը, որքան ես կարողացա նկատել մթության մեջ, պայքար ու տատանում էր արտահայտում։ Եղավ մի վայրկյան, երբ նա կարծես ուշքի գալով իրանը երկարացրեց, որպեսզի ոտքի կանգնի, բայց էլի ինչ-որ անհաղթահարելի ուժ հրեց նրա ամբողջ մարմնին, և նա հպվեց Սավկային։

— Է՛, գրողի ծոցը նա,— ասաց Ագաֆյան կրծքային վայրի ծիծաղով, և այդ ծիծաղի մեջ լսվեց խելառ վճռականություն, անզորություն, ցավ։

Ես հանդարտ քայլեցի դեպի անտառը, իսկ այնտեղից իջա դեպի գետը, որտեղ մեր ձկնորսական պարագաներն էին։ Գետը նիրհում էր։ Մի ինչ-որ նուրբ, փափուկ ծաղիկ իր բարձր ցողունի վրայից քնքշորեն դիպավ իմ այտին, ինչպես մի երեխա, որն ուզում է հասկացնել, թե ինքը քնած չէ։ Պարապությունից ես շոշափեցի կարթաձողերից մեկը և քաշեցի։ Ջողը թույլ ձգեց ու կախվեց. ոչինչ չէր բռնվել... Մյուս ափը և գյուղը չէին երևում։ Մի խրճիթում լույս առկայծեց, բայց և շուտով մարեց։

Ես թափառեցի ափին, գտա այն փոսը, որ դեռ ցերեկն էի նկատել և վրան նստեցի ինչպես բազկաթոռում։ Երկար նստած մնացի... Ես տեսնում էի, թե ինչպես աստղերն սկսեցին մշուշոտվել ու կորցնել իրենց փայլը, ինչպես երկրի երեսով մեղմ շնչի պես անցավ հովը և շարժեց արթնացող ուռենիների տերևները...

— Ա-գա-ֆյա՛...— գյուղից լսվեց մեկի խուլ ձայնը։— Ագաֆյա՛։

Այդ տուն վերադարձած և անհանգստացած ամուսինն էր, որ գյուղում փնտրում էր իր կնոջը։ Իսկ այդ ժամանակ բանջարանոցներից լսվեց մի անզուսպ ծիծաղ. կինը ինքնամոռացության մեջ էր ընկել, հարբել և մի քանի ժամվա երջանկությամբ ջանում էր հատուցել այն տանջանքը, որ սպասում էր իրեն վաղը։

Ես քուն մտա։

Երբ արթնացա, իմ կողքին նստած էր Սավկան և թեթևակի ցնցում էր ուսս։ Գետը, անտառը, երկու ափերը, կանաչ ու լվացված ծառերը և դաշտը՝ ամեն ինչ ողողված էր առավոտյան պայծառ լույսով։ Ծառերի բարակ բների միջով մեջքիս էին խփում հենց նոր ծագած արևի շողերը։

— Այդպե՞ս եք ձուկ որսում,— քմծիծաղ տվեց Սավկան։— Դե՛, վեր կացեք։

Ես վեր կացա, հաճույքով ճմլկոտացի, և իմ արթնացած կուրծքը սկսեց ագահորեն ներծծել խոնավ, բուրումնավետ օդը։

— Ագաշան գնա՞ց,— հարցրի ես։

— Հրե՛ն հա,— ցույց տվեց Սավկան ծանծաղուտի կողմը։

Ես նայեցի և տեսա Ագաֆյային։ Նա գետն անցնում էր փեշերը վեր քաշած, մազերը գզգզված, գլխաշորը ցած սահած։ Նրա ոտքերը հազիվ էին շարժվում...

— Կատուն գիտե, թե ում միսն է կերել,— մրմնջաց Սավկան, աչքերը կկոցելով նրա վրա։— Գնում է, բայց պոչն իրեն է քաշել... Անառակ են էս կնանիքը կատվի պես ու վախկոտ՝ նապաստակի նման... Երեկ հիմարի գլուխը չէր գնում, երբ ասում էին իրեն։ Հիմա կուտի, ու ինձ էլ քարշ կտա կենտրոն... Էլի պիտի զիկեն կնանոց համար...

Ագաֆյան ափ դուրս եկավ և դաշտի միջով գնաց դեպի գյուղ։ Սկզբում նա քայլում էր բավական համարձակ, բայց

շուտով հուզմունքն ու վախը իրենց գործը տեսան. նա երկյուղով ետ նայեց, կանգ առավ և խոր շունչ քաշեց։

— Վախենում ես, հա՞,— տխուր քմծիծաղ տվեց Սավկան, նայելով այն վառ կանաչ շերտին, որ ցողաթաթախ խոտի վրա ձգվում էր Ագաֆյայի հետևից։— Գնալ չի ուզում։ Ախր մարդը մի ամբողջ ժամ կանգնած նրան է սպասում... Տեսա՞ք նրան։

Սավկան վերջին խոսքերն ասաց ժպտալով, բայց իմ սիրտը սառել էր կրծքիս տակ։ Գյուղի ծայրի խրճիթի մոտ ճանապարհին կանգնել էր Ցակովը և խոժոռ նայում էր իր մոտ վերադարձող կնոջը։ Նա չէր շարժվում և տնկվել էր սյունի պես։ Ի՞նչ էր մտածում նա կնոջը նայելով։ Դիմավորման ի՞նչ խոսքեր էր պատրաստում։ Ագաֆյան մի պահ կանգ առավ, նորից ետ նայեց, ասես մեղանից օգնություն սպասելով, և առաջ գնաց։ Երբեք ես չեմ տեսել որ այդպես քայլեն ո՛չ հարբած մարդիկ, ո՛չ ուշիմները։ Ագաֆյայի ոտքերն ասես ծալվում էին ամուսնու հայացքից։ Նա մերթ ծուռումուռ էր քայլում, մերթ դոփում էր տեղում, ծնկները ծալելով ու ձեռքերը տարածելով, մերթ էլ ետ-ետ էր քայլում։ Մի հարյուր քայլ անելուց հետո նա նորից ետ նայեց ու նստեց։

— Դու գոնե թփի հետևը թաքնվեիր...— ասացի ես Սավկային։— Մարդը կարող է քեզ տեսնել։

— Նա առանց այն էլ գիտե, թե Ագաշկան ում մոտից է գնում... Գիշերները կնանիքը կաղամբի համար չեն գալիս բանջարանոց, բոլորը գիտեն։

Ես նայեցի Սավկայի դեմքին։ Նա գունատ էր և կնճռոտված զզվանքի խղճահարությամբ, ինչպես լինում են մարդիկ, երբ տեսնում են, թե ոնց են տանջում կենդանիներին։

— Կատվինը խաղ է, մկանը՝ մահ...— հառաչեց նա։

Հանկարծ Ագաֆյան վեր թռավ, գլուխը թափ տվեց և համարձակ քայլվածքով ուղղվեց դեպի ամուսինը։ Երևում էր, նա ուժի է եկել և սրտապնդվել։

1886

ԴԱՏԱՐԿ ԴԵՊՔ

Օգոստոսյան արևոտ կեսօր էր, երբ ես մի հալից ընկած ռուս իշխանուկի հետ մոտեցա հսկայական, այսպես կոչված Շաբելյան եղևնուտին, որտեղ մենք մտադիր էինք դահուճներ

որոնել։ Իմ իշխանուկը, նկատի առնելով այն դերը, որ նա խաղում է այս պատմվածքում, պետք է որ արժանի համարվեր մանրամասն նկարագրության։ Դա մի բարձրահասակ, բարեկազմ թուխ տղամարդ է, դեռևս ոչ ծեր, բայց արդեն կյանքից բավական տրորված, դուրս պրծած սև աչքերով, ոստիկանապետական երկար բեղերով և պաշտոնաթող զինվորականի սովորություններով։ Նա կարճամիտ մարդ է, արևելցու ճաշակով, բայց ազնիվ ու շիտակ է, ոչ կովասեր է, ոչ թեթևսոլիկ, ոչ էլ զվարճամոլ. արժանիքներ, որոնք հասարակության աչքում գորշության և չնչինության վկայական են։ Մարդկանց նա դուր չէր գալիս (գավառում նրան այլ կերպ չէին կոչում, քան «պայծառափայլ դմբո»), իսկ անձամբ ինձ համար իշխանուկը չափազանց համակրելի էր իր դժբախտություններով ու անհաջողություններով, որոնց անընդհատ շարանից էր բաղկացած նրա ողջ կյանքը։ Սմենից առաջ նա աղքատ էր։ Թուղթ չէր խաղում, քեֆ չէր անում, գործով չէր զբաղվում, քիթը ոչ մի տեղ չէր խոթում և մշտապես լուռ էր, բայց ինչ-որ ձևով կարողացել էր հորից հետո մնացած երեսուն-քառասուն հազարը քամուն տալ։ Միայն ասված գիտի, թե ինչ եղան այդ փողերը. ինձ հայտնի է միայն, որ հսկողության պակասի պատճառով շատ փող են հափշտակել կառավարիչները, գործակատարները և նույնիսկ լակեյները, շատ է ծախսվել պարտքով տալու, ողորմության և երաշխավորությունների համար։ Գավառում հազվադեպ կպատահեր մի կալվածատեր, որ նրան պարտք չլիներ։ Բոլոր խնդրողներին նա տալիս էր և ոչ այնքան բարությունից կամ մարդկանց նկատմամբ ունեցած իր հավատից, որքան շինծու ջենտլմենությունից. առ, իբր, և զգա իմ մարդավարությունը։ Ես նրա հետ ծանոթացա, երբ արդեն նա ինքն էր պարտքերի մեջ խրվել, առել էր երկրորդ գրավագրերի համը և խճճվել դուրս պրծնելու անհնարության աստիճան։ Օրեր էին լինում, երբ նա չէր ճաշում և ման էր գալիս դատարկ ծխախոտատուփով, բայց նրան միշտ տեսնում էին մաքուր, նորաձև հագնված, և միշտ նրանից բուրում էր իլանգ-իլանգի թանձր հոտը։

Իշխանի երկրորդ դժբախտությունը նրա կատարյալ միայնակությունն էր։ Նա ամուսնացած չէր, հարազատներ ու բարեկամներ չուներ։ Լռակյաց, ծածկամիտ բնավորությունը և բարեվայելչությունը, որը ավելի շեշտակի էր մղվում առաջին պլան, որքան ավելի էր ուզում թաքցնել աղքատությունը, նրան խան-

գարում էին մտերմանալու մարդկանց հետ։ Սիրավեպեր ունենալու համար նա ծանր էր, թմրած ու սառն, ուստի հազվադեպ էր մտերմանում կանանց հետ...

Անտառին մոտենալով, ես ու այդ իշխանուկը բրիչկայից իջանք և քայլեցինք ձարխոտի հսկայական տերևների մեջ թաքնված անտառային նեղ արահետով։ Բայց դեռ հարյուր քայլ էլ չէինք արել, երբ մատղաշ, արշինանոց եղևնուտից, ասես գետնից բուսելով, վեր ելավ երկար ձվաձև դեմքով, մաշված բաճկոնով, ծղոտե գլխարկով և լաքած բոտֆորտներով մի բարձրահասակ նվազ կերպարանք։ Անծանոթի մի ձեռքին սունկով զամբյուղ կար, մյուս ձեռքով նա աշխուժորեն քաշքշում էր ժիլետից կախված էժանագին շղթան։ Մեզ տեսնելով նա շփոթվեց, ժիլետն ուղղեց, քաղաքավարի հազաց և հաճելի ժպտաց, կարծես ուրախ էր տեսնելու մեզ նման լավ մարդկանց։ Հետո, մեզ համար բոլորովին անսպասելի, նա երկար ոտները խոտին քստքստացնելով, ամբողջ մարմնով թեքված և շարունակ հաճելի ժպտալով մոտեցավ մեզ, գլխարկը հանեց և արտասանեց քաղցր-մեղցր ձայնով, որի մեջ լսվում էին շան կաղկանձի շեշտեր.

— Է-է-է... պարոններ, որքան էլ ծանր է ինձ համար, բայց պետք է ձեզ զգուշացնեմ, որ այս անտառում որսն արգելվում է։ Ներեցեք, որ ծանոթ չլինելով, համարձակվում եմ ձեզ անհանգստացնել, բայց... թույլ տվեք ներկայանալ. ես Գրոնտովսկին եմ, տիկին Կանդուրինայի տնտեսության գրասենյակային գլխավոր պաշտոնյան։

— Շատ հաճելի է, բայց ինչո՞ւ չի կարելի որս անել։

— Այդպես է այս անտառի տիրուհու կամքը։

Ես ու իշխանը իրար նայեցինք։ Մի րոպե լուռ անցավ։ Իշխանը կանգնել և մտածկոտ նայում էր ոտների տակ, գավազանով խփած-պոկած մի մեծ ճանճասպան սունկի։ Գրոնտովսկին շարունակում էր հաճելի ժպտալ։ Նրա ամբողջ դեմքը թարթում էր, մեղր էր ծորում, և, թվում էր, նույնիսկ ժիլետի շղթան էլ ժպտում էր և աշխատում մեզ զարմացնել իր քաղաքավարությամբ։ Օդում խաղաղ հրեշտակի պես թռավ շփոթությունը. բոլոր երեքիս համար էլ անհարմար էր։

— Դատարկ բան է,— ասացի ես։— Հենց դեռ անցյալ շաբաթ ես այստեղ որս էի անում։

— Շատ հնարավոր է,— ատամների արանքից քրքջաց Գրոնտովսկին։— Փաստորեն այստեղ բոլորը որս անում են, չնայած արգելքին, բայց քանի որ ես ձեզ հանդիպել եմ, իմ պարտականությունն է... սրբազան պարտքն է ձեզ նախազգուշացնել։ Ես կախյալ մարդ եմ։ Եթե անտառը իմը լիներ, ապա Գրոնտովսկու ազնիվ խոսք, ես չէի հակառակի ձեր հաճելի բավականությանը։ Բայց ո՞վ է մեղավոր, որ Գրոնտովսկին կախյալ մարդ է։

Լողլող սուբյեկտը հոգոց հանեց և ուսերը թոթվեց։ Ես սկսեցի վիճել, բորբոքվել, ապացուցել, բայց որքան ավելի բարձրաձայն ու համոզիչ էի խոսում, Գրոնտովսկու դեմքը այնքան ավելի մեղրածոր ու քաղցր-մեղցր էր դառնում։ Ըստ երևույթին, մեր վրա ունեցած մի որոշ իշխանության գիտակցությունը նրան մեծագույն հաճույք էր պատճառում։ Նա հրճվում էր իր ներքաշամիտ տոնից, սիրալիրությունից, շարժուձևերից և առանձնահատուկ զգացմունքով էր արտասանում իր հնչեղ ազգանունը, որը, նա, հավանաբար, շատ էր սիրում։ Մեր առաջ կանգնած, նա իրեն զգում էր ավելի քան իր դերի մեջ։ Սակայն, դատելով շեղ, շփոթված հայացքներից, որ նա երբեմնակի նետում էր իր զամբյուղին, միայն մի բան էր փչացնում նրա տրամադրությունը՝ դա սունկն էր, նրա վեհությունը վիրավորող՝ կնիկ մարդու գեղջկական պրոզան։

— Հո ետ չե՞նք դառնալու,— ասացի ես։— Մենք տասնըհինգ վերստ ենք կտրել։

— Ի՜նչ արած,— հառաչեց Գրոնտովսկին։— Եթե դուք բարեհաճեիք կտրել ոչ թե տասնհինգ, այլ հարյուր հազար վերստ, եթե նույնիսկ թագավորը դար այստեղ Ամերիկայից կամ որևէ ուրիշ հեռավոր երկրից, ապա այն ժամանակ էլ ես պարտքս կհամարեի... այսպես ասած, սրբազան պարտականությունս...

— Այս անտառը Նադեժդա Լվովնայի՞ն է պատկանում,— հարցրեց իշխանը։

— Այո, Նադեժդա Լվովնային...

— Նա հիմա տա՞նն է։

— Այո... Ահա թե ինչ, դուք գնացեք նրա մոտ, այստեղից կես վերստ է, ավելի չի լինի, եթե նա ձեզ մի տոմսակ տա, ապա ես... հասկանալի է։ Հա-հա՜... Հի-հի՜...

— Թերևս,— համաձայնեցի ես։— Նրա մոտ գնալը շատ ավելի մոտիկ է, քան վերադառնալը... Գնացեք նրա մոտ, Սերգեյ Իվանիչ,— դիմեցի ես իշխանին։— Դուք նրա հետ ծանոթ եք։

Իշխանը, որ շարունակ պոկված սնկին էր նայում, աչքերը բարձրացրեց ինձ վրա, մտածեց ու ասաց.

— Ես մի ժամանակ նրա հետ ծանոթ էի, բայց... այնքան էլ հարմար չէ նրա մոտ գնալը։ Բացի այդ, ես վատ եմ հագնված... Դուք գնացեք, դուք նրա հետ ծանոթ չեք... Ձեզ համար ավելի հարմար է։

Ես համաձայնեցի։ Մենք շարաբան նստեցինք և Գրոնտովսկու ժպիտների ուղեկցությամբ գլորվեցինք դեպի կալվածատիրուհու դաստակերտը։ Նադեժդա Լվովնա Կանդուրինայի, ի ծնե՝ Շաբելսկայայի հետ ես ծանոթ չէի, առաջ երբեք մոտիկից չէի տեսել և նրան գիտեի միայն ուրիշների ասածով։ Ես գիտեի, որ նա անպատմելի հարուստ է, ինչպես ոչ ոք նահանգում... Հոր՝ կալվածատեր Շաբելսկու մահից հետո, որի միակ դուստրն էր, նրան մնաց մի քանի կալված, մի ձիաբուծարան և շատ փող։ Ես լսել էի, որ չնայած նրա քսանհինգ-քսանվեց տարեկան հասակին, տգեղ է, անգույն, չնչին, ինչպես բոլորը, և գավառական սովորական խանումների շարքում աչքի է ընկնում միայն իր հսկայական կարողությամբ։

Ինձ միշտ թվում էր, թե հարստությունն զգացվում է, և որ հարուստները պետք է որ իրենց առանձնահատուկ, աղքատներին անհայտ, զգացողություն ունենան։ Հաճախ, Նադեժդա Լվովնայի պտղատու մեծ այգու մոտով անցնելիս, որտեղից հառնում էր հսկայական ծանրանիստ տունը՝ միշտ վարագուրված լուսամուտներով, ես մտածում էի. «Ի՞նչ է զգում նա այս րոպեին։ Արդյոք երջանկություն կա՞ այնտեղ, վարագույրների հետևում», և այլն։ Մի անգամ ես նրան հեռվից տեսա, թե ինչպես էր նա ինչ-որ տեղից մի սիրունիկ թեթև կաբրիոլետ նստած գնում և վարում զեղեցիկ սպիտակ ձին և ես, մեղավոր մարդս, ոչ միայն նախանձեցի նրան, այլ նույնիսկ գտա, որ նրա նստվածքի, նրա շարժումների մեջ ինչ-որ առանձնահատուկ բան կա, որը չկա աղքատ մարդկանց մեջ, ճիշտ այնպես, ինչպես բնությամբ ստրկամիտ մարդիկ իրենցից ավելի ազնվազարմ մարդկանց սովորական արտաքինի մեջ խելք են անում առաջին հայացքից զարմ գտնել։ Նադեժդա Լվովնայի ներքին կյանքը ինձ հայտնի էր միայն բամբասանքներից։ Գավառում ասում էին, թե հինգ-վեց տարի առաջ, դեռևս նախքան իր ամուսնությունը, նա բուռն սիրով սիրահարված էր Սերգեյ Իվանովիչին, որը հիմա շարաբանի մեջ իմ կողքին նստած զալիս էր։ Իշխանը սիրում էր ծերունու մոտ գնալ և, պատահում էր, որ ամբողջ օրեր էր անցկացնում նրա բիլիարդանոցում, որտեղ անխոնջ, ձեռքերը և ոտքերը ցավեցնելու աստիճան բիլիարդ էր խաղում, իսկ ծերունու մահից կես տարի առաջ նա հանկարծ դադարեց Շաբելսկիների տանը լինելուց։ Հարաբերությունների մեջ այդպիսի կտրուկ փոփոխությունը, դրական տվյալներ չունենալով, գավառական բամբասանքը բացատրում է ամեն կերպ։ Ոմանք պատմում են, որ իբր իշխանը, նկատելով տգեղ Նադենկայի զգացմունքը և ի վիճակի չլինելով փոխադարձությամբ պատասխանել, կանոնավոր մարդու իր պարտականությունն է համարել դադարեցնել այցելությունները. ուրիշները պնդում են, թե ծեր Շաբելսկին իմանալով, թե ինչից է հալ ու մաշ լինում իր աղջիկը, աղքատ իշխանին առաջարկել է ամուսնանալ նրա հետ, իսկ իշխանը իր կարճ մտքով երևակայել է, թե իրեն ուզում են իր տիտղոսով հանդերձ գնել, զայրացել է, հիմարություններ դուրս տվել և գժտվել։ Այդ ցնդաբանության մեջ ինչն է ճիշտ, ինչը՝ սուտ, դժվար է ասել, բայց որ ճշմարտության մաս կա, երևում է նրանից, որ իշխանը միշտ խուսափել է Նադեժդա Լվովնայի մասին խոսելուց։

Ինձ հայտնի է, որ հոր մահից հետո քիչ ժամանակ անց Նադեժդա Լվովնան ամուսնացել է ոմն եկվոր Կանդուրինի, իրավունքների թեկնածու, ոչ հարուստ, բայց ճարպիկ մի մարդու հետ։ Նա ամուսնացել է ոչ թե սիրելով, այլ գթաշարժված իրավունքների թեկնածուի սիրուց, որը, ինչպես ասում են, սքանչելի խաղում էր սիրահարվածի դերը։ Իմ նկարագրած ժամանակ նրա ամուսինը՝ Կանդուրինը ինչ-որ պատճառով ապրում էր Կահիրեում և այնտեղից իր բարեկամ գավառական առաջնորդին «Ճանապարհորդական նոթեր» էր գրում, իսկ նրա կինը, ձրիակեր-պնակալեզուհիներով շրջապատված, տոչորվում էր ցած թողած վարագույրների հետևում և իր տաղտկալի օրերը կարճում մանր մարդասիրությամբ։

Դաստակերտի ճանապարհին իշխանը զրույցով տարվեց.

— Արդեն երեք օր է ես իմ տանը չեմ եղել,— ասաց նա կիսաշշուկով, խեթ նայելով կառապանին։— Թվում է, որ արդեն մեծ մարդ եմ, ոչ կնիկ եմ և ոչ էլ նախապաշարմունքներ ունեմ, բայց տանել չեմ կարող դատական պրիստավներին։ Երբ իմ տանը դատական պրիստավի եմ տեսնում, գունատվում եմ, դո-

զում, և նույնիսկ սրունքներումս ջղաձգություն է առաջանում։ Գիտե՞ք, Ռոգոժինը բողոքարկել է իմ մուրհակը։

Իշխանը չէր սիրում գանգատվել հոռի հանգամանքներից. որտեղ խոսքը վերաբերում է աղքատությանը, այնտեղ նա ծածկամիտ էր, ծայրահեղորեն ինքնասեր և բծախնդիր, ուստի նրա այդ հայտարարությունը ինձ զարմացրեց։ Նա երկար նայում էր արևից տաքացող դեղին բացատին, աչքերով ուղեկցում լաղուր երկնակամարում լողացող կռունկների երկար շարանը, հետո դեմքը շրջեց իմ կողմը.

— Իսկ մինչև սեպտեմբերի վեցը պետք է փող պատրաստել բանկ մուծելու... տոկոսները կալվածի համար,— ասաց նա բարձրաձայն, արդեն չամաչելով կառապանի ներկայությունից։— Իսկ որտեղի՞ց վերցնեմ։ Ընդհանրապես, պարոնս, ծանր է դրությունս։ Ուխ, ինչ ծա՜նր է։

Իշխանը զննեց հրացանի շնիկները, չգիտես ինչու փչեց դրանց վրա և աչքերով սկսեց որոնել տեսադաշտից կորած կռունկներին։

— Սերգեյ Իվանովիչ,— հարցրի ես բոպեական լռությունից հետո,— եթե, պատկերացրեք, ձեր Շատիլովկան վաճառեն, ի՞նչ կանեք։

— Ե՞ս։ Չգիտեմ։ Շատիլովկան կկորչի, դա ինչպես երկու անգամ երկու, բայց չեմ կարող պատկերացնել այդպիսի դժբախտությունը։ Ես ինձ չեմ կարող պատկերացնել առանց մի կտոր պատրաստի հացի։ Ի՞նչ եմ անելու։ Գրեթե ոչ մի կրթություն չունեմ, աշխատել դեռևս չեմ փորձել, պաշտոնավարել՝ սկսելը ուշ է... Եվ որտե՞ղ պաշտոնավարեմ։ Որտե՞ղ կարող էի պետք գալ։ Ենթադրենք, մի մեծ բան չէ ծառայելը, թեկուզ մեզ մոտ, օրինակ զեմստվոյում, բայց ես... սատանան գիտե, ինչ-որ թուլամորթություն ունեմ, մի գրողի համարձակություն չունեմ։ Ծառայության մտնեմ, և ինձ կթվա, թե սազական տեղ չեմ նստել։ Ես իդեալիստ չեմ, ուտոպիստ չեմ, ինչ-որ առանձնահատուկ պրինցիպիստ չեմ, այլ, ըստ երևույթին, ուղղակի հիմար եմ։ Հոգեհիվանդ ու վախկոտ։ Ընդհանրապես նման չեմ մարդկանց։ Բոլոր մարդիկ մարդու պես են, մենակ ես եմ, որ ինձնից ինչ-որ մի այսպիսի... բան եմ ներկայացնում... Ջորեքշաբթի օրը հանդիպեցի Նարյագինին։ Դուք նրան ճանաչում եք, հարբած փնթի... պարտքերը չի վճարում, տխմարավուն է (իշխանը կնճռոտվեց և գլուխը թափահարեց)... սարսափելի անձնավորություն է։ Օրորվում է և ինձ ասում. «Ես հաշտարար եմ քվեարկվում»։ Նրան, իհարկե, չեն ընտրի, բայց ախր նա հավատում է, որ ինքը պիտանի է հաշտարար լինելու, այդ գործը իր ուժերին համապատասխան է համարում։ Եվ համարձակություն կա, և ինքնավստահություն։ Մեր դատական քննիչի մոտ նույնպես անցնում եմ։ Մարդը երկու հարյուր հիսուն է ստանում ամսական, բայց համարյա ոչ մի գործ, արածը հենց այն է, որ ամբողջ օրերով միայն տակի սպիտակեղենով անկյունից անկյուն է քայլում, բայց հարցրեք նրան, ինքը համոզված է, որ գործ է անում, ազնվորեն կատարում է պարտքը։ Ես այդպես չէի կարողանում։ Ես կամաչեի գանձապահի երեսին նայելուց։

Այդ ժամանակ մի շեկ ձի նստած մեր մոտով սլերնաշուք արշավանքով անցավ Գրոնտովսկին։ Նրա ձախ թևի արմունկին լիկլիկում էր զամբյուղը, որի մեջ թռչկոտում էին սպիտակ սունկերը։ Մեզ հավասարվելով, նա ատամները ցցեց և թաթիկը թափահարեց, ինչպես վաղեմի ծանոթների։

— Անտա՛շ,— ատամների արանքից ասաց իշխանը, նայելով նրա հետևից։— Զարմանալի է, երբեմն որքան տհաճ է լինում գոհունակ ֆիզիոնոմիաներ տեսնելը։ Հիմար, անասնական զգացմունք է և, ըստ երևույթին, քաղցից... Ինչի՞ վրա կանգ առա։ Ախ, հա ծառայության մասին... Ռոճիկ ստանալուց ես կամաչեի, իսկ էապես ասած, դա հիմարություն է։ Եթե նայեք լայնահայաց, լրջորեն, ախր հիմա էլ ես իմ սեփական հացը չեմ ուտում։ Այնպես չէ՞։ Բայց այստեղ չգիտես ինչու՝ ամոթ չէ... Այստեղ սովորություն է, ինչ է... կամ իրական վիճակիդ մեջ խորամուխ լինելու անկարողություն... Իսկ այդ վիճակդ, հավանաբար, սարսափելի է։

Ես նայեցի՝ չի՞ ձևանում արդյոք իշխանը։ Բայց նրա դեմքը հեզ էր, և աչքերը թախիծով հետևում էին հեռացող շեկ ձիու շարժումներին, կարծես նրա հետ մեկտեղ փախչում էր իր երջանկությունը։

Ըստ երևույթին, նա գտնվում էր ջղագրգռման և տխրության այն վիճակում, երբ կանայք մեղմիկ ու առանց պատճառի լաց են լինում, իսկ տղամարդկանց մոտ պահանջ է առաջանում գանգատվելու կյանքից, իրենից, աստծուց...

Դաստակերտի դարբասի մոտ, երբ ես իջնում էի շարաբանից, իշխանն ասում էր.

— Մի անգամ մի մարդ, ցանկանալով ինձ խոցել, ասաց,

թե ես խաբեբայի տեսք ունեմ։ Ես ինքս էլ նկատել եմ, որ խաբեբաները ամենից հաճախ թուխ են լինում։ Ինձ թվում է, լսեցնք, որ եթե ես իսկապես խաբեբա ծնված լինեի, մինչև մահս կանոնավոր մարդ կմնայի, որովհետև բավականաչափ համարձակություն չունեի չարիք գործելու։ Ձեզ անկեղծ կասեմ, ես կյանքում մի առիթ ունեցա հարստանալու։ Եթե կյանքումս մի անգամ խաբեի, խաբեի ինքս ինձ և մի կնոջ... ու մի մարդու, որը ես գիտեմ, ինձ կներեր իմ սուտը, ես գրպանս կդնեի կանխիկ մի միլիոն։ Բայց չկարողացա։ Սիրտ չարի։

Դարպասից դեպի տուն պետք էր գնալ պուրակի միջով, երկու կողմից խիտ, հարդարած եղրևանի տնկած, երկար, քանոնի պես ուղիղ ճանապարհով։ Տունն իրենից ներկայացնում էր ծանրանիստ, անճաշակ, ճակատի կողմից թատրոնի նմանվող մի բան։ Նա անճոռնի կերպով հառնում էր կանաչ զանգվածի միջից և աչք էր ծակում, ինչպես թավիշ կանաչի վրա նետած մի մեծ կոպիճ։ Շքամուտքի մոտ ինձ դիմավորեց կանաչ ֆրակով և արծաթե մեծ ակնոցով մի թանձրամարմին ծեր սպասավոր։ Նրանց զեկուցելու, միայն զզվանքով զննելով իմ փոշոտված կերպարանքը, նա ինձ առաջնորդեց սենյակները։ Երբ փափուկ սանդուղքով վերև էի բարձրանում, չգիտես ինչու, կաուչուկի սաստիկ հոտ էր բուրում, իսկ վերևում՝ նախասենյակում ինձ պարուրեց միայն արխիվներին, աղայական ապրանքներին և հնամենի վաճառականական տներին հատուկ մի մթնոլորտ. թվում էր, թե ինչ-որ անցած-գնացածի հոտ է բուրում, որը մի ժամանակ ապրել ու մեռել է, սենյակներում թողնելով իր հոգին։ Նախասենյակից մինչև հյուրասենյակ ես անցա երեք-չորս սենյակով։ Միտս են մնացել վառ-դեղին փայլուն հատակները, շղարշով պարուրված ջահերը, զոլավոր նեղ գորգերը, որոնք ձգված էին ոչ թե դռնից մինչև մյուս դուռը, ինչպես սովորաբար, այլ պատերի երկարությամբ, այնպես որ չհամարձակվելով իմ ճահճային կոպիտ կոշիկներով կպչել փայլուն հատակին, յուրաքանչյուր սենյակում հարկադրված էի քառանկյունի գծել։ Հյուրասենյակում, որտեղ ինձ թողեց սպասավորը, դրված էր աղջամուղջով պարուրված պապենական կահկարասի, որոնց վրա սպիտակ ծածկոց էր քաշած։ Այդ կահկարասին նայում էր խրոսահայաց, ծերունավարի և, կարծես հարգելով նրա անդորրը, չէր լսվում ոչ մի հնչյուն։

Նույնիսկ ժամացույցը լռել էր. Իշխանադուստր Տարականովան ասես քնել էր ոսկե շրջանակում, իսկ ջուրը և առնետները քարացել էին կախարդանքի կամքով։ Ցերեկվա լույսը, վախենալով խախտել ընդհանուր անդորրը, հազիվ էր թափանցում ցած թողած վարագույրների միջով և դժգույն, քնեած շերտերով ընկնում փափուկ գորգերի վրա։

Անցավ երեք րոպե, և անաղմուկ հյուրասենյակ մտավ մեծամարմին, սևազգեստ և թուշը կապած մի պառավ։ Նա գլուխ տվեց ինձ և վարագույրները բարձրացրեց։ Իսկույն պայծառ լույսից բռնկվելով, պատկերի վրա կենդանացան առնետներն ու ջուրը, Տարականովան արթնացավ, մռայլ ծերուկ-աթոռները աչքերը կկոցեցին։

— Տիրուհին այս րոպեիս...— հոգոց հանեց պառավը և նույնպես աչքերը կկոցեց։

Եվս մի քանի րոպեի սպասում, և ես տեսա Նադեժդա Լվովնային։ Ինչը, որ ամենից առաջ աչքիս խփեց, այն էր, որ նա իրոք տգեղ էր, կարճահասակ, նիհար, փոքր-ինչ կորաքամակ։ Նրա մազերը խիտ, շագանակագույն, հոյակապ էին, մաքուր և ինտելիգենտ դեմքը երիտասարդությամբ էր շնչում, աչքերը նայում էին խելացի ու պայծառ, բայց դեմքի ամբողջ հմայքը կորչում էր շնորհիվ մեծ, հաստ շրթունքների և դեմքի չափազանց սուր անկյան։

Ես իմ անունը տվի և հայտնեցի գալստյանս նպատակը։

— Իսկապես, չգիտեմ, թե ինչ անեմ,— ասաց նա մտածմունքի մեջ ընկած, աչքերը ցած թողնելով ու ժպտալով։— Չէի ուզենա մերժել և միևնույն ժամանակ...

— Բարի եղեք,— խնդրեցի ես։

Նադեժդա Լվովնան ինձ նայեց և ծիծաղեց։ Ես էլ ծիծաղեցի։ Հավանաբար նրան զվարճացնում էր այն, ինչով հրճվում էի Գրոնտովսկին, այսինքն թույլ տալու և արգելելու իրավունքը. իսկ ինձ հանկարծ իմ այցելությունը սկսեց թվալ արտասովոր և տարօրինակ։

— Չէի ուզենա խախտել վաղուց հաստատված կարգը,— ասաց Կանդուրինան։— Արդեն վեց տարի է, ինչ մեր հողի վրա արգելված է որսը։ Ո՛չ,— վճռաբար թափահարեց նա գլուխը։— Ներեցեք, ես պետք է ձեզ մերժեմ։ Եթե ձեզ թույլ տամ, ստիպված կլինեմ ուրիշներին էլ թույլ տալ։ Ես չեմ սիրում անարդարությունը։ Կամ բոլորին, կամ ոչ ոքի։

— Ափսոս,— հառաչեցի ես։— Ցավալի է առավել ևս, որ

մենք տասնհինգ վերստ ենք կտրել։ Ես այստեղ մենակ չեմ,— ավելացրի ես։— Ինձ հետ է իշխան Սերգեյ Իվանիչը։

Իշխանի անունը ես արտասանեցի առանց որևէ հետին մտքի, չդրդված ոչ մի առանձին նկատառումից և նպատակից, այլ դուրս տվի, առանց դատելու, պարզամտորեն։ Մանոթ անունը լսելով, Կանդուրինան ցնցվեց և երկար հայացք գցեց վրաս։ Ես նկատեցի, թե ինչպես դժգունեց նրա քիթը։

— Այդ միևնույն է,— ասաց նա աչքերը ցած թողնելով։

Նրա հետ խոսելիս ես կանգնած էի դեպի պուրակը նայող լուսամուտի մոտ։ Ես տեսնում էի ամբողջ պուրակը ծառուղիներով, լճակներով և ճանապարհով հանդերձ, որով հենց նոր եկել էի։ Ճանապարհի ծայրին, դարպասի հետև, սևին էր տալիս մեր շարաբանի հետնամասը։ Դարպասի մոտ, մեջքը տան կողմն արած և ոտքերը չռած, կանգնել էր իշխանը և զրուցում էր լողլող Գրոնտովսկու հետ։

Կանդուրինան շարունակ գտնվում էր մյուս լուսամուտի մոտ։ Նա երբեմնակի նայում էր պուրակի կողմը, իսկ երբ ես արտասանեցի իշխանի անունը, նա արդեն լուսամուտից չէր շրջվում։

— Ներեցեք ինձ,— ասաց նա աչքերը կկոցելով ճանապարհի և դարբասի վրա,— բայց անարդարացի կլիներ որսը թույլ տալ միայն ձեզ... Եվ բացի այդ, ի՞նչ բավականություն թռչուններին սպանելուց։ Ինչի՞ համար։ Մի՞թե նրանք ձեզ խանգարում են։

Չորս պատի մեջ պարփակված, իր սենյակային աղջամուղջով և փտող կահկարասու ծանր հոտով հագեցած միայնակ կյանքը տրամադրում էր սենտիմենտալության։ Կանդուրինայի արտահայտած միտքը հարգելի էր, բայց ես չզսպեցի ինձ, որպեսզի չասեի.

— Եթե այդպես դատելու լինենք, պետք է ոտաբոբիկ մանգանք։ Կոշիկները կարում են սպանած կենդանիների կաշուց։

— Պետք է տարբերել անհրաժեշտությունը քմահաճույքից,— խուլ պատասխանեց Կանդուրինան։

Նա արդեն ճանաչել էր իշխանին և աչքը չէր կտրում նրա կերպարանքից։ Դժվար է նկարագրել այն հիացմունքն ու տառապանքը, որով լուսավորվել էր նրա տգեղ դեմքը։ Նրա աչքերը ժպտում և շողում էին, շրթունքները դողդողում և ծիծաղում էին, իսկ դեմքը ձգվում էր ապակիներին մոտիկ։ Երկու ձեռքով ծաղկամանից բռնած, մի ոտքը մի քիչ բարձրացրած և շունչը պա-

հած, նա հիշեցնում էր շան, որը պատրաստի կեցվածքով և բուռն անհամբերությամբ սպասում է «բռնի՛ր» հրամանին։

Ես նայեցի նրան, իշխանին, որը կյանքում չէր կարողացել մի անգամ ստել, և զայրացա, դառնացա ճշմարտության և ստի վրա, որոնք այնպիսի տարերային դեր են խաղում մարդկանց անձնական երջանկության մեջ։

Իշխանը հանկարծ ցնցվեց, նշան բռնեց ու կրակեց։ Նրա վերև թռչող բազեն թևերը թափահարեց և սլաքի պես նետվեց հեռու մի կողմ։

— Բարձր վերցրեց,— ասացի ես։— Այդպես, ուրեմն, Նադեժդա Լվովնա,— հոգոց հանեցի ես լուսամուտից հեռանալով,— դուք թույլ չեք տալիս...

Կանդուրինան լուռ էր։

— Պատիվ ունեմ հրաժեշտ տալու,— ասացի ես,— և խընդրում եմ ներեք անհանգստության համար...

Կանդուրինան ուզում էր երեսը շրջել իմ կողմը և արդեն քառորդ շրջան էր կատարել, բայց իսկույն դեմքը թաքցրեց վարագույրի հետև, կարծես աչքերին արցունք զգալով, որոնք ուզում էր թաքցնել...

— Գնաք բարով... Ներեցեք...— կամացուկ ասաց նա։

Ես գլուխ տվի նրա մեջքին և, արդեն հաշվի չառնելով գորգերը, քայլեցի վառ դեղին հատակի վրայով։ Ինձ համար հաճելի էր հեռանալ ոսկեզօծած տաղտուկի և վշտի այդ փոքրիկ թագավորությունից, և ես շտապում էի, ասես ցանկանալով ինձ թափ տալ ծանր ֆանտաստիկ քնից՝ նրա աղջամուղջով, Տարականովայով, ջահերով հանդերձ...

Ելքի մոտ իմ հետևից հասավ աղախինը և մի տոմսակ հանձնեց ինձ։ «Սույն ներկայացնողներին որսը թույլատրվում է։ Ն. Կ.»,— կարդացի ես։

1886

ՁԱՀԱՆԱԿԸ

Նատալյա Միխայլովնան՝ մի երիտասարդ տիկին, առավոտյան Ցալթայից վերադառնալով, ճաշում էր և, անդադար լեզվին տալով, պատմում էր ամուսնուն Ղրիմի հրաշալիքների մասին։

Ամուսինը, ուրախացած, գորովանքով նայում էր նրա խանդավառ դեմքին, լսում էր ու երբեմն հարցեր տալիս։

— Բայց, ասում են, կյանքն այնտեղ չափից դուրս թա՞նկ է,— հարցրեց նա իմիջիայլոց։

— Ինչպե՞ս ասեմ։ Իմ կարծիքով չափազանցնում են։ Սատանան այնքան սարսափելի չէ, ինչպես պատկերացնում են։ Ես, օրինակ, Յուլյա Պետրովնայի հետ ունեի շատ հարմար ու կարգին մի համար՝ օրեկան քսան ռուբլով։ Ամեն ինչ, սիրելիս, կախված է ապրելու ձևն իմանալուց։ Իհարկե, եթե ուզենաս լեռները բարձրանալ... օրինակ, Այ-Պետրի... պիտի ձի վարձես, ուղեկցող բռնես, դե՛, իհարկե, թանկ կլինի։ Սոսկալի՛ թանկ։ Բայց, Վասեչկա, ի՞նչ լեռներ կան Ղրիմում։ Պատկերացրու, բա՞րձր-բարձր լեռներ, եկեղեցուց հազար անգամ բարձր... Վերևում մշուշ, մշուշ ու մշուշ... Ներքևում ահագին քարեր, քարեր ու քարեր... Եվ սոճիներ... Ա՜խ, միտս էլ չի գալիս։

— Ի դեպ... առանց քեզ էլ ես ինչ-որ մի հանդեսում կարդացել եմ այնտեղի ուղեկցող թաթարների մասին... Ինչպիսի՜ նողկանք։ Դրանք իսկապես ինչ-որ յուրահատո՞ւկ մարդիկ են։

Նատալյա Միխայլովնան երեսը քամահրանքով ծամածռեց և գլուխը թափահարեց։

— Սովորակա՛ն թաթարներ, ո՛չ մի յուրահատուկ։— Պատասխանեց նա...— Ասենք, ես նրանց հեռվից եմ տեսել, աչքի պոչով... Ինձ ցույց տվեցին, բայց ես վրաները չնայեցի էլ։ Ես միշտ էլ, անուշիկս զգուշացել եմ այդ բոլոր չերքեզներից, հույներից... մավրերից...

— Ասում են, սարսափելի դոնժուաններ են...

— Կարող է պատահել։ Լինում են և զազրելի կանայք, որոնք...

Նատալյա Միխայլովնան հանկարծ տեղից վեր թռավ, ասես ինչ-որ սոսկալի բան մտաբերելով, մի կես րոպե նայեց ամուսնուն վախեցած աչքերով և ասաց ամեն մի բառը ձգելով.

— Վասեչկա, ես քեզ կասեմ ինչ ա՜ն-բա՜-րո՜-յակա՜ն կանայք կան։ Ա՜խ, ինչպիսի՜ անբարոյական։ Ոչ թե այնպես, սովորական կամ միջին խավի, այլ արիստոկրատ կանայք, այդ ուռած-փքված բոնտոնուհիները[1]։ Պարզապես սոսկալի էր, աչքերիս չէի հավատում։ Կմեռնեմ ու չեմ մոռանա։ Լավ, կարելի՞ է

[1] Bon ton—*լավ տոն բառից, (ֆրանս.)։*

այն աստիճան իրեն կորցնել, որ... ա՜խ, Վասեչկա, խոսելս էլ չի գալիս։ Վերցնենք թեկուզ ինձ հետ եկած Յուլյա Պետրովնային... Այնքան լավ ամուսին, երկու երեխա... Ընտիր խավի պատկանել, սուրբ ձևանալ և հանկարծ, կարո՞ղ ես երևակայել... Միայն թե, անուշիկս, իհարկե, entre nous[1]... Տալի՞ս ես աղնիվ խոսք, որ ոչ ոքի չես ասի։

— Բան դատար ասելու։ Պարզ է, որ չեմ ասի։

— Աղնիվ խո՞սք։ Տես հա՜։ Ես քեզ հավատում եմ...

Տիկինը պատառաքաղը դրեց մի կողմ, դեմքին խորհրդավոր արտահայտություն տվեց և շշնջաց.

— Պատկերացրու այսպիսի մի բան... Այդ Յուլյա Պետրովնա բարձրանում էր լեռները... Հիանալի՛ եղանակ էր։ Առջևից ինքն է գնում իր ուղեկցող թաթարի հետ, ետևից՝ ես։ Հեռացանք այդպես երեք-չորս վերստ, և հանկարծ, հասկանո՞ւմ ես, Վասեչկա, Յուլյան մի ճիչ է արձակում և բռնում կուրծքը։ Նրա թաթարը բռնեց մեջքից, թե չէ վայր էր ընկնելու... Ես և իմ ուղեկցողը մոտենում ենք... Ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց։ «Օ՜խ, ճչում է, մեռնում եմ։ Վատ եղա։ Այլևս գալ չեմ կարող»։ Դու իմ վախը պատկերացրու։ Դե ետ գնանք, ուրեմն, ասում եմ։ «Չէ, ասում է, Natalie, ետ էլ չեմ կարող։ Մի քայլ անեմ թե չէ, ցավից կմեռնեմ։ Կծկումներ ունեմ»։ Եվ աստծու անունը տալով աղաչում, պաղատում է ինձ ու իմ Սուլեյմանին, որ մենք ետ դառնանք քաղաք և բերենք բեստուժևյան կաթիլները, որ օգնում են իրեն։

— Սպասիր... Ես քեզ լավ չեմ հասկանում...— փնթփնթաց ամուսինը ճակատը քորելով։— Քիչ առաջ ասում էիր, թե այդ թաթարներին հեռվից ես տեսել, իսկ հիմա պատմում ես ինչ-որ Սուլեյմանի մասին։

— Դե դու նորից կպչում ես բառից։— Ծամածռվեց տիկինը, բնավ, չշփոթվելով։— Կասկածամտություն տանել չեմ կարող։ Այդ մի բանը տանել չեմ կարող։ Հիմա՛ր, հիմա՛ր բան է։

— Ես բառից չեմ կպչում, բայց... ինչո՞ւ ճիշտը չասել։ Զբոսնել եք թաթարների հետ, լավ, այդպես է եղել, աստված քեզ հետ, բայց ինչո՞ւ ես պոչ խաղացնում։

— Հը՜մ... այ քեզ տարօրինակ մարդ։— Վրդովվեց տիկինը։— Խանդում է Սուլեյմանին։ Պատկերացնում եմ, թե դու ինչ-

[1] *Մեր մեջ... (ֆրանս.)։*

պես պիտի լեռները բարձրանային առանց ուղեկցողի։ Պատկերացնում եմ։ Թե որ այնտեղի կյանքը չգիտես, չե՛ս հասկանում, ավելի լավ է լռես։ Լոիր ու մի խոսիր։ Առանց ուղեկցողի մի քայլ էլ չի կարելի անել։

— Դե, իհարկե։

— Եվ խնդրում եմ, առանց այդ հիմար ժպիտների։ Ես քեզ համար ինչ-որ Յուլյա չեմ... Ես նրան չեմ էլ արդարացնում, բայց ես... ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ։ Ես ինձ սրբի տեղ չեմ դնում, բայց դեռ այնքան չեմ կորցրել ինձ։ Ինձ հետ Սուլեյմանն իր սահմանից դուրս չէր գալիս։ Ո՛չ մի դեպքում։ Մամեդկուլը, պատահում էր, ամբողջ ժամանակ Յուլյայի մոտից դուրս չէր գալիս, իսկ ես, հենց որ ժամը տասնմեկը խփում էր, իսկույն ևեթ. «Սուլեյմա՛ն, մա՛րշ։ Գնացե՛ք»։ Եվ իմ հիմար թաթարիկը գնում էր։ Ես նրան, անուշիկս, բռանս մեջ էի պահում... Հենց որ համը հանում էր փողի կամ ուրիշ բանի պատճառով, ես իսկույն. «Ի՞նչ։ Ինչպե՞ս։ Ինչպե՞ս թե»։ Եվ հոգին դառնում էր կորեկի հատ... Հա՛-հա՛-հա՛... Աչքերը, հասկանում ես, Վասեչկա, սև, սևից էլ սև, ոնց որ ածուխ, դնչիկը թաթարական, այնքան հիմար, ծիծաղելի դընչիկ... Ես դրան այսպես, բռա՛նս մեջ էի պահում։ Ա՛յ, այսպես։

— Պատկերացնում եմ...— մոթմոթաց ամուսինը, հացից շինած գնդիկները գլորելով։

— Անմտությո՛ւն է, Վասեչկա։ Ես հո գիտեմ ինչե՛ր են անցնում մտքովդ։ Գիտեմ, ինչ ես մտածում... Բայց, հավատացնում եմ, նա նույնիսկ զբոսանքի ժամանակ սահմանը չէր անցնում։ Օրինակ, լեռները կամ Ուլան-Սու ջրվեժը գնալիս ես նրան միշտ ասում էի. «Սուլեյմա՛ն, ե՛տ անցիր։ Դե՛»։ Եվ միշտ ետևից էր գալիս, խեղճը... Նույնիսկ այն ժամանակ, երբ... Նույնիսկ ամենավերջին պահերին ես նրան ասում էի. «Եվ էլի դու չպետք է մոռանաս, որ դու թաթա՛ր ես միայն, իսկ ես պետական խորհրդականի կի՛ն եմ»։ Հա՛-հա՛-հա՛...

Տիկինը քրքջաց, հետո փութկոտությամբ ետ նայեց և, երկյուղած դեմք սարքելով, շշնջաց.

— Բայց Յուլյան։ Ա՛խ, այդ Յուլյան։ Ես հասկանում եմ, Վասեչկա, ինչո՞ւ պիտի կատակ չանել, ինչո՞ւ հանգիստ չառնել աշխարհիկ կյանքի դատարկությունից։ Այդ ամենը կարելի է... զվարճացի՛ր, շնո՛ր հարա, քեզ ոչ ոք չի դատապարտի, բայց այդ ամենին նայել լրջությա՛մբ, տեսարանն ե՞ր սարքել... Ո՛չ, ինչ ուզում ես ասա, ես դա չեմ հասկանում։ Երևակայիր, նա

խանդում էր։ Դե, հիմարություն չի՞, դու ասա։ Մի անգամ Մամեդկուլն ինձ մոտ էր եկել, Յուլյայի հոգու հատորը... Ինքը տանը չէր... Դե ես էլ ինձ մոտ կանչեցի... Խոսք ու զրույց սկսվեց, խոսում ենք դեսից-դենից... Գիտե՞ս դրանք ինչքա՛ն զվարճալի մարդիկ են։ Այդպես աննկատելի անցկացրինք երեկոն... Հանկարծ սենյակ է ընկնում Յուլյան... Նետվում է ինձ վրա, Մամեդկուլի վրա... Խանդի տեսարա՛ն է սարքում... Ֆի՛։ Այդ մեկը ես չեմ հասկանում, Վասեչկա...

Վասեչկան կռնչաց, հոնքերը կիտեց և սկսեց ետ ու առաջ անել սենյակում։

— Ուրա՛խ կյանք եք վարել այնտեղ, խոսք չկա,— քրթմընջաց նա, զզվանքի ժպիտը դեմքին։

— Եղա՞վ։ Ի՞նչ հիմար բան,— նեղացավ Նատալյա Միխայլովնան։— Ես գիտեմ ինչ ես մտածում։ Քո գլխով միշտ այդպիսի զզվելի մտքեր են անցնում։ Ես այլևս քեզ ոչինչ չեմ պատմի։ Չե՛մ պատմի ու չե՛մ պատմի։

Տիկինն ուռեցրեց շրթունքները և լռեց։

1886

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՄԱՆՐՈՒՔ

Նիկոլայ Իլյիչ Բելյաևը, որ Պետերբուրգում սեփական տուն ուներ, հաճախ լինում էր ձիարշավներում, մոտ երեսուներկու տարեկան, գեր ու վարդագույն դեմքով մի երիտասարդ, մի օր երեկոյան դեմ մտավ տիկին Օլգա Իվանովնա Իրնինայի մոտ, որի հետ նա ապրում էր կամ, իր արտահայտությամբ՝ երկար ու ձանձրալի վեպ էր քարշ տալիս։ Եվ իրոք, այդ վեպի առաջին ոգեշունչ ու հետաքրքիր էջերը վաղուց էին կարդացվել։ Այժմ էջերը ձգվում էին առանց մի նոր բան, մի հետաքրքրություն ներկայացնելու։

Օլգա Իվանովնային տանը չգտնելով՝ իմ հերոսը հյուրասենյակում թիկն տվեց թախտին և սկսեց սպասել։

— Բարի երեկո, Նիկոլայ Իլյիչ,— լսեց նա մի մանկական ձայն։— Մայրիկս շուտով կգա։ Նա Սոնյայի հետ գնացել է դերձակուհու մոտ։

Նույն հյուրասենյակում բազմոցին պառկած էր Օլգա Իվա-

Նովինայի որդի Ալյոշան, որ մոտ ութ տարեկան մի տղա էր՝ բարեկազմ, բարալիկ, նկարի պես հագնված թավշյա բաճկոնակ և երկար սև գուլպաներ։ Նա պառկել էր ատլասե բարձին և, ըստ երևույթին, ընդօրինակելով վերջերս կրկեսում տեսած ակրոբատին, մերթ մի ոտքն էր վեր տնկում, մերթ մյուսը։ Երբ նրա գեղեցիկ ոտքերը հոգնում էին, գործի էր դնում ձեռքերը կամ թե թափով վեր էր թռչում ու շորեքթաթ կանգնելով ջանում էր ոտքերը վեր տնկել։ Այդ ամենը նա անում էր ամենալուրջ դեմքով, տանջալից տնքտնքալով, կարծես ինքն էլ գոհ չէր, որ աստված իրեն այդպիսի անհանգիստ մարմին է տվել։

— Ա՜, բարև, բարեկամս,— ասաց Բելյաևը։— Այդ դո՞ւ ես։ Իսկ ես քեզ չէի նկատել։ Մայրիկը ողջ-առո՞ղջ է։

Ալյոշան, որ աջ ձեռքով բռնել էր ձախ ոտքի թաթը և ամենաանհարմար դիրք ընդունել, շուռ եկավ, վեր թռավ տեղից և խոշոր, ծոպավոր լուսամփոփի հետևից նայեց Բելյաևին։

— Ինչպե՞ս ասեմ,— ասաց նա ուսերը թոթվելով։— Մայրիկս, իսկապես ասած, երբեք առողջ չի լինում։ Չէ՞ որ նա կին է, Նիկոլայ Իլյիչ, իսկ կանանց մի որևէ տեղը միշտ ցավում է։

Բելյաևը պարապությունից սկսեց Ալյոշայի դեմքը դիտել։ Առաջներում, որքան ժամանակ որ ծանոթ էր Օլգա Իվանովնայի հետ, ոչ մի անգամ ուշադրություն չէր դարձրել այդ տղայի վրա և ամենևին չէր նկատել նրա գոյությունը. ցցվել է իր առաջ մի տղա, և ինչի՞ է պետք նա, ի՞նչ դեր է կատարում, դրա մասին մտածել էլ չէր ուզում։

Երեկոյան աղջամուղջի մեջ Ալյոշայի դեմքը իր գունատ ճակատով ու սև, անթարթ աչքերով անսպասելիորեն Բելյաևին հիշեցրեց Օլգա Իվանովնային և այնպես, ինչպես որ նա էր վեպի առաջին էջերում։ Եվ նրա սիրտն ուզեց տղային փաղաքշել։

— Հապա մի այստեղ արի, մրջնիկ,— ասաց նա։— Արի մի քեզ մոտիկից նայեմ։

Տղան բազմոցի վրայից ցած ցատկեց և վազեց Բելյաևի մոտ։

— Հը՛,— սկսեց Նիկոլայ Իլյիչը ձեռքը դնելով տղայի նիհար ուսին։— Ո՞նց է, լա՞վ են անցնում օրերը։

— Ո՜նց ասեմ ձեզ։ Առաջ շատ ավելի լավ էր։

— Ինչո՞ւ։

— Շատ պարզ։ Առաջ ես ու Սոնյան միայն երաժշտությամբ էինք զբաղվում ու մեկ էլ ընթերցանությամբ, իսկ հիմա մեզ

ֆրանսերեն ոտանավորներ էլ են տալիս։ Իսկ դուք նո՞ր եք խուզել ձեր գլուխը։

— Այո, նոր։

— Տեսնում եմ ախր։ Ձեր մորուքը ավելի կարճ է։ Թույլ տվեք ձեռք տալ ձեր մորուքին... Չի՞ ցավում։

— Ոչ, չի ցավում։

— Այդ ինչպե՞ս է, որ երբ մի մազն ես քաշում, ցավում է, իսկ երբ շատ մազեր ես քաշում, բոլորովին չի ցավում։ Հա՜-հա՜-հա՜։ Բայց, գիտե՞ք, դուք իզուր այտմորուս չեք թողնում։ Ա՜յ, այստեղ ածիլել, իսկ կողքերից... ա՜յ այստեղ ու այստեղ մազեր թողնել...

Տղան սեղմվեց Բելյաևին և սկսեց խաղալ նրա շղթայի հետ։

— Երբ ես գիմնազիա ընդունվեմ,— ասում էր նա,— մայրիկս ինձ համար ժամացույց կառնի։ Ես նրան կխնդրեմ, որ ինձ համար ճիշտ այսպիսի շղթա գնի... Ի-ինչպիսի՞ մեդալ-իո՞ն։ Հայրիկս էլ ճիշտ նույնպիսի մեդալիոն ունի, միայն թե ձերի վրա այստեղ գծիկներ են, իսկ նրանինը՝ տառեր... Նրա մեդալիոնի մեջտեղն էլ մայրիկի նկարն է։ Հայրիկի շղթան հիմա ուրիշ տեսակ է, ոչ թե օղերով, այլ՝ ժապավենով...

— Որտեղի՞ց գիտես։ Դու հայրիկիդ տեսնո՞ւմ ես որ։

— Ե՞ս։ Ը-ը՜մ... ոչ... ես...

Ալյոշան կարմրատակեց և զգալով, որ սուտը բռնվեց, խիստ շփոթված սկսեց եղունգով արագ-արագ քչփորել մեդալիոնը։ Բելյաևը սևեռուն նայեց նրա երեսին ու հարցրեց.

— Հայրիկիդ տեսնո՞ւմ ես։

— Ո-ո՜չ։

— Չէ՛, դու պարզ, անկեղծ խոսիր... Ախր դեմքիցդ երևում է, որ ճիշտ չես ասում։ Քանի որ լեզվիցդ թռցրել ես, էլ կարիք չկա շուռումուռ գալու։ Ասա՛, տեսնո՞ւմ ես։ Դե՛, բարեկամաբար։

Ալյոշան մտքի մեջ ընկավ։

— Իսկ դուք մայրիկին չե՞ք ասի,— հարցրեց նա։

— Ա՜յդ էր պակաս։

— Ազնի՞վ խոսք։

— Ազնիվ խոսք։

— Երդվեցեք։

— Ա՜խ, ի՞նչ տեսակն ես։ Ինչի՞ տեղ ես դրել դու ինձ։

Ալյոշան ետ նայեց, աչքերը չռեց ու փսփսաց.

— Միայն թե, ի սեր աստծո, մայրիկին չասեք... Ընդհան-

բարեկամ ոչ ոքի չասեք, որովհետև սա գաղտնիք է։ Աստված չանի, որ մայրիկն իմանա, թե չէ ինձ էլ, Սոնյային էլ, Պելագեյային էլ լավ կհասնի... Դե լսեցեք, ես ու Սոնյան հայրիկիս տեսնում ենք ամեն երեքշաբթի և ուրբաթ օր։ Երբ Պելագեյան ճաշից առաջ մեզ տանում է զբոսանքի, մենք մտնում ենք Ապֆելի հրուշակեղենի խանութը, իսկ այնտեղ հայրիկս է սպասում մեզ... Նա միշտ նստած է լինում մի առանձին սենյակում, որտեղ, գիտե՞ք, մարմարի սեղան կա և սագի նման մի մոխրաման, միայն թե առանց մեջքի...

— Իսկ ի՞նչ եք անում այնտեղ։

— Ոչինչ։ Նախ իրար բարևում ենք, հետո բոլորս էլ սեղան ենք նստում, և հայրիկն սկսում է մեզ հյուրասիրել սուրճով ու թխվածքներով։ Սոնյան, գիտե՞ք, մսով կարկանդակ է ուտում, իսկ ես մսովը տանել չեմ կարող։ Ես սիրում եմ կաղամբով ու ձվով։ Այնքան շա՜տ ենք ուտում, բայց հետո, ճաշի ժամանակ, որպեսզի մայրիկը չնկատի, մենք աշխատում ենք էլի որքան կարելի է շատ ուտել։

— Իսկ ինչի՞ մասին եք խոսում այնտեղ։

— Հայրիկի՞ հետ։ Ամեն բանի։ Նա մեզ համբուրում է, գրկում, զանազան ծիծաղելի բաներ է պատմում։ Գիտե՞ք, նա ասում է, որ երբ մենք մեծանանք, մեզ կտանի իր մոտ ապրելու։ Սոնյան չի ուզում, իսկ ես համաձայն եմ։ Իհարկե, առանց մայրիկի տխուր կլինի, բայց չէ՞ որ ես նրան նամակներ կգրեմ։ Զարմանալի բան, նույնիսկ տոներին կարելի է նրան այցելության գալ, ճիշտ չե՞մ ասում։ Հայրիկն էլ ասում է, որ ինձ համար ձի կգնի։ Շատ բարի մարդ է։ Չեմ իմանում, թե ինչո՞ւ մայրիկը նրան չի կանչում մեզ մոտ ապրելու և մեզ արգելում է տեսնվել նրա հետ։ Ախր նա մայրիկին շատ է սիրում։ Երբ մայրիկս հիվանդ էր, նա գլուխը բռնեց ա՜յ, այսպես... և շարունակ վազվզում էր ու վազվզում։ Միշտ մեզ խնդրում է, որ մայրիկին լսենք և հարգենք։ Լսեցեք, ճի՞շտ է, որ մենք դժբախտ ենք։

— Հը՜մ... իսկ ինչո՞ւ։

— Հայրիկն է ասում։ Դուք, ասում է, դժբախտ երեխաներ եք։ Նույնիսկ տարօրինակ է նրան լսելը։ Դուք, ասում է, դժբախտ եք, ես դժբախտ եմ, մայրիկն էլ դժբախտ է։ Աղոթեցեք, ասում է, աստծուն՝ ձեզ համար էլ, նրա համար էլ։

Ալյոշան հայացքը կանգնեցրեց թռչնի խրտվիլակի վրա և մտքի մեջ ընկավ։

— Այդ-պե՞ս...— մռնչաց Բելյաևը։— Ա՛յ թե ինչպես ուրեմն։ Հրուշակարաններում կոնգրեսներ եք սարքում։ Եվ մայրիկը չի՞ իմանում։

— Ո-ոչ... Որտեղի՞ց պիտի իմանա։ Պելագեյան հո ոչ մի պայմանով չի ասի։ Իսկ երեկ չէ առաջին օրը հայրիկս մեզ տանձ հյուրասիրեց։ Մուրաբայի պես անուշ տանձեր էին։ Ես երկուսը կերա։

— Հը՜մ... Իսկ, լսի՛ր, իմ մասին հայրիկդ ոչինչ չի՞ ասում։

— Ձեր մասի՞ն։ Ինչպես ասեմ...

Ալյոշան ուշադիր նայեց Բելյաևի երեսին և ուսերը թոթվեց։

— Առանձնապես բան չի ասում։

— Օրինակ, ի՞նչ է ասում։

— Իսկ դուք չե՞ք նեղանա։

— Բա՜ն ասացիր։ Մի՞թե նա ինձ հայհոյում է։

— Չի հայհոյում, բայց գիտե՞ք... բարկանում է ձեզ վրա։ Նա ասում է, որ ձեր պատճառով մայրիկս անբախտ է և որ դուք... խորտակել եք մայրիկիս... Ախր նա մի տեսակ տարօրինակ մարդ է։ Ես նրան հասկացնում եմ, որ դուք բարի մարդ եք, երբեք մայրիկի վրա չեք գոռում, իսկ նա միայն գլուխն է օրորում։

— Ուրեմն այդպես էլ ասում է, որ ես մայրիկին կործանե՞լ եմ։

— Այո։ Դուք մի՛ նեղացեք, Նիկոլայ Իլյիչ։

Բելյաևը վեր կացավ, մի պահ կանգնեց, ապա սկսեց հյուրասենյակում քայլել։

— Դա տարօրինակ է և... ծիծաղելի,— մրմնջաց նա, ուսերը թոթվելով և քմծիծաղ տալով։— Ինքը ոտով-գլխով մեղավոր է, և ե՞ս եմ կործանել, հա՞։ Ասացե՛ք խնդրեմ, ի՞նչ անմեղ գառնուկ... Ուրեմն, այդպես էլ քեզ ասաց, որ ես եմ կործանել քո մայրիկին։

— Այո, բայց... բայց դուք հո ասացիք, որ չեք նեղանա։

— Ես չեմ նեղանում և... և քո գործը չէ՛։ Ո՛չ, դա... դա նույնիսկ ծիծաղելի է։ Ես հավի պես ընկել եմ ճաշի մեջ, և դուրս է գալիս, որ ե՞ս եմ մեղավոր։

Զանգի ձայն լսվեց։ Տղան տեղից պոկվեց և դուրս վազեց։ Մի բոպե անց հյուրասենյակ մտավ մի կին՝ փոքրիկ աղջկա հետ. դա Օլգա Իլյանովնան էր, բարձր երգելով ու ձեռքերը թա-

փահարելով գալիս էր Ալյոշան։ Բելյաևը գլխով արեց և շարունակում էր ետ ու առաջ քայլել։

— Իհարկե, հիմա էլ ո՞ւմ պիտի մեղադրեն, եթե ոչ ինձ,— մոթմոթում էր նա ֆսսացնելով։— Նա իրավացի է։ Նա վիրավորանք կրած ամուսի՞ն է։

— Այդ ինչի՞ մասին եք խոսում,— հարցրեց Օլգա Իվանովնան։

— Ինչի մասի՞ն... Ա՛յ, լսիր, թե ինչ բաներ է քարոզում քո ամուսինը։ Բանից դուրս է գալիս, որ ես սրիկա եմ, չարագործ, ես կործանել եմ քե՛զ էլ, երեխաներին էլ։ Դուք բոլորդ դժբախտ եք, և միայն ես եմ, որ սարսափելի բախտավո՞ր եմ։ Սարսափելի, սարսափելի՜ բախտավոր։

— Չեմ հասկանում, Նիկոլայ, ի՞նչ է պատահել։

— Ա՛յ, լսեցեք այս երիտասարդ պարոնին,— ասաց Բելյաևը, մատնացույց անելով Ալյոշային։

Ալյոշան կարմրատակեց, հետո հանկարծ սփրթնեց, և նրա ամբողջ դեմքը ծռմռվեց վախից։

— Նիկոլա՜յ Իլյիչ,— բարձր շշնջաց նա։— Սո՜ւ-ուս։

Օլգա Իվանովնան զարմացած նայեց Ալյոշային, Բելյաևին, ապա նորից Ալյոշային։

— Հարցրեք մի,— շարունակեց Բելյաևը։— Քո Պելագեյան, այդ ապուշի գլուխը, հրուշակարաններ է ման ածում դրանց և տեսակցություններ սարքում սիրելի հայրիկի հետ։ Բայց բանն այդ չէ, բանն այն է, որ հայրիկը տառապյա՜լ է, իսկ ես՝ չարագործ, ես մի սրիկա եմ, որ կործանել եմ ձեր երկուսի կյանքը...

— Նիկոլայ Իլյի՜չ,— հառաչեց Ալյոշան։— Ախր դուք ազնիվ խոսք տվիք։

— Է՜, ձեռք քաշիր,— թևը թափ տվեց Բելյաևը։— Այստեղ ամեն մի ազնիվ խոսքից ավելի կարևոր բան կա։ Ինձ վրդովում է կեղծավորությունը, սուտը։

— Չեմ հասկանում,— խոսեց Օլգա Իվանովնան, և նրա աչքերում արցունքներ շողացին։— Լսի՜ր, Լյոլկա,— դարձավ նա որդուն,— դու տեսնվո՞ւմ ես հորդ հետ։

Ալյոշան նրան չէր լսում և սոսկումով նայում էր Բելյաևին։

— Չի՜ կարող լինել,— ասաց մայրը։— Գնամ մի Պելագեյային հարցնեմ։

Օլգա Իվանովնան դուրս գնաց։

— Լսեցեք, ախր դուք ազնիվ խո՞սք տվիք,— խոսեց Ալյոշան ամբողջ մարմնով դողալով։

Բելյաևը ձեռքը թափ տվեց նրա վրա և շարունակեց քայլել։ Նա խորասուզված էր իր վիրավորանքի մեջ և արդեն առաջվա պես չէր նկատում տղայի ներկայությունը։ Նա՝ այդ մեծ ու լուրջ մարդը, ժամանակ չուներ տղաներով զբաղվելու։ Իսկ Ալյոշան նստեց մի անկյունում և սոսկումով պատմում էր Սոնյային, թե ինչպես խաբեցին իրեն։ Նա դողում էր, կարկամում, լաց լինում։ Այդ առաջին անգամ էր իր կյանքում, որ նա այդպես դեմառդեմ հանդիպում էր ստին։ Առաջ նա չգիտեր, որ այս աշխարհում, բացի անուշ տանձերից, թխվածքներից ու թանկարժեք ժամացույցներից, կան էլի շատ ուրիշ բաներ, որոնք մանկական լեզվում անուն չունեն։

1886

ԱՆՈՒՐՋՆԵՐ

Գյուղական ոստիկանության երկու վերահսկիչ՝ մեկը սև մորուքով, թիկնեղ, արտասովոր կարճ ոտքերով, այնպես, որ եթե հետևից նայեին, կթվար, թե նրա ոտքերն սկսվում են ավելի ցածից, քան բոլոր մարդկանց, մյուսը երկար, նիհար և ձեռնափայտի նման ուղղաձիգ, մուգ շիկավուն ցանցառ մորուքով, գավառական քաղաք են տանում իր ազգուտակը չհիշող մի թափառաշրջիկի։ Առաջինը քայլում է օրորվելով, շուրջն է նայում, ձեռքերը խփում է ազդրերին ու մռմռում, ընդհանրապես անհոգ ու թեթևամիտ տեսք ունի. մյուսը, չնայած նիհար դեմքին և նեղ ուսերին, պատկառելի, լուրջ ու դրական է երևում, իր ամբողջ կերպարանքով, տեսքով ու արտահայտությամբ նման է հնադավան տերտերներին կամ այն ռազմիկներին, որ նկարում են հնամենի պատկերներում. «աստված իմաստության համար ավելացրել է նրա ճակատը», այսինքն՝ նա ճաղատ է, որը ավելի է ուժեղացնում վերոհիշյալ նմանությունը։ Առաջինի անունը Անդրեյ Պտախա է, երկրորդինը՝ Նիկանդր Սապոժնիկով։

Այդ մարդը, որին նրանք տանում են, ամենևին չի համապատասխանում այն պատկերացմանը, որ ամեն ոք ունի թափառաշրջիկների մասին։ Մի փոքրիկ, թուլակազմ մարդ է նա՝

սակավաուծ ու հիվանդագին, մանր, անգույն ու խիստ անորոշ դիմագծերով։ Նրա հոնքերը ցանցառ են, հայացքը հլու-հնազանդ, բեղերը հազիվ են դուրս եկել, թեև թափառաշրջիկը երեսունն արդեն անց է։ Քայլում է նա անհամարձակ, կռացած և ձեռքերը թևքերի մեջ մտցրած։ Նրա ոչ գեղջկական, մահուդե, աղվամազը թափված բարակ վերարկուի օձիքը բարձրացած է մինչև գլխարկը, այնպես որ միայն կարմիր քթիկն է համարձակվում նայել լույս աշխարհին։ Նա խոսում է հաճոյացող տեսնորով, ստեպ-ստեպ հազում է։ Դժվար է, շա՜տ դժվար է տեսնել նրա մեջ անուն-ազգանունը թաքցնող թափառաշրջիկի։ Ավելի շուտ նա աղքատացած, աստծուց մոռացված մի ձախողակ քահանայի որդի է, հարբեցողության համար վռնդված գրագիր, վաճառականի տղա կամ եղբորորդի, որ իր թույլ ուժերը փորձել է դերասանական ասպարեզում և այժմ գնում է տուն՝ անառակ որդու առակի վերջին գործողությունը կատարելու համար։ Դատելով այն բութ համբերությունից, որով նա պայքարում է աշնանային անանցանելի ցեխի դեմ, թերևս մոլեռանդ վանքի մի մոնթ, որ թրև է գալիս ռուսական մենաստաններում, համառորեն փնտրում «կեանք խաղաղ ու անմեղանշական» ու չի գտնում...

Ուղևորները վաղուց են արդեն քայլում, բայց ոչ մի կերպ չեն կարող դուրս գալ մի փոքրիկ հողակտորից։ Նրանց առջևում մի հինգ սաժեն ցեխոտ, սևագորշ ճանապարհ է, նույնքան էլ հետևը, իսկ հեռուն, ուր էլ նայես, սպիտակ մշուշի անթափանց պատ է։ Գնում են նրանք, գնում, բայց գետինը միշտ նույնն է, պատը չի մոտենում, և հողակտորը մնում է հողակտոր։ Երևում-անհետանում է մի սպիտակ, տձև խիճ, փոքրիկ հեղեղատ կամ անցորդի ցած գցած մի բուռ խոտ, կարճատև փայլում է մի խոշոր, պղտոր ջրափոս, կամ հանկարծ առջևում անսպասելիորեն երևում է անորոշ շրջագծերով մի սուվեր, որքան մոտենում ես դրան, այնքան փոքրանում ու մուգանում է, ավելի ես մոտենում, և ուղևորների առջև ցցվում է թեքված վերստացույց սյունը՝ թվանշանը ջնջված և կամ մի ողորմելի կեչի՝ թաց, տկլոր, ինչպես ճամփեզրի մուրացկանը։ Կեչին իր գեղնած տերևների մնացորդներով ինչ-որ բան է բլբլացնում, մի տերև պոկվում է ու ծուլորեն թռչում դեպի գետին... Իսկ այնտեղ դարձյալ մշուշ է, ցեխ, ճանապարհի եզրերին գորշացած խոտ։ Խոտից կախված են աղոտ, անհրապույր արցունքներ։ Դրանք լուռ ուրախության

այն արցունքները չեն, որոնցով լալիս է հողը դիմավորելով ու ճանապարհ դնելով ամռան արևին, և որոնցով այգաբացին ջրում է նա լորերին, մարգահավերին ու բարեձև, երկարակտուց կրտցարներին։ Ուղևորների ոտքերը կպչում են ծանր ու կպչուն ցեխին։ Ամեն մի քայլ լարում է պահանջում։

Անդրեյ Պտախան մի քիչ հուզված է։ Նա զննում է թափառաշրջիկին և ճգնում հասկանալ, թե ինչպես այդ կենդանի, զգաստ մարդը չի կարող հիշել իր անունը։

— Լավ, քրիստոնյա՞ ես դու,— հարցնում է նա։

— Քրիստոնյա եմ,— հեզ պատասխանում է թափառաշրջիկը։

— Հը՜մ... ուրեմն քեզ մկրտե՞լ են։

— Բա ո՞նց։ Ես հո թուրք չեմ։ Ժամ էլ եմ գնում, ծոմ էլ եմ պահում, կաթ ու միս էլ չեմ ուտում, երբ չի կարելի։ Ամեն ինչ տեղը տեղին...

— Լավ, բա ինչպե՞ս անվանենք քեզ։

— Անվանիր ինչպես ուզում ես, ա՜յ տղա։

Պտախան թոթվում է ուսերը և խիստ տարակուսանքով ձեռքերը խփում ազդրերին։ Իսկ մյուս վերահսկիչը՝ Նիկանդր Սապոժնիկովը, պատկառելիորեն լռում է։ Նա այնքան միամիտ չէ, ինչպես Պտախան, և, ըստ երևույթին, շատ լավ է իմանում, թե ինչ պատճառներ են քրիստոնյա մարդուն մղում իր անունը թաքցրնել ուրիշներից։ Նրա արտահայտիչ դեմքը սառն է ու խիստ։ Նա քայլում է մեկուսի, չի նվաստանում մինչև ընկերների հետ դատարկ խոսակցության բռնվելը և կարծես աշխատում է ցույց տալ ամենքին, նույնիսկ մշուշին, իր լրջմտությունն ու խոհականությունը։

— Աստվա՜ծ գիտե, թե ինչպես պետք է հասկանալ քեզ,— շարունակում է հարցուփորձը Պտախան։— Գեղջուկ ասեմ՝ գեղջուկ չես, աղա ասեմ՝ աղա էլ չես, այլ ինչ-որ միջինը... Էս քանի օրը լճակում մաղ էի լվանում ու բռնեցի, ա՜յ, մատի մեծությամբ մի զեռուն՝ ծնոտներով ու պոչով։ Նախ կարծում էի, թե ձուկ է, մեկ էլ տեսնեմ, թռ՜ւ, սատկե՜ս, հա, թաթիկներ ունի։ Ոչ այն է ձուկ է, ոչ այն է՝ օձ. սատանան միայն կհասկանար, թե դա ինչ է... Ահա այդպես էլ դու... Ի՞նչ դասի մարդ ես։

— Գեղջուկ եմ ես, գյուղացիական ծագումից,— հառաչում է թափառաշրջիկը։— Իմ մայրը կալվածատանն ապրող ճորտերից էր։ Դեմքով ես գեղջուկի նման չեմ, ճիշտ է. դրա համար

էս բախտին արժանացա, բարի՛ մարդ։ Իմ մայրը մեծավորների մոտ էր ապրում, դայակ էր ու ամենայն բավականություն ստանում էր, ես էլ, դե՛, նրա միս ու արյունից եմ, նրա մոտ էի՝ կալվածատիրոջ տանը։ Քնքուշ էր պահում ինձ, երես տալիս և միտքն էն էր, որ հասարակ դասից հանի ու կարգին մարդկանց շարքը դասի։ Քնում էի մահճակալի վրա, ամեն օր իսկական ճաշ էի ուտում, շալվար ու կիսակոշիկ էի հագնում ազնվականի երեխայի պես։ Մայրս ինչ ուտում էր, ես էլ էն էի ուտում. մեծավորը հագուստի կտոր էր նվիրում նրան, իսկ նա դրանով ինձ էր հագցնում... Լա՛վ էինք ապրում։ Մանկական տարիներիս էնքան կոնֆետ ու մեղրաբլիթ եմ կերել, որ եթե այդ բոլորը ծախեն, կարող են մի լավ ձի գնել։ Մայրս ինձ գրել-կարդալ սովորեցրեց, փոքրուց աստվածավախություն ներշնչեց ու այնպես կրթեց ինձ, որ հիմա չեմ կարողանում ո՛չ մի գեղջկական, անպատշաճ խոսք ասել։ Օղի էլ, ջահել, չեմ խմում, մաքուր հագնվում եմ ու կարող եմ լավ հասարակության մեջ ինձ ոնց որ պետքն է պահել։ Թե դեռ կենդանի է, աստված առողջություն պարգևի նրան, իսկ եթե մեռել է, ապա, տե՛ր իմ, հանգչեցրու զհոգին նորա յարքայութեանդ քում, յորում արդարք հանգչին։

Թափառաշրջիկը բացում է հատուկենտ ցցված մազերով գլուխը, աչքերը հառում է վեր ու խաչ հանում երեսին։

— Հղեա նմա, տե՛ր իմ, վայր դալարավետ, վայր անդորրավետ,— ասում է նա երկարաձիգ, ավելի շուտ պառավի, քան տղամարդու ձայնով,— Սովորեցրու, տէր, նրան՝ աղախնոյդ քո Քսենիային, արդարութիւնդ քո։ Եթե սիրագորով մայրս չլիներ, ես հասարակ գեղջուկ կլինեի, առանց որևէ իմացության։ Իսկ հիմա, ջահել, ինչ ուզում ես հարցրու ինձ, ամեն բան հասկանում եմ՝ թե՛ աշխարհիկ գրություն, թե՛ աստվածային և ամեն տեսակ աղոթք ու ուսմունք քրիստոնեական։ Եվ ապրում եմ ըստ սուրբ գրոց... Մարդկանց չեմ նեղացնում, մարմինս պահում եմ մաքուր ու ողջախոհ եմ, պահքերը պահում եմ, ուտում եմ ժամանակին։ Կան մարդիկ, որոնց միակ հաճույքը օղին է ու որկրամոլությունը, իսկ ես, երբ ժամանակ է լինում, քաշվում եմ մի անկյուն ու գիրք կարդում։ Կարդում եմ ու անվերջ լաց լինում...

— Իսկ ինչո՞ւ ես լաց լինում...

— Սրտամրմուռ են գրում։ Երբեմն մի գրքույկին հինգ կոպեկ եմ տալիս, բայց չափազանց շատ լալիս եմ ու հեծեծում։

— Հայրդ մեռե՞լ է,— հարցնում է Պտախան։

— Չեմ իմանում, ջահել։ Չեմ ճանաչում իմ ծնողին, մեղքս ի՞նչ թաքցնեմ։ Ես ինքս էսպես եմ դատում, որ իմ մոր ապօրինի ծնած երեխան եմ։ Իմ մայրը իր ամբողջ կյանքը անց է կացրել մեծավորների մոտ ու չի ցանկացել հասարակ գեղջուկի հետ ամուսնանալ...

— Ու աղայի վրա է պրծել,— քմծիծաղ տվեց Պտախան։

— Չի պահել իրեն, ճիշտ է։ Բարեպաշտ էր նա ու աստվածավախ, բայց կուսությունը չպահպանեց։ Դա, իհարկե, մեղք է, մեծ մեղք, ի՞նչ խոսք ասել կուզի, բայց փոխարենը գուցե իմ մեջ ազնվականի արյուն կա։ Գուցե կոչումով եմ միայն գեղջուկ, իսկ իրականում՝ ազնվածին մեծատուն։

Այս ամենը «ազնվածին մեծատունն» ասում է ցածր, քաղցրամեղցր տենորով, նեղ ճակատը կնճռոտելով ու սառած քթից ծղրտացող հնչյուններ արձակելով։ Պտախան լսում է, զարմացած ու շեղակի նայում նրան ու չի դադարում ուսերը թոթվել։

Մի վեց վերստ անցնելուց հետո վերահսկիչներն ու թափառաշրջիկը նստում են բլրակի վրա հանգստանալու։

— Շունն ինչ շուն է, էլի իր անունը հիշում է,— մոթմոթում է Պտախան։— Իմ անունը Անդրյուշկա է, սրանը՝ Նիկանդրա. ամեն մարդ իր սուրբ անունն ունի, ու ո՛չ մի կերպ այդ անունը մոռանալ չի կարելի, ո՛չ մի կերպ։

— Ո՞ւմ ինչ պետքն է իմ անունն իմանալը,— հառաչում է թափառաշրջիկը՝ բռունցքը հենելով այտին։— Եվ ի՞նչ օգուտ ունեմ ես դրանից։ Թե ինձ թույլ տային գնալ, ուր ես եմ ուզում, կասեի. թե չէ ինչ, սրանից ավելի վատ կլինի։ Ես, քրիստոնյա՛ եղբայրներ, օրենքը գիտեմ։ Հիմի ես թափառաշրջիկ եմ, ազգուտակս չեմ հիշում, և ամենաշատը գուցե դատապարտեն Արևելյան Սիբիր աքսորի ու երեսուն կամ քառասուն խարազան քաշեն, իսկ եթե իմ իսկական անունն ու դասը հայտնեմ նրանց, նորից տաժանակիր աշխատանքի կուղարկեն։ Գիտեմ։

— Իսկ մի՞թե դու տաժանակիր աշխատանքում եղել ես։

— Եղել եմ, եղբա՛յր սիրելի։ Չորս տարի ածիլած գլխով ու ոտնաշղթայով եմ ման եկել։

— Ի՞նչ հանցանքի համար։

— Սպանության համար, բարի՛ մարդ։ Երբ դեռ երեխա էի, մոտ տասնութ տարեկան, իմ մայրը իր մեծավորի բաժակի մեջ սոդայի ու լիմոնաթթվի փոխարեն մկնդեղ էր գցել։ Մառանում բաղմաթիվ զանազան տուփեր կային, դժվար չէր շփոթել...

Թափառաշրջիկը հառաչում է, օրորում գլուխն ու ասում.

— Բարեպաշտ էր մայրս, բայց ի՞նչ իմանաս. ուրիշի հոգին անանցանելի անտառ է։ Գուցե անզգուշաբար, բայց գուցեև իր հոգում չէր կարողացել հանդուրժել այն վիրավորանքը, որ աղան նոր աղախնին էր մոտեցրել իրեն... Գուցե դիտմամբ էր գցել, ասված գիտե։ Այն ժամանակ փոքր էի ու ամեն բան չէի հասկանում... Հիմա հիշում եմ, որ աղան իսկապես մի ուրիշ հարճ վերցրեց, և մայրս սաստիկ վշտացավ։ Հետո համարյա թե երկու տարի դատեցին մեզ... Մորս դատապարտեցին տաժանակիր աշխատանքի՝ քսան տարով, իսկ ինձ, փոքրահասակության պատճառով, միայն յոթ տարի։

— Իսկ քե՞զ ինչի համար։

— Որպես մեղսակցի։ Բաժակը ես հրամցրի աղային։ Միշտ այդպես էր լինում՝ մայրս պատրաստում էր սոդան, ես էլ մատուցում էի։ Միայն թե, եղբայրնե՛ր, այս բոլորը ես ձեզ ասում եմ քրիստոնյայի անկեղծությամբ, ինչպես աստծուն. դուք ոչ ոքի մի՛ պատմեք...

— Է՛, մեզ ոչ ոք չի էլ հարցնի,— ասում է Պտախան։— Ուրեմն, դու տաժանակրությունից փախել ես, հա՞։

— Փախել եմ, եղբա՛յր սիրելի։ Տասնչորս հոգով փախանք։ Աստված կյանք տա այդ մարդկանց, իրենք փախան ու ինձ էլ տարան իրենց հետ։ Հիմա դու, ա՛յ տղա, խղճով ասա, ի՞նչ օգուտ կա իմ ազգուտակը հայտնելուց։ Իսկ ո՞րտեղի տաժանակիրն եմ ես։ Նուրբ մարդ եմ, հիվանդոտ, սիրում եմ մաքրակենցաղ ուտել ու քնել։ Երբ աղոթում եմ աստծուն, սիրում եմ լապտեր կամ մոմ վառել, նմանապես և աղմուկ չլինի շուրջս։ Երբ երկրպագություն եմ անում, ուզում եմ, որ հատակը կեղտոտած ու թքոտած չլինի։ Իսկ ես իմ մոր համար առավոտ ու իրիկուն քառասուն անգամ երկրպագություն եմ անում։

Թափառաշրջիկը հանում է գլխարկը ու խաչակնքում երեսը։

— Իսկ Արևելյան Սիբիր թող ուղարկեն,— ասում է նա,— չե՛մ վախենում։

— Մի՞թե դա լավ է։

— Բոլորովին այլ բան է։ Տաժանակրության մեջ դու ոնց որ խեցգետինը կողովում. նեղվածք, խռնում, իրար գլխի թափած, շունչ քաշելու տեղ չկա՝ իսկական դժոխք, այնպիսի դժոխք, որ երկնավոր թագուհին ցույց չտա։ Ավազակ ես դու, ու պատիվդ էլ ավազակային է, շան վիճակից վատ։ Ո՛չ ուտել կարող ես,

ո՛չ քնել, ո՛չ էլ աստծուն աղոթել։ Իսկ աքսորաբնակեցումն այլ բան է։ Այդտեղ ես նախ և առաջ ուրիշների պես կգրանցվեմ հասարակության անդամ։ Ըստ օրենքի, իշխանությունը պարտավոր է հողաբաժին տալ ինձ... բա՞։ Ասում են՝ այնտեղ հողը գին չունի, ոնց որ ձյունը. ա՞ռ, ինչքան ուզում ես։ Ա՛յ տղա, հող կտան ինձ և՛ վարելու համար, և՛ բանջարանոց գցելու, և՛ կացարան շինելու համար... Ես էլ մարդկանց պես կսկսեմ վարել, ցանել, անասուն կպահեմ ու ամեն տեսակ տնտեսություն կհիմնեմ՝ մեղու, ոչխար, շուն... սիբիրյան կատու, որպեսզի մկներն ու առնետները իմ բարիքը չուտեն... Գերանե խրճիթ կշինեմ, ախպրտի՛ք, սրբապատկերներ կգնեմ... Աստվա՛ծ տա, կպսակվեմ, երեխաներ կունենամ։

Թափառաշրջիկը մոթմոթում է ու նայում ոչ թե ունկնդիրներին, այլ ուրիշ տեղ։ Որքան էլ միամիտ են նրա անուրջները, բայց ասվում են այնպիսի անկեղծ, սրտաբուխ շեշտով, որ դժվար է չհավատալ դրանց։ Թափառաշրջիկի փոքրիկ բերանը ծռվել էր ժպիտից, իսկ ամբողջ դեմքը՝ և՛ աչքերը, և՛ քիթը անշարժացել ու շշմել էին հեռավոր երջանկության երանավետ կանխաճաշակումից։ Վերահսկիչները լսում էին ու նայում նրան լրջորեն, ոչ առանց կարեկցանքի։ Նրանց էլ հավատում էին։

— Ես Սիբիրից չեմ վախենում,— շարունակում է մոթմոթալ թափառաշրջիկը։— Սիբիրը նույնպես Ռուսաստան է, նույն աստված ու նույն թագավորը, ինչ որ այստեղ, այնտեղ նույնպես քրիստոնեի լեզվով են խոսում, ոնց որ ես ու դու։ Միայն թե այնտեղ ազատությունն ավելի շատ է, ու մարդիկ ավելի հարուստ են ապրում։ Ամեն բան լավ է այնտեղ։ Օրինակի համար, այնտեղի գետերը այստեղի գետերից շատ ավելի լավ են։ Ձկները, որսի հավքերը անթի՛վ-անհամար։ Իսկ իմ ամենամեծ հաճույքը, ախպրտի՛ք, ձուկ որսալն է։ Հաց մի՛ տուր ինձ, միայն թե թող կարթը բռնեմ նստեմ, աստվա՛ծ վկա։ Որսում եմ և՛ կարթով, և՛ գետակապով, և՛ սակառ եմ դնում, իսկ երբ սառույցը շարժվում է, ուռկանով եմ բռնում։ Այնքան ուժ չունեմ, որ ուռկանով բռնեմ, ուստի հինգ կոպեկով մի գեղջուկ եմ վարձում։ Տե՛ր աստված, չեք իմանում, թե ի՞նչ հաճույք է դա։ Շերեփաձուկ եմ բռնում կամ, ասենք, ծածան, ոնց որ հարազատ եղբորդ ես տեսնում։ Ու արի տես, որ ամեն մի ձկան համար առանձին հունար է պետք. մեկին մանր ձկնիկով ես բռնում, մյուսին՝ թրթուրի միջատով, երրորդին՝ գորտով կամ ծղրիդով։ Ախր այս

ամենը հասկանալ է պետք։ Օրինակի համար՝ շերեփաձուկը։ Շերեփաձուկը նրբաճաշակ չէ, աքերինի վրա էլ հարձակվում է, գայլաձուկը խարակաձուկ է սիրում, մի ուրիշը՝ թիթեռ։ Իսկ երբ արագասահ տեղում ես ծածան բռնում, դրանից էլ մեծ հաճույք չկա։ Կարթը բաց ես թողնում մի տասը սաժեն՝ առանց կապարաղնդիկի, թիթեռով կամ բզեզով, որպեսզի խայծը վերևում ծփա. առանց վարտիքի կանգնում ես ջրի մեջ ու զգում ես հոսանքն ի վար, իսկ ծածանը, հո՛պ, քաշեց։ Միայն թե այդ բոպեին այնպես պիտի անես, որ անիծածը խայծը չպոկի։ Հենց որ նա բերանը գցեց կարթին, ձգի՛ր, սպասելու բան չկա։ Ինչքա՜ն եմ կյանքումս ձուկ բռնել. թիվ-համրանք չկա։ Ա՜յ, երբ փախստական էինք, մյուս կալանավորները քնում էին անտառում, իսկ իմ քունը չէր տանում, աչքս գետին էր։ Իսկ այնտեղի գետերը լայն են, արագահոս, ափերը թեք, շատ թեք։ Ափերին անանցանելի անտառներ են։ Այնպիսի ծառեր կան, որ կատարին նայելիս գլուխդ պտտվում է։ Թե հաշվես այստեղի գներով, ապա ամեն մի սոճուն կարելի է տասը ռուբլի տալ։

Անուրջների, անցյալի գեղարվեստական պատկերների և երջանկության քաղցր նախազգացման անկանոն գրոհի տակ ողորմելի մարդը լռում է ու միայն շրթունքներն է շարժում, ասես ինքն իր հետ շշնջում։ Բութ ու երանավետ ժպիտը չի ջնջվում նրա դեմքից։ Վերահսկիչները լուռ են. նրանք թաղվել են մտքերի մեջ ու գլուխները կախել։ Աշնան լռության մեջ, երբ սառը, խստաշունչ մշուշը գետնից ելնում ու հոգուդ վրա է նստում, երբ նա բանտի պարսպի պես կանգնել է աչքիդ առջև և ցույց է տալիս մարդուն, որ սահմանափակ է նրա կամքը, քաղցր է մտածել լայն ու արագահոս գետերի մասին, նրանց ազատ ու թեք ափերի, անանցանելի անտառների ու անծայրածիր տափաստանների մասին։ Դանդաղ ու անխռով պատկերում է երևակայությունը, թե ինչպես վաղ առավոտյան, երբ երկնքից դեռ չի ջնջվել այգաբացի շառագույնը, անմարդաբնակ ու թեք ափով, որպես մի փոքրիկ բիծ, անցնում է մարդը։ Կայմանման դարավոր սոճիները, որ ասես հարկ-հարկ դիզված են հորձանքի այս ու այն կողմում, խստահայաց նայում են ազատ մարդուն ու մռայլ փնթփնթում։ Արմատները, վիթխարի ապառաժները փակում են նրա ուղին, բայց նա ուժեղ է մարմնով և առույգ է հոգով. ո՛չ սոճիներից է վախենում, ո՛չ քարերից, ո՛չ իր մենակությունից, ոչ էլ նրա ամեն մի քայլը կրկնող դղրդաձայն արձագանքից։

Վերահսկիչները ուրվագծում են այն ազատ կյանքի պատկերները, որ իրենք երբեք չեն վարել. արդյոք տարտամորեն վերհիշո՞ւմ են վաղուց լսածի պատկերները, թե ազատ կյանքի պատկերացումները որպես ժառանգություն մսի ու արյան հետ բաժին են հասել նրանց հեռավոր, անկաշկանդ նախնիներից. աստվա՜ծ գիտե։

Լռությունը խզում է նախ Նիկանդր Սապոժնիկովը, որ մինչև հիմա ոչ մի բառ չէր ասել։ Նախանձե՞ց նա արդյոք թափառաշրջիկի տեսլային երջանկությանը, թե գուցե իր հոգու մեջ զգաց, որ երջանկության անուրջները չեն շաղկապվում գորշ մառախուղի ու սեպագորշ ցեխի հետ, միայն թե նա խստորեն նայեց թափառաշրջիկին ու ասաց.

— Էդ, իհարկե, էդպես է, էդ բոլորը լավ է, միայն թե, ախպերացո՛ւ, դու այդ ազատ տեղերը չես հասնի։ Քո բանը չի դա։ Մի երեք հարյուր վերստ կգնաս ու հոգիդ կավանդես աստծուն։ Տեսնում ես՝ ի՞նչ նվազն ես։ Ընդամենը վեց վերստ քայլեցիր, ու մինչև հիմա շունչդ տեղը չի գալիս։

Թափառաշրջիկը դանդաղ շրջվում է դեպի Նիկանդրը, ու երանավետ ժպիտը չքանում է նրա դեմքից։ Վախեցած ու հանցավորի պես նայում է նա վերահսկիչի պատկառելի դեմքին, ըստ երևույթին, մի բան է վերհիշում ու գլուխը կախում։ Նորից լռություն է տիրում... Երեքն էլ միտք են անում։ Վերահսկիչները լարում են միտքները, որպեսզի երևակայությամբ ընդգրկեն այն, ինչ կարող է պատկերացնել թերևս միայն աստված, այսինքն՝ այն հսկայական տարածությունը, որ բաժանում է նրանց ազատ երկրամասից։ Իսկ թափառաշրջիկի գլխում դիզվում են հստակ, ավելի որոշակի ու ավելի սարսափելի պատկերներ, քան տարածությունը։ Նրա առջև կենդանի պատկերանում են դատական քաշքշուկը, աքսորման ու տաժանակրության բանտերը, կալանավորական նավերը, ճանապարհի հյուծող դաղարները, ցրտաշունչ ձմեռները, հիվանդությունները, ընկերների մահը...

Թափառաշրջիկը հանցավորի պես թարթում է հայացքը, թեքով սրբում ճակատը, որի վրա մանր կաթիլներ են գոյանում, ու փնչում, կարծես նոր է դուրս նետվել խիստ տաքացրած բաղնիքից, հետո մյուս թևքով է սրբում ճակատը ու վախեցած շուրջն է նայում։

— Ճիշտ որ չես հասնի,— համաձայնում է Պտախան։— Ո՞րտեղի քայլողն ես դու։ Մի մտիկ տուր քեզ՝ կաշի ու ոսկոր։ Կմեռնես, ախպերացո՛ւ։

— Պարզ է, կմեռնի։ Դրա ի՞նչ բանն է,— ասում է Նիկանդրը։— Դրան հիմա էլ հիվանդանոց կգցեն... Ճի՛շտ եմ ասում։

Իր ազգուտակը չհիշողը սարսափած նայում է չարագուշակ ուղեկիցների խստահայաց ու անտարբեր դեմքերին և առանց գլխարկը հանելու, աչքերը չռելով՝ արագ-արագ խաչ է հանում երեսին... Ամբողջ մարմնով դողում է նա, գլուխը ցնցում ու ամբողջ էությամբ գալարվում այն թրթուրի նման, որին տրորել են...

— Դե՛ գնանք, ժամանակն է,— ասում է Նիկանդրը վեր կենալով։— Հանգստացանք։

Մի րոպե հետո ուղևորներն արդեն քայլում են ցեխոտ ճանապարհով։ Թափառաշրջիկը ավելի է կռացել ու ձեռքերը խոր մտցրել թևքերի մեջ։ Պտախան լուռ է։

1886

ՎԱՅՆԿԱ

Վայնկա Ժուկովը՝ ինը տարեկան մի տղա, որին երեք ամիս առաջ տարել էին սովորելու կոշկակար Ալյախինի մոտ, ծննդյան տոնի գիշերը չէր պառկում քնելու։ Սպասելով, մինչև որ տերերն ու ենթավարպետները գնացին եկեղեցի, նա տիրոջ պահարանից հանեց թանաքամանը, գրչակոթը՝ ժանգոտած գրչածայրով, ու իր առաջ դնելով մի թերթ ճմռթված թուղթ, սկսեց գրել։ Նախքան առաջին տառը գրելը մի քանի անգամ վախվխելով նայեց դռանը և պատուհաններին, մթին սրբապատկերին, որի երկու կողմերում ձգվում էին դարակները, որոնց վրա կաղապարներ էին շարված,— ու անհանգիստ շունչ առավ։ Թուղթը նա դրել էր նստարանին, իսկ ինքը չոքել էր նստարանի առաջ։

«Սիրելի պապի, Կոնստանտին Մակարիչ,— գրում էր նա։— Ահա գրում եմ քեզ նամակ։ Շնորհավորում եմ ձեր ծննդյան տոնը և ցանկանում եմ քեզ ամեն բան աստծուց։ Ես ոչ հայր ունեմ, ոչ մայր, ինձ համար միայն դու ես մնացել»։

Վայնկան հայացքը դարձրեց մթին պատուհանին, որի մեջ

երևում էր նրա մոմի արտացոլումը, ու պատկերացրեց իր պապին, Կոնստանտին Մակարիչին, որը ծառայում էր պարոնայք Ժիվարևների մոտ իբրև գիշերային պահակ։ Դա մի կարճահասակ, նիհար, բայց արտասովոր կայտառ ու ժիր ծերունի էր, վաթսունհինգ տարեկան, մշտաժիծաղ դեմքով ու հարբած աչքերով։ Ցերեկը՝ նա քնում է ծառաների մոտ, խոհանոցում կամ կատակում է խոհարարուհիների հետ, իսկ գիշերը, մեծ քուրքով փաթաթված, քայլում է ագարակի շուրջ ու թխկթխկացնում իր թակիչը։ Նրա հետևից, գլուխները կախած, քայլում են պառավ Կաշտանկան և որձ շնիկը՝ Սևուկը։ Նրան այդպես են անվանել իր սև գույնի ու մարմնի համար, որը երկար է ինչպես աքիսի մարմինը։ Սևուկն արտասովոր կերպով խոնարհ է ու սիրալիր, միատեսակ գորովանքով է նայում թե՛ յուրայիններին և թե՛ օտարներին, բայց պատիվ չունի։ Նրա խոնարհության ու հեզության տակ թաքնված է ճիզվիտային նենգություն։ Ուրիշ ոչ մի շնիկ չի կարող պատեհ առիթին նրանից լավ, գաղտագողի մոտենալ ու հա՛փ բռնել մարդու ոտից, խցկվել խոհանոցի սառցարանը կամ գեղջուկից հավ գողանալ։ Քանի՞-քանի անգամ խփել-ջարդոտել են նրա հետևի ոտքերը, մի երկու անգամ կախել նրան, ամեն շաբաթ սատկեցնելու չափ թակել, բայց նա՝ միշտ էլ կենդանի է մնացել։

Հիմա, երևի, պապը կանգնած է դարպասի մոտ, կկոցած աչքերով նայում է գյուղական եկեղեցու վառ կարմիր պատուհաններին ու, թաղիքե ոտնամանները թփթփացնելով, կատակում է ծառաների հետ։ Թակիչն-էլ կախել է գոտուց։ Նա ձեռներն իրար է զարկում, ցրտից կուչ է գալիս ու, ծերունաբար քրքջալով, կսմթում է մերթ աղախնուն, մերթ խոհարարուհուն։

— Քթախոտ չքաշե՞նք,— ասում է նա, իր տուփը մոտեցնելով կանանց։

Կանայք քաշում են ու փռշտում։ Պապը հրճվում է աննկարագրելի կերպով, թուլանում է ուրախ ծիծաղից ու գոչում.

— Դուրս քաշի, սառել-կպել է քթիդ մեջ։

Շներին էլ քթախոտ է տալիս, որ քաշեն։ Կաշտանկան փռշտում է, դունչը ոլորում ու նեղացած մի կողմ քաշվում։ Իսկ Սևուկը խոնարհությունից չի փռշտում ու պոչն է խաղացնում։ Եղանակն էլ հիանալի է։ Օդը հանդարտ է, պարզ ու թարմ։ Մութ գիշեր է, բայց երևում է գյուղն իր սպիտակ կտուրներով ու ծխի քուլաներով, որ բարձրանում են ծխնելույզներից, երևում են

եղյամով արծաթված ծառերը, ձնակույտերը։ Ամբողջ երկինքը զարդարված է պայծառ առկայծող աստղերով, ու Սիր Կաթինն էլ այնպես պարզ է երևում, կարծես տոնի առթիվ լվացել ու ձյունով փայլեցրել են նրան...

Վայնկան հոգոց հանեց, թաթախեց գրչածայրը, շարունակեց գրել.

«Երեկ ես ծեծ կերա։ Տերս՝ մազերիցս բռնած՝ ինձ քարշ տվեց բակ և թակեց ծնկափոկով, թե ինչ է, իրենց երեխային օրորելիս անզգուշաբար քնել էի։ Այս շաբաթ էլ տիրուհիս հրամայեց տառեխ մաքրել, ու ես էլ սկսեցի մաքրել պոչից, իսկ նա վերցրեց ձուկը ու սկսեց նրա դունչը խոթել քիթ ու մռութս։ Ենթավարպետները ծիծաղում են վրաս, ուղարկում են գինետուն՝ օղի բերելու և հրամայում են վարունգ գողանալ վարպետի տնից, իսկ վարպետս ծեծում է ինձով ասես։ Ուտելիք իսկի չկա։ Առավոտը հաց են տալիս, ճաշին՝ շիլա, երեկոյան՝ էլի հաց, իսկ թեյն ու շչին տերերս իրենք են անուշ անում։ Հրամայում են, որ ես քնեմ հաշտում, ու երբ որ նրանց երեխան լաց է լինում, ես օրորում եմ նրան, էլ ո՞նց քնես։ Սիրելի՛ պապի, խղճա՛ ինձ, տար ինձ այստեղից տուն, գյուղ, էլ ճար չկա մնալու... Քո ոտքերն ընկած աղաչում եմ ու քեզ համար միշտ կաղոթեմ աստծուն, տա՛ր ինձ այստեղից, թե չէ կմեռնեմ...»։

Վայնկան ծոմռեց բերանը, սևացած բռունցքով սրբեց աչքերն ու հեկեկաց։

«Ես քեզ համար թութուն կփշրեմ,— շարունակեց նա,— կաղոթեմ աստծուն, իսկ թե մի վատ բան արի, ծեծիր ինձ ինչքան ուզես։ Իսկ թե մտածես, որ ես պարապ թրև կգամ, ես, ի սեր Քրիստոսի, կխնդրեմ գործակատարին, որ մաքրեմ նրա կոշիկները կամ թե Ֆեդկայի փոխարեն հոտաղ կդառնամ։ Սիրելի՛ պապի, էլ հնար չկա մնալու, քիչ է մնում մեռնեմ։ Ուզում էի ոտով փախչեմ գամ գյուղը, բայց կոշիկ չունեմ, վախենում եմ սառնամանիքից։ Որ մեծանամ, քո լավության համար կպահեմ քեզ ու ոչ ոքի մոտ ամոթով չեմ անի, իսկ թե մեռար, կաղոթեմ հոգուդ համար, ինչպես մայրիկի՝ Պելագեյայի համար։

«Մոսկվան մե՜ծ, շատ մեծ քաղաք է։ Հենց մի գլուխ պարոնների տներ են ու շատ ձիեր կան, ոչխարներ չկան ու շներն էլ կծան չեն։ Երեխաներն այստեղ մութ ու լուսին չեն վեր կենում, ոչ ոքի չեն թողնում, որ գնա եկեղեցու դասը՝ երգելու։ Մի խանութում տեսել եմ, պատուհանին դրված կեռեր են ծա-

խում հենց պարանով, ամեն տեսակ ձկներ բռնելու համար. շատ դիմացկուն են, մինչև անգամ մի այնպիսի կեռ կա, որով կարելի է մի փթանոց ձուկ բռնել։ Տեսել եմ խանութներ, որտեղ մեր պարոնների հրացանների նման ամեն տեսակ հրացաններ կան, երևի ամեն մեկը հարյուր մանեթ արժե... Իսկ մսի խանութներում է՛լ ցախաքլոր, է՛լ սարեկ, է՛լ նապաստակներ, իսկ թե դրանց որտե՛ղ են որսում-խփում, գործակատարներն այդ չեն ասում։

«Սիրելի՛ պապի, երբ որ պարոնների մոտ տոնածառ լինի, ընծաներն էլ հետը, ինձ համար ոսկեզօծ ընկույզ վերցրու և պահի կանաչ սնդուկում։ Խնդրիր օրիորդ Օլգա Իգնատևնայից, ասա, որ Վայնկայի համար է»։

Վայնկան ջղաձգորեն հոգոց հանեց ու էլի նայեց պատուհանին։ Նա հիշեց, որ պապը միշտ վերցնում էր թոնիկին ու գնում անտառ՝ պարոնների համար տոնածառ բերելու։ Ի՜նչ ուրախ ժամանակ էր, հա՜։ Տնքտնքում էր պապը, ճքճքում էր սառնամանիքը, ու, նայելով նրան, Վայնկան էլ էր տնքտնքում։ Մեկ էլ տեսար պապը, նախքան տոնածառը կտրելը, չիբուխ է քաշում, երկար հոտոտում քթախոտը, ծիծաղում է ցրտից կուչ եկող Վանյուշկայի վրա... մատղաշ տոնածառերը, եղյամով պատած, կանգնել են անշարժ ու սպասում են, թե իրենցից ո՞րը պիտի մեռնի։ Մեկ էլ տեսար որտեղից որտեղ նապաստակը նետի պես թռչում է ձնակույտերի վրայով... Պապը չի կարող չգոռալ.

— Հե՛յ, բռնեցե՛ք, բռնեցե՛ք... Ա՛խ, պոչատ սատանա։

Պապը կտրած տոնածառը քարշ էր տալիս պարոնների տունը, իսկ այնտեղ սկսում էին զարդարել այն... Ամենից շատ հոգ էր տանում օրիորդ Օլգա Իգնատևնան՝ Վայնկայի սիրելին։ Երբ Վայնկայի մայրիկը՝ Պելագեյան, դեռ կենդանի էր ու որպես աղախին ծառայում էր պարոնների մոտ, Օլգա Իգնատևնան սաստը շաքար էր տալիս Վայնկային ու, պարապ լինելով, նրան սովորեցրեց կարդալ, գրել, հաշվել մինչև հարյուրը և նույնիսկ կաղրիլ պարել։ Իսկ երբ Պելագեյան մեռավ, որբ Վայնկային տարան ծառաների ու պապի մոտ, խոհանոց, խոհանոցից էլ՝ Մոսկվա, կոշկակար Ալյախինի մոտ...

«Արի՛, սիրելի պապի,— շարունակեց Վայնկան,— աստծու, Քրիստոսի անունով աղաչում եմ քեզ, տա՛ր ինձ այստեղից։ Խղճա՛ ինձ, անբախտ որբիս, թե չէ ինձ ծեծում են շարունակ,

միշտ սոված եմ մնում ու այնպես տխրում, որ ասել չեմ կարող, շարունակ լաց եմ լինում։ Երեկ էլ վարպետը կաղապարով խփեց գլխիս, այնպես որ ընկա և զոռով ուշքի եկա։ Կորած է կյանքս, շան կյանքից էլ վատ... Շատ կարոտով բարև Ալյոնային, միաչքանի Եգորկային ու կառապանին, իսկ իմ հարմոնը ոչ ոքի չտաս։ Մնամ քո Թոռ Իվան Ժուկով, սիրելի պապի, ե՛կ»։

Վայնկան չորստակ ծալեց ամբողջովին գրված թուղթը և դրեց ծրարի մեջ, որ նախորդ օրը գնել էր մի կոպեկով... Մի քիչ մտածելով, նա թաթախեց գրչածայրը, գրեց հասցեն.

Մեր գյուղը պապիս

Հետո գլուխը քորեց, մտածեց ու ավելացրեց.

«Կոնստանտին Մակարիչին»։ Գոհ լինելով, որ իրեն չխանգարեցին գրելու, նա գլխարկը դրեց ու առանց քուրքը հագնելու, հենց միայն շապկով դուրս վազեց փողոց...

Մսի խանութի գործակատարները, որոնց նա հարցուփորձ էր արել նախորդ օրը, նրան ասել էին, թե նամակները գցում են փոստարկղները, իսկ այնտեղից դրանք տարվում են ամբողջ երկրովը մեկ, փոստային եռաձի կառքերով, հարբած կառապաններով, զրնգուն զանգակներով։ Վայնկան վազեց մինչև առաջին փոստարկղը և թանկագին նամակը գցեց նրա մեջ...

Քաղցր հույսերով տարված, նա մի ժամից հետո պինդ քնել էր... Երազում տեսավ ռուսական վառարանը։ Պապը նստել է վառարանի վրա, կախել բոբիկ ոտները և նամակը կարդում է խոհարարուհիներին... Վառարանի մոտ ման է գալիս Սևուկն ու խաղացնում պոչը...

1886

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ոսկե ամպիկը գիշերեց
Վիթխարի ժայռի կրծքին...
Լերմանտով

Այն սենյակում, որին ինքը՝ պանդոկի տերը, կազակ Սեմյոն Զիստոպլյույը, անվանում է «ճամփորդարան», այսինքն՝ նշանակված է բացառապես ճանապարհորդների համար, շներկված մեծ սեղանի մոտ նստել էր բարձրահասակ, լայնաթիկունք, մոտավորապես քառասուն տարեկան մի տղամարդ։ Թիկնած սեղանին և գլուխը բռունցքին հենած՝ նա քնել էր։ Շրթնաներկի սրվակի մեջ խրած ճարպամոմի մնացորդը լուսավորում էր նրա շիկակարմիր մորուքը, հաստ լայն քիթը, արևառ այտերը, փակված աչքերի վրա կախված խիտ սև հոնքերը։ Թե՛ քիթը, թե՛ այտերը, թե՛ հոնքերը, բոլոր դիմագծերը, յուրաքանչյուրն առանձին վերցրած, կոպիտ էին ու ծանր, ինչպես կահույքն ու վառարանը «ճամփորդարանում», բայց ընդհանուր առմամբ նրանք ունեին մի ինչ-որ ներդաշնակ և նույնիսկ գեղեցիկ բան։ Այդպիսին է արդեն, ինչպես ասում են, ռուսական դեմքի պլանիդան[1]. որքան խոշոր են ու ավելի խստորոշ այդ դիմագծերը, այնքան թվում են ավելի մեղմ ու բարեհոգի։ Տղամարդը հագել էր կիսամաշ, բայց նոր կարված, լայն երիզով բոլորակար աղյական պիջակ, թավշե ժիլետ, լայն սև անդրավարտիք՝ խրված խոշոր սապոգների մեջ։

Պատերի ամբողջ երկարությամբ շարված նստարաններից մեկի վրա, աղվեսամորթե մուշտակին քնած էր ութ տարեկան մի աղջիկ, դարչնագույն հագուստով և երկար սև գուլպաներով։ Նրա դեմքը գունատ էր, մազերը շեկ, ուսերը նեղ, ամբողջ մարմինը նիհար ու նվազ, բայց քիթը նույնպես նկատելի հաստ էր ու տգեղ ուռուցքով, ինչպես և տղամարդունը։ Նա պինդ քնել էր և չէր զգում, թե ինչպես գլխից ընկած կիսաշրջանաձև փոքրիկ սանրը կտրում է իր այտը։

«Ճամփորդարանը» տոնական տեսք ուներ։ Օդի մեջ կանգնել էր նոր լվացված հատակի հոտը, ամբողջ սենյակի միջով անկյունների երկարությամբ անցկացված պարանի վրա փալասներ չէին կախված, ինչպես միշտ լինում էր, անկյունում սեղանի վերև Գեորգի Զորավարի սրբապատկերի վրա փոքրիկ կանթեղը կարմիր բիծ էր թողնում։ Ամենախիստ և զգույշ հաջորդականություն պահպանելով աստվածայինից աստիճանաբար երկրայինին անցնելիս, սրբապատկերի երկու կողմերում փակցված էին մի շարք պարզունակ նկարներ։ Մոմի մնացորդի և կարմիր կանթեղի աղոտ լույսի տակ այդ պատկերները ներկայացնում էին մի ամբողջական շերտ, սև բծերով ծածկված, և երբ հախճաղյուսե վառարանը, կամենալով երգել եղանակի հետ միաձայն, ոռնալով իր մեջ էր շնչում օդը, իսկ փայտի կտորները,

1 Ուրվագիծ, կաղմություն (ծ. Բ.)։

նարծես զարթնելով, բռնկվում էին վառ բոցով և բարկացած քրթմնջում, այդ ժամանակ գերաններից շինած պատերի վրա սկսում էին ոստոստել կարմրագույն բծեր, և կարելի էր տեսնել, թե ինչպես քնած տղամարդու գլխավերևում պատկերվում էին մերթ Սերաֆիմ ծերունին, մերթ Նասր-Էդդին շահը, մերթ գեր, դարչնագույն մանկիկը, որ աչքերը չռած ինչ-որ բան էր փըսփսում արտասովոր բութ և անտարբեր դեմքով աղջկա ականջին...

Բակում աղմկում էր բուքը։ Ինչ-որ մոլեգին, չարանենգ, բայց խորապես դժբախտ բան գազանի կատաղությամբ վազվզում էր պանդոկի շուրջը և աշխատում ներս խցկվել։ Դռները թրխկթրխկացնելով, լուսամուտներն ու տանիքը ծեծելով, պատերը չանգռտելով, նա մերթ սպառնում էր, մերթ աղերսում կամ թե կարճատև հանդարտվում, և ապա ուրախ, դավադիր ոռնոցով խուժում էր վառարանի խողովակի ներսը, սակայն այդտեղ փայտերը բռնկվում էին, կրակը շղթայազերծ շան նման կատաղաբար հարձակվում էր թշնամու վրա, և սկսվում էր մենամարտը, իսկ նրանից հետո էլ՝ հեկեկանք, կնձկնձոց, մոլեգին մռնչոց։ Այդ բոլորի մեջ լսվում էին և՛ քինախնդիր թախիծ, և՛ չբավարարված ատելություն, և՛ վիրավորված անզորությունը նրա, ով երբեմն սովոր էր հաղթություններին։

Հափշտակված այդ վայրենի, անմարդկային երաժշտությամբ, «ճամփորդարանը» կարծես թե ընդմիշտ անզգայացել էր։ Բայց ահա ճռնչաց դուռը, և սենյակ մտավ պանդոկի տղան մոլլաթե նոր շապկով։ Մի ոտքով կաղալով և քնկոտ աչքերը թարթելով, նա մատներով պոկեց մոմի այրված ծայրը, փայտի կտորներ դրեց վառարանի մեջ ու դուրս եկավ։ Իսկույնևեթ եկեղեցում, որը Ռոգաչներում գտնվում էր պանդոկից երեք հարյուր քայլի վրա, սկսեցին խփել կեսգիշերի զանգերը։ Քամին խաղում էր զնգոցի հետ, ինչպես ձյան փաթիլների հետ. վազելով զանգի ղողանջների հետևից, նա պտտեցնում էր նրանց ահագին տարածության վրա, այնպես որ հարվածներից մի քանիսը ընդհատվում էին կամ երկարում, դառնում երկար ալիքանման ձայն, մյուսները բոլորովին չքանում էին ընդհանուր հնդյունի մեջ։ Հարվածներից մեկն այնքան պարզորոշ ղողանջեց սենյակում, որ կարծես թե զանգահարում էին ուղիղ լուսամուտների տակ։ Աղլեսամորթու վրա քնած աղջիկը ցնցվեց և գլուխը բարձրացրեց։ Մի րոպեի չափ նա անմտորեն նայեց մութ լուսամուտին,

Նասր-Էդդինին, որի վրայով այդ միջոցին սահում էր վառարանից ընկած բոսորագույն լույսը, ապա հայացքը դարձրեց քնած տղամարդու վրա։

— Հայրի՛կ,— ասաց նա։

Սակայն տղամարդը չշարժվեց։ Աղջիկը բարկացած շարժեց հոնքերը, պառկեց և կծկեց ոտքերը։ Դռան հետևում պանդոկի մեջ մեկը բարձրաձայն և երկար հորանջեց։ Դրանից անմիջապես հետո լսվեցին դռան ճախարակի ճռռոցը և անորոշ ձայներ։ Մեկը ներս մտավ և, ձյունը թափ տալով վրայից, խուլ թփթփացրեց թաղիքե ոտնամաններով։

— Ի՞նչ,— ծուլորեն հարցրեց մի կանացի ձայն։

— Օրիորդ Իլովայսկայան եկավ...— պատասխանեց բասը։

Դռան ճախարակը նորից ճռռաց։ Լսվեց ներս խուժող քամու աղմուկը։ Մեկը, հավանորեն կաղ տղան, վազեց դեպի այն դուռը, որը տանում էր «ճամփորդարան», պատկառանքով հազաց ու շարժեց դռան սողնակը։

— Այստեղ համեցեք, օրիորդ-մայրիկ,— ասաց մի քաղցրահնչուն կանացի ձայն,— այստեղ մեզ մոտ մաքուր է, գեղեցկուհի՞...

Դուռը բացվեց և շեմքին երևաց մորուքավոր մի ռամիկ, կառապանի կաֆտանով և մեծ ճամպրուկը ուսին, ոտից մինչև գլուխ ամբողջովին ձյունոտված։ Նրա հետևից անմիջապես ներս մտավ ո՛չ բարձրահասակ, համարյա կառապանից երկու անգամ ցածր, կանացի մի կերպարանք, առանց դեմքի, առանց ձեռքերի, կապոցի նման փաթաթված և նույնպես ձյունոտված։ Կառապանից և կապոցից, ինչպես մառանից, խոնավություն փչեց աղջկա վրա, և մոմի կրակը երերաց։

— Ի՞նչ հիմարություն է,— ասաց կապոցը բարկացած։— Հիանալի կարելի էր գնալ։ Մնացել է միայն քսան վերստ, մեծ մասամբ անտառի միջով, և չէինք էլ մոլորվի...

— Մոլորվելը չէինք մոլորվի, բայց ձիերը չեն գնում, օրիորդ,— պատասխանեց կառապանը։— Եվ թող տիրոջ կամքը լինի, կարծես թե ես դիտմամբ...

— Աստված գիտի, ուր բերիր... Բայց կամաց... Այստեղ, կարծես, քնած են։ Գնա՛ այստեղից...

Կառապանը ճամպրուկը դրեց հատակին, ըստ որում նրա ուսերից թափվեցին ձյունի շերտերը, քթով ինչ-որ անորոշ ձայն հանեց և դուրս գնաց։ Հետո աղջիկը տեսավ, թե ինչպես կապո-

ցի միջից դուրս պրծան երկու փոքրիկ ձեռքեր, մեկնվեցին դեպի վեր և սկսեցին բարկացած ետ տալ շալերի, շարֆերի ու թաշկինակների փաթեթը։ Սկզբում հատակի վրա ընկավ մեծ շալը, հետո՝ բաշլուղը, նրանից հետո՝ սպիտակ, գործված շալը։ Ազատելով գլուխը, նորեկը հանեց սալոպը[1] և միանգամից կիսով չափ բարակեց։ Այժմ արդեն նա երկար, մոխրագույն վերարկուով էր, մեծ կոճակներով և դուրս ցցված գրպաններով։ Մի գրպանից նա հանեց թղթի մեջ փաթաթված ինչ-որ բան, մյուսից՝ մեծ, ծանր բանալիների մի ամբողջ կապ, որը ցած դրեց այնքան անզգույշ, որ քնած տղամարդը ցնցվեց ու աչքերը բաց արեց։ Մի որոշ ժամանակ նա բութ հայացքով նայում էր այս ու այն կողմ, կարծես չհասկանալով, թե որտեղ է գտնվում, ապա գլուխը թափ տվեց, գնաց անկյունը ու նստեց... Նորեկը հանեց վերարկուն, որից դարձյալ բարակեց կիսով չափ, հանեց պլիսե[2] կոշիկներն ու նույնպես նստեց։

Այժմ արդեն նա նման չէր կապոցի։ Դա մի փոքրիկ, նիհար, թխահեր կին էր, քսան տարեկան, օձի պես բարակ, երկարավուն, սպիտակ դեմքով և գանգուր մազերով։ Նրա քիթը երկար էր, սուր, ծնոտը նույնպես երկար ու սուր, թերթերունքները երկար, բերանի անկյունները սուր և, շնորհիվ այդ ընդհանուր սրության, դեմքի արտահայտությունը թվում էր ծակող։ Ամփոփված սև հագուստում, պարանոցին ու թևերին՝ բազմաթիվ ժանյակներ, սուր արմունկներով ու երկար, վարդագույն մատներով, նա հիշեցնում էր միջնադարյան անգլիական տիկինների դիմանկարները։ Դեմքի լուրջ կենտրոնացած արտահայտությունն է՛լ ավելի էր մեծացնում այդ նմանությունը...

Թխադեմ կինը դիտեց սենյակը, խեթ-խեթ նայեց տղամարդու և աղջկա վրա և, ուսերը թոթվելով, վեր կացավ, նստեց լուսամուտի մոտ։ Խավար լուսամուտները դողդողում էին արևմտյան խոնավ քամուց։ Ջյան խոշոր փաթիլները, փայլելով սպիտակությամբ, թափվում էին ապակիների վրա, բայց իսկույն էլ չքանում էին, քշվելով քամուց։ Վայրենի երաժշտությունն ավելի ու ավելի էր սաստկանում...

Երկար լռությունից հետո աղջիկը հանկարծ շուռ եկավ ու բարկացած ասաց, շեշտելով յուրաքանչյուր բառը.

---

[1] Սալոպ — կանացի վերարկու (Ծ. Թ.)։

[2] Թավշանման կտոր (Ծ. Թ.)։

— Տեր աստված, տեր աստված։ Ի՞նչ դժբախտն եմ ես։ Ամենից դժբախտը։

Տղամարդը վեր կացավ և մեղավոր քայլվածքով, որն ամենևին չէր սազում նրա վիթխարի հասակին ու մեծ մորուքին, ոտքերը քստքստացնելով մոտեցավ աղջկան։

— Քնած չե՞ս, սիրելիս,— հարցրեց նա ներողություն խնդրող ձայնով։— Ի՞նչ ես ուզում։

— Ոչինչ չեմ ուզում։ Ուսս ցավում է։ Դու, հայրի՛կ, լավ մարդ չես, և աստված քեզ կպատժի։ Ա՜յ, կտեսնես, որ կպատժի։

— Հոգյակս, ես գիտեմ, որ ուսդ ցավում է, բայց ի՞նչ կարող եմ անել, սիրելի՛ս,— ասաց տղամարդն այնպիսի տոնով, ինչպես հարբած տղամարդիկ են ներողություն խնդրում իրենց խստապահանջ ամուսինների առաջ։— Սաշա՛, ուսիդ ցավերը ճանապարհից է։ Վաղը մենք տեղ կհասնենք, կհանգստանանք ու կանցնի...

— Վաղը, վաղը... Դու ամեն օր ասում ես վաղը։ Մենք դեռ քսան օր էլ պիտի գնանք։

— Բայց, սիրելիս, հայրական աղնիվ խոսք, վաղը մենք տեղ կհասնենք։ Ես երբեք սուտ չեմ ասում, իսկ եթե բուքը մեզ ուշացնում է, ես արդեն մեղավոր չեմ։

— Ես այլևս տանել չեմ կարող։ Չե՛մ կարող։ Չե՛մ կարող։

Սաշան խստությամբ թափ տվեց ոտքերը, և սենյակը լցվեց նրա անախորժ ճչան լացով։ Հայրը ձեռքը թափ տվեց և իրեն կորցրած նայեց թխադեմ կնոջը։ Սա ուսերը վեր քաշեց և անվճռական կերպով մոտեցավ Սաշային։

— Լսի՛ր, սիրելիս,— ասաց նա,— էլ ինչո՞ւ ես լալիս։ Ճիշտ է, լավ չէ, եթե ուսդ ցավում է, բայց ի՞նչ արած։

— Գիտեք, օրիորդ,— շտապ խոսեց տղամարդը, կարծես իրեն արդարացնելու համար,— մենք երկու գիշեր է չենք քնել և եկել ենք զզվելի կառքով։ Դե, բնական է, իհարկե, որ նա հիվանդ է և տխրում է... Բացի դրանից, մեզ հանդիպեց, գիտեք, մի հարբեցող կառապան, մեր ճամպրուկն էլ գողացան... Շարունակ քամի, բուք-բորան, բայց, օրիորդ, ինչո՞ւ լաց լինել։ Ասենք, այս քունը, նստած դրությամբ, հոգնեցրեց ինձ, և ես կարծես հարբած եմ։ Աստված վկա, Սաշա, առանց քեզ էլ զզվելի է այստեղ, իսկ դու դեռ լաց էլ ես լինում։

Տղամարդը տարուբերեց գլուխը, ձեռքը թափ տվեց և նստեց։

— Իհարկե, չպետք է լաց լինել,— ասաց թխադեմ կինը։—

Այդպես միայն ծծկեր երեխաներն են լաց լինում։ Եթե դու, սիրելիս, հիվանդ ես, ապա հարկավոր է հանվել ու քնել... Ե՛կ հանվենք։

Երբ աղջկա շորերը հանեցին ու հանգստացրին, նորից լռություն տիրեց։ Թխադեմ կինը նստել էր լուսամուտի մոտ ու տարակուսանքով դիտում էր պանդոկի սենյակը, սրբապատկերը, վառարանը... Ըստ երևույթին, նրան օտարոտի էր թվում թե՛ սենյակը, թե՛ աղջիկն իր հաստ քթով, տղայի կարճ շապկով, և թե աղջկա հայրը։ Այդ տարօրինակ մարդը նստել էր անկյունում, իրեն կորցրած, ինչպես հարբածը, նայում էր այս ու այն կողմ և ձեռքով ճմռթում դեմքը։ Նա լռում էր, թարթում աչքերը և, նայելով նրա մեղավոր կերպարանքին, դժվար էր ենթադրել, որ նա շուտով կսկսի խոսել։ Սակայն առաջինը նա սկսեց խոսել։ Ծնկները տրորելով նա հազաց, քմծիծաղեց ու ասաց.

— Կոմեդիա է, աստված վկա... Նայում եմ ու աչքերիս չեմ հավատում. ինչի՞ համար է ճակատագիրը մեզ բերել գցել այս գարշելի պանդոկը։ Դրանով ինչ է ուզում արտահայտել։ Կյանքը երբեմն այնպիսի salto mortale-ներ է անում, որ միայն նայիր ու տարակուսանքով աչքերդ ճպճպացրու։ Դուք, օրիորդ, հեռո՞ւ եք բարեհաճում գնալ։

— Ոչ, ո՛չ հեռու,— պատասխանեց թխադեմ կինը։— Ես գալիս եմ մեր կալվածքից, որն այստեղից քառասուն վերստի վրա է, մեր իսկ խուտորը, հորս և եղբորս մոտ։ Ես ինքս Իլովայսկայան եմ և խուտորն էլ կոչվում է Իլովայսկ, այստեղից տասներկու վերստ է։ Ինչպիսի՞ անախորժ եղանակ է։

— Դրանից էլ վատ ի՞նչ կարող է լինել։

Ներս մտավ կաղլիկ տղան և ճրագի ամանի մեջ դրեց մոմի նոր կտոր։

— Դու, պստիկ, ավելի լավ է ինքնաեռ դիր մեզ համար,— նրան դիմեց տղամարդը։

— Ո՞վ է հիմա թեյ խմում,— քմծիծաղեց կաղլիկը։— Մեղք բան է պատարագից առաջ թեյ խմել։

— Ոչինչ, պստիկ, դո՛ւ չես դժոխքում այրվելու, այլ մենք...

Թեյի վրա նոր ծանոթներն սկսեցին զրուցել։ Իլովայսկայան իմացավ, որ իր զրուցընկերին կոչում են Գրիգորի Պետրովիչ Լիխարև, որ նա հարազատ եղբայրն է այն միևնույն Լիխարևի, որը ծառայում է հարևան գավառներից մեկում իբրև պարագլուխ, և ինքն էլ մի ժամանակ կալվածատեր է եղել, բայց «իր

ժամանակին սնանկացավ»։ Լիխարևն էլ իմացավ, որ Իլովայսկայային կոչում են Մարիա Միխայլովնա, որ նրա հոր կալվածքը ահագին է, բայց տնտեսությունը կառավարելը ընկած է միայն նրա ուսերին, որովհետև հայրն ու եղբայրը կյանքի վրա նայում են մատների արանքով, անհոգ են ու չափազանց սիրում են քերծե շներ։

— Հայրս ու եղբայրս խուտորում մեն-մենակ են,— ասում էր Իլովայսկայան, մատները շարժելով (խոսակցության միջոցին նա սովորություն ուներ իր խոցող դեմքի առաջ մատները շարժել և յուրաքանչյուր դարձվածքից հետո սուր, փոքրիկ լեզվով լիզել շրթունքները),— նրանք՝ տղամարդիկ, անհոգ են, և իրենք իրենց համար մատ-մատի չեն խփում։ Երևակայում եմ, ով հոգ կտանի նրա մասին պասի թաթախման ժամանակ։ Մենք մայր չունենք, իսկ մեր ծառան այնպիսին է, որ առանց ինձ սփռոցն անգամ ինչպես հարկն է չի գցի։ Հիմա կարող եք պատկերացնել նրանց դրությունը. նրանք կմնան առանց թաթախվելու, իսկ ես ամբողջ գիշերը այստեղ պիտի նստեմ։ Ինչ տարօրինակ է այս բոլորը։

Իլովայսկայան ուսերը թոթվեց, մի կում թեյ խմեց և ասաց.

— Կան տոներ, որոնք իրենց հոտն ունեն։ Զատկին, Ծննդին, Երրորդության տոնին օդից մի ինչ-որ առանձին հոտ է գալիս։ Նույնիսկ չհավատացողներն էլ են սիրում այդ տոները։ Եղբայրս, օրինակ, ասում է, որ աստված չկա, իսկ Զատկին առաջինն է վազում ժամերգության։

Լիխարևը աչքերն ուղղեց Իլովայսկայայի վրա ու ծիծաղեց։

— Մեկնաբանում են, որ աստված չկա,— շարունակեց Իլովայսկայան, նույնպես ծիծաղելով,— ապա ինչո՞ւ, ասացեք ինձ, բոլոր նշանավոր գրողները, գիտնականները, ընդհանրապես խելացի մարդիկ, կյանքի վերջում հավատում են։

— Օրիորդ, ով երիտասարդ հասակում չի կարողանում հավատալ, նա ծերության ժամանակ նույնպես չի հավատում, թեկուզ նա լինի գերազանցագույն գրող։

Դատելով հազալուց, Լիխարևը բաս ձայն ուներ, բայց հավանորեն, բարձր խոսելու վախից կամ ավելորդ ամաչկոտությունից, նա խոսում էր տենորով։ Մի փոքր լռելով, նա հառաչեց ու ասաց.

— Ես այսպես եմ հասկանում, որ հավատը հոգու ընդունակությունն է։ Նա միևնույն է, թե տաղանդ է. նրա հետ պիտի

ծնվել։ Որքան ես կարող եմ դատել իմ անձնական օրինակից, այն մարդկանց հիման վրա, որոնց տեսել եմ իմ կյանքում, այն բոլորից, ինչ կատարվում էր իմ շուրջ, այդ ընդունակությունը գերագույն աստիճանի հատուկ է ռուս մարդկանց։ Ռուսական կյանքն իրենից ներկայացնում է հավատալիքների և հափշտակությունների մի անընդհատ շարք, իսկ անհավատությունները կամ ժխտումներից նա, եթե ուզում եք իմանալ, դեռևս հոտ էլ չի քաշել։ Եթե ռուս մարդը աստծուն չի հավատում, ապա այդ նշանակում է, որ հավատում է մի այլ բանի։

Լիխաբևը ընդունեց Իլովայսկայայից թեյով լի բաժակը, միանգամից խմեց կեսը ու շարունակեց.

— Ես կասեմ ձեզ իմ մասին։ Իմ հոգու մեջ բնությունը դրել է հավատալու արտասովոր ընդունակություն։ Ես կյանքիս կեսը, այս գիշերին հարմար էլ չի ասել, եղել եմ աթեիստների և նիհիլիստների կազմում, բայց իմ կյանքում չի եղել ոչ մի ժամ, որ ես չհավատայի։ Բոլոր տաղանդները սովորաբար երևան են գալիս վաղ մանկության տարիներին, այդպես էլ իմ ընդունակություններն արդեն զգալ էին տալիս, երբ ես դեռ սեղանի տակ էի ման գալիս։ Մայրս սիրում էր, որ երեխաները շատ ուտեին, և երբ պատահում էր, կերակրում էր ինձ, ասում էր. «Կեր։ Կյանքում գլխավորը ապուրն է»։ Ես հավատում էի և օրական տասն անգամ ուտում էի այդ ապուրը, ուտում էի շնաձկան պես, զզվելու և ուշագնաց լինելու աստիճան։ Դայակս պատմում էր հեքիաթներ, և ես հավատում էի տնաշարքերի, անտառի փերիների և ամեն տեսակ սատանաների։ Երբեմն պատահում էր, որ ես հորիցս սուլեմա էի գողանում, շաղ տալիս քաղցրաբլիթի վրա ու տանում դնում մեր տան ձեղնահարկում, որպեսզի, ի՞նչ եք կարծում, տնաշարքերն ուտեին ու սատկոտեին։ Իսկ երբ սովորեցի կարդալ և կարդացածս հասկանալ, այլևս ոչ մի բանի չէի հավատում, և այդպես էլ գնաց ու գնաց։ Ես Ամերիկա էլ էի փախչում, ավազակություն էլ էի անում, գնում էի վանք մտնելու, տղաներ էլ էի վարձում, որպեսզի նրանք Քրիստոսի փոխարեն ինձ տանջեն։ Եվ, նկատի ունեցեք, իմ հավատը միշտ գործուն էր, մեռած չէր։ Եթե ես Ամերիկա էի փախչում, մենակ չէի լինում, մոլորեցնում էի մի ուրիշին էլ, այնպիսի հիմարի, ինչպիսին ես էի, և ուրախ էի, երբ սառչում էի ուղեփակի մոտ և երբ ինձ մտրակահարում էին։ Եթե գնում էի ավազակության, միշտ էլ վերադառնում էի անպայման ջարդոտված մռութով, արյունլվա։ Անհանգիստ մանկություն էր, պիտի ասեմ ձեզ։ Իսկ երբ ինձ գիմնազիա տարան և այնտեղ գլխիս տեղացին ամեն տեսակ այնպիսի ճշմարտություններ, ինչպես այն՝ թե երկիրը պտտվում է արեգակի շուրջ կամ սպիտակ գույնը սպիտակ չէ, այլ բաղկացած է յոթ գույներից, իմ խեղճ գլուխը միանգամից պտտվեց։ Ամեն ինչ գլխիցս թռավ բոլորովին, և՛ Նավին, որը կանգնեցրեց արեգակը, և մայրս, որ հանուն Եղիա մարգարեի ժխտում էր շանթարգելները, և՛ հայրս, որ անտարբեր էր դեպի այն ճշմարտությունները, որ ես ճանաչել էի։ Իմ նախատեսությունը խանդավառեց ինձ։ Խելագարի պես պտտում էի տան մեջ, ախոռներում, քարոզում էի իմ ճշմարտությունները, սոսկում էի տգիտությունից, ատելությամբ էի բորբոքվում դեպի բոլորը, ով սպիտակ գույնի մեջ տեսնում էր միայն սպիտակը... Ասենք, այդ ամենը դատարկ բաներ էին և երեխայություն։ Իսկ լուրջ, այսպես ասած, առնական հափշտակություններն իմ մեջ սկսվեցին համալսարանից։ Դուք, օրիորդ, բարեհաճե՞լ եք որևէ տեղ կուրսեր ավարտել։

— Նովոչերկասկում, Դոնյան ինստիտուտում։

— Իսկ կուրսերում չե՞ք եղել։ Ուրեմն, դուք չգիտեք ինչ ասել է գիտություններ։ Աշխարհում ինչքան գիտություններ կան, բոլորն էլ միևնույն անձնագիրն ունեն, առանց որի նրանք իրենց գոյությունը,— ձգտումը դեպի ճշմարտությունը,— համարում են անհասկանալի։ Յուրաքանչյուրը նրանից, նույնիսկ մի որևէ ֆարմակոգնոզիա, նպատակ ունի ո՛չ թե օգուտը, ո՛չ թե հարմարությունները կյանքում, այլ ճշմարտությունը։ Զարմանալի է, երբ դուք սկսում եք ուսումնասիրել մի որևէ գիտություն, ապա ձեզ նախ և առաջ ապշեցնում է նրա սկիզբը։ Ես կասեմ, չկա ավելի գրավիչ ու վիթխարի բան, ոչինչ այնքան չի շշմեցնում ու չի հափշտակում մարդկային հոգին, որքան որևէ գիտության սկիզբը։ Առաջին իսկ հինգ-վեց դասախոսություններից ձեզ արդեն թևավորում են ամենավառ հույսերը, դուք արդեն ձեզ համարում եք ճշմարտության տերը։ Ու ես անձնատուր եղա գիտություններին անսահման կրքոտությամբ, ինչպես սիրած կնոջը։ Ես նրանց ստրուկն էի և, նրանցից բացի, չէի ուզում ճանաչել ոչ մի ուրիշ արեգակ։ Գիշեր ու ցերեկ, առանց մեջքս ուղղելու, ես անգիր էի անում, միջոցներս վատնում գրքերի վրա, լալիս էի, երբ աչքերիս առաջ մարդիկ գիտությունը շահագործում էին անձնական նպատակների համար։ Սակայն երկար չէր տևում

իմ հափշտակությունը։ Բանն այն է, որ յուրաքանչյուր գիտություն ունի իր սկիզբը, բայց ամենևին վերջ չունի, ինչպես պարբերական կոտորակները։ Կենդանաբանությունը հայտնաբերել է միջատների երեսունհինգ հազար տեսակներ, քիմիան հաշվում է վաթսուն հասարակ մարմիններ։ Եթե ժամանակի ընթացքում այդ թվերին աչից ավելանան տասական զրոներ, կենդանաբանությունը և քիմիան նույնպես հեռու կլինեն իրենց վերջից, ինչպես այժմ է, իսկ ամբողջ ժամանակակից գիտական աշխատանքը կայանում է հենց այդ թվերի աճեցման մեջ։ Այս ֆոկուսը ես ըմբռնեցի, երբ հայտնաբերեցի 350001-րդ տեսակը ու ինձ բավարարված չզգացի։ Դե, ես հիասթափություն ապրելու ժամանակ չունեցա, որովհետև շուտով ինձ տիրապետեց մի նոր հավատ։ Ես անձնատուր եղա նիհիլիզմին իր թռուցիկներով, սև վերաբաժանումներով ու տեսակ-տեսակ բաներով։ Ես ժողովրդի մեջ գնացի. ծառայել եմ ֆաբրիկաներում, յուղողների մեջ, բուռլակների հետ։ Հետո, երբ քարշ գալով Ռուսիայում, ճանաչեցի ռուսական կյանքը, դարձա այդ կյանքի ջերմ երկրպագուն։ Ես սիրում էի ռուս ժողովրդին տանջվելու չափ ու հավատում էի նրա աստծուն, լեզվին, ստեղծագործությանը... Եվ այլն, և այլն... Իր ժամանակին ես սլավյանոֆիլ էի, Ակսակովին զզվեցնում էի իմ նամակներով, և՛ ուկրայնոֆիլ էի, և՛ հնագետ, և՛ ժողովրդական ստեղծագործությունների նմուշներ հավաքող... հափշտակվում էի գաղափարներով, մարդկանցով, դեպքերով, տեղերով... հափշտակվում էի անընդհատ։ Հինգ տարի սրանից առաջ ես ծառայում էի սեփականության ժխտմանը, իմ վերջին հավատը չարին չհակառակվելն էր։

Սաշան ընդհատումներով հառաչեց և շարժվեց տեղում։ Լիխարևը վեր կացավ ու մոտեցավ նրան։

— Սիրելիս, թեյ չե՞ս ուզում,— հարցրեց նա քնքշորեն։

— Ի՞նքդ խմիր,— կոպտորեն պատասխանեց աղջիկը։

Լիխարևը շփոթվեց և մեղավոր քայլվածքով վերադարձավ սեղանի մոտ։

— Նշանակում է, դուք ուրախ եք ապրել,— ասաց Իլովայսկայան։— Հիշելու բաներ ունեք։

— Դե, այո, այդ ամենը ուրախալի է, երբ նստած ես թեյի բարի զրուցընկերի հետ ու դատարկաբանում ես։ Բայց հարցրեք, ի՞նչ նստեց ինձ վրա այդ ուրախությունը։ Ի՞նչ արժե ինձ համար իմ կյանքի զանազանակերպությունը։ Չէ՞ որ ես, օրիորդ,

հավատում էի ոչ թե որպես գերմանական փիլիսոփայության դոկտոր, ոչ ցիրլիխ-մանիրլիխ, անապատում չէի ապրում ես, այլ իմ ամեն մի հավատը ինձ կռացնում էր, դարձնում աղեղի նման, մարմինս ծվատում էր։ Ինքներդ դատեցեք։ Ես հարուստ էի, ինչպես եղբայրներս, իսկ այժմ մուրացկան եմ։ Հափշտակությունների մոլուցքում ես վատնեցի թե՛ իմ կարողությունը, թե՛ կնոջս, և շատ ուրիշների փողերը։ Այժմ ես քառասուներկու տարեկան եմ, ծերությունը քթիս տակ է, իսկ ես անպատսպար եմ, ինչպես մի շուն, որ գիշերը ետ է մնացել գումակից։ Իմ ամբողջ կյանքում ես չեմ իմացել ինչ բան է հանգստությունը։ Իմ հոգին անընդհատ տառապել է, տանջվել նույնիսկ հույսերով... Ես հալումաշ էի լինում ծանր, անկարգ աշխատանքից, կրում էի զրկանքներ, մի հինգ անգամ բանտ եմ նստել, թրև եմ եկել Արխանգելսկի և Տոբոլյան նահանգներում... Հիշելն անգամ ցավ է պատճառում։ Ես ապրում էի, բայց մոլուցքիս մեջ չէի զգում կյանքի պրոցեսը։ Կհավատա՞ք արդյոք, ես չեմ հիշում ոչ մի գարուն, չէի նկատում ինչպես էր սիրում ինձ կինս, ինչպես էին ծնվում զավակներս։ Էլ ուրիշ ի՞նչ ասել ձեզ։ Ամենքի համար, ով սիրում էր ինձ, ես դժբախտություն էի... Ահա տասնհինգ տարի է արդեն մայրս սուգ է անում ինձ համար, իսկ իմ հպարտ եղբայրները, որոնց սրտերը ցավել են իմ պատճառով, որոնք կարմրել են, մեջքերը կռացրել, փողերը շռայլել, ի վերջո ատեցին ինձ իբրև թույնի։

Լիխարևը վեր կացավ ու նորից նստեց։

— Եթե միայն ես դժբախտ լինեի, գոհություն կհայտնեի աստծուն,— շարունակեց նա, չնայելով Իլովայսկայայի վրա,— իմ անձնական դժբախտությունը մնում է հետին պլանում, երբ ես հիշում եմ, թե ինչպես իմ հափշտակություններում ես հաճախ անհեթեթ էի, ճշմարտությունից հեռու, անիրավացի, դաժան, վտանգավոր։ Ինչպես հաճախ ամբողջ հոգով ատում էի ու արհամարհում նրանց, ում հարկավոր էր սիրել և՝ ընդհակառակը։ Դավաճանում էի ես հազար անգամ։ Այսօր ես հավատում եմ, ծունր եմ իջնում, իսկ վաղն արդեն երկչոտությամբ փախչում եմ իմ այսօրվա աստվածներից ու բարեկամներից, և լուռ կուլ տալիս իմ հասցեին շպրտված «սրիկա» հայհոյանքը։ Աստված էր միայն տեսնում, թե ինչպես հաճախ իմ հափշտակություններին համար ես ամոթից լալիս էի և բարձս կրծոտում։ Կյանքումս ես ոչ մի անգամ դիտավորյալ չեմ ստել ու չարիք չեմ գործել,

բայց խիղճս հանգիստ չէ։ Օրիորդ, ես չեմ կարող նույնիսկ պարծենալ, որ իմ խղճի վրա ծանրացած չկա ոչ ոքի կյանքը, որովհետև հենց իմ աչքերի առաջ մեռավ կինս, որին հալումաշ արի ես իմ թեթևամտությամբ։ Այո՛, կինս։ Լսեցե՛ք, մեզ մոտ, հասարակական կենցաղում, կանանց նկատմամբ այժմ գերակշռում է երկու վերաբերմունք։ Ոմանք չափում են կանանց գանգերը ապացուցելու համար, թե կինը տղամարդուց ցածր է կանգնած, որոնում են նրա թերությունները, որպեսզի ծիծաղեն նրա վրա, օրիգինալություն անեն նրա աչքում և արդարացնեն իրենց անասնությունը։ Ուրիշներն էլ բոլոր ուժերով աշխատում են բարձրացնել կնոջը մինչև իրենց, այսինքն՝ ստիպել նրան անգիր անելու երեսունհինգ հազար տեսակներ, ասել ու գրել միևնույն հիմարությունները, ինչ որ նրանք իրենք ասում են ու գրում։

Լիխարևի դեմքը մթնեց։

— Իսկ ես կասեմ ձեզ, որ կինը միշտ էլ եղել է և լինելու է տղամարդու ստրուկը,— ասաց նա թավ ձայնով, բռունցքը խփելով սեղանին։— Նա քնքուշ, կակուղ մոմ է, որից տղամարդը միշտ էլ կերտել է, ինչ որ կամեցել է։ Տեր իմ աստված, տղամարդու անարժեք հափշտակությունից նա խուզեց իր մազերը, թողեց ընտանիքը, մեռավ օտարության մեջ... Այն գաղափարների մեջ, որոնց համար նա զոհաբերում էր իրեն, չկա ոչ մի կանացի գաղափար... Անսահմա՜ն անձնվեր ստրուկ։ Գանգերը ես չեմ չափել, բայց այս ասում եմ ծանր, դառը փորձի հիման վրա։ Ամենահպարտ ինքնուրույն կանայք, եթե ինձ հաջողվում էր հաղորդել նրանց իմ ոգևորությունը, գալիս էին իմ հետևից, առանց դատողության, չհարցնելով և անելով այն ամենը, ինչ ես էի ուզում. միանձնուհուն ես դարձրի նիհիլիստ, որը, ինչպես հետո լսեցի, կրակել էր ժանդարմի վրա. իմ կինը ոչ մի բոպն մենակ չէր թողնում ինձ իմ թափառումների միջոցին և ինչպես հողմացույց փոփոխում էր իր հավատը զուգահեռ այն բանի, թե ինչպես էի ես փոխում իմ հափշտակությունները։

Լիխարևը վեր թռավ տեղից ու սկսեց անցուդարձ անել սենյակում։

— Ազնիվ, վսեմ ստրկություն,— ասաց նա ձեռքերն իրար զարկելով։— Հենց այդ է կնոջ կյանքի բարձր իմաստը։ Կանանց հետ ունեցած շփման բոլոր ժամանակամիջոցներում իմ գլխում կուտակված սարսափելի խառնաշփոթից հիշողությանս մեջ, ինչպես քամիչում, ազատ են մնացել ո՛չ թե իդեաները, ո՛չ թե խելոք խոսքերը, ո՛չ թե փիլիսոփայությունը, այլ այդ արտակարգ հնազանդությունը իր բախտին, ճակատագրին, այդ արտասովոր գթասրտությունը, ներումը ամեն բանի...

Լիխարևը սեղմեց բռունցքները, աչքերը հառեց մի կետի և մի տեսակ խիստ լարվածությամբ, կարծես կլանելով յուրաքանչյուր խոսքը, սեղմված ատամների արանքից, արտասանեց.

— Այդ... այդ վեհանձն տոկունությունը, հավատարմությունը մինչև գերեզման, սրտի պոեզիան է... Կյանքի իմաստը հենց այդ անտրտունջ նահատակության մեջ է, այդ արտասուքներում, որոնք փափկացնում են քարը, այդ անսահման, ամեն ինչ ներող սիրո մեջ, որը կյանքի քաոսի մեջ մտցնում է լույս և ջերմություն...

Իլովայսկայան դանդաղությամբ վեր կացավ, մի քանի քայլ արեց դեպի Լիխարևը և աչքերը հառեց նրա դեմքին։ Տղամարդու թերթերունքներին պսպղացող արցունքներից, դողացող կրքոտ ձայնից, այտերի կարմրությունից նրա համար պարզ դարձավ, որ կանայք Լիխարևի խոսակցության պատահական և հասարակ թեման չէին։ Նրանք Լիխարևի նոր հափշտակության կամ, ինչպես նա ինքն էր ասում, նոր հավատի առարկան էին։ Իլովայսկայան կյանքում առաջին անգամն էր իր առջև տեսնում հմայված, ջերմորեն հավատացող մարդու։ Շարժումներ անելով, աչքերը փայլեցնելով, Լիխարևը նրան թվում էր խենթ, մոլեգնած, սակայն նրա աչքերի կրակում, նրա խոսակցության մեջ, նրա ամբողջ մեծ մարմնի շարժումներում զգացվում էր այնքան գեղեցկություն, որ նա ինքն էլ, այդ չնկատելով, կանգնել էր նրա առաջ քարացածի պես, և խանդավառությամբ նայում էր նրա դեմքին։

— Վերցրեք հենց իմ մորը,— ասում էր նա, դեպի Իլովայսկայան պարզելով իր ձեռքերը և աղերսական դեմք ընդունելով։— Ես թունավորեցի նրա գոյությունը, իր հասկացողությամբ՝ խայտառակեցի Լիխարևների տոհմը, այնքան չարիք պատճառեցի նրան, ինչքան կարող է պատճառել ամենաոխերիմ թշնամին, և ի՞նչ։ Եղբայրներս նրան գրոշներ են տալիս նշխարքների ու մաղթանքների համար, իսկ նա, բռնադատելով իր կրոնական զգացմունքը, հավաքում է այդ փողերը և գաղտնի ուղարկում իր անառակ Գրիգորիին։ Միմիայն այդ չնչին բանը կդաստիարակի ու կազնվացնի հոգին անհամեմատ ավելի ուժեղ կերպով, քան

բոլոր թեորիաները, խելացի խոսքերը, երեսունհինգ հազար տեսակները։ Ես կարող եմ ձեզ հազարավոր օրինակներ բերել։ Հա՜, հենց թեկուզ վերցնենք ձեզ։ Դրսում բուք է, գիշեր, իսկ դուք գնում եք ձեր եղբոր ու հոր մոտ, որպեսզի տոնին նրանց ջերմացնեք ձեր գուրգուրանքներով։ Թեև նրանք, կարող է պատահել, չեն մտածում, մոռացել են ձեր մասին։ Իսկ, սպասեցեք, կսիրեք մի մարդու, ապա նրա հետևից հյուսիսային բևեռ էլ կգնաք։ Կգնաք, չէ՞։

— Այո՛, եթե... սիրեմ։

— Ահա, տեսնո՞ւմ եք,— ուրախացավ Լիխարևը, նույնիսկ ոտքով դոփեց։— Աստված վկա, այնպես ուրախ եմ, որ ձեզ հետ ծանոթացա։ Այնքան բարի է իմ բախտը, որ ես շարունակ պատահում եմ հիանալի մարդկանց։ Չի պատահում մի օր, որ ծանոթություն չունենամ այնպիսի մարդու հետ, որի համար ուղղակի հոգի կտայի։ Այս աշխարհում լավ մարդիկ ավելի շատ են, քան վատերը։ Տեսնում եք, մենք ձեզ հետ այնպես անկեղծորեն ու մտերմաբար խոսեցինք, կարծես հարյուր տարվա ծանոթներ ենք։ Ուրիշ անգամ, ձեզ պիտի ասեմ, տասը տարի ամուր կապ ես ունենում, լռում ես, բարեկամներից ու կնոջից ամեն ինչ թաքցնում, իսկ հանդիպում ես վագոնում մի կադետի, ու սրտումդ հավաքվածն ամբողջապես ասում ես նրան։ Ես ձեզ պատիվ ունեմ տեսնելու առաջին անգամ, բայց խոստովանեցի ձեզ, ինչպես երբեք չեմ խոստովանել։ Ինչի՞ց է դա։

Շփելով ձեռքերը և ուրախ ժպտալով, Լիխարևը անցուդարձ արեց սենյակում ու նորից խոսեց կանանց մասին։ Մինչդեռ առավոտյան ժամերգության զանգերը տալիս էին արդեն։

— Տե՛ր աստված,— լաց եղավ Սաշան։— Նա իր խոսակցություններով չի թողնում ինձ քնել։

— Ա՜խ, հա՛,— ուշքի եկավ Լիխարևը։— Ներողություն, սիրելիս։ Քնի՛ր, քնի՛ր... Սրանից բացի, ես երկու տղա էլ ունեմ,— շշնջաց նա։— Նրանք, օրիորդ, հորեղբոր մոտ են ապրում, իսկ սա մի օր էլ չի կարող շունչ քաշել առանց հոր։ Տանջվում է, բողոքում է, բայց կպչում է ինձ, ինչպես ճանճը մեղրին։ Ես, օրիորդ, շատախոսեցի, իսկ ձեզ էլ չէր խանգարի հանգստանալ։ Չէի՞ք կամենա, ես ձեզ համար անկողին կսարքեմ։

Ջսպասելով թույլտվության, նա թափ տվեց խոնավ սալոցը և փռեց նստարանի վրա, մորթին դեպի վեր, հավաքեց թափթփված թաշկինակներն ու շալերը, խողովակաձև փաթաթված

վերարկուն դրեց գլխատակը, և այդ ամենը անխոս, ստորաքարշ ակնածության արտահայտությունը դեմքին, կարծես զբաղված էր ոչ թե կանացի փալասների, այլ սրբազան անոթների կտորտանքների հետ։ Նրա ամբողջ կերպարանքում ինչ-որ մեղավոր, ամոթահար բան կար, կարծես այդ թույլ էակի ներկայությամբ ամաչում էր իր հասակից և ուժից...

Երբ Իլովայսկայան պառկեց, նա հանգցրեց մոմը և նստեց աթոռակի վրա, վառարանի մոտ։

— Այդպես, ուրեմն, օրիորդ,— շշնջում էր նա, հաստ ծխախոտը ծխելով և ծուխը վառարանի մեջ փչելով։— Բնությունը ռուս մարդու մեջ դրել է հավատալու արտասովոր ընդունակություն, հետազոտող խելք և մտածողության շնորհք։ Բայց այդ ամենը փշրվում է, հանդիպելով նրա անհոգությանը, ծուլությանը և ցնորական թեթևամտությանը... Այո...

Իլովայսկայան զարմացած նայում էր մթությանը և տեսնում միայն սրբապատկերի վրա կարմիր բիծը և Լիխարևի դեմքի վրա վառարանի լույսի արտացոլումը։ Մթությունը, զանգի ձայնը, բքի մռնչոցը, կաղ տղան, Սաշայի տրտնջոցը, դժբախտ Լիխարևն ու նրա ասածները—այդ բոլորը խառնվում էր իրար, աճում, դառնում մի ահագին տպավորություն, և աստվածային աշխարհը թվում էր նրան ֆանտաստիկական, լի հրաշքներով ու թովիչ ուժերով։ Բոլորը, ինչ նա լսեց քիչ առաջ, հնչում էր նրա ականջներում, և մարդկային կյանքը պատկերանում էր նրան որպես մի սքանչելի, բանաստեղծական հեքիաթ, որը վերջ չունի։

Ահագին տպավորությունն աճում էր ու աճում, պաշարելով նրա գիտակցությունն ու դառնում անուշ երազ։ Իլովայսկայան քնած էր, բայց տեսնում էր կանթեղը և հաստ քիթը, որի վրա թռչկոտում էր կարմիր լույսը։

Նա լսում էր լացի ձայն։

— Թանկագին հայրիկ,— քնքշաբար աղաչում էր մանկական ձայնը,— վերադառնանք հորեղբոր մոտ։ Այնտեղ տոնածառ կա։ Այնտեղ են Ստյոպան և Կոլյան։

— Սիրելիս, ես ի՞նչ կարող եմ անել,— համոզում էր տղամարդու թավ ձայնը։— Հասկացիր ինձ։ Դե՛, հասկացիր։

Ու մանկական լացին միացավ նաև տղամարդունը։ Մարդկային վշտի այդ ձայնը՝ վատ եղանակի ոռնոցի մեջ, դիպավ աղջկա լսելիքին այնպիսի՜ ախորժելի մարդկային երաժշտությամբ, որ նա չդիմացավ հրճվանքին ու նույնպես լաց եղավ։

Հետո նա լսում էր, թե ինչպես մեծ սև սավերը մոտենում էր իրեն, վերցնում հատակից ընկած շալը և փաթաթում իր ոտքերը։

Իլովայսկայային զարթեցրեց մի տարօրինակ մռնչոց։ Նա վեր թռավ տեղից ու զարմացած նայեց իր շուրջը։ Կիսով չափ ձյունով պատած լուսամուտից նայում էր լուսաբացի կապտությունը։ Սենյակում իշխում էր գորշ մշուշ, որի միջից պարզ նշմարվում էր վառարանը, և քնած աղջիկը, և՛ Նասր-Էդդինը։ Վառարանն ու կանթեղը հանգել էին արդեն։ Բոլորովին բաց դռան միջից երևում էր պանդոկի մեծ սենյակը՝ վաճառասեղանով ու ճաշասեղաններով։ Ինչ-որ մարդ, գնչուական բութ դեմքով, զարմացած աչքերով կանգնել էր սենյակի մեջտեղում՝ հալված ձյունից գոյացած ջրի մեջ և փոքրիկ փայտի վրա պահում էր մի կարմիր աստղ։ Նրան շրջապատել էր մանուկների մի բազմություն, արձանի նման անշարժ, ձյունոտված։ Աստղի լույսը, կարմիր թղթի միջից անցնելով, կարմրացնում էր նրանց թաց դեմքերը։ Բազմությունը անկարգ կերպով բղավում էր, ու նրա բղավոցից Իլովայսկայան հասկացավ մի տուն միայն։

Հե՜յ, դու պստիկ ջահել,
Վերցրու մի բարակ դանակ,
Սպանենք, սպանենք ջհուդին,
Նրա վշտահար որդուն...

Վաճառասեղանի մոտ կանգնել էր Լիխարևը, գորովանքով նայում էր երդիչներին և ոտքով համաչափ թփթփացնում։ Տեսնելով Իլովայսկայային, նա ժպտաց ամբողջ դեմքով ու մոտեցավ նրան։ Իլովայսկայան նույնպես ժպտաց։

— Շնորհավոր ձեր տոնը,— ասաց Լիխարևը։— Ես տեսա, դուք լավ ջնած էիք։

Իլովայսկայան նայում էր նրան, լռում ու շարունակում ժպտալ։

Գիշերային խոսակցություններից հետո Լիխարևը նրան թվում էր ո՛չ բարձրահասակ, ո՛չ լայնաթիկունք, այլ փոքրիկ, այնպես, ինչպես փոքրիկ է թվում մեզ այն մեծ շոգենավը, որի մասին ասում են, թե նա լողալով անցել է օվկիանոսը։

— Դե՛հ, իմ գնալու ժամանակն է,— ասաց օրիորդը։— Հարկավոր է հագնվել։ Ասացե՛ք, իսկ դո՞ւք ուր եք գնում այժմ։

— Ե՞ս։ Կլինուշիի կայարանը, այնտեղից էլ՝ Սերգիևո, իսկ Սերգիևոյից քառասուն վերստ ձիով ինչ-որ մի ապուշի, ոմն

գեներալ Շաշկովսկու ածխահանքերը։ Այնտեղ եղբայրներս ինձ համար կառավարչի տեղ են գտել... Ածուխ եմ քանդելու։

— Սպասեցեք, ես այդ ածխահանքերը գիտեմ։ Ախր Շաշկովսկին իմ քեռին է։ Բայց... Ինչո՞ւ եք գնում այնտեղ,— հարցրեց Իլովայսկայան, զարմացած նայելով Լիխարևին։

— Կառավարչի պաշտոնով։ Ածխահանքերը կառավարելու։

— Չեմ հասկանում,— ուսերը թոթվեց Իլովայսկայան։— Դուք գնում եք հանքերը։ Բայց չէ՞ որ այնտեղ մերկ տափաստան է, անմարդաբնակ, այնպես տաղտկալի է այնտեղ, դուք մի օր էլ չեք կարող ապրել։ Այնտեղի ածուխը ղղվելի է, ոչ ոք չի առնում, իսկ իմ քեռին ինքնահավան, բռնակալ մարդ է, սնանկ... Դուք նրանից ոռնիկ էլ չեք ստանա։

— Միևնույն է,— անտարբեր ասաց Լիխարևը։— Ածխահանքերի համար էլ շնորհակալ եմ։

Իլովայսկայան ուսերը թոթվեց և սկսեց հուզված անցուդարձ անել սենյակում։

— Չեմ հասկանում, չեմ հասկանում,— ասաց նա, երեսի մոտ շարժելով մատները։— Դա անկարելի է և... անմտություն։

Հասկացեք, որ դուք, որ դա... դա աքսորից էլ վատթար է, դա կենդանի մարդու համար գերեզման է։ Ա՜խ, տեր աստված,— բորբոքված ասաց նա, մոտենալով Լիխարևին և մատները շարժելով նրա ժպտացող դեմքի առաջ։ Աղջկա վերին շրթունքը դողում էր, գունատվել էր ծակող երեսը։— Դե, երևակայեցեք մերկ տափաստան, միայնություն։ Այնտեղ մարդ չկա, որին մի խոսք ասեք, իսկ դուք հրապուրված եք կանանցով։ Ածխահանքե՞ր և կանա՜յք։

Իլովայսկայան հանկարծ ամաչեց իր դյուրաբորբոքության համար և, շուռ գալով Լիխարևից, քաշվեց դեպի լուսամուտը։

— Չէ՛, չէ՛, ձեզ չի կարելի այնտեղ գնալ,— ասաց Իլովայսկայան, մատը արագ քսելով ապակուն։

Ոչ միայն հոգով, այլև մեջքով էր նա զգում, որ իր հետևում կանգնած էր անսահման դժբախտ, կորած, լքված մի մարդ, իսկ այդ մարդը կարծես չէր գիտակցում իր դժբախտությունը, կարծես նա չէր, որ գիշերը լալիս էր,— ահա նայում էր իր վրա ուս բարեսրտորեն ժպտում։ Ավելի լավ էր նա շարունակեր լալ։ Մի քանի անգամ Իլովայսկայան հուզմունքով անցուդարձ արեց սենյակում, ապա կանգ առավ անկյունում ու սկսեց մտածել։ Լիխարևը ինչ-որ բան էր ասում, բայց նա չէր լսում։ Մեջքը

դարձրած նրան, Իլովայսկայան իր դրամապանակից հանեց մի թղթե քսանհինգանոց, երկար ճմռթեց ձեռքում և, նայելով Լիխարևին, կարմրեց ու դրամը խրեց գրպանը։

Դռան հետևում լսվեց կառապանի ձայնը։ Իլովայսկայան անխոս, խոժոռ, կենտրոնացած դեմքով սկսեց հագնվել։ Լիխարևը փաթաթում էր նրան և ուրախ զրուցում, բայց նրա յուրաքանչյուր խոսքը ծանրությամբ էր նստում աղջկա հոգու վրա։ Ուրախալի չէ ականջ դնել, երբ զվարճանում են դժբախտները կամ մեռնողները։

Երբ կենդանի մարդուն տձև կապոց դարձնելու գործողությունը վերջացավ, Իլովայսկայան վերջին անգամ նայեց «ճամփորդարանին», լուռ կանգնեց մի բոպե և դանդաղ քայլերով դուրս գնաց։ Լիխարևը գնաց նրան ճանապարհ դնելու...

Իսկ դրսում, աստծուն էր հայտնի, թե ինչի համար, ձմեռը մոլեգնում էր։ Փափուկ, խոշոր ձյան ամբողջ ամպերը անհանգիստ պտտվում էին երկրի վրա և իրենց համար տեղ չէին գտնում։ Ձիերը, սահնակները, ծառերը, սյանը կապած եզը՝ ամեն ինչ սպիտակ էր ու թվում էր փափուկ, փետրանման։

— Դե՛, բարի ճանապարհ,— փնթփնթաց Լիխարևը, Իլովայսկայային նստեցնելով սահնակը։— Վատ չհիշեք...

Իլովայսկայան լուռ էր։ Երբ սահնակը շարժվեց ու սկսեց թեքվել ձյունաթմբի մոտ, նա շուռ եկավ նայեց Լիխարևին այնպիսի արտահայտությամբ, կարծես ուզում էր ինչ-որ բան ասել նրան։ Լիխարևը մոտ վազեց, սակայն, օրիորդը ոչ մի խոսք չասաց, այլ միայն նայեց նրան իր երկար թերթերունքների արանքից, որոնց վրա կախվել էին ձյան փաթիլները...

Կարողացա՞վ, արդյոք, նրա զգայուն հոգին իսկապես կարդալ այդ հայացքը կամ, գուցե, նրան խարեց երևակայությունը, բայց Լիխարևին հանկարծ սկսեց այնպես թվալ, որ բավական է ևս երկու-երեք լավ ուժեղ շտրիխներ, և այդ աղջիկը կներեր իր անհաջողությունները, ծերությունը, թշվառությունը և կգար իր հետևից, առանց հարցնելու, առանց դատողության։ Նա տեղում երկար կանգնած, մեխվածի պես նայում էր այն հետքին, որ թողնում էին սահնակի հիմնաձողերը։ Ձյան փաթիլները ագահաբար նստում էին նրա մազերի, մորուքի և ուսերի վրա... Շուտով սահնակի թողած հետքը չքացավ, և նա ինքն էլ, ձյունով ծածկված, սկսեց նմանվել սպիտակ ապառաժի, սակայն նրա աչքերը դեռևս ինչ-որ բան էին որոնում ձյան ամպերում։

ՊՈԼԻՆԿԱ

Ցերեկվա ժամը երկուսն է։ «Փարիզյան նորություններ» գալանտերեայի խանութում, որը գտնվում է պասաժներից մեկում, առևտուրը եռուզեռի մեջ է։ Լսվում է գործակատարների ձայների միալար աղմուկը, մի այնպիսի աղմուկ, որ լինում է դպրոցում, երբ ուսուցիչը ստիպում է բոլոր աշակերտներին ինչ-որ բան բարձրաձայն անգիր անել։ Եվ այդ միալար աղմուկը չեն խախտում ո՛չ տիկինների ծիծաղը, ո՛չ ապակեպատ մուտքի դռան շրխկոցը, ո՛չ էլ խանութում աշխատող տղաների վազվզոցը։

Խանութի մեջտեղում կանգնած է Պոլինկան, դերձակի արհեստանոց պահող Մարիա Անդրեևնայի աղջիկը, փոքրիկ, վտիտ ու խարտիշահեր, և աչքերով որոնում է ինչ-որ մեկին։ Մոտ է վազում սև հոնքերով մի տղա և շատ լուրջ նայելով նրան հարցնում է.

— Ի՞նչ կհրամայեք, օրիորդ։

— Ինձ հետ միշտ Նիկոլայ Տիմոֆեյիչն է զբաղվում,— պատասխանում է Պոլինկան։

Իսկ գործակատար Նիկոլայ Տիմոֆեյիչը, վայելչակազմ, թխադեմ մի տղամարդ, խուճուճ մազերով, մոդայով հագնված, փողկապին մեծ քորոց խրած, արդեն տեղ է բաց արել վաճառասեղանի վրա, վիզը երկարել և ժպտալով նայում է Պոլինկային։

— Պելագեյա Սերգեևնա, հարգանքնե՞րս,— կանչում է նա գեղեցիկ, առողջ բարիտոնով։— Համեցե՛ք։

— Հա՜, բարև,— ասում է Պոլինկան, մոտենալով նրան։— Տեսնում եք, ես նորից ձեզ մոտ... Տվեք ինձ մի որևէ եզերաժանյակ։

— Ձեզ հատկապես ինչի՞ համար։

— Կրծկալի համար, թիկունքի համար, մի խոսքով ամբողջ գարնիտուրի։

— Այս բոպեին։

Նիկոլայ Տիմոֆեյիչը Պոլինկայի առջև դնում է մի քանի տեսակի զարդաքուլ։ Նա ծուլորեն ընտրում և սկսում է սակարկել։

— Ներեցե՛ք, մի ռուբլի բոլորովին թանկ չէ,— համոզում է գործակատարը, ներողամտորեն ժպտալով։— Այս զարդաքուլը ֆրանսիական է, ութեզրանի... Համեցեք, ունենք և սովորակա-

նը, կշեռքի... Դրա արշինը քառասունհինգ կոպեկ է, սա արդեն չունի այն արժանիքը։ Ներեցեք։

— Ինձ հարկավոր է նաև ապակուլունքե կող՝ զարդաքուղե կոճակներով,— ասում է Պոլինկան, կռանալով զարդաքուղի վրա և չգիտես ինչու հառաչում է։— Իսկ չե՞ն լինի արդյոք ձեզ մոտ այս գույնի ապակուլունք գնդիկներ։

— Կա՛։

Պոլինկան ավելի է կռանում վաճառասեղանի վրա և կամացուկ հարցնում է.

— Իսկ այդ ինչո՞ւ դուք, Նիկոլայ Տիմոֆեյիչ, հինգշաբթի օրը մեզնից այդպես վաղ հեռացաք։

— Հը՛մ... Տարօրինակ է, որ այդ նկատել եք,— ասում է գործակատարը քմծիծաղով։— Դուք այնպես էիք հափշտակված պարոն ուսանողով, որ... տարօրինակ է, դուք այդ ինչպե՞ս նկատեցիք։

Պոլինկան կարմրատակում է ու լռում։ Գործակատարը մատների ջղային դողդողոցով փակում է տուփերը և դարսում մեկը մյուսի վրա առանց դրա անհրաժեշտության։ Լռությամբ անցնում է մեկ րոպե։

— Ինձ հարկավոր են նաև ապակուլունք ժանյակներ,— ասում է Պոլինկան, հանցավոր աչքերը բարձրացնելով գործակատարի վրա։

— Ձեզ ինչպիսի՞ն է հարկավոր։ Ապակուլունք շղարշե ժանյակները սև են և գունավոր՝ ամենամոդայիկ զարդանկարներով։

— Իսկ ի՞նչ արժեն դրանք։

— Սևերը ութսուն կոպեկ, իսկ գունավորները երկու ռուբլի հիսուն կոպեկ։ Իսկ ձեզ մոտ ես այլևս երբեք չեմ գա,— կամաց ավելացնում է Նիկոլայ Տիմոֆեյիչը։

— Ինչո՞ւ։

— Ինչո՞ւ։ Շատ պարզ։ Ինքներդ պետք է հասկանաք։ Ինչի՞ համար ինքս ինձ տանջեմ։ Տարօրինակ բան է։ Ինձ համար հաճելի՞ է տեսնել, թե ինչպես այդ ուսանողը ձեր առջև դերասանություն է անում։ Չէ՞ որ ես ամեն ինչ տեսնում եմ ու հասկանում։ Հենց աշնանից նա ինչպես հարկն է սիրահետում է ձեզ և համարյա ամեն օր դուք նրա հետ զբոսնում եք, իսկ երբ նա հյուր է լինում ձեզ մոտ, դուք հառում եք ձեր աչքերը նրան, ինչպես հրեշտակի վրա։ Դուք սիրահարված եք նրան, ձեզ համար

չկա ավելի լավ մարդ, քան նա է, դե՛ սքանչելի է, հարկ էլ չկա խոսելու...

Պոլինկան լուռ է և շփոթմունքով մատները շարժում է վաճառասեղանի վրա։

— Ես ամեն ինչ հրաշալի տեսնում եմ,— շարունակում է գործակատարը։— Էլ ի՞նչ հիմք ունեմ այցելելու ձեզ։ Ես ինքնասիրություն ունեմ։ Ում է հաճելի սայլի հինգերորդ անիվը լինել։ Դուք ի՞նչ էիք հարցնում։

— Մայրիկս ինձ շատ բաներ է պատվիրել գնելու, բայց ես մոռացել եմ։ Փետրազարդ էլ է հարկավոր։

— Ինչպիսի՞ն եք հրամայում։

— Մի քիչ ավելի լավը, որը մոդայիկ է։

— Ամենամոդայիկն այժմ թռչունի փետուրիցն է։ Հասպիսի գույնը, եթե կամենում եք, այժմ մոդայիկ է նաև կանաչ գույնը, այսինքն՝ մուգ կարմիրը դեղինի հետ։ Լայն ընտրություն է։ Իսկ ո՞ւր է տանում այս ամբողջ պատմությունը, ամենևին չեմ հասկանում։ Դուք տհա սիրահարված եք, իսկ ինչո՞վ է դա վերջանալու։

Նիկոլայ Տիմոֆեյիչի գեմքի վրա, աչքերի մոտ, երևում են կարմիր բծեր։ Նա ձեռքի մեջ տրորում է նուրբ խավոտ շղարշաժապավենը և շարունակում է մոթմոթալ.

— Դուք ենթադրում եք ամուսնանա՞լ նրա հետ, ինչ է։ Դե, այդ մասին թողեք ձեր երևակայությունը։ Ուսանողներին արգելվում է ամուսնանալ, և մի՞թե նա ձեզ մոտ նրա համար է գալիս, որ ամեն ինչ աղնվորեն վերջացնի։ Ինչպե՞ս չէ։ Չէ՞ որ նրանք, այդ նույն ուսանողները, մեզ մարդ էլ չեն համարում... Դրանք վաճառականների և դերձակուհիների մոտ գնում են միայն նրա համար, որ նրանց անկրթության վրա ծիծաղեն ու հարբեն։ Իրենց մոտ տանը, լավ տներում ամոթ է խմել, դե՛, իսկ այնպիսի հասարակ, անկիրթ մարդկանց մոտ, ինչպես մենք ենք, ոչ ոքից չեն ամաչում. կարելի է և գլխիվայր քայլել։ Այո՛։ Դուք ինչպիսի՞ փետրազարդ եք վերցնելու։ Իսկ եթե նա ձեզ սիրահետում է և սիրախաղում, ապա հայտնի է ինչի համար է... Երբ բժիշկ կամ փաստաբան դառնա, հիշելու է. «է՜հ, ունեի ես մի ժամանակ, ասելու է, մի խարտիշահերը։ Ո՞ւր է հիմա»։ Հավանորեն և հիմա էլ այնտեղ, իրենց մոտ, ուսանողների մեջ պարծենում է, թե ինքը մի դերձակուհի աղջիկ ունի աչքի տակ առած։

Պոլինկան նստում է աթոռին ու մտածկոտ նայում սպիտակ տուփերի դեզին։

— Ո՛չ, փետրազարդ ես այլևս չեմ վերցնի,— հառաչում է նա։— Թող մայրիկն ինքը վերցնի որը ուզում է, իսկ ես կարող եմ սխալվել։ Դուք ինձ տվեք վեց արշին ծոպեր դիվանագետի զգեստի համար, որի արշինը քառասուն կոպեկ է։ Այդ նույն դիվանագետի համար էլ կոկոսե կոճակներ տվեք, միջանցուկ կարվող ականջիկներով... որ ամուր լինեն...

Նիկոլայ Տիմոֆեյիչը փաթաթում է և՛ ծոպերը, և՛ կոճակները։ Պոլինկան հանցավոր կերպով նայում է նրա դեմքին և ըստ երևույթին սպասում է, որ Նիկոլայ Տիմոֆեյիչը կշարունակի խոսել, բայց նա մռայլորեն լռում է և կարգի բերում փետրազարդը։

— Չմոռանամ նաև կապոտի համար կոճակներ վերցնել...— ասում է Պոլինկան որոշ ժամանակ լռելուց հետո, թաշկինակով սրբելով գունատ շրթունքները։

— Ինչպիսի՞ն եք ուզում։

— Վաճառականի կնոջ համար ենք կարում, ուրեմն, սովորականից արտակարգ աչքի ընկնող որևէ բան տվեք։

— Դե՛, եթե վաճառականի կնոջ համար է, ապա պետք է ընտրել մի քիչ խայտաբղետը։ Ահա կոճակները։ Կապույտ, կարմիր և մոդային ոսկեփայլ գույները զուգակցված։ Ամենաաչքի զարնողը։ Ովքեր ավելի նրբաճաշակ են, նրանք մեզնից վերցնում են սև փայլատները միայն պսպղուն շրջանակով։ Չե՛մ հասկանում։ Մի՞թե ինքներդ չեք կարող դատել։ Դեպի ո՞ւր են տանելու այդ... զբոսանքները։

— Ես ինքս էլ չգիտեմ...— շշնջում է Պոլինկան և կռանում է կոճակների վրա։— Ես ինքս էլ չգիտեմ, Նիկոլայ Տիմոֆեյիչ, ինչ է կատարվում ինձ հետ։

Նիկոլայ Տիմոֆեյիչի թիկունքում, նրան սեղմելով վաճառասեղանին, խցկվելով անցնում է այտմորուքներով պատկառելի գործակատարը և փայլելով ամենանրբին սիրալիրությամբ, ձայն է տալիս.

— Բարի եղեք, տիկին, շնորհ բերել այս բաժինը։ Ջերսե կոֆտոչկաներ կան երեք համարի՝ հարթ, նրբաքուղ և ապակուլունքներով։ Դուք ո՞րը կհրամայեք ձեզ տալ։

Միաժամանակ Պոլինկայի մոտից անցնում է մի հաստ տիկին, որը խոսում է ցածր, գրեթե բաս ձայնով։

— Միայն, խնդրում եմ, դրանք կարովի չլինեն, այլ գործված և պլոմբը լինի ներս ընկած։

— Այնպես ձևացրեք, թե ապրանք եք զննում,— շշնջում է Նիկոլայ Տիմոֆեյիչը, կռանալով դեպի Պոլինկան և բռնի ժպտալով։— Տեր աստված, դուք ինչ-որ գունատ եք և հիվանդ, բոլորովին փոխվել է ձեր դեմքը։ Նա կլքի ձեզ, Պելագեյա Սերգեևնա։ Իսկ եթե ամուսնանա էլ երբևէ, ապա դա կլինի ոչ թե սիրուց, այլ՝ քաղցից, կհրապուրվի ձեր փողերով։ Օժիտով իրեն համար կստեղծի պատշաճ կահավորանք. իսկ հետո ձեզ համար պիտի ամաչի։ Հյուրերից և ընկերներից կթաքցնի ձեզ, որովհետև դուք կրթված չեք, այդպես էլ կասի՝ իմ անճոռնին։ Մի՞թե դուք կարող եք ձեզ պահել բժիշկների կամ փաստաբանների հասարակության մեջ։ Դուք նրանց համար դերձակուհի եք, մի անկիրթ էակ։

— Նիկոլայ Տիմոֆեյի՛չ,— ինչ-որ մեկը կանչում է խանութի մյուս ծայրից։— Ահա մադմուազելը խնդրում է երեք արշին ժապավեն Նիկոլով։ Կա՞ մեզ մոտ։

Նիկոլայ Տիմոֆեյիչը շրջվում է և դեմքը ժպտացնելով կանչում.

— Կա՛։ Կա՛, ժապավեն Նիկոլով, ատաման ատլասով և ատլաս մուրայով։

— Իմիջիայլոց, չմոռանամ, Օլյան խնդրեց իրեն համար սեղմիրան վերցնել,— ասում է Պոլինկան։

— Ձեր աչքերում... արցունք կա,— սարսափում է Նիկոլայ Տիմոֆեյիչը...— Այդ ինչի՞ համար է։ Գնանք կորսետների կողմը, ես ձեզ կբողարկեմ, թե չէ անհարմար է։

Բռնի ժպտալով և չափազանցված համարձակությամբ՝ գործակատարը արագ տանում է Պոլինկային կորսետների բաժինը և մարդկանցից թաքցնում նրան տուփերի բարձր բուրգի հետևում...

— Դուք ինչպիսի՞ սեղմիրան եք հրամայում տալ,— բարձրաձայն հարցնում է նա և անմիջապես շշնջում.— Սրբե՛ք ձեր աչքերը։

— Ինձ... ինձ քառասունութ սանտիմետրանոցը։ Միայն, բարի եղեք, նա խնդրեց աստառը կրկնակի... իսկական կետի բեղով... Ինձ հարկավոր է խոսել ձեզ հետ, Նիկոլայ Տիմոֆեյիչ։ Եկեք այսօր։

— Իսկ ինչի՞ մասին խոսել։ Խոսելու ոչինչ չկա։

— Մենակ դուք եք... ինձ սիրում և, բացի ձեզնից, ոչ ոք չկա, որի հետ խոսեմ։

— Ո՛չ եղեգն է, ո՛չ ոսկոր, այլ իսկական կետի բեղ... Ինչի՞ մասին ենք մենք խոսելու։ Ոչինչ էլ չկա խոսելու։ Այսօր գնալո՞ւ եք նրա հետ զբոսնելու։

— Գնա... լու եմ։

— Դե, էլ ի՞նչ կա այստեղ խոսելու։ Խոսակցություններով չես օգնի... Չէ՞ որ սիրահարված եք։

— Այո...— անվճռական շշնջում է Պոլինկան և նրա աչքերից թափվում են խոշոր արցունքներ։

— Էլ ի՞նչ խոսակցություն կարող է լինել,— մոթմոթում է Նիկոլայ Տիմոֆեյիչը, ջղայնորեն թոթվելով ուսերը և գունատվելով։— Ոչ մի խոսակցություն էլ պետք չէ... Սրբեք ձեր աչքերը, ահա և բոլորը։ Ես... ես ոչինչ չեմ ցանկանում...

Այդ ժամանակ տուփերի բուրգին մոտենում է բարձրահասակ, նիհար գործակատարը և ասում է իր գնորդ կնոջը.

— Չե՞ք կամենում, արդյոք, հրաշալի ձգան՝ գուլպայի կապի համար, արյուն չկանգնեցնող, բժշկության կողմից ընդունված...

Նիկոլայ Տիմոֆեյիչը կտրում է Պոլինկայի դեմը և, աշխատելով թաքցնել նրա ու իր հուզմունքը, դեմքը ծամածռում է ժպտալով ու ասում բարձրաձայն.

— Կա երկու տեսակի ժանյակ, տիրուհի։ Բամբակե և մետաքսյա։ Օրիենտալ, բրիտանական, վալենսիե, կրոշե, տորշոն՝ սրանք բամբակյա են, իսկ ոսկոկո, սուտաժետ, կամբրե՝ սրանք էլ մետաքսյա են... Ի սեր աստծո, սրբեք ձեր արցունքները։ Այստեղ են գալիս։

Եվ տեսնելով, որ արցունքներն, այնուամենայնիվ, դեռ հոսում են, նա շարունակում է է՛լ ավելի բարձրաձայն.

— Իսպանական, ոսկոկո, սուտաժետ, կոմբրե... Գուլպաներ Ֆիլդֆեկոսե, բամբակե, մետաքսյա...

1887

ԲԱԼԽՏ

Նվեր Յա. Պ. Պոլոնսկուն

Մեծ ուղի կոչվող տափաստանային լայն ճանապարհից ոչ հեռու գիշերում էր ոչխարի հոտը։ Հսկում էին երկու հովիվ։ Նրանցից մեկը՝ դողդոջուն դեմքով ութսուն տարեկան մի անատամ ծերունի, պառկել էր ճանապարհի եզրին փորի վրա՝ արմունկները եզնալեզվի փոշոտ տերևներին դրած։ Մյուսը՝ ջահել մի տղա, խիտ, սև հոնքերով ու առանց բեղի, հագին կոշտ քաթան, որից էժանագին պարկեր են կարում, պառկած էր մեջքին, ձեռքերը գլխի տակ, և նայում էր վերև՝ երկնքին, որտեղ նրա դեմքի հենց դիմաց Մեր Կաթինն էր ձգվում և աստղերն էին նիրհում։

Հովիվները մենակ չէին։ Նրանցից մեկ սաժեն հեռավորության վրա՝ ճանապարհը պատած աղջամուղջի մեջ, սևին էր տալիս մի թամբած ձի, իսկ նրա կողքին թամբին հենված կանգնած էր մեծ սապոգները հագին և կարճ բաճկոնով մի տղամարդ, բոլոր նշաններից Լրևում է, որ կալվածատիրոջ հողերի ձիավոր հսկիչն է։ Դատելով նրա ուղիղ ու անշարժ կեցվածքից, շարժուձևից, հովիվների ու ձիու հետ ունեցած վարվելակերպից, նա խոհուն, լրջմիտ և իր արժանապատվությունը գնահատող մարդ էր։ Նույնիսկ մթնում նկատելի էին նրա զինվորական կեցվածքի նշանները, և այն վեհապանծ-ներողամիտ արտահայտությունը, որ ձեռք է բերվում կալվածատերերի ու կառավարիչների հետ հաճախ շփվելու շնորհիվ։

Ոչխարները քնած էին։ Երկնքի արևելյան մասն արդեն ծածկող արշալույսի գորշ ֆոնի վրա, այս ու այն կողմում, երևում էին չքնած ոչխարների ուրվապատկերները։ Նրանք՝ ոտքի վրա էին ու, գլուխները կախ դցած, ինչ-որ բանի մասին էին խորհում։ Նրանց անվերջանալի, դանդաղ մտքերը, որոնք առաջ էին գալիս լայն տափաստանի ու երկնքի, ցերեկվա ու գիշերվա մասին իրենց ունեցած պատկերացմամբ, հավանորեն նրանց զարմացնում և ճնշում էին անդգա դառնալու աստիճան, և այժմ նրանք, կանգնած մնալով քարացած վիճակում, չէին նկատում ո՛չ օտար մարդու ներկայությունը, ո՛չ էլ շների անհանգստությունը։

Նիրհող, անշարժ օդում լսվում էր միապաղաղ աղմուկ, առանց որի տափաստանային ոչ մի գիշեր չեք հանդիպի. ծրդ-

բիդներն անընդհատ ճռռում էին, երգում էին լորերը, և հոտից մեկ վերստ հեռավորության վրա, ձորում, որտեղից գետակն էր հոսում և ուռիներն էին աճել, ծուլորեն դայլայլում էին սոխակները։

Հսկիչը կանգ էր առել, որ ծխամորճի համար հովիվներից կրակ խնդրի։ Նա լուռ վառեց ծխամորճն ու ամբողջը ծխեց, այնուհետև, առանց որևէ խոսք ասելու, հենվեց թամբին ու տարվեց մտքերով։ Երիտասարդ հովիվը ոչ մի ուշադրություն չդարձրեց նրա վրա, նա շարունակում էր պառկած մնալ և դիտել երկինքը, իսկ ծերունին երկար ժամանակ ոտքից գլուխ չափեց հսկիչին ու հարցրեց.

— Մակարովի կալվածի Պանտելեյը հո չե՞ս։

— Հենց ես եմ,— պատասխանեց հսկիչը։

— Գիտեմ որ։ Ձճանաչեցի, կհարստանաս։ Աստծով՝ որտեղի՞ց ես գալիս։

— Կովիլևսկի հողամասից։

— Հեռու է։ Երևի կիսարարո՞վ եք հողամասը տալիս։

— Ջանազան նպատակով։ Ե՛վ կիսարարով, և՛ կապալով, և՛ բանջարանոցի համար։ Ես, ճիշտն ասած, ջրաղաց էի գնացել։

Հոտի գամփռներից մեծ ու պառաված, կեղտոտ-ճերմակ գույնի մի փրչոտ շուն՝ աչքերի ու քթի շուրջ բրդի փնջերով, աշխատելով անտարբեր ձևանալ դեպի կողմնակի մարդկանց ներկայությունը, երեք անգամ հանգիստ պտտվեց ձիու շուրջը և հանկարծ անսպասելիորեն՝ կատաղի ու պառաված խռպոտով հետևի կողմից հարձակվեց ձիավորի վրա. մնացած շները լռիմացան ու թռան տեղերից։

— Սո՛ւս, անիծված,— բղավեց ծերունին, հենվելով արմունկներին։— Սատկես դու, սատանի ծնունդ։

Երբ շները հանգստացան, ծերունին ընդունեց իր նախկին դիրքն ու հանդարտ ձայնով ասաց.

— Իսկ Կովիլիում, հենց համբարձման օրը, Եֆիմ Ժմենյան մեռավ։ Գիշերվա խոսք չի, բայց պետք է ասեմ, որ մեղք է նման մարդկանց մասին հիշատակելը, գարշելի ծերուկ էր։ Երևի լսած լինես։

— Ո՛չ, չեմ լսել։

— Եֆիմ Ժմենյան դարբին Ստյոպկայի քեռին էր։ Ամբողջ շրջանն է նրան ճանաչում։ Ա՛յ թե անիծված ծերուկ էր։ Ես նրան մի վաթսուն տարի է, որ ճանաչում եմ, էն օրվանից, երբ

ֆրանսիացոց մեր հողից քշած ցար Ալեքսանդրին Տագանրոգից սայլով Մոսկվա էին տանում։ Մենք երկուսով գնացինք հանգուցյալ ցարին դիմավորելու, իսկ էն ժամանակ մեծ ճանապարհը ոչ թե Բախմուտ էր տանում, այլ Եսաուլովկայից դեպի Գորոդիշչե, իսկ այնտեղ, որտեղ հիմա Կովիլին է, արոսների բներ էին, ոտդրած տեղը՝ արոսի բույն էր։ Դեռ էն ժամանակ նկատեցի, որ Ժմենյան հոգին ծախել է սատանային ու նրա մեջ չար ոգին է բույն դրել։ Ես էսպես եմ տեսնում՝ եթե գյուղական մակարդակի որևէ մարդ անգամ լուռումունջ է մնում, պառավի փեշակով է զբաղվում ու աշխատում չորգուխ ապրել, ապա էստեղ լավ բան քիչ կա, իսկ Եֆիմկան՝ ջահել հասակից լուռումունջ, լինում էր, որ քեզ վրա ծուռ աչքով էր նայում, միշտ ուռչում ու փքվում էր ոնց որ աքլորը հավի առջև։ Չէիր տեսնի, որ եկեղեցի գնար, կամ տղաների հետ փողոցում զբոսներ, կամ գինետուն մտներ. էդ տեսակ սովորություն չուներ, մեծ մասամբ մենակ կնստեր կամ թե չէ պառավների հետ կփսփսար։ Ջահել տարիքին մտնում էր ուրիշի մոտ մեղվապան ու բոստանչի։ Պատահում էր, որ բարեսիրտ մարդիկ գալիս էին նրա մոտ՝ բոստանը, իսկ նրա ձմերուկներն ու սեխերը շվացնում էին։ Մի օր էլ մարդկանց ներկայությամբ մի գայլաձուկ բռնեց, իսկ ձուկը սկսեց քրքջալ, հո՜-հո՜-հո՜-հո՜...

— Դա պատահում է,— ասաց Պանտելեյը։

Երիտասարդ հովիվը շուռ եկավ կողքի ու կիտելով սև հոնքերը, ուշադրությամբ նայեց ծերունուն։

— Իսկ դու լսե՞լ ես, թե ոնց են ձմերուկները շվացնում,— հարցրեց նա։

— Լսելը չեմ լսել, ստված խնայել է,— հառաչեց ծերունին,— բայց ուրիշներն են ասել։ Զարմանալու բան չկա... Թե չար սատանան ուզենա՝ քարն էլ կսկսի շվացնել։ Ճորտությունից ազատագրվելուց առաջ երեք օր ու գիշեր մեզ մոտ ժեռը որոտում էր։ Ականջովս եմ լսել։ Իսկ գայլաձուկը քրքջում էր, որովհետև Ժմենյան գայլաձուկի փոխարեն սատանա էր բռնել։

Ծերունին ինչ-որ բան հիշեց։ Նա արագորեն բարձրացավ ծնկների վրա և, կարծես թե ցրտից կծկվելով, նյարդայնորեն կախեց ձեռքերը թևքերի մեջ ու պառավ կնոջ արագախոսությամբ սկսեց բլբլացնել.

— Փրկյա մեզ տեր ու ողորմեա։ Մի օր գետափով գնում էի Նովոպավլովկա։ Ամպրոպ էր սպասվում և էնպիսի փոթորիկ

էր, որ երկնային թագուհին փրկի-ազատի... Շտապում եմ ինչ-քան ուժ ունեմ, նայում եմ ու ինչ տեսնեմ. ճանապարհի կողքով փշե թփուտի միջով, փշենին էդ օրերին ծաղկել էր, մի ճերմակ եզ է գնում։ Միտք եմ անում՝ էս ո՞ւմ եզն է, ո՞ր սատանան է սրան էստեղ բերել։ Քայլում է էդ եզը, թափահարում է պոչն ու բա՜-ա՜-ա՜։ Հենց որ էն իքը, սիրելիներս, վազելով հասնում եմ նրան, մոտենում-տեսնում եմ՝ արդեն եզ չի, Ժմենյան է։ Սո՜ւրբ, սո՜ւրբ, սո՜ւրբ։ Խաչակնքեցի երեսս, նա ինձ է նայում և, աչքերը չռած, մոթմոթում է։ Սարսափելի վախեցա։ Կողք-կողքի քայլեցինք, վախենում եմ նրան մի խոսք ասեմ, ամպը որոտում է, կայծակը երկինքն է ձևում, ուռենիները թեքվում են մինչև ջուրը, հանկարծ, սիրելիներս, աստծո անեծքը ինձ լինի, թող առանց խոստովանության մեռնեմ, մի նապաստակ ճանապարհը կտրում-անցնում է... Վազում է, հետո կանգ առավ ու մարդկային լեզվով ասում է. «Բարև՛ ձեզ, գեղջուկներ»։ Կորի՛ր, անիծված,— բղավեց ծերունին փուչոտ շան վրա, որը դարձյալ պտույտ էր գալիս ձիու շուրջը։— Սատկես դու, հա՜։

— Դա պատահում է,— ասաց հսկիչը, դեռ թամբին հենված ու չշարժվելով։ Նա այդ ասաց թմրած ու խուլ ձայնով, որով խոսում են մտքերի մեջ խորասուզված մարդիկ։

— Դա պատահում է,— կրկնեց նա խորիմաստ կերպով ու համոզված։

— Գիշակեր ծերուկ էր, հա՜,— շարունակեց ծերունին արդեն ոչ առաջվա եռանդով։— Ճորտության վերացումից հինգ տարի անց ամբողջ համայնքը դիվանատան մեջ նրան ծեծեց, և նա իր վրեժը լուծելու համար վերցրեց ու ամբողջ Կովիլին վարակեց բկացավով։ Այդ տարի շատ անթիվ-անհաշիվ մարդ մեռավ, կարծես խոլերա լիներ...

— Իսկ նա ո՞նց վարակ տարածեց,— հարցրեց երիտասարդ հովիվը, կարճատև լռությունից հետո։

— Հայտնի է ոնց։ Այստեղ մեծ խելք չի պահանջվում, ցանկություն է պետք միայն։ Ժմենյան մարդկանց օձի ճարպով էր մեռցնում։ Իսկ դա այնպիսի միջոց է, ոչ միայն ճարպից, այլ հենց միայն հոտից մարդիկ մեռնում են։

— Դա ճիշտ է,— համաձայնեց Պանտելեյը։

— Տղաներն էն ժամանակ ուզում էին նրան սպանել, բայց ծերունիները թույլ չտվին։ Նրան չէր կարելի սպանել. նա գիտեր, թե որտեղ գանձեր կան։ Բացի նրանից, ոչ ոք չգիտեր։ Այստեղ

գանձերը կախարդված են, այնպես, որ կգտնես, բայց չես տեսնի, իսկ նա տեսնում էր։ Եղել են դեպքեր, որ քայլում է նա գետափով կամ անտառի միջով, իսկ թփուտների ու ժայռերի տակ պսպղում են կրակներ, կրակներ, կրակներ... Կրակներն էն տեսակ են, ոնց որ քուքուրթից լինեն։ Ինքս եմ տեսել։ Բոլորն էլ սպասում էին, թե Ժմենյան մարդկանց ցույց կտա գանձերի տեղը կամ ինքը կփորի-կհանի, իսկ նա, ոնց որ ասում են, դեզի վրա նստած շան պես էր՝ ո՛չ ինքն էր ուտում, ո՛չ էլ ուրիշներին էր տալիս, ու էդպես էլ մեռավ. ո՛չ ինքը գետնից դուրս բերեց, ո՛չ էլ մարդկանց ցույց տվեց։

Ջիավոր հսկիչը վառեց ծխամորճը և մի ակնթարթ լուսավորեց իր մեծ բեղերն ու սրածայր, խիստ պատկառելի տեսք ունեցող քիթը։ Լույսի մանր օղակները նրա ձեռքից ցատկեցին դեպի գլխարկը, թամբի վրայով վազեցին ձիու մեջքով ու անհետացան ականջների մոտ՝ բաշի մեջ։

— Այս կողմերում գանձեր շատ կան,— ասաց նա։

Ու ծուխը դանդաղորեն ներս քաշելով, նա նայեց իր շուրջը, հայացքը բևեռեց շառագունվող արևելքի վրա ու ավելացրեց.

— Պետք է որ լինեն գանձեր։

— Ինչ խոսք,— հառաչեց ծերունին։— Ամեն բանից երևում է, որ կան, բայց հանող չկա, հոգիս։ Ոչ ոք իսկական տեղը չի իմանում, և մինչև օրս էլ համարյա բոլոր գանձերը կախարդված են։ Դրանք գտնելու և տեսնելու համար պետք է թալիսման ունենալ, իսկ առանց թալիսմանի ոչինչ անել չես կարողանա, երիտասարդ։ Ժմենյան թալիսման ուներ, բայց մի՞թե այդ սատանի ծնունդից կարող էիր ձեռք գցել։ Նա հենց պահում էր դրանք, որ ուրիշի ձեռքը չընկնեն։

Երիտասարդ հովիվը մեկ-երկու քայլ սողալով մոտեցավ ծերունուն ու գլուխը հենելով բռունցքներին, իր անշարժ հայացքը հառեց նրա վրա։ Նրա սև աչքերում փայլեց վախի ու հետաքրքրության մանկական արտահայտություն և, ինչպես թվում էր այդպաբացի լույսի տակ, այդ արտահայտությունը երկարացրել ու տափակացրել էր նրա երիտասարդ, կոպտացած, խոշոր դիմագծերը։ Նա լարված լսում էր։

— Գրքերում էլ է գրված, որ այս տեղերում գանձեր շատ կան,— շարունակեց ծերունին։— Ինչ խոսք... այդ մասին կասկած անգամ չի կարող լինել։ Նովոպավլովկայի մի ծեր զինվորի Իվանովկայում ցույց են տվել մի թուղթ, իսկ այդ թղթում տրպ-

ված է եղել նաև տեղի մասին և նույնիսկ քանի փութ ոսկի կա և ինչ ամանի մեջ։ Այդ թղթով գանձը վաղուց դուրս կբերեին, բայց գանձը կախարդված է, մոտենալ չես կարող։

— Բա ի՞նչ պատճառով մոտենալ չես կարող, պապի,— հարցրեց երիտասարդը։

— Հավանաբար, մի որևէ պատճառ կա, զինվորը չասաց։ Կախարդված է... Թալիսման է պետք։

Ծերունին ոգևորությամբ էր խոսում, կարծես անցորդի առաջ սիրտն էր բաց անում։ Անսովոր լինելով երկար ու արագ զրուցելու, նա խոսում էր քթի մեջ, կակազում էր և, զգալով իր խոսքի թերությունը, ջանում էր զարդարել գլխի, ձեռքերի և նիհար ուսերի շարժումներով։ Ամեն մի շարժման ժամանակ նրա քաթանե շապիկը ծալծլվում էր, սողալով իջնում ուսերի վրա և մերկացնում արևից ու ծերությունից սևացած մեջքը։ Նա շապիկը վեր էր քաշում, բայց դարձյալ իսկույն իջնում էր։ Վերջապես, ծերունին կարծես չենթարկվող շապկից համբերությունը կորցնելով, ոտքի թռավ ու դառնությամբ սկսեց խոսել.

— Բախտ գոյություն ունի, բայց ինչ օգուտ, քանի որ նա հողի մեջ է թաղված։ Այնպես էլ հարստությունը իզուր տեղը կորչում է, առանց որևէ օգուտի, ոնց որ մղեղ կամ ոչխարի կտտոր։ Իսկ բախտ ինչքան ուզես, այնքան շատ է, երիտասարդ, որ ամբողջ շրջակայքին բավական կլիներ, բայց այդ բախտին ոչ մի շունչ չի արժանանում։ Մարդիկ այնքան պիտի սպասեն, որ վերջը դրանք պաները հողի միջից դուրս բերեն կամ պետությունը խլի ձեռքից։ Պաներն արդեն սկսել են թմբերը փորել... Հոտն առել են։ Նրանք նախանձում են գյուղացու բախտին։ Պետությունն էլ իր հաշիվը գիտե։ Օրենքում գրված է, որ գյուղացիներից եթե մեկնումեկը գանձ գտնի, ապա պետք է իշխանությանը ներկայացնի։ Դե, նրանք իրենց ականջը կտեսնեն, այդ բանը չեն տեսնի։ Կա խմիչք հարմար, բայց ոչ ձեզ համար։

Ծերունին արհամարհանքով ծիծաղեց ու նստեց գետնին։ Հսկիչը ուշադրությամբ լսում էր ու համաձայնում, սակայն, դատելով նրա կերպարանքից ու լռությունից, երևում էր, որ այն բոլորը, ինչ նրան պատմում էր ծերունին, նրա համար նորություն չէր, որ վաղուց նա արդեն խորհել էր և գիտեր ավելի շատ բան, ինչ հայտնի էր ծերունուն։

— Իմ կյանքում ես, ճիշտն ասած, մոտ տասը անգամ բախտ եմ փնտրել,— ասաց ծերունին ամաչկոտությամբ քորվելով։— Իսկական տեղերում եմ փնտրել, բայց, ինչպես երևում է, ամեն անգամ հանդիպել եմ կախարդված գանձերի։ Իմ հերն էլ է փնտրել, ախպերս էլ է փնտրել. մաղ անգամ չեն գտել, էնպես էլ մեռան առանց բախտի։ Ախպորս՝ Իլյային, աստված հոգին լուսավորի, մի վանական ասել էր, որ Տագանրոգում, բերդի մեջ, մի տեղում երեք քարի տակ գանձ կա, որ այդ գանձը կախարդված է, իսկ էդ օրերին,— հիշում եմ դա, երեսունութ թվականին էր,— Մատվեև Կուրգանում մի հայ էր ապրում, թալիսմաններ էր ծախում։ Իլյան առնում է մի թալիսման, իրեն հետ վերցնում է երկու տղաների ու գնում Տագանրոգ։ Նոր է ախպերս մոտենում բերդի այդ տեղին, ու ինչ տեսնի, հենց էնտեղ զինվոր է կանգնած հրացանը ձեռքին։

Խաղաղ օդում, տարածվելով տափաստանի վրա, լսվեց մի ձայն։ Հեռվում մի ինչ-որ բան ահեղ ձայնով դղրդաց, դիպավ քարին ու տափաստանով մեկ լսվեց՝ «թա՜խ, թա՜խ, թա՜խ»։ Երբ ձայնը լռեց, ծերունին հարցական հայացքով նայեց անտարբեր, անշարժ կանգնած Պանտելիչին։

— Դա երևի ածխահանքում վագոնիկը պոկվեց,— խորհելուց հետո ասաց երիտասարդը։

Լույսն արդեն բացվում էր։ Ծիր Կաթինը գունատվում էր ու ձյան պես հետզհետե հալչում, կորցնելով իր ուրվագծերը։ Երկինքը դառնում էր մռայլ ու պղտոր, երբ չես կարողանում որոշել՝ պարզ է երկինքը, թե ամբողջովին ծածկված է ամպերով, և միայն արևելքում նշմարվող պարզ, պսպղուն շերտից և տեղ-տեղ դեռ մնացած աստղերից կարող ես կռահել, թե ինչ է կատարվում։

Վաղորդյան առաջին հովը առանց շրշյունի, զգուշորեն օրորելով հողմափայտերն ու անցած տարվա խոտերի դեղնած ցողունները, սահեց-անցավ ճանապարհի եզրով։

Ջիավոր հսկիչը սթափվեց մտքերից ու գլուխը թափահարեց։ Երկու ձեռքով նա ցնցեց թամբը, տնտղեց ձիու փորկապը և կարծես դեռ չվճռելով՝ հեծնի ձիուն թե ոչ, դարձյալ մտազբաղ կանգ առավ։

— Այո,— ասաց նա,— աչքդ տեսնում է, բայց բերանդ կարոտ է... Բախտ գոյություն ունի, բայց փնտրելու խելք չկա։

Եվ երեսը դարձրեց հովիվների կողմը։ Նրա խիստ դեմքը թախծոտ էր ու ծաղրական, ինչպես լինում է հիասթափված մարդու դեմքը։

— Այո, այնպես էլ կմեռնես առանց իմանալու, թե ինչ է

իրենից ներկայացնում քո բախտը...— ասաց նա ընդմիջումներով, ձախ ոտքը բարձրացնելով դեպի ասպանդակը։— Ով երիտասարդ է, գուցե արժանանա դրան, իսկ մենք այդ մասին մտածելն անգամ պետք է մոռանանք։

Շփելով իր երկար, ցողով ծածկված բեղերը, նա ծանրորեն հեծավ ձիուն և այնպիսի դեմքով, կարծես մի ինչ-որ բան էր մոռացել կամ ասելիքը կիսավարտ էր թողել, աչքերը կկոցեց դեպի հեռուն։ Կապտավուն հեռվում, որտեղ վերջին տեսանելի թումբը ձուլվում էր մշուշի հետ, ոչինչ չէր շարժվում. պահակաթմբերն ու գերեզմանաթմբերը, որոնք այս ու այն կողմից վեր էին խոյանում հորիզոնի ու անծայրածիր տափաստանի վրա, խիստ ու մեռած տեսք ունեին։ Նրանց անշարժության և լռության մեջ զգացվում էին դարերը և լիակատար անտարբերություն դեպի մարդը։ Կանցնի ևս հազար տարի, միլիարդներով մարդիկ կմեռնեն, իսկ նրանք դեռ կմնան կանգնած, ինչպես եղել են կանգնած, ամենևին չափսոսալով մեռածներին, առանց հետաքրքրվելու կենդանի մարդկանցով, և ոչ ոք չի իմանալու, թե ինչո՞ւ են դրանք կանգնած և տափաստանի ո՞ր գաղտնիքն են պահել իրենց տակ։

Արթնացած սերմնաքաղ ագռավները լռությամբ ու միայնակ թռչում էին տափաստանի վրայով։ Ո՛չ այդ երկարամյա թռչունների դանդաղ թռիչքի, ո՛չ ամեն օր կրկնվող առավոտի, ո՛չ էլ տափաստանի անսահմանության մեջ— ոչ մի բանում իմաստ չկար։ Հսկիչը ծիծաղեց ու ասաց.

— Ա՜յ թե լայնարձակություն է, ողորմած տեր։ Դե գնա ու գտիր քո բախտը։ Այստեղ,— շարունակեց նա, ձայնը ցածրացնելով ու լուրջ դեմք ընդունելով,— այստեղ անվիճելիորեն թաղված է երկու գանձ։ Աղաներն այդ մասին չգիտեն, իսկ հասակավոր գեղջուկները, մանավանդ զինվորները, այդ գանձերի մասին ճիշտ տեղեկություն ունեն։ Ինչ-որ այս տեղերում, ահա այս լեռնագոտու վրա (ձիավոր հսկիչը մտրակն ուղղեց մի կողմ) օրերից մեկում ավազակները հարձակվել են ոսկով բարձված քարավանի վրա։ Այդ ոսկին Պետերբուրգից տանում էին Պյոտր կայսրին, որն այն տարի Վորոնեժում նավատորմ էր կառուցում։ Ավազակները սպանել են տանողներին, իսկ ոսկին հորել, բայց հետո էլ չեն գտել։ Մի ուրիշ գանձ էլ մեր Դոնի կազակներն են հորել։ Տասներկու թվականին նրանք ֆրանսիացուց թալանել էին անչափ-անսահման ամեն տեսակի հարստություն, ոսկի ու արծաթ։ Երբ տուն էին վերադառնում, ճանապարհին լսեցին, որ իշխանությունը ուզում է նրանցից խլել ամբողջ ոսկին ու արծաթը։ Փոխանակ այդ հարստությունը իզուր տեղը իշխանությանը հանձնելու, նրանք, այդ ղոչաղները, վերցրել են ու ամբողջ հարստությունը հորել, որ գոնե իրենց երեխաներին բաժին ընկնի, բայց որտեղ են հորել՝ հայտնի չի։

— Ես լսել եմ այդ գանձերի մասին,— մռայլությամբ փընթփընթաց ծերունին։

— Այո,— դարձյալ մտածմունքով տարվեց Պանտելեյը։— Այդպե՞ս...

Տիրեց լռություն։ Հսկիչը մտախոհ հեռուն նայեց, ժպտաց ու շարժեց սանձը այն նույն արտահայտությամբ, կարծես ինչ-որ բան էր մոռացել կամ պատմածը թողել կիսավարտ։ Ձին չկամությամբ կամաց առաջ քայլեց։ Հարյուր քայլի չափ գնալով, Պանտելեյը վճռականորեն թափահարեց գլուխը, սթափվեց մտքերից ու, ձին մտրակելով, քառատրոփ սլացավ առաջ։

Հովիվները մնացին մենակ։

— Պանտելեյն էր, Մակարովի կալվածից,— ասաց ծերունին։— Տարեկան հարյուր հիսուն ռուբլի է ստանում, կերուխումն էլ տիրոջ հաշվին։ Կրթված մարդ է...

Արթնացած ոչխարները, դրանք մոտ երեք հազար հատ էին, չկամությամբ, անգործությունից սկսեցին արածել ցածրանիստ, կիսով չափ ծեծված կանաչը։ Արևը դեռ չէր ծագել, բայց արդեն նշմարվում էին բոլոր թմբերն ու հեռավոր ամպի նմանվող Սաուր-Մոգիլան իր սուր ծայրով։ Եթե բարձրանաս այդ Մոգիլայի վրա, նրա գագաթից կերևա երկնքի նման հարթ ու անծայրածիր հարթավայրը, կերևան կալվածատիրական ագարակները, գերմանացիների ու մալականների խուտորները, գյուղեր, իսկ հեռատես կալմիկը նույնիսկ կտեսնի քաղաքն ու երկաթգծի գնացքները։ Միայն այստեղից էլ երևում է, որ աշխարհիս երեսին, բացի լռակյաց տափաստանից ու դարավոր գերեզմանաթմբերից, կա նաև մի ուրիշ կյանք, որն անտարբեր է դեպի հողի տակ պահված բախտն ու ոչխարների խոհերը։

Ծերունին շոշափելով գտավ իր կողքի «գեղիկան»՝ վերևի մասում կարթաձև ծայրով երկար մահակն ու ոտքի ելավ։ Նա լուռ էր ու մտազբաղ։ Երիտասարդի դեմքից դեռ չէր ջնջվել վախի ու հետաքրքրության մանկական արտահայտությունը։ Նա գոնը-

վում էր լսածների տպավորության տակ և սպասում էր նոր պատմությունների։

— Պապի՛,— հարցրեց նա, ոտքի ելնելով ու վերցնելով իր գեղիկան,— բա քո եղբայր Իլյան զինվորի հետ ո՞նց վարվեց։

Մերունին հարցը լսեց։ Նա ցրված մտքերով նայեց ջահելին ու շշնջալով պատասխանեց.

— Իսկ ես, Սայնկա, անվերջ մտածում եմ այն թղթի մասին, որ Իվանովկայում զինվորին են ցույց տվել։ Ես Պանտելեյին չասացի, աստված նրա հետ, իսկ թղթում նշված է մի էնպիսի տեղ, որ կինարմատն անգամ կարող է գտնել։ Գիտե՞ս, թե ինչ տեղում է՝ Բոգատայա Բալոչկայում, պատկերացրու, այն տեղում, որտեղ ձորը սագի թաթի նման բաժանվում է երեք ձորակների։ Ուրեմն մեջտեղի ձորակումն է։

— Հը, ոնց է, փորելո՞ւ ես։

— Բախտս կփորձեմ...

— Պապի, իսկ ի՞նչ ես անելու գանձը, երբ գտնես։

— Ե՞ս,— ծիծաղեց Մերունին։— Հը՛մ... Թող գտնեմ միայն, ա՛յ թե բոլորի հերը կանիծեմ... Հը՛մ... Գիտեմ, թե ինչ կանեմ...

Մերունին չկարողացավ պատասխանել, թե գանձն ինչ է անելու, եթե գտնի։ Իր ամբողջ կյանքում այդ հարցը նրա առջև ծագեց այդ առավոտյան, հավանորեն առաջին անգամ, իսկ դատելով նրա դեմքի անհոգ ու անտարբեր արտահայտությունից, դա նրան կարևոր և խորհրդածելու արժանի չէր թվում։ Սայնկայի գլխում պտտվում էր նաև մի ուրիշ տարակուսանք. ինչի՞ց է, որ գանձերը փնտրում են միայն մերունիները և ի՞նչ արժեք ունի մարդկանց կյանքում եղած երջանկությունը, երբ նրանք ամեն օր մերությունից կարող են մեռնել։ Սակայն այդ զարմանքը Սայնկան չէր կարողանում վերածել հարցի, բացի այդ, հազիվ թե Մերունին գտներ դրա պատասխանը։

Մեղմ մթությամբ շրջապատված, երևաց ծիրանագույն հսկա արևը։ Լույսի դեռ սառը լայն շերտերը, լողալով ցողապատ կանաչի ծալքերում, ձգվելով և ուրախ տեսքով, կարծես ջանալով ցույց տալ, որ դրանից իրենք չեն հոգնել, սկսեցին փռվել հողի երեսին։ Արծաթազօծ եղևնախոտը, շնասոխի երկնագույն ծաղիկները, դեղին գոնգեղը, տերեփուկները՝ այդ ամենը երփներանգ գույներով ուրախ շողացին, արևի լույսը համարելով իրենց սեփական ժպիտը։

Մերունին ու Սայնկան միմյանցից հեռացան և կանգնեցին

հոտի երկու կողմը։ Երկուսն էլ կանգնել էին. ինչպես մի-մի սյուներ, անշարժ, նայելով գետնին ու խորհելով։ Առաջինը կլանված էր այն ամենով, ինչ խոսվել էր գիշերը։ Նրան հետաքրքրքրում էր ոչ թե ինքը՝ բախտը, որը նրան պետք չէր ու անհասկանալի էր, այլ մարդկային բախտի երազական ու հեքիաթային կողմը։

Հարյուրի չափ ոչխարներ ցնցվեցին ու մի տեսակ անհասկանալի սարսափով բռնված, կարծես ազդանշանով, հոտից մի կողմ նետվեցին։ Սայնկան նույնպես, կարծես ոչխարների անվերջանալի ու դանդաղ մտքերը մի վայրկյան նրան էլ համակեցին, նույն անհասկանալի, անասնական սարսափով նետվեց մի կողմ, բայց իսկույն ուշքի եկավ ու բղավեց։

— Այ լիրբ-անպիտանն է՛ր, կատաղե՞լ եք, ի՛նչ է։ Սատկե՛ք դուք, հա՛։

Իսկ երբ արևը, խոստանալով երկարատև ու անհաղթահարելի տոթ, սկսեց գետինն այրել, կենդանի ամեն բան՝ ինչ գիշերը շարժվում էր ու ձայներ հանում, բոլորն ընկան թմրած վիճակի մեջ։ Մերունին ու Սայնկան իրենց գեղիկաներով կանգնած էին հոտի հակադիր ծայրերում, կանգնած էին անշարժ, ինչպես աղոթող ֆաքիրներ, և կենտրոնացած խորհում էին։ Նրանք այլևս միմյանց չէին նկատում և նրանցից յուրաքանչյուրն ապրում էր իր անձնական կյանքով։ Ոչխարները նույնպես մտածում էին...

1887

ԴՐԱՄԱ

— Պավել Վասիլիչ, այնտեղ մի ինչ-որ տիկին է եկել, ձեզ է հարցնում,— հայտնեց Լուկան։— Արդեն մի ամբողջ ժամ է, սպասում է...

Պավել Վասիլևիչը նոր էր ավարտել նախաճաշը։ Լսելով տիկնոջ մասին, նա հոնքերը կիտեց և ասաց.

— Գրո՛ղը տանի նրան։ Ասա, որ ես զբաղված եմ։

— Նա, Պավել Վասիլիչ, արդեն հինգ անգամ է, որ գալիս է։ Ասում է, շատ անհրաժեշտ է ձեզ տեսնել... Քիչ է մնում, թե լաց լինի...

— Հը՛մ... Դե լավ, հրավիրիր առանձնասենյակ։

Պավել Վասիլևիչը առանց շտապելու հագավ սերթուկը, մի ձեռքը գրիչ, մյուսը՝ գիրք վերցրեց և ձևացնելով, թե խիստ զբաղված է, մտավ առանձնասենյակ։ Այստեղ նրան արդեն սպասում էր հյուրը՝ բարձրահասակ, լիքը կազմվածքով մի տիկին, կարմիր, մսոտ դեմքով և ակնոցով. արտաքուստ խիստ պատկառելի էր նա և հագել էր ավելի քան պատշաճ կերպով (նա չորս տակ նեղացրած ետաբարձիկ ուներ, իսկ գլխին շիկակարմիր թռչնով զարդարված գլխարկ)։ Տեսնելով տանտիրոջը, տիկինը աչքերը սահեցրեց դեպի ճակատը և ձեռքերը աղոթելու նման դրեց կրծքին։

— Դուք, իհարկե, չեք հիշում ինձ,— սկսեց նա տղամարդու բարձր ձայնով և նկատելիորեն հուզվելով։— Ես... ես բախտ եմ ունեցել ծանոթանալ ձեզ հետ Խրուցկիների մոտ... Ես Մուրաշկինան եմ...

— Հա-հա՜... ը՜մ... Նստեցեք։ Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

— Գիտեք, ես... ես...— շարունակեց տիկինը նստելով և է՛լ ավելի հուզվելով։— Դուք ինձ չեք հիշում... Ես Մուրաշկինան եմ... Գիտեք, ես ձեր տաղանդի մեծ երկրպագուներից եմ և միշտ հրճվանքով եմ կարդում ձեր հոդվածները... Չկարծեք, թե շողոքորթում եմ, աստված մի արասցե, ես միայն պատշաճ հարգանք եմ մատուցում... Միշտ, միշտ կարդում եմ ձեր գրածները։ Մասամբ ինքս էլ զուրկ չեմ հեղինակելուց, այսինքն, իհարկե... ես չեմ համարձակվում ինքս ինձ գրող համարել, բայց... այնուամենայնիվ, ինքս էլ կարող եմ իմ փեթակից մի կաթիլ մեղր տալ։ Տարբեր ժամանակ ես մանկական երեք պատմվածք եմ տպագրել, դուք իհարկե կարդացած չեք լինի... շատ թարգմանություններ եմ կատարել և... և իմ հանգուցյալ եղբայրն էլ աշխատում էր «Դելո»-ում։

— Այդպես-ս... Ը՜-ը՜... Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

— Տեսնո՞ւմ եք... (Մուրաշկինան խոնարհեց աչքերը և կարմրեց)։ Ես ծանոթ եմ ձեր տաղանդին... ձեր հայացքներին, Պավել Վասիլևիչ, և ես կցանկանայի իմանալ ձեր կարծիքը կամ, ավելի ճիշտ... խնդրել ձեր խորհուրդը։ Ես, պետք է ասել, pardon pour l'expression[1], ազատվել եմ՝ ծնելով մի դրամա,

[1] Ներեցեք արտահայտության (ֆրանս.)։

և, նախքան գրաքննիչին ուղարկելը, կցանկանայի ձեր կարծիքն իմանալ։

Մուրաշկինան ջղաձգորեն, թակարդն ընկած թռչնի նման, քրքրեց զգեստի ծալքերը և հանեց բավական հաստափոր մի տետրակ։

Պավել Վասիլևիչը սիրում էր միայն իր հոդվածները, իսկ ուրիշներինը, որոնք նա առիթ էր ունենում կարդալ կամ լսել, նրա վրա այնպիսի տպավորություն էին գործում, կարծես ուղիղ իր դեմքին ուղղում էին թնդանոթի փողը։ Տետրակը նկատելով, նա սարսափեց և շտապեց ասել.

— Լավ, թողեք... ես կկարդամ։

— Պավել Վասիլևի՛չ,— նվազկոտ ձայնով ասաց Մուրաշկինան, բարձրանալով և ձեռքերը աղոթելու նման ծալելով։— Ես գիտեմ, դուք զբաղված եք... ձեր յուրաքանչյուր րոպեն թանկ է, և գիտեմ, դուք հիմա ձեր մտքում ինձ սատանի ծոցն եք ուղարկում, բայց... բարի եղեք, թույլ տվեք ինձ հենց հիմա կարդալ ձեզ իմ դրաման... Բարի եղեք։

— Ես շատ ուրախ եմ...— կմկմաց Պավել Վասիլևիչը,— բայց, տիկին, ես... ես զբաղված եմ... Ես... ես այժմ պետք է մեկնեմ։

— Պավել Վասիլևի՛չ,— հեծեծաց տիկինը և նրա աչքերը լցվեցին արցունքով։— Ես զոհաբերություն եմ խնդրում։ Ես աներես եմ, պնդերես, բայց եղեք մեծահոգի։ Վաղը ես մեկնում եմ Կազան և այսօր կցանկանայի իմանալ ձեր կարծիքը։ Կես ժամ ինձ նվիրեցեք ձեր ուշադրությունը... միայն կես ժամ։ Աղաչում եմ ձեզ։

Պավել Վասիլևիչը հոգով փալասի մեկն էր և չէր կարողանում մերժել։ Երբ նրան թվաց, թե տիկինը պատրաստվել է արտասվելու և չոքելու իր առաջ, ամոթահար եղավ և շփոթված փնթփնթաց։

— Լավ... համեցեք... ես կլսեմ... Կես ժամ պատրաստ եմ։

Մուրաշկինան ուրախ բացականչեց, հանեց գլխարկը և, նստելով, սկսեց կարդալ։ Սկզբում նա կարդաց, թե ինչպես ծառա-սպասավորը և աղախինը շքեղ ընդունարանը հավաքելով, երկար-բարակ խոսում են օրիորդ Աննա Սերգեևնայի մասին, որը գյուղում դպրոց և հիվանդանոց է հիմնել։ Աղախինը, երբ ծառան դուրս է գնում, մի մենախոսություն է արտասանում, թե գիտությունը լույս է, իսկ տգիտությունը՝ խավար։ Հետո Մու-

բաշկինան ընդունարան է բերում ծառային և նրան էլ ստիպում է մի երկար մենախոսություն ասել տիկին-գեներալի մասին, որը տանել չի կարող իր աղջկա գաղափարները և նրան ուզում է ամուսնացնել մի հարուստ կամեր-յունկերի հետ, և գտնում է, որ ժողովրդի փրկությունը միայն ծայրահեղ տգիտության մեջ է։ Հետո, երբ ծառաները դուրս են գնում, հայտնվում է ինքը՝ օրիորդը, և հանդիսականներին հայտնում, որ չի քնել ամբողջ գիշերը և մտածել է խեղճ ուսուցչի որդի Վալենտին Իվանովի մասին, որը ձրիաբար օգնում է իր հիվանդ հորը։ Վալենտինը տիրապետել է բոլոր գիտություններին, բայց չի հավատում ո՛չ բարեկամության, ո՛չ սիրո, կյանքում ոչ մի նպատակ չի տեսնում և ծարավի է մահվան, ուստի ինքը՝ օրիորդը, պետք է փրկի նրան։

Պավել Վասիլևիչը լսում էր և թախծոտ հիշում իր բազմոցը։ Նա չարությամբ դիտում էր Մուրաշկինային և զգում, թե ինչպես նրա տղամարդկային բարձր ձայնը զարնվում է իր թմբկաթաղանթներին, ոչինչ չէր ըմբռնում և մտածում էր.

«Ո՞ր սատանան բերեց քեզ... Շատ պետքս է լսել քո անհեթեթությունները... է, ինչո՞վ եմ ես մեղավոր, որ դու դրամա ես գրել։ Տեր աստված, ինչ էլ հաստ տետրակ է։ Այ քեզ պատի՛ժ...»։

Պավել Վասիլևիչը նայեց պատուհանների միջև ընկած նեղ պատին, ուր կախված էր իր կնոջ նկարը և հիշեց, որ կինը պատվիրել էր իրեն գնել ու ամառանոց բերել հինգ արշին ժապավենաթել, մի ֆունտ պանիր ու ատամի փոշի։

«Չլինի թե հանկարծ կորցնեմ ժապավենաթելի նմուշը,— մտածում էր նա։— Ո՞ւր դրեցի։ Կարծեմ, կապույտ պիջակիս գրպանը։ Իսկ այս անզգամ ճանճերը էլի բազմակետերով զարդարել են կնոջս նկարը։ Պետք է պատվիրել Օլգային, որ ապակին լվանա... XII տեսիլն է կարդում, նշականում է, շուտով առաջին գործողությունը կվերջանա։ Մի՞թե այս շոգին, այն էլ այսպիսի մարմնեղությամբ, ինչպիսին այս մսացուն է, կարելի է ոգեվորվել։ Փոխանակ դրամա գրելու, թող սառը մածնաբրդոշ ուտեր ու գնար քնելու մառանում...»։

— Դուք չե՞ք գտնում, որ այս մենախոսությունը մի քիչ երկար է,— հանկարծ հարցրեց Մուրաշկինան, աչքերը բարձրացնելով։

Պավել Վասիլևիչը չէր լսել մենախոսությունը։ Նա շփոթվեց

և ասաց մի այնպիսի հանցավոր եղանակով, կարծես ոչ թե այդ տիկինը, այլ ինքն էր գրել մենախոսությունը.

— Ո՛չ, ո՛չ, ամենևին... Շատ հաճելի է...

Մուրաշկինայի դեմքը փայլեց երջանկությունից, նա շարունակեց կարդալ.

— Անն.— Վերլուծությունը ձեզ կործանեց։ Դուք շատ վաղ եք դադարել սրտով ապրելուց և հավատացել եք մտքին։— Վալենտին.— Ի՞նչ բան է սիրտը։ Դա անատոմիական մի ըմբռնում է։ Ինչպես այն բանի մի պայմանական տերմին, որ կոչվում է զգացմունք, ես չեմ ընդունում այդ։— Անն (շփոթվելով).— Իսկ սե՞րը, մի՞թե նա էլ գաղափարների զուգորդության արդյունք է։ Ասացեք անկեղծորեն, սիրե՞լ եք երբևիցե։— Վալենտին (դառնացած).— Ձեռք չտանք հնին, դեռ չսպիացած վերքերին (դադար)։ Ի՞նչ եք մտածում այդպես։— Անն.— Ինձ թվում է, որ դուք անբախտ եք...

XVI տեսիլի ժամանակ Պավել Վասիլևիչը հորանջեց և անզգուշորեն մի այնպիսի ձայն հանեց ատամներով, ինչպես հանում են շները ճանճ բռնելիս։ Նա վախեցավ այդ անքաղաքավարի ձայնից և, որպեսզի մի կերպ թաքցնի, դեմքին սրտառուչ ուշադրության արտահայտություն տվեց։

«Տեսիլ XVII... Ե՞րբ պիտի վերջանա,— մտածում էր նա։— Օ՜հ, տեր աստված։ Եթե այս տառապանքը մի տասը րոպե էլ շարունակվի, ես օգնության կկանչեմ... Անտանելի է»։

Բայց ահա, վերջապես, տիկինը սկսեց ավելի արագ և բարձրաձայն կարդալ ու արտասանեց՝ «վարագույր»։

Պավել Վասիլևիչը մի փոքր շունչ քաշեց և պատրաստվեց վեր կենալ, բայց Մուրաշկինան հենց այդ պահին թերթը շրջեց ու շարունակեց կարդալ.

— Գործողություն երկրորդ։ Բեմը ներկայացնում է գյուղական փողոց։ Աջ կողմը դպրոց, ձախը՝ հիվանդանոց։ Վերջինիս աստիճանի վրա նստած են գյուղացիներ և գեղջկուհիներ։

— Ներողություն...— ընդհատեց Պավել Վասիլևիչը։— Ընդամենը քանի՞ գործողություն է։

— Հինգ,— պատասխանեց Մուրաշկինան և իսկույն, կարծես վախենալով, որ ունկնդիրը կարող է հեռանալ, արագ շարունակեց։— Դպրոցի պատուհանից նայում է Վալենտինը։ Բեմի խորքում երևում է, թե ինչպես գյուղացիներն իրենց ունեցվածքը գինետուն են տանում։

Ինչպես մահվան դատապարտված և համոզված, որ անհնար է ներումն ստանալ, Պավել Վասիլևիչն էլ չէր սպասում վերջանալուն, ոչ մի բանի հույս չէր դնում, միայն աշխատում էր, որ աչքերը քնից չփակվեն և դեմքից չհեռանա ուշադրության արտահայտությունը։ Ապագան, թե տիկինը երբ է ավարտելու դրաման և գնալու, նրան թվում էր այնքան հեռու, որ այդ մասին չէր էլ մտածում։

— Տրո՜ւ-տո՛ւ-տո՛ւ...— աղմկում էր նրա ականջներում Մուրաշկինայի ձայնը։— Տրո՜ւ-տո՛ւ-տո՛ւ... Ժժժ՜...

«Մոռացա սոդա խմել,— մտածում էր Պավել Վասիլևիչը։— Ը՜, ի՞նչ էի մտածում։ Հա՜, սոդա... Ըստ երևույթին, ստամոքսի կատար ունեմ... Ջարմանալի է, Սմիռնովսկին ամբողջ օրը օդի է կոնծում և մինչև հիմա կատար չունի... Ինչ-որ թռչուն նստեց լուսամուտին... Ճնճղուկ է...»։

Պավել Վասիլևիչը ուժերը լարեց, որպեսզի իրարից բաժանի փակվող կոպերը, հորանջեց, բերանը չբանալով և նայեց Մուրաշկինային։ Նրա աչքերում Մուրաշկինան սկսեց մշուշապատվել. օրորվել, դարձավ երեքգլխանի, և գլուխը հասավ առաստաղին...

— Վալենտին.— Ո՜չ, թույլ տվեք ինձ մեկնել...— Աննա (վախեցած).— Ինչո՞ւ— Վալենտին (կողմ).— Նա գունատվեց։ (Նրան) Մի ստիպեք ինձ պատճառները բացատրել։ Ավելի շուտ կմեռնեմ ես, բայց դուք չեք իմանա այդ պատճառները։— Աննա (դադարից հետո).— Դուք չեք կարող մեկնել...

Մուրաշկինան սկսեց ուշել, ուռեց, դարձավ մի ահագին բան և ձուլվեց առանձնասենյակի գորշագույն օդի մեջ. երևում էր նրա միայն շարժվող բերանը. հետո հանկարծ նա փոքրացավ, դարձավ շշի չափ, օրորվեց և սեղանի հետ հեռացավ սենյակի խորքը...

— Վալենտին—(Աննային գրկած).— Դու հարություն տվիր ինձ, դու ցույց տվիր կյանքի նպատակը։ Դու ինձ վերակենդանացրիր, ինչպես գարնանային անձրևն է վերակենդանացնում զարթնող հողը։ Բայց... ուշ է, ուշ է։ Սիրտս մաշում է անբուժելի ցավը։

Պավել Վասիլևիչը վեր թռավ և աղոտ, պղտոր աչքերը հառեց Մուրաշկինային. նա մի բոպե նայում էր անշարժ, կարծես ոչինչ չէր հասկանում...

— Տեսիլ XI։ Նույն անձինք, բարոնը և գավառամասի պետը ընթերակաների հետ... Վալենտին.— Ձերբակալի՞ր ինձ։— Աննա.— Ես նրանն եմ։ Ձերբակալեցե՛ք և ինձ։ Այո՛, ինձ էլ ձերբակալեցե՛ք։ Ես սիրում եմ նրան, սիրում եմ կյանքիցս ավելի։— Բարոն.— Աննա Սերգեևնա, դուք մոռանում եք, որ դրանով կործանում եք ձեր հորը...

Մուրաշկինան նորից սկսեց ուռչել... Վայրի հայացքը շուրջը հածելով, Պավել Վասիլևիչը տեղից վեր ելավ, գոռաց կրծքային անբնական ձայնով, սեղանի վրայից հափշտակեց ծանր պրեսպապիեն և ինքն իրեն կորցնելով, ամբողջ թափով զարկեց Մուրաշկինայի գլխին...

— Կապեցեք ինձ, ես սպանեցի սրան,— ասաց նա մի բոպե հետո ներս վազող ծառային։

Երդվյալների դատարանը արդարացրեց նրան։

1887

ԾՈՎԱՀԱՐՍ

N-ական հաշտարար դատարանի նիստերից մեկից հետո դատավորները հավաքվեցին խորհրդակցության սենյակում, որպեսզի հանեն իրենց մունդիրները, մի բոպե հանգստանան և գնան տուն ճաշելու։ Համագումարի նախագահը, լավ տեսքով, աղվամազ այտմորուքներով մի տղամարդ, որը հենց նոր քննարկված մի գործի վերաբերմամբ մնացել էր «առանձին կարծիքի», նստել էր սեղանի մոտ և շտապում էր գրի առնել իր կարծիքը։ Շրջանի հաշտարար դատավոր Միլկինը, նվաղկոտ, մելամաղձոտ դեմքով մի երիտասարդ, որ փիլիսոփայի համբավ ուներ, միջավայրից դժգոհ և կյանքի նպատակը որոնող մեկը, կանգնել էր պատուհանի մոտ և տխուր նայում էր բակը։ Մյուս շրջանայինը և պատվավորներից մեկը արդեն գնացել էին։ Մնացած մի պատվավորը, ուռած, ծանր շնչող մի գիրուկ մարդ և դատախազի օգնականը, մի երիտասարդ գերմանացի՝ ստամոքսի բորբոքում ունեցողի դեմքով, նստել էին փոքրիկ բազմոցի վրա և սպասում էին, որ նախագահը վերջացնի գրելը, որպեսզի միասին գնան ճաշելու։ Նրանց դիմաց կանգնել էր համագումարի քարտուղար Ժիլինը, մի փոքր մարդուկ՝ այտամորուսիկները ականջների մոտ և հաճելիության արտահայտությունը դեմքին։ Մեղրածոր ժպտալով և գիրուկին նայելով, նա կիսաձայն խոսում էր.

— Մենք բոլորս հիմա ուզում ենք ուտել, որովհետև հոգնած ենք և արդեն չորրորդ ժամն է, բայց դա, հոգիս, Գրիգորի Սավվիչ, իսկական ախորժակ չէ։ Իսկական գայլի ախորժակը այն ժամանակ է, երբ թվում է, թե հարազատ հորդ էլ կուտեիր՝ լինում է միայն ֆիզիկական շարժումներից հետո, օրինակ, բարակներով որսի գնալուց հետո կամ երբ սովորական կառքով կքշես մի հարյուր վերստ առանց շունչ քաշելու։ Նմանապես մեծ նշանակություն ունի և երևակայությունը։ Եթե, ասենք, դուք որսից տուն եք գնում և ցանկանում եք ախորժակով ճաշել, ապա երբեք հարկավոր չի մտածել խելացի մի բանի մասին. խելացի և գիտուն բանը միշտ ախորժակ է փչացնում։ Ինքներդ բարեհաճում եք իմանալ, որ փիլիսոփաները և գիտնականները ուտելու մեջ ամենահետին մարդիկն են և նրանցից վատ, ներեցեք, չեն ուտում անգամ խոզերը։ Տուն գնալիս պետք է հոգ տանել, որ գլուխը մտածի միայն շշի և ճաշիկի մասին։ Ես մի անգամ ճանապարհին փակեցի աչքերս և երևակայեցի խրենով խոճկորիկ, և ախորժակից հիստերիկայի մեջ ընկա։ Դե, ի՞նչ ասեմ, երբ դուք ներս եք մտնում ձեր տան բակը, ապա պետք է որ այդ ժամանակ խոհանոցից բուրի որևէ, գիտեք էլի...

— Տապակած սագերը բուրելու մեջ վարպետ են,— ասաց պատվավոր դատավորը ծանր շնչելով։

— Մի ասեք, հոգիս, Գրիգորի Սավվիչ, բաղը կամ պեգասը կարող են սագից տասն անգամ առաջ անցնել։ Սագի բուրմունքի մեջ քնքշություն, նրբություն չկա։ Ամենից կծու բուրում է մատղաշ սոխը, երբ, գիտեք էլի, սկսում է տապակվել, և հասկանում եք էլի, ֆշշացնում է ամբողջ տնով մեկ։ Դե հիմա, երբ դուք տուն եք մտնում, սեղանը արդեն բաց արած պիտի լինի, իսկ երբ կնստեք, իսկույնևեթ անձեռոցիկը կխրեք փողկապի տակով և առանց շտապելու ձեռքերդ կմեկնեք օղու գրաֆինին։ Դե դա, այդ ջանիկը. կլցնեք ոչ թե գավաթի՝ այլ որևէ անդրջրհեղեղյան պապական արծաթե բաժակիկի մեջ կամ մի այնպիսի փորավոր գավաթիկի մեջ, որի վրա գրված է. «Սա նաև վանականների համար ընդունելի է», և խմում եք ոչ միանգամից, այլ սկզբում կհառաչեք, ձեռքերդ կշփեք, անտարբեր կնայեք առաստաղին, հետո, այսպես չշտապելով, կմոտեցնեք դա, այդ օղին շրթունքներիդ և իսկույնևեթ ձեր ստամոքսից ողջ մարմնով կայծեր կանցնեն...

Քարտուղարը իր քաղցրալի դեմքի վրա երանություն պատկերացրեց։

— Կայծե՞ր...— Կրկնեց նա, աչքերը կծկելով։— Հենց որ խմեցիք, իսկույն պետք է ուտելն սկսեք։

— Լսեք,— ասաց նախագահը, աչքերը բարձրացնելով քարտուղարի վրա,— կամաց խոսեք։ Ես ձեր պատճառով արդեն երկրորդ թերթն եմ փչացնում։

— Ախ, ներեցե՛ք, Պյոտր Նիկոլաևիչ։ Ես կամաց կպատմեմ,— ասաց քարտուղարը և շարունակեց կիսաշշունջով։— Իսկ ակրուտ ուտելն սկսելը, սիրելի Գրիգորի Սավվիչ, նույնպես պետք է բանն իմանալով անել։ Պետք է իմանալ, թե ինչով ակրուտ անել։ Ամենալավ նախաճաշիկը, եթե կուզեք իմանալ, հարինգն է։ Կերաք թե չէ մի փոքրիկ կտոր սոխիկով և մանանեխի սոուսով, իսկույնևեթ, բարերարդ իմ, երբ դեռ փորի մեջ ղգում եք կայծերը՝ կերեք խավիար առանձին, ինչպես կա, կամ եթե ցանկանում եք լիմոնիկով, ապա հասարակ բողկ՝ աղով, հետո կրկին հարինգ, բայց ամենից լավ է, բարերարդ իմ, աղը դրած ագարիկոն[1], եթե այն մանր կտրտես, ինչպես խավիարը և, հասկանում եք, սոխով, ձիթայուղով... կատարյա՛լ վայելք։ Սակայն շերեփաձկան լյարդը՝ դա հո տրագե՛դիա է։

— Հը՛մ, այո...— համաձայնեց պատվավոր հաշտարար դատավորը, աչքերը կուչ ածելով։— Նախաճաշիկի համար լավ է նմանապես, էն իքը... շոգիով եփած սպիտակ սունկը։

— Այո՛, այո՛, այո՛... սոխով, իմանում եք, դափնու տերևով և ամեն տեսակ համեմունքներով... Մինչև անգամ երբեմն արցունքդ գալիս է։ Է, հիմա հենց որ խոհանոցից ներս բերին ձկնակարկանդակը, իսկույնևեթ, առանց դանդաղելու, հարկավոր է երկրորդն ըմպել։

— Իվան Գուրի՛չ,— ասաց լացի ձայնով նախագահը։— Ձեր պատճառով ես երրորդ թերթը փչացրի։

— Սատանան տանի, հենց մենակ ուտելու մասին է մտածում,— փնթփնթաց փիլիսոփա Միլկինը, արհամարհական ծամածռություն անելով։— Մի՞թե բացի սունկերից ու ձկնակարկանդակներից, ուրիշ էլ հետաքրքրական բաներ չկան կյանքում։

— Է՛, ձկնակարկանդակից առաջ պետք է խմել,— շարունակեց քարտուղարը կիսաձայն. նա արդեն այնքան էր տարվել,

[1] Սունկ։

որ հրգող սոխակի պես չէր լսում ոչինչ. բացի իր սեփական ձայնից։— Ձկնակարկանդակը պետք է ախորժելի լինի, անամոթխած, իր բոլոր մերկության մեջ, որ գայթակղություն լինի։ Աչքով ես անում մի նրան, կտրում ես մի այսպես խոշոր կտոր և մատներդ վրան այսպես շարժում ես՝ զգացմունքների դեղումից։ Սկսում ես ուտել, դրա հետն էլ յուղը արցունքների պես, հյութալի ձվի հետ, փորոտիքի հետ, սոխի հետ...

Քարտուղարը աչքերը նվաղեցրեց և բերանը ծռմռեց մինչև ականջները։ Պատվավոր հաշտարարը կռնչացրեց և հավանորեն երևակայելով ձկնակարկանդակը՝ մատները շարժեց։

— Սատանա՜ն գիտե ինչ բան է սա...— մոթմոթաց շրջանային հաշտարարը, մյուս պատուհանն անցնելով։

— Երկու կտոր կերար, իսկ երրորդը շչիի համար պահեցիր,— շարունակեց քարտուղարը ոգևորված։— Ձկնակարկանդակը վերջացավ թե չէ՝ հենց իսկույն, որպեսզի ախորժակը չփակվի, հրամայեցեք շչին հրամցնեն... Շչին պետք է լինի տաք, կրակով եփած։ Բայց ավելի լավ է, բարերարդ իմ, ճակնդեղով բորշիկը խախոլների պատրաստած ձևով, խոզապուխտով և նրբերիշկներով։ Հետը մատուցում են սերուցք և թարմ մաղադանոս ու սամիթ։ Հոյակապ է նաև վարնգապուրը փորոտիքներից և մատղաշ երիկամներից պատրաստած, իսկ եթե սիրում եք ապուր, ապա ուրեմն ապուրներից ամենալավը այն է, որի մեջ արմտիքներ ու կանաչեղեն է գցած. գազար, ծնեբեկ, ծաղկակաղամբ և նման ամեն տեսակ իրավաբանություն։

— Այո՜, հոյակապ բան է...— հառաչեց նախագահը, աչքերը հեռացնելով թղթից, բայց և իսկույն սթափվեց և հոգոց արձակեց։— Վախեցե՜ք աստծուց։ Այսպես ես մինչև երեկո չեմ գրի առանձին կարծիքս։ Չորրորդ թերթն եմ փչացնում։

— Չեմ անի, չեմ անի։ Ներեցե՜ք, ըմ,— ներողություն խնդրեց քարտուղարը և շշուկով շարունակեց։— Հենց որ անուշ արիք բորշչիկը կամ ապուրը, իսկույն հրամայեք որ մատուցեն ձկնեղեն, բարերարդ իմ։ Անձայն ձկներից ամենալավը՝ դա տապակած ծածանն է սերուցքով. միայն որպեսզի տղմի հոտ չգա դրանից և նրբություն ունենա, պետք է դրան կենդանի պահել կաթի մեջ մի օր ու գիշեր։

— Լավ է նաև չուքան[1] օղակ արած,— ասաց պատվավոր հաշտարարը, աչքերը փակելով, բայց և իսկույն ամենքի համար

[1] Չուքա— ձուկ

անսպասելի կերպով նա պոկվեց տեղից, դազանային դեմք ընդունեց և ոռնաց նախագահի կողմը։— Պյոտր Նիկոլաևիչ, շո՞ւտ կվերջացնեք դուք։ Ձե՜մ կարող ես ավելին սպասել։ Ձե՜մ կարող։

— Թողեք վերջացնեմ։

— Դե որ այդպես է, ես ինքս կգնամ։ Սատանան ձեզ հետ։

Գիրուկը ձեռքը թափ տվեց, ձեռքը գցեց գլխարկին և, առանց հրաժեշտ տալու, դուրս վազեց սենյակից։ Քարտուղարը հառաչեց և կռանալով դատախազի օգնականի ականջին, կիսաձայն շարունակեց.

— Լավ է նմանապես շիղաձուկը կամ գետածածանը պոմիդորի և սնկի սոուսով։ Բայց ձկով չես կշտանա, Ստեպան Ֆրանցիչ. դա էական ուտելիք չէ, էականը ճաշի մեջ ձուկը չէ, սոուսը չէ, այլ տապակածը։ Դուք ո՞ր թռչունն եք ավելի պաշտում։

Դատախազի օգնականը դեմքը թթվեցրեց և հառաչանքով ասաց.

— Դժբախտաբար, ես չեմ կարող ձեզ ընկերակցել. ես ստամոքսի բորբոքում ունեմ։

— Թողե՜ք, պարոն։ Ստամոքսի բորբոքումը բժիշկներն են հնարել։ Ավելի շատ ազատությունից, մեկ էլ հպարտությունից է լինում այդ հիվանդությունը։ Դուք ուշադրություն մի՛ դարձրեք։ Ենթադրենք, դուք ուտել չեք ցանկանում կամ սրտխառնուք ունեք, իսկ դուք ուշադրություն մի դարձրեք և կերեք ձեզ համար։ Եթե, ենթադրենք, տապակածի հետ հրամցնեն մի զույգ կտցար, և եթե դրան ավելացնեն կաքավ կամ մի զույգ գեր լոր, այդտեղ դուք ամեն տեսակ ստամոքսի բորբոքումներ կմոռանաք, աղնիվ պատվավոր խոսք։ Ապա տապակած հնդուհա՞վը։ Սպիտակ, գեր, այնպես հյութալի, իմանում եք էլի, հավերժահարսի նման բան։

— Այո, հավանորեն դա համեղ է,— ասաց դատախազը, տխուր ժպտալով։— Հնդուհավ, թերևս, ես կուտեի։

— Տեր աստված, իսկ բա՞ղը։ Եթե մարդ վերցնի մատղաշ բադը, որը հենց նոր է ձմեռնամութին ցրտակերվել, ու ամբողջովին տապակի կարտոֆիլով, ու կարտոֆիլն էլ մանր կտրտած լինի, ու կարմրացրած, ու բադի ճարպով ծծված լինի ու...

Փիլիսոփա Միլկինը դազանային դեմք ընդունեց և, ըստ երևույթին, ինչ-որ բան էր ուզում ասել, բայց հանկարծ շրթունք-

ները չփչփացրեց, հավանորեն պատկերացնելով տապակած բաղը և ոչ մի խոսք չասելով, մի անհայտ ուժից մղվելով, խլեց գլխարկն ու դուրս վազեց սենյակից։

— Այո, ճիշտն ասած, ես բաղ ես կուտեի...— հառաչեց դատախազի օգնականը։

Նախագահը վեր կացավ, մի անգամ անցուդարձ արեց և կրկին նստեց։

— Տապակածից հետո մարդ կշտացած է լինում և ընկնում է քաղցր երազանքի մեջ,— շարունակեց քարտուղարը։— Այդ ժամանակ թե մարմնի համար լավ է, և հոգին էլ խանդաղատում է, վայելքի համար կարող եք անուշ անել մի երեք գավաթ մեղրօղի։

Նախագահը կոնչացրեց և վերից վար ջնջեց թուղթը։

— Ես վեցերորդ թերթն եմ փչացնում,— ասաց նա բարկացած։— Դա անխղճություն է։

— Գրեցե՛ք, գրեցե՛ք, բարերա՛րդ իմ,— շշնջաց քարտուղարը։— Էլ չե՛մ անի։ Ես կամացուկ կխոսեմ։ Ես ձեզ անկեղծ ասեմ, Ստեպան Ֆրանցիչ,— շարունակեց նա հաղիվ լսելի շշուկով,— տնական պատրաստած մեղրօղին ավելի լավ է ամեն տեսակ շամպայնից։ Հենց առաջին գավաթից հետո ձեր հոգին ողջ ընդգրկում է մի բուրմունք, մի այնպիսի միրաժ, և ձեզ թվում է, որ դուք ոչ թե ձեր տանն եք, բազմոցի վրա, այլ որևէ մի տեղ Ավստրալիայում, որևէ փափլիկ ջայլամի վրա...

— Վա՛հ, գնանք, է՛, Պյոտր Նիկոլաևիչ,— ասաց դատախազը, անհամբեր թափահարելով ոտքը։

— Այո՛, ը՛մ,— շարունակեց քարտուղարը,— Մեղրօղու ժամանակ լավ է մի սիգար ծխել և օղակներ բաց թողնել, և այդ պահին գլխովդ կանցնեն այնպիսի անրջային մտքեր, իբրև թե դուք գեներալիսիմուս եք կամ ամուսնացել եք աշխարհիս ամենաառաջին գեղեցկուհու հետ, և իբրև թե այդ գեղեցկուհին ամբողջ օրը ձեր աչքերի առաջ ավազանում լողում է ոսկե ձկնիկների հետ։ Նա լողում է, իսկ դուք նրան ասում եք.— «Հոգյա՛կս, եկ համբուրի՛ր ինձ»։

— Պյոտր Նիկոլաևիչ,— հառաչելով բողոքեց դատախազի օգնականը։

— Այո՛, ը՛մ,— շարունակեց քարտուղարը,— ծխելուց հետո հավաքեցեք խալաթի փեշերը և հայդե անկողին։ Այսպես, պառկեցեք մեջքի վրա, փորիկը վեր և վերցրեք լրագիրը։ Երբ

աչքերդ կպչում են և ողջ մարմինդ բռնել է նիրհը, հաճելի է կարդալ քաղաքականության մասին. այնտեղ մեկ էլ տեսնում ես, Ավստրիայի բանը վատ է, այստեղ Ֆրանսիան որևէ մեկի կամքը չի կատարել, այնտեղ Հռոմի պապը հակառակ ընթացք է բռնել— կարդում ես և դուրդ գալիս է։

Նախագահը վեր ցատկեց, մի կողմ շպրտեց գրիչը և երկու ձեռքով խլեց գլխարկը։ Դատախազի օգնականը, մոռանալով իր բորբոքումը և անհամբերությունից մորմոքվելով, նույնպես վեր ցատկեց։

— Կառք նստենք,— բացականչեց նա։

— Պյոտր Նիկոլաևիչ, իսկ ի՞նչ եղավ սեփական կարծիքը,— վախեցավ քարտուղարը։— Ե՞րբ կգրեք այն, բարերարդ իմ։ Ախր դուք ժամը վեցին քաղաք պիտի գնաք։

Նախագահը ձեռքը թափ տվեց և վազեց դեպի դուռը։ Դատախազի օգնականը նույնպես ձեռքը թափ տվեց և արագ վերցնելով իր թղթապանակը, անհետացավ նախագահի հետ։ Քարտուղարը հառաչեց, կշտամբանքով նայեց նրանց հետևից և նստեց, որ թղթերը հավաքի։

1887

ՍՐԻՆԳ

Եղևնու թավուտի խեղդվածությունից թուլացած, ամբողջովին սարդոստայնի ու փշատերևի մեջ կորած, հրացանով դեպի անտառի եզրն էր անցնում Դեմենտևի ագարակի գործակատար Մելիտոն Շիշկինը։ Նրա Դամկան, բակի շան և անգլիական քերծեի խառնուրդ, արտասովոր լղար և հղի, թաց պոչը տակը քաշած քարշ էր գալիս տիրոջ հետևից և ամեն կերպ ջանում էր, որ քիթը փշերը չծակծկեն։ Վատ առավոտ էր, ամպամած։ Թեթև մշուշով պարուրված ծառերից և ձարխոտից թափթփում էին անձրևի խոշոր կաթիլները, անտառի խոնավությունը սուր փտահոտ էր արձակում։

Առջևում, ուր վերջանում էր թավուտը, բարձրանում էին կեչիները, իսկ նրանց բների և ճյուղերի միջով երևում էր մշուշապատ հեռաստանը։ Ինչ-որ մեկը կեչիների հետևում նվագում էր իր ձեռքով շինած հովվական սրինգը։ Նվագողը վերցնում էր

հինգ-վեցից ոչ ավելի նոտաներ, ծուլորեն ձգում էր դրանք, ջանք չխնայելով միացնել մի եղանակի վերածել, բայց, այնուամենայնիվ, այդ ծվոցի մեջ լսվում էր ինչ-որ դաժան և չափազանց թախծալի մի բան։

Երբ թավուտը նոսրացավ, և եղևնիները արդեն խառնվում էին մատղաշ կեչիների հետ, Մելիտոնը տեսավ նախիրը։ Իրար խառնված ձիերը, կովերը և ոչխարները շրջում էին թփերի արանքներում և ոտիկները ճրթճրթացնելով, հոտոտում էին անտառի խոտը։ Անտառի եզրին, թաց կեչուն թիկն տված կանգնել էր ծերունի Հովիվը, նիհար, պատառոտուն, չներկած կոշտ մահուդի շորով և առանց գլխարկի։ Նա աչքը գետին գցել, ինչ-որ բանի մասին էր մտածում և սրինգը նվագում էր, ըստ երևույթին, մեքենաբար։

— Բա՛րև, պապի՛։ Աստված հաջողի,— ողջունեց նրան Մելիտոնը բարակ, կերկերուն ձայնով, որ բոլորովին չէր սազում նրա վիթխարի հասակին և մեծ, մսոտ երեսին։— Հա՞մա լավ ես շվիդ փչում։ Ո՞ւմ նախիրն ես արածացնում։

— Արտամոնովի,— չուզելով պատասխանեց Հովիվը և շվին գրպանը կոխեց։

— Ասել է՝ անտառն էլ Արտամոնովինն է,— հարցրեց Մելիտոնը, նայելով շուրջը։— Հենց ի՛սկը Արտամոնովինն է, ասա՛ խնդրեմ... Քիչ էր մնում մեջը մոլորվեի։ Ոնեխս մաճերի վրա ճանկոտեցի։

Նա նստեց բաց գետնի վրա և սկսեց լրագրի թղթից ծխախոտ փաթաթել։ Իր նվազ ձայնի նման, ամեն բան այդ մարդու մեջ մանր էր և չէր համապատասխանում նրա հասակին, լայնքին և մսոտ դեմքին. և՛ ժպիտը, և՛ փոքրիկ աչքերը, և մանր կոճակները, և՛ փոքրիկ գլխարկը, որ հազիվ էր մնում նրա գեր, խուզած գլխի վրա։ Երբ նա խոսում էր կամ ծիծաղում, նրա ածիլած, ուռած դեմքի և ամբողջ կերպարանքի վրա ինչ-որ կանացի, ամոթխած ու հնազանդ բան էր զգացվում։

— Հա՞մա թե եղանակ է, աստվա՛ծ հեռու տանի,— ասաց նա և գլուխը տարավ-բերեց։— Մարդիկ դեռ հաճարը չեն հնձել, իսկ անձրևը կասես գործի է մտել, աստված բարի տա։

Հովիվը նայեց երկնքին, որտեղից մաղում էր անձրևը անտառի վրա, գործակատարի թաց հագուստի վրա, մտածեց և ոչինչ չասաց։

— Ամբողջ ամառը այսպես եղավ...— հառաչեց Մելիտոնը։— Թե՛ գյուղացիների համար վատ և թե՛ տպարանների համար ոչ մի բավականություն։

Հովիվը մի անգամ էլ նայեց երկնքին, մտածեց և ասաց կանգ առնելով, կարծես ծամելով յուրաքանչյուր բառը.

— Ամեն բանի վերջը մին է... Բարի բան մի սպասի։

— Ինչպե՞ս է այստեղ ձեզ մոտ,— հարցրեց Մելիտոնը ծխելով։— Չե՞ս տեսել Արտամոնովի այս հողամասում ցախաքլորի մայր ու ձագեր։

Հովիվը պատասխանեց ոչ միանգամից։ Նա նորից նայեց դեպի երկինք և այս ու այն կողմ, մտածեց, աչքերը ճպեց... Ըստ երևույթին, իր խոսքերին նա քիչ նշանակություն չէր տալիս, և որպեսզի դրանց գինը մեծացնի, ջանում էր արտասանել երկարաձգելով, որոշ հանդիսավորությամբ։ Նրա դեմքի արտահայտությունը ծերունական էր, սուր, ծանրաբարո, պատճառն այն էր, որ նրա քթի վրա մի թմբաձև ակոս կար, և ոունգները վեր էին բարձրացել, թվում էր, թե նա խորամանկ է և կատակաբան։

— Չէ՛, կասես թե չեմ տեսել,— պատասխանեց նա։— Մեր որսորդը՝ Երյոմկան, ասում էր, իբր թե եղիայի օրը Պուստոշիայի կողմերում մի թուխս քշել է, մենակ, ով է իմանում, խաբում է։ Թռչունը քիչ է։

— Հա՛, եղբայր, քիչ է... Ամեն տեղ քիչ է։ Որսը, եթե առողջամտորեն դատենք, չնչին է ու անարժեք։ Թռչուն-կենդանի չկա, իսկ որն էլ կա, դրա համար ձեռքերը կեղտոտել չարժե, դեռ չի մեծացել։ Այնպես մանր բան է, որ մտիկ տալիս՝ մեղքդ գալիս է։

Մելիտոնը քմծիծաղեց և ձեռքը թափ տվեց։

— Այնպիսի բաներ են լինում աշխարհիս երեսին, որ ծիծաղդ է գալիս, ուրիշ ոչինչ։ Թռչունը հիմա անմտածող է դառել, ուշ է թուխս նստում, և այնպիսիները կան, որոնք դեռ Պետրոսի օրը ձվերի վրայից վեր չեն կենում։ Աստված վկա։

— Էդ բոլորի վերջը մեկ է,— ասաց Հովիվը, դեմքը բարձրացնելով։— Հերու որսի թռչուն քիչ էր, էս տարի ավելի քիչ է, մի հինգ տարուց հետո, հենց իմացած եղիր, իսկի չի լինի։ Ես էնպես եմ նկատում, որ շուտով չէ թե որսի թռչուն՝ ոչ մի թռչուն էլ չի մնա։

— Այո՛,— համաձայնեց Մելիտոնը, մտածելով,— դա ճիշտ է։

Հովիվը դառը քմծիծաղեց և շարժեց գլուխը։

— Զարմանք բան է,— ասաց նա,— ո՞ւր գնաց էդ ամենը։ Քսան տարի առաջ, միտս է, էստեղ սագ էլ կար, կռունկ էլ, բադ էլ, ցախաքլոր էլ, լիքն էր ծովի պես։ Պատահում էր, որ պարոնները գալիս հավաքվում, ու մենակ էն էիր լսում՝ փո՛ւ-փո՛ւ-փո՛ւ, հա՛, փո՛ւ-փո՛ւ-փո՛ւ... խլահավը, կտցարը, ցցագլուխը կրելը չէիր հասցնի, իսկ մանր մրտիմն ու մանրակտցարը, միևնույն էր, ոնց որ սարյակն ու, ասենք, ճնճղուկը՝ անթիվ-անհամար։ Եվ ո՞ւր կորավ գնաց էդ բոլորը։ Մի չար թռչուն էլ աչքիդ չի երևում։ Փչացան գնացին արծիվներն էլ, բազեներն էլ, բվերն էլ... Ամեն տեսակ գազաններն էլ քչացան։ Հիմի, ախպեր ջան, գայլն ու աղվեսը արմանք բաներ են, քառասուն տարի է, որ տարեցտարի մտիկ եմ անում աստծու գործերը, էնպես եմ հասկանում, որ ամեն բանի վերջը մին է։

— Ի՞նչ է։

— Դեպի վատն է գնում, որդի։ Պետք է հաշվել, որ փչանալու է... ժամանակը հասել է, որ աստծու աշխարհքը վերջանա։

Ծերունին գլխարկը դրեց գլխին և սկսեց նայել երկնքին։

— Ափսո՛ս,— հառաչեց նա մի փոքր լռելուց հետո։— Ու, էն աստված, էնքա՛ն ափսոս է։ Դե՛, խոսք չկա, աստծու կամքն է, աշխարհքը մենք չենք ստեղծել, մենակ, ինչքան չլինի, ախպերս, ափսոս է։ Ախր, որ մի ծառ է չորանում կամ, ասենք մի կով սատկում՝ էն էլ է մարդ ափսոսում, ուր մնաց, բարեկամ, տեսնես, որ ողջ աշխարհքը կործանվում է։ Ինչքա՛ն բարիք կա աշխարհքում, տե՛ր աստված։ Ախր արևն էլ, երկինքն էլ, անտառներն էլ, գետերն էլ, արարածներն էլ—էդ բոլորը ստեղծած, դասավորած, մեկը մեկի մոտ է դրած։ Ամեն բան իր տեղն է հասցրած և իր տեղը իմանում է։ Ու էդ բոլորը պիտի փչանա գնա։

Հովվի դեմքին մի տխուր ժպիտ վառվեց, և կոպերը թարթվեցին։

— Դու ասում ես՝ աշխարհքը կկործանվի...— ասաց Մելիտոնը, մտածելով։— Կարող է պատահել, որ շուտով աշխարհքի վերջն է, բայց միայն թռչնով դատել չի լինի։ Այդ հազիվ թե թռչունը կարողանա նշել։

— Մենակ թռչուններ չէ,— ասաց հովիվը։— Գազաններն

էլ, անասուններն էլ, մեղուներն էլ, ձկներն էլ... Ինձ չես հավատում՝ ծերերին հարցրու. ամեն մեկն էլ քեզ կասի, որ ձուկը հիմի էն չի իսկի, ոնց որ եղել է։ Թե՛ ծովերում, թե՛ լճերում և թե՛ գետերում ձկները տարեցտարի քչանում են հա քչանում։ Մեր Պեսչանկայում, միտս է, մի արշինաչափ գայլաձուկ էր բռնվում, շերեփաձուկ էլ կար, յազ էլ, բրամ էլ, ու ամեն ձուկ էլ տեսք ուներ, իսկ հիմի թե մի խաչկտուցիկ կամ պերկեսիկ էլ բռնեցիր քառորդանոցի չափ, փառք տուր աստծուն։ Մի իսկական աքերին էլ չկա։ Տարեցտարի ամեն բան ավելի ու ավելի վատանում է, ու սպասիր մի քիչ էլ, էլ իսկի ձուկ չի լինի։ Բա գետե՛րը վերցրու հիմա... Գետերը, խոսք չկա, չորանում են։

— Դա ճիշտ է, որ չորանում են։

— Հա՛-բա՞, բանն էլ էդ է։ Տարեցտարի բոլորը քանի գնում ծանծաղանում է ու ծանծաղանում, ու էլ, ախպերս, չկան էն փոսաջրերը, որ կային։ Հրեն, հա՛, տեսնո՞ւմ ես թփերը,— հարցրեց ծերունին, ցույց տալով մի կողմ։— Դրանց հետևը հին հունն է, գետածոց են ասում, իմ հոր ժամանակ Պեսչանկան հոսում էր, իսկ հիմի մտիկ, ոնց է սատանան գետնի տակ տարել։ Հունը փոխում է, ու կտեսնես՝ կփոփոխվի մինչև էնքան ժամանակ, որ բոլորովին կչորանա։ Կուրգասովից էն կողմը ճահիճ ու լճակներ կային, բա ո՞ւր են հիմի։ Բա առվակները ո՞ւր կորան։ Մեղ մոտ հենց էս անտառում ջուր էր գնում և էնպիսի ջուր, որ գյուղացիները մեջքը ձկնորսակողով էին գնում և գայլաձուկ էին որսում, մոտերքը վայրի բադ էր ձմեռում, իսկ հիմի վարարելու ժամանակ էլ ձուկ որսալու ջուր չի լինում։ Էդպես է, ախպերս, ուր կուզես նայիր, ամեն տեղ վատ է։ Ամեն տեղ։

Տիրեց լռություն։ Մելիտոնը մտորմունքի մեջ ընկավ և աչքերը հառեց մի կետի։ Նա ուզում էր հիշել բնության մեջ գոնե մի տեղ, որին դեռ չի դիպել ամեն ինչ ընդգրկող կործանումը։ Մշուշի և անձրևի շեղ շերտերի միջով, ինչպես փայլատ ապակիներից, սահեցին լուսավոր բծեր, բայց և իսկույն հանգան, դա բարձրացող արևն էր, որ ջանում էր անցնել ամպերի միջից և նայել երկրին։

— Այո, անտառներն էլ...— քթի տակ խոսեց Մելիտոնը։

— Անտառներն էլ...— կրկնեց հովիվը։— Կտրում են, իրենք էլ են վառվում, չորանում էլ են, իսկ նորը չի աճում։ Ինչ էլ աճում է, ձեռաց կտրում են. էսօր դորս է գալիս, վաղը տեսնում ես, կտրեցին մարդիկ— ու անվերջ էսպես, մինչև որ տեղը բան

չի մնում։ Ես, բարեկամ, աղատություն տալու օրից համայնքի նախիրի վրա եմ, մինչև աղատությունն էլ տերերի մոտ հովիվ էի, հենց էս տեղերքն էլ արածացնում էի, և էսքան կյանքիս մեջ մի ամառվա օր չեմ հիշում, որ էստեղ չլինեմ։ Ու ամեն ժամանակ աստծու գործերն եմ մտիկ տալիս։ Կյանքումս լավ տնտղել եմ, ախպերս, ու հիմի էնպես եմ հասկանում, որ ամեն տեսակ բույս քշանալու է։ Աճարը ասա, բանջարեղենը, պստիկ ծաղիկը, բոլորի վերջը մին է։

— Դրա փոխարեն էլ ժողովուրդը լավացել է ավելի,— նկատեց գործակատարը։

— Ինչո՞վ է ավելի լավացել։

— Ավելի խելացի է դարձել։

— Խելացի դառնալը՝ դարձել է, էդ ճիշտ է, որդի, բայց օգո՞ւտն ինչ։ Մարդկանց ինչի՞ն է պետք խելքը՝ կործանվելուց առաջ։ Կորչել-գնալ առանց մի խելքի էլ կարելի է։ Որսորդի ինչի՞ն է խելքը, թե որ որսի կենդանի չկա։ Ես էնպես եմ մտածում, որ աստված մարդուն խելք տվեց, բայց ուժը վերցրեց։ Թուլացել է ժողովուրդը, չափից դուրս թուլացել։ Հենց ես՝ օրինակ... Մի գրող շարժեմ, ողջ գյուղում ես ամենահետին գյուղացին եմ, բայց ինչ էլ որ լինի, որդի, ուժ կա վրաս։ Ահա տես, տարիքս յոթանասունից անց է, բայց ես օրը օրին արածացնում եմ, հալա դեռ գիշերն էլ հսկում եմ քսան կոպեկով ու քուն չունեմ, չեմ էլ մրսում. որդիս ինձնից խելոք է, բայց ապա մի՝ դի՛ր նրան իմ տեղը, սա հենց էգուցևթ կպահանջի, որ ավելացնեն վարձը կամ կգնա բուժվելու։ Բա՞։ Ես հացից դուրս բան չեմ ուտում, քանի որ «զհաց քո հանապազօրդ տուր մեզ այսօր»-ն է, ու հայրս էլ հացից դուրս բան չէր ուտում, պապս էլ, իսկ հիմիկվա գյուղացուն հա՞ թեյ տուր, հա՞ արաղ, հա՞ բուլկի, ու ծեգից մինչև ծեգն էլ քնի, բուժվի էլ ու ամեն տեսակ երես տան։ Է՛, ինչի՞ցն է։ Նրանից, որ թուլացել է, ուժ չունի մեջը, որ համբերի, դիմանա։ Շատ էլ ուրախ կլինի, որ չքնի, բայց աչքերը կպչում են, բան չես կարող անել։

— Դա ճիշտ է,— համաձայնեց Մելիտոնը։— Հիմի գյուղացին դիմացկուն չի։

— Մեղքներս ի՞նչ ծածկենք, տարեցտարի դեպի վատն ենք գնում։ Թե որ հիմի պարոններինը դատես, նրանք գյուղացիներից ավելի են ուժից ընկել։ Հիմիկվա պարոնը ամեն բանից անցել է, էնպիսի բաներ գիտի, որ իմանալ պետք չի, բայց օգո՞ւտն

ինչ։ Մտիկ ես տալիս նրան, մեղքդ գալիս է... Լղար, ճլորած, ոնց որ մի հունգարացի կամ ֆրանսիացի, ո՛չ ծանդրումեծ է, ո՛չ տեսք ունի— մենակ անունն է բարին։ Խեղճ մարդը ո՛չ տեղ ունի, ո՛չ գործ, էլ գլուխ չես հանի, թե ինչ է պետք նրան։ Կամ կարթը ձեռին նստել ձուկ է որսում, կամ փորը ցցած պառկել գիրք է կարդում, կամ գյուղացիներին խառնվել, ոտի տակ է ընկնում ու տեսակ-տեսակ խոսքեր ասում, իսկ որն էլ որ սոված է՝ գրագիր է դառնում։ Էդպես էլ դատարկ ու փուչ ապրում և խելքներն էլ չի կտրում, որ մի կարգին գործի մտնեն։ Առաջվա բարիները կիսով չափ գեներալներ էին, իսկ հիմիկվանները ողջը թուլամորթ բաներ են։

— Խիստ աղքատացել են,— ասաց Մելիտոնը։

— Նրանից են աղքատացել, որ աստված ուժները վերցրել է։ Աստծուն դիմադարձ չես կարող կանգնել։

Մելիտոնը կրկին աչքը հառեց մի կետի։ Մի քիչ մտածելուց հետո նա հառաչեց, ինչպես հառաչում են ծանր, դատող մարդիկ, գլուխը տարավ-բերեց և ասաց.

— Իսկ այդ բոլորը ինչի՞ցն է։ Շատ ենք մեղանչում, աստծուն մոռացել ենք... և այդպիսի, ասել է, ժամանակ է հասել, որ ամեն բան վերջանա։ Այն էլ պետք է ասել, աշխարհքը հո հավիտյան չի ապրելու՝ ժամանակն է չափ ու սահման ճանաչել։

Հովիվը հառաչեց, և իբր թե ուզելով ընդհատել անախորժ խոսակցությունը, հեռացավ կեչուց և սկսեց աչքերով կովերը հաշվել։

— Հե՛յ, հե՛յ, հե՛յ,— կանչեց նա։— Հե՛յ-հե՛յ, հե՛յ։ Կոտորվեք, հա՞, տեղափոխելը չեք հասկանում։ Սատանոք է, ընկան մատղաշի մեջ։ Օհո՞, հո՞հո՞։

Նա դեմքին բարկացկոտ արտահայտություն տվեց և գնաց թփերի մեջ նախիրը հավաքելու։ Մելիտոնը վեր կացավ և դանդաղ գնաց բացատով։ Նա նայում էր ոտքերի տակ և մտածում էր. դեռ էլի ուզում էր միտքը բերել գոնե մի բան, որին դեռ մահը չի դիպել։ Անձրևի շեղ շերտերի միջով նորից սողացին լուսավոր բծեր, թռան անտառի կատարների վրա և հանգան բաց սաղարթի մեջ։ Դամկան թփի տակ ողնի գտավ և, կամենալով նրա վրա դարձնել տիրոջ ուշադրությունը, կլանչեց։

— Ձեզ մոտ խավարում եղա՞վ թե չէ,— կանչեց հովիվը թփերի միջից։

— Եղավ,— պատասխանեց Մելիտոնը։

— Էդ է, հա՛։ Ամեն տեղ ժողովուրդը գանգատվում է, որ եկավ։ Ասել է, ախպերս, երկնքումն էլ կարգ ու կանոն չկա։ Ջուր տեղը չի... Հե՛յ, հե՛յ, հե՛յ, հե՛յ։

Նախիրը անտառի եզրը քշելով՝ հովիվը մեջքը դեմ արեց կեչուն, նայեց երկնքին, առանց շտապելու հանեց գրպանից սրինգը և սկսեց նվագել։ Առաջվա պես նա նվագում էր մեքենաբար և հինգ-վեց նոտայից ավելի չէր վերցնում. կարծես սրինգը միայն առաջին անգամ էր ընկել նրա ձեռքը, հնչյունները միջից դուրս էին գալիս անվճռական, անկարգ, չդառնալով մի եղանակ, բայց Մելիտոնի համար, որ մտածում էր աշխարհի կործանման մասին, նվագի մեջ լսվում էր ինչ-որ շատ վշտալի և վատ բան, որ սիրով նա ականջ չէր դնի։ Ամենաբարձր ճչացող նոտաները, որոնք դողում և կտրվում էին, թվում էր, թե անմխիթար լաց էին լինում, կարծես սրինգը հիվանդ լիներ և վախեցած, իսկ ամենացածրը ինչ-որ պատճառով հիշեցնում էր մշուշ, տրտում ծառեր, գորշ երկինք։ Այդպիսի երաժշտությունը կարծես սազում էր և՛ եղանակին, և՛ ծերունուն, և՛ նրա ասածներին։

Մելիտոնը ցանկացավ գանգատվել։ Նա մոտեցավ ծերունուն և նայելով նրա տխուր, ծիծաղող դեմքին և սրնգին, մրթմրթաց.

— Ապրելն է՛լ ավելի վատացավ, պապի։ Ապրել չի լինում։ Երաշտներ, աղքատություն... անասունները սատկում են հենց մի գլուխ, հիվանդություններ... Կարիքը խեղճացնում է։

Գործակատարի ուռած դեմքը շառագունեց և ընդունեց վշտացող կնկա արտահայտություն։ Նա շարժեց մատները, կարծես թե խոսքեր որոնելով, որպեսզի արտահայտի իր անորոշ զգացմունքը, և շարունակեց.

— Ութը անձ. երեխաներ, կինս... մայրս էլ դեռ կենդանի է, իսկ ոռճիկս եղածը տասը ռուբլի է ամիսը՝ հացը վրաս։ Ջքավորությունից կինս դիվոտել է... ինքս հարբում եմ։ Կշռադատող, ծանրաբարո մարդ եմ, կրթություն եմ ստացել։ Ես պիտի տանը նստեի, հանգստության մեջ, իսկ ես ամբողջ օրը շան պես հրացանը ձեռքիս ման եմ գալիս, որովհետև ոչ մի հնար չունեմ. տունը զզվեցրել է։

Զգալով, որ լեղուն բլբլում է ոչ բոլորովին այն, ինչ կուզենար արտահայտել, գործակատարը ձեռքը թափ տվեց և դառնությամբ ասաց.

— Թե աշխարհը պիտի կործանվի՝ թող շուտ լինի։ Կարիք չկա քարշ տալ երկար և մարդկանց իզուր տանջել...

Ծերունին շրթունքներից հանեց սրինգը և մի աչքը ճպելով նայեց դրա փոքր անցքից։ Նրա դեմքը տխուր էր և ծածկվել էր արցունքների խոշոր կաթիլներով։ Նա ժպտաց ու ասաց.

— Ափսոս է, ախպերս։ Աստված վկա ափսոս է։ Երկիրը, անտառը, երկինքը... արարածները բոլոր—ախր էս բոլորը ստեղծված է, դասավորված, ամենի մեջ մտածողություն կա։ Ջուր տեղը բոլորը կորչում-գնում է։ Իսկ ամենից ավելի ափսոս են մարդիկ։

Երբ նա մոտեցավ անտառի եզրին, աղմկեց խոշոր անձրևը։ Մելիտոնը նայեց աղմուկի կողմը, բոլոր կոճակները կոճկեց և ասաց.

— Կգնամ գյուղի կողմը։ Մնաս բարով, պապի։ Անունդ ի՞նչ է։

— Ջքավոր Լուկա։

— Դե՛, մնաս բարով, Լուկա։ Շնորհակալություն լավ խոսքի համար։ Դա՛մկա, դե՛հ։

Հրաժեշտ տալով հովվին, Մելիտոնը ելավ տեղից, գնաց անտառի եզրով, իսկ հետո՝ ներքև, մարգագետնով, որը հետզհետե փոխվում էր ճահճի։ Ոտքի տակ չլմփում էր ջուրը, և ժանգոտ բոշխը, դեռևս բոլորովին կանաչ և հյութեղ, խոնարհվել էր գետնին, կարծես վախենալով, որ իրեն կտրորեն ոտքերի տակ։ Ճահճից այն կողմ, Պեսչանկայի ափին, որի մասին ասում էր պապին, կանգնած էին ուռիներ, իսկ ուռիների հետևը մշուշի մեջ կապտին էր տալիս կալվածատիրոջ կալատեղը։ Զգացվում էր այն դժբախտության՝ ոչնչով անդիմադրելի ժամանակի մոտիկությունը, երբ դաշտերը կմթնեն, երկիրը կդառնա ցեխոտ և ցուրտ, երբ լացող ուռենին թվում է է՛լ ավելի տխուր, ու բնի վրայով կհոսեն արցունքները, և միայն կռունկներն է, որ հեռանում են ընդհանուր դժբախտությունից, և նրանք էլ կարծես վախենալով վհատված բնությանը վիրավորել իրենց երջանկության արտահայտությամբ, ձայնարկում են երկնակամարում տխուր, վշտալի երգով։ Մելիտոնը, ոտքը կախ գցած, գնում էր դեպի գետը և լսում էր, թե ինչպես իր հետևում քիչ-քիչ մեռնում էին սրնգի հնչյունները։ Նա դեռ կամենում էր էլի գանգատվել։ Տխուր

նայում էր չորս կողմ և անասելի կերպով ափսոսաց և՛ երկնքին, և՛ երկրին, և՛ արևին, և՛ անտառին, և՛ իր Դամկային, իսկ երբ սրնգի ամենաբարձր նոտան թռավ գնաց օդում երկարաձիգ, ինչպես լացող մարդու ձայն, նա մի չափազանց դառնություն զգաց, և վիրավորական էր նրա համար այն անկարգությունը, որ նկատելի էր բնության մեջ։

Բարձր նոտան դողաց, խզվեց, և սրինգը լռեց։

1887

ՎՐԻԺԱՌՈՒՆ

Ֆյոդոր Ֆյոդորովիչ Սիգաևը շուտով այն բանից հետո, երբ իր կնոջը տեղնուտեղը բռնեց հանցագործության մեջ, կանգնել էր Շմուկս և Ընկերության խանութում և իր համար ատրճանակ էր ընտրում։ Նրա տեսքը արտահայտում էր զայրույթ, վիշտ և անդարձ վճիռ։

«Ես կիտեմ, թե ինչ պետք է անեմ...— մտածում էր նա։— Անարգված են ընտանեկան հիմքերը, ցեխի մեջ ոտնատակ է տված պատիվը, հաղթականորեն հոխորտում է սխտը, ուստի ես, որպես քաղաքացի և ազնիվ մարդ, պետք է վրիժառու լինեմ։ Առաջ կսպանեմ կնոջս և սիրեկանին, ապա՝ ինձ...»։

Նա դեռ չէր ընտրել ատրճանակը և դեռ ոչ ոքի չէր սպանել, բայց նրա երևակայությունը արդեն պատկերացնում էր երեք արյունոտված դիակներ, ջախջախված գանգեր, հոսող ուղեղ, իրարանցում, պարապ մարդկանց ամբոխ, հերձում... Վիրավորված մարդու շարախնդությամբ նա երևակայում էր հարազատների և հասարակության սարսափը, դավաճանուհու հոգեվարքը և արդեն մտքում կարդում էր այն առաջնորդող հոդվածները, որոնք պիտի խոսեին ընտանեկան հիմքերի քայքայման մասին։

Խանութի գործակատարը, որ մի շարժուն, ֆրանսիացու կերպարանքով, փոքրիկ փորով և սպիտակ ժիլետով մարդ էր,— փոում էր նրա առջև ատրճանակները և, հարգանքով ժպտալով, ոտքերը շրխկացնելով ասում էր.

— Ես ձեզ խորհուրդ կտայի, մսյո, գնել ահա այս գեղեցիկ ատրճանակը։ Սմիթ և Վեսսոնի սիստեմի։ Հրաձգային գիտության վերջին խոսքը։ Ռռակի գործողությամբ է, էստրակտորով, հարվածում է վեց հարյուր քայլից, կենտրոնական զարկ ունի։

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում, մսյո, կերտվածքի վրա։ Ամենամոդայիկ սիստեմն է, մսյո... Օրը տասը հատ ծախում ենք ավազակների, գայլերի և սրիկաների համար։ Շատ ճիշտ և ուժեղ հարված ունի, խփում է մեծ տարածությունից և սպանում է կնոջը և սիրեկանին։ Ինչ վերաբերում է ինքնասպաններին, ապա, մսյո, ես ավելի լավ սիստեմ չգիտեմ...

Գործակատարը բարձրացնում և իջեցնում էր շնիկները, փչում էր փողերի վրա, նշան էր բռնում և ձևացնում էր, թե հրճվանքից խեղդվում է։ Մարդ նայելով նրա հրճվալից դեմքին, կարող էր մտածել, որ նա ինքը սիրով գնդակը բաց կթողներ իր ճակատին, եթե տեր լիներ այդպիսի մի գեղեցիկ սիստեմի ատրճանակի, ինչպես Սմիթ և Վեսսոնն է։

— Իսկ գի՞նը որքան է,— հարցրեց Սիգաևը։

— Քառասունհինգ ռուբլի, մսյո։

— Հը՛մ... Դա ինձ համար թանկ է։

— Այդ դեպքում, մսյո, ես ձեզ կառաջարկեմ ավելի էժան սիստեմ։ Ահա, կհաճե՞ք նայել։ Մենք մեծ ընտրություն ունենք, զանազան գների... Օրինակ՝ այս ատրճանակը Լեֆոշեի սիստեմի, արժի ընդամենը տասնութ ռուբլի, բայց... (գործակատարը արհամարհանքով դեմքը կնճռոտեց)... բայց, մսյո, այդ սիստեմը արդեն հնացել է։ Դա գնում են միայն մտավորական պրոլետարները և հոգեկան հիվանդ կանայք։ Իրեն սպանել կամ կնոջը Լեֆոշեի ատրճանակով, այժմ վատ տոնի նշան է համարվում։ Լավ տոնը այժմ միայն Սմիթ և Վեսսոնն է ընդունում։

— Ես կարիք չունեմ ոչ ինքնասպանություն գործելու, ոչ էլ սպանելու,— մռայլ ասեց Սիգաևը։— Ես այդ գնում եմ իմ ամառանոցի համար... գողերին վախեցնելու համար...

— Մեր գործը չէ, թե ինչի համար եք գնում,— ժպտաց գործակատարը, աչքերը համեստորեն խոնարհելով։— Եթե ամեն անգամ մենք պատճառները փնտրենք, ապա մենք, մսյո, կհարկադրվենք փակել խանութը։ Գողերին վախեցնելու համար Լեֆոշեն անպետք է, մսյո, որովհետև դա ցածր խուլ ձայն է հանում, իսկ ես ձեզ կառաջարկեի սովորական պատիճով Մորտիմերի ատրճանակը, այսպես կոչված մենամարտային...

«Արդյոք չկանչե՞մ նրան մենամարտի,— արագ անցավ Սիգաևի մտքով։— Սակայն մեծ պատիվ է... Այդպիսի անասուններին սպանում են շների պես...»։

Գործակատարը նազանքով ետ շրջվելով և, փոքրիկ ոտքե-

ռով արագ դոփդոփելով, չդադարելով ժպտալ և շատախոսել, նրա առջև դրեց ատրճանակների մի ամբողջ կույտ։ Ամենից ախորժելի և ազդեցիկ երևում էր Սմիթ և Վեսսոնը։ Սիգաևը ձեռքն առավ այդ սիստեմի մի ատրճանակ, բութ հայացքով ուշադրությունը հառեց դրա վրա և խոր մտածմունքի մեջ ընկավ։ Նրա երևակայությունը պատկերում էր, թե ինչպես է նա ջախջախում գանգերը, ինչպես արյունը գետի պես հոսում է գորգի և պարկետի վրա, ինչպես ոտքը կթափահարի մեռնող դավաճանուհու վրա... Բայց նրա վրդովված հոգու համար դա քիչ էր։ Արյունալի պատկերները, աղաղակն ու սարսափը նրան չէին բավարարում... Հարկավոր էր մտածել որևէ ավելի սարսափելի մի բան։

«Ահա թե ինչ, ես կսպանեմ և՛ սիրեկանին, և ինձ,— մտածեց նա,— իսկ կնոջս կթողնեմ թող ապրի։ Թող նա հյուծվի խղճի խայթից և շրջապատողների արհամարհանքից։ Նման ներվային բնավորության համար, ինչպես նա է, այդ ավելի տանջալից է, քան մահը...»։

Եվ նա պատկերացրեց իր թաղումը. նա, անպատված, պառկել է դագաղում, հեզ ժպիտը շրթունքներին, իսկ կինը՝ գունատ, խղճի խայթից տանջված, գնում է դագաղի հետևից ինչպես մի Նիոբեա, և չգիտե, թե ուր կորչի ոչնչացնող, արհամարհական հայացքներից, որ նետում է նրա վրա ղայրացած սմբոխը...

— Ես տեսնում եմ, մայր, որ ձեզ դուր է գալիս Սմիթ և Վեսսոնը,— ընդհատեց գործակատարը նրա մտածմունքը։— Եթե դա ձեզ թանկ է թվում, ապա համեցեք, զիջում եմ հինգ ռուբլի... Թեև մենք ունենք դեռ ուրիշ, ավելի էժան սիստեմներ։

Ֆրանսիացու կերպարանքով մարդը շնորհալի կերպով ետ շրջվեց և դարակներից ցած բերեց կրկին մի դյուժին պատյաններ ատրճանակներով։

— Ահա, մայր, գինը երեսուն ռուբլի է։ Այդ թանկ չէ, մանավանդ որ, կուրսը սարսափելի ընկավ, իսկ մաքսային հարկը, մայր, բարձրանում է ամեն ժամ։ Մայր, աստված է վկա, ես պահպանողական եմ, բայց նաև ես սկսում եմ տրտնջալ։ Շնորհ արեք, կուրսը և մաքսային սակագինը այն են արել, որ հիմա զենք կարող են ձեռք բերել միայն հարուստները։ Չքավորներին մնացել է միայն Տուլայի զենքը և ֆոսֆորային լուցկիները, իսկ

Տուլայի զենքը՝ դա դժբախտություն է։ Կրակում ես Տուլայի ատրճանակը կնոջդ վրա և դիպցնում ես քո թիակներին...

Սիգաևը հանկարծ վիրավորվեց և խղճաց, որ ինքը պիտի մեռած լինի և չտեսնի դավաճանուհու տանջանքները։ Վրեժը այն ժամանակ է միայն քաղցր, երբ հնարավորություն ունես տեսնել և շոշափել դրա պտուղները, իսկ ի՞նչ միտք ունի, որ ինքը պառկի դագաղում և ոչինչ չզգա։

«Արդյոք այսպես չանե՞մ,— միտքը փոխեց նա։— Կսպանեմ սիրեկանին, հետո կլինեմ թաղմանը, կտեսնեմ, իսկ թաղումից հետո ինձ կսպանեմ... Սակայն մինչև թաղումը ինձ կձերբակալեն և զենքը ձեռքիցս կառնեն... Այսպես կանեմ, կսպանեմ նրան, կինս կմնա կենդանի, ես... ես միաժամանակ չեմ սպանում ինձ, այլ կալանքի տակ կմնամ։ Ինձ սպանել միշտ էլ կարող եմ։ Կալանքը նրանով է լավ, որ նախնական հետաքննության ժամանակ ես հնարավորություն կունենամ իշխանության առջև բաց անելու կնոջս վարմունքի ամբողջ ստորությունը։ Եթե ես ինձ սպանեմ, ապա նա, գուցե իրեն հատուկ ստությամբ և լկտիությամբ ամեն բանում մեղադրի ինձ, և հասարակությունը կարդարացնի նրա վարմունքը, և թերևս կծիծաղի ինձ վրա, իսկ եթե ես կենդանի մնամ, ապա...»։

Մի րոպե հետո նա մտածեց.

«Այո, եթե ես ինձ սպանեմ, ապա թերևս ինձ կմեղադրեն և կկասկածեն մանր զգացմունքների մեջ... Եվ այն էլ կա, ինչի՞ համար ինձ սպանեմ։ Առաջինը դա։ Երկրորդ՝ կրակել իր վրա— կնշանակի վախենալ։ Այսպես ուրեմն, կսպանեմ սիրեկանին, կնոջս թողնում եմ, որ ապրի, ինքս գնում եմ դատարան։ Ինձ կդատեն, իսկ կինս ներկա կլինի իբրև վկա։ Պատկերացնում եմ նրա շփոթվելը, նրա անարգվելը, երբ նրան կսկսի հարցաքննել իմ պաշտպանը։ Դատարանի, հասարակության և մամուլի համակրանքը, իհարկե, կլինի իմ կողմը...»։

Նա մտածում էր, իսկ գործակատարը բաց էր անում նրա առաջ ապրանքը և իր պարտքն էր համարում զբաղեցնել գնորդին։

— Ահա անգլիական նոր սիստեմներ, որ նոր ենք ստացել,— շատախոսում էր նա։— Բայց նախազգուշացնում եմ, մայր, որ բոլոր այս սիստեմները ոչինչ են Սմիթ և Վեսսոնի առաջ։ Օրերս,— դուք հավանորեն կարդացիք,— մի սպա մեղանից գնեց Սմիթ և Վեսսոնի սիստեմի ատրճանակ։ Նա կրակեց

սիրեկանի վրա և,— ի՞նչ եք կարծում,— գնդակը ծակեց անցավ, հետո անցավ բրոնզե լամպը, հետո դաշնամուրը և դաշնամուրից ռիկոշետով սպանեց բոլոնյան շնիկին և կոնտուզիայի ենթարկեց կնոջը։ Էֆեկտը փայլուն է և պատիվ է բերում մեր ֆիրմային։ Սպան այժմ կալանավորված է... Նրան, իհարկե, կմեղադրեն և կաքսորեն տաժանակիր աշխատանքի։ Առաջին, որ մեր օրենսդրությունը արդեն չափազանց հնացել է. երկրորդ, մսյո, դատարանը միշտ սիրեկանի կողմն է լինում։ Ինչո՞ւ։ Շատ պարզ է, մսյո։ Թե՛ դատավորները, թե՛ ատենակալները, թե՛ դատախազը և թե՛ դատապաշտպանը հենց իրենք ապրում են ուրիշների կանանց հետ, և նրանց համար ավելի հանգիստ կլինի, եթե Ռուսաստանում մի մարդով պակաս լինի։ Հասարակության համար հաճելի կլինի, երբ կառավարությունը բոլոր տղամարդկանց աքսորի Սախալին։ Օ՜, մսյո, չգիտեք ինչ վրդովմունք է առաջացնում իմ մեջ ժամանակակից բարքերի փչացումը։ Ուրիշների կանանց սիրելը այնպես է ընդունված, ինչպես ուրիշների ծխախոտ ծխելը և ուրիշների գրքեր կարդալը։ Տարեցտարի մեզ մոտ առևտուրը քանի գնում ավելի վատանում է և վատանում,— դա չի նշանակում, որ սիրեկանները քանի գնում պակասում են, այլ կնշանակի, որ ամուսինները հաշտվում են իրենց դրության հետ և վախենում են դատարանից ու աքսորից։

Գործակատարը շուրջը նայեց և շշնջաց.

— Իսկ ո՞վ է մեղավոր։ Կառավարությո՞ւնը։

«Գնալ Սախալին ինչ որ մի խոզի համար նույնպես խելացի բան չէ,— միտքը փոխեց Սիգաևը։— Եթե ես աքսոր գնամ, ապա դա միայն հնարավորություն կտա կնոջս երկրորդ անգամ ամուսնանալու և երկրորդ ամուսնուն խաբելու։ Նա կհաղթանակի... Այսպես ուրեմն. նրան ես կենդանի կթողնեմ, ինձ չեմ սպանում, սիրեկանին... նույնպես չեմ սպանում։ Պետք է հնար մտածել և որևէ ավելի խելացի և զգալի բան անել։ Նրանց կպատժեմ արհամարհանքով և կսարքեմ մի աղմկալի ամուսնալուծական դատավարություն...»։

— Ահա, մսյո, էլի նոր սիստեմ,— ասաց գործակատարը, դարակից ցած բերելով ատրճանակների մի նոր դյուժին։— Ձեր ուշադրությունն եմ հրավիրում փակաղակի օրիգինալ մեխանիզմի վրա...

Սիգաևին, իր որոշումից հետո, ատրճանակ պետք չէր արդեն, մինչ գործակատարը ավելի ու ավելի ոգևորվելով բաց էր

անում նրա առաջ իր ապրանքը։ Վիրավորված ամուսնու մեղքը եկավ, որ իր պատճառով գործակատարը զուր աշխատում էր, զուր հրճվում, ժպտում, ժամանակ էր կորցնում...

— Լավ, այդ դեպքում...— խոսեց քթի տակ նա,— ես հետո կանցնեմ կամ... որևէ մեկին կուղարկեմ։

Նա չտեսավ գործակատարի դեմքի արտահայտությունը, բայց որպեսզի մի փոքր հարթի անհարմարությունը, անհրաժեշտ համարեց որևէ բան գնել։ Բայց ի՞նչ գնել։ Նա աչքերը պտտեցրեց խանութի պատերի կողմը, որոնելով որևէ ավելի էժան բան, և հայացքը կանգ առավ դռան մոտ կախված մի կանաչ ցանցի վրա։

— Սա... սա՞ ինչ բան է,— հարցրեց նա։

— Դա ցանց է լոր որսալու համար։

— Իսկ ի՞նչ արժե։

— Ութ ռուբլի, մսյո։

— Փաթաթեցեք...

Վիրավորված ամուսինը վճարեց ութ ռուբլի, առավ ցանցը և, իրեն ավելի վիրավորված զգալով, դուրս եկավ խանութից։

1887

ՓՈՍՏԸ

Գիշերվա ժամը երեքն էր։ Փոստատարը, արդեն ճանապարհ ընկնելու պատրաստ, գլխարկը գլխին, վերարկուով և ժանգոտված թուրը ձեռքին, կանգնել էր դռան մոտ և սպասում էր, թե կառապանները երբ կբառնան-կվերջացնեն փոստը հենց նոր բերած տրոյկայի վրա։ Քունը գլխին՝ ընդունողը նստել էր իր սեղանի մոտ, որ նման էր վաճառասեղանի, ինչ-որ բան էր գրում բլանկի վրա և ասում էր.

— Իմ քրոջորդի ուսանողը խնդրում է, որ հենց հիմա իրեն տանեն կայարան։ Դե ուրեմն, էն իքը, Իգնատև, նստացրու նրան հետդ տրոյկային ու տեղ հասցրու։ Թեև չի թույլատրվում, որ կողմնակի մարդկանց փոստը տանի, բայց ի՞նչ անենք։ Փոխանակ նրա համար ձիեր վարձենք, թող ավելի լավ է ձրի գնա։

— Պատրա՜ստ է,— բակից լսվեց մի ձայն։

— Դե, աստված հետդ, ճամփա ընկիր,— ասաց ընդունողը։— Ո՞ր կառապանն է գնում։

— Սեմյոն Գլաղովը։

— Եկ ստորագրի՛ր։

Փոստատարը ստորագրեց և դուրս գնաց։ Փոստային բաժանմունքի դռանը մթագույն երևում էր տրոյկան։ Ձիերը կանգնել էին անշարժ, միայն մի կողքի ձին մեկ մի ոտի վրա էր կանգնում, մեկ՝ մյուս, որից երբեմն զրնգում էր զանգակը։ Հակերով բարձած տարանտասը սև բծի նման էր երևում, որի կողքին ծույլ շարժվում էին երկու կերպարանք. ուսանողը ճամպրուկը ձեռքին և կառապանը։ Վերջինը ծխամորճիկ էր ծխում. ծխամորճիկի կրակը շարժվում էր մթնշաղում, հանգչում և բոցավառվում. մերթ մի վայրկյան դա լուսավորում էր թևքի մի մասը, մերթ՝ բրդոտ բեղերը, մերթ մեծ, պղնձե-կարմիր քիթը, մերթ կախված, խստատես հոնքերը։

Փոստատարը ձեռքերով տրորեց հակերը, վրաները դրեց թուրը և ցատկեց տարանտասին։ Ուսանողը անվճռականորեն ելավ նրանից հետո և, պատահաբար արմունկով հրելով նրան, ամաչկոտ և քաղաքավարի ասաց. «Ներեցեք»։ Ծխամորճիկը հանգավ։ Փոստային բաժանմունքից դուրս եկավ ընդունողը, ինչպես որ կար՝ միայն ժիլետով և հողաթափերով. կծկվելով գիշերային խոնավությունից և կռնչացնելով նա անցկացավ տարանտասի մոտով և ասաց.

— Դե՛, ասուված հետնե՛րդ։ Մորդ բարևիր, Միխայլո։ Բոլորին բարևիր։ Իգնատև, դու էլ չմոռանաս ծրարը հանձնել Բիստրեցովին։ Քշի՛ր։

Կառապանը սանձերը հավաքեց մի ձեռքը, քիթը մաքրեց և, ուղղելով նստելու տեղը, շրթունքները չպպացրեց։

— Բարևիր, հա,— կրկնեց ընդունողը։

Զանգակը ինչ-որ մի բան զնգացրեց բոժոժներին, բոժոժները քնքշորեն պատասխանեցին նրան։ Տարանտասը ճռնչաց, տեղից շարժվեց, զանգակը սկսեց լաց լինել, բոժոժները՝ ծիծաղել։ Կառապանը, կիսով չափ վեր կենալով, երկու անգամ մտրակեց կողքի անհանգիստ ձիուն, և տրոյկան սկսեց խուլ դղրդալ փոշոտ ճանապարհի վրա։ Փոքրիկ քաղաքը քնած էր։ Փողոցի երկու կողմում սևին էին տալիս տներն ու ծառերը, և ոչ մի կրակ չէր երևում։ Աստղաստիւռ երկնքում տեղ-տեղ ձգվում էին նեղ շերտերով ամպեր, և այնտեղ, ուր շուտով պետք է սկսվեր լուսաբացը, կանգնել էր լուսնի նեղ մանգաղը, բայց ո՛չ աստղերը, որոնք շատ էին, ո՛չ կիսալուսինը, որ թվում էր սպիտակ, չէին

պարզում գիշերային օդը։ Ցուրտ էր, խոնավ և աշնան հոտ էր գալիս։

Ուսանողը, որ քաղաքավարության պարտք էր համարում սիրալիր խոսակցություն սկսել մի մարդու հետ, որ չմերժեց նրան վերցնել, սկսեց.

— Ամռան այս պահին արդեն լույս է, իսկ հիմա արշալույսն էլ չի երևում։ Անց կացավ ամառը։

Ուսանողը երկնքին նայեց և շարունակեց.

— Անգամ երկնքից երևում է, որ արդեն աշուն է։ Նայեցեք աջ։ Տեսնո՞ւմ եք երեք աստղեր, որ իրար կողքի մի գծով շարված են։ Դա Օրիոն համաստեղությունն է, որ մեր կիսագնդում երևվում է միայն սեպտեմբերին։

Փոստատարը, որ ձեռքերը խոթել էր թևքերը և մինչև ականջները թաղվել էր վերարկուի օձիքի մեջ, չշարժվեց և չնայեց երկնքին։ Ըստ երևույթին, Օրիոն համաստեղությունը նրան չէր հետաքրքրում։ Նա սովորել էր աստղեր տեսնելը, և հավանորեն դրանք վաղուց ձանձրացրել էին նրան։ Ուսանողը մի փոքր լռեց և ապա ասաց.

— Ցուրտ է։ Արդեն ժամանակն է, որ լուսանա։ Ձեզ հայտնի՞ է, թե ո՛ր ժամին է արևը ծագում։

— Ի՞նչ։

— Ե՞րբ է այժմ արևը ծագում։

— Վեցին,— պատասխանեց կառապանը։

Տրոյկան դուրս եկավ քաղաքից։ Հիմա արդեն երկու կողմից երևում էին միայն բանջարանոցների հյուսածո ցանկապատերը և հատ-հատ ուռենիները, իսկ առջևում մեզը ծածկել էր ամեն ինչ։ Այստեղ ազատ տարածության մեջ կիսալուսինը թվում էր ավելի մեծ, և աստղերը փայլում էին ավելի վառ։ Բայց ահա խոնավության հոտ եկավ, փոստատարը ավելի խոր կծկվեց օձիքի մեջ, և ուսանողը զգաց, ինչպես անախորժ ցուրտը սահեց նախ ոտքերի մոտ, հետո սահեց հակերի, ձեռքերի, դեմքի վրայով։ Տրոյկան սկսեց գնալ ավելի հանդարտ. զանգակը լռեց, կարծես նա էլ մրսեց։ Լսվեց ջրի ճղփոց, և ձիերի ոտների տակ, և անիվների մոտ թռչկոտեցին աստղերը, որ արտացոլվում էին ջրի մեջ։

Իսկ մի տասը րոպեից հետո այնպես մթնեց, որ արդեն չէին երևում ո՛չ աստղերը, ոչ է՛լ կիսալուսինը։ Տրոյկան մտնում էր անտառը։ Եղևնու ծակող ճյուղերը անընդհատ խփում էին ուսա-

նողի գլխարկին և սարդոստայնը կպչում էր նրա դեմքին։ Անիվ-ներն ու սմբակները թխկթխկում էին վերարմատների վրա, և տարանտասը ճոճվում էր հարբածի պես։

— Ճանապարհով տար,— ասաց փոստատարը բարկացած։— Ի՞նչ ես եզրով տանում։ Ողջ ոտքս ճանկռոտվեց։ Աչ գնա։

Բայց այստեղ քիչ մնաց դժբախտություն պատահեր։ Տարանտասը հանկարծ վեր թռավ, կարծես նրան բռնեց ջղաձգությունը, դողաց և ոռնոցով ուժգին ծռվեց մերթ աջ, մերթ ձախ, սարսափելի արագությամբ սլացավ բացատով։ Ձիերը ինչ-որ բանից վախեցան և փախցրին տարանտասը։

— Դը՞ռռռ, դը՞ռռռ՞,— վախեցած գոռաց կառապանը.— Դը՞ռռռ... անիծածներ։

Վեր թռած ուսանողը, որպեսզի հավասարակշռությունը պահի և տարանտասից դուրս չթռչի, կռացավ առաջ և սկսեց մի բան փնտրել բռնելու համար, բայց կաշվե հակերը լպրծուն էին, և կառապանը, որի գոտուն պիտի ձեռը գցեր ուսանողը՝ ինքը հենց վեր-վեր էր թռչում և ամեն վայրկյան պատրաստ էր ընկնելու։ Անիվների աղմուկի և տարանտասի դղրդոցի միջից լսվեց, թե ինչպես թուրը շրխկաց գետնի վրա, հետո մի փոքր անց, ինչ-որ մի բան տարանտասի հետևում երկու անգամ խուլ զարկվեց գետնին։

— Դը՞ռռռ,— մորմոքուն ձայնով գոռաց կառապանը, ետ կռանալով։— Կանգնե՛ք։

Ուսանողը երեսնիվայր ընկավ նրա նստատեղին և ջարդեց ճակատը, բայց հենց իսկույն տարանտասը ետ շրջեց նրան, վեր թռցրեց, և նա մեջքով ուժգին դիպավ տարանտասի հետևի մասին։ «Վայր եմ ընկնում»,— արագ անցավ նրա մտքով, բայց այդ պահին տարանտասը դուրս թռավ անտառից բաց տարածություն, թափով շուռ տվեց դեպի աջ և դրմփալով գերանե կամուրջին, կանգ առավ մեխվածի պես, և այդ հանկարծակի կանգառումից ուսանողը իներցիայով կրկին առաջ թեքվեց։

Կառապանը և ուսանողը՝ երկուսն էլ շնչասպառ էին եղել։ Փոստատարը տարանտասում չկար։ Նա թրի և ուսանողի ճամպրուկի և մի հակի հետ դուրս էր թռել։

— Կանգնի՛ր, սրիկա։ Կանգ-նի՛ր,— լսվեց անտառի կողմից նրա գոռոցը։— Անիծված անասուն,— գոռում էր նա, վազելով դեպի տարանտասը, և նրա լացող ձայնի մեջ լսվում էր

ցավ և չարություն։— Սատկե՛ս դու, հա՛,— գոռաց նա, արագ վազելով դեպի կառապանը և բռունցքը նրա վրա շարժելով։

— Այ թե բան եղավ, աստված հասնի,— մոթմոթաց կառապանը մեղանչող ձայնով, ինչ-որ բան ուղղելով ձիերի երախների մոտ։— Բոլորը էս սատկածի, կողքի ձիու երեսից։ Ջահել է անիծվածը, միայն մի շաբաթ է, որ կողքից լծված գնում է։ Գնալը ոչինչ, բայց հենց որ սարից ներքև է իջնում՝ էլ պրծավ։ Մի երեք հատ որ վեր հասցվեր ոեխին, էլ չարություն չէր անի... Կանգնի՞։ Չոռ քեզ։

Մինչ կառապանը կարգի էր բերում ձիերին և ճանապարհին որոնում ճամպրուկը, հակը և թուրը, փոստատարը շարունակում էր լացող, չարությունից ճչացող ձայնով նրա վրա հայհոյանքներ թափել։ Տեղավորելով բեռը, կառապանը, առանց դրա կարիքի, ձիերին տարավ հարյուր քայլ, մոթմոթաց անհանգիստ կողքի ձիու վրա և թռավ իր նստատեղին։

Երբ վախն անցավ, ուսանողի ծիծաղը եկավ և նա ուրախացավ։ Կյանքում առաջին անգամ էր նա գիշեր ժամանակ փոստի տրոյկայով ճանապարհ գնում, և քիչ առաջվա ապրած ցնցումը, փոստատարի թռիչքը և մեջքի ցավը նրան թվում էին հետաքրքրքրական արկած։ Նա ծխեց և ծիծաղելով ասաց.

— Բայց չէ՞ որ այսպես կարելի է վիզը ոլորել։ Ես քիչ մնաց դուրս թռչեի և անգամ չնկատեցի, թե ինչպես դուք դուրս թռար։ Երևակայում եմ, թե աշնանը ինչպիսի ճանապարհ գնալ պետք է լինի։

Փոստատարը լռում էր։

— Իսկ դուք քանի՞ տարի է փոստով ճանապարհ եք գնում,— հարցրեց ուսանողը։

— Տասնմեկ տարի։

— Օհո՞։ Ամե՞ն օր։

— Ամեն օր։ Տեղ եմ հասցնում այս փոստը և իսկույնևթ ետ եմ գնում։ Ի՞նչ կա որ։

Տասնմեկ տարի, ամենօրյա ճանապարհ գնալով, հավանորեն, ապրած կլիներ շատ հետաքրքրական արկածներ։ Պարզ ամռան օրերին և աշնան խիստ գիշերներին կամ ձմռանը, երբ տրոյկայի շուրջը ոռնոցով պտույտ է գալիս չար բուքը, դժվար է զգույշ մնալ սարսափելի, երկյուղալի բաներից։ Խոսք չկա, շատ անգամ են ձիերը փախցրել, տարանտասը խրվել-մնացել

է հեղեղատի մեջ, չար մարդիկ հարձակվել, բուքը ճանապարհից հանել է։

— Երևակայում եմ, թե ինչքա՜ն արկածներ են պատահել ձեզ տասնմեկ տարում,— ասաց ուսանողը։— Պետք է որ սարսափելի լինի ճանապարհ գնալը։

Ուսանողը խոսում և սպասում էր, որ փոստատարը կպատմի իրեն որևէ բան, բայց նա լռում էր և կուչ էր եկել իր օձիքի մեջ։ Մինչ այդ, սկսեց լուսանալ։ Աննկատելի էր, թե ինչպես էր երկինքը իր գույնը փոխում։ Երկինքը դեռ մութ էր թվում, բայց արդեն երևում էին թե՛ ձիերը, թե՛ կառապանը, թե՛ ճանապարհը։ Լուսնի մանգաղը հետզհետե դառնում էր ավելի սպիտակ ու սպիտակ, իսկ նրա տակ ձգված ամպը, նմանվելով լաֆետով հրանոթի՝ հազիվհազ դեղնել էր իր ներքևի եզրին։ Շուտով երևաց փոստատարի դեմքը։ Դա ցողից թաց էր, գորշ և անշարժ, ինչպես մեռելինը։ Դրա վրա սառել-մնացել էր բութ, մռայլ չարության արտահայտությունը, կարծես փոստատարը դեռ զգում էր ցավը և շարունակում էր բարկանալ կառապանի վրա։

— Փա՜ռք աստծո, արդեն լուսանում է,— ասաց ուսանողը, նայելով նրա չար, մրսած դեմքին։— Ես բոլորովին սառել եմ։ Սեպտեմբերին դիշերները ցուրտ են լինում, բայց բավական է արևը դուրս գա, և ցուրտ կարծես չի եղել բոլորովին։ Շո՞ւտ կհասնենք կայարան։

Փոստատարը կնճռոտվեց և լացող դեմք ընդունեց։

— Ինչպես սիրում եք խոսել, աստված վկա,— ասաց նա։— Մի՞թե լուռ չեք կարող ճանապարհ գնալ։

Ուսանողը կոտրվեց և արդեն չդիպավ նրան ողջ ճանապարհին։ Առավոտը արագ վրա հասավ։ Լուսինը գունատվեց և միաձուլվեց պղտոր, գորշ երկնքի հետ, ամպը հետզհետե դեղնեց, աստղերը հանգան, բայց արևելքը դեռ սառն էր, դեռ նույն գույնի, ինչպես և ողջ երկինքը, այնպես որ դեռ հավատալի չէր, որ նրա հետև թաքնված է արևը...

Առավոտվա ցուրտը և փոստատարի մռայլությունը քիչ-քիչ հաղորդվեց նաև մրսած ուսանողին։ Նա անտարբեր նայում էր բնությանը, սպասում արևի ջերմության և մտածում միայն այն մասին, թե որքան երկյուղալի կարող է լինել և զզվելի է խեղճ ծառերի ու խոտերի համար ցուրտ գիշերներ անցկացնելը։ Արևը ծագեց պղտոր, քունը գլուխը և սառը։ Ծառերի կատարները չոսկեզօծվեցին ծագող արևից, ինչպես գրում են սովորաբար, շողերը չսողացին գետնի վրայով և քնկոտ թռչունների թռիչքի մեջ չէր նկատվում ուրախություն։ Ինչպես որ ցուրտ էր գիշերը, այդպես էլ մնաց արևի ժամանակ...

Ուսանողը քնկոտ և մռայլ նայում էր կալվածատան վարագուրած պատուհաններին, որի մոտով անցնում էր տրոյկան։ Պատուհանների հետևը, մտածում էր նա, հավանորեն մարդիկ քնած են ամենապինդ, առավոտյան քնով և չեն լսում փոստի զնգզնգոցը, չեն զգում ցուրտ, չեն տեսնում փոստատարի չար դեմքը. իսկ եթե զանգակը զարթնեցնի էլ որևէ օրիորդի, ապա նա շուտ կգա մյուս կողքի վրա, կժպտա տաքության և հանգստի լիությունից և, ոտքերը կուչ ածելով, ձեռքերը կտանի այտի տակ, ավելի պինդ կքնի։

Ուսանողը նայեց լճին, որ փայլում էր կալվածատան մոտ, և միտը բերեց ծածաններ և գայլաձկներ, որոնք հնարավոր են գտնում ապրել սառը ջրում...

— Կողմնակիներին կառքով տանել չի հրամայված...— սկսեց խոսել փոստատարը։— Չի թույլատրվում։ Իսկ եթե չի թույլատրվում, ապա և հնարավոր չի նստել... Այո։ Ասենք, ինձ համար միևնույն է, միայն ես այդ չեմ սիրում և չեմ ուզում։

— Ապա ինչո՞ւ էիք լռել առաջուց, եթե դա ձեզ դուր չի գալիս։

Փոստատարը ոչինչ չպատասխանեց և շարունակեց նայել անբարյացակամ, չարությամբ։ Երբ, մի փոքր անց, փոստը կանգնեց կայարանի մուտքի մոտ, ուսանողը շնորհակալություն հայտնեց և դուրս եկավ տրանսպորտից։ Փոստատար գնացքը դեռ չէր եկել։ Պահեստի ուղու վրա կանգնել էր ապրանքատար երկար գնացքը. տենդերի վրա մեքենավարն ու նրա օգնականը՝ դեմքները ցողից խոնավացած, թեյ էին խմում կեղտոտ թիթեղե թեյամանից։ Վագոնները, կառամատույցը, նստարանները՝ բոլորը թաց էին և սառը։ Մինչև գնացքի գալը ուսանողը կանգնել էր բուֆետի մոտ և թեյ էր խմում, իսկ փոստատարը, ձեռքերը թևքերը կոխած, դեռ շարունակ չարությունը դեմքին, մենակ քայլում էր կառամատույցում և նայում էր իր ոտքերի տակ։

Ո՞ւմ վրա էր բարկանում նա։ Մարդկա՞նց վրա, կարիքի՞ վրա, թե՞ աշնան գիշերների։

1887

ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆԵՐ

Հիշում եմ, դեռ հինգերորդ թե վեցերորդ դասարանի գիմնազիստ էի՝ պապիս հետ Դոնի Նահանգի Բոլշայա Կրեպկայա գյուղից գնում էի Ռոստով։ Օգոստոսյան տոթ, հոգնեցուցիչ-տաղտկալի օր էր։ Շոգից և չոր ու տաք քամուց, որ փոշու ամպ էր քշում մեզ վրա, աչքերս փակվում էին, բերանս ցամաքել էր։ Չէի ցանկանում ո՛չ նայել, ո՛չ խոսել, ո՛չ մտածել, և երբ մեր նիրհող կառապանը՝ խախոլ Կարպոն, ձիու վրա թափ էր տալիս մտրակը, նրա ծայրով զարկում էր գլխարկիս, ես չէի բողոքում, ոչ մի ձայն չէի հանում, այլ միայն կիսաքնից սթափվելով, հուսահատ և հեզ նայում էի հեռու,— փոշու միջից արդյոք չի՞ երևում գյուղը։ Զիուն կեր տալու համար կանգ առանք հայկական Բախչի-Սալա մեծ գյուղում՝ պապիս ծանոթ մի հարուստ հայի տանը։ Կյանքումս երբեք այդ հայից ավելի ծիծաղելի բան չեմ տեսել։ Պատկերացրեք, մի փոքրիկ ու խուզած գլուխ՝ թանձր ու խոր կախ ընկած հոնքերով, կտուցե քթով, երկար և ճերմակ բեղերով, լայն բերանով, որից ցցված է կեռասե երկար չիբուխը։ Այդ փոքրիկ գլուխն անշնորհք կպցված էր նիհար, սապատավոր մարմնին, որը հագած էր ֆանտաստիկական շորեր՝ պոչատ, կարմիր բաճկոն և լայն վառ մանուշակագույն շալվար։ Այդ կերպարանքը քայլում էր ոտները չռած, հողաթափերը քստքստացնելով, խոսում էր չիբուխը բերանից չհանելով, բայց իրեն պահում էր խիստ հայկական արժանապատվությամբ, չէր ժպտում, չռում էր աչքերը և աշխատում էր հյուրերի վրա որքան կարելի է քիչ ուշադրություն դարձնել։

Հայի տանը ո՛չ քամի կար, ո՛չ փոշի, բայց նույնպես անախորժ էր, տոթ, ձանձրալի, ինչպես տափաստանում ու ճանապարհին։ Հիշում եմ, փոշեթաթախ ու տոթից թմրած, նստել էի անկյունում՝ կանաչ սնդուկի վրա։ Ջներկած փայտե պատերը, կահկարասիները և օխրայած հատակը չոր, արևից խանձված փայտի հոտ էին տարածում։ Ուր նայում էի՝ ամեն կողմ ճանճեր էին, ճանճեր ու ճանճեր։ Պապս ու հայը կիսաձայն խոսում էին շոբանների, արոտավայրերի ու ոչխարների մասին։ Ես գիտեի, որ ինքնաեռը պատրաստելու են մի ամբողջ ժամ, պապս ժամից ավելի թեյ է խմելու, հետո մի երկու-երեք ժամ պառկելու է քնելու, ապա օրվա մի քառորդն անցնելու է սպասելով, որից հետո նորից սկսվելու են՝ շոգը, փոշին և խորդուբորդ ճանապարհի ցնցումները։ Ես լսում էի երկու ձայների քչփչոցը և ինձ սկսում էր թվալ, թե հային, իրեղեններով պահարանը, ճանճերը և պատուհանները, որոնք արևից էլ ուժեղ են կիզում, տեսնում եմ չափազանց վաղուց և կդադարեմ նրանց տեսնել միայն շատ հեռավոր ապագայում, և ատելությամբ էի լցվում դեպի տափաստանը, արևը, ճանճերը։

Լաչակ կապած մի խախոլուհի մատուցարանով ներս բերեց թեյի պարագաները, հետո՝ ինքնաեռը։ Հայն առանց շտապելու հլավ հաշտն ու կանչեց.

— Մաշյա, արի թեյ լիր։ Ո՞ւր ես, Մաշյա։

Շտապ քայլերի ձայն լսվեց, և սենյակ մտավ տասնվեց տարեկան մի աղջիկ, շթե հասարակ հագուստով և սպիտակ լաչակով։ Երբ նա բաժակներն էր լվանում ու թեյ լցնում, թիկունքով կանգնած էր դեպի ինձ, և ես միայն նկատեցի, որ նրա մեջքը բարակ էր, ոտները բորիկ, և որ փոքրիկ մերկ կրունկները ծածկվում էին երկար, ցած թողած վարտիքի ծայրերով։

Տանտերն ինձ հրավիրեց թեյ խմելու։ Սեղանի մոտ նստելով՝ նայեցի ինձ թեյ տվող աղջկա դեմքին և հանկարծ այնպես ղդացի, կարծես թե ներսս քամի բարձրացավ, սրտիցս ցրեց օրվա տպավորություններն իրենց տաղտկության ու փոշու հետ միասին։ Ես նկատեցի դյութող դիմագծերով այն խիստ հրաշալի դեմքերից մեկը, որ երբևէ տեսել էի արթմնի կամ երազում։ Դեմս կանգնած էր մի գեղեցկուհի, և ես այդ զգացի առաջին հայացքից, ինչպես, օրինակ, զգում եմ շանթը։

Պատրաստ եմ երդվելու, որ Մաշան, կամ ինչպես հայրն էր ասում, Մաշյան, կատարյալ գեղեցկուհի էր, բայց ապացուցել չեմ կարող։ Երբեմն պատահում է, որ ամպերը խառը կուտակվում են հորիզոնում, և արևը, թաքնվելով նրանց տակ, երկինքը և ամպերը ներկում է ամեն տեսակ գույներով՝ մուգ կարմիր, նարնջի, ոսկու, բաց մանուշակի, մուգ վարդագույն։ Ամպերից մեկը նմանվում է վարդապետի, մյուսը՝ ձկան, երրորդը՝ չալմայավոր թուրքի։ Ցոլքը բռնում է երկնքի երրորդ մասը, պսպղում է եկեղեցու խաչի ու կալվածատիրոջ տան պատուհանների վրա, արտացոլվում է գետի և լճակների երեսին, թրթռում է ծառերի կատարներին, և հեռո՜ւ-հեռո՜ւ, մայրամուտի ֆոնի վրա՝ ուր որ գիշերելու է թռչում վայրի բադերի երամը... Ե՛վ նախիրը քշող տավարածը, և՛ գետափով բրիչկայով վերադարձող հողաչափը, և՛ ջրոսնող մարդիկ,— բոլորն էլ նայում

Նն մայրամուտին և բոլորն էլ գտնում են, որ նա խիստ գեղեցիկ է, բայց ոչ ոք չգիտե ու չի կարող ասել, ի՞նչն է այստեղ գեղեցիկը։

Միայն ինքս չէի, որ գտնում էի, թե հայի աղջիկը գեղեցիկ է։ Պապս, ութսուն տարեկան այդ ծերունին, շոր բնավորության տեր մի մարդ, անտարբեր դեպի կանայք ու բնության գեղեցկությունները, ամբողջ մի րոպե քնքշանքով նայեց Մաշային, հարցրեց.

— Սա ձեր աղջի՞կն է, Ավետ Նազարիչ։

— Աղջիկս է։ Էս է աղջիկս...— պատասխանեց տնատերը։

— Լավ օրիորդ է,— գովեց պապս։

Հայի աղջկա գեղեցկությունը նկարիչը կանվաներ կլասիկական և կատարյալ։ Այդ հատկապես այն գեղեցկությունն էր, որ զննելիս, աստված գիտե թե ինչպես, ներշնչվում եք այն հավատով, թե դուք տեսնում եք կանոնավոր դիմագծեր, որ նրա մազերը, աչքերը, քիթը, բերանը, վիզը, լանջը և երիտասարդ մարմնի բոլոր շարժումները ձուլված իրար, կազմել են մի ամբողջություն, ներդաշնակ մի ակորդ, որի համար բնությունը ամենափոքր չափով անգամ չի սխալվել։ Ձեզ թվում է, որ իդեալական գեղեցիկ կինը, չգիտես ինչու, պետք է ունենա հատկապես այնպիսի քիթ, ինչպիսին Մաշային է, ուղիղ և փոքր-ինչ կեռ, նույնպիսի խոշոր մուգ աչքեր, նույնպիսի երկար թերթերունքներ, նույնպիսի նվաղկոտ հայացք, և որ նրա սև, գանգուր մազերը և հոնքերը նույնպես սազում են քնքուշ, սպիտակափայլ ճակատին ու այտերին, ինչպես դալար եղեգնը՝ խաղաղ գետակին։ Մաշայի սպիտակ վիզը և նորահաս կուրծքը թույլ էին զարգացած, բայց որպեսզի կարողանաս քանդակել, թվում է, թե պետք է ունենաս ստեղծագործական մեծ տաղանդ։ Նայում եք և քիչ-քիչ ձեր մեջ ցանկություն է առաջանում՝ Մաշային ինչ-որ արտասովոր, հաճելի, անկեղծ և գեղեցիկ բան ասել, այնպես գեղեցիկ, ինչպես նա ինքն է։

Սկզբում ամոթ և ցավ էր պատճառում, որ Մաշան ինձ վրա բոլորովին ուշադրություն չի դարձնում և շարունակ վար է նայում։ Ինձ թվում էր, ինչ-որ առանձին մի օդ, երջանիկ ու հպարտ, նրան բաժանում էր ինձնից և խանդոտությամբ թաքցնում հայացքիցս։

«Այդ նրանից է,— մտածում էի ես,— որ խիստ փոշոտված եմ, արևից խանձված, և մեկ էլ նրանից, որ դեռ երեխա եմ»։

Բայց հետո քիչ-քիչ մոռացա ինքս ինձ և ամբողջովին տարվեցի նրա գեղեցկությամբ։ Ես տրդեն չէի հիշում տափաստանի ձանձրույթը, փոշին, չէի լսում ճանճերի տզզոցը, չէի առնում թեյի համը, միայն զգում էի, որ սեղանի մյուս կողմը՝ դեմս կանգնած է մի գեղեցկուհի։

Գեղեցկությունը շատ տարօրինակ կերպով էի զգում։ Ո՛չ ցանկություն, ո՛չ հրճվանք և ո՛չ էլ զվարճություն էր արթնացնում Մաշան իմ մեջ, այլ ծանր, թեպետև հաճելի, մի տխրություն։ Այդ տխրությունն անորոշ էր, աղոտ, ինչպես երազը։ Չգիտեմ ինչու, խղճում էի և՛ ինձ, և՛ պապիս, և՛ հային, և՛ նույնիսկ հայի աղջկան։ Զգում էի՝ կարծես շորսս էլ կորցրել ենք ինչ-որ կարևոր և մեր կյանքի համար անհրաժեշտ մի բան, որ էլ երբեք չենք գտնելու։ Պապս էլ տխրեց։ Նա այլևս չէր խոսում արոտավայրերի և ոչխարների մասին, այլ լռել և մտածկոտ նայում էր Մաշային։

Թեյից հետո պապս պառկեց քնելու, իսկ ես տնից դուրս եկա և նստեցի աստիճանների վրա։ Այդ տունը, ինչպես և Բախչի-Սալայի մյուս բոլոր տները, արևկող էր։ Ո՛չ ծառեր կային, ո՛չ ծածկ, ո՛չ ստվերներ։ Հայի խոտակալած մեծ բակում, չնայած սաստիկ շոգին, կենդանություն ու աշխուժություն էր տիրում։ Ցածր ցանկապատերից մեկի հետևում, որոնք այս ու այն կողմ հատում էին ընդարձակ բակը, կալ էին անում։ Կալի ուղիղ մեջտեղում տնկած սյան շուրջը, մի շարքի լծված, երկար շառավիղ կազմելով, վազում էին տասներկու ձի։ Կողքից քայլում էր երկար բաճկոնով և լայն շալվարով մի խախոլ, ճայթեցնում էր մտրակը և գոռում այնպիսի ձայնով, կարծես փորձում էր գրգռել ձիերին և պարծենալ նրանց վրա ունեցած իր իշխանությամբ։

— Հե՞յ, նզովյալներ։ Հե՞յ... խոլերան տանի ձեզ։

Դեղնավուն, սպիտակ և չալ ձիերը չհասկանալով, թե ինչու այդպես ստիպում են իրենց պտտվել միևնույն տեղում և ցորենի ցողունները տրորել, վազում էին ակամա, կարծես ուժասպառ և նեղացած թափահարում էին պոչերը։ Նրանց սմբակների տակից քամին բարձրացնում էր ոսկեփայլ մոխիր ամպերը և ցանկապատերի վրայից քշում էր հեռու։ Բարձր և թարմ դեղերի մոտ խոնվել էին փոցխավոր կանայք, շարժվում էին սայլերը, իսկ դեղերի այն կողմը, մի ուրիշ բակում, սյան շուրջ վազում էին մի ուրիշ՝ նույնպիսի տասներկու ձի և նույնպիսի մի խախոլ ճայթեցնում էր մտրակն ու ծաղրում ձիերին։

Աստիճանները, որոնց վրա նստած էի, տաք էին, նոսր, ճաղերի և պատուհանների շրջանակների վրա շոգից տեղ-տեղ փայտի խեժ էր ծորում։ Աստիճանների և պատուհանների փեղկերի տակ՝ ստվերների բարակ շերտերում կծկվել էին կարմիր զատիկներ։ Արևը խանձում էր և՛ գլուխս, և՛ կուրծքս, և՛ մեջքս, բայց ուշադրություն չէի դարձնում դրան, միայն զգում էի, թե ինչպես իմ ետևում՝ հաշտում և սենյակներում փայտե հատակի վրա թպրտում էին մերկ ոտքերը։ Թեյի բաժակները հավաքելով, Մաշան վազելով իջավ աստիճաններից, թեթև քամի փչելով վրաս, և թռչնի պես սլացավ դեպի փոքրիկ, մրոտած կից շենքը, երևի խոհանոցը, որտեղից ոչխարի տապակած մսի հոտ էր գալիս և լսվում էր հայերեն բարկացկոտ խոսակցություն։ Նա անհետացավ խավար դռնից ներս և նրա փոխարեն շեմի վրա երևաց մի կորացած պառավ հայ կին, կարմիր երեսով, երևում էին վարտիքի ծայրերը։ Պառավը բարկանում էր և հայհոյում մեկին։ Շուտով շեմի վրա երևաց Մաշան, խոհանոցի շոգից կարմրած ու մի սև, մեծ հաց ուսին դրած. հացի ծանրության տակ գեղեցիկ կորացած, նա բակի միջով վազեց կալը, ցատկեց ցանկապատի վրայից և, մռեխի ոսկեփայլ ամպերում սուզվելով, անհետացավ սայլերի ետևում։ Ձիերը քշող խախոլն իջեցրեց մըտրակը, սառեց, մի պահ լուռ նայեց սայլերի կողմը, հետո, երբ աղջիկը նորից վայրկենաբար անցավ ձիերի մոտից և ցատկեց ցանկապատի վրայից, խախոլն աչքերով ուղեկցեց նրան և ձիերի վրա այնպիսի ձայնով գոռաց, կարծես խիստ վշտացած էր.

— Ա՛յ, սատկեք դուք, կեղտոտ արարածներ...

Հետո շարունակ լսում էի աղջկա մերկ ոտքերի չդադարող քայլերը, տեսնում էի, ինչպես նա լուրջ, մտահոգ դեմքով այս ու այն կողմ էր գնում բակի մեջ։ Նա մե՛րթ վազում էր աստիճաններով, վրաս թեթև քամի տալով, մե՛րթ մտնում էր խոհանոց, մե՛րթ կալը, մե՛րթ վազում էր դարպասից դուրս, ես հազիվ էի կարողանում գլուխս շրջել, որպեսզի նրան հետևեմ։

Եվ որքան հաճախ էր նա իր գեղեցկությամբ սլանում աչքիս առջևից, այնքան ավելի խորանում էր իմ տխրությունը։ Խղճում էի և՛ ինձ, և՛ նրան, և՛ խախոլին, որն ամեն անգամ տխուր հայացքով ուղեկցում էր նրան, երբ նա մռեխի ամպերի միջից վազում էր դեպի սայլերը։ Իմ տխրության պատճառն արդյոք իմ նախանձն էր դեպի նրա գեղեցկությունը, թե՞ ափսոսում էի, որ այդ աղջիկը իմը չէ և երբեք իմը չի լինելու

և որ նրա համար ես օտար եմ,— կամ թե այն էր, որ աղոտ կերպով զգում էի՝ նրա հազվագյուտ գեղեցկությունը պատահական է ու ոչ պիտանի և, ինչպես ամեն բան աշխարհում, հավերժական չէ, կամ գուցե իմ տխրությունը համակված էր այն առանձնահատուկ զգացումով, որ արթնանում է մարդուս մեջ կատարյալ գեղեցկություն դիտելիս,— արտված գիտեմ։

Սպասման երեք ժամն աննկատելի անցավ։ Ինձ թվում էր, դեռ չհասցրի Մաշային դիտել, որ Կարպոն ձին տարավ գետը, լողացրեց և սկսեց կառքը լծել։ Թրջված ձին փնչացնում էր և հաճույքից սմբակով զարկում լծափայտին։ Կարպոն գոռում էր նրա վրա «назад!»։ Պասլս արթնացավ։ Մաշան ճռռոցով բացեց դարպասը, մենք կառք նստեցինք և հեռացանք բակից։ Գնում էինք լուռ, կարծես բարկացել էինք իրար վրա։

Երբ մոտ երկու թե երեք ժամ հետո հեռվում երևացին Ռոստովը և Նախիջևանը, Կարպոն, որ ամբողջ ճանապարհին լուռ էր, արագ շուռ եկավ, ասաց.

— Ա՛յ թե լավիկն էր հայի աղջիկը։

Եվ մտրակեց ձիուն։

II

Մի ուրիշ անգամ, արդեն ուսանող ժամանակս, երկաթուղով գնում էի դեպի Հարավ։ Մայիս ամիսն էր։ Կայարաններից մեկում, կարծեմ Բելգորոդի և Խարկովի միջև, գնացքից դուրս ելա կառամատույցում զբոսնելու։

Կայարանի փոքրիկ պարտեզի, կառամատույցի և դաշտերի վրա արդեն տարածվել էին երեկոյան ստվերները։ Կայարանի շենքը ծածկել էր վերջալույսը, բայց շոգեքարշից բարձրացող ծխի ամենավերին քուլաների նուրբ-վարդագույն փայլից երևում էր, որ արևը դեռ բոլորովին մայր չի մտել։

Կառամատույցում քայլելիս նկատեցի, որ զբոսնող ճանապարհորդներից շատերը շրջում ու կանգ էին առնում միայն երկրորդ կարգի մի վագոնի մոտ, այնպիսի մի արտահայտությամբ, կարծես այդ վագոնում նստած էր ինչ-որ նշանավոր մի մարդ։ Հետաքրքրվողների մեջ, որոնց հանդիպեցի այդ վագոնի մոտ, իմիջիայլոց, գտնվում էր և իմ ուղեկիցը, հրետանային մի սպա, ոչ շատ խելոք, բայց ջերմ և համակրելի մի մարդ, ինչպես բո-

լոր նրանք, որոնց հետ ծանոթանում ենք ճանապարհորդելիս պատահաբար և ոչ երկար ժամանակով։

— Ո՞ւմ եք նայում այստեղ,— հարցրի ես։

Նա ոչինչ չպատասխանեց և միայն աչքերով ինձ ցույց տվեց մի աղջկա։ Դա մի ջահել աղջիկ էր, մոտ տասնյոթ-տասնութ տարեկան, ռուսական զգեստ հագած, գլխաբաց և թեթև թիկնոցով, որն անփույթ գցել էր մի ուսին, ճանապարհորդ չէր, գուցե կայարանապետի աղջիկն էր կամ քույրը։ Նա կանգնած էր վագոնի պատուհանի մոտ և խոսում էր տարիքավոր մի ինչ-որ ճանապարհորդ կնոջ հետ։ Ինքս ինձ դեռ հաշիվ չտված, թե ինչ էր տեսածս, հանկարծ ինձ տիրեց այն զգացումը, որն ինչ-որ մի ժամանակ ես ապրեցի հայկական գյուղում։

Աղջիկը հրաշալի գեղեցիկ էր, այդ կասկածից դուրս էր թվում և՛ ինձ, և՛ նրանց, որոնք ինձ հետ նայում էին նրան։

Եթե, ինչպես ընդունված է, նրա արտաքինը մեկ-մեկ նկարագրել, ապա, իսկապես՝ գեղեցիկ էին նրա միայն արձակ թողած, դեղձան, ալեծածան թանձր մազերը, որոնց վրա կապել էր սև ժապավեն։ Մնացած ամեն ինչ կամ անկանոն էր, կամ շատ սովորական։ Առանձին շարժուձևերի կոկետությունի՞ց էր արդյոք, թե՞ կարճատեսությունից, նա նայում էր կիսախուփ աչքերով. բերանը փոքր էր, քիթն անվճռականորեն վեր ցցված, պրոֆիլը թույլ գծագրված, անկորով, ուսերը՝ տարիքին անհամեմատ նեղ, բայց, այնուամենայնիվ, աղջիկը կատարյալ գեղեցկուհու տպավորություն էր թողնում։ Նայելով նրան, կարող էի համոզվել, որ ուսական դեմքը գեղեցիկ երևալու համար հարկ չունի խիստ կանոնավոր դիմագծերի, դեռ ավելին, եթե նույնիսկ այդ աղջկա վեր ցցված քթի փոխարեն դրվեր ուրիշը, կանոնավոր և կատարյալ պլաստիկական, ինչպես այն հայի աղջկանը, ապա թվում է, դրանից նրա դեմքը կկորցներ իր ողջ հմայքը։

Պատուհանի մոտ կանգնած խոսելիս, աղջիկը երեկոյան խոնավությունից թեթև կծկվելով, շարունակ նայում էր մեզ, մե՛րթ թևերն էր կանթում, մե՛րթ ձեռքը մոտեցնում էր գլխին՝ մազերն ուղղելու, խոսում, ծիծաղում էր, դեմքը երբեմն զարմանք էր արտահայտում, երբեմն սարսափ։ Չեմ հիշում մի վայրկյան, որ նրա մարմինն ու դեմքը հանգիստ լինեին։ Նրա գեղեցկության և կախարդանքի ողջ գաղտնիքը կայանում էր հատկապես հենց այդ մանր, նուրբ ու անվերջ շարժումների, ժպիտի, դեմքի խաղերի և արագորեն մեզ ուղղված հայացքի մեջ, երիտասարդությանը,

թարմությանը նրբորեն ձուլված այդ նազելի շարժումների, ծիծաղի և ձայնի միջից հնչող հոգու հստակության մեջ,— և այն քնքշության, որն այնպես տածում ենք երեխաների, թռչունների, ջահել եղնիկների ու դալար ծառերի հանդեպ։

Այդ թիթեռային գեղեցկությունն էր, որին այնպես սազում է վալսը, պարտեզում թռչկոտելը, ծիծաղն ու ուրախությունը և որի հետ չի կապվում լրջությունը, վիշտն ու խաղաղությունը։ Եվ թվում է, բավական է մի ուժեղ քամի փչի կառամատույցում կամ անձրև տեղա, որ հանկարծ թառամի այդ փխրուն էակը և քմահաճ գեղեցկությունը ցնդի ինչպես ծաղկեփոշի։

— Тэк-с...— հառաչելով թոնթորաց սպան, երբ մենք երկրորդ զանգից հետո ընթացանք դեպի մեր վագոնը։

Իսկ ինչ էր նշանակում այդ «ТЭК-С»-ը, չեմ կարող դատել։

Գուցե նա տխրեց և չէր կամենում հեղձուկ վագոնը մրտնելով՝ բաժանվել գեղեցկուհուց և գարնանային երեկոյից, կամ գուցե, նա էլ ինձ պես, առանց հաշվի խղճում էր և՛ գեղեցկուհուն, և՛ իրեն, և՛ ինձ, և՛ բոլոր ճանապարհորդներին, որոնք ծուլորեն և ակամա շարժվում էին դեպի իրենց վագոնները։ Անցնելով կայարանի պատուհանի մոտից, որի ետևում իր մեքենայի առաջ նստած էր բաց շիկահեր հեռագրիչը, երկար զանգուրներով, դալկադեմ և ցցված այտոսկրերով,— սպան հոգոց քաշեց, ասաց.

— Գրազ կգամ, որ այս հեռագրիչը սիրահարված է այն թուիթուշիկին։ Ամայի դաշտում, մի հարկի տակ ապրել այդ օդեղեն էակի հետ և չսիրահարվել՝ մարդկային ուժերից վեր է։ Իսկ ի՞նչ անբախտություն, ի՞նչ ծաղր, լինել կորացած ուսերով, գունատ, բրդոտ մազերով, բայց առաքինի, խելքը գլխին և սիրահարվել այդ սիրունիկ ու հիմար աղջկան, որը ձեզ վրա զրոյի ուշադրություն չի դարձնում։ Կամ ավելի վատ, բարեկամս, երևակայեցեք, որ այդ հեռագրիչը սիրահարված է, բայց միաժամանակ ամուսնացած և որ կինն էլ՝ այդպես հյուծված է, բայց առաքինի, ինչպես ինքը... Կատարյալ տանջանք։

Մեր վագոնի մոտ, ցանկապատին հենված, կանգնած էր կոնդուկտորը և նայում էր դեպի այն կողմը, ուր երևում էր գեղեցկուհին։ Կոնդուկտորի թառամած, անախորժ հագեցած, անբուն գիշերներից հոգնած և գնացքի ցնցումներից տանջված, ուռած դեմքը կարեկցություն և խոր վիշտ էր արտահայտում, կարծես այդ աղջկա մեջ նա տեսնում էր իր երիտասարդությունը,

երջանկությունը, թարմությունն ու մաքրությունը, կնոջն ու երեխաներին, կարծես ափսոսում էր և իր ողջ էությամբ զգում, որ այդ աղջիկն իրենը չէ, և որ ինքը իր անժամանակ ծերությամբ և տձև ու անճոռնի տեսքով, մարդկային սովորական, անդամ ճանապարհորդի երջանկությունից այնքան է հեռու, որքան երկրնքից։

Երրորդ զանգը խփեց, լսվեցին սուլոցները, և գնացքը դանդաղ շարժվեց։ Մեր պատուհանից ետ մնացին նախ կոնդուկտորը, կայարանապետը, հետո՝ պարտեզը, գեղեցկուհին՝ իր հրաշալի, մանկական խորամանկ ժպիտով։

Պատուհանից դուրս կախվելով, նայեցի ետ, տեսա թե ինչպես աղջիկն աչքերով ուղեկցեց գնացքը, կառամատույցով անցավ այն պատուհանի մոտից, ուր նստած էր հեռագրիչը, ուղղեց մազերը և վազեց դեպի պարտեզը։ Կայարանի շենքն այլևս չէր ծածկում մայրամուտը, երևում էին դաշտերը, բայց արևն արդեն մայր էր մտել և ծխի սև քուլաները տարածվում էին կանաչ թավշե աշնանացանների վրա։ Տխրություն էր տիրում և՛ գարնանային օդում, և՛ մթնող երկնքում, և՛ վագոնում։

Ծանոթ կոնդուկտորը ներս մտավ, սկսեց լապտերը վառել։

1888

ԿՆԱՆԻՔ

Ռայբուժ գյուղում, եկեղեցու ուղիղ դիմացը, կա քարե հիմքով ու թիթեղե տանիքով մի երկհարկանի տուն։ Ներքևի հարկում իր ընտանիքի հետ ապրում է տան տերը՝ Ֆիլիպ Իվանով Կաշինը, մականունը Դյուդյա. իսկ վերևի հարկում, ուր ամառը խիստ շոգ և ձմեռը շատ ցուրտ է լինում, իջևանում են գյուղով անցնող չինովնիկները, վաճառականներն ու կալվածատերերը։ Դյուդյան հողամասեր է վարձակալում, գինետուն է պահում մեծ ճանապարհի վրա, ծախում է թե՛ ձյութ, թե՛ մեղր, թե՛ անասուն, թե՛ կաշաղակ և արդեն մի ութ հազար ռուբլի փող է կուտակել ու պահում է քաղաքային բանկում։

Նրա մեծ տղան՝ Ֆյոդորը, աշխատում է գործարանում ավագ մեխանիկի պաշտոնով և, ինչպես գյուղացիներն են ասում, շատ

է առաջ գնացել, այնպես որ հիմա հետը խոսել չի լինի։ Ֆյոդորի կինը՝ Սոֆիան, մի տգեղ ու հիվանդոտ գեղջկուհի, ապրում է տանը, կեսրայրի մոտ, շարունակ լաց է լինում և ամեն կիրակի սայլակով գնում է հիվանդանոց բուժվելու։ Դյուդյայի երկրորդ տղան՝ սապատավոր Ալյոշկան, ապրում է տանը, հոր մոտ։ Վերջերս նրան ամուսնացրին աղքատ ընտանիքից բերած Վարվառայի հետ, որ դեռատի, գեղեցիկ, առողջ ու պճնասեր գեղջկուհի է։ Երբ չինովնիկներն ու վաճառականները իջևանում են նրանց տանը, միշտ պահանջում են, որ անպատճառ Վարվառան ինքնաեռը մատուցի իրենց և անկողին գցի։

Հունիսյան մի երեկո, երբ արևը մայր էր մտնում, և օդը հագեցած էր չոր խոտի, տաքացած գոմաղբի և նոր կթած կաթի հոտով, Դյուդյայի մոտ իջևանելու համար բակ մտավ մի հասարակ սայլակ, որի վրա երեք հոգի կային. քաթանե կոստյումով մի տղամարդ՝ մոտ երեսուն տարեկան, նրա կողքին յոթ-ութ տարեկան մի տղա՝ ոսկրյա խոշոր կոճակներով երկար, սև սերթուկ հագած, և կարմիր վերնաշապիկով մի պատանի՝ որպես կառապան։

Պատանին արձակեց ձիերը ու տարավ փողոց մի քիչ ման ածելու, իսկ ուղևորը լվացվեց, դեմքը եկեղեցուն դարձրած աղոթեց, ապա սայլակի մոտ փռեց ծնկածածկոցը և տղայի հետ նստեց ընթրելու։ Նա ուտում էր առանց շտապելու, պատկառելի արտահայտությամբ, և կյանքում շատ անցորդներ տեսած Դյուդյան նրա շարժուձևերից ճանաչեց, որ գործնական, լուրջ ու իր գինն իմացող մարդ է դա։

Դյուդյան միայն ժիլետով, առանց գլխարկի, նստել էր մուտքի պատշգամբում ու սպասում էր, որ ուղևորն սկսի խոսել։ Նա վարժվել էր, որ անցորդները երեկոյան, քնելուց առաջ, զանազան բաներ պատմեն, և սիրում էր դա։ Նրա պառավ կինը՝ Աֆանասևնան, և հարսը՝ Սոֆիան, կովեր էին կթում ծածկի տակ. մյուս հարսը՝ Վարվառան, նստել էր վերին հարկի լուսամուտի մոտ և արևածաղկի սերմ էր շրթում։

— Էս տղան երևի քո որդի՞ն է,— հարցրեց Դյուդյան ուղևորին։

— Չէ, որդեգիրս է, որը է։ Հոգուս փրկության համար եմ վերցրել մոտս։

Խոսակցության բռնվեցին։ Ուղևորը զրուցասեր ու պերճախոս մարդ դուրս եկավ, և Դյուդյան խոսակցությունից իմացավ,

որ նա քաղաքից է, տնատեր, անունը Մատվեյ Սավիչ, և հիմա գնում է նայելու այն այգիները, որ վարձում է գաղութաբնակ գերմանացիներից, իսկ տղայի անունը Կուզկա է։

Շոգ ու տոթ երեկո էր, ոչ ոք չէր ուզում քնել։ Երբ մթնեց, և երկնքում տեղ-տեղ առկայծել սկսեցին դժգույն աստղեր, Մատվեյ Սավիչն սկսեց պատմել, թե որտեղից է իր մոտ ընկել Կուզկան։ Աֆանասևնան և Սոֆիան քիչ հեռու կանգնած լսում էին, իսկ Կուզկան գնաց դեպի դարբասը։

— Սա, պապի, չափազանց հետաքրքիր պատմություն է,— սկսեց Մատվեյ Սավիչը,— եթե ամեն բան, ինչպես որ եղել է, պատմեմ քեզ, ողջ գիշերը չի վերջանա։ Մի տասը տարի առաջ մեր փողոցում, հենց իմ կողքի տնակում, որտեղ հիմա մոմի ու ձեթի գործարաններ են, ապրում էր մի այրի պառավ՝ Մարֆա Սեմյոնովնա Կապլունցևան, որ ուներ երկու տղա. մեկը երկաթուղու կոնդուկտոր էր, մյուսն էլ՝ Վասյան, իմ հասակակիցը, ապրում էր տանը, մոր մոտ։ Հանգուցյալ ծերունի Կապլունցևը ձի էր պահում, մի հինգ գույգ, և բեռնատար սայլապաններ էր բանեցնում քաղաքում. նրա այրին այդ գործից ձեռ չէր քաշել և հանգուցյալից վատ չէր ղեկավարում սայլապաններին, այնպես որ լինում էին օրեր, երբ հինգ ռուբլի մաքուր վաստակ էին ունենում։ Մի փոքր եկամուտ էլ տղան ուներ. ցեղական աղավնիներ էր բազմացնում ու ծախում սիրողներին։ Մեկ էլ տեսար, կանգնել է տանիքին, ավելը գցում է վեր ու սուլում, աղավնիներն էլ ո՞ւր են հասել՝ հենց երկնքի տակ. բայց դա քիչ էր նրա համար, ուզում էր ավելի բարձր թռչեն։ Ագնիվ ու հատարակ սարեկներ էր որոնում, վանդակ էր շինում... Դատարկ գործ է, բայց տես, որ չնչին բաներով ամսական մի տասը ռուբլի էր վաստակում։ Եվ ահա ժամանակն անցավ, և պառավ մայրը ոտից ընկավ, մտավ անկողին։ Այդ փաստի պատճառով տունը մնաց առանց տանտիկնոջ, իսկ դա միևնույն է, թե մարդն առանց աչքի։ Անհանգստացավ պառավն ու որոշեց պսակել իր Վասյային։ Իսկույն խնամախոս կանչեցին՝ հնգին-տասին, սկսվեց կանանց խոսք-զրույց, ու մեր Վասյան գնաց հարսնացուներ տեսնելու։ Այրի Սամախվալիխայի տանը նա տեսավ Մաշենկային։ Առանց երկար-բարակ մտածելու օրհնեցին և մի շաբաթվա մեջ գործը գլուխ բերին։ Նորահաս էր աղջիկը, մոտ տասնյոթ տարեկան, պստլիկ, կարճլիկ, բայց դեմքը սպիտակ ու հաճելի. բոլոր հատկություններով իսկական օրիորդ. օժիտն էլ

վատ չէր՝ հինգ հարյուր ռուբլի փող, մի կով, անկողին... Պառավն էլ, սիրտը վկայում էր, հարսանիքից երեք օր հետո ճանապարհվեց ի վերին Երուսաղեմ, ուր ոչ գո ախտ ու հառաչանք։ Նորապսակները հոգեհանգիստ անել տվին ու սկսեցին կյանք վարել։ Մոտ կես տարի ապրեցին փառավորապես, և ահա մի նոր փորձանք պատահեց։ Դժբախտություն որ եկավ, իրար հետևից կգա. Վասյային կանչեցին զինվորական վիճակ քաշելու։ Խեղճ թշվառին զինվոր տարան և արտոնություն անգամ չտվին։ Ածիլեցին ճակատը ու քշեցին լեհական թագավորություն։ Աստծու կամքն է, ի՞նչ կարող ես անել։ Երբ բակում մնաս բարով էր ասում կնկանը, լավ էր պահում իրեն. բայց երբ վերջին անգամ նայեց խոտանոցի վրայի աղավնատանը, արցունքներն աղբյուրի պես սկսեցին հոսել։ Նայելիս մեղքդ գալիս էր։ Սկզբում Մաշենկան չտխրելու համար մորը բերեց իր մոտ. սա էլ մնաց մինչև աղջկա ազատվելը, երբ ծնվեց ա՛յ, էս Կուզկան. հետո մեկնեց Օբոյան՝ մյուս աղջկա մոտ, որ նույնպես ամուսնացած էր։ Եվ Մաշենկան մնաց մենակ՝ իր երեխայի հետ։ Հինգ սայլապան գեղջուկ, բոլորն էլ հարբեցող, կովարար մարդիկ, ձիերը, սայլերը. էս կողմն ես նայում՝ ցանկապատն է փուլ եկել, էն կողմը՝ ծխնելույզի մրի մեջ կրակ է ընկել. կնկա խելքի բան չեն դրանք։ Եվ ահա ամեն մի դատարկ բանի համար հարևանության կարգով սկսեց դիմել ինձ։ Դե, ես էլ գնում էի, կարգադրություն անում, խորհուրդ տալիս... Պարզ է, որ մեկ-մեկ էլ ներս էի մտնում, թեյ խմում զրուցում։ Երիտասարդ էի ես, խելքով. սիրում էի խոսել ամեն տեսակ բաներից։ Նա էլ կրթված կին էր ու քաղաքավարի։ Հագնվում էր մաքուր, ամուսնն էլ հովանոցով էր ման գալիս։ Պատահում էր, որ սկսում էի խոսել նրա հետ աստվածային կանոնի կամ քաղաքականության մասին, դրանից շոյվում էր նա և թեյ ու մուրաբա հրամցնում ինձ... Մի խոսքով, կարճ կտրելու համար ասեմ, պապի՛, որ մի տարի էլ չանցած՝ շար սատանան, մարդկային ցեղի թշնամին, պղտորեց իմ հոգին։ Մեկ էլ նկատեցի, որ էն օրը, երբ չէի գնում նրա մոտ, մի տեսակ վատ էի զգում ինձ, տխրում էի։ Ու անվերջ մի բան հնարում էի, որ գնամ նրա մոտ։ «Ժամանակն է, ասում էի, որ լուսամուտների ձմեռային շրջանակները գցեք», և ամբողջ օրը մթնացնում էի նրա մոտ, շրջանակներն էի տեղը գցում ու մի երկուսն էլ մյուս օրվան թողնելու միջոցը գտնում։ «Վասյայի աղավնիները հաշվել է պետք. չլինի թե կորած լի-

նեն»,— և այդպիսի բաներ։ Պատահում էր, որ ցանկապատի վրայով երկար խոսում էի հետը, վերջն էլ, ճամփան կարճացնելու համար, մի փոքրիկ դուռ շինեցի ցանկապատի մեջ։ Այս աշխարհում կնկա երեսից շատ շարիք ու ամենայն պղծություն է պատահել։ Ոչ միայն մենք՝ մեղապարտներս, այլև սուրբ հայրերը գայթակղվել են։ Մաշենկան ինձ չէր վանում իրենից։ Փոխանակ ամուսնուն հիշելու և իրեն պահելու, սիրեց ինձ։ Սկսեցի նկատել, որ նա էլ է տխրում, շարունակ մանն է գալիս ցանկապատի մոտ ու ճեղքերից իմ բակն է նայում։ Երևակայական պատկերներից ուղեղս պտույտ եկավ գլխումս։ Ավագ հինգշաբթի, վաղ առավոտյան, մութնուլուսին, շուկա գնալիս անց կացա նրա դռան առջևից. չար սատանան էլ ասես կողքիս կանգնած լիներ. նայեցի—նրա դռնակը վերևում էսպիսի վանդակացանց ունի— տեսնեմ կանգնել է նա բակի մեջտեղը, արդեն վեր է կացել ու բաղերին կուտ է տալիս։ Չկարողացա զսպել ինձ ու ձայն տվի։ Նա մոտեցավ ու վանդակացանցից նայեց ինձ։ Դեմքը սպիտակ, աչքերը գորովալի, քունն առած... Շատ դուր եկավ ինձ, և ես սկսեցի հաճոյախոսություններ ասել նրան, կարծես ոչ թե դռան մոտ էինք, այլ անվանակոչության հավաքույթում։ Նա կարմրեց, սկսեց ծիծաղել, անթարթ նայել աչքերիս խորքը։ Խելքս թոցրի ու սկսեցի սիրային զգացմունքներս խոստովանել նրան... Նա բացեց դռնակը, ներս առավ ինձ, և էդ առավոտից էլ սկսեցինք ապրել որպես մարդ ու կին։

Փողոցից բակ մտավ սապատավոր Ալյոշկան և հևալով, առանց որևէ մեկի նայելու, վազեց տուն. մի բոպե հետո հարմոնն առած՝ դուրս նետվեց տնից և պղնձե դրամները գրպանում չխկչխկացնելով՝ անհետացավ դարբասից։

— Ո՞վ էր այս տղան,— հարցրեց Մատվեյ Սավիչը։

— Որդիս է՝ Ալեքսեյը,— պատասխանեց Դյուդյան։— Գնաց քեֆ անելու, սրիկան։ Աստված պատժել՝ կուզիկ է ստեղծել, մենք էլ խաթրին չենք կպչում։

— Անվերջ քեֆ է անում տղաների հետ, անվերջ զվարճանում,— հառաչեց Աֆանասևնան։— Բարիկենդանից քիչ առաջ պտակեցինք, կարծում էինք, թե այդպես կլավանա. բայց արի տես, որ ավելի վատացավ։

— Ո՛չ մի օգուտ։ Միայն ուրիշի աղջկան ձրի երջանկացրինք,— ասաց Դյուդյան։

Եկեղեցու հետևից սկսեցին երգել մի հիանալի, տխուր երգ։

Հնարավոր չէր բառերը ջոկել, միայն ձայներն էին լսվում. երկու տենոր ու մի բաս։ Եվ որովհետև ամենքն էլ ականջ դրին, բակում լռություն տիրեց... Երկու ձայն հանկարծ որոտընդոստ քրքիջով խզեցին երգը, իսկ երրորդը՝ տենորը, շարունակեց երգել և այնպիսի բարձր նոտայի հասցրեց, որ բոլորն էլ ակամա նայեցին վեր, կարծես թե ձայնը բարձրանալիս հասնում էր երկրնքին։ Վարվառան տնից դուրս եկավ և ձեռքը ճակատին դնելով, ինչպես արևից պաշտպանվելիս, նայեց եկեղեցուն։

— Տերտերի տղաներն են ուսուցչի հետ,— ասաց Վարվառան։

Նորից երեք ձայները միասին երգեցին։ Մատվեյ Սավիչը հառաչեց ու շարունակեց.

— Էսպիսի բաներ, պապի՛։ Մոտ երկու տարի հետո նամակ ստացանք Վասյայից՝ Վարշավայից։ Գրել էր, թե հրամանատարությունը իրեն ուղարկում է տուն՝ կազդուրվելու։ Վատառողջ է։ Այդ միջոցին խելառությունը գլխից հանել էի ես, և արդեն մի լավ աղջիկ էին խնամախոսել ինձ համար, միայն թե չէի իմանում սիրուհուցս ինչպես բաժանվեմ։ Ամեն օր պատրաստվում էի խոսել Մաշենկայի հետ, բայց չէի իմանում, թե որ կողմից մոտենամ, որ կնկա ճղճղոց չլինի։ Նամակը ձեռքերս արձակեց։ Ես ու Մաշենկան միասին կարդացինք դա. նա սպիտակեց ինչպես ձյուն, ես էլ թե՝ փա՜ռք աստծու, ասացի, ուրեմն, հիմա դու նորից ամուսնացած կին կդառնաս։— Նա թե. «Ես նրա հետ չեմ ապրի»։— Ախր քո մարդն է նա,— ասացի ես։ «Հեշտ է ասել... Ես նրան երբեք չեմ սիրել և ակամա եմ ամուսնացել հետը։ Մայրս հրամայեց»։— Դե՛, ասացի, գլուխդ դեսուդեն մի՛ խփի, հիմա՛ր, ասա՝ պսակվե՞լ ես նրա հետ եկեղեցում, թե չէ։— «Պսակվել եմ, ասաց, բայց ես քեզ եմ սիրում ու մինչև մահս քեզ հետ կապրեմ։ Թող մարդիկ ծիծաղեն... Ես ուշք չեմ դարձնի...»։— Դու, ասացի, աստվածավախ կին ես, սուրբ գիրքն էլ կարդացել ես. ի՞նչ է գրված այնտեղ։

— Մարդու ես գնացել, մարդուդ հետ էլ պիտի ապրես,— ասաց Դյուդյան։

— Մարդ ու կին մի մարմին են։ Ես ու դու մեղանչեցինք միասին, ասացի, բավական է. պետք է խիղճ ունենալ և աստծուց վախենալ։ Մեղքերս մեր վիզն առնենք, ասացի, Վասյայի առաջ. հեղ մարդ է նա, անհամարձակ, չի սպանի։ Եվ լավ էլ է, որ այս աշխարհում տանջանքը օրինական ամուսնուց ստանաս,

քան թե ահեղ դատաստանում ատամներդ կրճտես։— Բայց կնիկը չէր լսում, իր ասածն էր համառորեն կրկնում, ո՛չ դես, ո՛չ դեն. «Քեզ եմ սիրում», և ուրիշ ոչինչ։ Վասյան եկավ շաբաթ օրը, Հոգեգալստի նախատոնին, վաղ առավոտյան։ Ցանկապատից ամեն ինչ տեսնում էի ես. վազեց տուն, մի րոպե հետո Կուզկային գրկած դուրս եկավ. և՛ ծիծաղում էր, և՛ լալիս, Կուզկային էր համբուրում, սակայն նայում էր մարագին. խղճում էր Կուզկային ցած դնել, բայց և ուզում էր վազել աղավնիների մոտ։ Քնքուշ մարդ էր, զգայուն։ Ցերեկն անցավ բարեհաջող, խաղաղ ու համեստ։ Ղողանջեցին գիշերվա հսկումի զանգերը, ես էլ միտք եմ անում՝ վաղը Հոգեգալուստ է, ինչո՞ւ դրանք դուռն ու ցանկապատերը չեն կանաչազարդում։ Վատ է, մտածեցի, դրանց բանը։ Գնացի նրանց մոտ։ Տեսա Վասյան նստել է սենյակի մեջտեղը, հատակին, հարբածի պես աչքերն է մանածում, արցունքները թափվում են այտերից, ձեռքերը ցնցվում. կապոցից հանում է օղաբլիթներ, ուլունքներ, մեղրաբլիթներ ու ամեն տեսակ նվերներ և շպրտում հատակին։ Կուզկան— այն ժամանակ երեք տարեկան էր նա — սողում է նրա մոտ ու մեղրաբլիթներ է ծամում, Մաշենկան էլ կանգնել վառարանի մոտ, գույնը գցել, ամբողջ մարմնով դողում է ու մոթմոթում. «Ես քո կինը չեմ, չեմ ուզում քեզ հետ ապրել», և ամեն տեսակ հիմարություններ դուրս տալիս։ Խոնարհ բարև տվի ես Վասյային ու ասացի. «Հանցավոր ենք մենք քո առաջ, Վասի՛լի Մաքսիմիչ, ներիր ի սեր Քրիստոսի»։ Հետո վեր կացա և այսպիսի բաներ ասացի Մաշենկային. «Դուք, Մարի՛ա Սեմյոնովնա, ասացի, հիմա պարտավոր եք Վասիլի Մաքսիմիչի ոտքերը լվալ և էդ ջուրն էլ խմել։ Եվ եղեք նրա հնազանդ կինը, իսկ ինձ համար աղոթեք աստծուն, որպեսզի նա, ասացի, ների իմ մեղանչումը»։ Կարծես թե երկրային հրեշտակն էր ներշնչել ինձ, խրատ կարդացի նրա գլխին և այնքան զգացված էի խոսում, որ նույնիսկ աչքերս թրջվեցին։ Եվ մի երկու օր հետո Վասյան եկավ ինձ մոտ։ «Ես, ասաց, Մատյո՛ւշա, ներում եմ քեզ էլ, կնկանս էլ. աստված ձեզ հետ։ Զինվորի կին է նա, ջահել է, դժվար բան է իրեն պահելը։ Ո՛չ առաջինն է նա, ո՛չ էլ վերջինը։ Միայն թե, ասաց, ես քեզ խնդրում եմ այնպես ապրես, որ իբր թե ձեր միջև ոչ մի բան չի եղել, և մի՛ էլ երևա. ես էլ, ասաց, կաշխատեմ ամեն կերպ հաճոյանալ նրան, որպեսզի նորից սիրի ինձ»։ Ձեռքս սեղմեց,

թեյ խմեց և ուրախ գնաց։ Է՜, փա՜ռք քեզ, աստվա՜ծ, մտածեցի և ուրախացա, որ ամեն ինչ այսպես լավ եղավ։ Վասյան նոր էր բակից դուրս եկել, երբ ներս մտավ Մաշենկան։ Խնկակա՜ն պատիժ. կախվում է վզիցս, լաց լինում ու աղաչում. «Ի սեր աստծո, ինձ մի՛ թողնի, չեմ կարող առանց քեզ ապրել»։

— Էդպե՞ս էլ լիրբ,— հառաչեց Դյուդյան։

— Գոռացի նրա վրա, ոտքով խփեցի, հաշտից քաշեցի տարա դուրս ու դուռն էլ կեռով փակեցի։ «Գնա՛ մարդուդ մոտ, գոռում էի, ինձ խայտառակ մի՛ անի մարդկանց առաջ. աստծուց վախեցիր»։ Եվ ամեն օր այսպիսի պատմություն։ Մի առավոտ մեր բակում, ախոռի մոտ կանգնած՝ ձիու սանձն էի նորոգում։ Մեկ էլ տեսա Մաշենկան դռնակից վազեց իմ բակը՝ բոբիկ, միայն յուբկայով և՝ ուղիղ ինձ մոտ. ձեռքերով բռնեց սանձը, ամբողջովին ձյութոտվեց ու ցնցվելով լաց եղավ... «Չեմ կարող այդ զզվելիի հետ ապրել, իմ ուժից վեր է։ Եթե չես սիրում, սպանիր»։ Բարկացա ես ու մի երկու անգամ սանձով խփեցի, իսկ այդ միջոցին դռնից ներս վազեց Վասյան ու հուսահատ ձայնով գոռաց. «Մի՛ խփիր, մի՛ խփիր»։ Բայց վրա հասավ թե չէ, խելագարի պես ձեռքը թափահարեց ու սկսեց ամբողջ ուժով ծեծել, հետո էլ գցեց գետին ու ոտքով տուր թե կտաս։ Ես սկսեցի պաշտպանել, նա էլ երասանակները վերցրեց ու դրանցով շարունակեց ծեծել։ Ծեծում էր ու ձիու քուռակի պես խրխնջում՝ հի-հի՛-հի՛։

— Երասանակները մարդ վերցնի ու մի լավ դաղի քեզ...— մոթմոթաց Վարվառան հեռանալով։— Մեր հոգին հանել եք դուք, անիծածնե՛ր...

— Ձայնդ կտրի՛ր,— գոռաց նրա վրա Դյուդյան։— Քա՛ծ։

— Հի-հի՛-հի՛,— շարունակեց Մատվեյ Սավիչը։— Նրանց բակից վրա հասավ մի կառապան, ես էլ իմ մշակին կանչեցի. ու երեքով Մաշենկային խլեցինք նրա ձեռքից և թեր մտած տարանք տուն։ Խայտառակությո՛ւն։ Նույն երեկոյան էլ գնացի տեսության։ Գտակած էր նա անկողնում՝ ամբողջովին փաթաթված, թրջոցներ դրած, միայն աչքերն էին երևում և նայում էր առաստաղին։— Բարև ձեզ, Մարի՛ա Սեմյոնովնա։— Ձայն չհանեց։ Վասյան էլ նստել էր մյուս սենյակում, գլուխը բռնել ու լաց էր լինում։— Ջարագործ եմ ես։ Կյանքս խորտակեցի։ Մահ տուր ինձ, տե՛ր աստված։— Մոտ կես ժամ նստեցի Մաշենկայի կողքը ու խրատ կարդացի գլխին։ Սարսափեցրի. արդարներն այն աշ-

խարհում արքայություն կգնան, ասացի, իսկ դու հրավառ գեհենն՝ բոլոր անառակ կանանց հետ... Մի՛ հակառակիր ամուսնուդ, գնա՛, ծնկաչոք խոնարհություն արա նրան։— Բայց նա ո՛չ մի խոսք չասաց, աչքն անգամ չթարթեց, կարծես փայտի հետ էի խոսում։ Մյուս օրը Վասյան հիվանդացավ, կարծես թե խոլերայով, երեկոյան էլ լսեցի՝ մեռել է։ Թաղեցինք։ Մաշենկան գերեզմանատուն չէր եկել, չէր ուզում իր խայտառակ դեմքն ու կապտածները ցույց տալ մարդկանց։ Եվ շատ չանցած մեր քաղաքում սկսեցին խոսել, որ Վասյան իր մահով չի մեռել, որ Մաշենկան է հոգին առել։ Բանը հասավ իշխանությանը։ Վասյային գերեզմանից հանեցին, հերձեցին ու փորի մեջ մկնդեղ գտան։ Ամեն ինչ պարզ էր, կասկած չկար։ Եկավ ոստիկանությունը ու տարավ Մաշենկային, Կուզմային էլ հետը։ Բանտ գցեցին։ Կնկա թովալը վերջացավ. աստված պատժեց... Մի ութ ամիս հետո դատեցին։ Հիշում եմ, թե ինչպես նստած էր աթոռին՝ սպիտակ գլխաշորով ու մոխրագույն, փոքր խալաթով, նիհար, գունատ, աչալուրջ. խղճում էիր նայելիս։ Հետևը կանգնած էր մի հրացանակիր զինվոր։ Վիզը չէր առնում։ Դատարանում ոմանք ասում էին, թե թունավորել է ամուսնուն, ոմանք էլ ապացուցում էին, թե ամուսինն է վշտից թունավորել իրեն։ Ես էլ վկա էի։ Երբ հարցնում էին ինձ, ամեն ինչ խղճմտանքով բացատրում էի։— Սրա մեղքն է, ասացի։ Թաքցնելու բան չկա՝ չէր սիրում ամուսնուն, կամակոր կին էր... Դատել սկսեցին առավոտից, իսկ գիշերվա մոտ այսպիսի վճիռ արձակեցին՝ տասներեք տարով ուղարկել տաժանակիր աշխատանքի, Սիբիր։ Այս վճռից հետո Մաշենկան մոտ երեք ամիս մնաց մեր բանտում։ Ես գնում էի նրա մոտ և մարդասիրաբար թեյ ու շաքար էի տանում։ Նա էլ երբեմն ինձ տեսնելիս սկսում էր ամբողջ մարմնով ցնցվել, ձեռքերն էր թափահարում ու մոթմոթում. «Գնա՛, գնա՛»։ Կուզկային էլ սեղմում էր իրեն, կարծես վախենում էր, որ կխլեմ իրենից։— Ա՛յ թե ի՛նչ աստիճանի հասար, ասում էի. հեյ վա՛խ, Մա՛շա, Մա՛շա, մեղապա՛րտ հոգի, լսեցիր ինձ, երբ խելք էի սովորեցնում քեզ, դե՛ հիմա լաց եղիր վրադ։ Ինքդ ես մեղավոր, ասում էի, քեզ էլ մեղադրի՛ր։— Ես նրան խրատում էի, իսկ նա «գնա՛, գնա՛» էր ասում, Կուզկայի հետ սեղմվում էր պատին ու դողում։ Երբ նրան մեր մոտից տարան նահանգական բանտը, մինչև կայարան ճանապարհ դրի ու մի մանեթանոց կոխեցի նրա կապոցի մեջ վասն հոգու փրկու-

թյան։ Բայց Սիբիր չհասավ նա... Նահանգական բանտում ջերմով հիվանդացավ և այդտեղ էլ մեռավ։

— Շունը շան պես էլ կստակի,— ասաց Դյուդյան։

— Կուզկային վերադարձրին տուն... Մտածեցի ես, մտածեցի ու նրան ինձ մոտ վերցրի։ Ի՞նչ կա որ. թեև կալանավորուհու ծնունդ է, բայց և այնպես կենդանի էակ է, մկրտված... Մեղք է։ Գործակատար կդարձնեմ նրան, իսկ եթե զավակ չունենամ, վաճառականության կհասցնեմ։ Հիմա հենց որ մի տեղ եմ մեկնում, ինձ հետ եմ տանում. թող վարժվի։

Մատվեյ Սավիչի պատմելու ամբողջ ընթացքում Կուզկան նստած էր դարպասի մոտ, մի քարի վրա և գլուխը հենած ձեռքերին՝ նայում էր երկնքին. հեռվից, մթության մեջ, նա նման էր փոքրիկ կոճղի։

— Կո՛ւզկա, արի քնի՛ր,— ձայն տվեց Մատվեյ Սավիչը։

— Հա՛, ժամանակն է արդեն,— ասաց Դյուդյան վեր կենալով, ապա բարձրաձայն հորանջեց և ավելացրեց.— Ամենքն էլ ձգտում են իրենց խելքով ապրել, ուրիշի չեն լսում, և դրա համար էլ իրենց ուզածն է լինում։

Բակի վրայով, երկնքից, արդեն սահում էր լուսինը. նա արագ վազում էր մի կողմ, իսկ նրա տակի ամպերը՝ մյուս կողմ. ամպերը գնում էին հեռու, իսկ լուսինը շարունակ երևում էր բակի վերևը։ Մատվեյ Սավիչը դեմքը եկեղեցուն դարձրած՝ աղոթեց և, բարի գիշեր մաղթելով, պառկեց սայլակի մոտ։ Կուզկան էլ աղոթեց, պառկեց սայլակի մեջ ու փաթաթվեց սերթուկով. ավելի հարմար լինելու համար չոր խոտի մեջ մի փոքրիկ փոս շինեց և այնպես կծկվեց, որ արմունկները դիպչում էին ծնկներին։ Բակից երևում էր, թե ինչպես Դյուդյան ներքևի իր սենյակում մոմ վառեց, դրեց ակնոցը և գիրքը բռնած՝ կանգնեց անկյունում։ Երկար ժամանակ նա կարդում էր ու երկրպագում։

Ճանապարհորդները քնեցին։ Աֆանասևնան և Սոֆիան մոտեցան սայլակին ու սկսեցին նայել Կուզկային։

— Քնել է որբուկը,— ասաց պառավը։— Նիհար է, ջան չունի, ոսկոր է միայն։ Հարազատ մայր չունի, և ոչ ոք չկա, որ կարգին կերակրի։

— Իմ Գրիշուտկան երևի մի երկու տարով մեծ է,— ասաց Սոֆիան։— Ապրում է գործարանում, ուրիշի ձեռքի տակ, անմայր։ Տերը հավանորեն ծեծում է։ Քիչ առաջ հենց որ նայեցի

էս փոքրիկ տղային, իմ Գրիշուտկային հիշեցի. սրտից արյուն գնաց։

Մի բոպե լռություն տիրեց։

— Երևի մորը չի հիշում,— ասաց պառավը։

— Որտեղի՞ց հիշի։

Եվ Սոֆիայի աչքերից արցունքի խոշոր կաթիլներ սկսեցին հոսել։

— Գունդուկծիկ է դառել...— ասաց նա հեկեկալով ու ծիծաղելով խանդաղատանքից ու խղճահարությունից։— Խե՜ղճ որբուկ։

Կուզկան ցնցվեց ու բացեց աչքերը։ Նա իր առաջ տեսավ տգեղ, կնճռոտ, լացող մի դեմք, իսկ նրա կողքին մի ուրիշ՝ սուր ծնոտով ու կեռ քթով պառավի անատամ դեմք, նրանցից վեր՝ անհատակ երկինքը վազող ամպերով ու լուսնյակով. և սարսափից ճչաց։ Սոֆիան էլ ճչաց. երկուսին էլ պատասխանեց արձագանքը, և հեղձուցիչ օդում սլացավ անհանգստությունը. մոտերքում թխկթխկացրեց գիշերապահը, հաչեց մի շուն։ Մատվեյ Սավիչը քնի մեջ մի բան մռթմռթաց ու շրջվեց մյուս կողքի վրա։

Ուշ երեկոյան, երբ արդեն քնել էին Գյուդյան էլ, պառավն էլ, հարևան գիշերապահն էլ, Սոֆիան դարպասից դուրս եկավ ու նստեց կողքի նստարանին։ Շոգից խեղդվում էր նա, արտասվելուց գլուխը ցավում էր։ Փողոցը լայն էր ու երկար՝ աջ կողմը մի երկու վերստ, նույնքան էլ ձախ կողմը, ու ծայրը չէր երևում։ Լուսինն արդեն քաշվել էր բակից և անցել եկեղեցու հետևը։ Փողոցի մի կողմը ողողված էր լուսնի լույսով, մյուսը ստվերներից սևին էր տալիս. բարդիների ու սարեկավանդակների երկար ստվերները ձգվել էին ամբողջ փողոցով, իսկ եկեղեցու սև ու ահարկու ստվերը փռվել էր լայն ու ընդգրկել Գյուդյայի դարպասն ու տան կեսը։ Ամայի էր ու խաղաղ։ Երբեմն փողոցի ծայրից գալիս էր հազիվ լսելի նվագի ձայն, հավանաբար Ալյոշան էր նվագում իր հարմոնը։

Եկեղեցու ցանկապատի մոտ, ստվերում, քայլում էր մեկը, և հնարավոր չէր որոշել՝ մարդ է դա, թե՞ կով, կամ գուցե ոչ ոք չկար, և միայն մի մեծ թռչուն էր խլրտում ծառերի մեջ։ Բայց ահա ստվերից դուրս եկավ մի մարդ, կանգ առավ և տղամարդու ձայնով մի բան ասաց, հետո անհետացավ եկեղեցու մոտի նեղ փողոցում։ Քիչ անց, դարբասից մոտ երկու սաժեն հեռավորության վրա երևաց էլի մի կերպարանք. նա եկեղեցուց գալիս էր

ուղիղ դեպի դարպասը և նստարանի վրա տեսնելով Սոֆիային՝ կանգ առավ։

— Վարվա՜ռա, դու ես, հա՞,— հարցրեց Սոֆիան։

— Ասենք թե ես եմ։

Վարվառան էր։ Մի բոպե կանգ առավ նա, ապա մոտեցավ նստարանին ու նստեց։

— Ո՞ւր էիր գնացել,— հարցրեց Սոֆիան։

Վարվառան չպատասխանեց։

— Գլխիդ փորձանք չբերես, ջահե՛լ, այդպես զվարճանալով,— ասաց Սոֆիան։— Հո լսեցիր, թե ոնց էին Մաշենկային ծեծում և՛ ոտքով, և՛ երասանակով։

— Թող ծեծեն։

Վարվառան թաշկինակը բերանին պահած ծիծաղեց և շշնջալով ասաց.

— Տերտերի տղայի հետ էի հիմա զվարճանում։

— Փչում ես։

— Աստվա՜ծ վկա։

— Մեղք ես գործում,— շշնջաց Սոֆիան։

— Թող այդպես լինի... Ի՞նչ ունեմ ափսոսալու։ Թե մեղք ես անում՝ լրիվ արա. ավելի լավ է կայծակն ինձ խփի, քան թե այսպես ապրեմ։ Ես երիտասարդ եմ, առողջ, իսկ մարդս՝ կուզ, զզվելի, ծուռտիկ, անիծած Գյուդյայից էլ վատ է։ Քանի աղջիկ էի, կիսաքաղց էի մնում, բոբիկ էի ման գալիս ու հեռացա այդ ձախորդությունից, հրապուրվեցի Ալյոշկայի հարստությամբ ու գերության մեջ ընկա, ինչպես ձուկը կողովի մեջ. ավելի լավ էր իժի հետ քնեի, քան թե այս քոսոտ Ալյոշկայի։ Հապա քո կյա՞նքը։ Երանի աչքս չտեսներ։ Քո Ֆյոդորը գործարանից քեզ քշեց իր հոր մոտ ու մի ուրիշին ճանկեց. տղայիդ էլ խլեցին քեզնից ու գերության տվին։ Ինքդ աշխատում ես ձիու պես ու ոչ մի քաղցր խոսք չես լսում։ Ավելի լավ է ողջ կյանքում աղջիկ մնաս ու հալումաշ լինես, ավելի լավ է տերտերի տղաներից կես ռուբլիանոցներ ստանաս, ողորմություն հավաքես, ավելի լավ է գլխիվայր ջրհորը նետվես...

— Մեղք ես գործում,— նորից շշնջաց Սոֆիան։

— Թող այդպես լինի։

Եկեղեցու հետևից նորից տխուր երգ սկսեցին երգել նույն երեք ձայները՝ երկու տենորը ու մի բասը։

— Գիշերաշրջիկներ են...— ծիծաղեց Վարվառան։

Եվ սկսեց շշուկով պատմել, թե ինչպես է ինքը գիշերները կվարճանում տերտերի աղջի հետ, ինչ է ասում իրեն, ինչպիսի ընկերներ ունի նա, իսկ ինքը ինչպես է զվարճացել անցորդ չինովնիկների ու վաճառականների հետ։ Տխուր երգից ազատ կյանքի շունչ փչեց. Սոֆիան սկսեց ծիծաղել. նրա համար և՛ մեղսալի, և՛ սարսափելի, և՛ քաղցր էր լսել. նա թե՛ նախանձում էր, թե՛ ափսոսում, որ չի մեղանչել այն ժամանակ, երբ դեռատի էր ու գեղեցիկ...

Հին եկեղեցու շրջափակից հնչեց գիշերվա տասներկուսը։

— Քնելու ժամանակն է,— ասաց Սոֆիան վեր կենալով,— թե չէ մեկ էլ տեսար Դյուդյան գլխի ընկավ։

Երկուսն էլ կամացուկ բակ մտան։

— Ես գնացի ու լսեցի, թե հետո ինչ պատմեց նա Մաշենկայի մասին,— ասաց Վարվառան՝ լուսամուտի տակ անկողին զցելով։

— Մեռավ բանտում, ասաց։ Ամուսնուն թունավորեց։

Վարվառան պառկեց Սոֆիայի կողքին, մի պահ մտածեց, ապա կամացուկ ասաց.

— Ես իմ Ալյոշկայի հոգին կհանեի ու չէի խղճա։

— Ի՞նչ ես գլխիցդ դուրս տալիս, աստված քեզ հետ։

Երբ Սոֆիան քնում էր, Վարվառան սեղմվեց նրան և ականջին փսփսաց.

— Արի՛ Դյուդյայի և Ալյոշկայի հոգին առնենք։

Սոֆիան ցնցվեց ու ոչինչ չասաց, հետո աչքերը բացեց և երկար ժամանակ անթարթ նայում էր երկնքին։

— Մարդիկ կիմանան,— ասաց նա։

— Չեն իմանա։ Դյուդյան արդեն ծեր է, մեռնելու ժամանակն է. Ալյոշկան էլ, կասեն, հարբեցողությունից սատկեց։

— Սարսափելի է... Աստված կսպանի։

— Թող սպանի...

Երկուսն էլ չէին քնել և լուռ մտածում էին։

— Ցուրտ է,— ասաց Սոֆիան՝ սկսելով ողջ մարմնով դողալ։— Երևի լույսը բացվելուն մոտ է... Քնե՞լ ես։

— Չէ... Դու ինձ մի՛ լսիր, հոգի՛ս,— շշնջաց Վարվառան։— Զարանում եմ այդ նզովվածների վրա և ինքս էլ չեմ իմանում, թե ինչ եմ ասում։ Քնի՛ր, թե չէ արդեն լույսը բացվում է... Քնիր...

Երկուսն էլ լռեցին, հանգստացան ու շուտով քնեցին։

Ամենից շուտ պառավն արթնացավ։ Նա զարթնցրեց Սոֆիային, և երկուսն էլ գնացին ծածկի տակ կովերը կթելու։ Եկավ սապատավոր Ալյոշկան՝ բոլորովին հարբած, առանց հարմոնի, կուրծքն ու ծնկները փոշոտ և ծղոտներ կպած. հավանորեն ընկել էր ճանապարհին։ Նա օրորվելով գնաց ծածկի տակ և առանց շորերը հանելու՝ փռվեց սահնակի վրա և իսկույն խոմփալով քնեց։ Երբ ծագող արևից բոցավառված շողշողացին եկեղեցու խաչերը, հետո էլ լուսամուտները, և ծառերի ու ջրհորի կոունկի ստվերները բակում ձգվեցին ցողապատ խոտի վրա, Մատվեյ Սավիչը վեր թռավ ու իրար անցավ։

— Կո՛ւզկա, վե՛ր կաց,— գոռաց նա։— Լծելու ժամանակն է, շո՛ւտ։

Սկսվեց առավոտյան եռուզեռը։ Սրճագույն, բոլորաձևլրով շրջազգեստ հագած մի դեռատի ջհուդ կին ձին քշեց բակը՝ ջրելու։ Աղիողորմ ճռնչաց ջրհորի կոունկը, դույլը չիկչիկաց... Քնաթաթախ, թուլացած ու ցողածածկ Կուզկան նստել էր սայլակի մեջ, ծուլորեն սերթուկն էր հագնում և լսում, թե ինչպես ջրհորի մեջ ջուրը ճողփում է դույլից, ու ցրտից կծկվում էր։

— Մորաքո՛ւյր,— ձայն տվեց Մատվեյ Սավիչը Սոֆիային,— թափ տուր մեր աղջային՝ գա սայլը լծի։

Այդ ժամանակ Դյուդյան էլ պատուհանից էր գոռում.

— Սո՛ֆիա, ջհուդից մի կոպեկ առ ձին ջրելու համար։ Երես են առել քոսոտները։

Փողոցում վեր ու վար էին վազվզում ոչխարները ու մայում. կանայք գոռգոռում էին հովվի վրա, իսկ նա սրինգ էր նվագում, խարազանն էր շլթացնում կամ պատասխանում ծանր, խոպոտթավ ձայնով։ Երեք ոչխար վազեցին բակ և, դարպասը չգտնելով, խռնվեցին ցանկապատի մոտ։ Աղմուկից զարթնեց Վարվառան, գիրկն առավ անկողինը ու գնաց դեպի տուն։

— Գոնե ոչխարները դուրս անեիր, տիրուհի՛,— գոռաց նրան պառավը։

— Ո՞նց չէ, կաշխատե՞մ ձեզ պես հրեշների համար,— մրթմրթաց Վարվառան՝ տուն մտնելով։

Սայլակը յուղեցին և լծեցին ձիերը։ Հաշվիչը ձեռքին՝ անից դուրս եկավ Դյուդյան, նստեց մուտքի պատշգամբում ու սկսեց հաշվել, թե ուղևորը ինչքան պետք է վճարի օթևանի, վարսակի ու ձիերը ջրելու համար։

— Թանկ ես հաշվում վարսակը, պապի՛,— ասաց Մատվեյ Սավիչը։

— Թե թանկ է, մի՛ առնի։ Մենք վաճառական ենք, չենք ստիպում։

Երբ ուղևորները մոտեցան սայլակին, որպեսզի նստեն ու մեկնեն, մի հանգամանք նրանց ուշացրեց մեկ րոպեով։ Կորել էր Կուզկայի գլխարկը։

— Ո՞ւր ես կոխել, խոզի ձա՛գ,— բարկացած գոռաց Մատվեյ Սավիչը։— Ո՞ւր է, ասա՛։

Կուզկայի դեմքը սարսափից ծռմռվեց. նա սկսեց պտտվել սայլակի մոտ և այդտեղ չգտնելով՝ վազեց դեպի դարպասը, հետո ծածկի տակ։ Պառավն ու Սոֆիան օգնում էին նրան փընտրելու։

— Ականջներդ կպոկեմ,— գոռաց Մատվեյ Սավիչը,— մուռտառի մեկը։

Գլխարկը գտնվեց սայլակի հատակում։ Կուզկան թևքով թափ տվեց գլխարկի վրայից չոր խոտի շյուղերը, դրեց գլխին և անհամարձակ, սարսափի արտահայտությունը դեռ դեմքին, կարծես վախենալով, որ հետևից չխփեն, բարձրացավ սայլակը։ Մատվեյ Սավիչը խաչակնքեց երեսը, պատանին ձգեց երասանակները, և սայլակը պոկվելով տեղից՝ բակից դուրս եկավ։

1891

ԹՈՒԻ-ՎՈՒԻՆ

I

Օլգա Իվանովնայի հարսանիքին ներկա էին նրա բոլոր բարեկամներն ու լավ ծանոթները։

— Նայեցեք նրան, ճիշտ չէ՞, նրա մեջ ինչ-որ բան կա,— ասում էր Օլգա Իվանովնան իր բարեկամներին, գլխով ցույց տալով ամուսնուն և կարծես ուզենալով բացատրել, թե ինչպես պատահեց, որ ինքը ամուսնացավ հասարակ, շատ սովորական և ոչնչով աչքի չընկնող մի մարդու հետ։

Նրա ամուսինը՝ Օսիպ Ստեպանիչ Դիմովը, բժիշկ էր և տիտուլյար խորհրդականի աստիճան ուներ։ Նա ծառայում էր երկու հիվանդանոցում. մեկում՝ որպես օրդինատոր, մյուսում՝ հերձաբան։ Ամեն օր առավոտյան ժամը իններից մինչև կեսօր նա հիվանդներ էր ընդունում և պարապում էր իր պալատում, իսկ կեսօրից հետո ձիաքարշով գնում էր մյուս հիվանդանոցը, որտեղ հերձում էր մահացած հիվանդներին։ Նրա մասնավոր պրակտիկան չնչին էր, տարեկան մի հինգ հարյուր ռուբլի։ Ահա և բոլորը։ Էլ ի՞նչ կարելի է ասել նրա մասին։ Մինչդեռ Օլգա Իվանովնան և նրա բարեկամներն ու լավ ծանոթները ոչ բոլորովին սովորական մարդիկ էին։ Նրանցից ամեն մեկը մի որևէ բանով նշանավոր էր և մի քիչ հանրահայտ, արդեն անուն ուներ և համարվում էր համբավավոր և կամ, թեև դեռ համբավավոր չէր, բայց փայլուն հույսեր էր ներշնչում։ Դրամատիկական թատրոնի մի դերասան, մեծ, վաղուց ճանաչված տաղանդ, նրբագեղ, խելացի և համեստ մի մարդ և սքանչելի ասմունքող, որը Օլգա Իվանովնային սովորեցնում էր արտասանել. մի օպերային երգիչ, բարեհոգի մի հաստլիկ, որը հոգոց հանելով հավատացնում էր Օլգա Իվանովնային, որ նա իրեն կործանում է. եթե նա չծուլանար և ինքն իրեն բուռը հավաքեր, ապա նրանից հրաշալի երգչուհի դուրս կգար. ապա մի քանի նկարիչներ և նրանց գլխավորող ժանրիստ, անիմալիստ և պեյզաժիստ Ռյաբովսկին, մի շատ գեղեցիկ, շիկահեր, մոտ քսանհինգ տարեկան երիտասարդ, որը հաջողություն ուներ ցուցահանդեսներում և իր վերջին նկարը վաճառել էր հինգ հարյուր ռուբլով. նա ուղղում էր Օլգա Իվանովնայի էտյուդները և ասում, որ թերևս նրանից մի բան դուրս կգա. ապա՝ մի թավշութակահար, որի գործիքը լաց էր լինում և որը անկեղծորեն խոստովանում էր, որ իրեն ծանոթ բոլոր կանանցից նրան նվագակցել կարողանում է միայն Օլգա Իվանովնան. ապա՝ մի գրող, երիտասարդ, բայց արդեն համբավավոր, որը գրում էր վիպակներ, պիեսներ և պատմվածքներ։ Էլի՞ ով։ Դե, մեկ էլ Վասիլի Վասիլիչը, աղա, կալվածատեր, գիլետանտ-իլյուստրատոր և զարդանկարիչ, որը խորապես զգում էր հին ռուսական ոճը, բիլինան և էպոսը։ Թղթի, ճենապակու և մրոտած ափսեների վրա նա տառացիորեն հրաշքներ էր գործում։ Այդ արտիստիկ, ազատ, բախտի երես տված ընկերախմբի մեջ, որը, ճիշտ է, քաղաքավարի էր և համեստ, բայց ինչ-որ բժիշկների գոյության մասին միայն հիվանդության ժամանակ էր հիշում և որի համար Դիմով անունը հնչում էր նույնքան անտարբեր, որքան Սիդորով կամ Տարասով անունը,— այդ ընկերա-

խմբի մեջ Դիմովը թվում էր օտար, ավելորդ և փոքրիկ, թեև հասակը բարձր էր և թիկունքը լայն։ Թվում էր, թե նրա վրայի ֆրակը ուրիշինն է և մորուքը գործակատարի մորուք է։ Ասենք, եթե նա զրող կամ նկարիչ լիներ, ապա կասեին, որ իր մորուքով հիշեցնում է Զոլային։

Դերասանը Օլգա Իվանովնային ասում էր, որ իր վուշե մազերով և պսակի ղեստներով նա շատ նման է գեղահասակ դալար բալենու, երբ վերջինս գարնանը ամբողջովին ծածկված է լինում քնքուշ սպիտակ ծաղիկներով։

— Չէ, դուք լսեցե՞ք,— ասում էր Օլգա Իվանովնան, դերասանի ձեռքը բռնելով։— Այդ ինչպե՞ս կարող էր հանկարծ պատահել։ Դուք լսեցեք, լսեցեք... Պետք է ձեզ ասեմ, որ հայրս պաշտոնավարում էր Դիմովի հետ միևնույն հիվանդանոցում։ Երբ խեղճ հայրս հիվանդացավ, Դիմովը ամբողջ օրերով ու գիշերներով հերթապահում էր նրա անկողնի մոտ։ Այնքա՞ն ինքնազոհաբերում։ Լսեցեք, Ռյաբովսկի... Դուք էլ լսեցեք, գրող, սա շատ հետաքրքիր է։ Մոտ եկեք։ Որքա՞ն ինքնազոհաբերում, անկեղծ կարեկցանք։ Ես էլ գիշերները չէի քնում և նստում էի հորս մոտ, և հանկարծ՝ բարև ձեզ, հաղթել եմ էս լավ ջահելին։ Իմ Դիմովը մինչև ականջները սիրահարվել է։ Ճշմարիտ, ճակատագիրը այնքան քմահաճ է լինում։ Դե, հորս մահից հետո նա երբեմն լինում էր ինձ մոտ, հանդիպում էր փողոցում և մի գեղեցիկ երեկո հանկարծ հո՛պ, առաջարկություն արեց... այնպես անակնկալ... Ես ամբողջ գիշերը լաց եղա և ինքս էլ անտանելի սիրահարվեցի։ Եվ ահա, ինչպես տեսնում եք, դարձա կինը։ Ճիշտ չէ՞, նրա մեջ ինչ-որ ուժեղ, հզոր, արջային բան կա։ Հիմա նրա գլխքը դեպի մեզ է շրջված երեք քառորդով, վատ է լուսավորված, բայց երբ շուռ գա, դուք նայեցեք նրա ճակատին։ Ռյաբովսկի, ի՞նչ կասեք այդ ճակատի մասին։ Դիմով, մենք քո մասին ենք խոսում,— կանչեց նա ամուսնուն։— Եկ այստեղ։ Պարզիր քո ազնիվ ձեռքը Ռյաբովսկուն... Այ այդպես։ Բարեկամներ եղեք։

Դիմովը բարեհոգի ու միամիտ ժպտալով, ձեռքը պարզեց Ռյաբովսկուն և ասաց.

— Շատ ուրախ եմ։ Ինձ հետ կուրսն ավարտել է նույնպես մի Ռյաբովսկի։ Դա ձեր ազգականը չէ՞։

II

Օլգա Իվանովնան քսաներկու տարեկան էր, Դիմովը՝ երեսունմեկ։ Հարսանիքից հետո նրանք սկսեցին հրաշալի ապրել։ Օլգա Իվանովնան հյուրասենյակի բոլոր պատերին կախոտեց իր և ուրիշների էտյուդները շրջանակներով և առանց շրջանակների, իսկ դաշնամուրի և կահկարասու մոտ չինական հովանոցներով, ներկապնակներով, գույնզգույն լաթերով, դաշույններով, կիսանդրիներով, լուսանկարներով գեղեցիկ նեղվածք ստեղծեց... Սեղանատան պատերին սոսնձեց հասարակ պատկերներ, կախ տվեց արեխներ և մանգաղներ, անկյունում մի գերանդի և փոցխ դրեց, և ստացվեց սեղանատուն ռուսական ճաշակով։ Ննջարանում, որպեսզի քարանձավի նմանվի, առաստաղն ու պատերը հարդարեց մուգ գույնի մահուդով, մահճակալների վերևը վենետիկյան լապտեր կախեց, իսկ դռան մոտ կրկնատեգ գեղարդավոր մի կերպարանք դրեց։ Եվ բոլորը գանում էին, որ երիտասարդ ամուսինները շատ հաճելի անկյուն ունեն։

Ամեն օր, անկողնից վեր կենալով ժամը տասնմեկին մոտ, Օլգա Իվանովնան դաշնամուր էր նվագում և կամ, եթե արև էր լինում, յուղաներկերով որևէ բան էր նկարում։ Հետո, ժամը մեկին մոտ նա կառք նստած գնում էր իր դերձակուհու մոտ։ Քանի որ նա ու Դիմովը փող շատ քիչ ունեին, հազիվհազ ծայրը ծայրին էին հասցնում, ապա ավելի հաճախակի նոր շորերով հայտնվելու և իր զուգսերով զարմացնելու համար նա և իր դերձակուհին ստիպված էին լինում խորամանկություն բանեցնել։ Շատ հաճախ մի հին վերանորոգված զգեստից, ոչինչ չարժեցող շղարշի, ժանյակների, թավշի ու մետաքսի կտորտանքից ստացվում էին ուղղակի հրաշքներ, մի ինչ-որ դյութիչ բան, ոչ թե զգեստ, այլ ցնորք։ Դերձակուհու մոտից Օլգա Իվանովնան սովորաբար գնում էր որևէ ծանոթ դերասանուհու մոտ, որպեսզի իմանար թատերական նորությունները և ի դեպ նոր պիեսի առաջին ներկայացման կամ բենեֆիսի տոմսի ճար աներ։ Դերասանուհու մոտից պետք էր գնալ որևէ նկարչի արվեստանոցը կամ պատկերների ցուցահանդեսը, հետո որևէ նշանավոր մարդու տուն՝ իր մոտ հրավիրելու կամ նրան այցելելու, կամ ուղղակի մի քիչ շատախոսելու։ Եվ ամենուրեք նրան ընդունում էին ուրախ ու մտերմաբար, և նրան հավատացնում էին, որ նա լավն է, հաճելի ու հաղվագյուտ... Նրանք, ում նա նշանավոր ու մեծ էր

անվանում, Օլգա Իվանովնային ընդունում էին որպես յուրայինի, որպես հավասարի, և միաձայն նախագուշակում էին, որ իր տաղանդով, ճաշակով ու խելքով, եթե իր ուժերը չցրի, նրանից շատ մեծ բան կստացվի։ Նա երգում էր, դաշնամուր նվագում, ներկերով նկարում, մասնակցում էր սիրողների ներկայացումներին, բայց այդ ամենը ոչ թե մի կերպ, այլ տաղանդով հրավառության համար լապտերներ շիներ, թե զուգվեր կամ որևէ մեկի փողկապը կապեր, նրա ամեն մի արածը ստացվում էր արտասովոր գեղարվեստական, շնորհալի և հաճելի։ Բայց ոչ մի բանում նրա տաղանդավորությունն այնքան վառ չէր դրսևորվում, որքան նշանավոր մարդկանց հետ արագ ծանոթանալու և մտերմանալու կարողության մեջ։ Բավական էր որևէ մեկը գեթ փոքր-ինչ հռչակվեր ու իր մասին խոսել տար, նա իսկույն ծանոթանում էր նրա հետ, նույն օրը մտերմանում և հրավիրում իր մոտ։ Ամեն մի նոր ծանոթություն նրա համար իսկական տոն էր։ Նա աստվածացնում էր նշանավոր մարդկանց, հպարտանում էր նրանցով և ամեն գիշեր նրանց տեսնում էր երազում։ Նա ծարավի էր նրանց և ոչ մի կերպ չէր կարողանում հագեցնել իր ծարավը։ Հները հեռանում և մոռացվում էին, նրանց փոխարինելու էին գալիս նորերը, բայց սրանց էլ նա արագ վարժվում և հիասթափվում էր նրանցից և ագահորեն սկսում էր որոնել նորանոր մեծ մարդկանց, գտնում էր ու դարձյալ որոնում։ Ինչի՞ համար։

Ժամը հինգին մոտ նա ճաշում էր տանը ամուսնու հետ։ Ամուսնու պարզությունը, առողջ դատողությունը և բարեհոգությունը նրան խանդաղատում և հիացնում էին։ Նա շարունակ վեր էր թռչում տեղից, պոռթկուն գրկում էր ամուսնու գլուխը և համբույրներով ծածկում։

— Դու, Դիմով, խելացի, ազնիվ մարդ ես,— ասում էր նա,— բայց դու մի շատ կարևոր թերություն ունես։ Դու բոլորովին չես հետաքրքրվում արվեստով։ Դու բացասում ես և՛ երաժշտությունը, և՛ նկարչությունը։

— Ես դրանք չեմ հասկանում,— հեղգորեն ասում էր Դիմովը։— Ես ամբողջ կյանքումս զբաղվել եմ բնական գիտություններով ու բժշկությամբ և ժամանակ չեմ ունեցել արվեստներով հետաքրքրվելու։

— Բայց ախր դա սարսափելի է, Դիմով։

— Ինչո՞ւ որ։ Քո ծանոթները չգիտեն բնական գիտություններ և բժշկություն, բայց դու դրա համար նրանց չես կշտամբում։ Յուրաքանչյուրն իրենն ունի։ Ես չեմ հասկանում բնանկարներն ու օպերաները, բայց այսպես եմ մտածում. եթե որոշ խելացի մարդիկ իրենց ամբողջ կյանքը դրանց են նվիրում, իսկ այլ խելոք մարդիկ դրանց համար հսկայական փողեր են վճարում, ապա, նշանակում է, որ դրանք պետք են։ Ես չեմ հասկանում, բայց չհասկանալը չի նշանակում բացասել։

— Տո՛ւր սեղմեմ ազնիվ ձեռքդ։

Ճաշից հետո Օլգա Իվանովնան կառք նստած գնում էր ծանոթների մոտ, հետո թատրոն կամ համերգ և տուն էր վերադառնում կեսգիշերից հետո։ Այդպես ամեն օր։

Չորեքշաբթի օրերը նրա մոտ երեկույթներ էին լինում։ Այդ երեկույթներին տանտիրուհին և հյուրերը թուղթ չէին խաղում և չէին պարում, այլ զվարճանում էին զանազան արվեստներով։ Դրամատիկ թատրոնի դերասանն արտասանում էր, երգիչը երգում, նկարիչները նկարում էին Օլգա Իվանովնայի բազմաթիվ ալբոմների մեջ, թավջութակահարը նվագում էր, իսկ տանտիրուհին ինքը նույնպես նկարում էր, քանդակում, երգում և նվագակցում։ Արտասանության, երաժշտության և երգի դազարների արանքում խոսում և վիճում էին գրականության, թատրոնի և գեղանկարչության մասին։ Կանայք չկային, որովհետև Օլգա Իվանովնան բոլոր կանանց, բացի դերասանուհիներից և իր դերձակուհուց, համարում էր ձանձրալի և գռեհիկ։ Ոչ մի երեկույթ չէր անցնում առանց այն բանի, որ տանտիրուհին չցնցվեր դռան ամեն մի զանգից և դեմքի հաղթական արտահայտությամբ չասեր. «Սա նա՛ է», «նա» բառի տակ հասկանալով որևէ նոր նշանավոր մարդու։ Դիմովը հյուրասենյակում չէր և ոչ ոք չէր հիշում նրա գոյության մասին, բայց ուղիղ ժամը տասնմեկն անց կես բացվում էր դեպի սեղանատուն տանող դուռը, հայտնվում էր Դիմովը իր բարեհոգի, հեզ ժպիտով և ասում ձեռքերը շփելով.

— Համեցեք, պարոնայք, մի բան ճաշակելու։

Բոլորը գնում էին սեղանատուն և ամեն անգամ սեղանի վրա տեսնում էին միևնույն բաները. ոստրեներով լի մի սկուտեղ, մի կտոր խոզի ապուխտ կամ հորթի միս, սարդիններ, պանիր, սունկ, օղի և երկու գրաֆին գինի։

— Իմ սիրելի՞ մետր-դ'օտել,— ասում էր Օլգա Իվանովնան, հիացմունքից ձեռքերը իրար խփելով։— Դու ուղղակի հրաստքանչ ես։ Պարոնայք, նայեցեք նրա ճակատին։ Դիմով, շրջվիր կիսադեմ։ Պարոնայք, նայեցեք, դեմքը բենգալական վագրի դեմք է,

իսկ արտահայտությունը բարի ու սիրելի է, ինչպես եղնիկի արտահայտություն։ Ու, սիրելի՞ս։

Հյուրերն ուտում էին և, Դիմովին նայելով, մտածում. «Իսկապես որ պատվական մարդ է», բայց շուտով մոռանում էին նրան և շարունակում խոսել թատրոնի, երաժշտության և գեղանկարչության մասին։

Երիտասարդ ամուսինները երջանիկ էին։ Նրանց կյանքն անցնում էր շատ հաջողակ։ Սակայն նրանց մեղրամսի երրորդ շաբաթը անցավ ոչ բոլորովին երջանիկ, նույնիսկ տխուր։ Դիմովը հիվանդանոցում վարակվեց կարմիր քամով, վեց օր պառկեց անկողնում և ստիպված էր մաքուր խուզել իր գեղեցիկ սև մազերը։ Օլգա Իվանովնան նստել էր նրա մոտ և դառնագին լալիս էր, բայց երբ ամուսնու վիճակը թեթևացավ, նա նրա գլխին սպիտակ գլխակապ կապեց և սկսեց նրանից բեղվին նկարել։ Եվ երկուսի համար էլ զվարճալի էր։ Դրանից մի երեք օր հետո, երբ նա առողջանալով նորից սկսեց հիվանդանոցները գնալ, նրա հետ մի նոր թյուրիմացություն պատահեց։

— Իմ բախտը չի բանում, մա՛յր,— ասաց նա մի անգամ ճաշի ժամանակ։— Այսօր ես չորս դիահերձում ունեի, և միանգամից երկու մատս կտրեցի։ Եվ դա միայն տանը նկատեցի։

Օլգա Իվանովնան վախեցավ։ Ամուսինը ժպտաց ու ասաց, որ դատարկ բան է դա և որ հերձման ժամանակ հաճախ է պատահում, որ ձեռքերին կտրվածքներ են լինում։

— Ես տարվում եմ, մայր, և մտացրիվ եմ դառնում։

Օլգա Իվանովնան տագնապով սպասում էր դիակային վարակման և գիշերներն աղոթում էր աստծուն, բայց ամեն ինչ բարեհաջող անցավ։ Եվ նորից հոսեց խաղաղ, երջանիկ կյանքը առանց տխրության և տագնապների։ Ներկան սքանչելի էր, իսկ դրան փոխարինելու էր մոտալուտ գարունը, որն արդեն ժպտում էր հեռվից և խոստանում հազար ու մի ուրախություն։ Երջանկությունը վերջ չի ունենա։ Ապրիլին, մայիսին և հունիսին քաղաքից դուրս հեռու ամառանոց, զբոսանքներ, էտյուդներ, ձկնորսություն, սոխակներ, իսկ հետո, հուլիսից մինչև բուն աշուն, նկարիչների ուղևորությունը դեպի Վոլգա, և այդ ուղևորության ժամանակ, որպես սոսյետեի[1] անպայման անդամ, կմասնակցի նաև Օլգա Իվանովնան։ Նա իր համար արդեն քաթանից կարել էր երկու ճամփորդական զգեստ, ճանապարհի համար գնել էր ներկեր, վրձիններ, կտավ և նոր ներկապնակ։ Գրեթե ամեն օր նրա մոտ էր գալիս Ռյաբովսկին, նայելու, թե ինչ առաջադիմություն է արել նա գեղանկարչության մեջ։ Երբ Օլգա Իվանովնան նրան ցույց էր տալիս իր նկարը, Ռյաբովսկին ձեռքերը խոր կոխում էր գրպանները, ամուր սեղմում շրթունքները, ֆոֆսում և ասում.

— Այսպես-ս... Ձեր այս ամպը ճչում է. նրա լուսավորությունը իրիկնային չէ։ Առջևի պլանը մի տեսակ ծամծմված է և ինչ-որ, հասկանո՞ւմ եք, այն չէ... Իսկ ձեր խրճիթը մի բանով ճզմվել է և խղճալի ծվծվում է... Պետք է այս անկյունը ավելի մուգ անել։ Իսկ ընդհանուր առմամբ վատ չէ... Գովում եմ։

Եվ որքան ավելի անհասկանալի էր ասում նա, այնքան ավելի հեշտ էր հասկանում նրան Օլգա Իվանովնան։

III

Հոգեգալստի երկրորդ օրը ճաշից հետո Դիմովը ուտեստներ ու քաղցրավենիք գնեց և գնաց կնոջ մոտ ամառանոց։ Նա արդեն երկու շաբաթ է չէր տեսնվել նրա հետ և խիստ կարոտել էր։ Վագոնում նստած և ապա մեծ պուրակում իր ամառանոցը որոնելիս նա շարունակ քաղց և հոգնածություն էր զգում և երազում էր, թե ինչպես ազատության մեջ կընթրի կնոջ հետ և հետո կընկնի քնելու։ Եվ նա ուրախանում էր, նայելով իր կապոցին, որի մեջ փաթաթված էր խավիար, պանիր և սպիտակաձուկ։

Երբ նա գտավ ու ճանաչեց իր ամառանոցը, արևն արդեն մայր էր մտնում։ Պառավ աղախինն ասաց, որ տիկինը տանը չէ և որ, հավանաբար, շուտով կգա։ Գրեթաթուղթ սոսնձած ցածր առաստաղներով և անհարթ ու ճեղքավոր հատակներով անհրապույր ամառանոցում ընդամենը երեք սենյակ կար։ Դրանցից մեկում մահճակալն էր դրված, մյուսում՝ աթոռներին և լուսամուտներին թափթփված էին կտավներ, վրձիններ, յուղոտված թուղթ և տղամարդու վերարկուներ ու գլխարկներ, իսկ երրորդում Դիմովը հանդիպեց երեք ինչ-որ անծանոթ տղամարդկանց։ Երկուսը սևահեր էին, փոքրիկ մորուքներով, իսկ երրորդը, բոլորովին ածիլված և հաստամարմին, ըստ երևույթին՝ դերասան։ Սեղանի վրա եռում էր ինքնաեռը։

— Ի՞նչ եք կամենում,— թավ ձայնով հարցրեց դերասանը,

[1] Հասարակություն (ֆրանս.)։

անմարդամոտ զննելով Դիմովին։— Ձեզ Օլգա Իվանովնան է պետք։ Սպասեցեք, նա հիմա կգա։

Դիմովը նստեց և սկսեց սպասել։ Սևահերներից մեկը քընկոտ ու ալարկոտ նայելով Դիմովին, իր համար թեյ ածեց ու հարցրեց.

— Գուցե թե՞յ կուզեիք։

Դիմովն ուզում էր և՛ խմել, և՛ ուտել, բայց ախորժակը չփչացնելու համար թեյից հրաժարվեց։ Շուտով լսվեցին ոտնաձայներ և ծանոթ մի ծիծաղ. դուռը շրխկաց, և սենյակ վազեց Օլգա Իվանովնան՝ լայնեզր գլխարկով և ձեռքին մի արկղ, իսկ նրա հետևից մի մեծ հովանոց և ծալովի աթոռ բռնած ներս մտավ զվարթ, կարմրաթուշ Ռյաբովսկին։

— Դի՜մով,— ճչաց Օլգա Իվանովնան և ուրախությունից շառաղունեց։— Դի՜մով,— կրկնեց նա ամուսնու կրծքին դնելով գլուխն ու զույգ ձեռները։— Այդ դո՞ւ ես։ Ինչո՞ւ այսքան երկար ժամանակ չէիր գալիս։ Ինչո՞ւ։ Ինչո՞ւ։

— Ե՞րբ գայի, մամա։ Ես միշտ զբաղված եմ, իսկ երբ ազատ եմ լինում, միշտ այնպես է պատահում, որ գնացքների չվացուցակը չի հարմարվում։

— Բայց որքա՜ն ուրախ եմ քեզ տեսնելու։ Ամբողջ, ամբողջ գիշերը երազիս էիր գալիս և ես վախենում էի, թե հանկարծ հիվանդացած չլինես։ Ա՜խ, եթե իմանայիր, ինչքա՜ն լավն ես, ինչ ժամանակին ես եկել։ Դու իմ փրկարարը կլինես։ Մենակ դո՞ւ կարող ես ինձ փրկել։ Վաղը այստեղ մի շատ յուրօրինակ հարսանիք է լինելու,— շարունակում էր նա ծիծաղելով և ամուսնու փողկապը կապելով։— Ամուսնանում է կայարանի երիտասարդ հեռագրիչը, մի ոմն Չիկելդեև։ Գեղեցիկ երիտասարդ է, ոչ հիմար և դեմքին, գիտե՞ս, ինչ-որ ուժեղ, արջային բան կա... Կարելի է նրանից երիտասարդ վայրագ նկարել։ Մենք՝ բոլոր հովեկներս, համակրում ենք նրան և ազնիվ խոսք ենք տվել նրա հարսանիքին լինել... Ջքավոր, միայնակ, ամաչկոտ մարդ է, և, իհարկե, հանցանք կլիներ նրան չկարեկցելը։ Պատկերացրու, պատարագից հետո պսակադրումն է, հետո եկեղեցուց բոլորս ոտքով կգնանք մինչև հարսնացուի բնակարանը... Հասկանո՞ւմ ես, պուրակ, թռչունների երգ, խոտի վրա ստվերներ, և մենք բոլորս որպես խայտաբղետ կետեր վառ կանաչ ֆոնի վրա. որքան յուրօրինակ կլինի, ֆրանսիական էքսպրեսիոնիստների ոճով։ Բայց, Դիմով, ի՞նչ պիտի հագնեմ եկեղեցի գնալիս,— ասաց

Օլգա Իվանովնան և դեմքին լացակումած արտահայտություն տվեց։— Այստեղ ես ոչինչ չունեմ, տառացիորե՜ն ոչինչ։ Ոչ զգեստ, ոչ ծաղիկներ, ոչ ձեռնոցներ... Դու պետք է ինձ փրկես։ Եթե եկել ես, նշանակում է՝ ճակատագիրն ինքն է հրամայում, որ ինձ փրկես։ Վերցրու բանալիները, թանկագինս, տուն մեկնիր և հանդերձարանից վերցրու վարդագույն զգեստս։ Դու այդ զգեստը հիշում ես, նա առաջինն է կախած... Հետո մառանում, աջ կողմում, հատակին կտեսնես երկու խաղաքարտե տուփ։ Հենց որ վերևինը բացես, այնտեղ լիքը շղարշ է, շղարշ, շղարշ և զանազան կտորտանք, իսկ դրանց տակը՝ ծաղիկներ։ Բոլոր ծաղիկները զգուշությամբ հանիր, աշխատիր, ջանիկ, չճխլտել, հետո ես դրանցից կընտրեմ... Եվ ձեռնոցներ գնիր։

— Լավ,— ասաց Դիմովը։— Ես վաղը կմեկնեմ և կուզարկեմ։

— Էլ ե՞րբ վաղը,— հարցրեց Օլգա Իվանովնան և զարմացած նայեց նրան։— Վաղը էլ ե՞րբ կհասցնես։ Վաղը առաջին գնացքը մեկնում է ժամը իններին, իսկ պսակադրումը տասնմեկին է։ Չէ, աղավնյակս, պետք է այսօր, անպայման այսօր։ Եթե վաղը չես կարողանա գալ, ուղարկիր թղթատարի հետ։ Դե գնա, է՞... Հիմա գալու է մարդատար գնացքը։ Մի՛ ուշացիր, ջանիկ։

— Լավ։

— Ա՜խ, ինչպես ափսոսում եմ քեզ ուղարկելուս համար,— ասաց Օլգա Իվանովնան և աչքերին արցունքներ երևացին։— Եվ ինչո՞ւ հիմարի պես խոսք տվեցի հեռագրիչին։

Դիմովն արագ մի բաժակ թեյ խմեց, մի օղաբլիթ վերցրեց և, հեզիկ ժպտալով, գնաց կայարան։ Իսկ խավիարը, պանիրը և սպիտակաձուկը կերան երկու սևահերներն ու հաստ դերասանը։

IV

Խաղաղ, լուսնկա հուլիսյան մի գիշեր Օլգա Իվանովնան կանգնել էր վոլգյան մի նավի տախտակամածին և նայում էր մերթ ջրին, մերթ գեղեցիկ ափերին։ Նրա կողքին կանգնել էր Ռյաբովսկին և ասում էր նրան, որ ջրի վրայի սև ստվերները ոչ թե ստվերներ են, այլ երազ, որ ի տես ֆանտաստիկ փայլով այս կախարդիչ ջրի, ի տես անհուն երկնի և թախծոտ, խոհուն ափերի, որոնք խոսում են մեր կյանքի ունայնության և ինչ-որ բարձրագույնի, հավերժականի, երանելիի գոյության մասին, լավ կլի-

ներ մոռացվեր, մեռնել, հող դառնալ։ Անցյալն անցել է և հետաքրքիր չէ. ապագան չնչին է, իսկ այս հիասքանչ, կյանքումդ միակ գիշերը շուտով կվերջանա, կձուլվի հավերժությանը, էլ ինչո՞ւ ապրել։

Իսկ Օլգա Իվանովնան ունկնդրում էր մերթ Ռյաբովսկու ձայնին, մերթ գիշերվա լռությանը և մտածում այն մասին, որ ինքն անմահ է և երբեք չի մեռնի։ Ջրի փիրուզյա գույնը, ինչպիսին նա առաջ երբեք չէր տեսել, երկինքը, ափերը, սև ստվերները և նրա հոգին լցրած անբացատրելի ուրախությունը ասում էին նրան, որ իրենից մեծ արվեստագետ դուրս կգա և ուր-որ այնտեղ, հեռաստանից այն կողմ, լուսնյակ գիշերից անդին, անվախճան տարածության մեջ իրեն սպասում է հաջողությունը, փառքը, ժողովրդի սերը... Երբ նա անքթիթ երկար նայում էր հեռուն, նրան պատկերանում էին մարդկանց ամբոխներ, լույսեր, երաժշտության հանդիսավոր հնչյուններ, հիացմունքի ճիչեր, նա ինքը սպիտակ զգեստներով, և ծաղիկներ, որոնք նրա վրա էին թափվում ամեն կողմից։ Նա մտածում էր նաև այն մասին, որ իր կողքին, նավեզրին հենված, կանգնել է մի իսկական մեծ մարդ, հանճար, աստծու ընտրյալը... Այն ամենը, ինչ նա ստեղծել է մինչև հիմա, սքանչելի է, նոր և արտասովոր, իսկ այն, ինչ նա կստեղծի ժամանակի ընթացքում, երբ հասունության հետ կամրապնդվի նրա հազվագյուտ տաղանդը, կլինի զարմանալի, անչափ բարձր, և դա երևում է նրա դեմքից, արտահայտվելու եղանակից և դեպի բնությունն ունեցած նրա վերաբերմունքից։ Ստվերների, իրիկնային երանգների, լուսնի փայլի մասին նա խոսում է ինչ-որ ուրույն, ի՛ր լեզվով, այնպես որ ակամա զգացվում է բնության վրա ունեցած նրա իշխանության հմայքը։ Նա ինքը շատ գեղեցիկ է, յուրօրինակ, և անկախ, ազատ, ամեն մի առօրյականին խորթ, նրա կյանքը նման է թռչունի կյանքին։

— Ցրտում է,— ասաց Օլգա Իվանովնան և սրթսրթաց։

Ռյաբովսկին իր թիկնոցով փաթաթեց նրան և տրտմագին ասաց.

— Ես ինձ զգում եմ ձեր իշխանության ներքո։ Ես ստրուկ եմ։ Ինչո՞ւ դուք այսօր այսքան թովիչ եք։

Նա ամբողջ ժամանակ, առանց հայացքը կտրելու, նայում էր Օլգա Իվանովնային, և նրա աչքերը տարտամ էին, և Օլգա Իվանովնան վախենում էր նրան նայել։

— Ես խելահեղորեն սիրում եմ ձեզ...— շշնջում էր Ռյաբովսկին, շնչելով Օլգա Իվանովնայի այտին։— Ասացեք ինձ մի բառ, և ես չեմ ապրի, կթողնեմ արվեստը...— մրմնջում էր նա սաստիկ հուզված։— Սիրեցեք ինձ, սիրեցեք...

— Այդպես մի խոսեք,— ասաց Օլգա Իվանովնան, աչքերը փակելով։— Դա սարսափելի է։ Իսկ Դիմովը։

— Ի՞նչ է Դիմովը։ Ինչացո՞ւ է Դիմովը։ Իմ ի՞նչ գործն է Դիմովը։ Վոլգան, լուսինը, գեղեցկությունը, իմ սերը, իմ հիացմունքը, ոչ մի Դիմով էլ չկա... Ա՜խ, ես ոչինչ չգիտեմ... Հարկավոր չէ ինձ անցյալը, տվեք ինձ մի ակնթարթ... մի վայրկյան։

Օլգա Իվանովնայի սիրտը թրթռաց։ Նա ուզում էր մտածել ամուսնու մասին, բայց իր ամբողջ անցյալը հարսանիքով, Դիմովով և երեկույթներով հանդերձ նրան թվում էր փոքրիկ, աննշան, աղոտ, անպետք և հեռու-հեռու... Եվ իսկապես, ի՞նչ է Դիմովը։ Եվ գոյություն ունի՞ նա բնության մեջ, արդյոք միայն երազ չէ՞ նա։

«Նրա, հասարակ ու սովորական մարդու համար, բավական է և այն երջանկությունը, որը նա արդեն ստացել է,— մտածում էր Օլգա Իվանովնան դեմքը ձեռքերով ծածկած.— Թող դատապարտեն այնտեղ, անիծեն, իսկ ես ահա, բոլորի ջղրու կվերցնեմ ու կկործանվեմ... Կյանքում ամեն ինչ պետք է ճաշակել։ Աստվա՜ծ իմ, ի՞նչ սարսափելի և ի՞նչ լավ է»։

— Դե ի՞նչ։ Ի՞նչ,— մրմնջում էր նկարիչը, փարվելով նրան և ագահորեն համբուրելով ձեռները, որոնցով Օլգա Իվանովնան թույլ փորձում էր նրան հեռացնել իրենից։— Դու ինձ սիրո՞ւմ ես։ Այո՞։ Այո՞։ Օ, ի՞նչ գիշեր է։ Սքանչելի գիշեր։

— Այո, ի՞նչ գիշեր է,— շշնջաց Օլգա Իվանովնան, նայելով արցունքից փայլող նրա աչքերին, ապա արագ նայեց շուրջը, փարվեց նրան և պինդ համբուրեց շրթունքները։

— Կինեշմային ենք մոտենում,— ասաց մեկը տախտակամածի մյուս կողմում։

Լսվեցին ծանր ոտնաձայներ։ Դա բուֆետի սպասավորն էր անցնում։

— Լսեցեք,— ասաց նրան Օլգա Իվանովնան, ծիծաղելով ու լաց լինելով երջանկությունից,— գինի բերեք մեզ։

Նկարիչը, հուզմունքից գունատված, նստեց նստարանին,

Օլգա Իվանովնային նայեց զմայլված, շնորհակալ աչքերով, ապա աչքերը փակեց և նվաղուն ժպտալով ասաց.

— Հոգնեցի։

Եվ գլուխը հենեց նավեզրին։

V

Սեպտեմբերի երկուսին օրը տաք ու խաղաղ էր, բայց մառախլապատ։ Վաղ առավոտյան Վոլգայի վրա թափառում էր մշուշը, իսկ ժամը իններից հետո սկսեց անձրև կաթկթել։ Եվ ոչ մի հույս չկար, որ երկինքը կպարզվի։ Թեյի ժամանակ Ռյաբովսկին Օլգա Իվանովնային ասում էր, որ գեղանկարչությունը ամենանշանակալի և ամենաձանձրալի արվեստն է, որ ինքը նկարիչ չէ, որ միայն հիմարներն են կարծում, թե ինքը տաղանդ ունի, և հանկարծ, առանց այլևայլի վերցրեց դանակը և իր ամենալավ էտյուդը խազմզեց։ Թեյից հետո նա մոայլ նստել էր լուսամուտի առաջ և նայում էր Վոլգային։ Իսկ Վոլգան արդեն անփայլ էր, աղոտ, փայլատ, սառը տեսքով։ Ամեն, ամեն ինչ հիշեցնում էր թախծալի, մոայլ աշնան մոտենալու մասին։ Եվ թվում էր, թե գետափնյա շքեղ կանաչ գորգերը, ճառագայթների ադամանդե արտացոլումը, թափանցիկ կապույտ հեռաստանը և ամբողջ պճնագեղն ու տոնականը բնությունը հիմա հանել էր Վոլգայի վրայից և դարսել սնդուկների մեջ մինչև գալիք գարուն, և ագռավները թռչում էին Վոլգայի մոտով ու ծաղրում նրան... «Մե՛րկ։ Մե՛րկ»։ Ռյաբովսկին լսում էր նրանց կռկռոցը և մտածում այն մասին, որ ինքը արդեն սպառվել է և կորցրել տաղանդը, որ այս աշխարհում ամեն ինչ պայմանական է, հարաբերական ու հիմար, և որ պետք չէր իրեն կապվել այս կնոջ հետ... Մի խոսքով, նա անտրամադիր էր և անձնատուր էր եղել սեամաղձության։

Օլգա Իվանովնան նստել էր միջնորմի հետև՝ մահճակալին և մատներով տնտղում էր իր սքանչելի վուշե մազերը, իրեն պատկերացնում էր մերթ հյուրասենյակում, մերթ ամուսնու առանձնասենյակում։ Երևակայությունը նրան տանում էր թատրոն, դերձակուհու և ծանոթ բարեկամների մոտ։ Տեսնես ի՞նչ են անում նրանք հիմա։ Արդյոք հիշո՞ւմ են իրեն։ Սեզոնն արդեն սկսվել է, և ժամանակն է, որ երեկույթների մասին մտածի։ Իսկ Դի՞մովը։ Սիրելի՞ Դիմով։ Ինչպես հլու և մանկականորեն խղճալի է խնդրում նա իր նամակներում, որպեսզի Օլգա Իվանովնան շուտով տուն գա։ Ամեն ամիս նա նրան ուղարկում էր յոթանասունհինգ ռուբլի, իսկ երբ ինքը գրեց, որ նկարիչներին պարտք է հարյուր ռուբլի, Դիմովը նրան ուղարկեց նաև այդ հարյուրը։ Ինչպիսի բարի՞, մեծահոգի մարդ է։ Ճանապարհորդությունը հոգնեցրել էր Օլգա Իվանովնային, նա ձանձրանում էր և ուզում էր շուտով հեռանալ այդ գեղջուկներից, գետի խոնավության հոտից և իրենից թոթափել ֆիզիկական անմաքրության այդ զգացումը, որ նա շարունակ ուներ, ապրելով գեղջկական խրճիթներում և թափառելով գյուղից գյուղ։ Եթե Ռյաբովսկին ազնիվ խոսք տված չլիներ նկարիչներին, որ նրանց հետ այստեղ կապրի մինչև սեպտեմբերի քսանը, ապա կարելի կլիներ հենց այսօր մեկնել։ Եվ ի՞նչ լավ կլիներ դա։

— Աստվա՞ծ իմ,— հառաչեց Ռյաբովսկին,— վերջապես ե՞րբ պիտի արև լինի։ Չէ՞ որ չեմ կարող արևային պեյզաժը շարունակել առանց արևի։

— Իսկ դու ամպամած երկնքի մի էտյուդ ունես,— ասաց Օլգա Իվանովնան, դուրս գալով միջնորմի հետևից։— Հիշո՞ւմ ես՝ աջ պլանի վրա անտառ է, իսկ ձախի վրա՝ կովերի նախիր և սագեր։ Հիմա դու կարող ես դա ավարտել։

— Է՛,— կնճռոտվեց նկարիչը։— Ավարտե՞լ։ Մի՞թե կարծում եք, ես այնքան հիմար եմ, որ չգիտեմ, թե ինչ պիտի անեմ։

— Ինչպես փոխվե՞լ ես իմ նկատմամբ,— հառաչեց Օլգա Իվանովնան։

— Դե, շատ էլ լավ է։

Օլգա Իվանովնայի դեմքը ցնցվեց, նա քաշվեց դեպի վառարանը և լաց եղավ։

— Հա, մենակ արցունքն էր պակաս։ Վե՛րջ տվեք։ Ես հազար պատճառ ունեմ լալու, բայց չեմ լալիս։

— Հազար պատճա՞ռ,— հեծկլտաց Օլգա Իվանովնան։— Ամենագլխավոր պատճառն այն է, որ դուք արդեն նեղվում եք ինձնից։ Այո՞,— ասաց նա ու փղձկաց։— Եթե ճիշտն ասելու լինենք, դուք ամաչում եք մեր սիրուց։ Դուք շարունակ աշխատում եք, որ նկարիչները չնկատեն, թեև դա չի կարելի թաքցնել, և նրանց վաղուց ամեն ինչ հայտնի է։

— Օլգա, ես մի բան եմ խնդրում ձեզնից,— ասաց նկարիչն աղաչական և ձեռքը սրտին դնելով,— մի բան. ինձ մի՛ տանջեք։ Ուրիշ ոչինչ չեմ ուզում։

— Բայց երդվեցեք, որ դեռ շարունակում եք ինձ սիրել։

— Սա տանջալի՜ է,— ատամների արանքից ասաց նկարիչը և վեր թռավ։— Բանն այնտեղ կհասնի, որ ինձ Վոլգան կնետեմ կամ կխելագարվե՜մ։ Թողե՛ք ինձ։

— Դե սպանեցեք, սպանեցեք ինձ,— ճչաց Օլգա Իվանովնան։— Սպանեցե՛ք։

Նա նորից հեծկլտաց և գնաց միջնորմի հետևը։ Խրճիթի ծղոտե տանիքին խշխշաց անձրևը։ Ռյաբովսկին գլուխը բռնեց և քայլեց անկյունից անկյուն, հետո վճռական դեմքով, կարծես ցանկանալով ինչ-որ մեկին ինչ-որ բան ապացուցել, գլխարկը դրեց, հրացանն ուսը գցեց և դուրս ելավ խրճիթից։

Նրա գնալուց հետո Օլգա Իվանովնան երկար ժամանակ պառկել էր մահճակալին և լաց էր լինում։ Սկզբում նա մտածում էր այն մասին, թե լավ կաներ, եթե թունավորվեր, որպեսզի վերադառնալով, Ռյաբովսկին նրան մեռած գտներ, իսկ հետո նա մտքերով տարվեց հյուրասենյակ, ամուսնու առանձնասենյակը և պատկերացրեց, թե ինչպես ինքը անշարժ նստած է Դիմովի կողքին և հրճվում է ֆիզիկական անդորրից ու մաքրությունից, և ինչպես երեկոյան նստած է թատրոնում և ունկնդրում է Մազինիին։ Եվ քաղաքակրթության, քաղաքային աղմուկի և նշանավոր մարդկանց կարոտը ճմլեց նրա սիրտը։ Խրճիթ մտավ գեղջկուհի աղախինը, որպեսզի վառարանը վառի և ճաշ եփի։ Խանձահոտ տարածվեց և ծխից օդը կապտավուն դարձավ։ Գալիս էին նկարիչները բարձրաձիգ կեղտոտ կոշիկներով և անձրևից թրջված դեմքերով, դիտում էին էյուղները և իրենց մխիթարելու համար ասում, որ Վոլգան նույնիսկ վատ եղանակին իր հմայքն ունի։ Իսկ էժանագին ժամացույցը պատի վրա թի՛կ-թա՛կ, թի՛կ... Ցրտահար ճանճերը խռնվել են առջևի անկյունում՝ սրբապատկերների մոտ և տզտզում են, և լսվում է, թե ինչպես թախտերի տակ, հաստ թղթապանակների մեջ խշխշացնում են մթնամիջատները...

Ռյաբովսկին վերադարձավ, երբ արևը մայր էր մտնում։ Նա գլխարկը նետեց սեղանին և դալկադեմ, հոգնատանջ, ցեխոտ կոշիկներով նստեց թախտին ու աչքերը փակեց։

— Ես հոգնել եմ...— ասաց նա և հոնքերը շարժեց, ճգնելով կոպերը բարձրացնել։

Որպեսզի փաղաքշի նրան և ցույց տա, որ ինքը չի նեղանում, Օլգա Իվանովնան մոտեցավ նրան, լուռ համբուրեց և

սանրը քսեց նրա խարտյաշ մազերին։ Ուզեց սանրել Ռյաբովսկու մազերը։

— Ա՞յդ ինչ է,— հարցրեց Ռյաբովսկին ցնցվելով, ասես նրան ինչ-որ սառը բան էր կպել, և բացեց աչքերը։— Ա՞յդ ինչ է։ Ինձ հանգիստ թողեք, խնդրում եմ։

Նա ձեռքերով վանեց Օլգա Իվանովնային ու ետ քաշվեց, և Օլգա Իվանովնային թվաց, թե նրա դեմքն արտահայտում էր նոզկանք ու զայրույթ։ Այդ ժամանակ դեղջկուհին զգուշությամբ երկու ձեռքով բռնած բերում էր ափսեով շչի, և Օլգա Իվանովնան տեսավ, թե ինչպես այդ կնիկը շչի՞ մեջ թրջել էր իր բութ մատները։ Ե՛վ փորը պինդ կապած կեղտոտ կնիկը, և՛ շչին, որն ագահությամբ սկսեց ուտել Ռյաբովսկին, և՛ խրճիթը, և՛ այս ամբողջ կյանքը, որը սկզբում ինքն այնքան սիրում էր պարզության և գեղարվեստական անկարգության համար, այժմ նրան սարսափելի թվացին։ Նա հանկարծ իրեն վիրավորված զգաց և սառնությամբ ասաց.

— Մենք պետք է միառժամանակ իրարից բաժանվենք, թե չէ կարող ենք ձանձրույթից լրջորեն գժտվել։ Ես արդեն բեզարել եմ սրանից։ Այսօր կմեկնեմ։

— Ինչո՞վ։ Ճիպոտին հեծա՞ծ։

— Այսօր հինգշաբթի է, նշանակում է ժամը ինն անց կես նավը կգա։

— Հը՞։ Այո, այո... Դե ինչ կա որ, գնա...— մեղմ ասաց Ռյաբովսկին, անձեռոցիկի փոխարեն սրբիչով սրբվելով։— Քեզ համար այստեղ ձանձրալի է և գործ չունես, և մարդ եսասեր պետք է լինի, որ քեզ այստեղ պահի։ Գնա, իսկ քսանից հետո կտեսնվենք։

Օլգա Իվանովնան ուրախ դասավորում էր իրերը, և բավականությունից նույնիսկ այտերը շիկնել էին։— Մի՞թե սա ճիշտ է,— հարցնում էր նա ինքն իրեն,— որ շուտով ինքը նկարելու է հյուրասենյակում, քնելու է ննջարանում և ճաշելու է սփռոցով ծածկած սեղանի առաջ։ Նրա սիրտը թեթևացավ, և այլևս չէր բարկանում նկարչի վրա։

— Ներկերն ու վրձինները քեզ եմ թողնում, Ռյաբուշա,— ասում էր նա։— Ինչ որ մնա՝ կբերես... Տես հա, առանց ինձ այստեղ չծուլանաս, չթախծես, կաշխատես։ Դու զուլաղն ես, Ռյաբուշա։

Ժամը ինն էր Ռյաբովսկին հրաժեշտի համբույր տվեց նրան,

ինչպես Օլգա Իվանովնան էր կարծում, նրա համար, որպեսզի նավի վրա, նկարիչների ներկայությամբ չհամբուրի, և ճամփու դրեց նավահանգիստ։ Շուտով մոտեցավ նավը և տարավ նրան։

Նա տուն հասավ երկու և կես օրից հետո։ Առանց գլխարկն ու անձրևանոցը հանելու, հուզմունքից ծանր շնչելով, նա անցավ հյուրասենյակ, իսկ այնտեղից սեղանատուն։ Դիմովը առանց սերթուկի, կոճակներն արձակած ժիլետով սեղան էր նստել և դանակն էր սրում պատառաքաղին քսելով. նրա առաջ ափսեի վրա սալամբ էր դրված։ Երբ Օլգա Իվանովնան տուն էր մտնում, համոզված էր, որ անհրաժեշտ է ամեն ինչ թաքցնել ամուսնուց և որ դրա համար ինքը ուժ և կարողություն կունենա, բայց հիմա, երբ նա տեսավ լայն, հեզիկ, երջանիկ ժպիտը և ժպտացող աչքերը, զգաց, որ այդ մարդուց թաքցնելը նույնքան ստոր, նողկալի և նույնքան անհնարին և ուժից վեր է, որքան և ամբաստանելը, գողանալը կամ սպանելը, և նա մի վայրկյանում որոշեց ինչ որ եղել էր, բոլորը պատմել ամուսնուն։ Թույլ տալով, որ ամուսինը փարվի իրեն և համբուրի, նա ծունկի եկավ նրա առաջ և դեմքը ծածկեց։

— Ի՞նչ է, ի՞նչ է, մայր,— հարցրեց ամուսինը քնքուշ։— Կարոտե՞լ ես։

Կինը բարձրացրեց ամոթից շիկնած դեմքը և նրան նայեց մեղավոր ու աղերսալից, բայց վախն ու ամոթը նրան խանգարեցին ճշմարտությունն ասել։

— Ոչինչ,— ասաց նա։— Ես հենց այնպես...

— Նստենք,— ասաց ամուսինը, բարձրացնելով և սեղանի առաջ նստեցնելով կնոջը։— Ահա այսպես... Կեր սալամբը։ Քաղցած ես, խղճուկս։

Օլգա Իվանովնան ագահաբար շնչում էր հարազատ օդը և ուտում սալամբը, իսկ ամուսինը խանդաղատանքով նայում էր նրան և ուրախ ծիծաղում։

VI

Ըստ երևույթին, ձմռան կեսից Դիմովն սկսեց գլխի ընկնել, որ իրեն խաբում են։ Նա, կարծես իր խիղճն անմաքուր լիներ, արդեն չէր կարող ուղիղ նայել կնոջ աչքերին, նրան հանդիպելիս չէր ժպտում ուրախ և, որպեսզի նրա հետ ավելի քիչ մնար մենակ, հաճախ իր մոտ ճաշի էր բերում իր ընկեր Կորոստելյովին,

գլուխը խուզած, ճմռթված դեմքով մի փոքրիկ մարդու, որը երբ խոսում էր Օլգա Իվանովնայի հետ, շփոթմունքից արձակում էր պիջակի բոլոր կոճակները ու նորից կոճկում և ապա սկսում էր աջ ձեռքով քաշքշել իր ձախ բեղը։ Ճաշի ժամանակ երկու բժիշկները խոսում էին այն մասին, որ ստոծանու բարձր լինելու դեպքում երբեմն սիրտը անկանոն է բաբախում, և կամ՝ որ վերջին ժամանակներս շատ հաճախ են նկատվում բազմաթիվ նևրիտներ, և կամ՝ որ երեկ Դիմովը «չարորակ անեմիա» ախտանիշով մի դիակ հերձելիս գտավ ենթաստամոքսային գեղձի քաղցկեղ։ Եվ թվում է, թե նրանք երկուսն էլ բժշկական զրույց էին վարում միայն նրա համար, որպեսզի Օլգա Իվանովնային հնարավորություն տային լռելու, այսինքն՝ չստելու։ Ճաշից հետո Կորոստելյովը նստում էր դաշնամուրի առաջ, իսկ Դիմովը հառաչում էր և ասում.

— Էխ, եղբայրս։ Էհ, ի՜նչ անենք։ Նվագիր մի տխուր բան։

Ուսերը բարձրացնելով և մատները լայն բաց արած, Կորոստելյովը մի քանի ակորդ էր վերցնում և տենորով սկսում էր երգել «Ցույց տուր ինձ այնպիսի մի անկյուն, ուր ռուս մուժիկը չտնքար», իսկ Դիմովը մի անգամ էլ էր հառաչում և գլուխը բռունցքին հենած՝ մտածմունքի մեջ էր ընկնում։

Վերջին ժամանակները Օլգա Իվանովնան իրեն չափազանց անզգույշ էր պահում։ Ամեն առավոտ նա արթնանում էր ամենավատ տրամադրությամբ և այն մտքով, որ ինքը Ռյաբովսկուն արդեն չի սիրում և որ, փառք աստծո, արդեն ամեն ինչ վերջացել է։ Բայց սուրճ խմելով, նա մտածում էր, որ Ռյաբովսկին իրենից խլել է ամուսնուն, և որ ինքը հիմա մնացել է առանց ամուսնու և առանց Ռյաբովսկու։ Հետո նա մտաբերում էր իր ծանոթների խոսակցություններն այն մասին, որ Ռյաբովսկին ցուցահանդեսի է պատրաստում ինչ-որ մի զարմանահրաշ բան, բնանկարի և ժանրի մի խառնուրդ, Պոլենովի ոճով, որով բոլորը, ովքեր լինում են նրա արվեստանոցում, հիանում են, բայց ախր դա, մտածում էր Օլգա Իվանովնան, Ռյաբովսկին ստեղծագործել է իր ազդեցության տակ և առհասարակ իր ազդեցության շնորհիվ նա խիստ փոխվել է դեպի լավը։ Իր ազդեցությունը այնքան բարերար և էական է, որ եթե ինքը նրան թողնի, ապա, ով գիտե, նա կարող է կործանվել։ Նա մտաբերում էր նաև, որ վերջին անգամ Ռյաբովսկին եկել էր իր մոտ ինչ-որ պեծպեծին

ովող գորշ սերթուկով և նոր փողկապով և նվաղկոտ հարցրել էր. «Ես գեղեցի՞կ եմ»։ Եվ իսկապես էլ, նա, նրբագեղ, իր էրկար գանգուրներով և կապույտ աչքերով, շատ գեղեցիկ էր (կամ, թերևս, այդպես թվաց) և սիրալիր էր իր հետ։

Շատ բան հիշելով և միտք անելով, Օլգա Իվանովնան հադնվում էր և խիստ հուզված գնում Ռյաբովսկու արվեստանոցը։ Նա Ռյաբովսկուն գտնում էր զվարթ և հիացած, իրոք որ հոյակապ, իր նկարով։ Ռյաբովսկին թռչկոտում էր, գժություններ անում և լուրջ հարցերին պատասխանում կատակով։ Օլգա Իվանովնան խանդում էր Ռյաբովսկուն նկարի հանդեպ և ատում էր այդ նկարը, բայց քաղաքավարությունից դրդված մի հինգ րոպե լուռ կանգնում էր դրա առաջ և, հոգոց հանելով, ինչպես հոգոց են հանում սրբության առաջ, կամացուկ ասում էր.

— Այո, դու դեռ երբեք նման բան չէիր նկարել։ Գիտե՞ս, նույնիսկ սարսափելի է։

Հետո նա սկսում էր աղերսել Ռյաբովսկուն, որ նա սիրի, ՀՔՔ, որ խղճա խեղճ թշվառին։ Նա լալիս էր, համբուրում Ռյաբովսկու ձեռքերը, պահանջում, որ երդվի, թե սիրում է, ապացուցում էր նրան, որ առանց իր լավ ազդեցության նա կշեղվի ճանապարհից և կկործանվի։ Եվ, փչացնելով Ռյաբովսկու լավ տրամադրությունը և իրեն ստորացած զգալով, Օլգա Իվանովնան գնում էր դերձակուհու կամ մի ծանոթ դերասանուհու մոտ տոմսի ճար անելու։

Եթե Ռյաբովսկուն արվեստանոցում չէր գտնում, նրան նամակ էր թողնում, որի մեջ երդվում էր, որ եթե նա այսօր իր մոտ չգա, ապա ինքը անպայման կթունավորվի։ Ռյաբովսկին վախենում էր, գալիս և մնում էր նրա մոտ ճաշելու։ Զքաշվելով ամուսնու ներկայությունից, նա Օլգա Իվանովնային հանդուգն բաներ էր ասում, վերջինս նրան պատասխանում էր նույն ձևով։ Երկուսն էլ զգում էին, որ կաշկանդում են իրար, որ իրենք բրոնակալներ ու թշնամիներ են և շարանում էին, և շարությունից չէին զգում, որ երկուսն էլ անվայելուչ են և որ նույնիսկ գլուխը սափրած Կորոստելյովը հասկանում է ամեն ինչ։ Ճաշից հետո Ռյաբովսկին շտապում էր հրաժեշտ տալ և հեռանալ։

— Ո՞ւր եք գնում,— նախասենյակում հարցնում էր Օլգա Իվանովնան, ատելությամբ նայելով նրան։

Ռյաբովսկին կնճռոտվելով և աչքերը կկոցելով, տալիս էր ընդհանուր ծանոթ որևէ տիկնոջ անուն, և երևում էր, որ նա

ծիծաղում է Օլգա Իվանովնայի խանդի վրա և ուզում է զայրացնել նրան։ Օլգա Իվանովնան գնում էր ննջարան և անկողնում պառկում. խանդից, բարկությունից, ստորացման ու ամոթի զգացմունքից նա կծոտում էր բարձը և սկսում էր բարձրաձայն հեկեկալ։ Դիմովը Կորոստելյովին թողնում էր հյուրասենյակում, գնում էր ննջարան և, շփոթված, ինքն իրեն կորցրած, կամաց ցուկ ասում էր.

— Բարձրաձայն լաց մի լինի, մայր... Ի՞նչ կարիք կա։ Այդ մասին պետք է լռել... Պետք է ցույց չտալ... Դիտես, որ ինչ պատահել է, այլևս ուղղել չի լինի։

Զիմանալով, թե ինչպես խաղաղեցնի իր մեջ ծանր խանդը, որից նույնիսկ քունքերն էին տրոփում, և կարծելով, թե դեռ կարող է գործը շտկել, Օլգա Իվանովնան լվացվում էր, շպարում լացակումած դեմքը և թռչում ծանոթ տիկնոջ մոտ։ Ռյաբովսկուն նրա մոտ չգտնելով, գնում էր երկրորդի, ապա երրորդի մոտ։ Առաջ նա ամաչում էր այդպես այցելել, բայց հետո վարժվեց, և պատահում էր, որ մի երեկոյի ընթացքում այցելում էր բոլոր ծանոթ կանանց, որպեսզի գտնի Ռյաբովսկուն, և բոլորը դա հասկանում էին։

Մի անգամ նա Ռյաբովսկուն ասաց ամուսնու մասին.

— Այդ մարդը ինձ ճնշում է իր մեծահոգությամբ։

Այդ ֆրազը նրան այնքան դուր եկավ, որ հանդիպելով այն նկարիչներին, որոնք գիտեին Ռյաբովսկու հետ ունեցած նրա սիրավեպը, նա ամեն անգամ ձեռքով մի եռանդուն շարժում անելով, ասում էր ամուսնու մասին.

— Այդ մարդը ինձ ճնշո՞ւմ է իր մեծահոգությամբ։

Կյանքի կարգը նույնն էր, ինչպես անցյալ տարի։ Զորեքշաբթի օրերը երեկույթներ էին լինում։ Դերասանն արտասանում էր, նկարիչները նկարում, թավջութակահարը նվագում էր, երգիչը երգում, և անփոփոխ կերպով ժամը տասնմեկն անց կես բացվում էր սեղանատան դուռը, և Դիմովը, ժպտալով ասում էր.

— Համեցեք, պարոններ, մի բան ճաշակելու։

Առաջվա պես Օլգա Իվանովնան որոնում էր մեծ մարդկանց, գտնում էր և չէր բավարարվում ու նորից էր որոնում։ Առաջվա պես նա ամեն օր վերադառնում էր ուշ գիշերին, բայց Դիմովը արդեն չէր քնում, ինչպես անցյալ տարի, այլ նստում էր իր առանձնասենյակում և ինչ-որ աշխատանք կատարում։ Նա պառկում էր ժամը մոտ երեքին, իսկ վեր էր կենում ութին։

Մի անգամ երեկոյան, երբ Օլգա Իվանովնան, պատրաստվելով թատրոն գնալ, կանգնած էր հայելու առաջ, ննջարան մտավ Դիմովը ֆրակով և սպիտակ փողկապով։ Նա հեզ ժպտում էր և առաջվա պես զվարթ նայում ուղիղ կնոջ աչքերին։ Նրա դեմքը շողում էր։

— Ես նոր դիսերտացիա պաշտպանեցի,— ասաց նա նստելով և ծնկները շփելով։

— Պաշտպանեցի՞ր,— հարցրեց Օլգա Իվանովնան։

— Ըհը՛,— ծիծաղեց նա և վիզը երկարացրեց, որպեսզի հայելու մեջ տեսնի կնոջ դեմքը, որը շարունակում էր կանգնել մեջքը ամուսնու կողմը շրջած, և մազերը հարդարել։— Ըհը՛,— կրկնեց նա։— Գիտե՞ս, շատ հնարավոր է, որ ինձ առաջարկեն ընդհանուր պաթոլոգիայի գծով պրիվատ-դոցենտուրան։ Այդպիսի հոտ է փչում։

Նրա երանությամբ լի շողշողուն դեմքից երևում էր, որ եթե Օլգա Իվանովնան նրա հետ բաժաներ ուրախությունն ու ցնծությունը, ապա նա ամեն ինչ կներեր կնոջը՝ և՛ ներկան, և՛ անցյալը, և ամեն ինչ կմոռանար, բայց Օլգա Իվանովնան չէր հասկանում, թե ինչ է նշանակում պրիվատ-դոցենտուրա և ընդհանուր պաթոլոգիա, ընդ որում վախենում էր թատրոնից ուշանալ և ոչինչ չասաց։

Դիմովը նստեց երկու բոպե, մեղավոր ժպտաց ու դուրս եկավ։

VII

Դա մի չափազանց անհանգիստ օր էր։

Դիմովի գլուխը սաստիկ ցավում էր. նա առավոտյան թեյ չխմեց, հիվանդանոց չգնաց և շարունակ պառկած էր իր առանձնասենյակում, թուրքական բազմոցին։ Օլգա Իվանովնան ըստ սովորականի ժամը մեկին գնաց Ռյաբովսկու մոտ, որպեսզի նրան ցույց տա իր nature morte-ը և հարցնի, թե ինչու երեկ չէր եկել։ Էյզուդը նրան թվում էր շնչին, և ինքը դա նկարել էր միայն նրա համար, որպեսզի մի ավելորդ առիթ ունենար նկարչի մոտ գնալու։

Նա Ռյաբովսկու արվեստանոցը մտավ առանց զանգի, և երբ նախասենյակում կրկնակոշիկներն էր հանում, նրան թվաց, թե մեկը կամաց վազեց, կանացիաբար խշխշացնելով շորերը, և երբ ինքն շտապեց արվեստանոցի դռնից ներս նայել, տեսավ

միայն դարշնագույն շրջազգեստի մի կտոր, որը մի ակնթարթ փայլկտաց ու չքացավ նկարակալի հետ մեկտեղ մինչև հատակ սև կոլենկորով վարագուրած մի մեծ նկարի հետև։ Կասկած չկար. դա կին էր թաքնվում։ Որքան հաճախ Օլգա Իվանովնան ինքը ապաստան էր գտել այդ նկարի հետև։ Ռյաբովսկին, ըստ երևույթին, շատ շփոթված, կարծես թե զարմացավ նրա գալուն, նրան մեկնեց ձեռքը և ասաց, լարված ժպտալով.

— Ա՜-ա՜-ա՜-ա՜։ Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու։ Ի՞նչ լավ բան կասեք։

Օլգա Իվանովնայի աչքերը լցվեցին արցունքով։ Նրա համար ամոթալի էր, դառն, և եթե միլիոն էլ տայիք, նա չէր համաձայնի խոսել կողմնակի կնոջ, ախոյանի, սուտլիկի ներկայությամբ, որը հիմա կանգնած էր պատկերի հետև ու, հավանաբար, չարախինդ ծիծաղում էր։

— Ես ձեզ մի էյզուդ եմ բերել...— ասաց նա երկչոտ, բարակ ձայնով, և նրա շրթունքները դողացին,— nature morte.

— Ա-ա-ա՜... էյզո՞ւդ։

Նկարիչը ձեռքն առավ էյզուդը, և, դիտելով, կարծես մեքենայաբար անցավ մյուս սենյակը։

Օլգա Իվանովնան հնազանդ գնաց նրա հետևից։

— Nature morte... առաջին սորտ— մոթմոթում էր նա, աշխատելով հանգեր գտնել,— կուրորտ... շորտ... պորտ...

Արվեստանոցից լսվեցին շտապ ոտնաձայներ և շորերի շրշյունը։ Ուրեմն այն կինը գնաց։ Օլգա Իվանովնան ուզում էր բարձրաձայն բղավել, մի ծանր բանով խփել նկարչի գլխին և հեռանալ, բայց նա ոչինչ չէր տեսնում արցունքների միջից, ճնշված էր իր ամոթից և իրեն զգում էր ոչ թե Օլգա Իվանովնա և ոչ էլ նկարչուհի, այլ մի փոքրիկ բլոճ։

— Ես հոգնել եմ,— նվաղկոտ ասաց նկարիչը էյզուդին նայելով և գլուխը թափահարելով, որպեսզի թմբիրը հաղթահարի։— Սա շատ սիրուն է, իհարկե, բայց այսօր էլ էյզուդ, անցյալ տարի էլ էյզուդ, մի ամիս հետո էլ կլինի էյզուդ... Ինչպե՞ս չեք ձանձրանում։ Ես ձեր տեղը լինեի, գեղանկարչությունը կթողնեի և կգբաղվեի լուրջ երաժշտությամբ կամ որևէ բանով։ Չէ՞ որ դուք ոչ թե նկարչուհի եք, այլ երաժիշտ։ Բայց գիտե՞ք, ինչպես հոգնած եմ։ Ես հիմա կասեմ, որ թեյ տան։ Հը՞։

Նա սենյակից դուրս եկավ, և Օլգա Իվանովնան լսեց, թե ինչպես նա ինչ-որ բան հրամայեց իր լակեյին։ Որպեսզի հրաժեշտ չտա, չբացատրվի, իսկ որ գլխավորն է՝ չփղձկա, Օլգա Իվանովնան, քանի դեռ նկարիչը չէր վերադարձել, շտապ վազեց նախասենյակ, կրկնակոշիկները հագավ ու դուրս եկավ փողոց։ Այստեղ նա թեթևացած շունչ քաշեց և իրեն ընդմիշտ ազատ զգաց և՛ Ռյաբովսկուց, և՛ գեղանկարչությունից, և՛ այն ծանր ամոթից, որն իրեն այնպես ճնշում էր արվեստանոցում։ Ամեն ինչ վերջացած է։

Նա գնաց դերձակուհու մոտ, ապա Բարնայի, որը միայն երեկ էր ժամանել, Բարնայից՝ նոտաների խանութ, և շարունակ մտածում էր այն մասին, թե ինչպես Ռյաբովսկուն կգրի սառն, կոշտ, սեփական արժանապատվությամբ լի մի նամակ և ինչպես գարնանը կամ ամառը Դիմովի հետ կմեկնի Ղրիմ, այնտեղ վերջնականապես կաղատվի անցյալից և նոր կյանք կսկսի։

Տուն վերադառնալով ուշ երեկոյան, նա առանց շորերը փոխելու նստեց հյուրասենյակում, նամակը շարադրելու։ Ռյաբովսկին նրան ասաց, թե նա նկարչուհի չէ, իսկ ինքը վրեժն առնելու համար հիմա նրան կգրի, որ նա ամեն տարի նկարում է նույն բանը և ամեն օր ասում է միևնույն բանը, որ նա կանգ է առել և որ նրանից ոչինչ դուրս չի գա, բացի արդեն դուրս եկածից։ Օլգա Իվանովնան ուզում էր գրել նաև, որ նա շատ բանով է պարտական իր՝ Օլգա Իվանովնայի լավ ազդեցությանը, իսկ եթե նկարիչը վատ քայլեր է կատարում, այդ նրանից է, որ իր ազդեցությունը կաթվածահար են անում զանազան երկդիմի անձնավորություններ, ինչպես այն կինը, որ այսօր թաքնվում էր նկարի հետև։

— Մա՜յր,— առանձնասենյակից կանչեց Դիմովը, դուռը բաց չանելով։— Մա՜մա։

— Ի՞նչ ես ուզում։

— Մայր, սենյակս չմտնես, այլ միայն մոտեցիր դռանը։— Ահա թե ինչ... Երեք օր առաջ ես հիվանդանոցում վարակվեցի դիֆտերիայով, իսկ հիմա... վատ եմ զգում։ Շտապ ուղարկիր Կորոստելյովի հետևից։

Օլգա Իվանովնան, ինչպես բոլոր ծանոթ տղամարդկանց, ամուսնուն միշտ կանչում էր ոչ թե անունով, այլ ազգանունով. նրա Օսիպ անունը իրեն դուր չէր գալիս, որովհետև հիշեցնում էր

գոգոլյան Օսիպին և «Осип охрип, а Архип осип»[1] բառախաղը։ Բայց հիմա նա ճչաց.

— Օսիպ, չի՛ կարող պատահե՛լ։

— Ուղարկիր, վատ եմ զգում...— դռան հետևից ասաց Դիմովը, և լսվում էր, թե ինչպես նա մոտեցավ բաղմոցին ու պառկեց։— Ուղարկի՛ր,— խուլ լսվեց նրա ձայնը։

«Այս ի՞նչ բան է,— մտածեց Օլգա Իվանովնան, սարսափից սառչելով։— Չէ՞ որ դա վտանգավոր է»։

Առանց որևէ անհրաժեշտության նա մոմը վերցրեց և գնաց իր ննջարանը և այստեղ, մտմտալով, թե ինքը ինչ պիտի անի, հանկարծ հայելու մեջ նայեց իրեն։ Գունատ, վախեցած դեմքով, բարձրաթև ժակետով, կրծքին դեղին զարդածալքերով և շրջազգեստի ոչ սովորական ուղղությամբ զոլերով նա ինքն իրեն թվաց սարսափելի և զզվելի։ Նա հանկարծ ցավ զգալու աստիճան ափսոսաց Դիմովին, նրա անսահման սերը իր նկատմամբ, նրա երիտասարդ կյանքը և նույնիսկ այս որբացած անկողինը, որի վրա Դիմովը վաղուց չէր քնել, և նա մտաբերեց ամուսնու սովորական, հեզ, հլու ժպիտը։ Օլգա Իվանովնան դառնագին լաց եղավ և Կորոստելյովին մի աղերսական նամակ գրեց։ Գիշերվա ժամը երկուսն էր։

VIII

Երբ առավոտյան ժամը ութին մոտ Օլգա Իվանովնան անքընությունից ծանրացած գլխով, չսանրված, տգեղացած և մեղավոր արտահայտությամբ դուրս եկավ ննջարանից, նրա մոտով նախասենյակ անցավ սև մորուքավոր ինչ-որ մի պարոն, ըստ երևույթին՝ բժիշկը։ Դեղերի հոտ էր փչում։ Առանձնասենյակի դռան մոտ կանգնել էր Կորոստելյովը և աջ ձեռքով քաշքշում էր ձախ բեղը։

— Նրա մոտ, ներեցեք, ես ձեզ չեմ թողնի,— մռայլորեն ասաց նա Օլգա Իվանովնային։— Կարելի է վարակվել։ Եվ ըստ էության կարիք էլ չկա։ Միևնույն է, նա զառանցանքի մեջ է։

— Նա իսկակա՞ն դիֆտերիտով է հիվանդ,— շշուկով հարցրեց Օլգա Իվանովնան։

— Նրանց, ովքեր զոռով փորձանքի մեջ են ընկնում, խա-

[1] Օսիպը խոպոտել է, իսկ Արխիպը կերկերաձայն դարձել։

կասես, պետք է դատի տալ,— մոթմոթաց Կորոստելյովը, չպատասխանելով Օլգա Իվանովնայի հարցին։— Գիտե՞ք, նա ինչու է վարակվել։ Երեքշաբթի օրը նա խողովակով դուրս էր ծծում մի փոքրիկ տղայի կոկորդից դիֆտերիայի փառերը։ Իսկ ի՞նչ կարիք կար։ Տխմար բան... Այնպես, հիմարությունից...

— Վտանգավո՞ր է։ Շա՞տ,— հարցրեց Օլգա Իվանովնան։

— Այո, ասում են, որ ծանր տեսակն է։ Պետք էր, որ Շրեկի հետևից ուղարկեինք ըստ էության։

Եկավ մի փոքրիկ, շեկ մարդ՝ երկար քթով ու հրեական առոգանությամբ, հետո բարձրահասակ, կորամեջք, գզգզված, ավագ սարկավագի տեսքով մի ուրիշը, հետո մի երիտասարդ, շատ գեր մարդ, կարմիր դեմքով և ակնոցավոր։ Դրանք բժիշկներ էին, որ գալիս էին իրենց ընկերոջ մոտ հերթապահելու։ Կորոստելյովը, իրեն հասանելիք ժամերը հերթապահելով, տուն չէր գնում, այլ մնում էր և ստվերի պես թափառում սենյակից սենյակ։ Աղախինը հերթապահող բժիշկներին թեյ էր մատուցում և հաճախակի վազում դեղատուն, և մարդ չկար, որ սենյակները հավաքեր։ Լուռ և տրտում էր։

Օլգա Իվանովնան նստել էր իր ննջարանում և մտածում էր, որ դա աստված է իրեն պատժում նրա համար, որ ինքը խաբում էր ամուսնուն։ Լռակյաց, անտրտունջ, անհասկանալի մի էակ, դիմազրկված իր հեզությամբ, ավելորդ բարության պատճառով անհաստատակամ, թույլ, այժմ խուլ տանջվում էր ահա այնտեղ՝ իր բազմոցի վրա և չէր գանգատվում։ Իսկ եթե այդ էակը գանգատվեր թեկուզև զառանցանքի մեջ, ապա հերթապահ բժիշկները կիմանային, որ այստեղ մեղավոր է ոչ միայն դիֆտերիտը։ Կորոստելյովին հարցնեին, նա ամեն ինչ գիտի, և զուր չէ, որ իր ընկերոջ կնոջ վրա նայում է այնպիսի աչքերով, կարծես թե նա է ամենագլխավորը, իսկական չարագործը, իսկ դիֆտերիտը միայն նրա համախոհն է։ Օլգա Իվանովնան արդեն չէր հիշում ո՛չ լուսնյակ գիշերը Վոլգայի վրա, ո՛չ սիրո բացատրությունները, ո՛չ խրճիթում անցկացրած պոետական կյանքը, այլ միայն հիշում էր, որ դատարկ քմահաճույքից, շփացածությունից, ամբողջովին ձեռքերով ու ոտքերով խրվել է ինչ-որ կեղտոտ, կպչուն բանի մեջ, որից արդեն երբեք չի մաքրվի...

«Ախ, ի՞նչ սարսափելի խաբեցի,— մտածում էր նա, մտաբերելով Ռյաբովսկու հետ ունեցած իր անհանգիստ սերը։— Անիծված լինի այդ ամենը...»։

Ժամը չորսին նա ճաշեց Կորոստելյովի հետ։ Սա ոչինչ չէր ուտում, միայն կարմիր գինի էր խմում և խոժոռվում։ Օլգա Իվանովնան էլ ոչինչ չէր ուտում։ Մերթ նա մտովի աղոթում էր և խոսք տալիս աստծուն, որ եթե Դիմովն առողջանա, ապա ինքը նորից կսիրի նրան և հավատարիմ կին կլինի։ Մերթ մի րոպե ինքնամոռացության մեջ ընկնելով, նայում էր Կորոստելյովին ու մտածում. «Մի՞թե տաղտկալի չէ լինել հասարակ, ոչ մի բանով աչքի չընկնող, անհայտ մարդ, այն էլ այսպիսի ճմռթված երեսով ու վատ շարժուձևերով»։ Մերթ նրան թվում էր, թե հենց այս րոպեին աստված նրան կսպանի այն բանի համար, որ վարակվելուց վախենալով, դեռ ոչ մի անգամ չի եղել ամուսնու առանձնասենյակում։ Իսկ ընդհանուր առմամբ մի բութ ու վհատ զգացմունք էր տիրել նրան, և համոզված էր, որ կյանքն արդեն փչացել է և որ ոչ մի կերպ դա չես ուղղի...

Ճաշից հետո մութն ընկավ։ Երբ Օլգա Իվանովնան հյուրասենյակ մտավ, Կորոստելյովը քնել էր թախտի վրա, գլխի տակ ոսկեթել բանվածքով մետաքսե մի բարձ դրած։ «Կխի-փուա...— խռմփացնում էր նա,— կխի-փուա»։

Եվ հերթապահելու եկող ու գնացող բժիշկներն էլ չէին նկատում այդ անկարգությունը։ Այն, որ օտար մարդը քնել էր հյուրասենյակում և խռմփացնում էր, և պատերից կախած էտյուդները, և օտարոտի կահավորանքը, և այն, որ տանտիրուհին սաստրված չէր և փնթի էր հագնված, այդ ամենը հիմա ամենափոքր իսկ հետաքրքրություն չէր հարուցում։ Բժիշկներից մեկը անզգուշաբար ինչ-որ բանի վրա ծիծաղեց, և մի տեսակ տարօրինակ ու երկչոտ հնչեց այդ ծիծաղը, նույնիսկ սարսուռ ազդեց։

Երբ Օլգա Իվանովնան երկրորդ անգամ հյուրասենյակ մտավ, Կորոստելյովն արդեն քնած չէր, այլ նստել ու ծխում էր։

— Քթի խոռոչի դիֆտերիտ է նրա դիֆտերիտը,— ասաց նա կիսաձայն։— Արդեն սիրտն էլ կարգին չի աշխատում։ Ըստ էության գործերը վատ են։

— Շրեկի հետևից մարդ ուղարկեցեք,— ասաց Օլգա Իվանովնան։

— Արդեն եղել է։ Հենց նա էլ նկատեց, որ դիֆտերիտն անցել է քթթը։ Էհ, Շրեկն ինչ է որ։ Ըստ էության Շրեկը ոչինչ է։ Նա Շրեկ է, ես՝ Կորոստելյով — և ուրիշ ոչինչ։

Ժամանակը սարսափելի դանդաղ էր անցնում։ Օլգա Իվանովնան հագնված պառկել էր առավոտվանից չհավաքած ան-

կողնում և նիրհում էր։ Նրան թվում էր, թե ամբողջ բնակարանը հատակից մինչև առաստաղ զբաղեցրել է մի հսկայական երկաթի կտոր և թե բավական է դուրս հանել այդ երկաթը, բոլորը միանգամից կուրախանան ու կթնթևանան։ Սթափվելով, նա հիշեց, որ դա ոչ թե երկաթ է, այլ Դիմովի հիվանդությունը։ «Nature morte, պորտ...— մտածում էր նա, կրկին մոռացման մեջ ընկնելով,— սպորտ... կուրորտ... Իսկ ինչպե՞ս է Շրեկը։ Շրեկ, գրեկ, վրեկ... Իսկ ո՞ւր են հիմա իմ բարեկամները։ Արդյոք գիտե՞ն, որ մենք վիշտ ունենք։ Տեր, փրկիր... աղատիր։ Շրեկ, գրեկ...»։

Եվ դարձյալ երկաթը... ժամանակն անցնում էր դանդաղ, իսկ ժամացույցը ներքևի հարկում խփում էր հաճախակի։ Եվ շարունակ լսվում էին զանգի ձայներ. գալիս էին բժիշկները... Ներս մտավ աղախինը դատարկ բաժակը մատուցարանին դրած և հարցրեց.

— Տիկին, կհրամայե՞ք անկողինը պատրաստել։

Եվ պատասխան չստանալով, դուրս գնաց։ Ցածում ժամացույցը խփեց, Օլգա Իվանովնան երազում անձրև տեսավ Վոլգայի վրա, և նորից ինչ-որ մեկը ննջարան մտավ, կարծես թե կողմնակի մի մարդ։ Օլգա Իվանովնան վեր թռավ և ճանաչեց Կորոստելյովին։

— Ժամը քանի՞սն է,— հարցրեց նա։

— Երեքին մոտ է։

— Ինչպե՞ս է։

— Էհ, ինչպես։ Ես եկա ասելու. վախճանվում է...

Նա փղձկաց, նստեց մահճակալին Օլգա Իվանովնայի կողքին և արցունքները սրբեց թևքով։ Օլգա Իվանովնան անմիջապես չհասկացավ, բայց ամբողջովին սառեց և դանդաղ սկսեց խաչակնքել։

— Վախճանվում է...— կրկնեց Կորոստելյովը բարակ ձայնով և նորից հեկեկաց։— Մեռնում է, որովհետև զոհաբերեց իր անձը... Ինչպիսի՜ կորուստ գիտության համար,— ասաց նա դառնությամբ։— Նա, եթե մեզ բոլորիս համեմատելու լինենք նրա հետ, մեծ, արտասովոր մարդ էր։ Ինչպիսի՜ ձիրքեր։ Ինչպիսի՜ հույսեր էր ներշնչում նա մեզ բոլորիս,— շարունակում էր Կորոստելյովը, ձեռքերը կոտրատելով։— Տեր իմ աստված, նա այնպիսի գիտնական կլիներ, որպիսին հիմա ճրագով էլ չես

գտնի։ Օսկա Դիմով, Օսկա Դիմով, այդ ի՜նչ արիր։ Այ, այ, աստվա՜ծ իմ։

Կորոստելյովը հուսահատ երկու ձեռքով ծածկեց դեմքը և գլուխը օրորեց։

— Իսկ ինչպիսի՜ բարոյական ուժ,— շարունակում էր նա, ավելի ու ավելի չարանալով ինչ-որ մեկի վրա։— Բարի, մաքուր, սիրող հոգի. ոչ թե մարդ, բյուրեղ։ Ծառայում էր գիտությանը և մեռավ գիտությունից։ Իսկ աշխատում էր եզան պես, գիշեր ու ցերեկ, ոչ ոք նրան չէր խնայում, և երիտասարդ գիտնականը, ապագա պրոֆեսորը, ստիպված էր իր համար պրակտիկա որոնել և գիշերները թարգմանությամբ զբաղվել, որպեսզի վճարեր ահա այս... ստոր լաթերի համար։

Կորոստելյովն ատելությամբ նայեց Օլգա Իվանովնային, երկու ձեռքով բռնեց սավանը և բարկացած քաշեց, կարծես նա մեղավոր էր։

— Ե՛վ ինքն իրեն չէր խնայում, և՛ նրան չէին խնայում։ Էհ, ինչ ասես ըստ էության։

— Այո, հազվագյուտ մարդ,— ասաց մեկը հյուրասենյակում թավ ձայնով։

Օլգա Իվանովնան մտաբերեց նրա հետ անցկացրած իր ամբողջ կյանքը սկզբից մինչև վերջ, բոլոր մանրամասնություններով և հանկարծ հասկացավ, որ դա իրոք արտասովոր, հազվագյուտ և իր ճանաչած մարդկանց համեմատությամբ մեծ մարդ էր։ Եվ հիշելով, թե նրան ինչպես էին վերաբերում իր հանգուցյալ հայրը և ընկեր-բժիշկները, հասկացավ, որ նրանք բոլորը հանձին Դիմովի տեսնում էին ապագա նշանավոր մարդու։ Պատերը, առաստաղը, լամպը և հատակի գորգը ծաղրաբար աչքով արին նրան, կարծես ուզելով ասել. «Ձեռքիցդ փախցրի՜ր, ձեռքիցդ փախցրի՜ր»։ Նա լացով դուրս նետվեց ննջարանից, հյուրասենյակում վստաց ինչ-որ անծանոթ մարդու մոտով և ներս վազեց առանձնասենյակ՝ ամուսնու մոտ։ Նա անշարժ պառկել էր տաճկական բազմոցի վրա, մինչև գոտկատեղը վերմակով ծածկված։ Նրա դեմքը սարսափելի սմքել էր, նիհարել և գորշավուն-դեղին գույն ուներ, որպիսին երբեք չեն ունենում կենդանի մարդիկ. և միայն ճակատից, սև հոնքերնից և մեկ էլ ծանոթ ժպիտից կարելի էր ճանաչել, որ դա Դիմովն է։ Օլգա Իվանովնան արագ շոշափեց նրա կուրծքը, ճակատն ու ձեռքերը։ Կուրծքը դեռ տաք էր, բայց ճակատն ու ձեռքերը տհաճորեն սառն էին։

Եվ կիսախուփ աչքերը նայում էին ոչ թե Օլգա Իվանովնային, այլ վերմակին։

— Դիմո՛վ,— կանչեց Օլգա Իվանովնան բարձրաձայն։— Դի՛մով։

Նա ուզում էր բացատրել նրան, որ այն սխալ էր, որ դեռ ամեն ինչ կորած չէ, որ կյանքը դեռ կարող է լինել սքանչելի ու երջանիկ, որ նա հազվագյուտ, արտասովոր, մեծ մարդ է, և որ ինքը ամբողջ կյանքում կերկրպագի նրան, կաղոթի և սրբազան երկյուղածություն կզգա նրա հանդեպ...

— Դիմո՛վ,— կանչում էր նրան, ուսը թոթվելով և չհավատալով, որ նա այլևս երբեք չի զարթնի։— Դիմով, Դիմո՛վ։

Իսկ հյուրասենյակում Կորոստելյովն աղախնուն ասում էր.

— Էլ ի՞նչ եք հարցնում։ Գնացեք եկեղեցու պահատնակը և իմացեք, թե որտեղ են ապրում անկյալ կանայք։ Նրանք և՛ կլողացնեն դիակը, և՛ կհագցնեն. ինչ որ պետք է, կանեն։

1891

ԱՔՍՈՐՈՒՄ

Ծերունի Սեմյոնը, որին հորջորջում էին Տոլկովի, և մի երիտասարդ թաթար, որի անունը ոչ ոք չգիտեր, նստած էին գետափին խարույկի մոտ. մնացած երեք թիավարները խրճիթում էին։ Սեմյոնը, որ վաթսուն տարեկան մի ծերունի էր, նիհար, ատամները թափած, բայց լայնաթիկունք և տեսքով առողջ մարդու տպավորություն էր թողնում, հարբած էր։ Նա վաղուց արդեն գնացած կլիներ քնելու, բայց օղու շիշը գրպանումն էր, և նա վախենում էր՝ չլինի թե կտրիճ տղերքը խրճիթում օղի խնդրեին իրենից։ Թաթարը հիվանդ էր, նեղվում էր և, փաթաթվելով իր ցնցոտիների մեջ, պատմում էր, թե որքա՜ն լավ էր Սիմբիրսկի նահանգում և թե ինչպիսի գեղեցիկ ու խելացի կին է թողել տանը։ Նա քսանհինգ տարեկան էր, ոչ ավելի, իսկ հիմա, խարույկի լույսի տակ, իր գունատ, տխուր և հիվանդոտ դեմքով երեխայի տպավորություն էր թողնում։

— Իհարկե, այստեղ դրախտ չէ,— ասում էր ծերունին։— Ինքդ տեսնում ես՝ ջուր, լերկ ափեր, չորս կողմը կավ և ուրիշ ոչինչ... Զատիկն արդեն վաղուց անցել է, իսկ գետը դեռ սառույց է բերում, առավոտյան էլ ձյուն եկավ։

— Վա՜տ է, վա՜տ,— ասաց թաթարը և վախեցած նայեց։

Տասը քայլ այն կողմ հոսում էր պղտոր, սառը գետը. նա հառաչում, սաստկությամբ զարնվում էր կավոտ, փորված ափերին և արագ գնում դեպի հեռուն, հեռավոր ծովը։ Հենց ափի մոտ մթին էր տալիս մի մեծ լաստ, որին թիավարները «կարբաս» են անվանում։ Հեռվում՝ մյուս ափին, օձանման պտույտներով երևում էին մե՛րթ հանգչող, մե՛րթ բոցավառվող կրակներ. այդ անցյալ տարվա խոտն էին այրում։ Օձանման կրակներից այն կողմը դարձյալ խավար էր։ Լսվում էր, թե ինչպես սառույցի մանր կտորները զարնվում էին լաստին։ Խոնավ էր, ցուրտ...

Թաթարը նայեց դեպի երկինք։ Աստղերն այստեղ նույնքան շատ են, որքան իր հայրենիքում. նույն խավարն է շուրջը, բայց ինչ-որ բան պակասում է։ Հայրենիքում, Սիմբիրսկի նահանգում, աստղերը բոլորովին այսպես չեն և ոչ էլ երկինքն է այսպես։

— Վա՜տ է, վա՜տ,— կրկնեց թաթարը։

— Կսովորես,— ասաց Տոլկովին ու ծիծաղեց։— Դու դեռ ջահել ես, հիմար, կաթի համը դեռ բերանումդ է։ Հիմարությունից քեզ թվում է, թե քեզնից անբախտ մարդ չկա, բայց կգա ժամանակ, երբ ինքդ կասես՝ փառք տիրոջը, գոհ եմ իմ կյանքից։ Նայիր, օրինակ, ես։ Մի շաբաթից հետո ջուրը կչքանա, լաստը կթողնենք այստեղ, դուք բոլորդ ման գալու կգնաք Սիբիրում, իսկ ես կմնամ, կսկսեմ մի ափից մյուսը գնալ։ Արդեն քսաներեսկ ես կմնամ, կսկսեմ մի ափից մյուսը գնալ։ Արդեն քսաներկու տարի է այս գործով եմ պարապում։ Ձոր ու գիշեր։ Գայլաձուկը և սիբիրաձուկը ջրի տակ, իսկ ես ջրի երեսին։ Եվ փառք աստծու։ Ինձ ոչինչ հարկավոր չէ։ Գոհ եմ իմ վիճակից։

Թաթարը ցախ ավելացրեց խարույկին, պառկեց կրակին ավելի մոտ, ասաց.

— Հայրս հիվանդոտ մարդ է։ Երբ նա մեռնի, մայրս ու կինս կգան այստեղ։ Խոստացել են։

— Ինչի՞դ են պետք մայրդ ու կինդ,— հարցրեց ծերունին։— Դրանք հիմարություն են, եղբա՛յր։ Սատանան է քո հոգին պղտորում. ա՛յ սատկի դա։ Դու մի լսիր այդ անիծածին։ Երես մի տա նրան։ Երբ նա հիշեցնի քեզ կնանոնց, դու ջգրու հակառակվիր, թե հարկավոր չէ։ Նա քեզ ազատության մասին, էլի հակառակվիր, թե հարկավոր չէ։ Ոչինչ հարկավոր չէ։ Չկա ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ կին, ո՛չ ազատ կյանք, ոչ էլ հայրենական օջախ։ Ոչինչ հարկավոր չէ, այ քրքրվի դրանց հոգին։

Տոլկովին օղու շիշը տարավ բերանը և շարունակեց.

— Ես, եղբա՛յր, հասարակ մուժիկ չեմ, անտաշ չեմ, ես տիրացուի որդի եմ և, երբ Կուրսկում ազատ ապրում էի, հագնում էի սերթուկ, իսկ հիմա հասել եմ էն աստիճանի, որ կարող եմ մերկ քնել գետնի վրա ու խոտ խժռել։ Գոհ եմ իմ վիճակից։ Ինձ ոչինչ հարկավոր չի, ես ոչ ոքից չեմ վախենում, և այնպես եմ հասկանում, թե ինձանից ավելի հարուստ ու ազատ մարդ չկա։ Երբ ինձ Ռուսաստանից աքսորեցին այստեղ, ես հենց առաջին օրվանից սկսեցի համառել, ասի՝ ոչինչ չեմ ուզում։ Սատանան հիշեցնում էր ինձ կնոջս, հարազատներիս, ազատ կյանքը. իսկ ես ասում էի նրան՝ ինձ ոչինչ հարկավոր չէ։ Համառեցի իմ ասածի վրա և ահա, ինչպես տեսնում ես, լավ եմ ապրում, չեմ գանգատվում։ Իսկ ով երես տա սատանին և լսի նրան, կորա՛ծ է, փրկություն չկա. մինչև կոկորդը կխրվի ճահճի մեջ ու չի կարողանա դուրս գալ։ Ոչ միայն քեզ նման հիմար գյուղացին, այլ ազնվականներն ու ուսումնականներն էլ են կորչում։ Մի տասնհինգ տարի սրանից առաջ Ռուսաստանից էստեղ աքսորեցին մի ուսումնական պարոնի։ Եղբայրների հետ ինչ-որ անհամաձայնություններ էր ունեցել և կտակի մեջ ինչ-որ կեղծիք էր սարքել։ Ասում էին, իշխանական, բարոնական տնից է. ո՛վ իմանա, գուցեև պարզապես չինովնիկ էր։ Դե՛, եկավ էստեղ այդ պարոնը, առաջին գործը եղավ Մուխորտինսկում տուն և հող գնելը։ «Ցանկանում եմ, ասում է, սեփական աշխատանքով, ճակատի քրտինքով ապրել, որովհետև, ասում է, ես հիմա այլևս պարոն չեմ, այլ աքսորական»։ Ինչու չէ, աստված տա, լավ գործ է, ասում եմ ես։ Նա այն ժամանակ դեռ երիտասարդ էր, ջանասեր, եռանդոտ, ինքը և՛ հնձում էր, և՛ գնում ձուկ որսալու, վաթսուն վերստ ձիով ճանապարհ էր կտրում։ Միայն ահա քեզ դժբախտություն. հենց առաջին տարվանից սկսեց գնալ-գալ Գիրինոն, փոստատունը։ Պատահում էր, ինձ մոտ կանգնում էր լաստի վրա, հառաչում. «Է՛հ, Սեմյոն, վաղուց է տնից ինձ փող չեն ուղարկում»։ Հարկավոր չէ, Վասիլի Սերգեիչ, ասում եմ, փողը։ Ինչի՞ է պետք։ Թողեք հինը, մոռացեք, հենց իմացեք բոլորովին գոյություն չի ունեցել, միայն երազ է եղել, ապրեցեք նոր կյանքով։ Մի՛ լսեք, ասում եմ, սատանային, նա դեպի բարին չի տանի, ծուղակը կգցի։ Հիմա դուք փող եք ցանկանում, ասում եմ, կանցնի մի քիչ ժամանակ և հետո, ո՛վ գիտե, թե ինչ կցանկանաք, ու էսպես անվերջ։ Եթե կամենում եք բախտավոր լինել, ասում եմ, ամենից առաջ աշխատեք ոչինչ չցանկանալ։ Այո՛... Քանի որ բախտը, ասում եմ նրան, մեկ՝ երկուսիս, այս-

պես դառն պատժել է, ուրեմն կարիք չկա խոնարհվել նրա առաջ և ողորմություն խնդրել։ Հարկավոր է արհամարհել, ծաղրել նրան, թե չէ նա ինքը կծաղրի մեզ։ Էսպես էլ ասում եմ... Մի երկու տարի հետո անց եմ կացնում նրան գետի էս ափը, իսկ նա շփում է ձեռքերն ու ծիծաղում. «Գնում եմ, ասում է, Գիրինո, կնոջս դիմավորելու։ Խղճացել է ինձ, ասում է, գալիս է։ Լավ, բարի կին է»։ Ուրախությունից էլ շնչակտուր է լինում։ Մի օր անց տեսնեմ՝ գալիս է կնոջ հետ։ Ջահել, սիրունիկ կին է, գլխարկով, գրկին էլ մի փոքրիկ աղջիկ։ Հետներն էլ ամեն տեսակ բոլ-բոլ կապոցներ։ Իմ Վասիլի Սերգեիչը ուրախությունից պտույտ-պտույտ էր գալիս կնոջ շուրջը, չէր կշտանում նայելուց, գովում էր։ «Այո՛, Սիբիրում էլ են մարդիկ ապրում, եղբայր Սեմյոն»։ Լա՛վ, շատ էլ մի ուրախանա, ասում եմ ինքս ինձ։ Հենց էդ ժամանակից սկսած նա համարյա ամեն շաբաթ գնում էր Գիրինո տեղեկանալու, թե արդյոք փող չե՞ն ուղարկել Ռուսաստանից։ Փողի խիստ կարիք էր զգում։ «Կինս այստեղ, ինձ համար, ասում է, Սիբիրում խորտակում է իր ջահելությունը, գեղեցկությունը, ինձ հետ, ասում է, իմ դառնությունը կինսելով, ես, ասում է, պարտավոր եմ նրան պատճառել ամեն տեսակ բավականություն...»։ Որպեսզի կնոջ համար ուրախ լինի, նա ծանոթություններ սկսեց չինովնիկների ու ամեն տեսակ բարի պտուղների հետ։ Այդ ոհմակին էլ, հայտնի բան է, կերցնել-խմեցնել է հարկավոր, իսկ կնոջը՝ ֆորտեպիան և բազմոցի վրա՝ բրդոտ շուն. գրողի բաժին դառնա... Շքեղություն, մի խոսքով, երես տալ։ Բայց կինը երկար չապրեց մոտը։ Ի՞նչ էր կորցրել։ Շուրջը միայն կավահող, ջուր, սառնամանիք, ոչ բանջարեղեն կճարես, ոչ միրգ, ամենքը տգետ, հարբեցող, կարգին վարմունք չկա, իսկ ինքը մայրաքաղաքում մեծացած, փայփայված տիկին է... Հայտնի բան է, ձանձրացավ։ Դե՛, մարդն էլ, ինչ իսոք, առաջվա աղան չէր, աքսորական էր, էլ պատիվ չէր մնացել։ Մի երեք տարի հետո, հիշում եմ, հենց աստվածածնա վերափոխման տոնի գիշերը, ձայն են տալիս ինձ գետի էն ափից։ Լաստը թիավարում՝ գնում եմ։ Տեսնեմ՝ Վասիլի Սերգեիչի կինը, ամբողջովին փաթաթված շալերով, հետը մի ջահել պարոն, չինովնիկներից է։ Եռաձի կառքով էին... Անցկացրի նրանց էս ափը, նստեցին կառք ու մնաս բարով։ Դե՛, գնա ու գտիր։ Լու-

նաղեմին կառքով հասավ Վասիլի Սերգեիչը։ «Կինս չանցա՞վ, ասում է, էստեղով, Սեմյոն, մի ակնոցավոր պարոնի հետ»։ Անցավ, ասում եմ, զուր է դաշտում քամու հետևից ընկնելը, չես բռնի։ Ու սլացավ Վասիլի Սերգեիչը նրանց հետևից, հինգ օր ու գիշեր քարշ եկավ։ Երբ վերադարձին նրան անց էի կացնում էն մյուս ափը, ընկավ լաստի վրա, սկսեց գլուխը խփել տախտակներին, վայնասուն գցել։ Էդպես էլ լինելու էր, ասում եմ ինքս ինձ։ Ծիծաղում եմ, հիշեցնում իր խոսքերը. «Սիբիրում էլ մարդիկ են ապրում»։ Ավելի է բորբոքվում... Հետո սիրտն ուզեց էն բանը՝ այդ աղատությունը։ Կինն արդեն անցել էր Ռուսաստան, իրեն էլ, պարզ է, իր երկիրը սաստիկ քաշում էր, որ կնոջը տեսնի, փրկի սիրեկանից։ Ու սկսեց, ախպորս ասեմ, համարյա ամեն օր հաճախել կամ փոստ, կամ քաղաք՝ պետերի մոտ։ Շարունակ խնդիրներ էր գրում, ուղարկում, որ ներեն իրեն, թույլ տան վերադառնալ հայրենիք։ Պատմում էր, թե միայն հեռագրերի վրա ծախսել է մի երկու հարյուր ռուբլի։ Հողը ծախեց, տունը գրավ դրեց ջհուդների մոտ։ Ինքը սպիտակեց, կորացավ, երեսի գույնը դեղնեց, կարծես թոքախտով հիվանդ լիներ։ Հետդ թե մի բան խոսեր, միշտ հազում էր՝ ըհա՛, ըհա՛... արցունքներն էլ լցվում էին աչքերը։ Քարշ եկավ իր խնդրագրերի հետևից մի ութը տարի ու նորից կյանք առավ, զվարթացավ։ Մոգոնեց նոր չարաճճիություն։ Աղջիկը, հասկանում ես, հասունացավ։ Նայում է աղջկան՝ չի կշտանում նայելուց։ Աղջիկը, ճիշտն ասած, լավիկն էր, սիրունիկ, սև հոնքերով, աշխույժ։ Ամեն կիրակի աղջկա հետ գնում էր Գիրինո՝ եկեղեցի։ Երկուսով կանգնում էին լաստի վրա, կողք-կողքի. աղջիկը ժըպտում է, իսկ Վասիլի Սերգեիչը աչքը չի հեռացնում նրանից։ «Այո՛, Սեմյոն, ասում է, Սիբիրում էլ են մարդիկ ապրում։ Սիբիրում էլ երջանկություն է լինում։ Նայի՛ր, ասում է, ի՞նչ աղջիկ ունեմ. հազար վերստի վրա էլ չես գտնի հատը»։ Աղջիկդ, ճշմարիտ է; ասում եմ, իսկապես շատ լավն է։ Ու մտքումս մտածում եմ. «Սպասիր... Դեռ ջահել է, նրա մեջ էլ արյունը կիաղա, նա էլ կցանկանա ապրել, իսկ այստեղ ի՞նչ կյանք է»։ Եվ, իսկապես, աղջիկն սկսեց դարդոտվել... Հազաց, հազաց ու մաշվեց, հալից ընկավ։ Հիվանդացավ թոքախտով։ Ահա քեզ Սիբիրի բախտավորություն, ժանտախտի բաժին դառնա, ահա քեզ Սիբիրում էլ մարդիկ են ապրում... Հայրը սկսեց շարունակ

բժիշկների հետևից գնալ, հրավիրել նրանց։ Հենց որ լսում էր, թե մի երկու-երեք հարյուր վերստի վրա ինչ-որ բժիշկ կամ հեքիմ կա, իսկույն վազում էր նրա հետևից։ Շատ փող գնաց բժիշկների վրա, իմ կարծիքով՝ ավելի լավ էր էդ փողերը խմել... Միևնույն է, կմեռնի։ Կմեռնի անպատճառ, իսկ էդ ժամանակ Վասիլի Սերգեիչը բոլորովին կորած է։ Ցավից, հայտնի բան է, կամ կկախվի, կամ կփախչի Ռուսաստան։ Փախչի, կբռնեն, հետո դատի կտան, տաժանակիր աշխատանք, ծեծ...

— Լա՛վ, լա՛վ,— քրթմնջաց թաթարը, ցրտից կուչ գալով։

— Ի՞նչն է լավ,— հարցրեց Տոլկովին։

— Կին, աղջիկ... Թող լինի տաժանակիր աշխատանք, թող լինի վիշտ, գոնե տեսավ իր կին, իր աղջիկ... Դու ասում ես՝ ոչինչ հարկավոր չէ։ Դեշ բան չի եղել։ Իր կին հետը ապրեց երեք տարի՝ լավ։ Ո՞նց չես հասկանում։

Ցրտից դողալով, դժվարությամբ որոնելով ռուսերեն բառերը, որոնց պաշարն այնքա՜ն քիչ էր նրա մոտ, թաթարը կըմկըմալով խոսում էր՝ թե աստված չանե ինքը հիվանդանա օտար երկրում, մեռնի և թաղվի ցուրտ ու ժանգոտ հողում. ի՞նչ կլինի, եթե կինը գոնե մի օրով կամ նույնիսկ մի ժամով գա իր մոտ, այդպիսի մի բախտավորության համար ինքը համաձայն է կրելու ամեն տեսակ տանջանքներ և շնորհակալ կլինի աստծուց։ Լավ է մի օրով բախտավոր լինել, քան երբեք։

Հետո նա նորից պատմեց, թե ինչպիսի խելացի և գեղեցիկ կին է թողել տանը, ապա երկու ձեռքով գլուխը բռնելով, սկսեց լաց լինել ու հավատացնել, թե ինքը ոչ մի բանով մեղավոր չէ և անմեղ տեղն է պատիժ կրում։ Իր երկու եղբայրները և հորեղբայրը գողացան մի գյուղացու ձիերը և ծերունուն ծեծելով կիսամեռ արին, իսկ հասարակությունը հակառակ խղճի համախոսական կազմեց, որով երեք եղբայրներին Սիբիր աքսորեցին, իսկ հորեղբայրը, որ հարուստ մարդ է, մնաց տանը։

— Կընտելանա՞ս,— ասաց Սեմյոնը։

Թաթարը լռեց և արցունքոտ աչքերը հառեց կրակին. նրա դեմքն արտահայտում էր տարակուսանք ու երկյուղ, կարծես դեռ չէր հասկանում, թե ինչո՞ւ է այստեղ խավարի ու ցրտի մեջ նստած, օտար մարդկանց մոտ և ոչ թե Սիմբիրսկի նահանգում։ Տոլկովին պառկեց կրակի մոտ, ինչ-որ բանի վրա խնդաց և սկսեց քթի տակ երգել։

— Ի՞նչ բավականություն աղջկա համար՝ հոր մոտ ապրե-

ը,— մի փոքր լռելուց հետո խոսեց ծերունին։— Սիրում էր աղջկան, մխիթարվում էր, ճիշտ է. բայց մասդ թե բերանը տաներեր՝ կկծեր, խիստ ծերունի էր, համառ։ Իսկ ջահել աղջիկներին խստություն հարկավոր չէ... Նրանց պետք է փաղաքշանք և հի՜-հի՜-հի՜, հա՜-հա՜-հա՜, և անուշահոտ օծանելիք։ Հապա... է՜հ, աշխա՜րհ, աշխա՜րհ,— հառաչեց Սեմյոնը և ծուլորեն վեր կացավ տեղից։— Արաղը վերջացավ, ուրեմն՝ քնելու ժամանակն է։ Հը՞։ Գնացի, եղբայր...

Մենակ մնալով, թաթարը խարույկի վրա ցախ ավելացրեց, պառկեց և, նայելով կրակին, սկսեց մտածել հայրենի գյուղի ու կնոջ մասին. երանի կինը գար գոնե մի ամսով, գոնե մի օրով, իսկ հետո, եթե կուզեր, թող ետ դառնար։ Լավ է մի ամիս, մինչև անգամ մի օր երջանիկ զգար, քան երբեք։ Բայց եթե կինը խոստումը կատարի և գա, ինչո՞վ պետք է պահի նրան։ Որտե՞ղ պետք է ապրի։

— Թե որ բան-ման չկա ուտելու, նա ինչո՞վ ապրի,— ինքն իրեն հարցրեց թաթարը լսելի ձայնով։

Այժմ գիշեր-ցերեկ թիավարելու համար նրան տալիս էին ընդամենը օրական տասը կոպեկ։ Ճշմարիտ է, անցորդները երբեմն նրան նվիրում էին թեյի կամ օղու փող, բայց ընկերներն ամբողջ փողը բաժանում էին իրենց մեջ, իսկ թաթարին ոչինչ չէին տալիս և միայն ծաղրում էին նրան։ Կարիքից նեղվում է, քաղցած է, ցուրտ է, սարսափելի... Այժմ, երբ ամբողջ մարմինը ցավում էր և ցրտից դողում, նա ուզեց գնալ խրճիթ ու պառկել քնելու, բայց ոչինչ չուներ ծածկվելու համար, այնտեղ ավելի ցուրտ էր, քան գետափին։ Այստեղ էլ ոչինչ չունի ծածկվելու համար, բայց գոնե տաքանում է խարույկի մոտ...

Մի շաբաթ հետո, երբ ջուրը բոլորովին ցածրանա, լաստը կթողնեն այստեղ և բոլոր թիավարները, բացի Սեմյոնից, արդեն պետք չեն լինի, և ինքը ստիպված գյուղից գյուղ պիտի գնա՝ աղորմություն կամ աշխատանք խնդրելու։ Իսկ կինը դեռ տասնը-յոթ տարեկան է, գեղեցիկ, փայփայված, ամաչկոտ, մի՞թե նա էլ երեսը բաց գյուղից գյուղ պետք է գնա և ողորմություն խնդրի։ Ո՜չ, այդ մասին մտածելն անգամ սարսափելի է...

Արդեն լուսանում էր. պարզ նշմարվում էին լաստը և գետափին ջրի վրա կախված ուռիները, գետի ալիքները, իսկ ետևում՝ կավահող զառիթափը, նրա տակ՝ խրճիթը, ծղնոտով ծածկված, զառիթափի վերևում՝ գյուղական խրճիթները։ Գյուղում արդեն աքաղաղները կանչում էին։

Շիկագույն, կավահող զառիթափը, լաստը, գետը, օտար և խստասիրտ մարդիկ, քաղցը, ցուրտը և հիվանդությունը՝ այս բոլորը, թերևս, իսկապես գոյություն չունեն, այլ լոկ երազ է, մտածում էր թաթարը։ Նա զգում էր, որ քնում է և լսում էր իր խոխոջը... Ահա ինքը տանն է, Սիմբիրսկի նահանգում և բավական է միայն կնոջ անունը կանչի, որ նա իսկույն արձագանքի իրեն, իսկ հարևան սենյակում մայրն է... Սակայն, ինչպիսի սարսափելի երազներ են լինում։ Ինչի՞ համար։ Թաթարը ժպտաց ու բացեց աչքերը։ Այս ո՞ր գետն է, Վոլգա՞ն է։

Զյուն էր գալիս։

— Մոտեցրու լա՜ստը,— կանչում էր մեկը գետի մյուս ափից։— Կար-բա-ա՜-ա՜ս...

Թաթարը սթափվեց և գնաց զարթեցնելու ընկերներին՝ լաստը դեպի մյուս ափը թիավարելու համար։ Ոտքի վրա հագնելով պատառոտած քուրքերը, հայհոյելով խռպոտ, քնաթաթախ ձայնով և ցրտից կծկվելով, գետափին երևացին թիավարները։ Գիշերային քնից հետո գետը, որից փչում էր մինչև ոսկորները թափանցող ցուրտը, հավանորեն, նրանց թվում էր ավելի նողկալի և հոգեմաշ։ Առանց շտապելու նրանք թռան լաստի վրա... Թաթարը և երեք թիավար կանգնեցին լայնաբերան երկար թիերի մոտ, որոնք խավարի մեջ նման էին խեցգետնի չանչերի։ Սեմյոնը փորը դեմ արեց լաստի երկար ղեկին։ Մյուս ափից դեռ շարունակում էին կանչել և երկու անգամ ատրճանակ կրակեցին, հավանաբար կարծելով, թե թիավարները քնած են և կամ գնացել են գյուղ, դինետուն։

— Լա՜վ, մի՛ շտապիր,— ասաց Տոլկովին այնպիսի մարդու արտահայտությամբ, որը համոզված է, թե այս աշխարհում կարիք չկա շտապելու, որովհետև միևնույն է, ոչինչ դուրս չի գա։

Ծանր, անճոռնի լաստը հեռացավ ափից, սկսեց առաջ լողալ ուռիների միջով, և միմիայն թփերի դեպի ետ մնալուց նկատելի էր, որ նա տեղում կանգնած չէ, այլ շարժվում է։ Թիավարները համաչափ կերպով, միասին շարժում էին թիերը. Տոլկովին փորը դեմ արած՝ պառկել էր ղեկի վրա, որի շարժվելուց օդի մեջ աղեղներ էին գոյանում, և նա լաստի մի ծայրից մյուսն էր թռչում։ Խավարի մեջ թվում էր, թե մարդիկ նստել էին երկար թաթերով անդրջրհեղեղյան մի կենդանու վրա և լողում էին դեպի

ցուրտ, մռայլ մի երկիր, մի այնպիսի աշխարհ, որ միայն զարհուրելի երազներում գոյություն ունի։

Անցնելով ուռիների թփերի միջից, լաստը սկսեց լողալ ջրի ընդարձակ տարածության վրա։ Մյուս ափից արդեն նկատում էին թիերի համաչափ շարժումը, լսում էին նրանց չփչփոցը ու կանչում. «Շո՛ւտ, շո՛ւտ արեք»։ Անցավ էլի մի տասը րոպե և լաստը ծանրորեն զարնվեց նավամատույցին։

— Շարունակ գալիս ու գալիս է առանց դադարելու,— մոթմոթաց Սեմյոնը, սրբելով երեսի ձյունը։— Աստված գիտե, թե որտեղից է այսքան ձյունը։

Գետափին սպասում էր նիհար, ցածրահասակ մի ծերունի, աղվեսի մորթուց կիսամուշտակը հագին, գլխին՝ գառան մորթուց սպիտակ գդակ։ Նա կանգնել էր կառքից հեռու և չէր շարժվում։ Նրա դեմքի արտահայտությունը մռայլ էր, կենտրոնացած, կարծես աշխատում էր մտաբերել ինչ-որ բան և զայրանում իր թույլ հիշողության վրա։ Երբ Սեմյոնը մոտեցավ նրան և ժպտալով հանեց գլխարկը, նա ասաց.

— Շտապում եմ Անաստասևկա։ Աղջկաս դրությունը նորից վատացավ, Անաստասևկայում, ասում են, նոր բժիշկ է եկել։

Տարանտասը քաշեցին լաստի վրա և սկսեցին դեպի ետ լողալ։ Ճանապարհորդը, որին Սեմյոնը Վասիլի Սերգեիչ էր անվանում, ամբողջ ժամանակ, քանի դեռ լողում էր լաստը, կանգնել էր անշարժ, հաստ շրթունքները պինդ սեղմած և նայում էր մի կետի։ Երբ կառապանը թույլտվություն խնդրեց նրա ներկայությամբ ծխելու, նա նույնիսկ չպատասխանեց, կարծես չլսեց։ Իսկ Սեմյոնը փորը դեմ արած պառկել էր ղեկի վրա, ծաղրանքով նայում էր նրան, ասում.

— Սիբիրում էլ են մարդիկ ապրում։ Ապրո՞ւմ են։

Տոլկովիի դեմքն արտահայտում էր ցնծություն, թվում էր, թե նա ինչ-որ բան է ապացուցել և կարծես ուրախանում էր, որ այնպես դուրս եկավ, ինչպես ինքը ենթադրում էր։ Աղվեսի մորթուց կիսամուշտակով այդ անբախտ ու անճար մարդու դեմքը, ըստ երևույթին, մեծ բավականություն էր պատճառում նրան։

— Ցեխ է հիմա, դժվար է գնալը, Վասիլի Սերգեիչ,— ասաց Սեմյոնը, երբ գետափին սկսեցին լծել ձիերը։— Սպասեիք գոնե մի երկու շաբաթ, մինչև ճանապարհները չորանան։ Գուցե, ասենք, բոլորովին չգնայիք... Գնալուց գոնե մի բան դուրս գար. համեցե՛ք, ինքներդ գիտեք, բոլոր մարդիկ գիշեր-ցերեկ շա-

բունակ գնում են, էլի զուր է անցնում։ Ճիշտ եմ ասում։

Վասիլի Սերգեիչը լռությամբ նրան օղու փող տվեց, նստեց տարանտաս և ճանապարհ ընկավ։

— Ահա, գնաց բժշկի հետևից,— ասաց Սեմյոնը, ցրտից կուչ գալով։— Դե՛, որոնիր լավ բժիշկ, սլացիր քամու հետևից դաշտերում, բռնիր սատանայի պոչից, տանջիր հոգիդ։ Է՛յ, հիմարնե՛ր, ների՛ր ինձ, աստված, մեղավորիս։

Թաթարը մոտեցավ Տոլկովիին և ատելությամբ, զզվանքով նայելով նրան, դողալով, իր խոսքին թաթարական բառեր խառնելով, կոտրատված լեզվով ասաց.

— Նա լավ... լավ մարդ, դու վա՛տ։ Գե՛շ։ Աղան լավ հոգի ունի, լավ, դու՝ գազա՛ն, վա՛տ։ Նա կենդանի, դու մեռած... Աստված ստեղծել մարդուն, որ նրա մեջ կյանք լինի, ուրախություն, վիշտ, ձանձրույթ։ Դու ցանկանում է ոչինչ, նշանակում է դու մեռա՛ծ, քա՛ր, կա՛վ։ Քարին ոչինչ հարկավոր, և քեզ ոչինչ... Դու անզգա՛, աստված քեզ չի սիրում, էն աղային սիրում։

Բոլորը ծիծաղեցին։ Թաթարը գարշանքով կնճռոտվեց, թափ տվեց ձեռքը և փաթաթվելով իր ցնցոտիների մեջ, մոտեցավ խարույկին։ Թիավարները և Սեմյոնը մտան խրճիթ։

— Ցուրտ է,— խռպոտ ձայնով ասաց թիավարներից մեկը, ձգվելով հարդի վրա, որով ծածկված էր թաց կավահողի հատակը։

— Այո, տաք չէ,— համաձայնեց մյուսը,— աքսորականի կյանք է։

Բոլորը պառկեցին։ Քամուց դուռը բացվեց և ձյունն սկսեց լցվել խրճիթի ներսը։ Վեր կենալ և ծածկել դուռը՝ ոչ ոք չէր ցանկանում. ցուրտ էր, ալարում էին։

— Է՛, ինձ համար լավ է,— խոսեց Սեմյոնը փակելով աչքերը։— Փա՛ռք աստծու, թող ամենքն էլ էս տեսակ կյանք ունենան։

— Դու, հայտնի բան է, փորձված աքսորական ես, քեզ սատանաներն անգամ չեն կարող շարժել։

Դրսից լսվեցին ձայներ, որ նման էին շան հաչոցի։

— Էն ի՞նչ է։ Ո՞վ է։

— Թաթարն է լաց լինում։

— Ա՛յ քեզ բան... Հիմա՛ր։

— Կընտելանա՛,— ասաց Սեմյոնը և իսկույն քնեց։

Շուտով քնեցին և մյուսները։ Իսկ դուռը այնպես էլ մնաց բաց։

1892

ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

Պյոտր Միխայլիչ Իվաշինը շատ վատ տրամադրության մեջ էր. նրա քույրը, ջահել մի աղջիկ, տունը թողել փախել էր Վլասիչի մոտ, որ ամուսնացած մարդ էր։ Որպեսզի մի կերպ ազատվի այդ ծանր, ճնշող տրամադրությունից, որը նրանից չէր հեռանում ո՛չ տանը, ո՛չ դաշտում, նա իրեն օգնության էր կանչում արդարամտության զգացումը, իր ազնիվ, լավ համոզումները,— չէ՞ որ նա մի՞շտ էլ պաշտպանում էր ազատ սերը,— բայց դա չէր օգնում, և նա ամեն անգամ, հակառակ իր կամքի, գալիս էր նույնպիսի եզրակացության, ինչ որ տխմար դայակը, այսինքն թե քույրը վատ վարվեց, իսկ Վլասիչը պարզապես գողացավ քրոջը։ Եվ դա տանջում էր նրան։

Մայրը ամբողջ օրը չէր ելնում իր սենյակից, դայակը խոսում էր շշուկով և շարունակ հառաչում էր, մորաքույրը ամեն օր պատրաստություն էր տեսնում մեկնելու, և նրա ճամպրուկները մերթ հանում էին միջանցքը, մերթ տանում էին ետ՝ սենյակ։ Տանը, բակում և պարտեզում այնպիսի լռություն էր, կարծես ներսը ննջեցյալ կար։ Պյոտր Միխայլիչին թվում էր, թե մորաքույրը, սպասավորները և անգամ գյուղացիները խորհրդավոր ու տարակուսով են նայում իրեն և կարծես ուզում էին ասել. «Քրոջդ գլխահան են արել տարել, ի՞նչ ես պարապ նստել, մի բան չես անում»։ Եվ նա կշտամբում էր իրեն՝ բան չանելու համար, թեև չգիտեր էլ, թե իսկապես ի՞նչ պիտի անի։

Անցավ այսպես մի վեց օր։ Յոթերորդ օրը,— դա կիրակի էր՝ ճաշից հետո,— մի ձիավոր նամակ բերեց։ Հասցեն գրված էր կանացի ծանոթ ձեռագրով. «Նորին Գերազ. Աննա Նիկոլաևնա Իվաշինային»։ Չգիտես ինչո՞ւ, Պյոտր Միխայլիչին թվաց, թե նամակի ծրարը, թե հասցեի ձեռագիրը և թե կիսատ թողած «գերազ» բառը ինչ-որ ցուցադրվող, չարաճճի և ազատամիտ—

լիբերալ մի բան ունեն։ Իսկ կանացի լիբերալիզմը համառ է, անողոք և դաժան...

«Նա ավելի շուտ կհամաձայնի մեռնել, քան զիջել դժբախտ մորը, ներողություն խնդրել նրանից»,— մտածում էր Պյոտր Միխայլիչը՝ նամակը ձեռքին մոր մոտ գնալով։

Մայրը շորերը հագին պառկած էր անկողնում։ Որդուն տեսնելով, նա թափով ելավ նստեց և, գլխանոցի տակից դուրս թափվող ճերմակ մազերն ուղղելով, հարցրեց արագ։

— Հը՛, ի՞նչ է։

— Ուղարկել է,— ասաց որդին, նամակը նրան տալով։

Զինայի անունը և անգամ «նա» բառը չէին արտասանում տանը. Զինայի մասին խոսում էին անդեմ-անորոշ. «ուղարկել է», «գնացել է»... Մայրը ճանաչեց աղջկա ձեռագիրը, և նրա դեմքն ընդունեց տգեղ, տհաճ արտահայտություն, և ճերմակ մազերը նորից դուրս թափվեցին գլխանոցի տակից։

— Ոչ,— ասաց նա,— ձեռքերն այնպես շարժելով, կարծես նամակն այրեց մատները։— Ո՛չ, ո՛չ, երբեք։ Ո՛չ մի դեպքում։

Մայրը հիստերիկ կերպով հեկեկաց վշտից ու ամոթից. նա, ակներև, ուզում էր կարդալ նամակը, բայց հպարտությունը թույլ չէր տալիս։ Պյոտր Միխայլիչը հասկանում էր, որ ինքը պետք է բացեր նամակը և բարձրաձայն կարդար, բայց հանկարծ նրան համակեց մի բարկություն, ինչ երբեք չէր զգացել առաջ. նա արագ դուրս վազեց բակ և ճչալով ասաց նամակաբեր ձիավորին.

— Ասա, որ պատասխան չի՛ լինելու։ Պատասխան չի՛ ստանա։ Այդպես էլ ասա՛, անասուն։

Եվ նամակը պատռեց. ապա արցունք երևաց աչքերում, և իրեն դաժան, մեղավոր ու դժբախտ զգալով, Պյոտր Միխայլիչը գնաց դաշտ։

Նա նոր միայն քսանութ տարու մեջ էր, բայց արդեն գեր էր, հաղնվում էր ծերունու պես լայն-ընդարձակ հագուստներ և տառապում էր շնչարգելությունից։ Նա իր մեջ ուներ արդեն տարրեց ամուրի կալվածատիրոջ բոլոր տվյալները։ Չէր սիրահարվում, ամուսնության մասին չէր մտածում և սիրում էր միայն մորը, քրոջը, դայակին, այդեպան Վասիլիչին. սիրում էր լավ ուտել, ճաշից հետո քնել, զրուցել քաղաքականության և բարձր նյութերի մասին... Ժամանակին նա ավարտել էր համալսարանի

դիմադրությունը, բայց այժմ դրան նայում էր այնպես, ասես պարտադիր մի կոռ էր կատարել, որ անխուսափելի է տասնութ—քսանհինգ տարեկան պատանիների համար. գոնե այն մտքերը, որ ամեն օր դառնում էին նրա գլխում, ընդհանուր ոչինչ չունեին համալսարանի հետ և այն գիտությունների հետ, ինչ ուսանելի էր։

Դաշտում տոթ էր և խաղաղ, ինչպես անձրևից առաջ։ Անտառում հեղձուցիչ էր, և ծանր, անուշահոտ բուրմունք էր գալիս եղևնիներից ու փտող տերևներից։ Պյոտր Միխայլիչը հաճախ կանգ էր առնում և սրբում թաց ճակատը։ Նա դիտեց իր աշնանացանն ու գարնանացանը, անցավ, նայեց առվույտի դաշտը և մի երկու անգամ անտառի պոնկին քշեց կաքավին իր ձագերով. ու շարունակ այն էր մտածում, թե այդ անտանելի կացությունը երկար շարունակվել չի կարող և թե պետք է այսպես կամ այնպես վերջ տալ դրան։ Վերջ տալ մի կերպ թեկուզ տխմար, վայրենի ձևով, բայց պետք էր անպայման վերջ տալ։

«Սակայն ինչպե՞ս։ Ի՞նչ պետք է անել»,— հարցնում էր նա ինքն իրեն և աղերսագին նայում երկնքին ու ծառերին, ասես նրանցից օգնություն խնդրելով։

Բայց երկինքն ու ծառերը լուռ էին։ Ազնիվ համոզմունքները չէին օգնում, իսկ առողջ դատողությունը թելադրում էր, թե տանջալից խնդիրը կարելի է լուծել ոչ այլ կերպ, քան հիմար ձևով, և որ այսօրվա տեսարանը՝ ձիավոր նամակաբերի հետ, վերջինը չէ այդ տեսակի մեջ։ Իսկ թե էլ ի՞նչ էր լինելու, մտածելը սարսափելի էր։

Երբ նա տուն վերադարձավ, արևն արդեն մայր էր մտնում։ Այժմ նրան թվում էր, թե խնդիրը ոչ մի կերպ չի կարելի լուծել։ Կատարված փաստի հետ հաշտվել չի կարելի, բայց չհաշտվել նույնպես չէր կարելի, իսկ միջին ճանապարհ չկար։ Երբ նա, շլյապան վերցրած և թաշկինակով իրեն հովհարելով, գնում էր ճանապարհով և մինչև տուն մնացել էր մի երկու վերստ, հետևից զանգակների ձայն լսեց։ Դա զանգուլակների և բոժոժների մի սրամիտ և շատ հաջող միացում էր, որ արձակում էր ապակյա հնչյուններ։ Այդտեսակ զանգահարությամբ ճանապարհ էր գնում միմիայն իսպրավնիկ Մեդովսկին, որ հուսարական նախկին սպա էր, ունեցած-չունեցածը վատնած, բարոյապես քայքայված հիվանդ մի մարդ, Պյոտր Միխայլիչի հեռավոր ազգականը։ Իվաշինների մոտ նա տանու մարդ էր և դեպի Զինան

քնքուշ, հայրական զգացումներ էր տածում ու հիանում նրանով։

— Ես ձեզ մոտ եմ գալիս,— ասաց նա, Պյոտր Միխայլիչին հասնելով։— Նստեցեք՝ գնանք։

Նա ժպտում էր և նայում ուրախ-զվարթ. ըստ երևույթին, դեռ չգիտեր, որ Զինան գնացել է Վլասիչի մոտ. գուցեև նրան հաղորդել էին այդ մասին, բայց նա չէր հավատում։ Պյոտր Միխայլիչը իրեն դժվարին կացության մեջ զգաց։

— Շնորհ արեք, խնդրեմ,— քրթմնջաց նա, արցունքոտվելու չափ կարմրելով և չիմանալով, թե ինչպիսի՞ և ի՞նչ սուտ ասի։— Ես շատ ուրախ եմ,— շարունակեց նա, աշխատելով ժպտալ.— բայց... Զինան մեկնելու է, իսկ մայրիկը հիվանդ է։

— Ի՞նչ ցավալի է,— ասաց իսպրավնիկը, մտախոհ Պյոտր Միխայլիչին նայելով։— Իսկ ես ուզում էի երեկոյան անցնել ձեզ մոտ։ Իսկ ո՞ւր է մեկնել Զինաիդա Միխայլովնան։

— Սինիցկիների տունը, իսկ այնտեղից, կարծեմ, կամենում էր գնալ վանք։ Հաստատ չգիտեմ։

Իսպրավնիկը խոսեց մի քիչ էլ և ետ գնաց։ Պյոտր Միխայլիչը գնում էր տուն և սարսափով մտածում, թե ի՞նչ կզգա իսպրավնիկը, եթե ճշմարտությունն իմանա։ Եվ Պյոտր Միխայլիչը պատկերացրեց այդ զգացումը և, ինքն այդ ապրելով, մտավ տուն։

«Տեր, դու օգնե՛ս...»,— մտածեց նա։

Սեղանատանը երեկոյան թեյի էր նստել միմիայն մորաքույրը։ Ըստ սովորության, նրա դեմքն ուներ մի այնպիսի արտահայտություն, թե ինքը թեև թույլ է և անօգնական, բայց ոչ ոքի թույլ չի տա վիրավորել իրեն։ Պյոտր Միխայլիչը նստեց սեղանի մյուս ծայրին (նա մորաքրոջը չէր սիրում) և սկսեց անխոս թեյել։

— Մայրդ այսօր էլ չճաշեց,— ասաց մորաքույրը։— Դու գոնե, Պետրուշա, ուշ դարձրու դրան։ Սովամահ լինելով՝ ցավին դարման չես անի։

Պյոտր Միխայլիչին անհեթեթ թվաց, որ մորաքույրը միջամտում է ուրիշի գործերին և իր մեկնումը կապում է այն բանի հետ, որ Զինան հեռացել է։ Նա ուզեց կոպտել մորաքրոջը, բայց իրեն զսպեց։ Եվ, իրեն զսպելով, զգաց, որ հասել է ժամը, որ պետք է գործի, որ էլ համբերելու ճար չկա։ Կամ պետք է մի բան անել հենց հիմա, կամ էլ ընկնել գետնին, ճչալ և գլուխը հատակին խփել։ Նա պատկերացրեց Վլասիչին ու Զինային, թե

ինչպես նրանք երկուսով, լիբերալ ու ինքնագոհ, համբուրվում են հիմա ինչ-որ մի տեղ՝ թխկիների տակ, և բոլոր այն ծանր ու զայրալից զգացումները, որ յոթ օրվա ընթացքում կուտակվել էին Միխայլիչի սրտում, թափվեցին Վլասիչի վրա։

«Մեկը գայթակղեց ու գողացավ քրոջս,— մտածեց նա.— մի ուրիշը կգա և կմորթի մորս, երրորդը կվառի տունը կամ կկողոպտի... Եվ այս ամենը անձնական բարեկամության, բարձր գաղափարների, տանջանքների անվան տակ»։

— Ոչ, այդ չի կարող լինել,— հանկարծ գոռաց Պյոտր Միխայլիչը և բռունցքը խփեց սեղանին։

Նա վեր թռավ ու դուրս վազեց սեղանատնից։ Ախոռում կանգնած էր կառավարչի թամբած ձին։ Նա հեծավ այդ ձին և սրարշավ գնաց Վլասիչի մոտ։

Նրա հոգում մի ամբողջ փոթորիկ էր։ Նա պահանջ էր զգում ինչ-որ արտակարգ, խիստ բան անելու, թեկուզ հետո ստիպված լիներ զղջալ ամբողջ կյանքում։ Վլասիչին անվանել սրիկա՞, ապտակե՞լ նրան և ապա հրավիրել մենամարտի՞... Բայց Վլասիչը այն մարդկանցից չէ, որ կռվում են մենամարտում, իսկ սրիկայից և ապտակից նա կդառնար միայն ավելի դժբախտ և ավելի կխորասուզվեր ինքն իր մեջ։ Այդ դժբախտ, ամոթխած մարդիկ ամենատանելի, ամենածանր, անհաճո արարածներն են։ Նրանց արածները մնում են անպատիժ։ Երբ դժբախտ մարդը, ի պատասխան արժանի կշտամբանքի, նայում է խոր հանցավոր աչքերով, ժպտում է ցավագին և գլուխը հնազանդորեն դեմ անում, այդ ժամանակ արդարությունն ինքն էլ, կարծես, սիրտ չի անում ձեռք բարձրացնելու նրա վրա։

«Միևնույն է։ Ես Զինայի ներկայությամբ կհարվածեմ նրան մտրակով և վիրավորանքներ կթափեմ գլխին»,— վճռեց Պյոտր Միխայլիչը։

Նա ձին քշում էր իր անտառով ու ամայի հողերով և պատկերացնում, թե ինչպես Զինան, իր քայլը արդարացնելու համար, կսկսի խոսել կնոջ իրավունքների մասին, անձի ազատության մասին և այն մասին, թե եկեղեցական ու քաղաքացիական ամուսնության միջև չկա ոչ մի տարբերություն։ Ու կնավարի կսկսի վիճել այն բանի մասին, ինչ չի հասկանում։ Եվ, հավանորեն, ի վերջո, կհարցնի. «Դու ի՞նչ գործ ունես այստեղ։ Դու ի՞նչ իրավունք ունես խառնվելու»։

— Այո, ես իրավունք չունեմ,— փնթփնթաց Պյոտր Միխայլիչը։— Բայց ավելի լավ... Որքան ավելի կոպիտ լինեմ, որքան քիչ իրավունք ունենամ, ավելի լավ։

Տոթ էր։ Ցածր, գետնի վրա երևում էին մոծակների խմբեր, և բաց ամայի տեղերում ողբագին նվում էին կիվիվները։ Ամեն ինչ նախագուշակում էր անձրև, բայց ամպի մի կտոր իսկ չկար։ Պյոտր Միխայլիչը անցավ իր հողերի սահմանագիծը և ձին քշեց հարթ-հավասար դաշտով։ Նա հաճախ էր գնացել-եկել այդ ճանապարհով, ուստիև յուրաքանչյուր թուփ, յուրաքանչյուր փոսիկ ծանոթ էր նրան։ Այն, ինչ հիմա առջևը՝ հեռվում, աղջամուղջի մեջ թվում էր մթամած մի ժայռ, կարմիր եկեղեցի էր. նա կարող էր պատկերացնել այդ եկեղեցին՝ իր բոլոր մանրամասնություններով, անգամ դարբասի ծեփը և այն հորթերին, որ միշտ արածում էին նրա պարիսպների ներսում։ Եկեղեցուց մի վերստ հեռու, աջակողմը սևին էր տալիս կոմս Կոլտովիչի անտառակը։ Իսկ անտառակի այն կողմից սկսվում էր արդեն Վլասիչի կալվածը։

Եկեղեցու և կոմսի անտառակի հետևից բարձրանում էր մի վիթխարի սև ամպ, և նրա վրա բռնկվում էին գունատ կայծակներ։

«Տե՛ս է,— մտածեց Պյոտր Միխայլիչը։— Տեր, դո՛ւ օգնես»։

Զին արագ վազքից հոգնեց շուտով, և ինքը՝ Պյոտր Միխայլիչն էլ հոգնեց։ Փոթորկաբեր ամպը բարկացած նայում էր նրան և կարծես խորհուրդ էր տալիս տուն վերադառնալ։ Փոքր-ինչ սարսափ ազդող մի բան կար։

«Ես կապացուցեմ, որ նրանք իրավացի չեն,— սիրտ էր տալիս նա իրեն։— Նրանք կասեն, թե դա աղատ սեր է, անձի ազատություն. բայց ազատությունը չէ՞ որ ժուժկալության մեջ է և ոչ թե կրքերին ենթարկվելու մեջ։ Նրանց արածը անբարոյականություն է և ոչ թե ազատություն»։

Ահա և կոմսի մեծ լճակը. ամպից նա կապտել է և մռայլվել. նրանից խոնավության և տիղմի հոտ է փչում։ Ճահճի վրա փայտերից շինած անցքի մոտ երկու ուռենի՝ մեկը պառավ, մյուսը ջահել, քնքշորեն հենվել են միմյանց։ Այս իսկ տեղում երկու շաբաթ առաջ Պյոտր Միխայլիչը և Վլասիչը քայլում էին և կիսաձայն երգում ուսանողական մի երգ. «Не люубить — погубить, значит, жизнь молодую...»։ Ողորմելի՜ երգ։

Երբ Պյոտր Միխայլիչն անցնում էր անտառով, ամպը որոտաց, և ծառերը խշշացին ու կռացան քամուց։ Պետք էր շտապել։

Անտառակից մինչև Վլասիչի կալվածը մնում էր անցնել մարգագետնով՝ մի վերստից ոչ ավելի։ Այդտեղ ճանապարհի երկու կողմը ծեր կեչիներ էին. նրանք նույնպես տխուր ու դժբախտ էին տեսքով, ինչպես իրենց տեր Վլասիչը, նույնպես նիհար էին և ձգված, ինչպես նա։ Կեչիների վրա և խոտերի մեջ խշխշաց խոշոր, մեծակաթիլ անձրևը, քամին իսկույն դադարեց և զգացվեց թաց հողի և բարդու հոտ։ Ահա երևաց Վլասիչի ցանկապատը՝ կեղևի ակացիայով, որը նույնպես նիհար էր և ձգված. այնտեղ, ուր վանդակապատը փլվել ընկել էր, երևում էր անխնամ մնացած մրգատու այգին։

Պյոտր Միխայլիչը չէր մտածում այլևս ո՛չ ապտակի, ո՛չ մտրակի մասին, և չէր իմանում, թե ինքն ի՛նչ է անելու Վլասիչի մոտ։ Նրա սիրտն ահ ընկավ։ Նա վախեցավ թե՛ իր և թե՛ քրոջ համար, և ծանր մի բան էր զգում, որ հիմա տեսնելու է քրոջը։ Ինչպե՞ս նա կպահի իրեն եղբոր մոտ։ Ինչի՞ մասին պիտի խոսեն իրենք երկուսով։ Եվ եթե չդառնա՞լ արդյոք, քանի ուշ չէ։ Այսպես մտածելով, նա լորիների տակով ձին քշեց դեպի տուն, թեքվեց յասամանի մեծ թփերի մոտով և հանկարծ տեսավ Վլասիչին։

Վլասիչը առանց շլյապայի, քաթանե վերնաշապիկով և երկարաճիտ կոշիկներով, անձրևից կռացած, տան անկյունից գնում էր դեպի մուտքը։ Նրա հետևից գնում էր մշակը՝ մուրճը և մեխերի արկղը ձեռքին։ Հավանորեն նորոգել էին լուսամուտի այն փեղկը, որ թրխկում էր քամուց։ Պյոտր Միխայլիչին տեսնելով, Վլասիչը կանգ առավ։

— Այդ դո՞ւ ես,— ասաց նա և ժպտաց։— Այ, լա՛վ է։

— Այո, եկա, ինչպես տեսնում ես...— կամացուկ ասաց Պյոտր Միխայլիչը երկու ձեռքով թափ տալով հագուստի վրայի անձրևը։

— Այ, լավ է։ Շատ ուրախ եմ,— ասաց Վլասիչը, բայց ձեռք չտվեց. ակներև, չհամարձակվեց և սպասեց, որ իրեն ձեռք տան։— Անձրևը վարսակի համար լավ է,— ասաց նա և նայեց երկնքին։

— Այո։

Անխոս մտան տուն։ Նախասենյակից դեպի աջ մի դուռ տանում էր մյուս նախասենյակը և ապա՝ դահլիճը, իսկ դեպի ձախ՝ մի փոքրիկ սենյակ, ուր ձմեռն ապրում էր գործակատարը։ Պյոտրը Միխայլիչն ու Վլասիչը գնացին այդ սենյակը։

— Անձրևը քեզ որտե՞ղ բռնեց,— հարցրեց Վլասիչը։

— Շատ հեռու չէ։ Համարյա տան մոտ։

Պյոտր Միխայլիչը նստեց մահճակալի վրա։ Նա ուրախ էր, որ անձրևն աղմկում էր դուրսը և սենյակում կիսամութ էր։ Այսպես ավելի լավ էր. այնքան էլ սարսափելի չէ և պետք չէ խոսակցի երեսին նայել։ Նրա սրտում այլևս բարկություն չկար, այլ վախ ու վրդովմունք իր հանդեպ։ Նա զգում էր, որ վատ էր սկսել և որ իր գալուց բան չէր դուրս գա։

Երկուսն էլ միաժամանակ լուռ էին և ձևացնում էին, թե ականջ են դնում անձրևին։

— Շնորհակալ եմ, Պետրուշա,— սկսեց Վլասիչը հաղալով։— Շատ շնորհակալ եմ քեզնից, որ եկար։ Դա մեծահոգություն է քո կողմից և ազնվաբարո քայլ։ Ես հասկանում եմ դա և, հավատա ինձ, բարձր եմ գնահատում։ Հավատա՛ ինձ։

Նա նայեց լուսամուտին և շարունակեց սենյակի մեջտեղը կանգնած.

— Ամեն ինչ կատարվեց մի տեսակ գաղտնի, կարծես մենք թաքնվում էինք քեզանից։ Այն գիտակցությունը, թե դու, գուցե, վիրավորված ես մեզնից և բարկացած, այս քանի օրը ստվերի պես մթագնում էր մեր երջանկությունը։ Բայց թույլ տուր արդարանալ։ Մենք ծածուկ գործ տեսանք ոչ թե նրա համար, որ քեզ չէինք վստահում։ Նախ՝ ամեն ինչ կատարվեց հանկարծակի, մի ինչ-որ ներշնչումով, և մտածելու, դատելու ժամանակ չեղավ։ Երկրորդ՝ սա ինտիմ, փափուկ մի գործ է... անհարմար էր մի երրորդ անձնավորություն խառնել դրա մեջ, թեկուզ մինչև իսկ մի այնպիսի մերձավորի, ինչպես դու ես։ Իսկ գլխավորը, այս ամենի մեջ մենք մեր հույսը դնում էինք քո մեծահոգության վրա։ Դու շատ մեծահոգի և ազնվագույն մարդ ես։ Ես անսահման շնորհակալ եմ քեզնից։ Եթե երբևիցե իմ կյանքը պետք լինի քեզ՝ արի և տար։

Վլասիչը խոսում էր հանդարտ, խուլ, թավ ձայնով և միևնույն նոտայով, ասես բվվում էր. նա, ըստ երևույթին, հուզվում էր։ Պյոտր Միխայլիչը զգում էր, որ հասել է խոսելու իր հերթը, և որ լսելն ու լռելը իր համար կնշանակեր խաղալ մեծահոգի և ազնվագույն պարզամիտ մեկի դեր, իսկ ինքը դրա համար չէր եկել այստեղ։ Նա արագ վեր կացավ և ասաց կիսաձայն, շունչը կտրվելով.

— Լսիր, Գրիգորի, դու գիտես՝ ես սիրում էի քեզ և ավելի

լավ ամուսին քրոջս համար չէի ցանկանում. բայց այն, ինչ կատարվեց, սարսափելի է։ Մտածելը սոսկալի է։

— Իսկ ինչո՞ւ է սոսկալի,— հարցրեց Վլասիչը դողացող ձայնով։— Սոսկալի կլիներ, եթե մենք վատ վարվեինք, բայց չէ՞ որ այդպիսի բան չկա։

— Լսիր, Գրիգորի, դու գիտես, որ ես նախապաշարումներ չունեմ. բայց, ներիր անկեղծությանս համար, իմ կարծիքով, դուք երկուսդ էլ եսամոլի պես վարվեցիք։ Իհարկե, ես այս Զինային չեմ ասի, դա նրան կվշտացնի, բայց դու պետք է իմանաս՝ մայրս այնպես է տանջվում, որ նկարագրել դժվար է։

— Այո, դա ցավալի է,— հառաչեց Վլասիչը։— Մենք այդ նախատեսում էինք, Պետրուշա, բայց ի՞նչ պետք է անեինք։ Եթե քո վարմունքը վշտացնում է որևէ մեկին, դա դեռ չի նշանակում, թե այն վատ է։ Ի՞նչ արած։ Քո ամեն մի լուրջ քայլը անխուսափելիորեն պետք է վշտացնի որևէ մեկին։ Եթե դու գնայիր աղատության համար կռվելու, դա նույնպես կստիպեր մորդ տանջվել։ Ի՞նչ արած։ Ով ամեն բանից բարձր է դասում մերձավորների հանդիստը, նա պետք է բոլորովին հրաժարվի գաղափարական կյանքից։

Լուսամուտից երևաց, թե ինչպես կայծակը փայլատակեց կուրացուցիչ փայլով, և այդ փայլատակումը կարծես փոխեց Վլասիչի մտքերի ընթացքը։ Նա նստեց Պյոտր Միխայլիչի կողքին և սկսեց խոսել բոլորովին ոչ այն, ինչ հարկավոր էր։

— Ես, Պետրուշա, պաշտում եմ քրոջդ,— ասաց նա։— Երբ գալիս էի քեզ մոտ, ամեն անգամ այնպիսի զգացում էի ունենում, ասես ուխտ էի գնում, և իրոք ես աղոթում էի Զինային։ Այժմ իմ պաշտամունքի զգացմունքը աճում է օրեցօր։ Նա ինձ համար ավելի բարձր է, քան կինը։ Ավելի՛ բարձր (Վլասիչը թափահարեց ձեռքերը)։ Նա իմ սրբուհի՛ն է։ Այն օրից, ինչ նա ապրում է ինձ մոտ, ես տունս մտնում եմ՝ ինչպես մի տաճար։ Դա մի հազվագյուտ, արտակարգ, ազնվագույն կին է։

«Է՛, շարմանկան լարե՞ց»,— մտածեց Պյոտր Միխայլիչը։ «կին» բառը նրան դուր չեկավ։

— Ինչո՞ւ կարգին չեք ամուսնանում,— հարցրեց նա։— Որքա՞ն է ուզում կինդ ապահարզանի համար։

— Յոթանասունհինգ հազար։

— Շա՜տ է։ Իսկ եթե բանակցե՞ք։

— Ոչ մի կոպեկ չի զիջի։ Նա, ախպերս, սարսափելի կին

է,— հառաչեց Վլասիչը։— Ես նրա մասին առաջներում երբեք չեմ խոսել քեզ հետ. հիշելը զզվելի էր, բայց ահա առիթ եղավ՝ անունը տվեցի։ Ես նրա հետ ամուսնացա մի լավ, ազնիվ վայրկյանի ազդեցությամբ։ Մեր գնդում, եթե ուզում ես մանրամասնություններ իմանալ, գումարտակի մի հրամանատար կենակցում էր տասնութ տարեկան մի աղջկա հետ, այսինքն՝ պարզապես գայթակղել էր նրան. ապրեց մի երկու ամիս ու թողեց։ Աղջիկը, ախպերս, ընկավ սարսափելի դրության մեջ։ Վերադառնար ծնողների մոտ՝ ամոթ էր, և չէին էլ ընդունի,— սիրեկանը թողել էր,— հիմա թեկուզ գնա զորանոցներն ու վաճառիր քեզ։ Գնդի ընկերները զայրացած էին։ Իրենք էլ սուրբ չէին, բայց ստորությունն արդեն աչք էր ծակում։ Բացի այդ՝ գնդում գումարտակի հրամանատարին ոչ ոք տանել չէր կարողանում։ Եվ որպեսզի նրան անախորժություն պատճառեն, վրդովված պրապորշչիկներն ու ենթապորուչիկները, բոլորը, սկսեցին ստորագրությամբ փող հավաքել հօգուտ թշվառ աղջկա։ Եվ ահա, երբ մենք՝ կրտսեր, ավագ սպաներս, հավաքվեցինք խորհրդակցության և երբ սկսեցինք տալ ո՛րը հինգ, ո՛րը տասը ռուբլի, հանկարծ գլուխս տաքացավ։ Պարագան ինձ անչափ հարմար թվաց սխրագործություն կատարելու համար։ Ես շտապեցի դժբախտ աղջկա մոտ և ջերմ արտահայտություններով իմ համակրանքը հայտնեցի նրան։ Ու մինչ ես գնում էի նրա մոտ և հետո խոսեցի, ես ջերմորեն սիրում էի նրան, որպես ստորացվածի և անարգվածի։ Այո... Եվ, այնպես եղավ, որ դրանից մի շաբաթ հետո ես առաջարկություն արի նրան։ Հրամանատարությունը և ընկերներս իմ ամուսնությունը անհամատեղելի գտան սպայի արժանապատվության հետ։ Դա ինձ է՛լ ավելի բոցավառեց։ Ես, հասկանում ես, գրեցի մի երկար նամակ, որի մեջ ապացուցում էի, թե իմ քայլը պետք է գրվի գնդի պատմության մեջ ոսկե տառերով և այլն։ Նամակն ուղարկեցի հրամանատարին, իսկ պատճենները՝ ընկերներիս։ Դե, իհարկե, գրգռված էի և բանն առանց սուր խոսքերի չանցավ։ Ինձ խնդրեցին գունդը թողնել։ Սևագրությունս տանը պահված է մի տեղ, երբևիցե կտամ քեզ կարդալու։ Գրված է մեծ ոգևորությամբ։ Կտեսնես, թե ի՜նչ ազնիվ, պայծառ բոպեներ եմ ապրել։ Հրաժարական տվի և կնոջս հետ եկա այստեղ։ Հորս մահից հետո մանր-մունր պարտքեր էին մնացել, ես փող չունեի, իսկ կինս առաջին իսկ օրվանից ծանոթություններ հաստատեց, սկսեց պճնվել և թուղթ խաղալ, և

են հարկադրված եղա կալվածս գրավ դնել։ Կինս վարում էր, հասկանում ես, վատ կյանք, և իր բոլոր հարևաններից միայն դու նրա սիրեկանը չէիր։ Երկու տարի հետո ես նրան (ազատվելու համար) տվի մեծ գումար, ամենը, ինչ ունեի այն ժամանակ, և նա գնաց քաղաք։ Այո... Եվ ես նրան յուրաքանչյուր տարի վճարում եմ երկու հարյուր հազար։ Սարսափելի կին է։ Կա մի անսակ ճանճ, ախպերս, որը թրթուր է դնում սարդի մեջքին այնպես, որ նա ոչ մի կերպ չի կարողանում գցել իր վրայից. թրթուրն աճում, կպչում է սարդին և ծծում նրա սրտի արյունը։ Ճիշտ այդպես էլ այդ կինը կպել է ինձ և ծծում է սրտիս արյունը։ Նա ատում, արհամարհում է ինձ նրա համար, որ այդպիսի հիմարություն արի, այսինքն՝ ամուսնացա մի այնպիսի կնոջ հետ, ինչպիսին ինքն է։ Իմ մեծահոգությունը նրան թվում է ողորմելի։ «Խելոք մարդն, ասում է, թողեց ինձ, իսկ հիմարը առավ»։ Նրա կարծիքով, միայն խղճուկ ապուշը կարող էր վարվել այնպես, ինչպես ես։ Եվ դա, ախպերս, չափազանց դառն է ինձ համար։ Ընդհանրապես, փակագծերում ասեմ, ճակատագիրը ոլորում, կորացնում է ինձ։ Կորացնում է աղեղի պես։

Պյոտր Միխայլիչը լսում էր Վլասիչին և տարակուսած հարցնում իրեն, թե այս մարդը ինչո՞վ կարող էր դուր գալ Զինային։ Երիտասարդ չէ,— արդեն քառասունմեկ տարեկան է,— նիհար է, չորչորուկ, կուրծքը նեղ, քիթը երկար, մորուքի մեջ ճերմակ մազեր։ Խոսում է այնպես, կարծես բվվում է, ժպտում է հիվանդագին ձևով և խոսելիս տգեղորեն թափահարում է ձեռքերը։ Ո՛չ առողջություն ունի, ո՛չ տղամարդու գեղեցիկ ձևեր, ո՛չ աշխարհիկ-ազնվական բաներ, ո՛չ զվարթություն, այլ այնպես, արտաքուստ ինչ-որ գունատ և անորոշ մի բան։ Հագնվում է անճաշակ, տան կահավորությունը տխուր է, բանաստեղծություն և նկարչություն չի ընդունում, որովհետև դրանք «չեն պատասխանում օրվա պահանջներին». այսինքն՝ նա դրանք չի հասկանում. երաժշտությունը նրան չի հուզում։ Վատ կալվածատեր է։ Նրա կալվածը կատարելապես քայքայված է և գրավ դրված. երկրորդ գրավադրությանը նա վճարում է տասներկու տոկոս և, բացի դրանից, մուրհակներով պարտք է էլի տասը հազար։ Երբ գալիս է տոկոսները վճարելու և կնոջը փող ուղարկելու ժամանակը, նա ամենքից փոխառություն է խնդրում մի այնպիսի արտահայտությամբ, ասես տունը հրդեհ է ընկել, ու այդ միջոցին նա գլխապատառ իր ձմեռվա ամբողջ պաշար ցախը ծախում

է հինգ ռուբլով, ծղոտի դեզը՝ երեք ռուբլով և ապա կարգադրում է տան վառարանները վառեն այգու վանդակաճաղերով կամ ջերմոցների հին շրջանակներով։ Նրա մարգագետինները արածում, փչացնում են խոզերը, անտառի ջահել ծառերը ոտնահարում են գյուղացիների անասունները, իսկ հասուն ծառերը պակասում են ամեն ձմեռ. բանջարանոցում և այգում ընկած են մեղվի փեթակներ և ժանգոտած դույլեր։ Նա ոչ տաղանդ ունի, ոչ՝ շնորհք և մինչև իսկ չունի ընդունակություն՝ ապրել այնպես, ինչպես մարդիկ են ապրում։ Գործնական կյանքում դա միամիտ, թույլ մարդ է, որին հեշտությամբ կարելի է խաբել ու վիրավորել, և գյուղացիներն իզուր չէ, որ նրան անվանում են «ցանցառ»։

Նա լիբերալ է, և գավառում նրան համարում են կարմիր, բայց դա էլ նրա մոտ տաղտկալի է ստացվում։ Նրա ազատամտության մեջ չկա ինքնատիպություն և պաթոս. հուզվում, վրդովվում և ուրախանում է կարծես թե մի նոտայով, ոչ էֆեկտավոր և ալարկոտ ձևով։ Անգամ մեծ ոգևորության պահին նա գլուխը չի բարձրացնում և մնում է կորացած։ Բայց ամենից ձանձրալին այն է, որ անգամ իր լավ, ազնիվ գաղափարները նա արտահայտում է այնպես, որ նրանք թվում են բանալ և հնացած։ Հիշում ես ինչ-որ հին, վաղուց կարդացած բան, երբ նա դանդաղորեն, խորիմաստ տեսքով սկսում է խոսել ազնիվ, պայծառ վայրկյանների մասին, լավագույն տարիների մասին կամ երբ հիանում է երիտասարդությամբ, որը միշտ էլ գնացել և գնում է հասարակության առջևից, կամ երբ պարսավում է ռուս մարդկանց, որ երեսուն տարեկան խալաթ են հագնում և մոռանում իրենց almae matris-ի ավանդները։ Երբ մնում ես նրա տանը գիշերելու, նա մահճակալիդ սեղանի վրա դնում է Պիսարևին կամ Դարվինին։ Եթե ասես, թե դա արդեն կարդացել ես, նա կգնա և կբերի Դոբրոլյուբովին։

Սա գավառում կոչվում էր ազատամտություն, և շատերն այդ ազատամտությանը նայում էին որպես անմեղ և անվնաս մի հիմարության-տարօրինակության. բայց դա նրան դարձնում էր խորապես դժբախտ։ Դա նրա համար այն թրթուրն էր, որի մասին խոսեց քիչ առաջ. դա ամուր կպել էր նրան և ծծում էր նրա սրտի արյունը։ Անցյալում տարօրինակ ամուսնություն Դոստոևսկու ճաշակով, երկար նամակներ ու պատճեններ՝ գրված

վատ, անընթեռնելի ձեռագրով, բայց բուռն զգացմունքով, անվերջ թյուրիմացություններ, բացատրություններ, հիասթափումներ, ապա պարտքեր, երկրորդ գրավոր, ոռճիկ կնոջը, ամենամսյա փոխառություններ. և այդ ամենը անօգուտ թե՛ իր, թե՛ մարդկանց համար։ Եվ ներկայումս էլ, ինչպես առաջ, նա շարունակ շտապում է, սխրագործություն է որոնում և խառնվում է ուրիշի գործերին. առաջվա պես, ամեն հարմար առիթով երկար նամակներ ու պատճեններ, հոգնեցուցիչ միօրինակ զրույցներ համայնքի կամ տնայնագործական արդյունաբերությունը բարձրացնելու և կամ՝ պանրագործարան հիմնելու մասին,— զրույցներ մեկը մյուսի նման, որ կարծես պատրաստում է դրանք ոչ թե կենդանի ուղեղում, այլ մեքենայի միջոցով։ Եվ, վերջապես, այս խայտառակ դեպքը Զինայի հետ, որ չգիտես, թե դեռ ինչով կվերջանա։

Իսկ մինչդեռ քույրը՝ Զինան, դեռատի է,— միայն քսաներկու տարեկան,— լավիկն է, նուրբ, ուրախ. խնդմոլիկ է, շատախոս-շաղակրատող, վիճասեր, մոլի նվագող. լավ հասկացողություն ունի արդուզարդի, գրքերի և տան կահավորության կարգի մասին և իր տանը երբեք չէր հանդուրժի մի այսպիսի սենյակ, որտեղից գալիս է սապոգների և էժանագին օղու հոտ։ Նա նույնպես լիբերալ է, բայց նրա ազատամտության մեջ զգացվում է լիաուժություն, ջահել, ուժեղ, համարձակ աղջկա սնափառություն, բուռն ծարավ՝ լինել ուրիշներից ավելի լավ և ավելի ինքնատիպ... Ինչպե՞ս կարող էր պատահել, որ նա սիրեց Վլասիչին։

«Վլասիչը Դոն Կիխոտ է, համառ ֆանատիկոս, մանյակ,— մտածում էր Պյոտր Միխայլիչը,— իսկ Զինան նույնպես փրխրուն է, թույլ բնավորության տեր, մեղմաբարո, ինչպես ես... Ես ու նա անձնատուր ենք լինում շուտով և առանց դիմադրության։ Զինան սիրել է նրան. բայց մի՞թե ես ինքս չեմ սիրում նրան, այս ամենից սնկախ»...

Պյոտր Միխայլիչը Վլասիչին համարում էր լավ, աղնիվ, բայց նեղմիտ և միակողմանի մարդ։ Նրա հուզումների ու շարշարանքների մեջ, նաև նրա ամբողջ կյանքում նա չէր տեսնում ոչ մտավոր, ոչ էլ հեռավոր բարձրագույն նպատակներ, այլ տեսնում էր միայն ձանձրույթ և ապրելու անճարակություն։ Նրա անձնազոհությունը և այն ամենը, ինչ Վլասիչը անվանում էր սխրագործություն կամ աղնիվ պոռթկում, Միխայլիչին պատկեր-

բանում էին ուժերի անօգուտ վատնում, անհարկավոր դատարկ կրակոցներ, որոնց համար շափազանց շատ վառոդ էր մսխվում։ Իսկ այն, որ Վլասիչը ֆանատիկոսորեն հավատում էր իր մտածողության անսովոր ազնվությանն ու անսխալականությանը, դա Պյոտր Միխայլիչին թվում էր պարզամիտ և անգամ հիվանդագին բան. և այն, որ Վլասիչը ամբողջ կյանքում ինչ-որ հնարամտությամբ շնչինը խառնում էր բարձրին, որ հիմարաբար ամուսնացել էր և դա համարում էր սխրագործություն, և հետո միացել էր կանանց և դրանում տեսնում էր ինչ-որ գաղափարի հաղթանակ,— դա պարզապես անհասկանալի էր։

Բայց և այնպես Պյոտր Միխայլիչը սիրում էր Վլասիչին, զգում էր նրա մեջ ինչ-որ ուժ և, չգիտես ինչո՞ւ, երբեք համարձակություն չէր ունենում նրան հակաճառելու։

Վլասիչը նստեց բոլորովին մոտիկ, որպեսզի խոսի անձրևի աղմուկի ներքո, մութի մեջ, և արդեն հազաց, պատրաստվելով պատմել ինչ-որ երկար մի բան, իր ամուսնության պատմության պես մի բան. բայց Պյոտր Միխայլիչի համար ծանր էր լսել. նրան տանջում էր այն միտքը, թե հիմա կտեսնի քրոջը։

— Այո, դու բախտ չունեցար կյանքում,— ասաց նա մեղմորեն.— բայց, ներիր, մենք շեղվեցինք գլխավոր նյութից։ Մենք մեր շոշափած նյութի մասին չենք խոսում։

— Այո, այո, իսկապես։ Ուրեմն վերադառնանք գլխավորին,— ասաց Վլասիչը և վեր կացավ։— Ես քեզ ասում եմ, Պետրուշա. մեր խիղճը մաքուր է։ Մենք պսակված չենք, բայց որ մեր ամուսնությունը միանգամայն օրինական է,— ես չէ որ պետք է ապացուցեմ և դու չէ որ պետք է լսես։ Դու նույնպես ազատ ես մտածում, ինչպես ես և, փառք աստծո, մեր միջև այդ առթիվ տարաձայնություն չի կարող լինել։ Ինչ վերաբերում է մեր ապագային՝ դա արդեն քեզ չպետք է վախեցնի։ Ես կաշխատեմ, արյունքրտինք կթափեմ, գիշերները չեմ քնի, մի խոսքով, կլարեմ բոլոր ուժերս, որպեսզի Զինան երջանիկ լինի։ Նրա կյանքը կլինի գեղեցիկ։ Կհարցնես՝ կարո՞ղ եմ արդյոք անել այդ։ Կարող եմ, ախպերս։ Երբ մարդ յուրաքանչյուր րոպե մտածում է միևնույն բանի մասին՝ նրա համար դժվար չէ ձեռք բերել այն, ինչ ցանկանում է։ Բայց գնանք Զինայի մոտ։ Նրան պետք է ուրախացնել։

Պյոտր Միխայլիչի սիրտն սկսեց բաբախել։ Նա ելավ տեղից և Վլասիչի հետևից գնաց նախասենյակ, իսկ այնտեղից՝ դահլ-

լիճ։ Այդ վիթխարի մռայլ սենյակում կար միայն մի դաշնամուր և բրոնզով ներկած հին աթոռների մի երկար շարք, որոնց վրա ոչ ոք երբեք չէր նստում։ Դաշնամուրի վրա մոմ էր վառվում։ Դահլիճից անխոս անցան սեղանատուն։ Այստեղ էլ ընդարձակ էր և անհրապույր. սենյակի մեջտեղը երկու մաս ունեցող մի կլոր սեղան էր՝ վեց հատ ոտներով և վրան միայն մի մոմ։ Ժամացույցը, որ կիոտի նման մեծ կարմիր պատյանի մեջ էր, բույց էր տալիս ութ և կեսը։

Վլասիչը բացեց հարևան սենյակի դուռը և ասաց.

— Զինոչկա, Պետրուշան մեզ մոտ է։

Իսկույն լսվեցին շտապ քայլեր, և սեղանատուն մտավ Զինան՝ բարձրահասակ, լիքը և շատ գունատ, ինչպես Պյոտր Միխայլիչը վերջին անգամ տեսել էր նրան տանը,— սև շրջազգեստով և կարմիր կոֆտայով՝ գոտու վրա մի մեծ ճարմանդ։ Նա մի ձեռքով բռնեց եղբորը և համբուրեց նրա քունքը։

— Ի՞նչ փոթորիկ էր,— ասաց նա։— Գրիգորին գնաց ինչ-որ տեղ, և ես ամբողջ տանը մնացել էի մենակ։

Զինան շփոթված չէր և եղբորը նայում էր անկեղծ ու բաց հայացքով, ինչպես տանը. նրան նայելով՝ Պյոտր Միխայլիչն էլ ազատվեց իր շփոթմունքից։

— Բայց չէ՞ որ դու փոթորկից չես վախենում,— ասաց նա, սեղանի մոտ նստելով։

— Այո, բայց այստեղ ահագին սենյակներ են, հին տուն է և ամպի որոտից զրնգում է ամբողջովին, ինչպես ամանեղենի պահարան։ Ընդհանրապես, դուրեկան տուն է,— շարունակեց նա, նստելով եղբոր դիմաց։— Այստեղ յուրաքանչյուր սենյակ մի որևէ հաճելի հիշողություն ունի։ Իմ սենյակում, կարող ես երևակայել, ինքնասպանություն է գործել Գրիգորիի պապը։

— Օգոստոսին փող լինի, այգու տնակը նորոգելու եմ,— ասաց Վլասիչը։

— Զգիտես ինչո՞ւ, փոթորկի ժամանակ հիշում ես պապին,— շարունակեց Զինան։— Իսկ այս սեղանատանը ծեծելով սպանել են ինչ-որ մարդու։

— Դա իրական փաստ է,— հաստատեց Վլասիչը և խոշոր աչքերով նայեց Պյոտր Միխայլիչին։— Քառասնական թվականներին այս կալվածը կապալով վերցրել էր մի ֆրանսիացի՝ ոմն Օլիվեր։ Նրա աղջկա պորտրեն այժմ ընկած է մեր ձեղնահարկում։ Շատ լավիկն է։ Այդ Օլիվերը, ինչպես հայրս էր պատմում ինձ, արհամարհում էր ռուսներին տգիտության համար և խիստ ծաղրուծանակի էր ենթարկում նրանց։ Այսպես, նա պահանջում էր, որ քահանան, կալվածատան մոտով անցնելիս, գլխարկը վերցնի կես վերստի վրա, և երբ Օլիվերների ընտանիքը անցնում էր գյուղի միջով, եկեղեցու զանգերը պիտի քաշեին։ Ճորտերին և առհասարակ մանր մարդկանց նա, իհարկե, ավելի քիչ էր բանի տեղ դնում։ Մի անգամ այստեղով անցնում է թափառական Ռուսիայի բարեհոգի զավակներից մեկը, Գոգոլի սեմինարիստ Խոմա Բրուտի նման մի բան։ Խնդրում է թույլ տան գիշերելու, այստեղ էլ նա գործակատարներին դուր է գալիս և նրան գործ են տալիս գրասենյակում։ Տարբեր բաներ են պատմում։ Ոմանք ասում են, թե սեմինարիստը գրգռել է գյուղացիներին, մյուսները, թե Օլիվերի աղջիկը սիրահարվել է նրան։ Զգիտեմ, ո՞րն է ճիշտ, միայն թե մի գեղեցիկ երեկո Օլիվերը դրան կանչում է այստեղ և հարցաքննում, իսկ հետո հրամայում է ծեծել. Հասկանում ես, ինքը նստել է այս սեղանի մոտ և բորդո խմել, իսկ ձիապանները խփում են սեմինարիստին։ Երևի, կամեցել է տանջելով բան իմանալ։ Առավոտը սեմինարիստը մեռնում է խոշտանգումից, և նրա դիակը թաքցնում են ինչ-որ տեղ։ Ասում են, գցել են կոմս Կոլտովիչի լճակը։ Գործը բացվեց, բայց ֆրանսիացին, ո՞ւմ որ պետք էր, մի քանի հազար վճարեց և մեկնեց էլզաս։ Ի դեպ՝ մոտենում էր կապալի ժամկետը, գործը դրանով էլ վերջացավ։

— Ի՞նչ անպիտաններն են,— ասաց Զինան և ցնցվեց։

— Հայրս լավ էր հիշում թե՛ Օլիվերին և թե՛ նրա աղջկան։ Ասում էր՝ նշանավոր գեղեցկուհի է և միաժամանակ էքսցենտրիկ բնավորության տեր։ Ես կարծում եմ, որ սեմինարիստը թե՛ գյուղացիներին է գրգռել և թե՛ աղջկան է հրապուրել։ Թերևս, դա բնավ սեմինարիստ էլ չի եղել, այլ ծպտյալ մեկը։

Զինան մտածմունքի մեջ ընկավ. սեմինարիստի և գեղեցկուհի ֆրանսուհու պատմությունը, ըստ երևույթին, նրա երևակայությունը տարել էր հեռուները։ Ինչպես Պյոտր Միխայլիչին թվաց, Զինան արտաքուստ բոլորովին չէր փոխվել վերջին շաբաթվա մեջ, միայն փոքր-ինչ ավելի էր գունատվել։ Նրա հայացքը հանգիստ էր և սովորականի պես, կարծես եղբոր հետ հյուր էր եկել Վլասիչի մոտ։ Բայց Պյոտր Միխայլիչը զգում էր, ինչ-որ փոփոխություն է կատարվել հենց իր մեջ։ Իսկապես, առաջ, երբ Զինան ապրում էր տանը, ինքը նրա հետ կարող էր

խոսել բացարձակապես ամեն բանի մասին, իսկ այժմ անկարող էր անգամ մի հասարակ հարց տալ. «Քեզ ինչպե՞ս ես զգում այստեղ»։ Այդ հարցը թվում էր անհարմար և անհարկավոր։ Հավանորեն, այդպիսի փոփոխություն կատարվել էր նաև Զինայի հետ։ Նա չէր շտապում խոսք բանալ մոր մասին, տան և իր ու Վլասիչի ռոմանի մասին. Զինան չէր արդարանում, չէր ասում, թե քաղաքացիական ամուսնությունը ավելի լավ է եկեղեցականից, չէր հուզվում և հանգիստ մտածում էր Օլիվերի պատմության վրա... Եվ ինչո՞ւ հանկարծ խոսեցին Օլիվերի մասին։

— Ձեր երկուսի էլ ուսերը թաց են անձրևից,— ասաց Զինան և ուրախ ժպտաց. նա զգացվեց եղբոր ու Վլասիչի միջև եղած այդ փոքրիկ նմանությունից։

Եվ Պյոտր Միխայլիչն զգաց իր կացության ամբողջ դառնությունն ու սարսափը։ Նա հիշեց իր ամայացած տունը, փակված դաշնամուրը և Զինայի լուսապայծառ սենյակը, ուր այժմ էլ ոչ ոք չի մտնում. նա հիշեց, որ այգու ծառուղիներում էլ չկան հետքերը փոքրիկ ոտքերի և որ երեկոյան թեյից առաջ ոչ ոք այլևս բարձր ծիծաղով չի գնում լողանալու։ Այն, ինչին նա առավել կապված էր վաղ մանկությունից սկսած, ինչի մասին սիրում էր մտածել, երբ նստած էր, ասենք, հեղձուցիչ դասարանում կամ լսարանում,— պայծառությունը, մաքրությունը, ուրախությունը, ամենը, ինչ տունը լցնում էր կյանքով ու լույսով, հեռացավ անվերադարձ, չքացավ և խառնվեց ինչ-որ գումարտակի հրամանատարի, մեծահոգի պրապորշչիկի, անառակ կնոջ, ինքնասպան եղած պապի կոպիտ, անճոռնի պատմության հետ... Եվ խոսք բանալ մոր մասին կամ մտածել, թե անցածը կարող է վերադառնալ, նշանակում է չհասկանալ այն, ինչ պարզ է։

Պյոտր Միխայլիչի աչքերը լցվեցին արցունքով, և նրա ձեռքը, որ դրված էր սեղանին, դողաց։ Զինան հասկացավ, թե ի՛նչ էր մտածում եղբայրը, և նրա աչքերը նույնպես կարմրեցին ու շողացին։

— Գրիգորի, արի այստեղ,— ասաց նա Վլասիչին։

Երկուսն էլ գնացին դեպի լուսամուտը և սկսեցին շշուկով ինչ-որ բան խոսել։ Եվ նրանից, թե ինչպես Վլասիչը կռացավ դեպի քույրը, և ինչպես սա նայեց Վլասիչին, Պյոտր Միխայլիչը մի անգամ ևս հասկացավ, որ ամեն ինչ արդեն անուղղելի վերջացած է և որևէ բանի մասին խոսելն ավելորդ է։ Զինան դուրս եկավ։

— Այդպես, ախպերս,— խոսեց Վլասիչը փոքր-ինչ լռությունից հետո, ձեռքերը տրորելով ու ժպտալով։— Ես քիչ առաջ մեր կյանքը անվանեցի երջանկություն, բայց դա, ենթարկվելով, այսպես ասած, գրական պահանջներին։ Իսկ էապես երջանկության զգացում տակավին չի եղել։ Զինան շարունակ մտածում էր քո մասին, մորդ մասին և տանջվում էր. նրան նայելով՝ ես էլ էի տանջվում։ Նա ազատ, համաչափակ բնավորության տեր է, բայց առանց փորձի, գիտես, ծանր է և, բացի այդ, ջահել է։ Սպասավորները նրան օրիորդ են ասում. թվում է՝ դատարկ բան, բայց դա հուզում է նրան։ Այդպես, ախպերս։

Զինան բերեց մի ափսե լիքը մորի։ Նրա հետևից ներս մտավ փոքրիկ սպասուհին՝ տեսքով մի խեղճ ու կրակ արարած։ Նա սեղանին դրեց մի ման կաթ և խոր գլուխ տվեց։ Նրա և հին կահ-կարասիների միջև ինչ-որ ընդհանուր մի բան կար, նույնպես կաշկանդված ու տաղտկալի։

Անձրևի ձայնը չէր լսվում այլևս։ Պյոտր Միխայլիչը մորի էր ուտում, իսկ Վլասիչն ու Զինան անխոս նայում էին նրան։ Մոտենում էր անհարկավոր, բայց անխուսափելի զրույցի ժամը, ու երեքն էլ արդեն զգում էին նրա ծանրությունը։ Պյոտր Միխայլիչի աչքերը նորից լցվեցին արցունքով. նա ափսեն հեռացրեց իրենից և ասաց, թե իր տուն գնալու ժամանակն է արդեն, այլապես ուշ կլինի և, թերևս, նորից անձրև գա։ Հասավ բոպեն, երբ Զինան պատշաճավորությունից դրդված պետք է խոսեր տնեցիների և իր նոր կյանքի մասին։

— Ի՞նչ կա մեզ մոտ,— հարցրեց նա արագ, և նրա գունատ դեմքը դողաց։— Մայրիկն ինչպե՞ս է։

— Մայրիկին գիտես, էլի՛,— պատասխանեց Միխայլիչը, առանց քրոջը նայելու։

— Պետրուշա, դու երկար մտածել ես կատարվածի մասին,— խոսեց Զինան եղբոր թևքը բռնելով, և սա հասկացավ, թե քրոջ համար որքա՛ն դժվար էր խոսել։— Դու երկար մտածել ես. ասա ինձ, կարելի՞ է հուսալ, որ մայրիկը երբևիցե հաշտվի Գրիգորիի հետ... և ընդհանրապես այս դրության հետ։

Զինան կանգնած էր եղբոր մոտ՝ դեմառդեմ, և եղբայրը զարմացավ, որ նա այդքան գեղեցիկ է, և որ առաջ կարծես չէր նկատել այդ. և այն, որ քույրը, դեմքով այնքան նման մորը,

փափկակյաց, նուրբ, ապրում է Վլասիչի տանը և Վլասիչի հետ, կաշկանդված սպասուհու մոտ, վեցոտանի սեղանի մոտ, այն տանը, ուր ծեծելով սպանել են կենդանի մարդու, և որ քույրը հիմա իր հետ չի գնալու տուն, այլ մնալու է այստեղ գիշերելու — դա նրան թվում էր անհավատալի, անհեթեթ բան։

— Մայրիկին գիտես, էլի...— ասաց նա, չպատասխանելով քրոջ հարցումին։— Ըստ իս, պետք էր պահպանել... որևէ բան անել, ներողություն խնդրել նրանից, ասենք...

— Բայց ներողություն խնդրել՝ նշանակում է ասել, թե մենք վատ ենք վարվել։ Մայրիկին հանգստացնելու համար ես պատրաստ եմ ստել, բայց չէ՞ որ դա անօգուտ բան է։ Ես մայրիկին գիտեմ։ Է՛, ինչ լինելու է, թող լինի,— ասաց Զինան ուրախացած, որ ամենաանհաճո բանը ասվեց արդեն։— Սպասենք մի հինգ, տասը տարի, համբերենք, այնուհետև աստված ողորմած է։

Զինան թևանցուկ արեց եղբորը և, երբ անցնում էր մութ նախասենյակով, սեղմվեց նրա ուսին։

Դուրս եկան մուտքի պատշգամբը։ Պյոտր Միխայլիչը հրաժեշտ տվեց, ձի նստեց և գնաց քայլքով-դանդաղ. Զինան ու Վլասիչը գնացին մի քիչ ճանապարհ գցելու։ Խաղաղ էր, տաք և զգացվում էր խոտի սքանչելի բուրմունք. երկնքում, ամպերի արանքում պայծառորեն վառվում էին աստղերը։ Վլասիչի հին այգին, որ իր գոյության ընթացքում այնքա՞ն տխուր պատմություններ էր տեսել, քնած էր, մութով պարուրված, և չգիտես ինչո՞ւ, տխուր էր անցնել նրա միջով։

— Իսկ ես ու Զինան այսօր ճաշից հետո մի քանի իրոք պայծառ բոպեներ ունեցանք,— ասաց Վլասիչը։ Ես նրա համար բարձրաձայն կարդացի մի հիանալի հոդված վերաբնակեցման հարցի մասին։ Կարդա՛, ախպերս։ Դա քեզ համար անհրաժեշտ է։ Հոդվածն ուշագրավ է իր ազնվամտությամբ։ Ես չկարողացա ինձ զսպել և նամակ գրեցի խմբագրություն՝ հեղինակին հանձնելու համար։ Գրեցի միայն մի տող. «Շնորհակալ եմ և ամուր սեղմում եմ ձեր ազնիվ ձեռքը»։

Պյոտր Միխայլիչն ուզում էր ասել. «Մի՛ խառնվիր, խընդրում եմ, քեզ չվերաբերող գործերին»,— բայց լռեց։

Վլասիչը քայլում էր աջ ասպանդակի կողմից, Զինան՝ ձախ։ Երկուսն էլ կարծես մոռացել էին, թե պետք է տուն վերադառնալ։ այնինչ խոնավ էր և արդեն քիչ էր մնում մինչև Կոլտովիչի

անտառակը։ Պյոտր Միխայլիչն զգում էր, որ նրանք իրենից սպասում են ինչ-որ մի բան, թեև իրենք էլ չգիտեն ինչ, և նա անասելի խղճաց նրանց։ Այժմ, երբ նրանք, հնազանդ տեսքով և մտածումների մեջ, քայլում էին ձիու կողքով, Պյոտր Միխայլիչը խորապես համոզված էր, որ նրանք դժբախտ են և չեն կարող երջանիկ լինել, և նրանց սերը թվում էր նրան մի տխուր, անուղղելի սխալ։ Խղճահարությունից և այն գիտակցությունից, թե ինքը ոչնչով չի կարող օգնել, նրան տիրեց հոգեկան մեղկության այն վիճակը, երբ նա, կարեկցության ծանր զգացումից աղատվելու համար, պատրաստ էր լինում ամեն զոհաբերության։

— Ես մեկ-մեկ կգամ ձեզ մոտ գիշերելու,— ասաց նա։

Բայց դա նման էր այն բանին, կարծես ինքը գիշում է անում, և չբավարարեց նրան։ Երբ կանգ առան Կոլտովիչի անտառի մոտ՝ իրար հրաժեշտ տալու, Պյոտր Միխայլիչը կռացավ դեպի Զինան, ձեռքը դիպցրեց նրա ուսին և ասաց.

— Զինա, դու իրավացի ես։ Դու լավ քայլ արիր։

Եվ, որպեսզի ավելի բան չասի և լաց չլինի, նա մտրակեց ձիուն և սլացավ դեպի անտառ։ Մտնելով մութ անտառը՝ նա ետ նայեց և տեսավ, թե ինչպես Վլասիչն ու Զինան ճանապարհով գնում են տուն. Վլասիչը լայն, մեծ քայլեր անելով, իսկ Զինան նրա կողքին փութկոտ, ցատկտուն ընթացքով, քայլում էին ու ինչ-որ բանի մասին խոսում աշխույժով։

«Ես նման եմ պառաված կնկա,— մտածեց Պյոտր Միխայլիչը։— Եկա, որ հարցը լուծեմ, բայց ավելի խճճեցի։ Է՛, աստված իրենց հետ»։

Նա ծանրություն էր զգում սրտում։ Երբ անտառակը վերջացավ, նա ձին քշեց քայլքով և ապա լճակի մոտ կանգնեցրեց նրան։ Ուզում էր անշարժ նստել ու մտածել։ Լուսինը դուրս էր գալիս և հրակարմիր սյունի նման անդրադառնում էր լճակի մյուս կողմում։ Ինչ-որ տեղ խուլ որոտում էր ամպը։ Պյոտր Միխայլիչը անթարթ նայում էր ջրին և երևակայում էր քրոջ հուսահատությունը, նրա տառապալից գունատությունը և չոր աչքերը, որոնցով նա մարդկանցից պիտի թաքցնի իր ստորացումը։ Նա պատկերացնում էր քրոջ հղիությունը, մոր մահը, նրա թաղումը, Զինայի սարսափը... Հպարտ, սնապաշտ պառավը այդ չի տանի և կմեռնի։ Ապագայի սարսափելի պատկերներ էին նկարվում Պյոտր Միխայլիչի առջև՝ մութ, հարթ ջրի երե-

սին, և կանացի գունատ կերպարանքների մեջ նա տեսնում էր ինքն իրեն՝ թույլ, փոքրոգի, մեղավոր դեմքով...

Հարյուր քայլի վրա, լճակի աջ ափին, կանգնած էր ինչ-որ անշարժ ու մութ մի բան. մա՞րդ էր, թե բարձր մի կոճղ։ Պյոտր Միխայլիչը հիշեց սեմինարիստին, որին սպանել ու գցել էին այս լճակը։

«Օլիվերը վարվել է տմարդի ձևով, բայց չէ՞ որ նա այսպես թե այնպես լուծեց հարցը. իսկ ես ոչինչ էլ չլուծեցի, այլ միայն խճճեցի,— մտածում էր նա, ուշադիր նայելով մութ կերպարանքին, որ նման էր ուրվականի։— Նա ասել ու արել է այն, ինչ մտածել է, իսկ ես ասում ու անում եմ ոչ այն, ինչ մտածում եմ. ասենք՝ ես հաստատ չգիտեմ էլ, թե իսկապես ի՞նչ եմ մտածում...»։

Նա ձին նստած մոտեցավ մութ կերպարանքին. դա մի հին փտող սյուն էր, որ մնացել էր ինչ-որ շենքից։

Անտառից և Կոլտովիչի կալվածատնից գալիս էր հովտաշուշանի և մեղրախոտերի բուրմունք։ Պյոտր Միխայլիչը գնում էր լճակի ափով, տխրությամբ նայում էր ջրին և, իր կյանքը հիշելով, համոզվում էր, որ մինչև այսօր նա խոսել և արել է ոչ այն, ինչ մտածել է, և մարդիկ նրան վարձահատույց են եղել նույն կերպ, և դրանից էլ ամբողջ կյանքը հիմա նրան պատկերանում էր նույնպես մութ, ինչպես այս ջուրը, որի մեջ անդրադարձել էր գիշերային երկինքը, և խճճվել էին ջրախոտերը։ Եվ նրան թվում էր, թե այդ անկարելի է ուղղել։

1892

ՀԻՎԱՆԴԱՍԵՆՅԱԿ № 6

Հիվանդանոցի բակում կա մի փոքրիկ կողաշենք, որ շրջապատված է կռատուկի, եղինջի ու վայրի կանեփի մի ամբողջ անտառով։ Նրա տանիքի թիթեղյա ծածկը ժանգոտել է, ծխնելույզը կիսով չափ փլվել, նախամուտքի աստիճանները փտել են ու ծածկվել կանաչած խոտով, իսկ պատերի ծեփի միմիայն հետքերն են մնացել։ Նրա ճակատն ուղղված է դեպի հիվանդանոցը, իսկ հետևի երեսը նայում է դաշտին, որից նրան բաժանում է հիվանդանոցի գորշ ցանկապատը՝ կատարին մեխեր։ Սուր

ծայրերը դեպի վեր ուղղված այդ մեխերը և ցանկապատը, և հենց կողաշենքն ունեն այն հատուկ մռայլ, դժոխային տեսքը, որպիսին մեզ մոտ ունենում են միայն հիվանդանոցային և բանտային շենքերը։

Եթե դուք եղինջի դաղելուց չեք վախենում, ապա գնանք կողաշենք տանող նեղ արահետով և տեսնենք՝ ինչ է կատարվում նրա ներսում։ Առաջին դուռը բաց անելով՝ մենք մտնում ենք նախասենյակ։ Այդտեղ պատերի տակ և վառարանի մոտ իրար վրա թափված են հիվանդանոցային հնոտիի ամբողջ սարեր։ Ներքնակներ, պատառոտված հին խալաթներ, վարտիքներ, կապտաշերտ շապիկներ, բոլորովին անպետք, խպառ մաշված ոտնամաններ,— այդ ամբողջ հնոտին դիզված է կույտերով, տրորված է, խճճված, նեխում է և հեղձուցիչ հոտ արձակում։

Հնոտիի վրա, ծխամորճը միշտ ատամների արանքում, պառկած է պահապան Նիկիտան՝ գունաթափ տարբերանշաններով մի ծեր պաշտոնաթող զինվոր։ Նա ունի խոժոռ, սմքած դեմք, կախ հոնքեր, որոնք նրա դեմքին տալիս են տափաստանի հովվի շան տեսք, և կարմիր քիթ։ Նա բարձրահասակ է, արտաքուստ նիհար ու ջլուտ, բայց կեցվածքն ազդեցիկ է և բռունցքները խոշոր։ Նա պատկանում է այն պարզամիտ, դրական, հանձնակատար ու բթամիտ մարդկանց թվին, որոնք աշխարհում ամենից շատ սիրում են կարգ ու կանոնը, ուստիև համոզված են, որ հիվանդներին պետք է ծեծել։ Նա խփում է դեմքի, կրծքի, մեջքի, ինչ տեղի որ պատահի, և հավատացած է, որ առանց այդ ծեծի այստեղ կարգապահություն չի լինի։

Այնուհետև դուք մտնում եք մի մեծ, ընդարձակ սենյակ, որը գրավում է ամբողջ կողաշենքը, եթե նախասենյակը չհաշվենք։ Այդտեղ պատերին քսված է կեղտոտ կապտագույն ներկ, առաստաղը ծխոտված է, ինչպես ծխնելույզ չունեցող խրճիթում,— պարզ է, որ ձմեռն այդտեղ վառարանները ծխում են և ածխահարություն է լինում։ Երկաթե վանդակների պատճառով պատուհանները ներսից այլանդակ տեսք ունեն։ Հատակը գորշ է և խորդուբորդ։ Սենյակը լի է թթու կաղամբի, խանձվող պատրույգի, փայտոջիլի և անուշադրի վատ հոտով, և այդ գարշահոտությունն առաջին րոպեին ձեզ վրա այնպիսի տպավորություն է թողնում, կարծես թե դուք գազանանոց եք մտնում։

Սենյակում դրված են մահճակալներ, որոնք պտուտակներով ամրացված են հատակին։ Նրանց վրա նստած կամ պառ-

կած են հիվանդանոցային կապույտ խալաթ հագած և, ինչպես հնում էր, թասակ դրած մարդիկ. դրանք խելագարներ են։

Նրանք այստեղ հինգ հոգի են։ Միայն մեկն է ազնվական կոչման տեր. մնացածները բոլորը քաղքենիներ են։ Դռան կողմից առաջինը— մի բարձրահասակ, նիհար քաղքենի՝ կարմրաշեկ, պսպղուն բեղերով և լացակումած աչքերով,— նստած է՝ գլուխը ձեռքերին հենած և նայում է մի կետի։ Օր ու գիշեր նա թախծում է՝ գլուխն օրորելով, հոգոց հանելով և դառը ժպտալով. խոսակցություններին նա հազվադեպ է մասնակցում և հարցերին սովորաբար չի պատասխանում. նա ուտում և խմում է մեքենայորեն, երբ տալիս են։ Տանջալի, ցնցող հազից, նիհարությունից և այտերի կարմրությունից դատելով՝ նրա օրգանիզմում թոքախտ է սկսվել։

Նրանից հետո գալիս է փոքրամարմին, առույգ, շատ շարժուն մի ծերուկ, որն ունի սրածայր մորուք և նեգրի մազերի պես սևագանգուր մազեր։ Ցերեկը նա ճեմում է հիվանդասենյակում՝ մի պատուհանից մյուսը քայլելով կամ թուրքի պես ծալապատիկ նստում է անկողնի վրա և խածկտիկի նման անդադար սուլում, կամացուկ երգում է ու քրքջում։ Մանկան ուրախություն և կայտառ բնավորություն է ցուցաբերում նա նաև գիշերը, երբ վեր է կենում, որպեսզի աղոթի աստծուն, այսինքն՝ բռունցքներով կուրծքը ծեծի և մատներով դռները քշփորի։ Այդ ջհուդ Մոիսեյկան է, մի խելացնոր մարդ, որ խելագարվել է սրանից մի քսան տարի առաջ, երբ իր գդակի արհեստանոցն այրվել է։

№ 6 հիվանդասենյակի բոլոր բնակիչներից միայն նրան է թույլատրվում դուրս գալ ֆլիգելից և մինչև անգամ հիվանդանոցի բակից փողոց գնալ։ Այդպիսի արտոնություն նա վաղուց է վայելում, հավանորեն, որպես հիվանդանոցի հնաբնակ և որպես խաղաղաբարո, անվնաս մի խենթուկ, քաղաքի ծաղրածու, որին վաղուց արդեն սովորել են տեսնել փողոցներում՝ տղաներով և շներով շրջապատված։ Հագին թեթև խալաթ, գլխին մի ծիծաղելի թասակ, ոտքերին տուֆլիներ, երբեմն էլ ոտաբոբիկ և նույնիսկ անվարտիք,— նա շրջում է փողոցներում, կանգ առնելով դարբասների ու կրպակների առաջ, ու մի կոպեկ ողորմություն է խնդրում։ Մի տեղ նրան կվաս են տալիս, մի ուրիշ տեղ հաց, երրորդում՝ մի կոպեկ փող, այնպես որ նա հիվանդասենյակ է վերադառնում սովորաբար կշտացած և հարստացած։ Բոլորը, ինչ նա բերում է իր հետ, նրանից խլում է Նիկիտան։ Զինվորն այդ անում է կոպտաբար, չարասրտությամբ, դատարկելով նրա գրպանները և աստծու անունով երդվելով, որ ջհուդին այլևս երբեք փողոց չի թողնի և որ անկարգությունն իր համար ամենավատ բանն է աշխարհում։

Մոիսեյկան սիրում է մարդկանց ծառայություն մատուցել։ Ընկերներին նա ջուր էր տալիս, ծածկում է նրանց, երբ նրանք քնած են լինում, խոստանում է յուրաքանչյուրին փողոցից մի կոպեկ փող բերել և մի նոր գդակ կարել. դարձյալ նա է, որ գդալով կերակրում է իր ձախակողմյան հարևան անդամալույծին։ Նա այդպես վարվում է ոչ թե կարեկցությունից դրդված և ոչ էլ որևէ մարդասիրական բնույթի նկատառումով, այլ նմանվելով և ակամա ենթարկվելով իր աջակողմյան հարևանին՝ Գրոմովին։

Իվան Դմիտրիչ Գրոմովը՝ նախկին դատական պրիստավ և նահանգական քարտուղար, որ երեսուներեքի մոտ մի տղամարդ է ազնվական դասից, տառապում է հալածավախությամբ։ Նա կամ պառկած է լինում անկողնի վրա գունդուկծիկ դարձած, կամ քայլում է մի անկյունից մյուսը՝ կարծես զբոսանք կատարելու համար, իսկ նստում է շատ հազվագյուտ դեպքերում։ Նա միշտ գրգռված է, հուզված ու լարված՝ մի ինչ-որ աղոտ, անորոշ բանի սպասելու պատճառով։ Բավական է մի ամենափոքրիկ շրշյուն նախասենյակում կամ ճիչ բակում, որպեսզի նա բարձրացնի գլուխը և սկսի ականջ դնել. արդյո՞ք իր հետևից չեն գալիս։ Արդյո՞ք իրեն չեն փնտրում։ Եվ նրա դեմքն այն ժամանակ արտահայտում է ծայրահեղ անհանգստություն ու զզվանք։

Ինձ դուր է գալիս նրա լայն, այտոսկրոտ, միշտ գունատ և խղճալի դեմքը, որը հայելու պես ցոլացնում է իր մեջ պայքարից ու երկարատև վախից տանջված նրա հոգին։ Նրա ծամածռությունները տարօրինակ են ու հիվանդագին, բայց նուրբ գծերը, որ քաշել է նրա դեմքին խոր, անկեղծ տառապանքը, խելացի են ու ինտելիգենտական, և նրա աչքերում կա մի ջերմ, առողջ փայլ։ Ինձ դուր է գալիս նա ինքը՝ քաղաքավարի, հաճոյակատար և արտասովոր նրբանկատ բոլորի հանդեպ, բացի Նիկիտայից։ Երբ որևէ մեկի ձեռքից մի կոճակ կամ գդալ է ընկնում, նա շտապով ցատկում է անկողնից ու վերցնում։ Ամեն առավոտ նա ողջունում է իր ընկերներին՝ բարի լույս ասելով, իսկ երբ պառկում է քնելու՝ նրանց բարի գիշեր է մաղթում։

Մշտապես լարված վիճակից և ծամածռություններ անելուց բացի, նրա խելագարությունն արտահայտվում է նաև հետևյալում. երբեմն երեկոները նա փաթաթվում էր բարակ խալաթի մեջ և, դողալով, ատամները չխկչխկացնելով, սկսում է արագ քայլել մի անկյունից մյուսը և մահճակալների կողքերը։ Այնպիսի տպավորություն է ստացվում, թե նա ուժեղ ջերմ ունի։ Դիտելով, թե ինչպես նա հանկարծակի կանգ է առնում և նայում ընկերներին, զգում ես, որ ցանկանում է ինչ-որ շատ կարևոր բան ասել, բայց, ըստ երևույթին, գլխի ընկնելով, որ իրեն չեն լսի կամ չեն հասկանա, նա անհամբերությամբ ցնցում է գլուխը և շարունակում քայլել։ Բայց խոսելու ցանկությունը շուտով հաղթում է ամեն տեսակ կշռադատություններին, և նա ազատություն է տալիս իրեն ու խոսում է կրակոտ ու կրքոտ։ Նրա խոսքը խառնաշփոթ է, տենդագին, ինչպես զառանցանք, պոռթկուն և ոչ միշտ հասկանալի, բայց դրա փոխարեն՝ թե՛ նրա խոսքերի, թե՛ ձայնի մեջ լսվում է ինչ-որ անչափ լավ բան։ Երբ նա խոսում է, դուք նրա մեջ տեսնում եք խելագարին և մարդուն։ Դժվար է թղթի վրա արտահայտել նրա խելացնոր խոսվածքը։ Նա խոսում է մարդկանց ստորության մասին, արդարությունը ոտնակոխ անող բռնության մասին, հիանալի կյանքի մասին, որ ժամանակին լինելու է երկրի վրա, պատուհանների վանդակների մասին, որոնք ամեն րոպե հիշեցնում են բռնաբարողների բթամտությունն ու դաժանությունը։ Ստացվում է մի խառնաշփոթ, անկապ պոպուրի՝ հին, բայց մինչև վերջ չերգված երգերից։

II

Մի տասներկու-տասնհինգ տարի սրանից առաջ քաղաքում, ամենագլխավոր փողոցի վրա գտնվող իր սեփական տան մեջ ապրում էր չինովնիկ Գրոմովը՝ մի սոլիդ և ունևոր մարդ։ Նա ուներ երկու որդի՝ Սերգեյ և Իվան։ Արդեն չորրորդ կուրսի ուսանող՝ Սերգեյը հիվանդացավ սրընթաց թոքախտով ու մեռավ, և այդ մահն ասես սկիզբ ծառայեց մի ամբողջ շարք դժբախտությունների, որ հանկարծ թափվեցին Գրոմովների ընտանիքի գլխին։ Սերգեյի թաղումից մի շաբաթ անց՝ ծերուկ հայրը կեղծիքի և զեղծարարության համար դատի տրվեց և շուտով բանտի հիվանդանոցում մեռավ տիֆից։ Տունը և ամբողջ շարժական

ունեցվածքը աճուրդով վաճառվեց, և Իվան Դմիտրիչն ու իր մայրը մնացին առանց ապրուստի որևէ միջոցի։

Առաջ, հոր կենդանության ժամանակ, Իվան Դմիտրիչը ապրում էր Պետերբուրգում, որտեղ նա ուսանում էր համալսարանում, ամսական ստանում էր վաթսուն-յոթանասուն ռուբլի և ոչ մի հասկացողություն չուներ կարիքի մասին. իսկ այժմ ստիպված եղավ կտրուկ կերպով փոխել իր կյանքը։ Նա ստիպված էր առավոտից մինչև գիշեր գրոշանոց դասեր տալ, զբաղվել արտագրությամբ և, այնուամենայնիվ, քաղցած մնալ, որովհետև ամբողջ վաստակն ուղարկում էր մորը՝ ապրուստ հայթայթելու։ Իվան Դմիտրիչն այդպիսի կյանքի չդիմացավ. նա հոգեպես ընկճվեց, նիհարեց և, համալսարանը թողնելով, մեկնեց տուն։ Այդտեղ, այդ փոքրիկ քաղաքում, աղդեցիկ մարդկանց աջակցությամբ նա ուսուցչի տեղ ստացավ գավառական ուսումնարանում, բայց ընկերների հետ չհարմարվեց, աշակերտներին դուր չեկավ և շուտով թողեց պաշտոնը։ Մեռավ մայրը։ Նա մոտ կես տարի առանց պաշտոնի շրջեց, սնվելով միայն հացով ու ջրով, ապա դատական պրիստավի պաշտոն ստացավ։ Այդ պաշտոնը նա վարեց այնքան ժամանակ, մինչև որ հիվանդության պատճառով հեռացվեց։

Նա երբեք առողջ մարդու տպավորություն չէր թողնում, նույնիսկ երիտասարդ ժամանակ, ուսանողական տարիներին։ Միշտ գունատ էր, նիհար, շուտ մրսող. քիչ էր ուտում, վատ քնում։ Մի բաժակ գինուց նրա գլուխը պտտվում էր, և նա ջղաձգություն էր ունենում։ Միշտ ձգտում էր մարդկանց հետ լինել, բայց դյուրագրգիռ բնավորության և կասկածամտության հետևանքով ոչ ոքի հետ չէր մտերմանում և բարեկամներ չուներ։ Քաղաքացիների մասին միշտ արհամարհանքով էր խոսում, ասելով, որ նրանց կոպիտ տգիտությունը և քնեած անասնական կյանքն ստոր և նողկալի են թվում իրեն։ Խոսում էր տենորով, բարձր, կրակոտ և ոչ այլ կերպ, բայց եթե վրդովված ու հուզված կամ հիացած ու զարմացած և միշտ անկեղծ։ Ինչի մասին էլ որ խոսեիր նրա հետ, նա բոլորը կհանգեցներ մի բանի՝ քաղաքում մարդ խեղդվում է, և կյանքը ձանձրալի է, հասարակությունը բարձր շահագրգռություններ չունի, վարում է անփայլ, անիմաստ կյանք՝ այդ կյանքը բազմաղան դարձնելով բռնությամբ, կոպիտ անբարոյականությամբ ու կեղծավորությամբ. սրիկաները կուշտ են ու լավ հագնված, իսկ աղնիվ մարդիկ

փշրանքներով են սնվում. հարկավոր են դպրոցներ, աղնիվ ուղղություն ունեցող թերթ, թատրոն, հրապարակային դասախոսություններ, ինտելիգենտ ուժերի համախմբվածություն. հարկավոր է, որ հասարակությունն ինքնագիտակցության գա, ճանաչի իրեն ու սոսկա։ Մարդկանց մասին արած իր դատողություններում նա գործադրում էր թանձր գույներ՝ միայն սեր և սպիտակը, չընդունելով ո՛չ մի նրբերանգ. նա մարդկությունը բաժանում էր ազնիվների և սրիկաների. իսկ միջինը՝ չկար։ Կանանց և սիրո մասին միշտ խոսում էր կրքոտությամբ, հրճվանքով, բայց ոչ մի անգամ սիրահարված չէր եղել։

Չնայած դատողությունների խստությանը և նյարդայնությանը, քաղաքում նրան սիրում էին և նրա բացակայությամբ փաղաքշանքով Վանյա էին անվանում։ Նրա բնատուր քաղաքավարությունը, հաճոյակատարությունը, վայելչականությունը, բարոյական մաքրությունը և մաշված սերթուկը, հիվանդոտ տեսքը և ընտանեկան դժբախտությունները զարթեցնում էին լավ, ջերմ ու տխրանուշ զգացմունք. մանավանդ որ նա լավ կրթված ու կարդացած մարդ էր, քաղաքացիների կարծիքով գիտեր ամեն ինչ և քաղաքում մի տեսակ շրջիկ տեղեկատու բառարան էր։

Նա խիստ շատ էր կարդում։ Առաջ անվերջ նստում էր ակումբում, նյարդայնորեն քաշքշում փոքրիկ մորուքը և թերթում էր ամսագրերն ու լրագրերը, և նրա դեմքից երևում էր, որ ոչ թե կարդում է, այլ կլանում՝ հազիվ կարդացածը մարսելով։ Պետք է կարծել, որ ընթերցանությունը նրա հիվանդագին սովորություններից մեկն էր, որովհետև նա միանման ագահությամբ էր հարձակվում այն ամենի վրա, ինչ ձեռքն ընկնում էր, նույնիսկ անցյալ տարվա թերթերի և օրացույցների։ Տանը, իր սենյակում, նա միշտ պառկած էր կարդում։

III

Մեկ անգամ, աշնանային մի առավոտ, վերարկուի օձիքը բարձրացրած և ցեխը չփչփացնելով, Իվան Դմիտրիչը նրբանցքներով ու հետնաբակերով դժվարությամբ գնում էր մի ինչ-որ քաղքենու տուն՝ կատարողական թերթիկով դրամ ստանալու։ Նրա տրամադրությունը մռայլ էր, ինչպես միշտ լինում էր առավոտները։ Նրբանցքներից մեկում նրան պատահեցին երկու շղթայակապ կալանավորներ և նրանց հետ՝ չորս հրացանավոր

ուղեկցորդ։ Առաջներում Իվան Դմիտրիչը շատ հաճախ էր պատահում կալանավորների և ամեն անգամ նրանք իր մեջ զարթեցնում էին կարեկցության ու անհարմարության զգացում, իսկ այժմ այս հանդիպումը նրա վրա ինչ-որ հատուկ, տարօրինակ տպավորություն գործեց։ Հանկարծ, չգիտես ինչու, նրան թվաց, թե իրեն ևս կարող են շղթայակապ անել և այդպես ցեխի միջով բանտ տանել։ Քաղքենուն այցելելուց հետո տուն վերադառնալիս՝ փոստի մոտ նա հանդիպեց իրեն ծանոթ ոստիկանական վերակացուին, որը բարևեց և մի քանի քայլ նրա հետ գնաց փողոցով, ու, չգիտես ինչու, այդ բանը Իվան Դմիտրիչին կասկածելի թվաց։ Տանն ամբողջ ժամանակ նրա մտքից չէին հեռանում կալանավորներն ու հրացանավոր զինվորները, և անհասկանալի հոգեկան տագնապը խանգարում էր նրան կարդալ և կենտրոնանալ։ Երեկոյան տան լույսը չվառեց, իսկ գիշերը չքնեց ու անվերջ մտածում էր այն մասին, որ իրեն կարող են ձերբակալել, շղթայակապ անել ու բանտ նստեցնել։ Նա չէր հիշում, թե ինքը երբևէ հանցանք է գործել, և կարող էր երաշխավորել, որ ապագայում ևս երբեք մարդ չի սպանի, ոչինչ չի հրդեհի և չի գողանա. բայց մի՞թե դժվար է դիպվածով ակամա հանցագործություն կատարել և մի՞թե հնարավոր չէ զրպարտություն, վերջապես՝ դատական սխալ։ Չէ՞ որ զուր չէ ժողովրդական դարավոր փորձն ուսուցանում, որ մուրացկանությունից ու բանտից խուսափելու երաշխիք չկա։ Իսկ դատական սխալն այժմյան դատավարության պայմաններում շատ հնարավոր է ու դրա մեջ ոչինչ չկա զարմանալի։ Այն մարդիկ, որոնք պաշտոնական, գործարար վերաբերմունք ունեն դեպի ուրիշի տառապանքը, օրինակ՝ դատավորները, ոստիկանները, բժիշկները, ժամանակի ընթացքում, սովորական դառնալու հետևանքով, այն աստիճան քարսիրտ են դառնում, որ եթե ցանկանան էլ՝ չեն կարող իրենց հիվանդներին վերաբերվել այլ կերպ, քան ձևականորեն։ Այս տեսակետից նրանք ոչնչով չեն զանազանվում իրենց տան հետնաբակում ոչխար և հորթ մորթող ու նրանց արյունը չնկատող գեղջուկից։ Իսկ դեպի անհատը ձևական, անհոգի վերաբերմունք ցույց տալու դեպքում՝ անմեղ մարդուն բոլոր իրավունքներից զրկելու և տաժանակիր աշխատանքների դատապարտելու համար դատավորին պետք է միայն մի բան՝ ժամանակ։ Մի՛այն ժամանակ, որպեսզի պահպանի որոշ ձևականություններ, որոնց համար դատավորին ոռճիկ են վճարում, և այնուհետև ամեն

ինչ վերջացած է։ Հետո արդարություն ու պաշտպանություն փնտրիր այդ փոքրիկ, կեղտոտ քաղաքում, երկաթուղուց երկու հարյուր վերստ հեռավորության վրա։ Եվ մի՞թե նույնիսկ ծիծաղելի չէ մտածել արդարության մասին, երբ ամեն մի բռնություն հասարակությունն ընդունում է որպես խելացի և նպատակահարմար անհրաժեշտություն, և ողորմածության ամեն մի ակտ, օրինակ՝ արդարացման դատավճիռ, առաջ է բերում դժգոհության, քինախնդրության զգացումի մեծ պոռթկում։

Առավոտյան Իվան Դմիտրիչն անկողնից վեր կացավ սարսափած, սառը քրտինքը ճակատին, արդեն բոլորովին համոզված, որ ամեն րոպե իրեն կարող են ձերբակալել։ Եթե երեկվա ծանր մտքերն այսքան երկար ժամանակ չեն հեռանում իր գլխից,— մտածում էր նա,— նշանակում է նրանց մեջ որոշ ճշմարտություն կա։ Դրանք, իսկապես, հո չէի՞ն կարող իր գլխում ծագել առանց որևէ դրդապատճառի։

Քաղաքապահն առանց շտապելու անցավ պատուհանների մոտով. այդ իզուր չէր։ Ահա երկու մարդ կանգ առան տան մոտ և լուռ մնացին։ Նրանք ինչո՞ւ են լռում։

Եվ Իվան Դմիտրիչի համար եկան տանջալի օրեր ու գիշերներ։ Պատուհանների մոտով անցնող և բակ մտնող բոլոր մարդիկ լրտեսներ և խուզարկուներ էին թվում։ Կեսօրին ոստիկանապետն ըստ սովորականի երկձի կառքով անցնում էր փողոցով. նա իր քաղաքամերձ կալվածքից ոստիկանական վարչություն էր գնում, իսկ Իվան Դմիտրիչին ամեն անգամ թվում էր, թե նրա կառքը չափազանց արագ է գնում, և նրա դեմքն ունի ինչ-որ առանձին արտահայտություն. հավանորեն շտապում է հայտարարելու, որ քաղաքում լույս է ընկել մի շատ խոշոր ոճրագործ։ Իվան Դմիտրիչը ցնցվում էր ամեն զանգից ու դարպասի բախումից, տանջվում էր, երբ տանտիրուհու մոտ նոր մարդ էր տեսնում. ոստիկանների և ժանդարմների հանդիպելիս ժպտում էր ու սուլում, որպեսզի անտարբեր երևա։ Ձերբակալության սպասելով՝ նա ողջ գիշերները մինչև լույս չէր քնում, բայց քնած մարդու պես խռմփացնում էր ու հառաչում, որպեսզի տանտիրուհուն թվա, թե քնած է. չէ՞ որ եթե չի քնում, նշանակում է նրան խղճի խայթ է տանջում, ինչպիսի՞ հանցանշան։ Փաստերը և առողջ տրամաբանությունը համոզում էին նրան, որ այդ ամբողջ վախը դատարկ բան է և պսիխոպատիա, որ ձերբակալության ու բանտարկության մեջ, եթե դրան ավելի լայն հայացքով

նայենք, իսկապես ասած, սարսափելի ոչինչ չկա,— միայն թե մարդու խիղճը հանգիստ լինի։ Բայց որքան ավելի խելացի և տրամաբանորեն էր դատում, հոգեկան տագնապն այնքան ավելի ուժեղ ու տանջող էր դառնում։ Դա նման էր նրան, որ մի ճգնավոր ցանկացել էր ծառերը կտրելով կուսական անտառում իր համար տեղ բացել և ինչքան ավելի եռանդով էր քանեցրել կացինը, այնքան ավելի խիտ ու արագ էր աճել անտառը։ Իվան Դմիտրիչը, վերջիվերջո տեսնելով, որ այդ անօգուտ է, բոլորովին թողեց դատողություն անելը և ամբողջովին անձնատուր եղավ հուսահատության ու երկյուղի։

Նա սկսեց առանձնանալ ու խուսափել մարդկանցից։ Ծառայությունն առաջ էլ նրա համար զզվելի էր, իսկ այժմ դա անտանելի դարձավ։ Նա վախենում էր, թե իրեն որևէ կերպ կխաբեն, աննկատելիորեն գրպանը կաշառք կդնեն ու հետո կմերկացնեն որպես ոճրագործի կամ ինքը պետական փաստաթղթերում անզգուշաբար սխալ կգործի, որը հավասարազոր կլինի կեղծիքի, կամ ուրիշի փող կկորցնի։ Տարօրինակ է, որ ուրիշ ժամանակ նրա միտքը երբեք այդքան ճկուն ու հնարագետ չէր եղել, ինչպես այժմ է, երբ ամեն օր հազարավոր բաղմազան առիթներ է հնարում, որպեսզի լրջորեն չվախենա, թե իր ազատությանը և պատվին վտանգ է սպառնում։ Բայց դրա փոխարեն զգալիորեն թուլացել է նրա հետաքրքրությունը դեպի արտաքին աշխարհը, մասնավորապես դեպի գրքերը, և հիշողությունն սկսել է խիստ դավաճանել։

Գարնանը, երբ ձյունը հալվեց ու վերացավ, գերեզմանատան մոտ, ձորակում գտան կիսով չափ նեխած երկու դիակ՝ մի պառավի և մի տղայի, որոնց վրա կային բռնի մահվան նշաններ։ Քաղաքում բոլորի խոսակցության առարկան այդ դիակները և անհայտ մարդասպաններն էին։ Իվան Դմիտրիչը, որպեսզի չկարծեն, թե ինքն է նրանց սպանողը, շրջում էր փողոցներում ու ժպտում, իսկ ծանոթների հանդիպելիս՝ գունատվում էր, կարմրում և սկսում հավատացնել, թե չկա ավելի ստոր ոճրագործություն, քան թույլերին և անպաշտպաններին սպանելը։ Բայց այդ կեղծիքը շուտով նրան հոգնեցրեց և, փոքր-ինչ խորհրդածելուց հետո, նա որոշեց, որ այն վիճակում, որի մեջ ինքը գտնվում է, լավագույնն է՝ թաքնվել տանտիրուհու նկուղում։ Նկուղում նա թաքնված մնաց ցերեկը, հետո գիշերը և հաջորդ ցերեկը, սաստիկ մրսեց և, մինչև մթնշաղը սպասելով՝

ծածուկ, գողեգող անցավ իր սենյակը։ Մինչև լուսաբաց նա կանգնեց սենյակի մեջտեղում առանց շարժվելու և ականջը ձայնի պահած։ Վաղ առավոտյան, արևածագից առաջ, տանտիրուհու մոտ վառարանագործներ եկան։ Իվան Դմիտրիչը լավ գիտեր, որ նրանք եկել են խոհանոցի վառարանը վերանորոգելու, բայց վախը նրան հուշեց, թե դրանք վառարանագործի կերպ մտած ոստիկաններ են։ Նա կամացուկ դուրս եկավ բնակարանից և, սարսափով բռնված, առանց գդակի ու սերթուկի՝ վազեց փողոցով։ Շները հաչելով հետապնդեցին նրան, թիկունքում ինչ-որ տեղ մի գեղջուկ բղավեց, նրա ականջներում սուլեց օդը, և Իվան Դմիտրիչին թվաց, թե ամբողջ աշխարհի բռնությունը կուտակվել է իր թիկունքում ու հետապնդում է իրեն։

Նրան բռնեցին, բերեցին տուն և տանտիրուհուն ուղարկեցին բժիշկ կանչելու։ Բժիշկ Անդրեյ Եֆիմիչը, որի մասին հետո կխոսենք, կարգադրեց հիվանդի գլխին սառը թրջոցներ դնել և նշանակեց դափնեբալի կաթիլներ, տխուր օրորեց գլուխը և գնաց՝ տանտիրուհուն ասելով, որ ինքն այլևս չի գա, որովհետև մարդկանց չպետք է խանգարել խելագարվելու։ Քանի որ ապրուստի և բժշկության միջոցներ տանը չկային, ուստիև Իվան Դմիտրիչին շուտով ուղարկեցին հիվանդանոց և այնտեղ պառկեցրին վեներական հիվանդների հիվանդասենյակում։ Նա գիշերները չէր քնում, քմահաճություն էր անում ու անհանգստացնում հիվանդներին և շուտով, Անդրեյ Եֆիմիչի կարգադրությամբ, նրան փոխադրեցին № 6 հիվանդասենյակը։

Մի տարուց հետո քաղաքում բոլորովին մոռացան Իվան Դմիտրիչին, և նրա գրքերը, որ տանտիրուհին խառնիխուռն լցրել էր բակում ծածկի տակ գտնվող սահնակի մեջ, տղաները հափշտակեցին։

IV

Իվան Դմիտրիչի ձախակողմանի հարևանը, ինչպես ես արդեն ասել եմ, ջհուդ Մոիսեյկան է, իսկ աջակողմի հարևանը՝ ճարպակալած, համարյա գնդլիկ մի գեղջուկ, որի բութ դեմքը կատարելապես զուրկ է մտքի արտահայտությունից։ Դա մի ծանրաշարժ, շատակեր ու անմաքրասեր անասուն է, որ վաղուց արդեն կորցրել է մտածելու և զգալու ընդունակությունը։ Նրանից միշտ սուր, խեղդող գարշահոտություն է փչում։

Նիկիտան, որ նրա կեղտոտությունն է մաքրում, ծեծում է նրան սաստկորեն, ամբողջ թափով՝ բռունցքները չխնայելով. և սարսափելին այստեղ այն չէ, որ նրան ծեծում են,— դրան կարելի է վարժվել,— այլ այն, որ այդ բթացած անասունը ծեծին չի պատասխանում ոչ ձայն հանելով, ոչ շարժումով, ոչ աչքերի արտահայտությամբ, այլ միայն ծանր տակառի պես թեթևակի օրորվում է։

№ 6 հիվանդասենյակի հինգերորդ և վերջին բնակիչը ժամանակով փոստում որպես տեսակավորող ծառայած բարի, բայց փոքր-ինչ խորամանկ դեմքով մի քաղքենի է՝ փոքրամարմին, նիհար, շեկ տղամարդ։ Դատելով նրա խելացի, հանգիստ աչքերի արտահայտությունից, որոնք նայում են պարզ և ուրախ, նա խելքը գլխին մարդ է և ունի ինչ-որ շատ կարևոր ու հաճելի մի գաղտնիք։ Իր բարձի և ներքնակի տակ նա ունի մի այնպիսի բան, որ ոչ ոքի ցույց չի տալիս, սակայն ոչ թե երկյուղ կրելով, թե այն կարող են խլել կամ գողանալ, այլ՝ ամոթխածությունից։ Երբեմն նա մոտենում է պատուհանին և, մեջքն ընկերների կողմը դարձնելով, իր կրծքին ինչ-որ բան է ամրացնում և գլուխը կռացնելով՝ նայում է. եթե այդ ժամանակ դուք մոտենաք նրան, նա կամաչի և կրծքից ինչ-որ բան կպոկի։ Բայց նրա գաղտնիքը դժվար չէ կռահել։

— Շնորհավորեցե՛ք ինձ,— ասում է նա հաճախ Իվան Դմիտրիչին,— ինձ ներկայացրել են Ստանիսլավի երկրորդ աստիճանի շքանշանի՝ աստղով հանդերձ։ Երկրորդ աստիճանը աստղով հանդերձ տալիս են միայն օտարերկրացիներին, բայց ինձ համար, չգիտեմ ինչու, ուզում են բացառություն անել,— ժպտում է նա՝ տարակուսանքով ուսերը թոթվելով։— Ա՛յ, խոստովանք լինի, չէի սպասում։

— Ես դրա մասին ոչ մի հասկացողություն չունեմ,— մռայլ հայտարարում է Իվան Դմիտրիչը։

— Բայց գիտե՞ք, վաղ թե ուշ ես ինչի կհասնեմ,— շարունակում է նախկին տեսակավորողը՝ աչքերը խորամանկորեն կկոցելով։— Ես անպայման կստանամ շվեդական «Բևեռային աստղ» շքանշանը։ Դա այնպիսի շքանշան է, որ արժի դրա համար սրան-նրան դիմել։ Սպիտակ խաչ և սև ժապավեն։ Այդ շատ գեղեցիկ է։

Հավանորեն ուրիշ ոչ մի տեղ կյանքն այնքան միօրինակ չէ, ինչպես ֆլիգելում։ Հիվանդները, բացի անդամալույծից և հաս-

լիկ գեղջուկից, առավոտյան լվացվում են նախասենյակում դրված մեծ տաշտի մեջ ու սրբվում իրենց խալաթների փեշերով. դրանից հետո անագե գավաթներով թեյ են խմում, որ գլխավոր շենքից Նիկիտան է բերում։ Յուրաքանչյուրին հասնում է մի գավաթ։ Կեսօրին ուտում են թթու կաղամբով շչի և խաշիլ. երեկոյան ընթրիքը ճաշից մնացած խաշիլն է։ Այդ գործողությունների արանքում պառկում են, քնում, պատուհաններից դուրս նայում և մի անկյունից մյուսը քայլում։ Եվ այդպես ամեն օր։ Նույնիսկ նախկին տեսակավորողը միշտ միևնույն շքանշաններից է խոսում։

№ 6 հիվանդասենյակում նոր մարդ հազվադեպ են տեսնում։ Բժիշկն արդեն վաղուց է, որ նոր խելագարներ չի ընդունում, իսկ գժանոց այցելելու սիրահար քիչ կա այս աշխարհում։ Երկու ամիսը մեկ անգամ ֆլիգել է գալիս Սեմյոն Լազարիչը՝ վարսավիրը։ Թե նա ինչպես է խուզում խելագարների մազերը և այդ գործում նրան ինչպես է օգնում Նիկիտան, ու հիվանդներն ինչպես են շփոթվում ամեն անգամ, երբ հայտնվում է հարբած, ժպտացող վարսավիրը,— այդ մասին չխոսենք։

Վարսավիրից բացի, ոչ ոք ֆլիգել չի գալիս։ Հիվանդները դատապարտված են ամեն օր տեսնելու միմիայն Նիկիտային։

Սակայն նորերս հիվանդանոցային կորպուսում տարածվեց բավական տարօրինակ մի լուր։

Լուր տարածվեց, թե իբր բժիշկն սկսել է այցելել № 6 հիվանդասենյակը։

V

Տարօրինա՜կ լուր։

Բժիշկ Անդրեյ Եֆիմիչ Ռագինը իր տեսակի խիստ հետաքրքրքրական մարդ է։ Ասում են, իր վաղ երիտասարդության ժամանակ նա շատ կրոնասեր է եղել և իրեն պատրաստելիս է եղել հոգևոր կարիերայի, և որ 1863 թվականին գիմնազիայի դասընթացը ավարտելով՝ նա մտադիր է եղել մտնելու հոգևոր ճեմարան, բայց իբր թե հայրը՝ բժշկագիտության դոկտոր և վիրաբույժ, կծու ծաղրել է նրան ու կտրականապես հայտարարել՝ եթե նա տերտերության գնա, նրան իր որդին չի համարի։ Որքան ճիշտ է այդ, չգիտեմ, բայց Անդրեյ Եֆիմիչն ինքը քանիցս խոստովանել է, որ ինքը երբեք բժշկագիտության և առհասարակ մասնագիտական գիտությունների հակում չի ունեցել։

Այսպես թե այնպես, բժշկական ֆակուլտետի դասընթացն ավարտելով՝ նա քահանա չի ձեռնադրվում։ Կրոնասիրություն նա չի դրսևորել, և իր բժշկական կարիերայի սկզբում նույնքան քիչ է նման եղել հոգևորականի, որքան և հիմա։

Նրա արտաքինը կոպիտ է, ծանր, գեղջկական. իր դեմքով, մորուքով, ճապաղած մազերով և ամուր, անճոռնի կառուցվածքով նա հիշեցնում է մեծ ճանապարհի տոգած, անժուժկալ ու բիրտ պանդոկապետի։ Երեսը խստատեսք է, ծածկված կապույտ երակներով, աչքերը փոքր են, քիթը՝ կարմիր։ Բարձր հասակի և լայն թիկունքի հետ մեկտեղ նա ունի հսկայական ձեռքեր ու ոտքեր. թվում է, թե բավական է նրա բռունցքի մի հարվածը, և շունչդ կփչես։ Բայց նրա ընթացքը հանդարտ է, քայլվածքն զգույշ, գողտրիկ. նեղ միջանցքում հանդիպելիս՝ նա միշտ առաջինն է կանգ առնում, որպեսզի ճանապարհ տա և ոչ թե բամբ ձայնով, ինչպես կսպասեիք, այլ բարակ, մեղմ տենորով ասում է՝ «Ներողությո՛ւն»։ Նրա պարանոցի վրա կա մի փոքրիկ ուռուցք, որը նրան խանգարում է կոշտ, օսլայած օձիք կրելու, ուստի նա միշտ փափուկ քթթանե կամ չթե կրկնաշապիկ է հագնում։ Ընդհանրապես նա բժշկավարի չի հագնվում։ Միևնույն ձեռք զգեստը կրում է մի տասը տարի, իսկ նոր զգեստը, որը նա սովորաբար գնում է ջհուդի խանութից, նրա հագին նույնքան հնամաշ ու ճմռթված է երևում, որքան և հինը։ Միևնույն սերթուկը հագած՝ նա և՛ հիվանդ է ընդունում, և՛ ճաշում է, և՛ հյուր գնում. բայց այդ ոչ թե ժլատությունից է, այլ իր արտաքինի նկատմամբ կատարյալ անուշադրությունից։

Երբ Անդրեյ Եֆիմիչն իր պաշտոնն ընդունելու համար քաղաք ժամանեց, «աստվածահաճո հիմնարկը» սոսկալի վիճակի մեջ էր գտնվում։ Գարշահոտության պատճառով հիվանդասենյակներում, միջանցքներում և հիվանդանոցի բակում դժվար էր շնչել։ Հիվանդանոցի սևագործ գեղջուկները, հիվանդապահուհիները և նրանց երեխաները քնում էին հիվանդների հետ, հիվանդասենյակներում։ Գանգատվում էին, որ ուտիճների, փայտոջիլների և մկների երեսից օր չեն տեսնում։ Վիրաբուժական բաժանմունքում կարմիր քամի հիվանդությունն անպակաս էր։ Ամբողջ հիվանդանոցն ուներ գանգամաշկման միայն երկու դանակ և ոչ մի ջերմաչափ, վաննաներում կարտոֆիլ էին պահում։

Վերակացուն, հանդերձապահուհին և բուժակը հիվանդներին կողոպտում էին, իսկ հին բժշկի՝ Անդրեյ Եֆիմիչի նախորդի մասին պատմում էին, իբր թե նա զբաղվել է հիվանդանոցի սպիրտի գաղտնի վաճառքով և հիվանդապահուհիներից ու հիվանդ կանանցից իր համար ստեղծած է եղել մի ամբողջ հարեմ։ Քաղաքում շատ լավ գիտեին այդ անկարգությունների մասին և նույնիսկ չափազանցնում էին դրանք, բայց այդ ամենին հանգիստ էին վերաբերվում. ոմանք դրանք արդարացնում էին նրանով, որ հիվանդանոցում պառկում են միայն քաղքենիները և գեղջուկները, որոնք չեն կարող դժգոհ լինել, որովհետև իրենց տանը շատ ավելի վատ են ապրում, քան հիվանդանոցում. հոսալամբի մտով չե՞ն կերակրելու դրանց։ Մյուսներն էլ, արդարացնելու համար, ասում էին, որ առանց զեմստվոյի օգնության, միայն քաղաքի միջոցներով, լավ հիվանդանոց պահելն ուժից վեր բան է։ Փա՞ռք աստծո, որ գոնե վատը կա։ Իսկ երիտասարդ զեմստվոն ոչ քաղաքում, ոչ էլ մոտակայքում հիվանդանոց բաց չէր անում՝ հիմնվելով այն բանի վրա, որ քաղաքը արդեն իր հիվանդանոցն ունի։

Ստուգելով հիվանդանոցը՝ Անդրեյ Եֆիմիչը եկավ այն եզրակացության, որ դա անբարոյական և բնակիչների առողջության համար վերին աստիճանի վնասակար մի հիմնարկություն է։ Նրա կարծիքով ամենախելոք բանը, որ կարելի էր անել, այս էր՝ հիվանդներին ազատ արձակել, իսկ հիվանդանոցը փակել։ Բայց նա մտածեց, որ այդ բանն անելու համար միայն իր կամեցողությունը բավական չի և որ այդ անօգուտ կլինի. եթե ֆիզիկական և բարոյական անմաքրությունը մի տեղից քշես, այն մեկ ուրիշ տեղ կփոխադրվի. պետք է սպասել, մինչև որ դա ինքն իրեն հողմահարվի։ Մանավանդ որ, եթե մարդիկ հիվանդանոց են բացել և այն հանդուրժում են իրենց քաղաքում, նշանակում է դա նրանց հարկավոր է. նախապաշարմունքները և այդ բոլոր զազրելի ու նողկալի առօրյա բաները հարկավոր են, որովհետև դրանք ժամանակի ընթացքում վերածվում են մի որևէ պետքական բանի, ինչպես գոմաղբը՝ սևահողի։ Աշխարհում չկա ոչ մի այնպիսի լավ բան, որ իր սկզբնաղբյուրում ազատ չունենա։

Պաշտոնն ստանձնելով՝ Անդրեյ Եֆիմիչն ըստ երևույթին բավական անտարբեր վերաբերվեց անկարգություններին. նա միայն հիվանդանոցի սևագործ գեղջուկներին ու հիվանդապահուհիներին խնդրեց, որ հիվանդասենյակներում չգիշերեն, և հիվանդանոցում դրեց գործիքների երկու պահարան. իսկ վերակացուն, հանդերձապահուհին, բուժակը և վիրաբուժական բաժանմունքի կարմիր քամին մնացին իրենց տեղերում։

Անդրեյ Եֆիմիչը խելացիություն և ազնվություն անչափ շատ է սիրում, բայց իր շուրջը խելացի ու ազնիվ կյանք հաստատելու համար նրան պակասում է կամքի ուժ և հավատ՝ որ ինքն իրավունք ունի։ Հրամայել, արգելել և իր ասածը պնդել նա ուղղակի չի կարողանում։ Կարծես թե նա ուխտել է ձայնը երբեք չբարձրացնել և բայի հրամայական եղանակ չգործածել։ «Տո՛ւր» կամ «բե՛ր» ասելը նրա համար դժվար է. երբ նա քաղցած է լինում, անհամարձակ հազում է և ասում խոհարարուհուն. «Չէ՞ր կարելի ինձ մի թեյ էնիք անել...» կամ՝ «Չէ՞ր կարելի ինձ ճաշ էնիք անել»։ Իսկ ասել վերակացուին, որ այլևս գողություն չանի կամ վռնդել նրան, կամ բոլորովին վերացնել այդ պետք չհկող, պարազիտային պաշտոնը՝ կատարելապես վեր է նրա ուժերից։ Երբ Անդրեյ Եֆիմիչին խաբում են կամ շողոքորթում, կամ հայտնապես կեղծ հաշիվ են բերում ստորագրելու, նա խեցգետնի պես կարմրում է և իրեն մեղավոր զգում, բայց հաշիվն, այնուամենայնիվ, ստորագրում է. երբ հիվանդները գանգատվում են նրան, որ իրենք քաղցած են մնում կամ որ հիվանդապահուհիներն իրենց հետ կոպիտ են վարվում, նա շփոթվում է և մեղավորի պես մոթմոթում.

— Լա՛վ, լա՛վ, ես հետո կքննեմ... Հավանորեն այստեղ մի թյուրիմացություն կա...

Սկզբի շրջանում Անդրեյ Եֆիմիչը մեծ եռանդով էր աշխատում։ Նա ամեն օր առավոտից մինչև ճաշ ընդունելություն էր անում, վիրահատություններ էր կատարում և նույնիսկ զբաղվում էր մանկաբարձական պրակտիկայով։ Կանայք նրա մասին ասում էին, որ նա ուշադիր է և հիանալի է գուշակում հիվանդությունները, հատկապես երեխաների և կանանց հիվանդությունները։ Բայց գործն իր միօրինակությամբ և ակնհայտ ապարդյունությամբ ժամանակի ընթացքում նկատելիորեն ձանձրացրեց նրան։ Այսօր երեսուն հիվանդ ես ընդունում, վաղը տասնում ես՝ երեսունհինգն եկավ, մյուս օրը՝ քառասունը, և այդպես օրը-օրին, տարին տարու վրա, իսկ մահացությունը քաղաքում չի պակասում, և հիվանդները չեն դադարում գալ։ Առավոտից մինչև ճաշ եկած քառասուն հիվանդին լուրջ օգնություն ցույց տալ

ֆիզիկապես հնարավոր չէ, նշանակում է, ակամայից լոկ խաբեություն է դուրս գալիս։ Հաշվետու տարում ընդունվել է 12.000 երթևեկ հիվանդ. նշանակում է, պարզ դատելով, խաբվել է 12.000 մարդ։ Իսկ լուրջ հիվանդներին հիվանդասենյակները դնել և նրանցով զբաղվել գիտության կանոնների համաձայն՝ նույնպես չի կարելի, որովհետև կանոնները կան, իսկ գիտություն չկա։ Իսկ փիլիսոփայությունը թողնելու և մյուս բժիշկների պես պեդանտորեն կանոններին հետևելու համար նախ և առաջ հարկավոր են մաքրություն և օդափոխություն և ոչ թե կեղտոտություն, հարկավոր են առողջարար սնունդ և ոչ թե հոտած, թթու կաղամբի շշի, լավ օգնականներ՝ և ոչ թե գողեր։

Եվ հետո՝ ի՞նչ միտք ունի խանգարել մարդկանց մեռնելու, երբ մահը յուրաքանչյուրի նորմալ ու օրինական վախճանն է։ Ի՞նչ օգուտ նրանից, որ ինչ-որ չարչու կամ չինովնիկի մեկը մի հինգ, տասը տարի ավելի ապրի։ Իսկ եթե բժշկագիտության նպատակը համարենք այն, որ դեղերը մեղմացնում են տանջանքները, ապա ակամայից հարց առաջ կգա՝ ինչո՞ւ դրանք մեղմացնել։ Նախ, ասում են, որ տանջանքները մարդուն տանում են դեպի կատարելություն և, երկրորդ, եթե մարդկությունը իսկապես վարժվի դեղահատերով ու կաթիլներով մեղմացնել իր տանջանքները, ապա նա բոլորովին մոռացության կմատնի կրոնն ու փիլիսոփայությունը, որոնցում մինչև այժմ գտնում էր ոչ միայն պաշտպանություն ամեն տեսակ դժբախտություններից, այլև նույնիսկ երջանկություն։ Պուշկինն իր մահից առաջ սոսկալի տանջանքներ է կրել, խեղճ Հայնեն անդամալույծ պառկած է եղել մի քանի տարի. էլ ինչո՞ւ չհիվանդանան ինչ-որ Անդրեյ Եֆիմիչ կամ Մատրյոնա Սավիշնա, որոնց կյանքն անբովանդակ է և բոլորովին դատարկ կլիներ ու նման ամեռբայի կյանքի, եթե տանջանքները չլինեին։

Այսպիսի խորհրդածություններից ճնշված՝ Անդրեյ Եֆիմիչը վհատվեց և սկսեց հիվանդանոց այցելել ոչ ամեն օր։

VI

Նրա կյանքն անցնում է այսպես։ Սովորաբար առավոտյան նա վեր է կենում ժամը մոտավորապես ութին, հագնվում է և թեյ խմում։ Հետո նստում է իր առանձնասենյակում կարդալու կամ գնում է հիվանդանոց։ Այնտեղ, հիվանդանոցում, նրա նեղ,

մութ միջանցքում նստած են ընդունելության սպասող երթևեկ հիվանդները։ Նրանց մոտով, սպասողները աղյուսապատ հատակին թխկթխկացնելով՝ վազվզում են գեղջուկ ծառաներն ու հիվանդապահուհիները, անցնում են խալաթավոր վտիտ հիվանդները, տանում են մեռածներին և աղտոտությունների ամանները, լալիս են երեխաները, փչում է միջանցիկ քամին։ Անդրեյ Եֆիմիչը գիտե, որ ջերմողների, թոքախտավորների և առհասարակ դյուրազգաց հիվանդների համար այդպիսի պայմանները տանջող են, բայց ի՞նչ կարող է անել։ Ընդունարանում նրան դիմավորում է բուժակ Սերգեյ Սերգեյիչը՝ սափրված, մաքուր լվացված, լիքը երեսով, նուրբ, սահուն շարժուձևերով և նոր, լայն կոստյումը հագին մի փոքրամարմին, հաստլիկ մարդ, որ ավելի սենատորի է նման, քան բուժակի։ Քաղաքում նա հսկայական պրակտիկա ունի, սպիտակ փողկապ է կրում և իրեն ավելի գիտակ է համարում, քան բժշկին, որը բոլորովին պրակտիկա չունի։ Ընդունարանի անկյունում դրված է մի մեծ սրբապատկեր ծանր կանթեղով, իսկ նրա կողքին՝ սպիտակ պատյանով մի պատկերակալ։ Պատերին կախված են եպիսկոպոսների պատկերներ, Սվյատոգորսկի վանքի տեսարանը և չոր, կապույտ տերեփուկներից հյուսած պսակներ։ Սերգեյ Սերգեյիչը կրոնասեր է և սիրում է բարեզարդություն։ Սրբապատկերը նրա ծախսով է դրված. կիրակի օրերը հիվանդներից որևէ մեկը նրա հրամանով ընդունարանում բարձրաձայն ակաթիստ է կարդում, իսկ ընթերցումից հետո Սերգեյ Սերգեյիչն ինքը բուրվառը ձեռքին շրջում է բոլոր հիվանդասենյակները և խունկ ծխում այնտեղ։

Հիվանդները շատ են, իսկ ժամանակը՝ քիչ, ուստի և սահմանափակվում են նրանով, որ միմիայն կարճ հարցուփորձ են անում և տալիս են որևէ դեղ, օրինակ՝ ցնդող քսելիք կամ լուծողական։ Անդրեյ Եֆիմիչը մտածմունքի մեջ ընկած՝ նստած է այտը բռունցքին հենած և մեքենաբար հարցեր էր տալիս։ Սերգեյ Սերգեյիչը նույնպես նստած է, շփում է իր ձեռքերը և երբեմն-երբեմն միջամտում։

— Հիվանդանում ենք ու կարոտություն ենք քաշում այն պատճառով,— ասում է նա,— որ ողորմած աստծուն վատ ենք աղոթում։ Այո՛։

Ընդունելության ժամանակ Անդրեյ Եֆիմիչը ոչ մի վիրահա-

տություն չի կատարում. նա վաղուց է թողել այդ սովորությունը, և արյան տեսքը տհաճ հուզմունք է պատճառում նրան։ Երբ նա առիթ է ունենում երեխայի բերանը բանալու, որպեսզի նրա կոկորդի ներսը նայի, իսկ երեխան ճչում է ու թաթիկներով պաշտպանվում, աղմուկից Անդրեյ Եֆիմիչի ականջները խշշում են, գլուխը պտտվում է, և աչքերն արցունքակալվում են։ Նա շտապում է դեղ գրել և ձեռքերով նշան է անում, որպեսզի երեխային բերած կինը շուտով նրան տանի։

Ընդունելության ժամանակ նրան շուտով ձանձրացնում են հիվանդների երկչոտությունն ու անհասկացողությունը, Սերգեյ Սերգեյիչի վայելուչ տեսքը, պատերին կախած պատկերները և իր սեփական հարցերը, որ արդեն քսան տարուց ավելի է, ինչ նա անփոփոխ կերպով տալիս է հիվանդներին։ Եվ մի հինգ-վեց հիվանդ ընդունելով՝ նա թողնում գնում է։ Մյուսներին առանց նրա ներկայության ընդունում է բուժակը։

Գոհ այն հաճելի մտքից, որ, փառք աստծու, մասնավոր պրակտիկա ինքը վաղուց է արդեն ինչ չունի և որ իրեն ոչ ոք չի խանգարի, Անդրեյ Եֆիմիչը տուն գալով, անհապաղ նստում է սեղանի մոտ իր առանձնասենյակում և սկսում է կարդալ։ Նա խիստ շատ է կարդում և միշտ մեծ բավականությամբ։ Նրա ոռճիկի կեսը գնում է գրքեր գնելու վրա, և նրա բնակարանի վեց սենյակներից երեքը խառնիխուռն լցված են գրքերով ու հին ամսագրերով։ Ամենից շատ նա սիրում է պատմության և փիլիսոփայության բնագավառին պատկանող երկեր, իսկ բժշկագիտության բնագավառից ստանում է միայն «Врачъ»-ը, որն սկսում է կարդալ միշտ վերջից։ Ընթերցանությունն ամեն անգամ տևում է առանց ընդմիջման մի քանի ժամ և նրան չի հոգնեցնում։ Կարդում է նա ոչ այնպես արագ ու բուռն թափով, ինչպես մի ժամանակ Իվան Դմիտրիչն էր կարդում, այլ դանդաղ, ներթափանցումով, հաճախ կանգ առնելով այն տեղերի վրա, որոնք նրան դուր են գալիս կամ անհասկանալի են լինում։ Գրքի մոտ միշտ դրված է օղու գրաֆինը և աղ դրած վարունգ կամ թրջոց դրած խնձոր՝ ուղղակի մահուդի վրա, առանց ափսեի։ Յուրաքանչյուր կես ժամը մեկ անգամ, առանց աչքերը գրքից կտրելու, նա իր համար մի բաժակ օղի է լցնում ու խմում, հետո, առանց նայելու, շոշափում, վերցնում է վարունգը և մի կտոր կծում։

Ժամը երեքին նա զգուշաբար մոտենում է խոհանոցի դռանը, հազում է և ասում.

— Դա՛րյուշկա, չէ՞ր կարելի ինձ ճաշ էնիք անել...

Ճաշից հետո, որը բավական վատ ու ոչ այնքան մաքուր է լինում, Անդրեյ Եֆիմիչը՝ ձեռքերը կրծքին ծալած, շրջում է իր սենյակներում և խորհում։ Խփում է ժամը չորսը, հետո՝ հինգը, իսկ նա անվերջ շրջում է ու խորհում։ Երբեմն-երբեմն ճռռում է խոհանոցի դուռը, և այնտեղից երևում է Դարյուշկայի կարմիր, քնաթաթախ դեմքը։

— Անդրեյ Եֆի՛միչ, ձեր գարեջուր խմելու ժամանակը չի՞,— հարցնում է նա մտահոգված։

— Ո՛չ, դեռ ժամանակը չէ...— պատասխանում է Անդրեյ Եֆիմիչը։— Ես կսպասեմ... կսպասեմ...

Երեկոյան դեմ սովորաբար գալիս է փոստի պետը՝ Միխայիլ Ավերյանիչը, միակ մարդն ամբողջ քաղաքում, որի հետ լինելը Անդրեյ Եֆիմիչի համար տհաճ չէ։ Միխայիլ Ավերյանիչը ժամանակով եղել է շատ հարուստ կալվածատեր և ծառայել է հեծելազորում, բայց սնանկացել է և կարիքից ստիպված, ծերությունը մոտենալով, փոստային վարչություն է մտել։ Նա ունի առույգ, առողջ տեսք, ալեհեր, ճոխ այտամորուք, բարեկիրթ ձևեր և հաճելի բարձր ձայն։ Նա բարի է և զգայուն, բայց դյուրաբորբոք է։ Երբ փոստում հաճախորդներից մեկնումեկը բողոքում է, չի համաձայնում կամ պարզապես սկսում է դատողություն անել, Միխայիլ Ավերյանիչը շառագունում, ամբողջ մարմնով ցնցվում է և որոտաձայն գոռում. «Լռե՛լ». այնպես որ փոստի բաժանմունքի վերաբերմամբ վաղուց է հաստատվել այնպիսի մի հիմնարկության համբավ, որտեղ լինելը սարսափելի է։ Միխայիլ Ավերյանիչը Անդրեյ Եֆիմիչին հարգում և սիրում է նրա կրթվածության ու հոգու ազնվության համար, իսկ մնացած քաղքենիներին բարձրից է նայում, որպես իր ստորադրյալներին։

— Ահավասի՛կ և ես,— ասում է նա՝ Անդրեյ Եֆիմիչի սենյակը մտնելով։— Բարև՛, թանկագինս։ Ով գիտե՝ ես արդեն ձանձրացրել եմ ձեզ, հա՞։

— Ընդհակառակը, շատ ուրախ եմ,— պատասխանում է նրան բժիշկը։— Ես միշտ ուրախ եմ ձեր գալուն։

Բարեկամները նստում են առանձնասենյակի բազմոցի վրա և մի որոշ ժամանակ լուռ ծխում։

— Դա՛րյուշկա, չէ՞ր կարելի մեզ համար մի գարեջուր էնիք անել,— ասում է Անդրեյ Եֆիմիչը։

Առաջին շիշը նույնպես խմում են լուռ, բժիշկը՝ մտածմուն-

քի մեջ ընկած, իսկ Միխայիլ Ավերյանիչը՝ ուրախ, աշխույժ տեսքով, որպես մի մարդ, որն ինչ-որ շատ հետաքրքրական բան ունի պատմելու։ Խոսակցությունը միշտ բժիշկն է սկսում։

— Որքա՜ն ցավալի է,— ասում է նա դանդաղ և կամաց՝ գլուխն օրորելով և զրուցակցի աչքերին չնայելով (նա երբեք մարդկանց աչքերին չի նայում),— խորապես ցավալի է, հարգելի Միխայիլ Ավերյանիչ, որ մեր քաղաքում բոլորովին չկան այնպիսի մարդիկ, որոնք կարողանային և սիրեին խելացի ու հետաքրքրական զրույց անել։ Դա հսկայական զրկանք է մեզ համար։ Մինչև անգամ ինտելիգենցիան տափակությունից վեր չի բարձրանում. նրա զարգացման մակարդակը, հավատացնո՛ւմ եմ ձեզ, բնավ էլ բարձր չէ ստորին դասի զարգացման մակարդակից։

— Միանգամայն ճի՛շտ է։ Համաձայն եմ։

— Ձեր հրամանոցն էլ հայտնի է,— շարունակում է բժիշկը կամացուկ և դադար առնելով,— որ այս աշխարհում ամեն ինչ աննշան է և անհետաքրքրական, բացի մարդկային խելքի հոգևոր բարձր արտահայտություններից։ Խելքը շեշտակի սահման է դնում կենդանու և մարդու միջև, ակնարկում է վերջինիս աստվածայնությունը և որոշ չափով էլ նրա համար նույնիսկ փոխարինում է անմահությանը, որը գոյություն չունի։ Սրանից ելնելով՝ խելքը հաճույքի միակ հնարավոր աղբյուրն է։ Իսկ մենք մեր շուրջը խելք չենք տեսնում ու չենք լսում. ուրեմն զուրկ ենք հաճույքից։ Ճիշտ է, մենք գրքեր ունենք, բայց այդ բոլորովին էլ այն չէ, ինչ կենդանի զրույցն ու հաղորդակցությունը։ Եթե թույլ կտաք ոչ բոլորովին հաջող համեմատություն անել, ապա ես կասեմ, որ գրքերը նոտաներ են, իսկ զրույցը՝ երգեցողություն։

— Միանգամա՛յն ճիշտ է։

Լռություն է տիրում։ Խոհանոցից դուրս է գալիս Դարյուշկան և, բութ թախծի արտահայտությունը դեմքին, երեսը փոքրիկ բռունցքին հենած, կանգ է առնում դռան շեմքին՝ նրանց լսելու։

— Է՜հ,— հառաչում է Միխայիլ Ավերյանիչը։— Այժմյան մարդկանցից խե՞լք եք պահանջում։

Եվ նա պատմում է, թե ինչպես առաջ լավ, ուրախ ու հետաքրքիր էին ապրում, ի՜նչ խելոք ինտելիգենցիա կար Ռուսաստանում և ինչպես նա բարձր էր դասում պատվի ու բարեկամության հասկացողությունները։ Փողը պարտք էին տալիս

առանց պարտամուրհակի, և կարոտության մեջ գտնվող ընկերոջն օգնության ձեռք չմեկնելն ամոթ էր համարվում։ Իսկ ի՜նչ արշավներ կային, արկածներ, ընդհարումներ, ի՜նչ ընկերներ, ինչպիսի՜ կանայք։ Իսկ Կովկասը. ի՜նչ հիասքանչ երկիր է։ Իսկ մի գումարտակի հրամանատարի կին էլ տարօրինակ կին էր, սպայի հագուստ էր հագնում և երեկոները ձիով լեռներն էր գնում՝ մենակ, առանց ուղեցույցի։ Ասում են, որ աուլներում նա ռոման ուներ ինչ-որ իշխանիկի հետ։

— Երկնայի՜ն թագուհի, մա՜յր աստվածածին...— հրգոց է հանում Դարյուշկան։

— Իսկ ինչպե՞ս էին խմում։ Ինչպե՞ս էին ուտում։ Իսկ ի՜նչ թունդ լիբերալներ կային։

Անդրեյ Եֆիմիչը ականջ է դնում ու չի լսում. նա ինչ-որ բան է մտածում և խմում է մի կում գարեջուր։

— Երազումս ես հաճախ եմ տեսնում խելոք մարդիկ և զրուցում նրանց հետ,— ասում է նա անսպասելի կերպով, Միխայիլ Ավերյանիչին ընդհատելով։— Հայրս ինձ հիանալի կրթություն է տվել, բայց վաթսունական թվականների գաղափարների ազդեցության տակ ինձ հարկադրել է բժիշկ դառնալ։ Ինձ թվում է, որ եթե ես նրան այն ժամանակ լսեի, հիմա մտավոր շարժման բուն կենտրոնում կգտնվեի։ Հավանորեն մի որևիցե ֆակուլտետի անդամ կլինեի։ Իհարկե, խելքը ևս հավիտենական չէ ու անցողիկ է, բայց դուք արդեն գիտեք, թե ես ինչու եմ նրա կողմը հակված։ Կյանքը մի տհաճ թակարդ է։ Երբ խորհող մարդը չափահաս է դառնում և կատարյալ գիտակցության գալիս, ակամա իրեն զգում է ասես մի թակարդի մեջ, որից ելք չկա։ Եվ իրոք. իր կամքին հակառակ՝ ինչ-որ պատահականություններ են չգոյությունից նրան կյանքի կոչել... Ինչո՞ւ։ Նա ցանկանում է իմանալ իր գոյության իմաստն ու նպատակը, նրան այդ չեն ասում կամ թե անհեթեթություններ են ասում. նա բախում է, նրա առաջ դուռ չեն բացում. գալիս է նրա մահը, նույնպես նրա կամքին հակառակ։ Եվ ահա, ինչպես որ բանտում ընդհանուր դժբախտությամբ միմյանց հետ կապված մարդիկ իրենց ավելի լավ են զգում, երբ հավաքվում են իրար մոտ, այդպես էլ կյանքում թակարդը չի նկատվում, երբ վերլուծության ու ընդհանրացումների հակում ունեցող մարդիկ հավաքվում են իրար մոտ և ժամանակն անց են կացնում վեհ, ազատամիտ գաղափար-

ների շուրջ մտքեր փոխանակելով։ Այս իմաստով խելքն անփոխարինելի բավականություն է։

— Միանգամա՞յն ճիշտ է։

Զրուցակցի աչքերին չնայելով, կամաց ու դադարներով Անդրեյ Եֆիմիչը շարունակում է խոսել խելոք մարդկանց և նրանց հետ զրույց անելու մասին, իսկ Միխայիլ Ավերյանիչն ուշադիր լսում է նրան և համաձայնում նրա հետ. «Միանգամա՞յն ճիշտ է»։

— Իսկ դուք հոգու անմահությանը չե՞ք հավատում,— հանկարծ հարցնում է փոստի պետը։

— Ո՞չ, հարգելի Միխայիլ Ավերյանիչ, չե՛մ հավատում և հավատալու հիմք չունեմ։

— Ճշմարիտն ասած՝ ես էլ եմ կասկածում։ Թեպետ, ի դեպ, ես այնպիսի զգացում ունեմ, կարծես թե երբեք չեմ մեռնելու։ Ո՞հ, մտածում եմ ինքս ինձ՝ քավթառ ծերուկ, ժամանակն է, որ մեռնես։ Իսկ սրտումս ինչ-որ ձայնիկ ասում է՝ մի՛ հավատա, չես մեռնի...

Ժամը ինն անց Միխայիլ Ավերյանիչը գնում է։ Նախասենյակում մուշտակը հագնելիս՝ նա հառաչելով ասում է.

— Բայց բախտն այս ի՞նչ խուլ անկյուն է գցել մեզ։ Եվ ամենից ցավալին այն է, որ հենց այստեղ էլ վիճակվելու է մեռնել։ Է՛հ...

VII

Բարեկամին ճանապարհ դնելուց հետո Անդրեյ Եֆիմիչը նստում է սեղանի մոտ և նորից սկսում է կարդալ։ Ոչ մի ձայն չի խանգարում երեկոյի և ապա գիշերվա խաղաղությունը, և ժամանակը կարծես թե կանգ է առնում ու գրքին խոնարհված բժշկի հետ միասին անշարժանում. և թվում է, ոչինչ գոյություն չունի, բացի այդ գրքից ու կանաչ լուսամփոփով լամպից։ Բժշկի կոպիտ, գեղջկական դեմքը կամաց-կամաց լուսավորվում է խանդաղատանքի ու հրճվանքի ժպիտով, որ պատճառում է նրան մարդկային խելքի շարժմունքը։ Օ՜, ինչո՞ւ մարդն անմահ չէ, մտածում է նա։ Ինչի՞ համար են ուղեղի կենտրոններն ու ծալքերը, ինչի՞ համար են տեսողությունը, լեզուն, ինքնազգացումը, հանճարը, եթե այդ բոլորին վիճակված է հողն անցնելու և, վերջիվերջո, երկրագնդի կեղևի հետ մեկտեղ սառչելու և ապա միլիոնավոր տարիներ երկրագնդի հետ միասին անիմաստ ու աննպատակ պտտվելու արեգակի շուրջը։ Սառչելու և ապա պտտվելու համար բոլորովին էլ կարիք չկա չգոյությունից դուրս բերել մարդուն՝ նրա վեհ, համարյա աստվածային խելքով ու հետո, ասես ծաղրելով, հող դարձնել նրան։

Նյութերի փոխանակությո՞ւն։ Բայց ի՞նչ վախկոտություն է անմահության այդ սուռոգատով իրեն մխիթարելը։ Բնության մեջ տեղի ունեցող անգիտակից պրոցեսները ցածր են մինչև իսկ մարդկային հիմարությունից, որովհետև հիմարության մեջ, այնուամենայնիվ, կա գիտակցություն և կամք, իսկ պրոցեսների մեջ բացարձակապես ոչինչ չկա։ Միայն երկչոտը, որի մեջ մահվան երկյուղ ավելի շատ կա, քան արժանապատվություն, կարող է մխիթարել իրեն նրանով, որ իր մարմինը ժամանակով ապրելու է խոտի, քարի, դոդոշի մեջ... Իր անմահությունը նյութերի փոխանակության մեջ տեսնելը նույնքան տարօրինակ է, որքան պատյանին փայլուն ապագա գուշակելն այն բանից հետո, երբ թանկագին ջութակը ջարդվել է և անպետքացել։

Երբ ժամացույցը խփում է, Անդրեյ Եֆիմիչը ետ է ընկնում բազկաթոռի թիկունքին ու փակում աչքերը, որպեսզի մի քիչ մտածի։ Եվ պատահականորեն, գրքում կարդացած լավ մտքերի ազդեցության տակ, նա մի հայացք է նետում դեպի իր անցյալը և ներկան։ Անցյալը զզվելի է, ավելի լավ է այն չհիշել։ Իսկ ներկան նույնն է, ինչ և անցյալը։ Նա գիտե, որ այն պահին, երբ իր մտքերը սառած երկրագնդի հետ միասին պտտվում են արեգակի շուրջը, իր բժշկական բնակարանի կողքին, մեծ տան մեջ մարդիկ տառապում են հիվանդություններից ու կեղտոտության մեջ. միգուցե մեկնումեկն անքուն է և կռվում է միջատների դեմ, մեկնումեկը վարակվում է կարմիր քամիով կամ տնքում է խիստ ամուր կապած վիրակապից. գուցե հիվանդները հիվանդապահուհիների հետ թուղթ են խաղում և օղի խմում։ Հաշվետու տարում խաբել են տասներկու հազար մարդու, ամբողջ հիվանդանոցային գործը, ինչպես և քսան տարի առաջ, կառուցված է գողության, բանսարկությունների, բամբասանքների, խնամության, կոպիտ շառլատանության վրա, և հիվանդանոցն առաջվա նման անբարոյական և բնակիչների առողջության համար վերին աստիճանի վնասակար մի հիմնարկություն է։ Նա գիտե, որ № 6 հիվանդասենյակում ճաղերի հետևում Նիկիտան ծեծում է հիվանդներին, և որ Մոիսեյկան ամեն օր շրջում է քաղաքում ու ողորմություն հավաքում։

Մյուս կողմից էլ նրան հիանալի հայտնի է, որ վերջին քսան-հինգ տարվա ընթացքում բժշկական գիտությունը հեքիաթային փոփոխություն է կրել։ Երբ նա համալսարանում սովորում էր, նրան թվում էր, թե բժշկագիտությունը շուտով ընկնելու է այն վիճակի մեջ, ինչ և ալքիմիան ու մետաֆիզիկան, իսկ հիմա, երբ նա գիշերները կարդում է, բժշկագիտությունը նրան հուզում է և նրա մեջ առաջացնում զարմանք ու մինչև իսկ հրճվանք։ Իրոք որ, ի՜նչ անսպասելի փայլ, ի՜նչ հեղափոխություն։ Անտիսեպտիկայի շնորհիվ այնպիսի վիրահատություններ են անում, որոնք մեծ Պիրոգովն անհնարին էր համարում մինչև անգամ in spe[1]։ Սովորական զեմստվոյական բժիշկները սիրտ են անում կատարելու ծնկի հոդի ռեզեկցիա, հարյուր որովայնահերձությունը տալիս է մի մահվան դեպք, իսկ քարագոյացման հիվանդությունն այնպիսի դատարկ բան է համարվում, որ դրա մասին մինչև իսկ չեն գրում։ Արմատապես բժշկվում է սիֆիլիսը։ Հապա ժառանգականության թեորիա՞ն, հիպնոտի՞զմը, Պաստյորի և Կոխի գյուտե՞րը, առողջաբանությունն ու վիճակագրությո՞ւնը, հապա մեր ռուսական զեմստվային բժշկագիտությո՞ւնը։ Իսկ հոգեբուժությունը,— հիվանդությունների իր այժմյան դասակարգությամբ, նրանց որոշման ու բուժման մեթոդներով,— առաջներում եղածի հետ համեմատած՝ այդ մի ամբողջ էլբրուս է։ Հիմա խելագարների գլխին սառը ջուր չեն լցնում և նրանց տենդաշապիկ չեն հագցնում. նրանց մարդավայել են պահում և մինչև իսկ, ինչպես լրագրերում են գրում, նրանց համար ներկայացումներ ու պարահանդեսներ են կազմակերպում։ Անդրեյ Եֆիմիչը գիտե, որ ներկայիս հայացքների և ճաշակի առկայությամբ այնպիսի մի գարշելի բան, ինչպիսին № 6 հիվանդասենյակն է, հնարավոր է թերևս միայն երկաթուղուց երկու հարյուր վերստ հեռավորության վրա, մի փոքրիկ քաղաքում, որտեղ քաղաքագլուխը և բոլոր ձայնավորները կիսագրագետ քաղքենիներ են, որոնք հանձին բժշկի տեսնում են մի քուրմի, որին պետք է հավատալ առանց որևէ քննադատության, թեկուզ նա հալած անագ լցնի բերանդ. իսկ մի ուրիշ տեղ հասարակությունը և լրագրերը այդ փոքրիկ Բաստիլիայի փոշին արդեն վաղուց քամուն տված կլինեին։

«Սակայն ի՞նչ օգուտ,— հարց է տալիս Անդրեյ Եֆիմիչն ինքն իրեն՝ աչքերը բանալով։— Դրանից ի՞նչ օգուտ Ե՛վ վարակի կանխում կա, և՛ Կոխ, և՛ Պաստյոր, բայց բանի էությունը բնավ չի փոխվել։ Հիվանդացումներն ու մահացությունը նույնն են մնացել։ Խելագարների համար պարահանդեսներ և ներկայացումներ են կազմակերպում, սակայն, այդուհանդերձ, նրանց ազատ չեն արձակում։ Նշանակում է, բոլորը դատարկ բան է և ունայնություն. և ոչ մի զանազանություն Վիեննայի լավագույն կլինիկայի և իմ հիվանդանոցի միջև, իսկապես ասած, չկա»։

Բայց թախիծը և նախանձի նման ինչ-որ զգացում խանգարում են նրան անտարբեր լինելու։ Դե, երևի, հոգնածությունից է։ Ծանրացած գլուխն իջնում է գրքի վրա, նա ձեռքերին է դնում երեսը, որպեսզի փափուկ լինի, և մտածում է.

«Ես վնասակար գործի եմ ծառայում և ոռճիկ ստանում եմ այն մարդկանցից, ում խաբում եմ. ես ազնիվ մարդ չեմ։ Բայց չէ որ ինքնին վերցրած ես ոչնչություն եմ, ես անհրաժեշտ սոցիալական չարիքի մի մասնիկն եմ միայն. բոլոր գավառական չինովնիկները վնասակար են և անտեղի ոռճիկ են ստանում... Նշանակում է՝ իմ անազնվության համար մեղավոր եմ ոչ թե ես, այլ ժամանակը... Եթե ես մի երկու հարյուր տարի ուշ ծնվեի, ուրիշ մարդ կլինեի»։

Երբ խփում է ժամը երեքը, նա հանգցնում է լամպն ու գնում է ննջարան։ Նրա քունը չի տանում։

VIII

Սրանից մի երկու տարի առաջ զեմստվոյի առատաձեռնությունը բռնեց և նա որոշում կայացրեց մինչև զեմստվային հիվանդանոց բաց անելը քաղաքային հիվանդանոցի բուժական անձնակազմն ուժեղացնելու համար տարեկան երեք հարյուր ռուբլի նպաստ տալ, և Անդրեյ Եֆիմիչին օգնելու համար քաղաք հրավիրեց գավառական բժիշկ Եվգենի Ֆյոդորիչ Խորոտովին։ Դա դեռևս շատ երիտասարդ մի մարդ է, երեսուն տարեկան էլ չկա. լայն այտոսկրերով ու փոքրիկ աչքերով, բարձրահասակ, թուխ մարդ է. հավանորեն նրա նախնիները այլազգի են եղել։ Քաղաք եկավ նա առանց գրպանում մի գրոշ ունենալու, հետը բերելով մի փոքրիկ ճամպրուկ և մի երիտասարդ տգեղ կին, որին նա անվանում էր իր խոհարարուհին։ Այդ կինը ծծկեր երեխա ունի։ Եվգենի Ֆյոդորիչը գնում է հովարավոր գլխարկ, հագնում

[1] Ապագայում (լատ.)։

է սապոգներ, իսկ ձմռանը՝ կիսամուշտակ։ Նա մտերմացել է բուժակ Սերգեյ Սերգեյիչի և դանձապետի հետ, իսկ մնացած չինովնիկներին, չգիտես ինչու, անվանում է արիստոկրատներ և նրանցից հեռու է մնում։ Նրա ամբողջ բնակարանում միայն մեկ գիրք կա՝ «Վիեննայի կլինիկայի 1881 թվականի նորագույն դեղատոմսերը»։ Հիվանդի մոտ գնալիս նա իր հետ միշտ վերցնում է և այդ գրքույկը։ Երեկոները նա ակումբում բիլիարդ է խաղում, իսկ թղթախաղ չի սիրում։ Խոսելիս մեծ սիրահար է գործածելու այնպիսի բառեր, ինչպես՝ կանիտել, քացախով մանտիֆոլիա, բավական է բանը մթագնես և այլն։

Հիվանդանոցում նա լինում է շաբաթը երկու անգամ, այցելում է հիվանդասենյակներում պառկած հիվանդներին և կատարում է երթևեկ հիվանդների ընդունելություն։ Վարակումը կանխող միջոցների լիակատար բացակայությունը և արնածծիչ բանկաները նրան զայրացնում են, բայց Անդրեյ Եֆիմիչին վիրավորելուց վախենալով՝ նա նոր կարգեր չի մտցնում։ Իր պաշտոնակից Անդրեյ Եֆիմիչին նա հին խարդախ է համարում, կասկածում է, որ նա մեծ միջոցներ ունի և գաղտնի նախանձում է նրան։ Նա սիրով կգրավեր Անդրեյ Եֆիմիչի տեղը։

IX

Գարնան մի երեկո, մարտի վերջերին, երբ գետնի երեսին այլևս ձյուն չկար, և հիվանդանոցի այգում սարյակներ էին երգում, բժիշկը դուրս եկավ իր բարեկամ փոստապետին մինչև դարպասը ճանապարհ դնելու։ Հենց այդ պահին բակ էր մտնում ավարից վերադարձող ջհուդ Մոիսեյկան։ Նրա գլխին գդակ չկար, բոբիկ ոտքերին հագել էր սաղր կրկնակոշիկներ և ձեռքին բռնած ուներ մի փոքրիկ քսակ՝ ողորմություն ստացած դրամով։

— Մի կոպեկ տա՛ս,— դիմեց նա բժշկին, ցրտից դողալով ու ժպտալով։

Անդրեյ Եֆիմիչը, որ երբեք չէր կարողանում մերժել, նրան ողորմություն տվեց մի տասը կոպեկանոց։

«Այս ի՞նչ վատ բան է,— մտածեց նա, նայելով Մոիսեյկայի մերկ ոտքերին ու կարմրած, վտիտ կոճերին։— Չէ՞ որ եղանակը խոնավ է»։

Եվ դրդված մի զգացումից, որը նման էր և՛ կարեկցության, և՛ զզվանքի, նա հրեայի հետևից ֆլիգել գնաց՝ մեկ նրա ճաղատին նայելով, մեկ ոտքերի կոճերին։ Երբ բժիշկը ներս մտավ, Նիկիտան վեր թռավ հնոտիների կույտի վրայից ու ձիգ կանգնեց։

— Բարև՛, Նիկիտա,— ասաց Անդրեյ Եֆիմիչը մեղմությամբ,— արդյոք չէ՞ր կարելի այս հրեային կոշիկ տալ, ապա թե ոչ կմրսի։

— Լսում եմ, ձերդ գերազանցություն։ Ես կզեկուցեմ վերակացուին։

— Բարի եղիր։ Դու խնդրիր նրան իմ անունից։ Ասա՛, որ ես եմ խնդրել։

Նախասենյակից հիվանդասենյակ տանող դուռը բաց էր։ Իվան Դմիտրիչը արմունկին հենված՝ պառկած էր անկողնում և անհանգստացած ականջ էր դնում օտար ձայնին. նա հանկարծ ճանաչեց բժշկին։ Զայրույթից նա ամբողջ մարմնով ցնցվեց, վեր թռավ տեղից, երեսը կարմրած, չարացած աչքերը ճակատը թռած՝ վազեց հիվանդասենյակի մեջտեղը։

— Բժի՞շկն է եկել,— գոչեց նա ու քրքջաց։— Վերջապե՛ս։ Պարոնա՛յք, շնորհավորում եմ, բժիշկը մեզ արժանացնում է իր այցելությանը։ Անիծվա՛ծ զեռուն,— ճղճղաց նա և այնպիսի մոլեգնությամբ, որ երբեք չէին տեսել հիվանդասենյակում, ոտքը հատակին խփեց։— Սպանե՛լ այդ զեռունին։ Ո՞չ, սպանելը քիչ է։ Գցե՛լ արտաքնոցը, խեղդե՛լ այնտեղ։

Անդրեյ Եֆիմիչը, լսելով այդ, նախասենյակից հիվանդասենյակի ներսը նայեց և հարցրեց մեղմորեն.

— Ինչի՞ համար։

— Ինչի՞ համար,— բղավեց Իվան Դմիտրիչը, սպառնալից տեսքով նրան մոտենալով և ջղաձգաբար փաթաթվելով խալաթի մեջ։— Ինչի՞ համար։ Գո՛ղ,— արտասանեց նա զզվանքով ու շրթունքներին այնպիսի ձև տալով, ասես ցանկանում էր թքել։— Շառլատա՛ն։ Դահի՛ճ։

— Հանգստացե՛ք,— ասաց Անդրեյ Եֆիմիչը՝ մեղավորի ժպիտով։— Հավատացնում եմ ձեզ, ես երբեք և ոչինչ չեմ գողացել, իսկ մնացածը դուք, հավանորեն, խիստ չափազանցնում եք։ Ես տեսնում եմ, որ դուք բարկացած եք ինձ վրա։ Հանգստացե՛ք, խնդրում եմ ձեզ, եթե կարող եք, և ասեք սառնասրտությամբ՝ ինչի՞ համար եք բարկացած։

— Իսկ դուք ինչո՞ւ եք ինձ այստեղ պահում։

— Նրա համար, որ դուք հիվանդ եք։

— Հա՛, հիվանդ եմ։ Բայց չէ՞ որ տասնյակ, հարյուրավոր

խելագարներ սղատ շրջում են, որովհետև ձեր տգիտությունն անընդունակ է նրանց առողջներից զանազանելու։ Իսկ ինչո՞ւ ե՛ս և այս դժբախտները պետք է նստենք այստեղ բոլորի տեղը, որպես քավության նոխազներ։ Դուք, բուժակը, վերակացուն և հիվանդանոցի բոլոր սրիկաները բարոյական տեսակետից անչափելիորեն ցածր եք մեր յուրաքանչյուրից. իսկ ինչո՞ւ ենք մենք այստեղ նստած, իսկ դուք՝ ո՛չ։ Որտե՞ղ է տրամաբանությունը։

— Բարոյական հանգամանքները և տրամաբանությունն այստեղ դեր չունեն։ Բոլորը կախված է դիպվածից։ Ում նստեցրել են, նա էլ նստած է, իսկ ում չեն նստեցրել, նա զբոսնում է, ահա բոլորը։ Որ ես բժիշկ եմ, իսկ դուք հոգեկան հիվանդ՝ դրա մեջ ո՛չ բարոյական բան չկա, ոչ էլ տրամաբանություն, այլ կա միայն դատարկ պատահականություն։

— Այդ դատարկաբանությունը ես չեմ հասկանում...— խուլ ձայնով ասաց Իվան Դմիտրիչը և նստեց իր մահճակալին։

Մոիսեյկան, որին Նիկիտան քաշվել էր բժշկի ներկայությամբ խուզարկել, իր անկողնի վրա դասավորել էր հացի պատառներ, թղթի կտորներ ու ոսկորներ և տակավին ցրտից դողալով՝ արագ ու երգեցիկ եղանակով ինչ-որ բան ասաց հրեերեն։ Երևի նա երևակայեց, թե կրպակ է բացել։

— Ինձ ազատ արձակեցեք,— ասաց Իվան Դմիտրիչը, և նրա ձայնը դողաց։

— Չեմ կարող։

— Բայց ինչո՞ւ։ Ինչո՞ւ։

— Որովհետև այդ իմ իշխանությունից դուրս է։ Ինքներդ դատեցեք՝ ձեզ բաց թողնելուց ի՞նչ օգուտ։ Ասենք գնացիք։ Քաղաքացիները կամ ոստիկանությունը ձեզ կբռնեն և ետ կբերեն։

— Այո՛, այո՛, այդ ճիշտ է...— ասաց Իվան Դմիտրիչը և ճակատը շփեց։— Սարսափելի դրություն է։ Բայց ես ի՞նչ անեմ։ Ի՞նչ։

Իվան Դմիտրիչի ձայնը և նրա երիտասարդ, խելոք դեմքը՝ ծամածռություններով հանդերձ, դուր եկան Անդրեյ Եֆիմիչին։ Նա ուզեց փաղաքշել և հանգստացնել այդ երիտասարդին։ Անդրեյ Եֆիմիչը նստեց նրա կողքին, անկողնի վրա, մտածեց ու ասաց.

— Դուք հարցնում եք, թե ի՞նչ անել։ Գտնվելով այսպիսի

վիճակում՝ ձեզ համար ամենալավագույնն է փախչել այստեղից։ Բայց, ցավոք սրտի, այդ անօգուտ է։ Ձեզ կբռնեն։ Երբ հասարակությունը պաշտպանում է իրեն ոճրագործներից, հոգեկան հիվանդներից և ընդհանրապես անհարմար մարդկանցից, նա անհաղթելի է։ Ձեզ մի բան է մնում՝ հանգստանալ, մտածելով, որ ձեր այստեղ մնալն անհրաժեշտ է։

— Այդ ոչ ոքի պետք չէ։

— Քանի որ գոյություն ունեն բանտեր և գժանոցներ, դե, ուրեմն, մեկնումեկը պետք է նստի այնտեղ։ Եթե ոչ դուք, ապա ես, ոչ ես, ապա մի որևէ երրորդը։ Սպասեցեք, մինչև հեռավոր ապագայում բանտերի ու գժանոցների գոյության վերջը կգա, այլևս ոչ պատուհանները ճաղեր կունենան և ոչ էլ զսպաշապիկներ կլինեն։ Իհարկե, վաղ թե ուշ կգա այդպիսի ժամանակ։

Իվան Դմիտրիչը ծաղրաբար ժպտաց։

— Դուք կատակում եք,— ասաց նա՝ աչքերը կկոցելով։— Այնպիսի պարոնները, ինչպիսին դուք եք և ձեր օգնական Նիկիտան, ապագայի հետ ոչ մի գործ չունեն, բայց հավատացած կարող եք լինել, մեծարգո պարոն, կգան լավագո՛ւյն ժամանակներ։ Ոչինչ, որ գռեհիկ եմ արտահայտվում, ծիծաղեցե՛ք, բայց կշողա նոր կյանքի արշալույսը, ճշմարտությունը կհաղթի, և մեր փողոցում տո՛ն կլինի։ Ես այդ ժամանակին չեմ արժանանա, կսատկեմ, բայց որևէ մեկի ծոռները հո կարժանանա՛ն։ Ողջունո՛ւմ եմ նրանց ամբողջ սրտով և ուրախանո՛ւմ, ուրախանո՛ւմ նրանց փոխարեն։ Հառա՛ջ։ Թո՛ղ աստված օգնի ձեզ, բարեկամնե՛ր։

Իվան Դմիտրիչի աչքերը փայլեցին, նա ոտքի ելավ և, ձեռքերը տարածելով դեպի պատուհանը, հուզված ձայնով շարունակեց.

— Այս ճաղերի հետևից օրհնո՛ւմ եմ ձեզ։ Կեցցե՛ ճշմարտությունը։ Հրճվո՛ւմ եմ։

— Հրճվելու առանձին պատճառ ես չեմ գտնում,— ասաց Անդրեյ Եֆիմիչը, որին Իվան Դմիտրիչի շարժումը դերասանական թվաց և միևնույն ժամանակ շատ դուր եկավ։— Բանտեր և գժանոցներ չեն լինի, և ճշմարտությունը, ինչպես դուք բարեհաճեցիք արտահայտվել, կհաղթի, բայց չէ՞ որ իրերի էությունը չի փոխվի, բնության օրենքները դարձյալ նույնը կմնան։ Մարդիկ կհիվանդանան, կծերանան ու կմեռնեն ճիշտ այնպես, ինչպես և հիմա։ Ինչպիսի հիասքանչ արշալույս էլ որ լուսավորի

ձեր կյանքը, այսուամենայնիվ, վերջիվերջո ձեզ դագաղ կդնեն ու փոսը կնետեն։

— Հապա անմահությո՞ւնը։

— Է՛, դուք էլ ինչ եք ասում։

— Դուք չեք հավատում, դե՛, իսկ ես հավատում եմ։ Դոստոևսկու թե Վոլտերի մոտ ինչ-որ մեկն ասում է, որ եթե աստված չլիներ, մարդիկ նրան կստեղծեին։ Իսկ ես խորապես համոզված եմ, որ եթե անմահություն չկա, մարդու վեհ խելքը վաղ թե ուշ այն կհնարի։

— Լավ է ասված,— ասաց Անդրեյ Եֆիմիչը՝ բավականությունից ժպտալով։— Այդ լավ է, որ դուք հավատում եք։ Այդ հավատն ունենալով, մինչև անգամ ողջ-ողջ որմաթաղ արված վիճակում կարելի է իրեն երջանիկ զգալ։ Շնորհ արեք ասելու՝ դուք որևէ տեղ կրթություն ստացե՞լ եք։

— Այո՛, սովորել եմ համալսարանում, բայց չեմ ավարտել։

— Դուք մտածող և լրջմիտ մարդ եք։ Ամեն մի պարագայում դուք կարող եք ձեր հոգին խաղաղեցնել ձեր իսկ ունակությամբ։ Կյանքի ըմբռնման ձգտող ազատ և խոր մտածողությունը ու կատարյալ արհամարհանքը դեպի աշխարհի հիմար ունայնությունը,— ահա այն երկու բարիքները, որոնցից բարձրը մարդս երբեք չի տեսել։ Դուք ևս կարող եք տիրանալ դրանց, թեկուզև երեքտակ ճաղերի հետևում ապրելիս լինեք։ Դիոգենեսն ապրում էր տակառի մեջ, սակայն բոլոր երկրավոր թագավորներից երջանիկ էր։

— Ձեր Դիոգենեսը դդումի մեկն էր,— մռայլ ասաց Իվան Դմիտրիչը։— Ի՞նչ եք ինձ պատմում Դիոգենեսից և ինչ-որ ըմբռնումից,— հանկարծ բարկացավ նա և տեղից թռավ։— Ես սիրո՞ւմ եմ կրքոտությա՞մբ։ Ես ունեմ մտամոլություն, թե ինձ հալածում են, և մի մշտական տանջող վախ, բայց լինում են րոպեներ, երբ ինձ համակում է կյանքի ծարավը, և այն ժամանակ ես վախենում եմ, թե կիսելագարվեմ։ Սոսկալի՜ ապրել եմ ուզում, սոսկալի՜։

Նա հուզված քայլեց հիվանդասենյակում և, ձայնը ցածրացնելով, ասաց.

— Երբ ես երազում եմ, ինձ ուրվականներ են այցելում։ Ինչ-որ մարդիկ են գալիս ինձ մոտ, ես լսում եմ ձայներ, երաժշտություն, և ինձ թվում է, թե ես զբոսնում եմ ինչ-որ անտառներում. ծովի ափին, և այնպես բուռն կերպով ցանկանում եմ

իրարանցում, հոգսեր... Ասե՛ք ինձ, դե՛, այնտեղ ի՞նչ նորություն կա,— հարցրեց Իվան Դմիտրիչը։— Ի՞նչ կա այնտեղ։

— Դուք քաղաքի՞ մասին եք ցանկանում իմանալ, թե՞ ընդհանրապես։

— Դե՛, նախ ինձ պատմեցեք քաղաքի մասին, իսկ հետո՝ ընդհանրապես։

— Ի՞նչ ասեմ։ Քաղաքում տաղտկալի ձանձրույթ է տիրում... Չկա մեկը, որի հետ մի խոսք փոխանակես, չկա մեկը, որին լսես։ Նոր մարդիկ չկան։ Սակայն մոտ ժամանակներս եկավ երիտասարդ բժիշկ Խորոտովը։

— Նա մի օրով է եկել։ Հը՛, անտա՞շ մարդ է։

— Այո՛, կուլտուրական մարդ չէ։ Տարօրինակ է, գիտեք... Ամեն ինչից դատելով, մեր մայրաքաղաքներում մտավոր լճացում չկա, կա շարժում. նշանակում է, այնտեղ իսկական մարդիկ էլ պետք է լինեն, բայց, չգիտես ինչու, ամեն անգամ այնտեղից այնպիսի մարդիկ են ուղարկում մեզ մոտ, որ երեսներին էլ նայելու չէ։ Դժբա՞խտ քաղաք է։

— Այո՛, դժբախտ քաղաք է,— հառաչեց Իվան Դմիտրիչը և ծիծաղեց։— Իսկ ընդհանրապես ինչպե՞ս է։ Լրագրերում և ժուռնալներում ի՞նչ են գրում։

Հիվանդասենյակում արդեն մութն էր։ Բժիշկը ոտքի կանգնեց և կանգնած սկսեց պատմել, թե ի՞նչ են գրում արտասահմանում ու Ռուսաստանում և ներկայումս մտքի ինչ ուղղություն է նկատվում։ Իվան Դմիտրիչն ուշադիր լսում և հարցեր էր տալիս, բայց հանկարծ, կարծես ինչ-որ սոսկալի բան հիշելով, գլուխը բռնեց և պառկեց անկողնի վրա՝ թիկունքը բժշկին դարձրած։

— Ձեզ ի՞նչ պատահեց,— հարցրեց Անդրեյ Եֆիմիչը։

— Դուք այլևս ինձանից ո՛չ մի բառ չեք լսի,— կոպտաբար խոսեց Իվան Դմիտրիչը։— Թողե՛ք ինձ։

— Իսկ ինչո՞ւ։

— Ասում եմ ձեզ՝ թողե՛ք։ Ինձնից ի՞նչ եք ուզում։

Անդրեյ Եֆիմիչը թոթվեց ուսերը, հառաչեց ու դուրս գնաց։ Նախասենյակից անցնելիս նա ասաց.

— Արդյոք չէ՞ր կարելի այստեղ մաքրել, Նիկիտա... Սոսկալի՜ ծանր հոտ է։

— Լսում եմ, ձերդ գերազանցություն։

«Ի՜նչ հաճելի երիտասարդ է,— մտածում էր Անդրեյ Եֆիմի-

ը՝ տուն գնալով։— Այն ամբողջ ժամանակվա ընթացքում, որ ես ապրում եմ այստեղ, կարծեմ, սա առաջին մարդն է, որի հետ կարելի է զրուցել։ Նա կարողանում է դատել և հետաքրքրվում է հենց նրանով, ինչով պետք է»։

Կարդալու ժամանակ և ապա երբ պառկեց քնելու, նա միշտ մտածում էր Իվան Դմիտրիչի մասին, իսկ հաջորդ առավոտյան, արթնանալով, հիշեց, որ երեկ ծանոթացել է մի խելացի ու հետաքրքրական մարդու հետ և վճռեց առաջին իսկ հնարավորության դեպքում մեկ անգամ էլ գնալ նրա մոտ։

X

Իվան Դմիտրիչը պառկած էր նույնպիսի դիրքով, ինչպես երեկ՝ ձեռքերով գլուխը բռնած և ոտքերը ծալած։ Նրա դեմքը չէր երևում։

— Բարև՛, բարեկամս,— ասաց Անդրեյ Եֆիմիչը։— Դուք քնած չե՞ք։

— Նախ՝ ես ձեր բարեկամը չեմ,— խոսեց Իվան Դմիտրիչը՝ բերանը բարձին դրած,— իսկ երկրորդ՝ դուք իզուր եք ջանք թափում. ինձանից ո՛չ մի բառ չեք կարող կորզել։

— Տարօրինակ է...— քրթմնջաց Անդրեյ Եֆիմիչը՝ շփոթված։— Երեկ մենք այնպես խաղաղ էինք զրուցում, բայց դուք, չգիտես ինչու, հանկարծ վիրավորվեցիք և մեկից ընդհատեցիք խոսակցությունը... Երևի ես որևէ կերպ անհարմար արտահայտվեցի կամ, գուցե, ձեր համոզմունքներին չներդաշնակող մի՞տք հայտնեցի...

— Հա՛, ես էլ հենց հավատացի՛ ձեզ, էլի՛,— ասաց Իվան Դմիտրիչը՝ կիսաբարձրանալով և ծաղրական ու անհանգիստ նայելով բժշկին. նրա աչքերը կարմրած էին։— Լրտեսելու և կըտտանքների ենթարկելու կարող եք գնալ մի ուրիշ տեղ, իսկ այստեղ դուք գործ չունեք։ Ես դեռ երեկ հասկացա, թե դուք ինչու էիք եկել։

— Տարօրինա՛կ երևակայություն է,— ժպտաց բժիշկը։— Ուրեմն դուք ենթադրում եք, թե ես լրտե՞ս եմ։

— Այո՛, ենթադրում եմ... Լրտես կամ մի բժիշկ, որի մոտ ինձ պառկեցրել են փորձարկության համար,— այդ միևնույն է։

— Ա՜խ, դուք ինչ... ներեցեք... խենթն եք։

Բժիշկը նստեց նրա անկողնի մոտ գտնվող տաբուրետին և հանդիմանաբար օրորեց գլուխը։

— Բայց ենթադրենք թե դուք ճշմարիտ եք,— ասաց նա։— Ենթադրենք թե ես դավաճանաբար բռնում եմ ձեզ ձեր ասածով, որպեսզի մատնեմ ոստիկանությանը։ Ձեզ ձերբակալում են ու հետո դատում։ Բայց մի՞թե դատարանում և բանտում դուք ձեզ ավելի վատ եք զգալու, քան այստեղ։ Իսկ եթե աքսորեն ուրիշ տեղ՝ բնակվելու և մինչև անգամ ուղարկեն տաժանակիր աշխատանքի, մի՞թե այդ ավելի վատ կլինի, քան այս ֆլիգելում նստելը։ Ենթադրում եմ, որ ավելի վատ չէ... էլ ինչո՞ւ վախենալ։

Ըստ երևույթին, այս բառերն ազդեցին Իվան Դմիտրիչի վրա։ Նա հանգիստ նստեց։

Երեկոյան ժամը չորսն անց էր,— դա այն ժամանակն էր, երբ Անդրեյ Եֆիմիչը սովորաբար շրջում էր իր սենյակներում, և Դարյուշկան հարցնում էր նրան, թե գարեջուր խմելու ժամանակը չէ՞ արդյոք։ Դուրսը խաղաղ, պարզ եղանակ էր։

— Իսկ ես ճաշից հետո դուրս եկա զբոսնելու և ահա անցա ձեզ մոտ, ինչպես տեսնում եք,— ասաց բժիշկը։— Կատարյալ գարուն է։

— Հիմա ո՞ր ամիսն է։ Մա՞րտը,— հարցրեց Իվան Դմիտրիչը։

— Այո՛, մարտի վերջն է։

— Դուրսը ցե՞խ է։

— Ո՛չ, շատ ցեխ չէ։ Պարտեզում արդեն շավիղներ կան։

— Հիմա լավ կլիներ կառքով որևէ տեղ քաղաքից դուրս գնալ,— ասաց Իվան Դմիտրիչը, տրորելով իր կարմրած աչքերը, ասես քնից նոր արթնանալով.— հետո վերադառնալ տուն՝ տաք, բարեհարմար առանձնասենյակը և... և մի կարգին բժշկի մոտ բուժել գլխացավը... Վաղուց է ես մարդավարի չեմ ապրել։ Իսկ այստեղ խիստ վա՜տ է։ Անհանդուրժելի՜ վատ է։

Երեկվա հուզմունքից հետո նա հոգնած էր ու թուլացած և դժկամությամբ էր խոսում։ Նրա մատները դողում էին, և դեմքից երևում էր, որ գլուխը սաստիկ ցավում է։

— Տաք, բարեհարմար առանձնասենյակի և այս հիվանդասենյակի միջև ոչ մի զանազանություն չկա,— ասաց Անդրեյ Եֆիմիչը։— Մարդու հանգստությունն ու բավականությունը ոչ թե իրենից դուրս է, այլ հենց իր մեջ։

— Այսինքն ինչպե՞ս։

— Սովորական մարդը՝ լավը կամ վատը սպասում է իրենից դուրս, այսինքն՝ կառքից և առանձնասենյակից, իսկ խորհողը՝ ինքն իրենից։

— Գնացե՛ք այդ փիլիսոփայությունը քարոզեցեք Հունաստանում, որտեղ տաք է և նարնջի հոտ է բուրում, իսկ այստեղ՝ այդ մեր կլիմային հարմար չէ։ Ես այն ո՞ւմ հետ էի խոսում Դիոգենեսի մասին։ Ձեզ հե՞տ էր, ինչ է։

— Այո՛, երեկ ինձ հետ։

— Դիոգենեսն առանձնակի և տաք շենքի կարիք չուներ, այնտեղ առանց դրան էլ շոգ է։ Պառկիր տակառի մեջ և նարինջ ու ձիթապտուղ կեր։ Իսկ եթե նրան վիճակվեր Ռուսաստանում ապրել, նա ոչ թե դեկտեմբերին, այլ մայիսին կխնդրեր սենյակ թողնել իրեն։ Հավանորեն ցրտից կուչ կգար։

— Ո՛չ։ Ցուրտը, ինչպես և ամեն մի ցավ, կարելի է չզգալ։ Մարկոս Ավրելիոսն ասել է. «Ցավը— ցավի կենդանի պատկերացումն է. կամքի ուժ գործադրիր այդ պատկերացումը փոխելու, դեն նետիր այն, դադարիր գանգատվել, և ցավը կանհետանա»։ Այս ճշմարիտ է։ Իմաստունը կամ պարզապես խորհող, լրջմիտ մարդն աչքի է ընկնում հատկապես նրանով, որ արհամարհում է տառապանքը. նա միշտ գոհ է և ոչ մի բանի վրա չի զարմանում։

— Ուրեմն ես ապուշ եմ, որովհետև ես տանջվում եմ, դժգոհ եմ և զարմանում եմ մարդու ստորության վրա։

— Դուք իզուր եք այդպես խոսում։ Եթե դուք հաճախակի խոր մտածեք, ապա կհասկանաք, թե որքան չնչին է այն բոլոր արտաքինը, որ մեզ հուզում է։ Հարկավոր է ձգտել կյանքի ըմբռնման, իսկ ճշմարիտ երանությունը դրա մեջ է։

— Ըմբռնում...— դեմքը կնճռոտեց Իվան Դմիտրիչը։— Արտաքին, ներքին... Ներեցե՛ք, ես այդ չեմ հասկանում։ Ես միայն գիտեմ,— ասաց նա՝ ոտքի կանգնելով ու բարկացած նայելով բժշկին,— ես գիտեմ, որ աստված ինձ ստեղծել է տաք արյունից ու նյարդերից, այո՛։ Իսկ օրգանական հյուսվածքը, եթե այն կենսունակ է, պետք է արձագանքի ամեն մի գրգիռի։ Եվ ես արձագանքո՞ւմ եմ։ Ցավին ես պատասխանում եմ ճիչով ու արցունքներով, ստորությանը՝ զայրույթով, գարշելիությանը՝ զզվանքով։ Ըստ իս՝ հենց այս է, որ կյանք է կոչվում։ Որքան ցածր է օրգանիզմը, այնքան քիչ զգայուն է և այնքան թույլ է արձագանքում գրգիռին, և որքան բարձր է օրգանիզմը, այնքան զգայունակ է նա ու ավելի եռանդագին է անդրադառնում իրականությանը։ Այս ինչպե՞ս կարելի է չիմանալ։ Բժիշկ է և այսպիսի դատարկ բաներ չգիտե՞։ Տանջանքն արհամարհելու, միշտ գոհ լինելու և ոչնչի վրա չզարմանալու համար հարկավոր է հասնել ահա այսպիսի դրության,— և Իվան Դմիտրիչը ցույց տվեց հաստ, ճարպակալած գեղջուկին,— կամ թե տանջանքներով իրեն այն աստիճան կոփել, որպեսզի կորչի տանջանքի ամեն մի զգացողություն, այսինքն, ուրիշ խոսքով ասած՝ մարդ դադարի ապրել։ Ներեցե՛ք, ես իմաստուն չեմ ու ոչ էլ փիլիսոփա,— շարունակեց Իվան Դմիտրիչը բորբոքված,— և դրանից ոչինչ չեմ հասկանում։ Ես ի վիճակի չեմ դատողություն անելու։

— Ընդհակառակը, դուք սքանչելի եք դատում։

— Ստոիկները, որոնց դուք այդպես ծաղրաբար նմանեցնում եք, խիստ հետաքրքրական մարդիկ էին, բայց նրանց ուսմունքն անշարժացավ տակավին երկու հազար տարի սրանից առաջ և մազաչափ անգամ առաջ չի շարժվել ու չի շարժվի, որովհետև գործնական ու կենսունակ չէ։ Այն հաջողություն է ունեցել միայն փոքրամասնության շրջանում, որն իր կյանքն անց է կացնում ամեն տեսակ ուսմունքներ սերտելով ու նրանց համի քաղցրությունը վայելելով, իսկ մեծամասնությունն այն չէր հասկանում։ Դեպի հարստությունը, դեպի կյանքի հարմարությունները՝ անտարբերություն, դեպի տանջանքն ու մահը՝ արհամարհանք քարոզող ուսմունքը բոլորովին անհասկանալի է հսկայական մեծամասնությանը, որովհետև այդ մեծամասնությունը երբեք ճաշակած չի եղել ոչ հարստությունը, ոչ էլ կյանքի հարմարությունները. իսկ տառապանքներն արհամարհելը նրա համար կնշանակեր արհամարհել բուն իսկ կյանքը, քանի որ մարդու ամբողջ էությունը կազմում են՝ քաղցի, ցրտի, վիրավորանքների, կորուստների և մահվան հանդեպ համլետյան ահի զգայությունները։ Այդ զգայությունները ողջ կյանքն են։ Այդ կյանքը կարող է բեռ թվալ, նրան կարելի է ատել, բայց ոչ արհամարհել։ Այո՛, այսպես է. կրկնում եմ՝ ստոյիկների ուսմունքը երբեք չի կարող ապագա ունենալ, իսկ կյանքի սկզբից մինչև այսօր առաջադիմում են, ինչպես տեսնում եք, պայքարը, զգայուն վերաբերմունքը դեպի ցավը, գրգռին պատասխանելու ընդունակությունը...

Իվան Դմիտրիչը հանկարծ կորցրեց մտքերի թելը, կանգ առավ և սրտնեղած շփեց ճակատը։

— Ուզում էի ինչ-որ կարևոր բան ասել, բայց շփոթվեցի,— ասաց նա։— Ի՞նչ էի ասում։ Հա՛։ Այսպես, ուրեմն, ես այս եմ ասում. ստոյիկներից մեկն իրեն ստրկության վաճառեց, որպեսզի փրկագնի իր մերձավորին։ Ա՛յ, տեսնում եք, ստոյիկն էլ է անդրադարձել զրգիռին, որովհետև մի այնպիսի մեծահոգի ակտի համար, ինչպիսին է իրեն ոչնչացնելը հանուն իր մերձավորի, հարկավոր է վրդովված, կարեկցող հոգի։ Ես այստեղ, այս բանտում մոռացել եմ բոլորը, ինչ սովորել էի, ապա թե ոչ էլի որևէ բան կհիշեի։ Իսկ Քրիստոսին եթե վերցնե՞նք։ Քրիստոսն իրականությանը պատասխանում էր նրանով, որ լալիս էր, ժպտում, տխրում, զայրանում, մինչև անգամ թախծում. նա ժպիտը դեմքին չէր ընդառաջ գնում տառապանքներին և չէր արհամարհում մահը, այլ աղոթում էր Գեթսեմանի պարտեզում, որպեսզի դառնության բաժակը հեռանա իրենից։

Իվան Դմիտրիչը ծիծաղեց և նստեց։

— Դիցուք թե մարդու հանգիստն ու գոհունակությունն իրենից դուրս չէ, այլ իր իսկ մեջ,— ասաց նա։— Դիցուք թե հարկավոր է արհամարհել տառապանքներն ու ոչնչի վրա չզարմանալ։ Բայց դուք ինչի՞ հիման վրա եք քարոզում այդ։ Դուք իմաստո՞ւն եք։ Փիլիսոփա՞ եք։

— Ո՛չ, ես փիլիսոփա չեմ, բայց դա պետք է քարոզեն ամենքը, որովհետև այդ խելացի բան է։

— Ո՛չ, ես ուզում եմ իմանալ՝ դուք ինչո՞ւ եք ձեզ ձեռնհաս համարում ըմբռնման, տառապանքների արհամարհման և այլ գործում։ Մի՞թե դուք երբևէ տանջվել եք։ Դուք տառապանքների մասին գաղափար ունե՞ք։ Սպասեք, երեխա ժամանակ ձեզ դանակոծե՞լ են։

— Ո՛չ, իմ ծնողները զզվանք էին տածում դեպի մարմնական պատիժները։

— Իսկ ինձ հայրս անողոքաբար դանակոծում էր։ Իմ հայրը խիստ բնավորության տեր, հեմորոյով տառապողի տեսքով մի երկարաքիթ ու դեղնավիզ չինովնիկ էր։ Բայց խոսենք ձեր մասին։ Ձեր ամբողջ կյանքի ընթացքում ձեզ ոչ ոք անգամ մատ չի դիպցրել, ոչ ոք ահ չի տվել, չի ծեծկել. եզան պես առողջ եք դուք։ Դուք մեծացել եք ձեր հոր թևի տակ և սովորել նրա հաշվին, իսկ հետո մեկ անգամից ստացել եք անաշխատ վարձատրվող պաշտոն։ Քսան տարուց ավելի դուք ապրել եք ձրի բնակարանում՝ ձրի վառելիքով, լուսավորությամբ, ծառայով,

ընդսմին, իրավունք ունենալով աշխատել ինչպես և ինչքան կկամենաք, թեկուզ ոչինչ չանել։ Բնությունից դուք ծույլ, փխրուն մարդ եք, ուստիև ջանացել եք ձեր կյանքն այնպես դասավորել, որպեսզի ձեզ ոչինչ չանհանգստացնի և տեղից չշարժի։ Գործերը դուք հանձնել եք բուժակին և մյուս սրիկաներին, իսկ ինքներդ նստել եք տաք ու խաղաղ ձեր տեղում, փող եք կուտակել, գիրք կարդացել, ձեզ հաճույք պատճառել զանազան բարձր և դատարկ բաների վերաբերյալ խորհրդածություններով և (Իվան Դմիտրիչը նայեց բժշկի կարմիր քթին) կոնծաբանությամբ։ Մի խոսքով՝ դուք կյանքը չեք տեսել, այն բոլորովին չգիտեք, իսկ իրականությանը ծանոթ եք միայն թեորիապես։ Իսկ տառապանքը դուք արհամարհում եք և ոչ մի բանի վրա չեք զարմանում մի շատ պարզ պատճառով. ունայնություն ունայնության, արտաքին և ներքին արհամարհանք դեպի կյանքը, տառապանքները և մահը, ըմբռնում, իսկական երանություն. այս բոլորը փիլիսոփայություն է, որ ամենից հարմարն է ռուս ծույլի համար։ Օրինակ, դուք տեսնում եք, թե գեղջուկն ինչպես է ծեծում իր կնոջը։ Ինչո՞ւ միջամտել։ Թո՛ղ ծեծի. միևնույն է՝ երկուսն էլ մեռնելու են վաղ թե ուշ, մանավանդ որ ծեծողն իր հարվածներով վիրավորում է ոչ թե նրան, ում ծեծում է, այլ հենց իրեն։ Հարբեցողությունը հիմար, անվայել բան է, բայց խմես էլ՝ պետք է մեռնես, չխմես էլ՝ պետք է մեռնես։ Ասենք, մի կին է գալիս, ատամները ցավում են... Դե՛, ի՞նչ կա որ։ Ցավը ցավի պատկերացումն է և, ի դեպ, հիվանդություններն էլ այս աշխարհում չես վերացնի, բոլորս էլ մեռնելու ենք. ուստիև՝ թո՛ղ, հեռացիր, ա՛յ կնիկ, ինձ մի խանգարիր մտածել և օդի խմել։ Երիտասարդը խորհուրդ է հարցնում, թե ինչ անի, ինչպես ապրի. նախքան պատասխանելը՝ մեկ ուրիշը կմտածեր, իսկ այստեղ պատասխանն արդեն պատրաստ է. ձգտիր ըմբռնման կամ ճշմարիտ երանության։ Իսկ ի՞նչ բան է այդ «ճշմարիտ երանությունը»։ Պատասխան չկա, իհարկե։ Մեզ այստեղ պահում են ճաղերի հետևում, փտեցնում են, խոշտանգում. բայց այդ հիանալի է և խելացի, որովհետև այս հիվանդասենյակի և տաքուկ, բարեհարմար առանձնասենյակի միջև ոչ մի զանազանություն չկա։ Հարմար փիլիսոփայություն է. թե՛ բան չես անի, թե՛ խիղճդ է մաքուր և թե՛ քեզ իմաստուն ես զգում... Ո՛չ, տե՛ր իմ, այդ փիլիսոփայություն չէ, մտածողություն չէ, մտքի խորություն չէ, այլ՝ ծուլություն է,

Տակիրություն, թմրեցնող ինքնօրորում... Այո՛,— նորից բարձրացավ Իվան Դմիտրիչը։— Տանջանքն արհամարհում եք, բայց երևի ձեր մատը որ դռան տակ գցեն, կոկորդո՞վ մեկ կբղավեք։

— Բայց գուցեև չբղավեմ,— ասաց Անդրեյ Եֆիմիչը՝ հեզաբար ժպտալով։

— Հա՛, ինչպես չէ։ Բայց, ա՛յ, եթե դուք կաթվածահար լինեիք կամ, դիցուք, որևէ հիմարի ու Հանդուգնի մեկը իր դիրքից ու աստիճանից օգտվելով՝ հրապարակորեն վիրավորեր ձեզ, և դուք իմանայիք, որ նա անպատիժ կմնա, դե՛, այն ժամանակ դուք կհասկանայիք, թե ինչ ասել է ուրիշներին ըմբռնողության ու ճշմարիտ երանության խորհուրդ տալ։

— Այդ օրիգինալ դատողություն է,— ասաց Անդրեյ Եֆիմիչը՝ բավականությունից ժպտալով ու ձեռքերը շփելով։— Ինձ հաճելի զարմանք է պատճառում ձեր ընդհանրացման հակումը, իսկ իմ բնութագիրը, որ դուք հենց նոր բարեհաճեցիք տալ, ուղղակի փայլուն է։ Խոստովանում եմ, որ ձեզ հետ զրուցելն ինձ հսկայական բավականություն է պատճառում։ Դե՛, ես ձեզ լսեցի, հիմա դուք էլ բարեհաճեցեք ինձ լսել...

XI

Այդ խոսակցությունը շարունակվեց ևս մոտ մի ժամ և, ըստ երևույթին, խոր տպավորություն գործեց Անդրեյ Եֆիմիչի վրա։ Նա սկսեց ամեն օր ֆլիգել գնալ։ Նա այնտեղ գնում էր առավոտները և ճաշից հետո, և հաճախ իրիկնամուտն ընկնելիս դեռ զրուցելիս էր լինում Իվան Դմիտրիչի հետ։ Սկզբնական շրջանում Իվան Դմիտրիչը խրտնում էր նրանից, կասկածում, թե նա չար դիտավորություն ունի և բացահայտորեն իր անբարյացակամությունն էր արտահայտում. հետո ընտելացավ նրան և իր խիստ վերաբերմունքը փոխեց ներողամիտ-հեգնականի։

Շուտով հիվանդանոցում լուր տարածվեց, թե բժիշկ Անդրեյ Եֆիմիչն սկսել է հաճախել № 6 հիվանդասենյակը։ Ոչ ոք՝ ո՛չ բուժակը, ո՛չ Նիկիտան, ո՛չ հիվանդապահուհիները չէին կարողանում հասկանալ, թե նա ինչու է գնում այնտեղ, ինչու է ամբողջ ժամերով նստում, ինչ է խոսում և ինչու դեղատոմսեր չի գրում։ Նրա վարմունքը տարօրինակ էր թվում։ Միխայիլ Ավերյանիչը հաճախ նրան տանը չէր գտնում, մի բան, որ առաջ երբեք չէր պատահում։ Դարյուշկան էլ շատ էր մտահոգված, որովհետև բժիշկը գարեջուրը որոշված ժամանակին չէր խմում և երբեմն էլ մինչև իսկ ճաշին էր ուշանում։

Մի անգամ, այդ արդեն հունիսի վերջերին էր, բժիշկ Խոբոտովը ինչ-որ գործով Անդրեյ Եֆիմիչի մոտ եկավ և, նրան տանը չգտնելով, գնաց բակում նրան որոնելու։ Այնտեղ նրան ասացին, որ ծեր բժիշկը հոգեհիվանդների մոտ է գնացել։ Ֆլիգել մտնելով և կանդ առնելով նախասենյակում, Խոբոտովն այսպիսի խոսակցություն լսեց.

— Մենք երբեք համաձայնության չենք գա, և ինձ ձեր հավատին դարձնել՝ ձեզ չի հաջողվի,— զրգռված ասում էր Իվան Դմիտրիչը։— Իրականությանը դուք կատարելապես անծանոթ եք ու երբեք չեք տանջվել, այլ միայն տզրուկի պես սնվել եք ուրիշների տանջանքներով, իսկ ես անընդհատ տանջվել եմ՝ իմ ծնընդյան օրից մինչև այսօր։ Այդ պատճառով անկեղծորեն ասում եմ, որ ես ինձ բոլոր կողմերով ձեզանից բարձր և ձեռնհաս եմ համարում։ Դուք չեք, որ պետք է ինձ սովորեցնեք։

— Ես բնավ հավակնություն չունեմ ձեզ իմ հավատին դարձնելու,— ասաց Անդրեյ Եֆիմիչը կամացուկ և ցավելով, որ իրեն չեն ցանկանում հասկանալ։— Եվ բանն այդ չէ, բարեկա՛մս։ Բանն այն չէ, որ դուք տանջվել եք, իսկ ես՝ ոչ։ Տանջանքն ու խնդությունն անցողիկ են. թողնենք դրանք, աստված իրենց հետ։ Բանն այն է, որ ես և դուք մտածում ենք. մենք միմյանց մեջ տեսնում ենք այնպիսի մարդու, որն ընդունակ է խորհել և դատել, և այդ մեզ համերաշխ է դարձնում, որքան էլ տարբեր լինեն մեր հայացքները։ Երանի դուք գիտենայիք, բարեկա՛մս, թե ինձ որքա՞ն է ձանձրացրել ընդհանուր խելագարությունը, ապիկարությունը, բթամտությունը, և ամեն անգամ ինչպիսի՞ հաճույքով եմ ես զրուցում ձեզ հետ։ Դուք խելոք մարդ եք և դուք ինձ հրճվանք եք պատճառում։

Խոբոտովը մի վերջոկաչափ բացեց դուռը և նայեց հիվանդասենյակի ներսը. Իվան Դմիտրիչը թասակը գլխին և Անդրեյ Եֆիմիչը կողք-կողքի նստած էին անկողնի վրա։ Խելագարը ծամածռություններ էր անում, ցնցվում, ջղաձգաբար փաթաթվում խալաթի մեջ, իսկ բժիշկը դլուխը կախ, անշարժ նստած էր, և նրա դեմքը կարմիր էր, դեմքի արտահայտությունն անօգնական, տխուր։ Խոբոտովն ուսերը թոթվեց, քմծիծաղ տվեց և հայացք փոխանակեց Նիկիտայի հետ։ Նիկիտան նույնպես ուսերը թոթվեց։

Մյուս օրը Խոբոտովը ֆլիգել եկավ բուժակի հետ։ Երկուսն էլ կանգնեցին նախասենյակում և ծածկաբար լսում էին ներսի խոսակցությունը։

— Մեր պապը կարծեմ բոլորովին ցնորվել է,— ասաց Խոբոտովը՝ ֆլիգելից դուրս գալով։

— Տե՛ր, ողորմյա մեզ՝ մեղավորներիս,— հառաչեց բարեվայելուչ Սերգեյ Սերգեյիչը՝ ուշի-ուշով շրջանցելով ջրափոսերը, որպեսզի չկեղտոտի իր հիանալի փայլեցրած սապոգները։— Պետք է խոստովանեմ, հարգելի Եվգենի Ֆյոդորիչ, ես այդ վաղո՜ւց էի սպասում։

XII

Դրանից հետո Անդրեյ Եֆիմիչն սկսեց ինչ-որ խորհրդավորություն նկատել իր շուրջը։ Գեղջուկ ծառաները, հիվանդապահուհիները և հիվանդները նրան հանդիպելիս հարցական նայում էին և ապա քչփչում իրար հետ։ Փոքրիկ Մաշան՝ վերակացուի աղջիկը, որին նա սիրում էր հանդիպել հիվանդանոցի պարտեզում, հիմա, երբ ինքը ժպտալով մոտենում էր նրան, որպեսզի նրա գլուխը շոյի, չգիտես ինչու, փախչում էր։ Փոստի պետ Միխայիլ Ավերյանիչը նրան լսելիս այլևս չէր ասում. «Միանգամայն ճիշտ է», այլ անհասկանալի շփոթմունքով քրթմնջում էր. «Այո՛, այո՛, այո՛»... և նայում էր նրան մտածկոտ ու տխուր։ Չգիտես թե ինչու, նա սկսեց խորհուրդ տալ իր բարեկամին թողնելու օդին ու գարեջուրը, բայց որպես քաղաքավարի մարդ, խոսում էր ոչ թե ուղղակիորեն, այլ ակնարկներով, պատմելով մերթ մի գումարտակի հրամանատարի մասին,— որ սքանչելի մարդ էր,— մերթ գնդի քահանայի մասին՝ մի գովական անձնավորության, որոնք խմում էին ու հիվանդացան, բայց, խմելը թողնելով, առողջացան կատարելապես։ Մի երկու-երեք անգամ Անդրեյ Եֆիմիչի մոտ եկավ նրա պաշտոնակից Խոբոտովը. նա նույնպես խորհուրդ էր տալիս թողնել ոգելից խմիչքները և առանց որևէ նկատելի առիթի՝ հանձնարարում էր բրոմի կալիում ընդունել։

Օգոստոսին Անդրեյ Եֆիմիչը քաղաքագլխից մի նամակ ստացավ, որով նա խնդրում էր մի շատ կարևոր գործով շնորհ բերել իր մոտ։ Նշանակված ժամին քաղաքային վարչություն գալով՝ Անդրեյ Եֆիմիչն այնտեղ գտավ զինվորական ատյանի պետին, գավառական դպրոցի հաստիքային տեսչին, քաղաքային

վարչության մի անդամի, Խոբոտովին և էլի ինչ-որ լիքը, շիկահեր պարոնի, որին ներկայացրին որպես բժիշկ։ Այդ բժիշկը, որ ուներ լեհական դժվար արտասանելի ազգանուն, ապրում էր քաղաքից երեսուն վերստ հեռավորության վրա գտնվող ձիաբուծարանում և այժմ կառք նստած քաղաքով անցնելիս՝ կանգ էր առել այդտեղ։

— Այստեղ ձեր հիմնարկին վերաբերող մի հայտարարություն կա,— դիմեց Անդրեյ Եֆիմիչին քաղաքային վարչության անդամն այն բանից հետո, երբ բոլորը բարևեցին իրար և նստեցին սեղանի շուրջ։— Ա՛յ, Եվգենի Ֆյոդորիչն ասում է, որ գլխավոր շենքում դեղատան տեղը նեղվածք է և որ դեղատունը պետք է տեղափոխել ֆլիգելներից մեկը։ Այդ, իհարկե, ոչինչ, տեղափոխել կարելի է, բայց գլխավոր պատճառն այն է, որ ֆլիգելը նորոգում կպահանջի։

— Այո՛, առանց նորոգման յոլա չի գնա,— ասաց Անդրեյ Եֆիմիչը մտածելուց հետո։— Եթե, օրինակ, անկյունի ֆլիգելը հարմարեցնենք դեղատան համար, ապա, ես կարծում եմ, հարկավոր կլինի minimum մի հինգ հարյուր ռուբլի։ Անարդյունավետ ծախս է։

Փոքր-ինչ լռեցին։

— Տասը տարի առաջ ես արդեն պատիվ եմ ունեցել զեկուցելու,— շարունակեց Անդրեյ Եֆիմիչը ցածր ձայնով,— որ այս հիվանդանոցն իր ներկա ձևով քաղաքի համար իր միջոցներին չհամապատասխանող պերճանք է։ Հիվանդանոցը կառուցվել է քառասնական թվականներին, բայց չէ՞ որ այն ժամանակ քաղաքի ունեցած միջոցներն այլ էին։ Քաղաքը չափազանց շատ փող է ծախսում ոչ-պետքական կառուցումների և ավելորդ պաշտոնների վրա։ Ես կարծում եմ, այդ փողերով ուրիշ կարգերում կարելի էր երկու օրինակելի հիվանդանոց պահել։

— Դե, ուրեմն, եկեք այդ ուրիշ կարգերը մտցնենք,— խսկույն ասաց քաղաքային վարչության անդամը։

— Ես արդեն պատիվ ունեցել եմ զեկուցելու, հանձնեցեք զեմստվոյի տնօրինությանը։

— Այո՛, փողը հանձնեցեք զեմստվոյին, իսկ նա կգոգանա,— ծիծաղեց շիկահեր բժիշկը։

— Ինչպես այդ ընդունված է,— համաձայնեց քաղաքային վարչության անդամը և նույնպես ծիծաղեց։

Անդրեյ Եֆիմիչը տարտամ ու աղոտ հայացքով նայեց շիկահեր բժշկին, ասաց.

— Արդարամիտ պետք է լինել։

Նորից լռեցին։ Թեյ մատուցեցին։ Զինվորական ատյանի պետը, որ, չգիտես թե ինչու, շատ էր շփոթված, սեղանի վրայով ձեռքը դիպցրեց Անդրեյ Եֆիմիչի ձեռքին և ասաց.

— Դուք մեզ բոլորովին մոռացել եք, բժի՛շկ։ Ասենք, դուք վանական եք. թուղթ չեք խաղում, կանանց չեք սիրում։ Մեզպեսների հետ լինելը ձեզ ձանձրացնում է։

Բոլորը խոսեցին այն մասին, թե կարգին մարդու համար որքան ձանձրալի է այդ քաղաքում ապրելը։ Ոչ թատրոն կա, ոչ երաժշտություն, իսկ վերջին պարերեկույթին ակումբում կար մոտ քսան դամա և միայն երկու կավալեր։ Երիտասարդները չեն պարում, այլ ամբողջ ժամանակ խռնվում են բուֆետի մոտ կամ թուղթ են խաղում։ Դանդաղ ու ցածրաձայն, ոչ ոքի չնայելով՝ Անդրեյ Եֆիմիչն սկսեց խոսել այն մասին, թե որքան ցավալի է, որքան շատ ցավալի, որ քաղաքացիները, իրենց կենսական էներգիան, իրենց սիրտն ու ուղեղը ծախսում են թղթախաղի ու բամբասանքի վրա, բայց չեն կարողանում ու չեն ցանկանում ժամանակն անցկացնել հետաքրքրական զրույցով ու ընթերցանությամբ, չեն ցանկանում վայելել այն հաճույքը, որ խելքն է տալիս։ Միայն խելքն է հետաքրքրական և ուշագրավ, իսկ բոլոր մնացածը մանր և նվաստ բան է։ Խոբոտովն ուշադիր լսում էր իր պաշտոնակցին ու հանկարծ հարցրեց.

— Անդրեյ Եֆի՛միչ, այսօր ամսի քանի՞սն է։

Պատասխան ստանալով՝ նա և շիկահեր բժիշկը, իրենց հմուտ չլինելն զգացող հարցաքննողների տոնով սկսեցին հարցնել Անդրեյ Եֆիմիչին, թե այսօր ինչ օր է, տարին քանի օր ունի և ճի՞շտ է, որ № 6 հիվանդասենյակում մի զարմանահրաշ մարգարե է ապրում։

Ի պատասխան վերջին հարցի՝ Անդրեյ Եֆիմիչը կարմրեց և ասաց.

— Այո՛, նա հիվանդ, բայց հետաքրքրական երիտասարդ է։

Այլևս նրան ոչ մի հարց չտվին։

Երբ նա նախասենյակում իր վերարկուն էր հագնում, զինվորական ատյանի պետը ձեռքը դրեց նրա ուսին ու հոգոց հանելով ասաց.

— Մեր՝ ծերերիս, հանգստի գնալու ժամանակն է։

Քաղաքային վարչությունից դուրս գալուց հետո Անդրեյ Եֆիմիչը հասկացավ, որ այդ մի հանձնաժողով էր, որը նշանակված էր իր մտավոր կարողություններն ստուգելու համար։ Նա վերհիշեց իրեն տրված հարցերը, կարմրեց և, չգիտես ինչու, այժմ առաջին անգամ իր կյանքում դառնորեն ափսոսաց բժշկագիտությունը։

«Աստվա՜ծ իմ,— մտածեց նա՝ վերհիշելով, թե հենց հիմա բժիշկներն ինչպես քննեցին իր առողջության վիճակը,— նրանք ախր այնքան վաղուց չէ, որ հոգեբուժության դասախոսություններ են լսել և քննություն տվել,— որտեղի՞ց է այդ կատարյալ տգիտությունը։ Նրանք հոգեբուժության մասին գաղափա՞ր չունեն»։

Եվ իր կյանքում առաջին անգամ նա իրեն զգաց վիրավորված ու բարկացած։

Այդ նույն օրը երեկոյան նրա մոտ եղավ Միխայիլ Ավերյանիչը։ Առանց բարև ասելու՝ փոստի պետը մոտեցավ, բռնեց նրա զույգ ձեռքերը և հուզված ձայնով ասաց.

— Թանկագի՜նս, բարեկա՜մս, ապացուցեք ինձ, որ հավատում եք իմ անկեղծ բարեհաճ վերաբերմունքին և ինձ ձեր բարեկամն եք համարում... Բարեկա՜մս,— և Անդրեյ Եֆիմիչին խանգարելով խոսել՝ հուզված շարունակեց։— Ես ձեզ սիրում եմ ձեր կրթվածության և ձեր հոգու ազնվության համար։ Լսեցե՛ք ինձ, թանկագի՜նս։ Գիտության կանոնները պարտավորեցնում են բժիշկներին թաքցնելու ձեզանից ճշմարտությունը, բայց ես զինվորականի սովորությամբ ճշմարտությունը մարդու երեսին եմ ասում, դուք տկա՜ր եք։ Ներեցեք ինձ, թանկագի՜նս, բայց այդ ճշմարիտ է, այդ վաղուց են նկատել ձեր բոլոր շրջապատողները։ Հենց նոր բժիշկ Եվգենի Ֆյոդորիչն ինձ ասաց, որ ձեր առողջության համար ձեզ անհրաժեշտ է հանգստանալ և զվարճանալ։ Միանգամա՜յն ճիշտ է։ Հիանալի՜ է։ Մոտ օրերս ես արձակուրդ եմ վերցնելու և մեկնելու եմ մի քիչ այլ օդ շնչելու։ Ապացուցեցե՛ք, ուրեմն, որ դուք իմ բարեկամն եք,— միասի՜ն մեկնենք։ Գնա՜նք, մեր ջահելությունը վերհիշենք։

— Ես ինձ կատարելապես առողջ եմ զգում,— ասաց Անդրեյ Եֆիմիչը մտածելուց հետո։— Իսկ մեկնել չեմ կարող։ Թույլ տվեք ինձ որևէ այլ կերպ ապացուցել ձեզ իմ բարեկամությունը։

Մեկնել ինչ-որ տեղ, չգիտես թե ինչու, առանց դրքերի, առանց Դարյուշկայի, առանց գարեջրի, կտրուկ կերպով խախ-

տել կյանքի այն կարգը, որ հաստատվել է քսան տարվա ընթացքում,— այդպիսի միտքն առաջին բոպեին նրան վայրենի ու ֆանտաստիկ թվաց։ Բայց նա վերհիշեց քաղաքային վարչությունում եղած խոսակցությունը և այն ծանր տրամադրությունը, որ ունեցավ այնտեղից տուն վերադառնալիս, ու կարճ ժամանակով քաղաքից մեկնելու միտքը,— այն քաղաքից, որտեղ հիմար մարդիկ իրեն խելագար են համարում,— ժպտաց նրան։

— Իսկ դուք իսկապես ո՞ւր եք մտադիր գնալ,— հարցրեց նա։

— Մոսկվա, Պետերբուրգ, Վարշավա... Վարշավայում ես անց եմ կացրել իմ կյանքի հինգ երջանկագույն տարիները։ Ի՞նչ զմայլելի քաղաք է։ Գնանք, թանկագի՞նս։

XIII

Մի շաբաթ անց նրան առաջարկեցին հանգստանալ, այսինքն՝ հրաժարական տալ, որին նա անտարբեր վերաբերվեց, իսկ էլի մի շաբաթ անց՝ նա և Միխայիլ Ավերյանիչն արդեն նստած էին փոստային տարանտաս և գնում էին մերձավոր երկաթուղային կայարանը։ Ձով, պարզ օրեր էին՝ կապույտ երկընքով ու վճիտ հեռաստանով։ Մինչև երկաթուղու կայարանը երկու հարյուր վերստ էր, որ նրանք կառքով անցան երկու օրում և ճանապարհին երկու անգամ գիշերեցին։ Երբ փոստակայաններում թեյը լավ չվացած բաժակներով էին մատուցում կամ ձիեր լծելը երկար էր տևում, Միխայիլ Ավերյանիչը կաս-կարմրում, ցնցվում էր ամբողջ մարմնով ու բղավում. «Լռե՛լ, դատողություններ չանե՛լ»։ Իսկ տարանտասում նստած ժամանակ, առանց մի բոպե դադար առնելու, նա պատմում էր Կովկասում և Լեհական թագավորության մեջ կատարած իր ճանապարհորդությունների մասին։ Ինչքա՜ն արկածներ են եղել, ինչպիսի՜ հանդիպումներ։ Նա խոսում էր բարձրաձայն և միաժամանակ հայացքին զարմանքի այնպիսի արտահայտություն էր տալիս, որ կարելի էր կարծել, թե ստում է։ Ի հավելումն գրա՝ պատմելիս նա շնչում էր Անդրեյ Եֆիմիչի երեսին և քրքջում ուղղակի նրա ականջին։ Այդ բանը նեղում էր բժշկին և խանգարում նրան խորհելու և կենտրոնանալու։

Խնայողության նկատառումով գնում էին երկաթուղու երրորդ կարգով, չծխողների վագոնով։ Հաստարակությունը կիսով

չափ մաքուր էր։ Միխայիլ Ավերյանիչը շուտով բոլորի հետ ծանոթացավ և, նստարանից նստարան անցնելով, բարձրաձայն ասում էր, որ այս գարշելի ճանապարհներով չպետք է ճանապարհորդել։ Ձո՞ւրս կողմդ խարդախություն է։ Ի՞նչ եմ ասել ձիով գնալուն. մի օրում հարյուր վերստ ճանապարհ կկտրես ու հետո քեզ առողջ և թարմ կզգաս։ Իսկ անբերրիությունը մեզ մոտ նրանից է, որ Պինայի հովտի ճահիճները ցամաքեցրել են։ Առհասարակ սոսկալի անկարգություն է։ Նա տաքանում էր, բարձրաձայն խոսում և ուրիշներին խոսելու հերթ չէր տալիս։ Այդ անվերջ շաղակրատությունը, որ ընդմիջվում էր բարձրաձայն քրքիջով ու արտահայտիչ ժեստերով, հոգնեցրեց Անդրեյ Եֆիմիչին։

«Մեր երկուսից ո՞րն է խելագարը,— մտածում էր նա վրդովված,— արդյո՞ք ես, որ աշխատում եմ ուղևորներին ոչնչով չանհանգստացնել, թե այս ճամոլը, որ կարծում է, թե ինքն այստեղ բոլորից խելոք ու հետաքրքիր մարդն է, և այդ պատճառով ոչ ոքի հանգիստ չի տալիս»։

Մոսկվայում Միխայիլ Ավերյանիչը հագավ զինվորական սերթուկ առանց ուսադիրների և կարմիր կողաշերտով անդրավարտիք։ Փողոց դուրս գալիս նա զինվորական գլխարկ էր դնում և շինել հագնում, ու զինվորները նրան պատվի էին առնում։ Այժմ Անդրեյ Եֆիմիչին թվում էր, թե դա մի այնպիսի մարդ է, որն այն բոլոր աղայականից, որ ունեցել է ժամանակով, մնացել է ամենը, ինչ լավ է եղել, և իրեն պահել է միայն վատը։ Միխայիլ Ավերյանիչը սիրում էր, որ իրեն ծառայություն մատուցեն մինչև անգամ այն ժամանակ, երբ դա բոլորովին հարկավոր չէր։ Լուցկին դրված էր լինում նրա առաջ՝ սեղանի վրա, և նա տեսնում էր, բայց կանչում էր ծառային, որպեսզի լուցկին նա մատուցի իրեն. ապասուհու ներկայությամբ նա չէր քաշվում սպիտակեղենով շրջել. բոլոր լակեյներին անխտիր, մինչև անգամ ծերերին, դու էր ասում և բարկանալիս դդում ու հիմար էր անվանում։ Դա, ինչպես թվում էր Անդրեյ Եֆիմիչին, աղայավարի էր, բայց զզվելի։

Միխայիլ Ավերյանիչն իր բարեկամին ամենից առաջ տարավ Իվերսկայա՝ աստվածամորն աղոթելու։ Նա աղոթում էր ջերմորեն, ծունր դնելով ու արցունք թափելով, և երբ վերջացրեց, խոր հոգոց հանեց ու ասաց.

— Թեպետև չես հավատում, բայց երբ աղոթում ես, քեզ

մի տեսակ ավելի հանգստացած ես զգում։ Համբուրեցեք սրբապատկերը, հոգի՛ս։

Անդրեյ Եֆիմիչը շփոթվեց ու համբուրեց սրբապատկերը, իսկ Միխայիլ Ավերյանիչը շրթունքները երկարացրեց և գլուխը օրորելով՝ շշնջյունով աղոթեց, և նրա աչքերում նորից արցունքներ երևացին։ Ապա գնացին Կրեմլ և այնտեղ դիտեցին ու մինչև անգամ մատներով շոշափեցին Թնդանոթ-արքան ու Զանգ-արքան, հիացան Զամոսկվորեչյեի տեսարանով, եղան Փրկչի տաճարում և Ռումյանցևյան թանգարանում։

Ճաշեցին Տեստովի ճաշարանում։ Միխայիլ Ավերյանիչը այտամորուքները հարդարելով, երկար զննեց ճաշացուցակը և գուրմանի տոնով, որ սովորել է ճաշարաններում իրեն զգալ ինչպես իրենց տանը, ասաց.

— Տեսնենք, այսօր մեզ ինչով եք կերակրելու, հրեշտա՛կս։

XIV

Բժիշկը շրջում էր, դիտում, ուտում, խմում, բայց նա ուներ մի զգացում,— դժգոհություն Միխայիլ Ավերյանիչից։ Նա ուզում էր հանգստանալ իր բարեկամից, հեռանալ նրանից, թաքնվել, իսկ բարեկամն իր պարտքն էր համարում՝ ոչ մի քայլ իրենից հեռու չթողնել և կարելույն չափ շատ զվարճություն պատճառել նրան։ Երբ նայելու բան չէր լինում, Միխայիլ Ավերյանիչն իր բարեկամին զվարճացնում էր զրույցով։ Երկու օր համբերեց Անդրեյ Եֆիմիչը, բայց երրորդ օրը հայտարարեց իր բարեկամին, որ ինքը հիվանդ է և ցանկանում է ամբողջ օրը տանը մնալ։ Բարեկամը ասաց, որ այդ դեպքում ինքն էլ է մնում։ Իրոք որ, հարկավոր է հանգստանալ, ապա թե ոչ այսպիսով մարդու ոտքերը հալից կընկնեն։ Անդրեյ Եֆիմիչը պառկեց բազմոցի վրա, երեսը դարձրեց նրա թիկունքի կողմը և ատամները սեղմելով՝ լսում էր իր բարեկամին, որը եռանդագին համոզում էր նրան, որ Ֆրանսիան վաղ թե ուշ անպայման կշախշախի Գերմանիային, որ Մոսկվայում խիստ շատ սրիկաներ կան և որ ձիու արտաքին տեսքով չի կարելի դատել նրա արժանիքների մասին։ Բժշկի ականջներն սկսեցին դժժալ ու սիրտը՝ թրթռալ, բայց քաղաքավարությունից դրդված, նա սիրտ չէր անում խընդրել բարեկամին, որ նա դուրս գնա կամ լռի։ Բարեբախտաբար

համարում նստելը Միխայիլ Ավերյանիչին ձանձրացրեց, և ճաշից հետո նա գնաց զբոսնելու։

Մենակ մնալով՝ Անդրեյ Եֆիմիչն անձնատուր եղավ հանգստի զգացումին։ Ի՞նչ հաճելի է անշարժ պառկել բազմոցի վրա ու գիտակցել, որ դու մենակ ես սենյակում։ Իսկական երջանկությունն առանց մենակության անհնար է։ Աստծո աչքից ընկած հրեշտակը նրան դավաճանեց հավանորեն այն պատճառով, որ ցանկացել էր միայնություն, որից հրեշտակները զուրկ են։ Անդրեյ Եֆիմիչը ուզում էր մտածել այն մասին, ինչ վերջին օրերս տեսել ու լսել էր, բայց Միխայիլ Ավերյանիչը նրա մտքից չէր հեռանում։

«Բայց չէ՞ որ նա բարեկամությունից, մեծահոգությունից դրդված՝ արձակուրդ վերցրեց և ինձ հետ եկավ,— մտածեց բժիշկը դժգոհելով։— Չկա՛ ավելի վատ բան, քան այդ բարեկամական խնամակալությունը։ Չէ՞ որ ահա կարծես և՛ բարի է, և՛ մեծահոգի, և՛ զվարճասեր, բայց ձանձրացնում է։ Անտանելի է ձանձրացնում։ Ճիշտ այսպես էլ ահա լինում են մարդիկ, որոնք միշտ միայն խելոք ու լավ խոսքեր են ասում, բայց զգում ես, որ նրանք բթամիտ մարդիկ են»։

Դրան հաջորդող օրերին Անդրեյ Եֆիմիչը հիվանդ էր ձևանում ու համարից դուրս չէր գալիս։ Նա պառկում էր երեսը դեպի բազմոցի թիկունքը դարձրած և տանջվում էր, երբ իր բարեկամը զրույցով զվարճացնում էր նրան, կամ հանգստանում, երբ բացակայում էր բարեկամը։ Նա դժգոհում էր իրենից այն բանի համար, որ եկավ, և՛ բարեկամից, որ օրեցօր ավելի շաղակրատ էր դառնում և ավելի ազատ էր պահում իրեն։ Անդրեյ Եֆիմիչին ոչ մի կերպ չէր հաջողվում իր մտքերին տալ լուրջ ու վսեմ ընթացք։

«Այդ իմ մեջ թափանցում է իրականությունը, որի մասին խոսում էր Իվան Դմիտրիչը,— մտածում էր նա՝ բարկանալով իր մանրակրկիտության վրա։— Սակայն, դատարկ բան է... Տուն կգնամ, և ամեն ինչ հին կարգով կընթանա...»։

Պետերբուրգում ևս նույնն էր. նա ամբողջ օրերով համարից դուրս չէր գալիս, պառկում էր բազմոցի վրա և վեր էր կենում միայն նրա համար, որպեսզի գարեջուր խմի։

Միխայիլ Ավերյանիչն անդադար շտապեցնում էր Վարշավա մեկնել։

— Թանկագի՛նս, ես ինչո՞ւ գնամ այնտեղ,— ասում էր Անդ-

ռեյ Եֆիմիչն աղերսող ձայնով։— Մենա՞կ գնացեք, իսկ ինձ թույլ տվեք տուն մեկնել։ Խնդրո՞ւմ եմ ձեզ։

— Ո՛չ մի դեպքում,— բողոքում էր Միխայիլ Ավերյանիչը։— Այդ զմայլելի քաղաք է։ Ես իմ կյանքի հինգ երջանկագույն տարիներն այնտեղ եմ անցկացրել։

Անդրեյ Եֆիմիչը կամքի ուժ չուներ իր ասածը պնդելու, և նա, իրեն զսպելով, Վարշավա գնաց։ Այստեղ նա համարից դուրս չէր գալիս, պառկում էր բազմոցին և չարանում իր վրա, իր բարեկամի վրա և լակեյների վրա, որոնք համառորեն հրաժարվում էին ռուսերեն հասկանալ, իսկ Միխայիլ Ավերյանիչը՝ ըստ սովորականի առողջ, կայտառ և ուրախ՝ առավոտից մինչև երեկո զբոսնում էր քաղաքում և փնտրում իր հին ծանոթներին։ Մի քանի անգամ նա տանը չգիշերեց։ Մի գիշերից հետո էլ, որ հայտնի չէ, թե որտեղ էր անցկացրել, նա վաղ առավոտյան տուն վերադարձավ խիստ գրգռված վիճակում, կարմրած ու չսանրված։ Նա երկար ժամանակ մի անկյունից մյուսն էր քայլում՝ ինքն իրեն ինչ-որ բան քրթմնջալով, հետո կանգ առավ, ասաց.

— Պատիվն ամենի՞ց առաջ։

Մի փոքր էլ երթևեկելուց հետո նա բռնեց գլուխը և տրագիկ ձայնով ասաց.

— Այո՛, պատիվն ամենի՞ց առաջ։ Թո՛ղ անիծյալ լինի այն րոպեն, երբ առաջին անգամ իմ գլխում այս Բաբելոնը գալու միտքը ծագեց։ Թանկագի՛նս,— դիմեց նա բժշկին,— արհամարհեցեք ինձ. ես ահագին գումար տանուլ տվեցի։ Ինձ հինգ հարյուր ռուբլի փող տվեք։

Անդրեյ Եֆիմիչը համբեց հինգ հարյուր ռուբլի ու լուռ տվեց իր բարեկամին։ Սա՝ ամոթից ու բարկությունից դեռևս կասկարմիր դեմքով, անկապ բառերով ինչ-որ ավելորդ բան երդվեց, գլխարկը ծածկեց ու դուրս գնաց։ Մի երկու ժամից հետո վերադառնալով՝ նա ընկավ բազկաթոռին, բարձրաձայն հառաչեց ու ասաց.

— Պատիվս փրկվա՞ծ է։ Մեկնե՛նք, բարեկամս։ Ես չեմ ցանկանում ոչ մի րոպե մնալ այս անիծյալ քաղաքում։ Սրիկանե՛ր։ Ավստրիական լրտեսնե՛ր։

Երբ բարեկամները իրենց քաղաքը վերադարձան, արդեն նոյեմբեր ամիսն էր, և փողոցներում խոր ձյուն էր նստել։ Անդրեյ Եֆիմիչի տեղը գրավել էր բժիշկ Խոբոտովը. նա դեռ ապրում էր իր հին բնակարանում, սպասելով, որ Անդրեյ Եֆիմիչը

վերադառնա և աղատի հիվանդանոցում գրաված իր բնակարանը։ Տգեղ կինը, որին նա իր խոհարարուհին էր անվանում, արդեն ապրում էր ֆլիգելներից մեկում։

Քաղաքում հիվանդանոցային նոր բամբասանքներ էին շրջում։ Ասում էին, թե տգեղ կինը կռվել է վերակացուի հետ, և սա, իբր, ծնկների վրա սողացել է նրա առաջ՝ ներում խնդրելով։

Անդրեյ Եֆիմիչն իր ժամանման առաջին իսկ օրը հարկադրված եղավ իր համար բնակարան փնտրել։

— Բարեկամս,— ասաց նրան փոստի պետը երկչոտ տոնով,— ներեցեք անհամեստ հարցս, դուք ի՞նչ միջոցներ ունեք։

Անդրեյ Եֆիմիչը լռությամբ հաշվեց իր փողերը և ասաց.

— Ութսունվեց ռուբլի։

— Ես այդ չեմ հարցնում,— շփոթված ասաց Միխայիլ Ավերյանիչը՝ բժշկին չհասկանալով։— Ես հարցնում եմ, թե դուք ընդհանրապես ինչ միջոցներ ունեք։

— Ես էլ դե ասում եմ ձեզ, ութսունվեց ռուբլի... ես ուրիշ ոչինչ չունեմ։

Միխայիլ Ավերյանիչը բժշկին ազնիվ և առաքինի մարդ էր համարում, բայց և այնպես կարծում էր, որ նա առնվազն մի քսան հազարանոց կապիտալ ունի։ Իսկ այժմ, երբ իմացավ, որ Անդրեյ Եֆիմիչն աղքատ է, որ նա ապրուստի միջոց չունի, չգիտես ինչու, հանկարծ լաց եղավ ու գրկեց իր բարեկամին։

XV

Անդրեյ Եֆիմիչն ապրում էր քաղքենուհի Բելովայի երեք պատուհան ունեցող տնակում։ Այդ տնակում կար միայն երեք սենյակ՝ չհաշված խոհանոցը։ Դրանցից երկուսը, որոնց պատուհանները բացվում էին փողոցի վրա, զբաղեցրել էր բժիշկը, իսկ երրորդում և խոհանոցում ապրում էին Դարյուշկան և քաղքենուհին՝ իր երեք երեխաներով։ Երբեմն տանտիրուհու մոտ գիշերելու էր գալիս նրա սիրեկանը՝ մի հարբած գեղջուկ, որ գիշերները մոլեգնում և սարսափ էր ազդում երեխաների ու Դարյուշկայի վրա։ Երբ նա գալիս էր և, խոհանոցում նստելով՝ սկսում էր օղի պահանջել, բոլորն էլ խիստ նեղվածք էին զգում, և բժիշկը, խղճալով, իր մոտ էր տանում լացող երեխաներին, քնեցնում էր իր բնակարանի հատակին, և այդ մեծ բավականություն էր պատճառում նրան։

Առաջվա պես նա վեր էր կենում ժամը ութին և թեյից հետո նստում էր իր հին գրքերն ու ժուռնալները կարդալու։ Նորերի համար նա արդեն փող չուներ։ Արդյոք նրանի՞ց էր, որ գրքերը հին էին, թե, միգուցե, շրջապատի փոփոխությունից՝ ընթերցանությունն այլևս խորությամբ չէր հափշտակում նրան ու հոգնեցնում էր։ Ժամանակը պարապ չանցկացնելու համար նա կազմում էր իր գրքերի մանրամասն ցուցակը և նրանց կողերին պիտակներ էր փակցնում, և այդ մեխանիկական, մանրակրկիտ աշխատանքը նրան ավելի հետաքրքրական էր թվում, քան ընթերցանությունը։ Միապաղաղ, մանրակրկիտ աշխատանքը մի ինչ-որ անհասկանալի ձևով օրորում էր նրա մտքերը, նա ոչնչի մասին չէր մտածում, ու ժամանակն արագ էր անցնում։ Մինչև անգամ խոհանոցում նստելը և Դարյուշկայի հետ կարտոֆիլ կճպելը կամ նարինջ մաքրելը նրան հետաքրքրական էր թվում։ Շաբաթ և կիրակի օրերը նա եկեղեցի էր գնում։ Պատի մոտ կանգնելով ու աչքերը կիսախուփ անելով՝ նա լսում էր երգեցողությունը և մտածում էր իր հոր մասին, մոր մասին, համալսարանի, կրոնների մասին. նրան անդորրություն էր պատում, տխրություն ու հետո, եկեղեցուց հեռանալիս՝ նա ափսոսում էր, որ ժամերգությունն այդքան շուտ վերջացավ։

Նա երկու անգամ գնաց հիվանդանոց՝ Իվան Դմիտրիչի մոտ, նրա հետ զրուցելու։ Բայց երկու անգամն էլ Իվան Դմիտրիչը արտասովոր գրգռված ու չարացած էր. նա խնդրում էր հանգիստ թողնել իրեն, որովհետև դատարկ շաղակրատությունը նրան արդեն վաղուց է ձանձրացրել, և ասում էր, որ իր բոլոր տառապանքների համար նա անիծված, ստոր մարդկանցից խնդրում է միայն մի պարգև՝ մեկուսի բանտարկություն։ Մի՞թե մինչև անգամ այդ բանը մերժում են իրեն։ Երկու անգամն էլ, երբ Անդրեյ Եֆիմիչը հրաժեշտ էր տալիս նրան և բարի գիշեր մաղթում, նա բարկանում էր և ասում.

— Գրողի ծոցը։

Եվ Անդրեյ Եֆիմիչն այժմ չգիտեր՝ արդյո՞ք երրորդ անգամ գնա, թե ոչ։ Իսկ գնալ ուզում էր։

Առաջներում հետճաշյա ժամերին Անդրեյ Եֆիմիչը շրջում էր սենյակում և մտածում, իսկ հիմա ճաշից մինչև երեկոյան թեյը նա պառկում էր բազմոցի վրա՝ երեսը դեպի նրա թիկունքը դարձրած և անձնատուր էր լինում մանրախնդիր մտքերի, որոնց ոչ մի կերպ չէր կարողանում հաղթահարել։ Նա իրեն վիրավորված էր զգում, որ իր ավելի քան քսանամյա ծառայության համար իրեն չտվին ոչ կենսաթոշակ, ոչ միանվագ նպաստ։ Ճիշտ է, նա ազնվորեն չի ծառայել, բայց չէ՞ որ կենսաթոշակ ստանում են բոլոր ծառայողներն անխտիր՝ ազնիվ են նրանք, թե ոչ։ Ժամանակակից արդարությունն էլ հենց այն է, որ աստիճաններով, շքանշաններով և կենսաթոշակով պարգևատրվում են ոչ թե բարոյական հատկություններն ու ընդունակությունները, այլ առհասարակ ծառայությունը՝ ինչպես էլ նա լինի։ Ինչո՞ւ ուրեմն միայն Անդրեյ Եֆիմիչը պետք է բացառություն կազմի։ Նա բոլորովին փող չուներ։ Ամաչում էր անցնել կրպակի մոտով և նայել կրպակի տիրուհուն։ Գարեջրի համար արդեն պարտ են երեսուներկու ռուբլի։ Քաղքենուհի Բելովային նույնպես պարտ են։ Դարյուշկան կամաց-կամաց վաճառում է հին հագուստներն ու գրքերը և տանտիրուհուն խաբում, թե բժիշկը շուտով անչափ շատ փող է ստանալու։

Նա բարկանում էր իր վրա, որ ճանապարհորդության ժամանակ ծախսեց իր հավաքած հազար ռուբլին։ Ինչպե՞ս պետք կգար հիմա այդ հազարը։ Նա վրդովվում է, որ մարդիկ իրեն հանգիստ չեն թողնում։ Խոբոտովն իր պարտքն էր համարում երբեմնապես այցելելու իր հիվանդ պաշտոնակցին։ Նրա ամեն ինչն ատելի էր Անդրեյ Եֆիմիչին. և՛ կուշտ մարդու դեմքը, և գռեհիկ, ներողամիտ տոնը, և՛ «պաշտոնակից» բառը, և՛ սապոգները. իսկ ամենից զզվելին այն էր, որ նա իր պարտականությունն էր համարում բժշկել Անդրեյ Եֆիմիչին և կարծում էր, թե իրոք բժշկում է։ Իր ամեն մի այցելության ժամանակ նա բերում էր մի սրվակ բրոմակալիում և խավարծիլի հաբեր։

Միխայիլ Ավերյանիչը ևս իր պարտքն էր համարում այցելել բարեկամին ու զվարճացնել նրան։ Ամեն անգամ Անդրեյ Եֆիմիչի մոտ նա մտնում էր արհեստական անկաշկանդությամբ, բոնապարտիկ քրքջում էր ու սկսում հավատացնել, թե նա այսօր հիանալի տեսք ունի և թե, փառք աստծո, բանը դեպի լավն է գնում, և դրանից կարելի էր եզրակացնել, որ իր բարեկամի դրությունը նա անհուսալի էր համարում։ Նա դեռևս Վարշավայի իր պարտքը չէր վճարել և ամոթի ծանր զգացումից ճնշվում էր, լարված էր, ուստիև ջանում էր ավելի բարձրաձայն ծիծաղել և ամեն ինչ ավելի ծիծաղելի պատմել։ Նրա անեկդոտներն ու պատմությունները հիմա անվերջ էին թվում ու տանջալի էին թե՛ Անդրեյ Եֆիմիչի, թե՛ հենց իր համար։

Նրա ներկայությամբ Անդրեյ Եֆիմիչը սովորաբար պառկում էր բազմոցի վրա՝ երեսը դեպի պատը դարձրած և լսում էր ատամները սեղմած։ Նրա հոգու վրա շերտ առ շերտ մաղձ էր նստում, և բարեկամի ամեն մի այցելությունից հետո նա զգում էր, որ այդ մաղձն ավելի ու ավելի է բարձրանում և ասես հասնում է կոկորդին։

Մանրախնդիր զգացումները խեղդելու համար նա շտապում էր մտածել այն մասին, որ թե՛ ինքը, թե՛ Խոբոտովը, թե՛ Միխայիլ Ավերյանիչը վաղ թե ուշ պետք է ոչնչանան՝ բնության մեջ նույնիսկ հետք չթողնելով։ Եթե երևակայենք, որ մի միլիոն տարուց հետո երկրագնդի մոտով տիեզերքի տարածության մեջ մի որևէ ոգի կթռչի, ապա նա կտեսնի միայն հող ու մերկ ժայռեր։ Բոլորը,— և՛ կուլտուրան, և՛ բարոյական օրենքը,— կկործանվի և մինչև անգամ կռատուկ չի բուսի նրանց տեղը։ Ուրեմն, ի՞նչ է ամոթը խանութպանի հանդեպ, չնչին Խոբոտովը, Միխայիլ Ավերյանիչի ծանր բարեկամությունը։ Այդ բոլորն անմիտ ու դատարկ բան է։

Բայց այսպիսի դատողություններն արդեն չէին օգնում։ Նա հաղիվ էր պատկերացնում երկրագունդը մի միլիոն տարի հետո, որ մերկ ժայռի հետևից իսկույն երևում էր սապոգներ հագած Խոբոտովը կամ բռնի քրքջացող Միխայիլ Ավերյանիչը, և մինչև անգամ լսվում էր նրա ամաչկոտ շշնջյունը. «Իսկ Վարշավայի պարտքը, սիրելի՛ս, մոտ օրերս կվերադարձնեմ... Անպայմա՛ն»։

XVI

Մի անգամ Միխայիլ Ավերյանիչը եկավ ճաշից հետո, երբ Անդրեյ Եֆիմիչը պառկած էր բազմոցի վրա։ Այնպես պատահեց, որ այդ իսկ ժամանակ հայտնվեց և Խոբոտովը՝ իր բրոմակալիումով։ Անդրեյ Եֆիմիչը ծանրորեն բարձրացավ տեղից, նստեց և երկու ձեռքով հենվեց բազմոցին։

— Իսկ այսօր, թանկագի՛նս,— սկսեց Միխայիլ Ավերյանիչը,— ձեր երեսի գույնը շատ ավելի լավ է, քան երեկ։ Կեցցե՛ք։ Աստվա՛ծ վկա, քաջ եք։

— Ժամանակն է, ժամանակն է կազդուրվել, կոլե՛գա,— ասաց Խոբոտովը՝ հորանջելով։— Երևի հենց ձեզ էլ է ձանձրացրել այս կանիտելը։

— Եվ էկազդուրվե՛նք,— ուրախ ասաց Միխայիլ Ավերյանիչը։— Դեռ մի հարյուր տարի էլ կապրենք։ Հապա՛։

— Հարյուր չէ՞, այդ մի քիչ շատ ասացիք, բայց մի քսան տարի կկարողանանք,— մխիթարում էր Խոբոտովը։— Ոչի՛նչ, ոչի՛նչ, կոլեգա, մի՛ վհատվեք... Բավական է բանը մթագնեք։

— Մենք դեռ ցո՛ւյց կտանք մեզ,— քրքջաց Միխայիլ Ավերյանիչը և ձեռքով թփթփացրեց իր բարեկամի ծունկը։— Մենք դեռ ցույց կտանք։ Եկող ամառ, ասված հաջողի, հուպ կտանք դեպի Կովկաս և այդ ամբողջ երկիրը ձիով կշրջենք,— հո՛փ-հո՛փ-հո՛փ։ Իսկ երբ Կովկասից վերադառնանք, ով գիտի, գուցե դեռ հարսանիքում էլ քեֆ անենք։— Միխայիլ Ավերյանիչը խորամանկորեն աչքով արեց։— Կամուսնացնենք ձեզ, մեր սիրելի բարեկամին... կամուսնացնենք...

Անդրեյ Եֆիմիչը հանկարծ զգաց, որ հեղձամաղձը բարձրանում է դեպի իր կոկորդը. նրա սիրտը սոսկալի բաբախեց։

— Այդ գռեհկությո՞ւն է,— ասաց նա՝ արագ տեղից վեր կենալով և ետ քաշվելով դեպի պատուհանը։— Մի՞թե դուք չեք հասկանում, որ գռեհիկ բաներ եք ասում։

Նա ուզում էր շարունակել մեղմ ու քաղաքավարի տոնով, բայց իր կամքին հակառակ՝ հանկարծ բռունցքները սեղմեց ու գլխից վեր բարձրացրեց։

— Թողե՛ք ինձ,— գոռաց նա զարհուրելի ձայնով՝ կասկարմիր կարած, ողջ մարմնով դողալով.— Դո՛ւրս։ Երկո՛ւսդ էլ դուրս, երկո՛ւսդ էլ։

Միխայիլ Ավերյանիչն ու Խոբոտովը ոտքի կանգնեցին և հայացքները սևեռեցին նրան, սկզբում տարակուսանքով, ապա սարսափած։

— Երկո՛ւսդ էլ դուրս,— շարունակում էր բղավել Անդրեյ Եֆիմիչը։— Բո՛ւթ մարդիկ։ Հիմա՛ր մարդիկ։ Ինձ պետք չեն ո՛չ բարեկամություն, ո՛չ էլ քո դեղերը, բթամի՛տ մարդ։ Այդ գռեհկություն է։ Գարշելի՛ վարմունք։

Խոբոտովն ու Միխայիլ Ավերյանիչը՝ շփոթված իրար երեսի նայելով, ետ-ետ գնացին դեպի դուռը և նախասենյակ դուրս եկան։ Անդրեյ Եֆիմիչն արագ վերցրեց բրոմակալիումի սրվակը և շպրտեց նրանց հետևից. սրվակը զնգոցով դիպավ շեմքին ու ջարդվեց։

— Կորե՛ք գրողի ծոցը,— բղավեց նա ողբաձայն՝ նախասենյակ դուրս վազելով։— Կորե՛ք։

Հյուրերի հեռանալուց հետո Անդրեյ Եֆիմիչը դողալով, ասես ջերմի մեջ, պառկեց բազմոցի վրա և դեռ երկար կրկնում էր.

— Բթամի՜տ մարդիկ։ Հիմա՜ր մարդիկ։

Երբ նա հանգստացավ, ամենից առաջ նրա գլխում ծագեց այն միտքը, որ խեղճ Միխայիլ Ավերյանիչը հիմա հավանորեն սաստիկ ամաչում է և ծանր հոգեվիճակ է ապրում, և որ այդ բոլորը սոսկալի է։ Առաջներում երբեք ոչ մի այսպիսի բան չէր պատահել։ Էլ որտե՞ղ էր իր խելքն ու տակտը։ Որտե՞ղ էր իրերի ըմբռնումն ու փիլիսոփայական անտարբերությունը։

Ամոթից և ինքն իր դեմ զայրանալուց բժիշկն ամբողջ գիշերը չկարողացավ քնել, իսկ առավոտյան, մոտ ժամը տասին, գնաց փոստի գրասենյակը և փոստի պետից ներողություն խնդրեց։

— Չհիշենք այն, ինչ կատարվել է,— հոգոց հանելով ասաց զգացված Միխայիլ Ավերյանիչը՝ ամուր սեղմելով նրա ձեռքը։— Ով հինը հիշի՝ աչքը դուրս թռչի։ Լյուբավկի՛ն,— հանկարծ կանչեց նա այնպիսի բարձր ձայնով, որ բոլոր փոստատարներն ու հաճախորդները ցնցվեցին։— Աթոռ տուր։ Իսկ դու սպասի՛ր,— բղավեց նա մի հասարակ կնոջ, որը ճաղերի արանքով պատվիրած նամակ էր մեկնում իրեն։— Մի՞թե չես տեսնում, որ ես զբաղված եմ։ Հինը չհիշենք,— շարունակեց նա քնքշորեն՝ Անդրեյ Եֆիմիչին դառնալով։— Նստե՛ք, խոնարհաբար խնդրում եմ, թանկագինս։

Նա մի բոպե լուռ շփեց իր ծնկները, ապա ասաց.

— Իմ մտքով էլ չէր անցնում վիրավորվել ձեզանից։ Հիվանդությունը մարդու եղբայր չէ, ես այդ հասկանում եմ։ Երեկ ձեր նոպան ինձ և բժշկին վախեցրեց, և մենք հետո երկար խոսեցինք ձեր մասին։ Թանկագի՜նս, դուք ինչո՞ւ չեք ցանկանում լրջորեն զբաղվել ձեր հիվանդությամբ։ Մի՞թե կարելի է այդպես։ Ներեցեք բարեկամական անկեղծությունս,— շշնջաց Միխայիլ Ավերյանիչը,— դուք ապրում եք ամենաանբարենպաստ պայմաններում. նեղվածք է, անմաքրություն, ձեզ խնամող չկա, բժշկվելու համար միջոցներ չունեք... Թանկագին բարեկա՜մս, բժշկի հետ միասին հոգով-սրտով աղաչում ենք ձեզ, լսեցեք մեր խորհուրդը, հիվանդանոց պառկեցեք։ Այնտեղ թե՛ սնունդն է առողջարար, թե՛ խնամք կա, թե՛ բժշկություն։ Եվգենի Ֆյոդորիչը թեպետև մովետոն է, մեր մեջ ասած, բայց գիտակ մարդ

է, նրան լիովին կարելի է վստահել։ Նա ինձ խոսք է տվել, որ ձեզանով կզբաղվի։

Անդրեյ Եֆիմիչն զգացվեց անկեղծ սրտացավությունից և այն արցունքներից, որոնք հանկարծ փայլեցին փոստի պետի այտերի վրա։

— Հարգելի՜ս, չհավատաք,— շշնջաց նա՝ ձեռքը սրտին դնելով։— Չհավատա՞ք դրանց։ Այդ խաբեությո՞ւն է։ Իմ հիվանդությունը միայն այն է, որ քսան տարվա ընթացքում ամբողջ քաղաքում ես միայն մի խելոք մարդ գտա, այն էլ խելագար է։ Ո՛չ մի հիվանդություն չկա, ես պարզապես ընկել եմ մի կախարդական շրջան, որից ելք չկա։ Ինձ համար միևնույն է, ես ամեն բանի պատրաստ եմ։

— Հիվանդանոց պառկեք, թանկագինս։

— Ինձ համար միևնույն է, թեկուզ փոստում։

— Խոսք տվեք, հոգիս, որ ամեն բանում կլսեք Եվգենի Ֆյոդորիչին։

— Համեցե՛ք, խոսք եմ տալիս։ Բայց, կրկնում եմ, հարգելիս, ես կախարդական շրջան եմ ընկել։ Հիմա ամեն ինչ՝ մինչև անգամ իմ բարեկամների անկեղծ սրտացավությունը մի հակում ունի՝ նպաստել իմ կործանմանը։ Ես խորտակվում եմ և արիություն ունեմ գիտակցելու այդ։

— Հոգի՛ս, դուք կառողջանաք։

— Այդ ինչո՞ւ եք ասում,— վրդովմունքով ասաց Անդրեյ Եֆիմիչը։— Հազվագյուտ մարդ կլինի, որ իր կյանքի վերջում չզգա այն, ինչ ես եմ զգում հիմա։ Երբ ձեզ ասեն, թե կարծես ձեր երիկամներն են վատ կամ սիրտն է մեծացած, և դուք սկսեք բուժվել, կամ թե ասենք՝ դուք խելագար եք կամ ոճրագործ, այսինքն, մի խոսքով, երբ մարդիկ հանկարծ ուշադրություն դարձնեն ձեզ վրա,— իմացե՛ք, որ դուք կախարդական շրջան եք ընկել, որից այլևս դուրս չեք գալու։ Կջանաք դուրս գալ և է՛լ ավելի կմոլորվեք։ Անձնատուր եղեք, որովհետև ձեզ այլևս ոչ մի մարդկային ճիգ չի փրկի։ Ինձ այսպես է թվում։

Մինչ այդ, ճաղերի մոտ հասարակություն էր հավաքվել։ Չիանգարելու համար Անդրեյ Եֆիմիչը ոտքի կանգնեց ու սկսեց հրաժեշտ տալ։ Միխայիլ Ավերյանիչը մի անգամ էլ ազնիվ խոսք առավ նրանից և ճանապարհ դրեց մինչև դրսի դուռը։

Այդ նույն օրը, երեկոյան դեմ, Անդրեյ Եֆիմիչի մոտ անսպասելիորեն եկավ կիսամուշտակ և սապոգներ հագած խոբո-

տովը և ասաց այնպիսի տոնով, կարծես թե երեկ ոչինչ չէր պատահել.

— Իսկ ես ձեզ մոտ գործով եմ եկել, կոլե՛գա։ Եկել եմ հրավիրելու ձեզ. արդյոք չե՞ք ցանկանա ինձ հետ կոնսիլիումի գնալ, հը՞։

Կարծելով, թե Խոբոտովն ուզում է զբոսանքով զվարճացնել իրեն կամ իսկապես վաստակելու հնարավորություն ընձեռել, Անդրեյ Եֆիմիչը հագնվեց և նրա հետ միասին փողոց դուրս եկավ։ Նա ուրախ էր, որ իր երեկվա մեղքը քավելու և հաշտվելու առիթ է ներկայանում և իր հոգու խորքում շնորհակալ էր Խոբոտովից, որը մինչև անգամ ակնարկ չարեց երեկվա դեպքի մասին. ըստ երևույթին, խնայում էր։ Այդ անկուլտուրական մարդուց այդպիսի քաղաքավարություն դժվար էր սպասել։

— Իսկ ձեր հիվանդը որտե՞ղ է,— հարցրեց Անդրեյ Եֆիմիչը։

— Ինձ մոտ՝ հիվանդանոցում։ Վաղուց է, որ ես ցանկանում էի ցույց տալ ձեզ... Խիստ հետաքրքրական դեպք է։

Մտան հիվանդանոցի բակը և, գլխավոր շենքը շրջանցելով, ուղղվեցին դեպի այն ֆլիգելը, որտեղ խելագարներն էին տեղավորված։ Եվ այդ բոլորը, չգիտես ինչու, լռելյայն։ Երբ ֆլիգել մտան, Նիկիտան ըստ սովորականի՝ թռավ, ոտքի կանգնեց ու ձգվեց։

— Այստեղ մեկի թոքերին բարդություն է պատահել,— ասաց Խոբոտովը կիսաձայն՝ Անդրեյ Եֆիմիչի հետ հիվանդասենյակ մտնելով։— Դուք այստեղ սպասեցեք, ես իսկույն կգամ։ Գնամ միայն ստետոսկոպը բերելու։

Ու դուրս գնաց։

XVII

Արդեն երեկոյանում էր։ Իվան Դմիտրիչը, երեսը բարձի մեջ թաղած, պառկած էր իր անկողնի վրա. կաթվածահարը անշարժ նստած՝ կամացուկ լալիս էր և շրթունքները շարժում։ Հաստ գեղջուկը և նախկին տեսակավորողը քնած էին։ Լռություն էր տիրում։

Անդրեյ Եֆիմիչը նստած էր Իվան Դմիտրիչի մահճակալի վրա և սպասում էր։ Բայց անցավ մոտ կես ժամ, և Խոբոտովի փոխարեն հիվանդասենյակ մտավ Նիկիտան՝ գրկին բռնած մի խալաթ, ինչ-որ մեկի սպիտակեղենը և տուֆլիները։

— Համեցե՛ք հագնվելու, ձերդ գերազանցություն,— կամացուկ ասաց նա։— Ահա ձեր անկողնիկը, համեցեք այստեղ,— ավելացրեց նա, մատնացույց անելով մի դատարկ, ըստ երևույթին, նոր բերած մահճակալ։— Ոչի՛նչ, աստուծով կառողջանաք։

Անդրեյ Եֆիմիչը բոլորը հասկացավ։ Նա, առանց մի խոսք ասելու, անցավ դեպի Նիկիտայի մատնանշած մահճակալը և նստեց. տեսնելով, որ Նիկիտան կանգնած սպասում է, նա հանվեց, մերկացավ և ամաչեց։ Հետո հագավ հիվանդանոցային զգեստը. վարտիքը շատ կարճ էր, շապիկը՝ երկար, իսկ խալաթից ապխտած ձկան հոտ էր գալիս։

— Կառողջանաք աստուծով,— կրկնեց Նիկիտան։ Նա իր գիրկը հավաքեց Անդրեյ Եֆիմիչի հագուստը, դուրս գնաց և իր հետևից դուռը ծածկեց։

«Միևնույն է...— մտածեց Անդրեյ Եֆիմիչը՝ ամաչկոտությամբ խալաթի մեջ փաթաթվելով և նկատելով, որ իր նոր կոստյումը հագած՝ նա նման է կալանավորի։— Միևնույն է... Միևնույն է, թե՛ ֆրակ, թե՛ մունդիր, թե՛ այս խալաթը»...

Բայց ժամացույցի բանն ինչպե՞ս կլինի։ Իսկ հուշատետրը, որ կողքի գրպանում էր։ Իսկ գլանակնե՞րը։ Նիկիտան հագուստն ո՞ւր տարավ։ Հիմա թերևս մինչև մահ անդրավարտիք, ժիլետ և կոշիկներ հագնելու առիթ չի լինի։ Սկզբնական շրջանում այդ բոլորը մի տեսակ տարօրինակ և նույնիսկ անհասկանալի էր։ Անդրեյ Եֆիմիչն այժմ էլ համոզված էր, որ քաղքենուհի Բելովայի տան և № 6 հիվանդասենյակի միջև ոչ մի տարբերություն չկա, որ այս աշխարհում բոլորը դատարկ բան է և ունայնություն ունայնությանց, մինչդեռ նրա ձեռքերը դողում էին, ոտքերը սառչում, և նա սոսկում էր այն մտքից, թե շուտով Իվան Դմիտրիչը վեր կկենա և կտեսնի, որ ինքը խալաթ է հագել։ Նա վեր կացավ, անցուդարձ արեց և նորից նստեց։

Ահա նա նստեց կես ժամ, մեկ ժամ և թախծելու աստիճան ձանձրացավ. մի՞թե այստեղ կարելի է ապրել մեկ օր, մի շաբաթ և մինչև իսկ տարիներ, ինչպես այս մարդիկ են ապրում։ Դե՛, ահա ինքը նստած էր, երթևեկեց ու նորից նստեց. կարելի է գնալ և պատուհանից դուրս նայել ու դարձյալ անկյունից անկյուն երթևեկել։ Իսկ այնուհետև ի՞նչ։ Կուռքի պես այսպես նստե՞լ ամբողջ ժամանակ և մտածել։ Ո՛չ, այդ հազիվ թե հնարավոր լինի։

Անդրեյ Եֆիմիչը պառկեց, բայց իսկույնևեթ վեր կացավ, թևով սրբեց ճակատի սառը քրտինքը և զգաց, որ իր ամբողջ երեսից սկսեց ապխտած ձկան հոտ գալ։ Նա նորից երթևեկեց։

— Այս մի ինչ-որ թյուրիմացություն է...— ասաց նա, տարակուսանքով ձեռքերը տարածելով։— Պետք է բացատրվել, այստեղ թյուրիմացություն կա...

Այդ միջոցին Իվան Դմիտրիչն արթնացավ։ Նա նստեց ու այտերը հենեց բռունցքներին։ Թքեց։ Հետո ծուլորեն նայեց բժշկին և, ըստ երևույթին, առաջին րոպեին ոչինչ չհասկացավ. բայց շուտով նրա քնկոտ դեմքը դարձավ չոր ու հեգնող։

— Ըհը՛, ձե՛զ էլ այստեղ նստեցրին, հոգի՛ս,— ասաց նա, քնից նոր արթնացած, խոպոտած ձայնով, կկոցելով մի աչքը։— Շատ ուրախ եմ։ Առաջ դուք էիք մարդկանց արյունը խմում, հիմա էլ ձեր արյունն են խմելու։ Հիանալի՞ է։

— Այս մի ինչ-որ թյուրիմացություն է...— ասաց Անդրեյ Եֆիմիչը՝ Իվան Դմիտրիչի խոսքերից վախենալով։ Նա թոթվեց ուսերը և կրկնեց։— Ինչ-որ թյուրիմացություն է...

Իվան Դմիտրիչը կրկին թքեց ու պառկեց։

— Անիծվա՞ծ կյանք,— մոմոաց նա։— Եվ ինչն է ցավալի ու վիրավորական, որ այս կյանքը վերջանալու է ո՛չ թե տառապանքների համար տրվող պարգևով, ո՛չ թե ապոթեոզով՝ ինչպես օպերայում, այլ մահով. կգան գեղջուկ ծառաները և մեռածի ձեռք ու ոտից բռնած՝ նկուղ քարշ կտան։ Վվվը՞։ Դե՛, ոչինչ... դրա փոխարեն մյուս աշխարհում մեր տոնը կլինի... Ես այն աշխարհից կհայտնվեմ այստեղ իբրև ստվեր և կվախեցնեմ այս գարշելիներին։ Ես նրանց կծերացնեմ՝ սարսափահար անելով։

Վերադարձավ Մոիսեյկան և, բժշկին տեսնելով, մեկնեց ձեռքը.

— Մի կոպեկ տա՞ս,— ասաց նա։

XVIII

Անդրեյ Եֆիմիչը քաշվեց դեպի պատուհանը և նայեց դաշտին։ Արդեն մթնում էր, և հորիզոնի վրա աջ կողմից ծագում էր պաղ, ծիրանագույն լուսինը։ Հիվանդանոցի ցանկապատից ոչ հեռու, ոչ ավելի, քան հարյուր սաժենի վրա, գտնվում էր քարաշեն պարսպով շրջապատված մի բարձր, սպիտակ տուն։ Այդ բանտն էր։

«Ահա այս է իրականությունը»,— մտածեց Անդրեյ Եֆիմիչը և սարսափեց։

Սարսափելի էին և՛ լուսինը, և՛ բանտը, և՛ ցանկապատի

կատարի մեխերը, և՛ հեռավոր բոցը ոսկոր այրելու գործարանում։ Թիկունքից հառաչանք լսվեց։ Անդրեյ Եֆիմիչը նայեց ետ, տեսավ փայլուն աչքերով ու շքանշանները կրծքին մի մարդու, որը ժպտում էր և խորամանկորեն աչքով անում։ Այդ ևս սարսափելի թվաց։

Անդրեյ Եֆիմիչն իրեն հավատացնում էր, որ լուսնի և բանտի մեջ առանձին ոչինչ չկա, որ հոգեպես առողջ մարդիկ ևս շքանշաններ են կրում և որ ժամանակի ընթացքում բոլորը կփտի և հող կդառնա, բայց հուսահատությունը հանկարծ պատեց նրան, նա երկու ձեռքով բռնեց ճաղերը և ամբողջ ուժով ցնցեց։ Ամուր ճաղերը չխորտակվեցին։

Հետո, որպեսզի այնքան էլ սարսափ չզգա, նա գնաց դեպի Իվան Դմիտրիչի անկողինը և նստեց։

— Ես հոգեպես ընկճվել եմ, թանկագի՛նս,— մրմնջաց նա դողալով և սառը քրտինքը սրբելով։— Հոգեպես ընկճվել եմ։

— Որ ընկճվում եք, փիլիսոփայեցեք,— ծաղրանքով ասաց Իվան Դմիտրիչը։

— Աստվա՞ծ իմ, աստվա՞ծ իմ... Այո՛, այո՛... Հրամանքդ մեկ անգամ ասում էիք, թե Ռուսաստանում փիլիսոփայություն չկա, բայց փիլիսոփայում են բոլորը, մինչև անգամ աննշան մարդիկ։ Բայց չէ՞ որ աննշան մարդկանց փիլիսոփայելուց ոչ ոք վնաս չի կրում,— ասաց Անդրեյ Եֆիմիչն այնպիսի տոնով, կարծես թե ուզում էր արտասվել ու կարեկցություն զարթեցնել։— Իսկ ինչի՞ համար է, թանկագի՛նս, այդ չար ծաղրը։ Եվ այդ աննշան մարդիկ ինչպե՞ս չփիլիսոփայեն, եթե նրանք բավարարված չեն։ Խելոք, կրթված, հպարտ, ազատասեր մարդը, այդ աստծու նման մարդը ուրիշ ելք չունի, քան իբրև բժիշկ գնալ մի կեղտոտ, հիմար, փոքրիկ քաղաք և իր ամբողջ կյանքում՝ բանկաներ, տզրուկներ, մանանեխի ծեփելի՞ք։ Շառլատանությո՞ւն է, նեղմտությո՞ւն, գռեհկությո՞ւն։ Ո՛հ, աստվա՞ծ իմ։

— Դուք հիմար բաներ եք դուրս տալիս։ Եթե բժիշկ լինելը զզվելի էր, գնայիք դառնայիք մինիստր։

— Ո՛չ մի տեղ, ո՛չ մի տեղ չի կարելի։ Մենք թույլ ենք, թանկագինս... Ես անտարբեր էի, աշխույժ ու առողջ էի դատում, սակայն բավական էր միայն, որ կյանքը ինձ կոպտաբար դիպչեր, որպեսզի ես հոգեպես ընկճվեի... Ուժասպառությո՞ւն։ Թույլ ենք մենք, անպետք ենք մենք... Դուք նույնպես, թանկագինս... Դուք խելացի եք, առաքինի, ձեր մոր կաթի հետ ծծել եք ազնիվ

մղումներ, բայց հենց որ կյանք մտաք, հոգնեցիք ու հիվանդացաք... Թո՜ւյլ ենք, թո՜ւյլ։

Սարսափի և վիրավորանքի զգացումից բացի, երեկոն իջնելու հետ, Անդրեյ Եֆիմիչին ամբողջ ժամանակ տանջում էր ևս մի ինչ-որ բան, որից նա ազատվել չէր կարողանում։ Վերջապես նա գլխի ընկավ, որ սիրտն ուզում է գարեջուր և ծխախոտ։

— Ես այստեղից դուրս կգամ, թանկագինս,— ասաց նա։— Կասեմ, որ այստեղ ճրագ բերեն... Այսպես չեմ կարող... Անկարո՜ղ եմ...

Անդրեյ Եֆիմիչը գնաց դեպի դուռը և բաց արեց, բայց Նիկիտան իսկույն ոտքի ելավ և նրա ճանապարհը կտրեց։

— Ո՞ւր եք գնում։ Չի՜ կարելի, չի՜ կարելի,— ասաց նա։— Քնելու ժամանակ է։

— Բայց ես միայն մի րոպեով, բակում մի քիչ ուզում եմ մտնել գալ,— վախենալով ասաց Անդրեյ Եֆիմիչը։

— Չի՜ կարելի, չի՜ կարելի, հրամայված չէ։ Ինքներդ գիտեք։

Նիկիտան դուռը շրխկոցով ծածկեց և մեջքը հենեց նրան։

— Բայց եթե ես այստեղից դուրս գամ, դրանից ո՞ւմ ինչ կպատահի,— հարցրեց Անդրեյ Եֆիմիչը՝ ուսերը թոթվելով։— Չե՞մ հասկանում։ Նիկի՜տա, ես պետք է դուրս գնամ,— ասաց նա դողացող ձայնով։— Ինձ հարկավոր է։

— Անկարգություն մի՜ արեք, լավ չէ,— ասաց Նիկիտան խրատական տոնով։

— Սատանան գիտե, թե այս ինչ է,— ճչաց հանկարծ Իվան Դմիտրիչը և վեր թռավ։— Նա ի՞նչ իրավունք ունի չթողնելու։ Ինչպե՞ս են նրանք համաձակվում մեզ այստեղ պահել։ Օրենքում, կարծեմ, պարզ ասված է, որ առանց դատարանի ոչ ոքի չի՜ կարելի ազատությունից զրկել։ Սա բռնությո՜ւն է։ Կամայականությո՜ւն։

— Ի՜հ՜ր կամայականություն է,— ասաց Անդրեյ Եֆիմիչը՝ Իվան Դմիտրիչի բղավոցից խրախուսված։— Ինձ հարկավոր է, ես պե՜տք է դուրս գնամ։ Նա իրավունք չունի՜։ Դո՜ւրս թող, քեզ ասում են։

— Լսո՞ւմ ես, բթամիտ անասուն,— բղավեց Իվան Դմիտրիչը և բռունցքով բախեց դուռը։— Բա՜ց արա, ապա թե ոչ ես դուռը կջարդեմ։ Անխի՜ղճ։

— Բա՜ց արա,— բղավեց Անդրեյ Եֆիմիչը՝ ամբողջ մարմնով դողալով։— Ես պահանջո՜ւմ եմ։

— Դու դեռ խոսի՜ր,— պատասխանեց Նիկիտան դռան հետևից,— խոսի՜ր։

— Գոնե գնա՜ Եվգենի Ֆյոդորիչին այստեղ կանչիր։ Ասա՜, որ ես նրան խնդրում եմ շնորհ բերել... մի րոպեով։

— Վաղը նա ինքը կգա։

— Մեզ երդե՜ք բաց չեն թողնի,— այդ միջոցին շարունակում էր Իվան Դմիտրիչը։— Մեզ այստեղ կփտեցնե՜ն։ Ո՜հ, տեր աստված, մի՜թե իրոք այն աշխարհում դժոխք չկա, և այս սրիկաները ներվնլո՞ւ են։ Ո՞ւր է արդարությունը։ Բա՜ց արա, սրիկա՜, ես խնդրվո՜ւմ եմ,— բղավեց նա խռպոտ ձայնով և սկսեց մարմնով դուռը հրել։— Ես գլուխս կջախջախե՜մ։ Մարդասպաննե՜ր։

Նիկիտան արագ բաց արեց դուռը, կոպտաբար, երկու ձեռքով ու ծնկով ետ մղեց Անդրեյ Եֆիմիչին, հետո բռունցքը բարձրացրեց և մի հարված հասցրեց նրա դեմքին։ Անդրեյ Եֆիմիչին թվաց, թե մի ահագին աղահամ ալիք ծածկեց իրեն գլխովին ու քարշ տվեց դեպի մահճակալը։ Եվ իրոք, նա բերանում աղի համ էր զգում, երևի ատամներից արյուն հոսեց։ Նա, կարծես դուրս լողալ ցանկանալով, թափահարեց ձեռքերը և բռնեց ինչ-որ մեկի մահճակալից ու այդ ժամանակ զգաց, որ Նիկիտան երկու անգամ խփեց իր մեջքին։

Իվան Դմիտրիչը բարձր ճչաց։ Երևի նրան էլ ծեծեցին։

Ապա ամեն ինչ խաղաղվեց։ Ճաղերի միջով գալիս էր լուսնի թույլ լույսը, և հատակին փռված էր մի ստվեր, որ նման էր ցանցի։ Սարսափելի էր։ Անդրեյ Եֆիմիչը պառկեց ու շունչը պահեց. նա սարսափով սպասում էր, թե իրեն մի անգամ էլ կխփեն։ Կարծես մեկը մանգաղը վերցրեց, խրեց նրա մարմնի մեջ և մի քանի անգամ պտտեց կրծքում ու աղիքներում։ Ցավից նա բարձր կծեց ու ատամները սեղմեց, և հանկարծ նրա գլխում քաոսի մեջ պայծառորեն փայլատակեց մի սարսափելի, անտանելի միտք, որ ճիշտ այդպիսի ցավ պետք է զգացած լինեին տարիներ շարունակ, օրը օրին, այս մարդիկ, որոնք այժմ, լուսնի լույսի տակ սև ստվերներ են թվում։ Ինչպե՞ս էր պատահել, որ ավելի քան քսան տարվա ընթացքում նա այդ չիմացավ և չցանկացավ իմանալ։ Նա ցավ չէր զգացել, գաղափար չուներ դրա մասին, նշանակում է՝ ճեղավոր չէ, բայց խիղճը, որ նույնքան

կամակոր է և կոպիտ, ինչպես Նիկիտան, սարսռեցրեց նրա մարմինը՝ ծոծրակից մինչև կրունկները։ Նա վեր թռավ, ուզեց բռնվել ամբողջ ուժով և արագ վազել, որպեսզի սպանի Նիկիտային, ապա Խոբոտովին, վերակացուին ու բուժակին, հետո իրեն, բայց կրծքից ոչ մի ծպտուն դուրս չեկավ ու ոտքերն իրեն չհնազանդվեցին. շնչահեղձ լինելով՝ նա քաշեց, պատռեց խալաթի ու շապկի կուրծքը և ուշաթափված գլորվեց մահճակալին։

XIX

Հաջորդ օրը առավոտյան նրա գլուխը ցավում էր, ականջները խշշում էին, և ամբողջ մարմնի մեջ տկարություն էր զգացվում։ Նա չէր ամաչում վերհիշելու իր երեկվա թուլությունը։ Երեկ նա փոքրոգի էր, վախենում էր մինչև անգամ լուսնից, անկեղծորեն արտահայտում էր այնպիսի զգացմունքներ և մտքեր, որ առաջ չէր էլ կարծում, թե իր մեջ կան։ Օրինակ՝ փիլիսոփայող աննշան մարդկանց բավարարված չլինելու վերաբերյալ մտքերը։ Բայց հիմա նրա համար այդ միևնույն էր։

Նա չէր ուտում, չէր խմում, անշարժ պառկած էր ու լռում էր։

«Ինձ համար միևնույն է,— մտածում էր նա, երբ իրեն հարցեր էին տալիս։— Չեմ պատասխանի... ինձ համար միևնույն է»։

Ճաշից հետո եկավ Միխայիլ Ավերյանիչը և բերեց մի քառորդ ֆունտ թեյ և մեկ ֆունտ մարմելադ։ Դարյուշկան նույնպես եկավ և մի ամբողջ ժամ կանգնեց մահճակալի մոտ՝ դեմքին բութ վշտի արտահայտություն։ Նրան այցելեց նաև բժիշկ Խոբոտովը։ Նա բերեց մի սրվակ բրոմակալիում և Նիկիտային հրամայեց հիվանդասենյակում որևէ խնկեղեն ծխել։

Երեկոյան դեմ Անդրեյ Եֆիմիչը մեռավ կաթվածից։ Սկզբում նա զգաց ցնցող սարսուռ ու սրտխառնոց։ Մի ինչ-որ զզվելի բան, ինչպես թվաց նրան, թափանցելով ողջ մարմնի, նույնիսկ մատների մեջ, ձգվում էր ստամոքսից դեպի գլուխը և լցվեց աչքերն ու ականջները։ Աչքին ամեն ինչ կանաչ գույն ստացավ։ Անդրեյ Եֆիմիչը հասկացավ, որ իր վերջը եկել է և հիշեց, որ Իվան Դմիտրիչը, Միխայիլ Ավերյանիչը և միլիոնավոր մարդիկ հավատում են անմահությանը։ Իսկ եթե հանկարծ այն կա՞։ Բայց անմահություն նա չէր ուզում, և միայն մի ակնթարթ մտածեց այդ մասին։ Արտասովոր գեղեցիկ և նազելի եղջերուների մի

հոտ, որոնց մասին նա երեկ կարդացել էր, վազելով անցավ նրա մոտով։ Հետո մի հասարակ կին նրան մեկնեց իր ձեռքի պատվիրած նամակը... Ինչ-որ բան ասաց Միխայիլ Ավերյանիչը։ Ապա ամեն ինչ չքացավ, և Անդրեյ Եֆիմիչն անզգայացավ առհավետ։

Եկան հիվանդանոցի գեղջուկ ծառաները, բռնեցին նրա ոտ ու ձեռքերից և մատուռ տարան։ Այնտեղ նա աչքերը բաց պառկած էր սեղանի վրա, և գիշերը լուսինը լուսավորում էր նրան։ Առավոտյան եկավ Սերգեյ Սերգեյիչը, ջերմեռանդությամբ աղոթեց խաչելության առաջ և իր նախկին պետի աչքերը փակեց։

Մի օր անց Անդրեյ Եֆիմիչին թաղեցին։ Թաղմանը ներկա էին միայն Միխայիլ Ավերյանիչը և Դարյուշկան։

1892

ԹՈՏՇԻԼԴԻ ՁՈՒԹԱԿԸ

Քաղաքը փոքր էր, գյուղից էլ վատ, և այնտեղ ապրում էին գրեթե միայն ծերունիներ, որոնք այնքան հազվադեպ էին մեռնում, որ նույնիսկ վրդովեցուցիչ էր։ Հիվանդանոցից ու բանտի ամրոցից էլ շատ քիչ էին դագաղ պահանջում։ Մի խոսքով, գործերը վատ էին։ Եթե Յակով Իվանովը դագաղագործ լիներ նահանգական քաղաքում, ապա անկասկած սեփական տուն կունենար, և նրան Յակով Մատվեիչ կկոչեին, մինչդեռ այս փոքր քաղաքում անվանում էին պարզապես Յակով, իսկ նրա փողոցային մականունը, չգիտես ինչու, Բրոնզա էր։ Ապրում էր նա աղքատիկ, հասարակ գեղջուկի պես, մի հին, փոքրիկ խրճիթում, ուր միայն մի սենյակ կար, և այդ սենյակում տեղավորվում էին նա, Մարֆան, վառարանը, լայն մահճակալը, դագաղներ, գործասեղանը և ամբողջ տնտեսությունը։

Յակովը լավ, ամուր դագաղներ էր շինում։ Գեղջուկների ու քաղքենիների համար շինում էր իր հասակի չափ և ոչ մի անգամ չէր սխալվել, որովհետև նրանից ավելի բարձրահասակ ու ամրակազմ մարդ ոչ մի տեղ չկար, նույնիսկ բանտի ամրոցում, թեև նա արդեն յոթանասուն տարեկան էր։ Իսկ ազնվատոհմերի ու կանանց համար շինում էր չափով և դրա համար գործ էր ածում երկաթե արշին։ Մանկական պստիկ դագաղների պատվեր ընդունում էր խիստ դժկամությամբ և շինում էր պարզապես

առանց չափսի, արհամարհանքով և ամեն անգամ դաղաղի համար փողն ստանալիս ասում էր.

— Ճիշտն ասած՝ չեմ սիրում դատարկ բանով զբաղվել։

Արհեստից բացի, մի փոքր եկամուտ էր բերում նրան և ջութակ նվագելը։ Քաղաքի հարսանիքներին սովորաբար նվագում էր ջհուդների երաժշտախումբը, որի ղեկավարն էր եկամտի կեսից ավելին իրեն վերցնող կլայեկչի Մոիսեյ Իլյիչ Շախկեսը։ Քանի որ Յակովը շատ լավ էր ջութակ նվագում, մանավանդ ռուսական երգերը, Շախկեսը երբեմն հրավիրում էր նրան երաժշտախումբ՝ վճարելով օրական հիսուն կոպեկ, չհաշված հյուրերից ստացած նվերները։ Երբ Բրոնզան նստում էր նվագախմբի հետ, ամենից առաջ քրտնում ու կարմրում էր նրա դեմքը. շոգ էր, խեղդվելու աստիճան սխտորահոտ էր գալիս, ջութակը ճնգճնգում էր, աջ ականջի մոտ խռխռում էր կոնտրաբասը, ձախի մոտ լալիս էր սրինգը, որը փչում էր դեմքի վրա կարմիր ու կապույտ երակների մի իսկական ցանց ունեցող և հայտնի մեծահարուստ Ռոտշիլդի ազգանունը կրող մի շեկ ու նիհար ջհուդ։ Եվ այդ անիծյալ ջհուդը կարողանում էր ամենաուրախ բանն անգամ ողբաձայն նվագել։ Առանց որևէ ակներև պատճառի Յակովը քիչ-քիչ համակվում էր հրեաների, մասնավորապես Ռոտշիլդի նկատմամբ տածած ատելությամբ ու արհամարհանքով։ Նա սկսեց վեճի բռնվել նրա հետ, հայհոյել վատ խոսքերով և մի անգամ էլ նույնիսկ ուզում էր ծեծել։ Եվ Ռոտշիլդը վիրավորվեց ու մոլեգնորեն նայելով նրան՝ ասաց.

— Եթե ես չհարգեի ձեր տաղանդը՝ վաղուց ձեզ պատուհանից դուրս կշպրտեի։

Հետո լաց եղավ։ Այս պատճառով էլ Բրոնզային սակավադեպ էին նվագախումբ հրավիրում, միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ հրեաներից որևէ մեկը պակասում էր։

Յակովը երբեք լավ տրամադրության մեջ չէր լինում, որովհետև շարունակ ստիպված էր մեծ վնասներ կրել։ Օրինակ, կիրակի և տոն օրերին մեղք էր աշխատելը, երկուշաբթին ծանր օր էր, և այսպես տարեկան ստացվում էր մոտավորապես երկու հարյուր օր, երբ ակամա հարկադրված էր ձեռքերը ծալած նստել։ Բայց տես ի՞նչ վնաս է դա։ Եթե քաղաքում որևէ մեկը հարսանիք աներ առանց երաժշտության կամ Շախկեսը չհրավիրեր Յակովին, ապա դա էլ վնաս էր։ Ոստիկանական վերատեսուչը երկու տարի հիվանդ էր ու հյուծվում էր, Յակովն էլ անհամբեր սպասում էր, թե երբ կմեռնի նա. սակայն վերատեսուչը մեկնեց նահանգական քաղաք բուժվելու ու հենց այդտեղ էլ մեռավ։ Ահա ձեզ վնաս՝ առնվազն տասը ռուբլու, որովհետև հարկ կլիներ շինել թանկագին դագաղ՝ ոսկեթել ծոպերով։ Վնասների մտածմունքը Յակովին հալածում էր մանավանդ գիշերները. նա իր կողքին՝ անկողնի վրա դնում էր ջութակը և երբ ամեն տեսակ դատարկ բան էր մտնում գլուխը՝ թրթռացնում էր լարերը, ջութակը խավարում ձայն էր հանում, և Յակովը թեթևություն էր զգում։

Անցած տարվա մայիսի վեցին Մարֆան հանկարծ տկարացավ։ Պառավը ծանր էր շնչում, շատ էր ջուր խմում և երերում էր, բայց և այնպես առավոտյան վառարանը վառեց և նույնիսկ ջուր բերելու գնաց։ Երեկոյան կողմ էլ պառկեց։ Յակովն ամբողջ օրը ջութակ էր նվագում, իսկ երբ բոլորովին մթնեց, ձեռքն առավ այն գրքույկը, որտեղ ամեն օր նշանակում էր իր վնասները, և, ձանձրույթից մղված, սկսեց հաշվել տարեկան գումարը։ Հազար ռուբլուց ավելի ստացվեց։ Դա այնպես ցնցեց նրան, որ նա համրիչը շպրտեց գետին ու ոտքերով տրորեց։ Հետո վերցրեց համրիչը և նորից երկար ժամանակ չխկչխկացնում էր ու խոր, լարված հառաչում։ Նրա դեմքը քրտնքից կարմրել էր ու թրջվել։ Նա մտածում էր, որ եթե այդ կորած հազար ռուբլին դներ բանկ, ապա մեկ տարվա մեջ ամենաքիչը քառասուն ռուբլու տոկոս կհավաքվեր։ Ուրեմն այդ քառասուն ռուբլին էլ վնաս է։ Մի խոսքով, ո՛ւր էլ շուռ գար, ամեն տեղ միայն վնաս էր և ուրիշ ոչինչ։

— Յակո՛վ,— անսպասելի կերպով կանչեց Մարֆան,— մեռնո՞ւմ եմ։

Յակովը նայեց կնոջը։ Նրա դեմքը շոգից դարձել էր վարդագույն, արտասովոր պայծառ ու հրճվալի։ Բրոնզան, որ վարժվել էր տեսնել նրա դեմքը միշտ գունատ, անհամարձակ ու դժբախտ, հիմա շփոթվեց։ Տպավորությունն այնպես էր, կարծես իրոք նա մեռնում է, և ուրախ էր, որ վերջապես ընդմիշտ մեկնում է այդ խրճիթից, դագաղներից, Յակովից... Նա նայում էր առաստաղին. շարժում շրթունքները. նրա արտահայտությունը երջանիկ էր, կարծես տենչում էր մահը՝ իր փրկչին, ու փսփսում էր նրա հետ։

Լույսը արդեն բացվում էր, պատուհանից երևում էր, թե ինչպես շառագունել է արշալույսը։ Նայելով պառավին՝ Յակովը,

չգիտես ինչու, հիշեց, որ իր ողջ կյանքում կարծես ոչ մի անգամ չէր փաղաքշել նրան, չէր խղճացել, ոչ մի անգամ չէր մտածել մի գլխաշոր գնել նրա համար կամ թե հարսանքատնից որևէ քաղցր բան բերել, այլ միայն գոռացել էր վրան, նախատել վնասների համար, բռունցքներով հարձակվել էր նրա վրա. ճիշտ է, ոչ մի անգամ չէր ծեծել, բայց և այնպես վախեցրել էր, և կինը ամեն անգամ շշմել էր ահից։ Այո, թույլ չէր տվել թեյ խմի, որովհետև առանց այդ էլ ծախսերը շատ են, և Մարֆան միայն տաք ջուր էր խմում։ Եվ նա հասկացավ, թե ինչու հիմա Մարֆայի դեմքը այդքան տարօրինակ է, ուրախ, ու սարսափեց։

Լույսը բացվելուն պես նա խնդրեց հարևանի ձին ու Մարֆային տարավ հիվանդանոց։ Այդտեղ այնքան էլ հիվանդ չկար, ուստիև ստիպված չեղավ երկար սպասելու, այլ մի երեք ժամ։ Եվ ի մեծ հաճույս նրա՝ այս անգամ հիվանդներին ընդունում էր ոչ թե բժիշկը, որ նմանապես հիվանդ էր, այլ բուժակ Մաքսիմ Նիկոլայիչը, մի ծերուկ, որի մասին քաղաքում բոլորն էլ ասում էին, որ թեթև խմող է ու կովարար, բայց ավելի է հասկանում, քան բժիշկը։

— Բարի՞ ողջույն,— ասաց Յակովը՝ պառավին ընդունարան տանելով։— Ներեցեք, որ շարունակ անհանգստացնում ենք ձեզ, Մաքսի՛մ Նիկոլայիչ, մեր դատարկ գործերով։ Ահա, նայեցեք, խնդրեմ, հիվանդացել է իմ էն ինչը, կյանքի ընկերուհին, ինչպես ասում են, ներեցեք արտահայտության համար...

Սպիտակ հոնքերը խոժոռելով և այտամորուքները սղալելով, բուժակն սկսեց նայել պառավին, իսկ սա էլ նստել էր նստարանին՝ կռացած, նիհար ու սրաքիթ, և բերանը բաց՝ կիսադեմով նման էր ծարավ թռչունի։

— Ըհը՛... այդպե՞ս...— դանդաղորեն ասաց բուժակը և հառաչեց։— Ինֆլուենցիա, գուցեև ջերմ։ Հիմա քաղաքում տիֆ կա։ Ի՞նչ արած. փա՞ռք աստծու, բավականին ապրել է պառավը... քանի՞ տարեկան է։

— Յոթանասունից մի տարի է պակաս, Մաքսի՛մ Նիկոլայիչ։

— Ի՞նչ խոսք. բավականին ապրել է։ Նամուսն էլ լավ բան է։

— Դա, իհարկե, բարեհաճեցիք արդարացի նկատել, Մաքսի՛մ Նիկոլայիչ,— ասաց Յակովը քաղաքավարությունից ժըպ-

տալով և զգացմունքով,— շնորհակալ ենք ձեզնից ձեր հաճելի խոսքի համար, բայց թույլ տվեք արտահայտվել, որ ամեն մի միջատ էլ ապրել է ուզում։

— Շա՞տ էլ ուզում է,— ասաց բուժակն այնպիսի շեշտով, որ կարծես պառավի ապրելը կամ մեռնելը նրանից էր կախված։— Դե, հիմա լսի՛ր, սիրելի՛ս, գլխին սառը կոմպրես կդնես և այս փոշուց էլ օրական երկու հատ կտաս։ Որով և ցտեսություն, բոնժուռ։

Բուժակի դեմքի արտահայտությունից Յակովը հասկացավ, որ բանը վատ է և այլևս ոչ մի փոշով չես օգնի։ Նրա համար հիմա պարզ էր, որ Մարֆան կմեռնի շուտով, այսօր կամ վաղը։ Նա թեթևակի բոթեց բուժակի արմունկը, աչքով արեց և կիսաձայն ասաց.

— Լավ կլիներ, Մաքսի՛մ Նիկոլայիչ, բանկա գցեիք։

— Ժամանակ չկա, սիրելի՛ս, ժամանակ չկա։ Ա՛ռ պառավդ, գնա, աստված քեզ հետ։ Ցտեսություն։

— Մի լավություն արեք,— թախանձեց Յակովը։— Ինքներդ բարեհաճում եք իհարկե իմանալ, որ եթե նրա, ասենք, փորը կամ որևէ ներսի մասը ցավեր, դե այն ժամանակ դեղափոշին ու կաթիլները լավ էին. բայց դա հո մրսել է։ Մրսելիս առաջին բանը արյուն առնելն է, Մաքսի՛մ Նիկոլայիչ։

Իսկ բուժակն արդեն կանչեց հետևյալ հիվանդին, և ընդունարանը մտավ մի կին իր տղայի հետ։

— Գնա՛, գնա՛...— ասաց նա Յակովին խոժոռադեմ։— Գործը խճճելու կարիք չկա։

— Որ այդպես է՝ գոնե տղրուկ դրեք։ Կհարկադրեք ինձ մըշտընջենապես փառք տալ աստծուն։

Բուժակը բորբոքվեց ու ճչաց.

— Դե՛, հերիք դուրս տաս, դմբո՛...

Յակովն էլ բորբոքվեց ու ամբողջովին շառագունեց, բայց ոչ մի խոսք չասաց, այլ թևանցուկ արեց Մարֆային և ընդունարանից դուրս տարավ։ Միայն երբ արդեն նստեցին սայլակը, նա խստահայաց ու ծաղրանքով նայեց հիվանդանոցին ու ասաց.

— Համա՞ թե արտիստների են նստեցրել էստեղ։ Հարուստին, իհա՞րկե, բանկա կգցեր, իսկ աղքատին մի տղրուկ էլ ափսոսաց։ Հրեշնե՞ր։

Երբ տուն հասան, Մարֆան մտավ խրճիթը, մի տասը բո-

պե մնաց կանգնած՝ կառչած վառարանին։ Նրան թվում էր, որ եթե պառկի, Յակովը կսկսի վնասներից խոսել ու կնախատի իրեն, որ շարունակ պառկում է և չի ուզում աշխատել։ Իսկ Յակովը նայում էր նրան ձանձրույթով ու հիշում, որ վաղը Հովհան աստվածաբանի տոնն է, մյուս օրը՝ Նիկողայոս հրաշագործի, հետո էլ կիրակի, ապա երկուշաբթի՝ ծանր օր։ Չորս օր անկարելի կլինի աշխատել, իսկ Մարֆան հավանաբար կմահանա այդ օրերից մեկում, ուրեմն դագաղն այսօր պետք է շինել։ Նա վերցրեց երկաթե արշինը, մոտեցավ պառավին ու չափսը առավ։ Հետո Մարֆան պառկեց, Յակովը խաչ հանեց երեսին ու սկսեց դագաղը շինել։

Երբ աշխատանքն ավարտվեց, Յակովը գրեց ակնոցն ու իր գրքույկում գրեց.

«Մարֆա Իվանովնային դագաղ՝ երկու ռուբլի քառասուն կոպեկ»։

Եվ հառաչեց։ Պառավը ամբողջ ժամանակ պառկած էր լուռ, աչքերը փակ։ Բայց երեկոյան, երբ մթնեց, նա հանկարծ կանչեց մարդուն.

— Հիշո՞ւմ ես, Յակո՛վ,— հարցրեց՝ հրճվագին նայելով նրան։— Հիշո՞ւմ ես, հիսուն տարի առաջ աստված բաց խարտյաշ մազերով մի երեխա տվեց մեզ։ Այն ժամանակ ես ու դու միշտ նստում էինք գետակի ափին ու երգեր էինք երգում... ուռենու տակ։— Եվ դառն քմծիծաղից հետո ավելացրեց։— Աղջիկը մեռավ։

Յակովը լարեց հիշողությունը, բայց ոչ մի կերպ չէր կարող հիշել ո՛չ երեխային, ոչ էլ ուռենին։

— Աչքիդ է երևում,— ասաց նա։

Եկավ քահանան, հաղորդություն տվեց ու վերջին օծումը կատարեց։ Հետո Մարֆան սկսեց մի անհասկանալի բան կըմկըմալ ու առավոտյան կողմը վախճանվեց։

Հարևան պառավները լողացրին նրան, հագցրին ու դրեցին դագաղը։ Տիրացուին ավելորդ աղը փող չտալու համար Յակովն ինքն էր սաղմոս կարդում, գերեզմանի համար էլ նրանից փող չառան, որովհետև գերեզմանոցի պահակը նրա խնամին էր։ Չորս գեղջուկ դագաղը գերեզմանոց հասցրին, բայց ոչ թե փողի, այլ հարդանքի համար։ Դագաղի հետևից գնում էին պառավ կանայք, մուրացկաններ, երկու կրոնական. հանդիպող մարդիկ բարեպաշտորեն խաչակնքում էին... Եվ Յակովը խիստ գոհ էր,

որ ամեն ինչ այսպես պատվով, աստվածավայել ու էժան է և ոչ ոքի համար էլ վիրավորական չէ։ Վերջին անգամ հրաժեշտ տալով Մարֆային, նա շոշափեց դագաղը ու մտածեց. «Լա՜վ աշխատանք է»։

Բայց երբ վերադառնում էր գերեզմանոցից, ծանր թախիծ պատեց նրան։ Մի տեսակ վատառողջ էր զգում իրեն՝ շնչառությունը տաք էր ու ծանր, ոտքերը թուլացել էին, խմելու պահանջ էր զգում։ Դրա հետ նաև զանազան մտքեր խուժեցին գլուխը։ Նորից հիշեց, որ իր ամբողջ կյանքում ոչ մի անգամ չէր խղճացել Մարֆային, չէր գուրգուրել։ Հիսուներկու տարիները, ինչ նրանք ապրում էին մի խրճիթում, այնքա՜ն երկար էին տևել. բայց չգիտես ինչու, այնպես էր եղել, որ այդ ամբողջ ժամանակամիջոցում ինքը ոչ մի անգամ չէր մտածել նրա մասին, ուշադրություն չէր դարձրել. կարծես թե նա կատու կամ շուն լիներ։ Բայց չէ՞ որ նա ամեն օր վառում էր վառարանը, եփում էր ու թխում, գնում էր ջրի, փայտ էր ջարդում, քնում էր իր հետ նույն մահճակալի վրա։ Իսկ երբ ինքը հարսանիքներից վերադառնում էր հարբած, Մարֆան ամեն անգամ ակնածանքով ջութակը կախում էր պատից ու շորերը հանում, պառկեցնում էր. և այդ ամենը լուռ, անհամարձակ, հոգատար արտահայտությամբ։

Ժպտալով ու գլխով ողջունելով՝ Յակովին ընդառաջ էր գալիս Ռոտշիլդը։

— Ես ձեզ եմ փնտրում, քեռի՛,— ասաց նա։— Մոիսեյ Իլյիչը բարևում է ձեզ ու հրամայում անմիջապես գնաք իր մոտ։

Յակովը հիմա հեռու էր այդ մտքից. նա լաց լինելու ցանկություն ուներ։

— Վա՛ղ անցի,— ասաց Յակովը ու շարունակեց ճանապարհը։

— Իսկ ինչպե՞ս կարելի է դա,— անհանգստացավ Ռոտշիլդը առաջ վազելով։— Մոիսեյ Իլյիչը կնեղանա։ Հրամայեց՝ իսկո՛յնևեթ։

Յակովին զզվելի թվաց, որ ջհուդը շնչասպառ է լինում, թարթում է աչքերը և նրա դեմքին այդքան շատ շեկ պեպեններ կան։ Նողկալի էր նայել նրա մուգ կարկատաններով կանաչ սերթուկին և նրա ամբողջ դյուրաբեկ, նրբակազմ կերպարանքին։

— Ի՞նչ ես մտնում պինչս, սխտո՛ր։— Գոռաց Յակովը։— Ինձ մի՛ կպչի։

Ջհուդը բարկացավ և նույնպես գոռաց.

— Բայց խնդրեմ, կամաց խոսեք. թե չէ ձեզ կշփրթեմ ցանկապատից դեն։

— Կորի՛ր, աչքիցս չքվի՛ր,— մռնչաց Յակովը և բռունցքները սեղմած նետվեց նրա վրա։— Շունչ չես կարող քաշել էս քոսոտների երեսից։

Ռոտշիլդը սարսափից սմքեց, պպզեց ու սկսեց ձեռքերը թափահարել գլխավերևում՝ կարծես թե հարվածներից պաշտպանվելով, ապա վեր թռավ և որքան ուժ ուներ՝ փախավ։ Վազելիս նա ոստոստում էր, թափ էր տալիս ձեռքերը ազդրերին խփելով, և երևում էր, թե ինչպես է ցնցվում նրա երկար, վտիտ մեջքը։ Երեխաներն ուրախացան այդ պատեհությունից և «ջհո՜ւդ, ջհո՜ւդ» գոռալով՝ ընկան հետևը։ Շներն էլ հաչելով վազեցին նրա հետևից։ Մեկը քրքջաց, հետո սուլեց, շներն ավելի բարձր ու համերաշխ հաչեցին... Հետո երևի շունը կծեց Ռոտշիլդին, որովհետև լսվեց մի հուսակտուր, ցավագին ճիչ։

Յակովը ման եկավ արոտավայրում, հետո շրջագայեց քաղաքի ծայրամասում. գնաց ուր որ աչքը կտրեր, և երեխաները աղաղակում էին. «Բրոնզա՜ն է գալիս, Բրոնզա՜ն է գալիս»։ Ահա և գետը։ Այդտեղ ծվվալով անցնում էին կտցարները, կվկվում էին բադերը։ Արևն ուժգին այրում էր, և ջուրն այնպես էր շողշողում, որ նայելիս մարդու աչքերը ցավում էին։ Յակովն անցավ գետափի արահետով ու տեսավ, թե ինչպես լոգարանից դուրս եկավ մի գիրուկ, կարմրաթշիկ տիկին, ու մտածեց նրա մասին. «Տեսնո՜ւմ ես էդ մունդռիկին»։ Լոգարանից քիչ հեռու փոքր տղաները խեցգետին էին որսում մսով. նրան տեսնելուն պես սկսեցին զայրացնելով գոռալ. «Բրոնզա՜, Բրոնզա՜»։ Ահա և ճյուղատարած ծեր ուռենին իր խոշոր փչակով, իսկ նրա վրա՝ ագռավի բներ... Եվ հանկարծ Յակովի հիշողության մեջ ասես կենդանի կանգնեց բաց խարտյաշ ծամերով մի մանկիկ ու այն ուռենին, որի մասին խոսում էր Մարֆան։ Այո, հենց այդ էլ այն ուռենին է՝ կանաչ, խաղաղիկ, թախծոտ... Խեղճը որքա՜ն է ծերացել։

Նա նստեց ուռենու տակ ու սկսեց վերհիշել անցյալը։ Մյուս ափին, ուր հիմա ոզողվող մարգագետին է, կեչու մի խոշոր անտառ կար, իսկ այն լերկ սարի վրա, որ երևում է հորիզոնի եզրին, կապտին էր տալիս հին, շատ հին սոճուտը։ Գետով բարկասներ էին անցնում։ Մինչդեռ հիմա ամեն ինչ հարթ է ու հավասար, իսկ մյուս ափին միայն մի կեչի է կանգնած՝ օրիորդի պես մատաղաշ ու բարեկազմ, գետի վրա միայն բադեր ու սագեր կան, և չի էլ երևում, որ մի ժամանակ բարկասներ էին անցնում այդտեղից։ Կարծես թե սագերն էլ առաջվա չափ շատ չեն։ Յակովն աչքերը փակեց, և նրա երևակայության մեջ իրար ընդառաջելով սահեցին սպիտակ սագերի հսկայական երամներ։

Նա տարակուսում էր, թե այդ ինչպես էր եղել, որ իր կյանքի վերջին քառասուն կամ հիսուն տարվա ընթացքում ոչ մի անգամ գետափ չէր եկել, իսկ եթե եկել էր, ապա ուշադրություն չէր դարձրել դրան։ Չէ՞ որ գետը բավականին մեծ է, աննշան չէ. կարելի էր ձկնորսությամբ զբաղվել այդտեղ, իսկ ձուկը ծախել վաճառականներին, չինովնիկներին կամ թե կայարանի բուֆետապանին, հետո էլ փողը դնել բանկը. կարելի էր նավակով զբոսնել՝ դաստակերտից դաստակերտ ու ջութակ նվագել, և ամեն դասի մարդիկ փող կտային. կարելի էր փորձել նորից բարկասներ նավարկության դնել— դագաղ շինելուց ավելի լավ էր այդ. վերջապես կարելի էր սագեր պահել, մորթել ու ձմռանն ուղարկել Մոսկվա. վստահ կարելի է ասել, որ տարեկան տասը ռուբլու միայն բմբուլ կհավաքվեր։ Բայց ձեռքից բաց է թողել, դրանցից ոչ մեկն էլ չի արել։ Ինչպիսի՜ վնասներ են, ա՜խ, ինչպիսի՜ վնասներ։ Իսկ եթե բոլորն էլ հաշվես՝ և՛ ձուկ որսալը, և՛ ջութակ նվագելը, և՛ բարկասներ բանեցնելը, և՛ սագեր մորթելը՝ ապա ի՜նչ կապիտալ կստացվի։ Բայց ոչ մի այդպիսի բան չկար նույնիսկ երազում, կյանքն անցել էր անօգուտ, առանց որևէ հաճույքի, զուր կորել էր, բոլորովին անիմաստ, առջևում արդեն ոչինչ չէր մնացել, իսկ թե ետ նայես՝ այնտեղ էլ ոչինչ չկա, բացի վնասներից, և այնպիսի՜ սոսկալի վնասներից, որ նույնիսկ մարմինդ է սարսռում։ Եվ ինչո՞ւ մարդը չի կարող ապրել այնպես, որ այդ կորուստներն ու վնասները չլինեն։ Հարց է ծագում՝ ինչո՞ւ են կտրել կեչիների անտառը կամ սոճուտը։ Ինչո՞ւ իզուր կանաչում է արոտավայրը։ Ինչո՞ւ մարդիկ միշտ էլ անում են հատկապես ոչ այն, ինչ պետք է։ Ինչո՞ւ Յակովն ամբողջ կյանքում լեղվակռիվ էր անում, մռնչում էր, բռունցքները սեղմած հարձակվում, վիրավորանք հասցնում իր կնոջը, և հարց է ծագում՝ ինչի՞ համար քիչ առաջ ինքը վախեցրեց ու վիրավորեց ջհուդին։ Ինչո՞ւ ընդհանրապես մարդիկ խանգարում են միմյանց ապրել։ Չէ՞ որ դրանից որքա՜ն վնասներ, որքան սարսափելի վնասներ

են լինում։ Եթե ատելություն ու չարություն չլիներ՝ մարդիկ իրարից հսկայական օգուտ կունենային։

Երեկոյան և գիշերը նրա աչքին երևում էին մանկիկը, ուտեները, ձկներ, մորթված սագեր և պրոֆիլից ծարավ թռչնի նմանվող Մարֆան, Ռոտշիլդի գունատ, ողորմելի դեմքը, և ինչ-որ այլանդակ դեմքեր առաջանում էին ամեն կողմից ու վնասների մասին մռթմռթում։ Նա մի կողմից մյուսն էր շրջվում և մի հինգ անգամ անկողնից վեր կացավ մի քիչ ջութակ նվագելու։

Առավոտյան Յակովը ճիգ գործադրելով վեր կացավ ու գնաց հիվանդանոց։ Նույն Մաքսիմ Նիկոլայիչը հրամայեց, որ սառը կոմպրես դնի գլխին, դեղափոշիներ տվեց, և նրա դեմքի արտահայտությունից ու շեշտից Յակովը հասկացավ, որ բանը վատ է, որ ոչ մի դեղափոշով այլևս չես օգնի։ Հետո տուն գնալով՝ նա ըմբռնեց, որ մեռնելուց միայն մի օգուտ կլինի՝ ո՛չ պետք է ուտել, ո՛չ խմել, ո՛չ հարկեր վճարել, ո՛չ էլ մարդկանց վիրավորել. իսկ քանի որ մարդը գերեզմանում պառկում է ոչ թե մեկ տարի, այլ հարյուրավոր, հազարավոր տարիներ, ապա եթե հաշիվ անենք՝ օգուտը հսկայական կլինի։ Ապրելուց մարդը վնաս է տեսնում, իսկ մեռնելուց՝ օգուտ։ Այս ըմբռնողությունն իհարկե իրավացի է, բայց և այնպես ցավալի է ու դառն. ինչո՞ւ աշխարհումս այսպես տարօրինակ է կարգ ու կանոնը. կյանքը, որ մեկ անգամ է տրվում մարդուն, անօգուտ է անցնում։

Ափսոս չէր գալիս մեռնելը, բայց հենց որ տանը ջութակ տեսավ՝ սիրտը ճմլվեց ու սկսեց ափսոսալ։ Ջութակը չի կարելի տանել գերեզման, և հիմա նա կմնա որբ ու նույնը կպատահի նրան, ինչ որ կեչու անտառին ու սոճուտին։ Այն աշխարհում ամեն ինչ կորել է ու պիտի կորչի։ Յակովը խրճիթից դուրս եկավ և ջութակը կրծքին սեղմած՝ նստեց շեմի մոտ։ Կորած, վնասներով լի կյանքի մասին մտածելով՝ նվագեց նա, ինքն էլ չիմանալով ինչ, բայց տրտում ու հուզիչ բան ստացվեց, և արցունքները հորդեցին այտերի վրայով։ Եվ որքան ավելի էր մտածում, այնքան ավելի տխուր էր երգում ջութակը։

Մի երկու անգամ մղլակը չխկչխկաց, և դռնակում երևաց Ռոտշիլդը։ Բակի կեսը նա համարձակ անցավ, բայց Յակովին տեսնելով՝ հանկարծ կանգ առավ, ամբողջովին կծկվեց և, հավանաբար վախից, սկսեց ձեռքով այնպիսի նշաններ անել, որ կարծես մատների վրա ուզում էր ցույց տալ, թե հիմա ժամը քանիսն է։

— Մո՛տ եկ, ոչի՛նչ,— քնքշագին ասաց Յակովը և իր մոտ կանչեց նրան։— Մոտեցի՛ր։

Անվստահ ու սարսափահար նայելով, Ռոտշիլդն սկսեց մոտենալ և նրանից մեկ սաժեն հեռու կանգ առավ։

— Շնորհ արեք, խնդրեմ՝ ինձ մի՛ ծեծեք,— ասաց նա՝ թեթևակի նստելով։— Մոխսեյ Իլյիչը նորից ուղարկեց ինձ։ Մի՛ վախենա, ասաց, նորից գնա, ասաց, Յակովի մոտ ու ասա, որ առանց նրան ոչ մի կերպ հնարավոր չէ։ Շաբաթ օրը խարսանիք է... Բա՞։ Պարոն Շապովալովը աղջկանը մի լաֆ մարդու է տալիս... Խարսանիքն էլ փարթամ կլինի, օ՜օ՜,— ավելացրեց ջհուդը և կկոցեց մեկ աչքը։

— Ջեմ կարող...— ասաց Յակովը ծանր շնչելով։— Հիվանդ եմ, ախպե՛ր։

Ու նորից նվագեց, և արցունքները աչքերից ժայթքեցին ջութակի վրա։ Ռոտշիլդը ուշադիր լսում էր՝ կողքով կանգնած դեպի նա և ձեռքերը խաչած կրծքին։ Նրա դեմքի վախեցած, տարակուսած արտահայտությունը քիչ-քիչ փոխվեց տխուր ու տառապալի տեսքի, նա աչքը ետ դցեց՝ կարծես թե տանջալի հիացմունք զգալով, և ասաց. «Վա՜խ...»։ Եվ արցունքները կամաց հոսեցին նրա այտերից, կաթեցին կանաչ սերթուկի վրա։

Հետո ամբողջ օրը Յակովը պառկած էր, ու սիրտը նեղանում էր։ Երբ երեկոյան քահանան խոստովանության ժամանակ հարցրեց նրան, թե որևէ առանձնակի մեղք չի՞ հիշում, նա թուլացող հիշողությունը լարելով, նորից հիշեց Մարֆայի դժբախտ դեմքը և ջհուդի հուսահատ ճիչը, որին կծել էր շունը, ու հաղիվ լսելի ձայնով ասաց.

— Ջութակը տվեք Ռոտշիլդին։

— Լավ,— պատասխանեց քահանան։

Եվ հիմա քաղաքում ամենքն էլ հարցնում են՝ որտեղի՞ց է Ռոտշիլդը ձեռք բերել այդ լավ ջութակը։ Գնե՞լ է, թե՞ գողացել, թե՞ գուցե դրավ է դրված մոտը։ Նա վաղուց է, ինչ թողել է սրինգը, և հիմա միայն ջութակ է նվագում։ Նրա կնտնտոցի տակից հորդում են նույնպիսի տխրագին հնչյուններ, ինչպես առաջներում սրնգից. բայց երբ նա ջանում է կրկնել այն, ինչ նվագում էր Յակովը շեմին նստած պահին, ապա այնպիսի վհատ ու վշտալի բան է ստացվում, որ ունկնդիրները լաց են լինում, ինքն էլ ի վերջո աչքերը ետ է գցում ու ասում. «Վա՜խ...»։ Եվ այս

նոր երգը այնպես են հավանել քաղաքում, որ Ռոտշիլդին իրար ձեռքից խլելով՝ հրավիրում են իրենց մոտ վաճառականներն ու չինովնիկները և մի տասն անգամ նվագել են տալիս։

1894

ԱՆՆԱՆ ՎԶԻՑ ԿԱԽ

Պսակադրումից հետո նույնիսկ թեթև նախաճաշ չեղավ. նորապսակները մի-մի բաժակ գինի խմեցին, զգեստները փոխեցին ու գնացին կայարան։ Ուրախ հարսանեկան պարահանդեսի և ընթրիքի փոխարեն, երաժշտության ու պարերի փոխարեն՝ ուխտագնացություն երկու հարյուր վերստ հեռու։ Շատերը հավանություն էին տալիս դրան, ասելով, որ Մոդեստ Ալեքսեյիչն արդեն աստիճանների տեր է և երիտասարդ չէ, ու թերևս աղմկոտ հարսանիքը կարող էր անվայելուչ թվալ. և ձանձրալի էլ է երաժշտություն լսելը, երբ հիսուներկու տարեկան աստիճանավորը ամուսնանում է մի աղջկա հետ, որի տասնութ տարին հազիվ է լրացել։ Ասում էին նաև, որ այդ ճանապարհորդությունը դեպի վանք Մոդեստ Ալեքսեյիչը, իբրև իր կանոններն ունեցող մարդ, ձեռնարկել էր ճիշտն ասած նրա համար, որպեսզի հասկացնի իր ջահել կնոջը, ամուսնության մեջ էլ նա առաջին տեղը տալիս է կրոնին ու բարոյականությանը։

Նորապսակներին ճանապարհ էին դնում։ Պաշտոնակիցների և հարազատների ամբոխը բաժակները ձեռքներին կանգնել և սպասում էր, թե երբ է գնացքը շարժվելու, որպեսզի «ուռա» բղավեն, իսկ Պյոտր Լեոնտիչը՝ հայրը, ցիլինդրը գլխին և ուսուցչական ֆրակը հագին, արդեն հարբած և արդեն շատ դժգույն իր բաժակով հանդերձ ձգվում էր դեպի լուսամուտը և աղերսաբար ասում.

— Անյո՜ւտա։ Ա՜նյա։ Ա՜նյա, մի խոսք ասեմ։

Անյան լուսամուտից թեքվում էր դեպի նա, և հայրը ինչ-որ բան էր շշնջում, գինու հոտ փչելով վրան, փչում էր ականջին, այնպես որ ոչինչ չէր կարելի հասկանալ, և խաչակնքում էր աղջկա դեմքը, կուրծքը, ձեռքերը. ընդսմին նրա շունչը կտրվում էր. աչքերում արցունքներ էին շողում։ Իսկ Անյայի եղբայրները,

գիմնազիստներ Պետյան և Անդրյուշան, հետևից քաշում էին հոր ֆրակից ու շփոթված շշնջում.

— Հայրիկ, հերիք է... Հայրիկ, պետք չէ...

Երբ գնացքը շարժվեց, Անյան տեսավ, թե ինչպես հայրը մի քիչ վազեց վագոնի հետևից, օրորվելով ու գինին թափթփելով, և թե ինչպես խղճալի, բարի ու մեղավոր էր նրա դեմքը։

— Ուռա՜-ա՜-ա՜,— բղավում էր նա։

Նորապսակները մենակ մնացին։ Մոդեստ Ալեքսեյիչը զննեց կուպեն, իրերը դասավորեց դարակներին ու ժպտալով նստեց իր ջահել կնոջ դիմաց։ Դա միջահասակ, բավական գեր, թմբլիկ, շատ կուշտ, երկար այտամորուսներով ու անբեղ մի աստիճանավոր էր, և նրա ածիլած, կլոր, հատու գծագրված կզակը կրունկի էր նմանվում։ Նրա դեմքին ամենաբնորոշը բեղերի բացակայությունն էր, այդ մաքուր ածիլած, մերկ տեղը, որը աստիճանաբար վեր էր ածվում ճարպոտ, դոնդողակի պես դողդոջուն այտերի։ Նա իրեն պահում էր ծանրաբարո, շարժումներն անշտապ էին, շարժուձևերը մեղմ։

— Ցեմ կարող հիմա չմտաբերել մի հանգամանք,— ասաց նա ժպտալով։— Հինգ տարի առաջ, երբ Կոստոռոտովը սուրբ Աննայի երկրորդ աստիճանի շքանշան ստացավ և եկավ շնորհակալություն հայտնելու, ապա նորին պայծառափայլությունը այսպես արտահայտվեց. «Ուրեմն, դուք հիմա երեք Աննա ունեք. մեկը մերակին ամրացրած, երկուսը վզներիցդ կախ»։ Իսկ պետք է ասել, որ այն ժամանակ նոր էր Կոստոռոտովի մոտ վերադարձել իր կինը, մի կովարար ու թեթևամիտ անձնավորություն, որի անունը Աննա էր։ Հուսով եմ, որ երբ ես երկրորդ կարգի Աննա ստանամ, նորին պայծառափայլությունը առիթ չի ունենա ինձ նույն բանն ասելու։

Նա ժպտում էր իր մանր աչքերով։ Կինը նույնպես ժպտում էր, հուզվելով այն մտքից, որ այս մարդը ամեն րոպե կարող է նրան համբուրել իր լիքը, թաց շրթունքներով, և որ ինքը արդեն իրավունք չունի մերժելու նրա այդ ցանկությունը։ Ամուսնու թմբլիկ մարմնի փափուկ շարժումները նրան վախեցնում էին, նա և՛ սարսափում էր, և՛ զզվում։ Ամուսինը վեր կացավ, առանց շտապելու վզից հանեց շքանշանը, հանեց ֆրակն ու ժիլետը և հագավ խալաթը։

— Ահա այսպես,— ասաց նա Անյայի կողքը նստելով։

Անյան մտաբերեց, թե որքան տանջալի էր պսակադրումը,

երը թվում էր, որ թե՛ քահանան, թե՛ հյուրերը, թե՛ բոլորը եկեղեցում տխուր նայում էին իրեն. ինչո՞ւ, ինչո՞ւ նա, որ այնքա՜ն սիրուն է, այնքան լավիկը, մարդու է գնում այդ տարեց, անհետաքրքիր պարոնին։ Դեռ այսօր առավոտյան նա հիացած էր, որ ամեն ինչ այդպես լավ դասավորվեց, իսկ պսակադրման ժամանակ և հիմա էլ վագոնում իրեն զգում էր մեղավոր, խաբված ու ծիծաղելի։ Ահա նա հարուստի հետ ամուսնացավ, բայց, այնուամենայնիվ, փող չուներ, պսակի շորը պարտքով էին կարել, և, երբ այսօր նրան ճանապարհում էին հայրն ու եղբայրները, ինքը նրանց դեմքերից կռահում էր, որ ոչ մի կոպեկ չունեն։ Արդյոք կընթրե՞ն այսօր։ Իսկ վա՞ղը։ Եվ չգիտես ինչու, նրան թվում էր, որ հայրն ու տղաները հիմա առանց իրեն նստել են քաղցած և ճիշտ նույնպիսի թախիծ են զգում, ինչպես մոր թաղումից հետո առաջին երեկոյան։

«Օ, որքա՜ն դժբախտ եմ ես,— մտածում էր նա։— Ինչո՞ւ ես այսքան դժբախտ եմ»։

Կանանց հետ վարվելու անսովոր լուրջ մարդու անվարժությամբ Մոդեստ Ալեքսեյիչը կպչում էր Անյայի իրանին և թփթփացնում էր ուսը, իսկ կինը մտածում էր փողի մասին, մոր մահվան մասին։ Երբ մայրը մեռավ, հայրը, Պյոտր Լեոնտիչը, որը գիմնազիայում վայելչագրության և նկարչության ուսուցիչ էր, իրեն գինու տվեց, կարիքի մեջ ընկան. տղաները կոշիկ ու կրկնակոշիկ չունեին, հորը քարշ էին տալիս հաշտարարի մոտ, գալիս էր դատական պրիստավը և կահկարասին վերցիր անում... Ի՜նչ ամոթ։ Անյան պետք է խնամեր հարբած հորը, կարկատեր եղբայրների գուլպաները, շուկա գնար և, երբ գովում էին նրա գեղեցկությունը, ջահելությունը, նրբագեղ շարժումները, նրան թվում էր, թե ամբողջ աշխարհը տեսնում է նրա էժանագին գլխարկը և կոշիկների ծակերը, որոնք թաքցնելու համար վրան թանաք էր քսել։ Իսկ գիշերները՝ արցունքներ և նրանից ձեռք չքաշող այն անհանգիստ միտքը, որ շուտով-շուտով հորը գիմնազիայից կարձակեն թուլության համար և որ հայրը չի դիմանա դրան ու նույնպես կմեռնի, ինչպես մայրը։ Բայց ահա ծանոթ տիկինները իրար անցան և սկսեցին Անյայի համար մի լավ մարդ որոնել։ Շուտով գտնվեց ահա այս Մոդեստ Ալեքսեյիչը, որը ո՛չ երիտասարդ էր, ո՛չ էլ գեղեցիկ, բայց փող ուներ։ Բանկում նա մոտ հարյուր հազար ունի և տոհմական կալվածք, որը կապալով է տալիս։ Նա կանոնների տեր մարդ է և լավ համա-

բում ունի նորին պայծառափայլության մոտ. ինչպես Անյային ասում էին, նրա համար ոչինչ չարժե գիմնազիայի դիրեկտորին կամ նույնիսկ հոգաբարձուին հասցեագրված մի տոմսակ վերցնել նորին պայծառափայլությունից, որպեսզի Պյոտր Լեոնտիչին գիմնազիայից չազատեին...

Մինչ նա մտաբերում էր այս մանրամասնությունները, հանկարծ լսվեց երաժշտություն, որը լուսամուտից խուժեց ձայների աղմուկի հետ։ Գնացքն էր կանգնել կիսակայարանում։ Կառամատույցից այն կողմ աշխուժորեն հարմոն ու էժանագին ճրդճրդան ջութակ էին նվագում, իսկ լուսնի լույսով ողողված բարձր կեչիների ու բարդիների հետևից, ամառանոցների հետևից հասնում էին զինվորական նվագախմբի հնչյունները. ըստ երևույթին ամառանոցներում պարերեկո էր։ Կառամատույցում զբոսնում էին հովեկներ ու քաղաքի բնակիչներ, որոնք լավ եղանակին այստեղ էին գալիս օդ շնչելու։ Այստեղ էր նաև Արթինովը, այդ ամբողջ ամառանոցային վայրի տերը, մեծահարուստ, բարձրահասակ, դեմքով հայի նմանվող, շաղ, սևահեր, դուրս պրծած աչքերով ու տարօրինակ զգեստով մի մարդ։ Նրա հագին կուրծքն արձակած մի շապիկ էր և խթանավոր բարձրաճիտ կոշիկներ, և ուսերից կախվել էր մի սև թիկնոց, որը քղանցքատուտի պես քսվում էր գետնին։ Նրա հետևից սուր դնչերը կախած, քայլում էին երկու քերծե։

Անյայի աչքերին դեռ արցունքներ էին փայլում, բայց նա արդեն չէր հիշում ո՛չ մոր, ո՛չ փողի, ո՛չ իր հարսանիքի մասին, այլ սեղմում էր ծանոթ գիմնազիստների և սպաների ձեռքը, ուրախ ծիծաղում էր և արագ-արագ ասում.

— Բարև՛ ձեզ։ Ինչպե՞ս եք։

Նա դուրս եկավ հարթակ, լուսնի լույսի ներքո, և կանգնեց այնպես, որ իրեն տեսնեին ամբողջովին, սքանչելի նոր զգեստով ու գլխարկով։

— Ինչո՞ւ ենք այստեղ կանգնել,— հարցրեց նա։

— Այստեղ ուղեբաժանք է,— պատասխանեցին նրան,— փոստային գնացքին են սպասում։

Նկատելով, որ Արթինովը նայում է իրեն, Անյան կոկետաբար աչքերը կկոցեց և սկսեց բարձրաձայն խոսել ֆրանսերեն, և նրա համար, որ իր սեփական ձայնը հնչում էր այդքան հիանալի, և որ լսում էր երաժշտությունը, և լուսինն արտացոլվում էր լճակում, և նրա համար, որ ագահաբար ու հետաքրքրությամբ

իրեն էր նայում Արթինովը, այդ հայտնի դոնժուանն ու երես առածը, և նրա համար, որ բոլորը ուրախ էին, Անյան հանկարծ ուրախություն զգաց և, երբ գնացքը շարժվեց ու ծանոթ սպաները հրաժեշտ տալիս պատվի առան, նա արդեն պոլկա էր երգում, որի հնչյունները նրա հետևից ուղարկում էր ուր-որ ծառերի հետևում թնդացող զինվորական նվագախումբը, և նա իր կուպեն վերադարձավ այնպիսի զգացողությամբ, կարծես կիսակայարանում նրան համոզել էին, որ, ինչ էլ ուզում է լինի, ինքն անպայման երջանիկ կլինի։

Նորապսակները վանքում մնացին երկու օր, ապա քաղաք վերադարձան։ Նրանք ապրում էին պետական բնակարանում։ Երբ Մոդեստ Ալեքսեյիչը ծառայության էր գնում, Անյան դաշնամուր էր նվագում կամ լալիս էր ձանձրույթից, կամ պառկում էր թախտին ու վեպեր էր կարդում և դիտում նորաձևության ժուռնալը։ Ճաշի ժամանակ Մոդեստ Ալեքսեյիչը ուտում էր շտապելով շատ և խոսում էր քաղաքականության մասին, նշանակումների, փոխադրումների ու պարգևատրումների մասին, այն մասին, որ պետք է աշխատել, որ ընտանեկան կյանքը ոչ թե բավականություն է, այլ պարտականություն, որ կոպեկը ռուբլի է խնայում, և որ ինքը աշխարհում ամենից բարձր է դասում կրոնն ու բարոյականությունը։ Եվ, դանակը սուսերի պես բռունցքի մեջ բռնած, նա ասում էր.

— Ամեն մարդ պետք է իր պարտականություններն ունենա։

Իսկ Անյան լսում էր նրան, վախենում ու չէր կարողանում ուտել և սովորաբար սեղանից վեր էր կենում քաղցած։ Ճաշից հետո ամուսինը հանգստանում և բարձրաձայն խռմփացնում էր, իսկ Անյան գնում էր յուրայինների մոտ։ Հայրն ու տղաները նրա վրա նայում էին ինչ-որ առանձնահատուկ ձևով, կարծես թե հենց նոր, մինչև նրա գալը, նրան դատապարտում էին, որ ամուսնացել է փողի համար, չսիրած, անտանելի, ձանձրալի մարդու հետ. նրա խշխշան գզեստը, ապարանջանները և ընդհանրապես կանացի տեսքը ճնշում, վիրավորում էին նրանց. Անյայի ներկայությամբ նրանք մի քիչ շփոթվում էին և չգիտեին ինչի մասին խոսեն հետը. բայց և այնպես առաջվա նման սիրում էին նրան և դեռ չէին վարժվել առանց նրա ճաշելուն։ Անյան նստում և նրանց հետ ուտում էր շչի, շիլա և դմակի յուղով տապակած կարտոֆիլ, որից մոմի հոտ էր գալիս։ Պյոտր Լեոնտիչը գրաֆինից լցնում ու խմում էր արագ, ագահաբար, զզվանքով, հետո խմում էր երկրորդ, ապա երրորդ բաժակը... Պետյան ու Անդրյուշան, խոշոր աչքերով նիհարիկ, գունատ տղաներ, գրաֆինը վերցնում էին և շփոթված ասում.

— Պետք չէ, հայրիկ... Բավական է, հայրիկ...

Անյան նույնպես անհանգստանում և աղերսում էր նրան, որ չխմի, իսկ հայրը հանկարծ բռնկվում էր և բռունցքը խփում սեղանին.

— Ես ոչ ոքի թույլ չե՞մ տա գլխիս հսկիչ դառնալ։— բղավում էր նա։— Լակոտնե՞ր։ Անպիտա՞ն աղջիկ։ Ես ձեզ բոլորիդ դուրս կվռնդեմ։

Բայց նրա ձայնի մեջ լսվում էր թուլություն, բարություն, և ոչ ոք նրանից չէր վախենում։ Ճաշից հետո նա սովորաբար զուգվում էր. գունատ, սափրվելու ժամանակ կտրած կզակով, նիհար վիզը երկարացնելով, նա ամբողջ կես ժամ կանգնում էր հայելու առաջ և սիրունանում էր, մերթ սանրվելով, մերթ սև բեղերը ոլորելով, անուշահոտ օծանելիք էր սրսկում վրան, թիթեռնիկաձև կապում էր փողկապը, հետո հագնում էր ձեռնոցները, ցիլինդրը դնում գլուխը և գնում մասնավոր դասերի։ Իսկ եթե տուն էր լինում, ապա մնում էր տանը և ներկերով նկարում էր կամ նվագում ֆիսհարմոնիա, որը ֆշշում ու մռնչում էր. նա ջանում էր նվագարանից գեղեցիկ ներդաշնակ հնչյուններ կորզել ու երգակցում էր և կամ բարկանում տղաների վրա.

— Սրիկանե՞ր։ Անպիտաննե՞ր։ Փչացրել են գործիքը։

Երեկոները Անյայի ամուսինը թուղթ էր խաղում նույն հարկի տակ պետական տանն ապրող իր պաշտոնակիցների հետ։ Թղթախաղի ժամանակ հավաքվում էին աստիճանավորների կանայք, տգեղ, անճաշակ զուգված, խոհարարուհիների պես կոպիտ, և բնակարանում սկսվում էին նույնպիսի տգեղ ու անճաշակ բամբասանքները, ինչպես աստիճանավորների կանայք իրենք էին։ Պատահում էր, որ Մոդեստ Ալեքսեյիչը Անյայի հետ թատրոն էր գնում։ Ընդմիջումների ժամանակ նա կնոջը իրենից մի քայլ հեռանալ չէր թողնում, այլ նրան թևանցուկ արած շրջում էր միջանցքներում ու ֆոյեում։ Որևէ մեկին ողջունելով, նա անմիջապես շշնջում էր Անյայի ականջին. «Պետական խորհրդական է... Ընդունելություն ունի նորին պայծառափայլության մոտ...» կամ՝ «Միջոցների տեր է... Սեփական տուն ունի...»։ Երբ անցնում էին բուֆետի մոտով, Անյան շատ էր

ուզում որևէ քաղցր բան. նա սիրում էր շոկոլադ և խնձորով կարկանդակ, բայց փող չուներ, իսկ ամուսնուց խնդրել ամաչում էր։ Մոդեստ Ալեքսեյիչը վերցնում էր մի տանձ, մատներով տրորում և անվճռական հարցնում էր։

— Ի՞նչ արժե։

— Քսանհինգ կոպեկ։

— Օ՜... թանկ է,— ասում էր նա ու տանձը տեղը դնում. բայց, քանի որ անհարմար էր ոչինչ չգնած բուֆետից հեռանալը, ապա նա զելտերյան ջուր էր պահանջում և մենակ խմում էր ամբողջ շիշը, և աչքերին արցունքներ էին հայտնվում, և Անյան այդ ժամանակ ատում էր նրան։

Եվ կամ նա, հանկարծ ամբողջովին կարմրելով, արագ ասում էր Անյային.

— Գլուխ տուր այդ ծեր տիկնոջը։

— Բայց ես նրա հետ ծանոթ չեմ։

— Միևնույն է։ Դա պետական պալատի կառավարչի կինն է։ Դե քեզ ասում եմ գլո՜ւխ տուր,— փնթփնթում էր նա համառորեն։— Գլուխդ չի պոկվի։

Անյան գլուխ էր տալիս, և իրոք նրա գլուխը չէր պոկվում, բայց դա տանջալի էր։ Նա անում էր այն ամենը, ինչ որ ուզում էր ամուսինը, և չարանում էր ինքն իր վրա, որ ամուսինը խաբեց նրան ինչպես վերջին հիմարին։ Ինքը նրա հետ ամուսնացել էր փողի համար, մինչդեռ ինքը հիմա ավելի քիչ փող ուներ, քան մինչև ամուսնանալը։ Առաջ գոնե հայրը նրան տալիս էր քսան կոպեկանոցներ, իսկ հիմա՝ ո՛չ մի գրոշ։ Թաքուն վերցնել կամ խնդրել նա չէր կարող, նա ամուսնուց վախենում էր, դողում էր նրա առաջ։ Նրան թվում էր, թե դեպի այդ մարդն ունեցած սարսափը իր մեջ կրում էր արդեն վաղուց։ Մի ժամանակ մանկության օրերին, սև ամպի կամ լոկոմոտիվի պես վրա քշող և միշտ ճզմելու պատրաստ ամենաազդեցիկն ու սարսափելի ուժը նրան թվում էր գիմնազիայի դիրեկտորը. մի այլ նույնպիսի ուժ, որի մասին միշտ ընտանիքում խոսում էին և որից չգիտես ինչու վախենում էին, նորին պայծառափայլությունն էր. և կային էլի մի տասնյակի չափ ավելի մանր ուժեր, և նրանց թվում գիմնազիայի ուսուցիչները, սափրած բեղերով, խիստ, անողոք, և ահա հիմա, վերջապես Մոդեստ Ալեքսեյիչը, կանոնների տեր մի մարդ, որը նույնիսկ դեմքով նման էր դիրեկտորին։ Եվ Անյայի երևակայության մեջ այդ բոլոր ուժերը ի մի

էին ձուլվում և մի սարսափելի, հսկա սպիտակ արջի տեսքով շարժվում այնպիսի թույլ ու մեղավորների վրա, ինչպես նրա հայրն էր, և Անյան վախենում էր որևէ հակառակ բան ասել ու լարված ժպտում և կեղծ բավականություն էր հայտնում, երբ իրեն կոպտորեն փաղաքշում ու պղծում էին գրկախառնությամբ, որից նրան սարսափ էր պատում։

Միայն մի անգամ Պյոտր Լեոնտիչը համարձակվեց Մոդեստ Ալեքսեյիչից փոխարինաբար հիսուն ռուբլի խնդրել, որպեսզի մի ինչ-որ շատ տհաճ պարտք վճարեր, բայց ինչպիսի՜ տառապանք էր դա։

— Լավ, ես ձեզ կտամ,— ասաց Մոդեստ Ալեքսեյիչը մի փոքր մտածելով,— բայց նախազգուշացնում եմ, որ այլևս ձեզ չեմ օգնի, մինչև խմելը չթողնեք։ Պետական ծառայության մեջ գտնվող մարդու համար ամոթալի է այդպիսի թուլություն։ Չեմ կարող ձեզ չհիշեցնել այն հանրահայտ փաստը, որ ընդունակ շատ մարդկանց կործանել է այդ մոլությունը, մինչդեռ ժուժկալության դեպքում, նրանք, թերևս, ժամանակի ընթացքում կարողանային բարձրաստիճան մարդիկ դառնալ։

Ու ձգվեցին երկար պարբերությունները. «այն չափով, որ չափով...», «ելնելով այն հանգամանքից...», «նկատի ունենալով հենց նոր ասվածը...», իսկ խեղճ Պյոտր Լեոնտիչը տառապում էր ստորացումից և խմելու խիստ ցանկություն էր զգում։

Եվ տղաներն էլ, որ Անյայի մոտ հյուր էին գալիս, սովորաբար պատառոտված կոշիկներով ու մաշված շալվարներով, նույնպես պետք է խրատաբանություններ լսեին։

— Ամեն մարդ պետք է իր պարտականություններն ունենա,— ասում էր նրանց Մոդեստ Ալեքսեյիչը։

Իսկ փող չէր տալիս։ Բայց փոխարենը Անյային նվիրում էր մատանիներ, ապարանջաններ ու ճարմանդներ, ասելով, որ լավ է այդ բաներն ունենալ սև օրվա համար։ Եվ հաճախ բաց էր անում նրա կոմոդն ու ստուգում, թե արդյո՞ք բոլոր իրերը տեղում են։

II

Այնինչ վրա հասավ ձմեռը։ Դեռ ծննդից շատ առաջ տեղական լրագրում հայտարարվեց, որ դեկտեմբերի քսանիններին ազնվականական ակումբում «տեղի կունենա» սովորական ձմեռա-

յին պարահանդեսը։ Ամեն իրիկուն, թղթախաղից հետո, Մոդեստ Ալեքսեյիչը հուզված շշնջում էր աստիճանավորների կանանց հետ, մտահոգված նայելով Անյային, և հետո երկար քայլում էր անկյունից անկյուն, ինչ-որ բանի մասին մտածելով։ Վերջապես, մի անգամ ուշ երեկոյան, նա կանգ առավ Անյայի առաջ և ասաց.

— Դու պետք է քեզ համար պարահանդեսի զգեստ կարես։ Հասկանո՞ւմ ես։ Միայն, խնդրեմ, խորհրդակցիր Մարիյա Գրիգորևնայի և Նատալյա Կուզմինիչնայի հետ։

Եվ նրան տվեց հարյուր ռուբլի։ Անյան վերցրեց. բայց պարահանդեսի զգեստ պատվիրելով, ոչ ոքի հետ չխորհրդակցեց, այլ խոսեց միայն հոր հետ և ջանաց պատկերացնել, թե պարահանդեսի համար ինչպես կհագնվեր մայրը։ Նրա հանգուցյալ մայրն ինքը միշտ հագնվում էր վերջին նորաձևության համաձայն և միշտ զբաղվում էր Անյայով ու նրան հագցնում էր նրբաբազեղ, ինչպես տիկնիկի, և նրան սովորեցրել էր ֆրանսերեն խոսել ու սքանչելի մազուրկա պարել (մինչև ամուսնանալը նա հինգ տարի ծառայել էր որպես դաստիարակչուհի)։ Անյան նույնպես, ինչպես մայրը, կարող էր հին շորից կարել նորը, բենզինի մեջ լվանալ ձեռնոցները, վարձով վերցնել bijoux[1], և նույնպես, ինչպես մայրը, գիտեր կկոցել աչքերը, դաղասել, գեղեցիկ դիրքեր ընդունել, հիանալ՝ երբ որ պետք է, նայել տխուր ու առեղծվածորեն։ Իսկ հորից ժառանգել էր մազերի ու աչքերի մուգ գույնը, ներվայնությունը և միշտ սիրունանալու այդ ձևը։

Երբ պարահանդես գնալուց կես ժամ առաջ Մոդեստ Ալեքսեյիչը առանց սերթուկի մտավ կնոջ սենյակը, որպեսզի նրա հայելու առաջ վիզն անցկացներ շքանշանը, ապա հմայված կնոջ գեղեցկությամբ ու նրա թարմ, օդեղեն զուգսի փայլով, ինքնագոհ սանրեց այտամորուսներն ու ասաց.

— Ա՜յ թե դու ինչպիսին ես, այ թե ինչպիսի՜ն ես։ Անյո՜ւտա,— շարունակեց նա, հանկարծ հանդիսավոր տոն վերցնելով։— Ես քեզ երջանկացրի, իսկ այսօր դու կարող ես ինձ երջանկացնել։ Խնդրում եմ, ներկայացիր նորին պայծառափայլության տիկնոջը։ Ի սե՞ր աստծու։ Նրա միջոցով ես կարող եմ ստանալ ավագ զեկուցողի պաշտո՞նը։

Մեկնեցին պարահանդես։ Ահա և ազնվականների ակումբը

[1] Ակնեղեն (ֆրանս.)։

և շքամուտքն ու բարապանը։ Նախասենյակը կախարաններով հանդերձ, մուշտակներ, դես-դեն վազվզող լակեյներ, միջանցուկ քամուց հովհարներով պաշտպանվող դեկոլտեավոր տիկնայք. լուսագազի և զինվորների հոտ է փչում։ Երբ Անյան ամուսնուն թևանցուկ արած, սանդուղքով վեր բարձրանալիս, լսեց երաժշտության ձայնը և հսկայական հայելու մեջ տեսավ իրեն ամբողջովին, բազմաթիվ լույսերով լուսավորված, ապա նրա հոգում արթնացավ ուրախության և երջանկության այն նախազգացումը, որ նա ունեցել էր կիսակայարանում լուսնյակ գիշերով։ Նա քայլում էր հպարտ, ինքնավստահ, առաջին անգամ իրեն զգալով ոչ թե փոքրիկ աղջիկ, այլ տիկին, և ակամա ընդօրինակելով հանգուցյալ մոր քայլվածքն ու շարժուձևերը։ Եվ կյանքում առաջին անգամ նա իրեն զգաց հարուստ և ազատ։ Նույնիսկ ամուսնու ներկայությունը չէր նեղում նրան, որովհետև ակումբի շեմքն անցնելիս, նա արդեն բնազդաբար կռահեց, որ ծեր ամուսնու մոտիկությունը ամենևին չի ստորացնում իրեն, այլ ընդհակառակը, իր վրա դնում է գրգռիչ խորհրդավորության կնիք, որն այնպես դուր է գալիս տղամարդկանց։ Մեծ դահլիճում արդեն թնդում էր նվագախումբը և սկսվել էին պարերը։ Պետական բնակարանից հետո լույսի, խայտաբղետության, երաժշտության, աղմուկի տպավորություններով տարված, Անյան հայացքը հածեց դահլիճում և մտածեց. «Ախ, ինչ լա՜վ է», և իսկույն ամբոխի մեջ տարբերեց իր ծանոթներին, բոլորին, ում առաջ հանդիպում էր երեկույթների կամ զբոսանքների ժամանակ, այդ բոլոր սպաներին, ուսուցիչներին, փաստաբաններին, աստիճանավորներին, կալվածատերերին, նորին պայծառափայլությանը, Արթինովին և զուգված-զարդարված, խիստ լանջաբաց, գեղեցիկ և այլանդակ բարձրաշխարհիկ տիկնանց, որոնք արդեն իրենց դիրքերն էին գրավել բարեգործական շուկայի խրճիթներում և պավիլիոններում, որպեսզի սկսեն առևտուրը հօգուտ չքավորների։ Ուսադիրներն ուսերին մի վիթխարի սպա— Անյան նրա հետ ծանոթացել էր Ստարո-Կիևսկայա փողոցում, երբ գիմնազիստուհի էր, իսկ ազգանունը չէր հիշում— կարծես բուսեց դետնի տակից ու վալսի հրավիրեց, և Անյան դեն թռավ ամուսնուց, և նրան արդեն թվում էր, կարծես ինքը լողում էր առագաստանավակի վրա, սաստիկ փոթորկի ժամանակ, իսկ ամուսինը մնացել էր հեռու ափին... Նա կրքով, հափշտակությամբ պարում է և՛ վալս, և՛ պոլկա, և՛ կադրիլ, ձեռքից ձեռք անցնե-

լով, շշմելով երաժշտությունից ու աղմուկից, ռուսերենը ֆրանսերենին խառնելով, զատասելով, ծիծաղելով և չմտածելով ոչ ամուսնու, ոչ որի և ոչ մի բանի մասին։ Նա հաջողություն ունեցավ տղամարդկանց մոտ, դա պարզ էր, և այլ կերպ չէր էլ կարող լինել, նա հուզմունքից շնչահեղձ էր լինում, ձեռքերում ջղաձգաբար սեղմում էր հովհարը և խմել էր ուզում։ Հայրը, Պյոտր Լեոնտիչը, ճմռթված ֆրակով, որից բենզինի հոտ էր գալիս, մոտեցավ նրան և պարզեց կարմիր պաղպաղակով ափսեն։

— Դու այսօր հմայիչ ես,— ասաց նա հիացմունքով աղջկան նայելով,— և ես դեռ երբեք այնպես չեմ ափսոսացել, որ շտապեցիր մարդու գնալ... Ինչո՞ւ։ Ես գիտեմ, դու այդ արիր ի սեր մեզ, բայց...— նա դողդոջուն ձեռքերով գրպանից հանեց փողի մի կապուկ և ասաց.— Ես այսօր դասի համար ստացա և կարող եմ պարտքս տալ ամուսնուդ։

Անյան ափսեն խոթեց հոր ձեռքը և, ինչ-որ մեկի կողմից բռնված, սլացավ հեռու և հարևանցի, իր կավալերի ուսի վրայով տեսավ, թե ինչպես հայրը, պարկետի վրա սահելով, գրկեց մի դամայի և նրա հետ սուրաց դահլիճով։

«Որքան հաճելի է նա, երբ սթափ վիճակում է»,— մտածում էր Անյան։

Մաղուրկան նա պարում էր այն նույն վիթխարի սպայի հետ. սպան լուրջ ու ծանր, ասես մունդիր հագած մսեղիք, քայլում էր, ուսերն ու կուրծքը շարժում, ոտները հաղիվհազ թափթփացնում— նա սարսափելի չէր ուզում պարել, իսկ Անյան ճախրում էր շուրջը, նրան գրգռելով իր գեղեցկությամբ, իր բաց պարանոցով. նրա աչքերը վառվում էին տաքարյունությամբ, շարժումները բորբոքուն էին, իսկ սպան ավելի ու ավելի անտարբեր էր դառնում և ձեռքերը նրան պարզում էր ողորմածաբար, ինչպես արքա։

— Բրա՛վո, բրա՛վո,— ասում էին հասարակության միջից։

Բայց կամաց-կամաց վիթխարի սպան էլ բորբոքվեց, նա աշխուժացավ, սկսեց հուզվել և, արդեն ենթարկվելով հմայքին, կրակ կտրեց և շարժվում էր թեթև, ջահելավարի, իսկ Անյան միայն ուսերն էր շարժում և նայում էր խորամանկ, ասես արդեն նա էր թագուհին, իսկ սպան՝ ստրուկը, և այդ պահին նրան թվում էր, թե իրենց նայում է ամբողջ դահլիճը, որ այդ բոլոր մարդիկ հալվում են և նախանձում նրանց։ Վիթխարի սպան հազիվ էր նրան շնորհակալություն հայտնել, երբ հանկարծ բազ-

մությունն ընկրկեց, և տղամարդիկ ինչ-որ տարօրինակ կերպով ձգվեցին, ձեռքերը ցած թողնելով... Այդ նորին պայծառափայլությունն էր գալիս դեպի Անյան, երկու աստղով զարդարված ֆրակը հագին։ Այո, նորին պայծառափայլությունը գալիս էր հենց դեպի Անյան, որովհետև ուղղակի նայում էր նրան սևեռուն և քաղցր ու մեղցր ժպտում էր, և ընդսմին ծամում էր շրթունքները, մի բան, որ անում էր միշտ, երբ սիրունիկ կանանց էր տեսնում։

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ...— սկսեց նա։— Բայց ես կհրամայեմ ձեր ամուսնուն հատուկ վախտ նստեցնել նրա համար, որ մինչև հիմա մեզնից թաքցնում էր այսպիսի գանձը։ Ես ձեզ մոտ եմ եկել կնոջս հանձնարարությամբ,— շարունակեց նա թևն առաջարկելով։— Դուք պետք է մեզ օգնեք... Ը-մ... Ձեզ պետք է պարգև նշանակել գեղեցկության համար... Ինչպես Ամերիկայում... Ը-մ... Ամերիկացիները... Իմ կինը անհամբերությամբ սպասում է ձեզ։

Նա Անյային բերեց խրճիթ, մի տարեց տիկնոջ մոտ, որի դեմքի ստորին մասը անհամաչափորեն մեծ էր, այնպես որ թվում էր, թե նա բերանում պահել էր մի մեծ քար։

— Օգնեցեք մեզ,— ասաց նա ոնգաձայն, ծոր տալով։— Բոլոր սիրունիկ կանայք աշխատում են բարեգործական շուկայում, և չգիտես ինչու, մենակ դուք զբոսնում եք։ Ինչո՞ւ չեք ուզում մեզ օգնել։

Նա գնաց, և Անյան գրավեց նրա տեղը արծաթե ինքնաեռի ու գավաթների մոտ։ Անմիջապես սկսվեց աշխույժ առևտուրը։ Մի գավաթ թեյի համար Անյան մեկ ռուբլուց պակաս չէր վերցնում, իսկ վիթխարի սպային հարկադրեց խմել երեք գավաթ։ Մոտեցավ մեծահարուստ, ուռուցիկ աչքերով, շնչարգելությամբ տառապող Արթինովը, բայց արդեն ոչ այն տարօրինակ տարազով, որով նրան տեսել էր Անյան ամառը, այլ ֆրակով, ինչպես բոլորը։ Առանց աչքերը կտրելու Անյայից, նա մի ըմպանակ շամպայն խմեց և վճարեց հարյուր ռուբլի, հետո թեյ խմեց և էլի հարյուր ռուբլի տվեց, և այդ ամենը լուռ, ասթմայից տառապելով... Անյան գնորդներ էր կանչում և նրանցից փողեր վերցնում, արդեն խորապես համոզված, որ իր ժպիտներն ու հայացքները այդ մարդկանց ոչինչ չեն պատճառում, բացի մեծ բավականությունից։ Նա արդեն հասկացել էր, որ ինքը ստեղծված է բացառապես այդ աղմկալի, փայլուն, ծիծաղկոտ կյանքի հա-

մար, երաժշտությամբ, պարերով, երկրպագուներով հանդերձ, և նրա վաղուցվա սարսափը այն ուժի հանդեպ, որը վրա է քշում և սպառնում ճզմել, նրան թվում էր ծիծաղելի. նա արդեն ոչ ոքից չէր վախենում, և միայն ափսոսում էր, որ մայրը չկա, որը հիմա դստեր հետ ուրախանար նրա հաջողություններով։

Պյոտր Լեոնտիչը, արդեն գունատ, բայց դեռ ոտների վրա հաստատուն, մոտեցավ խրճիթին և մի ըմպանակ կոնյակ խընդրեց։ Անյան շիկնեց, սպասելով, որ նա որևէ անվայելուչ բան կասի (նա արդեն ամաչում էր, որ իր հայրը այդքան աղքատ, այդքան սովորական մարդ է), բայց հայրը խմեց, իր կապուկից տասը ռուբլի նետեց և ծանր ու մեծ հեռացավ, առանց մի խոսք ասելու։ Քիչ անց Անյան տեսավ, թե ինչպես է հայրը պարում grand rond-ում զույգ կազմած, և այս անգամ նա արդեն օրորվում էր և ինչ-որ բաներ էր բղավում՝ ի մեծ շփոթություն իր դամայի, և Անյան մտաբերեց, թե ինչպես մի երեք տարի առաջ պարահանդեսին նա ահա այսպես օրորվում ու բղավում էր, և վերջացավ նրանով, որ թաղային ոստիկանը նրան տուն տարավ քնելու, իսկ հաջորդ օրը դիրեկտորը սպառնում էր նրան աշխատանքից ազատել։ Ի՞նչ անտեղի էր այդ հիշողությունը։

Երբ խրճիթներում ինքնաեռները հանգան, և հոգնած բարեգործուհիները գոյացած դրամը հանձնեցին բերանում քար պահած տարեց տիկնոջը, Արթինովը Անյային թևանցուկ արած տարավ դահլիճ, որտեղ ընթրիք էր պատրաստած բարեգործական շուկայի բոլոր մասնակիցների համար։ Ընթրում էին մի քսան մարդ, ոչ ավելի, բայց շատ աղմկալի էր։ Նորին պայծառափայլությունը կենաց առաջարկեց. «Այս շքեղ ճաշարանում տեղին կլինի խմել էժանագին ճաշարանների ծաղկման կենացը, որոնք այսօրվա շուկայի առարկան էին հանդիսանում»։ Բրիգադային գեներալը առաջարկեց խմել «այն ուժի կենացը, որի առաջ ընկրկում է նույնիսկ հրեատանին», և բոլորը ձգվեցին, բաժակները չրխկացնելու տիկնանց հետ։ Շատ, շատ ուրախ էր։

Երբ Անյային ուղեկցում էին տուն, արդեն լուսանում էր, և խոհարարուհիները շուկա էին գնում։ Ջվարթ, հարբած, նոր տպավորություններով լեցուն, հոգնատանջ, նա հանվեց, անկողին ընկավ և անմիջապես քնեց...

Ժամը երկուսին մոտ նրան արթնացրեց աղախինը և զեկուցեց, որ այցելության է եկել պարոն Արթինովը։ Անյան արագ հագնվեց ու գնաց հյուրասենյակ։ Արթինովից հետո քիչ անց

եկավ նորին պայծառափայլությունը շնորհակալությունը հայտնելու բարեգործական շուկային մասնակցելու համար։ Անյային քաղցրավուն նայելով ու շրթունքները ծամելով, համբուրեց նրա ձեռքը և էլի գալու թույլտվություն խնդրեց ու մեկնեց, իսկ Անյան կանգնել էր հյուրասենյակի մեջտեղը, ապշած, հմայված, չհավատալով, որ փոփոխությունը իր կյանքում, զարմանալի փոփոխությունը այդպես շուտ տեղի ունեցավ, և հենց այդ ժամանակ ներս մտավ նրա ամուսինը, Մոդեստ Ալեքսեյիչը...

Եվ Անյայի առաջ նույնպես նա հիմա կանգնած էր նույն քծնական, քաղցր, ծառայական-հարգալիր արտահայտությամբ, ինչպիսին Անյան սովոր էր տեսնել նրա դեմքին ուժեղների ու նշանավորների ներկայությամբ, և ցնծությամբ, զայրույթով, արհամարհանքով, արդեն համոզված, որ դրա համար իրեն ոչինչ չի պատահի, նա ասաց, հատու արտասանելով ամեն մի բառը.

— Դե՛ն կորեք, տխմա՛ր։

Դրանից հետո Անյան արդեն ոչ մի ազատ օր չուներ, որովհետև նա մասնակցում էր մե՛րթ պիկնիկի, մե՛րթ զբոսանքի, մե՛րթ թատրոնի։ Ամեն օր նա տուն էր վերադառնում լուսադեմին և պառկում էր հյուրասենյակում, հատակին, հետո բոլորին սրտառուչ պատմում էր, թե ինչպես ինքը քնում է ծաղիկների տակ։ Փող հարկավոր էր խիստ շատ, բայց նա արդեն չէր վախենում Մոդեստ Ալեքսեյիչից և նրա փողերը ծախսում էր ինչպես իրենը. և նա չէր խնդրում, չէր պահանջում, այլ միայն նրան ուղարկում էր հաշիվները կամ տոմսակներ՝ «սույնը ներկայացնողին տալ երկու հարյուր ռ.», կամ՝ «անմիջապես վճարել հարյուր ռ.»։

Զատկին Մոդեստ Ալեքսեյիչը ստացավ երկրորդ աստիճանի Աննայի շքանշան։ Երբ նա գնաց շնորհակալություն հայտնելու, նորին պայծառափայլությունը մի կողմ դրեց լրագիրը և ավելի խոր նստեց բազկաթոռին։

— Ուրեմն, դուք հիմա երեք Աննա ունեք,— ասաց նա, գնելով վարդագույն եղունգներով իր սպիտակ ձեռները,— մեկը մերակին ամրացրած, երկուսը վզներիցդ կախ։

Մոդեստ Ալեքսեյիչը երկու մատը շրթունքներին դրեց զգուշանալով, որ բարձրաձայն չծիծաղի, և ասաց.

— Հիմա մնում է սպասել փոքրիկ Վլադիմիրի աշխարհ գալուն։ Համարձակվում եմ խնդրել ձերդ պայծառափայլությանը կնքահայր լինելու։

Նա ակնարկում էր Վլադիմիրի չորրորդ աստիճանի շքանշանը և արդեն երևակայում էր, թե ինչպես ինքը ամենուրեք կպատմի այդ հաջողված հնարամիտ ու համարձակ բառախաղը, և ուզում էր էլի որևէ նույնպիսի հաջող բան ասել, բայց նորին պայծառափայլությունը նորից խորասուզվեց լրագրի մեջ և գլուխը դրականորեն շարժեց...

Իսկ Անյան շարունակ զբոսնում էր եռաձի կառքերով, Արթինովի հետ որսի էր գնում, խաղում էր մեկ արարվածով պիեսներում, ընթրում էր և ավելի ու ավելի հազվադեպ էր լինում յուրայինների մոտ։ Պյոտր Լեոնտիչը առաջվանից ավելի շատ էր խմում, փող չկար և ֆիսհարմոնիան վաղուց արդեն ծախել էին պարտքի դիմաց։ Տղաները հիմա նրան մենակ դուրս չէին թողնում և շարունակ հետևում էին, որ նա վայր չընկնի. և երբ Ստարո-Կիևսկայա փողոցում զբոսնելիս նրանց հանդիպում էր Անյան զույգ ձիեր լծած կառքով, կառապանի փոխարեն նստի-քին նստած Արթինովի հետ, Պյոտր Լեոնտիչը հանում էր ցիլինդրը և պատրաստվում էր ինչ-որ բան բղավել, իսկ Պետյան և Անդրյուշան բռնում էին նրա թևատակերից ու աղերսանքով ասում.

— Պետք չէ, հայրիկ... Թողեք, հայրիկ...

1895

ՎԵՐՆԱՀԱՐԿՈՎ ՏՈՒՆԸ

(Նկարչի պատմածը)

I

Վեց-յոթ տարի առաջ էր դա, երբ ես ապրում էի Տ. նահանգի գավառներից մեկում, կալվածատեր Բելոկուրովի դաստակերտում։ Նա երիտասարդ էր, շատ վաղ էր վեր կենում, ման էր գալիս անթև բաճկոնակով, երեկոները գարեջուր էր խմում և շարունակ գանգատվում էր ինձ, թե ո՛չ մի տեղ և ո՛չ ոքի մոտ համակրություն չի գտնում։ Նա ապրում էր այգում, ֆլիգելում, իսկ ես՝ տերունական հին տանը, հսկայական սյունազարդ դահլիճում, որտեղ ոչ մի կահույք չկար, բացի մի լայն բազմոցից, որի վրա քնում էի, և մի սեղանից, որի վրա էլ խաղաթղթերով

վիճակ էի բաց անում։ Այդտեղ միշտ էլ, նույնիսկ խաղաղ եղանակին, ամոսովյան[1] հին վառարանների միջից դղրդոց էր լսվում, իսկ ամպրոպի ժամանակ ամբողջ տունը ցնցվում էր, և թվում էր, թե բաժան-բաժան է լինելու, ու մի քիչ էլ սարսափելի էր, մանավանդ գիշերը, երբ տասը պատուհաններն էլ հանկարծ լուսավորվում էին կայծակից։

Ճակատագրի կողմից մշտական պարապության դատապարտված լինելով՝ ես բացարձակապես ոչինչ չէի անում։ Ժամերով իմ պատուհաններից նայում էի երկնքին, թռչուններին, ծառուղուն, կարդում էի այն ամենը, ինչ փոստից բերում էին ինձ համար, ու քնում էի։ Երբեմն տնից դուրս էի գալիս և մինչև ուշ գիշեր թափառում էի որևէ տեղ։

Մի անգամ տուն վերադառնալիս պատահաբար հասա մի անծանոթ դաստակերտի։ Արևն արդեն թաքնվել էր, և ծաղկած տարեկանի վրա փռվել էին իրիկնային ստվերները։ Խիտ տընկված ու խիստ բարձր հին եղևնիները երկու շարք կանգնած էին երկու միապաղաղ պատի նման՝ կազմելով մի մռայլ, գեղեցիկ ծառուղի։ Ես հեշտությամբ անցա ցանկապատից և առաջացա այդ ծառուղով՝ սայթաքելով եղևնու փշատերևներից, որոնք մի վերշոկ ծածկել էին գետինը։ Լուռ էր ու մութ, միայն եղևնիների կատարներին տեղ-տեղ դողդողում էր մի վառ, ոսկեգույն լույս և ծիածանակերպ վեռվեռում էր սարդոստայնների վրա։ Խեղդվելու աստիճան ուժեղ էր փշատերևի հոտը։ Հետո ես շրջվեցի դեպի լորիների երկար ծառուղին։ Այդտեղ նույնպես նկատվում էր լքվածություն ու հնություն. անցած տարվա տերևները տխրագին խշխշում էին ոտքերիս տակ, և մթնշաղին, ծառերի արանքում ստվերներ էին թաքնվել։ Աջ կողմը, հինավուրց պաղատու այգում, դժկամությամբ, թույլ ձայնով երգում էր գուցե նույնպես ծերացած մի պիրոլ թռչուն։ Բայց ահա վերջացան և լորիները. ես անցա տեռասը ու վերնահարկի մի սենյակ ունեցող սպիտակ տան մոտով, և անսպասելիորեն իմ առաջ բացվեց մի տեսարան—տերունական տունն ու մի լայն լճակ՝ լոգարանով, կանաչ ուռենիների մի պուրակ, մյուս ափին մի գյուղ՝ բարձր ու նեղ զանգակատնով, որի վրա վառվում էր խաչը, արտացոլելով մայր մտնող արևը։ Մի ակնթարթ ինձ համակեց մի հարազատ, խիստ ծանոթ բանի թովչանք. կարծես թե ես այդ համայ-

[1] Հին ձևի պատի աղյուսաշեն կլորաձև վառարան։

նապատակերը տեսել էի մի ժամանակ, մանկությանս օրերին։

Իսկ սպիտակ, քարակերտ դարբասի մոտ, որը բակից տանում էր դաշտը, կողքերին առյուծաքանդակներ ունեցող հինավուրց ամուր դարբասի մոտ կանգնած էին երկու աղջիկ։ Նրանցից ավելի մեծահասակը, որ նրբակազմ էր, դժգույն, խիստ գեղեցիկ և շաղանակագույն մազերի մի ամբողջ դեզ ուներ գլխին ու փոքրիկ, կամակոր բերան, խստահայաց էր և հազիվ ուշք դարձրեց ինձ. մյուսը, որ դեռ բոլորովին մանկահասակ էր, տասնյոթ-տասնութ տարեկան, ոչ ավելի, նույնպես նրբակազմ ու դժգույն, մեծ բերանով ու մեծ աչքերով, զարմացած նայեց ինձ, երբ անցա կողքից, անգլերեն մի բան ասաց ու շփոթվեց, և ինձ թվաց, որ այս երկու սիրելի դեմքերն էլ վաղուց արդեն ծանոթ են ինձ։ Ու ես վերադարձա տուն այնպիսի զգացմունքով, որ կարծես մի լավ երազ էի տեսել։

Դրանից քիչ հետո, երբ մի անգամ ես ու Բելոկուրովը զբոսնում էինք տան մոտ, անսպասելի կերպով խոտերը խշխշացին, և բակ մտավ զսպանակավոր մի կառք, որի մեջ նստած էր այդ աղջիկներից մեկը։ Քույրերից մեծն էր։ Նա եկել էր Հրդեհի աղետյալների համար օգնություն խնդրելու հանգանակության ցուցակով։ Առանց նայելու մեզ՝ նա խիստ լրջորեն ու հանգամանորեն պատմեց, թե քանի տուն էր վառվել Սիանով գյուղում, քանի տղամարդ, կին ու երեխա անօթևան են մնացել և ինչ է ուզում անել առաջին հերթին հրկիզյալներին օգնող կոմիտեն, որի անդամն էր նա հիմա։ Ցուցակը մեզ ստորագրել տալուց հետո նա պահեց թուղթը և անմիջապես սկսեց հրաժեշտ տալ։

— Մեզ բոլորովին մոռացել եք, Պյո՛տր Պետրովիչ,— ասաց նա Բելոկուրովին՝ ձեռքը պարզելով նրան։— Եկեք, և եթե monsieur N.-ը (նա ասաց իմ ազգանունը) ցանկանա նայել, թե ինչպես են ապրում նրա տաղանդը հարգողները, և բարեհաճի մեզ մոտ գալ, ապա մայրիկն ու ես խիստ ուրախ կլինենք։

Ես հարգանքով խոնարհվեցի։

Երբ նա մեկնեց, Պյոտր Պետրովիչն սկսեց պատմել։ Ըստ նրա ասածի՝ այդ աղջիկը լավ ընտանիքից էր, անունը Լիդիա Վոլչանինովա, իսկ այն կալվածքը, որտեղ ապրում էր նա մոր ու քրոջ հետ, ինչպես նաև լճակի մյուս ափին գտնվող գյուղը, կոչվում է Շոլկովկա։ Նրա հայրը ժամանակին կարևոր պաշտոն ուներ Մոսկվայում և մեռավ գաղտնի խորհրդականի աստիճանով։ Չնայած լավ միջոցներին՝ Վոլչանինովներն ապրում էին

գյուղում, առանց այնտեղից դուրս գալու, ամառ ու ձմեռ, և Լիդիան ուսուցչուհի էր Շոլկովկայի զեմստվային դպրոցում ու ստանում էր ամսական քսանհինգ ռուբլի։ Նա միայն այդ գումարն էր ծախսում իր վրա և պարծենում էր, որ ապրում է իր վաստակով։

— Հետաքրքրական ընտանիք է,— ասաց Բելոկուրովը։— Ինչո՞ւ չէ, գնանք մի անգամ նրանց մոտ։ Շատ կուրախանան ձեզ տեսնելով։

Մի տոն օր, ճաշից հետո, մենք հիշեցինք Վոլչանինովներին և մեկնեցինք Շոլկովկա՝ նրանց մոտ։ Նրանք՝ մայրն ու երկու աղջիկները, տանն էին։ Մայրը՝ Եկատերինա Պավլովնան, որ ժամանակին, ըստ երևույթին, գեղեցիկ էր եղել, իսկ այժմ տարիքին անհամապատասխան չափով գիրացած, շնչարգելությամբ հիվանդ, թախծոտ, մտացրիվ, ջանում էր զբաղեցնել ինձ նկարչության մասին խոսելով։ Աղջկանից իմանալով, որ գուցե ես Շոլկովկա գամ, նա հապճեպորեն հիշել էր Մոսկվայի ցուցահանդեսներում տեսած իմ երկու-երեք պեյզաժները և հիմա հարցնում էր, թե ինչ եմ ուզեցել արտահայտել այդ նկարներով։ Լիդիան, կամ ինչպես տանն էին ասում՝ Լիդան, ավելի շատ Բելոկուրովի, քան թե ինձ հետ էր խոսում։ Լրջադեմ, առանց ժպտալու նա հարցնում էր նրան, թե ինչու չի պաշտոնավարում զեմստվոյում և ինչու մինչև հիմա չի մասնակցել զեմստվոյի ոչ մի ժողովին։

— Լավ չէ, Պյո՛տր Պետրովիչ,— ասում էր նա հանդիմանաբար։— Լավ չէ։ Ամոթ է։

— Ճիշտ է, Լի՛դա, ճիշտ է,— համաձայնում էր մայրը։— Լավ չէ։

— Մեր ամբողջ գավառը գտնվում է Բալագինի ձեռքում,— շարունակեց Լիդան՝ դիմելով ինձ։— Ինքը գավառական վարչության նախագահն է և գավառի բոլոր պաշտոնները տվել է իր մոտիկ ազգականներին և ուզածն անում է։ Պետք է պայքարել։ Երիտասարդությունն ինքնին պետք է մի ուժեղ խմբակցություն կազմի. բայց տեսնում եք, ինչպիսի՞ն է մեր երիտասարդությունը։ Ամոթ է, Պյո՛տր Պետրովիչ։

Քանի դեռ զեմստվոյի մասին էին խոսում, փոքր քույրը՝ Ժենյան լուռ էր։ Նա չէր մասնակցում լուրջ խոսակցություններին, ընտանիքում դեռ նրան չափահաս չէին համարում և որպես փոքրիկ՝ անվանում էին Միսյուս, որովհետև մանկության օրե-

ին նա այդպես միսի էր կոչում իր տնային դաստիարակչուհուն։ Ամբողջ ժամանակ նա հետաքրքրությամբ նայում էր ինձ, և երբ ես դիտում էի ալբոմի լուսանկարները՝ բացատրում էր. «Քեռին է դա... սա էլ կնքահայրս է», և մատը սահեցնում էր նկարների վրայով և այդ միջոցին ուսը երեխայի պես դիպցնում էր ինձ, ու ես մոտիկից տեսնում էի նրա թույլ, չզարգացած կուրծքը, բարակ ուսերը, մազերի հյուսը և գոտիով սեղմ պրկված նիհար մարմինը։

Մենք կրոկետ ու lown-tennis[1] խաղացինք, զբոսնեցինք այգում, թեյեցինք, հետո երկար ժամանակ ընթրեցինք։ Սյունազարդ, հսկայական, դատարկ դահլիճից հետո ես մի տեսակ լավ էի զգում ինձ այդ փոքրիկ անդորրավետ տանը, որի պատերին յուղանկարների արտատպություններ չկային և սպասուհու հետ դուք-ով էին խոսում, և ամեն ինչ ինձ թվում էր երիտասարդ ու մաքուր՝ Լիդիայի ու Միսյուսի ներկայության շնորհիվ, և ամեն ինչից պատշաճավորություն էր հառնում։ Ընթրիքի ժամանակ Լիդան նորից սկսեց Բելոկուրովի հետ խոսել զեմստվոյի, Բալագինի, դպրոցական գրադարանների մասին։ Նա աշխույժ, անկեղծ ու իր հայացքներին համոզված աղջիկ էր, և հետաքրքրական էր լսել նրան, թեև շատ ու բարձր էր խոսում, գուցե այն պատճառով, որ այդպես էր վարժվել դպրոցում խոսել։ Բայց դրան հակառակ իմ Պյոտր Պետրովիչը, որ դեռ ուսանողական շրջանից պահել էր ամեն մի խոսակցություն վեճի վերածելու իր սովորությունը, խոսում էր տաղտկալի, դանդաղ ու երկար՝ խելացի ու առաջավոր մարդ երևալու ակներև ցանկությամբ։ Ձեռքի շարժումներ անելիս նա թևով շուռ տվեց կերակրի ամանը, և սփռոցի վրա մի մեծ լճակ կազմվեց, բայց կարծես ինձնից բացի ոչ ոք չնկատեց դա։

Խաղաղ ու մութ էր, երբ մենք վերադառնում էինք տուն։

— Լավ դաստիարակությունն այն չէ, որ կերակուրը սփռոցին չթափես, այլ այն է, որ երբ մեկ ուրիշը թափի՝ ինքդ չնկատես,— ասաց Բելոկուրովը և հառաչեց։— Այո, հիանալի, ինտելիգենտ ընտանիք է։ Ետ եմ մնացել լավ մարդկանցից, ա՜խ, ինչպե՜ս եմ ետ մնացել։ Եվ դրա պատճառը գործե՜րն են, գործե՜բը, անվերջ գործերը։

Նա ասում էր, թե ինչքան շատ պետք է աշխատես, երբ

[1] Լաուն—թենիս (անգլ.)։

ուզում ես գյուղական օրինակելի տնտեսատեր լինել։ Իսկ ես մտածում էի՝ այս ի՞նչ ծանրաշարժ ու ծույլ մարդ է։ Երբ նա որևէ լուրջ բանի մասին էր խոսում՝ ապա լարված ձգում էր «է-է-է-է», և աշխատում էր այնպես, ինչպես խոսում էր դանդաղ, միշտ էլ ուշանալով, ժամկետներից ետ ընկնելով։ Նրա գործնականությանը ես քիչ էի հավատում, թեկուզ իմ նամակների պատճառով, որ հանձնում էի նրան փոստ ուղարկելու, և նա շաբաթներով թողնում էր իր գրպանում։

— Ամենածանրը,— մոթմոթում էր նա՝ կողքիցս քայլելով,— ամենածանրը այն է, երբ աշխատում ես և ոչ ոքի մոտ համակրանք չես գտնում։ Ո՛չ մի համակրանք։

II

Ես սկսեցի հաճախակի այցելել Վոլչանինովներին։ Սովորաբար նստում էի տեռասի ստորին աստիճանի վրա. տանջվում էի ինքս ինձնից դժգոհ լինելուց, ափսոսում էի իմ կյանքը, որ անցնում էր այդպես արագ ու անհետաքրքրական, ու շարունակ մտածում էի, թե որքա՞ն լավ կլիներ կրծքիցս պոկեի սիրտս, որն այնքան ծանրացել էր ինձ համար։ Իսկ այդ միջոցին տեռասում խոսում էին, լսվում էր շրջազգեստների շրշյուն, գիրք էին թերթում։ Ես շուտով վարժվեցի, թե ինչպես ցերեկը Լիդան հիվանդներ էր ընդունում, դրքեր էր տալիս ու հաճախ գլխաբաց գյուղ էր գնում, հովանոցը բռնած, իսկ երեկոյան բարձրաձայն խոսում էր զեմստվոյի և դպրոցների մասին։ Այդ բարակ, գեղեցիկ, մշտապես խստահայաց աղջիկը, փոքրիկ, նրբագեղ գծված բերանով, ամեն անգամ գործնական խոսակցություն սկսելիս ինձ շոր-շոր ասում էր.

— Սա ձեզ համար հետաքրքրական չէ։

Նա չէր համակրում, չէր սիրում ինձ, որովհետև ես պեյզաժիստ էի և իմ նկարների մեջ չէի պատկերում ժողովրդի կարիքը և, ինչպես նրան էր թվում, անտարբեր էի այն բանին, ինչին նա հաստատ հավատում էր։ Հիշում եմ, երբ մի անգամ ճամփորդում էի Բայկալի ափով, հանդիպեցի մի բուրյաթ ձիավոր աղջկա՝ վերնաշապկով ու կապույտ դաբայե անդրավարտիքով, հարցրի նրան, թե չի՞ ծախի ինձ իր ծխամորճը։ Երբ մենք խոսում էինք՝ նա արհամարհանքով նայում էր իմ եվրոպական դեմքին ու դյուրարկին. և իսկույն ձանձրացավ ինձ հետ խոսե-

լուց, ձին քշեց ու սլացավ։ Լիդան էլ ճիշտ այդպես արհամարհում էր իմ մեջ եղած օտարին։ Արտաքուստ նա ոչ մի կերպ չէր արտահայտում իմ հանդեպ տածած դժկամությունը, բայց ես զգում էի այդ և տեռասի ստորին աստիճանին նստած՝ ջղայնանում էի ու մտածում, թե առանց բժիշկ լինելու գեղջուկներին բուժել՝ նշանակում է խաբել նրանց, և հեշտ է բարեգործ լինել, երբ երկու հազար դեսյատին հող ունես։

Իսկ նրա քույրը՝ Միսյուսը, ոչ մի հոգս չուներ և անց էր կացնում իր կյանքը կատարյալ անգործության մեջ, ինչպես ես։ Առավոտյան վեր կենալով՝ անմիջապես վերցնում էր գիրքը ու տեռասում, մի խոր բազկաթոռի նստած՝ կարդում էր, այնպես որ նրա ոտքերը հազիվ էին դիպչում գետնին, կամ գիրքն առած՝ թաքնվում էր լորիների ծառուղում և կամ թե դարբասից դուրս էր գալիս, գնում դաշտ։ Կարդում էր ամբողջ օրը՝ ագահաբար նայելով գրքին, և երբ նրա հայացքը երբեմն դառնում էր ընկճված, շշմած, ու դեմքը սաստիկ գունատվում էր, կարելի էր կռահել, թե ինչպես այդ ընթերցանությունը հոգնեցնում է նրա ուղեղը։ Երբ ես գալիս էի՝ նա ինձ տեսնելով թեթևակի կարմրում էր, թողնում գիրքը և աշխույժ ու խոշոր աչքերը հառելով վրաս՝ պատմում էր, թե ինչ է պատահել. օրինակ՝ ծառաների սենյակում վառվել է մուրը, կամ թե՝ մշակը լճակից մի խոշոր ձուկ է բռնել։ Լի օրերին նա սովորաբար հագնում էր բաց գույնի վերնաշապիկ և մուգ կապույտ շրջագգեստ։ Զբոսնում էինք միասին, բալ էինք քաղում մուրաբայի համար կամ նավակ էինք նստում. երբ նա ձգվում էր բալ քաղելու կամ թիավարում էր նավակը, լայն թևքերի միջից նշմարվում էին նրա բարակ, թույլ բազուկները, կամ ես էտյուդ էի նկարում, իսկ նա կանգնում էր մոտս ու հիացած դիտում։

Մի կիրակի, հուլիսի վերջին, ես գնացի Վոլչանինովների մոտ առավոտյան ժամը մոտ տասին։ Անցա պուրակով՝ տնից հեռու, և փնտրում էի սպիտակ սնկեր, որ այդ տարի շատ կային, ու նշաններ էի դնում դրանց մոտ, որպեսզի հետո Ժենյայի հետ հավաքենք։ Տաք քամի էր փչում։ Ես տեսա, թե ինչպես Ժենյան ու մայրը, երկուսն էլ տոնական բաց գույնի զգեստներով, եկեղեցուց գնում էին տուն, իսկ Ժենյան քամուց պահում էր գլխարկը։ Հետո տեսա, թե ինչպես տեռասում թեյ էին խմում։

Ինձ համար, անհոգ ու իր մշտական անգործության արդարացումը չգտնող մարդուս համար, այդ ամառային տոնական

առավոտները մեր դաստակերտներում միշտ էլ արտակարգ գրավիչ էին։ Երբ ցողից տակավին խոնավ կանաչ այգին ամբողջովին ժպտում է արևից և իրեն զգում է երջանիկ, երբ տան շուրջ հափրուկի ու դափնեվարդի հոտ է բուրում, երիտասարդությունը հենց նոր վերադարձել է եկեղեցուց ու թեյում է այգում, և երբ ամենքն էլ այնպես գեղեցիկ են հագնված ու զվարթ են, և երբ գիտես՝ այդ առողջ, կուշտ, գեղեցիկ մարդիկ բոլորն էլ ամբողջ երկար ցերեկը ոչինչ չեն անելու, ապա ուզում ես, որ ողջ կյանքն այդպես լինի։ Եվ հիմա էլ ես նույնն էի մտածում ու քայլում այգում՝ պատրաստ այդպես անգործ ու աննպատակ քայլելու ողջ օրը, ողջ ամառը։

Եկավ Ժենյան՝ մի զամբյուղ բռնած. այնպիսի արտահայտություն ուներ նա, կարծես գիտեր կամ նախազգում էր, թե ինձ կգտնի այգում։ Մենք սունկ էինք հավաքում ու խոսում, և երբ որևէ բան էր հարցնում նա, ապա առաջ էր գալիս, որպեսզի տեսնի իմ դեմքը։

— Երեկ մեր գյուղում հրաշք տեղի ունեցավ,— ասաց նա,— Կաղ Պելագեյան մի ամբողջ տարի հիվանդ էր, ո՛չ բժիշկներն էին օգնել, ո՛չ էլ դեղերը, իսկ երեկ մի պառավ աղոթեց նրան, ու ցավն անցավ։

— Այդ կարևոր չէ,— ասացի ես։— Հրաշք չպետք է փնտրել միայն հիվանդների ու պառավների մոտ։ Մի՞թե առողջությունը հրաշք չէ։ Հապա կյա՞նքը։ Ինչ անհասկանալի է, այն էլ հրաշք է։

— Իսկ ձեզ համար սոսկալի չէ՞ այն, ինչ անհասկանալի է։

— Ոչ։ Այն երևույթներին, որ ես չեմ հասկանում, մոտենում եմ առույգ ու չեմ ենթարկվում նրանց։ Ես բարձր եմ նրանցից։ Մարդը պետք է իրեն դասի առյուծներից, վագրերից, աստղերից բարձր, բնության ամեն ինչից բարձր, նույնիսկ այն ամենից բարձր, ինչ անհասկանալի է ու թվում է հրաշալի, ապա թե ոչ նա մարդ չէ, այլ մուկ, որն ամեն ինչից վախենում է։

Ժենյան կարծում էր, որ ես, որպես նկարիչ, շատ բան գիտեմ և կարող եմ ճիշտ կռահել այն, ինչ չգիտեմ։ Նա ուզում էր, որ իրեն տանեմ դեպի հավերժի ու սքանչելիքի աշխարհը, այն վեհ աշխարհը, որը նրա կարծիքով իմ տարերքն էր, և նա խոսում էր ինձ հետ աստծու, հավիտենական կյանքի և երանության մասին։ Եվ ես, որ հնարավոր չէի համարում, թե ինքս ու իմ երևակայությունը մահվանից հետո ընդմիշտ կոչնչանանք,

պատասխանում էի. «Այո, մարդիկ անմահ են», «այո, մեզ սպասում է հավիտենական կյանքը»։ Իսկ նա լսում էր, հավատում և ապացույց չէր պահանջում։

Երբ գնում էինք տուն՝ նա հանկարծ կանգ առավ և ասաց.

— Մեր Լիդան զարմանալի աղջիկ է, այնպես չէ՞։ Ես նրան անչափ սիրում եմ և կարող էի ամեն րոպե կյանքս զոհաբերել նրա համար։ Բայց ասացեք,— Ժենյան մատը կպցրեց իմ թևին,— ասացեք, ինչո՞ւ եք շարունակ վիճում նրա հետ։ Ինչո՞ւ եք ջղայնացած։

— Որովհետև նա իրավացի չէ։

Ժենյան բացասաբար օրորեց գլուխը, և նրա աչքերի մեջ արցունքներ երևացին։

— Որքա՜ն անհասկանալի է դա։

Այդ ժամանակ Լիդան նոր էր վերադարձել ինչ-որ տեղից և աստիճանների մոտ կանգնած՝ մտրակը ձեռքին, վայելչակազմ, գեղեցիկ, արևից պայծառացած՝ ինչ-որ բան էր հրամայում մշակին։ Շտապելով ու բարձրաձայն խոսելով՝ նա ընդունեց երկու-երեք հիվանդ, հետո գործնական, մտազբաղ տեսքով անցավ սենյակներով, բացելով մե՛րթ մի պահարանը, մե՛րթ մյուսը ու գնաց վերնահարկ։Երկար որոնում էին նրան ու կանչում ճաշի, և երբ նա եկավ, մենք արդեն սուպը կերել էինք։ Չգիտեմ ինչու՝ հիշում եմ այս բոլոր մանրամասնություններն ու սիրում, ես լավ հիշում եմ և՛ այդ ամբողջ օրը, թեև ոչ մի առանձնակի բան տեղի չունեցավ։ Ճաշից հետո Ժենյան խոր բազկաթոռին ընկողմանած՝ կարդում էր, իսկ ես նստած էի տեռասի ստորին աստիճանի վրա։ Մենք լուռ էինք։ Ամբողջ երկինքը ծածկվեց ամպերով և սկսեց հատուկենտ, մանր անձրև կաթկթել։ Շոգ էր, քամին վաղուց դադարել էր, և թվում էր, թե այդ օրը բնավ չի վերջանա։ Մեզ մոտ՝ տեռաս եկավ Եկատերինա Պավլովնան՝ քունն առած, հովհարը ձեռքին։

— Օ՜, մայրի՛կ,— ասաց Ժենյան՝ համբուրելով նրա ձեռքը,— քեզ համար վնաս է ցերեկը քնել։

Նրանք պաշտում էին իրար։ Երբ մեկը գնում էր այգի, մյուսը կանգնում էր տեռասում և նայելով ծառերին՝ ձայն էր տալիս. «աո՜ւ, Ժե՛նյա», կամ «մամա՜, սիրելիս, ո՞ւր ես դու»։ Նրանք միշտ միասին էին աղոթում, երկուսն էլ հավասարապես հավատում էին և լավ հասկանում իրար, երբ նույնիսկ լուռ էին։ Մարդկանց էլ միատեսակ էին վերաբերվում։ Եկատերինա Պավ-

լովնան էլ շուտով բարեկամացավ ինձ հետ, և երբ երկու-երեք օր չէի երևում, մարդ էր ուղարկում իմանալու՝ արդյոք հիվանդ հո չե՞մ։ Իմ էտյուդները նա էլ էր հիացմունքով դիտում, և նույնպիսի շաղակրատությամբ ու նույնքան անկեղծորեն, ինչպես Միսյուսը, պատմում էր ինձ, թե ինչ նորություններ կան, հաճախ էլ հաղորդակից էր անում իրենց տան գաղտնիքներին։

Նա երկյուղածություն էր տածում իր ավագ աղջկա նկատմամբ։ Իսկ Լիդան երբեք սիրաշահություն չէր անում, խոսում էր միայն լուրջ բաների մասին, ապրում էր իր առանձնահատուկ կյանքով, և՛ մոր, և՛ քրոջ համար նա նույնքան սուրբ, մի քիչ էլ հանելուկային անձնավորություն է, ինչպես նավաստիների համար ծովակալը, որ շարունակ նստում է իր նավախցիկում։

— Մեր Լիդան զարմանալի աղջիկ է,— ասում էր հաճախ մայրը.— այնպես չէ՞։

Եվ հիմա, քանի դեռ անձրև էր կաթկթում, մենք խոսում էինք Լիդայի մասին։

— Նա զարմանալի աղջիկ է,— ասաց մայրը և վախեցած շուրջը նայելով՝ կիսաձայն ու դավադիր շեշտով ավելացրեց։— Նրա պես աղջիկ ճրագով չես գտնի, թեև գիտե՞ք ինչ, ես սկսում եմ մի քիչ անհանգստանալ։ Դպրոց, դեղորայք, գրքեր — այդ բոլորը լավ, բայց ինչո՞ւ ծայրահեղության հասնել։ Չէ՞ որ նա արդեն քսանչորսի մեջ է, ժամանակն է՝ լրջորեն մտածի իր մասին։ Այդպես խելքը դեղերին ու գրքերին տալով՝ չես էլ նկատի, կյանքն ինչպես կանցնի... Ամուսնանալ է պետք։

Ժենյան ընթերցանությունից գունատված, սանրվածքը խառնված, բարձրացրեց գլուխը և նայելով մորը՝ կարծես ինքն իրեն ասաց.

— Մայրի՛կ, ամեն ինչ ատծու կամքից է կախված։

Ու նորից շարունակեց ընթերցանությունը։

Եկավ Բելոկուրովը անթև բաճկոնակով ու ասեղնագործված բլուզով։ Մենք կրոկետ ու lown-tennis խաղացինք, հետո, երբ մթնեց, երկար ընթրեցինք, և Լիդան նորից խոսում էր դպրոցների և Բալագինի մասին, որն ամբողջ գավառը իր ձեռքն է առել։ Այդ երեկո Վոլչանինովների տնից մեկնելիս՝ ես ինձ հետ տարա խիստ երկար, անգործ օրվա տպավորություն, տխրությամբ գիտակցելով, որ ամեն ինչ վերջանում է այս աշխարհում, որքան էլ դա երկար լինի։ Մինչև դարբասը մեզ ճանապարհ դրեց Ժենյան, գուցե այն պատճառով, որ ամբողջ օրը՝ առավոտից

Մինչև երեկո ինձ հետ էր անցկացրել, և ես զգացի, որ առանց նրան մի տեսակ տխրություն եմ զգում, այդ ամբողջ համակրելի ընտանիքը մոտ է իմ սրտին. և ողջ ամառվա ընթացքում ես առաջին անգամ նկարելու ցանկություն ունեցա։

— Ասացե՛ք, ինչո՞ւ եք այդպես տաղտկալի, այդպես անգույն ապրում,— հարցրի ես Բելոկուրովին՝ միասին տուն վերադառնալիս։— Իմ կյանքը ձանձրալի է, ծանր, միակերպ, որովհետև ես արվեստագետ եմ, ես տարօրինակ մարդ եմ, պատանեկության տարիներից ինձ կրծել են նախանձը, ինքս ինձնից դժգոհ լինելը, իմ գործին չհավատալը. ես միշտ աղքատ եմ, միշտ թափառաշրջիկ, բայց դուք, որ առողջ, նորմալ մարդ եք, կալվածատեր ու մեծատուն, ինչո՞ւ եք այդպես անհետաքրքիր ապրում, կյանքից այդքան քիչ եք վերցնում։ Օրինակ՝ ինչո՞ւ մինչև հիմա չեք սիրահարվել Լիդային կամ Ժենյային։

— Դուք մոռանում եք, որ ես ուրիշ կնոջ եմ սիրում,— պատասխանեց Բելոկուրովը։

Այդ նա ասում էր իր ընկերուհու՝ Լյուբով Իվանովնայի մասին, որը ապրում էր նրա հետ, նույն ֆլիգելում։ Ես ամեն օր տեսնում էի, թե ինչպես այդ խիստ գեր, փափլիկ, ամբարտավան, գիրացված սագի նմանող կինը զբոսնում էր այգում, ուլունքներով զարդարուն ռուսական տարազով, միշտ էլ հովանոցը գլխին, և սպասուհին ստեպ-ստեպ կանչում էր նրան մե՛րթ ուտելու, մե՛րթ թեյելու։ Երեք տարի առաջ նա վարձել էր ֆլիգելներից մեկը ամառանոցի համար ու այդպես էլ մնացել էր Բելոկուրովի մոտ, ըստ երևույթին՝ ընդմիշտ։ Նա Բելոկուրովից մի տասը տարով մեծ էր և խստորեն կառավարում էր նրան, այնպես որ տնից գնալիս Բելոկուրովը պետք է թույլտվություն խնդրեր նրանից։ Նա հաճախ հեկեկում էր տղամարդու ձայնով, այդ ժամանակ ես մարդ էի ուղարկում նրան ասելու, որ եթե չդադարի՝ ապա կհեռանամ բնակարանից, և նա դադարում էր։

Երբ տուն հասանք, Բելոկուրովը նստեց բազմոցին և խոժոռված ընկավ մտածմունքի մեջ։ Իսկ ես սկսեցի երթևեկել դահլիճում՝ սիրահարվածի պես խաղաղ անհանգստություն զգալով։ Ես Վոլշանինովների մասին խոսելու ցանկություն ունեի։

— Լիդան կարող է միայն զեմստվոյականի սիրել, որը նույնպես իր նման հիվանդանոցներով ու դպրոցներով ոգևորված լինի,— ասացի ես։— Օ՜, այդպիսի աղջկա սիրուն կարելի է ոչ միայն զեմստվոյական լինել, այլ նույնիսկ, ինչպես հե-

քիաթում, երկաթե կոշիկ մաշել։ Հապա Միսյո՞սը։ Ի՞նչ հիանալի աղջիկ է այդ Միսյուսը։

Բելոկուրովը մի «է-է-է-է» երկարաձգելով՝ խոսեց դարի հիվանդության՝ հոռետեսության մասին։ Նա խոսում էր վստահ ու այնպիսի շեշտով, կարծես թե ես վիճում էի իր հետ։ Հարյուրավոր վերստ ամայի, միօրինակ, խանձված տափաստանը չի կարող այնպիսի վհատություն առաջացնել, որքան այն մարդը, որ նստած խոսում է և հայտնի չէ, թե երբ կգնա։

— Բանը հոռետեսությունը չէ, ոչ էլ լավատեսությունը,— ասացի ես ջղայնացած,— այլ այն, որ հարյուրից իննսունինը խելք չունի։

Բելոկուրովը իր վրա ընդունեց դա, վիրավորվեց ու դուրս գնաց։

III

— Մալոզյոմովում հյուր է եկել իշխանը, քեզ բարև է անում,— ասում էր Լիդան մորը՝ ինչ-որ տեղից վերադառնալով ու հանելով ձեռնոցները։— Շատ հետաքրքրական բաներ էր պատմում... Խոստացավ նահանգական ժողովում նորից բարձրացնել Մալոզյոմովում բժշկական կայան հիմնելու հարցը. բայց, ասում է, քիչ հույս կա։— Եվ դիմելով ինձ՝ ասաց.— Ներեցեք. ես շարունակ մոռանում եմ, որ սա չի կարող հետաքրքրական լինել ձեզ համար։

Ես վրդովվեցի։

— Իսկ ինչո՞ւ հետաքրքրական չէ,— հարցրի ես և ուսերս թոթվեցի։— Ձեզ հաճելի չէ իմանալ իմ կարծիքը, սակայն վստահեցնում եմ, որ այդ հարցը խիստ հետաքրքրական է ինձ։

— Այո՞։

— Այո։ Իմ կարծիքով Մալոզյոմովում բժշկական կայան բնավ էլ պետք չէ։

Նա զգաց իմ վրդովմունքը, աչքերը կկոցելով նայեց ինձ, հարցրեց.

— Իսկ ի՞նչ է պետք։ Պեյզաժնե՞ր։

— Պեյզաժներ էլ պետք չեն։ Այնտեղ ոչինչ պետք չէ։

Նա վերջացրեց ձեռնոցներ հանելը և բացեց թերթը, որ հենց նոր էին բերել փոստից. մի բոպե անց նա կամացուկ, ակներևաբար զսպելով իրեն՝ ասաց.

— Անցած շաբաթ ծննդաբերությունից մահացավ Աննան, իսկ եթե մոտերքը բժշկական կայան լիներ, կենդանի կմնար։ Եվ պարոն պեյզաժիստները, ինձ թվում է, պետք է որևէ համոզմունք ունենան դրա մասին։

— Այդ մասին ես խիստ որոշակի համոզում ունեմ, վստահեցնում եմ ձեզ,— պատասխանեցի ես, իսկ նա դեմքը լրագրով ծածկեց ինձնից՝ կարծես չցանկանալով լսել։— Ըստ իս, բժշկական կայանները, դպրոցները, գրադարանները, դեղատները, դոյություն ունեցող այս պայմաններում, միայն ստրկացման են ծառայում։ Ժողովուրդը ցանցված է մի մեծ շղթայով, և դուք չեք կտրում այդ շղթան, այլ նոր օղակներ եք միայն ավելացնում. ահա ձեզ իմ համոզմունքը։

Նա աչքերը բարձրացրեց ինձ վրա և հեգնանքով ժպտաց, իսկ ես շարունակեցի՝ ջանալով որսալ իմ գլխավոր միտքը.

— Կարևորն այն չէ, որ Աննան մեռավ ծննդաբերությունից, այլ այն, որ այդ բոլոր աննաները, մավրաները, պելագեյաները վաղ առավոտից մինչև մութն ընկնելը կորացնում են մեջքները, հիվանդանում են ուժից վեր աշխատանքից, ամբողջ կյանքում դողում են քաղցած ու հիվանդ երեխաների համար, ամբողջ կյանքում վախենում են մահանալուց ու հիվանդություններից, ամբողջ կյանքում բուժվում են, վաղ են թառամում, վաղ են ծերանում և մեռնում են կեղտի ու գարշահոտության մեջ. նրանց երեխաները մեծանալով՝ սկսում են նույն պատմությունը և այդպես հարյուրավոր տարիներ են անցնում, և միլիարդներով մարդիկ ապրում են կենդանիներից ավելի վատ, միայն ի սեր մի կտոր հացի՝ մշտական երկյուղ զգալով։ Նրանց դրության ամբողջ սարսափն այն է, որ ժամանակ չունեն հոգու մասին մտածելու, ժամանակ չունեն հիշելու իրենց դեմքն ու պատկերը. քաղցը, ցուրտը, կենդանական ահը, բաղում աշխատանքը ձյան հյուսերի պես փակել են նրանց բոլոր ուղիները դեպի հոգևոր գործունեությունը, հատկապես դեպի այն, ինչը մարդուն տարբերում է կենդանուց, և որը միակ բանն է, որի սիրույն արժե ապրել։ Դուք օգնության եք հասնում նրանց հիվանդանոցներով ու դպրոցներով. սակայն դրանով չեք ազատում կապանքներից, այլ ընդհակառակը՝ ավելի եք ստրկացնում, որովհետև նոր նախապաշարումներ մտցնելով նրանց կյանքի մեջ՝ ավելացնում եք նրանց պահանջների քանակը, չխոսելով արդեն այն մասին, որ

դեղերի ու գրքերի համար նրանք պետք է վճարեն զեմստվոյին, ուրեմն և ավելի ծռեն մեջքը։

— Ես ձեզ հետ չեմ վիճի,— ասաց Լիդան՝ լրագիրն իջեցնելով։— Արդեն լսել եմ դա։ Միայն մի բան կասեմ ձեզ՝ չի կարելի ձեռքերը ծալած նստել։ Ճիշտ է՝ մենք մարդությունը չենք փրկում և գուցե շատ բանում սխալվում ենք, բայց անում ենք այն, ինչ կարող ենք, և մենք իրավացի ենք։ Կուլտուրական մարդու ամենավեհ, ամենասուրբ խնդիրն է՝ ծառայել մերձավորներին, և մենք ճգնում ենք ծառայել, ինչպես կարողանում ենք։ Ձեզ դուր չի գալիս, բայց չէ՞ որ ամենքին գոհացնել չես կարող։

— Ճիշտ է, Լի՛դա, ճիշտ է,— ասաց մայրը։

Լիդայի ներկայությամբ նա միշտ էլ արիությունը կորցնում էր և խոսելիս անհանգիստ նայում էր նրան՝ վախենալով որևէ ավելորդ կամ անտեղի բան ասել, և երբեք չէր հակաճառում նրան, այլ միշտ համաձայնում էր,— ճիշտ է, Լի՛դա, ճիշտ է։

— Գեղջկական գրագիտությունը կամ ողորմելի խրատներ ու սրախոսություններ պարունակող գրքերը չեն կարող նվազեցնել ո՛չ տգիտությունը, ո՛չ մահացությունը, ինչպես որ ձեր պատուհանի լույսը չի կարող լուսավորել այս հսկայական այգին,— ասացի ես։— Դուք ոչինչ չեք տալիս, այլ միջամտելով այդ մարդկանց կյանքին՝ միայն նոր պահանջներ, աշխատելու նոր առիթ եք ստեղծում։

— Աստվա՜ծ իմ, բայց չէ՞ որ որևէ բան պետք է անել,— ասաց Լիդան վրդովմունքով, և նրա շեշտից նկատվում էր, որ իմ դատողությունները նա համարում է անարժեք ու արհամարհում է։

— Պետք է մարդկանց ազատել ֆիզիկական ծանր աշխատանքից,— ասացի ես։— Պետք է թեթևացնել նրանց լուծը, թույլ տալ, որ շունչ քաշեն, որպեսզի ամբողջ կյանքը չանցկացնեն վառարանի մոտ ու դաշտում, այլ նաև հոգու, ուսածու մասին մտածելու ժամանակ ունենան, կարողանան ավելի լայնորեն երևան բերել իրենց հոգևոր հատկությունները։ Ամեն մի մարդու կոչումը հոգևոր գործունեության՝ ճշմարտության և կյանքի իմաստի մշտական որոնման մեջ է։ Ուրեմն կենդանական կոպիտ աշխատանքը դարձրեք նրանց համար ավելորդ, թողեք, որ իրենց ազատ զգան, և այնժամ կտեսնեք, թե ըստ էության ի՞նչ ծաղր են այդ գրքերը և չնչին դեղերը։ Քանի մարդը գիտակցում է

իր իսկական կոչումը, նրան բավարարել կարող են միայն կրոնը, գիտությունները, արվեստները. իսկ դրանք դատարկ բաներ չեն։

— Աշխատանքից ազատե՞լ,— քմծիծաղ տվեց Լիդան։— Մի՞թե հնարավոր է դա։

— Այո։ Նրանց աշխատանքի մի մասը դուք վերցրեք։ Եթե մենք ամենքս՝ քաղաքի ու գյուղի բնակիչներս, առանց բացառության համաձայնեինք մեր մեջ բաժանել աշխատանքը, որը մարդկությունն ընդհանրապես գործադրում է ֆիզիկական պահանջները բավարարելու համար, ապա մեզնից յուրաքանչյուրին թերևս օրական երկու-երեք ժամից ավելի չընկներ։ Պատկերացրեք, որ ամենքս էլ՝ հարուստներն ու աղքատները, աշխատում ենք օրական միայն երեք ժամ, իսկ մեր մնացած ժամանակն ազատ է։ Պատկերացրեք նաև, որ մենք մեր մարմնից ավելի քիչ կախում ունենալու և ավելի քիչ աշխատելու համար հնարում ենք աշխատանքը փոխարինող մեքենաներ, ջանում ենք մեր ֆիզիկական պահանջների քանակը նվազագույնի հասցնել։ Մենք կոփում ենք մեզ, մեր երեխաներին, որ նրանք չվախենան քաղցից, ցրտից, և շարունակ չդողանք նրանց առողջության համար, ինչպես դողում են Աննան, Մավրան ու Պելագեյան։ Պատկերացրեք, որ մենք չենք բուժվում, չենք պահում դեղատներ, ծխախոտի, գինու գործարաններ. որքա՜ն վերջիվերջո ազատ ժամանակ է մնում մեզ։ Ամենքս էլ միասին այդ ազատ ժամանակը տալիս ենք գիտություններին ու արվեստներին։ Ինչպես գեղջուկները երբեմն միահավաք նորոգում են ճանապարհը, այնպես էլ մենք միասին, միահավաք ճշմարտություն ու կյանքի իմաստ կփընտրեինք և, ես վստահ եմ դրան, ճշմարտությունը շատ շուտ կգտնվեր, մարդը կազատվեր այդ մշտապես տանջող, ճնշող մահվան սարսափից և նույնիսկ բուն մահից։

— Բայց և այնպես դուք հակասում եք ձեզ,— ասաց Լիդան։— Ասում եք՝ գիտություն, գիտություն, բայց մերժում եք գրագիտությունը։

— Գրագիտություն, երբ մարդը հնարավորություն ունի կարդալ միայն գինետների ցուցանակները, երբեմն էլ այնպիսի գրքեր, որ չի հասկանում. այո, այդպիսի գրագիտություն գոյություն ունի մեզ մոտ Ռյուրիկի ժամանակից. գոգոլյան Պետրուշկան վաղուց արդեն գրագետ է, մինչդեռ գյուղը մինչև հիմա էլ մնացել է այնպես, ինչպես Ռյուրիկի օրոք էր։ Ոչ թե գրագիտություն է պետք, այլ հոգևոր ընդունակությունների լայն դրսևորում։ Պետք են ոչ թե դպրոցներ, այլ համալսարաններ։

— Դուք բժշկությո՞ւնն էլ եք բացասում։

— Այո։ Դա պետք կլիներ միայն հիվանդությունները, որպես բնության երևույթներ, ուսումնասիրելու համար, և ոչ թե դրանք բուժելու։ Իսկ եթե պետք է բուժել, ապա ոչ թե հիվանդությունները, այլ նրանց պատճառները։ Վերացրեք գլխավոր պատճառը՝ ֆիզիկական աշխատանքը, և այն ժամանակ հիվանդություններ չեն լինի։ Ես չեմ ընդունում բուժող գիտությունը,— շարունակեցի գրգռված։— Գիտություններն ու արվեստները, եթե իսկական են, ձգտում են ոչ թե ժամանակավոր, ոչ թե մասնակի նպատակների, այլ հավերժին ու ընդհանուրին. որոնում են կյանքի ճշմարտությունն ու իմաստը. որոնում են աստծուն, հոգին, իսկ երբ նրանց կցում են կարիքին և օրվա շարիքին, դեղորայքներին ու գրադարաններին, ապա միայն բարդացնում, խճողում են կյանքը։ Մենք շատ բժիշկներ, դեղագործներ, իրավաբաններ ունենք, շատացել են գրագետ մարդիկ, բայց կենսաբաններ, մաթեմատիկոսներ, փիլիսոփաներ, բանաստեղծներ բնավ չկան։ Ամբողջ միտքը, ամբողջ հոգեկան եռանդը ծախսվել են ժամանակավոր, անցողիկ կարիքները բավարարելու վրա... Եռում է գիտնականների, գրողների ու արվեստագետների աշխատանքը. նրանց ողորմածությամբ օրավուր ավելանում են կյանքի հարմարությունները, մարմնի պահանջները շատանում են, մինչդեռ ճշմարտությունը դեռ հեռու է, և առաջվա պես մարդը մնում է ամենագիշատիչ, ամենաանմաքրասեր կենդանին, և ամեն ինչ միտում է այն բանին, որ մարդկությունը, ըստ մեծի մասի, այլասերվի և ընդմիշտ կորցնի ամենայն կենսունակություն։ Այդպիսի պայմաններում արվեստագետի կյանքը իմաստ չունի. և որքան ավելի է նա տաղանդավոր, այնքան ավելի տարօրինակ ու անհասկանալի է նրա դերը, քանի որ ստուգումից պարզվում է, թե աշխատում է գիշատիչ, անմարդասեր կենդանուն ղվարճացնելու համար՝ պաշտպանելով գոյություն ունեցող իրավակարգը։ Ես էլ չեմ ուզում աշխատել, չեմ էլ աշխատի... Ոչինչ պետք չէ, թող գրողի ծոցը գնա աշխարհը։

— Միսյո՜ւսկա, դո՜ւրս գնա,— ասաց Լիդան քրոջը՝ ակներևաբար իմ խոսքերը վնասակար գտնելով այդպիսի դեռատի աղջկա համար։

Ժենյան տխրագին նայեց քրոջն ու մորը և դուրս գնաց։

— Այդպիսի գեղեցիկ բաներ ասում են սովորաբար, երբ ուզում են իրենց անտարբերությունն արդարացնել,— ասաց Լիդան։— Հիվանդանոցներն ու դպրոցները բացասելն ավելի հեշտ է, քան բուժելն ու սովորեցնելը։

— Ճիշտ է, Լի՛դա, ճիշտ է,— համաձայնեց մայրը։

— Դուք սպառնում եք, թե չեք աշխատի,— շարունակեց Լիդան։— Ակներևաբար բարձր եք գնահատում ձեր աշխատանքները։ Այլևս չվիճենք, մենք երբեք լեզու չենք գտնի, որովհետև բոլոր մանր գրադարաններից ու դեղորայքներից ամենաանկատարը, որոնց մասին հենց նոր այնքան արհամարհանքով խոսում էիք, ես աշխարհի բոլոր պեյզաժներից բարձր եմ դասում։— Եվ անմիջապես դիմելով մորը՝ ասաց բոլորովին այլ շեշտով։— Իշխանը շատ է նիհարել և խիստ փոխվել է այն ժամանակից հետո, ինչ եղավ մեզ մոտ։ Նրան ուղարկում են Վիշի։

Նա մորը պատմում էր իշխանի մասին, որպեսզի ինձ հետ չխոսի։ Նրա դեմքը այրվում էր, և իր հուզմունքը թաքցնելու համար նա կարճատեսի պես խիստ կռացավ սեղանի վրա, ձևացնելով, թե լրագիր է կարդում։ Իմ ներկայությունն անախորժ էր։ Ես հրաժեշտ տվի ու գնացի տուն։

IV

Դուրսը խաղաղ էր. լճակի մյուս ափի գյուղն արդեն քնել էր, ոչ մի ճրագ չէր երևում, միայն լճակի վրա հազիվ նշմարվում էին աստղերի աղոտ արտացոլումները։ Առյուծի արձաններով դարբասի մոտ անշարժ կանգնած էր Ժենյան՝ ինձ ճանապարհ դնելու համար։

— Գյուղում բոլորն էլ քնել են,— ասացի նրան՝ ջանալով խավարում նկատել նրա դեմքը և տեսա ինձ վրա սևեռված թուխ, տխուր աչքերը։— Հանգիստ քնել են և՛ գինեպանը, և՛ ձիագողերը, իսկ մենք՝ պարկեշտ մարդիկս, ջղայնացնում ենք իրար ու վիճում։

Օգոստոսյան տխուր գիշեր էր, տխուր այն պատճառով, որ արդեն աշնան շունչ էր բուրում, բոսորագույն ամպով ծածկված՝ ծագում էր լուսինը և հազիվ լուսավորում ճանապարհը ու նրա երկու կողմը փռված աշնանացան արտերը։ Հաճախակի աստղեր էին ընկնում։ Ժենյան քայլում էր իմ կողքից ու աշխատում երկնքին չնայել, որպեսզի չտեսներ ընկնող աստղերը, որոնք, չդիտես ինչու, վախեցնում էին նրան։

— Ինձ թվում է, որ դուք իրավացի եք,— ասաց նա՝ դողալով գիշերվա խոնավությունից։— Եթե մարդիկ բոլորն էլ միասին կարողանային անձնատուր լինել հոգևոր գործունեության, ապա շուտով ամեն ինչ կիմանային։

— Իհարկե։ Մենք բարձր էակներ ենք և եթե իսկապես գիտակցեինք մարդկային հանճարի ամբողջ ուժը և միայն վեհ նպատակների համար ապրեինք, ապա վերջիվերջո կլինեինք աստվածների պես։ Բայց դա երբեք չի լինի. մարդկությունը կայլասերվի և հանճարից հետք էլ չի մնա։

Երբ դարպասը այլևս չէր երևում, Ժենյան կանգ առավ ու հապճեպորեն սեղմեց իմ ձեռքը։

— Բարի գիշեր,— ասաց նա դողալով. նրա ուսերը ծածկված էին միայն մի շապկով, և նա ցրտից կծկվել էր։— Եկեք վաղը։

Ես սոսկացի այն մտքից, որ կմնամ մենակ, ջղայնացած, ինձնից ու մարդկանցից դժգոհ. ես էլ արդեն ջանում էի այլևս չնայել ընկնող աստղերին։

— Եվս մի րոպե ինձ հետ եղեք,— ասացի ես։— Խնդրում եմ։

Ես սիրում էի Ժենյային։ Երևի սիրում էի նրա համար, որ նա դիմավորում և ճանապարհ էր դնում ինձ, որ նայում էր ինձ քնքշագին ու հիացմունքով։ Այնքան հուզիչ, գեղեցիկ էին նրա դժգույն դեմքը, բարակ վիզը, նուրբ ձեռքերը, նրա թուլությունը, անգործությունը, նրա գրքերը։ Իսկ մի՛տքը։ Ես ենթադրում էի, որ նա արտասովոր միտք ունի. ինձ հիացնում էր նրա հայացքների լայնությունը, թերևս այն պատճառով, որ նա այլ կերպ էր մտածում, քան թե խստասիրտ, գեղեցիկ Լիդան, որ ինձ չէր սիրում։ Ես դուր էի գալիս Ժենյային իբրև նկարիչ, հաղթել էի նրա սիրտն իմ տաղանդով և սաստիկ ուզում էի նկարել միայն նրա համար, երազում էի նրան, որպես իմ փոքրիկ թագուհուն, որն ինձ հետ կտիրանա այս ծառերին, դաշտերին, մշուշին, արշալույսին, այս հրաշագեղ, դյութիչ բնությանը, որի մեջ սակայն մինչև հիմա ես ինձ զգում էի անհույս, միայնակ ու անպետք։

— Մի րոպե էլ մնացեք,— խնդրեցի ես,— աղաչում եմ։

Հանեցի վերարկուս ու ծածկեցի նրա մրսած ուսերը. նա վախենալով տղամարդու վերարկուով ծիծաղելի ու տգեղ երևա-

լուց՝ ծիծաղեց և ուսերից նետեց այն, այդ միջոցին ես գրկեցի նրան ու սկսեցի համբույրներ տեղալ նրա դեմքին, ուսերին, ձեռքերին։

— Յուսությո՛ւն,— շշնջաց նա և զգույշ, ասես վախենալով դիշերային անդորրը խանգարել, գրկեց ինձ։— Մենք իրարից գաղտնիք չունենք. ես հիմա ամեն ինչ պետք է պատմեմ մայրիկին ու քրոջս... Այնքան սարսափելի՜ է դա։ Մայրիկը ոչինչ չի ասի, նա ձեզ սիրում է, բայց ի՞նչ։

Եվ վազեց դեպի դարպասը։

— Մնա՞ք բարով,— կանչեցի ես։

Ապա մի երկու րոպե ես լսում էի, թե ինչպես էր նա վազում։ Չէի ուզում վերադառնալ տուն, և կարիք էլ չկար գնալ այնտեղ։ Մի քիչ մնացի մտախոհ կանգնած ու կամացուկ սկսեցի ետ գնալ, որպեսզի նորից նայեմ այն տանը, որտեղ ապրում էր նա, սիրելի, միամիտ տանը, որ կարծես իր վերնատան պատուհաններով, ասես աչքերով, նայում էր ինձ ու հասկանում ամեն ինչ։ Ես անցա տեռասի մոտից, նստեցի lown-tennis-ի հարթակի մոտ՝ նստարանին, վաղեմի ծփենու տակ, խավարում, և այդտեղից նայում էի տանը։ Վերնատան պատուհաններում (այդտեղ էր ապրում Միսյուսը) մի վառ լույս փայլեց, ապա փոխվեց խաղաղ կանաչի. նշանակում է լամպը ծածկեցին լուսամփոփով։ Ստվերներ շարժվեցին... Ես համակված էի քնքշանքով, անդորրով և ինքնագոհությամբ, այն գոհունակությամբ, որ կարողացել էի հափշտակվել, ու սիրել. և միաժամանակ ինքս ինձ անհարմար էի զգում այն մտքից, որ ճիշտ այդ պահին, ինձնից մի քանի քայլ հեռու, այն տան սենյակներից մեկում ապրում է Լիդան, որ ինձ չի սիրում, գուցեև ատում է։ Ես նստել ու սպասում էի՝ դուրս չի՞ գա արդյոք Ժենյան, ունկնդրում էի, և ինձ թվում էր, որ վերնատանը խոսում են։

Անցավ մոտ մի ժամ։ Կանաչ լույսը հանգավ, և այլևս ստվերները չերևացին։ Լուսինն արդեն բարձր կանգնել էր տան վրա, լուսավորում էր ննջած այգին, նեղ ծառուղիները, ծաղկանոցում որոշակի երևում էին գեորգինաներն ու վարդերը և բոլորն էլ միագույն էին թվում։ Ցուրտը սաստկանում էր։ Ես դուրս եկա այգուց, ճանապարհից վերցրի իմ վերարկուն և առանց շտապելու դիմեցի տուն։

Երբ մյուս օրը ճաշից հետո գնացի Վոլչանինովների մոտ, դեպի այգին նայող ապակեպատ դուռը լայն բացված էր։ Ես նստեցի տեռասում՝ սպասելով, որ ծաղկանոցի հետևը, հարթակի վրա կամ ծառուղիներից մեկում շուտով կերևա Ժենյան կամ թե պատուհաններից կլսվի նրա ձայնը։ Հետո մտա հյուրասենյակը, ճաշասենյակը։ Ոչ ոք չկար։ Ճաշասենյակից երկար միջանցքով գնացի նախասենյակը, հետո ետ եկա։ Այդ միջանցքում մի քանի դուռ կար, և դրանցից մեկի հետևից լսվում էր Լիդայի ձայնը։

— Ագռավին որտեղից որտեղ... աստված...— ասում էր նա բարձրաձայն ու երկարաձիգ՝ հավանաբար թելադրելով։— Աստված ուղարկեց մի կտոր պանիր... Ագռավին... որտեղից որտեղ... Այդ ո՞վ է,— ձայն տվեց նա հանկարծ լսելով իմ ոտնաձայնը։

— Ես եմ։

— Ա՜, ներեցեք ես չեմ կարող հիմա ձեզ մոտ գալ, պարապում եմ Դաշայի հետ։

— Եկատերինա Պավլովնան այդո՞ւմ է։

— Ոչ նա քրոջս հետ այս առավոտ մեկնեց հորաքրոջ մոտ՝ Պենզայի նահանգը։ Իսկ ձմռանը հավանաբար կմեկնեն արտասահման...— մի փոքր լռելուց հետո ավելացրեց նա։— Ագռավին որտեղից որտեղ... աստված ուղարկեց մի կտոր պանիր։ Գրեցի՞ր։

Ես գնացի նախասենյակ և առանց որևէ բանի մասին մտածելու՝ կանգնել ու այդտեղից նայում էի լճակին ու գյուղին, իսկ ականջիս հասնում էր.

— Մի կտոր պանիր... Ագռավին որտեղից որտեղ աստված ուղարկեց մի կտոր պանիր...

Ես դուրս եկա դաստակերտից նույն ճանապարհով, որով առաջին անգամ էի եկել այդտեղ, միայն հակառակ կարգով՝ նախ՝ բակից անցա այգին, քայլեցի տան մոտով, ապա՝ լորիների ծառուղով... Այդտեղ վազելով ինձ հասավ մի պստիկ աղա և մի երկտող տվեց։ «Ես ամեն ինչ պատմեցի քրոջս, և նա պահանջում է, որ ես բաժանվեմ ձեզանից,— կարդացի ես։— Ես ուժ չէի ունենա վշտացնել նրան իմ անհնազանդությամբ։ Աստված ձեզ բախտավորություն տա. ներեցեք ինձ։ Եթե իմանայիք՝ ես ու մայրիկս որքա՜ն դառն լաց ենք լինում»։

Հետո անցա եղևնու խավար ծառուղին, քանդված ցանկապատը... Այն արտում, ուր այն ժամանակ ծաղկել էր տարեկանը ու ճչում էին լորերը, հիմա թափառում էին կովերը և թոկերը խճճած ձիերը։ Բլուրների վրա տեղ-տեղ վառ կանաչել էր աշնանացանը։ Համակվեցի ես զգաստ, առօրյա տրամադրությամբ

և ամաչեցի այն ամենից, ինչ ասում էի Վոլչանինովների մոտ. և առաջվա պես կյանքը տաղտկալի դարձավ։ Տուն գալուն պես հավաքեցի իրերս և երեկոյան մեկնեցի Պետերբուրգ։

Այլևս երբեք չտեսա ես Վոլչանինովներին։ Վերջերս միայն, Ղրիմ գնալիս, վագոնում հանդիպեցի Բելոկուրովին։ Նա առաջվա պես անթև բաճկոնակով ու ասեղնագործած բլուղով էր, և երբ նրա որպիսությունը հարցրի՝ պատասխանեց. «Ապրում եմ ձեր աղոթքներով»։ Զրուցել սկսեցինք։ Իր կալվածքը ծախել էր նա և մի ուրիշը, ավելի փոքրն էր գնել Լյուբով Իվանովնայի անունով։ Վոլչանինովների մասին քիչ բան հաղորդեց։ Նրա ասածով, Լիդան առաջվա պես ապրում էր Շոլկովկայում և դպրոցում դաս էր տալիս երեխաներին, քիչ-քիչ նրան հաջողվել էր իր շուրջը հավաքել իրեն համակրելի մարդկանց մի շրջանակ, որոնք ինքնին մի ուժեղ խմբակցություն էին կազմել և ղեմստվոյի վերջին ընտրություններին «գլորել էին» ամբողջ գավառը մինչ այդ իր ձեռքում պահող Բալագինին։ Իսկ Ժենյայի մասին Բելոկուրովը հաղորդեց միայն այն, որ նա տանը չի ապրում և հայտնի չէ, թե որտեղ է։

Ես արդեն սկսում եմ մոռանալ վերնահարկով տունը, և միայն հազվադեպ, երբ նկարում եմ կամ կարդում, հանկարծ, առանց դրդապատճառի, հիշում եմ մերթ լուսամուտի կանաչ լույսը, մերթ էլ դաշտում, գիշերվա մեջ հնչող իմ ոտնաձայնը, երբ ես սիրահարված վերադառնում էի տուն և ցրտից շփում էի ձեռքերս։ Իսկ ավելի հազվադեպ, այն պահերին, երբ ինձ տանջում է մենակությունը, և տխուր եմ լինում՝ այդ ամենը հիշում եմ տարտամորեն, և, չգիտեմ ինչու, քիչ-քիչ սկսում է թվալ, թե ինձ էլ են հիշում, սպասում են, և որ մենք կհանդիպենք իրար...

Միսյո՛ւս, որտե՞ղ ես։

1896

ՊԱՏՅԱՆՈՎ ՄԱՐԴԸ

Միրոնոսիցկոյե գյուղի ծայրին, տանուտեր Պրոկոֆիի մարագում կանգ առան գիշերելու ուշացած որսորդները։ Երկու հոգի էին նրանք. անասնաբույժ Իվան Իվանիչը և գիմնազիայի ուսուցիչ Բուրկինը։ Իվան Իվանիչը բավականին տարօրինակ և կրկնակի աղգանուն ուներ՝ Զիմշա-Հիմալայսկի, որը բոլորովին չէր սազում նրան, և ամբողջ նահանգում նրան ուղղակի անուն-հայրանունով էին կանչում։ Նա ապրում էր քաղաքի մոտ՝ ձիաբուծարանում և այժմ որսի էր եկել, որպեսզի մի քիչ մաքուր օդ շնչի։ Իսկ գիմնազիայի ուսուցիչ Բուրկինն ամեն ամառ հյուր էր գալիս կոմս Պ-ի մոտ և վաղուց արդեն այս շրջանում տանու մարդ էր համարվում։

Նրանք չէին քնել։ Իվան Իվանիչը, որ մի բարձրահասակ, նիհար ծերունի էր երկար բեղերով, նստել էր դուրսը, մուտքի մոտ և ծխամորճ էր քաշում. նրան լուսավորում էր լուսինը։ Բուրկինը պառկել էր ներսը խոտի վրա և մթի մեջ չէր երևում։

Զանազան պատմություններ էին իրար պատմում։ Իմիջիայլոց խոսում էին, թե տանուտերի կինը՝ Մավրան, որ մի շատ առողջ ու ոչ թեթևամիտ կին է, ամբողջ կյանքում իր հայրենի գյուղից բացի, ոչ մի տեղ չի գնացել. երբեք ո՞չ քաղաք է տեսել, ո՞չ երկաթուղի, իսկ վերջին տասը տարին էլ ամբողջ ժամանակ նստում է վառարանի հետևը և միմիայն գիշերներն է դուրս գալիս փողոց։

— Այդտեղ ինչ զարմանալի բան կա,— ասաց Բուրկինը։— Բնավորությամբ մենասեր մարդիկ, որոնք մենակյաց խեցգետնի կամ խխունջի նման աշխատում են իրենց կեղևի մեջ քաշվել, քիչ չեն այս աշխարհում։ Գուցե ատավիզմի մի երևույթ է այդ, վերադարձ դեպի այն ժամանակները, երբ մարդու նախահայրը դեռևս հանրակյաց կենդանի չէր և միայնակ էր ապրում իր որջի մեջ, կամ գուցե պարզապես մարդկային բնավորության բազմատեսակ երևույթներից մեկն է այդ, ի՞նչ իմանաս։ Ես բնագետ չեմ և իմ գործը չէ այդ կարգի խնդիրներ շոշափելը. ես ուզում եմ միայն ասել, որ այդպիսի մարդիկ, ինչպես Մավրան է, հազվագյուտ երևույթ չեն։ Ա՛յ, հեռու չգնանք, մի երկու ամիս առաջ մեր քաղաքում մեռավ մի ոմն Բելիկով, որը հունարենի ուսուցիչ էր, իմ ընկերը։ Դուք, իհարկե, նրա մասին լսած կլինեք։ Նա նշանավոր էր այն բանով, որ միշտ, նույնիսկ շատ լավ եղա-

նոկին էլ կրկնակոշիկներով ու հովանոցով էր տնից դուրս գալիս և անպատճառ բամբակած տաք վերարկու էր հագնում։ Նրա հովանոցն էլ պատյանի մեջ էր պահվում, ժամացույցն էլ մոխրագույն զամշից կարված պատյանում էր և երբ դանակը հանում էր մատիտ սրելու, դանակն էլ փոքրիկ պատյանի մեջ էր լինում։ Նրա երեսն էլ կարծես նույնպես պատյանի մեջ էր, որովհետև միշտ վերարկուի բարձրացրած օձիքի մեջ էր թաքցնում։ Նա մուգ ակնոց էր դնում, միշտ հագնում էր ֆուֆայկա, ականջները բամբակ խրում և երբ նստում էր կառք, հրամայում էր վերը ծածկել։ Մի խոսքով այդ մարդու մեջ մի մշտական ու անհաղթելի ձգտում էր նկատվում՝ պատել իրեն կեղևով, մի այնպիսի, այսպես ասած, պատյան ստեղծել իր համար, որն առանձնացներ նրան, պաշտպաներ դրսի ազդեցությունից։ Իրականությունը նրան գրգռում, վախեցնում, մշտական անհանգստության մեջ էր պահում, և շատ հավանական է, հենց այն բանի համար, որ կարողանա արդարացնել իր այդ վախկոտությունը, իր զզվանքը դեպի իրականը, նա շարունակ գովում էր անցյալը և այնպիսի բաներ, որ երբեք չեն եղել։ Հին լեզուներն էլ, որոնք նա ավանդում էր, նրա համար էապես նույն կրկնակոշիկներն ու հովանոցն էին, ուր նա թաքնվում էր իրական կյանքից։

— Օ՜, ինչքան հնչո՜ւն, ինչքան գեղեցի՜կ է հունարեն լեզուն,— ասում էր նա քաղցր արտահայտությամբ, և կարծես ի հաստատումն իր ասածի, աչքերը կկոցում էր ու մատը բարձրացնելով՝ արտասանում.— ա՜նթրոպոս[1]։

Բելիկովն իր միտքն էլ աշխատում էր պատյանի մեջ պահել։ Նրա համար պարզ էին միայն այն շրջաբերականներն ու լրագրական հոդվածները, որոնց մեջ մի որևէ բան էր արգելվում։ Երբ շրջաբերականում արգելում էին աշակերտներին երեկոյան ժամը իններից հետո դուրս գալ տնից կամ մի որևէ հոդվածում արգելվում էր մարմնային սերը, այդ նրա համար միանգամայն պարզ և հասկանալի էր. արգելված է և վե՛րջ։ Իսկ այն բոլորի մեջ, ինչ չէր արգելվում և թույլատրելի էր, նրա կարծիքով, միշտ մի որևէ կասկածելի, մութ ու անորոշ տարր էր թաքնված։ Երբ թույլատրվում էր քաղաքում դրամատիկական խմբակ, կամ ընթերցարան և կամ թե թեյարան հիմնել, նա միշտ շարժում էր գլուխը և ասում կամաց.

[1] Մարդ (հուն.)։

— Այդ, իհարկե, այդպես է, այդ բոլորը հրաշալի է, բայց չլինի՞ թե հանկարծ մի բան դուրս գա։

Ամեն կարգի խախտումները, անճշտությունները, շեղումներն ու կանոնից դուրս գալը նրան մտահոգություն էր պատճառում, թեև թվում էր, իսկապես նրա ի՞նչ գործն է։ Եթե ընկերներից մեկը ուշանում էր մաղթանքի գալու, կամ լուրեր էին պտտվում գիմնազիստների մի որևէ չարության մասին, կամ թե դաստիարակչուհուն ուշ երեկոյան տեսնում էին սոչայի հետ գնալիս, Բելիկովը սաստիկ անհանգստանում էր, շարունակ ասում, չլինի՞ թե հանկարծ մի բան դուրս գա։ Իսկ մանկավարժական ժողովներում նա մեզ ուղղակի տանջում էր իր զգուշությամբ, կասկածամտությամբ ու զուտ պատյանային դատողություններով, թե այ՝ արական և իգական գիմնազիաներում երիտասարդությունն իրեն վատ է պահում, շատ է աղմկում դասարաններում,— ախ, չլինի՞ թե դա իշխանությանը հասնի, ախ, չլինի՞ թե մի բան դուրս գա, և լավ չի՞ լինի արդյոք, եթե երկրորդ դասարանից Պետրովը, իսկ չորրորդից էլ՝ Եգորովը հեռացվեն գիմնազիայից։ Եվ ի՞նչ եք կարծում։ Իր հառաչանքներով, մորմոքներով, իր գունատ, փոքրիկ երեսի վրայի մուգ ակնոցով,— գիտեք, ժանտաքիսի նման փոքրիկ երես ուներ,— նա ճնշում էր բոլորիս, և մենք զիջում էինք. Պետրովի ու Եգորովի վարքի թվանշանները պակասեցնում էինք, նրանց կարցեր նստեցնում և վերջ ի վերջո էլ հեռացնում էինք թե՛ Պետրովին և թե՛ Եգորովին։ Բելիկովը մի տարօրինակ սովորություն ուներ՝ այցելել մեր բնակարանները։ Գալիս էր ուսուցիչներից մեկի մոտ, նստում ու լռում, կարծես ինչ-որ բան էր տնտղում։ Այդպես լուռ կնստեր մի երկու ժամ ու կգնար։ Այդ բանը նա «ընկերների հետ բարի հարաբերություններ պահպանել» էր անվանում և, իհարկե, մեզ մոտ գալն ու նստելը շատ ծանր էր նրա համար, բայց գալիս էր միմիայն այն պատճառով, որ դա իր ընկերական պարտականությունն էր համարում։ Մենք՝ ուսուցիչներս, վախենում էինք նրանից։ Մինչև անգամ դիրեկտորն էլ էր վախենում։ Դեհ, ո՜վ իմանա, մեր ուսուցիչները բոլորն էլ շատ խելոք, կարգին մարդիկ են, Տուրգենևի ու Շչեդրինի գրվածքներով կրթված, սակայն, չնայած դրան, այդ մարդը, որ շարունակ կրկնակոշիկներով ու հովանոցով էր ման գալիս, ամբողջ տասնհինգ տարի իր բռի մեջ էր պահում ողջ գիմնազիան։ Ասենք, ինչո՞ւ միայն գիմնազիան։ Ամբողջ քաղաքը։ Մեր կանայք շա-

բաթ օրերը ընտանեկան ներկայացումներ չէին կազմակերպում, վախենալով, չլինի թե նա իմանա։ Հոգևորականությունն էլ էր քաշվում նրա մոտ պաս ուտել և թուքթ խաղալ։ Այդպիսի մարդկանց ազդեցության պատճառով, ինչպես Բելիկովն էր, վերջին տասը-տասնհինգ տարվա ընթացքում մեր քաղաքում մարդիկ սկսել են ամեն բանից վախենալ։ Վախենում են բարձրաձայն խոսել, նամակներ ուղարկել, ծանոթություն հաստատել, գրքեր կարդալ, վախենում են օգնել աղքատներին, գրագիտություն սովորեցնել...

Իվան Իվանիչը, կամենալով ինչ-որ բան ասել, հազաց, բայց նախ վառեց ծխամորճը, նայեց լուսնին և հետո արդեն ասաց ընդմիջումներով.

— Այո, խելացի, կարգին մարդիկ են. և՛ Շչեգրին են կարդում, և՛ Տուրգենև, զանազան Բոկլներ և այլն, բայց տես, որ ենթարկվել, համբերել են... Հենց դա է բանը։

— Բելիկովը ապրում էր նույն տանը, որտեղ նաև ես էի ապրում,— շարունակեց Բուրկինը,— հենց նույն հարկում, դուռը դռանս դիմաց, մենք հաճախ էինք հանդիպում, և ես ծանոթ էի նրա ընտանեկան կյանքին։ Տանն էլ նույն բանն էր. խալաթ, թասակ, լուսամուտների խլափեղկեր, սողնակներ, մի ամբողջ շարք ամեն տեսակ փակեր, փակիչներ և՝ ախ, չլինի՞ թե հանկարծ մի բան դուրս գա։ Պասուց կերակուր ուտելը վնասակար էր համարում, իսկ ուտիսուց ուտելն էլ չէր կարելի, որովհետև գուցե ասեին, թե Բելիկովը պաս չի պահում, և նա կովի յուղով տապակած ձուկ էր ուտում, մի բան, որ պասուց չէ և չի էլ կարելի ասել, թե ուտիսուց է։ Կին ծառա չէր պահում, վախենալով, որ իր մասին վատ բան չմտածեն, այլ խոհարար էր պահում, մոտ վաթսուն տարեկան, հարբեցող ու կիսախելագար մի ծերունի, Աֆանասի անունով, որը մի ժամանակ դենշչիկ էր եղել և քիչումիչ եփել գիտեր։ Այդ Աֆանասին սովորաբար կանգնում էր դռան մոտ, ձեռքերը կրծքին խաչած և շարունակ մոթմոթում էր միևնույն բանը, խոր հառաչելով.

— Նրանք հիմա խիստ են շատացել։

Բելիկովի ննջարանը փոքր էր, կարծես արկղ լիներ, մահճակալը վարագույրով էր ծածկված։ Անկողին մտնելիս նա գլուխը կոխում էր վերմակի տակ։ Խիստ շոգ էր լինում, հեղձուկ, իսկ քամին խփում էր փակ դռներին, ոռնում էր վառարանի մեջ, խոհանոցից տնքոցներ էին լսվում, չարագուշակ տնքոցներ...

Նա սարսափում էր վերմակի տակ։ Վախենում էր, չլինի՞ թե մի բան դուրս գա, չլինի՞ թե Աֆանասին իրեն մորթի, չլինի՞ թե գողեր մտնեն, և հետո ամբողջ գիշերը անհանգիստ երազներ էր տեսնում։ Իսկ առավոտյան, երբ մենք միասին գիմնազիա էինք գնում, նա գունատ ու տխուր էր լինում, և պարզ երևում էր, որ այդ բազմամարդ գիմնազիան, ուր գնում էր նա, սարսափելի, ատելի էր նրա ողջ էությանը, և որ ինձ հետ գնալն էլ այդ միայնություն սիրող մարդու համար շատ ծանր էր։

— Խիստ շատ են աղմկում մեր դասարաններում,— ասում էր նա, կարծես աշխատելով բացատրություն գտնել իր ծանր զգացմունքին։— Ոչ մի բանի նման չէ։

Եվ հունարենի այդ ուսուցիչը, այդ պատյանով մարդը, կարո՞ղ եք երևակայել, քիչ մնաց որ ամուսնանա։

Իվան Իվանիչը արագ շուռ գալով՝ նայեց մարագից ներս, ասաց.

— Կատա՞կ եք անում։

— Այո, քիչ մնաց որ ամուսնանա, որքան էլ դա տարօրինակ թվա։ Մեզ մոտ պատմության և աշխարհագրության մի նոր ուսուցիչ նշանակեցին, ոմն Կովալենկո, Միխայիլ Սավվիչ, խոխոլներից։ Նա մենակ չեկավ, այլ քրոջ՝ Վարենկայի հետ։ Մի բարձրահասակ, թխադեմ երիտասարդ էր, խոշոր ձեռքերով և դեմքից էլ երևում էր, որ բամբ ձայն ունի, և իրոք, ձայնը կարծես տակառից էր դուրս գալիս. բո՛ւ-բո՛ւ-բո՛ւ... Իսկ քույրը, որ արդեն երիտասարդ չէր, մոտ երեսուն տարեկան, բայց նույնպես բարձրահասակ, լավ կազմվածքով, թուխ հոնքերով, կարմրաթշիկ,— մի խոսքով՝ ոչ թե աղջիկ, այլ մարմելադ, և այնպես կրակոտ, աշխույժ-աղմկարար, շարունակ մալոռոսական ռոմանսներ էր երգում ու քրքջում։ Մի չնչին առիթ՝ ու հա՞-հա՞-հա՞, քրքջում էր կարկաչուն ծիծաղով։ Մեր առաջին հիմնավոր ծանոթությունը Կովալենկոների հետ, հիշում եմ, դիրեկտորի անվանակոչության օրը եղավ։ Մոայլ, խիստ տաղտկալի մանկավարժների շրջանում, որոնց համար անվանակոչության գնալն էլ մի պարտականություն էր համարվում, հանկարծ տեսնում ենք մի նոր Աֆրոդիտե ծնվեց փրփուրի միջից. ման է գալիս ձեռքը կողքին դրած, քրքջում է, երգում, պարում... Նա մեծ զգացմունքով երգեց «Виют витры», հետո էլի մի ռոմանս, հետո էլ մեկը և բոլորիս էլ հիացրեց, բոլորիս, նույնիսկ Բելիկովին։ Նա նստեց օրիորդի մոտ ու ասաց քաղցր ժպտալով.

— Մալուռոսական լեզուն իր քնքշությամբ և հաճելի հնչունությամբ հին հունարենն է հիշեցնում։

Այդ խոսքերը շոյեցին օրիորդին, նա սկսեց ոգևորությամբ ու համոզիչ կերպով պատմել Բելիկովին, թե Գադյաչի գավառում իրենք ագարակ ունեն, իսկ ագարակում ապրում է մայրը, և այնտեղ այնպիսի՜ տանձեր, այնպիսի՜ սեխեր, այնպիսի՜ դդումներ կան։ Խոխոլները դդումին կաբակ* են ասում, իսկ գինետանը՝ շինոկ, և նրանք բորշշը պոմիդորով ու բադրիջանով են եփում «այնպե՜ս համով, այնպե՜ս համով, որ ուղղակի հիանալի է»։

Լսում էինք մենք, լսում էինք և հանկարծ բոլորիս մեջ միևնույն միտքը ծագեց։

— Վատ չի լինի, եթե դրանց ամուսնացնենք,— կամացուկ ասաց ինձ դիրեկտորի կինը։

Մենք բոլորս էլ, չգիտես ինչու, հիշեցինք, որ մեր Բելիկովը ամուսնացած չէ, և մեզ տարօրինակ թվաց, որ մինչ այդ ինչ-որ չէինք նկատել, բոլորովին աչքաթող էինք արել նրա կյանքի այդ կարևոր մանրամասնությունը։ Ինչպես է նա, առհասարակ, վերաբերվում կանանց, ինչպես է իր համար լուծում այդ էական հարցը։ Առաջ դա բոլորովին չէր հետաքրքրում մեզ, գուցե մեր մտքով անգամ չէր անցնում, թե մի մարդ, որ ամեն եղանակի կրկնակոշիկներով է ման գալիս և քնում է վարագույրի տակ, ընդունակ է սիրելու։

— Բելիկովի քառասունը վաղուց անցել է, իսկ օրիորդը երեսուն է...— բացատրեց իր միտքը դիրեկտորի կինը...— Ինձ թվում է, նա կամուսնանա Բելիկովի հետ։

Ջանձրույթից ինչե՜ր ասես չեն անում մեր գավառներում, ինչքա՜ն ավելորդ, հիմար բաներ են կատարվում։ Եվ դա նրանից է, որ երբեք այն չի արվում, ինչ հարկավոր է։ Դեհ, իսկապես, ինչո՞ւ հանկարծ մենք կարիք զգացինք ամուսնացնել այդ Բելիկովին, որին նույնիսկ երբեք չէր էլ կարելի երևակայել ամուսնացած վիճակում։ Դիրեկտորի կինը, տեսչի կինը և բոլոր մեր գիմնազիական տիկինները մի տեսակ կենդանություն ստացան, նույնիսկ գեղեցկացան, կարծես հանկարծ տեսան իրենց կյանքի նպատակը։ Վերատեսչի կինը թատրոնում օթյակ է վերցնում, և ահա— նրա օթյակում նստած է Վարենկան՝ հովհարը

* Գինետուն։

ձեռքին, այնպե՜ս փայլուն, երջանիկ, իսկ նրա կողքին Բելիկովը, փոքրիկ, կեռացած, կարծես նրան տնից աքցանով են դուրս քաշել։ Ես եմ երեկույթ տալիս, և տիկինները պահանջում են, որ անպատճառ հրավիրեմ թե՛ Բելիկովին և թե՛ Վարենկային։ Մի խոսքով մեքենան գործի է ընկել։ Բանից պարզվում է, որ Վարենկան դեմ չի ամուսնանալուն։ Եղբոր մոտ ապրելը շատ էլ հաճելի չէր նրան, ամբողջ օրերով շարունակ միմիայն վիճում ու կռվում էին։ Ահա ձեզ մի տեսարան. Կովալենկոն գնում է փողոցով, բարձրահասակ ու հաղթանդամ, ասեղնագործված շապկով, մազերի փունջը գլխարկի տակից ճակատին թափված, մի ձեռքում գրքերի կապոցը, իսկ մյուսում՝ ոստերով հաստ ձեռնափայտը։ Նրա հետևից գնում է քույրը, նույնպես գրքերով բեռնված։

— Միխայլի՛կ, ախր դու դա չե՞ս կարդացել,— բարձրաձայն վիճում է քույրը։— Ախր քեզ ասում եմ, երդվում եմ, դա բոլորովին չե՞ս կարդացել։

— Իսկ ես քեզ ասում եմ, որ կարդացել եմ,— բղավում է Կովալենկոն, ձեռնափայտը ուժգնորեն մայթին խփելով։

— Ախ, տե՜ր իմ աստված, Միշի՛կ։ Ինչո՞ւ ես բարկանում, չէ՞ որ մեր վեճը սկզբունքային է։

— Իսկ ես քեզ ասում եմ, որ կարդացել եմ,— ավելի բարձր է բղավում Կովալենկոն։

Իսկ տանը, հենց որ մի օտար մարդ է լինում, իսկույն կռիվն սկսվում է։ Այդպիսի կյանքը, անշուշտ, ձանձրացրել էր, քրոջ մեջ ցանկություն կար սեփական անկյուն ունենալ. դեհ, տարիքն էլ պետք է նկատի առնել. այդ տարիքում արդեն երկար-բարակ ընտրություն չես անում, ում հետ էլ ասես կամուսնանաս, թեկուզ հունարենի ուսուցչի։ Այն էլ պիտի ասել, որ մեր օրիորդներից մեծ մասի համար միևնույն է ինչպիսի մարդու էլ գնան, միայն թե ամուսնանան։ Այսպես թե այնպես Վարենկան սկսեց բացահայտ կերպով բարեհաճություն ցույց տալ մեր Բելիկովին։

Իսկ Բելիկովը։ Նա Կովալենկոյի մոտ էլ նույն կերպ էր գնում, ինչպես մեզ մոտ։ Գնում նստում էր ու լռում։ Նա լուռ էր, իսկ Վարենկան նրա համար երգում էր «Виют витры», կամ մտախոհ նայում նրան իր թուխ աչքերով և կամ հանկարծ քրքջում էր.

— Հա՜-հա՜-հա՜։

Սիրային գործերում, մանավանդ ամուսնության մեջ, ներ-

շնչումը մեծ դեր է կատարում։ Բոլորն էլ, թե՛ ընկերները, թե՛ տիկինները, սկսեցին հավատացնել Բելիկովին, որ նա պետք է ամուսնանա, որ նրան այլապես իր կյանքում ոչինչ չի մնում անելու, բացի ամուսնանալուց։ Մենք բոլորս էլ շնորհավորում էինք նրան, շատ լուրջ դեմքով զանազան տհաճ ու գռեհիկ բաներ էինք ասում, թե՝ օրինակ, ամուսնությունը լուրջ քայլ է։ Բացի դրանից՝ Վարենկան էլ տգեղ չէր, հետաքրքիր օրիորդ էր, ստատսկի խորհրդականի աղջիկ, ունեին ագարակ, և որ գլխավորն է, դա առաջին կինն էր, որը նրան սիրալիր և սրտակից էր վերաբերվում։ Բելիկովը գլխահան եղավ և որոշեց, թե իսկապես հարկավոր է ամուսնանալ։

— Այ, հենց այդ ժամանակ էլ հարկավոր էր նրանից կրկնակոշիկներն ու հովանոցը խլել,— ասաց Իվան Իվանիչը։

— Երևակայեք, դա անհնար եղավ, Վարենկայի նկարը նա դրել էր իր սեղանի վրա և շարունակ գալիս էր ինձ մոտ, խոսում էր Վարենկայի և ընտանեկան կյանքի մասին, ասում էր, թե ամուսնությունը շատ լուրջ քայլ է. Կովալենկոների մոտ էլ հաճախ էր լինում, բայց իր ապրելու ձևը մազաչափ անգամ չփոխեց։ Մինչև իսկ, ընդհակառակն, ամուսնանալու որոշումը նրա վրա մի տեսակ հիվանդոտ ազդեցություն ունեցավ, նա նիհարեց, գունատվեց և կարծես, է՛լ ավելի խոր պահվեց իր պատյանի մեջ։

— Վարվառա Սավվիշնան ինձ դուր է գալիս,— ասում էր նա ինձ թույլ և ծուռ ժպիտով,— ես էլ գիտեմ, որ ամեն մի մարդու ամուսնանալ անհրաժեշտ է, բայց թե... այս բոլորը, գիտե՞ք, մի տեսակ հանկարծ եղավ... Պետք է մտածել։

— Էլ ի՞նչ մտածել,— ասում են նրան։— Ամուսնացեք, վերջացավ գնաց։

— Չէ՛, ամուսնությունը լուրջ քայլ է, հարկավոր է նախօրոք կշռել հետագա պարտականությունները, պատասխանատվությունը... որ հետո մի բան չդուրս գա։ Դա ինձ այնպես է անհանգստացնում, ես հիմա գիշերները բոլորովին չեմ քնում։ Եվ, ճիշտն ասած, վախենում եմ. նա ու իր եղբայրը ինչ-որ տարօրինակ գաղափարներ ունեն, նրանք, գիտե՞ք, ինչ-որ տարօրինակ կերպ են դատում, նրա բնավորությունն էլ խիստ աշխույժ է։ Կամուսնանաս, իսկ հետո, ո՞վ գիտե, հանկարծ մի որևէ փորձանքի մեջ կընկնես։

Նա առաջարկություն չէր անում Վարենկային, շարունակ հետաձգում էր՝ մեծ ցավ պատճառելով դիրեկտորի կնոջը և մեր

բոլոր տիկիններին։ Շարունակ հետագա պարտականություններն ու պատասխանատվությունն էր կշռում, մինչդեռ համարյա ամեն օր զբոսնում էր Վարենկայի հետ, գուցե մտածելով՝ թե իր դրության մեջ եղած մարդու համար այդպես էլ հարկավոր է, ու ինձ մոտ էր գալիս ընտանեկան կյանքի մասին խոսելու։ Շատ հավանական էր, որ վերջ ի վերջո նա առաջարկություն աներ և իրականանար այն անպետք ու հիմար ամուսնություններից մեկը, որ հազարներով կատարվում են մեզ մոտ ձանձրույթից ու անգործությունից, եթե հանկարծ մի kolossalische Scandal* տեղի չունենար. Պետք է ասել, որ Վարենկայի եղբայրը՝ Կովալենկոն, իր ծանոթության հենց առաջին օրից ատեց Բելիկովին և չէր կարող նրան տանել։

— Չե՛մ հասկանում,— ասում էր նա մեզ, ուսերը վեր քաշելով,— չե՛մ հասկանում, ինչպե՞ս եք կարողանում տանել այդ մատնիչին, այդ գարշելի ռեպտիլին։ Է՛հ, պարոններ, ինչպե՞ս եք կարողանում այստեղ ապրել։ Խեղդող, գարշելի մթնոլորտ է ձեզ մոտ։ Մի՞թե դուք մանկավարժներ, ուսուցիչներ եք։ Դուք չին գոփողներ եք, ձեզ մոտ ոչ թե գիտության տաճար է, այլ հնազանդության վարչություն, որտեղից թթված գարշահոտություն է գալիս, ինչպես ոստիկանական պահակատնից։ Ո՛չ, եղբայրներ, ձեզ հետ մի քիչ էլ կապրեմ ու կգնամ իմ ագարակը, այնտեղ ինձ համար հանգիստ կապրեմ ու կսկսեմ փոքրիկ խախուլներին դաս տալ։ Կգնամ, իսկ դուք մնացեք այստեղ ձեր Հուգայի հետ, նրա գլուխն էլ քարը։

Կամ թե մինչև արցունքները ծիծաղում էր նա, մերթ բամբ, մերթ բարակ ճչացող ձայնով ու հարցնում էր ինձ, ձեռքերը տարածելով օդի մեջ.

— Ինչի՞ համար է գալիս ինձ մոտ նստում։ Ի՞նչ է հարկավոր նրան։ Նստում ու նայում է։

Նա մինչև իսկ անուն էր կպցրել Բելիկովին՝ «глитай абож паук»**։ Եվ մենք, հասկանալի է, խուսափում էինք նրա հետ խոսել, թե քույրը՝ Վարենկան, մտադիր է այդ «абож паук»-ի հետ ամուսնանալ։ Իսկ երբ մի անգամ դիրեկտորի կինը ակնարկեց նրան, թե լավ կլինի, եթե նրա քույրն ամուսնանա այնպիսի

* Մեծ խայտառակություն (գերմ.)։

** «Ցեց (կուլակ) կամ սարդ», ուկրաինական ժողովրդական երգի անուն։

մի պատկառելի ու բոլորից հարգված մարդու հետ, ինչպիսին Բելիկովն է, նա հոնքերը կիտեց ու մոթմոթաց.

— Այդ իմ գործը չէ։ Թեկուզ օձի հետ ամուսնանա, ես չեմ սիրում ուրիշի գործերին խառնվել։

Հիմա լսեք, թե վերջն ինչ պատահեց։ Մի ինչ-որ չարաճճի ծաղրանկարիչ նկարեց. Բելիկովը գնում է կրկնակոշիկները հագին, անդրավարտիքի ծայրերը ետ ծալած, հովանոցը դլխին և հետը՝ Վարենկան, նրան թևանցուկ արած։ Նկարի տակ գրված էր. «Սիրահարված անթրոպոսը»։ Արտահայտությունը, հասկանում եք, զարմանալի լավ էր դուրս բերված։ Նկարիչը, ինչպես երևում էր, մի քանի գիշեր էր աշխատել, որովհետև թե՛ արական և թե՛ իգական գիմնազիաների ու սեմինարիայի բոլոր ուսուցիչները և թե՛ չինովնիկները՝ բոլորն էլ մի-մի օրինակ ստացել էին. Բելիկովն էլ էր ստացել։ Ծաղրանկարը նրա վրա թողեց ամենածանր տպավորությունը։

Բոլորս միասին դուրս ենք գալիս տնից,— դա ճիշտ մայիսի մեկի օրն էր, կիրակի օր, և մենք բոլորս էլ, ուսուցիչներս ու աշակերտները, պայմանավորվել էինք հավաքվել գիմնազիայի մոտ ու հետո միասին գնալ քաղաքից դուրս— անտառ. ճանապարհ ենք ընկնում, իսկ Բելիկովը բոլորովին կանաչ գույն է ստացել, մութ ամպից էլ մռայլ է։

— Ինչպիսի վատ ու չար մարդիկ կան,— ասաց նա, և շրթունքները դողացին։

Ես նույնիսկ խղճացի նրան։ Գնում ենք և հանկարծ, երևակայում եք, Կովալենկոն սլանում է հեծանիվով, հետևից էլ Վարենկան՝ նույնպես հեծանիվով, կարմրած, հոգնած, բայց ուրախ ու զվարթ։

— Մենք ձեզանից առաջ կլինենք այնտեղ,— կանչում է նա։— Տեսեք, ի՞նչ լավ, ի՞նչ լավ եղանակ է, ուղղակի հրաշալի է։

Եվ երկուսն էլ անհետացան։ Բելիկովս կանաչից սպիտակի փոխվեց և կարծես քարացավ։ Կանգ առավ, նայեց ինձ...

— Ներողություն, սա ի՞նչ բան էր,— հարցրեց նա։— Կամ գուցե տեսողությունս է ինձ խաբում։ Մի՞թե գիմնազիայի ուսուցիչներին ու կանանց վայել է հեծանիվ նստելը։

— Ի՞նչ անվայել բան կա այստեղ,— ասացի ես։— Թող նստեն, ինչքան որ ուզում են։

— Բայց ինչպե՞ս կարելի է,— բացականչեց նա, զարմանալով իմ հանգիստ լինելու վրա։— Այդ ի՞նչ եք ասում։

Նա այն աստիճան զարմացած էր, որ էլ չուզեց շարունակել ճանապարհը ու տուն վերադարձավ։

Հետևյալ օրը նա շարունակ ջղային կերպով շփում էր ձեռքերը ու ցնցվում. դեմքից երևում էր, որ իրեն վատ է զգում։ Պարապմունքն էլ չվերջացած՝ տուն գնաց, մի բան, որ առաջին անգամ էր նրա հետ պատահում իր կյանքում։ Ջճաշեց էլ։ Իսկ երեկոյան դեմ, չնայած դրսում ուղղակի ամառային եղանակ էր, ավելի տաք հագնվեց ու գնաց Կովալենկոների մոտ։ Վարենկան տանը չէր, նա միայն եղբորը գտավ։

— Նստեցեք, խոնարհաբար խնդրում եմ,— ասում է Կովալենկոն սառը և հոնքերը կիտելով. նրա դեմքը քնաթաթախ էր, հենց նոր էր վեր կացել ճաշից հետո հանգստանալուց և շատ վատ տրամադրության մեջ էր։

Բելիկովը մոտ մի տասը րոպե նստեց լուռ, հետո սկսեց.

— Ես ձեզ մոտ սիրտս հանգստացնելու եմ եկել։ Ինձ համար շա՜տ, շա՜տ ծանր է։ Մի ինչ-որ պասկվիլներ նկարող ծաղրական դիրքով նկարել է ինձ ու էլի մի անձնավորության, որ մոտ է մեզ երկուսիս։ Պարտք եմ համարում ձեզ հավատացնելու, որ ես այդ բանի մեջ ոչ մի բաժին չունեմ.... Ես ոչ մի առիթ չեմ տվել այդպիսի ծաղրի համար, ընդհակառակը՝ ես ամբողջ ժամանակ ինձ պահել եմ միանգամայն կարգին մարդու պես։

Կովալենկոն նստել էր թթված և լուռ էր։ Բելիկովը մի քիչ սպասեց և շարունակեց ցածր, տխուր ձայնով.

— Ձեզ ասելու մի բան էլ ունեմ։ Ես վաղուց եմ ծառայում, իսկ դուք նոր եք սկսում ծառայել, և ես իմ պարտքն եմ համարում, իբրև ավագ ընկեր, նախազգուշացնել ձեզ։ Դուք հեծանիվ եք նստում, իսկ այդ զվարճությունը բոլորովին անվայել է երիտասարդությանը կրթող մարդու համար։

— Իսկ ինչո՞ւ,— հարցրեց Կովալենկոն թավ ձայնով։

— Մի՞թե դեռ բացատրելու կարիք կա, Միխայիլ Ստավրիչ, մի՞թե այդ հասկանալի չէ։ Եթե ուսուցիչը հեծանիվով է ման գալիս, էլ ի՞նչ է մնում աշակերտներին անելու։ Նրանց մնում է միայն գլխների վրա ման գալ։ Իսկ քանի որ շրջաբերականով այդ բանը թույլատրված չէ, կնշանակի չի կարելի։ Ես երեկ սար-

սափեցի, երբ տեսա ձեր քրոջը, աչքերս ուղղակի մթնեցին։ Կինը կամ աղջիկը հեծանիվի վրա՝ դա սարսափելի է։

— Իսկապես դուք ի՞նչ եք ցանկանում։

— Ես միայն մի բան եմ ցանկանում՝ նախազգուշացնել ձեզ, Միխայիլ Սավվիչ։ Դուք երիտասարդ եք, ձեր ապագան ձեր առջևն է, պետք է շա՛տ, շա՛տ զգույշ պահեք ձեզ, այնինչ դուք ամեն բան այնպե՛ս արհամարհում եք, օ՜հ, այնպե՛ս արհամարհում եք։ Ասեղնագործած շապկով եք ման գալիս, փողոցում շարունակ ինչ-որ գրքերով եք բեռնված, իսկ հիմա էլ՝ հեծանիվ։ Որ դուք ու ձեր քույրը հեծանիվով եք ման գալիս՝ դիրեկտորը կիմանա, հետո էլ լուրը կհասնի հոգաբարձուին... Ի՞նչ լավ բան կարող է դուրս գալ։

— Որ ես ու իմ քույրը հեծանիվով ենք ման գալիս՝ այդ ոչ ոքի գործը չէ,— ասաց Կովալենկոն և ամբողջովին կարմրեց։— Իսկ ով իմ տնային ու ընտանեկան գործին խառնվի, ես նրան դրողի ծոցը կուղարկեմ։

Բելիկովը գունատվեց ու վեր կացավ։

— Եթե դուք ինձ հետ այդպիսի տոնով եք խոսում, ես այլևս անկարող եմ շարունակել,— ասաց նա։— Եվ խնդրում եմ ձեզ իմ ներկայությամբ երբեք այդպես չարտահայտվել մեծավորների մասին։ Դուք պետք է հարգանքով վերաբերվեք դեպի իշխանավորները։

— Բայց մի՞թե իշխանավորների մասին ես մի վատ բան ասացի,— հարցրեց Կովալենկոն, բարկությամբ նրան նայելով։— Խնդրեմ, ինձ հանգիստ թողեք։ Ես ազնիվ մարդ եմ և մի այնպիսի պարոնի հետ, ինչպիսին դուք եք, չեմ ցանկանում խոսել։ Ես չեմ սիրում լրտեսներին։

Բելիկովը ջղային կերպով իրար անցավ, սկսեց շտապ հագնվել սարսափի արտահայտությունը դեմքին։ Առաջին անգամն էր իր կյանքում, որ այդպիսի կոպտություններ էր լսում։

— Կարող եք ասել, ինչ որ կամենում եք,— ասաց նա նախասենյակից դուրս գալով սանդղահարթակ։ Միայն թե ես պետք է նախազգուշացնեմ ձեզ. գուցե ինչ-որ մեկը մեզ լսեց, ուստի որպեսզի չխեղաթյուրեն մեր ասածները և մի որևէ բան դուրս չգա, ես պիտի զեկուցեմ պարոն դիրեկտորին մեր խոսակցության բովանդակությունը... ընդհանուր գծերով։ Ես պարտավոր եմ այդ անել։

— Զեկուցե՞լ։ Գնա՛, զեկուցի՛ր։

Կովալենկոն հետևից բռնեց նրա օձիքը ու հրեց, և Բելիկովը սանդուղքի գլխից գլորվեց ցած, թփթփացնելով իր կրկնակոշիկներով։ Սանդուղքը բարձր ու դիք էր, բայց նա անվնաս գլորվեց մինչև ցած, վեր կացավ և ձեռքը տարավ քթին՝ անվնա՞ս է արդյոք ակնոցը։ Բայց հենց այն ժամանակ, երբ նա գլորվում էր սանդուղքից, Վարենկան ներս մտավ ու հետն էլ երկու տիկին. նրանք կանգնել էին ցածում ու նայում էին. իսկ դա Բելիկովի համար ամենից սարսափելին էր։ Ավելի լավ էր, կարծես, իր վիզը, ոտները կոտրեր, քան ծաղրի առարկա դառնար. չէ՞ որ հիմա ամբողջ քաղաքը կիմանա, լուրը դիրեկտորին, հոգաբարձուին կհասնի,— ախ, չլինի՞ թե մի բան դուրս գա,— նոր ծաղրանկար կնկարեն և այս բոլորը կվերջանա նրանով, որ կհրամայեն հրաժարական տալ...

Երբ նա վեր կացավ, Վարենկան ճանաչեց նրան և, նայելով նրա ծիծաղելի դեմքին, ճմռթված վերարկուին, կրկնակոշիկներին, ոչինչ չհասկանալով, ենթադրեց թե նա ինքն է պատահմամբ վայր ընկել, և, չկարողանալով զսպել իրեն, տնով մեկ բարձր ծիծաղեց.

— Հա՜-հա՜-հա՜...

Եվ այդ բարձրաձայն ու քահ-քահ ծիծաղով էլ ամեն ինչ վերջացավ. թե՛ նշանադրությունը և թե՛ Բելիկովի երկրային գոյությունը։ Այլևս նա չէր լսում, թե ինչ էր ասում Վարենկան, և ոչինչ չէր տեսնում։ Տուն վերադառնալով, նա ամենից առաջ սեղանի վրայից վերցրեց նկարը, իսկ հետո պառկեց և այլևս չվերկացավ։

Մի երեք օր հետո ինձ մոտ եկավ Աֆանասին ու հարցրեց՝ հարկավոր չէ՞, արդյոք, բժիշկ կանչել, որովհետև պարոնի հետ ինչ-որ բան է կատարվում։ Ես շտապեցի Բելիկովի մոտ։ Նա պառկած էր վարագույրի հետևը. վերմակով ծածկված և լուռ էր. մի բան հարցնելիս նա միայն այո կամ ոչ էր ասում ու էլ ոչ մի ձայն։ Նա պառկած էր, իսկ Աֆանասին կողքին շարունակ ման էր գալիս մռայլ, հոնքերը կիտած, խոր հառաչանքներ արձակելով. բերանից էլ օղու հոտ էր փչում, ինչպես գինետնից։

Մեկ ամիս հետո Բելիկովը մեռավ։ Նրան թաղեցինք մենք բոլորս, այսինքն՝ երկու գիմնազիան և սեմինարիան։ Այժմ երբ նա արդեն պառկած էր դագաղի մեջ, դեմքի արտահայտությունը հեզ, դուրեկան, մինչև իսկ զվարթ էր, կարծես ուրախացել էր, որ վերջապես իրեն մի այնպիսի պատյանի մեջ դրին, որի միջից

այլևս երբեք չպիտի դուրս գա։ Այո՛, նա հասել էր իր իդեալին։ Եվ կարծես ի պատիվ նրա, հուղարկավորության ժամանակ խիստ ամպամած ու անձրևային եղանակ էր, և մենք բոլորս կրկնակոշիկներով ու հովանոցով էինք։ Վարենկան էլ ներկա էր թաղմանը, և երբ դագաղը իջեցնում էին գերեզման, լաց եղավ։ Ես նկատեցի, որ խախոլ կանայք կամ լաց են լինում և կամ ծիծաղում են, միջին տրամադրություն նրանք չունեն։

Խոստովանում եմ, այնպիսի մարդկանց թաղելը, ինչպես Բելիկովին է, մեծ հաճույք է։ Երբ գերեզմանոցից վերադառնում էինք, բոլորս էլ կեղծ պարկեշտ ու թթված դեմք ունեինք, ոչ ոք չէր ուզում մեր այդ գոհունակության զգացմունքն արտահայտել, մի զգացմունք, որ նման է վաղուց, շատ վաղո՛ւց, դեռ մանկության ժամանակ ունեցած այն զգացմունքին, երբ տան մեծերը գնում էին մի որևէ տեղ, և մենք մի երկու ժամ վազվզում էինք այգում, կատարյալ ազատություն վայելելով։ Ախ, ազատությո՛ւն, ազատությո՛ւն։ Նույնիսկ ակնարկը, նույնիսկ թույլ հույսը նրան հասնելու՝ մարդու հոգուն թևեր է տալիս, այնպես չէ՞։

Գերեզմանոցից լավ տրամադրությամբ վերադարձանք։ Բայց հազիվ մի շաբաթ անցած, կյանքն սկսեց առաջվա պես ընթանալ, նույնպես մռայլ, հոգեմաշ, աննպատակ, շրջաբերականներով չարգելված, բայց և բոլորովին չթույլատրված մի կյանք։ Դրությունը չլավացավ։ Եվ իսկապես՝ Բելիկովին թաղեցինք, բայց դեռ ինչքա՞ն այդպիսի պատյանով մարդիկ մնացին, քանի՞սն էլ դեռ կլինեն։

— Բանն էլ հենց այդ է, է՛,— ասաց Իվան Իվանիչն ու վառեց ծխամորճը։

— Քանի՞սն էլ դեռ կլինեն,— կրկնեց Բուրկինը։

Գիմնազիայի ուսուցիչը դուրս եկավ մարագից։ Դա մի փոքրահասակ, հաստլիկ ու բոլորովին ճաղատ մարդ էր, սև մորուքը քիչ էր մնում գոտուն հասներ։ Նրա հետ դուրս եկան երկու շուն։

— Լուսի՞նը, լուսի՞նը,— ասաց նա վեր նայելով։

Արդեն կեսգիշեր էր։ Աջ կողմում երևում էր ամբողջ գյուղը, երկար փողոցը ձգվում էր հեռու, մոտ հինգ վերստ։ Ամեն ինչ խաղաղ ու խոր քնի մեջ էր ընկղմած. ո՛չ մի շարժում, ո՛չ մի ձայն, նույնիսկ անհավատալի էր, թե բնությունը կարող է այդպես խաղաղ լինել։ Երբ լուսնյակ գիշերով տեսնում ես գյուղական լայն փողոցը՝ իր խրճիթներով, դեզերով ու քնած ուռենիներով, հոգիդ էլ մի տեսակ խաղաղվում է. իր այդ հանդարտության մեջ

աշխատանքից, հոգսերից ու վշտից խուսափած և գիշերային սավերների մեջ թաքնված հոգին մի տեսակ հեզահամբույր, տխուր ու գեղեցիկ է դառնում, և թվում է, թե աստղերն էլ են նրան փաղաքշանքով ու գգվանքով նայում, և որ այլևս չարություն չկա երկրի վրա, ամեն ինչ լավ ու անդորր է։ Ձախ կողմը, գյուղի ծայրից սկսվում էր դաշտը, որ երևում էր շատ հեռու, մինչև հորիզոնը, և լուսնի լույսով ողողված այդ դաշտի ամբողջ ընդարձակության վրա նույնպես ո՛չ մի շարժում, ո՛չ մի ձայն չկար։

— Բանն էլ հենց այդ է, է՛,— կրկնեց Իվան Իվանիչը։— Իսկ այն, որ մենք ապրում ենք նեղ ու խեղդուկ քաղաքում, անպետք թղթեր ենք մրոտում, վինտ* ենք խաղում— մի՞թե դա պատյան չէ։ Իսկ այն, որ մեր ամբողջ կյանքն անց ենք կացնում անգործների, կովարարների, հիմարների ու անբան կանանց շրջանում, խոսում ու լսում ենք ամեն տեսակ անմտություններ— մի՞թե դա պատյան չէ։ Ա՛յ թե ցանկանում եք, ես մի շատ խրատական պատմություն կանեմ ձեզ։

— Չէ՛, արդեն ժամանակն է քնելու,— ասաց Բուրկինը։— Բարի գիշեր։

Երկուսով էլ մտան մարագը ու պառկեցին խոտի վրա։ Երկուսն էլ արդեն ծածկվել ու սկսել էին ննջել, երբ հանկարծ թեթև ոտնաձայն լսվեց՝ թը՛փ, թը՛փ... Ինչ-որ մեկը ման էր գալիս մարագից ոչ հեռու. գնում էր մի քիչ ու կանգ էր առնում, իսկ մի բոպե հետո նորից՝ թը՛փ, թը՛փ... Շները գոռոալ սկսեցին։

— Այդ Մավրան է ման գալիս,— ասաց Բուրկինը։

Քայլերի ձայնը լռեց։

— Բավական չէ, որ տեսնում ու լսում ես, թե ինչպես են ստում,— սկսեց Իվան Իվանիչը, մյուս կողքի վրա շուռ գալով,— դեռ էլի քեզ են հիմար անվանում, որ այդ սուտը համբերում ես, մարսում ամեն տեսակ վիրավորանք ու ստորացում. ոչ միայն պահանջվում է, որ չհամարձակվես բացարձակ ասել, թե դու ազնիվ ու ազատ մարդկանց կողմն ես, այլև՝ ինքդ էլ սուտ խոսես, ժպտաս, և այդ բոլորը մի կտոր հացի, մի տաք անկյունի, մի ինչ-որ գրոշանոց ողորմելի չինի համար է։ Չէ՛, այլևս այսպես ապրել անհնար է։

* Թղթախաղի մի տեսակ։

— Է՛հ, դա արդեն դուք ուրիշ օպերայից եք երգում, Իվան Իվանիչ,— ասաց ուսուցիչը։— Ավելի լավ է քնենք։

Եվ մի տասը րոպե հետո Բուրկինն արդեն քնած էր։ Իսկ Իվան Իվանիչը շարունակ մի կողքից մյուսն էր շուռ գալիս ու հառաչում, հետո վեր կացավ, նորից դուրս գնաց և դռան մոտ նստելով՝ ծխամորճը վառեց։

1898

ՀԱՂԱՐՋԸ

Դեռ վաղ առավոտից անձրևաբեր ամպերը ծածկեցին երկինքը. շոգ չէր, խաղաղ էր ու տաղտկալի, ինչպես լինում է խոնավ, մառախլապատ օրերին, երբ դաշտի վրա վաղուց արդեն կախված են ամպերը, սպասում ես անձրևի, բայց չի գալիս։ Անասնաբույժ Իվան Իվանիչը և գիմնազիայի ուսուցիչ Բուրկինն արդեն հոգնել էին քայլելուց, իսկ դաշտը թվում էր նրանց անվախճան։ Առջևում, հեռու, հազիվ էին երևում Միրոնոսիցկի գյուղի հողմաղացները, աջից ձգվում ու հետո հեռվում, գյուղի հետևը, անհետանում էր բլուրների մի շարք, և երկուսն էլ գիտեին, որ դա գետափն է, այնտեղ մարգագետիններն են, կանաչ ուռենիները, դաստակերտները, և եթե կանգնես բլուրներից մեկի վրա, կերևա նույնպիսի հսկայական մի դաշտ, հեռագրասյուներ ու գնացք, որը հեռվից նման է սողացող թրթուրի, իսկ պայծառ եղանակին կերևա նույնիսկ քաղաքը։ Հիմա, հանդարտ եղանակին, երբ ողջ բնությունը թվում էր հեզ ու մտախոհ, Իվան Իվանիչը և Բուրկինը սիրով էին համակվել դեպի այդ դաշտը և երկուսն էլ մտածում էին, թե որքա՜ն մեծ, որքա՜ն հրաշագեղ է այս երկիրը։

— Անցած անգամ, երբ մենք գյուղապետ Պրոկոֆիի մոտ էինք,— ասաց Բուրկինը,— դուք պատրաստվում էիք մի պատմություն պատմելու։

— Այո, այն ժամանակ իմ եղբոր մասին էի ուզում պատմել։

Իվան Իվանիչը երկար հառաչեց և ծխամորճը ծխեց՝ պատմությունն սկսելու համար, բայց հենց այդ ժամանակ էլ անձրև սկսվեց։ Եվ արդեն հինգ րոպե հետո թափվում էր ուժգին, տեղատարափ անձրևը, ու դժվար էր կանխատեսել, թե երբ կկտրվի։

Իվան Իվանիչն ու Բուրկինը մտածկոտ կանգ առան. արդեն թրջված շները պոչերը կծկած՝ կանգնել ու սրտաշարժ նայում էին նրանց։

— Պետք է մի տեղ թաքնվենք,— ասաց Բուրկինը։— Գնանք Ալյոխինի մոտ։ Հեռու չէ։

— Գնանք։

Նրանք թեքվեցին մի կողմ ու գնում էին հնձված արտով՝ մերթ ուղիղ, մերթ դիմելով աջ, մինչև որ հասան ճանապարհին։ Շուտով երևացին բարդիներ, այգի, ամբարների կարմիր տանիքներ. փայլփլեց գետը, և բացվեց մի տեսարան՝ գետի լայն հունը, ջրաղացը և սպիտակ լոգարանը։ Սա Սոֆինոն էր, ուր ապրում էր Ալյոխինը։

Ջրաղացն աշխատում էր, խլացնելով անձրևի խշշոցը. դողում էր ամբարտակը։ Բեռնասայլերի մոտ կանգնել էին գլուխները կախած, թրջված ձիեր, երթևեկում էին դատարկ պարկերով իրենց ծածկած մարդիկ։ Խոնավ էր, ցեխ ու անհրապույր, իսկ գետի տեսքը սառն էր, շար։ Իվան Իվանիչն ու Բուրկինը արդեն ամբողջովին թրջվել էին, կեղտոտվել, ոտքերը ցեխից ծանրացել էին, և երբ ամբարտակն անցնելով բարձրանում էին դեպի քաղաքի ամբարները, լուռ էին, ասես բարկացել էին իրար վրա։

Մի ամբարում աղմկում էր քամհար մեքենան. դուռը բաց էր, և այնտեղից խուժում էր փոշին։ Շեմքի վրա կանգնել էր ինքը՝ Ալյոխինը, մոտ քառասուն տարեկան, բարձրահասակ, գիրուկ, երկար մազերով մի մարդ, որ ավելի շուտ պրոֆեսորի կամ նկարչի էր նման, քան թե կալվածատիրոջ։ Հագել էր նա սպիտակ, վաղուց չլվացված մի բլուզ՝ պարանակերպ գոտիով, շալվարի փոխարեն վարտիք, սապոգներին կպել էին ցեխ ու հարդ։ Քիթն ու աչքերը փոշուց սևացել էին։ Նա ճանաչեց Իվան Իվանիչին ու Բուրկինին և ըստ երևույթին խիստ ուրախացավ։

— Համեցե՛ք տուն, պարոնա՛յք,— ասաց նա ժպտալով։— Ես հիմա, այս րոպեիս կգամ։

Տունը մեծ էր, երկհարկանի։ Ալյոխինն ապրում էր ներքևում՝ կամարակապ առաստաղով ու փոքր պատուհաններով երկու սենյակում, ուր մի ժամանակ գործակատարներն էին ապրում. կահավորությունն այդտեղ պարզ էր և տարեկան հացի, էժանագին օղու ու լծասարքի հոտ էր գալիս։ Իսկ վերը, փառահեղ սենյակներում նա քիչ էր լինում, միայն երբ հյուրեր էին գալիս։ Տանը

Իվան Իվանիչին ու Բուրկինին դիմավորեց սպասուհին, մի դեռատի, այնքան գեղեցիկ կին, որ երկուսն էլ միանգամից կանգ առան ու նայեցին իրար։

— Ձեք կարող պատկերացնել, թե որքան ուրախ եմ ձեզ տեսնելով,— ասում էր Ալյոխինը՝ նրանց հետևից նախասենյակ մտնելով։— Չէի՞ սպասում։ Պելագե՛յա,— դարձավ նա սպասուհուն,— հյուրերին որևէ բան տվեք շորերը փոխելու համար։ Հա՛, ի դեպ, ես էլ հագուստներս կփոխեմ։ Միայն թե նախ պետք է գնալ լողանալու, թե չէ կարծեմ գարնանից չեմ լողացել։ Ձե՞ք ուզում, պարոնա՛յք, լոգարան գնանք, մինչև որ այստեղ պատրաստություն տեսնեն։

Գեղեցիկ Պելագեյան՝ այնքան նրբանկատ և արտաքուստ այնքան մեղմ, սավաններ ու օճառ բերեց, և Ալյոխինը հյուրերի հետ լոգարան գնաց։

— Այո, վաղուց է, որ չեմ լողացել,— ասում էր նա՝ շորերը հանելով։— Լոգարանս, ինչպես տեսնում եք, լավն է, հայրս է շինել. բայց միշտ էլ լողանալու ժամանակ չեմ ունենում։

Նա նստեց աստիճանի վրա, օճառեց երկար մազերն ու վիզը, և նրա շուրջը ջուրը շագանակագույն դարձավ։

— Այո, ճիշտն ասած...— նկատեց Իվան Իվանիչը՝ նշանակալի նայելով նրա գլխին։

— Վաղուց է, որ չեմ լողացել...— կրկնեց Ալյոխինը ամալկոտ ու նորից օճառ քսեց, և ջուրը նրա շուրջը դարձավ մուգ կապույտ, ինչպես թանաք։

Իվան Իվանիչը դուրս գնաց, աղմուկով նետվեց գետը և չփչփոցով սկսեց լողալ անձրևի տակ, ձեռքերը լայն տարածելով. նրանից ալիքներ էին առաջանում, և ալիքների վրա օրորվում էին սպիտակ շուշաններ։ Նա լողաց մինչև գետի կեսը ու սուզվեց, և մի րոպե անց երևաց մի ուրիշ տեղ ու շարունակեց լողալ. և շարունակ սուզվում էր՝ ջանալով հասնել հատակին. «Ա՜խ, աստվա՜ծ իմ...— կրկնում էր նա երանավետությամբ։— Ա՜խ, աստվա՜ծ իմ...»։ Լողաց մինչև ջրաղացը, մի քիչ խոսեց այնտեղ գեղջուկների հետ և շրջվեց ետ. միջընթացի կենտրոնում պառկեց՝ դեմքը անձրևին դարձնելով։ Բուրկինն ու Ալյոխինը արդեն հագնվել և պատրաստվում էին դուրս գալ, իսկ նա շարունակում էր լողալ ու սուզվել։

— Ա՜խ, աստվա՜ծ իմ...— ասում էր նա։— Ա՜խ, ողորմա՜ծ աստված։

— Բավակա՞ն է,— ձայն տվեց Բուրկինը։

Վերադարձան տուն։ Եվ միայն այն ժամանակ, երբ վերը, մեծ հյուրասենյակում վառեցին լամպը, և Բուրկինն ու Իվան Իվանիչը մետաքսե խալաթ ու տաք մաշիկներ հագած նստել էին բազկաթոռներին, իսկ Ալյոխինն էլ լողացած, սանրված, նոր սերթուկով քայլում էր հյուրասենյակում, ըստ երևույթին զգալով տաքության, մաքրության, չոր հագուստի և թեթև մաշիկների հաճույքը, և երբ գեղեցիկ Պելագեյան գորգի վրա անշշուկ քայլերով ու մեղմ ժպտալով՝ մատուցարանի վրա մուրաբայով թեյ էր հրամցնում, միայն այդ ժամանակ Իվան Իվանիչը սկսեց իր պատմությունը, և թվում էր, թե նրան լսում էին ոչ միայն Բուրկինն ու Ալյոխինը, այլ նաև այն ծեր ու երիտասարդ տիկիններն ու զինվորականները, որ հանդարտ ու խստահայաց նայում էին ոսկեզօծ շրջանակներից։

— Մենք երկու եղբայր ենք,— սկսեց նա,— ես՝ Իվան Իվանիչս և մյուսը՝ Նիկոլայ Իվանիչը, մոտ երկու տարով փոքր։ Ես գնացի գիտական ուղիով, դարձա անասնաբույժ, իսկ Նիկոլայն արդեն տասնինը տարեկանից նստած է նահանգական հարկային պալատում։ Մեր հայրը՝ Զիշմա-Հիմալայսկին կանտոնիստներից* էր, բայց սպայական աստիճանի հասնելով՝ թողեց մեզ ոչնչական ազնվականություն ու մի փոքրիկ կալվածք։ Նրա մահից հետո կալվածքը պարտքերի փոխարեն խլեցին մեզնից, բայց և այնպես մեր մանկությունն անցկացրինք գյուղում, ազատանկաշկանդ։ Գյուղական երեխաների նման մենք էլ գիշեր-ցերեկ անց էինք կացնում դաշտում, անտառում, հսկում էինք ձիերին, ծառի կեղև էինք պոկում, ձուկ որսում և ուրիշ այդպիսի բաներ... Իսկ դուք գիտեք, որ նա, ով կյանքում թեկուզ մի աքլորին է բռնել, կամ թե աշնանը տեսել է չվող կեռնեխներ, թե ինչպես նրանք ջինջ, զով օրերին թռչում են գյուղի վրայով, նա արդեն քաղաքի բնակիչ չէ և մինչև մահն էլ կձգտի դեպի անկաշկանդ կյանքը։ Իմ եղբայրը թախծում էր հարկային պալատում։ Տարիներն անց էին կենում, իսկ նա շարունակ նստած էր նույն տեղը, գրում էր միշտ նույն թղթերը և անվերջ մտածում՝ ինչպե՞ս մի կերպ գյուղ վերադառնա։ Եվ այդ կարոտը նրա մեջ

* Զինվորի որդին, որ ծնվելու օրից կցվում էր ռազմական վարչությանը և պատրաստվում էր զինվորական ծառայությունն անցկացնել ռազմական հատուկ ստորին դպրոցում (Ռուսաստանում XIX դ. առաջին կեսում)։ Ռ. Բ.։

քիչ-քիչ դարձավ որոշակի ցանկություն, մի որևէ տեղ՝ գետի կամ լճի ափին մի փոքր կալվածք գնելու երազանք։

Նա բարի, հեզ մարդ էր, ես սիրում էի նրան, բայց ամբողջ կյանքում սեփական կալվածքում փակվելու նրա այդ ցանկությանը երբեք համամիտ չէի։ Ընդունված է ասել, որ մարդուն միայն երեք արշին հող է պետք։ Բայց չէ՞ որ երեք արշին դիակին է պետք և ոչ թե մարդուն։ Հիմա ասում են նաև, որ եթե մեր ինտելիգենցիան ձգտում է դեպի հողը, դեպի կալվածքները, ապա այդ լավ է։ Բայց չէ՞ որ այդ կալվածքները նույն երեք արշին հողն են։ Հեռանալ քաղաքից, պայքարից, առօրյա աղմուկից, հեռանալ ու թաքնվել իր կալվածքում, դա կյանք չէ, այլ եսասիրություն, ծուլություն, իր տեսակի մի վանականություն, բայց վանականություն առանց սխրագործությունների։ Մարդուն պետք է ոչ թե երեք արշին հող, ոչ թե կալվածք, այլ ամբողջ երկրագունդը, բովանդակ բնությունը, որի լայնարձակության մեջ կարողանար հանդես բերել իր ազատ ոգու բոլոր հատկություններն ու առանձնահատկությունները։

Եղբայրս՝ Նիկոլայն, իր գրասենյակում նստած երազում էր, թե ինչպես ուտի իր սեփական շշին, որից այնպիսի համեղ հոտ է տարածվելու ամբողջ բակում, ուտի կանաչ խոտի վրա, քնի արևի տակ, ժամերով նստի դարպասի մոտի նստարանին և նայի դաշտ ու անտառին։ Գյուղատնտեսական գրքերն ու օրացույցների այդպիսի բոլոր խորհուրդներն էին նրա ուրախությունը, հոգեկան նախասիրած սնունդը. նա սիրում էր և թերթ կարդալ, բայց թերթերում կարդում էր միայն այն հայտարարությունները, թե այսքան դեսյատին վարելահող ու մարգագետին է ծախվում՝ դաստակերտերով, գետով, ջրաղացով, հոսող լճակներով հանդերձ։ Եվ նրա գլխում նկարվում էին այգու ուղիներ, մրգեր, սարյակի վանդակներ, լճակներում՝ ծածաններ և, գիտեք, էլի, ուրիշ այդպիսի բաներ։ Այդ երևակայական պատկերները տարբեր էին՝ նայած այն հայտարարություններին, որոնց պատահում էր նա, բայց, չգիտեմ ինչու, դրանցից յուրաքանչյուրի մեջ անպայման հաղարջ կար։ Ո՛չ մի դաստակերտ, ո՛չ մի բանաստեղծական անկյուն նա չէր կարող պատկերացնել առանց այնտեղ հաղարջ լինելու։

— Գյուղական կյանքն ունի իր հարմարությունները,— երբեմն ասում էր նա։— Նստում ես պատշգամբում, թեյ ես խմում,

իսկ լճակի վրա լողում են բադերդ, գալիս է հաճելի բուրմունք և... և աճում է հաղարջը։

Նա գծում էր իր կալվածքի հատակագիծը և ամեն անգամ նրա հատակագծում նույն բանն էր դուրս գալիս՝ a) տերունական տուն, b) սենյակ ծառաների, c) բանջարանոց, d) հաղարջ։ Ապրում էր նա ժլատ. կերածն ու խմածը միշտ պակաս, հագածը աստված գիտե ինչ, ասես մուրացկան լիներ և շարունակ փող էր կուտակում ու դնում բանկը։ Սաստիկ աչքածակություն էր անում։ Սիրտս ցավում էր, երբ նայում էի նրան. ես էլ քչից-շատից տալիս էի, տոներին բան էի ուղարկում, բայց նա այդ էլ էր թաքցնում։ Մարդը որ մի անգամ տարվում է մի մտքով՝ է՛լ ոչինչ չես կարող անել։

Տարիներն անցնում էին. նրան տեղափոխեցին մի ուրիշ նահանգ, արդեն լրացավ նրա քառասուն տարին, իսկ նա շարունակ լրագրերի հայտարարություններն էր կարդում ու փող կուտակում։ Հետո լսեցի, որ ամուսնացել է։ Եվ մինչև նույն նպատակով՝ որպեսզի հաղարջով կալվածք գնի։ Ամուսնացել էր մի պառավ, տգեղ այրի կնոջ հետ, առանց որևէ զգացմունքի, այլ միայն նրա համար, որ այդ կինը փող ուներ։ Եղբայրս նրա հետ էլ ժլատ էր ապրում, կիսաքաղց էր պահում, իսկ նրա փողը դրել էր բանկը իր անունով։ Նա առաջ եղել էր փոստապետի կին և վարժվել էր կարկանդակների ու քաղցր խմիչքների, իսկ երկրորդ ամուսնու մոտ սև հացն էլ լիուլի չէր տեսնում. և սկսեց այդպիսի կյանքից հյուծվել ու մի երեք տարի հետո էլ վեր կացավ ու հոգին տվեց աստծուն։ Իսկ եղբայրս, ինքարկե, ոչ մի բոպե էլ չմտածեց, որ ինքն է հանցավոր նրա մահվան համար։ Փողն էլ օղու պես մարդուն խենթուկ է դարձնում։ Մեր քաղաքում մի վաճառական մեռավ։ Մահվանից առաջ հրամայեց, որ մի պնակ մեղր տան իրեն և իր բոլոր թղթադրամներն ու շահաբեր տոմսերը մեղրի հետ կերավ, որպեսզի ոչ ոքի չմնան։ Մի անգամ կայարանում ես ստուգում էի տավարի նախիրը, այդ միջոցին մի չարչի ընկավ շոգեքարշի տակ ու սրունքը կտրվեց։ Տանում էին նրան ընդունարան, արյունը թափվում էր. սոսկալի էր։ Իսկ նա շարունակ աղաչում էր, որ գտնեն իր ոտքը, և անհանգստանում էր. կտրված սրունքի կոշիկի մեջ եղած քսան ռուբլին չլինի թե կորչի։

— Այդ արդեն սկսեցիք ուրիշ օպերայից երգել,— ասաց Բուրկինը։

— Կնոջ մահվանից հետո,— շարունակեց Իվան Իվանիչը՝ կես բոպե մտածելով,— եղբայրս սկսեց իր համար մի կալվածք փնտրել։ Իհարկե, շատ որ փնտրես, վերջ ի վերջո կսխալվես և կգնես բնավ էլ ոչ այն, ինչ երազել էիր։ Նիկոլայ եղբայրս կոմիսիոնների միջոցով և պարտքի փոխանցմամբ գնեց հարյուր տասներկու դեսյատին՝ մի կալվածք տերունական տնով, ծառաների սենյակով, պարտեզով, բայց ո՛չ պտղատու այգի կար, ո՛չ հաղարջ, ոչ էլ բաղերով լճակներ. գետ կար, սակայն գետի ջուրը նման էր սուրճի, որովհետև կալվածքի մի կողմում աղյուսի, իսկ մյուս կողմում էլ ոսկոր այրելու գործարան կար։ Բայց իմ Նիկոլայ Իվանիչը քիչ վշտացավ. նա մի քսան հաղարջի թուփ բերել տվեց, տնկեց ու ապրեց կալվածատիրոջ պես։

Անցած տարի գնացի նրան տեսության։ Գնամ մի տեսնեմ, ասացի, ինչպես է, ի՛նչ կա։ Նամակների մեջ եղբայրս իր կալվածքն անվանում էր այսպես. Զումբարոկլովի տափաստան— նույն ինքը Հիմալայան։ «Նույն ինքը Հիմալայան» հասա կեսօրից հետո։ Շոգ էր։ Ամենուրեք առուներ, ցցապատեր, ցանկապատեր, շարք-շարք տնկված եղևնիներ, ու չգիտես որտեղից մտնես բակը, ուր կապես քո ձին։ Գնում եմ դեպի տուն, և ինձ ընդառաջ է գալիս մի շեկ, շաղ, խոզի նման շուն։ Ուզում է հաչել, բայց ծուլանում է։ Խոհանոցից դուրս եկավ խոհարարուհին՝ բոկոտն, շաղ, նույնպես խոզի նման, և ասաց, որ պարոնը ճաշից հետո հանգստանում է։ Մտա եղբորս սենյակը. նստած էր նա անկողնում, սրունքները ծածկել էր վերմակով։ Ծերացել էր, չաղացել, փքվել, այտերը, քիթն ու շուրթերը ձգվել էին առաջ. մեկ-մեկ էլ խոթխոթում էր վերմակի տակ։

Մենք գրկախառնվեցինք ու արցունքոտվեցինք ուրախությունից ու այն տխուր մտքից, թե մի ժամանակ երիտասարդ էինք, իսկ հիմա երկուսս էլ սպիտակել ենք ու մեռնելը մոտ է։ Նա հագնվեց ու տարավ ինձ կալվածքը ցույց տալու։

— Դե՛, ասա տեսնենք՝ ինչպե՞ս ես ապրում,— հարցրի ես։

— Է՛, ոչի՞նչ, փա՞ռք աստծու, լավ եմ ապրում։

Նա արդեն առաջվա անհամարձակ, խեղճ չինովնիկը չէր, այլ իսկական կալվածատեր, պարոն։ Արդեն ընտելացել էր այդ կյանքին, վարժվել ու ճաշակն առել էր. շատ էր ուտում, լողանում էր բաղնիքում, չաղացել էր, արդեն դատ էր վարում հասարակության ու երկու գործարանների հետ և խիստ նեղանում էր, երբ գեղջուկները «ձերդ բարձր ազնվություն» չէին անվանում

իրեն։ Եվ իր հոգուն էլ կարգին հոգ էր տանում, մեծատունի պես, և բարի գործեր էր անում ոչ թե ուղղակի, այլ մեծամտությամբ։ Իսկ ի՞նչ բարի գործեր էին։ Գեղջուկներին բոլոր հիվանդություններից բուժում էր սողայով ու լուծողականով, և իր անվանակոչության տոնին գյուղամիջում մաղթանք էր կատարել տալիս, հետո էլ մի կես դույլ օղի էր բաժանում՝ համոզված, թե այդպես պետք է անել։ Ա՜խ, այդ սարսափելի կես դույլերը. չաղլիկ կալվածատերը այսօր գեղջուկներին զեմստվոյի պետի մոտ է քարշ տալիս արոտավայրերն ապօրինի արածացնելու համար, իսկ վաղը՝ հանդիսավոր օրը, կես դույլ է նվիրում, նրանք էլ խմում են, ուռա՜ գոչում և հարբած վիճակում ծնկաչոք խոնարհություն են անում նրան։ Կյանքի բարելավումը, հագենալը, անգործությունը ռուս մարդու մեջ զարգացնում է մեծամտություն, այդ ամենանողկալի բանը։ Նիկոլայ Իվանիչը, որ մի ժամանակ հարկային պալատում վախենում էր նույնիսկ անձամբ իր համար սեփական հայացքներ ունենալ, հիմա միմիայն ճշմարտություններ էր ասում և այնպիսի շեշտով, ինչպես մինիստրը. «Կրթությունն անհրաժեշտ է, բայց ժողովրդի համար վաղաժամ է», «մարմնական պատիժներն ընդհանրապես վնասակար են, սակայն որոշ դեպքերում օգտակար են ու անփոխարինելի»։

— Ես ճանաչում եմ ժողովրդին և կարողանում եմ նրա հետ վարվել,— ասում էր նա։— Ժողովուրդն ինձ սիրում է։ Բավական է միայն, որ մատս շարժեմ, և ինձ համար ժողովուրդը կանի այն ամենը, ինչ ուզենամ։

Եվ այս ամենը, նկատի առեք, ասվում էր խելացի, բարի ժպիտով։ Նա մի քսան անգամ կրկնեց. «մենք՝ ազնվականներս». «ես, որպես ազնվական». ակներևաբար այլևս չէր հիշում, որ մեր պապը գեղջուկ էր, իսկ հայրը՝ զինվոր։ Նույնիսկ մեր ազգանունը Չիշմա-Հիմալայսկի, որ ըստ էության անհարիր է, հիմա նրան թվում էր հնչեղ, տոհմիկ և խիստ հաճելի։

Սակայն բանը նա չէ, այլ ես ինքս։ Ես ուզում եմ պատմել ձեզ, թե ինչ փոփոխություն առաջացավ այն մի քանի ժամում, որ անցկացրի նրա կալվածքում։ Երեկոյան, երբ թեյում էինք, խոհարարուհին մի ափսե լիքը հաղարջ մատուցեց։ Դա ոչ թե գնված, այլ նրա սեփական հաղարջն էր՝ առաջին անգամ հավաքված այն օրվանից ի վեր, ինչ տնկել էին թփերը։ Նիկոլայ Իվանիչը ծիծաղեց և մի բոպե նայեց հաղարջներին՝ լուռ, արցունքն աչքերին, հուզմունքից չէր կարող խոսել. հետո մի հա-

զարջ դրեց բերանը, նայեց ինձ այն երեխայի հաղթությամբ, որը վերջապես ստանում է իր սիրելի խաղալիքը, ասաց.

— Ի՞նչ համեղ է։

Եվ ագահությամբ ուտում էր ու շարունակ կրկնում։

— Օ՜խ, ի՞նչ համեղ է։ Դե՛, փորձիր, է՞։

Պինդ էր ու թթու, բայց ինչպես Պուշկինն է ասում՝ «բազում ճշմարտություններից ավելի թանկ է մեզ վսեմացնող սուտը»։ Ես տեսնում էի այն երջանիկ մարդուն, որի նվիրական երազն իրականացել էր այնքան ակներև կերպով, որը հասել էր կյանքի նպատակին, ստացել էր այն, ինչ ուզում էր, և գոհ էր իր բախտից, ինքն իրենից։ Մարդկային երջանկության մասին ունեցած իմ մտքերին միշտ էլ, չգիտեմ ինչու, մի տխուր բան էր խառնվում. իսկ հիմա երջանիկ մարդ տեսնելով՝ ես համակվեցի մի ծանր, հուսահատության մոտեցող զգացումով։ Առանձնապես ծանր էր ինձ համար այդ գիշերը։ Իմ անկողինը գցեցին եղբորս ննջարանին կից սենյակում, և ես լսում էի, թե ինչպես նա չէր քնում, ինչպես վեր էր կենում, մոտենում հաղարջով լի ափսեին ու մի-մի հատ վերցնում։ Ես միտք էի անում, թե իրոք որքա՞ն գոհ, երջանիկ մարդիկ կան։ Ինչպիսի՞ ճնշող ուժ է դա։ Նայեցեք այս կյանքին. ուժեղների լկտիություն ու անգործություն, թույլերի տգիտություն ու անասնակերպություն, չորս կողմը անասելի աղքատություն, նեղություն, այլասերում, հարբեցողություն, կեղծավորություն, ստախոսություն... Մինչդեռ բոլոր տներում ու փողոցներում լռություն է, անդորր. քաղաքում ապրող հիսուն հազարի մեջ չկա մեկը, որ ճչա, բարձրաձայն վրդովվի։ Մենք տեսնում ենք նրանց, որոնք շուկա են գնում մթերքի. ցերեկն ուտում են, գիշերը քնում, ասում են իրենց դատարկ խոսքերը, ամուսնանում, ծերանում, բարեհոգաբար գերեզման տանում իրենց ննջեցյալներին. սակայն մենք չենք տեսնում ու լսում նրանց, որոնք տառապում են, և այն, որ ահավոր է կյանքում, տեղի է ունենում կուլիսների հետևը։ Ամեն ինչ խաղաղ է, հանգիստ, բողոքում է միայն համր վիճակագրությունը. այսքան մարդ է խելագարվել, այսքան դույլ ջուր է խմվել, այսքան երեխա մահացել է թերսնումից... Եվ ակներևաբար այսպիսի կարգ ու կանոն է պետք. ակներևաբար երջանիկն իրեն լավ է զգում լոկ այն պատճառով, որ դժբախտները լռիկ տանում են իրենց լուծը և առանց այդ լռության՝ երջանկությունն անկարելի կլիներ։ Սա ընդհանուր հիպնոզ է։ Պետք է, որ յուրաքանչյուր գոհ,

երջանիկ մարդու դռան հետևը կանգներ որևէ մեկը մուրճը ձեռքին և թակոցով շարունակ հիշեցներ, որ կան դժբախտներ, որ ինչքան էլ նա երջանիկ լինի, կյանքը վաղ թե ուշ ցույց կտա նրան իր մագիլները, մի փորձանք կպայթի՝ հիվանդություն, աղքատություն, կորուստներ, և նրան ոչ ոք չի տեսնի ու չի լսի, ինչպես նա հիմա չի տեսնում ու չի լսում ուրիշներին։ Սակայն մուրճը բռնած այդ մարդը չկա, երջանիկն ապրում է իր համար, և առօրյա մանր հոգսերը հուզում են նրան թեթևակի, ինչպես քամին՝ երերող կաղամախիին. և ամեն ինչ մնում է բարեհաջող։

— Այդ նույն գիշերը ես հասկացա, որ ինքս էլ գոհ ու երջանիկ էի,— շարունակեց Իվան Իվանիչը վեր կենալով։— Ես ճաշելիս և որսի ժամանակ սովորեցնում էի, թե ինչպես պետք է ապրել, ինչպես հավատալ, ինչպես կառավարել ժողովրդին։ Ես էլ էի ասում, որ ուսումը լույս է, որ կրթությունն անհրաժեշտ է, սակայն հասարակ մարդկանց համար առայժմ միայն գրագիտությունը բավական է։ Ազատությունը բարիք է, ասում էի ես, առանց դրան չի կարելի, ինչպես՝ առանց օդի, բայց պետք է սպասել։ Այո, այդպես էի ասում ես, իսկ հիմա հարցնում եմ՝ հանուն ինչի՞ սպասել,— հարցրեց Իվան Իվանիչը՝ բարկացած նայելով Բուրկինին։— Հանուն ի՞նչ բանի սպասել, ձեզ եմ հարցնում։ Հանուն ի՞նչ նկատառումների։ Ինձ ասում են, թե ամեն ինչ մեկ անգամից չի լինի, ամեն մի գաղափար կյանքում իրագործվում է աստիճանաբար, իր ժամանակին։ Բայց ո՞վ է այդ ասում։ Որտե՞ղ են ապացույցները, թե դա իրավացի է։ Դուք վկայակոչում եք իրերի բնական կարգը, երևույթների օրինականությունը, բայց կարգ ու օրինականություն կա՞ արդյոք այն բանում, որ ես՝ կենդանի մտածող մարդս, կանգնած եմ խանդակի վրա ու սպառնում եմ, թե և՛րբ նա ինքնին կլցվի կամ տիզմը կծածկի նրան, մինչդեռ գուցե կարող էի ցատկել նրա վրայով կամ կամուրջ շինել։ Նորից եմ կրկնում՝ հանուն ինչի՞ սպասել. սպասել, երբ ապրելու ուժ չկա, այնինչ ապրել պետք է և ուզում ես ապրել։

Եղբորս մոտից մեկնեցի վաղ առավոտյան, և այդ օրվանից քաղաքում մնալն ինձ համար դարձել է անտանելի։ Ճնշվում եմ լռությունից ու հանդարտությունից, վախենում եմ նայել լուսամուտներին, որովհետև ինձ համար հիմա ավելի ծանր պատկեր չկա, քան սեղանի շուրջը նստած ու թեյ խմող երջանիկ ընտա-

նիքը։ Ես արդեն ծեր եմ և պայքարի համար պիտանի չեմ, նույնիսկ ատելու ընդունակ չեմ։ Միայն հոգնեպես եմ վշտանում, գրգռվում, բարկանում, գիշերները գլուխս ցավում է մտքերի խուժումից ու չեմ կարողանում քնել... Ա՜խ, եթե երիտասարդ լինեի՜։

Իվան Իվանիչը հուզված երթևեկեց անկյունից անկյուն ու շարունակեց.

— Եթե երիտասարդ լինեի՜։

Նա հանկարծ մոտեցավ Ալյոխինին ու սկսեց սեղմել նրա մերթ այս, մերթ այն ձեռքը։

— Պավե՛լ Կոնստանտինիչ,— ասաց նա աղերսաձայն,— մի՛ հանգստանաք, մի՛ թողնեք, որ թմբիր գա ձեր վրա։ Քանի դեռ երիտասարդ եք, ուժեղ, առույգ, մի՛ դադարեք բարիք անելուց։ Երջանկություն չկա և չպետք է որ լինի, իսկ եթե կյանքն իմաստ ու նպատակ ունի, ապա այդ իմաստն ու նպատակը բնավ էլ մեր բախտավորության մեջ չէ, այլ մի ավելի բանական ու վեհ բանի մեջ։ Բարի՛ք արեք։

Եվ այդ ամենը Իվան Իվանիչն ասաց խղճալի, աղաչող ժպիտով, կարծես թե անձամբ իր համար էր խնդրում։

Հետո երեքն էլ նստած էին բազկաթոռներին, հյուրասենյակի տարբեր անկյուններում ու լուռ էին։ Իվան Իվանիչի պատմությունը չբավարարեց ո՛չ Բուրկինին, ո՛չ էլ Ալյոխինին։ Երբ ոսկեզօծ շրջանակներից նայում էին գեներալներն ու տիկինները, որոնք մթնշաղին կենդանի էին թվում, հաղարջ ուտող խեղճ չինովնիկի պատմությունը լսելը ձանձրալի էր։ Չգիտես ինչու, ցանկություն կար խոսել ու լսել շքեղ մարդկանց, տիկնանց մասին։ Եվ այն, որ նրանք նստած էին հյուրասենյակում, որտեղ ամեն ինչ՝ և՛ ծածկույթով ջահը, և՛ բազկաթոռները, և՛ ոտքի տակի գորգերը՝ ասում էր, որ այդտեղ մի ժամանակ քայլել, նստել, թեյ են խմել ահա այս մարդիկ, որոնք հիմա նայում էին շրջանակներից, և այն, որ այստեղ հիմա հուշիկ քայլում էր գեղանի Պելագեյան,— ապա դա ամեն մի պատմությունից լավ էր։

Ալյոխինի քունը խիստ տանում էր. տնտեսության պատճառով նա վաղ էր վեր կենում՝ առավոտյան ժամը երեքին, և հիմա նրա աչքերը փակվում էին. բայց նա վախենում էր, որ հյուրերը կարող են որևէ հետաքրքրական բան պատմել առանց իրեն և չէր գնում։ Խելացի՞ էր, արդարացի՞ էր արդյոք այն, ինչ հիմա ասում էր Իվան Իվանիչը. նա չէր լսում. հյուրերը խոսում

էին ոչ թե ձավարի, խոտի, ոչ թե կուպրի, այլ մի բանի մասին, որն ուղղակի չէր վերաբերում իր կյանքին, ուստիև ուրախ էր և ուզում էր, որ շարունակեն...

— Բայց և այնպես քնելու ժամանակն է,— ասաց Բուրկինը վեր կենալով։— Թույլ տվեք բարի գիշեր մաղթել ձեզ։

Ալյոխինը հրաժեշտ տվեց և գնաց իր սենյակը՝ ներքև, իսկ հյուրերը մնացին վերևը։ Երկուսին միասին գիշերելու համար հատկացրին մի մեծ սենյակ, որտեղ կային երկու հին, փայտե մահճակալ՝ զարդաքանդակներով, իսկ անկյունում՝ մի փղոսկրե խաչելություն։ Նրանց լայն, զով անկողիններից, որ գցել էր գեղանի Պելագեյան, թարմ սպիտակեղենի հաճելի հոտ էր գալիս։

Իվան Իվանիչը լուռ հանվեց և պառկեց։

— Տե՛ր, ներիր մեզ՝ մեղավորներիս,— ասաց նա ու ծածկվեց՝ գլուխն էլ հետը։

Սեղանի վրա դրված նրա ծխամորճից ուժեղ խանձահոտ էր գալիս, և Բուրկինը երկար ժամանակ չէր քնում ու ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե որտեղի՞ց է այդ ծանր հոտը։

Ամբողջ գիշերը անձրևը շփշփում էր պատուհանին։

1898

ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Հաջորդ օրը նախաճաշին հրամցրին խիստ համեղ կարկանդակներ, խեցգետին ու ոչխարի մսով կոտլետ։ Երբ դեռ նախաճաշում էինք, վերև եկավ խոհարար Նիկանորը՝ իմանալու, թե ինչ են ցանկանում հյուրերը ճաշին։ Միջահասակ մարդ էր նա՝ թմբլիկ դեմքով ու մանր աչքերով, ածիլված, բայց թվում էր՝ նրա բեղերը ոչ թե ածիլված են, այլ պոկոտված։

Ալյոխինը պատմում էր, որ գեղանի Պելագեյան սիրահարված է այդ խոհարարին։ Բայց որովհետև սա հարբեցող էր ու բնավորությամբ էլ վայրագ, Պելագեյան չէր ուզում ամուսնանալ նրա հետ, սակայն համաձայն էր ապրել... այնպես։ Իսկ Նիկանորը աստվածավախ էր, և կրոնական համոզմունքները թույլ չէին տալիս, որ ապրի այնպես։ Նա պահանջում էր, որ Պելագեյան ամուսնանա իր հետ, և այլ կերպ չէր ուզում, ու երբ հարբած էր լինում, նախատում էր նրան, նույնիսկ ծեծում։ Երբ նա հարբած էր լինում, Պելագեյան թաքնվում էր

վերևում ու հեկեկում. այն ժամանակ Ալյոխինն ու սպասավորները տնից դուրս չէին գալիս, որպեսզի անհրաժեշտության դեպքում պաշտպանեն նրան։

Սկսեցին սիրո մասին խոսել։

— Ինչպե՞ս է ծնվում սերը,— ասաց Ալյոխինը,— ինչո՞ւ Պելագեյան չի սիրել. մեկ ուրիշի՝ հոգեկան և արտաքին հատկություններով իրեն ավելի հարմար մի մարդու, այլ սիրել է հենց այդ մունդոիկ Նիկանորին,— մեր տանը բոլորն էլ մունդոիկ են անվանում նրան,— քանի որ սիրո մեջ կարևորն են անձնական երջանկության հարցերը. այս ամենը անհայտ է և այս ամենը կարելի է քննախոսել ինչպես ուզենաս։ Մինչև հիմա սիրո մասին ասվել է միայն մի անվիճելի ճշմարտություն, այսինքն՝ «շատ մեծ խորհուրդ է դա», այնուամենայնիվ, մնացածը, ինչ ասվել ու գրվել է սիրո մասին, եղել է ոչ թե լուծում, այլ միայն հարցադրումներ, որոնք այնպես էլ մնացել են լուծված։ Այն բացատրությունը, որ կարծես թե պիտանի է մի դեպքի համար, արդեն պիտանի չէ տասնյակ այլ դեպքերի համար, և ըստ իս, ամենից լավն է յուրաքանչյուր դեպք առանձին բացատրել՝ չջանալով ընդհանրացնել։ Ինչպես բժիշկներն են ասում, պետք է անհատականացնել ամեն մի առանձին դեպքը։

— Միանգամայն ճիշտ է,— համաձայնեց Բուրկինը։

— Մենք՝ ռուսներս, կանոնավոր մարդիկ ենք և խիստ շահագրգռված ենք անլուծելի մնացած այդ հարցերով։ Սովորաբար սերը բանաստեղծականացնում են, զարդարում վարդ ու սոխակով, իսկ մենք՝ ռուսներս, մեր սերը զարդարում ենք այդ ճակատագրական հարցերով, ըստ որում ընտրում ենք ամենաանհետաքրքրականները։ Մոսկվայում, երբ դեռ ուսանող էի, կյանքի մի ընկերուհի ունեի՝ մի սիրելի կին, որն ամեն անգամ, իմ գրկում լինելիս, մտածում էր, թե ամսական ինչքա՛ն փող եմ տալու իրեն և որքա՛ն արժի հիմա տավարի մսի ֆունտը։ Այնպես էլ մենք. երբ սիրում ենք, անընդհատ հարցնում ենք մեզ. ազնի՞վ բան է սա, թե՞ անազնիվ. խելացի՞ է մեր արածը, թե՞ անմիտ. ո՞ւր կտանի այս սերը և այլն։ Լավ է թե վատ՝ չգիտեմ, բայց գիտեմ, որ դա խանգարում է, չի բավարարում, ջղայնացնում է։

Երևում էր, որ նա ուզում է մի բան պատմել։ Միայնակ ապրող մարդիկ միշտ էլ սրտի վրա ունենում են այնպիսի մի

բան, որ հաճույքով կպատմեն։ Քաղաքում ամուրիները դիտմամբ են բաղնիք ու ճաշարան գնում, որպեսզի խոսեն միայն. և երբեմն բաղնիպաններին ու մատուցողներին խիստ հետաքրքրական պատմություններ են պատմում. իսկ գյուղում սովորաբար իրենց հոգին զեղում են հյուրերի առաջ։ Հիմա լուսամուտից երևում էին գորշ երկինքն ու անձրևից թրջված ծառերը. այդպիսի եղանակին գնալու տեղ չկար և մնում էր միայն մի բան՝ պատմել ու լսել։

— Ես արդեն վաղուց ապրում եմ Սոֆինոյում ու զբաղվում եմ տնտեսությամբ,— սկսեց Ալյոխինը,— այն օրվանից, ինչ ավարտել եմ համալսարանը։ Իմ դաստիարակությամբ փափկասուն եմ ես, իսկ հակումներով՝ կաբինետային մարդ. բայց երբ եկա այստեղ՝ կալվածքը մեծ պարտք ուներ, և քանի որ հայրս պարտքի տակ էր ընկել մեծ մասամբ այն պատճառով, որ շատ էր ծախսել իմ կրթության համար, ապա որոշեցի, որ չեմ հեռանա այստեղից ու կաշխատեմ, մինչև որ վճարեմ այդ պարտքը։ Այդպես որոշեցի ու սկսեցի աշխատել, ճիշտն ասած, որոշ զզվանքով։ Այստեղի հողը քիչ է բերք տալիս, և որպեսզի գյուղատնտեսությունը վնասաբեր չլինի՝ պետք է օգտվել ճորտերի կամ վարձու մշակների աշխատանքից, որ համարյա նույնն է. կամ թե տնտեսությունդ գյուղացու ձևով վարես, այսինքն՝ անձամբ աշխատես դաշտում ընտանյոք հանդերձ։ Միջին ճանապարհ չկա։ Բայց այն ժամանակ այսպիսի երբուությունների խորամուխ չէի լինում։ Հանգիստ չէի թողնում ոչ մի հողապատառ, հավաքում բերում էի հարևան գյուղերի բոլոր գեղջուկներին ու կանանց. աշխատանքը սաստիկ եռում էր. ինքս էլ էի վարում, ցանում, հնձում և ըստ այդմ ձանձրանում ու զզվանքով դեմքս կնճռոտում էի գյուղական կատվի պես, որը քաղցից վարունգ է ուտում բանջարանոցում. մարմինս ցավում էր, քայլելիս քնում էի։ Սկզբում ինձ թվաց, թե այդ աշխատանքային կյանքը հեշտությամբ կարող եմ հաշտեցնել իմ կուլտուրական հակումների հետ. կարծում էի, թե դրա համար բավական է կյանքում մի որոշ արտաքին կարգ ու կանոն պահել։ Տեղափոխվեցի այստեղ՝ վերևի այս փարթամ սենյակները և կարգավորեցի այնպես, որ նախաճաշից ու ճաշից հետո լիկյորով սուրճ էին մատուցում ինձ, իսկ քնելիս՝ պառկած կարդում էի «Եվրոպայի լրաբերը»։ Բայց մի օր էլ եկավ մեր քահանան՝ տեր Իվանը և մեկ ան-

գամ սեղան նստելիս խմեց իմ բոլոր լիկյորները, «Եվրոպայի լրաբերն» էլ գնաց քահանայի աղջիկների մոտ և այլևս չվերադարձավ, որովհետև ամառը, մանավանդ խոտհունձի ժամանակ, չէի կարող հասնել մինչև իմ անկողինը ու քնում էի մաքրագում՝ սահնակի մեջ կամ անտառապահի տնակում. էլ ո՞վ կմտածեր կարդալու մասին։ Քիչ-քիչ իջա ցած, սկսեցի ճաշել ծառաների խոհանոցում, իսկ նախկին պերճանքից մնացին այս բոլոր սպասավորները, որ հորս էին ծառայել և որոնց արձակելը ցավ էր պատճառում ինձ։

Առաջին տարիներից էլ ինձ ընտրեցին պատվավոր հաշտարար դատավոր։ Երբեմն-երբեմն հարկ էր լինում քաղաք գնալ և մասնակցել համագումարի ու շրջանային դատարանի նիստերին. և դա հաճելի էր ինձ։ Երբ երկու-երեք ամիս առանց դուրս գալու ապրում ես այստեղ, մանավանդ ձմռանը, ապա վերջիվերջո սկսում ես սև սերթուկի կարոտը քաշել։ Իսկ շրջանային դատարանում կային և՛ սերթուկներ, և՛ համազգեստներ, և՛ ֆրակներ, բոլորն էլ ընդհանուր կրթություն ստացած մարդիկ՝ իրավաբաններ։ Կարող էիր զրուցակից գտնել։ Սահնակում քնելուց, ծառաների խոհանոցից հետո նստել բազկաթոռին, մաքուր սպիտակեղենով, թեթև կոշիկներով, կրծքին շղթա. օ՜, այնպիսի՜ պերճանք է դա։

Քաղաքում հրճվանքով էին ընդունում ինձ, հաճույքով էի մարդկանց հետ ծանոթանում։ Եվ բոլոր ծանոթություններից ամենահիմնականը և, ճիշտն ասած, ինձ համար ամենահաճելին Լուգանովիչի՝ շրջանային դատարանի նախագահի ընկերոջ հետ ծանոթանալս էր։ Նրան երկուսդ էլ ճանաչում եք. խիստ սիրելի անձնավորություն է։ Դա հենց հրձիգների նշանավոր գործից հետո տեղի ունեցավ. քննությունը տևեց երկու օր. մենք հոգնել էինք։ Լուգանովիչը նայեց ինձ ու ասաց.

— Գիտե՞ք ինչ. գնանք մեզ մոտ ճաշելու։

Անսպասելի էր դա, որովհետև ես այնքան էլ ծանոթ չէի Լուգանովիչի հետ, սոսկ պաշտոնապես, և երբեք չէի եղել նրա տանը։ Միայն մի բոպեով գնացի հյուրանոցի իմ սենյակը՝ հագուստներս փոխելու, ապա դիմեցի այնտեղ՝ ճաշի։ Եվ այդտեղ էլ Աննա Ալեքսեևնայի՝ Լուգանովիչի կնոջ հետ ծանոթանալու առիթ ունեցա։ Այն ժամանակ նա դեռ շատ դեռատի էր, ոչ ավելի, քան քսաներկու տարեկան, և դրանից մի կես տարի առաջ ունեցել էր առաջին երեխան։ Անցած-գնացած բան է,

և հիմա ես դժվարանում եմ որոշել, թե նրա ի՞նչն էր այդքան արտասովոր, որ այնպես հավանեցի նրան. իսկ այն ժամանակ, ճաշելիս, ինձ համար ամեն ինչ անառարկելիորեն պարզ էր. ես տեսնում էի մի դեռատի, գեղեցիկ, բարի, ինտելիգենտ ու հմայիչ կին, որի նմանը առաջ երբեք չէի պատահել, և անմիջապես նրա մեջ զգացի մի մոտիկ, արդեն ծանոթ էակ։ կարծես այդ դեմքը, այդ բարեհամբույր, խելացի աչքերը տեսել էի մանկությանս օրերին, մորս զզրոցի վրա դրված ալբոմում։

Հրձիգների գործով մեղադրեցին չորս հրեայի, ընդունեցին, ըստ իս բոլորովին անհիմն կերպով, որ դա շարագործների խումբ էր։ Ճաշի ժամանակ ես խիստ հուզվում էի, սիրտս ծանրացել էր, և արդեն չեմ հիշում, թե ինչ էի խոսում. միայն թե Աննա Ալեքսեևնան շարունակ օրորում էր գլուխը և ամուսնուն ասում.

— Դմի՜տրի, ինչո՞ւ է այդպես եղել։

Լուգանովիչը բարեսիրտ էր, մեկը այն պարզամիտ մարդկանցից, որոնք հաստատ կառչում են այն կարծիքին, թե քանի որ մարդը դատի է տրված՝ ուրեմն հանցավոր է, որ դատավճռի ճշմարտությանը կարելի է կասկածել միայն մի ձևով՝ օրինական կարգով, թղթով, բայց ոչ մի դեպքում ճաշելիս կամ մասնավոր խոսակցության մեջ։

— Ոչ ես եմ հրկիզել, ոչ էլ դուք,— ասում էր նա մեղմությամբ.— և ահա մեզ ո՞չ դատում են, ոչ էլ բանտարկում։

Եվ երկուսն էլ՝ մարդ ու կին, ջանում էին, որ շատ ուտեմ ու խմեմ։ Մի քանի մանրուքից, օրինակ՝ ինչպես նրանք միասին սուրճ էին եփում, ինչպես խոսքի կեսից հասկանում էին իրար՝ ես կարող էի եզրակացնել, որ նրանք ապրում են հաշտ ու բարեկեցիկ և ուրախ են հյուր ունենալու համար։ Ճաշից հետո երկուսով միասին դաշնամուր նվագեցին, հետո էլ մթնեց, ու ես գնացի։ Դա գարնան սկիզբն էր։ Այնուհետև ամբողջ ամառն անցկացրի Սոֆինոյում՝ առանց դուրս գալու. ժամանակ էլ չունեի քաղաքի մասին մտածելու, սակայն խարտյաշ, բարեկազմ կնոջ հիշատակը միշտ էլ մնաց իմ մեջ. ես չէի մտածում նրա մասին, բայց կարծես նրա թեթև ստվերը ընկել էր իմ հոգու վրա։

Ուշ աշնանը քաղաքում բարեգործական նպատակով մի ներկայացում էր տրվում։ Մտնում եմ ես նահանգապետի օթ-

յակը (ընդմիջումին ինձ հրավիրել էին այնտեղ) ու տեսնում նահանգապետի կնոջ կողքին՝ Աննա Ալեքսեևնան, և դարձյալ գեղեցկության ու սիրելի, փաղաքշող աչքերի նույն անդիմադրելի, բաբախուն տպավորությունը, դարձյալ հարազատության նույն զգացումը։

Մենք նստած էինք կողք-կողքի, հետո գնացինք ճեմասրահ։

— Նիհարել եք,— ասաց նա.— հիվա՞նդ էիք։

— Այո։ Ուսս մրսել է, և անձրևոտ եղանակին վատ եմ քնում։

— Թմրած տեսք ունեք։ Այն ժամանակ, դարնանը, երբ ճաշի եկաք, ավելի երիտասարդ, ավելի առույգ էիք։ Այն ժամանակ ոգևորված էիք ու շատ էիք խոսում, շատ հետաքրքիր էիք և, խոստովանում եմ, մի քիչ հափշտակվեցի ձեզնով։ Չգիտեմ ինչու ամռան ընթացքում հաճախ էիք միտքս գալիս, և այսօր, երբ պատրաստվում էի թատրոն գալ, ինձ թվում էր, թե ձեզ կտեսնեմ։

Եվ ծիծաղեց։

— Բայց այսօր թմրած տեսք ունեք,— կրկնեց նա։— Դա ձեզ ծերացած է ցույց տալիս։

Հաջորդ օրը ես նախաճաշում էի Լուգանովիչների մոտ. նախաճաշից հետո նրանք մեկնեցին իրենց ամառանոցը՝ ձմռան համար կարգադրություններ անելու, ես էլ մեկնեցի նրանց հետ։ Նրանց հետ էլ վերադարձա քաղաք և կեսգիշերին թեյում էի Լուգանովիչների մոտ՝ ընտանեկան խաղաղ հարկում, ուր վառվում էր բուխարին, և դեռատի մայրը շարունակ գնում էր նայելու՝ արդյոք քնա՞ծ է աղջիկը։ Եվ դրանից հետո ամեն անգամ քաղաք գնալիս անպայման այցելում էի Լուգանովիչներին։ Վարժվել էին ինձ, ես էլ էի վարժվել նրանց։ Սովորաբար ներս էի մտնում առանց ազդարարելու, որպես տան մարդ։

— Այդ ո՞վ է,— լսվում էր խորքի սենյակներից երկարաձիգ մի ձայն, որն ինձ խիստ գեղեցիկ էր թվում։

— Պավել Կոնստանտինովիչն է,— պատասխանում էր սպասուհին կամ դայակը։

Աննա Ալեքսեևնան գալիս էր ինձ դիմավորելու մտահոգ դեմքով և ամեն անգամ հարցնում էր.

— Ինչո՞ւ այսքան ժամանակ չէիք երևում։ Չլինի՞ որևէ բան էր պատահել։

Նրա հայացքը, գեղեցիկ, աղնվական ձևոքը, որ պարզում էր ինձ, նրա տնային հագուստը, սանրվածքը, ձայնը, քայլվածքը ամեն անգամ իմ մեջ առաջացնում էին նույն տպավորությունը, թե կյանքումս մի նոր, արտակարգ ու կարևոր բան է պատահել։ Խոսում էինք երկար ու երկար էլ լռում՝ յուրաքանչյուրս մեր մտքերով տարված կամ թե նա դաշնամուր էր նվագում ինձ համար։ Իսկ երբ ոչ ոք չէր լինում տանը՝ ապա մնում էի ու սպասում, զրուցում էի դայակի, խաղում երեխայի հետ, կամ թե առանձնասենյակում պառկում էի տաճկական գահավորակի վրա ու լրագիր կարդում, իսկ երբ Աննա Ալեքսեևնան վերադառնում էր, դիմավորում էի նրան նախասենյակում, վերցնում էի նրանից բոլոր գնումների կապոցները և, չգիտեմ ինչու՝ ամեն անգամ այդ կապոցները տանում էի մեծ սիրով, հանդիսավորությամբ, տղայի պես։

Այսպիսի մի առած կա՝ կինը բան-գործ չուներ, վեր կացավ խոճկոր գնեց։ Լուգանովիչները բան-գործ չունեին, ուստիև բարեկամացան ինձ հետ։ Եթե ես երկար ժամանակ քաղաք չէի գնում, նշանակում է հիվանդ էի կամ որևէ բան պատահել էր ինձ, և երկուսն էլ խիստ անհանգստանում էին։ Նրանք անհանգստանում էին, իսկ ես՝ կրթված մարդս, լեզուներ իմացողս, փոխանակ գիտությամբ կամ գրական աշխատանքով զբաղվելու՝ ապրում էի գյուղում, պտույտ գալիս անիվի պես, բայց միշտ էլ անփող էի։ Նրանց թվում էր, որ ես տառապում եմ, ու եթե խոսում եմ, ծիծաղում, ուտում, ապա սուսկ տառապանքներս թաքցնելու համար, և նույնիսկ ուրախ բոպեներին, երբ տրամադրությունս լավ էր լինում, ինձ վրա զգում էի նրանց խուլարկու հայացքները, որ առանձնապես հուզիչ էին, երբ իրոք վիճակս ծանր էր լինում, երբ որևէ պարտատեր նեղում էր ինձ, կամ փողս չէր հերիքում ստիպողական որևէ վճարի համար, երկուսով, մարդ ու կին փսփսում էին պատուհանի մոտ, հետո ամուսինը մոտենում էր ինձ ու լրջադեմ ասում.

— Եթե, Պա՛վել Կոնստանտինովիչ, դրամի կարիք ունեք հիմա, ապա ես ու կինս խնդրում ենք չքաշվեք ու մեզնից վերցնեք։

Եվ հուզմունքից նրա ականջները կարմրում էին։ Պատահում էր նաև, որ նույնպես պատուհանի մոտ փսփսալուց հետո նա կարմրած ականջներով մոտենում էր ինձ ու ասում.

— Ես ու կինս շատ ենք խնդրում, որ մեզնից ընդունեք այս նվերը։

Ու տալիս էր մանժետի կոճակներ, ծխատուփ կամ լամպ, ես էլ դրա փոխարեն գյուղից մորթված թռչուն, կարագ ու ծաղիկ էի ուղարկում նրանց։ Ի դեպ նկատեմ, որ երկուսն էլ ունևոր մարդիկ էին։ Սկզբնական շրջանում ես հաճախ էի փոխառնում ու առանձնապես բծախնդիր չէի, վերցնում էի ումից որ հնարավոր էր, բայց ո՛չ մի ուժ չէր ստիպի ինձ, որ Լուգանովիչներից վերցնեմ։ Ավելորդ է խոսել այդ մասին։

Ես դժբախտ էի։ Ե՛վ տանը, և՛ դաշտում, և՛ մարագում Աննա Ալեքսեևնայի մասին էի մտածում, ճգնում էի հասկանալ դեռատի, գեղեցիկ, խելացի կնոջ գաղտնիքը, մի կին, որ ամուսնանում է անհետաքրքիր, համարյա թե ծեր մարդու հետ (Լուգանովիչը քառասունից ավելի էր), զավակներ ունի նրանից, ճգնում էի հասկանալ գաղտնիքը այդ անհետաքրքիր, բարեհոգի, պարզամիտ մարդու, որ այնքան տաղտկալի ողջախոհությամբ դատողություններ է անում, պարահանդեսներում ու երեկույթներում լինում է պատկառելի մարդկանց հետ, թմրած է, անպետք, արտահայտությունը հեղ ու անկարեկից, կարծես թե բերել են նրան այդտեղ ծախելու, մի մարդ, որ հավատում է երջանիկ լինելու, այդ կնոջից զավակներ ունենալու իր իրավունքին։ Եվ շարունակ ճգնում էի հասկանալ, թե ինչո՞ւ Աննա Ալեքսեևնան հենց սրան է պատահել և ոչ թե ինձ, ինչի՞ համար է պետք եղել, որ մեր կյանքում այսպիսի սարսափելի սխալ կատարվի։

Իսկ երբ քաղաք էի գնում, ամեն անգամ նրա աչքերից նկատում էի, որ նա սպասում էր ինձ. ինքն էլ էր խոստովանում, թե դեռ առավոտից մի առանձնակի զգացում ուներ, կռահում էր, որ կգամ։ Երկար խոսում էինք, լռում, սակայն չէինք խոստովանում մեր սերը ու ամոթխածաբար, խանդոտ կերպով թաքցնում էինք։ Վախենում էինք այն ամենից, որ կարող էր բացահայտել մեր գաղտնիքը հենց մեզ։ Ես սիրում էի քնքշորեն, խոր, բայց դատողություն էի անում, ինքս ինձ հարցնում, թե ինչի կարող է հանգել մեր սերը, եթե ուժ չունենանք նրա դեմ պայքարելու։ Ինձ անհավատալի էր թվում, որ իմ այդ խաղաղ, թախծոտ սերը հանկարծ կոպտաբար կխորտակի նրա ամուսնու, երեխաների, այդ ամբողջ տան կյանքի երջանիկ ընթացքը, մի տուն, ուր այնպես սիրում էին

ինձ ու այնպես հավատում։ Ազնի՞վ բան է դա։ Նա կգար իմ հետևից, բայց ո՞ւր, ո՞ւր կարող էի ես տանել նրան։ Այլ բան է, եթե ես գեղեցիկ, հետաքրքրական կյանք ունենայի, օրինակ՝ պայքարեի հայրենիքի աղատագրության համար կամ լինեի նշանավոր գիտնական, արտիստ, նկարիչ, մինչդեռ մի սովորական, առօրյա վիճակից հարկ կլիներ տանել նրան մի ուրիշ այդպիսի, կամ է՛լ ավելի առօրյա վիճակ։ Եվ որքա՞ն երկար կշարունակվեր մեր երջանկությունը, ի՞նչ կպատահեր նրան իմ հիվանդության, մահվան դեպքում կամ պարզապես եթե այլևս չսիրեինք միմյանց։

Նա էլ հավանաբար նույն ձևով էր դատում. մտածում էր ամուսնու, երեխաների, իր մոր մասին, որը նրա ամուսնուն սիրում էր ինչպես որդու։ Եթե նա անձնատուր լիներ իր զգացմունքին, հարկ կլիներ ստել կամ ճշմարտությունն ասել, իսկ նրա վիճակում երկուսն էլ հավասարաչափ սարսափելի էին ու անհարմար։ Եվ նրան էլ տանջում էր այն հարցը՝ իր սերը երջանկություն կբերի՞ ինձ, չի՞ բարդացնի դա իմ կյանքը, որ առանց այդ էլ ծանր էր, լի ամենայն դժբախտություններով։ Նրան թվում էր, թե ինքը բավականաչափ երիտասարդ չէ ինձ համար, բավականաչափ աշխատասեր ու եռանդուն չէ նոր կյանք սկսելու համար, և հաճախ էր ամուսնու հետ խոսում, թե ես պետք է ամուսնանամ խելացի, արժանավոր աղջկա հետ, որը լավ տնտեսուհի լինի, լավ օգնական, և իսկույն ավելացնում էր, թե ամբողջ քաղաքում հազիվ թե այդպիսի աղջիկ գտնվի։

Մինչ այս, մինչ այն, տարիներն անցնում էին։ Աննա Ալեքսեևնան արդեն երկու երեխա ուներ։ Երբ ես գնում էի Լուգանովիչների մոտ, սպասուհին բարեհամբույր ժպտում էր, երեխաները ճչում էին, որ եկավ քեռի Պավել Կոնստանտինովիչը, ու կախվում էին իմ վզից. ամենքն էլ ուրախանում էին։ Չէին հասկանում, թե ի՞նչ էր տեղի ունենում իմ հոգու մեջ, և կարծում էին, թե ես էլ եմ ուրախանում։ Բոլորն էլ իմ մեջ ազնիվ էակ էին տեսնում։ Ե՛վ հասակավորները, և՛ երեխաները զգում էին, որ սենյակում մի ազնիվ էակ է մտնում գալիս, և իմ հանդեպ ունեցած նրանց վերաբերմունքի մեջ մի առանձնակի հրապույր էր մտցնում դա, ասես իմ ներկայությամբ նրանց կյանքն է՛լ ավելի մաքուր ու գեղեցիկ էր լինում։ Ես ու Աննա

Ալեքսեևնան միասին թատրոն էինք գնում՝ ամեն անգամ ոտքով. նստում էինք բազկաթոռների շարքում՝ կողք-կողքի. մեր ուսերն իրար էին դիպչում, ես հեռադիտակը լռիկ վերցնում էի նրա ձեռքից ու այդ միջոցին զգում, որ նա հարազատ է ինձ, ի՞մն է նա, որ չենք կարող առանց իրար ապրել. սակայն մի տարօրինակ թյուրիմացությամբ թատրոնից դուրս գալով՝ ամեն անգամ հրաժեշտ էինք տալիս իրար ու օտարի պես բաժանվում։ Քաղաքում մեր մասին ասված գիտե, թե արդեն ինչե՞ր էին խոսում. սակայն այդ ամբողջ ասածների մեջ ճշմարտության մի բառ անգամ չկար։

Վերջին տարիներին Աննա Ալեքսեևնան սկսեց հաճախակի մեկնել քաղաքից մերթ մոր, մերթ քրոջ մոտ. արդեն լինում էր, որ վատ տրամադրություն էր ունենում, երևան էր գալիս կյանքից չբավարարվածի, կյանքը փուչ անցրածի գիտակցություն, երբ չէր ուզում տեսնել ո՞չ ամուսնուն, ոչ էլ երեխաներին։ Արդեն բուժվում էր ներվերի քայքայումից։

Մենք լռում էինք, շարունակ լռում, իսկ կողմնակի մարդկանց մոտ մի տարօրինակ ջղագրգռություն էր զգում նա իմ դեմ. ինչի մասին էլ խոսեի, չէր համաձայնում ինձ հետ, իսկ երբ վիճում էի, իմ հակառակորդի կողմն էր անցնում։ Երբ որևէ բան էր ձեռքիցս ընկնում, նա սառնորեն ասում էր.

— Շնորհավորում եմ։

Իսկ եթե նրա հետ թատրոն գնալիս մոռանում էի հեռադիտակը վերցնել, ասում էր.

— Ես այդպես էլ գիտեի, որ կմոռանաք։

Բարեբախտաբար թե դժբախտաբար, մեր կյանքում չի պատահում այնպիսի բան, որ վաղ թե ուշ չվերջանա։ Հասավ և մեր բաժանման ժամը. Լուգանովիչին նախադահ նշանակեցին արևմտյան նահանգներից մեկում։ Նա պետք է ծախեր կահկարասին, ձիերը, ամառանոցը։ Երբ գնացինք ամառանոցը, վերադարձին ետ նայեցինք, որպեսզի մի անգամ էլ տեսնենք այգին, կանաչ կտուրով տնակը, ապա ամենքս էլ տխուր էինք, և ես զգում էի, որ հասել է ոչ միայն ամառանոցին հրաժեշտ տալու ժամը։ Որոշվեց, որ օգոստոսի վերջին Աննա Ալեքսեևնային ճանապարհ կդնենք Ղրիմ, ուր ուղարկում էին նրան բժիշկները, իսկ քիչ հետո կմեկնի Լուգանովիչը երեխաների հետ իր արևմտյան նահանգը։

Մեծ խմբով ճանապարհ դրեցինք Աննա Ալեքսեևնային։

Երբ նա արդեն հրաժեշտ էր տվել ամուսնուն ու երեխաներին, և մի վայրկյան էր մնացել գնացքի երրորդ զանգին, ես վազեցի նրա կուպեն, զամբյուղներից մեկը բռնած, որը նա քիչ էր մնացել մոռանար. ես պետք է նաև հրաժեշտ տայի նրան։ Երբ այդտեղ՝ կուպեում մեր հայացքներն իրար հանդիպեցին, հոգեկան ուժերը լքեցին երկուսիս էլ, նա դեմքը սեղմեց իմ կրծքին, ու արցունքները հոսեցին աչքերից։ Համբուրելով նրա դեմքը, ուսերը, ձեռքերը, որ թրջվել էին արցունքից,— օ՜, որքա՜ն դժբարիտ էինք մենք երկուսս էլ,— ես խոստովանեցի նրան իմ սերը և սրտի այրող կսկիծով հասկացա, թե որքա՜ն ավելորդ, ճղճիմ ու խաբուսիկ է եղել այն ամենը, ինչ մեղ խանգարում էր սիրել։ Ես հասկացա, որ երբ սիրում ես, ապա այդ սիրո մասին դատողություններ անելիս պետք է ելնել վսեմից, ավելի կարևորից, քան երջանկությունն ու դժբախտությունն է, քան մեղքը կամ տառքինությունը իրենց ընթացիկ իմաստով, կամ թե բնավ պետք չէ դատողություններ անել։

Ես համբուրեցի վերջին անգամ, սեղմեցի ձեռքը, և մենք բաժանվեցինք... ընդմիշտ։ Գնացքն արդեն գնում էր։ Ես նստեցի կից կուպեում, որը պարապ էր, և մինչև հաջորդ կայարանը նստած այդտեղ՝ լալիս էի։ Հետո գնացի տուն՝ Սոֆիին, ոտքով...

Ալյոխինը դեռ պատմում էր, երբ անձրևը դադարեց, ծագեց արևը։ Բուրկինն ու Իվան Իվանիչը դուրս եկան պատշգամբ, որտեղից սքանչելի տեսարան էր բացվում դեպի այգին ու գետը, որը արևից արդեն փայլում էր հայելու պես։ Նրանք հիանում էին ու միաժամանակ ափսոսում, որ բարի, խելոք աչքերով այդ մարդը, որ այնքան անկեղծությամբ ամեն ինչ պատմեց, իրոք այդտեղ, այդ հսկայական կալվածում պտտվում էր պարապ անիվի պես, ու չէր զբաղվում գիտությամբ կամ մի որևէ այլ բանով, որը ավելի հաճելի կդարձներ նրա կյանքը։ Եվ նրանք մտածում էին, թե ի՞նչ վշտաբեկ պիտի լիներ դեռատի կնոջ դեմքը, երբ Ալյոխինը հրաժեշտ էր տալիս նրան կուպեում և համբուրում նրա դեմքն ու ուսերը։ Իրենք երկուսն էլ հանդիպել էին տիկնոջը քաղաքում, իսկ Բուրկինը նույնիսկ ծանոթ էր նրան ու գտնում էր, որ գեղեցիկ է։

1898

ԻՈՆԻՉ

I

Երբ նահանգական Ս. քաղաքում եկվորները գանգատվում էին ձանձրույթից և կյանքի միակերպությունից, տեղացիները, կարծես արդարանալով, ասում էին, որ, ընդհակառակն, Ս-ում շատ լավ է, թե Ս-ում կա գրադարան, թատրոն, ակումբ, լինում են պարահանդեսներ, որ, վերջապես, կան խելացի, հետաքրքիր, հաճելի ընտանիքներ, որոնց հետ կարելի է ծանոթություն հաստատել, և նշում էին Տուրկինների ընտանիքը, որպես ամենակիրթն ու տաղանդավորը։

Այդ ընտանիքը ապրում էր գլխավոր փողոցում, նահանգապետի տան մոտ, իր սեփական տանը։ Ինքը՝ Տուրկինը, Իվան Պետրովիչը, գիրուկ, գեղեցիկ, թուխ տղամարդ էր այտամորուսներով, բարեգործական նպատակով կազմակերպում էր սիրողական ներկայացումներ, ինքն էլ խաղում էր ծեր գեներալների դերերը, ըստ որում, հաղում էր շատ ծիծաղաշարժ։ Նա գիտեր շատ անեկդոտներ, շարադներ, առածներ, սիրում էր կատակել ու սրախոսել, նրա դեմքը շարունակ մի այնպիսի արտահայտություն ուներ, որ չէր կարելի հասկանալ՝ կատակո՞ւմ է արդյոք, թե խոսում է լրջորեն։ Նրա կինը՝ Վերա Իոսիֆովնան, բարալիկ, սիրունատես մի կին pince-nez-ով, գրում էր վիպակներ ու վեպեր և սիրով բարձրաձայն կարդում էր իր հյուրերին։ Դուստրը՝ Եկատերինա Իվանովնան, ջահել աղջիկ էր, նվագում էր դաշնամուր։ Մի խոսքով, ընտանիքի յուրաքանչյուր անդամն ուներ իր որևէ շնորհք։ Տուրկինները հյուրերին ընդունում էին սրտաբաց և ուրախ, պարզ սրտով ցույց էին տալիս իրենց տաղանդը։ Նրանց քարաշեն մեծ տունը ընդարձակ էր և ամռանը հով, պատուհանների կեսը նայում էր դեպի հինավուրց և ստվերախիտ պարտեզը, ուր գարնանը երգում էին սոխակները։ Երբ տանը հյուրեր էին լինում, խոհանոցում դանակները չիկչիկում էին, բակում տարածվում էր տապակած սոխի հոտը, և դա ամեն անգամ ազդարարում էր առատ ու համեղ ընթրիք։

Բժիշկ Ստարցևին էլ, Դմիտրի Իոնիչին, երբ նա հենց նոր էր նշանակվել գավառական բժիշկ և բնակություն հաստատել Դյալիժում, Ս-ից մի ինը վերստ հեռու, նույնպես ասում էին,

թե նա էլ, որպես ինտելիգենտ մարդ, պետք է ծանոթանա Տուրկիններին։ Մի անգամ ձմռանը փողոցում նրան ներկայացրին Իվան Պետրովիչին. խոսեցին եղանակի, թատրոնի, խոլերայի մասին, որին հետևեց տուն հրավիրելը։ Գարնանը, մի տոն օր, դա համբարձման տոնին էր, հիվանդների ընդունելությունից հետո Ստարցևը ճանապարհ ընկավ քաղաք, որ մի փոքր թարմանա և միաժամանակ իր համար ինչ-որ գնումներ անի։ Նա գնում էր ոտքով, առանց շտապելու (սեփական կառք դեռ չուներ) և շարունակ երգում էր.

Երբ կենաց բաժակից դեռ չէի խմել արցունքներ...

Քաղաքում նա ճաշեց, զբոսնեց այգում, հետո մեկ էլ հիշեց Իվան Պետրովիչի հրավերը և վճռեց անցնել Տուրկինների մոտ,տեսնելու, թե այդ ինչ մարդիկ են։

— Ողջույնե՞րս, հրամեցեք, — ասաց Իվան Պետրովիչը, դիմավորելով նրան արտասանդուղքում։ — Անչա՛փ, անչա՛փ ուրախ եմ այսպիսի հաճելի հյուր տեսնելուս համար։ Գնանք, ներկայացնեմ ձեզ իմ ուղղափառ տիրուհուն։ Վե՛րոչկա, ես նրան ասում եմ, — շարունակեց նա, բժշկին ներկայացնելով կնոջը,— ես ասում եմ, որ նա հռոմեական ոչ մի իրավունք չունի նստելու իր մոտ հիվանդանոցում, նա պետք է իր ազատ ժամանակը տրամադրի հասարակությանը։ Ճի՞շտ չէ արդյոք, հոգյակս։

— Նստեցեք այստեղ,— ասաց Վերա Իոսիֆովնան, հյուրին նստեցնելով իր կողքը։— Դուք կարող եք սիրաբանել ինձ հետ։ Ամուսինս խանդոտ է, նա Օթելլո է, բայց կաշխատենք մեզ այնպես պահել, որ ոչինչ չնկատի։

— Է՛խ, թռչնակ, երես առած...— քնքշորեն քրթմնջաց Իվան Պետրովիչը և համբուրեց նրա ճակատը։— Դուք շատ լավ ժամանակին բարեհաճեցիք,— նա նորից դիմեց հյուրին,— իմ ուղղափառ տիրուհին մի հաստափոր վեպ է գրել, այսօր կարդալու է բարձրաձայն։

— Ժանչիկ, — ամուսնուն ասաց Վերա Իոսիֆովնան, — dites que l'on nous donne du thé[1]։

Ստարցևին ներկայացվեց Եկատերինա Իվանովնան, տաս-

[1] Ասացեք, որ մեզ թեյ տան (ֆրանս.)։

նութամյա մի աղջիկ, որ անչափ նման էր մորը, նույնպես բարալիկ, սիրունատես։ Նրա դեմքի արտահայտությունը դեռ մանկական էր, իրանը բարակ, նուրբ, իսկ կուսական, արգեն զարգացած կուրծքը, գեղեցիկ ու առողջ, թվում էր գարուն, կատարյալ գարուն։ Հետո թեյ խմեցին մուրաբայով, մեղրով, կոնֆետներով և շատ համեղ թխվածքով, որը հալվում էր բերանի մեջ։ Երեկոն իջնելու հետ կամաց-կամաց հավաքվեցին հյուրերը և նրանցից յուրաքանչյուրին Իվան Պետրովիչը ուղղում էր իր ժպտացող աչքերն ու ասում.

— Ողջույնն ե՞ս, հրամեցեք։

Հետո բոլորն անցան հյուրասենյակ, նստեցին շատ լուրջ դեմքով, և Վերա Իոսիֆովնան կարդաց իր վեպը։ Նա սկսեց այսպես. «Սառնամանիքը սաստկանում էր...»։ Պատուհանները լայն բաց էին, լսվում էր, թե ինչպես խոհանոցում չիկչիկում էին դանակները, և տապակած սոխի հոտ էր գալիս... Փափուկ, խոր բազկաթոռներում այնքա՜ն հանգիստ էր, այնպես սիրալիր փայլփլում էին լույսերը հյուրասենյակի մթնշաղում, և այժմ, գարնան այս երեկոյին, երբ փողոցից ներս էին հասնում ձայներ ու ծիծաղ, և բակից փչում էր յասամանի բուրմունքը, դժվար էր պատկերացնել, թե ինչպես է սառնամանիքը սաստկանում և ինչպես է մայր մտնող արևը իր սառը շողերով լուսավորում ձյունոտ դաշտավայրը և ճանապարհով մենակ քայլող ճամփորդին։ Վերա Իոսիֆովնան կարդում էր, թե ինչպես մի դեռահաս, գեղեցիկ կոմսուհի իր մոտ՝ գյուղում կազմակերպում է դպրոց, հիվանդանոց, զրադարան և ինչպես սիրահարվում է թափառաշրջիկ նկարչին,— կարդում էր այն, ինչ երբեք չի լինում կյանքում, բայց և այնպես հաճելի էր, այնուամենայնիվ, լավ, խաղաղ մտքեր էին ծագում մարդու գլխում, տեղից վեր կենալու ցանկություն չկար։

— Անխելամիտ չէ...— կամաց արտասանեց Իվան Պետրովիչը։

Իսկ հյուրերից մեկը, ականջ դնելով և մտքերով ինչ-որ հեռու, շատ հեռո՜ւ տարված, հազիվ լսելի ասաց.

— Այո... իսկապես...

Անցավ մի երկու ժամ։ Մոտիկ քաղաքային այգում երաժշտախումբը նվագում էր, երգում էր երգիչների խումբը։ Երբ Վերա Իոսիֆովնան փակեց իր տետրը, ապա մի հինգ բոպե լուռ

էին բոլորը և լսում էին «Լուչինուշկա» երգը, որ երգում էր խումբը, և այդ երգը հաղորդում էր այն, ինչ չկար վեպում և ինչ լինում է կյանքում։

— Դուք տպագրո՞ւմ եք ձեր գրվածքները ամսագրերում,— հարցրեց Ատարցևը Վերա Իոսիֆովնային։

— Ո՛չ,— պատասխանեց նա,— երբեք չեմ տպագրում։ Գրում և պահում եմ ինձ մոտ պահարանում։ Ինչի՞ համար տպագրեմ,— բացատրեց նա,— չէ՞ որ մենք միջոցներ ունենք։

Եվ բոլորը, չգիտես ինչու, խոր շունչ քաշեցին։

— Իսկ հիմա, Կո՛տիկ, դու մի որևէ բան նվագիր,— ասաց Իվան Պետրովիչը աղջկան։

Դաշնամուրի կափարիչը բարձրացրին։ Բաց արին նոտաները, որ պատրաստ դրված էին։ Եկատերինա Իվանովնան նստեց և զույգ ձեռքով դարկեց ստեղներին, հետո իսկույն ևթ նորից դարկեց ամբողջ ուժով և նորից ու նորից։ Նրա ուսերը և կուրծքը ցնցվում էին, նա համառորեն շարունակ դարկում էր միևնույն տեղին, և թվում էր, թե չի դադարի, մինչև որ չկոտրատի դաշնամուրի ստեղները։ Հյուրասենյակը լցվել էր որոտով. ամեն ինչ որոտում էր՝ և՛ հատակը, և՛ առաստաղը, և՝ կահկարասին... Եկատերինա Իվանովնան նվագում էր մի դժվարին ելևէջ, հետաքրքիր հատկապես իր դժվարությամբ, երկար և միալար, և Ատարցևը, ունկնդրելով, պատկերացնում էր, թե ինչպես բարձր սարից թափվում են քարերը, թափվում են ու շարունակ թափվում, և նա ցանկանում էր, որ քարերն ավելի շուտ դադարեն թափվելուց։ Եվ միևնույն ժամանակ Եկատերինա Իվանովնան, լարվելուց վարդագույն դարձած, ուժեղ, եռանդուն, ճակատին ընկած իր խոպոպիկով, անչափ դուր էր գալիս նրան։ Ջմեռվանից հետո, որ անց էր կացրել Դյալիժում, հիվանդների և գեղջուկների շրջանում, այժմ հյուրասենյակում նստել, նայել այդ դեռատի, նրբագեղ և, հավանական է, անբիծ էակին ու լսել այս աղմկոտ, ուրախալի, բայց և այնպես կուլտուրական հնչյունները, այնքա՜ն հաճելի էր, այնքա՜ն նոր...

— Է՛հ, Կո՛տիկ, այսօր դու այնպես նվագեցիր, ինչպես երբեք չէիր նվագել,— ասաց Իվան Պետրովիչը արցունքներն

աչքերին, երբ աղջիկն ավարտեց և վեր կացավ։— Մեռնես, Դենիս, ավելի լավ չես գրի[1]։

Բոլորը շրջապատեցին Եկատերինա Իվանովնային, շնորհավորեցին, զարմանքից ապշեցին, հավատացրին, որ վաղուց չէին լսել այդպիսի երաժշտություն, իսկ նա լսում էր լուռ, հազիվ ժպտալով, և նրա ամբողջ կեցվածքի մեջ մի հանդիսավորություն էր զգացվում։

— Հրաշալի՛ էր։ Սքանչելի՛։

— Հրաշալի՛ էր,— ասաց նաև Ստարցևը, ենթարկվելով ընդհանուր հրապուրանքին։— Դուք որտե՞ղ եք նվագել սովորել,— հարցրեց նա Եկատերինա Իվանովնային։— Կոնսերվատորիայո՞ւմ։

— Ո՛չ, կոնսերվատորիա ես նոր եմ միայն պատրաստվում ընդունվել, առայժմ սովորել եմ այստեղ, մադամ Զավլովսկայայի մոտ։

— Դուք ավարտել եք այստեղի՞ գիմնազիան։

— Օ՜, ո՛չ,— նրա փոխարեն պատասխանեց Վերա Իոսիֆովնան։— Մենք ուսուցիչներին հրավիրում էինք տուն. գիմնազիայում կամ ինստիտուտում, ինձ հետ համաձայն կլինեք, կարող էին վատ ազդեցություններ լինել. քանի դեռ աղջիկը հասունանում է, նա պետք է գտնվի միմիայն մոր ազդեցության տակ։

— Բայց, այնուամենայնիվ, ես կոնսերվատորիա կգնամ,— ասաց Եկատերինա Իվանովնան։

— Ո՛չ, Կոտիկը սիրում է իր մամային։ Կոտիկը չի վշտացնի պապային ու մամային։

— Ո՛չ, կգնա՛մ։ Կգնա՛մ,— ասաց Եկատերինա Իվանովնան կատակելով, քմահաճորեն ու ոտքը զարկեց հատակին։

Իսկ Իվան Պետրովիչն ընթրիքի ժամանակ արդեն ցույց էր տալիս իր տաղանդը։ Նա, ծիծաղելով միմիայն աչքերով, պատմում էր անեկդոտներ, սրախոսում, առաջարկում էր ծիծաղաշարժ խնդիրներ և ինքն էլ լուծում ու շարունակ խոսում էր իր արտասովոր լեզվով, որ մշակված էր ստախոսությունների երկար կատարած վարժություններով և, ըստ երևույթին, վաղուց արդեն դա սովորություն էր դարձել նրա համար՝ մեծանմանապես, անխելամիտ չէ, խոնարհաձև շնորհակալ եմ ձեզանից։

Բայց դա դեռ բոլորը չէր։ Երբ հյուրերը կուշտ և գոհ խրոնվեցին միջանցքում, ընտրելով իրենց վերարկուները և ձեռնափայտերը, նրանց շուրջը իրար էր անցնում սպասավոր Պավլուշան կամ ինչպես տանը ասում էին նրան՝ Պավան, մոտ մի տասնչորս տարեկան, խուզած մազերով և լիքը այտերով տղա։

— Ապա մի ցուցադրիր, Պավա,— ասաց նրան Իվան Պետրովիչը։

Պավան որոշ կեցվածք ընդունեց, ձեռքը բարձրացրեց վեր և ողբերգական տոնով ասաց.

— Մեռի՛ր, թշվառական կին։

Եվ բոլորը հռհռացին։

«Հետաքրքիր էր»,— մտածեց Ստարցևը փողոց դուրս գալով։

Նա էլի անցավ ռեստորան ու գարեջուր խմեց, հետո ոտքով ճանապարհ ընկավ Դյալիժ, դեպի տուն։ Գնում էր ու ամբողջ ճանապարհին երգում.

Զայնդ ինձ համար և՛ սիրալիր է, և՛ նվաղուն...

Անցնելով ինը վերստ և հետո պառկելով քնելու, նա անգամ թեթև հոգնածություն չէր զգում, այլ, ընդհակառակն, նրան թվում էր, թե ինքը հաճույքով մի քսան վերստ էլ ճանապարհ կկտրի։

«Անխելամիտ չէ...» — հիշեց նա քնելիս ու ծիծաղեց։

II

Ստարցևը շարունակ պատրաստվում էր Տուրկինների մոտ գնալ, բայց հիվանդանոցում շատ աշխատանք կար, և նա ոչ մի կերպ չէր կարողանում ազատ ժամ ընտրել։ Այս կերպ, աշխատանքի և մենակության մեջ, անցավ մի տարուց ավելի. բայց ահա քաղաքից նրան մի նամակ բերեցին բաց կապույտ ծրարով...

Վերա Իոսիֆովնան վաղուց արդեն տառապում էր միգրենով, բայց վերջերս, երբ Կոտիկը ամեն օր վախեցնում էր, թե կոնսերվատորիա կգնա, նոպաները սկսեցին ավելի հաճախակի

[1] Արտահայտություն, որ իբր թե ասել է Պոտյոմկինը Ֆոնվիզինին՝ «Տհասը» կատակերգությունը կարդալուց հետո։

կրկնվել։ Տուրկինների մոտ եղել էին քաղաքի բոլոր բժիշկները, հերթը, վերջապես, հասավ և գավառական բժշկին։ Վերա Իոսիֆովնան նրան սրտառուչ նամակ գրեց, որով խնդրում էր գալ և թեթևացնել իր տանջանքները։ Ստարցևը եկավ, և դրանից հետո սկսեց Տուրկինների մոտ լինել հաճախ, շա՜տ հաճախ... Ստարցևը իրոք մի փոքր օգնեց Վերա Իոսիֆովնային, և նա բոլոր հյուրերին արդեն ասում էր, որ դա արտակարգ, ապշեցուցիչ բժիշկ է։ Բայց Ստարցևը Տուրկինների մոտ արդեն գնում էր ոչ հանուն նրա միգրենի...

Մի տոնական օր էր։ Եկատերինա Իվանովնան ավարտեց դաշնամուրի իր երկար, տանջալից վարժությունը։ Հետո երկար նստեցին ճաշասենյակում ու թեյ խմեցին, Իվան Պետրովիչը ինչ-որ զվարճալի բան էր պատմում։ Բայց ահա զանգը տվին, հարկավոր էր գնալ միջանցք և դիմավորել ինչ-որ հյուրի. Ստարցևը օգտվեց այդ իրարանցման պահից և Եկատերինա Իվանովնային ասաց շշնջալով, խիստ հուզվելով.

— Ի սեր աստծո, աղաչում եմ ձեզ, ինձ մի՛ տանջեք, գնանք պարտեզ։

Եկատերինա Իվանովնան վեր քաշեց ուսերը, կարծես տարակուսելով և չհասկանալով, թե ինչ է ուզում իրենից, բայց վեր կացավ ու գնաց։

— Դուք երեքից չորս ժամ դաշնամուր եք նվագում,— խոսեց Ստարցևը, գնալով նրա հետևից,— հետո նստում եք մամայի մոտ, և ոչ մի հնարավորություն չկա ձեզ հետ խոսելու։ Դոնե մի քառորդ ժամ նվիրեցեք ինձ, աղաչում եմ ձեզ։

Մոտենում էր աշունը, հինավուրց պարտեզում լուռ էր, տրխուր, ծառուղիներում թափված էին մուգ տերևները։ Արդեն վաղ էր մթնում։

— Ես մի ամբողջ շաբաթ է ձեզ չեմ տեսել,— շարունակեց Ստարցևը,— եթե իմանաք ինչպիսի՜ տառապանք է այդ։ Նստեք։ Լսեցեք ինձ։

Երկուսն էլ սիրած տեղ ունեին պարտեզում. ծեր, լայն սաղարթով թխկու տակի նստարանը։ Եվ հիմա էլ նստեցին այդ նստարանի՛ վրա։

— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց Եկատերինա Իվանովնան չոր, գործարար տոնով։

— Ես մի ամբողջ շաբաթ է ձեզ չեմ տեսել, չեմ լսել ձեզ

այդքան երկար ժամանակ։ Ես բուն կերպով ցանկանում եմ լսել, ես ծարավ եմ ձեր ձայնին։ Խոսեցի՛ք։

Նա հիացմունք էր պատճառում Ստարցևին իր թարմությամբ, աչքերի և այտերի անմեղ արտահայտությամբ։ Նույնիսկ աղջկա զգեստի նստվածքի մեջ Ստարցևը տեսնում էր ինչ-որ մի արտակարգ սիրելի բան, իր պարզ ու անմեղ շնորհագեղությամբ հուզող։ Եվ միաժամանակ, չնայած այդ անմեղությանը, նա Ստարցևին թվում էր իր տարիքին անհամեմատ զարգացած ու անչափ խելացի։ Նրա հետ կարող էր խոսել դրականության, արվեստի և ինչի մասին էլ կամենար, նրան կարող էր զանգատվել կյանքից, մարդկանցից, թեպետ լուրջ խոսակցության ժամանակ, պատահում էր, աղջիկը հանկարծ անտեղի սկսում էր ծիծաղել կամ փախչում էր տուն։ Նա, ինչպես զրեթե Ս-ի բոլոր աղջիկները, կարդում էին շատ (ընդհանրապես Ս-ում կարդում էին շատ քիչ, և այստեղի գրադարանում այսպես էլ ասում էին՝ կարող ես թեկուզ փակել գրադարանը, եթե չլինեին աղջիկները և երիտասարդ հրեաները), դա անչափ դուր էր գալիս Ստարցևին, ամեն անգամ հուզմունքով հարցնում էր նրան, թե ինչ է կարդացել վերջին օրերը, և հափշտակված լսում էր, երբ պատմում էր Եկատերինա Իվանովնան։

— Դուք ի՞նչ եք կարդացել այս շաբաթվա ընթացքում, ինչ մենք չենք տեսնվել,— հարցրեց նա այժմ։— Ասացեք, խնդրում եմ ձեզ։

— Կարդացել եմ Պիսեմսկի։

— Իսկ ի՞նչ եք կարդացել հատկապես։

— «Հաղար ճորտը»,— պատասխանեց Կոտիկը։— Եվ ինչ ծիծաղելի էին անվանում Պիսեմսկուն՝ Ալեքսեյ Ֆեոֆիլակտիչ։

— Ո՞ւր եք գնում,— սարսափեց Ստարցևը, երբ նա հանկարծ վեր կացավ և գնաց դեպի տուն։— Ինձ անհրաժեշտ է խոսել ձեզ հետ, ես պետք է բացատրվեմ... Մնացեք ինձ հետ թեկուզ հինգ րոպե։ Աղաչում եմ ձեզ։

Եկատերինա Իվանովնան կանգ առավ, կարծես կամենալով ինչ-որ բան ասել, հետո ոչ ճարպկորեն նրա ձեռքի մեջ խրեց մի տոմսակ և վազեց տուն ու նորից նստեց դաշնամուրի մոտ։

«Այսօր, երեկոյան ժամը տասնմեկին,— կարդաց Ստարցևը,— եղեք գերեզմանոցում, Դեմետրիի հուշարձանի մոտ»։

«Դե, սա արդեն բոլորովին խելացի չէ,— մտածեց նա,—

ուշքի գալով։— Ի՞նչ կապ ունի այստեղ գերեզմանոցը։ Ինչի՞ համար»։

Ամեն ինչ պարզ էր. Կոտիկը գժություն էր անում։ Ո՞ւմ պիտում, իրոք, լրջորեն կարող է միտք ծագել ժամադրություն նշանակել գիշերը, քաղաքից հեռու, գերեզմանոցում, երբ դա հեշտությամբ կարելի է անել փողոցում, քաղաքային այգում։ Եվ արդյոք պատշա՞ճ է իրեն, գավառական բժշկին, խելացի, պատկառելի մի մարդու, մորմոքվել սիրուց, ստանալ տոմսակներ, քարշ գալ գերեզմանոցներում, այնպիսի հիմարություններ գործել, որոնց վրա այժմ ծիծաղում են նույնիսկ գիմնազիստները։ Ո՞ւր կհասցնի այս սիրային կապը։ Ի՞նչ կասեն ընկերները, երբ իմանան։ Այսպես էր մտածում Ստարցևը, թափառելով ակումբում սեղանների շուրջը, բայց տասն անց կես հանկարծ վեր կացավ ու կառքով գնաց գերեզմանոց։

Նա արդեն ուներ զույգ ձիով իր կառքը և Պանտելեյմոն անունով մի կառապան՝ թավշե բաճկոնով։ Լուսինը լույս էր սփռում։ Խաղաղ ու տաք գիշեր էր, տաքությունը, սակայն, աշնանային էր։ Արվարձանում, սպանդանոցի մոտ, ոռնում էին շները։ Ստարցևը կառքը թողեց քաղաքի ծայրամասում, նրբանցքներից մեկում, և ոտքով գնաց գերեզմանոց։ «Ամեն մարդ ունի իր տարօրինակությունները,— մտածում էր նա,— Կոտիկը նույնպես տարօրինակ է և, ո՞վ իմանա, կարող է պատահել, չի կատակում, կգա»,— նա անձնատուր եղավ այդ թույլ, դատարկ հույսին, և դա արբեցրեց նրան։

Մոտ կես վերստ նա անցավ դաշտով։ Գերեզմանոցը հեռվում նշմարվում էր ինչպես մի խավար շերտ, ինչպես անտառ կամ մի մեծ այգի։ Երևացին սպիտակ քարերով պարիսպը, դարբասը... Լուսնի լույսով դարպասի վրա կարելի էր կարդալ. «Գալոց է ժամն ի տեղիս...»։ Ստարցևը զոնակից ներս մտավ, և առաջին բանը, որ նկատեց՝ սպիտակ խաչերն էին և հուշարձանները լայն ծառուղու երկու կողմերում և նրանց ու կաղամախիների սև ստվերները։ Եվ ամենուրեք հեռվում երևում էին սպիտակ ու սև՝ լույս ու ստվերներ, և նիրհող ծառերը խոնարհել էին իրենց ճյուղերը լույսերի վրա։ Թվում էր, թե այստեղ ավելի լույս է, քան դաշտում. Թխկիների տերևները, որոնք նման էին թաթերի, որոշակի աչքի էին ընկնում ծառուղիների դեղին ավազի ու գերեզմանաքարերի վրա, և հուշարձաններին պարզ երևում էին տապանագրերը։ Սկզբում Ստարցևին ապշեցրեց այն, ինչ այժմ նա տեսնում էր առաջին անգամ կյանքում, և որը, հավանական է, այլևս երբեք չէր տեսնելու. դա այն աշխարհն է, որ նման չէ ոչ մի ուրիշ բանի, մի աշխարհ, ուր այնքա՜ն հրաշալի և հեզիկ է լուսնի լույսը, կարծես այստեղ է նրա օրրանը, ուր կյանք չկա, չկա՛ ու չկա՛, բայց յուրաքանչյուր խավար կաղամախու մեջ, յուրաքանչյուր գերեզմանում զգացվում են թաքնված գաղտնիքներ, որոնք խոստանում են խաղաղ, գեղեցիկ, հավերժական կյանք։ Գերեզմանաքարերից ու թաղված ծաղիկներից, տերևների աշնանային հոտի հետ հառնում է ներումն, տրտմություն ու անդորր։

Շուրջն անսահման լուռ էր. երկնքից խորը հեղությամբ նայում էին աստղերը, և Ստարցևի ոտնաձայնը հնչում էր այնքան կտրուկ, ոչ տեղին։ Եվ երբ եկեղեցում զարկեցին ժամացույցի զանգերը, նա իրեն պատկերացրեց մահացած, հավիտյան թաղված այստեղ, ապա նրան թվաց, թե ինչ-որ մեկը նայում է իրեն, և մի պահ մտածեց, որ անդորրը չէ, լռությունը չէ, այլ անէության խոր վիշտն է, վհատված հուսահատությունը...

Դեմետտիի հուշարձանը նման էր մատուռի՝ հրեշտակը վերևում. ինչ-որ մի ժամանակ Ս-ում, այդ քաղաքով անցնելիս, լինում է իտալական օպերայի մի խումբ, երգչուհիներից մեկը մահանում է, նրան թաղում են և կանգնեցնում այդ հուշարձանը։ Քաղաքում ոչ ոք արդեն չէր հիշում երգչուհուն, բայց հուշարձանի մուտքի վրա կանթեղն արտացոլում էր լուսնի լույսը և թվում էր, թե վառվում է։

Ոչ ոք չկար։ Եվ ո՞վ կգար այստեղ կեսգիշերին։ Բայց Ստարցևը սպասում էր, և լուսնի լույսը կարծես նրա մեջ ջերմացնում էր տենչը, սպասում էր տենչանքով և երևակայելով պատկերացնում էր համբույրներ, գրկախառնություն։ Նա հուշարձանի մոտ նստեց մի կես ժամի չափ, հետո անցավ կողքի ծառուղիներով, գլխարկը ձեռքին, սպասելով ու մտածելով, ինչքա՜ն են այստեղ, այս գերեզմաններում կանայք ու աղջիկներ թաղված, որոնք եղել են գեղեցիկ, հրապուրիչ, որոնք սիրել են, գիշերները տենչանքով այրվել, անձնատուր լինելով փաղաքշանքների։ Իսկապես, որքա՜ն վատ է կատակում մարդու հանդեպ մայր բնությունը, որքա՜ն դառն է գիտակցել այդ։ Ստարցևը մտածում էր այսպես, բայց միևնույն ժամանակ կա-

մենում էր գոռալ, թե ինքը ցանկանում, սպասում է սիրո, թեկուզ ինչ էլ լինի։ Նրա առջև սպիտակին էին տալիս արդեն ոչ թե մարմարի կտորներ, այլ չքնաղ մարմիններ, նա տեսնում էր կերպարանքներ, որոնք ամոթխածորեն թաքնվում էին ծառերի ստվերներում, զգում էր ջերմություն, և այդ տանջանքը դառնում էր ծանր ու դժվարին...

Կարծես վարագույրը իջավ, լուսինն անցավ ամպերի տակ, և հանկարծ շուրջն ամեն ինչ մթնեց։ Ստարցևը հազիվ գտավ դարբասը,— մութ էր արդեն, ինչպես լինում է աշնան գիշերներին,— հետո մի ժամ ու կես թափառեց, փնտրելով այն նրբանցքը, որտեղ թողել էր իր կառքը։

— Հոգնել եմ, հազիվ եմ կանգնում ոտքի,— ասաց նա Պանտելեյմոնին։

Եվ, հաճույքով նստելով կառք, մտածեց.

«Օ՜ֆ, չարժե գիրանալ»։

III

Հետևյալ օրը երեկոյան նա կառքով գնաց Տուրկինների մոտ առաջարկություն անելու։ Բայց ստացվեց, որ անհարմար է, քանի որ Եկատերինա Իվոնովնայի սենյակում վաբսավիրը հարդարում էր նրա մազերը։ Նա պատրաստվում էր ակումբ գնալ պարի երեկոյի։

Ծափվածք եղավ նորից երկար նստել ճաշասենյակում և թեյ խմել։ Իվան Պետրովիչը տեսնելով, որ հյուրը մտազբաղ և տխուր է, ժիլետի գրպանից հանեց գրություններ, կարդաց գերմանացի կառավարչի ծիծաղաշարժ նամակը, թե ինչպես կաչվածում փչացել են բոլոր դռների և փեղկերի՝ իրենց մեղքը խոստովանելուց հրաժարվելը, և թափվել է շենքի ամոթխածությունը[1]։

«Իսկ օժիտ, հավանորեն, բավականաչափ կտան»,— մտածում էր Ստարցևը, ցրված լսելով։

Այդ անքուն գիշերից հետո նա շշմած էր, կարծես ինչ-որ քաղցր ու քնաբեր բանով անչափ հարբեցրել էին նրան, սիրտը

[1] Բնագրում բառախաղ է. գերմանացի կառավարիչը, ցանկանալով հաստատել, որ կաչվածում փչացել են բոլոր փակերը և թափվել ծեփը, կատարել է ռուսերեն բառերի սխալ ընտրություն։

մշուշով էր պարուրված, բայց զգում էր ուրախություն, ջերմություն և միևնույն ժամանակ զգում ինչ-որ սառը, ծանր մտքի մի պատառիկ դատում էր.

«Կա՛նգ առ, քանի ուշ չէ։ Արդյոք նա քեզ հարմա՞ր է։ Երես առած է, կամակոր, քնում է մինչև ժամը երկուսը, իսկ դու տիրացուի որդի ես, գավառական բժիշկ...»։

«Դե՛, հետո ի՞նչ,— մտածում էր նա։— Թող լինի այդպես»։

«Դրան ավելացրած, եթե ամուսնանաս նրա հետ,— շարունակում էր մտքի պատառիկը,— ապա նրա ազգականները կստիպեն քեզ թողնել գավառական ծառայությունը և ապրել քաղաքում»։

«Դե՛, հետո ի՞նչ,— մտածում էր նա։— Թե որ քաղաք պիտի լինի, թող լինի քաղաք։ Օժիտ կտան, տուն ու տեղ կգնենք...»։

Վերջապես, ներս մտավ Եկատերինա Իվանովնան պարահանդեսի զգեստով, լանջաբաց ու հոլանի, սիրունիկ, մաքուր, և Ստարցևը չափազանց հիացավ և այնպես զմայլվեց, որ չկարողացավ ոչ մի խոսք արտասանել, միայն նայում էր նրան ու ծիծաղում։

Եկատերինա Իվանովնան սկսեց հրաժեշտ տալ, Ստարցևն էլ, արդեն հարկ չկար նրա մնալուն, վեր կացավ, ասելով, թե իր տուն գնալու ժամանակն է. սպասում են հիվանդները։

— Ի՞նչ կարող ենք ասել,— ասաց Իվան Պետրովիչը,— գնացեք, ի դեպ, Կոտիկին էլ կտանեք ակումբ։

Դրսում անձրև էր մաղում, խիստ մութ էր, միայն Պանտելեյմոնի խոպոտ հազից կարելի էր կռահել, թե կառքը որտեղ է կանգնած։ Բարձրացրին կառքի ծածկոցը։

— Գորգի վրա նստում եմ ես, դու էլ նստում ես՝ քանի ստում ես,— ասում էր Իվան Պետրովիչը, ազչկան կառք նստեցնելով,— նա էլ նստում է, ստո՛ւմ է, տե՛ս։ Քշի՛ր, քշի՛ր։ Խնդրեմ ցտեսություն։

Գնացին։

— Իսկ ես երեկ եղա գերեզմանոցում,— սկսեց Ստարցևը։— Դա որքա՜ն ոչ վեհանձն և անգութ էր ձեր կողմից...

— Դուք եղաք գերեզմանոցո՞ւմ։

— Այո՛, ես եղա այնտեղ և սպասեցի ձեզ գրեթե մինչև ժամը երկուսը։ Ես տանջվում էի...

— Տանջվեցեք ո՛րքան, եթե կատակը չեք հասկանում։

Եկատերինա Իվանովնան գոհ, որ այդպես խորամանկորեն կատակելով ծաղրել է սիրահարվածին և որ իրեն սիրում են այդքան զորեղ, սկսեց հոհոալ ու հանկարծ ճչաց վախից, որովհետև հենց այդ ժամանակ ձիերը միանգամից շրջվեցին ակումբի դարբասից ներս, և կառքը թեքվեց կողքի։ Ստարցևը գրկեց Եկատերինա Իվանովնայի իրանը. աղջիկը վախեցած հպվեց նրան։ Ստարցևը չկարողացավ զսպել իրեն և բուռն կերպով համբուրեց նրա շրթունքները, կզակը ու գրկեց ավելի ուժեղ։

— Բավակա՛ն է,— չոր կերպով ասաց Եկատերինա Իվանովնան։

Եվ մի ակնթարթ հետո նա արդեն չկար կառքում, իսկ ակումբի լուսավորված մուտքի մոտ կանգնած գորոդովոյը Պանտելեյմոնի վրա զզվելի ձայնով գոռաց.

— Ի՞նչ ես կանգնել, ագռա՛վ։ Հեռու՛ քշիր։

Ստարցևը գնաց տուն, բայց շուտով վերադարձավ։ Ուրիշի ֆրակ հագած և սպիտակ կոշտ փողկապ կապած, որը շարունակ ինչ-որ ցցվում էր և կամենում օձիքից դուրս սահել, նա կեսգիշերին ակումբի ընդունարանում նստած հափշտակված ասում էր Եկատերինա Իվանովնային.

— Օ՜, որքա՜ն դա քիչ գիտեն նրանք, ովքեր երբեք չեն սիրել։ Ինձ թվում է, դեռ ոչ ոք ճիշտ չի նկարագրել սերը, և հազիվ թե կարելի է նկարագրել այդ քնքուշ, երջանիկ, տանջող զգացմունքը, և ով սերը ճաշակել է թեկուզ մեկ անգամ, բառերով չի հաղորդի։ Ինչի՞ համար են առաջաբանը և նկարագրությունը։ Ի՞նչի համար է ավելորդ պերճախոսությունը։ Իմ սերը անսահման է... խնդրում եմ, աղաչում եմ ձեզ,— վերջապես արտասանեց Ստարցևը,— դարձեք իմ կինը։

— Դմիտրի Իոնի՛չ,— ասաց Եկատերինա Իվանովնան շատ լուրջ արտահայտությամբ, մի քիչ մտածելուց հետո։— Դմիտրի Իոնի՛չ, ձեզանից խիստ շնորհակալ եմ պատվի համար, ես ձեզ հարգում եմ, բայց...— նա վեր կացավ և շարունակեց կանգնած,—բայց, ներեցեք, ձեր կինը լինել չեմ կարող։ Խոսենք լրջորեն։ Դմիտրի Իոնի՛չ, հասկանում եք, կյանքում բոլորից շատ սիրում եմ արվեստը, սիրում եմ խելահեղորեն, պաշտում եմ երաժշտությունը, իմ ամբողջ կյանքը նվիրել եմ դրան։ Ես ուզում եմ լինել արտիստուհի,ես փառք եմ ուզում, հաջողություն,ազատություն, իսկ դուք ուզում եք, որ ես շարունակեմ ապրել այս քաղաքում, շարունակեմ այս դատարկ, անօգուտ

կյանքը, որը ինձ համար դարձել է անտանելի։ Դառնալ կին, օ՜, ո՛չ,ներեցե՛ք։ Մարդ պետք է ձգտի դեպի վեր, փայլուն նպատակի, իսկ ընտանեկան կյանքը ինձ կկաշկանդեր ընդմիշտ։ Դմիտրի Իոնի՛չ (նա մի փոքր ժպտաց, քանի որ արտասանելով «Դմիտրի Իոնիչ», հիշեց «Ալեքսեյ Ֆեոֆիլակտիչ»), Դմիտրի Իոնիչ, դուք բարի, ազնիվ, խելացի մարդ եք, դուք բոլորից լավն եք...— նրա աչքերին արցունքներ երևացին,— ես ամբողջ հոգով կարեկցում եմ ձեզ, բայց... բայց հասկացեք...

Եվ որպեսզի լաց չլինի, նա շուտ եկավ և դուրս գնաց ընդունարանից։

Ստարցևի սիրտը դադարեց անհանգիստ բաբախելուց։ Ակումբից դուրս գալով փողոց, նա, ամենից առաջ, վզից պոկեց կոշտ փողկապը և ամբողջ կրծքով հոգոց հանեց։ Նա մի փոքր ամոթ էր զգում, նրա ինքնասիրությունը վիրավորված էր, մերժում չէր սպասում, և անհավատալի էր, որ իր ամբողջ երազանքը, տանջանքը և հույսը իրեն այսպիսի հիմար վերջավորության հասցրին, ինչպես սիրողների ներկայացման մի փոքրիկ պիեսում։ Եվ ցավում էր իր զգացմունքի, իր այդ սիրո համար։ այնպես էր ցավում, որ թվում էր, հիմա վեր է կենալու և հեկեկալու է կամ ամբողջ ուժով հովանոցը հասցնելու է Պանտելեյմոնի լայն թիկունքին։

Մի երեք օր գործը թափվում էր նրա ձեռքից, չէր ուտում, չէր քնում, բայց երբ տեղեկություն հասավ նրան, որ Եկատերինա Իվանովնան մեկնել է Մոսկվա կոնսերվատորիա ընդունվելու, նա հանգստացավ և սկսեց ապրել առաջվա կյանքով։

Հետո, երբեմն հիշելով, թե ինչպես էր ինքը թափառում դեբեզմանոցում,կամ ինչպես էր կառքով անցնում ամբողջ քաղաքով և ֆրակ փնտրում, նա ծուլորեն ձգվում էր ու ասում.

— Այնուամենայնիվ, ինչպիսի՜ գլխացավանք էր։

IV

Անցավ չորս տարի։ Քաղաքում Ստարցևն արդեն բժշկական մեծ գործունեություն ուներ։ Ամեն առավոտ նա իր մոտ, Դյալիժում, շտապ ընդունում էր հիվանդներին, հետո մեկնում էր քաղաքի հիվանդներին նայելու, գնում էր, արդեն ոչ թե երկձի կառքով, այլ բոժոժներ կախված տրոյկայով, և տուն էր վերա-

գնում ուշ գիշերին։ Նա չաղացել էր, հաստացել և դժկամությամբ էր ոտքով քայլում, քանի որ տառապում էր շնչարգելությամբ։ Պանտելեյմոնը նույնպես չաղացել էր և ինչքան շատ էր աճում լայնքին, այնքան ավելի տխուր էր հառաչում ու գանգատվում իր դաղը վիճակից. կառքով երթևեկելը հալից գցել էր նրան։

Ստարցևը լինում էր զանազան տներում և պատահում էր շատ մարդկանց, բայց ոչ ոքի հետ չէր մտերմանում։ Քաղքենիներն իրենց զրույցներով, կյանքի հանդեպ ունեցած հայացքներով և նույնիսկ իրենց տեսքով զայրացնում էին նրան։ Փորձը քիչ-քիչ Ստարցևին սովորեցրել էր, որ քանի դեռ այդ քաղքենու հետ թուրթ ես խաղում կամ մի կտոր բան ես ուտում, ապա դա խաղաղ, բարեհոգի և նույնիսկ ոչ անմիտ մարդ է, բայց բավական է միայն նրա հետ խոսել որևէ ոչ ուտելու բանի, օրինակ, քաղաքականության կամ գիտության մասին, նա իսկույն ընկնում է փակուղու մեջ,կամ սկսում է բութ և չար մի այնպիսի փիլիսոփայություն, որ մնում է միայն ձեռքը թափ տալ ու հեռանալ։ Երբ Ստարցևը փորձում էր խոսել նույնիսկ որևէ լիբերալ քաղքենու հետ, օրինակ, այն մասին, թե մարդկությունը, փառք աստծո, առաջ է ընթանում և որ ժամանակի ընթացքում նա յոլա կգնա առանց անձնագրի և առանց մահապատժի, ապա այդ քաղքենին խեթ-խեթ և անվստահորեն նայում էր նրան ու հարցնում. «Նշանակում է, այդ ժամանակ ամեն ոք փողոցում կարո՞ղ է մորթել ում որ ցանկանա»։ Իսկ երբ Ստարցևը հասարակության մեջ, ընթրիքի կամ թեյի սեղանի շուրջ ասում էր, թե հարկավոր է աշխատել, որ առանց աշխատանքի չի կարելի ապրել, ապա յուրաքանչյուրը դա ընդունում էր որպես հանդիմանություն և սկսում էր զայրանալ ու պնդերեսությամբ վիճել։ Այդ բոլորով հանդերձ քաղքենիները ոչինչ չէին անում, վճռականորեն ոչի՛նչ, չէին հետաքրքրվում ոչնչով, և ոչ մի կերպ չէր կարելի մտածել, թե ինչի մասին խոսել նրանց հետ։ Եվ Ստարցևը խորշում էր զրույցներից, միայն ուտում էր ու վինտ էր խաղում, և երբ մի որևէ տանը ընտանեկան տոն էր լինում ու նրան հրավիրում էին մի բան անուշ անելու, ապա նստում էր և լուռ ուտում, նայելով ափսեին.ամեն բան, ինչ-որ այդ ժամանակ խոսում էին, անհետաքրքիր էր, ոչ իրավացի, անմիտ, նա ջղայնանում էր, հուզվում, սակայն լռում էր, և որովհետև շարունակ մռայլ կերպով լռում ու նայում էր ափ-

սեին, քաղաքում նրան հորջորջում էին «գոռոզ լեհ», թեպետ նա երբեք լեհ չէր եղել։

Նա խուսափում էր այնպիսի զվարճություններից, ինչպես թատրոնը կամ համերգները, բայց դրա փոխարեն ամեն երեկո մի երեք ժամ հաճույքով վինտ էր խաղում։ Նա ուներ նաև մի ուրիշ զվարճություն, որի մեջ խրվել էր քիչ-քիչ, աննկատելիորեն, դա այն էր, երբ երեկոները իր գրպանից հանում էր թղթադրամները, որոնք ձեռք էր բերում բժշկական գործունեությամբ, և դեղին ու կանաչ այդ թղթադրամները, որոնցից օծանելիքի, քացախի, խնկի և ծովակենդանիների ճարպի հոտ էր գալիս, պատահում էր, որ մի յոթանասուն ռուբլու չափ ճբխտված էին լինում բոլոր գրպանները։ Եվ երբ հավաքվում էր մի քանի հարյուր ռուբլի, նա տանում էր «Փոխադարձ վարկի ընկերություն» ու մուծում իր ընթացիկ հաշվին։

Եկատերինա Իվանովնայի մեկնելուց հետո ամբողջ չորս տարվա ընթացքում նա Տուրկինների մոտ եղավ միայն երկու անգամ, Վերա Իոսիֆովնայի հրավերով, որը դեռևս բուժվում էր միգրենից։ Ամեն ամառ Եկատերինա Իվանովնան որոշ ժամանակ հյուր էր գալիս ծնողների մոտ, բայց Ստարցևը ոչ մի անգամ չտեսավ նրան, ինչ-որ չէր պատահում։

Բայց ահա անցավ չորս տարի։ Եվ մի խաղաղ, տաք առավոտ նամակ բերեցին հիվանդանոց։ Դմիտրի Իոնիչին Վերա Իոսիֆովնան գրում էր, որ շատ է կարոտել, խնդրում է անպայման բարեհաճել իրենց մոտ ու թեթևացնել իր տանջանքները, ի դեպ, այսօր էլ իր ծննդյան օրն է։ Ներքևում ավելացրած էր. «Մամայի խնդրանքին միանում եմ և ես։ Կ.»։

Ստարցևը մի փոքր մտածեց և երեկոյան գնաց Տուրկինների մոտ։

— Ա՜, ողջույններս խնդրեմ,— դիմավորեց նրան Իվան Պետրովիչը, ժպտալով միայն աչքերով։— Բոնժուրներս։

Վերա Իոսիֆովնան արդեն խիստ ծերացած, սպիտակ մազերով, սեղմեց Ստարցևի ձեռքը, կոտրատվելով հառաչեց ու ասաց.

— Բժիշկ, դուք չեք ցանկանում սիրաբանել ինձ հետ, երբեք չեք լինում մեզ մոտ, ես արդեն պառավ եմ ձեզ համար։ Բայց ահա եկել է ջահելը, գուցե նա ավելի երջանիկ լինի։

Իսկ ինչպե՞ս էր Կոտիկը։ Նա նիհարել էր, դալկացել,

ավելի գեղեցկացել էր և դարձել ավելի վայելչակազմ. բայց դա արդեն Եկատերինա Իվանովնա էր և ոչ Կոտիկ. արդեն չկար նախկին թարմությունը, մանկական անմեղ արտահայտությունը։ Ե՛վ հայացքի, և՛ շարժումների մեջ կար մի ինչ-որ նոր բան՝ անհամարձակ ու հանցավոր, կարծես այստեղ, Տուրկինների մոտ, նա իրեն արդեն չէր զգում տանը։

— Ինչքա՞ն ժամանակ է չենք տեսնվել,— ասաց նա, ձեռք տալով Ստարցևին, և նկատելի էր, որ սիրտը բաբախում է տագնապով, ու աչքերը հառած, հետաքրքրությամբ նայելով նրա դեմքին, շարունակեց.— Ինչքա՞ն չաղացել եք։ Թխացել եք, հասունացել, բայց ընդհանրապես քիչ եք փոխվել։

Եվ հիմա էլ նա Ստարցևին դուր էր գալիս, անչափ դուր էր գալիս, բայց ինչ-որ բան պակաս էր նրա մեջ կամ որևէ բան ավելի էր, Ստարցևը ինքն էլ չէր կարող ասել, թե հատկապես ինչն էր այդ, ինչ-որ բան արդեն խանգարում էր նրան զգալ, ինչպես առաջ։ Ստարցևին դուր չէր գալիս նրա դալկությունը, դեմքի նոր արտահայտությունը, թույլ ժպիտը, ձայնը, իսկ մի փոքր անց արդեն դուր չէին գալիս նրա զգեստը, այն բազկաթոռը, որի վրա նստած էր նա, դուր չէր գալիս ինչ-որ բան անցյալում, երբ ինքը քիչ էր մնացել ամուսնանար նրա հետ։ Նա հիշեց իր սերը, երազանքներն ու հույսերը, որոնք չորս տարի առաջ հուզում էին իրեն,— և նա անհարմար զգաց։

Քաղցր կարկանդակով թեյ խմեցին։ Հետո Վերա Իոսիֆովնան բարձրաձայն կարդաց մի վեպ, կարդաց, ինչ երբեք կյանքում չի լինում, իսկ Ստարցևը լսում էր, նայում նրա սպիտակած, գեղեցիկ գլխին և սպասում էր, թե երբ է վերջացնելու։

«Ապաշնորհը նա չէ,— մտածում էր Ստարցևը,— ով չի կարողանում վիպակներ գրել, այլ նա է, որ դրանք գրում և չի կարողանում թաքցնել»։

— Անխելամիտ չէ,— ասաց Իվան Պետրովիչը։

Հետո Եկատերինա Իվանովնան աղմկելով երկար նվագեց դաշնամուր, իսկ երբ ավարտեց, բավական ժամանակ շնորհակալություն էին հայտնում ու հիանում նրանով։

«Բայց լավ էր, որ չամուսնացա սրա հետ»,— մտածեց Ստարցևը։

Եկատերինա Իվանովնան նայում էր նրան և, ըստ երևույթին սպասում, թե կառաջարկի իրեն պարտեզ գնալ, բայց նա լուռ էր։

— Դեհ, եկեք զրուցենք,— ասաց նա մոտենալով Ստարցևին։— Ինչպե՞ս եք։ Ի՞նչ կա։ Ինչպե՞ս եք ապրում այստեղ։ Ես այս ամբողջ ժամանակ մտածում էի ձեր մասին,— շարունակեց նա ներվայնորեն,— ես ուզում էի ձեզ նամակ ուղարկել, ուզում էի ինքս գալ ձեզ մոտ Դյալիժ և արդեն վճռել էի գալ, բայց հետո մտադրությունս փոխեցի, ասված գիտե, ինչպես եք հիմա վերաբերվում ինձ։ Ես այսօր այնպիսի՜ հուզմունքով էի սպասում ձեզ։ Ի սեր աստծո, գնանք պարտեզ։

Նրանք գնացին պարտեզ և նստեցին ծեր թխկենու տակ, նստարանի վրա, ինչպես չորս տարի առաջ։ Մութ էր։

— Ինչպե՞ս եք,— հարցրեց Եկատերինա Իվանովնան։

— Ոչինչ, ապրում ենք կամաց-կամաց,— պատասխանեց Ստարցևը։

Եվ էլ ոչինչ չկարողացավ մտածել։ Մի փոքր լռեցին։

— Ես հուզվում եմ,— ասաց Եկատերինա Իվանովնան և ձեռքերով ծածկեց դեմքը,— բայց դուք ուշադրություն մի՛ դարձրեք։ Ինձ համար այնքա՞ն լավ է տանը, այնպե՞ս ուրախ եմ բոլորին տեսնելու համար և չեմ կարողանում ընտելանալ։ Ինչքա՞ն հուշեր կան։ Ինձ թվում էր, թե մենք կխոսենք առանց լռելու, մինչև առավոտ։

Ստարցևը այժմ մոտիկից տեսնում էր նրա դեմքը, փայլուն աչքերը, և այստեղ, մթի մեջ, նա թվում էր ավելի երիտասարդ, քան սենյակում, և նույնիսկ թվում էր, թե վերադարձել է նրա նախկին մանկական արտահայտությունը։ Եվ իրոք, Եկատերինա Իվանովնան միամիտ հետաքրքրությամբ նայում էր նրան, կարծես ուզում էր ավելի մոտիկից լավ նայել և հասկանալ այն մարդուն, որը մի ժամանակ իրեն սիրում էր այնպես վառ սիրով, այնպես քնքշությամբ և այնպես դժբախտ կերպով. նրա աչքերը շնորհակալություն էին հայտնում Ստարցևին այդ սիրո համար։ Եվ Ստարցևն էլ ամեն ինչ հիշեց, հիշեց ինչ եղել էր, հիշեց ամենաչնչին մանրամասնությունները, թե ինչպես ինքը թափառում էր գերեզմանոցում, ինչպես առավոտյան դեմ հոգնած վերադարձավ տուն, հետո հանկարծ տխրեց, ափսոսաց անցյալը։ Նրա հոգում բորբոքվեց մի փոքրիկ կրակ։

— Իսկ հիշո՞ւմ եք, թե ինչպես ձեզ ուղեկցեցի ակումբ երեկույթի,— ասաց նա։— Այն ժամանակ անձրև էր գալիս, մութ էր...

Փոքրիկ կրակը նրա հոգում ավելի էր բորբոքվում, արդեն ցանկանում էր խոսել, գանգատվել կյանքից...

— Է՜հ,— ասաց նա հառաչելով,— դուք ահա հարցնում եք, ինչպես եմ։ Ինչպե՞ս ենք ապրում այստեղ։ Դե, չենք էլ ապրում։ Ծերանում ենք, չաղանում, փնթիանում, օրերը թռչում անցնում են, կյանքն անցնում է աղոտ, առանց տպավորությունների, առանց խոհերի... Ցերեկը թեթև վաստակ. իսկ երեկոյան ակումբ, թղթամոլների, հարբեցողների, ճղճղացողների հասարակություն, որոնց տանել չեմ կարող։ Ի՜նչ լավ բան կա։

— Բայց դուք աշխատանք ունեք, ազնիվ նպատակ կյանքում։ Դուք այնպես սիրում էիք խոսել ձեր հիվանդանոցի մասին։ Ես այն ժամանակ ինչ-որ տարօրինակ էի, ինձ երևակայում էի մեծ դաշնակահարուհի։ Այժմ բոլոր օրիորդները դաշնամուր են նվագում, ես էլ էի նվագում, ինչպես բոլորը, իմ մեջ առանձնահատուկ ոչինչ չկար, ես նույնպիսի դաշնակահարուհի եմ, ինչպես մաման վիպասան։ Եվ, իհարկե, ես այն ժամանակ ձեզ չէի հասկանում, բայց հետո, Մոսկվայում, հաճախ էի մտածում ձեր մասին։ Ես միայն ձեր մասին էի մտածում։ Ինչպիսի՜ երջանկություն է լինել գավառական բժիշկ, օգնել տառապյալներին, ծառայել ժողովրդին։ Ինչպիսի՜ երջանկություն,— ոգևորված կրկնեց Եկատերինա Իվանովնան։— Երբ Մոսկվայում ես մտածում էի ձեր մասին, դուք ինձ պատկերանում էիք այնպե՞ս իդեալական, վսեմ...

Ստարցևը հիշեց թղթադրամները, որոնք երեկոներն այնպիսի հաճույքով հանում էր գրպաններից, և հոգում մարեց կրակը։

Նա վեր կացավ, որ գնա տուն։ Եկատերինա Իվանովնան թևանցուկ արեց նրան։

— Դուք իմ կյանքում իմացած բոլոր մարդկանցից ամենալավն եք,— շարունակեց նա։— Մենք կտեսնվենք, կխոսենք, ճիշտ չէ՞ արդյոք։ Խոստացեք ինձ։ Ես դաշնակահարուհի չեմ, իմ հաշվով ես այլևս չեմ մոլորվի և ձեր ներկայությամբ չե՛մ նվագի, չե՛մ խոսի երաժշտության մասին։

Երբ տուն մտան, և Ստարցևը երեկոյան լուսավորության տակ տեսավ նրա դեմքը ու իր վրա հառած նրա տխուր, երախտագետ, ննջող աչքերը, ապա անհանգստացավ ու նորից մտածեց.

«Բայց լավ է, որ այն ժամանակ ես չամուսնացա»։

Ստարցևը հրաժեշտ տվեց։

— Դուք ոչ մի հոռմեական իրավունք չունեք մեկնելու առանց ընթրելու,— ասում էր Իվան Պետրովիչը, ուղեկցելով նրան։— Դա ձեր կողմից հույժ ուղղահայաց է։ Ապա մի ցուցադրի՛ր,— ասաց նա, միջանցքում դիմելով Պավային։

Պավան, արդեն ոչ երեխա, այլ բեղերով մի երիտասարդ, ընդունեց կեցվածք, ձեռքը բարձրացրեց վեր և ողբերգական ձայնով ասաց.

— Մեռի՛ր, թշվառական կին։

Այս բոլորը ջղայնացնում էր Ստարցևին։ Կառք նստելով և նայելով խավար տանն ու պարտեզին, որոնք մի ժամանակ նրան այնքան թանկագին ու սիրելի էին, նա ամեն ինչ հիշեց միանգամից՝ և՛ Վերա Իոսիֆովնայի վեպերը, և՛ Կոտիկի աղմկոտ նվագը, և՛ Իվան Պետրովիչի սրամտությունները, և՛ Պավայի ողբերգական կեցվածքը ու մտածեց, որ եթե ամբողջ քաղաքում ամենատաղանդավոր մարդիկ այսքան ապաշնորհ են, ապա ինչպիսին է լինելու քաղաքը։

Երեք օր հետո Պավան մի նամակ բերեց Եկատերինա Իվանովնայից։

«Դուք չեք գալիս մեզ մոտ։ Ինչի՞ համար,— գրում էր նա։— Վախենում եմ, թե դուք փոխվել եք մեր հանդեպ, վախենում եմ, և հենց միայն այդ միտքը սարսափելի է ինձ։ Հանգստացրեք ինձ, եկեք և ասեք, որ ամեն ինչ լավ է։

Ինձ անհրաժեշտ է խոսել ձեզ հետ։ Ձեր Ե. Տ.»։

Նա կարդաց այդ նամակը, մտածեց ու ասաց Պավային։

— Ասա, սիրելիս, որ այսօր չեմ կարող գալ, խիստ զբաղված եմ։ Կգամ, ասա, այսպես, մի երեք օր հետո։

Բայց անցավ երեք օր, անցավ մի շաբաթ, իսկ նա բոլորովին չգնաց։ Մի անգամ, Տուրկինների տան մոտով կառքով գնալիս նա հիշեց, որ հարկավոր է թեկուզ մի վայրկյան անցնել նրանց մոտ, բայց մտածեց և... չանցավ։

Ու արդեն էլ երբեք նա չեղավ Տուրկինների տանը։

V

Անցավ էլի մի քանի տարի։ Ստարցևը է՛լ ավելի է չաղացել, ճարպակալել, շնչում է ծանր ու արդեն քայլում է գլուխը

հետ դցած։ Երբ նա, ուռած ու կարմրադեմ, գնում է բոժոժներ կախած տրոյկայով, և Պանտելեյմոնը, նույնպես ուռած ու կարմրադեմ, մսոտ ծոծրակով, տրոյկայի վրա իր տեղում նստած, փայտերի նման ուղիղ ձեռքերը պարզած առաջ, գոռում է դիմացից եկողին՝ «Ա՜ռ՜ջ անցիր», ապա տեսարանը լինում է աղդեցիկ, և թվում է, կառքում գնում է ոչ թե մարդ, այլ հեթանոսական աստված։ Քաղաքում նա բժշկական շատ մեծ գործունեություն ունի, շնչելու ժամանակ չի լինում, և արդեն ունի կալվածք, քաղաքում էլ՝ երկու տուն ու հաճույքով կատարում է դեռ երրորդի էլ ընտրությունը, մի քիչ ավելի շահավետ պայմանով, և երբ նրան «Փոխադարձ վարկի ընկերություն»-ում ասում են աճուրդի նշանակված որևէ տան մասին, ապա նա առանց ձևականության գնում է այդ տունը և, անցնելով բոլոր սենյակներով, ուշադրություն չդարձնելով չհագնված կանանց ու երեխաներին, որոնք զարմացած ու սարսափած նայում են նրան, ձեռնափայտի ծայրով խթում է բոլոր դռներն ու հարցնում։

— Սա առանձնասենյա՞կն է։ Սա ննջարա՞նն է։ Իսկ սա ի՞նչն է։

Եվ միաժամանակ ծանր շնչում ու ճակատից սրբում է քրտինքը։

Նա շատ հոգսեր ունի, բայց և այնպես չի թողնում զավառական բժշկի տեղը, ագահությունը հաղթել է նրան, ուզում է հասնել և՛ այստեղ, և՛ այնտեղ։ Դյալիժում և քաղաքում նրան արդեն անվանում են ուղղակի Իոնիչ։— «Այդ ո՞ւր է գնում Իոնիչը», կամ՝ «Արդյոք չհրավիրե՞լ Իոնիչին կոնսիլիումի»։

Նրա ձայնը փոխվել է, դարձել բարակ ու սուր, հավանական է այն բանից, որ ճարպակալել է կոկորդը։ Բնավորությունը նույնպես փոխվել է, դարձել է ծանր, դյուրագրգիռ։ Հիվանդներին ընդունելիս, նա սովորաբար դայրանում է, անհամբերությամբ ձեռնափայտը թխկթխկացնում է հատակին և գոռում իր անախորժ ձայնով.

— Բարեհաճեցե՛ք պատասխանել միայն հարցերին։ Չխոսել։

Նա միայնակ է։ Ապրում է տխուր, ոչինչ չի հետաքրքրում նրան։

Ամբողջ ժամանակ, քանի դեռ ապրում էր Դյալիժում, Կոտիկի սերը նրա միակ և, հավանական է, վերջին երջանկություն էր։ Երեկոները նա ակումբում խաղում է վինտ, հետո մենակ նստում է մեծ սեղանի մոտ և ընթրում։ Նրան սպասարկում է լակեյ Իվանը, ամենածերը և պատկառելին, մատուցում են լաֆիտ № 17, և արդեն բոլորը գիտեն՝ և՛ ակումբի ավագները, և՛ խոհարարը, և՛ լակեյը, թե ինչ է նա սիրում և ինչ չի սիրում, ամեն կերպ աշխատում են սիրաշահել նրան, թե չէ հանկարծ չլինի թե զայրանա և ձեռնափայտը թխկթխկացնի հատակին։

Ընթրելիս նա մեկ-մեկ շրջվում և խառնվում է որևէ խոսակցության.

— Այդ ինչի՞ մասին եք խոսում։ Հը՞։ Ո՞ւմ։

Եվ երբ պատահում է հարևան որևէ սեղանի շուրջ խոսք է բացվում Տուրկինների մասին, նա հարցնում է.

— Դուք այդ ո՞ր Տուրկինների մասին եք խոսում։ Նրանց, որ աղջիկը ֆորտեպիա՞ն է նվագում։

Ահա այն ամենը, ինչ կարելի է ասել նրա մասին։

Իսկ ինչպե՞ս են Տուրկինները։ Իվան Պետրովիչը չի ծերացել, ամենևին չի փոխվել և առաջվա նման շարունակ սրախոսություններ է անում, պատմում է անեկդոտներ։ Վերա Իոսիֆովնան հյուրերի համար կարդում է իր վեպերը առաջվա նման հաճույքով, սրտաբաց անկեղծությամբ։ Իսկ Կոտիկը ամեն օր մոտ մի չորս ժամ դաշնամուր է նվագում։ Նա նկատելիորեն պառավել և շուտ-շուտ հիվանդանում է ու ամեն աշնան մոր հետ մեկնում է Ղրիմ։ Կայարանում, նրանց ուղեկցելով, Իվան Պետրովիչը, երբ շարժվում է գնացքը, սրբում է արցունքներն ու կանչում.

— Ցտեսությո՛ւն խնդրեմ։

Եվ թափահարում է թաշկինակը։

1898

ՄԻ ԴԵՊՔ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ

Պրոֆեսորը հեռագիր ստացավ Լյալիկովների ֆաբրիկայից. նրան խնդրում էին շտապ գնալ այնտեղ։ Հիվանդ էր ինչ-որ տիկին Լյալիկովայի, ըստ երևույթին, ֆաբրիկատիրուհու դուստրը, և այլևս ոչինչ չէր կարելի հասկանալ այդ երկար, անհեթեթ ձևով կազմած հեռագրից։ Եվ պրոֆեսորը ինքը չգնաց, այլ իր փոխարեն ուղարկեց օրդինատոր Կորոլյովին։

Պետք էր Մոսկվայից գնացքով անցնել երկու կայարան և ապա՝ կառքով մի չորս վերստ։ Կորոլյովի հետևից եռաձի կառք ուղարկեցին կայարան. կառապանը գլխին դրել էր սիրամարգի փետուրով զարդարված գլխարկ և բոլոր հարցերին պատասխանում էր բարձր ձայնով, զինվորի պես. «Բնա՛վ ոչ», «Ճի՛շտ այդպես»։ Շաբաթ իրիկուն էր, արևը մայր էր մտնում, ֆաբրիկայից խմբերով դեպի կայարան էին գնում բանվորները և գլուխ տալիս ձիերին, որոնցով գալիս էր Կորոլյովը։ Եվ նրան գերում էր երկոն, և՛ ագարակները, և՛ չորս կողմի ամառանոցները, և՛ կեչիները, և՛ այդ խաղաղ տրամադրությունը շուրջդ, երբ թվում է, բանվորների հետ հիմա, տոնի նախօրեին, պատրաստվում են հանգստանալ և՛ դաշտը, և՛ անտառը, և՛ արևը,— հանգստանալ, թերևս, նաև աղոթել...

Նա ծնվել ու մեծացել էր Մոսկվայում, գյուղին ծանոթ չէր, ֆաբրիկաներով երբեք չէր հետաքրքրվել և նրանցում չէր եղել։ Բայց պատահել էր, որ նա կարդացել էր ֆաբրիկաների մասին և հյուր էր եկել ֆաբրիկատերերի մոտ ու զրուցել նրանց հետ. և երբ հեռվից որևէ ֆաբրիկա էր տեսնում, ամեն անգամ մտածում էր, թե ահա դրսից ամեն ինչ հանգիստ ու խաղաղ է, իսկ ներսում, հավանաբար, իշխում է աներևակայելի տգիտությունը և տերերի բութ եսասիրությունը, բանվորների ձանձրալի, անառողջ աշխատանքը, վեճ ու կռիվը, օդին, միջատները։ Եվ այժմ, երբ բանվորները հարգալիր ու երկչոտ մի կողմ էին քաշվում կառքից, նա նրանց դեմքերի, կարտուզների, քայլվածքի մեջ տեսնում էր ֆիզիկական անմաքրություն, հարբեցողություն, ներվայնություն, շփոթվածություն։

Ֆաբրիկայի դարպասից ներս մտան։ Ճանապարհի երկու կողմերում երևում էին բանվորների փոքրիկ տնակներ, կանանց դեմքեր, սպիտակեղեն ու վերմակներ՝ անդաստակներում։ «Զգուշացի՛ր», բղավում էր կառապանը, առանց ձիերին զսպելու։ Ահա մի ընդարձակ բակ առանց կանաչի, այնտեղ՝ հինգ հսկայական կորպուսներ ծխնելույզներով, միմյանցից հեռու, ապրանքի պահեստներ, բարաքներ, և այդ ամենի վրա կարծես փոշու ինչ-որ գորշ փառ։ Այստեղ-այնտեղ, ինչպես օազիսներն անապատում, խղճուկ այգիներ և տների կանաչ կամ կարմիր տանիքներ, որտեղ ապրում է ադմինիստրացիան։ Կառապանը հանկարծ կանգնեցրեց ձիերը, և կառքը կանգ առավ մի տան

առաջ, որ նոր ներկած էր գորշ գույնի։ Այդտեղ կար նախապարտեզ փոշոտ յասամաններով, և դեղին անդաստակից ներկի ուժեղ հոտ էր փչում։

— Համեցե՛ք, պարոն բժիշկ,— հնչում էին կանացի ձայներ սրահում և նախասենյակում, և դրա հետ մեկտեղ լսվում էին հոգոցներ ու շշուկ։— Համեցեք, շատ սպասեցինք... կատարյալ դժբախտություն է։ Ահա այստեղ համեցեք։

Տիկին Լյալիկովան, մոդայիկ թևքերով սև մետաքսե զգեստ հագած, գեր, տարիքոտ, բայց դեմքից դատելով, հասարակ, կիսագրագետ մի կին, տագնապով նայում էր բժշկին և չէր վստահում ձեռքը մեկնել նրան, չէր համարձակվում։ Նրա կողքին կանգնած էր կարճ մազերով, pince-nez-ով, խայտանկար գունավոր կոֆտայով, նիհար և արդեն ոչ երիտասարդ մի կին։ Սպասավորները նրան կոչում էին Խրիստինա Դմիտրիևնա, և Կորոլյովը կռահեց, որ դա տնային դաստիարակչուհին է։ Ըստ երևույթին նրան, որպես տան ամենաուսյալին, հանձնարարված էր դիմավորել և ընդունել բժշկին, որովհետև նա անմիջապես, շտապելով, սկսեց շարադրել հիվանդության պատճառները, չնչին, ձանձրալի մանրամասնություններով, բայց առանց ասելու, թե բանն ինչ է և ով է հիվանդ։

Բժիշկն ու դաստիարակչուհին նստել, խոսում էին, իսկ տանտիրուհին, սպասելով, անշարժ կանգնած էր դռան մոտ։ Խոսակցությունից Կորոլյովը հասկացավ, որ հիվանդ է Լիզան, մի քսան տարեկան աղջիկ, տիկին Լյալիկովայի միակ դուստրը, ժառանգուհին, նա արդեն վաղուց հիվանդ էր և բուժվում էր զանազան բժիշկների մոտ, իսկ վերջին գիշերը, երեկոյից մինչև առավոտ այնպիսի սրտի թրթիռ ուներ, որ տանը ոչ ոք չքնեց. վախենում էին, թե գուցե մեռնի հանկարծ։

— Նա, կարելի է ասել, փոքրուց վատառողջ է,— պատմում էր Խրիստինա Դմիտրիևնան երգեցիկ ձայնով և ձեռքով շարունակ շրթունքները սրբելով։— Բժիշկներն ասում են՝ ջղերն են, բայց երբ նա փոքր էր, բժիշկները գեղձախտը նրա ներսը գցեցին, ահա, կարծում եմ, գուցե դրանից է։

Գնացին հիվանդի մոտ։ Արդեն բոլորովին հասունացած, մեծ, լավ հասակով, բայց տգեղ, մորը նման, նույնպիսի մանր աչքերով և լայն, դեմքի անչափ զարգացած ստորին մասով, չսանրված, մինչև կզակը ծածկված, առաջին պահ նա Կորոլյովի վրա գործեց դժբախտ, խղճուկ արարածի տպավորություն,

տիին խղճալով այստեղ ապաստան էին տվել ու ծածկել, և հավատալը չէր գալիս, որ դա հինգ հսկա կորպուսների ժառանգուհին է։

— Մենք ձեզ մոտ ենք եկել,— սկսեց Կորոլյովը,— եկել ենք ձեզ բուժելու։ Բարև ձեզ։

Նա տվեց իր անունը և սեղմեց աղջկա ձեռքը, մեծ, սառը, տգեղ ձեռքը։ Աղջիկը նստեց և, ըստ երևույթին, վաղուց արդեն վարժված լինելով բժիշկներին, անտարբեր դեպի այն հանգամանքը, որ ուսերն ու կուրծքը բաց էին, թույլ տվեց իրեն զննելու։

— Ես սրտի թրթիռ ունեմ,— ասաց նա։— Ամբողջ դիշեր մի այնպիսի՛ սարսափ էր... սարսափից քիչ մնաց մեռնեի։ Ինձ մի բան տվեք։

— Կտամ, կտամ։ Հանգստացեք։

Կորոլյովը զննեց նրան և ուսերը թոթվեց։

— Սիրտը, ինչպես հարկն է,— ասաց նա,— ամեն ինչ բարեհաջող է, ամեն ինչ կարգին։ Ըստ երևույթին, ձեր ջղերն են մի փոքր խախտվել, բայց դա այնքա՞ն սովորական բան է։ Նոպան, պետք է ենթադրել, որ արդեն վերջացել է. ձեզ համար հանգիստ պառկեցեք քնելու։

Այդ ժամանակ լամպ բերին ննջարան։ Հիվանդը աչքերը կկոցեց լույսից և հանկարծ գլուխը բռնեց ձեռներով ու հեկեկաց։ Եվ խղճուկ ու տգեղ արարած լինելու տպավորությունը հանկարծ չքացավ, և Կորոլյովն այլևս չէր նկատում ո՛չ մանր աչքերը, ո՛չ կոպիտ զարգացած դեմքի ստորին մասը. նա տեսնում էր մեղմ, տառապալից արտահայտությունը, որն այնքան խելացի և հուզիչ էր, և աղջիկն ամբողջովին բժշկին թվում էր բարեկազմ, կանացի, պարզ, և բժիշկն ուզում էր արդեն նրան հանգստացնել ոչ թե դեղերով, ոչ թե խորհրդով, այլ պարզ, փաղաքշական մի խոսքով։ Մայրը գրկեց նրա գլուխը և սեղմեց կրծքին։ Որքա՞ն հուսահատություն, որքա՞ն վիշտ կար պառավի դեմքին։ Նա՝ մայրը, սնել, մեծացրել է դստերը, ոչինչ չի խնայել, ամբողջ կյանքը նվիրել է այն բանին, որ աղջկան սովորեցնի ֆրանսերեն, պարեր, երաժշտություն, նրա համար հրավիրել է տասնյակ ուսուցիչներ, լավագույն բժիշկների, դաստիարակչուհի է պահում, և այժմ չի հասկանում, որտեղի՞ց են այդ արցունքները, ինչի՞ համար է այդքան տառապանքը, չէր հասկանում ու շփոթվում էր, և նա մեղավոր ու տագնապալից, հուսահատ արտահայտություն ուներ, ասես աչքաթող էր արել էլի ինչ-որ մի շատ կարևոր բան, ինչ-որ բան դեռ չէր արել, ինչ-որ մեկին դեռ չէր հրավիրել, իսկ թե ո՞ւմ, հայտնի չէր։

— Լիզանկա, դու նորից... դու նորից,— ասում էր նա՝ դստերը սեղմելով իրեն։— Հոգյակս, աղավնյակս, մանկիկս, ասա, քեզ ի՞նչ է եղել։ Խղճա՛ ինձ, ասա՛։

Երկուսն էլ դառնագին լալիս էին։ Կորոլյովը նստեց մահճակալի եզրին ու բռնեց Լիզայի ձեռքը։

— Հերիք է, մի՞թե արժե լաց լինել,— ասաց նա քնքշորեն։— Չէ՞ որ աշխարհում չկա մի այնպիսի բան, որ արժանի լիներ այդ արցունքներին։ Դե, լաց չլինենք, պետք չէ այդ...

Իսկ ինքը մտածեց.

«Լավ կլիներ աղջիկն ամուսնանար»...

— Մեր ֆաբրիկայի բժիշկը նրան տալիս էր կալի-բրոմա՛տի,— ասաց դաստիարակչուհին,— բայց դրանից, ինչպես նկատում եմ, նա ավելի է վատանում։ Իմ կարծիքով, եթե արդեն սրտի դեղ են տալիս, ապա... մոռացա ինչպես է կոչվում... հովտաշուշանի՞, թե ինչ կաթիլներ։

Եվ նորից սկսվեցին ամեն տեսակ մանրամասնություններ։ Նա ընդհատում էր բժշկին, խանգարում էր նրան խոսել, և դեմքին երևում էր փութաջանություն, կարծես ենթադրում էր, որ իբրև տան ամենաուսյալ կինը, ինքը պարտավոր է բժշկի հետ անընդհատ խոսակցություն վարել, և անպայման բժշկականության մասին։

Կորոլյովը ձանձրացավ։

— Ես ոչ մի առանձին բան չեմ գտնում,— ասաց նա ննջարանից դուրս գալով ու դիմելով մորը։— Եթե ձեր աղջկան բուժում էր ֆաբրիկայի բժիշկը, ապա թող շարունակի բուժել։ Բուժումը մինչև հիմա ճիշտ է եղել, և ես բժիշկը փոխելու անհրաժեշտություն չեմ տեսնում։ Ինչո՞ւ փոխեք։ Նրա հիվանդությունն այնքան սովորական է, ոչ մի լուրջ բան չկա...

Նա խոսում էր դանդաղ, ձեռնոցները հագնելով, իսկ տիկին Լյալիկովան կանգնել էր անշարժ և բժշկին էր նայում իր լացակումած աչքերով։

— Մինչև ժամը տասի գնացքը մնացել է կես ժամ,— ասաց բժիշկը,— հուսով եմ, որ չեմ ուշանա։

— Իսկ չե՞ք կարող մեզ մոտ մնալ,— հարցրեց տիկինը, և արցունքները նորից հոսեցին նրա այտերով։— Անհարմար է ձեզ անհանգստացնելը, բայց բարի եղեք... ի սեր աստծո,— շարունակեց նա ետ նայելով ննջարանի դռանը,— գիշերեցեք մեզ մոտ։ Նա իմ միակն է... միակ դուստրը... Անցյալ գիշեր այնպե՞ս վախեցրեց, որ ուշքի գալ չեմ կարող... Մի՛ մեկնեք, ի սեր աստծո...

Բժիշկն ուզում էր ասել, որ Մոսկվայում ինքը շատ գործեր ունի, որ տանը նրան սպասում է ընտանիքը. նրա համար ծանր էր առանց անհրաժեշտության ամբողջ երեկոն և ամբողջ գիշերն անցկացնել օտարի տանը, բայց նայեց տիկնոջ երեսին, ծանր շունչ քաշեց և լուռ սկսեց հանել ձեռնոցները։

Դահլիճում և հյուրասենյակում նրա համար վառեցին բոլոր լամպերն ու մոմերը։ Նա նստել էր դաշնամուրի մոտ և թերթում էր նոտաները, ապա դիտում պատից կախած նկարները։ Ոսկեզօծ շրջանակներով, յուղաներկ նկարներում պատկերված էին Ղրիմի տեսարաններ, փոթորկահույզ ծով՝ փոքրիկ նավակով, ըմպանակը ձեռքին կաթոլիկ աբեղա, և այդ ամենը՝ չոր, լպստած, ապաշնորհ... Դիմանկարներում՝ ոչ մի գեղեցիկ, հետաքրքիր դեմք, բոլորը՝ լայն ծնոտներ, զարմացած աչքեր։ Լյալիկովը՝ Լիզայի հայրը, նեղճակատ և ինքնագոհ դեմք ունի, մունդիրը պարկի պես է նստած նրա խոշոր, ոչ ազնվացնող մարմնին. կրծքին մեդալ և Կարմիր խաչի նշան կա։ Կուլտուրան աղքատիկ է, շքեղությունը՝ պատահական, չիմաստավորված, անհարմար, ինչպես այդ մունդիրը, հատակները ջղայնացնում են իրենց փայլով, ջղայնացնում է ջահը, և չգիտես ինչու, մարդու միտքն է գալիս այն վաճառականի պատմությունը, որը բաղանիք էր գնում՝ մեղալը վզից կախած...

Նախասենյակից շշուկ էր լսվում, ինչ-որ մեկը կամաց խոմփացնում էր։ Եվ հանկարծ բակից լսվեցին շեշտակի, ընդհատ, մետաղյա հնչյուններ, որ Կորոլյովն առաջ երբեք չէր լսել և այժմ էլ չհասկացավ. դրանք բժշկի հոգում արձագանքեցին տհաճ ու տարօրինակ կերպով։

«Ինձ թվում է ոչ մի գնով չէի համաձայնի այստեղ ապրել»...— մտածեց նա և նորից սկսեց թերթել նոտաները։

— Բժիշկ, համեցեք ընթրելու,— կիսաձայն կանչեց դաստիարակչուհին։

Նա գնաց ընթրելու։ Սեղանը մեծ էր, բազմաթիվ ուտեստներով ու գինիներով, բայց ընթրում էին երկուսը՝ բժիշկը և Խրիստինա Դմիտրիևնան։ Սա մադերա էր խմում, արագ ուտում ու խոսում էր, բժշկին նայելով pince-nez-ի միջով.

— Բանվորները մեզնից շատ զոհ են։ Մեր ֆաբրիկայում ամեն ձմեռ ներկայացումներ են լինում, իրենք բանվորներն են խաղում, դե՛, ընթերցումներ կախարդական լապտերով, հոյակապ թեյարան և, կարծես թե, էլ ի՞նչ է պետք։ Նրանք մեզ շատ նվիրված են, և երբ իմացան, որ Լիզանկայի դրությունը վատացել է, պատարագ անել տվին։ Անկիրթ մարդիկ են, բայց տես որ նրանք էլ զգացմունք ունեն։

— Ինչպես երևում է, ձեր տանը ոչ մի տղամարդ չկա,— ասաց Կորոլյովը։

— Ոչ մի։ Պյոտր Նիկանորիչը տարի ու կես առաջ մեռավ, և մենք մենակ մնացինք։ Այդպես էլ ապրում ենք երեքով։ Ամառն այստեղ, իսկ ձմեռը՝ Մոսկվայում, Պոլյանկայում։ Ես սրանց մոտ ապրում եմ արդեն տասնմեկ տարի։ Յուրայինի պես եմ։

Ընթրիքին մատուցեցին չուքա-ձուկ, հավի կոտլետ ու կոմպոտ, դինիները թանկարժեք էին, ֆրանսիական։

— Դուք, բժիշկ, խնդրեմ, առանց ձևականության,— ասում էր Խրիստինա Դմիտրիևնան, ուտելով, բերանը փոքրիկ բռունցքով սրբելով, և երևում էր, որ նա այստեղ ապրում է իր քեֆն ուզածի պես։— Կերեք, խնդրեմ։

Ընթրիքից հետո բժշկին առաջնորդեցին այն սենյակը, որտեղ նրա համար անկողին էր պատրաստված։ Բայց նրա քունը չէր տանում, տոթ էր, և սենյակում ներկի հոտ էր գալիս. նա վերարկուն հագավ և դուրս ելավ։ Դուրսը զով էր. արդեն այգը բացվում էր, և խոնավ օդում որոշակի նշմարվում էին բոլոր հինգ կորպուսներն իրենց երկար ծխնելույզներով, բարաքներն ու պահեստները։ Տոնի կապակցությամբ չէին աշխատում, լուսամուտները խավար էին, և միայն կորպուսներից մեկում դեռ վառվում էր հնոցը և ծխի հետ ծխնելույզից երբեմն դուրս էր գալիս կրակ։ Հեռու, բակից այն կողմ, կոկռում էին գորտերը, և երգում էր սոխակը։

Նայելով կորպուսներին ու բարաքներին, որտեղ քնում էին բանվորները, բժիշկը նորից մտածեց այն, ինչի մասին միշտ մտածում էր, երբ ֆաբրիկաներ էր տեսնում։ Թո՛ղ բանվորների համար ներկայացումներ լինեն, կախարդական լապտեր-

ներ, ֆաբրիկային բժիշկներ, զանազան բարենորոգումներ, բայց և այնպես, այսօր կայարանի ճանապարհին նրան հանդիպած բանվորները իրենց տեսքով ոչնչով չէին տարբերվում այն բանվորներից, որոնց նա տեսել էր վաղուց, մանկության օրերին, երբ դեռ ֆաբրիկային ներկայացումներ ու բարենորոգումներ չկային։ Նա, իբրև բժիշկ, որ ուղիղ է դատում խրոնիկական տառապանքների մասին, որոնց արմատական պատճառն անհասկանալի ու անբուժելի էր, ֆաբրիկաներին էլ նայում էր որպես թյուրիմացության վրա, որի պատճառը նույնպես անորոշ ու անվերացնելի էր, և ֆաբրիկայում աշխատողների կյանքի բոլոր բարելավումները նա ավելորդ չէր համարում, բայց դրանք հավասարեցնում էր անբուժելի հիվանդությունների բուժմանը։

«Այստեղ, իհարկե, թյուրիմացություն կա...— մտածում էր նա, բոսորագույն լուսամուտներին նայելով։— Մոտ մեկուկես, երկու հազար ֆաբրիկային բանվոր, առանց հանգստի, առողջության համար վատ պայմաններում, պատրաստելով վատորակ չիթ, ապրում են կիսաքաղց և միայն հազվադեպ, պանդոկում, սթափվում են այդ կոշմարից. մի հարյուր մարդ հսկում է աշխատանքը, և այդ հարյուրի ամբողջ կյանքը վատնվում է տուգանքների գրանցման, հայհոյանքի, անարդարությունների վրա, և միայն երկուսը-երեքը, այսպես կոչված տերերն են օգտվում եկամուտներից, թեև բոլորովին չեն աշխատում և արհամարհում են վատ չիթը։ Բայց ի՞նչ եկամուտներ են, ինչպե՞ս են օգտվում դրանցից։ Լյալիկովան և նրա դուստրը դժբախտ են, նրանց նայելիս մարդու մեղքն է գալիս, իր քեֆին ապրում է միայն Խրիստինա Դմիտրիևնան, pince-nez դրած, տարիքոտ, հիմարավուն այդ օրիորդը։ Եվ այնպես է ստացվում, ուրեմն, որ բոլոր այդ հինգ կորպուսներն աշխատում են, և արևելյան շուկաներում վատորակ չիթը վաճառվում է նրա համար միայն, որ Խրիստինա Դմիտրիևնան կարողանա չուքա-ձուկ ուտել և մադերա խմել»։

Հանկարծ լսվեցին տարօրինակ հնչյուններ, հենց այն հընչյունները, որ Կորոլյովը լսել էր ընթրիքից առաջ։ Կորպուսներից մեկի մոտ, ինչ-որ մեկը խփում էր մետաղի կտորին, խփում և անմիջապես ձայնը պահում, այնպես որ ստացվեցին կարճ, շեշտակի, ոչ մաքուր հնչյուններ՝ «դա՛ն, դա՛ն, դա՛ն»-ի նման մի բան։ Այնուհետև կես րոպեի չափ լռություն տիրեց, և

մյուս կորպուսի մոտ էլ լսվեցին հնչյուններ, նույնպես ընդհատ ու տհաճ, բայց արդեն ավելի ցածր, թավ ձայնով՝ «դո՛ն... դո՛ն... դո՛ն...» տասնմեկ անգամ։ Ըստ երևույթին, դա պահակներն էին ժամը տասնմեկը խփում։

Երկրորդ կորպուսի մոտ լսվեց՝ «թա՛ք... թա՛ք... թա՛ք...»։ Եվ այդպես բոլոր կորպուսների մոտ և ապա՝ բարաքների ու դարպասի այն կողմում։ Թվում էր, կարծես գիշերային լռության մեջ այդ հնչյուններն արձակում էր ինքը հրեշը՝ բոցեղեն աչքերով, ինքը սատանան, որն այստեղ իշխում էր թե՛ տերերին, թե՛ բանվորներին, և խաբում էր թե՛ սրանց, թե՛ մյուսներին։

Կորոլյովը բակից դուրս եկավ դաշտ։

— Ո՞վ է գալիս,— կոպիտ ձայնով գոչեցին նրան դարպասի մոտ։

«Ինչպես որ բանտում լինի...»,— մտածեց բժիշկը և ոչինչ չպատասխանեց։

Այստեղ սոխակների ու գորտերի ձայնն ավելի պարզ էր լսվում, զգացվում էր մայիսյան գիշերը։ Կայարանից գալիս էր գնացքի աղմուկը, ինչ-որ տեղ կանչում էին քնահար աքաղաղները, բայց և այնպես գիշերը խավար էր, հանդարտ քնած էր աշխարհը։ Դաշտում ֆաբրիկայից ոչ հեռու դարսված էին գերաններ ու տախտակներ՝ շինարարության համար։ Կորոլյովը նստեց տախտակներին և շարունակեց մտածել.

«Այստեղ իրեն լավ է զգում միայն դաստիարակչուհին, և ֆաբրիկան աշխատում է նրա բավականության համար։ Բայց դա այդպես թվում է. նա այստեղ միայն դրածո անձ է։ Իսկ գլխավորը, որի համար ամեն ինչ արվում է այստեղ, դա սատանան է»։

Եվ նա մտածում էր սատանայի մասին, որին չէր հավատում, և հայացքը շրջում էր դեպի լուսավորված պատուհանները։ Նրան թվում էր, թե այդ բոսոր աչքերով նրան նայում էր ինքը սատանան, այն անծանոթ ուժը, որն ստեղծել է ուժեղների ու թույլերի հարաբերությունները, այդ կոպիտ սխալը, որն այժմ ոչ մի կերպ չես ուղղի։ Պետք է, որ ուժեղը թույլին խանգարի ապրել, այդպես է բնության օրենքը, բայց դա հասկանալի է և հեշտությամբ է մարդու մտքում տեղավորվում միայն լրագրային հոդվածում և դասագրքում, իսկ այն շիլա-շփոթում, որ իրենից ներկայացնում է առօրյա կյանքը, բոլոր մանրուքների խառնաշփոթության մեջ, որոնցից հյուսված են մարդկային

հարաբերությունները, դա արդեն ոչ թե օրենք է, այլ տրամաբանական անպատեհություն, երբ թե՛ ուժեղը, թե՛ թույլը, միանման զոհ են դառնում իրենց փոխհարաբերություններին, ակամա ենթարկվելով ինչ-որ ուղղություն տվող, անհայտ, կյանքից դուրս գտնվող, մարդու համար կողմնակի ուժի։ Այդպես էր մտածում Կորոլյովը տախտակներին նստած, և կամաց-կամաց նրան տիրեց մի այնպիսի տրամադրություն, կարծես այդ անծանոթ, խորհրդավոր ուժը իրոք մոտիկ էր և նայում էր իրեն։ Մինչդեռ արևելքն ավելի էր գունատվում. ժամանակն անցնում էր արագ։ Այգաբացի գորշ ֆոնի վրա, երբ շրջապատում ոչ ոք չկար, կարծես ամեն ինչ մեռել էր, հինգ կորպուսն ու ծխնելույզները առանձնահատուկ տեսք ունեին, ոչ այնպիսի, ինչպես ցերեկը. բոլորովին մոռացել էր, որ այնտեղ ներսում կան շոգեշարժիչներ, էլեկտրականություն, հեռախոսներ, և մարդ մի տեսակ մտածում էր ցցաշեն կառուցվածքների, քարե դարի մասին, զգացվում էր կոպիտ, անգիտակից ուժի ներկայությունը...

Եվ նորից լսվեց։

— Դա՛ն... դա՛ն... դա՛ն... դա՛ն...

Տասներկու անգամ։ Ապա կես րոպե լո՜ւռ լուռ էր, և բակի մյուս ծայրում հնչում է.

— Դո՛ն... դո՛ն... դո՛ն...

«Մարսափելի տհաճ է», — մտածեց Կորոլյովը։

— Թա՛ք...թա՛ք...— հնչում է մի երրորդ տեղում ընդհատ, սուր, ասես դայրացած,— թա՛ք...թա՛ք...

Եվ որպեսզի ժամը տասներկուսը խփեր, պահանջվեց մոտ չորս րոպե։ Հետո լռեց. և նորից տիրեց մի այնպիսի տպավորություն, կարծես շրջապատում ամեն ինչ մեռավ։

Կորոլյովը մի քիչ էլ նստեց ու վերադարձավ տուն, բայց դեռ երկար ժամանակ չէր պառկում։ Հարևան սենյակներում շշնջում էին, լսվում էր ոտնամանների ու բոբիկ ոտների թրփթրփոց։

«Արդյոք նորից նոպա չի՞ ունեցել»,— մտածեց Կորոլյովը։

Նա դուրս եկավ, որ նայի հիվանդին։ Սենյակներում արդեն բոլորովին լույս էր, և դահլիճում, պատին ու հատակին թրթռում էր արևի թույլ լույսը, որ այստեղ էր թափանցել վաղորդյան մշուշի միջից։ Լիզայի սենյակի դուռը բաց էր, նա նստած էր բազկաթոռին, անկողնու մոտ, կապոտ հագած, շալով փաթաթված, չանրված։ Լուսամուտների վարագույրները իջեցված էին։

— Ինչպե՞ս եք զգում ձեզ,— հարցրեց Կորոլյովը։

— Շնորհակալ եմ։

Կորոլյովը բռնեց ղարկերակը, հետո ուղղեց հիվանդի ճակատին թափված մազերը։

— Դուք չեք քնում,— ասաց նա։— Դուրսը հրաշալի եղանակ է, գարուն, սոխակները երգում են, իսկ դուք նստել եք խավարում և ինչ-որ բանի մասին եք մտածում։

Աղջիկը լսում էր և նայում բժշկի երեսին. նրա աչքերը թախծոտ էին, խելացի, և երևում էր, որ նա բժշկին ուզում է մի բան ասել։

— Այսպես հաճա՞խ է պատահում,— հարցրեց Կորոլյովը։

Աղջիկը շրթունքները շարժեց ու պատասխանեց.

— Հաճախ։ Գրեթե ամեն գիշեր ծանր է լինում ինձ համար։

Այդ ժամանակ բակում պահակներն սկսեցին խփել ժամը երկուսը։ Լսվեց՝ «դա՛ն... դա՛ն...», և աղջիկը ցնցվեց։

— Ձեզ անհանգստացնո՞ւմ են այդ հարվածները,— հարցրեց բժիշկը։

— Չգիտեմ։ Այստեղ ամեն ինչ ինձ անհանգստացնում է,— պատասխանեց Լիզան ու մտասուզվեց։— Ամեն ինչ անհանգստացնում է։ Ձեր ձայնի մեջ ես կարեկցանք եմ լսում, ձեզ տեսնելիս, առաջին իսկ հայացքից, չգիտեմ ինչու, ինձ թվաց, թե ձեզ հետ կարելի է խոսել ամեն ինչի մասին։

— Խոսեցեք, խնդրում եմ։

— Ես ուզում եմ ձեզ իմ կարծիքն ասել։ Ինձ թվում է, որ ես հիվանդություն չունեմ, այլ անհանգստանում եմ, և դա սարսափելի է, որովհետև այդպես է լինում և այլ կերպ չի կարող լինել։ Նույնիսկ ամենաառողջ մարդը չի կարող չանհանգստանալ, եթե, օրինակ, նրա լուսամուտի տակ ավազակ է շրջում։ Ինձ հաճախ են բուժում,— շարունակեց նա իր ծնկներին նայելով ու ամոթխած ժպտաց,— ես, իհարկե, շատ շնորհակալ եմ և չեմ ժխտում բուժման օգուտը, բայց ես կուզենայի խոսել ոչ թե բժշկի, այլ մոտիկ մարդու, մտերիմի հետ, որը հասկանար ինձ, համոզեր ինձ, որ ես իրավացի եմ կամ անիրավացի։

— Մի՞թե դուք մտերիմներ չունեք,— հարցրեց Կորոլյովը։

— Ես մենակ եմ։ Ես մայր ունեմ, սիրում եմ նրան, բայց և այնպես մենակ եմ։ Այդպես է դասավորվել կյանքս... Մե-

Ենակ Մարդիկ շատ են կարդում, բայց քիչ են խոսում և քիչ լսում, կյանքը նրանց համար խորհրդավոր է. նրանք միստիկներ են և հաճախ սատանա են տեսնում այնտեղ, որտեղ նա չկա։ Լերմոնտովի Թամարան մենակ էր և տեսնում էր սատանային։

— Իսկ դուք շա՞տ եք կարդում։

— Շատ։ Չէ՞ որ իմ ամբողջ ժամանակն ազատ է առավոտից մինչև երեկո։ Ցերեկը կարդում եմ, իսկ գիշերները գլուխս դատարկ է լինում, մտքերի փոխարեն՝ ինչ-որ ստվերներ։

— Դուք գիշերները որևէ բան տեսնո՞ւմ եք։— հարցրեց Կորոլյովը։

— Ոչ, բայց ես զգում եմ...

Նա նորից ժպտաց ու աչքերը բարձրացրեց բժշկի վրա և նայեց այնպես թախծոտ,այնպես խելացի, և բժշկին թվաց, թե աղջիկը հավատում է իրեն, ուզում է անկեղծորեն խոսել իր հետ, և որ նա մտածում է նույն կերպ, ինչպես ինքը։ Բայց աղջիկը լուռ էր և, թերևս, սպասում էր, թե արդյոք բժիշկը չի՞ սկսի խոսել։

Կորոլյովը գիտեր, թե ինչ պետք է ասել նրան. նրա համար պարզ էր, որ աղջիկը պետք է որքան կարելի է շուտ թողնի հինգ կորպուսը, և միլիոնը, եթե դա ուներ, թողնի այդ սատանային, որ նայում է գիշերները. նրա համար պարզ էր, որ այդպես է մտածում նաև աղջիկն ինքը, և միայն սպասում է, որ որևէ մեկը, ում նա հավատում է, հաստատի այդ բանը։

Բայց բժիշկը չգիտեր, թե ինչպես ասի այդ։ Ինչպե՞ս Ամաչում են դատապարտված մարդկանց հարցնել, թե նրանք ինչի համար են դատապարտված. այդպես էլ անհարմար է լինում շատ հարուստ մարդկանց հարցնել, թե նրանց ինչին է պետք այդքան շատ փողը,ինչու՞ նրանք այդքան վատ են տնօրինում իրենց հարստությունը, ինչո՞ւ չեն թողնում այդ հարստությունը նույնիսկ այն ժամանակ, երբ դրա մեջ տեսնում են իրենց դժբախտությունը և եթե այդ մասին խոսակցություն են սկսում, սովորաբար դա ստացվում է ամոթխած, անհարմար, երկար։

«Ինչպե՞ս ասեմ,— մտորում էր Կորոլյովը։— Եվ արդյոք արժե՞ որ ասեմ»։

Եվ նա ասաց իր ուզածը, բայց ոչ ուղղակի, այլ զարտուղի ճանապարհով.

— Դուք Ֆաբրիկայի տիրոջ և հարուստ ժառանգուհու վիճակում դժգոհ եք, չեք հավատում ձեր իրավունքին և ահա չեք քնում, դա, իհարկե, ավելի լավ է, քան եթե գոհ լինեիք, հանգիստ քնեիք և մտածեիք, թե ամեն ինչ կարգին է։ Ձեր անքնությունը պատվավոր անքնություն է. ինչ էլ որ լինի, դա լավ նշան է։ Եվ իրոք, մեր ծնողների միջև անիմաստ կլիներ ահա այսպիսի խոսակցությունը, ինչպիսին մերն է հիմա, գիշերները նրանք ոչ թե խոսում էին, այլ խոր քնում, իսկ մենք, մեր սերունդը, վատ ենք քնում, տոչորվում ենք,շատ ենք խոսում և շարունակ որոշում՝ արդյոք իրավացի՞ ենք, թե՛ ոչ։ Իսկ մեր զավակների ու թոռների համար այս հարցը՝ արդյոք իրավացի են նրանք, թե ոչ, արդեն լուծված կլինի։ Նրանց համար ավելի պարզ կլինի, քան մեզ համար։ Լավ կյանք կլինի մի հիսուն տարի հետո, միայն ափսոս, որ մենք այդքան չենք ապրի։ Հետաքրքիր կլիներ տեսնելը։

— Իսկ ի՞նչ են անելու զավակներն ու թոռները,— հարցրեց Լիզան։

— Չգիտեմ... Երևի ամեն ինչ կթողնեն ու կգնան։

— Ո՞ւր կգնան։

— Ո՞ւր... Դե, ուր ուզենան,— ասաց Կորոլյովը և ծիծաղեց։— Մի՞թե լավ, խելացի մարդու համար գնալու քիչ տեղ կա։

Նա նայեց ժամացույցին։

— Բայց արևն արդեն ծագեց,— ասաց նա։— Ձեր քնելու ժամանակն է։ Հանվեցեք ու ձեզ համար քնեք հանգիստ։ Շատ ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալուս համար,— շարունակեց նա, սեղմելով Լիզայի ձեռքը։— Դուք հրաշալի, հետաքրքիր մարդ եք։ Բարի գիշեր։

Բժիշկը գնաց իր սենյակը և պառկեց քնելու։

Հաջորդ օրը առավոտյան, երբ կառքը լծեցին, բոլորը դուրս եկան անդաստակ բժշկին ճանապարհ դնելու։ Լիզան տոնական սպիտակ զգեստով էր, մազերի մեջ ծաղիկ խրած, գալուկ, նվազուն. նա բժշկին նայում էր ինչպես երեկ, թախծոտ ու խելացի, ժպտում էր, խոսում և շարունակ այնպիսի արտահայտություն ուներ, կարծես ուզում էր նրան ինչ-որ կարևոր, առանձնահատուկ բան ասել, միայն նրան։ Լսվում էր, թե ինչպես էին երգում արտույտները, ինչպես էին զողանջում եկեղեցու զանգերը։ Ֆաբրիկայի կորպուսների լուսամուտները զվարթ շողում

էին, և, կառք նստած անցնելով բակով ու ապա դեպի կայարան տանող ճանապարհով, Կորոլյովն արդեն չէր հիշում ո՛չ բանվորների, ո՛չ ցցաշեն կառուցումների, ո՛չ սատանայի մասին, այլ մտածում էր այն, թերևս արդեն մոտիկ ժամանակվա մասին, երբ կյանքը կլինի նույնքան լուսավոր ու զվարթ, ինչպես այդ խաղաղ կիրակնօրյա առավոտը. և մտածում էր, թե որքա՜ն հաճելի է այդպիսի մի առավոտ, գարնանը, եռաձի լավ կառքով ճանապարհ գնալ և տաքանալ արևի տակ։

1898

ՀՈԳՅԱԿԸ

Օլենկան, պաշտոնաթող կոլեգիական ասեսոր Պլեմյաննիկովի դուստրը, մտասույզ նստած էր իրենց բակում, բնակարանի նախամուտքում։ Շոգ էր. աներես ճանճերը հանգիստ չէին տալիս, և այնպես հաճելի էր մտածել, որ շուտով երեկո է լինելու։ Արևելքից գալիս էին մութ, անձրևաբեր ամպեր և երբեմն խոնավություն էր փչում այնտեղից։

Բակում կանգնած էր տան կցաշենքում բնակվող անտրեպրենյոր և «Տիվոլի» պարտեզ-զվարճատեղիի վարձակալ Կուկինը և նայում էր երկնքին։

— Դարձյա՜լ,— ասում էր նա հուսահատ։— Դարձյալ անձրև է գալու։ Ամեն օր անձրև, ամեն օր անձրև, ասես դիտմամբ։ Անձրև չէ, այլ կախվելու պարան։ Տնավերությո՜ւն է։ Ամեն օր սոսկալի վնասնե՜ր։

Նա ձեռքերն իրար խփեց ու շարունակեց՝ դիմելով Օլենկային.

— Ահա՛, Օլգա՛ Սեմյոնովնա, մեր կյանքը։ Մարդու լաց է գալիս։ Աշխատում ես, ջանք թափում, շարշարվում, ամբողջ դիշերներ չես քնում, միշտ մտածում ես, թե ինչպես անես, որ լավ լինի. և ի՞նչ։ Մի կողմից այս հասարակությունն է՝ տգետ, վայրենի։ Նրան տալիս եմ ամենալավ օպերետը, ֆեերիա, հիանալի կուպլետներ, բայց մի՞թե նրան այդ է հարկավոր։ Մի՞թե դրանից նա որևէ բան է հասկանում։ Նրան բալագան է պետք։ Նրան տուր դռեհիկ բան։ Մյուս կողմից՝ այս եղանակին նայեցեք։ Համարյա ամեն երեկո անձրև է գալիս։ Ինչպես որ մայիսի տասից սկսել է, այնպես էլ այնուհետև գնում է ամբողջ

մայիսն ու հունիսը, ուղղակի սոսկալի է։ Հասարակությունը չի գալիս. բայց ես հո վարձակալության փողը վճարո՞ւմ եմ։ Արտիստներին վճարո՞ւմ եմ։

Մյուս օրը երեկոյան դեմ դարձյալ սև ամպեր էին կուտակվում, և Կուկինը հիստերիկ քրքիջով ասում էր.

— Դեհ, ինչ արած։ Ո՛ւ թող գա։ Թող թեկուզ ամբողջ այգին հեղեղի, թեկուզ անձնապես ինձ էլ։ Թող ես լավ օր չտեսնեմ ո՛չ այս, ոչ էլ այն աշխարհում։ Թող արտիստներն իմ դեմ դատ բացեն։ Դատն ի՞նչ է։ Թող թեկուզ Սիբիր ուղարկեն, տաժանակիր աշխատանքի։ Թեկուզ քարշ տան կառափնարան։ Հա՛-հա՛-հա՛։

Նույնն էր և երրորդ օրը...

Օլենկան լուռ, լուրջ լսում էր Կուկինին և պատահում էր, որ աչքերում արցունք էր երևում։ Կուկինի անհաջողությունները վերջ ի վերջո շարժեցին նրա սիրտը, Օլենկան սիրեց նրան։

Կուկինը կարճահասակ էր, վտիտ, դեղին երեսով, քունքերի մազերը ետ սանրած, խոսում էր բարակ տենորով և խոսելիս բերանը ծռում էր, ու դեմքն էլ միշտ հուսահատության արտահայտություն ուներ, սակայն և այնպես նա Օլենկայի մեջ հարուցեց խսկական, խոր զգացմունք։ Օլենկան մշտապես սիրում էր որևէ մեկին և առանց դրան մնալ չէր կարող։ Առաջ նա սիրում էր հայրիկին, որն այժմ հիվանդ նստած էր մութ սենյակում, բաղնիքների վրա ու ծանր շնչում էր. սիրում էր իր մորաքրոջը, որ երբեմն՝ երկու տարին մեկ անգամ, գալիս էր Բրյանսկից, իսկ է՛լ ավելի առաջ, պրոգիմնազիայում սովորելիս, սիրում էր իրենց ֆրանսերենի ուսուցչին։ Օլենկան մի խաղաղաբարո, բարեհոգի, գթասիրտ օրիորդ էր՝ հեզ, մեղմ հայացքով, շատ առողջ։ Տղամարդիկ նայելով նրա լիքը, վարդագույն այտերին, փափկիկ, սպիտակ պարանոցին, որի վրա մի թուխ խալ կար, բարի, միամիտ ժպտին, որ խաղում էր նրա երեսին, երբ նա որևէ հաճելի բան էր լսում, մտածում էին. «Հա՛, վատը չէ»... ու նույնպես ժպտում էին. իսկ հյուր եկած տիկինները չէին կարողանում իրենց զսպել, որպեսզի խոսակցության միջոցին չբռնեն նրա ձեռքը և բուռն հրճվանքով շասեն.

— Հոգյա՛կս։

Այն տունը, որտեղ նա ապրում էր իր ծննդյան օրից և որը կտակի մեջ նրա անվանն էր գրված, գտնվում էր քաղաքի

ծայրին, Գնչուական արվարձանում, «Տիվոլի» պարտեզից ոչ հեռու. երեկոները և գիշերները նա լսում էր պարտեզի երաժշտության, ճայթյուններով պայթող հրթիռների ձայնը, և նրան թվում էր թե այդ Կուկինն է կռվում իր ճակատագրի դեմ ու գրոհով նվաճում իր գլխավոր թշնամուն՝ անտարբեր հասարակությանը. Օլենկայի սիրտը քաղցր ճմլվում էր, քունը բոլորովին չէր տանում, և երբ առավոտյան դեմ Կուկինը տուն էր վերադառնում, Օլենկան իր ննջարանից կամացուկ թիկացնում էր պատուհանը և վարագույրների միջով ցույց տալով նրան միայն իր դեմքը և մի ուսը, փաղաքշաբար ժպտում էր...

Կուկինն առաջարկություն արեց, և նրանք պսակվեցին։ Եվ երբ Կուկինը ինչպես պետք է տեսավ նրա պարանոցը և լիքը, առողջ ուսերը, շրխկացրեց ձեռքերը ու ասաց.

— Հոգյա՜կս։

Կուկինը երջանիկ էր, բայց քանի որ հարսանիքի օրը և ապա գիշերը անձրև եկավ, ուստի հուսահատության արտահայտությունը չհեռացավ նրա դեմքից։

Հարսանիքից հետո լավ ապրեցին։ Օլենկան նստում էր նրա դրամարկղի խցիկում, հետևում պարտեզի կարգապահությանը, գրանցում ծախսերը, ոռճիկ էր տալիս, և նրա վարդագույն այտերը, համակրելի, միամիտ ժպիտը, որ նման էր ճաճանչի, երևում էր մեկ դրամարկղի պատուհանում, մեկ կուլիսների հետևում, մեկ բուֆետում։ Եվ նա արդեն իր ծանոթներին ասում էր, որ ամենաուշագրավ, ամենակարևոր և անհրաժեշտ բանն աշխարհում թատրոնն է և որ իսկական հաճույք ստանալ և կրթված ու մարդասեր անձ դառնալ կարելի է միայն թատրոնում։

— Բայց մի՞թե հասարակությունը հասկանում է այդ,— ասում էր նա.— նրան հարկավոր է բալագան։ Երեկ մեզ մոտ ներկայացվում էր «Ֆաուստը շուտ տված», ու համարյա բոլոր օթյակները դատարկ էին, իսկ եթե Վանիչկայիս հետ մենք բեմադրած լինեինք որևէ մի գռեհիկ բան, հավատացեք, որ թատրոնը լիքը կլիներ։ Վաղը Վանիչկայիս հետ բեմադրում ենք «Օրֆեոսը դժոխքում», եկե՛ք։

Եվ ինչ որ ասում էր թատրոնի ու դերասանների մասին Կուկինը, նույնն էր կրկնում և նա։ Հասարակությանը նա նույնպես, ինչպես և Կուկինը, արհամարհում էր դեպի արվեստը տածած նրա անտարբերության և տգիտության համար, փոր-

ձերի ժամանակ միջամտում էր, ուղղում դերասաններին, հետևում երաժիշտների վարքին, և երբ տեղական լրագրում բացասական կարծիք էին հայտնում թատրոնի մասին, նա լաց էր լինում և ապա գնում էր խմբագրություն՝ բացատրվելու։

Դերասանները սիրում էին նրան և անվանում «Վանի՛չկաս ու ես» և «հոգյակ». նա էլ խղճում էր նրանց և փոքրիկ գումարներով պարտք էր տալիս ու թե պատահում էր, որ նրան խաբում էին, նա միայն ծածուկ լալիս էր, բայց ամուսնուն չէր գանգատվում։

Ձմեռն էլ լավ ապրեցին։ Քաղաքային թատրոնը վարձել էին ամբողջ ձմեռվա համար ու կարճ ժամկետներով վարձով էին տալիս մե՛րթ մալոռուսական թատերախմբին, մե՛րթ ֆոկուսնիկին, մե՛րթ տեղական սիրողներին։ Օլենկան գիրանում էր և իր ողջ էությամբ փայլում բավականությունից, իսկ Կուկինը նիհարում էր, դեղնում ու գանգատվում սոսկալի վնասներից, թեև ամբողջ ձմեռը գործերը վատ չընթացան։ Կուկինը գիշերները հաղում էր, և Օլենկան նրան մորու և լորենու ծաղկի հյութ էր խմեցնում, օդեկոլոն քսում ու շփում, իր փափուկ շալերով փաթաթում։

— Ի՞նչ հիանալի ես դու,— ասում էր նա կատարյալ անկեղծությամբ, Կուկինի մազերը սղալելով,— ի՞նչ լավն ես։

Մեծ պասին Կուկինը գնաց Մոսկվա՝ խումբ կազմելու, իսկ Օլենկան առանց նրան չէր կարողանում քնել, ամբողջ ժամանակ նստում էր պատուհանի մոտ և նայում աստղերին։ Եվ այդ ժամանակ նա իրեն համեմատում էր հավերի հետ, որոնք նույնպես ողջ գիշերը չեն քնում և անհանգստություն են զգում, երբ հավաքնում աքաղաղ չի լինում։ Կուկինը Մոսկվայում ուշացավ և գրում էր, որ կվերադառնա սուրբ հարությանը, ու նամակներում արդեն կարգադրություններ էր անում «Տիվոլիի» վերաբերմամբ։ Բայց չարչարանաց երկուշաբթիի նախօրյակին, ուշ երեկոյան հանկարծ հնչեց դարբասի մի չարագուշակ բախում. մեկը բախում էր դռնակը, ասես տակառի էր խփում. դը՛մբ, դը՛մբ, դը՛մբ։ Քնաթաթախ խոհարարուհին բոբիկ ոտքերը լճակներում չլմփացնելով՝ վազեց դուռը բաց անելու։

— Դուռը բացեք, շնորհ արեք,— խուլ, թավ ձայնով ասում էր մեկը դարբասի հետևից։— Ձեզ հեռագիր կա։

Օլենկան առաջներում էլ հեռագրեր ստանում էր ամուս-

նուց, բայց հիմա, չգիտես ինչու, ողջ էությամբ կարմրեց։ Դողդողացող ձեռքերով նա բաց արեց հեռագիրը և կարդաց հետևյալը.

«Իվան Պետրովիչն այսօր հանկարծամահ եղավ շուշապ սպասում ենք կարգադրության խաղումը երեքշաբթի»։

Հեռագրում այդպես էլ տպագրված էր՝ «խաղումը» և էլի մի ինչ-որ անհասկանալի բառ՝ «շուշապ». ստորագրել էր օպերետային խմբի ռեժիսորը։

— Ի՜մ սիրելի,— հեկեկաց Օլենկան։— Իմ ազի՜զ Վանիչկա, սիրելի՜դ իմ։ Ինչո՞ւ ես պատահեցի քեզ։ Ինչո՞ւ ճանաչեցի քեզ և սիրեցի։ Դու ո՞ւմ խնամքին ձդեցիր քո խեղճ Օլենկային, քո անճար-անբախտին...

Կուկինին թաղեցին երեքշաբթի օրը, Մոսկվայում, Վագանկովյան գերեզմանոցում։ Օլենկան տուն վերադարձավ չորեքշաբթի օրը և հենց որ իր սենյակը մտավ, ընկավ անկողնի վրա ու այնպես բարձր հեկեկաց, որ ձայնը լսվում էր փողոցում ու հարևան տներում։

— Հոգյա՜կ,— ասում էին հարևանուհիները՝ երեսները խաչակնքելով։— Հոգյա՜կ Օլգա Սեմյոնովնա, խե՜ղճ կին, ինչպե՜ս է մորմոքվում։

Երեք ամիս անց Օլենկան մի անգամ վերադառնում էր պատարագից՝ տրտում, խոր սգի մեջ։ Այնպես պատահեց, որ նրա հետ կողք-կողքի էր գնում նույնպես եկեղեցուց վերադարձող նրա հարևաններից մեկը՝ Վասիլի Անդրեյիչ Պուստովալովը, որ Բաբական վաճառականի փայտեղենի պահեստի կառավարիչն էր։ Նա կրում էր ծղոտե գլխարկ և սպիտակ ժիլետի վրայից ժամացույցի ոսկե շղթա ու ավելի շուտ նման էր կալվածատիրոջ, քան առևտրականի։

— Ամեն բան իր կարգն ունի, Օ՛լգա Սեմյոնովնա,— ասում էր նա ծանրաբարո, ձայնի կարեկցական շեշտով.— և եթե մեր մերձավորներից մեկը մեռնում է, նշանակում է աստված այդպես է կամեցել, և այս դեպքում մենք պետք է մեզ չմոռանանք ու հեզաբար տոկանք։

Օլենկային ուղեկցելով մինչև դռնակը՝ նա հրաժեշտ տվեց ու շարունակեց իր ճանապարհը։ Դրանից հետո ամբողջ օրն Օլենկայի ականջին հնչում էր նրա ծանրաբարո ձայնը, ու հենց որ նա փակում էր աչքերը, իսկույն նրան պատկերանում էր Պուստովալովի թուխ մորուքը։ Նա Օլենկային շատ էր դուր

եկել։ Եվ, ըստ երևույթին, Օլենկան ևս տպավորություն էր թողել նրա վրա, որովհետև, փոքր-ինչ անց Օլենկայի մոտ սուրճ խմելու եկավ նրան քիչ ծանոթ մի տարիքով տիկին, որը հենց սեղան նստեց թե չէ, առանց հապաղելու խոսեց Պուստովալովի մասին, որ նա լավ, սոլիդ մարդ է, և որ ամեն մի հարսնացու հաճույքով կամուսնանա նրա հետ։ Երեք օր հետո այցելության եկավ և ինքը Պուստովալովը. նա կարճ նստեց, մի տասը բոպե ու քիչ խոսեց, բայց Օլենկան սիրեց նրան, այնպես սիրեց, որ ողջ գիշեր չքնեց ու այրվում էր՝ ասես ջերմելիս լիներ, իսկ առավոտյան մարդ ուղարկեց տարիքով տիկնոջ հետևից։ Շուտով կայացավ նրա հարսնախոսությունը, ապա նաև՝ հարսանիքը։

Պուստովալովն ու Օլենկան ամուսնանալուց հետո լավ ապրեցին։ Սովորաբար Պուստովալովը պահեստում նստում էր մինչև կեսօր, հետո գործերով դուրս էր գնում ու նրան փոխարինում էր Օլենկան, որը գրասենյակում նստում էր մինչև երեկո և այնտեղ հաշիվներ էր գրում ու ապրանք բաց թողնում։

— Հիմա փայտեղենը տարին քսան տոկոս թանկանում է,— ասում էր նա գնորդներին ու ծանոթներին։— Չէ՞ որ մենք առաջ ծախում էինք տեղական փայտեղեն, իսկ հիմա Վասիչկան ստիպված է ամեն տարի փայտեղենի համար գնալ Մոգիլևի նահանգը։ Իսկ ի՞նչ տարիֆներ են,— ասում էր նա, սարսափից երկու այտերը ձեռքերով ծածկելով։— Ի՜նչ տարիֆներ։

Օլենկային թվում էր, թե ինքը արդեն վաղուց, շատ վաղուց փայտեղեն է ծախում, թե կյանքում ամենակարևորն ու անհրաժեշտը փայտեղենն է, և նրա համար ինչ-որ հարազատ, սրտաշարժ բան կար հեծան, կլորկող, տախտակացու, երեսկալ, չափասկաս, շերտափայտ, լաֆետ, կողանք բառերի մեջ... Գիշերները, քնած ժամանակ երազում նա տեսնում էր տախտակի ու տախտակացուի սարեր, սայլերի երկար, անվերջ շարաններ, որոնք փայտեղեն էին կրում քաղաքից դուրս, ինչ-որ հեռու տեղեր. նա երազում տեսնում էր, թե ինչպես տասներկու արշինանոց, հինգ վերշոկանոց գերանների մի ամբողջ գունդ ցից եղած՝ կռվի էր գալիս փայտի պահեստի վրա, ինչպես գերանները, հեծանները և կողանքը զարկվում են իրար՝ չոր փայտի հնչեղ ձայն հանելով, ինչպես բոլորը ցած է թափվում ու դարձյալ բարձրանում իրար վրա ընկնելով. Օլենկան

քնի մեջ ճչում էր, ու Պուստովալովը քնքշաբար ասում էր նրան.

— Օ՛լենկա, քեզ ի՞նչ պատահեց, սիրելի՛ս։ Խաչակնքի՛ր երեսդ։

Ինչ մտքեր ուներ ամուսինը, նույնն ուներ և նա։ Եթե ամուսինը կարծում էր, որ սենյակում շոգ է կամ որ հիմա գործերի ընթացքը դանդաղել է, այդպես էր մտածում և նա։ Նրա ամուսինը ոչ մի զվարճություն չէր սիրում և տոներին տանն էր նստում. այդպես էր վարվում և նա։

— Դուք միշտ տանն եք կամ դրասենյակում,— ասում էին ծանոթները։— Մի թատրոն գնայինք, հոգյա՛կս, կամ կրկես։

— Ես ու Վասիչկաս թատրոններ գնալու ժամանակ չունենք,— լուրջ տոնով պատասխանում էր Օլենկան։— Մենք աշխատող մարդիկ ենք, դատարկ բաներով զբաղվել չենք կարող։ Այդ թատրոններում ի՞նչ լավ բան կա որ։

Շաբաթ օրերը Պուստովալովն ու Օլենկան գնում էին երեկոյան ժամերգության, տոներին՝ առավոտյան պատարագի և վերադարձին քայլում էին կողք-կողքի, երանություն արտահայտող դեմքերով, երկուսի վրայից էլ անուշ հոտ էր բուրում, և Օլենկայի մետաքսե հագուստը հաճելի խշխշում էր, իսկ տանը էաթնահունց հացով ու զանազան մուրաբաներով թեյ էին խմում, ապա կարկանդակ ուտում։ Ամեն օր կեսօրին նրանց բակից և դարպասի շրջակայքում, փողոցում, բորշչի ու տապակած ոչխարի մսի կամ բադի, իսկ պաս օրերին ձկան ախորժելի հոտ էր գալիս, այնպես որ նրանց դարբասի մոտով չէր կարելի անցնել առանց ախորժակը գրգռելու։ Դրասենյակում միշտ եռում էր ինքնաեռը, և գնորդներին հյուրասիրում էին թեյով ու օղարյիթով։ Շաբաթը մեկ անգամ ամուսինները բաղանիք էին գնում և այնտեղից վերադառնում էին կողքկողքի քայլելով, երկուսն էլ կարմրած։

— Ոչինչ, լավ ենք ապրում,— ասում էր Օլենկան ծանոթներին։— Փա՜ռք աստծու։ Տա՛ աստված, բոլորն էլ այնպես ապրեն, ինչպես ես ու Վասիչկաս ենք ապրում։

Երբ Պուստովալովը մեկնում էր Մոգիլևի նահանգը փայտեղեն բերելու, Օլենկան սաստիկ տխրում էր ու գիշերները չէր քնում, լաց էր լինում։ Երբեմն երեկոները նրա մոտ էր գալիս կնոջի անասնաբույժ Սմիրնինը՝ Օլենկայենց կցաշենքում ապրող մի երիտասարդ։ Սմիրնինը որևէ բան էր պատմում նրան կամ

հետը թուղթ խաղում, և այդ զվարճացնում էր Օլենկային։ Հատկապես հետաքրքրական էին երիտասարդի սեփական ընտանեկան կյանքից պատմած դեպքերը։ Նա ամուսնացած էր և տղա ուներ, բայց կնոջից հեռացել էր, որովհետև նա դավաճանել էր իրեն, ու հիմա Սմիրնինը ատում էր նրան և ամսական քառասուն ռուբլի փող էր ուղարկում իր որդուն պահելու համար։ Եվ այս մասին լսելիս Օլենկան հոգոց էր հանում ու գլուխն օրորում. նա խղճում էր Սմիրնինին։

— Է՛հ, աստված ձեզ հասնի,— ասում էր Օլենկան, նրան հրաժեշտ տալով և մոմը ձեռքին մինչև սանդուղքը ճանապարհ դնելով։— Շնորհակալ եմ, որ ձանձրացաք ինձ հետ. աստված ձեզ առողջություն տա, երկնային թագուհին...

Եվ միշտ նա արտահայտվում էր այդպես լուրջ տոնով, այդպես խոհականորեն ամուսնուն նմանվելով. անասնաբույժն արդեն ներքևում դռնից դուրս եկած էր լինում ու էլ չէր երևվում, իսկ Օլենկան նրան ձայն էր տալիս, ասում.

— Գիտե՛ք, Վլադիմի՛ր Պլատոնիչ, դուք լավ կանեիք հաշտվեիք ձեր կնոջ հետ։ Ներեիք նրան գոնե ի սեր ձեր որդու... Երեխան երևի բոլորը հասկանում է։

Իսկ երբ Պուստովալովը վերադառնում էր, Օլենկան կիսաձայն պատմում էր նրան անասնաբույժի և նրա դժբախտ ընտանեկան կյանքի մասին ու երկուսով հոգոց էին հանում, օրորում գլուխները և խոսում էին երեխայի մասին, որ երևի կարոտում է հորը, հետո մտքերի ինչ-որ տարօրինակ ընթացքի մղումով նրանք ծունկ էին չոքում սրբապատկերների առաջ, ծունկ գնում ու աղոթում, որ աստված իրենց զավակներ պարգևի։

Եվ այսպես խաղաղ ու հեզ, սիրով ու կատարելապես համերաշխ ապրեցին Պուստովալովները վեց տարի։ Բայց ահա մեկ անգամ ձմեռ ժամանակ Վասիլի Անդրեյիչը պահեստում տաք թեյ խմելուց հետո առանց գդակը դնելու դուրս գնաց փայտեղեն բաց թողնելու, մրսեց ու հիվանդացավ։ Թեպետ նրան բժշկում էին լավագույն բժիշկները, բայց հիվանդությունը հաղթեց, և նա չորս ամիս հիվանդ պառկելուց հետո մեռավ։ Եվ Օլենկան վերստին այրիացավ։

— Ո՞ւմ խնամքին թողեցիր ինձ, սիրելի՛ս,— ողբում էր նա՝ ամուսնուն թաղելուց հետո։— Ես հիմա ինչպե՞ս պետք է

ապրեմ տառից քեզ, դառը դատարկ ու դժբախտ։ Բարի՛ մարդիկ, խղճացե՛ք ինձ, անտեր-անտիրական որբիս...

Նա հագնում էր սգո նշաններով սև զգեստ և արդեն ընդմիշտ հրաժարվել էր գլխարկից ու ձեռնոցից, անից հազվադեպ էր դուրս գալիս՝ միայն եկեղեցի գնալու ու ամուսնու գերեզմանն այցելելու համար, և ապրում էր տանն ինչպես միանձնուհի։ Եվ միայն երբ վեց ամիս սնցավ, նա հանեց սգո նշանները և սկսեց բաց անել պատուհանների խլափեղկերը։ Երբեմն առավոտները տեսնում էին, թե ինչպես խոհարարուհու հետ գնում է շուկա՝ մթերք գնելու, իսկ թե տանը հիմա ինչպե՞ս է ապրում և այնտեղ ի՞նչ է կատարվում, կարելի էր միայն զուշակել։ Օրինակ՝ եզրակացնում էին, հիմնվելով այն բանի վրա, որ տեսնում էին, թե ինչպես նա իր պարտեզում թեյ է խմում անասնաբույժի հետ, իսկ սա բարձրաձայն լրագիր է կարդում նրա համար ու մեկ էլ այն բանի հիման վրա, որ փոստում իրեն ծանոթ մի տիկնոջ հանդիպելով՝ նա ասել էր.

— Մեր քաղաքում կանոնավոր անասնաբուժական հսկողություն չկա ու դրանից շատ հիվանդություններ են առաջանում։ Մի գլուխ լսում եմ, թե ինչպես մարդիկ հիվանդանում են կաթից և վարակվում ձիերից ու կովերից։ Ընտանի կենդանիների առողջության մասին, իսկապես ասած, պետք է հոգալ այնպես, ինչպես մարդկանց մասին։

Օլենկան կրկնում էր անասնաբույժի մտքերը և հիմա ամեն ինչի մասին նույն կարծիքին էր, ինչ և նա։ Պարզ էր, որ նա մինչև անգամ մեկ տարի չի կարող ապրել առանց մտերմական կապի և իր նոր բախտը գտել է իր իսկ կցաշենքում։ Այդպիսի բանի համար ուրիշին կդատապարտեին, բայց Օլենկայի մասին ոչ ոք վատ բան մտածել չէր կարող, և նրա կյանքում ամեն ինչ այնպես հասկանալի էր։ Իրենց հարաբերությունների մեջ տեղի ունեցած փոփոխության մասին Օլենկան ու անասնաբույժը ոչ ոքի ոչինչ չէին ասում և ջանում էին թաքցնել այն, բայց այդ նրանց չէր հաջողվում, որովհետև Օլենկան գաղտնիք ունենալ չէր կարող։ Երբ Սմիրնինի պաշտոնակիցները նրան հյուր էին գալիս, Օլենկան նրանց համար թեյ լցնելիս կամ ընթրիք մատուցելիս սկսում էր խոսել եղջերավոր անասունների ժանտախտի, ընտանի կենդանիների և թռչունների տուբերկուլյոզի, քաղաքային սպանդանոցի մասին, իսկ անասնաբույժը խիստ անհարմար էր զգում, և երբ հյուրերը

գնում էին, բռնում էր նրա ձեռքը և բարկացած ֆշշացնում.

— Չէ՞ որ ես քեզ խնդրել եմ չխոսել այն բաների մասին, որ դու չես հասկանում։ Երբ մենք, անասնաբույժներս, խոսում ենք մեր մեջ, դու, խնդրեմ, չխառնվես։ Այդ, վերջապես, ձանձրալի է։

Իսկ Օլենկան զարմացած ու անհանգիստ նայում էր նրան և հարցնում.

— Վոլոդի՛կ, հապա ես էլ ինչի՞ մասին խոսեմ։

Եվ արցունքն աչքերին՝ գրկում էր նրան, աղերսում չբարկանալ, ու նրանք իրենց բախտավոր էին զգում։

Սակայն այդ բախտավորությունը երկար չտևեց։ Անասնաբույժը գնչի հետ մեկնեց և մեկնեց ընդմիշտ, քանի որ գունդը փոխադրեցին շատ հեռու մի տեղ, համարյա Սիբիր։ Եվ Օլենկան մնաց մենակ։

Այժմ նա արդեն բոլորովին մենակ էր։ Հայրը վաղուց էր մեռել, և նրա բազկաթոռն ընկած էր ձեղնահարկում՝ փոշոտված, մի ոտը կոտրած։ Օլենկան նիհարել էր ու տգեղացել, և փողոցում հանդիպողները այլևս առաջվա պես չէին նայում նրան, չէին ժպտում. ակներևաբար լավագույն տարիքն արդեն անցել էր, մնացել հետևում, ու հիմա սկսվում էր մի նոր, անծանոթ կյանք, որի մասին ավելի լավ էր չմտածել։ Երեկոները Օլենկան նստում էր նախամուտքում և լսում «Տիվոլիի» երաժշտությունն ու հրթիռների պայթյունը. բայց այդ ամենն էլ նրա մեջ ոչ մի միտք չէր արթնացնում։ Նա անկարեկից նայում էր իր դատարկ բակին, ոչինչ չէր մտածում, ոչինչ չէր ցանկանում ու հետո, երբ գիշեր էր գալիս, գնում էր քնելու և երազում տեսնում էր իր դատարկ բակը։ Ուտում և խմում էր նա առանց ախորժակի։

Իսկ գլխավորը և ամենից վատն այն էր, որ նա այլևս ոչ մի կարծիք չուներ։ Նա իր շուրջն առարկաներ էր տեսնում և ըմբռնում այն ամենը, ինչ շրջապատում կատարվում էր, բայց ոչ մի բանի մասին չէր կարողանում կարծիք կազմել և չգիտեր, թե ինչի մասին խոսի։ Իսկ ի՞նչ սոսկալի բան է, երբ մարդ ոչ մի կարծիք չունի։ Օրինակ՝ տեսնում ես, ինչպես է շիշը դրված, կամ ինչպես անձրև է գալիս, կամ մուժիկը սայլ նստած գնում է, բայց թե ինչի համար է այդ շիշը կամ անձրևը, կամ մուժիկը և ինչ իմաստ ունեն նրանք՝ ասել չես կարող ու մինչև անգամ հազար մանեթ էլ որ տան, չպետք է

կարողանաս։ Կուկինի, Պուստովալովի ու հետո էլ անասնաբույժի օրով Օլենկան կարող էր բացատրել ամեն ինչ և իր կարծիքը կասեր ինչի մասին կամենաս, իսկ հիմա թե նրա մտքերում և թե սրտում նույնպիսի դատարկություն էր, ինչպես և բակում։ Եվ այնպիսի սարսափ, այնպիսի դառնություն էր զգում, ասես չափից դուրս շատ օշինդր կերած լիներ։

Քաղաքը կամաց-կամաց տարածվում էր դեպի բոլոր կողմերը. Գնչուական Արվարձանն արդեն փողոց էին անվանում, և այնտեղ, ուր առաջ «Տիվոլի» պարտեզն էր ու փայտեղենի պահեստները, արդեն տներ էին բարձրացել ու մի շարք նըրբանցքներ գոյացել։ Ի՞նչ արագ է վազում ժամանակը։ Օլենկայի տունը մթնագունել է, տանիքը՝ ժանգոտել, ցախատունը՝ թեքվել, և ամբողջ բակը ծածկել է մոլախոտն ու փշփշուտ եղինջը։ Ինքն Օլենկան պառավել է ու տգեղացել. ամառը նա նստում է նախամուտքում և նրա հոգում առաջվա պես տիրում է և՛ դատարկություն, և՛ տաղտկություն, և նրանից օշինդրի հոտ է գալիս, իսկ ձմեռը նա նստում է պատուհանի առաջ ու նայում ձյունին։ Ու թե գարնան հոտ է փչում կամ քամին տաճարի զանգերի ձայնն է հասցնում նրա ականջին, հանկարծ հորդում են անցյալի հուշերը, սիրտը քաղցր սեղմվում է, և աչքերից հորդ արցունքներ են թափվում, բայց այդ տևում է միայն մեկ րոպե, այնուհետև նորից դատարկություն է տիրում, ու չի իմանում, թե ինչու է ապրում։ Սև կատուն՝ Բոխսկան, քծնում է նրան ու մեղմ մռռացնում, բայց այդ կատվային փաղաքշանքները Օլենկային չեն հուզում։ Մի՞թե նրան այդ է պետք։ Նրան պետք է այնպիսի մի սեր, որ համակի նրա ողջ էությունը, ամբողջ հոգին, բանականությունը, տա նրան մըտքեր, կյանքի ուղղություն, ջերմացնի նրա ծերացող արյունը։ Եվ նա կոդից թոթափում է սև Բոխսկային ու տհաճ ասում նրան.

— Գնա՛, գնա՛... Վա՛զ անցի։

Եվ այսպես օրը օրի հետևից, տարին տարու հետևից, ու ո՛չ մի խնդություն, և չկա ո՛չ մի կարծիք։ Ինչ որ ասեր խոհարարուհի Մավրան, այդ էր լավը։

Բայց հուլիսյան մի շոգ օր, իրիկնապահին, երբ փողոցով քաղաքի նախիրն էին քշում, ու ամբողջ բակը լցվել էր փոշու ամպերով, հանկարծ մեկը թակեց դռնակը։ Օլենկան ինքը գնաց բաց անելու և հենց որ նայեց, խոր հուզմունքից կարկամեց մնաց. դարբասի առաջ կանգնած էր անասնաբույժ Սմիրնինը՝ արդեն ալևորած ու հագին քաղաքացիական հագուստ։ Օլենկան հանկարծ վերհիշեց բոլորը, իրեն զսպել չկարողացավ, լացեց, առանց մի խոսք ասելու գլուխը դրեց նրա կրծքին և սաստիկ հուզմունքից չնկատեց, թե ինչպես հետո երկուսն էլ տուն մտան, ինչպես նստեցին թեյ խմելու։

— Ի՞մ սիրելի,— մրմնջում էր Օլենկան՝ ուրախությունից դողալով։— Վլադիմի՛ր Պլատոնիչ։ Բարով-խերով այս որտեղի՞ց։

— Ուզում եմ բոլորովին այստեղ բնակվել,— պատմեց նա։— Հրաժարական տվեցի և ահա եկել եմ բախտս փորձեմ ծառայությունից ազատ կյանքում, եկել եմ նստակյաց կյանք վարելու։ Ասենք, որդուս էլ արդեն գիմնազիա տալու ժամանակն է։ Մեծացել է։ Ես, գիտեք, հաշտվել եմ կնոջս հետ։

— Իսկ նա որտե՞ղ է,— հարցրեց Օլենկան։

— Նա որդուս հետ հյուրանոցումն է, իսկ ես ահավասիկ ման եմ գալիս ու բնակարան եմ փնտրում։

— Տե՛ր աստված, օգորմած հեր, դե իմ տունը վերցրեք, էլի՛։ Ի՞նչ պակաս բնակարան է։ Ա՛խ, տե՛ր աստված, ես ձեզանից վարձ էլ չեմ վերցնի,— հուզվեց Օլենկան ու նորից լաց եղավ։— Այստեղ ապրեցեք, իսկ ինձ կցաշենքն էլ բավական է։ Ի՞նչ ուրախություն է, տե՛ր աստված։

Մյուս օրն արդեն ներկում էին տան տանիքը և սպիտակացնում պատերը, և Օլենկան թևերը կանթած շրջում էր բակում և կարգադրություններ անում։ Նրա դեմքին փայլում էր նախկին ժպիտը, և նա ողջ էությամբ աշխուժացել էր, թարմացել, ասես երկարատև քնից սթափվել։ Եկավ անասնաբույժի կինը՝ նիհար, տգեղ, կարճ մազերով ու դեմքի քմահաճ արտահայտությամբ մի տիկին ու նրա հետ տղան՝ Սաշան, իր տարիքին համեմատ (նա արդեն ինը տարին լրացրել, մտել էր տասի մեջ) շատ փոքրամարմին, գիրուկ, երկնագույն, վճիտ աչքերով ու այտերին փոսիկներ։ Ու տղան հազիվ էր բակ մտել, որ վազեց կատվի հետևից, և իսկույն լսվեց նրա ուրախ, հրճվալից ծիծաղը։

— Մորաքո՛ւր, այս ձեր կատո՞ւն է,— հարցրեց նա Օլենկային։— Երբ նա ձագ բերի, խնդրում եմ, մի հատը մեզ նվիրեք։ Մայրիկս մկներից շատ է վախենում։

Օլենկան զրուցեց նրա հետ, թեյ խմեցրեց, ու հանկարծ սիրտը տաքացավ նրա կրծքում և հաճելի սեղմվեց, ասես այդ տղան իր հարազատ որդին լիներ։ Եվ երբ երեկոյան սեղանա-

տանը նստած նա իր դասերն էր կրկնում, Օլենկան խանդաղատագին ու կարեկցանքով նայում էր նրան ու շշնջում.

— Աղավնյա՛կս, սիրունի՛կ...բալի՛կս,այդ ի՞նչ խելոք, ի՞նչ սպիտակն ես դուրս եկել դու։

— Կղզի կոչվում է,— կարդաց տղան,— ցամաքի այն մասը, որ բոլոր կողմերից շրջապատված է ջրով։

— Կղզի կոչվում է ցամաքի այն մասը...— կրկնեց Օլենկան, և այդ նրան առաջին կարծիքն էր, որ վստահ արտահայտեց նա այսքան տարվա լռությունից ու մտքերում իշխող դատարկությունից հետո։

Եվ նա արդեն ուներ իր կարծիքներն, ու ընթրիքի ժամանակ Սաշայի ծնողների հետ խոսում էր այն մասին, որ երեխաների համար գիմնազիաներում սովորելը հիմա շատ դժվար է, սակայն և այնպես դասական կրթությունը ռեալականից լավ է, քանի որ գիմնազիայից հետո բոլոր ճանապարհները բաց են՝ կուզես գնա դարձիր բժիշկ, կուզես՝ ինժեներ։

Սաշան սկսեց գնալ գիմնազիա։ Նրա մայրը գնաց խարկով՝ իր քրոջ մոտ և էլ չվերադարձավ. հայրն էլ ամեն օր ճանապարհվում էր ինչ-որ տեղ՝ նախիրների անասուններին քննելու և պատահում էր, որ երեքական օրով տանը չէր լինում, ու Օլենկային թվում էր, թե Սաշային բոլորովին երեսի վրա են ձգել, թե նա տան մեջ ավելորդ է, թե նա քաղցից մեռնում է. և Օլենկան նրան փոխադրեց իր տունը ու տեղավորեց փոքրիկ սենյակում։

Եվ ահա արդեն կես տարի է անցել, ինչ Սաշան ապրում է Նրա մոտ՝ կցաշենքում։ Ամեն առավոտ Օլենկան մտնում է նրա սենյակը. նա խոր քնած է լինում՝ ձեռքն այտի տակը դրած, չի շնչում. Օլենկայի մեղքը գալիս է, թե նրան զարթեցնի։

— Սաշի՛կ,— ասում է նա տրտում,— վե՛ր կաց, աղավնյա՛կս։ Գիմնազիա գնալու ժամանակն է։

Սաշան վեր է կենում, հագնվում, աղոթում աստծուն, ապա նստում է թեյ խմելու. խմում է երեք բաժակ թեյ և ուտում երկու մեծ օղաբլիթ ու կես ֆրանսիական հաց կարագով։ Նա դեռևս քնից լիովին չի սթափվել, ուստի և տրամադրությունը տեղը չէ։

— Բայց դու, Սաշի՛կ, առակը լավ չես սովորել,— ասում է Օլենկան և այնպես է նայում նրան, ասես ուղարկում է երկար ճանապարհորդության։ — Հոգս ես տալիս ինձ։ Ջանք թափիր, աղավնյա՛կս, սովորի՛ր... Լսի՛ր ուսուցիչներիդ։

— Ա՛խ, թողե՛ք, խնդրեմ, —ասում է Սաշան։

Ապա նա փողոցով գնում է գիմնազիա՝ ինքը փոքր, բայց գլխին մեծ գլխարկ, մեջքին պայուսակ կապած։ Նրա հետևից անաղմուկ գնում է Օլենկան։

— Սաշի-ի՛կ — ձայն է տալիս Օլենկան։

Սաշիկը ետ է նայում, իսկ Օլենկան խուրմա կամ կարամել է խոթում նրա բուռը։ Երբ ծռվում են այն նրբանցքը, որտեղ գիմնազիայի շենքն է, Սաշան անհարմար է զգում, որ այդ բարձրահասակ, դիրուկ կինը իր հետևից է գնում. նա շուռ է գալիս, ասում է.

— Դո՛ւք, մորաքո՛ւյր, տուն գնացեք, հիմա ես ինքս տեղ կհասնեմ։

Օլենկան կանգ է առնում և անթարթ նայում է նրա հետևից,մինչև որ նա ծածկվում է գիմնազիայի շքամուտքում։ Ա՛խ, նա ինչքան է սիրում այդ երեխային։ Նրա նախկին մտերմական կապերից և ո՛չ մեկն այդքան խոր չի եղել, նրա հոգին առաջներում դեռ երբեք չի նվիրվել այնպես անվերապահ, անկաշառ ու այնպիսի խնդությամբ, ինչպես հիմա, երբ նրա մեջ գնալով ավելի ու ավելի է բորբոքվում մայրական զգացմունքը։ Ի սեր այս օտար երեխայի, ի սեր նրա այտերի փոսիկների, նրա գլխարկի, նա կզոհեր իր ամբողջ կյանքը, կզոհեր ուրախությամբ. գորովանքի արցունքներն աչքերին։ Ինչո՞ւ։ Իսկ ո՞վ գիտի, թե ինչու։

Սաշային գիմնազիա տանելուց հետո, նա հանդարտ տուն է վերադառնում՝ այնքան գոհ, հանգիստ, սիրտը սիրով լի. նրա դեմքը վերջին կես տարվա ընթացքում երիտասարդացել է, ժպտում է, փայլում. հանդիպողները, նրան նայելով, բավականություն են զգում և ասում են նրան։

— Բարև՛ ձեզ, հոգյա՛կ Օլգա Սեմյոնովնա։ Ինչպե՞ս եք, հոգյա՛կս։

— Հիմա գիմնազիայում սովորելը դժվարացել է,— պատմում է նա շուկայում։— Հանաք բա՞ն է, երեկ առաջին դասարանում տվել են անգիր անելու մի առակ, հետո մի թարգմանություն լատիներենից, մի խնդիր... Դե՛, փոքրիկի ուժերն ի՞նչ կպատեն։

Եվ նա սկսում է խոսել ուսուցիչների, դասերի, դասագրքերի մասին. հենց նույնը, ինչ որ ասում է դրանց մասին Սաշան։

Ժամը երկուսն անց միասին ճաշում են, երեկոյան միասին են պատրաստում դասերը և լաց լինում։ Սաշային անկողին դնելով՝ Օլենկան երկար խաչակնքում է նրան և աղոթք մրմնջում, հետո, երբ պառկում է քնելու, երազում է այն հեռավոր ու մշուշապատ ապագան, երբ Սաշան, դասընթացն ավարտելով՝ կդառնա բժիշկ կամ ինժեներ, կունենա իր սեփական մեծ տունը, ձիերը, կառքը, կամուսնանա ու կունենա երեխաներ... Օլենկան քնում է և քնած ժամանակ էլ շարունակում է մտածել այդ բանի մասին, և արցունքները նրա փակ աչքերից հոսում են այտերով։ Ու սև կատուն էլ, նրան մոտիկ պառկած, մրոտացնում է.

— Մը՞ռ... մը՞ռ... մը՞ռ...

Հանկարծ լսվում է դռնակի ուժեղ բախյուն։ Օլենկան արթնանում է ու ահից շունչը պահում. նրա սիրտն ուժգին բաբախում է։ Անցնում է կես րոպե, նորից բախյուն։

«Հեռագիր է եկել Խարկովից,— մտածում է նա, ամբողջ մարմնով դողալ սկսելով։— Մայրը պահանջում է Սաշային ուղարկել իր մոտ՝ Խարկով... Օ՜, տեր աստվա՜ծ»։

Նա հուսահատության մեջ է. նրա գլուխը, ոտքերը, ձեռքերը սառչում են, ու թվում է, թե ողջ աշխարհում իրենից զժբախտ մարդ չկա։ Բայց անցնում է ևս մեկ րոպե, ձայներ են լսվում. այդ անասնաբույժն է ակումբից տուն վերադարձել։

«Դե՛, փա՜ռք աստծուն»,— մտածում է Օլենկան։

Ծանր բեռն աստիճանաբար գլորվում է կրծքից, սիրտը նորից է թեթևանում. Նա պառկում է և մտածում Սաշայի մասին, որը խոր քնով քնած է հարևան սենյակում և երբեմն-երբեմն զառանցելով ասում է.

— Ե՛ս ք-քեզ։ Դեն կորիր։ Մի՛ կռվիր։

1899

ՇՆԻԿՈՎ ՏԻԿԻՆԸ

I

Խոսում էին, թե ծովափում հայտնվել է մի նոր անձնավորություն՝ մի տիկին շնիկը հետը։ Դմիտրի Դմիտրիչ Գուրովը, որ արդեն երկու շաբաթ է, ինչ Յալթայում էր ու ընտելացել էր միջավայրին, նույնպես սկսել էր հետաքրքրվել նոր անձնավորություններով։ Վեռնեի պավիլիոնում նստած, նա տեսավ, թե ինչպես ծովափով մի երիտասարդ տիկին անցավ, ոչ բարձրահասակ, շիկահեր, բերետով. նրա հետևից վազում էր սուր դնչով մի սպիտակ շնիկ։

Այնուհետև նա տիկնոջը հանդիպում էր քաղաքային այգում և պուրակում, օրական մի քանի անգամ։ Տիկինը միշտ մենակ էր զբոսնում, միշտ նույն բերետը գլխին, սպիտակ շնիկը հետը. ոչ ոք չգիտեր, թե ով է նա, և նրան ուղղակի անվանում էին շնիկով տիկին։

«Եթե նա այստեղ առանց ամուսնու ու ծանոթների է,— մտածում էր Գուրովը,— վատ չի լինի, որ հետը ծանոթանամ»։

Նա դեռ քառասուն տարեկան չկար, բայց արդեն տասներկու տարեկան մի աղջիկ և երկու գիմնազիստ որդի ուներ։ Նրան ամուսնացրել էին վաղ, երբ դեռ երկրորդ կուրսի ուսանող էր, և այժմ կինը նրանից մեկուկես անգամ ավելի տարիքով էր երևում։ Դա մի բարձրահասակ, թուխ հոնքերով, ուղիղ մարմնով, պատկառելի, ծանրաբարո և, ինչպես ինքն էր իր մասին ասում, մտածող կին էր։ Նա շատ էր կարդում, նամակներում Ъ տառը չէր գրում, ամուսնուն ոչ թե Դմիտրի, այլ Դիմիտրի էր անվանում, իսկ ամուսինը նրան ծածուկ համարում էր կարճամիտ, նեղահայաց ու անճոռնի, և վախենում էր նրանից ու չէր սիրում տանը մնալ։ Նա վաղուց էր սկսել կնոջը դավաճանել, դավաճանում էր հաճախ և, հավանական է, հենց այդ էր պատճառը, որ կանանց մասին համարյա միշտ վատ էր արտահայտվում ու, երբ նրա ներկայությամբ խոսք էր լինում կանանց մասին, նրանց անվանում էր այսպես.

— Ստորին ցեղ։

Նրան թվում էր, թե ինքը բավականաչափ դառն փորձ ունի, որ կանանց անվանի ինչ էլ ցանկանա, բայց, այնուամենայնիվ, առանց «ստորին ցեղի» նա չէր կարողանա անգամ երկու օր ապրել։ Տղամարդկանց մեջ նա տխրում էր, վատ էր զգում իրեն, նրանց հետ լինում էր ոչ զրուցասեր, սառը, բայց երբ գտնվում էր կանանց շրջանում, իրեն զգում էր ազատ և գիտեր ինչի մասին խոսել նրանց հետ ու ինչպես պահել իրեն. մինչև իսկ լռելն էլ կանանց հետ նրան հեշտ էր թվում։ Նրա արտաքինի, բնավորության, նրա ամբողջ էության մեջ մի

ինչ-որ գրավիչ, անբացատրելի բան կար, որ դեպի իրեն էր տրամադրում կանանց, հրապուրում էր նրանց։ Այդ բանն ինքը գիտեր, և մի ինչ-որ ուժ իրեն էլ դեպի կանանց էր մղում։

Հաճախակի կրկնված փորձը, իրոք, դառն փորձը, նրան վաղուց սովորեցրել էր, որ ամեն մի մերձեցում, որն սկզբում այնքան հաճելի կերպով փոփոխություն է մտցնում մարդու կյանքի մեջ և հաճելի ու թեթև արկած է համարվում, կարգին մարդկանց համար, մանավանդ ծանրաշարժ ու անվճռական մոսկվացիների համար, անխուսափելիորեն փոխվում է մի չափազանց բարդ խնդրի, և դրությունը վերջ ի վերջո դառնում է անտանելի։ Սակայն ամեն մի նոր ու հետաքրքիր կնոջ հանդիպելիս այդ փորձությունը կարծես անհետանում էր հիշողությունից և ապրելու ցանկություն էր առաջ գալիս ու ամեն բան այնքա՛ն հասարակ ու զվարճալի էր թվում։

Եվ ահա՛ մի անգամ, երեկոյան դեմ, նա ճաշում էր այգում, իսկ բերետով տիկինը մոտենում էր առանց շտապելու, որպեսզի հարևան սեղանի մոտ նստի։ Նրա արտահայտությունը, քայլվածքը, հագուստը և թե սանրվածքը ասում էին Գուրովին, որ նա պատվավոր հասարակությունից է, ամուսնացած, առաջին անգամ է Յալթա եկել ու միայնակ է, որ նրա համար տխուր է այստեղ... Տեղական բարքերի անմաքրության մասին եղած պատմությունների մեջ շատ անճշտություններ կան, Գուրովը արհամարհում էր այդ պատմությունները և գիտեր, որ դրանց մեծագույն մասի հնարողները այնպիսի մարդիկ են, որոնք ուրախությամբ իրենք էլ մեղքեր կգործեին, եթե միայն կարողանային։ Բայց երբ տիկինը նստեց հարևան սեղանի մոտ, իրենից մի երեք քայլ հեռավորության վրա, նա հիշեց հեշտ հաղթանակների այդ պատմությունները, լեռներում ձիով շրջելու մասին, և հանկարծ նրան համակեց արագ ու ժամանակավոր կապ, սիրավեպ ստեղծելու գայթակղող միտքը անծանոթ կնոջ հետ, այն կնոջ, որի ո՛չ անունը և ո՛չ ազգանունը գիտեր։

Նա փաղաքշանքով շնիկին հրապուրեց իր մոտ և, երբ նա մոտեցավ, մատով սպառնաց նրան։ Շնիկը գոմռաց։ Գուրովը նորից սպառնաց։

Տիկինը նայեց նրան և իսկույն կախեց աչքերը։

— Չի կծում,— ասաց տիկինն ու կարմրեց։

— Կարելի՞ է ոսկոր տալ,— և երբ տիկինը դրականորեն

շարժեց գլուխը, Գուրովը սիրալիր հարցրեց.— Դուք վաղո՞ւց է, ինչ բարեհաճել եք Յալթա գալ։

— Հինգ օր կլինի։

— Իսկ ես արդեն երկրորդ շաբաթն եմ այստեղ քարշ գալիս։

Փոքր-ինչ լռեցին։

— Ժամանակն արագ է անցնում, մինչդեռ այստեղ այնպե՞ս ձանձրալի է,— ասաց տիկինը, առանց Գուրովին նայելու։

— Այդպես միայն ընդունված է ասել, թե այստեղ ձանձրալի է։ Մի որևէ Բելևի կամ Ժիզդրայի քաղքենի ապրում է իր տեղում, ձանձրույթ չի զգում, իսկ հենց որ գալիս է այստեղ. «Ա՜խ, ձանձրալի է, ա՜խ փոշի է»։ Կարծես թե Գրենադայից է եկել։

Տիկինը ծիծաղեց։ Հետո երկուսն էլ շարունակեցին ուտել լուռ, որպես անծանոթներ։ Բայց ճաշելուց հետո նրանք գնացին կողք-կողքի և նրանց միջև սկսվեց մի զվարճալի ու թեթև խոսակցություն, որ լինում է այն կարգի ազատ ու գոհ մարդկանց միջև, որոնց համար միևնույն է, թե ուր գնան և ինչի մասին խոսեն։ Նրանք զբոսնում և զրուցում էին, թե ինչքան տարօրինակ է լուսավորված ծովը. ջուրը յասամանի գույն ունի, այնպես քնքուշ ու մեղմ, իսկ նրա վրայով անցնում է լուսնի ոսկեզօծ շերտը։ Զրուցում էին, թե ինչ տոթ է ցերեկվա շոգից հետո։ Գուրովը պատմեց, որ ինքը մոսկվացի է, կրթությամբ բանասեր, բայց ծառայում է բանկում. մի ժամանակ պատրաստվում էր երգել մասնավոր օպերայում, բայց թողեց այդ միտքը, Մոսկվայում սեփական երկու տուն ունի... Իսկ տիկնոջից էլ իմացավ, որ նա Պետերբուրգում է մեծացել, բայց մարդու է գնացել Ս. քաղաքում, որտեղ ապրում է արդեն երկու տարի, որ Յալթայում նա դեռ կմնա մոտ մի ամիս և գուցե ամուսինը գա իրեն տանելու, որը նույնպես ցանկանում է հանգստանալ։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում բացատրել, թե որտեղ է իր ամուսինը ծառայում,— նահանգական վարչությունո՞ւմ, թե նահանգական զեմսկի ուպրավայում, և դա հենց իրեն էլ էր ծիծաղ պատճառում։ Գուրովն իմացավ նաև, որ տիկնոջ անունը Աննա Սերգեևնա է։

Հետո հյուրանոցի իր համարում Գուրովը մտածում էր տիկնոջ մասին, մտածում էր, որ վաղը նա անպատճառ կհանդիպի նրան։ Այդպես պետք է լինի։ Անկողին մտնելով հիշեց,

որ շատ ժամանակ չի անցել, ինչ տիկինը եղել է ինստիտուտում, սովորել է ճիշտ այնպես, ինչպես այժմ իր աղջիկն է սովորում։ Հիշեց, թե դեռ ինչքա՜ն անհամարձակություն, կաշկանդվածություն կար տիկնոջ ծիծաղի, անծանոթի հետ ունեցած խոսակցության մեջ,— երևի, այս առաջին անգամ է իր կյանքում նա միայնակ մնացել այսպիսի մի միջավայրում, ուր նրա հետևից ման են գալիս, նայում են նրան ու հետը խոսում այնպիսի մի գաղտնի նպատակով, որ նա չի կարող չզուշակել, Գուրովը հիշեց նրա բարակ, թույլ պարանոցը, գեղեցիկ, մոխրագույն աչքերը։

«Այնուամենայնիվ, նրա մեջ ինչ-որ մի խղճալի բան կա»,— մտածեց նա և քուն մտավ։

II

Մի շաբաթ էր անցել ծանոթությունից հետո։ Տոն օր էր։ Սենյակներում տոթ, իսկ փողոցներում սոսկալի փոշի էր, և քամին գլխարկներ էր թռցնում։ Ամբողջ օրը մարդ ծարավ էր զգում, և Գուրովը հաճախ պավիլիոն էր մտնում ու Աննա Սերգեևնային կամ օշարակով ջուր էր առաջարկում, կա՛մ՝ պաղպաղակ։ Պատսպարվելու ոչ մի տեղ չկար։

Երեկոյան, երբ քամին փոքր-ինչ հանդարտվեց, նրանք նավամատույց գնացին, որ նավի գալը տեսնեն։ Նավամատույցում բազմաթիվ զբոսնողներ կային. հավաքվել էին ինչ-որ մեկին դիմավորելու, ձեռքներին ծաղկեփնջեր բռնած։ Եվ այստեղ շատ պարզ կերպով աչքի էին ընկնում Յալթայի զուգված ամբոխի երկու առանձնահատկությունները. տարիքավոր կանայք հագնված էին երիտասարդների նման, և շատ գեներալներ կային։

Ալեկոծության պատճառով նավը ուշ եկավ, երբ արդեն արևագակը մայր էր մտել, և նախքան նավամատույցին մոտենալը, երկար ժամանակ պտույտներ էր անում։ Աննա Սերգեևնան լորնետով նայում էր նավին ու ճամփորդներին, կարծես ծանոթներ էր որոնում, և երբ Գուրովին էր դիմում, նրա աչքերը փայլում էին։ Նա շատ էր խոսում, ու նրա հարցումները կցկտուր էին, հենց ինքն էլ իսկույն մոռանում էր, թե ինչ է հարցրել։ Հետո նա լորնետը կորցրեց ամբոխի մեջ։

Զուգված ամբոխը ցրվում էր, մարդիկ այլևս չէին երևում,

քամին էլ բոլորովին դադարել էր, իսկ Գուրովն ու Աննա Սերգեևնան դեռ կանգնած էին, կարծես սպասելով, թե արդյոք այլևս իջնող չի՞ լինի նավից։ Աննա Սերգեևնան արդեն լռել էր ու ծաղիկներից հոտ էր քաշում, առանց Գուրովին նայելու։

— Եղանակը երեկոյան դեմ լավացավ,— ասաց Գուրովը։— Ի՞նչ անենք հիմա։ Մի տեղ չգնա՞նք արդյոք։

Աննա Սերգեևնան ոչինչ չպատասխանեց։

Այդ ժամանակ Գուրովը սևեռուն հայացքով նայեց նրան և հանկարծ գրկեց ու համբուրեց շրթունքները, ծաղիկների բույրն ու թացությունը խփեց նրա երեսին, նա իսկույնևեթ վախվխելով նայեց իր շուրջը. տեսնող չեղա՞վ արդյոք։

— Գնանք ձեզ մոտ...— ասաց նա կամացուկ։

Երկուսն էլ գնացին արագ։

Տիկնոջ համարում տոթ էր, ճապոնական խանութից գնված օծանելիքների հոտ էր բուրում։ Գուրովը, այժմ նայելով նրան, մտածում էր. «Ինչպիսի՜ հանդիպումներ ասես չեն լինում մարդու կյանքում»։ Իր անցյալից նրա մեջ հիշողություն էր մնացել այնպիսի անհոգ, բարեսիրտ կանանց մասին, որոնք ուրախանում էին սիրուց, շնորհակալ էին մնում նրան իր պատճառած թեկուզ կարճատև բախտավորության համար, նույնպես և այնպիսի կանանց մասին,— ինչպես, օրինակ, իր կինն էր,— որոնք սիրում էին առանց անկեղծության, ավելորդ խոսակցություններով, որոշ ձևերով, հիստերիկայով ու այնպիսի արտահայտությամբ, որ կարծես դա ոչ թե սեր կամ կիրք էր, այլ մի ինչ-որ ավելի նշանավոր բան։ Նա հիշում էր նաև երկուերեք այնպիսի խիստ գեղեցիկ ու սառը կանանց, որոնց դեմքի վրա հանկարծ մի գիշատիչ արտահայտություն էր ցոլում ու համառ ցանկություն էր առաջ գալիս՝ կյանքից վերցնել, դուրս կորզել ավելի շատ, քան թե նա կարող էր տալ։ Եվ դրանք շատ էլ երիտասարդ չէին, խիստ կամակոր, դատողություն չսիրող, բռնակալ ու ոչ-խելոք կանայք էին, և երբ Գուրովը սառչում էր դեպի այդ կարգի կանայք, նրանց գեղեցկությունը ատելություն էր հարուցում նրա մեջ, նրանց սպիտակեղենի ժապավեններն էլ այդ ժամանակ օձի թեփ էին թվում նրան։

Բայց այստեղ դարձյալ նույն անհամարձակությունը, երիտասարդ անփորձ կնոջ նույն կաշկանդվածությունն ու անհարմար վիճակի զգացումն էր նա տեսնում. կար շփոթվածության մի այնպիսի տպավորություն, որ թվում էր, թե մեկը հանկարծ

դուռը բախեց։ Աննա Սերգեևնան՝ այդ «շնիկով տիկինը», դեպի այն ամենը, ինչ տեղի էր ունեցել, հատկապես ինչ-որ շատ լուրջ վերաբերվեց, կարծես դա իր անկումը լիներ,— այդպես էր թվում Գուրովին, և դա տարօրինակ էր ու անտեղի։ Տիկնոջ դիմագծերը կախվել, թորշոմել էին, և երեսի վրա երկու կողմից տխուր կախվել էին երկար մազերը, նա ընկճված դիրքով մտածմունքի մեջ էր ընկել, կարծես մի հին պատկերում նկարված մեղավոր կին լիներ։

— Լավ բան չէ,— ասաց նա։— Հենց դուք առաջինն ինձ չեք հարգում այժմ։

Սենյակում սեղանի վրա ձմերուկ կար։ Գուրովը իր համար կտրեց մի շերտ և սկսեց ուտել առանց շտապելու։ Լռությամբ անցավ առնվազն կես ժամ։

Աննա Սերգեևնան սրտառուչ տեսք ուներ, նրանից բուրում էր լավ, անմեղ, կյանք քիչ տեսած կնոջ անբիծ մաքրություն։ Սեղանի վրա վառվող մի հատիկ մոմը հազիվ լուսավորում էր նրա դեմքը, բայց երևում էր, որ խռովված էր հոգին։

— Ինչո՞ւ պիտի դադարեմ հարգել քեզ,— հարցրեց Գուրովը։— Ինքդ էլ չես իմանում, թե ինչ ես ասում։

— Թող ասված ինձ ների,— ասաց Աննա Սերգեևնան, և նրա աչքերը լցվեցին արտասուքով։— Սոսկալի է սա։

— Դու կարծես աշխատում ես արդարանալ։

— Ինչո՞վ պիտի արդարանամ։ Ես վատ, ստոր կին եմ, ես արհամարհում եմ ինձ և արդարանալու մասին չեմ մտածում։ Ես ոչ թե ամուսնուս, այլ ինքս ինձ խաբեցի։ Եվ ոչ թե հիմա միայն, այլ արդեն վաղուց եմ խաբում։ Իմ ամուսինը, դուցեև ազնիվ, լավ մարդ է, բայց լակեյ է։ Ես չգիտեմ, թե նա ինչ է անում այնտեղ, ինչպես է ծառայում, գիտեմ միայն, որ նա լակեյ է։ Երբ ես ամուսնացա նրա հետ, քսան տարեկան էի, հետաքրքրությունն ինձ տանջում էր, ես ինչ-որ լավ բան էի կամենում. չէ՞ որ ուրիշ կյանք էլ կա,— ասում էի ինքս ինձ։ Ուզում էի ապրել։ Ապրել ու ապրել... Ինձ այրում էր հետաքրքրությունը... դուք այդ բանը չեք հասկանում, բայց, երդվում եմ աստծո անունով, այլևս չէի կարողանում ինձ զսպել, ինձ հետ ինչ-որ մի բան էր կատարվում, անկարելի էր ինձ հետ պահել, ես ամուսնուս ասացի, թե հիվանդ եմ և եկա այստեղ... Այստեղ էլ ես ամբողջ ժամանակ ման էի գալիս, ինչպես շմոլքով բռնված, ինչպես խելագար... և ահա ես մի

գարշելի, անպիտան կին դարձա, որին ամենքն էլ կարող են արհամարհել։

Գուրովն արդեն ձանձրանում էր լսել, նրան գրգռում էր միամիտ տոնը, այդ զղջումը, որ այնքան անսպասելի ու անտեղի էր. եթե աչքերի արտասուքները չլինեին, կարելի էր կարծել, թե տիկինը կատակ է անում կամ ձևանում է։

— Ձեմ հասկանում,— կամաց ասաց Գուրովը,— արդյոք ի՞նչ ես կամենում։

Տիկինը դեմքը ծածկեց նրա կրծքի վրա ու սեղմվեց նրան։

— Հավատացեք, հավատացեք ինձ, աղաչում եմ ձեզ...— ասում էր նա։— Ես ազնիվ, մաքուր կյանք եմ սիրում, իսկ մեղք գործելն ինձ զզվելի է, ինքս էլ չեմ իմանում, թե ինչ եմ անում։ Հասարակ մարդիկ ասում են՝ սատանան գլխից հանեց։ Ես էլ հիմա իմ մասին կարող եմ ասել, թե ինձ սատանան գլխից հանեց։

— Բավական է, բավական է...— մոթմոթում էր Գուրովը։

Նա նայում էր տիկնոջ անթարթ, վախեցած աչքերին, համբուրում էր նրան, խոսում էր ցածր ու սիրալիր, և տիկինը կամաց-կամաց հանգստացավ, վերադարձավ նրա զվարթ տրամադրությունը. երկուսն էլ սկսեցին ծիծաղել։

Հետո, երբ նրանք դուրս եկան, ծովափում ոչ ոք չկար, քաղաքն իր կիպարիսներով բոլորովին մեռած տեսք ուներ, բայց ծովը դեռ աղմկում էր ու զարնվում ափին. մի բեռնակիր նավակ օրորվում էր այիքների վրա, իսկ նրա վրա՝ փայլփլում էր մի աղոտ լապտեր։

Կառք գտան և Օրեանդ գնացին։

— Այս բոպեիս ցածը, նախասենյակում, ես քո ազգանունն իմացա. տախտակի վրա գրված է Ֆոն Դիդերից,— ասաց Գուրովը։— Քո ամուսինը գերմանացի՞ է։

— Ոչ, կարծեմ նրա պապն է գերմանացի եղել, իսկ ինքը ուղղափառ է։

Օրեանդում նստել էին նստարանի վրա, եկեղեցուց ոչ հեռու, նայում էին դեպի ցած՝ ծովին ու լուռ էին։ Յալթան հազիվ էր երևում առավոտվա մեգի միջից, սարերի կատարներին սպիտակ ամպերը կանգնած էին անշարժ։ Տերևները չէին շարժվում ծառերի վրա, ճպուռները կանչում էին, և ծովի միապաղաղ, խուլ աղմուկը, որ լսվում էր ցածից, հանգստության

ու հավիտենական քնի մասին էր մրմնջում, որը սպասում է մեզ։ Ծովը այդպես աղմկում էր ցածում դեռ այն ժամանակ, երբ այդտեղ ո՛չ Յալթա կար ու ոչ էլ Օրեանդ, աղմկում է և այժմ ու նույն անտարբերությամբ, խուլ կերպով պիտի աղմըկի, երբ մենք չենք լինելու։ Եվ այդ մշտնջենականության, դեպի յուրաքանչյուրիս կյանքն ու մահը ունեցած կատարյալ անտարբերության մեջ է թաքնված, գուցե, մեր հավիտենական փրկության, երկրի վրա եղած կյանքի անընդհատ շարժման, անընդհատ կատարելագործության գրավականը։ Երիտասարդ կնոջ կողքին նստած,— որը լուսաբացին այնպես գեղեցիկ էր թվում, հանգստացած ու հիացած այս հեքիաթային շրջապատի՝ ծովի, լեռների, ամպերի, ընդարձակ երկնքի տեսքից, Գուրովը մտածում էր, թե ինչպես հիրավի, եթե լավ մտածենք, ամեն ինչ հրաշալի է այս աշխարհում, ամեն ինչ, բացի այն բոլորից, ինչ մենք ինքներս ենք մտածում ու անում, երբ մոռանում ենք մեր էության բարձր նպատակները, մեր մարդկային արժանապատվությունը։

Մի մարդ մոտեցավ, երևի պահակն էր, նայեց նրանց ու գնաց։ Այդ մանրամասնությունն էլ այնպե՞ս խորհրդավոր ու նույնպես գեղեցիկ թվաց։ Երևում էր, թե ինչպես Թեոդոսիայից եկավ նավը, առավոտվա արշալույսով լուսավորված, արդեն առանց կրակների։

— Կանաչների վրա ցող կա,— ասաց Աննա Սերգեևնան լռությունից հետո։

— Այո, ժամանակն է տուն գնալու։

Նրանք վերադարձան քաղաք։

Այնուհետև նրանք ամեն կեսօր հանդիպում էին ծովափին, միասին նախաճաշում, ապա ճաշում, զբոսնում, հիանում էին ծովով։ Աննա Սերգեևնան գանգատվում էր, թե վատ է քնում և թե սիրտը խփում է անհանգիստ, շարունակ միևնույն հարցերն էր տալիս, մեկ վախից, մեկ խանդից հուզված, թե Գուրովն իրեն շատ էլ չի հարգում։ Եվ հաճախ պուրակում կամ այգում, երբ մոտիկ ոչ ոք չէր լինում, Գուրովը հանկարծ դեպի իրեն էր քաշում Աննա Սերգեևնային և կրքոտ համբուրում։ Կատարյալ անգործությունը, օր-ցերեկով այդ համբույրները, որոնց ժամանակ վախեցած իսկույն շուրջն էր նայում, թե արդյոք ոչ ոք չտեսա՞վ, շոգը, ծովի հոտը և անգործ, լավ հագնված, զուգված, կուշտ մարդկանց աչքերի առջևից շարունակ արագ անցնելը, կարծես, բոլորովին վերածնել էին Գուրովին. շարունակ Աննա Սերգեևնային ասում էր, թե ինչ գեղեցիկ, ինչ հրապուրիչ է նա, խիստ անհամբեր ու կրքոտ էր դառել ու ոչ մի քայլ չէր հեռանում նրանից։ Իսկ Աննա Սերգեևնան հաճախ մտածմունքի մեջ էր ընկնում ու անդադար խնդրում Գուրովին խոստովանել, որ չի հարգում իրեն, ամենևին չի սիրում և տեսնում է իրեն միայն որպես մի ստոր կին։ Համարյա ամեն երեկո փոքր-ինչ ուշ նրանք մի որևէ տեղ էին գնում քաղաքից դուրս, կամ Օրեանդ, կամ դեպի ջրվեժը և միշտ հաջողվում էր նրանց զբոսանքը, տպավորությունները ամեն անգամ էլ անփոփոխ կերպով սքանչելի էին լինում, վսեմ։

Սպասում էին, թե ամուսինը կգա։ Բայց նրանից նամակ ստացվեց, որով հայտնում էր, թե աչքերն սկսել են ցավել, և աղաչում էր կնոջը շուտ վերադառնալ տուն։ Աննա Սերգեևնան սկսեց շտապել։

— Լավ է, որ ես գնում եմ,— ասում էր նա Գուրովին։— Ճակատագրի պահանջն է այդ։

Նա գնաց կառքով, Գուրովը նրան ճանապարհ դրեց։ Ամբողջ օրը գնացին։ Երբ Աննա Սերգեևնան նստում էր ճեպընթաց գնացքի վագոնը, ու երբ երկրորդ զանգը տվին, նա ասաց Գուրովին.

— Թողեք մեկ էլ նայեմ ձեզ... Մի անգամ էլ նայեմ։ Ա՛յ, այսպես։

Նա լաց չէր լինում, բայց տխուր էր, կարծես հիվանդ լիներ, ու երեսն էլ դողում էր։

— Ես ձեր մասին կմտածեմ... կհիշեմ,— ասում էր նա։— Տերը ձեզ հետ, մնացեք։ Վատ մի՛ հիշեք իմ մասին։ Մենք ընդմիշտ ենք բաժանվում, այդպես էլ պետք է, որովհետև մենք ամենևին էլ չպետք է հանդիպեինք։ Դե՛հ, տերը ձեզ հետ։

Գնացքն արագ սլացավ, նրա լույսերը շուտով անհետացան, և մի րոպեից հետո արդեն ոչ մի աղմուկ չէր լսվում, կարծես ամենքն էլ դիտմամբ պայմանավորվել էին ինչքան հնարավոր է շուտ վերջ տալ այդ քաղցր ինքնամոռացությանը, այդ խենթությանը։ Եվ միայնակ մնալով կառամատույցի վրա ու մութ հեռուն նայելով, Գուրովը այնպիսի զգացումով էր լսում ճռիկների ձայնն ու հեռագրալարերի աղմուկը, որ կարծես հենց նոր էր քնից արթնացել։ Նա մտածում էր, ահա իր

կյանքում մի արկած, մի դիպված ևս տեղի ունեցավ, և դա նույնպես արդեն վերջացավ, և այժմ նրանից միայն հիշողություն մնաց... Նա զգացված ու տխուր էր ու մի թեթև ղղջում էր զգում. չէ՞ որ այդ երիտասարդ կինը, որին ինքը այլևս երբե՛ք չի տեսնելու, երջանիկ չէր իր հետ։ Թեև ինքը քաղաքավարի ու մտերմաբար էր վարվում նրա հետ, բայց և այնպես իր վարմունքի, ձայնի և փաղաքշանքների մեջ մի շատ թեթև հեգնանք, երջանիկ մարդու կոպիտ գոռոզություն էր արտացոլվում, մանավանդ որ ինքն էլ համարյա երկու անգամ տարիքով մեծ էր նրանից։ Տիկինն ամբողջ ժամանակ նրան բարի, անօրինակ, վեհ սրտի մարդ էր անվանում. պարզ է, որ ինքը այդ կնոջ աչքում այն չի երևացել, ինչպես որ կա, նշանակում է՝ ինքը ակամայից խաբել է նրան...

Այստեղ, կայարանում, արդեն աշնան հոտ էր բուրում, ցուրտ երեկո էր։

«Ժամանակն է, որ ես էլ հյուսիս գնամ,— մտածում էր Գուրովը, կառամատույցից հեռանալով։— Ժամանակն է»։

III

Տանը՝ Մոսկվայում, ամեն ինչ արդեն ձմեռային էր, վառարանները վառում էին, և առավոտները, երբ երեխաները պատրաստվում էին գիմնազիա գնալու ու թեյ էին խմում, մութ էր լինում, ուստի դայակը լույսը վառում էր կարճ ժամանակով։ Սառնամանիքներն արդեն սկսվել էին։ Երբ գալիս է առաջին ձյունը, սահնակներով ման գալու առաջին օրը, շատ հաճելի է տեսնել գետինը սպիտակ, կտուրները սպիտակ, շընչելն էլ թեթև ու հաճելի է, և այդ ժամանակ երիտասարդ տարիներն է մարդ հիշում։ Եղյամից սպիտակած հինավուրց լորենիներն ու կեչիները շատ բարի արտահայտություն ունեն, նրանց ավելի մոտ ես զգում սրտիդ, քան կիպարիսներն ու արմավենիները, և երբ նրանց մոտ ես գտնվում, էլ չես ցանկանում լեռների ու ծովի մասին մտածել։

Գուրովը բնիկ մոսկվացի էր, նա Մոսկվա վերադարձավ մի գեղեցիկ ցուրտ օր, և հենց որ մուշտակը հագավ ու անցրեց տաք ձեռնոցները և անցավ Պետրովկայով ու հենց որ շաբաթ երեկոյի եկեղեցու զանգակների ղողանջը լսեց, նրա աչքում իրենց ամբողջ հմայքը կորցրին իր վերջին ճանապարհորդությունը և այն բոլոր վայրերը, ուր ինքը եղել էր։ Կամաց-կամաց նա ընկղմվեց Մոսկվայի կյանքի մեջ, արդեն ագահությամբ օրը երեք լրագիր էր կարդում և ասում էր, թե Մոսկվայի թերթերն ինքը սկզբունքով չի կարդում։ Նա արդեն սիրով էր հաճախում ռեստորանները, ակումբները, հրավիրաճաշերին, հոբելյաններին և արդեն հպարտանում էր, որ իր մոտ հայտնի փաստաբաններ ու արտիստներ են լինում և որ բժիշկների ակումբում ինքը պրոֆեսորի հետ է թուղթ խաղում։ Նա արդեն կարողանում էր ուտել թավայով մի ամբողջ բաժին սոլյանկա...

Կանցնի մի ամիս, թվում էր նրան, և Աննա Սերգեևնան մշուշով կծածկվի իր հիշողության մեջ և միմիայն երազում երբեմն կերևա իր գրավիչ ժպիտով, ինչպես երևացել են իր մյուս սիրուհիները։ Սակայն մի ամսից շատ ավելի անցավ, եկավ խոր ձմեռ, բայց նրա հիշողության մեջ դեռ ամեն ինչ պարզ էր, Աննա Սերգեևնայից կարծես հենց երեկ էր բաժանվել։ Եվ հիշողություններն ավելի ու ավելի էին բոցավառվում։ Երբ երեկոյան լռության մեջ երեխաների ձայներն էին հասնում իր առանձնասենյակը, որոնք դասերն էին պատրաստում, կամ երբ լսում էր մի ռոմանս, կամ՝ ռեստորանում երգեհոնի նվագ, կամ երբ բուքն էր մոնչում բուխարիկում, հանկարծ նրա հիշողության մեջ հարություն էր առնում ամեն ինչ. և՛ այն, ինչ տեղի ունեցավ նավամատույցի վրա, և՛ այն վաղ առավոտը մշուշապատ լեռներով, և՛ Թեոդոսիայից եկած նավը, և՛ համբույրները։ Նա երկար քայլում էր սենյակում, և՛ հիշում, և՛ ժպտում էր, իսկ հետո հիշողությունները փոխվում էին երազանքի, ու անցյալը երևակայության մեջ խառնվում էր այն բանի հետ, ինչ լինելու էր։ Աննա Սերգեևնան նրան ոչ թե երազում էր երևում, այլ ինչպես մի ստվեր, ամեն տեղ հետևվում էր ու հսկում։ Աչքերը փակելով, նա Աննա Սերգեևնային տեսնում էր ինչպես կենդանի, և նա ավելի՛ գեղեցիկ, ավելի՛ երիտասարդ ու ավելի՛ քնքուշ էր երևում, քան թե կար իրոք։ Գուրովն ինքն էլ իրեն ավելի լավ էր թվում, քան այն ժամանակ՝ Յալթայում։ Երեկոները Աննա Սերգեևնան նրան նայում էր գրքերի պահարանից, բուխարիկից, անկյունից. Գուրովը լսում էր նրա շնչառությունը, նրա հագուստների հմայիչ շրշյունը։ Փողոցում նա շարունակ աչքերով ուղեկցում էր կանանց, որոնում, թե չկա՞ արդյոք մեկը Աննա Սերգեևնային նմանվող...

Ու արդեն նա բուռն ցանկություն էր զգում իր հիշողությունները բաժանել մեկի հետ։ Սակայն տանը անկարելի էր սիրո մասին խոսել, իսկ տնից դուրս՝ չկար մեկը։ Հո չէ՞ր կարելի տնվորներին կամ բանկում պատմել։ Եվ ինչի՞ մասին պատմել։ Մի՞թե նա սիրում էր այն ժամանակ։ Մի՞թե մի որևէ գեղեցիկ, բանաստեղծական, կամ խրատական և կամ պարզապես հետաքրքիր բան կար դեպի Աննա Սերգեևնան իր ունեցած հարաբերությունների մեջ։ Այդ պատճառով էլ նա անորոշ կերպով էր խոսում սիրո, կանանց մասին, և ոչ ոք ոչինչ չէր հասկանում, միայն կինն էր իր թուխ հոնքերը շարժում ու ասում.

— Քեզ, Դիմիտրի, բոլորովին չի սազում ֆատի դերը։

Մի անգամ, գիշերը, բժշկական ակումբից դուրս գալով իր մի խաղընկերոջ՝ չինովնիկի հետ, նա չհամբերեց ու ասաց.

— Եթե գիտենայիք, թե ինչպիսի հրապուրիչ կնոջ հետ ես ծանոթացա Յայթայում։

Չինովնիկը սահնակ նստեց ու գնաց, բայց հանկարծ շուռ եկավ՝ ու ձայն տվեց.

— Դմիտրի Դմի՛տրիչ։

— Ի՞նչ է։

— Քիչ առաջ ճիշտ էիք ասում. օսետրինան մի քիչ հոտած էր։

Այս շատ սովորական խոսքերը, չգիտես ինչու, հանկարծ վրդովեցին Գուրովին, ստորացուցիչ, պիղծ երևացին նրան։ Ի՞նչ վայրենի բարքեր են, ի՞նչ մարդիկ են։ Ի՞նչ անմիտ գիշերներ, ի՞նչ անհետաքրքիր, աչքի չընկնող օրեր են։ Մոլի թղթախաղություն, որկրամոլություն, հարբեցողություն, մշտնջենական խոսակցություններ միևնույն առարկայի մասին։ Անպետք գործերն ու խոսակցությունները շարունակ միևնույն առարկայի մասին՝ խլում են ժամանակի ամենալավ մասը, ամենալավ ուժերը, և վերջ ի վերջո մնում է ինչ-որ պոչատ ու անթև կյանք, ինչ-որ անհեթեթություն, որից դուրս գալ, փախչել չի կարելի, կարծես գժանոցում, կամ բանտում նստած լինես։

Գուրովը ամբողջ գիշերը չքնեց և վրդովվում էր, իսկ հետո ամբողջ օրը գլխացավով անցկացրեց։ Հետևյալ գիշերներն էլ նա վատ էր քնում, ամբողջ ժամանակ նստում էր անկողնի մեջ ու մտածում, կամ թե սենյակում մի անկյունից մյուսն էր քայլում։ Երեխաները նրան ձանձրացրել էին, բանկն էլ էր ձանձրացրել, ցանկություն չուներ ոչ մի տեղ գնալու, ոչ էլ որևէ բանի մասին խոսելու։

Դեկտեմբերի տոներին նա պատրաստվեց ճանապարհորդության և կնոջն ասաց, թե գնում է Պետերբուրգ, մի երիտասարդի համար միջնորդելու,— և Ս. քաղաքը գնաց։ Ինչի՞ համար։ Ինքն էլ լավ չէր իմանում։ Նա կամենում էր տեսնել Աննա Սերգեևնային ու խոսել հետը և, եթե հնարավոր է, ժամադրություն նշանակել։

Նա Ս. հասավ առավոտը և հյուրանոցում վարձեց մի լավ համար, որի ամբողջ հատակը զինվորական մոխրագույն մահուդով էր ծածկված, իսկ սեղանի վրա մի թանաքաման կար փոշուց գորշացած, հեծյալի փոքրիկ արձանով, որը ձեռքը բարձրացրել էր գլխարկը բռնած, իսկ գլուխը կոտրված էր։ Բարապանը Գուրովին պետք եղած տեղեկությունները տվեց. ֆոն Դիդերիցը ապրում է Ստարո-Գոնչարնի փողոցում, իր սեփական տանը, դա հյուրանոցից հեռու չէ, ապրում է լավ, փարթամ կյանքով, իր սեփական ձիերն ունի, նրան բոլորը ճանաչում են քաղաքում։ Բարապանն արտասանում էր այսպես. Դրրդրրից։

Գուրովը, առանց շտապելու, գնաց Ստարո-Գոնչարնի փողոցը, գտավ տունը։ Ճիշտ տան դեմուդեմ մի երկար, մոխրագույն ցանկապատ էր ձգվում, վրան մեխեր ցցված։

«Այսպիսի ցանկապատից, իհարկե, կփախչես»,— մտածում էր Գուրովը, մերթ պատուհաններին, մերթ ցանկապատին նայելով։

Նա ինքն իրեն մտորում էր, թե այսօր տոն է, և ամուսինը, հավանաբար, տանն է։ Ասենք, դե իհարկե, շատ անտակտ բան կլիներ՝ մտնել տուն և ամեն ինչ պղտորել։ Իսկ եթե տոմսա՞կ ուղարկեմ, կարող է ամուսնու ձեռքն ընկնել, և այդ ժամանակ ամեն ինչ կփչանա։ Ավելի լավ է թողնել պատահմունքին։ Եվ ամբողջ ժամանակ նա մտն էր գալիս փողոցում, ցանկապատի մոտ և այդ պատահմունքին էր սպասում։ Նա տեսավ, թե ինչպես տան դարպասից մի մուրացկան ներս մտավ և շները թափվեցին վրան, հետո, մի ժամ անց, դաշնամուրի նվագ լսեց, հնչյունները շատ թույլ ու անորոշ էին հասնում իրեն։ Երևի Աննա Սերգեևնան էր նվագում։ Գլխավոր դուռը հանկարծ բացվեց, ու մի ինչ-որ պառավ կին դուրս եկավ, իսկ նրա հետևից ծանոթ սպիտակ շնիկն էր վազում։ Գուրովն ուզեց շանը կանչել,

բայց հանկարծ նրա սիրտը սկսեց բաբախել և հուզմունքից չկարողացավ հիշել շան անունը։

Նա ման էր գալիս և ավելի ու ավելի ատում մոխրագույն ցանկապատը ու արդեն գրգռված մտածում էր, որ Աննա Սերգեևնան մոռացել է իրեն և, գուցե, արդեն գրավվել է մեկ ուրիշով, և դա այնչափ բնական է մի երիտասարդ կնոջ համար, որն ստիպված է առավոտից մինչև երեկո տեսնել այս անիծված ցանկապատը։ Նա վերադարձավ իր համարը և երկար ժամանակ նստած էր բազմոցին, չիմանալով, ինչ անել, ապա ճաշեց և երկար քնեց։

«Ի՞նչ հիմար ու անհանգիստ բան է այս ամենը,— մտածում էր նա, զարթնելուց հետո մութ պատուհաններին նայելով. արդեն երեկո էր։— Այ, մի լավ էլ քնեցի, չգիտեմ ինչի համար։ Իսկ հիմա ի՞նչ եմ անելու գիշերը»։

Նա նստել էր էժանագին ու մոխրագույն՝ կարծես հիվանդանոցի վերմակով ծածկված մահճակալի վրա, ու զայրացած ծաղրում էր ինքն իրեն։

«Էս էլ քեզ շնիկով տիկին... էս էլ քեզ տրկած... Դեհ, հիմա նստիր այստեղ»։

Դեռ առավոտյան, կայարանում, նրա աչքին մի աֆիշ էր ընկել՝ շատ խոշոր տառերով գրված. առաջին անգամ «Հեյշա» էին խաղում։ Նա հիշեց դա և թատրոն գնաց։

«Շատ հավանական է, նա լինում է առաջին ներկայացումներին»,— մտածում էր Գուրովը։

Թատրոնը լիքն էր։ Այստեղ էլ, ինչպես ընդհանրապես բոլոր նահանգական թատրոններում, դահլիճի ջահից վերև մշուշապատ էր, ու աղմկալից կերպով անհանգստանում էր գալլերկան։ Առաջին կարգում ներկայացումից առաջ կանգնած էին տեղական ֆրանտները, ձեռքերը հետևները դրած։ Այստեղ էլ նահանգապետի օթյակում, առաջին տեղը նստել էր նահանգապետի աղջիկը՝ վզին բոա գցած, իսկ ինքը՝ նահանգապետը, համեստաբար թեքվել էր վարագույրի հետևը և միայն ձեռքերն էին երևում։ Բեմի վարագույրը օրորվում էր, նվագախումբը երկար ժամանակ սարքի էր բերում գործիքները։ Ամբողջ ժամանակ, քանի դեռ ժողովուրդը գալիս ու տեղեր էր գրավում, Գուրովը ագահաբար որոնում էր աչքերով։

Աննա Սերգեևնան էլ ներս մտավ։ Նա նստեց երրորդ կարգում, և երբ Գուրովը նայեց նրան, սիրտը ճմլվեց, նա պարզ

հասկացավ, որ իր համար այժմ ամբողջ աշխարհում ուրիշ ավելի մոտիկ, ավելի թանկագին ու կարևոր մարդ չկա. որ նա, գավառական ամբոխի մեջ կորած այդ փոքրիկ, ոչնչով աչքի չընկնող, հասարակ լորնետը ձեռքում բռնած կինը այժմ նրա ամբողջ էությունն էր լցնում, նրա վիշտը, ուրախությունը և այն միակ երջանկությունն էր, որ Գուրովը այժմ ցանկանում էր իր համար. և վատ նվագախմբի, գավառական անպետք ջութակների հնչյունների մեջ Գուրովը մտածում էր, թե որքան լավն է Աննա Սերգեևնան։ Մտածում էր ու երազում։

Աննա Սերգեևնայի հետ մի շատ բարձրահասակ, կորացած ուսերով ու ոչ մեծ այտամորուքներով երիտասարդ մարդ էլ ներս մտավ ու նստեց կողքին. նա յուրաքանչյուր քայլափոխում գլուխը շարժում և, կարծես, շարունակ բարևում էր։ Հավանաբար ամուսինն էր, որին Աննա Սերգեևնան այն ժամանակ, Յալթայում, դառն զգացմունքի պոռթկումի պահին, լակեյ անվանեց։ Եվ հիրավի, նրա երկար հասակի, այտամորուքների ու փոքրիկ ճաղատության մեջ մի ինչ-որ լակեյական համեստություն կար. քաղցր ժպտում էր նա, կրծքին էլ ինչ-որ գիտնականի նշան էր փայլում, լակեյների համարի նման։

Առաջին ընդմիջումի ժամանակ ամուսինը գնաց ծխելու, Աննա Սերգեևնան մնաց իր բազկաթոռին նստած։ Գուրովը, որ նույնպես պարտերում էր նստած, մոտեցավ նրան ու ասաց դողդոջուն ձայնով, բռնությամբ ժպտալով.

— Բարև ձեզ։

Աննա Սերգեևնան նայեց նրան ու գունատվեց, հետո կրկին նայեց սարսափած, չհավատալով աչքերին, և ամուր սեղմեց ձեռքերի մեջ հովհարն ու լորնետը միասին, երևի, մարտնչելով իր դեմ, որ չուշաթափվի։ Երկուսն էլ լուռ էին։ Աննա Սերգեևնան նստած էր, իսկ Գուրովը կանգնել էր, վախեցած նրա շփոթությունից, չհամարձակվելով կողքին նստել։ Լսվեցին սարքի բերվող ջութակների ու ֆլեյտայի ձայները, և նրանք հանկարծ սարսափ զգացին, թվում էր, թե բոլոր օթյակներից իրենց էին նայում։ Բայց ահա Աննա Սերգեևնան վեր կացավ և արագ քայլերով գնաց դեպի ելքը, Գուրովը հետևեց նրան։ Եվ երկուսն էլ, առանց հաշիվ տալու իրենց, գնում էին միջանցքներով, սանդուղքներով, երբեմն բարձրանալով, երբեմն իջնելով, նրանց աչքերի առաջ ինչ-որ մարդիկ էին արագ սահում՝ դատավորների, ուսուցիչների մունդիրներով, բոլորն էլ կրծքա-

նշաններով, արագ սահում անցնում էին կանայք, կախարանների վրայի մուշտակները, կիջանցուկ քամի էր փչում, իր հետ ծխախոտի մնացորդների հոտ բերելով։ Եվ Գուրովը, որի սիրտը սաստիկ բաբախում էր, մտածում էր.

«Օ՜հ, ասված իմ։ Ինչի՞ համար են այս մարդիկ, այս նվագախումբը...»։

Եվ այդ պահին նա հանկարծ հիշեց, թե ինչպես այն ժամանակ երեկոյան՝ կայարանում, Աննա Սերգեևնային ճանապարհ դնելիս, ասում էր ինքն իրեն, թե ամեն ինչ վերջացավ, և իրենք է՛լ երբեք չեն տեսնվի։ Բայց դեռ որքա՞ն հեռու էր վախճանը։

Նեղ ու մռայլ սանդուղքների վրա, որտեղ գրված էր «ամֆիթատրոնի մուտք», Աննա Սերգեևնան կանգ առավ։

— Դուք ինձ ինչպե՞ս վախեցրիք,— ասաց նա, ծանր շունչ քաշելով, դեռևս գույնը գցած ու զարմացած։— Օ՜հ, ինչպե՞ս դուք ինձ վախեցրիք։ Քիչ մնաց սարսափահար լինեի։ Ինչո՞ւ եք եկել։ Ինչո՞ւ։

— Բայց հասկացեք, Աննա, հասկացեք...— արտասանեց Գուրովը կիսաձայն, շտապելով։— Աղաչում եմ ձեզ, հասկացեք...

Աննա Սերգեևնան նայում էր Գուրովին վախով, աղերսանքով, սիրով, նայում էր սևեռուն, որպեսզի հիշողության մեջ ամուր պահի նրա գծագրությունը։

— Ես այնպե՞ս տանջվում եմ,— շարունակեց Աննա Սերգեևնան, նրան չլսելով։— Ես շարունակ միմիայն ձեր մասին էի մտածում, մտքով ձեզնով էի ապրում։ Եվ կամենում էի մոռանալ, մոռանալ, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ դուք եկաք։

Փոքր-ինչ վերև, սանդուղքների հարթակին կանգնած, երկու գիմնազիստ ծխում էին ու ցած նայում, բայց Գուրովի համար միևնույն էր, Աննա Սերգեևնային նա մոտեցրեց իրեն ու սկսեց համբուրել երեսը, այտերը, ձեռքերը։

— Ի՞նչ եք անում, այդ ի՞նչ եք անում,— ասում էր Աննա Սերգեևնան սարսափած, իրենից հեռացնելով Գուրովին։— Մենք երկուսով էլ խելքներս կորցրել ենք։ Գնացեք հենց այսօրվանից, գնացեք իսկույն... Աղերսում եմ ձեզ բոլոր սրբերի անուններով, աղաչում եմ... Այստեղ մարդ է գալիս։

Սանդուղքներով մեկը ցածից բարձրանում էր։

— Դուք պետք է գնա՞ք...— շարունակում էր Աննա Սերգեևնան շշնջալով։— Լսո՞ւմ եք, Դմիտրի Դմիտրիչ։ Ես կգամ ձեզ մոտ, Մոսկվա։ Ես երբեք բախտավոր չեմ եղել, ես հիմա էլ դժբախտ եմ և երբե՛ք, երբե՛ք բախտավոր չեմ լինի, երբե՛ք։ Դե՛հ, մի ստիպեք ինձ ավելի ևս տանջվելու։ Երդվո՛ւմ եմ, որ կգամ Մոսկվա։ Իսկ հիմա բաժանվենք։ Իմ սիրելի, բարի, իմ թանկագին, բաժանվե՛նք։

Նա սեղմեց Գուրովի ձեռքն ու սկսեց արագ ցած իջնել, շարունակ ետ դառնալով ու նրան նայելով, և նրա աչքերից երևում էր, որ իրոք բախտավոր չէր։ Գուրովը փոքր-ինչ կանգնեց, ականջ դրեց ու հետո, երբ ամեն ինչ լռեց, փնտրեց իր կախարանը, հագնվեց և գնաց թատրոնից։

IV

Եվ Աննա Սերգեևնան սկսեց մեկնել նրա մոտ՝ Մոսկվա։ Երկու-երեք ամիսը մեկ անգամ նա հեռանում էր Ս-ից և ամուսնուն ասում, թե գնում է խորհրդակցելու պրոֆեսորի հետ իր կանացի հիվանդության մասին. ամուսինը և՛ հավատում էր, և՛ չէր հավատում։ Մոսկվա գնալով, նա իջնում էր «Սլավյանսկի բազարում» և իսկույնևեթ Գուրովի մոտ կարմիր գլխարկով մարդ[1] էր ուղարկում։ Գուրովը գնում էր Աննա Սերգեևնայի մոտ, և ոչ ոք Մոսկվայում չէր իմանում այդ մասին։

Մի անգամ Գուրովը այդ կերպ նրա մոտ էր գնում ձմռան մի առավոտ (ուղարկված մարդը նախորդ երեկոյան էր եկել նրա մոտ, բայց տանը չէր գտել)։ Գուրովի հետ էր և իր աղջիկը, որին ուզեցել էր ուղեկցել գիմնազիա գնալիս, այդ նրա ճանապարհի վրա էր։ Խոշոր փաթիլներով ձյուն էր գալիս։

— Օդի ջերմությունը երեք աստիճան է հիմա, բայց ձյուն է գալիս,— ասում էր Գուրովն իր աղջկան։— Սակայն այդ ջերմությունը միմիայն գետնի մակերեսի վրա է, իսկ մթնոլորտի վերին շերտերում ջերմաստիճանը բոլորովին ուրիշ է։

— Իսկ ինչո՞ւ, հայրիկ, ձմեռը որոտ չի լինում։

Գուրովն այդ էլ բացատրեց։ Նա խոսում էր ու մտածում, թե ահա ինքը ժամադրության է գնում, և ոչ մի կենդանի արարած չգիտե այդ մասին ու, հավանական է, երբեք էլ չի

[1] Մեծ քաղաքներում կային հանձնարարություններ կատարող մարդիկ, որոնք կարմիր գլխարկ էին դնում։

այնպես շատ մուրիկ, հարազատ մարդիկ, ինչպես մարդ ու կին, ինչպես քնքուշ բարեկամներ. նրանց թվում էր, թե հենց ինքը ճակատագիրն է տնօրինել նրանց միմյանց համար, և անհասկանալի էր թվում, թե ինչու իրենցից մեկը կին, իսկ մյուսը ամուսին ունի. և կարծես թե նրանք երկու տարափոխիկ թռչուններ լինեին, արու և էգ, որոնց բռնել ու ստիպել էին առանձին-առանձին վանդակներում ապրել։ Նրանք միմյանց նՀրել էին այն, ինչից ամաչում էին իրենց անցյալում, ներում էին ամեն ինչ ներկայում և զգում էին, որ իրենց այս սերը փոխել էր նրանց երկուսին էլ։

Առաջ, տխուր րոպեներին, Գուրովը ինքն իրեն հանգստացնում էր ամեն տեսակ խորհրդածություններով, որ ծագում էին իր գլխում, իսկ այժմ նա այլևս խորհրդածությունների ժամանակ չուներ, նա խոր կարեկցություն էր զգում, ցանկանում էր անկեղծ, քնքուշ լինել...

— Վերջ տուր, սիրելիս,— ասում էր նա։— Լաց եղար և բավական է... Հիմա եկ խոսենք, մի բան մտածենք։

Հետո նրանք երկար խորհրդակցում էին, խոսում, թե ինչպես ազատեն իրենց՝ թաքնվելու, խաբելու, տարբեր քաղաքներում ապրելու, միմյանց երկար ժամանակ չտեսնելու անհրաժեշտությունից։ Ինչպե՞ս ազատվեն այս անտանելի կապանքներից։

— Ինչպե՞ս։ Ինչպե՞ս,— հարցնում էր Գուրովը գլուխը բռնելով։— Ինչպե՞ս։

Եվ թվում էր, թե դարձյալ մի քիչ էլ, և խնդրի լուծումը կգտնվի, և այն ժամանակ նոր ու գեղեցիկ կյանք կսկսվի. և նրանց երկուսի համար էլ պարզ էր, որ մինչև վախճանը դեռ շատ-շատ հեռու է, և որ ամենաբարդն ու դժվարը դեռ նոր է միայն սկսվում։

1899

ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

I

Արդեն երեկոյան ժամը տասին մոտ էր, և այգու գլխին կախվել էր լիալուսինը։ Շումիններին տանը հենց նոր էր վերջացել երեկոյան ժամասացությունը, որ պատվիրել էր Մարֆա

Միխայլովնա տատիկը, և հիմա Նադյան, որ մի բոպեով դուրս էր եկել այգի, տեսնում էր, թե ինչպես դահլիճում սեղան են բաց անում ընթրիքի համար, ինչպես մետաքսյա շքեղ զգեստը հագին՝ այս ու այն կողմ է գնում տատիկը։ Մայր եկեղեցու ավագ քահանա հայր Անդրեյը ինչ-որ բան էր խոսում Նադյայի մոր՝ Նինա Իվանովնայի հետ, և այժմ երեկոյան լուսավորության տակ մայրը լուսամուտի միջով, չգիտես ինչու, շատ շահել էր երևում։ Նրանց կողքին կանգնած էր հայր Անդրեյի որդին՝ Անդրեյ Անդրեյիչը և ուշադիր ականջ էր դնում։

Այգում խաղաղ էր, զով, և գետնին ընկած էին մթին, հանդարտ ստվերներ։ Լսվում էր, թե ինչպես հեռու, շատ հեռու, երևի քաղաքից դուրս, կռկռում էին գորտերը։ Զգացվում էր մայիսը, գուրեկան մայիսը։ Հաճելի էր խոր շնչել, և մարդ ուզում էր մտածել, որ ոչ այստեղ, այլ երկնքի տակ ինչ-որ մի տեղ, ծառերից վերև, հեռու, քաղաքից դուրս, դաշտերում ու անտառներում այժմ ծավալվել է գարնանային կյանքը՝ խորհրդավոր, սքանչելի, հարուստ ու սուրբ, անհասանելի, թույլ ու մեղավոր մարդու ըմբռնողությանը։ Եվ չգիտես ինչու՝ մարդ ուզում էր լաց լինել։

Նադյան արդեն քսաներեք տարեկան էր։ Տասնվեց տարեկանից նա ջերմորեն ամուսնություն էր երազում, և այժմ, վերջապես, նա Անդրեյ Անդրեյիչի հարսնացուն էր, այն նույն Անդրեյի, որ կանգնած էր լուսամուտի այն կողմը։ Նադյային նա դուր էր գալիս, հարսանիքն արդեն նշանակված էր հուլիսի յոթին, չնայած դրան՝ նա ուրախ չէր. գիշերները վատ էր քնում, զվարթությունը կորել էր... Նկուղային հարկից, որտեղ խոհանոցն էր գտնվում, բաց լուսամուտից լսվում էր, թե այնտեղ ինչպես էին շտապում, ինչպես էին դանակները չիկչըխկացնում, ինչպես էին դուռը թխկացնում։ Տապակած հնդկահավի և աղ դրած բադի հոտ էր գալիս։ Եվ չգիտես ինչու՝ թվում էր, թե հիմա այսպես է լինելու ամբողջ կյանքը՝ անվերջ, անփոփոխ։

Ահա մեկը դուրս եկավ տնից և կանգ առավ սանդուղքի գլխին։ Դա Աղեքսանդր Տիմոֆեևիչն է, կամ պարզապես՝ Սաշան, որ մի տասն օր առաջ հյուր էր եկել Մոսկվայից։ Մի ժամանակ ողորմություն ստանալու համար տատիկի մոտ էր գալիս նրա հեռավոր ազգականուհին՝ աղքատացած այրի ազնվական Մարիա Պետրովնան, որ մի վտիտ, նիհար, հիվանդոտ

կին էր։ Նա մի որդի ուներ, անունը Սաշա։ Չգիտես ինչու՝ ասում էին, որ նա հիանալի նկարիչ է, և երբ նրա մայրը մեռավ, տատիկը հոդու փրկության համար Սաշային ուղարկեց Մոսկվա, Կոմիսարյան ուսումնարանը։ Մի երկու տարի հետո Սաշան փոխադրվեց նկարչական ուսումնարան, այստեղ մնաց համարյա տասնհինգ տարի և մի կերպ վերջացրեց ճարտարապետական բաժինը, բայց և այնպես ճարտարապետությամբ չէր զբաղվում, այլ ծառայում էր Մոսկվայի վիմագրատներից մեկում։ Համարյա ամեն ամառ նա գալիս էր տատիկի մոտ, այն էլ սովորաբար շատ հիվանդ, որպեսզի հանգստանա և կազդուրվի։

Այժմ նրա հագին կար կոճկած մի սերթուկ և փողքերը ճմռթված կիսամաշ մի պարուսինե անգրավարտիք։ Վերնաշապիկն էլ արդուկված չէր, և նա ամբողջությամբ մի տեսակ մաշված տեսք ուներ։ Նա շատ նիհար էր, աչքերը խոշոր, մատները երկար, բարակ, ինքը թխադեմ, մորուքավոր, բայց և այնպես գեղեցիկ էր։ Շումիններին վարժվել էր ինչպես հարազատների և նրանց մոտ իրեն զգում էր ինչպես իր տանը։ Նույնիսկ այն սենյակը, ուր նա ապրում էր այստեղ, վաղուց ի վեր կոչվում էր Սաշայի սենյակ։

Կանգնած լինելով սանդուղքի գլխին՝ նա տեսավ Նադյային և գնաց նրա մոտ։

— Ինչքա՜ն լավ է այստեղ, ձեզ մոտ,— ասաց նա։

— Իհարկե լավ է։ Վատ չէր լինի մինչև աշուն մնայիք։

— Այո, երևի այդպես անեմ։ Մինչև սեպտեմբեր կմնամ ձեզ մոտ։

Նա առանց մի պատճառի ծիծաղեց և նստեց Նադյայի կողքին։

— Իսկ ես, ահա, նստել եմ ու այստեղից նայում եմ մայրիկիս,— ասաց Նադյան։— Նա այստեղից այնքա՜ն ջահել է երևում։ Իմ մայրը, իհարկե, ունի թույլ կողմեր,— ավելացրեց նա մի պահ լռելուց հետո,— բայց և այնպես նա սովորական կին չէ։

— Այո, լավ կին է...— համաձայնեց Սաշան։— Ձեր մայրը, իհարկե, յուրովի շատ բարի ու սիրալիր կին է, բայց... ինչպե՞ս ասեմ ձեզ։ Այսօր առավոտյան վաղ ես մտա ձեր խոհանոցը, իսկ այնտեղ չորս սպասավորներն էլ քնում են

ուղղակի հատակին, մահճակալներ չունեն, անկողնի տեղ ցնցոտիներ են, գարշահոտություն, փայտոջիլներ, ուտիճներ... Նույնը, ինչ որ քսան տարի առաջ, ոչ մի փոփոխություն։ Դե, տատիկը, աստված իր հետ, դրա համար էլ նա տատիկ է։ Բայց մայրիկդ... ախր ֆրանսերեն է խոսում, ներկայացումներին է մասնակցում։ Կարծում եմ, կարող էր հասկանալ։

Սաշան խոսելիս իր երկու երկար, նիհար մատները մեկնում էր ունկնդրի առաջ։

— Ինձ համար այստեղ ամեն ինչ մի տեսակ օտարոտի է, անսովոր,— շարունակեց նա։— Գրողը տանի, ոչ ոք ոչինչ չի անում։ Մայրիկդ ամբողջ օրը զբոսնում է, ասես դքսուհի լինի, տատիկն էլ ոչինչ չի անում, դուք էլ։ Ձեր փեսացու Անդրեյ Անդրեյիչն էլ ոչինչ չի անում։

Նադյան այդ նույնը լսել էր և՛ անցյալ տարի, կարծեմ նաև նախանցյալ տարի և գիտեր, որ Սաշան ուրիշ կերպ դատել չի կարող, և դա առաջ նրա ծիծաղն էր բերում, բայց այժմ, չգիտես ինչու, սրտնեղեց։

— Այդ ամենը հին բան է և վաղուց ձանձրացրել է,— ասաց նա ու վեր կացավ։— Գոնե մի որևէ նոր բան հնարեիք։

Սաշան ծիծաղեց և նույնպես վեր կացավ, և երկուսն էլ գնացին դեպի տուն։ Բարձրահասակ, գեղեցիկ ու բարեկազմ աղջիկը այժմ նրա կողքին թվում էր շատ առողջակազմ և շքեղազարդ։ Նադյան զգում էր այդ և խղճում էր նրան, չգիտես ինչու՝ անհարմար էր զգում։

— Եվ ավելորդ բաներ շատ եք ասում,— ասաց Նադյան։— Այ, հենց նոր դուք խոսում էիք իմ Անդրեյի մասին, բայց չէ՞ որ դուք նրան չեք ճանաչում։

— Ի՜մ Անդրեյի... Աստված նրա հետ, ձեր այդ Անդրեյի։ Ես, այ, ձեր երիտասարդությունն եմ ափսոսում։

Երբ մտան դահլիճ, այնտեղ արդեն նստում էին ընթրելու։ Տատը կամ ինչպես տանը անվանում էին նրան՝ տատիկը, որ շատ հաստլիկ, ո՜չ գեղեցիկ, թավ հոնքեր ու բեղիկներով մի կին էր, խոսում էր բարձրաձայն, և հենց միայն ձայնից ու խոսելու ձևերից երևում էր, որ նա ամենաավագն է այս տան մեջ։ Նրան էին պատկանում խանութների ամբողջ շարքեր շուկայում և հնամենի մի սյունազարդ տուն՝ իր պարտեզով, բայց ամեն առավոտ նա աղոթում էր, որ աստված իրեն փրկի սնանկացումից, և աղոթելիս լաց էր լինում։ Ե՛վ նրա հարսը՝ Նադ-

յայի մայրը, Նինա Իվանովնան, որ շիկահեր, խիստ պրկված, pince-nez-ով մի կին էր, յուրաքանչյուր մատին մի-մի ադամանդ, և՛ հայր Անդրեյը, որը մի վտիտ, անատամ ծերունի էր, դեմքի այնպիսի արտահայտությամբ, որ ասես պատրաստվում էր ինչ-որ շատ ծիծաղելի բան պատմել, և՛ նրա որդի Անդրեյ Անդրեյիչը՝ Նադյայի փեսացուն, որ գեր ու գեղեցիկ, երկար գանգրավուն մազերով, արտիստի կամ նկարչի նման մի երիտասարդ էր,— երեքն էլ խոսում էին հիպնոտիզմի մասին։

— Դու ինձ մոտ մի շաբաթում կկազդուրվես,— ասաց տատիկը, դառնալով Սաշային,— միայն թե մի քիչ ավելի շատ կեր։ Եվ ինչի՞ նման ես դու,— հառաչեց նա։— Սարսափելի տեսք ունես։ Ճիշտ և ճիշտ ինչպես անառակ որդին։

— Որը վատնյալ էր հարստությունն հայրական,— ծիծաղկոտ աչքերով դանդաղորեն խոսեց հայր Անդրեյը,— և անբան անասունների հետ էր արածում նզովյալը։

— Սիրում եմ ես իմ հայրիկին,— ասաց Անդրեյ Անդրեյիչը և ձեռքը դիպցրեց հոր ուսին։— Հիանալի ծերունի է։ Բարի՞ ծերունի։

Բոլորը լռեցին։ Հանկարծ Սաշան ծիծաղեց և անձեռոցիկը սեղմեց բերանին։

— Նշանակում է, դուք հավատո՞ւմ եք հիպնոտիզմին,— հարցրեց հայր Անդրեյը Նինա Իվանովնային։

— Ես, իհարկե, չեմ կարող պնդել, թե հավատում եմ,— պատասխանեց Նինա Իվանովնան՝ դեմքին տալով շատ լուրջ, նույնիսկ խիստ արտահայտություն,— բայց պետք է խոստովանեմ, որ բնության մեջ խորհրդավոր ու անհասկանալի բաներ շատ կան։

— Միանգամայն համաձայն եմ ձեզ հետ, թեպետ իմ կողմից ավելացնեմ, որ հավատը զգալիորեն կրճատում է խորհրդավորի բնագավառը մեզ համար։

Մատուցեցին մի մեծ, շատ գեր հնդկահավ։ Հայր Անդրեյը և Նինա Իվանովնան շարունակում էին իրենց զրույցը։ Նինա Իվանովնայի մատներին շողշողում էին ադամանդները, հետո աչքերում արցունքներ շողացին, նա հուզվեց։

— Թեպետ ես ձեզ հետ վիճել չեմ համարձակվի,— ասաց նա,— բայց համաձայնեցեք, կյանքում անլուծելի հանելուկներ այնքա՞ն շատ կան։

— Ոչ մի հատ, համարձակվում եմ հավատացնել ձեզ։

Ընթրիքից հետո Անդրեյ Անդրեյիչը ջութակ նվագեց, իսկ Նինա Իվանովնան դաշնամուրով նվագակցում էր նրան։ Տասը տարի առաջ Անդրեյ Անդրեյիչը համալսարանում ավարտել էր բանասիրական ֆակուլտետը, բայց ոչ մի տեղ չէր ծառայել, որոշակի գործ չուներ, երբեմն միայն մասնակցում էր բարեգործական նպատակով տրվող համերգներին, և քաղաքում նրան արտիստ անունն էին տվել։

Անդրեյ Անդրեյիչը նվագում էր, բոլորը լուռ լսում էին։ Սեղանին մեղմ եռում էր ինքնաեռը, և միայն Սաշան էր, որ թեյ էր խմում։ Հետո, երբ ժամը տասներկուսը խփեց, հանկարծ ջութակի լարը կտրվեց, բոլորը ծիծաղեցին, իրար անցան և սկսեցին հրաժեշտ տալ։

Փեսացուին ճանապարհ դնելուց հետո Նադյան գնաց իր սենյակը, վերին հարկը, որտեղ ապրում էր մոր հետ (ցածի հարկը տատն էր զբաղեցնում)։ Ցածում, դահլիճում, սկսեցին լույսերը մարել, իսկ Սաշան դեռ նստած թեյ էր խմում։ Նա միշտ էլ թեյը խմում էր երկար ու բարակ, մոսկովյան ձևով, ամեն անգամ մի յոթ բաժակ։ Նադյան, երբ նա հանվել ու պառկել էր անկողնում, դեռ երկար ժամանակ լսում էր, թե ինչպես ցածում սպասավորները հավաքում են սեղանը, ինչպես տատիկը բարկանում է։ Վերջապես ամեն ինչ խաղաղվեց, և միայն երբեմն-երբեմն լսվում էր, թե ինչպես ցածում, իր սենյակում թավ ձայնով հաղում է Սաշան։

II

Երբ Նադյան արթնացավ, երևի ժամը երկուսը կլիներ, լուսաբացն սկսվում էր։ Հեռու ինչ-որ տեղ թխկթխկացնում էր պահակը։ Նադյայի քունը չէր տանում, իսկ փափուկ անկողնում պառկած մնալն էլ անդուր էր։ Նադյան, ինչպես և բոլոր անցած մայիսյան գիշերներին, անկողնում նստեց ու սկսեց մտածել։ Իսկ մտքերը էլի նույնն էին, ինչ անցած գիշեր, միապաղաղ, ունայն ու երբեք չհեռացող մտքեր, թե ինչպես Անդրեյ Անդրեյիչն սկսեց սիրահետել իրեն և առաջարկություն արեց, ինչպես ինքը համաձայնեց և հետո կամաց-կամաց գնահատեց այդ բարի, խելացի մարդուն։ Բայց հիմա, երբ հարսանիքին մի ամսից ավելի չի մնացել, չգիտես ինչու, նա սկսել էր վախ

ու անհանգստություն զգալ, կարծես նրան սպասում էր մի ինչ-որ անորոշ, ծանր բան։

«Թրք-թաք, թրք-թաք...— ծուլորեն թխկացնում էր պահակը։— Թրք-թաք...»։

Հնացած մեծ լուսամուտից երևում է այգին, ավելի հեռու՝ խիտ ծաղկած Երևանու թփերն են, որոնք թոշնել են ցրտից։ Եվ սպիտակ, թանձր մշուշը դանդաղորեն սահում է դեպի Երևանին, ասես ուզում է ծածկել նրան։ Հեռավոր ծառերի վրա կոկռում են քնկոտ սերմնագողավները։

— Աստվա՜ծ իմ, ինչո՞ւ այսպես սիրտս ծանրացած է։

Գուցե հենց ամեն մի հարսնացու հարսանիքից առաջ նույն ապրումներն է ունենում։ Ո՛վ գիտե։ Թե՞ Սաշայի ազդեցությունն է սա։ Բայց չէ՞ որ արդեն մի քանի տարի է, ինչ Սաշան կրկնում է միևնույն բանը, ինչպես անգիր արած, և երբ խոսում է, թվում է միամիտ ու տարօրինակ։ Բայց և այնպես ինչո՞ւ Սաշան դուրս չի գալիս իր մտքից, ինչո՞ւ։

Վաղուց է արդեն, ինչ պահակն այլևս չի թխկացնում։ Լուսամուտի տակ ու այգում սկսեցին աղմկել թռչունները, մշուշը քաշվեց այդուց, շուրջն ամեն ինչ ողողվեց գարնանային լույսով, ինչպես ժպիտով։ Շուտով արևից ջերմացած ու գուրգուրված այգին կենդանացավ. և ցողի կաթիլներն ադամանդի պես շողշողացին տերևների վրա։ Եվ հին, վաղուց անխնամ թողնված այգին այդ առավոտ թվում էր այնքա՜ն ջահել, պլճնազարդ։

Տատիկն արդեն արթնացավ։ Սաշան հազաց կոշտ, թավ ձայնով։ Լսվում էր, թե ինչպես ցածում մատուցեցին ինքնաեռը, ինչպես դեսուդեն էին քաշում աթոռները։

Ժամերը սահում էին դանդաղ։ Նադյան արդեն վաղուց վեր էր կացել և վաղուց զբոսնում էր այգում, բայց առավոտը դեռ շարունակվում էր։

Ահա Նինա Իվանովնան՝ լացած աչքերով, հանքային ջրի բաժակը ձեռքին։ Նա զբաղվում էր սպիրիտիզմով, հոմեոպատիայով, շատ էր կարդում. սիրում էր խոսել այն տարակուսանքների մասին, որոնց ենթակա էր ինքը, և Նադյային թվում էր, որ այդ ամենը իր մեջ խոր ու խորհրդավոր իմաստ ունի։ Այժմ Նադյան մայրիկին համբուրեց և սկսեց քայլել նրա կողքին։

— Ինչո՞ւ ես լաց եղել, մայրիկ,— հարցրեց նա։

— Երեկ գիշեր ես կարդացի մի պատմվածք, որտեղ նկարագրված է մի ծերունի և իր դուստրը։ Ծերունին ծառայում է ինչ-որ տեղ, և ահա, մեծավորը սիրահարվել է նրա դստերը։ Մինչև վերջ չեմ կարդացել, բայց այնտեղ կա այնպիսի մի կտոր, որ դժվար է արցունքները զսպել,— ասաց Նինա Իվանովնան և կում արեց բաժակից։— Այսօր առավոտյան հիշեցի, և նորից լացս եկավ։

— Իսկ այս վերջին օրերս ես այնպես տխուր եմ,— ասաց Նադյան մի պահ լռելուց հետո։— Ինչո՞ւ գիշերները քնել չեմ կարողանում։

— Չգիտեմ, սիրելիս։ Բայց երբ գիշերները իմ քունը չի տանում, աչքերս պինդ փակում եմ, ահա այսպես, և մտքումս պատկերացնում եմ Աննա Կարենինային, ինչպես է նա քայլում ու ինչպես է խոսում, կամ որևէ պատմական բան եմ պատկերացնում հին աշխարհից...

Նադյան զգաց, որ մայրը չի հասկանում իրեն և չի կարող հասկանալ։ Իր կյանքում այդ նա զգաց առաջին անգամ, և դրանից նույնիսկ սարսափեց, նրա մեջ թաքնվելու ցանկություն առաջացավ։ Եվ նա գնաց իր սենյակը։

Իսկ ժամը երկուսին նստեցին ճաշելու։ Չորեքշաբթի էր, պաս օր, դրա համար էլ տատիկին մատուցեցին պասուց բորշչ և բրամ ձուկ՝ շիլայով։

Տատին զբաղելու համար Սաշան ուտում էր և՛ ուտիսի ապուրը, և՛ պասուց բորշչը։ Ճաշի վրա նա շարունակ կատակներ էր անում, բայց նրա կատակները միշտ դուրս էին գալիս ծանր, անպայման բարոյականության քարոզի մտքով, և ամենևին էլ ծիծաղելի չէր ստացվում, երբ նա սրախոսություն անելուց առաջ վեր էր բարձրացնում իր շատ երկար, նիհար, ասես մեռած մատները, և երբ մարդու միտք էր գալիս, որ նա շատ հիվանդ է և թերևս երկար չի ապրի այս աշխարհում, այդ ժամանակ մարդ արտասվելու չափ խղճում էր նրան։

Ճաշից հետո տատիկը գնաց իր սենյակը՝ հանգստանալու։ Նինա Իվանովնան մի քիչ դաշնամուր նվագեց և ապա նա էլ գնաց։

— Ա՜խ, սիրելի Նադյա,— սկսեց Սաշան իր սովորական հետճաշյա զրույցը,— եթե դուք ինձ լսեիք, եթե լսեիք...

Նադյան աչքերը փակ ընկղմվել էր հնամենի բազկաթոռի

մեջ, իսկ Սաշան սենյակում հանդարտ քայլում էր մի անկյունից մյուսը։

— Ա՛յ, եթե դուք գնայիք սովորելու,— ասում էր նա։— Միայն լուսավորյալ և սուրբ մարդիկ են հետաքրքիր, միայն նրանք են, որ պետքական են։ Չէ՞ որ այդպիսի մարդիկ որքան շատ լինեն, այնքան շուտ աշխարհում աստծո արքայությունը կտիրի։ Այն ժամանակ ձեր քաղաքից կամաց-կամաց քարը քարի վրա չի մնա, ամեն ինչ տակնուվրա կլինի, ամեն ինչ կփոխվի ինչպես կախարդանքով։ Եվ այն ժամանակ այստեղ կլինեն հսկայական, հոյակապ տներ, սքանչելի այգիներ, չտեսնված շատրվաններ, հիանալի մարդիկ... Բայց գլխավորն այդ չէ։ Գլխավորն այն է, որ ամբոխը մեր իմաստով, ինչպես հիմա նա կա, այդ չարիքը այն ժամանակ չի լինի, որովհետև յուրաքանչյուր մարդ կհավատա և յուրաքանչյուր ոք կիմանա, թե ինչի համար է ապրում ինքը, և ոչ ոք ամբոխի մեջ հենարան չի որոնի։ Սիրելիս, աղավնյակս, գնացե՛ք։ Ցույց տվեք բոլորին, որ այս անշարժ, գորշ ու մեղսալից կյանքը ձանձրացրել է ձեզ։ Ցույց տվեք այդ գեթ ինքներդ ձեզ։

— Չի՛ լինի, Սաշա։ Ես ամուսնանում եմ։

— Է՛, թողե՛ք։ Ո՞ւմ է հարկավոր այդ։

Դուրս եկան այգի, մի պահ քայլեցին։

— Եվ, ինչպես էլ լինի, սիրելիս, հարկավոր է խոր մտածել, հարկավոր է հասկանալ, թե որքան պիղծ, որքան բարոյազուրկ է ձեր այս ունայն կյանքը,— շարունակեց Սաշան։— Հասկացեք ախր, եթե, օրինակ, դուք և ձեր մայրը, և ձեր տատիկը ոչինչ չեք անում, նշանակում է ձեր փոխարեն աշխատում է որևէ մեկ ուրիշը, դուք մաշում եք որևէ մեկ ուրիշի կյանքը, իսկ այդ մի՞թե մաքուր բան է, մի՞թե կեղտոտ չէ։

Նադյան ուզում էր ասել. «Այո, այդ ճշմարիտ է»։ Ուզում էր ասել, որ ինքը հասկանում է, բայց նրա աչքերում արցունքներ երևացին, հանկարծ նա սկսվեց, ամբողջովին կուչ եկավ և գնաց իր սենյակը։

Իրիկնապահին Անդրեյ Անդրեյիչը եկավ և սովորականի նման երկար ժամանակ ջութակ էր նվագում։ Ընդհանրապես նա սակավախոս էր և, թերևս, ջութակը նրա համար էր սիրում, որ նվագելու ժամանակ կարելի էր լուռ մնալ։ Ժամը տասնմեկին տուն գնալիս, արդեն վերարկուն հագին, նա գրկեց

Նադյային և սկսեց ագահորեն համբուրել, նրա երեսը, ուսերը, ձեռքերը։

— Իմ թանկագի՛ն, իմ անուշի՛կ, իմ չքնա՛ղ...— մրմնջում էր նա։— Օ՜, որքա՜ն երջանիկ եմ ես, խենթանում եմ ցնծությունից։

Եվ Նադյային թվում էր, թե ինքն այդ վաղուց է լսել, շա՜տ վաղուց կամ կարդացել է որևէ տեղ... Հին, պատառոտված, վաղուց արդեն մոռացության տրված մի վեպում։

Դահլիճում Սաշան նստել էր սեղանի մոտ և ափսեն իր հինգ երկար մատներին դրած՝ թեյ էր խմում, տատիկը պասյանս էր բաց անում, Նինա Իվանովնան գիրք էր կարդում։ Բոցը ճրթճրթում էր կանթեղում, և ասես ամեն ինչ թվում էր խաղա՜ղ, բարեհաջող։ Նադյան հրաժեշտ տվեց, բարձրացավ վերև, իր սենյակը, պառկեց և իսկույն էլ քուն մտավ։ Բայց, ինչպես նախորդ գիշերն էր, դեռ լույսը չբացված՝ նա սթենացավ։ Քունը չէր տանում, հոգին անհանգիստ էր ու ծանրացած։ Նա նստել էր գլուխը ծնկներին դրած և մտածում էր փեսացուի մասին, հարսանիքի մասին... Չգիտես ինչու՝ հիշեց, որ մայրը չէր սիրում իր հանգուցյալ ամուսնուն և այժմ ոչինչ չուներ, ապրում էր ամբողջովին կախում ունենալով իր սկեսրոջից՝ տատիկից։ Եվ Նադյան որքան էլ մտածում էր, չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ մինչև այժմ ինքը իր մոր մեջ տեսնում էր ինչ-որ առանձնահատուկ, արտասովոր բան, ինչո՞ւ չէր նկատում, որ նա մի հասարակ, սովորական, դժբախտ կին է։

Սաշան էլ քնած չէր ցածում. լսվում էր, թե ինչպես է հաղում նա։ Դա մի տարօրինակ, միամիտ մարդ է, մտածում էր Նադյան, և նրա երազանքներում, բոլոր այդ հրաշագեղ այգիների, չտեսնված շատրվանների մեջ զգացվում է ինչ-որ անհեթեթ բան։ Բայց, չգիտես ինչու, նրա միամտության մեջ, Նույնիսկ այդ անհեթեթության մեջ այնքա՜ն սքանչելի բան կա, որ, ահա, հենց որ ինքը մտածեց, թե չգնա՞ արդյոք սովորելու, ամբողջ սիրտը, ամբողջ կուրծքը զովություն պատեց, լցվեց ուրախության, ցնծության զգացումով։

— Բայց ավելի լավ է չմտածել, լավ է չմտածել...— շշնջում էր նա։— Հարկավոր չէ մտածել դրա մասին։

«Թրք-թաք... — թվկացնում էր պահակը ինչ-որ հեռու տեղ։— Թրք-թաք... Թրք-թաք...»։

III

Հունիսի կեսերին Սաշան հանկարծ սկսեց ձանձրանալ և պատրաստվեց Մոսկվա գնալու։

— Ես այս քաղաքում ապրել չեմ կարող,— ասում էր նա մռայլ։— Ոչ ջրմուղ կա, ոչ կոյուղի։ Ճաշելիս զզվում եմ ուտել, խոհանոցում անտանելի կեղտ է...

— Դե լավ, սպասիր, անառակ զավակ,— համոզում էր տատիկը, չգիտես ինչու, շշուկով։— Ամսի յոթին հարսանիքն է։

— Չեմ ուզում։

— Չէ՞ որ ուզում էիր մինչև սեպտեմբեր մնալ մեզ մոտ։

— Իսկ հիմա, ահա, չեմ ուզում։ Ինձ աշխատել է հարկավոր։

Ամառը խոնավ էր ու պաղ, ծառերը թաց էին, այգում ամեն ինչ անհրապույր, վհատ տեսք ուներ, և իսկապես մարդ աշխատել էր ուզում։ Սենյակներում, ներքևում և վերևում, լսվում էին անծանոթ կանացի ձայներ, տատիկի սենյակում չկչկում էր կարի մեքենան. այդ օժիտն էին շտապ պատրաստում։ Հենց միայն վեց մուշտակ էին տալիս Նադյային, և դրանցից ամենաէժանը, տատիկի ասելով, արժեր երեք հարյուր ռուբլի։ Իրարանցումը ջղայնացնում էր Սաշային, նա նստում էր իր սենյակում ու բարկանում։ Բայց և այնպես նրան համոզեցին մնալ, և նա խոսք տվեց, որ Հուլիսի մեկից շուտ չի գնա։

Ժամանակն արագ էր անցնում։ Պետրոս Առաքյալի տոնի օրը ճաշից հետո Անդրեյ Անդրեյիչն ու Նադյան գնացին Մոսկովյան փողոցը, մի անգամ ևս տեսնելու այն տունը, որ վարձել և վաղուց արդեն պատրաստել էին նորատի զույգի համար։ Տունը երկհարկանի էր, բայց առայժմ կարգի էր բերված միայն երկրորդ հարկը։ Դահլիճի փայլուն հատակը ներկված էր պարկետանման, դրված էին վիեննական աթոռներ, մի դաշնամուր, ջութակի պյուպիտրը։ Ներկի հոտ էր գալիս։ Պատից ոսկե շրջանակի մեջ կախված էր մի մեծ, գունավոր նկար՝ մի մերկ կին, կողքին՝ կոտրված ունկով մի մանուշակագույն սափոր։

— Սքանչելի նկար է,— խոսեց Անդրեյ Անդրեյիչը և գոհունակությամբ շունչ առավ։— Սա նկարիչ Շիշմաշևսկու գործն է։

Այնուհետև բացվում էր հյուրասենյակը՝ իր կլոր սեղանով, բազմոցով, բազկաթոռներով, որոնք ծածկված էին վառ

երկնագույն կտորով։ Բազմոցի վերևը կախված էր հայր Անդրեյի լուսանկարչական մեծ պորտրետն՝ կամիլավկայով և շքանշաններով։ Հետո մտան սեղանատուն, որտեղ բուֆետն էր դրված, ապա՝ ննջարան։ Այստեղ կիսախավարի մեջ կողք-կողքի դրված էին երկու մահճակալ, և այնպես էր երևում, թե ննջարանը կահավորելիս նկատի են ունեցել, որ այստեղ միշտ էլ շատ լավ է լինելու և այլ կերպ լինել չի կարող։ Անդրեյ Անդրեյիչը Նադյային պտտեցնում էր սենյակից սենյակ, շարունակ ձեռքը նրա մեջքին, իսկ Նադյան իրեն զգում էր թույլ, մեղավոր, ատում էր այդ բոլոր սենյակները, մահճակալները, բազկաթոռները, նրա սիրտը խառնում էր այն մերկ կնոջից։ Նրա համար արդեն պարզ էր, որ ինքն այլևս չի սիրում Անդրեյ Անդրեյիչին կամ գուցե երբեք էլ չի սիրել։ Բայց ինչպե՞ս ասել, ո՞ւմ ասել և ինչի՞ համար, նա չէր հասկանում և չէր կարող հասկանալ, թեև դրա մասին մտածում էր ամբողջ օրեր ու գիշերներ... Անդրեյը ձեռքը դցել էր նրա մեջքին, խոսում էր այնպե՞ս սիրալիր, համեստ, այնքա՞ն երջանիկ էր, երբ քայլում էր իր այդ բնակարանում։ Իսկ աղջիկը այդ ամենի մեջ տեսնում էր միայն գռեհկություն, հիմար, միամիտ, անտանելի գռեհկություն, և Անդրեյի ձեռքը, որ գրկել էր աղջկա իրանը, նրան թվում էր օղակապի պես կոշտ ու պաղ։ Եվ ամեն րոպե նա պատրաստ էր փախչելու, հեկեկալու, լուսամուտից դուրս նետվելու։ Անդրեյ Անդրեյիչը նրան տարավ վաննայի սենյակը, ձեռքը գցեց պատին ամրացրած ծորակին, և հանկարծ ջուրը հոսեց։

— Ինչպե՞ս է,— ասաց նա ու ծիծաղեց։— Ես պատվիրել եմ տանիքում հարյուր դույլանոց մի բաք շինել, և ահա, հիմա մենք ջուր կունենանք։

Անցան բակի միջով, հետո դուրս եկան փողոց, կառք վարձեցին։ Փոշին բարձրանում էր թանձր ամպի պես, և թվում էր, թե ահա, որտեղ որ է, անձրև կգա։

— Դու չե՞ս մրսում,— հարցրեց Անդրեյ Անդրեյիչը՝ փոշուց աչքերը կկոցելով։

Աղջիկը լուռ էր։

— Երեկ, հիշո՞ւմ ես, Սաշան ինձ կշտամբում էր, թե ես ոչինչ չեմ անում,— մի պահ լռելուց հետո ասաց Անդրեյը։— Ինչ արած, նա իրավացի է։ Անսահման իրավացի։ Ես ոչինչ չեմ անում և չեմ կարող անել։ Թանկագինս, ինչի՞ց է այդ։ Ինչո՞ւ եմ

ողվում նույնիսկ այն մտքից, թե երբևիցե ես կոկորդ կկպցնեմ դակատիս և կգնամ ծառայելու։ Ինչո՞ւ ես ինձ այնքան վատ եմ զգում, երբ տեսնում եմ մի փաստաբան, կամ լատիներենի ուսուցիչ, կամ թե քաղաքային վարչության անդամ։ Օ՜, մայր Ռուսիա, օ՜, մայր Ռուսիա, դեռ որքա՜ն շատ անգործ ու անօգտակար մարդ ես կրում քեզ վրա։ Որքա՜ն շատ կան քեզ վրա ինձ նմաններ, բաղմաչարչա՜ր Ռուսիա։

Եվ այն, որ ինքը ոչինչ չէր անում, նա ընդհանրացնում էր, դա համարում էր ժամանակի հատկանիշը։

— Երբ ամուսնանանք,— շարունակեց նա,— միասին գյուղ կգնանք, թանկագինս, այնտեղ կաշխատենք։ Մի փոքրիկ հողակտոր կգնենք իր պարտեզով, գետով, կսկսենք աշխատել, կյանքը դիտել... Օ՜, որքա՜ն լավ կլինի այդ։

Նա գլխարկը վերցրեց, և քամին ծածանեց նրա մազերը, իսկ աղջիկը լսում էր նրան ու մտածում. «Աստվա՜ծ իմ, տուն գնալ եմ ուզում։ Աստվա՜ծ իմ»։ Համարյա արդեն տան մոտ էին, երբ հասան հայր Անդրեյին։

— Ահա, հայրիկս էլ է գալիս,— ուրախացավ Անդրեյ Անդրեյիչը և գլխարկը թափահարեց։— Սիրում եմ ես իմ հորը, ճշմարիտ,— ասաց նա կառապանի վարձը վճարելով։ — Հիանալի ծերունի է։ Բարեսիրտ ծերուկ։

Նադյան տուն մտավ բարկացած, տկարացած, մտածելով, որ ամբողջ երեկոյան հյուրեր կլինեն, որ հարկավոր է նրանց զբաղեցնել, ժպտալ, ջութակ լսել, ամեն տեսակ հիմարություններ լսել և խոսել միայն հարսանիքի մասին։ Տատիկը՝ պատկառատես, իր մետաքսե շքեղ հագուստի մեջ, դոռոզ, ինչպես նա միշտ երևում էր հյուրերի առաջ, նստել էր ինքնաեռի մոտ։ Ներս մտավ հայր Անդրեյը՝ խորամանկ ժպիտը դեմքին։

— Գոհունակություն և հոգեպարար մխիթարություն եմ զգում, տեսնելով ձեզ ողջ և առողջ,— ասաց նա տատիկին, և դժվար էր հասկանալ՝ կատա՞կ է անում, թե՞ լուրջ է խոսում։

IV

Անձրևը ծեծում էր լուսամուտներն ու տանիքը։ Լսվում էր սուլոց, և վառարանի ծխնելույզում քամին մռայլ ու ողբագին երգում էր իր երգը։ Գիշերվա ժամը մեկն էր։ Տանը բոլորն արդեն պառկել էին, բայց ոչ ոք քնած չէր, և Նադյային շարունակ

թվում էր, թե ցածում շուշակ են նվագում։ Մի սուր թխկոց լսվեց. երևի լուսամուտի խլափեղկը պոկվեց։ Մի բոպե անց ներս մտավ Նինա Իվանովնան՝ միայն շապիկով, մոմը ձեռքին։

— Այս ի՞նչ թխկոց էր, Նադյա,— հարցրեց նա։

Մայրը մազերը մեկ ծամ հյուսած, երկչոտ ժպիտը դեմքին, այդ փոթորկոտ գիշերին թվում էր ավելի տարիքով, տգեղ, հասակով ցածր։ Նադյան հիշեց, թե ինչպես դեռ նորերս ինքը իր մորն արտասովոր էր համարում և հպարտությամբ էր լսում նրա խոսքերը։ Իսկ հիմա ոչ մի կերպ չէր կարողանում հիշել այդ խոսքերը։ Այն, ինչ նրա միտքն էր դալիս. այնքա՜ն թույլ էր, անպետք...

Վառարանում հնչեց մի քանի բաս ձայների երգ և նույնիսկ լսվեց. «Ա-ա՜խ, տե՜ր իմ աստված»։ Նադյան անկողնում նստեց և հանկարծ ամուր կառչեց իր մազերից ու հեկեկաց։

— Մայրի՜կ, հարազա՜տս, մայրի՜կ,— խոսեց նա,— եթե դու իմանայիր, թե ինչ է կատարվում իմ մեջ։ Խնդրում եմ քեզ, աղաչում եմ, թույլ տուր ինձ գնալ այստեղից։ Աղաչո՜ւմ եմ։

— Ո՞ւր,— նրա ասածը չհասկանալով, հարցրեց Նինա Իվանովնան և նստեց մահճակալին։— Ո՞ւր գնալ։

Նադյան երկար լաց էր լինում և ոչ մի խոսք ասել չէր կարողանում։

— Թույլ տուր ինձ քաղաքից գնալ,— վերջապես ասաց նա։— Հարսանիքը չպետք է լինի և չի՛ լինի, հասկացիր։ Ես այդ մարդուն չեմ սիրում... Նրա մասին խոսել անգամ չեմ կարող։

— Ո՜չ, հարազատս, ո՜չ,— արագ, խիստ վախեցած խոսեց Նինա Իվանովնան։— Հանգստացիր։ Այդ նրանից է, որ տրամադրությունդ վատ է։ Կանցնի։ Լինում է այդպես։ Երևի դու վիճել ես Անդրեյի հետ, բայց երկու սիրողների վեճը մխիթարություն է բերում։

— Լավ, գնա, մայրիկ, գնա,— հեծկլտաց Նադյան։

— Այո,— ասաց Նինա Իվանովնան մի պահ լռելուց հետո։— Շատ ժամանակ չի անցել, երբ դու երեխա էիր, փոքրիկ աղջիկ, իսկ հիմա արդեն հարսնացու ես։ Բնության մեջ ամեն ինչ մշտապես փոխվում է։ Ինքդ էլ չես նկատի, թե ինչպես մայր կդառնաս, կպառավես և դու էլ այնպիսի ըմբոստ աղջիկ կունենաս, ինչպես ես։

— Սիրելի, իմ բարի մայրիկ, չէ՞ որ դու խելացի ես, դու դժբախտ ես,— ասաց Նադյան,— դու շատ դժբախտ ես, էլ ին-

Յո՞ Ես ծամծմված բաներ ասում։ Ի սեր աստծո, ինչու՝։

Նինա Իվանովնան ուզեց ինչ-որ բան ասել, բայց ոչ մի բառ արտասանել չկարողացավ, փղձկաց և դուրս գնաց։ Վառարանի մեջ նորից բաս ձայները դժժացին, հանկարծ սոսկում պաշարեց։ Նադյան անկողնից վեր կացավ և արագ գնաց մոր սենյակը։ Նինա Իվանովնան արտասվաթոր աչքերով պառկել էր անկողնում, ծածկվել երկնագույն վերմակով, իսկ ձեռքին բռնել էր մի գիրք։

— Մայրիկ, լսիր ինձ,— խոսեց Նադյան։— Աղաչում եմ քեզ, մտածիր և հասկացիր։ Դու միայն հասկացիր, թե ինչ աստիճանի խղճուկ ու ստորացուցիչ է մեր կյանքը։ Իմ աչքերը բացվել են, հիմա ես ամեն ինչ տեսնում եմ։ Եվ ի՞նչ է քո այդ Անդրեյ Անդրեյիչը։ Ախր նա խելացի մարդ չէ, մայրիկ։ Տե՛ր իմ աստված։ Հասկացիր, մայրիկ, նա հիմար մարդ է։

Նինա Իվանովնան թափով վեր թռավ նստեց։

— Դու և քո տատը տանջու՞մ եք ինձ,— ասաց նա հեծկլտալով։— Ես ապրե՛լ եմ ուզում, ապրե՛լ,— կրկնեց նա մի քանի անգամ բռունցքով կրծքին խփելով։— Աղա՛տ թողեք ինձ։ Ես դեռ ջահել եմ, ապրե՛լ եմ ուզում, իսկ դուք ինձ պառավ եք դարձրել...

Նա դա՛ռը-դա՛ռը լաց եղավ, նորից պառկեց, կուչ եկավ վերմակի տակ և թվում էր այնպե՛ս փոքրիկ, ողորմելի ու անմիտ։ Նադյան գնաց իր սենյակը, շորերը հագավ և լուսամուտի առաջ նստելով սկսեց սպասել լուսանալուն։ Ամբողջ գիշերը նա նստել ու մտածում էր, իսկ բակից ինչ-որ մեկը շարունակ ծեծում էր լուսամուտի խլափեղկը և սուլում։

Առավոտյան տատիկը գանգատվում էր, որ գիշերը քամին այգում ամբողջ խնձորը թափել է և կոտրել մի ծերացած սալորենի։ Գորշ, մռայլ ու տխուր առավոտ էր. բոլորը ցրտից գանգատվում էին, և անձրևը ծեծում էր լուսամուտները։ Թեյից հետո Նադյան մտավ Սաշայի սենյակը և առանց մի խոսք ասելու չոքեց անկյունում, բազկաթոռի մոտ և ձեռքերով երեսը ծածկեց։

— Ի՞նչ կա,— հարցրեց Սաշան։

— Չեմ կարող...— խոսեց աղջիկը։— Ինչպե՞ս եմ կարողացել ապրել այստեղ, չեմ հասկանում։ Փեսացուիս արհամարհում եմ, ինձ արհամարհում եմ, արհամարհում եմ այս ամբողջ դատարկապորտ, անիմաստ կյանքը...

— Հետո՞, հետո՞...— խոսեց Սաշան՝ դեռևս չհասկանալով, թե ինչ է եղել։— Այդ ոչինչ... Այդ լավ է։

— Այս կյանքը զզվեցրել է ինձ,— շարունակեց Նադյան,— ես այստեղ մի օր էլ չեմ դիմանա։ Հենց վաղը կգնամ այստեղից։ Ինձ էլ տարեք ձեզ հետ, ի սեր աստծո։

Սաշան մի րոպե զարմացած նայեց նրան։ Վերջապես նա հասկացավ և երեխայի պես ուրախացավ։ Նա ձեռքերը թափ տվեց և սկսեց ոտներով թփթփացնել, ասես պարում էր ուրախությունից։

— Հիանալի՞ է,— ասաց նա ձեռքերը շփելով։— Աստվա՞ծ իմ, որքա՞ն լավ է։

Իսկ աղջիկը հմայված պես անթարթ նայում էր նրան իր խոշոր, սիրահարված աչքերով, սպասելով, որ նա իսկույն որևէ նշանակալից, անսահման կարևոր բան կասի իրեն։ Սաշան դեռ ոչինչ չէր ասել, բայց արդեն նրան թվում էր, թե իր առաջ բացվում է ինչ-որ նոր ու ընդարձակ բան, որ առաջ ինքը չգիտեր և արդեն Սաշային նայում էր հույսերով լի, պատրաստ ամեն ինչի, թեկուզ մահվան։

— Վաղը ես մեկնում եմ,— մի պահ մտածելուց հետո ասաց տղան,— և դուք կգաք կայարան՝ ինձ ճանապարհ դնելու... Ձեր իրերը ես կառնեմ իմ ճամպրուկի մեջ և տոմս էլ կվերցնեմ ձեզ համար։ Երրորդ զանգի ժամանակ դուք վագոն կմտնեք, և մենք կգնանք։ Կուղեկցեք ինձ մինչև Մոսկվա, իսկ հետո արդեն կգնաք Պետերբուրգ։ Անձնագիր ունե՞ք։

— Ունեմ։

— Երդվում եմ, դուք չեք ափսոսա և չեք զղջա,— ասաց Սաշան հափշտակված։— Կգնաք, կսովորեք, իսկ հետո արդեն թող ձեր բախտը ձեզ առաջնորդի։ Երբ ձեր կյանքը շուռ կտաք, ամեն ինչ կփոխվի։ Գլխավորը կյանքը շուռ տալն է, ուրիշ բան հարկավոր չէ։ Ուրեմն վաղը կգնա՞նք։

— Օ՜, այո, ի սեր աստծո։

Նադյային թվում էր, թե ինքը շատ է հուզված, որ հոգին ծանրացել է ինչպես երբեք, որ այժմ մինչև մեկնելն ստիպված է լինելու տանջվել ու մտածել։ Բայց նոր էր բարձրացել իր սենյակը, պառկել մահճակալին, իսկույն քուն մտավ և մինչև երեկո քնեց խոր քնով, աչքերն արտասվաթոր, ժպիտը դեմքին։

V

Ս՝արդ ուղարկեցին կառք կանչելու։ Նադյան արդեն գլխարկը գլխին, վերարկուն հագին բարձրացավ վերև, որպեսզի մի անգամ էլ տեսնի մորը, այն ամենը, ինչ իրենն էր։ Նա մի պահ կանգնեց իր սենյակում, անկողնի մոտ, որը դեռ տաք էր, կուշտ նայեց, ապա կամացուկ գնաց մոր մոտ։ Նինա Իվանովնան քնած էր, սենյակում լռություն էր տիրում։ Նադյան մորը համբուրեց և նրա մաղերն ուղղեց, մի երկու րոպե կանգնած մնաց... Ապա առանց շտապելու վերադարձավ ցած։

Դուրսը հորդ անձրև էր տեղում։ Կառապանն ամբողջովին թրջված՝ կանգնած էր շքամուտքի մոտ, կառքի ծածկոցը առաջ քաշած։

— Կառքում չես տեղավորվի, Նադյա,— ասաց տատիկը, երբ սպասավորն սկսեց ճամպրուկները տեղավորել։— Եվ ի՞նչ հաճույք այսպիսի եղանակին ճանապարհ դնել։ Մնայիր տանը։ Տես ի՞նչ անձրև է։

Նադյան ուզեց ինչ-որ բան ասել, բայց չկարողացավ։ Ահա Սաշան նստեցրեց Նադյային, ծածկեց նրա ոտքերը ծնկածածկոցով։ Ահա նա ինքն էլ տեղավորվեց Նադյայի կողքին։

— Բարի ճանապարհ։ Աստված քեզ հետ,— սանդուղքի գլխից ձայն տվեց տատիկը։— Դու, Սաշա, շուտ-շուտ նամակ գրիր մեզ Մոսկվայից։

— Լավ։ Մնաք բարով, տատիկ։

— Երկնային թագուհին քեզ պահապան։

— Ա՛յ թե եղանակ է,— ասաց Սաշան։

Նադյան միայն այժմ լաց եղավ։ Հիմա արդեն նրա համար պարզ էր, որ անպայման գնալու է, որին նա, այնուամենայնիվ, չէր հավատում, երբ հրաժեշտ էր տալիս տատիկին, երբ նայում էր մայրիկին։ Մնաս բարով, քաղաք։ Եվ հանկարծ նա հիշեց բոլորին՝ և՛ Անդրեյին, և՛ նրա հորը, և՛ նոր բնակարանը, և՛ մերկ կինը՝ սափորը կողքին։ Եվ այդ ամենն արդեն չէր վախեցնում, չէր ընկճում, այլ թվում էր միամիտ, մանր և ամեն ինչ գնում էր ետ ու ետ։ Իսկ երբ վագոն նստեցին, և գնացքը շարժվեց, ապա այդ ամբողջ անցյալը՝ այնքան մեծ ու լուրջ՝ կծկվեց, մի փոքրիկ գունդ դարձավ, և ծավալվեց վիթխարի, ընդարձակ ապագան, որ մինչև այժմ այնքան քիչ նկատելի էր։ Անձրևը ծեծում էր վագոնի լուսամուտները, երևում էր

միայն կանաչ դաշտը, անցնում էին հեռագրասյուները, լարերի վրա նստած թռչունները, և հանկարծ ուրախություն համակեց Նադյային. նա հիշեց, որ գնում է դեպի ազատություն, գնում է սովորելու, իսկ այդ նույնն է, ինչ մի ժամանակ, շատ վաղուց կոչվում էր գնալ կաղակության։ Նա և՛ ծիծաղում էր, և՛ լալիս, և՛ աղոթում։

— Ոչի՞նչ,— ասում էր Սաշան ժպտալով։— Ոչի-ի-ի՞նչ։

VI

Անցավ աշունը, ապա և՝ ձմեռը։ Նադյան արդեն շատ էր կարոտել և ամեն օր մտածում էր մոր ու տատիկի մասին, մտածում էր Սաշայի մասին։ Տնից գալիս էին մեղմ, բարի նամակներ, և թվում էր, այնտեղ արդեն ամեն ինչ ներել են ու մոռացել։ Մայիսին, քննություններից հետո նա առողջ և ուրախ գնում էր տուն և ճանապարհին կանգ առավ Մոսկվայում, որպեսզի Սաշային տեսնի։ Սաշան էլի այն էր, ինչ անցյալ ամառ. մորուքով, գլխի մաղերը խնճված, էլի նույն սերթուկով և պարուսինե շալվարով, էլի նույն խոշոր, չքնաղ աչքերով։ Բայց նրա տեսքը վատառողջ էր, տանջված, նա և ծերացել էր, և նիհարել, և շարունակ հազում էր։ Եվ, չգիտես ինչու, Նադյային նա թվաց անգույն, գավառական։

— Աստվա՜ծ իմ, Նա՜դյան է եկել— ասաց նա և ուրախ ծիծաղեց։— Ի՜մ հարազատ, աղավնյակս։

Մի քիչ նստեցին վիմագրատանը, որտեղ շատ էին ծխել և տուշի ու ներկի ուժեղ հոտ էր կանգնած։ Հետո գնացին Սաշայի սենյակը։ Այստեղ նույնպես շատ էին ծխել ու հատակին թքոտել։ Սեղանին, սառած ինքնաեռի մոտ դրված էր մի կոտրած ափսե, մեջը՝ մուգ գույնի թուղթ, և՛ սեղանին, և՛ հատակին մեծ թվով սատկած ճանճեր կային։ Այստեղ ամեն ինչից երևում էր, որ Սաշան իր անձնական կյանքը կազմակերպել է շատ փնթի, ապրում է ինչպես պատահի, լիակատար արհամարհանքով դեպի հարմարությունները, և եթե որևէ մեկը հետը խոսեր նրա անձնական երջանկության, անձնական կյանքի մասին, նրան սիրելու մասին, ապա նա ոչինչ չէր հասկանա և միայն կծիծաղեր։

— Ոչինչ, ամեն ինչ հաջող անցավ,— արագ-արագ պատմում էր Նադյան։— Աշնանը մայրիկը եկավ ինձ մոտ, Պետեր-

բուրդ, ասում էր, որ տատիկը չի բարկանում, այլ միայն շուտ-շուտ մտնում է իմ սենյակը և պատերը խաչակնքում։

Սաշան ուրախ տեսք ուներ, բայց հաղում էր և խոսում էր դողդոջուն ձայնով, և Նադյան շարունակ նայում էր նրան ու չէր հասկանում՝ իսկապես լուրջ հիվա՞նդ է նա, թե՞ միայն իրեն է այդպես թվում։

— Սաշա, թանկագինս,— ասաց նա,— ախր դուք հիվանդ եք։

— Չէ, ոչինչ։ Հիվանդ եմ, բայց ո՛չ շատ...

— Ա՜խ, տե՜ր իմ աստված,— հուզվեց Նադյան,— ինչո՞ւ չեք բուժվում, ինչ։ ձեր առողջությունը չեք պաշտպանում։ Թանկագինս, իմ սիրելի Սաշա,— խոսեց նա, և արցունքները գլորվեցին նրա աչքերից ու, չգիտես ինչու, նրա երևակայության մեջ պատկերացան և՛ Անդրեյ Անդրեյիչը, և՛ մերկ կինը՝ սափորը կողքին, և՛ իր ամբողջ անցյալը, որը հիմա նրան թվում էր նույնքան հեռավոր, որքան մանկությունը։ Եվ նա լաց եղավ, որ Սաշան արդեն այնպես նոր, ինտելիգենտ ու հետաքրքիր չէր թվում իրեն, ինչպես անցյալ տարի էր։— Սիրելի Սաշա, դուք շատ հիվանդ եք, շա՜տ։ Ես չգիտեմ ինչ կանեի, որպեսզի դուք այդպես խեղճ ու նիհար չլինեիք։ Ես այնքա՜ն պարտական եմ ձեզ։ Դուք նույնիսկ պատկերացնել չեք կարող, թե որքան շատ բան եք արել ինձ համար, իմ լա՜վ Սաշա։ Իսկապես հիմա դուք ինձ համար ամենամոտիկ, ամենահարազատ մարդն եք։

Նրանք էլի նստեցին, խոսեցին, և այժմ, երբ Նադյան ձմեռը Պետերբուրգում էր անցկացրել, Սաշայից, նրա խոսքերից, ժպիտից և նրա ամբողջ տեսքից բուրում էր ինչ-որ հնացած, հնահոտ, վաղուց լսված մի բան, որը գուցեև արդեն գերեզման է գնացել։

— Երկու օր հետո ես գնալու եմ Վոլգայի ափերը,— ասաց Սաշան,— իսկ հետո էլ՝ կումիսի։ Ուզում եմ կումիս խմել։ Իսկ ինձ հետ գալիս է իմ մի բարեկամը՝ իր կնոջ հետ։ Կինը զարմանալի մարդ է, շարունակ ճամփի եմ բերում նրան, համոզում, որ գնա սովորելու։ Ուզում եմ, որ իր կյանքը շուտ տա։

Զրուցելուց հետո գնացին կայարան։ Սաշան հյուրասիրեց թեյով, խնձորով։ Իսկ երբ գնացքը շարժվեց, և նա ժպտալով թաշկինակն էր թափահարում, ապա նույնիսկ նրա ոտքերից

երևում էր, որ շատ հիվանդ է և հաղիվ թե երկար ապրի։

Նադյան իրենց քաղաքը հասավ կեսօրին։ Երբ նա կայարանից տուն էր գնում, փողոցները նրան թվում էին շատ լայն, իսկ տները՝ մանր, տափակած։ Մարդիկ չկային, հանդիպեց միայն դաշնամուր լարող գերմանացին՝ շիկագույն վերարկուն հագին։ Բոլոր տները ասես փոշով էին ծածկված։ Տատիկը՝ արդեն բոլորովին ծերացած, առաջվա պես գեր ու տգեղ, Նադյային երկու ձեռքերի մեջ առավ ու, երեսը նրա ուսին սեղմած, երկար լաց էր լինում և պոկվել չէր կարողանում։ Նինա Իվանովնան նույնպես խիստ պառավել էր և վատացել, մի տեսակ նիհարել, բայց դեռ էլի առաջվա պես պրկված էր, և ադամանդները շողշողում էին նրա մատներին։

— Անուշի՜կս,— ասում էր նա ամբողջ մարմնով դողալով։— Սիրելի՜ս։

Հետո նստեցին և լուռ լաց եղան։ Երևում էր՝ տատիկն էլ, մայրիկն էլ, զգում էին, որ անցյալը կորած է ընդմիշտ ու անդարձ. էլ չկա ո՛չ նախկին դիրքը հասարակության մեջ, ո՛չ պատիվը, ո՛չ հյուր հրավիրելու իրավունքը։ Այդպես է լինում, երբ հեշտ ու անհոգ կյանքի ժամանակ գիշերը հանկարծ վրա է տալիս ոստիկանությունը, խուզարկում, և պարզվում է, որ տանտերը վատնել է, կեղծել,— և այդ ժամանակ հավիտյա՜նս մնաս բարով հեշտ ու անհոգ կյանք։

Նադյան վեր բարձրացավ և տեսավ նույն անկողինը, նույն լուսամուտները՝ սպիտակ, թափանցիկ վարագույրներով, իսկ լուսամուտներից դուրս՝ նույն այգին, արևով ողողված, ուրախ, աղմկոտ։ Նա ձեռքը դիպցրեց իր սեղանին, նստեց ու մտքի մեջ ընկավ։ Եվ լավ ճաշել էր, և թեյ էր խմել համով ու յուղալի սերով, բայց մի ինչ-որ բան արդեն պակասում էր, սենյակներում դատարկություն էր զգացվում և առաստաղները ցածր էին։ Երեկոյան նա պառկեց քնելու, ծածկվեց և, չգիտես ինչու, ծիծաղելի էր պառկել այդ տաք, շատ փափուկ անկողնում։

Մի բոպեով ներս եկավ Նինա Իվանովնան, նստեց ինչպես նստում են մեղավորները՝ երկչոտ և շարունակ ետ նայելով։

— Է՛, ինչպե՞ս է, Նադյա,— հարցրեց նա մի պահ լռելուց հետո,— դու գո՞հ ես։ Շա՞տ ես գոհ։

— Գոհ եմ, մայրիկ։

Նինա Իվանովնան վեր կացավ և խաչակնքեց Նադյային ու լուսամուտները։

— Իսկ ես, ինչպես տեսնում ես, կրոնասեր եմ դարձել,— ասաց նա։— Գիտե՞ս, հիմա ես փիլիսոփայությամբ եմ զբաղվում և շարունակ մտածում եմ, մտածում... Եվ հիմա ինձ համար շատ բան պարզվել է լույսի պես։ Ամենից առաջ, կարծում եմ, հարկավոր է, որ ամբողջ կյանքը անցնի ինչպես պրիզմայի միջով։

— Ասա, մայրիկ, ինչպե՞ս է տատիկի առողջությունը։

— Կարծես թե ոչինչ։ Երբ այն ժամանակ դու Սաշայի հետ գնացիր, և քեզանից հեռագիր եկավ, տատիկը հենց որ կարդաց, իսկույն վայր ընկավ։ Երեք օր պառկած էր անշարժ։ Հետո շարունակ աղոթում էր աստծուն ու լալիս։ Իսկ հիմա ոչինչ։

Նա վեր կացավ ու քայլեց սենյակում։

«Թըք-թաք...— թիկացնում էր պահակը։— Թըք-թաք, թըք-թաք...»։

— Ամենից առաջ հարկավոր է, որ ամբողջ կյանքը մի տեսակ անցնի պրիզմայի միջով,— ասաց նա,— այսինքն, ուրիշ խոսքով ասած՝ հարկավոր է, որ գիտակցության մեջ կյանքը բաժանվի պարզագույն տարրերի, ինչպես, ասենք, յոթ հիմնական գույների, և ամեն մի տարրը պետք է ուսումնասիրել առանձին։

Էլի ինչեր ասաց Նինա Իվանովնան կամ թե երբ գնաց, Նադյան այդ չիմացավ, որովհետև նա շուտով քնեց։

Մայիսն անցավ, եկավ հունիսը։ Նադյան արդեն վարժվել էր տանը։ Տատիկը ինքնաեռով էր զբաղվում, խոր հառաչում։ Նինա Իվանովնան երեկոները իր փիլիսոփայության մասին էր պատմում։ Նա առաջվա պես այդ տանն ապրում էր որպես ուրիշի հաշվին ապրող մարդ և ամեն մի մանր դրամի համար պետք է դիմեր տատիկին։ Տանը շատ ճանճ կար, և սենյակների առաստաղները կարծես ավելի ու ավելի ցածրանում էին։ Տատիկն ու Նինա Իվանովնան փողոց չէին դուրս գալիս, վախենալով, թե կհանդիպեն հայր Անդրեյին և Անդրեյ Անդրեյիչին։ Նադյան ման էր գալիս այգում, փողոցում, նայում էր տներին, գորշ ցանկապատերին, և նրան թվում էր, թե քաղաքում ամեն ինչ վաղուց արդեն ծերացել է, իր կյանքն ապրել և ամեն ինչ սպասում է ոչ այն է՝ վախճանին, ոչ այն է՝ ինչ-

որ նորի, թարմի սկզբնավորությանը։ Օ՜, եթե միայն շուտ սկսվեր այդ նորը, վճիտ կյանքը, երբ կարելի կլինի ուղիղ և համարձակ նայել իր բախտի աչքերին, իրեն արդարացի զգալ, լինել ուրախ, ազատ։ Իսկ այդպիսի կյանք վաղ թե ուշ կսկսվի։ Չէ՞ որ կգա մի ժամանակ, երբ տատիկի տնից, որտեղ ամեն ինչ այնպես է սարքած, որ չորս սպասավորներն էլ այլ կերպ չեն կարող ապրել, քան միայն մեկ սենյակում, նկուղային հարկում, կեղտի մեջ,— կգա ժամանակ, երբ այդ տնից հետք էլ չի մնա, և նրա մասին կմոռանան, ոչ ոք չի հիշի։ Եվ Նադյային զվարճացնում էին միայն հարևան բակի տղաները. երբ նա զրոսնում էր այգում, նրանք ծեծում էին ցանկապատը և ծիծաղելով զայրացնում նրան.

— Հարսնացո՜ւ, հարսնացո՜ւ։

Սարատովից եկավ Սաշայի նամակը։ Իր ուրախ, պարզ ձեռագրով Սաշան գրում էր, որ ճանապարհորդությունը Վոլգայի վրայով իրեն լիովին հաջողվեց, բայց Սարատովում մի քիչ հիվանդացել է, ձայնը կտրվել է, և արդեն երկու շաբաթ է, ինչ պառկած է հիվանդանոցում։ Նադյան հասկացավ, թե այդ ինչ է նշանակում, և նրան համակեց մի նախազգացում, որ նման էր համոզմունքի։ Նրան դուր չէր գալիս, որ այդ նախազգացումն ու մտքերը Սաշայի մասին իրեն այնպես չէին հուզում, ինչպես առաջ։ Նա ջերմորեն ապրել էր ուզում, ձգտում էր Պետերբուրգ, և Սաշայի հետ ծանոթությունը պատկերանում էր նրան արդեն հաճելի, բայց հետո՜ հեռավոր անցյալ։ Նա ամբողջ գիշերը չքնեց և առավոտյան լուսամուտի առաջ նստած ականջ էր դնում։ Եվ իսկապես. ցածից ձայներ էին լսվում. տատիկն անհանգստացած՝ արագ-արագ ինչ-որ բան էր հարցնում։ Հետո ինչ-որ մեկը լաց եղավ... Երբ Նադյան ցած իջավ, տատիկն անկյունում կանգնած աղոթում էր, և նրա դեմքը ողողված էր արցունքով։ Սեղանին ընկած էր մի հեռագիր։

Նադյան երկար ժամանակ քայլում էր սենյակում, լսելով, թե տատիկն ինչպես է լալիս, հետո հեռագիրը վերցրեց ու կարդաց։ Հաղորդվում է, որ երեկ առավոտյան Սարատովում թոքախտից վախճանվեց Ալեքսանդր Տիմոֆեևիչը կամ, պարզապես՝ Սաշան։

Տատիկը և Նինա Իվանովնան գնացին եկեղեցի՝ հոգեհանգիստ պատվիրելու, իսկ Նադյան դեռ երկար քայլում էր

սենյակում և մտածում։ Նա պարզ գիտակցում էր, որ իր կյանքը շուտ է եկել, ինչպես այդ ուզում էր Սաշան, որ ինքն այստեղ մենակ է, խորթ, ավելորդ, և որ այստեղ ամեն ինչ իր համար ավելորդ է. առաջվա ամեն ինչը պոկված է իրենից և անհետ կորել է, կարծես այրվել չքացել է և մոխիրը քամուն տրվել։ Նա մտավ Սաշայի սենյակը, մի պահ կանգնեց այնտեղ։

«Մնաս բարով, սիրելի Սաշա»,— մտածում էր նա, և նրա առաջ պատկերացավ նոր կյանքը՝ լայն, ընդարձակ, և դեռևս անորոշ գաղտնիքներով լի այդ կյանքը հրապուրում, կանչում էր նրան։

Նա բարձրացավ իր սենյակը՝ իրերը դարսելու, իսկ մյուս օրն առավոտյան հրաժեշտ տվեց հարազատներին, աշխույժ և ուրախ հեռացավ քաղաքից, ինչպես կարծում էր՝ ընդմիշտ։

1903

ՎԻՊԱԿՆԵՐ

ՏԱՓԱՍՏԱՆԸ

Մի ճամփորդության պատմություն

I

Հուլիսյան մի վաղ առավոտ Z նահանգի N գավառական քաղաքից դուրս եկավ և փոստային ճանապարհով դղրդոցով ճամփա ընկավ առանց զսպանակների մի գզգզված բրիչկա, մեկը այն անդրջրհեղեղյան բրիչկաներից, որոնցով այժմ Ռուսիայում ճամփորդում են միայն վաճառականների գործակատարները, նախրավաճառները և ո՛չ հարուստ քահանաները։ Ամենափոքր շարժումից այդ բրիչկան թիկթիկում էր ու ճրռճրռում։ Նրան մռայլորեն ձայնակցում էր հետևին կապված դույլը, և հենց միայն այդ ձայներից ու այն խղճուկ կաշվե լաթերից, որ ֆոֆռում էին պլոկված մարմնի վրա, կարելի էր դատել, թե որքան հին է ու խարխլված բրիչկան, որ պատրաստ է գերեզման գնալու։

Բրիչկայում նստած էին N քաղաքի երկու բնակիչ՝ N-ի վաճառական Իվան Իվանիչ Կուզմիչովը՝ սափրված, ակնոցավոր ու ծղոտե գլխարկով մի մարդ, որ ավելի շատ նման էր աստիճանավորի, քան վաճառականի, և մյուսը՝ հայր Խրիստաֆոր Սիրիյսկին, N-ի Նիկոլաևյան եկեղեցու ավագ քահանան, երկար մազերով մի վտիտ ծերուկ՝ մոխրագույն պարուսինե կաֆտանով, լայնեզր ցիլինդրով և ասեղնագործած գունավոր գոտիով։ Առաջինը կենտրոնացած մտածում էր ինչ-որ բանի մասին և ստեպ-ստեպ թափ էր տալիս գլուխը, որպեսզի նիրհը փախցնի. նրա դեմքին սովորական գործարար շարությունը պայքարում էր հենց նոր հարազատներին հրաժեշտ տված և լավ խմած մարդու բարեհոգության դեմ։ Իսկ երկրորդը իր խոնավ աչքերով զարմացած նայում էր աստծու աշխարհին և ժպտում այնպես լայն, որ ասես այդ ժպիտը հասնում էր նույնիսկ գլխարկի եզրերին։ Նրա դեմքը կարմիր էր և պաղած

տեսք ուներ։ Նրանք երկուսն էլ, ինչպես Կուզմիչովը, այնպես էլ հայր Խրիստաֆորը, այժմ գնում էին բուրդ վաճառելու։ Տնեցիներին հրաժեշտ տալիս նրանք հենց նոր կուշտ նախաճաշել էին սերով ու բլիթներով և, չնայած դեռ վաղ առավոտ էր, արդեն խմել էին... Երկուսի տրամադրությունն էլ հիանալի էր։

Բացի հենց նոր նկարագրած այս երկուսից և կառապան Դենիսկայից, որն առանց հոգնելու հարվածում էր կայտառ աշխատ ձիերի զույգին, բլիչկայում կար էլի մի ուղևոր՝ մոտ ինը տարեկան մի տղա, որի արևախանձ մուգ դեմքը թրջվել էր արցունքից։ Դա Եգորուշկան էր, Կուզմիչովի քրոջ որդին։ Քեռու թույլտվությամբ և հայր Խրիստաֆորի օրհնությամբ նա գնում էր մի ինչ-որ տեղ՝ գիմնազիա ընդունվելու։ Նրա մայրը՝ Օլգա Իվանովնան, որ կոլեգիական քարտուղարի այրի էր և Կուզմիչովի հարազատ քույրը, սիրում էր կրթված մարդկանց ու աղնիվ հասարակություն, խնդրել էր եղբորը, որը գնում էր բուրդ վաճառելու, Եգորուշկային իր հետ տանել և տալ գիմնազիա։ Եվ այժմ տղան, չհասկանալով, թե ուր և ինչի է գնում, նստել էր կառապան Դենիսկայի կողքին, բռնել նրա արմունկից, որպեսզի վայր չընկնի, և վեր-վեր էր թռչում ինչպես եռացող ինքնաեռի վրա դրած թեյամանը։ Արագ ընթացքից նրա կարմիր վերնաշապիկը փքվում էր մեջքին, և սիրամարգի փետուրով կառապանական նոր գլխարկը շուտ-շուտ սահում էր դեպի ծոծրակը։ Նա իրեն համարում էր վերին աստիճանի անբախտ մարդ և լացը գալիս էր։

Երբ բրիչկան անցնում էր բանտի կողքով, Եգորուշկան նայեց ժամապահներին, որոնք դանդաղ քայլում էին բարձր, սպիտակ պատի մոտով, նայեց, մանրիկ, վանդակավոր լուսամուտներին, տանիքին փայլփլող խաչին և հիշեց, թե ինչպես մի շաբաթ առաջ, Կաղանի աստվածամոր օրը ինքն ու մայրիկը եղան բանտի եկեղեցում, գահական տոնակատարությանը։ Իսկ ավելի առաջ, Զատկի օրը նա բանտ եկավ խոհարարուհի Լյուդմիլայի ու Դենիսկայի հետ, բերելով թխվածք, ձու, կարկանդակ ու տապակած միս։ Բանտարկյալները շնորհակալություն էին հայտնում ու երեսները խաչակնքում, իսկ նրանցից մեկը Եգորուշկային ընծայեց իր ձեռքով պատրաստած կապարե կոճակները։

Տղան նայում էր ծանոթ վայրերին, իսկ ատելի բրիչկան վազում էր նրանց կողքով և ամեն ինչ թողնում հետևում։ Բան-

տից հետո երևացին սև, մրոտած դարբնոցները, ապա՝ կոկիկ, կանաչ գերեզմանատունը, որ շրջապատված էր քարե պարսպով։ Գարսպի հետևից, ուրախ նայում էին սպիտակ խաչերն ու արձանները, որոնք թաքնվել էին բալենիների կանաչի մեջ և հեռվից նմանվում էին սպիտակ բծերի։ Եգորուշկան հիշեց, որ երբ բալենին ծաղկում է, այդ սպիտակ բծերը բալենիների ծաղիկների հետ խառնվելով կազմում են մի սպիտակ ծով, իսկ երբ բալը հասնում է, սպիտակ արձաններն ու խաչերը ծածկվում են արյան պես կարմիր կետերով։ Ցանկապատի այն կողմը, բալենիների տակ գիշեր-ցերեկ քնած էին Եգորուշկայի հայրիկը և Զինաիդա Դանիլովնա տատիկը։ Երբ տատիկը մեռավ, նրան պառկեցրին մի երկար, նեղ դագաղի մեջ և երկու հատ հինգ կոպեկանոցներով ծածկեցին նրա աչքերը, որոնք չէին ուզում փակվել։ Մինչև իր մահվան օրը նա աշխույժ էր և շուկայից բերում էր փափուկ բուբլիկներ՝ վրան խաշխաշ ցանած, իսկ այժմ նա քնած է, քնած...

Իսկ գերեզմանատնից այն կողմ ծխում էին աղյուսի գործարանները։ Թանձր, սև ծուխը մեծ-մեծ քուլաներով դուրս էր գալիս եղեգնածածկ երկար, գետնահուպ տանիքների տակից և ծուլորեն բարձրանում վերև։ Երկինքը գործարանների ու գերեզմանատան վերև թուխ էր, և ծխի քուլաների խոշոր սավերները սահում էին դաշտի ու ճանապարհի վրայով։ Տանիքների մոտ ծխի մեջ շարժվում էին մարդիկ ու ձիեր, որոնք ծածկված էին կարմիր փոշով...

Գործարանների այն կողմը քաղաքը վերջանում էր և սկսվում էր դաշտը։ Եգորուշկան վերջին անգամ նայեց քաղաքին, երեսը կպցրեց Դենիսկայի արմունկին և դառն լաց եղավ...

— Հը՛, դեռ զոռալուց չե՞ս կշտացել, ա՛յ զոռան,— ասաց Կուզմիչովը։— Էլի՞ փսլինքդ բաց թողիր, երես առած։ Ձես ուզում գնալ՝ մնա։ Քեզ ոչ ոք զոռով չի տանում։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, Եգոր ախպեր, ոչինչ...— արագ-արագ մրմնջաց հայր Խրիստաֆորը։— Ոչինչ, ախպերս... Աստծու անունը տուր... վատ բանի չես գնում, լավ բանի ես գնում։ Գիտությունը, ոնց որ ասում են, լույս է, տգիտությունը՝ խավար... Ճիշտ որ այդպես է։

— Ուզո՞ւմ ես ետ դառնալ,— հարցրեց Կուզմիչովը։

— Ու... ու... զո՛ւմ եմ...— հեկեկալով պատասխանեց Եգորուշկան։

— Եվ լավ էլ կանեիր՝ վերադառնայիր։ Միևնույն է, իզուր ես գնում, ավելորդ բան է։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, ախպերս,— շարունակեց հայր Խրիստաֆորը։— Աստծու անունը տուր... Լոմոնոսովն էլ այդպես գնաց ձկնորսների հետ, բայց այնպիսի մարդ դարձավ, որ ամբողջ Եվրոպան էր ճանաչում նրան։ Ուսումը, որ հավատով է ձեռք բերվում, աստվածահաճո պտուղ է տալիս։ Ինչպե՞ս է ասված աղոթքում։ Ի փառս արարչի, ի մխիթարություն մեր ծնողների, ի շահ եկեղեցու և հայրենիքի... Հապա՛։

— Շահ էլ կա, շահ էլ...— ասաց Կուզմիչովը էժանագին սիգարը ծխելով։— Պատահում է՝ մարդ քսան տարի սովորում է, բայց ոչ մի օգուտ։

— Այդպես էլ է լինում։

— Մարդ կա, որին գիտությունն օգուտ է տալիս, մարդ էլ կա, որի հենց միայն միտքն է մոլորում։ Քույրս անխելք կին է, ուզում է, որ ուսումնականների պես լինի, ուզում է, որ Եգորկան գիտնական դուրս գա, բայց այն չի հասկանում, որ ես իմ գործի մեջ էլ կարող էի Եգորկային հավիտենապես երջանկացնել։ Ես այս նրա համար եմ ասում, որ եթե բոլորը ուսման գնան, դառնան ձերդ ազնվություն, այն ժամանակ էլ ո՞վ պիտի առևտուր անի և ո՞վ պիտի ցանք անի։ Բոլորը սովից կմեռնեն։

— Իսկ որ բոլորը առևտուր անեն ու ցանք անեն, այն ժամանակ էլ ուսման գնացող չի լինի։

Եվ մտածելով, որ իրենք երկուսն էլ համոզիչ ու ծանրակշիռ բան ասացին, Կուզմիչովն ու հայր Խրիստաֆորը լուրջ դեմք ընդունեցին և միաժամանակ հազացին։ Դենիսկան, որ ականջ էր դնում նրանց խոսակցությանը և ոչինչ չէր հասկացել, գլուխը թափ տվեց և տեղից բարձրանալով երկու աշխետին էլ հարվածեց։ Լռություն տիրեց։

Մինչ այդ, ուղևորների առջև արդեն փռվել էր լայն ու անծայրածիր հարթությունը՝ եղերված բլուրների շղթայով։ Սեղմվելով և իրար հետևից դուրս նայելով՝ այդ բլուրները միաձուլվելով կազմում էին մի բարձրություն, որ ճանապարհից դեպի աջ փռվում էր մինչև հորիզոն և կորչում կարմրակապույտ հեռվում։ Գնում ես, գնում ու ոչ մի կերպ չես կարողանում որոշել՝ որտեղ է սկսվում այն և որտեղ է վերջանում... Արևն արդեն դուրս էր եկել հետևից, քաղաքի այն կողմից և մեղմ ու հան-

դարտ սկսել իր աշխատանքը։ Սկզբում, հեռու առջևում, որտեղ երկինքը միաձուլվում էր գետնին, փոքրիկ բլուրների ու հողմաղացի մոտ, որը հեռվից նման էր ձեռքերը թափահարող փոքրիկ մարդու, գետնի վրայով սահեց վառ-դեղնավուն մի լայն շերտ։ Մի րոպե անց՝ նույնպիսի մի շերտ լուսավորվեց մի քիչ ավելի մոտիկ, սողաց դեպի աջ և ընդգրկեց բլուրները։ Ինչ-որ մի ջերմ բան դիպավ Եգորուշկայի մեջքին, հետևից գաղտագողի մոտեցող լույսի շերտը հորդեց բրիչկայի ու ձիերի վրայով, ընդարաջ սլացավ մյուս շերտերին, և հանկարծ ամբողջ լայնարձակ տափաստանը իր վրայից նետեց առավոտյան կիսաստվերը, ժպտաց և ցողը շողացրեց։

Հնձած տարեկանը, մոլախոտը, ծիծեռնախոտը, վայրի կանեփը, ամեն ինչ տապից գորշացած, գեղնած ու կիսամեռ, այժմ ցողաթաթախ ու արևից դուրգուրված կենդանացել էր, որ նորից ծաղկի։ Ճանապարհի վրայով ուրախ ճիչերով սլանում էին թռչունները, խոտերի մեջ իրար ձայն էին տալիս գետնասկյուռները, ձախ կողմում հեռու, ինչ-որ տեղ լալիս էին կիվիվները։ Կաքավների երամը բրիչկայից վախեցած՝ տեղից պոկվեց և իր մեղմ դղրդոցով թռավ դեպի բլուրները։ Ծղրիդները, ճպուռները, խլրդածղրիդները խոտերի մեջ ձիգ էին տալիս իրենց միալար ճռճռան երաժշտությունը։

Բայց շատ ժամանակ չանցած՝ ցողը վերկացավ, օդը կանգ առավ, և խաբված տափաստանը նորից ընդունեց իր հուլիսյան տարտամ տեսքը։ Խոտը թորշոմեց, կյանքը քարացավ։ Գորշ-կանաչավուն արևախանձ բլուրները, որոնք հեռվում կարմրակապույտին էին տալիս ստվերի պես հանդարտ իրենց երանգներով, հարթությունը՝ մշուշապատ հեռուներով և նրա վրա շուռ տված երկինքը, որը տափաստանում, որտեղ անտառներ ու բարձր լեռներ չկան, թվում է սոսկալի խոր ու թափանցիկ, այժմ պատկերանում էին անծայրածիր, թախծից քարացած...

Ի՞նչ տոթ է ու տրտում։ Բրիչկան վազում է, իսկ Եգորուշկան տեսնում է շարունակ միևնույնը՝ երկինք, հարթություն, բլուրներ... Երաժշտությունը խոտերի մեջ լռել է։ Գորշաթռչունները թռել, գնացել են, կաքավները չեն երևում։ Թորշոմած խոտերի վրայով սլանում են սերմնագռավները։ Նրանք բոլորն էլ նման են իրար և տափաստանն ավելի ևս միապաղաղ են դարձնում։

Թռչում է ուրուրը հենց գետնի վրայով, հանդարտ թափահարելով թևերը և հանկարծ կանգ է առնում օդում, ասես մտածելով կյանքի տաղտկության մասին, հետո թափ է տալիս թևերը և նետի պես սլանում տափաստանի վրայով, ու հասկանալի չէ՝ ինչի՞ է թռչում նա, ի՞նչ է հարկավոր նրան։ Իսկ հեռվում հողմաղացն է թափահարում թևերը...

Որպես բազմաղանություն, երբեմն մոլախոտերի մեջ երևում է մի սպիտակ գանգ կամ գլաքար։ Մի պահ երևում է գորշագույն քարե տրձան կամ չորացած մի ուռենի՝ վերին ճյուղի վրա կապույտ թռչուն, ճանապարհը կտրում անցնում է մի դետնասկյուռ, ապա՝ նորից աչքի առջևով սլանում են մոլախոտը, բլուրները, ագռավները...

Բայց ահա, փառք աստծու, դեմն է գալիս խրձեր բարձած մի սայլ։ Բարձր խրձերի վրա պառկած է մի աղջիկ։ Նա քնաթաթախ, տոթից թուլացած՝ բարձրացնում է գլուխը և նայում դիմացից եկողներին։ Դենիսկան բերանը բաց նայում է նրա վրա, ձիերը դնչները մեկնում են խրձերին, բրիչկան ճռռալով համբուրվում է սայլի հետ, և ծակծկող հասկերը ավելի պես քսվում են հայր Խրիստաֆորի ցիլինդրին։

— Մարդկանց վրա ես քշում, թմբլիկ,— գոռում է Դենիսկան։— Տես, ո՞նց է սփաթը փքվել, ասես բոռի կծած լինի։

Աղջիկը քունը գլխին ժպտում է և շրթունքները շարժելով նորից է պառկում... Բայց ահա բլրի վրա երևում է մի մենավոր կաղամախին։ Ո՞վ է տնկել այդ ծառը և ինչո՞ւ է նա այստեղ, աստված գիտե։ Դժվար է աչք հեռացնել նրա սլացիկ տեսքից ու կանաչ հագուստից։ Երջանի՞կ է արդյոք այս գեղեցկուհին։ Ամառը՝ շոգ, ձմեռը՝ սառնամանիք ու բուք, աշնանը՝ սոսկալի գիշերներ, երբ միայն խավար ես տեսնում ու ոչինչ չես լսում, բացի կատաղորեն ոռնացող մոլեգին քամուց, իսկ գլխավորը՝ ամբողջ կյանքում մենակ, մենակ, մենակ... Կաղամախու այն կողմի վառ-դեղին գորգի նման բլրի գագաթից մինչև ճանապարհն են ձգվում ցորենի արտերը։ Բլրի գլխին հացն արդեն հնձած ու դեզեր է դրված, իսկ ցածում նոր են միայն հնձում... Վեց հնձվոր շարքով կանգնած քաշում են գերանդիները, և գերանդիները ուրախ փայլփլում ու բոլորը միասին տակտով ձայն են արձակում՝ «խը՛շ-խը՛շ»։ Խուրձ կապող կանանց շարժումներից, հնձվորների դեմքերից, գերանդիների փայլից երևում է, որ շոգը վառում է ու խեղդում։ Մի

սև շուն լեզուն դուրս գցած հնձվորների մոտից վազում է դեպի բրիչկան, հավանորեն մտադիր լինելով հաչել, բայց կես ճանապարհին կանգ է առնում և անտարբեր նայում Դենիսկային, որն սպառնում է նրան մտրակով։ Շոգ է, հաչելը չի գալիս։ Կանանցից մեկը ձգվում է և երկու ձեռքը հոգնած մեջքին կանթելով՝ նայում է Եգորուշկայի զումաշե վերնաշապիկին։ Արդյոք կարմիր գո՞ւյնը դուր եկավ նրան, թե՞ հիշեց իր երեխաներին, միայն թե երկար ժամանակ կանգնել է նա անշարժ ու նայում է հեռացողների հետևից...

Բայց ահա ցորենի արտն էլ անցավ։ Նորից ձգվում են խանձված հարթությունը, դեղնած բլուրները, առթ երկինքը, նորից երկնքում սլանում է ուրուրը։ Հեռվում առաջվա պես թևերն է թափահարում հողմաղացը, և դեռ էլի նա նման է ձեռքերը թափահարող փոքրիկ մարդու։ Ջանձրացրել է այդ հողմաղացին նայելը, և թվում է, թե երբեք չես հասնի նրան, թե նա հեռու է վազում բրիչկայից։

Հայր Խրիստաֆորը և Կուզմիչովը լուռ էին։ Դենիսկան մտրակում էր ձիերին ու գոռգոռում, իսկ Եգորուշկան արդեն լաց չէր լինում, այլ անտարբեր այս ու այն կողմ էր նայում։ Շոգը և տափաստանի տաղտուկը հոգնեցրել էին նրան։ Նրան թվում էր, թե ինքը վազուց է արդեն ճամփա գնում ու վեր-վեր թռչում, թե արեգակն արդեն վազուց է այրում իր թիկունքը։ Դեռ տասը վերստ էլ չէին անցել, իսկ նա արդեն մտածում էր. «Գոնե մի հանգստանայինք»։ Քեռու դեմքից քիչ-քիչ ջնջվել էր բարեհոգությունը և մնացել էր միայն գործարար չորությունը, իսկ սափրված, նիհար դեմքին, մանավանդ երբ այն ակնոցով է, երբ քիթը և քունքերը ծածկված են փոշով, այդ չորությունը տալիս է անողոք, ինկվիզիտորական արտահայտություն։ Այնինչ հայր Խրիստաֆորը չէր դադարում զարմացած նայել աստծու աշխարհին ու ժպտալ։ Նա լուռ մտածում էր ինչ-որ լավ և ուրախ բանի մասին, և բարի, հեզահամբույր ժպիտը սառել էր նրա դեմքին։ Թվում էր, թե այդ լավ, ուրախ միտքն էլ շոգից քարացել, կանգ էր առել նրա ուղեղում...

— Ի՞նչ կասես, Դենիսկա, այսօր կհասնե՞նք սայլերին,— հարցրեց Կուզմիչովը։

Դենիսկան նայեց երկնքին, քիչ վեր բարձրացավ, մտրակեց ձիերին և հետո միայն պատասխանեց։

— Աստված հաջողի՝ երեկոյան դեմ կհասնենք։

Շան հաչոց լսվեց։ Հանկարծ տափաստանային մի վեց գամփռներ, ասես դարանից դուրս թռչելով, կատաղի հաչոցով նետվեցին դեպի բրիչկան։ Նրանք բոլորը՝ անասելի չար, բըրդոտ, սարդանման մռութներով ու կատաղությունից կարմիր աչքերով՝ շրջապատեցին բրիչկան և մոլեգնաբար իրար հրմըշտելով մի խոպոտ ոռնոց բարձրացրին։ Նրանք բուռն կերպով ատում էին և կարծես պատրաստ էին պատառ-պատառ անելու և՛ ձիերին, և՛ բրիչկան, և՛ մարդկանց... Դենիսկան, որ սիրում էր շներին գաղտագնել ու մտրակել, ուրախացավ այդ դեպքից և դեմքին չարախինդ արտահայտություն տալով, կռացավ ու մտրակեց շներից մեկին։ Մյուսներն ավելի կատաղորեն խրոխտացին, ձիերը թափ առան։ Եվ Եգորուշկան, որ հազիվ էր իրեն պահում կառապանի կողքին, նայելով շների աչքերին ու ժանիքներին՝ հասկանում էր, որ եթե վայր ընկնի, իրեն իսկույն պատառ-պատառ կանեն, բայց վախ չէր զգում, այլ նայում էր նույնպես չարախնդորեն, ինչպես Դենիսկան, և ափսոսում էր, որ իր ձեռքին մտրակ չկա։

Բրիչկան հասավ ոչխարի հոտին։

— Կանգնի՛ր,— գոռաց Կուզմիչովը։— Պահի՛ր... Տպր՛ոռ...

Դենիսկան ամբողջ մարմնով ետ ընկավ և երասանակները քաշեց։ Բրիչկան կանգ առավ։

— Այստե՛ղ արի,— ձայն տվեց Կուզմիչովը հովվին։— Ջսպիր շներին, գրողը տանի դրանց։

Պատառոտված հագուստով և ոտաբոբիկ ծերունի հովիվը, որ մորթե փափախը գլխին, կեղտոտ տոպրակը կողքից կախած, կեռ ծայրով երկար մահակը ձեռքին իսկ և իսկ նման էր հին կտակարանի անձի, շներին հանդարտեցրեց և փափախը վերցնելով մոտեցավ բրիչկային։ Ճիշտ նույնպիսի մի հին կտակարանային կերպարանք անշարժ կանգնած էր հոտի մյուս ծայրում և անտարբեր նայում էր անցորդներին։

— Ո՞ւմ հոտն է սա,— հարցրեց Կուզմիչովը։

— Վառլամովի,— բարձր պատասխանեց ծերունին։

— Վառլամովի,— կրկնեց հոտի մյուս ծայրին կանգնած հովիվը։

— Երեկ Վառլամովն այստեղով անցե՞լ է, թե՞ ոչ։

— Չի անցել... Նրա գործակատարն է անցել...

— Քշի՛ր։

Բրիչկան առաջ գնաց, և հովիվներն իրենց կատաղի շնե-

րով մնացին հետևում։ Եգորուշկան դժկամ նայում էր առաջ, մանուշակագույն հեռուն, և արդեն նրան սկսում էր թվալ, թե թևերը թափահարող հողմաղացը մոտենում է։ Նա ավելի ու ավելի էր մեծանում և արդեն կարելի էր պարզ տեսնել նրա երկու թևերը։ Մի թևը հին էր, կարկատած, մյուսը միայն վերջերս էր շինվել նոր փայտից և փայլփլում էր արևի տակ։

Բրիչկան ուղիղ էր գնում, իսկ հողմաղացը, չգիտես ինչու, սկսեց հեռանալ դեպի ձախ։ Գնում էին, գնում, իսկ հողմաղացը շարունակ հեռանում էր դեպի ձախ և աչքից չէր անհետանում։

— Լավ հողմաղաց է կառուցել Բոլտվան իր որդու համար,— ասաց Դենիսկան։

— Իսկ նրա ագարակը ինչ-որ չի երևում։

— Այն կողմն է, ձորի հետևը։

Շուտով երևաց նաև Բոլտվայի ագարակը, իսկ հողմաղացը էլի ետ չէր մնում, նայում էր Եգորուշկային իր պսպղուն թևով ու թափահարում։ Իսկակա՞ն վհուկ։

II

Կեսօրին մոտ բրիչկան ճանապարհից թեքվեց դեպի աջ, դանդաղ գնաց մի փոքր տարածություն և կանգ առավ։ Եգորուշկան մեղմ, շատ փաղաքուշ քչքչոց լսեց և զգաց, որ իր երեսին զով թավշի նման դիպավ մի ինչ-որ ուրիշ օդ։ Բլրից, որ բնությունը սարքել էր վիթխարի այլանդակ քարերից, ինչ-որ մի անհայտ բարերարի ձեռքով դրված կաճաճե խողովակի միջով ջուր էր հոսում բարակ շիթով։ Ջուրը թափվում էր գետնին և թափանցիկ, ուրախ, արևի տակ շողալով ու մեղմ փնչալով, ասես իրեն մի ուժեղ ու փոթորկահույզ գետ երևակայելով՝ արագ վազում էր դեպի ձախ, ինչ-որ մի տեղ։ Բլրակից ոչ հեռու փոքրիկ գետակը փռվում, ջրափոս էր կազմում։ Ջերմ ճառագայթները և շիկացած հողը ագահորեն ջուրը ծծելով՝ խլում էին նրա ուժը։ Բայց մի փոքր հեռու նա հավանորեն խառնվում էր մի ուրիշ իր նման գետակի, որովհետև բլրակից մի հարյուր քայլ հեռու նրա հոսանքում կանաչին էր տալիս խիտ ու փարթամ բոշխը, որի միջից, երբ բրիչկան մոտեցավ, ճչալով դուրս թռան երեք կտցար։

Ճանապարհորդներն առավոտ մոտ իջան հանգստանալու և ձիերին կերակրելու։ Կուզմիչովը, հայր Խրիստաֆորն ու Եգորուշկան նստեցին բրիչկայի ու արձակված ձիերի նոսր ստվերում փռված թաղիքի վրա և սկսեցին նախաճաշել։ Այն լավ, ուրախ միտքը, որ շոգից անշարժացել էր հայր Խրիստաֆորի ուղեղում, այժմ ջուր խմելուց և մի խաշած ձու ուտելուց հետո երևան եկավ։ Հայր Խրիստաֆորը սիրալիր նայեց Եգորուշկային, ծամեց և սկսեց։

— Ես ինքս էլ, ախպերս, սովորել եմ։ Ամենափոքր հասակից աստված իմ մեջ միտք ու հասկացողություն է դրել, այնպես որ ես ուրիշների նման չեմ, երբ քո հասակին էի, ծնողներիս ու դաստիարակներիս մխիթարում էի իմ խելամտությամբ։ Դեռ տասնհինգ տարեկան էլ չկայի, բայց արդեն լատիներեն էի խոսում ու ոտանավորներ էի հորինում ոնց որ ռուսերեն։ Հիշում եմ, Խրիստաֆոր սրբազանի գավազանակիրն էի։ Մի անգամ պատարագից հետո, հիշում եմ ոնց որ այսօր լինի, բարեպաշտ թագավոր Ալեքսանդր Պավլովիչ Օրհնյալի անվանակոչության օրը նա զգեստն էր հանում եկեղեցու բեմում, սիրալիր նայեց ինձ ու հարցրեց. «Puer bone, quam appellaris?»[1]։ Իսկ ես պատասխանում եմ. «Christophorus sum»[2]։ Իսկ նա՝ «Ergo connominati summus» այսինքն՝ նշանակում է մենք անվանակիցներ ենք... Հետո հարցնում է լատիներեն. «Ո՞ւմ տղան ես»։ Ես էլ, նույնպես լատիներեն, պատասխանում եմ, որ Լերեդինսկ գյուղի սարկավագ Սիրիյսկու որդին եմ։ Տեսնելով իմ այդպիսի արագ ու պարզ պատասխանները՝ սրբազանն ինձ օրհնեց ու ասաց. «Գրիր հորդ, որ ես իրեն աչքաթող չեմ անի, իսկ քեզ նկատի կունենամ»։ Ավագ քահանան ու մյուս քահանաները, որոնք բեմի վրա էին, լսելով մեր լատիներեն խոսակցությունը՝ նույնպես շատ էին զարմացել և ամեն մեկը ինձ գովաբանելով իր գոհունակությունն էր հայտնում։ Դեռ բեղեր էլ չունեի, ախպերս, բայց արդեն կարդում էի և՛ լատիներեն, և՛ հունարեն, և՛ ֆրանսերեն, գիտեի փիլիսոփայություն, մաթեմատիկա, քաղաքացիական պատմություն և բոլոր գիտությունները։ Աստված զարմանալի հիշողություն էր տվել ինձ։ Պատահում էր մի բան

[1] Բարի տղա, ի՞նչ է քո անունը։

[2] Խրիստաֆոր։

որ մեկ-երկու անգամ կարդացի, արդեն անգիր գիտեի։ Դաստիարակներն ու իմ բարեկամները զարմանում էին և ենթադրում, որ ինձնից դուրս կգա գիտնական մարդ, եկեղեցու աստղ։ Ես ինքս էլ մտածում էի գնալ, Կիև, ուսումս շարունակել, բայց ծնողներս ճանապարհս չօրհնեցին։ «Դու, ասում էր հայրս, որ ամբողջ կյանքումդ սովորես, էլ մենք ե՞րբ կտեսնենք քո երեսը»։ Այս խոսքերը լսելով, ես ուսումը թողի և գործի մտա։ Այդպես, իհարկե, ինձնից գիտնական դուրս չեկավ, բայց հոլսեցի ծնողներիս, նրանց ծերությունը հանգստացրի, պատվով հողին հանձնեցի։ Հնազանդությունը պասից ու աղոթքից լավ է։

— Երևի արդեն բոլոր գիտությունները մոռացել եք,— նկատեց Կուզմիչովը։

— Ինչպե՞ս չմոռանաս։ Փառք աստծո, արդեն ութերորդ տասնյակն եմ մտել։ Փիլիսոփայությունից ու ճարտասանությունից էլի որոշ բան հիշում եմ, բայց լեզուներն ու մաթեմատիկան բոլորովին մոռացել եմ։

Հայր Խրիստաֆորը աչքերը կկոցեց, մի պահ մտածեց ու կիսաձայն ասաց.

— Ի՞նչ բան է էակը։ Էակը մի ինքնատիպ բան է, որ այլ բան չի պահանջում իր կատարման համար։

Նա գլուխն օրորեց և գոհունակությամբ ծիծաղեց։

— Հոգեկա՞ն սնունդ,— ասաց նա։— Ճշմարիտ. նյութը մարմինն է սնում, իսկ հոգեկան սնունդը՝ հոգին։

— Գիտությունները՝ գիտություններ,— հառաչեց Կուզմիչովը,— բայց, այ, թե որ Վառլամովին չհասանք, ա՛յ թե գիտություն կլինի մեզ համար։

— Մարդը ասեղ չի, կդտնենք։ Հիմա նա այս կողմերում է պտույտ գալիս։

Բոշխերի վրայով թռան գնացին մեզ ծանոթ երեք կտցարը, և նրանց ծղրտոցի մեջ անհանգստություն ու սրտնեղություն էր զգացվում, որ իրենց քշել են գետակից։ Ձիերը հանգիստ ծամում էին ու փնչացնում։ Դենիսկան ման էր գալիս նրանց մոտ և աշխատելով ցույց տալ, թե ինքը բոլորովին անտարբեր է այն վարունգի, թխվածքի ու ձվի նկատմամբ, որ ուտում էին տերերը, ամբողջովին կլանված էր պիծակ ու ճանճ սպանելով, որոնք կպել էին ձիերի փորին ու մեջքին։ Նա կոկորդից ինչ-որ, յուրահատուկ հաղթական ձայն արձակելով շրխկացնում էր իր զոհերին, իսկ անհաջողության դեպքում սրբտ-

նեղած կոնչում էր և հայացքով ուղեկցում մահից ազատված ամեն մի երջանիկի։

— Դենիսկա՜, այդ որտե՞ղ ես դու։ Արի դու էլ կեր,— ասաց Կուզմիչովը խոր հառաչելով, և դրանով իսկ հասկացնել տալով, որ ինքն արդեն կուշտ է։

Դենիսկան անհամարձակ մոտեցավ թաղիքին և ընտրեց իր համար հինգ հատ խոշոր ու դեղին վարունգ, այսպես կոչված՝ «դեղնուկներ» (նա անհարմար էր զգում մանր ու թարմ վարունգներ ընտրել), վերցրեց երկու հատ խաշած ձու՝ սևերը և ճաքճքածները, հետո վարանմունքով, ասես վախենալով, թե կխփեն իր մեկնած ձեռքին, նա մատը դիպցրեց կարկանդակին։

— Վերցրո՛ւ, վերցրո՛ւ— շտապեցրեց նրան Կուզմիչովը։

Դենիսկան սրտապնդած վերցրեց կարկանդակը, մի կողմ հեռացավ, նստեց գետնին՝ մեջքը դեպի բրիչկան դարձրած։ Եվ իսկույն լսվեց ծամելու այնպիսի բարձր չփչփոց, որ նույնիսկ ձիերը շուռ եկան ու կասկածանքով նայեցին Դենիսկային։

Նախաճաշելուց հետո Կուզմիչովը բրիչկայի միջից հանեց մի լիքը տոպրակ և ասաց Եգորուշկային.

— Ես քնելու եմ, իսկ դու նայիր, որ այս տոպրակը գըլխիս տակից դուրս չքաշեն։

Հայր Խրիստաֆորը գոտին արձակեց, հանեց իր փարաջան ու կաֆտանը, և Եգորուշկան նրան նայելով՝ զարմանքից քար կտրեց։ Նա ամենևին չէր էլ ենթադրում, թե քահանաները շալվար են ունենում, այնինչ հայր Խրիստաֆորի հագին իսկական պարուսինե շալվար կար՝ փողքերը սապոգների ճտքերը խրած և մեկ էլ խայտաբղետ քաթանե մի կարճ բաճկոն։ Նայելով նրան՝ Եգորուշկան գտավ, որ իր աստիճանին չսազող այդ հագուստի մեջ հայր Խրիստաֆորը իր երկար մազերով ու մորուքով շատ է նման Ռոբինզոն Կրուզոյին։ Շորերը հանելով՝ հայր Խրիստաֆորն ու Կուզմիչովը պառկեցին բրիչկայի տակի ստվերում, երես երեսի, և աչքերը փակեցին։ Դենիսկան ուտելը վերջացնելով՝ պառկեց արևի տակ և նույնպես աչքերը փակեց։

— Նայիր, որ ձիերը չտանեն,— ասաց նա Եգորուշկային և իսկույն քնեց։

Լռություն տիրեց։ Լսվում էր միայն, թե ինչպես են փընչացնում և ծամում ձիերը, և ինչպես են խոմփացնում քնածմարդիկ։ Հեռու ինչ-որ մի տեղ լալիս էր մի կիվիվ և երբեմն լսվում էր երեք կոցարների ծվոցը, որոնք եկել էին տեսնելու, թե չե՞ն գնացել արդյոք անկոչ հյուրերը։ Մեղմ քչքչոցով գլորվում էր առվակը, բայց այդ բոլոր ձայները չէին խանգարում լռությունը, չէին արթնացնում անշարժացած օդը, այլ, ընդհակառակն, թմրության մեջ էին գցում բնությունը։

Եգորուշկան շնչահեղձ լինելով շոգից, որն առանձնապես ուժեղ էր զգացվում ուտելուց հետո, վազեց դեպի բոշխուտը և այդտեղից դիտեց շրջակայքը։ Նա տեսավ միևնույնը, ինչ տեսել էր մինչև կեսօր՝ հարթություն, բլուրներ, երկինք, կարմրակապույտ հեռուն։ Միայն թե բլուրներն ավելի մոտիկ էին և չկար հողմաղացը, որը մնացել էր հեռու հետևում։ Ժայռոտ բլրակի հետևը, որտեղով առվակն էր հոսում, բարձրանում էր մի ուրիշ բլուր՝ ավելի հարթ ու ավելի լայն։ Նրա վրա ծվարել էր մի փոքրիկ գյուղակ՝ բաղկացած հինգ-վեց տնից։ Խրճիթների մոտ չէին երևում ո՛չ մարդիկ, ո՛չ ծառեր, ո՛չ ստվեր, ասես գյուղակը շնչահեղձ էր եղել շիկացած օդի մեջ ու չորացել։ Զանձրույթը փարատելու համար Եգորուշկան խոտերի միջից բռնեց մի ծղրիդ, բռի մեջ սեղմած մոտեցրեց ականջին և երկար ժամանակ լսում էր, թե ինչպես է նա ճռճռացնում իր ջութակը։ Երբ նվագը ձանձրացրեց, նա վազեց մի խումբ դեղին թիթեռների հետևից, որոնք թռչում էին դեպի ճահճուտ՝ ջուր խմելու, և ինքն էլ չնկատեց, թե ինչպես նորից դուրս եկավ բրիչկայի մոտ։ Քեռին և հայր Խրիստաֆորը խոր քնած էին։ Նրանց քունը պետք է տևեր երկու-երեք ժամ, մինչև որ ձիերը հանգստանային... Ինչպե՞ս սպանել այդ երկար ժամանակը և որտե՞ղ թաքնվել շոգից։ Սա դժվար խնդիր էր։ Եգորուշկան մեքենաբար բերանը դեմ արեց ջրի շիթին, որ թափվում էր խողովակից։ Նա բերանում զովություն և կաճաճի համ զգաց։ Սկզբում խմում էր ախորժակով, հետո՝ դժկամությամբ և այնքան ժամանակ, մինչև որ սուր պաղությունը բերանից անցավ ամբողջ մարմնին և մինչև որ ջուրը ծորաց շապկի վրայով։ Հետո նա մոտեցավ բրիչկային և սկսեց նայել քնածներին։ Քեռու դեմքը առաջվա պես գործարար չորություն էր արտահայտում։ Լինելով իր գործի ֆանատիկոսը՝ Կուզմիչովը միշտ, նույնիսկ քնած ժամանակ և եկեղեցում աղոթելիս, երբ այնտեղ «Քերովբե» էին երգում, ինքը մտածում էր իր գործերի մասին, ոչ մի րոպե չէր մոռանում այդ գործերը, և այժմ էլ հավանո-

բեն երազում տեսնում էր բրդի հակեր, սայլեր, գներ, Վառլամովին... Այնինչ հայր Խրիստաֆորը, որ մեղմաբարո, թեթևամիտ ու ծիծաղկոտ մարդ էր, իր ամբողջ կյանքում չէր ունեցել այնպիսի մի գործ, որը կարողանար վիշապի պես կաշկանդել նրա հոգին։ Այն բոլոր բազմաթիվ գործերում, որոնց նա ձեռնամուխ էր եղել իր կյանքում, նրան հրապուրում էր ոչ այնքան գործը, որքան իրարանցումը և շփումը մարդկանց հետ, որ հատուկ է ամեն մի ձեռնարկության։ Այդպես էլ այս ուղևորության մեջ նրան հետաքրքրում էին ո՛չ այնքան բուրգը, Վառլամովն ու գները, որքան երկար ճանապարհը, ճանապարհի զրույցները, բրիչկայի տակ քնելը, անժամանակ ուտելը... Եվ այժմ, դատելով նրա դեմքի արտահայտությունից, նա Երևի երազում տեսնում էր Խրիստաֆոր սրբազանին, լատիներեն վեճը, իր տերտերակիները, սերով բլիթները և այն ամենը, ինչ չէր կարող երազում տեսնել Կուզմիչովը։

Երբ Եգորուշկան նայում էր քնածների դեմքին, հանկարծ լսվեց մի մեղմ երգի ձայն։ Հեռու ինչ-որ տեղ երգում էր մի կին, բայց թե որտե՛ղ և ո՛ր կողմը՝ դժվար էր հասկանալ։ Այդ մեղմ, տխուր ու թախծոտ երգը, որ նման էր լացի և հազիվ էր լսվում, գալիս էր մերթ աջից, մերթ ձախից, մերթ վերևից, մերթ գետնի տակից, ասես տափաստանի վրայով սլանում էր մի անտեսանելի ոգի ու երգում։ Եգորուշկան շուրջը նայեց և չէր հասկանում, թե որտեղից է այդ տարօրինակ երգը։ Իսկ հետո, երբ ականջ դրեց, նրան սկսեց թվալ, թե խոտն է երգում։ Արդեն կիսամեռ խանձված խոտը իր այդ երգի մեջ՝ առանց խոսքերի, բայց լալագին ու անկեղծ համոզում էր ինչ-որ մեկին, թե ինքը ոչ մի մեղք չունի, որ արդեն իզուր է խանձել իրեն։ Նա հավատացնում էր, թե ինքը ջերմորեն ապրել է ուզում, որ ինքը դեռ ջահել է և շատ գեղեցիկ կլիներ, եթե տոթն ու երաշտը չլինեին։ Ոչ մի մեղք չուներ, բայց և այնպես նա ինչ-որ մեկից թողություն էր խնդրում և երդվում, որ անտանելի ցավ է զգում, տխուր է և խղճում է ինքն իրեն...

Եգորուշկան մի պահ ականջ դրեց և նրան թվաց, թե այդ թախծոտ, ողբագին երգից օդն ավելի խեղդուկ է դարձել, ավելի շոգ ու անշարժ... Այդ երգը խլացնելու համար նա ինքն էլ սկսեց երգել և ոտքերը թփթփացնելով վազեց դեպի բոշխուտ։ Այդտեղից նա նայեց բոլոր կողմերը և գտավ նրան, ով

երգում էր։ Գյուղակի ծայրի խրճիթի մոտ կանգնած էր կարճ շապկով, ձկնկուլի պես երկար ոտքերով բարձրասրունք մի կին և ինչ-որ բան էր մաղում։ Նրա մաղի տակից բլրի վրայով ծուլորեն դեպի ցած էր իջնում սպիտակ փոշի։ Այժմ պարզ էր, որ այդ կինն էր երգում։ Նրանից մի սաժեն հեռու անշարժ կանգնած էր մի փոքրիկ տղա՝ միայն շապկով, առանց գլխարկի։ Ասես երգից դյութված՝ նա չէր շարժվում տեղից ու նայում էր ցած, երևի Եգորուշկայի ղումաշե վերնաշապկին։

Երգը դադարեց։ Եգորուշկան ոտքերը քարշ տալով գնաց դեպի բրիչկան և ձանձրույթը փարատելու համար նորից սկսեց ցրի հետ խաղալ։

Դարձյալ լսվեց թախծոտ երգը։ Երգում էր նույն բարձրասրունք կինը՝ բլրի այն կողմը, գյուղում։ Հանկարծ Եգորուշկային նորից մի թախիծ համակեց։ Նա ջուրը թողեց և հայացքը բարձրացրեց վերև։ Այն, ինչ նա տեսավ, այնքան անակնկալ էր, որ նա մի փոքր վախեցավ։ Նրա գլխավերևը, անճոռնի խոշոր քարերից մեկի վրա կանգնած էր մի փոքրիկ տղա, հագին միայն մի շապիկ, փքված, ուռած փորով, բարակ ոտքերով, այն նույն տղան, որ քիչ առաջ կանգնած էր կնոջ մոտ։ Բուռթ զարմանքով ու ո՛չ առանց երկյուղի նա բերանը բաց, աչքերը անթարթ նայում էր Եգորուշկայի ղումաշե վերնաշապկին ու բրիչկային, ասես իր առջև տեսնում էր այն աշխարհից դուրս եկած արարածներ։ Վերնաշապկի կարմիր գույնը հրապուրում ու շոյում էր նրան, իսկ բրիչկան ու նրա տակ քնած մարդիկ նրա հետաքրքրությունն էին շարժում։ Գուցե նա ինքն էր չէր նկատել, թե ինչպես դուրեկան կարմիր գույնը և հետաքրքրությունը նրան գյուղակից քաշել էին ցած, և հավանորեն այժմ ինքն էլ զարմանում էր իր համարձակությունից։ Եգորուշկան երկար նայում էր նրան, իսկ նա՝ Եգորուշկային։ Երկուսն էլ լուռ էին և ինչ-որ անհարմարություն էին զգում։ Երկար լռությունից հետո Եգորուշկան հարցրեց։

— Անունդ ի՞նչ է։

Անծանոթի այտերն է՛լ ավելի ուռան։ Նա մեջքը սեղմեց քարին, աչքերը չռեց, շրթունքները շարժեց և պատասխանեց խոպոտ ձայնով.

— Տիտ։

Այլևս տղաները ոչ մի խոսք չասացին իրար։ Էլի մի պահ լռելով և աչքը չկտրելով Եգորուշկայից՝ խորհրդավոր Տիտը մի

ոտքը վեր բարձրացրեց, կրունկով հենակետ գտավ և բարձրացավ քարի վրա։ Այստեղից նա ետ-ետ գնալով և շարունակ նայելով Եգորուշկային, ասես վախենալով, թե նա կխփի իրեն հետևից, բարձրացավ մյուս քարի վրա և այդպես այնքան բարձրացավ, մինչև որ բոլորովին ծածկվեց թմբի հետևը։

Հայացքով նրան ուղեկցելուց հետո Եգորուշկան երկու ձեռքով իր ծնկները գրկեց և գլուխը կախ գցեց... կիզիչ ճառագայթներն այրում էին նրա ծոծրակը, վիզը և մեջքը։ Թախծոտ երգը մերթ մեղմանում էր, մարում, մերթ նորից տարածվում քարացած, խեղդուկ օդում, առվակը քչքչում էր միալար, ձիերը կերն էին ծամում, իսկ ժամանակը ձգվում էր անվերջ ասես նա էլ քարացել ու կանգ էր առել։ Թվում էր, թե առավոտից արդեն մի դար է անցել... Աստված հո չէ՞ր ուզում, որ Եգորուշկան, բրիչկան ու ձիերը անշարժանան այդ օդում և բլուրների պես քարանան ու հավիտյան մնան միևնույն տեղում։

Եգորուշկան գլուխը բարձրացրեց և պղտոր աչքերով առաջ նայեց։ Կապտավուն հեռուն, որ մինչ այդ անշարժ էր, տատանվեց և երկնքի հետ միասին սլացավ ավելի հեռու... Նա ձգեց իր հետևից դուրս գցած խոտը, բոշխը, և Եգորուշկան անասելի արագությամբ սլացավ փախչող հեռուների հետևից։ Մի ինչ-որ ուժ անաղմուկ քաշում էր նրան չգիտես ուր, իսկ նրա հետևից սլանում էին տոթը և տանջող երգը։ Եգորուշկան գլուխը կախեց և աչքերը փակեց։..

Առաջինը արթնացավ Դենիսկան։ Նրան մի ինչ-որ բան էր կծել, որովհետև նա վեր թռավ, արագ քորեց իր ուսը և փընթփընթաց.

— Ա՛յ գրողը տանի քեզ։

Ապա նա մոտեցավ առվակին, կուշտ խմեց և երկար ժամանակ լվացվում էր։ Նրա փնչոցն ու ջրի չփչփոցը Եգորուշկային դուրս բերին մոռացությունից։ Տղան նայեց նրա թաց դեմքին, որ ծածկված էր կաթիլներով ու խոշոր պեպեններով, որոնցից դեմքը մարմարի էր նմանվում, և հարցրեց.

— Շո՞ւտ ճամփա կընկնենք։

Դենիսկան նայեց, թե որքան է բարձրացել արևը և պատասխանեց.

— Երևի շուտ։

Նա երեսը սրբեց շապկի փեշով և դեմքին շատ լուրջ արտահայտություն տալով ոստոստեց մի ոտքի վրա։

— Հապա, տեսնենք ո՞վ շուտ կհասնի բոշխուտին,— ասաց նա։

Եգորուշկան հոգնել էր շոգից ու քնատությունից, բայց և այնպես վազեց նրա հետևից։ Դենիսկան արդեն մոտ քսան տարեկան էր, ծառայում էր որպես կառապան և պատրաստվում էր ամուսնանալու, բայց դեռ չէր դադարել փոքր լինելուց։ Նա շատ էր սիրում օդապարուկ բաց թողնել, վեգ խաղալ, առաջկտրուկի տալ և միշտ խառնվում էր մանկական խաղերին ու կռիվներին։ Բավական էր, որ տերերը հեռանային կամ քնեին, նա սկսում էր ցատկոտել մի ոտքի վրա կամ թե քարկտիկ խաղալ։ Ամեն մի չափահաս մարդ, տեսնելով այն անկեղծ հրապուրանքը, որով նա խաղում էր փոքր երեխաների հետ, չէր կարող չբացականչել. «Ա՜յ քեզ հաստագլուխ»։ Բայց երեխաներն ամենևին տարօրինակ չէին համարում, որ մեծահասակ կառապանը խառնվում է իրենց. թող խաղա, միայն թե կռիվ չսարքի։ Ճիշտ այդպես էլ փոքրիկ շները տարօրինակ չեն համարում, երբ մի մեծ, իսկական շուն խառնվում է իրենց ու սկսում խաղալ իրենց հետ։

Դենիսկան Եգորուշկայի առաջն ընկավ և, ըստ երևույթին, շատ գոհ մնաց դրանից։ Նա աչքով արեց և, որպեսզի ցույց տա, որ ինչքան ուզենա կարող է ցատկոտել մի ոտքով, Եգորուշկային առաջարկեց, թե չի՞ ուզում արդյոք իր հետ միասին ցատկոտել ճանապարհով և այնտեղից էլ, առանց հանգրստանալու, ետ գալ բրիչկայի մոտ։ Բայց Եգորուշկան հրաժարվեց դրանից, որովհետև շատ էր հոգնել ու թուլացել։

Հանկարծ Դենիսկան դեմքին խիստ լուրջ արտահայտություն տվեց, որը նա չէր ունենում նույնիսկ այն ժամանակ, երբ Կուզմիչովը շշպռում էր նրան կամ փայտը թափահարում վրան։ Նա մի պահ ականջ դրեց, կամացուկ իջավ մի ծնկի վրա, և նրա դեմքին երևաց խստության ու վախի արտահայտություն, ինչպիսին լինում է հերետիկոսություն լսող մարդկանց դեմքին։ Նա հայացքը հառեց մի կետի, դանդաղորեն վեր բարձրացրեց ձեռքի թաթը և հանկարծ փորի վրա ընկավ գետնին ու ձեռքի թաթը խփեց խոտերին։

— Եղա՛վ,— ճչաց նա հանդիսավոր և վեր կենալով՝ Եգորուշկայի աչքերին մոտեցրեց մի մեծ մորեխ։

Կարծելով, թե այդ դուր կգա մորեխին, Եգորուշկան ու Դենիսկան մատով շոյում էին նրա լայն, կանաչ մեջքը և ձեռք էին տալիս բեղիկներին։ Հետո Դենիսկան բռնեց մի չաղլիկ ճանճ, որն արյուն էր ծծել, և դեմ արեց մորեխին։ Մորեխը շատ անտարբեր, ասես որպես Դենիսկայի վաղուցվա ծանոթ, բացեց իր լայն ծնոտները, որոնք կարծես երեսկալ լինեին, և ճանճի փորը կրծեց։ Մորեխը բաց թողին, նա իր թևերի վարդագույն աստառը շողացնելով իջավ խոտերի մեջ և իսկույն սկսեց իր երգը ճռճռացնել։ Ճանճն էլ բաց թողին։ Սա էլ թևերը փռեց և առանց փորի թռավ ձիերի մոտ։

Բրիչկայի տակից խոր հոգոց լսվեց։ Այդ Կուզմիչովն էր արթնացել։ Նա արագ բարձրացրեց գլուխը, անհանգիստ նայեց հեռուն, և Եգորուշկայի ու Դենիսկայի մոտով անտարբեր սահող այդ հայացքից երևում էր, որ արթնանալով՝ նա մտածում էր բրդի ու Վաղլամովի մասին։

— Հայր Խրիստաֆո՛ր, վե՛ր կացեք, ժամանակն է,— ասաց նա անհանգիստ։— Բավական է քնել, գործը մնում է։ Դենիսկա, լծի՛ր ձիերը։

Հայր Խրիստաֆորն արթնացավ միևնույն ժպիտով, որով քնել էր։ Նրա դեմքը քնից տրորվել, կնճռոտվել էր և կրկնակի փոքրացած էր թվում։ Լվացվելուց ու հագնվելուց հետո նա դանդաղորեն գրպանից հանեց փոքրիկ, ճարպոտված սաղմոսագիրքը և երեսը դեպի արևելք դարձնելով սկսեց շշուկով կարդալ ու երեսը խաչակնքել։

— Հայր Խրիստաֆոր,— կշտամբանքով ասաց Կուզմիչովը։— Ժամանակն է գնալու, արդեն ձիերը պատրաստ են, իսկ դուք, աստված վկա...

— Իսկույն, իսկույն...— մրմնջաց հայր Խրիստաֆորը։— Սաղմոս պետք է կարդալ... Այսօր դեռ չեմ կարդացել։

— Հետո էլ կարելի է կարդալ այդ սաղմոսը։

— Իվան Իվանիչ, կարդ է, որ ամեն օր կարդամ... Չի կարելի։

— Աստված չէր պատժի, թե որ չկարդայիք էլ։

Ամբողջ քառորդ ժամ հայր Խրիստաֆորը երեսն արևելք դարձրած անշարժ կանգնած շուրթերն էր շարժում, իսկ Կուզմիչովը համարյա ատելությամբ նայում էր նրան ու անհամբեր՝ ուսերը թոթվում։ Նա առանձնապես բարկանում էր, երբ հայր Խրիստաֆորը ամեն մի «փառքից» հետո խոր շունչ էր

առնում, արագ երեսը խաչակնքում և դիտմամբ բարձր, որպեսզի մյուսներն էլ խաչակնքեն, երեք անգամ ասում էր.

— Ալելույա, ալելույա, ալելույա, փա՜ռք քեզ, աստված։

Վերջապես նա ժպտաց, նայեց վերև, երկնքին և սաղմոսարանը գրպանը դնելով ասաց.

— Fini[1]։

Մի բոպե չանցած՝ բրիչկան ճանապարհ ընկավ։ Ասես նա ետ էր գնում և ոչ թե առաջ. ճանապարհորդները տեսնում էին նույնը, ինչ-որ մինչև կեսօր։ Բլուրները դեռ թաղված էին կապտավուն հեռվում և նրանց վերջը չէր երևում։ Երևում էին մոլախոտերը, գլաքարերը, անցնում էին հնձված հեղաշերտերը և միևնույն ագռավները, միևնույն ցինը թևերը թափահարելով թռչում էին տափաստանի վրայով։ Օդն ավելի էր անշարժացել տոթից ու լռությունից, հնազանդ բնությունը քար էր կտրել լռության մեջ... Ո՛չ մի առույգ ձայն, ո՛չ ամպի կտոր։

Բայց ահա, վերջապես, երբ արևդակն սկսեց իջնել դեպի մայրամուտ, տափաստանը, բլուրներն ու օդը էլ չդիմացան ճնշումին և համբերությունից ելած՝ փորձեցին նետել իրենց վրայի լուծը։ Անսպասելիորեն բլուրների հետևից երևաց մի գանգուր մոխրագույն ամպ։ Նա նայեց տափաստանին,— կարծես ասում էր՝ ես պատրաստ եմ,— և մոայլվեց։ Հանկարծ անշարժ օդի մեջ ինչ-որ բան պոկվեց, քամին ուժեղ պոռթկած և աղմուկ-սուլոցով պտտվեց տափաստանի վրա։ Խոտն ու նախորդ տարվա մոլախոտերն իսկույն խշխշացին, ճանապարհի վրա պտուտակաձև փոշի բարձրացավ, վաղեց տափաստանով և իր հետ տանելով ծղոտ, ճպուռ ու փետուր՝ պտտվող սև սյունի պես բարձրացավ երկինք, փակեց արևի երեսը։ Տափաստանում սայթաքելով ու ոստոստալով աջ ու ձախ վազվզեցին երնջակները, իսկ նրանցից մեկն ընկավ պտուտահողմի մեջ, պտույտներ գործեց թռչնի պես, սլացավ դեպի երկինք և այնտեղ մի սև կետ դառնալով չքացավ աչքից։ Նրա հետևից սլացավ երկրորդը, ապա երրորդը, և Եգորուշկան տեսավ, թե ինչպես երկու երնջակ, կապտակ բարձունքում կառչեցին միմյանց, ասես մենամարտում էին։

Ուղիղ ճանապարհի մոտից թպրտոցով դուրս թռավ մի արտոյտ։ Թևերն ու պոչը թափահարելով, արևի շողերով ողողված՝ նա նման էր ձկնորսական խայծի, կամ լճակի թիթեռի, որի թե-

[1] Վերջ։

վերը, երբ նա թռչում է ջրի վրա, ձուլվում են բեղիկների հետ և թվում է, թե նա բեղեր ունի և՛ առջևից, և՛ հետևից, և՛ կողքերից... Միջատի պես օդում դողդողալով, իր փայլով խաղալով՝ արոսը վեր ու վեր բարձրացավ ուղիղ գծով, հետո, երևի փոշու ամպից վախեցած՝ սլացավ մի կողմ և դեռ երկար ժամանակ երևում էր, թե ինչպես է նա թևերը թափահարում...

Բայց ահա մրրիկից անհանգստացած և չհասկանալով, թե ինչ է պատահել, խոտերի միջից դուրս թռավ մի ջրահավ։ Նա թռչում էր քամու հետևից, և ո՛չ նրան հակառակ, ինչպես բոլոր թռչունները։ Դրանից նրա փետուրները զզզվել էին, նա ամբողջովին փքվել էր հավի մեծությամբ և շատ բարկացկոտ տեսք էր ստացել։ Միայն սերմնագռավներն էին, որ ծերացած լինելով տափաստանում և վարժված տափաստանի իրարանցմանը՝ հանգիստ սլանում էին խոտերի վրայով, կամ թե անտարբեր անուշադիր դեպի ամեն ինչ, իրենց հաստ կտուցով ամուր գետինն էին փորում։

Բլուրների հետևը խուլ որոտ լսվեց։ Դիմացից զովություն փչեց։ Դենիսկան ուրախ սուլեց և ձիերին մտրակեց։ Հայր Խրիստաֆորն ու Կուզմիչովը իրենց գլխարկները բռնելով՝ հայացքները հառեցին բլուրներին... Լա՜վ կլիներ՝ մի անձրև թափվեր։

Թվում էր, թե էլի մի փոքրիկ լարում, էլի մի ջանք՝ և տափաստանը կհաղթանակեր։ Բայց անտեսանելի մի ուժ քիչ-քիչ կաշկանդեց քամին ու օդը, փոշին նստեցրեց, և էլի տիրեց լռություն, ասես ոչինչ չէր եղել։ Ամպը թաքնվեց, խանձված բլուրները մռայլվեցին, օդը հնազանդ անշարժացավ, և միայն անհանգստացած կիվիվներն էին, որ մի ինչ-որ տեղ լալիս էին ու բախտից գանգատվում...

Ապա՝ շուտով երեկոն իջավ։

III

Երեկոյան աղջամուղջի մեջ երևաց մի մեծ միահարկ տուն՝ ժանգոտած թիթեղյա տանիքով և մթին լուսամուտներով։ Այդ տունը կոչվում էր իջևան-բակ, թեև նրա մոտ ոչ մի բակ չկար, նա կանգնած էր տափաստանի մեջ, առանց որևէ ցանկապատի։ Նրանից մի փոքր հեռու սևին էր տալիս մի խղճուկ բալենու այգի իր ցանկապատով, իսկ լուսամուտների տակ իրենց ծանր

գլուխները կախած՝ կանգնած էին նիրհուն արևածաղիկները։ Պարտեզում ճոճում էր մի փոքրիկ աղաց, որը դրված էր նրա համար, որ իր չխկոցով նապաստակներին վախեցնի։ Էլ ուրիշ ոչինչ չէր լսվում ու ոչինչ չկար տան մոտ, բացի տափաստանից։

Հենց որ բրիչկան կանգ առավ ծածկավոր սանդուղքի մոտ, ներից լսվեցին ուրախության ձայներ՝ մեկը տղամարդու, մյուսը՝ կանացի։ Դուռը ճռալով բացվեց, և նույն ակնթարթին բրիչկայի մոտ բուսավ մի բարձր, նիհար մարմին, որը թևերն ու փեշերն էր թափահարում։ Դա իջևանատերն էր, Մոյսեյ Մոյսեյիչը, արդեն տարիքով մի մարդ՝ շատ գունատ դեմքով և տուշի պես սև, գեղեցիկ, մորուքով։ Նա հագել էր մի կիսամաշ սև սերթուկ, որը նրա նեղ ուսերին ճոճվում էր ինչպես կախարանի վրա, և ամեն անգամ, երբ Մոյսեյ Մոյսեյիչը ծափ էր զարկում ուրախությունից կամ զարսափից, փեշերը թափահարվում էին թռչունի թևերի պես։ Բացի սերթուկից իջևանատիրոջ հագին կար մի լայնափողք սպիտակ շալվար և թավշյա ժիլետ՝ դեղին ծաղիկներով, որոնք նման էին հսկա փայտոջիլների։

Եկվորներին ճանաչելով՝ Մոյսեյ Մոյսեյիչը նախ քար կտրեց զգացմունքների հորդումից, ապա ձեռքերն իրար զարկեց և հառաչեց ծոր տալով։ Նրա սերթուկի փեշերը թափահարվեցին, մեջքը կորացավ աղեղի պես և գունատ դեմքը ծռմռվեց այնպիսի ժպիտով, ասես բրիչկան տեսնելը նրա համար ոչ միայն հաճելի էր, այլև տանջալից անուշ։

— Ա՜խ, աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ,— խոսեց նա բարակ երգեցիկ ձայնով, շնչասպառ լինելով, իրար անցնելով և իր մարմնի շարժումներով ուղևորներին խանգարելով դուրս գալ բրիչկայից։— Այս ի՜նչ բախտավոր օր է այսօր ինձ համար։ Ա՜խ, ի՜նչ պիտի անեմ ես հիմա։ Իվան Իվանի՜չը։ Հայր Խրիստաֆո՜ր։ Իսկ ի՜նչ լավ պարոնիկ է նստել կառապանի մոտ, աստվա՜ծ իմ։ Ա՜խ տե՜ր իմ աստված, ի՞նչ եմ քարացել մի տեղ և հյուրերին ներս չեմ հրավիրում։ Խոնարհաբար խնդրում եմ... Ներս համեցեք... ողորմած եղեք։ Տվեք ինձ ձեր բոլոր իրերը... Ա՜խ, աստվա՜ծ իմ։

Մոյսեյ Մոյսեյիչը բրիչկայի ներսը պտտելով և եկվորներին օգնելով դուրս գալ այնտեղից՝ հանկարծ շուռ եկավ և գոռաց այնպիսի վայրի, խեղդուկ ձայնով, ասես խեղդվում և օգնություն էր կանչում։

— Սոլոմո՜ն, Սոլոմո՜ն։

— Սոլոմո՛ն, Սոլոմո՛ն,— տան միջից կրկնեց կանացի մի ձայն։

Դուռը ճռռալով բացվեց և շեմքին երևաց մի ջահել ցածրահասակ հրեա՝ կարմրաշեկ, թուշնային խոշոր քթով, կոշտ ու դանգուր մազերի մեջտեղը՝ մի ճաղատ։ Նա հագել էր մի կարճ, շատ մաշված պիջակ՝ կլոր փեշերով ու կարճ թևքերով և հասարակ տրիկոյից մի կարճ շալվար, որից ինքն էլ թվում էր կարճ ու պոչատ, ինչպես փետրած թռչուն։ Այդ Սոլոմոնն էր, Մոյսեյ Մոյսեյիչի եղբայրը։ Նա լուռ, առանց բարևելու, բայց մի տարօրինակ ժպիտ դեմքին մոտեցավ բժշկային։

— Իվան Իվանիչը և հայր Խրիստաֆորն են եկել,— ասաց նրան Մոյսեյ Մոյսեյիչը այնպիսի տոնով, ասես վախենում էր, թե նա իրՀն չի հավատա։— Այ-վա՜յ, զարմանալի բան. այսպիսի լավ մարդիկ հանկարծ վեր են կացել ու եկել։ Դե, Սոլոմո՛ն, վերցրո՛ւ իրերը։ Համեցե՛ք, ներս համեցեք, թանկագին հյուրեր։

Փիչ անց Կուզմիչովը, հայր Խրիստաֆորը և Եգորուշկան արդեն նստած էին մի մեծ, մռայլ ու դատարկ սենյակում, մի հին կաղնի սեղանի շուրջ։ Այդ սեղանը համարյա մենակ էր, որովհետև ընդարձակ սենյակում բացի դրանից, երեսին ծածկված մոմլաթի քաշված բազմոցից և երեք աթոռից՝ ուրիշ ոչ մի կահույք չկար։ Եվ աթոռներն էլ ամեն մարդ չէր կարող աթոռ անվանել։ Դրանք կահույքի նմանվող ողորմելի բաներ էին՝ ծածկված իրենց դարն ապրած մոմլաթով, թիկնակներն անբնականորեն ետ ընկած, որից նրանք ավելի շուտ մանկական սահնակի նմանություն էին ստացել։ Դժվար էր հասկանալ, թե անհայտ հյուսնը ինչ հիմարություն էր նկատի ունեցել, որ այդպես անողոքաբար թեքել էր նրանց թիկնակները, և ցանկալի էր կարծել, որ այստեղ մեղավորը հյուսնը չի, այլ ինչ-որ մեծ ուժի տեր մի անցորդ, որը ցանկանալով պարծենալ իր ուժով, ծռել է աթոռների թիկնակները, հետո սկսել է ուղղել, բայց ավելի շատ է ծռել։ Սենյակը մռայլ էր։ Պատերը գորշագույն էին, առաստաղն ու քիվերը՝ ծխոտված, հատակին կային ճեղքեր և անհասկանալի ծագումով ծակեր (կարելի էր կարծել, թե դրանք բացել է միևնույն ուժեղ մարդու կրունկը), և թվում էր, որ եթե սենյակում տասը լամպ էլ կախեն, էլի մութ կլինի։ Ոչ պատերին, ոչ լուսամուտներում չկար մի բան, որ նման լիներ զարդարանքի։ Ի դեպ, պատերից մեկից կախված էին

երկգլուխ արծիվով ինչ-որ կանոններ՝ զետեղված փայտե շրջանակի մեջ, իսկ մյուս պատից կախված էր նույնպիսի մի շրջանակի մեջ զետեղված ինչ-որ փորագրանկար, այնպիսի մակագրությամբ. «Մարդերի անտարբերություն»։ Թե ինչի էին «մարդերն» անտարբեր՝ հասկանալ չէր կարելի, որովհետև փորագրությունը ժամանակի ընթացքում խիստ աղոտացել էր և առատորեն ծածկվել ճանճի ծերտով։ Սենյակում ինչ-որ նեխած ու թթու հոտ էր գալիս։

Հյուրերին սենյակ առաջնորդելով՝ Մոյսեյ Մոյսեյիչը շարունակում էր խոնարհ գլուխ տալ, ծափ զարկել և ուրախ բացականչել. նա գտնում էր, որ այս ամենն անհրաժեշտ է, որպեսզի ինքը շատ սիրալիր ու քաղաքավարի երևա։

— Մեր սայլերը ե՞րբ են անցել այստեղով,— հարցրեց նրան Կուզմիչովը։

— Մի խումբն անցավ այսօր առավոտյան, իսկ մյուսը, Իվան Իվանիչ, ճաշին այստեղ հանգստացավ և երեկոյան դեմ դուրս եկավ։

— Իսկ... Վառլամովն անցե՞լ է այստեղով, թե՞ չէ։

— Ոչ, Իվան Իվանիչ։ Երեկ առավոտ անցավ նրա գործակատար Գրիգորի Եգորիչը և ասաց, որ նա երևի հիմա մալականի գյուղակում կլինի։

— Շատ լավ։ Նշանակում է մենք հիմա կհասնենք սայլերին, իսկ հետո մալականի մոտ կգնանք։

— Աստվա՜ծ ձեզ հետ, Իվան Իվանիչ,— ձեռքերն իրար զարկելով զարմացած ասաց Մոյսեյ Մոյսեյիչը։— Այս գիշեր ժամանակ ո՞ւր կգնաք։ Մնացեք այստեղ, հաց կուտեք, գիշերը կհանգստանաք, իսկ առավոտյան, աստված հաջողի, կգնաք ու կհասնեք ում հետևից պիտի հասնեք։

— Չի լինի, ժամանակ չկա... Ներեցեք մեզ, Մոյսեյ Մոյսեյիչ, մի ուրիշ անգամ կմնանք, իսկ հիմա ժամանակը չի։ Մի քառորդ ժամ կնստենք ու կգնանք, իսկ գիշերը մալականի մոտ էլ կարելի է մնալ։

— Քառորդ ժա՜մ,— ճչաց Մոյսեյ Մոյսեյիչը։— Աստծուց վախեցրեք, Իվան Իվանիչ։ Դուք ինձ ստիպում եք, որ ես ձեր գլխարկները թաքցնեմ ու դուռը փակե՞մ։ Գոնե մի քիչ բան կերեք, թեյ խմեցեք։

— Թեյի ժամանակ էլ չունենք,— ասաց Կուզմիչովը։

Մոյսեյ Մոյսեյիչը գլուխը կախեց մի ուսի վրա, ծնկները

ծալեց և ձեռքերն առաջ մեկնելով, ասես հարվածներից պաշտպանվելով, տանջալից քաղցր ժպիտով սկսեց աղաչել.

— Իվան Իվանի՜չ, հայր Խրիստաֆո՜ր, բարի եղեք, գոնե թեյ խմեցեք ինձ մոտ։ Մի՞թե ես այնքան վատ մարդ եմ, որ ինձ մոտ թեյ խմել էլ չի կարելի, Իվան Իվանի՜չ։

— Դե ի՜նչ արած, թեյ կարելի է խմել,— կարեկցանքով հառաչեց հայր Խրիստաֆորը։— Այդ շատ չի ուշացնի։

— Դե լավ,— համաձայնեց Կուզմիչովը։

Մոյսեյ Մոյսեյիչը ցնցվեց, ուրախ ճիչ արձակեց այնպես կծկվելով, ասես հենց նոր սառը ջրից տաք ջրի մեջ ընկավ, վազեց դեպի դուռը և գոռաց խեղդված ձայնով, ինչպես առաջ Սոլոմոնին էր կանչել։

— Ռոզա՜, Ռոզա՜, բե՜ր ինքնաեռը։

Մի րոպե չանցած՝ դուռը բացվեց և մի մեծ սկուտեղ ձեռքին՝ սենյակ մտավ Սոլոմոնը։ Սկուտեղը սեղանին դնելիս նա ծիծաղկոտ հայացքով մի կողմ էր նայում և առաջվա պես տարօրինակ ժպտում։ Այժմ լամպի լույսի տակ կարելի էր տեսնել նրա ժպիտը։ Այդ ժպիտը շատ բարդ էր և շատ զգացմունքներ էր արտահայտում, բայց դրա մեջ գերակշռողը մի բան էր՝ ակնհայտ արհամարհանք։ Ասես նա մտածում էր ինչ-որ ծիծաղելի, հիմար բանի մասին, ինչ-որ մեկին տանել չէր կարող ու արհամարհում էր, ինչ-որ բանից ուրախանում էր և հարմար րոպեի էր սպասում, որպեսզի ծաղրանքով խայթի և ծիծաղից թուլանա։ Նրա երկար քիթը, չաղ շրթունքները և խորամանկ, չոած աչքերը կարծես լարված էին քրքջալու ցանկությունից։ Նայելով նրա դեմքին՝ Կուզմիչովը ծաղրաբար ժպտաց ու հարցրեց։

— Սոլոմոն, ինչո՞ւ դու այս ամառ չեկար մեզ մոտ, N-ի տոնավաճառին ջհուդների կյանքից պատկերներ ցույց տալու։

Մի երկու տարի առաջ,որ լավ հիշում էր նաև Եգորուշկան, Սոլոմոնը N-ի տոնավաճառի բալագաներից մեկում պատկերներ էր պատմում հրեաների կյանքից և մեծ հաջողություն ուներ։ Այդ մասին հիշեցնելը Սոլոմոնի վրա ոչ մի տպավորություն չգործեց։ Նա դուրս եկավ առանց պատասխան տալու և քիչ հետո վերադարձավ ինքնաեռը ձեռքին։

Սեղանի մոտ իր գործն անելուց հետո նա քաշվեց մի կողմ և ձեռքերը կրծքին խաչելով ու մի ոտքն առաջ տալով՝ իր ծիծաղկոտ աչքերը հառեց հայր Խրիստաֆորին։ Նրա կեցվածքի մեջ ինչ-որ գրգռող, ամբարտավան ու արհամարհական, միևնույն ժամանակ վերին աստիճանի ողորմելի ու կոմիկական բան կար, որովհետև որքան ազդեցիկ էր դառնում նրա կեցվածքը, այնքան ավելի ցայտուն էին աչքի ընկնում նրա կարճ շալվարը, կարճ պիջակը, ծաղրանկարային քիթը և նրա ամբողջ թռչնանման գզգզված տեսքը։

Մոյսեյ Մոյսեյիչը մյուս սենյակից բերեց մի աթոռակ և նստեց սեղանից մի քիչ հեռու։

— Բարի ախորժակ, անուշ լինի,— սկսեց նա զբաղեցնել հյուրերին։— Ի՜նչ հազվադեպ հյուր, ի՜նչ հազվադեպ հյուրեր։ Իսկ հայր Խրիստաֆորին ես արդեն հինգ տարի է չեմ տեսել։ Եվ ոչ մեկը չի ուզում ինձ ասել, թե ո՞ւմն է այս լավ տղան,— հարցրեց նա քնքշանքով նայելով Եգորուշկային։

— Սա քրոջս տղան է, Օլգա Իվանովնայինը,— պատասխանեց Կուզմիչովը։

— Իսկ ո՞ւր է գնում։

— Սովորելու։ Գիմնազիա ենք տանում։

Մոյսեյ Մոյսեյիչը քաղաքավարությամբ զարմանքի արտահայտություն տվեց իր դեմքին և բազմանշանակ գլուխն օրորեց։

— Օ՜, այդ լավ է,— ասաց նա մատով սպառնալով ինքնաեռին։— Այդ լավ է։ Գիմնազիան որ ավարտես, այնպիսի պարոն կլինես, որ մենք բոլորս գլխարկներս կվերցնենք քո առաջ։ Դու խելացի կլինես, հարուստ, պատվասեր, իսկ մայրիկդ կուրախանա։ Օ՜, այդ լավ է։

Նա մի պահ լռեց, իր ծնկները շոյեց, ապա խոսեց հարգալից ու կատակի տոնով։

— Դուք ինձ ներեցեք, հայր Խրիստաֆոր, բայց ես պատրաստվում եմ թուղթ գրելու եպիսկոպոսին, որ դուք վաճառականների հացը կտրում եք։ Կվերցնեմ մի դրոշմաթուղթ ու կգրեմ, որ հայր Խրիստաֆորի փողը, նշանակում է, քիչ է, որ նա սկսել է առևտրով զբաղվել ու բուրդ վաճառել։

— Այո, տեսնո՞ւմ ես, ինչ է խելքս փչել օր-ծերությունս...— ասաց հայր Խրիստաֆորը և ծիծաղեց։— Տերտերների շարքից, ախպերս, վաճառականների շարքն եմ անցել։ Հիմա ինձ հարկավոր էր տանը նստել ու աստծուն աղոթել, իսկ ես սլանում եմ՝ ոնց որ փարավոնը կառքի վրա... Ունայնությո՜ւն։

— Ոչի՜նչ, բա որ փողդ շատ լինի՜։

— Է՜, բա՛ն ես ասում։ Ի՞նչ փող։ Ապրանքը իմը հո չի, իմ փեսա Միխայլոյինն է։

— Հապա ինչո՞ւ ինքը չի գնում վաճառելու։

— Նրա համար, որ... Դեռ մոր կաթը շրթունքներին չի ցամաքել։ Բուրդ գնելը՝ գնել է, բայց վաճառել՝ իսկզբը չի հասնում, դեռ ջահել է։ Ամբողջ փողը ծախսել է, ուզում էր հարստանալ ու փքվել, բայց դես ընկավ, դեն ընկավ, առքի գինն էլ ոչ ոք չի տալիս։ Այդպես մի տարվա չափ չարշարվեց տղան, հետո եկավ ինձ մոտ ու՝ «Հայրիկ, բարի եղիք, ծախեցեք բուրդը։ Ես այդ գործերից բան չեմ հասկանում»։ Ա՛յ թե ինչպես է բանը։ Հենց որ մի բան է պատահում, իսկույն՝ հայրիկ, իսկ դրանից առաջ առանց հայրիկի էլ կարելի էր։ Բայց ի՞նչ կարող էր անել հայրիկը։ Թե որ Իվան Իվանիչը չլիներ, հայրիկն էլ ոչինչ չէր կարող անել, գլխացավանք են երեխաները։

— Այո, դժվար է երեխաների հետ, կարող եմ ձեզ ասել,— հառաչեց Մոյսեյ Մոյսեյիչը։— Ես ինքս էլ վեցն ունեմ։ Մեկին ուսման տուր, մեկին՝ բժշկելու, երրորդին գիրկդ առ, իսկ երբ մեծանում են, հոգսերն ավելի են շատանում։ Մենակ հիմա չի այդպես, նույնիսկ սուրբ գրքում այդպես է եղել։ Երբ Հակոբի երեխաները փոքր էին, նա լաց էր լինում, երբ մեծացան ավելի շատ սկսեց լալ։

— Հը-մ...— համաձայնեց հայր Խրիստաֆորը՝ մտախոհ նայելով բաժակին։— Ես, ճիշտն ասած, աստծուն բարկացնելու բան չունեմ, ես հասել եմ իմ կյանքի սահմանին, Բող աստված ամեն մեկին այդպես տա... Աղջիկներիս լավ մարդկանց եմ տվել, տղաներիս մարդամեջ եմ հանել ու հիմա ազատ եմ, ես իմ գործը պրծել եմ ու հիմա սիրտս ինչ ուզի, այն էլ կանեմ։ Հանգիստ ու խաղաղ ապրում եմ իմ իրիցկնոջ հետ, ուտում՝ եմ, խմում ու քնում, թոռներովս եմ ուրախանում ու աստծուն աղոթում, էլ ուրիշ ինձ ի՞նչ է հարկավոր։ Ոնց որ յուղի մեջ լող տաս ու ոչ ոքի ճանաչել չեմ ուզում։ Հենց մանկուց ես ոչ մի դարդ չեմ ունեցել, ու հիմա էլ, եթե, ասենք՝ թագավորն ինձ հարցնի. «Ի՞նչ է հարկավոր քեզ, ի՞նչ ես ուզում»։ Ինձ ոչինչ էլ հարկավոր չի։ Ամեն բան ունեմ, և փա՜ռք աստծու։ Ամբողջ քաղաքում ինձնից բախտավոր մարդ չկա։ Միայն թե, այ, մեղքերս են շատ, բայց այն էլ ասենք՝ միայն աստված է, որ մեղք չունի։ Ճիշտ չե՞մ ասում։

— Դե, իհարկե, ճիշտ է։

— Դե, պարզ է, ատամ չունեմ, ծերությունից մեջքս ցավում է... կամ շունչս է կտրվում, այս ու այն... Հիվանդանում եմ, մարմինս տկար է, դե ինչ արած, ինքդ դատիր, քիչ չեմ ապրել։Ութսունի մեջ եմ։ Հո հավիտյան չեմ ապրելու, մարդ պետք է իր չափն իմանա։

Հայր Խրիստաֆորը հանկարծ ինչ-որ բան հիշեց, փրթթկացրեց բաժակի մեջ ու ծիծաղից հազաց։ Մոյսեյ Մոյսեյիչն էլ քաղաքավարությունից դրդված նույնպես ծիծաղեց ու հազաց։

— Ծիծաղ բան,— ասաց հայր Խրիստաֆորը և ձեռքը թափ տվեց։— Ինձ մոտ հյուր է գալիս իմ մեծ որդի Գավրիլան։ Բժշկություն է սովորել ու ծառայում է Ջեռնիգովի նահանգում որպես զեմստվոյի բժիշկ... Շատ լավ... Ես նրան ասում եմ. «Այ, ասում եմ, շունչս կտրվում է... այսպես ու այսպես... Դու բժիշկ ես, հորդ բժշկիր»։ Նա իսկույն շորերս հանեց, թրթկացրեց, ականջ դրեց, զանազան բաներ արեց... փորս է տրորում, հետո ասում է. «Դու, հայրիկ, պետք է բուժվես խտացրած օդով»։

Հայր Խրիստաֆորը քրքջաց արտասվելու չափ ու վեր կացավ։

— Իսկ ես նրան ասում եմ. «Աստվա՜ծ քո այդ խտացրած օդի հետ»,— ասաց նա ծիծաղի միջից և երկու ձեռքերը թափ տվեց։— Աստվա՜ծ քո այդ խտացրած օդի հետ։

Մոյսեյ Մոյսեյիչը նույնպես վեր կացավ, փորը բռնեց ու սկսեց քրքջալ բարակ ձայնով, որ նման էր բոլոնյան շնիկի հաչոցի։

— Աստված իր հետ, այդ խտացրած օդի,— կրկնեց հայր Խրիստաֆորը քրքջալով։

Մոյսեյ Մոյսեյիչը նրանից էլ բարձր այնպես քրքջաց, որ ոտքի վրա հազիվ էր կանգնում։

— Օ՜հ, աստված իմ,— հառաչեց նա ծիծաղի միջից։— Թողեք շունչ առնեմ... Այնպես ծիծաղեցրիք ինձ, որ... օ՜հ... աստված իմ։

Նա ծիծաղում էր ու խոսում և միաժամանակ վախով ու կասկածանքով նայում էր Սոլոմոնին։ Սոլոմոնը կանգնել էր նախկին դիրքով ու ժպտում էր։ Նրա աչքերից ու ժպիտից

երևում էր, որ նա արհամարհում ու ատում էր լրջորեն, բայց այդ այնքան չէր սազում նրա փետրատած տեսքին, որ Եգորուշկային թվում էր, թե այդ կովարար դիրքը և դառն արհամարհական արտահայտությունը նա ընդունել է դիտմամբ, որպեսզի խեղկատակի դեր կատարի ու ծիծաղեցնի թանկագին հյուրերին։

Մի վեց բաժակ լուռումունջ խմելուց հետո Կուզմիչովը իր առջև սեղանի երեսը մաքրեց, վերցրեց այն տոպրակը, որ բրիչկայի տակ քնելիս դրել էր գլխատակը, բերանն արձակեց և թափ տվեց։ Տոպրակից սեղանին թափվեցին թղթադրամների կապեր։

— Քանի դեռ ժամանակ կա, հայր Խրիստաֆոր, եկեք հաշվենք,— ասաց Կուզմիչովը։

Մոյսեյ Մոյսեյիչը, փողը տեսնելով, շփոթվեց, վեր կացավ և որպես քաղաքավարի մարդ, որը չի ուզում ուրիշի գաղտնիքներն իմանալ, մատների ծայրերի վրա շուռ եկավ ու ձեռքերը վեր ու վար անելով, դուրս գնաց սենյակից։ Սոլոմոնը մնաց իր տեղը։

— Ռուբլիանոց կապերի մեջ ինչքա՞ն է,— սկսեց հայր Խրիստաֆորը։

— Ամեն մի կապում հիսուն... Երեք ռուբլիանոցներում ինչնսունական... Քսանհինգանոցներն ու հարյուրանոցները հազարական են դարսած։ Դուք յոթ հազար ութ հարյուր հաշվեցեք Վառլամովի համար, իսկ ես կհաշվեմ Գուսևիչի համար։ Բայց տեսեք՝ չսխալվեք...

Եգորուշկան իր կյանքում չէր տեսել այնքան փող, որքան այժմ կիտված էր սեղանին։ Այդ փողը երևի շատ-շատ էր, որովհետև յոթ հազար ութ հարյուրը, որ հայր Խրիստաֆորը մի կողմ դրեց Վառլամովի համար, ամբողջ կույտի համեմատությամբ շատ քիչ էր։ Մի ուրիշ անգամ այդքան շատ փողը երևի կզարմացներ Եգորուշկային և նրան մտածել կտար, թե այդքան փողով որքա՞ն խաշխաշով բուբլիկ ու բլիթ կարելի էր առնել։ Բայց այժմ նա նայում էր անտարբեր և միայն զգում էր նեխած խնձորի ու նավթի զզվելի հոտը, որ գալիս էր այդ կույտից։ Նա հոգնել էր բրիչկայի ցնցումներից և քնել էր ուզում։ Նրա գլուխը կախվում էր, աչքերը փակվում էին և մտքերը խճճվում թելի պես։ Եթե կարելի լիներ, նա բավականությամբ գլուխը կդներ սեղանին, աչքերը կփակեր, որպեսզի

չտեսներ լամպը և փողի կույտի վրա շարժվող մատները և իր հոգնած, քնատ մտքերին թույլ կտար ավելի շատ խճճվել։ Երբ նա ջանում էր չննջել, լամպի բոցը, բաժակները ու մատները աչքին երկու էին երևում, ինքնաեռը ճռճվում էր, իսկ նեխած խնձորի հոտը ավելի սուր ու զզվելի էր դառնում։

— Ա՜խ, փող, փող,— ժպտալով հառաչեց հայր Խրիստաֆորը։— Պատուհաս ես դու։ Հիմա իմ Միխայլոն երևի քնել է ու երազ է տեսնում, թե ես իրեն, ահա, այսպիսի մի կույտ փող կտանեմ։

— Ձեր Միխայլո Տիմոֆեյիչը անհասկացող մարդ է,— կիսաձայն ասաց Կուզմիչովը։— Ձեռք է գցում այնպիսի գործի, որ իր բանը չի, իսկ դուք հասկանում եք ու կարող եք դատել։ Ինձ տվեք ձեր բուրդը, ոնց որ ասացի, ու հանգիստ ետ գնացեք, իսկ ես, դե թող այդպե՛ս լինի, իր գնից հիսունական կոպեկ ավել կտամ, այն էլ միայն նրա համար, որ հարգում եմ ձեզ...

— Չէ, Իվան Իվանիչ,— հառաչեց հայր Խրիստաֆորը։— Շնորհակալ եմ ձեր ուշադրության համար... Իհարկե, թե որ իմ կամքը լիներ, ես բան չէի ասի, բայց ինքներդ գիտեք ապրանքը իմը չի...

Մատների ծայրերի վրա ներս մտավ Մոյսեյ Մոյսեյիչը։ Քաղաքավարությամբ աշխատելով չնայել փողի կույտին՝ նա մոտեցավ Եգորուշկային և ձիգ տվեց նրա վերնաշապկից։

— Հապա՛, փոքրիկ պարոնս,— ասաց նա կիսաձայն,— արի գնանք, տե՛ս, թե ինչպիսի պստիկ արջ ցույց կտամ քեզ։ Այնքա՜ն սարսափելին է, բարկացկոտ, օ՜-օ՜։

Քնաթաթախ Եգորուշկան վեր կացավ և ծուլորեն քայլեց Մոյսեյ Մոյսեյիչի հետևից՝ արջը տեսնելու։ Նա մտավ մի փոքրիկ սենյակ, որտեղ, նախքան մի բան կտեսներ, նրա շունչը ծանրացավ ինչ-որ թթու ու նեխած հոտից, որն այստեղ ավելի թունդ էր, քան մեծ սենյակում և հավանորեն, հենց այստեղից էլ տարածվում էր ամբողջ տան մեջ։ Սենյակի մի մասն զբաղեցնում էր մի մեծ անկողին, որ ծածկված էր ճենճոտ վերմակով, իսկ մյուս մասում դրված էր կոմոդը և շորերի մի ամբողջ կույտ, սկսած թունդ օսլայած շրջազգեստներից և վերջացրած մանկական վարտիքներով և ուսակապերով։ Կոմոդի վրա վառվում էր մի ճարպամոմ։

Խոստացված արջի փոխարեն Եգորուշկան տեսավ մի մեծ,

շատ հաստ հրեա կին՝ մազերն արձակած, սև պտերով կարմիր ֆլանելե շորը հագին։ Նա ծանրորեն շուռ էր գալիս սեղանի ու կամոդի միջև եղած նեղ տարածությունում և երկար, նվաղող հառաչանքներ էր արձակում, ասես ատամներն էին ցավում։ Եգորուշկային տեսնելով՝ նա իր դեմքին լալկան արտահայտություն տվեց, երկար հառաչեց և, մինչ Եգորուշկան շուրջը կնայեր, նրա բերանին մոտեցրեց մեղր քսած հացի մի կտոր։

— Կե՛ր, բալաս, կե՛ր,— ասաց նա։— Քո մայրիկն այստեղ չի, ո՞վ պիտի կերակրի քեզ։ Կե՛ր։

Եգորուշկան սկսեց ուտել, թեև սառնաշաքարից ու խաշխաշած մեղրաբլիթներից հետո, որ ամեն օր ուտում էր իրենց տանը, նա ոչ մի լավ բան չէր գտնում այդ մեղրի մեջ, որի կեսը մեղրամոմ էր ու մեղվի թևեր։ Նա ուտում էր, իսկ Մոյսեյ Մոյսեյիչը և հրեուհին նայում էին ու հառաչում։

— Դու այդ ո՞ւր ես գնում, բալիկ,— հարցրեց հրեուհին։

— Սովորելու,— պատասխանեց Եգորուշկան։

— Իսկ քանի՞ երեխա ունի մայրիկդ։

— Մենակ ես եմ։ Ուրիշ երեխա չունի։

— Ա՜խ,— հառաչեց հրեուհին և վեր բարձրացրեց աչքերը։ — Խե՜ղճ մայրիկ, խե՜ղճ մայրիկ։ Հիմա ինչպե՜ս պիտի տխրի ու ինչքա՜ն պիտի լաց լինի։ Մի տարուց հետո մենք էլ մեր Նաումին պիտի տանենք ուսման։ Ո՜հ-ո՜հ։

— Ա՜խ, Նաում, Նաում,— հառաչեց Մոյսեյ Մոյսեյիչը, և նրա գունատ դեմքին ջղայնորեն դողաց մաշկը։— Իսկ նա այնպե՜ս հիվանդոտ է։

Ճանճոտ վերմակը շարժվեց, և նրա տակից երևաց մի մանկական գանգրահեր գլուխ՝ շատ բարակ պարանոցով։ Երկու սև աչքեր շողացին և հետաքրքրությամբ սևեռվեցին Եգորուշկայի վրա։ Մոյսեյ Մոյսեյիչը և հրեուհին շարունակելով հառաչել՝ մոտեցան կոմոդին և սկսեցին ինչ-որ բան խոսել հրեերեն։ Մոյսեյ Մոյսեյիչը խոսում էր կիսաձայն, ցածր բասով և ընդհանուր առմամբ նրա հրեերեն խոսքը նմանվում էր անընդհատ «գալ-գալ-գալ-ի...»։ Իսկ կինը նրան պատասխանում էր բարակ, հեղկահավի ձայնով, և նրա խոսքը նմանվում էր, «տու-տու-տու-ի...»։ Մինչ նրանք այսպես խորհրդակցում էին, ճենճոտ վերմակի տակից դուրս նայեց մի ուրիշ գանգրա-

հեր գլուխ՝ բարակ պարանոցով, ապա՝ երրորդը, չորրորդը... Եթե Եգորուշկան հարուստ երևակայություն ունենար, ապա կարող էր մտածել, թե վերմակի տակ հարյուրգլխանի հիդրա է պառկած։

— Գալ-գալ-գալ-գալ...— ասում էր Մոյսեյ Մոյսեյիչը։

— Տու-տու-տու-տու...— պատասխանում էր կինը։

Խորհրդակցությունը վերջացավ նրանով, որ հրեուհին խոր հառաչանքով ձեռքը տարավ կոմոդի ներսը, այնտեղ բաց արեց մի ինչ-որ կանաչ շորի կտոր, և հանեց սրտառնման մի մեծ բլիթ։

— Վերցրու, բալիկս,— ասաց նա Եգորուշկային մեկնելով բլիթը։— Հիմա դու մոտդ մայրիկ չունես, ո՞վ պիտի քեզ մի բան ընծայի։

Եգորուշկան բլիթը գրպանը դրեց և ետ քաշվեց դեպի դուռը, որովհետև այլևս չէր կարողանում շնչել այն նեխած, թթու օդը, որի մեջ ապրում էին տանտերերը։ Վերադառնալով մեծ սենյակը՝ նա հարմար տեղավորվեց բազմոցի վրա և ընկավ մտածմունքի մեջ։

Կուզմիչովը հենց նոր վերջացրել էր փողը հաշվելը և նորից դնում էր տոպրակի մեջ։ Նա առանձնապես հարգանքով չէր վարվում փողերի հետ և կեղտոտ տոպրակի մեջ էր գցում առանց ձևականությունների, այնպիսի անտարբերությամբ, ասես դրանք փող չէին, այլ՝ անպետք թղթեր։

Հայր Խրիստաֆորը զրուցում էր Սոլոմոնի հետ։

— Է՛, ի՞նչ կասես, Սոլոմոն իմաստուն,— հարցնում էր նա հորանջելով ու բերանը խաչակնքելով։— Ինչպե՞ս են գործերդ։

— Դուք այդ ո՞ր գործերի մասին եք ասում,— հարցրեց Սոլոմոնը և նայեց այնպիսի նենգությամբ, ասես նրան ինչ-որ ոճրագործություն էին ակնարկում։

— Ընդհանրապես... Ի՞նչ ես անում։

— Ինչ եմ անո՞ւմ,— հարցրեց Սոլոմոնը և ուսերը թոթափեց։— Նույնը, ինչ որ բոլորը... Տեսնում եք՝ ես սպասավոր եմ։ Ես իմ եղբոր սպասավորն եմ, եղբայրս անցորդների սպասավորն է, անցորդները Վառլամովի սպասավորն են, իսկ եթե ես մի տասը միլիոն ունենայի, Վառլամովն էլ իմ սպասավորը կլիներ։

— Այսինքն՝ այդ ինչո՞ւ նա քո սպասավորը կլիներ։

— Ինչո՞ւ։ Որովհետև չկա այնպիսի մի աղա կամ միլիոնատեր, որը մի ավելորդ կոպեկ ստանալու համար չլիզեր քոստոտ ջհուդի ձեռքը։ Հիմա ես քոստոտ ջհուդ եմ ու աղքատ, բոլորն ինձ շան տեղ են դնում, բայց թե որ փող ունենայի, Վառլամովն իմ առաջ այնպես կուչ ու մուչ կգար, ոնց որ Մոյսեյը՝ ձեր առաջ։

Հայր Խրիստաֆորն ու Կուզմիչովը իրար նայեցին։ Մ՛չ մեկը, ո՛չ մյուսը չհասկացան Սոլոմոնին։ Կուզմիչովը խիստ ու չոր նայեց նրան և հարցրեց.

— Ախ դո՛ւ, հիմարի գլուխ, ինչպե՞ս ես դու քեզ համեմատում Վառլամովի հետ։

— Ես դեռ այնքան հիմար չեմ, որ ինձ համեմատեմ Վառլամովի հետ,— պատասխանեց Սոլոմոնը՝ հեգնաբար նայելով իր ղրուցակիցներին,— Վառլամովը թեկուզև ռուս է, բայց հողով քոստոտ ջհուդ է։ Նրա ամբողջ կյանքը փողի ու շահի մեջ է, իսկ ես իմ փողերը վառեցի վառարանում։ Ինձ ո՛չ փող է հարկավոր, ո՛չ հող, ո՛չ ոչխարներ, և հարկավոր չի, որ ինձնից վախենան ու գլխարկները վերցնեն, երբ ես անցնում եմ։ Նշանակում է՝ ես ձեր Վառլամովից խելոք եմ և ավելի շատ եմ նման մարդու։

Քիչ անց Եգորուշկան քնի մեջ լսեց, թե ինչպես Սոլոմոնը ատելությունից խեղդվող խուլ ու խռպոտ ձայնով արագ-արագ խոսում էր հրեաների մասին։ Սկզբում նա խոսում էր կանոնավոր ռուսերենով, հետո սկսեց այնպես, ինչպես խոսում են հրեաների կենցաղից պատմություններ անողները և խոսում էր չափազանցված հրեական առոգանությամբ, ինչպես մի ժամանակ տոնավաճառի բալագանում։

— Սպասի՛ր...— ընդհատեց նրան հայր Խրիստաֆորը։— Եթե քո հավատը քեզ դուր չի գալիս, փոխիր այն, իսկ ծաղրելը մեղք է։ Ամենաստոր մարդն է նա, ով ծաղրում է իր հավատը։

— Դուք ոչինչ չեք հասկանում,— կոպտաբար ընդհատեց նրան Սոլոմոնը։— Ես ձեզ ուրիշ բան եմ ասում, դուք ուրիշ եք հասկանում։

— Այ, հենց դրանից երևում է, որ դու հիմար մարդ ես,— հառաչեց հայր Խրիստաֆորը։— Ես քեզ խրատ եմ տալիս որքան կարող եմ, իսկ դու բարկանում ես։ Ես քեզ հետ խոսում

եմ մեղմ, որպես ալևոր մարդ, իսկ դու՝ ասես հնդկահավ լինես. կլա՛-կլա՛-կլա՛։ Խե՜նթ ես, իսկապես...

Ներս մտավ Մոյսեյ Մոյսեյիչը։ Նա անհանգիստ նայեց Սոլոմոնին ու իր հյուրին և նրա դեմքին նորից մաշկը ջղայնորեն խաղաց։ Եգորուշկան գլուխը ցնցեց և շուրջը նայեց։ Նա թուլիկ կերպով տեսավ Սոլոմոնի դեմքը հենց այն բոպեին, երբ այդ դեմքը երեք քառորդի չափ դարձած էր իր կողմը և նրա երկար քթի ստվերը կտրում էր ամբողջ ձախ այտը։ Արհամարհական ժպիտը, որ խառնվել էր այդ ստվերին, փայլուն ծաղրալից աչքերը, ամբարտավան արտահայտությունը և նրա ամբողջ փետրատած տեսքը Եգորուշկայի աչքում շաղվելով ու փայլկտելով այժմ նրան նման էին դարձնում ոչ թե խեղկատակի, այլ այնպիսի մի բանի, որ երբեմն երևում է երազում, հավանորեն շար ոգու։

— Սա ասես դիվահար լինի, Մոյսեյ Մոյսեյիչ, աստված իր հետ,— ժպտալով ասաց հայր Խրիստաֆորը։— Լավ կլիներ դուք նրան տեղավորեիք մի որևէ տեղ, կամ թե ամուսնացնեիք... մարդու չի նմանվում...

Կուզմիչովը բարկությամբ հոնքերը կիտեց։ Մոյսեյ Մոյսեյիչը նորից անհանգստացած և հարցական նայեց եղբորը, ապա հյուրերին։

— Սոլոմո՛ն, դո՛ւրս գնա այստեղից,— խստությամբ ասաց նա։— Դո՛ւրս գնա։

Եվ նա էլի մի ինչ-որ բան ավելացրեց հրեերեն։ Սոլոմոնը կցկտուր ծիծաղեց և դուրս գնաց։

— Իսկ ի՞նչ է պատահել,— վախեցած հարցրեց Մոյսեյ Մոյսեյիչը հայր Խրիստաֆորին։

— Չափն անցնում է,— պատասխանեց Կուզմիչովը։— Կոպիտ և մեծ բան է երևակայում իրեն։

— Այդպես էլ գիտեի,— սարսափով ասաց Մոյսեյ Մոյսեյիչը, ձեռքերն իրար զարկելով։— Ախ, աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ,— մրմնջաց նա կիսաձայն։— Բարի եղեք խնդրում եմ, նստեցեք ու մի՛ բարկացեք։ Դա այնպիսի մարդ է, այնպիսի մարդ է, որ... Ա՜խ, աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ։ Հարազատ եղբայրս է, բայց վշտից բացի ուրիշ բան չեմ տեսել նրանից։ Ախր գիտե՞ք, նա...

Մոյսեյ Մոյսեյիչը մատը պտտեցրեց ճակատի մոտ ու շարունակեց.

— Խելքը տեղը չի... կորած մարդ է։ Եվ ի՞նչ անեմ ես դրա հետ, ինքս էլ չգիտեմ։ Ոչ ոքի չի սիրում, ոչ ոքի չի հարգում, ոչ ոքից չի վախենում... Գիտեք, ամենքի վրա ծիծաղում է, հիմարություններ է ասում, մատն ամենքի աչքն է խոթում։ Դուք չեք կարող հավատալ. մի անգամ այստեղ եկավ Վառլամովը, և Սոլոմոնն այնպիսի մի բան ասաց նրան, որ նա մտրակով Սոլոմոնին էլ խփեց, ինձ էլ... Բայց ի՞նձ ինչու խփեց։ Ես ի՞նչ մեղավոր եմ։ Ասուված Սոլոմոնի խելքն առել է, նշանակում է՝ դա ասածու կամքն է, ե՞ս եմ մեղավոր։

Անցավ մի տասը բոպե, իսկ Մոյսեյ Մոյսեյիչը դեռ մըրմընջում էր կիսաձայն ու հառաչում.

— Գիշերը չի քնում, շարունակ մտածում է, մտածում, մտածում, բայց թե ի՞նչ է մտածում՝ աստված գիտե։ Գիշերը մոտենում ես նրան, նա բարկանում է ու ծիծաղում։ Ինձ էլ չի սիրում... Եվ ոչ մի բան չի ուզում։ Երբ հայրս մեռնում էր, ինձ էլ, նրան էլ վեցական հազար ռուբլի թողեց։ Ես իմ փողով այս իշևանը գնեցի, ամուսնացա ու հիմա երեխաներ ունեմ, իսկ նա իր փողերը վառարանի մեջ գցեց, վառեց։ Այնպե՞ս էի ափսոսում, այնպե՞ս էի ափսոսում։ Ախր ինչո՞ւ վառել։ Քեզ հարկավոր չի, տուր ինձ, ախր ինչո՞ւ վառել։

Հանկարծ դուռը ճռռաց և ինչ-որ քայլերից հատակը դողաց։ Եգորուշկայի երեսին զով քամի փչեց, և նրան թվաց, թե իր կողքով ինչ-որ խոշոր, սև թռչուն թռավ և հենց ուղիղ իր երեսի մոտ թևերը թափահարեց։ Նա աչքերը բաց արեց... Քեռին տոպրակը ձեռքին կանգնած էր բազմոցի մոտ՝ պատրաստ ճանապարհ ընկնելու։ Հայր Խրիստաֆորը լայնեզր ցիլինդրը ձեռքին բռնած՝ ինչ-որ մեկին գլուխ էր տալիս ու ժպտում ո՛չ մեղմ ու ո՛չ սիրալիր, ինչպես միշտ էր անում, այլ՝ հարգալից ու ձգված, որ ամենևին չէր սազում նրան։ Իսկ Մոյսեյ Մոյսեյիչը, որի մարմինն ասես երեք կտոր էր լինում, դեսուդեն էր թեքվում և ամեն կերպ աշխատում էր փուլ չգալ։ Միայն Սոլոմոնն էր, որ բոլորովին անտարբեր կանգնած էր անկյունում, ձեռքերը կրծքին խաչած և առաջվա պես ժպտում էր արհամարհանքով։

— Ձերդ պայծառափայլություն, ներեցեք, մեզ մոտ մարդ չէ,— հառաչում էր Մոյսեյ Մոյսեյիչը տանջալից քաղցր ժպիտով, այլևս արդեն չնկատելով ո՛չ Կուզմիչովին, ո՛չ հայր Խրիստաֆորին, այլ միայն դեսուդեն թեքվելով ամբողջ մարմնով, որպեսզի փուլ չգա։— Մենք հասարակ մարդիկ ենք, ձերդ պայծառափայլություն։

Եգորուշկան աչքերը տրորեց։ Սենյակի մեջտեղը կանգնած էր իսկապես որ պայծառափայլություն՝ ի դեմս մի երիտասարդ, շատ գեղեցիկ ու գեր կնոջ, որ հագին սև շոր ուներ, գլխին՝ ծղոտե գլխարկ։ Մինչ Եգորուշկան կարողանար տեսնել այդ կնոջ դիմագծերը, չգիտես ինչու նրա միտը եկավ այն միայնակ, բարձր կաղամախին, որ ցերեկը տեսել էր բլրի վրա։

— Այսօր այստեղով անցե՞լ է Վառլամովը։— Հարցրեց կանացի ձայնը։

— Ո՛չ, ձերդ պայծառափայլություն,— պատասխանեց Մոյսեյ Մոյսեյիչը։

— Եթե վաղը նրան տեսնեք, խնդրեցեք, որ մի քանի բոպեով ինձ մոտ անցնի։

Հանկարծ բոլորովին անսպասելի, Եգորուշկան իր աչքերից մի կես վերշոկ հեռու տեսավ սև, թավշանման հոնքեր, խոշոր խաժ աչքեր և կանացի գիրգ այտեր՝ փոքրիկ փոսիկներով, որոնցից արևի ճառագայթների պես ամբողջ երեսին ամեն կողմի վրա ժպիտ էր տարածվում։ Ինչ-որ հիանալի բուրմունք զգացվեց։

— Ի՞նչ լավ տղա է,— ասաց կինը։— Ո՞ւմն է։ Կազիմիր Միխայլովիչ, նայեցեք, ի՞նչ սքանչելին է։ Աստվա՞ծ իմ, քնած է։ Ախ դո՛ւ, իմ թմբլիկ...

Եվ տիկինը պինդ համբուրեց Եգորուշկայի երկու այտերը, իսկ նա ժպտաց և կարծելով, թե քնած է, աչքերը փակեց։ Դուռը ճռռաց, և լսվեցին արագ քայլեր, ինչ-որ մեկը ներս ու դուրս էր անում։

— Եգորուշկա, Եգորուշկա,— հնչեց երկու ձայների թավշուկ,— վեր կաց, գնում ենք։

Ինչ-որ մեկը, կարծես թե Դենիսկան, ոտքի կանգնեցրեց Եգորուշկային և ձեռքը բռնած տարավ։ Ճանապարհին Եգորուշկան աչքերը կիսաբաց արեց և նորից տեսավ սև հագուստով այն գեղեցիկ կնոջը, որը համբուրել էր իրեն։ Կինը կանգնել էր սենյակի մեջտեղը և նայելով, թե ինչպես է գնում Եգորուշկան, ժպտում էր նրան և մտերմաբար գլխով անում։ Դռանը մոտենալիս Եգորուշկան տեսավ մի գեղեցիկ, ամրակազմ թխահեր մարդ, որ գլխին կոտլոկ գլխարկ ուներ, ոտքերին՝ սոնապաններ։ Դա երևի տիկնոջ ուղեկցողն էր։

— Տպը՞ռռ,— լսվեց բակում։

Տան շեմքի մոտ Եգորուշկան տեսավ երկու սև ձի լծած մի նոր շքեղ կառք։ Կառապանի տեղը նստած էր սպասավորը՝ լիվրեն հագին, երկար մտրակը ձեռքին։ Մեկնողներին ճանապարհ դնելու համար դուրս եկավ միայն Սոլոմոնը։ Նրա դեմքը լարված էր քրքջալու ցանկությունից։ Նա այնպես էր նայում, ասես մեծ անհամբերությամբ սպասում էր հյուրերի մեկնելուն, որպեսզի մի կուշտ ծիծաղի նրանց վրա։

— Կոմսուհի Դրանիցկայան է,— շշնջաց հայր Խրիստաֆորը բրիչկա բարձրանալով։

— Այո, կոմսուհի Դրանիցկայան,— նույնպես շշուկով կրկնեց Կուզմիչովը։

Կոմսուհու գալուստը երևի շատ մեծ տպավորություն էր գործել, որովհետև նույնիսկ Դենիսը շշուկով էր խոսում և սիրտ արեց ձիերին մտրակել ու գոռալ միայն այն ժամանակ, երբ բրիչկան հեռացել էր մի քառորդ վերստ և երբ իջևանի փոխարեն հեռվում միայն մի աղոտ լույս էր երևում։

IV

Որտե՞ղ է, վերջապես, այդ անորսալի Վառլամովը, որի մասին այդքան շատ խոսում են, որին Սոլոմոնն արհամարհում է և որը հարկավոր է նույնիսկ չքնաղ կոմսուհուն։ Դենիսկայի կողքին նստելով՝ կիսաքուն Եգորուշկան հենց այդ մարդու մասին էր մտածում։ Նա երբեք Վառլամովին չէր տեսել, բայց շատ հաճախ էր լսել նրա մասին և հաճախ էր պատկերացրել նրան իր երևակայության մեջ։ Նրան հայտնի էր, որ Վառլամովը մի քանի տասնյակ հազար դեսյատին հող ունի, մոտ հարյուր հազար ոչխար և շատ ու շատ փող։ Նրա կյանքի ու զբաղմունքի մասին Եգորուշկային հայտնի էր միայն, որ նա միշտ «պտտվում է այս կողմերում» և որ նրան միշտ որոնում են։

Եգորուշկան իրենց տանը շատ բան էր լսել նաև կոմսուհի Դրանիցկայայի մասին։ Նա էլ մի քանի տասնյակ հազար դեսյատին հող ուներ, մեծ թվով ոչխար, ձիաբուծարան և շատ փող, բայց «պտույտ» չէր գալիս, այլ ապրում էր իր շքեղ կալվածատանը, որի մասին ծանոթները և Իվան Իվանիչը, որը զանազան գործերով շատ անգամ էր եղել կոմսուհու մոտ,

հրաշքներ էր պատմում։ Այսպես, ասում էին, որ կոմսուհու հյուրասենյակում, որտեղ կախված են լեհական բոլոր թագավորների պատկերները, կա մի մեծ ժամացույց, որը ժայռի ձև ունի, այդ ժայռի վրա ծառս եղած կանգնած է մի ոսկե ձի, որը աղամանդե աչքեր ունի, իսկ ձիու վրա նստած է մի ոսկե ձիավոր, որն ամեն անգամ, երբ ժամացույցը խփում է, ինքն էլ թուրը ճոճում է մեկ աջ, մեկ ձախ։ Պատմում էին նաև, որ կոմսուհին տարին երկու անգամ պարահանդես է սարքում, որին հրավիրվում են ամբողջ նահանգի ազնվականներն ու աստիճանավորները, գալիս է նույնիսկ Վառլամովը։ Բոլոր հյուրերը թեյ են խմում արծաթե ինքնաեռից, ուտում են չտեսնված բաներ (օրինակ՝ ձմեռը, ծննդյան տոներին մատուցում են ելակ ու մորի) և պարում են գիշեր-ցերեկ նվագող երաժշտության տակ։

«Բայց ի՞նչ գեղեցիկ է նա»։— Մտածում էր Եգորուշկան՝ հիշելով նրա դեմքն ու ժպիտը։

Հավանորեն Կուզմիչովը նույնպես մտածում էր կոմսուհու մասին, որովհետև երբ բրիչկան մի երկու վերստ հեռացավ, նա ասաց.

— Ա՛յ թե ոլոկում է դրան այդ Կազիմիր Միխայլիչը։ Երեք տարի առաջ, հիշո՞ւմ եք, երբ ես կոմսուհուց բուրդ էի առնում, Կազիմիր Միխայլիչը հենց միայն իմ այդ գնումից մի երեք հազար վաստակեց։

— Լեհից ուրիշ բան սպասել չի էլ կարելի,— ասաց հայր Խրիստաֆորը։

— Իսկ նրա հոգն էլ չի։ Աստված է՝ ջահել ու անխելք։ Գլխումը քամի է խաղում։

Եգորուշկան, չգիտես ինչու, ուզում էր մտածել միայն Վառլամովի և կոմսուհու մասին, մանավանդ՝ վերջինիս։ Նրա քնատ ուղեղը բոլորովին հրաժարվել էր սովորական մտքերից, մշուշապատվել էր և պահում էր միմիայն հեքիաթային ֆանտաստիկ պատկերներ, որոնք այն հարմարությունն ունեն, որ ասես իրենք-իրենց, առանց մտածողի կողմից որևէ դժվարության ծնունդ են առնում ուղեղում և իրենք էլ, հենց որ գլուխդ մի լավ թափ տաս, չքանում են անհետ։ Ասենք՝ հենց ամեն ինչ, որ կար շրջապատում, սովորական մտքերի չէր տրամադրում։ Աջ կողմը սևին էին տալիս բլուրները, որոնք կարծես ծածկում էին ինչ-որ անհայտ ու զարհուրելի բան, ձախ կողմը

հորիզոնի վրա ամբողջ երկինքը ողողված էր կարմիր հրացոլքով, և դժվար էր հասկանալ՝ հրդեհ էր որևէ տեղ, թե՞ լուսինն էր պատրաստվում դուրս գալու։ Հեռուն երևում էր ինչպես ցերեկով, բայց արդեն նրա մանուշակագույն նուրբ երանգը, որ աղոտացել էր երեկոյան մուժից, չքացել էր, և ամբողջ տափաստանը թաքնվել էր մշուշի մեջ, ինչպես Մոյսեյ Մոյսեյիչի երեխաները՝ վերմակի տակ։

Հուլիսյան երեկոներին ու գիշերներին այլևս չեն ճչում լորերն ու ջրահավերը, անտառոտ ձորակներում չեն երգում սոխակները, ծաղիկների բուրմունք չի տարածվում, բայց տափաստանը դեռ էլի չքնաղ է ու կյանքով լի։ Հենց որ արևը մայր մտնի, և գետինը մշուշապատվի, մոռացվում է ցերեկվա թախիծը, ամեն ինչ ներվում, և տափաստանը թեթևացած շունչ է առնում ամբողջ կրծքով։ Կարծես այն բանից, որ խավարում խոտը չէր տեսնում իր ծերությունը, նրա մեջ բարձրանում էր մի ուրախ, աշխույժ ճրթճրթոց, որը ցերեկը չի լինում. ճրթոցը, շվշվոցը, չանգռտոցը, տափաստանային բասը, տենորն ու դիսկանտը բոլորը խառնվելով կազմում են մի անընդհատ միալար դժժոց, որի տակ հաճելի է հիշողություններով տարվել ու թախծել։ Միապաղաղ ճրթճրթոցը օրոր է ասում ինչպես օրորոցի երգ։ Գնում ես ու զգում, որ քնում ես, բայց ահա որտեղից-որտեղ լսվում է անքուն թռչնի սուր, տագնապալի ճիչը, կամ թե հնչում է մի անորոշ հնչյուն, որ նման է ինչ-որ մեկի ձայնի, ասես զարմացած գոչում է «ա-ա՜», և նիրհը մարդու աչքեր է փակում։ Կամ թե, պատահում է, գնում ես մի ձորակի մոտով, որը ծածկված է թփերով, և լսում ես, թե ինչպես մի թռչուն, որին տափաստանի բնակիչները կոչում են «սպլյուկ»[1], ինչ-որ մեկին ձայն է տալիս՝ «սպլյու, սպլյու, սպլյու», իսկ մի ուրիշը քրքջում է կամ բռնվում հիստերիկ լացով. այդ էլ բուն է։ Ո՞ւմ համար են գոռում նրանք և ո՞վ է լսում նրանց այս հարթավայրում, աստված գիտե, բայց նրանց կանչի մեջ շատ կա թախիծ ու գանգատ... Բուրում են խոտը և ուշացած ծաղիկները, բայց այդ բուրմունքը թանձր է, քաղցր-մեղցր ու քնքուշ։

Մշուշի միջով երևում է ամեն ինչ, բայց դժվար է որոշել առարկաների գույնն ու գծագրությունը։ Ամեն ինչ պատկերանում է ո՛չ այնպես, ինչպես կա։ Գնում ես և հանկարծ տեսնում՝ առջևում, հենց ճանապարհի մոտ կանգնած է մի ուրվապատկեր, որ նման է վանականի։ Նա չի շարժվում, սպասում է և ինչ-որ բան ունի ձեռքին... Արդյոք ավազակ չի՞ այդ։ Ուրվապատկերը մոտենում է, մեծանում, ահա նա հավասարվեց բրիչկային, և դուք տեսնում եք, որ դա մարդ չի, այլ մենավոր մի թուփ կամ մի մեծ քար։ Այդպիսի անշարժ դարանակալ պատկերներ կանգնած են բլուրների վրա, թաքնված են բլուրների հետևը, դուրս են նայում թփերի միջից, ու նրանք բոլորն էլ նման են մարդու և կասկած են ներշնչում։

Իսկ երբ լուսինը ծագում է, գիշերը դառնում է դժգույն ու մթին։ Մշուշ ասես չի էլ եղել։ Օդը թափանցիկ է, թարմ ու տաք, ամեն ինչ լավ երևում է, և նույնիսկ ճանապարհի մոտ կարելի է տեսնել մոլախոտի առանձին ցողունները։ Հեռու տարածության վրա երևում են դանդեր ու քարեր։ Վանականի նմանվող կասկածելի ուրվապատկերները գիշերվա լուսավոր ֆոնի վրա թվում են ավելի սև և նայում են ավելի մռայլ։ Ավելի ու ավելի հաճախ միապաղաղ ճռճռոցի մեջ անշարժ օդը խռովելով հնչում է ինչ-որ մի զարմացած «ա-ա՜» և լսվում է անքուն կամ զառանցող թռչնի ճիչը։ Տափաստանում լայն սավերներ են շրջում, ինչպես ամպերը երկնքում, իսկ անըմբռնելի հեռվում, եթե երկար ու երկար դիտես այն, ծառացել և իրար գլխի են կիտվել մշուշապատ, զարմանահրաշ պատկերներ... Փոքր-ինչ ահասարսուռ է։ Իսկ որ նայում ես կանաչավուն աստղալից երկնքին, որտեղ ո՛չ ամպ կա, ո՛չ մի բիծ, հասկանում ես, թե ինչո՛ւ անշարժ է տաք օդը, ինչո՛ւ բնությունը զգույշ է և վախենում է շարժվելուց։ Նրան սարսուռ է պատել, և նա ափսոսում է կորցնել կյանքի թեկուզ մի ակնթարթ։ Երկնքի անծայր խորության ու անսահմանության մասին կարելի է դատել միայն ծովի վրա ու տափաստանում, այն էլ գիշերը, երբ լուսինն է լույս տալիս։ Երկինքը սոսկալի է, գեղեցիկ ու փաղաշուք, նայում է խոնջացած և իր մեջ է կանչում, իսկ նրա գուրգուրանքից մարդու գլուխ պտտվում է։

Գնում ես մեկ ժամ, երկու ժամ... Ճանապարհին պատահում է մի լռակյաց ծեր-կուրգան կամ քարե արձան, որը աստված գիտե, թե ո՞վ և ե՞րբ է դրել։ Գետնի վրայով անաղմուկ թռչում է գիշերային թռչունը, և քիչ-քիչ մարդու միտն են գալիս տափաստանային առասպելները, անցորդ մարդկանց պատ-

---

[1] Սպլյուկ — *ռուսերեն* СПЛЮ *(քնում եմ) բառից։*

Ճածները, տափաստանի դայակի հիքիաթները և այն ամենը, ինչ ինքդ կարողացել ես տեսնել ու հոգով ընկալել։ Եվ այն ժամանակ միջատների ճրթճրթոցի մեջ, կասկածելի պատկերների ու բլրակների մեջ, խորունկ երկնքում ու լուսնի լույսի մեջ, գիշերային թռչնի թռիչքի մեջ, ամեն բանում, ինչ տեսնում ես ու լսում, սկսում է պատկերանալ գեղեցկության հաղթանակը, երիտասարդությունը, ուժերի ծաղկումը և կյանքի կրքոտ ծարավը։ Հոգիդ արձագանքում է սքանչելի, դաժան հայրենիքին, և մարդ ուզում է գիշերային թռչնի հետ միասին թռչել տափաստանի վրայով։ Եվ գեղեցկության հաղթանակի, առատ երջանկության մեջ զգում ես լարում ու թախիծ, ասես տափաստանը գիտակցում է, որ ինքը մենակ է, որ իր հաստատությունն ու ոգևորությունն աշխարհի համար կորչում են իզուր, առանց մեկի կողմից ընկալվելու, առանց մեկին պետք գալու, և ուրախ դժոխքի միջից լսվում է նրա թախծոտ, անհույս կանչը՝ երգի՛չ, երգի՛չ տվեք։

— Տպը՞ռու։ Բարի օր, Պանտելե՛յ։ Հաջողա՞կ է ամեն ինչ։

— Փառք աստծո, Իվան Իվանիչ։

— Վառլամովին չե՞ք տեսել, տղե՛րք։

— Չէ՛, չենք տեսել։

Եգորուշկան արթնացավ և աչքերը բացեց։ Բրիչկան կանգնած էր։ Աջ կողմը ճանապարհին բավական երկար ձգված էր սայլերի մի շարան, որի մոտ ինչ-որ մարդիկ էին պրպտում։ Բոլոր սայլերը, քանի որ նրանց բրդի մեծ-մեծ հարկեր էին բարձած, թվում էին շատ բարձր ու փափուկ, իսկ ձիերը՝ մանր ու կարճլիկ ոտքերով։

— Դե, ուրեմն, նշանակում է, հիմա մենք մալականի մոտ կգնանք,— բարձր-բարձր ասում էր Կուզմիչովը։— Ջհուդն ասում էր, որ Վառլամովը մալականի մոտ է գիշերում։ Որ այդպես է, մնաք բարով, տղե՛րք։ Տերն ընդ ձեզ։

— Բարի ճանապարհ, Իվան Իվանիչ,— պատասխանեցին մի քանի ձայն։

— Հա՛, ի՞նչ էի ասում, տղերք,— աշխույժ խոսեց Կուզմիչովը,— լավ կլիներ՝ դուք ձեզ հետ վերցնեիք իմ այս տղային։ Ինչ կարիք կա, որ նա մեզ հետ քարշ գա։ Նստեցրու քո հակերի վրա, Պանտելեյ, և թող իր համար կամաց-կամաց գա, իսկ մենք կհասնենք ձեր հետևից։ Գնա, Եգոր։ Գնա, գնա, ոչինչ։

Եգորուշկան իջավ բրիչկայից։ Մի քանի ձեռք նրան բռնեցին, վեր բարձրացրին, և նա տեսավ, որ ինքը նստած է մի ինչ-որ մեծ, փափուկ ու ցողից փոքր-ինչ խոնավացած բանի վրա։ Այժմ նրան թվում էր, թե երկինքը մոտիկ է իրեն, իսկ գետինը՝ հեռու։

— Է՛յ, վերցրու քո վերարկուն,— ցածում ինչ-որ հեռու տեղից լսվեց Դենիսկայի ձայնը։

Վերարկուն ու կապոցը, որ նետել էին ցածից, ընկան Եգորուշկայի մոտ։ Եգորուշկան արագ, չցանկանալով որևէ բանի մասին մտածել, կապոցը դրեց գլխի տակ, վերարկուով ծածկվեց և ոտքերն ամբողջ երկարությամբ մեկնելով ու ցողից կծկվելով՝ բազմականությունից ծիծաղեց։

«Քնել, քնել, քնել...»,— մտածում էր նա։

—Է՛յ, դո՛ւք, սատանանե՛ր, նեղություն չտաք դրան,— լսվեց ցածից Դենիսկայի ձայնը։

— Մնաք բարով, տղե՛րք, տերն ընդ ձեզ,— ձայն տվեց Կուզմիչովը։— Հույսս ձեզ վրա է։

— Հանգիստ եղեք, Իվան Իվանիչ։

Դենիսկան գոռաց ձիերի վրա, բրիչկան զնգզնգաց ու սլացավ, բայց արդեն ոչ թե ճանապարհով, այլ ինչ-որ մի կողմի վրա։ Մի երկու րոպե լռություն տիրեց. կարծես գումակը քնել էր, և լսվում էր միայն թե, ինչպես հեռվում քիչ-քիչ նվազում էր բրիչկայի ետևից կապված դույլի շխկշխկոցը։ Բայց ահա գումակի առջևում մեկը ձայն տվեց.

— Կիրյու՛խա, շարժվի՛ր։

Ամենաառջևի սայլը ճռնչաց, ապա՝ երկրորդը, երրորդը... Եգորուշկան զգաց, թե ինչպես այն սայլը, որի վրա ինքն էր պառկած, շարժվեց և նույնպես ճռնչաց։ Գումակը շարժվեց Եգորուշկան ավելի ամուր բռնեց այն պարանը, որով կապված էր հակը, նորից բավականությունից ծիծաղեց, գրպանում ուղղեց բլիթը և սկսեց նիրհել այնպես, ինչպես սովորաբար նիրհում էր իրենց տանը, անկողնում...

Երբ նա արթնացավ, արդեն արևը դուրս էր գալիս։ Բլուրը ծածկում էր արեգակին, բայց նա, ջանալով լույս սփռել աշխարհի վրա, իր ճառագայթները տարածում էր բոլոր կողմերը և հորիզոնը ոսկեզօծում։ Եգորուշկային թվաց, թե արեգակն իր տեղը չի, որովհետև երեկ նա ծագում էր թիկունքի կողմից, իսկ այսօր՝ բավական ձախից... Ասենք՝ ամբողջ տեղանքն էլ նման

չէր երեկվանին։ Բյուրներ այլևս չկային, այլ ամենուրեք, ուր էլ նայես, փռված էր անծայրածիր գորշ, անուրախ հարթություն։ Տեղ-տեղ միայն այդ հարթության վրա երևում էին փոքրիկ բլրակներ և թռչում էին երեկվա ագռավները։ Հեռու առջևում սպիտակին էին տալիս մի ինչ-որ գյուղի զանգակատներն ու խրճիթները։ Օրը կիրակի լինելու պատճառով խախոլները նստած էին տանը, եփում ու թխում էին. այդ երևում էր ծխից, որ ցուրտ էր գալիս բոլոր ծխնելույզներից և կապտավուն թափանցիկ քողի պես փռվում գյուղի վրա։ Խրճիթների արանքով ու եկեղեցուց այն կողմը կապույտին էր տալիս գետը, իսկ գետի այն կողմ մշուշապատ հեռուն էր։ Բայց ոչ մի բան այնքան քիչ չէր նման երեկվանին, որքան ճանապարհը։ Դա ճանապարհ չէր, այլ մի ինչ-որ արտակարգ չափով լայն, ընդարձակ դյուցազնական բան, որ ձգված էր տափաստանում։ Դա լավ տորոված գորշագույն մի շերտ էր, ծածկված փոշով, ինչպես բոլոր ճանապարհները, բայց՝ մի քանի տասնյակ սաժեն լայնությամբ։ Իր ընդարձակությամբ այդ ճանապարհը Եգորուշկայի մեջ տարակուսանք հարուցեց և հեքիաթային մտքեր առաջացրեց նրա գլխում։ Ո՞վ է երթևեկում այդ ճանապարհով, ո՞ւմ է հարկավոր այդպիսի լայնությունը։ Անհասկանալի է ու տարօրինակ։ Իսկապես կարելի է մտածել թե Ռուսիայում դեռ չեն վերջացել Իլյա Մուրոմեցի ու Սոլովեյ Ռազբոյնիկի նման լայնաքայլ հսկաները և դյուցազնական նժույգները։ Ճանապարհին նայելով՝ Եգորուշկան պատկերացրեց կողք-կողքի սլացող մի վեց բարձր մարտակառքեր, որոնք նա տեսել էր սրբազան պատմության նկարներում։ Այդ կառքերին վեցական վայրի, կատաղի ձիեր են լծված և իրենց բարձր անիվներով մինչև երկինք են հասցնում փոշու ամպերը, իսկ ձիերը վարում են այնպիսի մարդիկ, որոնց կարելի է միայն երազում տեսնել կամ պատկերացնել հեքիաթներ լսելիս։ Եվ որքա՜ն կսազեին այդ ֆիգուրաները տափաստանին ու ճանապարհին, եթե գոյություն ունենային։

Ճանապարհի աջ կողմում նրա ամբողջ երկարությամբ կանգնած էին հեռագրասյուներ՝ երկու հեռագրալարով։ Գնալով ավելի ու ավելի փոքրանալով՝ այդ սյուները գյուղի մոտ անհետանում էին խրճիթների ու կանաչի ետևը, իսկ հետո կապտագույն հեռվում նորից երևում էին որպես շատ մանր, բարակ փայտիկներ, որոնք ասես գետնի մեջ խրած մատիտներ լինեին։

Հեռագրալարերին նստած էին բազեներ, ագռավներ և անտարբեր նայում էին առաջ շարժվող սայլերի շարքին։

Եգորուշկան պառկած էր ամենահետևի սայլի վրա, ուստի կարող էր տեսնել ամբողջ գումակը։ Գումակը բաղկացած էր մոտ քսան սայլից և ամեն երեք սայլին մի քշող էր ընկնում։ Հետևի սայլի կողքով, որի վրա Եգորուշկան էր պառկած, քայլում էր ալեխառն մորուքով մի ծերունի, նույնպես նիհար ու ցածրահասակ, ինչպես հայր Խրիստաֆորը, բայց երեսը արևվախանձ, խիստ ու մտախոհ։ Շատ հնարավոր է, որ այդ ծերունին ո՞չ խիստ էր, ո՞չ մտախոհ, բայց նրա կարմրած կոպերն ու երկար սուր քիթը դեմքին տալիս էին խիստ ու չոր արտահայտություն, որպիսին ունենում են այն մարդիկ, որոնք սովոր են միշտ մտածել լուրջ բաների մասին, այն էլ՝ միայնակ։ Հայր Խրիստաֆորի նման այդ ծերունու գլխին էլ լայնեզր գլխարկ կար, բայց ո՞չ ազայական, այլ թաղիքե գլխարկ, որ գորշագույն էր, ավելի շուտ նման էր ծայրը կտրած կոնուսի, քան թե գլխարկի։ Ծերունին ոտաբոբիկ էր։ Ըստ իր սովորության, որ հավանորեն ձեռք էր բերել ցուրտ ձմեռներին, երբ երևի շատ անգամ էր սառել գումակի մոտ, նա քայլելու ժամանակ խփում էր իր ազդրերին և ոտքերը թփթփացնում։ Նկատելով, որ Եգորուշկան արթնացել է, նա նայեց նրան և կարծես ցրտից կուչ գալով ասաց.

— Ա՜, արթնացա՞ր, տղաս։ Իվան Իվանովիչի որդի՞ն ես, դու։

— Ո՜չ, քրոջ որդին...

— Իվան Իվանիչի՞։ Իսկ ես, տես ոտնամաններս հանել եմ ու բոբիկ եմ քայլում։ Ոտքերս հիվանդ են, ցրտատար, իսկ առանց ոտնամանի ավելի ազատ է... Բա՜, ավելի ազատ է, տղա՜ս... Այսինքն, առանց ոտնամանների... Նշանակում է՝ քրոջ որդի՞ն ես։ Դե, նա լավ մարդ է, ոչինչ... Աստված առողջություն տա... Ոչինչ... Խոսքս Իվան Իվանիչի մասին է... Մալականի մոտ գնաց... Օ՜, ողորմա՜ծ աստված։

Ծերունին այնպես էր խոսում, ասես խիստ ցուրտ լիներ, ընդհատումներով և բերանը լրիվ բաց չանելով. շրթնային բաղաձայններն արտասանում էր վատ, կակազելով, կարծես շրթունքները սառչում էին։ Դառնալով Եգորուշկային՝ նա ոչ մի անգամ չժպտաց և խիստ մարդ էր թվում։

Երկու սայլ առաջ քայլում էր մի մարդ՝ մտրակը ձեռքին,

երկար շիկավուն վերարկուն հագին, կարտուզը գլխին և ճտքերը ցած գցած սապոգները ոտքերին։ Դա ծեր մարդ չէր, կլիներ մի քառասուն տարեկան։ Երբ նա ետ նայեց, Եգորուշկան տեսավ նրա երկար, կարմիր, նոսր այծամորուքով երեսը, աջ աչքի տակ՝ ուռուցք։ Բացի այդ շատ տգեղ ուռուցքից, նա ուներ էլի մի հատկանիշ, որը խիստ աչքի էր ընկնում։ Նա ձախ ձեռքում բռնել էր մտրակը, իսկ աջ ձեռքն այնպես էր թափահարում, թվում էր մի անտեսանելի երգեցիկ խումբ էր ղեկավարում։ Երբեմն մտրակը թևի տակ էր դնում և այդ ժամանակ արդեն չափ էր տալիս երկու ձեռքով և քթի տակ ինչ-որ բան էր մռմռում։

Դրանից առաջ քայլող սայլապանը մի երկար, ուղիղ գծերով մարդ էր՝ խիստ կախ ընկած ուսերով և տախտակի պես տափակ մեջքով։ Նա իրեն այնպես ձիգ էր պահում, ասես քայլում էր զինվորականի պես կամ արշին էր կուլ տվել. նրա ձեռքերը չէին շարժվում, այլ կախված էին ուղիղ փայտերի նման, և նա քայլում էր կարծես փայտացած, ինչպես խաղալիք զինվոր, ծնկները համարյա չծալելով և աշխատելով որքան կարելի է լայն քայլեր անել։ Երբ ծերունին կամ աչքի տակ ուռուցք ունեցողը երկու քայլ էին գցում, նա միայն մեկ քայլ էր անում, դրա համար էլ թվում էր, թե նա դանդաղ է քայլում և ետ է մնում։ Նրա երեսին ինչ-որ լաթ էր կապած, գլխին կար վանականի թասակի նման մի բան։ Նա հագին ուներ կարկատաններով ծածկված խախոտական մի կարճ բաճկոն և լայնափողք կապույտ շալվար, իսկ ոտքերին՝ տրեխներ։

Ավելի առաջ եղածներին Եգորուշկան արդեն չէր տեսնում։ Նա փորի վրա պառկեց, հակի մեջ մի անցք բաց արեց և ձանձրույթը փարատելու համար սկսեց բրդից թել ոլորել։ Ցածում քայլող ծերունին այնքան խիստ ու լուրջ մարդ չէր, ինչպես կարելի էր պատկերացնել դեմքին նայելով։ Խոսակցությունն ոկսած լինելով՝ նա արդեն չդադարեցրեց այն։

— Իսկ դու ինչի՞ ես գնում,— հարցրեց նա ոտքերը դոփելով։

— Սովորելու,— պատասխանեց Եգորուշկան։

— Սովորելո՞ւ։ Ա-ա՜... Դեհ, տիրամայրը քեզ օգնական։ Այդպես։ Մի խելքը լավ է, երկուսը՝ ավելի լավ։ Մարդ կա, որին աստված մի խելք է տալիս, մյուսին՝ երկու, իսկ մի ուրիշին՝ երեք... Մի ուրիշին՝ երեք. այդպես է... Մի խելքը

այն է, որով մարդ ծնվում է մորից, մյուսը ուսումն է տալիս, իսկ երրորդը՝ լավ կյանքը։ Հապա՜, ախպերս, լավ է, թե որ մարդ երեք խելք ունի։ Այդպիսի մարդու համար չէ՞ թե մենակ ապրելը, մեռնելն էլ հեշտ է։ Մեռնելը... Իսկ մենք բոլորս էլ մեռնելու... ենք։

Ծերունին ճակատը քորեց, իր կարմիր աչքերով նայեց Եգորուշկային և շարունակեց.

— Մաքսիմ Նիկոլայիչը՝ Սլավյանոսերբսկի աղան, նույնպես անցյալ տարի իր տղային ուսման տարավ։ Չեմ իմանում, թե ինչպես է գիտությունների գործում, բայց տղան ոչինչ, լավ տղա է... Աստված կյանք տա, լավ տղաներ են։ Հա՜, նա էլ ուսման տարավ... Ուրեմն թե՝ Սլավյանոսերբսկում այնպիսի մի դպրոց չկար, որ ուսում տա։ Չկա... իսկ քաղաքը՝ ոչինչ, լավ քաղաք է... Դպրոցը սովորական դպրոց է, այսինքն՝ հասարակ մարդկանց համար, իսկ որ մեծ ուսում տա՝ այդպիսին չկա... Չկա, այդպես է։ Անունդ ի՞նչ է։

— Եգորուշկա։

— Ուրեմն թե՝ Եգորի... Սուրբ նահատակ Եգորի Ամենահաղթի օրը ապրիլի քսաներեքն է։ Իսկ իմ սուրբ անունն է Պանտելեյ... Պանտելեյ Զախարով Խոլոդով... Մենք, ուրեմն թե, Խոլոդովներ ենք... Ես ինքս ծագումով Տիմ գյուղից եմ, գուցե թե լսել ես, Կուրսկի նահանգից։ Եղբայրներս քաղաք են գնացել ու հիմա այնտեղ արհեստ են բանեցնում, իսկ ես գյուղացի եմ... Գյուղացի էլ մնացել եմ։ Մի յոթ տարի առաջ գնացի այնտեղ... այսինքն թե՝ տուն։ Գյուղումն էլ եղա, քաղաքումն էլ... Տիմ էլ գնացի այսինքն թե... Այն ժամանակ, փառք աստծո, բոլորը ողջ ու առողջ էին, իսկ հիմա՝ չեմ իմանում... Գուցե թե մեռնող է եղել... Դե մեռնելու ժամանակն էլ եկել է, որովհետև բոլորը ծեր են, կան, որ ինձնից էլ մեծ են։ Մեռնելը ոչինչ, վատ բան չի, մենակ թե, իհարկե, մարդ առանց ապաշխարանքի չմեռնի։ Առանց ապաշխարանքի մեռնելուց վատ բան չկա։ Էդ տեսակ մահը սատանային է ուրախացնում։ Իսկ թե ուզում ես ապաշխարանքով մեռնել, որ երկնքի արքայության դուռը քո առաջ փակ չլինի, աղոթիր Վարվառա նահատակին։ Նա կմիջնորդի։ Այդպես է... Նա... Աստված նրան երկնքում հենց այդպիսի բանի է դրել, որ, ուրեմն թե, ամեն մարդ ազատ իրավունք ունենա աղոթելու նրան ապաշխարանքի համար։

Պանտելեյը մոթմոթում էր այսպես և, ըստ երևույթին, չէր էլ մտահոգվում, լսո՞ւմ է իրեն Եգորուշկան, թե ոչ։ Նա խոսում էր ալարելով, քթի տակ, ձայնն առանց բարձրացնելու և առանց իջեցնելու, բայց կարճ ժամանակում կարողացավ շատ բան պատմել։ Նրա պատմածները բոլորը կցկտուր բաներ էին, որոնք շատ քիչ կապ ունեին իրար հետ և ամենևին հետաքրքիր չէին Եգորուշկայի համար։ Գուցե թե նա խոսում էր միայն նրա համար, որ այժմ, լուռումունջ անցկացրած գիշերվանից հետո բարձրաձայն ստուգում կատարի, թե տե՞ղն են արդյոք իր մտքերը։ Ապաշխարության մասին վերջացնելով՝ նա նորից սկսեց խոսել Սլավյանոսերբսկի ինչ-որ Մաքսիմ Նիկոլաևիչի մասին։

— Հա՛, տարավ տղային... Տարավ, ճշմարիտ...

Սայլապաններից մեկը, որ բավական առջևից էր գնում, հանկարծ տեղից պոկվեց, վազեց մի կողմի վրա և սկսեց մտրակով գետնին խփել։ Դա մոտ երեսուն տարեկան մի բարձրահասակ, թիկնեղ մարդ էր, շեկ, գանգուր մազերով, ըստ երևույթին՝ շատ ուժեղ և առողջակազմ։ Դատելով նրա ուսերի ու մտրակի շարժումներից, այն լարվածությունից, որ արտահայտում էր նրա կեցվածքը, նա ինչ-որ մի կենդանի բանի էր խփում։ Նրա մոտ վազեց մի ուրիշ սայլապան, որ ցածրահասակ էր, ամրակազմ, սև լայնատարած մորուքով, հագին ժիլետ և փեշերն արձակ վերնաշապիկ։ Սա բռնկեց հազախառն թավ ծիծաղով և գոռաց.

— Տղե՛րք, Դիմովն օ՞ձ է սպանել։ Աստվա՞ծ վկա։

Կան մարդիկ, որոնց խելքի մասին կարելի է ճիշտ գաղափար կազմել նրանց ձայնից ու ծիծաղից։ Սևամորուքը հենց այդպիսի երջանիկների թվին էր պատկանում։ Նրա ձայնի ու ծիծաղի մեջ անթափանց հիմարություն էր զգացվում։ Մտրակելը վերջացնելով՝ շիկահեր Դիմովը մտրակի ծայրով պարանի նման մի ինչ-որ բան բարձրացրեց գետնից և ծիծաղելով նետեց սայլերի կողմը։

— Սա օձ չէ, լորտու է,— գոչեց մեկը։

Երեսը կապած, փայտի նման քայլող մարդը արագ մոտեցավ սպանված օձին, նայեց նրան և իր փայտանման ձեռքերն իրար զարկեց։

— Գարշելի՜,— գոռաց նա խուլ, լալագին ձայնով։— Ինչի՞

սպանեցիր այս լորտուն։ Ի՞նչ է արել քեզ, անիծվա՜ծ։ Մի տես, ո՞նց է սպանել խեղճին։ Բա որ քեզ այսպես սպանի՞ն։

— Լորտու սպանել չի կարելի, այդ ճշմարիտ է...— հանգիստ մրթմրթաց Պանտելեյը։— Չի՛ կարելի... Դա օձ չի։ Տեսքով օձի նման է, բայց հանգիստ, անշառ արարած է... Մարդուն սիրում է... լորտուն...

Դիմովը և սևամորուքը երեսի ամաչեցին, որովհետև բարձր ծիծաղեցին և, առանց քրթմնջոցին պատասխանելու, ծուլորեն քայլեցին դեպի իրենց սայլերը։ Երբ հետևի սայլը մոտեցավ այն տեղին, որտեղ սպանված լորտուն էր ընկած, փաթաթած երեսով մարդը, որ կանգնած էր լորտուի մոտ, դարձավ դեպի Պանտելեյը և լալագին ձայնով հարցրեց.

— Պապի, ախր ինչո՞ւ նա սպանեց այս լորտուն։

Նրա աչքերը, ինչպես այժմ նկատեց Եգորուշկան, մանր էին ու խամրած, երեսը՝ մոխրագույն ու հիվանդոտ և ասես նույնպես աղոտ, իսկ կզակը կարմիր էր և խիստ ուռած էր երևում։

— Պապի, ախր ինչո՞ւ սպանեց,— կրկնեց նա՝ քայլելով Պանտելեյի կողքով։

— Հիմար մարդ է, ձեռքերը քոր են գալիս, դրա համար էլ սպանեց,— պատասխանեց ծերունին։— Իսկ լորտու սպանել չի կարելի... Այդ ճշմարիտ է... Դիմովը, հայտնի բան է, կրովարար է, ամեն ինչ կսպանի, ինչ որ ձեռքի տակ ընկավ, իսկ Կիրյուխան պաշտպան չկանգնեց։ Հարկավոր էր պաշտպան կանգնել լորտուին, իսկ նա՝ հա՛-հա՛-հա՛ ու հի՛-հի՛-հի՛... Դե դու էլ, Վասյա, մի բարկանա... Ի՞նչ կարիք կա բարկանալու։ Սպանեցին, դե՛հ, աստված իրենց հետ... Դիմովը կռվարար է, իսկ Կիրյուխան՝ անխելք... Ոչինչ... Հիմար մարդիկ են, անհասկացող, դե՛հ, աստված իրենց հետ։ Այ, Եմելյանը, ինչի որ պետք չէ ձեռք տալ, ոչ մի անգամ ձեռք չի տա։ Ոչ մի անգամ, այդ ճշմարիտ է... Որովհետև մարդը ուսումնական մարդ է, իսկ նրանք հիմար են... Եմելյա՜նը... Նա ձեռք չի տա։

Շիկավուն վերարկուով և դեմքին սպունգանման ուռուցք ունեցող սայլապանը, որ չափ էր տալիս անտեսանելի խմբին, իր անունը լսելով կանգ առավ և սպասելով, մինչև Պանտելեյն ու Վասյան հավասարվեն իրեն, սկսեց քայլել նրանց կողքից։

— Ինչի՞ մասին եք խոսում,— հարցրեց նա խռպոտ, խեղդուկ ձայնով։

— Դե, Վասյան է է՛լի, բարկանում է,— ասաց Պանտելեյը։— Ես էլ, նշանակում է, զանազան բաներ եմ ասում նրան, որ չբարկանա... Օ՜հ, իմ հիվանդ, ցրտատար ոտքեր։ Է-է՜հ։ Ո՞նց եք մղմղում, ո՞նց եք շարշարվում...

— Այդ շատ ման գալուց է,— նկատեց Վասյան։

— Չէ՛, տղա, չէ՛... Ման գալուց չի։ Երբ ես ման եմ գալիս, ասես ավելի լավ է լինում, երբ պառկում եմ ու տաքանում՝ մահս է։ Ման գալն ինձ համար ավելի լավ է։

Եմելյանը, շիկավուն վերարկուն հագին, կանգնեց Պանտելեյի ու Վասյայի միջև և ձեռքերը թափահարեց, ասես նրանք պատրաստվում էին երգելու։ Մի պահ թափահարելուց հետո նա ձեռքը ցած գցեց և անհույս կռանչեց։

— Ձայնս կտրվել է,— ասաց նա։— Իսկական քամբախտություն։ Ամբողջ գիշերն ու առավոտը մտքիս մեջն է «Տեր ողորմյան», որ մենք Մարինովսկու պսակի ժամանակ երգում էինք։ Նստել է մտքիս մեջ ու կոկորդումս... ասես, թե հա հիմա պիտի երգեմ, բայց չեմ կարող։ Ձայնս կտրվել է։

Նա ինչ-որ բան մտածելով մի րոպե լռեց, ապա շարունակեց։

— Տասնհինգ տարի երգիչ եմ եղել, ամբողջ Լուգանսկի գործարանում գուցե թե ոչ ոք ինձ պես ձայն չուներ, բայց գրողը տանի, երեք տարի առաջ հենց որ Դոնեցում լողացա, այդ օրից ոչ մի նոտա վերցնել չեմ կարողանում։ Կոկորդս եմ մրսեցրել։ Իսկ ես առանց ձայնի՝ ոնց որ աշխատող մարդն առանց ձեռքերի։

— Այդ ճշմարիտ է,— համաձայնեց Պանտելեյը։

— Ես ինձ այնպես եմ հաշվում, որ կորած մարդ եմ, ուրիշ ոչինչ։

Այդ ժամանակ Վասյան հանկարծ Եգորուշկային տեսավ։ Նրա աչքերը փայլեցին ու ավելի մանրացան։

— Պստիկ աղա՞ն էլ է մեզ հետ,— ասաց նա և կարծես ամաչելով՝ քիթը ծածկեց թևքով։— Ի՜նչ լավ սայլապան է... Մնա մեզ հետ. սայլ կքշես, բուրդ կտեղափոխես։

Պստիկ աղան ու սայլապանը մի անձի մեջ մարմնավորելու միտքը երևի նրան շատ հետաքրքիր ու սրամիտ թվաց, որովհետև բարձրաձայն քրքջաց և շարունակեց այդ միտքը

զարգացնել։ Եմելյանը նույնպես նայեց վերև, Եգորուշկային, բայց թոուցիկ ու պաղ հայացքով։ Նա զբաղված էր իր մտքերով և, եթե Վասյան չլիներ, չէր նկատի Եգորուշկայի ներկայությունը։ Հինգ րոպե չանցած՝ նա նորից ձեռքը թափ տվեց, ապա իր ուղեկիցներին նկարագրելով պսակադրության «Տեր ողորմյայի» գեղեցկությունը, որ գիշերը իր միտքն էր եկել, մտրակը թեի տակ դրեց և սկսեց երկու ձեռքը թափահարել։

Գումակը կանգ առավ գյուղից մեկ վերստ հեռու, կռունկավոր ջրհորի մոտ։ Իր դույլը ջրհորի մեջ իջեցնելով՝ սեամորուք Կիրյուխան փորի վրա պառկեց հորի փայտե պռնկի վրա և փոսի մեջ խրեց իր փրչոտ գլուխը, ուսերն ու կրծքի մի մասը, այնպես, որ Եգորուշկան տեսնում էր միայն նրա կարճ ոտքերը, որոնք հագիվ էին գետնին հասնում։ Ջրհորի խորքում տեսնելով իր գլխի արտացոլումը՝ Կիրյուխան սկսեց ուրախությունից քրքջալ թավ ձայնով, իսկ ջրհորը նրան պատասխանեց նույնպիսի արձագանքով։ Երբ նա բարձրացավ, դեմքն ու վիզը կարմրել էին դումաշի պես։ Առաջինը Դիմովն էր, որ մոտ վազեց ջուր խմելու։ Նա խմում էր ծիծաղով, հաճախ դույլից կտրվելով և ինչ-որ ծիծաղելի բան պատմելով Կիրյուխային, ասես շուտ եկավ և բարձր, տափաստանով մեկ մի հինգ վատ խոսք արտասանեց։ Եգորուշկան չէր հասկանում այդ խոսքերի նշանակությունը, բայց որ դրանք վատ խոսքեր էին, այդ նրան լավ հայտնի էր։ Նա գիտեր, թե իր հարազատներն ու ծանոթները ինչպիսի լուռ զզվանք էին տածում դեպի այդ խոսքերը, ինքն էլ, չիմանալով ինչու, նույն զգացմունքն ուներ և վարժվել էր մտածելու, որ այդ բառերը բարձրաձայն կարող են արտասանել միայն հարբած մարդիկ ու մեկ էլ կովարարները։ Նա հիշեց լորտուի սպանությունը, ականջ դրեց Դիմովի ծիծաղին և այդ մարդու նկատմամբ ատելության պես մի բան զգաց։ Եվ կարծես հենց դիտմամբ՝ այդ ժամանակ Դիմովը տեսավ Եգորուշկային, որ ցած էր իջել սայլից և գնում էր դեպի ջրհորը։ Նա բարձր ծիծաղեց և գոռաց.

— Տղե՜րք, ծերուկն այս գիշեր մի տղա է ծնել։

Կիրյուխան հազաց, թավ ձայնով ծիծաղեց։ Ծիծաղեց էլի ինչ-որ մեկ ուրիշը, իսկ Եգորուշկան կարմրեց և վերջնականապես որոշեց, որ Դիմովը շատ չարասիրտ մարդ է։

Շեկ, գանգուր մազերով, գլխաբաց ու վերնաշապիկի օձիքն արձակած Դիմովը թվում էր գեղեցիկ ու արտակարգ ուժեղ։

Նրա ամեն մի շարժումի մեջ զգացվում էր կովարար, ուժեղ և իր արժեքն իմացող մարդը։ Նա թոթվում էր ուսերը, ձեռքերը կանթում, խոսում ու ծիծաղում էր բոլորից բարձր և այնպիսի տեսք ուներ, ասես պատրաստվում էր մի ձեռքով ինչ-որ շատ ծանր բան բարձրացնել և դրանով ամբողջ աշխարհը զարմացնել։ Նրա խելառ ծաղրական հայացքը սահում էր ճանապարհի վրայով, գումակի ու երկնքի վրայով, առանց մի բանի վրա կանգ առնելու և ասես որոնում էր, թե ում սպանի պարապուությունից, և ում վրա ծիծաղի։ Երևում էր՝ նա ոչ ոքից չէր վախենում, ոչնչից չէր քաշվում և, հավանորեն, ամենևին չէր հետաքրքրվում Եգորուշկայի կարծիքով... Իսկ Եգորուշկան արդեն ամբողջ հոգով ատում էր նրա շեկ գլուխը, մաքուր երեսը և ուժը, զզվանքով ու վախով էր լսում նրա ծիծաղը և մտածում էր, թե որպես վրիժառություն ի՞նչ հայհոյական խոսք ասի նրան։

Պանտելեյը նույնպես մոտեցավ դույլին։ Նա գրպանից հանեց մի կանաչ կանթեղաբաժակ, մի լաթով մաքրեց, դույլից ջուր վերցրեց ու խմեց, հետո նորից ջուր վերցրեց, ապա բաժակը լաթի մեջ փաթաթեց ու էլի գրպանը դրեց։

— Պապիկ, ինչո՞ւ կանթեղաբաժակով ես խմում,— զարմացավ Եգորուշկան։

— Մարդ կա՝ դույլից է խմում, մարդ կա՝ կանթեղաբաժակից, — խուսափողական պատասխանեց ծերունին։ — Ամեն մարդ՝ իր ձևով... Դու դույլի՞ց ես խմում, խմիր, քեզ հալալ լինի...

— Այ իմ աղավնյա՜կս, իմ անուշի՜կս,— հանկարծ խոսեց Վասյան փաղաքուշ, լալագին ձայնով։— Իմ աղավնյա՜կս...

Նրա հեռուն հառած աչքերը պսպղում էին, ժպտում, և դեմքն այնպիսի արտահայտություն էր ստացել, որպիսին նա ուներ, երբ նայում էր Եգորուշկային։

— Դու այդ ո՞ւմ հետ ես,— հարցրեց Կիրյուխան։

— Աղվեսը, մի տեսեք... պառկել է մեջքի վրա ու խաղում է, ասես պստիկ շուն լինի...

Բոլորն սկսեցին նայել հեռուն և հայացքով աղվեսը որոնել, բայց ոչինչ չտեսան։ Միմիայն Վասյան էր ինչ-որ բան տեսնում իր պղտոր, մոխրագույն աչքերով ու հիանում։ Նրա տեսողությունը, ինչպես հետո համոզվեց Եգորուշկան, զարմանալի սուր էր։ Նա այնպես լավ էր տեսնում, որ ամայի գորշ

տափաստանները նրա համար միշտ լի էին կյանքով ու բովանդակությամբ։ Բավական էր, որ նա հեռու նայեր, որպեսզի ասվես տեսներ, նապաստակ, արոս կամ որևէ այլ կենդանի, որն իրեն հեռու է պահում մարդկանցից։ Դժվար բան չի տեսնել փախչող նապաստակը կամ թռչող արոսը, այդ տեսնում է տափաստանով անցնող ամեն ոք, բայց ամեն մարդ չի կարող վայրենի կենդանուն տեսնել իր տանը, երբ նա չի փախչում, չի թաքնվում և անհանգստացած այս ու այն կողմ չի նայում։ Իսկ Վասյան տեսնում էր խաղացող աղվեսին, թաթերով երեսը լվացող նապաստակին, իր թևերը հարդարող արոսին, օդում կանգ առած, թևերը թափահարող ուրուրին։ Տեսողության այդպիսի սրության շնորհիվ բացի այն աշխարհից, որ բոլորն էին տեսնում, Վասյան ուներ էլի մի ուրիշ աշխարհ, իր սեփականը, որ ոչ ոքի մատչելի չէր և հավանորեն շատ գեղեցիկ էր, որովհետև, երբ նա նայում էր ու հիանում, դժվար էր չնախանձել նրան։

Երբ գումակն առաջ շարժվեց, եկեղեցում պատարագի զանգերը քաշեցին։

V

Գումակը տեղավորվեց գյուղից հեռու, գետի ափին։ Արևը կիզում էր երեկվա պես, օդը անշարժ էր ու տրտում։ Գետափին կանգնած էին մի քանի ուռենի, բայց նրանց ստվերը ոչ թե գետնին, այլ ջրի մեջ էր ընկնում և իղուր կորչում, իսկ սայլերի տակ ստվերում շոգ էր ու տխուր։ Ջուրը կապույտին էր տալիս օդի արտացոլումից և հրապուրում էր մոլեգնորեն։

Սայլապան Ստյոպկան, որին Եգորուշկան միայն այժմ նկատեց, տասնութամյա մի խախոլ տղա՝ երկար վերնաշապկով, առանց գոտի, լայն շալվարով, որի փողքերը քայլելիս ֆոֆռում էին դրոշակների պես, շորերը արագ հանեց, զառիթափ ափով ցած վազեց ու չլմփոցով ջուրը նետվեց։ Նա մի երեք անգամ սուզվեց ջրի տակ, ապա սկսեց լողալ մեջքի վրա և բավականությունից աչքերը փակեց։ Նրա դեմքը ժպտում էր ու կնճռոտում, ասես նրան խոռուտ էին տալիս, մի տեղն էր ցավում կամ ծիծաղն էր գալիս։

Շոգ օրերին, երբ տոթից ու տապից թաքնվելու տեղ չկա, ջրի ճողփյունը և լողացողի բարձր շնչառությունը մարդու

ականջին հնչում են որպես անուշ երաժշտություն։ Դիմովն ու Կիրյուխան նույնպես, Ստյոպկային նայելով, արագ հանվեցին և իրար հետևից բարձր ծիծաղով ջուրը թափվեցին։ Եվ հանդարտ, համեստ գետակը աղմկեց մարդկանց փնչոցից, բարձր կանչերից ու ջրի ճողփյունից։ Կիրյուխան հազում էր, ծիծաղում ու այնպես էր գոռում, ասես նրան խեղդել էին ուզում, իսկ Դիմովը հետապնդում էր նրան, աշխատելով ոտքը բռնել։

— Է՜-հե՜-հե՜, — գոռում էր նա, — բռնեցե՜ք, բռնեցե՜ք դրան։

Կիրյուխան քրքրջում էր ու հրճվում, բայց նրա դեմքի արտահայտությունը նույնն էր, ինչ որ ցամաքի վրա՝ անմիտ ու շշմած, ասես մեկը անկատելիորեն մոտեցել էր հետևից ու կացնով գլխին տվել։ Եգորուշկան նույնպես հանվեց, բայց ափով ցած չիջավ, այլ վաղքով թափ առավ,և ջուրը ցատկեց մեկուկես սաժեն բարձրությունից։ Օդում մի աղեղ գծելով նա ջուրը նետվեց, սուզվեց խորքը, բայց հատակին չհասավ. մի ինչ-որ պաղ ու հաճելի ուժ բռնեց նրան ու հետ տարավ դեպի վեր։ Նա դուրս պրծավ ջրից, փնչալով ու բշտիկներ փռելով, բաց արեց աչքերը. բայց գետի վրա, հենց ուղիղ նրա դեմքի մոտ արևն էր արտացոլում։ Սկզբում կուրացուցիչ կայծերը, ապա ծիածաններն ու մթին բծերը խրվում էին նրա աչքերը։ Նա շտապեց նորից սուզվել ջրի մեջ, ջրի տակ բաց արեց աչքերը և տեսավ պղտոր-կանաչավուն մի ինչ-որ բան, որ նման էր լուսնյակ գիշերվա երկնքի։ Նորից նույն ուժը թույլ չտվեց նրան, որ հասնի հատակին ու զով տեղը մնա, նրան վերև տարավ, նա դուրս պրծավ ջրի տակից և այնպես խոր շնչեց, որ թարմացավ ու լայնացավ ոչ միայն կուրծքը, այլև փորը։ Հետո, որպեսզի ջրից վերցնի այն ամենը, ինչ կարելի է վերցնել, նա իրեն թույլ տվեց ամեն տեսակ շքեղություն. պառկում էր մեջքի վրա ու գրգանք էր վայելում, չփչփացնում էր. շուռումուռ գալիս, լող էր տալիս մերթ փորի վրա, մերթ մեջքի ու մերթ կողքի և ամեն տեսակ, ինչպես ուզենար, մինչև որ հոգնեց։ Մյուս ափը, որ ծածկված էր խիտ եղեգնուտով, ասկեշողում էր արևի տակ, և եղեգնի ծաղիկները դեղեցիկ ողկույզներով կախվել էին ջրի վրա։ Մի տեղ եղեգնը ցնցվում էր, իր ծաղիկները խոնարհում ու ճրթճրթում. այդ Ստյոպկան ու Կիրյուխան էին խեցգետիններ որսում։

— Խեցգետի՜ն, տղե՜րք, նայեցե՜ք, խեցգետի՜ն, — հաղ-

թական գոռաց Կիրյուխան և իսկապես ցույց տվեց մի խեցգետին։

Եգորուշկան լող տվեց մինչև եղեգները, սուզվեց ու սկսեց որոնել եղեգների արմատների մոտ։ Ձեռքերը խրելով լպրծուն տիղմի մեջ նա շոշափեց ինչ-որ սուր ու զզվելի բան, գուցե թե իսկապես խեցգետին, բայց հենց այդ ժամանակ մեկը նրա ոտքը բռնեց և վերև քաշեց։ Եգորուշկան շնչասպառ լինելով ու հազալով աչքերը բացեց և իր առաջ տեսավ կռվարար Դիմովի թաց, ծիծաղկոտ երեսը։ Նա ծանր էր շնչում և, ինչպես երևում էր աչքերից, ուզում էր իր չարաճճիությունը շարունակել։ Նա ամուր բռնել էր Եգորուշկայի ոտքը և արդեն մյուս ձեռքն էլ բարձրացրել էր, որպեսզի նրա վիզն էլ բռնի, բայց Եգորուշկան զզվանքով ու ահով, ասես վախենալով, թե հսկան իրեն կխեղդի, մի կողմ նետվեց նրանից և ասաց.

— Հիմա՜։ Սփաթդ կշարդեմ։

Զգալով, որ իր ատելությունն արտահայտելու համար այդ բավական չէ, նա մի քիչ մտածեց ու ավելացրեց.

— Սրիկա՜։ Շա՜ն որդի։

Իսկ Դիմովը, ասես ոչինչ էլ չէր եղել, արդեն չէր նկատում Եգորուշկային, այլ լող էր տալիս դեպի Կիրյուխան ու գոռում,

— Հե՜, հե՜, հե՜, եկեք ձուկ բռնենք։ Տղե՜րք, ձուկ բռնե՜նք։

— Ճիշտ որ, — համաձայնեց Կիրյուխան։ — Երևի այստեղ շատ ձուկ կլինի...

— Ստյոպկա, վազիր գյուղ, մուժիկներից մի ուռկան խնդրիր։

— Ձեն տա։

— Կտա՜ն։ Դու խնդրիր։ Ասա՝ ի սեր Քրիստոսի, սխալ չէ՞ որ մենք զարիբի պես բան ենք։

— Այդ ճիշտ է։

Ստյոպկան դուրս ելավ ջրից, արագ հագնվեց և գլխաբաց, իր լայն շալվարը թափահարելով վազեց դեպի գյուղ։ Դիմովի հետ ընդհարվելուց հետո ջուրն արդեն Եգորուշկայի համար կորցրել էր իր հրապույրը։ Նա դուրս եկավ ու սկսեց հագնվել։ Պանտելեյն ու Վասյան զառիթափի ափին նստած, ոտքերը կախած՝ նայում էին լողացողներին։ Եմելյանը մերկ կանգնել էր մինչև ծնկները ջրի մեջ, հենց ափի մոտ, մի ձեռքով բռնել էր խոտը, որպեսզի չընկնի, իսկ մյուսով մարմինն էր շփում։

Ոսկրոտ թիակներով, ուռուցքն աչքի տակ, ցած կռացած և ակներևորեն վախվխելով ջրից, նա մի ծիծաղելի պատկեր էր ներկայացնում։ Նրա դեմքը լուրջ էր, խիստ, ջրին նայում էր բարկացած, ասես պատրաստվում էր նախատել նրան, որ մի ժամանակ Դոնեցի ջրում մրսեցրել է իրեն ու ձայնը խլել։

— Իսկ դու ինչո՞ւ չես լողանում,— հարցրեց Եգորուշկան Վասայային։

— Այնպես... Չեմ սիրում...— պատասխանեց Վասյան։

— Այդ ինչո՞ւ է ծնոտդ ուռել։

— Ցավում է... Ես, պարոնս, լուցկու ֆաբրիկայումն էի աշխատում... Բժիշկն ասում էր, որ հենց դրանից է իմ ծնոտը ուռչում։ Այնտեղ օդը վատասողջ է։ Բացի ինձնից էլի երեքի ծնոտն ուռավ, իսկ մեկինը՝ բոլորովին փտեց։

Շուտով Ստյոպկան վերադարձավ՝ բերելով ուռկանը։ Դիմովն ու Կիրյուխան երկար ժամանակ ջրի մեջ մնալուց կապտել էին ու խռպոտել, բայց ձկան որսը հաճույքով սկսեցին։ Սկզբում նրանք գնացին խոր տեղով, եղեգնուտի երկարությամբ։ Այդտեղ ջուրը Դիմովի պարանոցին էր հասնում, իսկ ցածրահասակ Կիրյուխայի գլուխն էլ էր ծածկում ու լցվում բերանը։ Կիրյուխան շնչասպառ էր լինում, պղպջակներ էր արձակում, իսկ Դիմովը եղեգնի սուր-սուր արմատներին դիպչելով ընկնում էր ու խճճվում ուռկանի մեջ, երկուսն էլ ջրփշրփացնում էին ու աղմկում, նրանց ձկնորսությունից բան չէր դուրս գալիս։

— Խորն է, խո՞րը,— խռխռում էր Կիրյուխան։— Ոչինչ չի բռնվի։

— Մի՛ քաշիր, գրողի տարած,— գոռում էր Դիմովը՝ աշխատելով համապատասխան դիրք տալ ուռկանին։— Երկու ձեռքով բռնիր։

— Այդտեղ դուք ձուկ բռնել չեք կարող,— ափից գոռում էր նրանց Պանտելեյը։— Հենց միայն կխրտնացնեք ձուկը, հիմարներ։ Դեպի ձախ պահեք։ Այնտեղ ջուրը ծանծաղ է։

Հանկարծ ուռկանի վրա մի ձուկ փայլփլեց։ Բոլորը ճիչ արձակեցին, իսկ Դիմովը բռունցքով խփեց հենց այնտեղին, որտեղ անհետացել էր ձուկը, և նրա դեմքը սրտնեղություն արտահայտեց։

— Է՛հ, — մոթմոթաց Պանտելեյը և ոտքերը գետնին խփեց։— Փախցրիք ձուկը։ Գնա՞ց։

Դեպի ձախ գնալով՝ Դիմովն ու Կիրյուխան քիչ-քիչ դուրս եկան ծանծաղուտը և այդտեղ իսկական որս սկսեցին։ Նրանք մի երեք հարյուր քայլ հեռացան սայլերից։ Երևում էր, թե ինչպես լուռ, ոտքերը հաղիվ շարժելով, աշխատելով որքան կարելի է ուռկանը խոր պահել և եղեգներին մոտիկ, նրանք քաշում էին այն, բռունցքներով խփում ջրին ու եղեգները խշխշացնում, որպեսզի ձուկը քշեն ուռկանի մեջ։ Եղեգնուտից նրանք գնացին դեպի մյուս ափը, իրենց հետ քաշելով ուռկանը, հետո հիասթափված տեսքով, ծնկները վեր բարձրացնելով հետ դարձան դեպի եղեգնուտը։ Նրանք խոսում էին, բայց չէր լսվում, թե ինչ են խոսում։ Իսկ արեգակը այրում էր նրանց մեջքը, ճանճերը կծում էին, և նրանց կապտած մարմինն սկսել էր կարմրել։ Նրանց հետևից դույլը ձեռքին բռնած քայլում էր Ստյոպկան։ Ամեն մի հաջող որսից հետո նա մի որևէ ձուկ վեր էր բարձրացնում և արևի տակ շողացնելով գոռում։

— Տեսե՞ք, տեսեք ի՞նչ ձուկ է։ Արդեն հինգ հատ այսպիսի ձուկ կա։

Երևում էր, թե ինչպես ուռկանը հանելով՝ ամեն անգամ Դիմովը, Կիրյուխան ու Ստյոպկան երկար ժամանակ որոնում էին տիղմի մեջ, ինչ-որ բան դույլն էին գցում, ինչ-որ բան դուրս նետում։ Երբեմն ուռկանի մեջ ընկած ինչ-որ բան ձեռքից ձեռք էին տալիս, հետաքրքրությամբ նայում, ապա դուրս նետում...

— Այդ ի՞նչ է,— գոռում էին ափից։

Ստյոպկան ինչ-որ պատասխան էր տալիս, բայց նրա խոսքերը չէին հասկացվում։ Ահա նա դուրս եկավ ջրից և դույլը երկու ձեռքով բռնած, մոռանալով վերնաշապիկը ցած թողնել, վազեց դեպի սայլերը։

— Արդեն լի՞ք է,— գոռում էր նա ծանր շնչելով։— Մի ուրիշը տվեք։

Եգորուշկան նայեց դույլի մեջ։ Դույլը լիքն էր։ Ջրի միջից իր անճոռնի գլուխն էր դուրս հանում գայլաձուկը, իսկ նրա կողքին վխտում էին խեցգետիններն ու մանրիկ ձկները։ Եգորուշկան ձեռքը խրեց դույլի մեջ ու ջուրը չփչփացրեց։ Գայլաձուկը կորավ խեցգետինների տակ, նրա փոխարեն դուրս պրծան պերկեսն ու ծածանը։ Վասյան նույնպես նայեց դույլի մեջ։ Նրա աչքերը փայլեցին և դեմքը սիրալիր դարձավ, ինչ-

պես առաջ, երբ նա աղվեսն էր տեսել։ Նա դուրսից ինչ-որ բան հանեց, բերանը տարավ ու սկսեց ծամել։ Կրճկրճոց լսվեց։

— Տղե՜ր,— զարմացավ Ստյոպկան,— Վասկան սաղ-սաղ խարակաձուկ է ուտում։ Թո՛ւհ։

— Սա խառակաձուկ չի, մուծի է,— հանգիստ պատասխանեց Վասյան շարունակելով ծամել։

Նա բերանից հանեց ձկան պոչը, սիրալիր նայեց նրան ու նորից բերանը դրեց։ Մինչ նա ծամում էր ձուկն ու կրճկրճացնում, Եգորուշկային թվում էր, թե իր առջև կանգնածը մարդ չի։ Վասյայի թմբլիկ կզակը, նրա անփայլ աչքերը, արտակարգ սուր տեսողությունը, ձկան պոչը բերանին և այն բավականությունը, որով նա ծամում էր ձուկը, նրան նմանեցնում էին անասունի։

Եգորուշկան ձանձրացավ նրա մոտ։ Ասենք՝ ձկան որսն էլ արդեն վերջացել էր։ Նա անցավ սայլերի մոտով, մի պահ մտածեց և ձանձրույթից քայլեց դեպի գյուղը։

Քիչ անց՝ նա արդեն եկեղեցում կանգնած և ճակատը ինչ-որ մեկի մեջքին դրած, որից կանեփի հոտ էր գալիս, լսում էր, թե ինչպես են երգում նախաբեմում։ Պատարագն արդեն վերջանալուն մոտ էր։ Եգորուշկան ժամերգությունից բան չէր հասկանում և անտարբեր էր նրա նկատմամբ։ Նա մի պահ լսեց, ապա հոգանջեց և սկսեց ծոծրակներն ու մեջքերը դիտել։ Նա ճանաչեց, որ ծոծրակներից մեկը, որը շեկ էր ու նոր լողացած լինելուց դեռ թաց, Եմելյանինն էր։ Այդ ծոծրակը խուզված էր կեռ, ընդունված չափից բարձր։ Քունքերը նույնպես սովորականից բարձր էին խուզված և Եմելյանի կարմիր ականջները տնկվել էին ինչպես երկու կռատուկ և թվում էր, այնպես էին զգում, թե իրենց տեղը չեն։ Նայելով այդ ծոծրակին ու ականջներին՝ Եգորուշկան, չգիտես ինչու, մտածեց, որ Եմելյանը հավանորեն շատ անբախտ մարդ է։ Նա հիշեց, թե ինչպես էր չափ տալիս Եմելյանը, հիշեց նրա խռպոտ ձայնը, երկչոտ տեսքը լողանալու ժամանակ և խիստ խղճաց նրան։ Եգորուշկան ուզեց որևէ սիրալիր բան ասել նրան։

— Ես էլ այստեղ եմ,— ասաց նա, Եմելյանի թևը քաշելով։

Այն մարդիկ, որոնք խմբի մեջ երգում են որպես տենոր կամ բաս, մանավանդ նրանք, ովքեր կյանքում գեթ մեկ անգամ դիրիժորություն են արել, վարժվում են տղաներին նայել

խիստ ու խոժոռ։ Այդ սովորությունը նրանց մոտ մնում է և հետո, երբ այլևս երգիչ չեն լինում։ Դառնալով դեպի Եգորուշկան՝ Եմելյանը խեթ նայեց նրան ու ասաց.

— Եկեղեցում շարություններ մի՛ անի։

Հետո Եգորուշկան առաջ շարժվեց ու մոտեցավ պատկերակալին։ Այստեղ նա հետաքրքիր մարդիկ տեսավ։ Բոլորից առաջ, աջ կողմը գորգի վրա կանգնած էին մի պարոն և մի տիկին։ Նրանցից ամեն մեկի հետևը մի աթոռ էր դրված։ Պարոնը հագել էր նոր հարթուկված չեչունչե զգեստ, կանգնած էր պատվի բռնած զինվորի պես անշարժ, իր սափրած, կապույտ կզակը վեր տնկած։ Նրա բարձր օձիքի, կզակի կապտության, փոքրիկ ճաղատի և ձեռնափայտի մեջ շատ մեծ արժանապատվություն էր զգացվում։ Արժանապատվության շռայլությունից նրա պարանոցը լարված էր և կզակը վեր էր տնկվել այնպիսի ուժով, որ թվում էր, թե գլուխն ամեն րոպե պատրաստ է պոկվելու և վեր թռչելու։ Իսկ տիկինը, որ սպիտակ մետաքսե շալով մի զեր, տարեց կին էր, գլուխը թեքել էր մի կողքի վրա և այնպես էր նայում, կարծես հենց նոր ինչ-որ մեկին մի լավություն էր արել և ուզում էր ասել. «Ախ, մի՛ անհանգստացեք, կարիք չկա շնորհակալություն հայտնելու։ Ես այդ չեմ սիրում...»։ Գորգի շուրջ խիտ շարքով խախոլներ էին կանգնած։

Եգորուշկան մոտեցավ պատկերակալին և սկսեց սրբապատկերները համբուրել։ Ամեն մի պատկերի առաջ նա առանց շտապելու ծունր էր դնում, առանց դետնից բարձրանալու նայում էր ետ, ժողովրդին, հետո վեր էր կենում ու համբուրում։ Ճակատը սառը հատակին դիպցնելը նրան մեծ բավականություն էր պատճառում։ Երբ եկեղեցու սպասավորը երկար մարիչը ձեռքին դուրս եկավ զոհասեղանից, որպեսզի մոմերը հանգցնի, Եգորուշկան արագ վեր թռավ գետնից և վազեց նրա մոտ։

— Նշխարքն արդեն բաժանե՞լ են,— հարցրեց նա։

— Չկա՛, չկա՛...— մռայլ մոթմոթաց սպասավորը։— Հետու գնա...

Պատարագը վերջացավ։ Եգորուշկան առանց շտապելու դուրս եկավ եկեղեցուց և գնաց հրապարակում թափառելու։ Իր կյանքում նա շատ էր տեսել գյուղեր, հրապարակներ ու գյուղացիներ, և այն ամենը, ինչ հիմա տեսնում էր, ամենևին

չէր հետաքրքրում նրան։ Զանձրույթից դրդված, երբեմն որևէ բանով ժամանակն անցկացնի, նա մտավ մի խանութ, որի դռան վերևը դումաշի մի լայն շերտ էր կախված։ Խանութը բաղկացած էր երկու ընդարձակ, վատ լուսավորված մասերից։ Մի մասում կտորեղեն ու նպարեղեն էր վաճառվում, իսկ մյուսում՝ կուպրով լի տակառներ էին դրված և առաստաղից ուսանուրներ էին կախված։ Այդ մասից կաշվի ու կուպրի անուշ հոտ էր գալիս։ Խանութի հատակին ջուր էր ցանված. ջուր ցանողը հավանորեն շատ ֆանտազյոր և ազատամիտ մարդ էր եղել, որովհետև ամբողջ հատակը ծածկված էր նախշերով ու խճճված նշաններով։ Վաճառասեղանի հետևը փորը սեղանին դեմ տված կանգնած էր գեր խանութպանը՝ լայն դեմքով ու կլոր մորուքով, ըստ երևույթին՝ վելիկոռուս։ Նա կծռվի թեյ էր խմում և ամեն մի կումից հետո խոր հառաչանք էր արձակում։ Նրա դեմքն արտահայտում էր կատարյալ անտարբերություն, բայց ամեն հառաչանքի մեջ լսվում էր. «Սպասիր, ես քեզ ցույց կտամ»։

— Մի կոպեկի արևածաղկի սերմ տուր ինձ,— դիմեց նրան Եգորուշկան։

Խանութպանը հոնքերը բարձրացրեց, տեղից դուրս եկավ և Եգորուշկայի գրպանը լցրեց մի կոպեկի արևածաղկի հատիկ, չափելով այն օծանելիքի դատարկ տուփով։ Եգորուշկան դուրս գալ չէր ուզում։ Նա երկար ժամանակ դիտեց մեղրաբլիթներով լի արկղը, մտածեց, մտածեց և ցույց տալով հնությունից ժանգոտած մանրիկ բլիթները՝ հարցրեց.

— Ի՞նչ արժեն այս բլիթները

— Զույգը մի կոպեկ։

Եգորուշկան գրպանից հանեց այն բլիթը, որ երեկ նրան ընծայել էր հրեուհին ու հարցրեց.

— Իսկ այսպիսի բլիթնե՞րն ինչ արժեն քեզ մոտ։

Խանութպանը բլիթը ձեռքն առավ, բոլոր կողմերից դիտեց և մի հոնքը բարձրացրեց։

— Այսպիսի՞ն,— հարցրեց նա։

Ապա բարձրացրեց մյուս հոնքը, մի պահ մտածեց ու պատասխանեց.

— Զույգը երեք կոպեկ...

Լռություն տիրեց։

— Դուք ո՞ւմ տղան եք,— հարցրեց խանութպանը՝ կարմիր պղնձե թեյամանից թեյ լցնելով իր համար։

— Իվան Իվանիչի քրոջ որդին եմ։

— Իվան Իվանիչներ շատ կան աշխարհում,— հառաչելով ասաց խանութպանը։ Նա Եգորուշկայի գլխի վրայով նայեց դռանը, մի պահ լռեց, ապա հարցրեց.— Թեյ չե՞ք ցանկանա։

— Ինչո՞ւ չէ,— համաձայնեց Եգորուշկան որոշ դժկամությամբ, թեև առավոտյան թեյի սուր կարոտ էր զգում։

Խանութպանը մի բաժակ թեյ լցրեց և նրան տվեց մի կտոր կրծած շաքարի հետ։ Եգորուշկան նստեց ծալովի աթոռին և սկսեց խմել։ Նա ուզում էր էլի հարցնել, թե որքան արժի շաքարանշի ֆունտը և նոր էր դրա մասին խոսք բաց արել, երբ ներս մտավ մի գնորդ, և խանութպանը իր բաժակը մի կողմ դնելով՝ սկսեց գործով զբաղվել։ Նա գնորդին տարավ խանութի այն մասը, որտեղից կուպրի հոտ էր գալիս, և երկար ժամանակ խոսում էր նրա հետ։ Գնորդը, որ ըստ երևույթին շատ համառ ու խելքը գլխին մարդ էր, որպես անհամաձայնության նշան շարունակ պտտում էր գլուխը և հետ-հետ գնում։ Խանութպանը ինչ-որ բան էր համոզում նրան և սկսեց վարսակ լցնել նրա խոշոր պարկի մեջ։

— Էս ի՞նչ վարսակ է որ,— տխուր ասաց գնորդը։— Էս վարսակ չի, այլ քոզառ է, հավի կուտ... Չէ, կգնամ Բոնդարենկոյի մոտ։

Երբ Եգորուշկան վերադարձավ գետափ, այնտեղ մի փոքրիկ խարույկ էր վառվում։ Այդ սայլապաններն էին ճաշ եփում իրենց համար։ Ստյոպկան ծխի մեջ կանգնած՝ մի մեծ գդալով խառնում էր կաթսան։ Մի փոքր հեռու, աչքերը ծխից կարմրած՝ նստել էին Կիրյուխան ու Վասյան և ձուկ էին մաքրում։ Նրանց առջև ընկած էր տիղմով ու ջրիմուռով ծածկված ուռկանը, որի վրա փայլփլում էին ձկները և շարժվում էին խեցգետինները։

Եմելյանը, որ նոր էր վերադարձել եկեղեցուց, նստել էր Պանտելեյի կողքին, թափահարում էր ձեռքերը և հազիվ լսելի սվսվան ձայնով երգում էր՝ «Փառք քեզ...»։ Դիմովը ձիերի մոտ էր պտույտ գալիս։

Մաքրելը վերջացնելով՝ Կիրյուխան ու Վասյան ձուկն ու ողջ-ողջ խեցգետինները լցրին դույլի մեջ, լվացին և լցրին եռացող ջրի մեջ։

— Ճարպ դցե՞մ,— հարցրեց Ստյոպկան դդալով քափը քաշելով։

— Ինչի՞ համար, ձուին իր յուղը դուրս կտա,— պատասխանեց Կիրյուխան։

Կաթսան կրակից վերցնելուց առաջ Ստյոպկան նրա մեջ լցրեց մի երեք բուռ կորեկի ձավար, մի գդալ աղ։ Ապա նա համը տեսավ, շրթունքները չիչփացրեց, գդալը լիզեց և բավականությամբ կմկմացրեց. այդ նշանակում էր, որ ճաշն արդեն պատրաստ է։

Բոլորը, բացի Պանտելեյից, նստեցին կաթսայի շուրջ և գդալները գործի դրին։

— Է՛յ, երեխային էլ մի գդալ տվեք,— խստությամբ ասաց Պանտելեյը։— Գուցե նա էլ է ուտել ուզում։

— Մեր ճաշը ռամիկի ճաշ է,— հառաչելով ասաց Կիրյուխան։

— Ռամիկի ճաշն էլ կարելի է ուտել, թե որ ցանկություն լինի։

Եգորուշկային մի գդալ տվին։ Նա սկսեց ուտել, բայց առանց նստելու, այլ հենց կաթսայի մոտ կանգնած ու նայելով նրա մեջ՝ ինչպես հորի մեջ կնայեն։ Խաշիլից ձկան համ էր գալիս, հաճախ ձավարի հետ գդալի մեջ էին ընկնում ձկան թեփուկներ։ Խեցգետինները գդալով վերցնել չէր լինի, և ճաշողները ուղղակի ձեռքով էին հանում։ Այդ գործում առանձնապես չէր քաշվում Վասյան, որը խաշիլի մեջ թրջում էր ոչ միայն ձեռքերը, այլև թևքերը։ Բայց և այնպես խաշիլը Եգորուշկային շատ համեղ թվաց և հիշեցնում էր խեցգետնե ապուրը, որ տանը պաս օրերին եփում էր մայրիկը։ Պանտելեյը մի կողմ նստած հաց էր ծամում։

— Պապի, բա դու ինչի՞ չես ուտում,— հարցրեց նրան Եմելյանը։

— Ես խեցգետին չեմ ուտում... գրողը տանի դրանց,— ասաց ծերունին ու զզվանքով շուռ եկավ։

Ուտելու ընթացքում տեղի էր ունենում ընդհանուր խոսակցություն։ Այդ խոսակցությունից Եգորուշկան հասկացավ, որ իր բոլոր նոր ծանոթները, չնայած իրենց տարիքի ու բնավորությունների տարբերության, ունեն մի ընդհանուր բան, որը նրանց իրար նման է դարձնում. նրանք բոլորն էլ հիանալի անցյալ և շատ վատ ներկա ունեցող մարդիկ էին։ Նրանք բոլորն էլ իրենց անցյալի մասին խոսում էին ցնծագին, իսկ ներկային վերաբերվում էին համարյա արհամարհանքով։ Ռուս մարդը սիրում է մտաբերել, բայց չի սիրում ապրել։ Եգորուշկան դեռևս չգիտեր այդ և մինչև ճաշը կվերջանար, նա արդեն խորապես հավատում էր, որ կաթսայի շուրջ նստած են բախտի կողմից ծեծկված ու վիրավորված մարդիկ։ Պանտելեյը պատմում էր, որ հին ժամանակ, երբ դեռ երկաթուղի չկար, ինքը սայլով գնում էր Մոսկվա ու Նիժնի, այնքան շատ վաստակ էր ունենում, որ չէր իմանում ինչ անի փողը։ Իսկ ի՞նչ վաճառականներ կային այն ժամանակ, ի՞նչ ձուկ, ի՞նչ էժան էր ամեն բան։ Իսկ հիմա ճանապարհները կարճացել են, վաճառականները՝ ժլատացել, ժողովուրդն աղքատացել է, հացը թանկացել, ամեն ինչ փոխվել է ու անչափ նեղացել։ Եմելյանն ասում էր, որ առաջ ինքը Լուգանսկի գործարանում ծառայում էր որպես երգիչ, հիանալի ձայն ուներ և շատ լավ կարդում էր նոտաները, իսկ հիմա գեղջուկ է դարձել և ապրում է եղբոր ողորմածությամբ, որը իր ձիերով գումակ է ուղարկում իրեն և վաստակի կեսն իրեն է վերցնում։ Վասյան մի ժամանակ աշխատել է լուցկու ֆաբրիկայում, Կիրյուխան կառապան է եղել լավ մարդկանց մոտ և ամբողջ շրջակայքում համարվել է ամենալավ կառապանը։ Դիմովը ունևոր գյուղացու տղա էր, ապրել էր իր քեֆին, առատ և չէր իմացել, թե ինչ բան է հոգսը, բայց քսան տարին լրանալուն պես խիստ ու համառ բնավորության տեր հայրը, ցանկանալով աշխատանքի վարժեցնել նրան և վախենալով, թե տանը մնալուց երես կառնի, սկսել էր կառապանության ուղարկել ինչպես անտուն-անտեր մի մարդու։ Միայն Ստյոպկան լուռ էր, բայց նրա անբեղ երեսից էլ երևում էր, որ առաջ նա շատ ավելի լավ է ապրել, քան հիմա։

Դիմովը հորը հիշելով հոնքերը կիտեց և դադարեց ուտել։ Նա աչքի տակով նայեց ընկերներին և հայացքը կանգնեցրեց Եգորուշկայի վրա։

— Է՛յ, անօրեն, գլխարկդ վերցրու,— ասաց նա կոպտաբար։— Բա կարելի՞ է գլխարկը գլխին հաց ուտել։ Դեռ աղա է՛լ է։

Եգորուշկան գլխարկը վերցրեց և ոչ մի խոսք չասաց, բայց արդեն ոչ ճաշի համն էր հասկանում, ոչ լսում էր, թե ինչպես իրեն պաշտպան կանգնեցին Պանտելեյն ու Վասյան։ Նրա

կրծքում չարություն ծանրացավ այդ կովարարի դեմ, և նա որոշեց ինչպես էլ լինի՝ մի վատություն անել նրան։

Ճաշը վերջանալուց հետո բոլորը գնացին սայլերի մոտ ու ստվերում պառկեցին։

— Պապի շո՞ւտ կգնանք,— հարցրեց Եգորուշկան Պանտելեյին։

— Երբ աստված հաջողի, այն ժամանակ էլ կգնանք... Հիմա գնալ չի լինի, շոգ է... Օ՜հ, տե՜ր աստված ամենակալ, քո կամքը լինի... Պառկի՛ր, տղա, դու էլ պառկիր։

Շուտով սայլերի տակից խմփոցներ լսվեցին։ Եգորուշկան մեկ ուզեց նորից գնալ գյուղը, բայց միտքը փոխեց, հորանջեց և պառկեց ծերունու կողքին։

VI

Գումակն ամբողջ օրը գետի մոտ կանգնած մնաց և տեղից շարժվեց միայն այն ժամանակ, երբ արևագակն արդեն իջել էր։

Նորից Եգորուշկան պառկել էր հակի վրա, սայլը մեղմ ճռնչում էր ու օրորվում, ցածում քայլում էր Պանտելեյը. դոփում էր ոտքերը, խփում իր ազդրերին ու մրմնջում։ Երեկվա պես օդում ճռճռում էր տափաստանային երաժշտությունը։

Եգորուշկան պառկել էր մեջքի վրա և ձեռքերը գլխի տակ դրած նայում էր երկնքին։ Նա տեսնում էր, թե ինչպես վառվեց վերջալույսը, հետո ինչպես մարեց այն, պահապան-հրեշտակները իրենց ոսկե թևերով հորիզոնը ծածկելով պառկեցին քնելու։ Օրն անցել էր բարեհաջող, սկսվեց մեղմ, բարեհաջող գիշերը, և նրանք կարող էին հանգիստ նստել երկնքում, իրենց տանը... Տեսնում էր Եգորուշկան, թե ինչպես երկինքը կամաց-կամաց մթնեց և մշուշ իջավ երկրի վրա, ինչպես իրար հետևից վառվեցին աստղերը։

Երբ երկար, ակնդետ նայում ես խորունկ երկնքին, չգիտես ինչու մտքերդ ու հոգիդ միաձուլվում, դառնում են միայնության զգացմունք։ Սկսում ես քեզ անսահմանորեն միայնակ զգալ, և այն ամենը, ինչ առաջ համարում էիր մոտիկ ու հարազատ, դառնում է անսահմանորեն հեռավոր ու անարժեք։ Աստղերը, որոնք հազարավոր տարիներ նայում են երկնքից, անըմբռնելի երկինքն ու մշուշը, որոնք անտարբեր են մարդու կարճատև կյանքի նկատմամբ, երբ նրանց հետ երեսաուերես

ես մնում և ձգտում ես հասկանալ նրանց իմաստը, ճնշում են հոգիդ իրենց լռությամբ։ Մարդու միտքն է գալիս այն մենակությունը, որ սպասում է մեզնից յուրաքանչյուրին գերեզմանում, և կյանքի էությունը դառնում է հուսահատական, սոսկալի...

Եգորուշկան մտածում էր տատիկի մասին, որն այժմ քնած է գերեզմանատանը, բալենիների տակ։ Նա հիշում էր, թե տատիկն ինչպես էր պառկել դագաղում, պղնձե հինգ կոպեկանոցներն աչքերին դրած, ինչպես հետո նրան ծածկեցին դագաղի խուփով և իջեցրին գերեզման, հիշում էր, թե ինչպես հողը խուլ թխկոցով թափվում էր դագաղի վրա... Նա տատիկին պատկերացրեց նեղ ու մթին դագաղի մեջ, բոլորից լքված ու անօգնական։ Նրա երևակայությանը պատկերացավ, թե ինչպես տատիկը հանկարծ արթնանում է և չհասկանալով, թե որտեղ է ինքը, ծեծում է դագաղի խուփը, օգնություն է կանչում և վերջիվերջո ուժասպառությունից ու սոսկումից նորից է մեռնում։ Նա մեռած պատկերացրեց մայրիկին, հայր Խրիստաֆորին, կոմսուհի Դրանիցկայային, Սոլոմոնին։ Բայց որքան էլ ջանում էր իրեն պատկերացնել մութ գերեզմանում, տնից հեռու, լքված, անօգնական ու մեռած, այդ նրան չէր հաջողվում. անձամբ իր համար նա չէր պատկերացնում մահվան հնարավորությունը և այնպես էր զգում, թե երբեք չի մեռնելու...

Իսկ Պանտելեյը, որի մեռնելու ժամանակը հասել էր արդեն, քայլում էր ցածում և ինքն իրեն խոսում։

— Ոչինչ... լավ պարոններ են,— մրմնջում էր նա։— Տղային ուսման են տարել, բայց թե ինչպես է նա այնտեղ, ոչինչ հայտնի չի... Սլավյանոսերբսկում, ասում են, չկա այնպիսի մի դպրոց, որ մեծ խելք տա մարդուն... Չկա, ի՜սկ որ այդպես է... Իսկ տղան լավն է, ոչինչ... Կմեծանա, հորը կօգնի։ Դու, Եգորի, հիմա պստիկ ես, որ մեծանաս, հորդ ու մորդ կպահես։ Ես ինքս էլ երեխաներ ունեի, բայց այրվեցին... Կինս էլ այրվեց, երեխաներս էլ... Ճշմարիտ... մկրտության գիշերն էր, որ խրճիթս վառվեց և... Ես տանը չէի, Օրյոլ էի գնացել։ Օրյոլ... Մարիան, ճիշտ է, դուրս էր վազել, բայց հիշել էր, որ երեխաները ներսը քնած են, նորից ներս էր վազել ու երեխաների հետ այրվել... Բա՜... Մյուս օրը միայն ոսկորներն էին գտել։

Կեսգիշերվա մոտ սայլապաններն ու Եգորուշկան նորից նստած էին փոքրիկ խարույկի շուրջ։ Մինչ մացառները կվառվեին՝ Կիրյուխան ու Վասյան գնացին ձորակից ջուր բերելու։ Նրանք խավարի մեջ անհետացան, բայց շարունակ լսվում էր, թե ինչպես են դույլերը շխկշխկացնում ու իրար հետ խոսում, նշանակում է՝ ձորակը հեռու չէր։ Խարույկի լույսը գետնին փռվել էր որպես մի մեծ, առկայծող բիծ։ Թեպետև լուսնյակ գիշեր էր, բայց խարույկի լույսից այն կողմ ամեն ինչ անթափանց խավարի մեջ էր թվում։ Լույսը խփում էր սայլապանների աչքերին, և նրանք տեսնում էին միայն մեծ ճանապարհի մի մասը։ Խավարի մեջ անորոշ ձևի լեռների պես հաղիվ նշմարում էին սայլերը՝ բրդի հակերով և ձիերը։ Խարույկից մի քսան քայլ հեռու, ճանապարհի ու դաշտի սահմանագծի վրա կանգնած էր մի փայտե շիրիմախաչ, որ ծռվել էր մի կողմի վրա։ Երբ դեռ խարույկը վառված չէր և կարելի էր հեռուն տեսնել, Եգորուշկան նկատել էր, որ ճիշտ այդպիսի մի ծռված խաչ էլ կանգնած է մեծ ճանապարհի մյուս կողմում։

Կիրյուխան ու Վասյան ջուր բերին, կաթսան լցրին ու դրին կրակի վրա։ Ստյոպկան, մաշված գդալը ձեռքին, ծխի մեջ իր տեղը բռնեց կաթսայի մոտ և մտաղբաղ ջրին նայելով սկսեց սպասել, մինչև փրփուր երևալը։ Պանտելեյն ու Եմելյանը իրար կողքի նստած լուռ մտածում էին ինչ-որ բանի մասին։ Դիմովը պառկել էր փորի վրա, բռունցքները գլխի տակ դրած և նայում էր կրակին։ Ստյոպկայի ստվերը սահում էր նրա վրայով, որից նրա գեղեցիկ դեմքը մերթ ծածկվում էր խավարով, մերթ հանկարծ պայծառանում... Կիրյուխան ու Վասյան քիչ հեռու շրջում և խարույկի համար չոր մոլախոտ ու խոռիվ էին հավաքում։ Եգորուշկան ձեռքերը գրպանը դրած կանգնել էր Պանտելեյի մոտ և նայում էր, թե ինչպես է կրակը լափում չորացած խոտը։

Բոլորը հանգստանում, մտածում էին ինչ-որ բանի մասին ու թոուշիկ հայացք գցում խաչի վրա, որի վրայով սահում էին կարմիր բծերը։ Մենավոր շիրիմի մեջ կա մի ինչ-որ թախծալի, երազուն ու վերին աստիճանի պոետական բան... Լսվում է, թե ինչպես լուռ է նա, և այդ լռության մեջ՝ զգացվում է խաչի տակ պառկած անհայտ մարդու հոգու ներկայությունը։ Արդյոք լա՞վ է զգում իրեն այդ հոգին տափաստանում։ Չի՞ թախծում արդյոք նա լուսնյակ գիշերին։ Իսկ տափաստանը շիրիմի մոտ

թվում է տխուր, վհատ ու մտախոհ, խոտը՝ թախծոտ և թվում է, թե ծղրիդները ավելի զուսպ են ճռվողում... Եվ չկա մի անցորդ, որը չղգա այդ մենավոր հոգու ներկայությունը և չուզա նայելու շիրիմին, մինչև որ նա կմնա հեռու հետևում ու կծածկվի մշուշով...

— Պապի, ինչի՞ համար է տնկված այդ խաչը,— հարցրեց Եգորուշկան։

Պանտելեյը նայեց խաչին, ապա՝ Դիմովին և հարցրեց.

— Միկուլա՛, սա այն տեղը չի՞, որտեղ հնձվորները վաճառականներին սպանեցին։

Դիմովը դժկամորեն բարձրացավ արմունկի վրա, նայեց ճանապարհին և պատասխանեց.

— Հենց այն է...

Լռություն տիրեց։ Կիրյուխան չոր խոտը ճռճռացնելով գունդ արեց և կաթսայի տակ խրեց։ Կրակը պայծառ բռնկեց։ Ստյոպկան ծածկվեց սև ծխով և խավարի մեջ, սայլերի մոտ ճանապարհի վրայով սահեց խաչի ստվերը։

— Հա՛, սպանեցին...— դժկամ ասաց Դիմովը։— Վաճառականները հայր ու որդի էին, գնում էին սրբապատկերներ վաճառելու։ Կանգ էին առել այստեղից ոչ հեռու իջևանում, որ հիմա Իգնատ Ֆոմինի ձեռքին է։ Ծերունին իր չափից ավելի էր խմել և սկսել էր պարծենալ, թե իր մոտ շատ փող կա։ Վաճառականները, հայտնի բան է, շատ պարծենկոտ մարդիկ են... Սիրտը կպայթի, եթե մեզ նմանների մոտ չպարծենա։ Իսկ իջևանում այդ ժամանակ հնձվորներ էին գիշերում։ Դեհ, լսում են նրանք, թե վաճառականն ինչպես է պարծենում և նկատի են առնում։

— Օ՜հ, տե՜ր աստված ողորմած,— հառաչեց Պանտելեյը։

— Մյուս օրը դեռ լույսը չբացված,— շարունակեց Դիմովը,— վաճառականները ճանապարհ են ընկնում, իսկ հնձվորները միանում են նրանց. «Միասին գնանք, ձերդ արժանապատվություն, ավելի ուրախ կլինի, մեկ էլ որ վտանգ քիչ կլինի, որովհետև խուլ տեղեր են այս կողմերը...»։ Վաճառականները դանդաղ էին քշում ձիերը, որպեսզի սրբապատկերները չկոտրտվեն, իսկ հնձվորներին դա ձեռնտու էր...

Դիմովը բարձրացավ ծնկի վրա ու ձգվեց։

— Հա՛,— շարունակեց նա հորանջելով։— Ամեն ինչ լավ

էր գնում, բայց հենց որ վաճառականները հասնում են այս-տանը, հնձվորներն սկսում են գերանդիներով կոտորել նրանց։ Որդին քաջ տղա է լինում, մեկի ձեռքից գերանդին խլում է ու ինքն էլ է հունձ սկսում։ Դե, իհարկե, հնձվորները հաղթում են, որովհետև ութ հոգի են լինում։ Կտրտում են վաճառական-ներին, այնպես, որ մի ողջ տեղ չի մնում մարմնի վրա։ Վեր-ջացնում են իրենց գործը և երկուսին էլ ճանապարհից դուրս քաշում, հորը մի կողմը, որդուն՝ մյուս։ Այս խաչի դիմաց, մյուս կողմում մի խաչ էլ կա... Չեմ իմանում, տե՞ղն է, թե չէ... Այստեղից չի երևում։

— Տեղն է,— ասաց Կիրյուխան։

— Ասում են՝ հետո փող քիչ են գտել։

— Քիչ,— հաստատեց Պանտելեյը։— Մի հարյուր ռուբլի են գտել։

— Հա, իսկ նրանցից երեքն էլ հետո մեռնում են, որով-հետև վաճառականն էլ նրանց լավ կտրտած է եղել գերան-դիով... Արնաքամ էին եղել։ Մեկի ձեռքն էր կտրել վաճառա-կանը, այնպես որ, ասում են, մի չորս վերստ վազել է առանց ձեռքի և նրան գտել են հենց Կուրիկովի մոտ, մի թմբի վրա։ Պպզած է եղել այնտեղ, գլուխը ծնկներին դրած, ոնց որ մտքի մեջ ընկած, բայց որ նայել են՝ շունչ չկա մեջը, մեռած է...

— Արյան հետքով են գտել նրան,— ասաց Պանտելեյը։

Բոլորը նայեցին խաչին, և նորից լռություն տիրեց։ Ինչ-որ մի տեղից, հավանորեն ձորակից, լսվեց թռչնի տխուր կանչը՝ «քնե՞մ-քնե՞մ...»։

— Չար մարդիկ շատ կան աշխարհում,— ասաց Եմել-յանը։

— Շա՞տ, շա՞տ,— հաստատեց Պանտելեյը և մոտ քաշ-վեց կրակին այնպիսի արտահայտությամբ, ասես նրան զար-հուր էր պատել։— Շա՞տ են,— շարունակեց նա կիսաձայն։— Իմ օրում ես այնքա՞ն շատ եմ տեսել... Չար մարդիկ... Սուրբ ու արդարներ էլ շատ եմ տեսել, բայց մեղք ունեցողներին հաշիվ չկա... Թող տիրամայրը փրկի ու ողորմա... Հիշում եմ, մի երեսուն տարի առաջ, գուցեև ավելի, մի անգամ ես մի վաճառական էի փոխադրում Մարշանսկից։ Դա մի հիանալի վաճառական էր, լավ տեսքով և լավ փողով... վաճառականը, այսինքն՝ լավ մարդ էր, ոչինչ... Այդպես ուրեմն, գնում էինք

ու գիշերելու համար կանգ առանք մի իշևանում։ Իսկ Ռուսաս-տանում իշևաններն այն չեն, ինչ որ այս կողմերում։ Այնտեղ իշևանները ծածկված են ինչպես պահեստները, կամ ասենք, ինչպես լավ տնտեսության խրճանոցները։ Միայն թե խրճա-նոցներն ավելի բարձր են լինում։ Այդպես ուրեմն, կանգ առանք մենք այդտեղ և, ոչինչ։ Վաճառականս սենյակում տե-ղավորվեց, իսկ ես՝ ձիերի մոտ, ոնց որ կարգն է։ Ու ահա, ախպորս ասեմ, աղոթեցի ես աստծուն, որ պառկեմ քնելու ու դուրս եկա բակ մի քիչ ման գալու։ Իսկ գիշերը խավար էր, ինչքան կուզես նայիր՝ ոչինչ չես տեսնի։ Այդպես մի փոքր առաջ գնացի, ոնց որ այստեղից, ահա, այն սայլերը ու տես-նեմ՝ կրակ է պլպլում։ Այս ի՞նչ բան է։ Կարծեմ իշևանի տե-րերն էլ վաղուց պառկել են քնելու և բացի ինձնից ու վաճա-ռականից ուրիշ գիշերողներ չկան։ Ուրեմն որտեղի՞ց պիտի լինի այս կրակը։ Սիրտս կասկած ընկավ... Ավելի մոտեցա... կրա-կին... Տե՞ր ողորմած աստված, դու փրկես, երկնային թագա-վոր։ Նայում եմ՝ հենց գետնի մոտ մի լուսամուտ կա, վանդա-կավոր... այսինքն թե՝ տան լուսամուտն է... Պառկեցի գետնին ու ներս նայեցի, ու հենց որ նայեցի, ողջ մարմինս փշաքաղ-վեց...

Կիրյուխան աշխատելով շաղմկել՝ խարույկի մեջ գցեց մի բուռ չոր մոլախոտ։ Ծերունին սպասեց, մինչև խոտի ճրթճրթ-ոցն ու թշթշոցը լռեց, ապա շարունակեց.

— Նայեցի՝ տեսնեմ այնտեղ նկուղ է, մեծ, մթին ու մռայլ... Տակառի վրա մի լապտեր է վառվում։ Նկուղի մեջ-տեղը կանգնած են մի տասը մարդ, կարմիր վերնաշապիկնե-րով և թևքերը վեր քշտած երկա՞ր-երկա՞ր դանակներ են սրում... Էհե՜, մտածում եմ, նշանակում է՝ մենք ավազակների որջ ենք ընկել... Ի՞նչ անենք հիմա։ Վազեցի վաճառականի մոտ, կամաց արթնացրի ու ասում եմ. «Դու, ասում եմ, ա՛յ վաճառական, չվախենաս, բայց մեր բանը բուրդ է... Մենք, ասում եմ, ավազակների որջ ենք ընկել։ Նա գունատվեց ու հարցնում է. «Հիմա մենք ի՞նչ պիտի անենք, Պանտելեյ։ Ինձ մոտ շատ որբերի փող կա... Իմ հոգին, ասում է, աստծու կամքն է, մահից չեմ վախենում, բայց, ասում է, սարսափելի բան է որբերի փողը կորցնել...»։ Բայց ի՞նչ կարող ես անել։ Դարբասը փակ է, ոչ դուրս գալ կարող ես, ոչ ներս մտնել... Թե որ ցանկապատ լիներ, էլի ցանկապատի վրայով անցնել

կարելի էր, բայց իշխանը ծածկած է...— «Ոչինչ, ասում եմ, ա՛յ վաճառական, դու մի՛ վախենա, աղոթիր աստծուն։ Գուցե թե աստված չի ուզենա որբերին զրկել։ Մնա այստեղ, ասում եմ, ու ոչ մի բանով մի ցույց տա, թե բան ես հասկացել, իսկ ես, մինչ այդ, գուցե թե մի բան կհնարեմ...»։ Ու այդպես, աղոթեցի ես աստծուն և աստված ինձ խելքի գցեց... Բարձրացա իմ կառքի վրա ու կամաց... կամաց, որպեսզի ոչ ոք չլսի, սկսեցի կտուրի ծղոտը քաշել։ Այդպիսով մի անցք բաց արի ու դուրս եկա։ Ծածկի տակից դուրս պրծա... Հետո տանիքից ցած թռա ու ինչքան ուժ ունեի՝ ճանապարհով վազեցի։ Վազեցի, այնքան վազեցի, որ հալից ընկա... Մի հինգ վերստ մի շնչով վազեցի, գուցեև ավելի... Փառք աստծու, տեսնեմ՝ մի գյուղ է երևում։ Մոտ վազեցի մի խրճիթի, սկսեցի լուսամուտը ծեծել։ «Ուղղափառնե՛ր, ասում եմ, այսպես ու այսպես, մի՛ թողեք, որ քրիստոնյա մարդու հոգին կործանվի...»։ Բոլորին արթնացրի... Գյուղացիները հավաքվեցին ու ինձ հետ եկան... Ո՛րը պարանով, ո՛րը մահակով, ո՛րը եղանով... Այդ իշխանի դարպասը կոտրեցինք և իսկույն նկուղ շտապեցինք... Իսկ ավազակներն արդեն դանակները սրել են ու պատրաստվում են վաճառականին մորթելու։ Գյուղացիները նրանց բոլորին բռնեցին, իրար կապեցին ու տարան մեծավորների մոտ։ Վաճառականն ուրախությունից նրանց երեք հարյուրանոց ընծայեց, իսկ ինձ հինգ ոսկեդրամ տվեց և անունս էլ իր մոտ գրեց, որ չմոռանա։ Ասում են հետո այդ նկուղում շատ ու շատ մարդկային ոսկորներ են գտել։ Ոսկորներ... Այսինքն, թե նրանք կողոպտել են մարդկանց, իսկ հետո թաղել են, որ հետք չմնա... Դեհ, ի՛նչ ասեմ, հետո արդեն Մորշանսկում նրանց դահիճների ձեռքով պատժեցին։

Պանտելեյը պատմությունը վերջացրեց և նայեց իր ունկընդիրներին։ Նրանք լուռ նայում էին Պանտելեյին։ Ջուրն արդեն եռում էր, և Ստյոպկան քափն էր քաշում։

— Իսկ ճարպը պատրա՞ստ է,— շշուկով հարցրեց նրան Կիրյուխան։

— Մի քիչ սպասիր... Հիմա կլինի։

Ստյոպկան առանց աչքը Պանտելեյից կտրելու և վախենալով, թե նա առանց իրեն կսկսի պատմել, վազեց սայլերի մոտ։ Շուտով նա վերադարձավ, բերելով մի փոքրիկ փայտե աման և սկսեց նրա մեջ տրորել խոզի ճարպը։

— Մի ուրիշ անգամ էլ ես մի վաճառական լի տեսնում...— շարունակեց Պանտելեյը առաջվա պես կիսաձայն և առանց աչքերը թարթելու։— Նրա անունը, հիշում եմ ոնց որ այսօր, Պյոտր Գրիգորիչ էր։ Լավ մարդ էր... Վաճառականը այսինքն։ Էլի նույն ձևով կանգ առանք մի իշխանում... Նա՝ սենյակում, ես՝ ձիերի մոտ... Իշխանի տերերը՝ մարդ ու կին, ասես ոչինչ, լավ մարդիկ են, սիրալիր, ծառայողներն էլ կարծես ոչինչ, բայց ես, տղերք, քնել չեմ կարողանում, սիրտս հանգիստ չի... Հանգիստ չի, պրծավ գնաց։ Դարբասն էլ բաց է, շրջս կողմը լիքը մարդիկ են, բայց էլի ահալի է, սիրտս չի հանգստանում։ Բոլորը վաղուց քնել են, արդեն խոր գիշեր է, շուտով վեր կենալու ժամանակն է, բայց ես պառկել եմ իմ կառքի մեջ և աչք չեմ փակում, ասես բու լինեմ։ Ու մեկ էլ, ախպերս, էն իքը, լսում եմ տը՛ք, տը՛ք... տը՛ք... Մեկը կամա՛ց-կամա՛ց մոտենում է կառքին։ Գլուխս դուրս եմ հանում, նայեմ՝ կանգնած է մի կին՝ շապկանց, ոտաբոբիկ...— «Ի՞նչ կա, ա՛յ կնիկ», ասում եմ։ Իսկ նա դողում է ամբողջ մարմնով ու երևսին դույն չկա...— «Վեր կաց, ասում է, մարդ աստծու։ Փորձանք է... Իշխանի տերերը վատ բան են մտածել... Ուզում են քո վաճառականին մորթել։ Ինքս, ասում է, լսեցի, թե ինչպես մարդ ու կին փսփսում էին...»։ Դե ուրեմն սիրտս իզուր չէր անհանգիստ։— «Իսկ դու ինքդ ո՞վ ես»,— հարցնում եմ։— «Ես, ասում է, սրանց ճաշ եփողն եմ...»։ Լա՛վ... Դուրս եկա կառքից ու գնացի վաճառականիս մոտ։ Արթնացրի ու ասում եմ.— «Այսպես ու այսպես, ասում եմ, Պյոտր Գրիգորիչ, բանն այնքան էլ լավ չի... Քունդ, ասում եմ, ձերդ աղնվություն, հետո կառնես, իսկ հիմա, քանի դեռ ժամանակ կա, հագիր շորերդ, քանի ողջ ենք, փորձանքից հեռու գնանք...»։ Հենց որ սկսեց հագնվել, դուրը բացվեց ու... ողջ եղիր... տեսնեմ՝ ողորմա՛ծ աստված, ներս մտան իշխանի տերը, իր կինը ու երեք ծառայող... Ուրեմն թե՝ ծառայողներին էլ են համոզել... Վաճառականը փող շատ ունի, ասել են, կկիսենք... Հինգն էլ ձեռքներին մի-մի հատ երկա՛ր-երկա՛ր դանակ ունեն... Մի-մի դանակ... Իշխանի տերը դուրը բանալիքով փակեց ու ասում է.— «Աղոթեցեք աստծուն, ա՛յ ճամփորդներ...— Իսկ եթե գոռացել եք, ասում է, մահվանից առաջ աղոթել էլ չենք թույլ տա...»։ Էլ գոռա՞լ կլինի... Վախից մեր լեզուն կապվել է, գոռա՞լ կարող ես... Վաճառականը լաց եղավ ու ասում է.—

«Ողղափառ մարդիկ, դուք, ասում է, որոշել եք ինձ սպանել, որովհետև աչք եք դրել իմ փողի վրա։ Թող այդպես լինի, ես առաջինը չեմ, ոչ էլ վերջինն եմ։ Մեր վաճառականներից շատերն են իշևանում մորթվել։ Բայց ինչո՞ւ մորթել իմ կառապանին, ուղղափառ եղբայրներ։ Ինչո՞ւ պիտի նա իմ փողի համար զոհվի։ Եվ այնպե՞ս սրտանց է ասում այս։ Իսկ իշևանի տերը պատասխանում է. «Թե որ մենք նրան ողջ թողնենք, առաջինը նա կլինի մեզ մատնողը։ Միևնույն բանն է, ասում է, մեկին սպանած, թե երկուսին։ Մեղքը յոթ, պատասխանը՝ մեկ... Աղոթեցեք աստծուն, ուրիշ ոչինչ, խոսելու բան չկա»։ Ես ու վաճառականս կողք-կողքի ծունկ չոքեցինք, լաց եղանք ու սկսեցինք աստծուն աղոթել։ Նա իր զավակներին է մտաբերում, ես այն ժամանակ դեռ ջահել էի, ապրել էի ուզում... Նայում ենք սրբապատկերին, աղոթում այնպես ողբագին, որ հիմա էլ արցունքս է գալիս... Իսկ տիրուհին, այսինքն՝ կնիկը, նայում է մեզ ու ասում.— «Դուք, ասում է, բարի մարդիկ, այն աշխարհում վատ բան չասեք մեր մասին ու աստծուն չվայրացնեք մեզ վրա, որովհետև կարիքն է մեզ ստիպում այսպես անել»։ Աղոթեցինք, աղոթեցինք, լաց եղանք ու լաց եղանք, ու աստված մեզ լսեց։ Խղճաց ուրեմն, թե... Հենց այդ ժամանակ, երբ իշևանի տերը վաճառականի մորուքը բռնեց, որ դանակը կոկորդին քսի, հանկարծ մեկը բակի կողմից թը՛խկ-թը՛խկ. լուսամուտն է ծեծում։ Բոլորս շշմեցինք, իսկ իշևանի տիրոջ ձեռքերը թուլացան... Ծեծում է մեկը լուսամուտը ու գոռում.— «Պյոտր Գրիգորի՛չ, կանչում է, այստե՞ղ ես։ Պատրաստվիր, գնում ենք»։ Իշևանի տերերը տեսան, որ վաճառականի հետևից մարդ է եկել, վախեցան ու պո՛ւկ փախան... Իսկ մենք շտապ բակ դուրս թռանք, կառքը լծեցինք ու ո՛նց կքշես...

— Իսկ այդ ո՞վ էր լուսամուտը ծեծողը,— հարցրեց Դիմովը։

— Լուսամո՞ւտը։ Երևի աստծու սուրբը կամ հրեշտակը։ Որովհետև ուրիշ ո՞վ պիտի լիներ... Երբ մենք բակից դուրս եկանք, փողոցում ոչ ոք չկար... Աստծու բան է։

Պանտելեյը էլի ուրիշ-ուրիշ բաներ պատմեց, և նրա բոլոր պատմությունների մեջ միանման դեր էին խաղում «երկար դանակները» և միանման զգացվում էր հնարովի լինելը։ Արդյոք որևէ մի ուրիշի՞ց էր լսել նա այդ պատմությունները, թե՞ ինքն էր հորինել հեռու անցյալում և հետո, երբ հիշողությունը թուլացել էր, իրականությունը խառնել էր մտացածինի հետ և էլ չէր կարողանում մեկը մյուսից ջոկել։ Ամեն ինչ կարող է պատահել, բայց տարօրինակն այն է, որ այժմ և ամբողջ ճանապարհին, երբ նա պատմություններ է անում, ակնհայտ գերադասություն էր տալիս հնարովի բաների և երբեք չէր ասում այն, ինչ իրականում եղել էր։ Այժմ Եգորուշկան ամեն ինչ ճշմարտության տեղ էր ընդունում ու հավատում էր ամեն մի խոսքին, բայց հետագայում նրան տարօրինակ էր թվում, որ մի մարդ, որը իր կյանքում շրջել էր ամբողջ Ռուսաստանը, շատ բան էր տեսել ու շատ բան գիտեր, մի մարդ, որի կինն ու երեխաները այրվել էին, այնքան էր արժեքազրկում իր հարուստ կյանքը, որ ամեն անգամ, երբ նստում էր խարույկի մոտ, կամ լռում էր, կամ խոսում էր այն մասին, ինչ չէր եղել։

Շիլան ուտելիս բոլորը լուռ էին և մտածում էին հենց նոր լսածի մասին։ Կյանքը զարհուրելի է ու հրաշալի, ուստիև Ռուսիայում ինչպիսի զարհուրելի պատմություն էլ անես, ինչպես էլ զարդարես այն ավազակային որջերով, երկար դանակներով ու հրաշքներով, միշտ էլ ունկնդիրների սրտում կարձագանքի որպես իրականություն և, թերևս, միայն բա՛ղկան գրագետ մարդը թերահավատությամբ կխեթի աչքերը, բայց նա էլ լուռ կմնա։ Ճանապարհի մոտի խաչը, մթին հակերը, լայնարձակ տարածությունը և խարույկի մոտ հավաքված մարդկանց բախտը,— այս ամենը ինքնին այնքան հրաշալի էր ու զարհուրելի, որ այդ հնարովի պատմության կամ հեքիաթի երևակայական լինելը նսեմանում էր ու միաձուլվում իրականի հետ։

Բոլորն ուտում էին կաթսայի միջից, իսկ Պանտելեյն առանձին նստած ուտում էր մի փայտե ամանի միջից։ Նրա գդալն էլ այնպես չէր, ինչպես ուրիշներինը, այլ նոճու փայտից էր, ծայրին՝ խաչ։ Եգորուշկան նայեց նրան, հիշեց նաև կանթեղի փոքրիկ բաժակը և կամացուկ հարցրեց Ստյոպկային.

— Ինչո՞ւ այս պապը առանձին է նստել։

— Նա մեր հավատից չի, հնադավան է,— շշուկով պատասխանեցին Ստյոպկան ու Վասյան, նայելով նրան այնպես,

կարծես խոսում էին մի որևէ թուղթյան կամ գաղտնի արատի մասին։

Բոլորը լուռ էին և մտածում էին։ Զարհուրելի պատմություններից հետո մարդ չէր ուզում խոսել սովորական բաների մասին։ Հանկարծ լռության մեջ Վասյան ուղղվեց և իր խամրած աչքերը մի կետի հառելով՝ ականջները սրեց։

— Ի՞նչ կա,— հարցրեց նրան Դիմովը։

— Մարդ է գալիս այս կողմը,— պատասխանեց Վասյան։

— Որտե՞ղ ես տեսնում նրան։

— Հրեն, հա՜։ Հազիվ սպիտակին է տալիս...

Այնտեղ, ուր Վասյան էր նայում, ոչինչ չէր երևում բացի խավարից։ Բոլորն ականջ դրին, բայց քայլեր էլ չէին լսվում։

— Ճամփո՞վն է գալիս,— հարցրեց Դիմովը։

— Չէ, դաշտով... Այստեղ է գալիս։

Անցավ մի լուռ րոպե։

— Գուցե այդ այն վաճառականն է շրջում տափաստանում, որ թաղված է այստեղ,— ասաց Դիմովը։

Բոլորն աչքի տակով նայեցին խաչին, ապա իրար նայեցին ու ծիծաղեցին. մարդիկ ամաչեցին իրենց վախից։

— Ինչի՞ պիտի շրջի,— ասաց Պանտելեյը։— Գիշերները միայն նրանք են շրջում, ում որ հողը չի ընդունում։ Իսկ վաճառականները ոչինչ... Վաճառականները նահատակի պսակ են ընդունել...

Բայց ահա քայլեր լսվեցին։ Մեկը քայլում էր արագ։

— Ինչ-որ բան է գալիս,— ասաց Վասյան։

Արդեն լսվում էր, թե ինչպես քայլողի ոտքերի տակ խշշշում էր խոտը և ճրթճրթում էին չոր մոլախոտերը, բայց խարույկի լույսի պատճառով ոչ-ոք չէր երևում։ Վերջապես, քայլերը մոտերքում լսվեցին, ինչ-որ մեկը հազաց։ Առկայծող լույսը ասես ետ քաշվեց, մարդկանց աչքերից վարագույրն ընկավ, և հանկարծ սայլապաններն իրենց առջև տեսան մի մարդու։

Արդյոք լո՞ւյսն այդպես շողաց, թե՝ նրանից էր, որ բոլորն ուզում էին ամենից առաջ այդ մարդու երեսը տեսնել, բայց միայն այնպես տարօրինակ դուրս եկավ, որ բոլորը, առաջին հայացքը գցելով նրա վրա ամենից առաջ տեսան նրա ոչ թե երեսը, ոչ թե հագուստը, այլ՝ ժպիտը։ Դա արտասավոր բարի, լայն ու մեղմ ժպիտ էր, ինչպես ժպտում է նոր արթնացած

մանուկը, մեկը այն վարակիչ ժպիտներից, որին դժվար է չպատասխանել նույնպիսի ժպիտով։ Վերջապես, երբ նրան նայեցին, տեսան, որ մոտ երեսուն տարեկան մի մարդ է, առանձնապես գեղեցիկ չէ ու աչքի ընկնող ոչինչ չունի։ Դա մի բարձրահասակ խախոլ էր՝ երկար քթով, երկար ոտքերով և երկար ձեռքերով։ Ընդհանրապես նրա ամեն ինչը երկար էր թվում և միայն պարանոցն այնքան կարճ էր, որ փոքր-ինչ կուզիկացնում էր նրան։ Նա հագել էր ասեղնագործած օձիքով մաքուր, սպիտակ վերնաշապիկ, սպիտակ շալվար ու նոր սապոգներ և սայլապանների համեմատությամբ՝ պճնված էր թվում։ Ձեռքին բռնել էր ինչ-որ մեծ, սպիտակ, առաջին հայացքից տարօրինակ մի բան, իսկ մեջքին ցցված էր հրացանի փողը, որը նույնպես երկար էր երևում։

Խավարից ընկնելով լույսի մեջ՝ նա մեխվածի պես կանգ առավ, մի կես րոպե սայլապաններին էր նայում այնպես, կարծես ուզում էր ասել՝ «Տեսեք, ինչպիսի ժպիտ ունեմ ես»։ Ապա մի քայլ արեց դեպի խարույկը, ավելի պայծառ ժպտաց և ասաց.

— Բարի ախորժակ, եղբայրնե՛ր։

— Խնդրեմ, համեցեք,— բոլորի փոխարեն պատասխանեց Պանտելեյը։

Անծանոթը խարույկի մոտ դրեց այն, ինչ բռնած ուներ ձեռքին, դա սպանված արոս էր, և նորից բարև տվեց։

Բոլորը մոտեցան արոսին ու սկսեցին զննել։

— Լավ թռչուն է։ Այս ինչո՞վ ես սպանել,— հարցրեց Դիմովը։

— Կարտեչով... Կոտորակով չի լինի, մոտ չի թողնի... Գնեցեք, տղերք, քսան կոպեկով կտամ ձեզ։

— Ի՞նչ պիտի անենք։ Սա տապակած կարելի է ուտել, եփված շատ կոշտ է լինում, ուտել չի լինի...

— Է՜հ, ափսոս։ Թե որ աղաների խոհարարին տանեի, նրանք հիսուն կոպեկ էլ կտային, բայց հեռու է, տասնհինգ վերստ կլինի։

Անծանոթը նստեց, հրացանը ցած առավ ուսից ու դրեց իր կողքին։ Նա քնատ, հոգնած էր թվում, ժպտում էր, աչքերը կկոցում կրակից և, ըստ երևույթին, ինչ-որ շատ հաճելի բանի մասին էր մտածում։ Նրան մի գդալ տվին։ Սկսեց ուտել։

— Դու ի՞նչ մարդ ես,— հարցրեց Դիմովը։

Անծանոթը հարցը լսեց, նա չպատասխանեց և նույնիսկ չնայեց Դիմովին։ Հավանորեն այդ ժպտադեմ մարդը շիլայի համն էլ չէր զգում, որովհետև ծամում էր մի տեսակ մեքենաբար, ծուլորեն, գդալը բերանը տանելով մերթ շատ լիքը, մերթ բոլորովին դատարկ։ Նա հարբած չէր, բայց գլխում ինչ-որ անհանգիստ բան էր պտտվում։

— Ես հարցնում եմ՝ ի՞նչ մարդ ես դու,— կրկնեց Դիմովը։

— Ե՞ս,— ցնցվեց անծանոթը։— Ես Կոնստանտին Զվոնիկն եմ, Ռովնի գյուղից։ Այստեղից մի չորս վերստ կլինի։

Եվ ցանկանալով հենց սկզբից ցույց տալ, որ ինքն այնպիսի գյուղացի չի, ինչպես բոլորը, այլ ավելի լավն է, Կոնստանտինն շտապեց ավելացնել։

— Մենք մեղվանոց ենք պահում և խոզեր ենք չաղացնում։

— Հորդ հե՞տ ես ապրում, թե՞ մենակ։

— Չէ, հիմա մենակ եմ ապրում։ Բաժանվել եմ։ Այս ամսին եմ ամուսնացել։ Հիմա կարգված եմ... Տասնութ օր է, ինչ պսակվել եմ...

— Լավ բան է,— ասաց Պանտելեյը։ — Կնիկը, ոչինչ... Աստծու օրհնած է...

— Ջահել կնիկը տանը քնած է, իսկ սա քարշ է գալիս տափաստանում, — ծիծաղեց Կիրյուխան։ — Ա՛յ քեզ խելառ մարդ։

Կոնստանտինը վեր թռավ, ասես նրա ամենացավոտ տեղին դիպան, ծիծաղեց ու բռնկեց...

— Ախր, աստվա՜ծ իմ, նա տանը չի,— ասաց նա գդալն արագ հանելով բերանից և ուրախ ու զարմացած նայելով բոլորին։— Տանը չի։ Մի երկու օրով գնացել է մոր մոտ։ Աստված վկա գնացել է, ու ես ոնց որ թե ամուսնացած չլինեմ։

Կոնստանտինը ձեռքը թափ տվեց և գլուխն օրորեց։ Նա ուզում էր շարունակել մտածել, բայց ուրախությունը, որ պայծառացրեց նրա դեմքը, խանգարում էր նրան։ Նա մի ուրիշ դիրք ընդունեց, կարծես հարմար չէր նստել, ծիծաղեց ու նորից ձեռքը թափ տվեց։ Անհարմար բան էր իր նվիրական մտքերը հայտնել ուրիշ մարդկանց, բայց և միաժամանակ անզուսպ կերպով ցանկանում էր բաժանել իր ուրախությունը։

— Գնացել է Դիմիդովո, իր մոր մոտ,— ասաց նա կարմրատակելով և հրացանը մի ուրիշ տեղ դնելով։— Վաղը կվերադառնա... Ասել է, որ մինչև ճաշ կգա։

— Իսկ դու տխրո՞ւմ ես,— հարցրեց Դիմովը։

— Տե՜ր իմ աստված, բա ինչպե՞ս։ Մի երկու շաբաթ է, ինչ ամուսնացել եմ, ու նա գնացել է... Հը՞... Շատ զուլումն է, արևս վկա։ Այնպե՜ս լավն է ու անուշիկ, այնպե՜ս է կչկչում ու երգում, ոնց որ կրակ ու պեծ։ Որ մոտս է լինում, ուրախությանս չափ չկա, իսկ առանց նրան, ա՜յ, ասես բան կորցրած լինեմ, հիմարի պես տափաստանն եմ չափչփում։ Դեռ կեսօրից ման եմ գալիս, ինչ կուզես ասա։

Կոնստանտինն աչքերը տրորեց, նայեց կրակին ու ծիծաղեց։

— Սիրում ես ուրեմն...— ասաց Պանտելեյը։

— Նա այնպե՜ս լավն է ու անուշիկ,— կրկնեց Կոնստանտինը նրան լսելով,— այնպիսի՜ տանտիկին է, խելացի, որ հասարակ մարդկանց մեջ ամբողջ նահանգում այդպիսի մի ուրիշը չի գտնվի։ Գնացել է... Բայց կարոտում է, ես գիտե՜մ... Գիտեմ ես նրան։ Ասել է, որ վաղը մինչև ճաշ կգա... Բայց ի՜նչ պատմություն,— համարյա գոռաց Կոնստանտինը հանկարծ ձայնը բարձրացնելով ու դիրքը փոխելով,— հիմա սիրում է ու կարոտում, բայց տես, որ ինձ հետ ամուսնանալ չէր ուզում։

— Դե կեր, կեր,— ասաց Կիրյուխան։

— Չէր ուզում ինձ հետ ամուսնանալ, — շարունակեց Կոնստանտինը լսելով նրան։— Երեք տարի հետևիցն էի ընկել։ Տոնավաճառում էի տեսել նրան, Կաղաչիկում, սիրեցի գժի պես, ինչ կուզես ասա... Ես Ռովնոյում եմ, նա՝ Դեմիդովոյում։ Իրարից քսանհինգ վերստ հեռու ենք ու ոչ մի ճար չունեմ։ Խնամախոսներ եմ ուղարկում նրա մոտ, իսկ նա՝ չեմ ուզում։ Ա՜խ, դո՛ւ, կաչաղա՛կ։ Ես էլ նրան մեկ այս եմ առնում, մեկ այն. է՛լ ականջի օղեր, է՛լ բլիթներ, է՛լ կես փութ մեղր՝ չէ ու չէ, չի՛ ուզում։ Դե ասա տեսնեմ, ի՛նչ պիտի անես։ Ասենք՝ ճիշտը որ դատենք, ես նրան ի՞նչ կասեմ։ Նա ջահել է, գեղեցիկ, թավոռուն, իսկ ես՝ տարեց, շուտով երեսուն տարիս կլրանա, և շատ էլ գեղեցիկ չեմ, մորուքս լայն՝ ոնց որ փշեր, երեսս մաքուր՝ պղուկներով ծածկված։ Էլ ո՞նց ես նրա հետ հավասարվեմ։ Գուցե թե մենակ այն, որ հարուստ ենք ապրում, բայց ախր նրանք, Վախրամենսկիներն էլ լավ են ապ-

ում։ Երեք զույգ եզ ունեն ու երկու բանվոր են պահում։ Սիրեցի, տղերք ու գժվեցի... Ո՛չ քնում եմ, ո՛չ ուտում, գլուխս լիքը մտքեր են ու այնպիսի մշուշ, որ աստված փրկի։ Ուզում եմ նրան տեսնել, իսկ նա Դեմիդովյումն է... Եվ ի՞նչ եք կարծում։ Աստված ինձ պատժի, թե սուտ եմ ասում, շաբաթը երեք անգամ ոտքով գնում էի այնտեղ, որպեսզի նրան տեսնեմ։ Բան ու գործս թողել էի։ Այն օրին էի հասել, որ նույնիսկ ուզում էի Դեմիդովյում բանվոր վարձվեմ, որպեսզի, նշանակում է, նրան մոտիկ լինեմ։ Հալից ընկել էի։ Մայրս գիր անող էր կանչում, հայրս մի տասն անգամ ծեծել ուզեց ինձ։ Այսպես երեք տարի քարշ եկա ու վերջը որոշեցի, գրողը տանի, գնամ քաղաք, կառապան վարձվեմ... Երևի դա իմ բախտը չի։ Մի տոն օր գնացի Դեմիդովո՝ վերջին անգամ նրան տեսնելու...

Կոնստանտինը գլուխը ետ գցեց և այնպիսի ուրախ, կարկաչուն ծիծաղով բռնվեց, որ ասես հենց նոր ճարպկորեն խաբել էր մեկին։

— Մեկ էլ տեսնեմ՝ նա ջահել տղերքի հետ գետակի մոտ է.— շարունակեց նա։— Բարկությունս եկավ... Մի կողմ կանչեցի և գուցե թե մի ամբողջ ժամ խոսեցի... Սիրե՞ց։ Երեք տարի չէր սիրում, բայց այդ խոսքերի համար սիրեց...

— Իսկ ի՞նչ խոսքեր,— հարցրեց Դիմովը։

— Խոսքե՞ր։ Չեմ էլ հիշում... Հիշե՞լ կլինի։ Այն ժամանակ անդադար՝ տա՛-տա՛-տա՛, ոնց որ ջուրը թափվի ջրորդանից... Իսկ հիմա մի խոսք էլ ասել չեմ կարող... Ու այդպես էլ ամուսնացավ ինձ հետ... Հիմա կաշաղակս հորանց է գնացել, իսկ ես, ահա տափաստան եմ դուրս եկել։ Մենակ տանը նստել չեմ կարող։ Հնար չկա։

Կոնստանտինն անճոռնաբար պարզեց ոտքերը, ձգվեց գետնի վրա, գլուխը հենեց բռունցքներին, հետո վեր կացավ ու նորից նստեց։ Այժմ բոլորը շատ լավ հասկանում էին, որ դա սիրահարված ու երջանիկ մարդ է, երջանիկ մինչև ուղն ու ծուծը։ Նրա ժպիտը, աչքերը և ամեն մի շարժումը տանջող երջանկություն էին արտահայտում։ Նա հանգիստ մնալ չէր կարողանում և չէր իմանում՝ ինչ դիրք բռնի կամ ինչ անի, որպեսզի ուժասպառ չլինի հաճելի մտքերի առատությունից։ Ծտար մարդկանց մոտ իր սիրտը բանալով՝ նա, վերջապես, հանգիստ նստեց և, աչքը կրակին հառած, մտքերի մեջ ընկավ։

Երջանիկ մարդ տեսնելով՝ բոլորը տխրեցին և նույնպես

երջանկության կարոտ զգացին։ Բոլորը մտքերի մեջ ընկան։ Դիմովը վեր կացավ, սկսեց դանդաղ քայլել կրակի մոտ, և նրա քայլվածքից ու թևերի շարժումներից երևում էր, որ տանջվում է ու ձանձրանում։ Նա մի պահ կանգնեց, նայեց Կոնստանտինին և նստեց։

Իսկ խարույկն արդեն մարում էր։ Լույսն այլևս չէր պլպլալում, և կարմիր բիծը նվազելով խավարում էր... Եվ որքան արագ էր մարում կրակը, այնքան ավելի տեսանելի էր դառնում լուսնյակ գիշերը։ Այժմ արդեն երևում էր ճանապարհն իր ամբողջ լայնությամբ, հակերը, սայլերի լծափայտերը, կեր ուտող ձիերը։ Ճանապարհի մյուս կողմում անորոշ կերպով գծագրվում էր մյուս խաչը...

Դիմովը այտը դրեց թևին և կամացուկ մի ինչ-որ տխուր երգ սկսեց։ Կոնստանտինը քնկոտ ժպտաց և բարակ ձայնով ձայնակցեց նրան։ Մի կես րոպե երգեցին ու լռեցին... Եմելյանը ցնցվեց, արմունկները ձգեց ու մատները շարժեց։

— Տղե՛րք,— ասաց նա աղաչական,— եկեք մի որևէ աղոթք երգենք։

Նրա աչքերն արցունքով լցվեցին։

— Տղե՛րք,— կրկնեց նա ձեռքը կրծքին սեղմելով,— եկեք մի որևէ աղոթք երգենք։

— Ես չեմ կարող,— ասաց Կոնստանտինը։

Բոլորը հրաժարվեցին։— Այդ ժամանակ Եմելյանն ինքն սկսեց երգել։ Նա երկու ձեռքերը թափահարեց, գլուխը ցընցեց, բերանը բաց արեց, բայց նրա կոկորդից դուրս թռավ միայն խոպոտ, անձայն շնչառություն։ Նա երգում էր ձեռքերով, գլխով, աչքերով, նույնիսկ իր ուռուցքով, երգում էր բուռն խանդով ու ցավով և որքան ավելի ուժեղ էր լարում կուրծքը, որպեսզի գեթ մեկ նոտա դուրս թռչի այնտեղից, այնքան ավելի անձայն էր դառնում նրա շնչառությունը...

Եգորուշկային ևս, ինչպես բոլորին, թախիծ համակեց։ Նա գնաց դեպի իր նստած սայլը, բարձրացավ հակերի վրա ու պառկեց։ Նայում էր երկնքին և մտածում երջանիկ Կոնստանտինի ու նրա կնոջ մասին։ Ինչո՞ւ են ամուսնանում մարդիկ։ Այս աշխարհում ինչի՞ համար են կանայք։ Եգորուշկան անհասկանալի հարցեր էր տալիս ինքն իրեն և մտածում էր, թե երևի տղամարդու համար լավ է, եթե իր կողքին միշտ ապրում է սիրալիր, ուրախ ու գեղեցիկ մի կին։ Չգիտես ինչու նրա միտ-

քը եկավ կոմսուհի Դրանիցկայան, և նա մտածեց, թե երևի շատ հաճելի բան կլինի այդպիսի կնոջ հետ կողք-կողքի ապրելը։ Նա թերևս բավականությամբ կամուսնանար նրա հետ, եթե դա այնքան ամոթ չլիներ։ Նա հիշեց կոմսուհու հոնքերը, աչքերը, կառքը, հեծյալավոր ժամացույցը... Հանդարտ ու ջերմ գիշերն իջնում էր նրա վրա և ինչ-որ բան շշնջում ականջին, իսկ նրան թվում էր, թե դա այն գեղեցիկ կինն է թեքվում իր վրա, ժպիտը երեսին նայում է իրեն և ուզում է համբուրել...

Խարույկից մնացել էին միայն երկու փոքրիկ աչք, որոնք ավելի ու ավելի էին փոքրանում։ Սայլապաններն ու Կոնստանտինը մթին ու անշարժ նստել էին նրանց մոտ և թվում էր, թե նրանք հիմա թվով շատ ավելի էին, քան առաջ։ Այժմ երկու խաչն էլ երևում էին միանման և հեռո՜ւ-հեռո՜ւ, մեծ ճանապարհին կայծկլտում էր մի կարմիր խարույկ, երևի այնտեղ էլ որևէ մեկը շիլա էր եփում։

«Մեր մայր Ռուսիան գլուխն է ողջ աշխարհի» — հանկարծ բարձր ձայնով երգեց Կիրյուխան, բայց հազաց ու լռեց։ Տափաստանի արձագանքը բռնեց նրա ձայնը, տարավ հեռուները, և թվում էր, թե տափաստանով ծանր անիվների վրա սլանում է ինքը՝ հիմարությունը։

— Գնալու ժամանակն է,— ասաց Պանտելեյը։— Վեր կացեք, տղե՛րք։

Մինչ ձիերը լծում էին, Կոնստանտինը քայլում էր սայլերի մոտ և հիանում իր կնոջով։

— Բարի ճանապարհ, տղե՛րք,— ձայն տվեց նա, երբ սայլերի շարքը շարժվեց։— Շնորհակալ եմ աղ ու հացի համար։ Իսկ ես նորից գնամ այն կրակի կողմը, չեմ դիմանում։

Եվ նա շուտով անհետացավ մշուշի մեջ, ու երկար ժամանակ լսվում էր, թե ինչպես նա քայլում է այն կողմը ուր կրակն էր երևում, որպեսզի ուրիշներին էլ պատմի իր երջանկությունը։

Մյուս օրը, երբ Եգորուշկան արթնացավ, վաղ առավոտ էր։ Արևը չէր ծագել։ Գումակը կանգնած էր։ Սպիտակ գլխարկով, էժանագին մոխրագույն կտորից կարված հագուստով մի ինչ-որ մարդ կազակական ձին նստած, ամենաառջևի սայլի մոտ կանգնած խոսում էր Դիմովի և Կիրյուխայի հետ։ Առջևում, գումակից մի երկու վերստ հեռու սպիտակին էին տալիս

երկար ու ցածր ամբարներ ու տնակներ. որոնք ծածկված էին կղմինդրով։ Տնակների մոտ ո՛չ բակ էր երևում, ո՛չ ծառեր։

— Պապի, սա ի՞նչ գյուղ է,— հարցրեց Եգորուշկան։

— Սա, տղաս, հայկական խուտոր է,— պատասխանեց Պանտելեյը։— Այնտեղ հայեր են ապրում։ Ոչինչ, վատ մարդիկ չեն... Այսինքն՝ հայերը։

Մոխրագույն հագուստով մարդը վերջացրեց Դիմովի և Կիրյուխայի հետ խոսելը, ետ տվեց իր ձին ու նայեց խուտորի կողմը։

— Ա՛յ թե բան է, հա՜,— հառաչեց Պանտելեյը նույնպես նայելով խուտորի կողմը և կուչ գալով առավոտյան ցրտից։— Մարդ է ուղարկել խուտոր ինչ-որ թուղթ բերելու ու հիմի չկա... Հարկավոր էր Ստյոպկային ուղարկել։

— Իսկ այդ ո՞վ է, պապի,— հարցրեց Եգորուշկան։

— Վառլամովն է։

Աստվա՜ծ իմ։ Եգորուշկան արագ վեր թռավ, շոքեց ու նայեց սպիտակ գլխարկին։ Դժվար էր հավատալ, թե մեծ-մեծ սապոգներով այդ փոքրամարմին գորշագույն մարդը, որ տգեղ ձին նստած՝ գյուղացիների հետ խոսում է այնպիսի մի ժամանակ, երբ բոլոր կարգին մարդիկ քնած են, խորհրդավոր, անորսալի Վառլամովն է, որին որոնում են բոլորը, որը միշտ «պտույտ է գալիս» և շատ ավելի փող ունի, քան կոմսուհի Դրանիցկայան։

— Ոչինչ, լավ մարդ է,— խոսեց Պանտելեյը՝ խուտորի կողմը նայելով։— Աստված առողջություն տա, հիանալի պարոն է... Վառլամովը, այսինքն՝ Սիմյոն Ալեքսանդրիչը... Աշխարհը, ախպերս, այդպիսի մարդիկ են պահում։ Այդ ճշմարիտ է... Աքլորը դեռ չի կանչել, իսկ նա արդեն ոտքի վրա է... Մի ուրիշը լիներ՝ քնած կլիներ կամ տանը իր հյուրերի հետ կերուխումի մեջ կլիներ, բայց նա ամբողջ օրը տափաստանումն է... Շրջում է... Սա գործն աչքաթող չի՛ անի, չէ՞... Սա ուրիշ պտուղ է...

Վառլամովն աչք չէր հեռացնում խուտորից և ինչ-որ բան էր խոսում։ Ձին անհամբեր հենվում էր մերթ մեկ, մերթ մյուս ոտքին։

— Սիմյոն Ալեքսանդրիչ,— ձայն տվեց Պանտելեյը, գլխարկը գլխից վերցնելով,— թույլ տվեք Ստյոպկային ուղարկել։ Եմելյա՛ն, ձեն տուր, որ Ստյոպկային ուղարկենք։

Բայց ահա, վերջապես, խուտորից դուրս եկավ մի ձիավոր։ Մի կողմի վրա խիստ թեքված, մտրակը գլխավերևում թափահարելով, ասես ջիրիդ խաղալով ու ցանկանալով իր համարձակ արշավով բոլորին զարմացնել, նա թռչնի արագությամբ սլացավ դեպի գումակ։

— Սա երևի նրա շրջիկն է,— ասաց Պանտելեյը։— Նա մոտ հարյուր մարդ շրջիկ ձիավոր ունի, գուցեև ավելի։

Հասնելով առջևի սայլին՝ ձիավորը քաշեց ձիու սանձը և, գլխարկը վերցնելով, Վառլամովին մի ինչ-որ գրքույկ տվեց։ Վառլամովն այդ գրքից մի քանի թուղթ հանեց, կարդաց և գոչեց։

— Իսկ ո՞ւր է Իվանչուկի նամակը։

Ձիավորը գրքույկը ետ վերցրեց, թղթերը նայեց և ուսերը թոթվեց։ Նա սկսեց ինչ-որ բան խոսել, երևի արդարանում էր և թույլտվություն խնդրում նորից խուտոր գնալու։ Հանկարծ Վառլամովի ձին երերաց այնպես, ասես Վառլամովն ավելի ծանրացավ։ Երերաց նաև Վառլամովը։

— Ջքվի՛ր, - գոչեց նա, բարկությամբ մտրակը թափահարելով ձիավորի վրա։

Ապա նա ձին ետ դարձրեց և, գրքույկի մեջ եղած թղթերը նայելով, դանդաղաքայլ շարժվեց գումակի երկարությամբ։ Երբ նա մոտեցավ հետևի սայլին, Եգորուշկան իր տեսողությունը լարեց, որպեսզի ավելի լավ տեսնի նրան։ Վառլամովն արդեն ծեր էր։ Փոքրիկ, ճերմակ մորուքով նրա ռուսական պարզ, արևախանձ երեսը կարմիր էր, ցողաթաթախ և ծածկված կապուտակ ջղերով։ Նա արտահայտում էր նույնպիսի գործարար չորություն, ինչ որ Իվան Իվանիչի երեսը, նույնպիսի գործարար ֆանատիզմ։ Բայց և այնպես ինչպիսի՜ տարբերություն էր զգացվում նրա և Իվան Իվանիչի միջև։ Քեռի Կուզմիչովի դեմքին գործարար չորության հետ միշտ հոգս ու վախ էր զգացվում, թե ինքը չի գտնի Վառլամովին, կուշանա, ձեռքից կփախցնի լավ գինը։ Փոքրիկ ու կախումն ունեցող մարդկանց հատուկ այդպիսի բան չէր զգացվում Վառլամովի ո՛չ դեմքին, ո՛չ ամբողջ կեցվածքում։ Այդ մարդն ինքն էր գներ ստեղծում, ոչ ոքի չէր որոնում և ոչ ոքից կախում չուներ։ Որքան էլ հասարակ էր նրա արտաքինը, ամեն բանի մեջ, նույնիսկ մտրակը բռնելու ձևի մեջ, զգացվում էր ուժի և տափաստանի վրա իշխելու գիտակցությունը։

Եգորուշկայի մոտով անցնելիս Վառլամովը նույնիսկ չնայեց էլ նրան։ Միայն նրա ձին էր, որ Եգորուշկային արժանացրեց իր ուշադրությանը և նայեց նրան իր խոշոր, անմիտ աչքերով, այն էլ բոլորովին անտարբեր։ Պանտելեյը գլուխ տվեց Վառլամովին, սա նկատեց այդ և առանց աչքը թղթերից հեռացնելու աղճատված արտասանությամբ ասաց.

— Բարև, ծերուկ՛։

Վառլամովի խոսակցությունը շրջիկի հետ և մտրակի ցնցումը, ըստ երևույթին, ամբողջ գումակի վրա ցնցող տպավորություն էին գործել։ Բոլորի դեմքը լուրջ արտահայտություն ուներ։ Ձիավորը, ուժեղ մարդու ցասումից ընկճված, ձիու սանձը կախ գցած, լուռ, գլխաբաց կանգնել էր առջևի սայլի մոտ և կարծես չէր հավատում, թե իր համար օրն այդպես վատ սկսվեց։

— Պինդ ծերունի է,— մրմնջաց Պանտելեյը,— շա՜տ պինդ։ Բայց ոչինչ, լավ մարդ է... Իզուր տեղը մարդու չի նեղացնի... Ոչինչ...

Թղթերը նայելուց հետո Վառլամովը գրքույկը գրպանը դրեց։ Ձին ասես նրա միտքը հասկանալով, առանց հրամանի սպասելու, ցնցվեց ու սլացավ մեծ ճանապարհով։

VII

Հաջորդ գիշերը նույնպես սայլապաններն իջևանեցին և շիլա եփեցին։ Այս անգամ հենց սկզբից ամեն բանի մեջ զգացվում էր մի ինչ-որ անորոշ թախիծ։ Օդը խեղդուկ էր, բոլորը շատ ջուր էին խմում և ոչ մի կերպ ծարավը հագեցնել չէին կարողանում։ Լուսինը ծագեց խիստ կարմրած ու մռայլ, կարծես հիվանդ լիներ։ Աստղերը նույնպես մռայլ էին, մշուշն ավելի թանձր էր, հեռուն՝ ավելի պղտոր։ Բնությունն ասես ինչ-որ բան էր նախազգում ու տանջվում։

Խարույկի մոտ այլևս չկար երեկվա աշխուժությունն ու խոսակցությունը։ Բոլորը տխուր էին և խոսում էին ծուլորեն, ակամա։ Պանտելեյը միայն հառաչում էր, ոտքերից գանգատվում և շուտ-շուտ խոսք էր բացում աներես մահվան մասին։

Դիմովը փորի վրա լուռ պառկած մի ծղնոտ էր ծամում։

Նրա դեմքն արտահայտում էր չարություն, հոգնածություն ու զզվանք, կարծես ծղնոտից վատ հոտ էր գալիս... Վասյան գանգատվում էր ծնոտի ցավից և վատ եղանակ էր գուշակում։ Եմելյանը ձեռքերը չէր թափահարում, այլ նստել էր անշարժ և մռայլ նայում էր կրակին։ Տանջվում էր նաև Եգորուշկան։ Դանդաղ ընթացքը հոգնեցրել էր նրան, իսկ ցերեկվա տոթից ցավում էր գլուխը։

Երբ շիլան եփեց, Դիմովը ձանձրույթից սկսեց ընկերների օձիքից կպչել։

— Հը՛, գդալն առավ, վռազ տնկվեց,— ասաց նա չարությամբ նայելով Եմելյանին։— Ի՞նչ աչքածակն է։ Ճաշի մոտ առաջինը ի՞նքը պիտի նստի։ Որ եկեղեցում երգիչ է եղել, իրեն աղա է կարծում։ Քեզպես երգիչներ շատ կան, որ մեծ ճանապարհին ողորմություն են խնդրում։

— Դու էլ ի՞նչ կպար իմ բողազից,— ասաց Եմելյանը՝ նույնպես չարությամբ նայելով նրան։

— Էն եմ ասում, որ առաջինը չխցկվես կաթսայի մոտ։ Քեզ մեծ բան մի՛ երևակայիր։

— Ախմախ ես, ա՛յ թե ինչ,— ֆշշացրեց Եմելյանը։

Փորձից իմանալով, թե այսպիսի խոսակցություններն ինչով են վերջանում, Պանտելեյն ու Վասյան միջամտեցին և սկսեցին Դիմովին համոզել, որ իզուր չհայհոյի։

— Երգի՛չ...— չէր դադարում կովարարը՝ արհամարհաբար քմծիծաղելով։— Քեզ պես ով ասես կերգի։ Նստիր քեզ համար եկեղեցու գավթում ու երգիր. «Մի ողորմությո՛ւն, ի սեր Քրիստոսի՛»։ Է՛հ, դո՛ւք...

Եմելյանը չպատասխանեց։ Նրա լռությունը Դիմովին գրգռեց։ Նա ավելի մեծ ատելությամբ նայեց նախկին երգչին ու ասաց.

— Չեմ ուզում հետդ գլուխ դնել, թե չէ ես քեզ ցույց կտայի՝ ինչ է նշանակում իրեն երևակայել։

— Ախր ի՞նչ ես ինձնից կպել, սատանա՛,— բռնկեց Եմելյանը։— Ես քեզ ձե՞ռք եմ տվել։

— Ի՞նչ ասացիր։ Ի՞նչ,— հարցրեց Դիմովը ուղղվելով, և նրա աչքերը լցվեցին արյունով։— Ի՞նչ ասացիր։ Սատանա՞։ Հա՞։ Դե ա՛ռ քեզ, գնա ման արի։

Դիմովը Եմելյանի ձեռքից խլեց գդալը ու շպրտեց հեռու։ Կիրյուխան, Վասյան ու Ստոպկան վեր թռան, վազեցին գդալը որոնելու, իսկ Եմելյանը աղաչական ու հարցական հայացքը հառեց Պանտելեյի վրա։ Նրա երեսը հանկարծ փոքրացավ, կնճռոտվեց, աչքերը թարթեցին, և նախկին երգիչը լաց եղավ մանկան պես։

Եգորուշկան, որ վաղուց արդեն ատում էր Դիմովին, զգաց, թե ինչպես օդը հանկարծ անտանելի հեղձուկ դարձավ, ինչպես խարույկի կրակը վառեց իր երեսը։ Նա կուզենար շուտ վազել դեպի գումակը, խավարի մեջ, բայց կովարարի չար, ձանձրույթով լի աչքերը քաշում էին իրենց։ Մի որևէ վերին աստիճանի վիրավորական բան ասելու բուռն ցանկությամբ նա մի քայլ արեց դեպի Դիմովը և, շնչասպառ լինելով, ասաց.

— Դու ամենավա՛տն ես։ Ես քեզ ատո՛ւմ եմ։

Դրանից հետո հարկավոր էր վազել դեպի գումակը, բայց նա ոչ մի կերպ տեղից շարժվել չկարողացավ և շարունակեց.

— Այն աշխարհում դու դժոխքի կրակների մեջ կայրվես։ Ես կգանգատվեմ Իվան Իվանիչին։ Դու իրավունք չունես Եմելյանին նեղացնելու։

— Օհո՛, մի սրա՛ն նայեցեք,— քմծիծաղեց Դիմովը։— Սա ինչ գոճի է. դեռ շրթունքների կաթը չի ցամաքել, խրատ տվող է դարձել։ Բա որ ականջներդ քաշե՞մ։

Եգորուշկան զգաց, որ այլևս շնչել չի կարողանում։ Նա, երբեք իր հետ այդպիսի բան չէր եղել, հանկարծ ամբողջ մարմնով ցնցվեց, ոտքերը գետին խփեց ու սուր ճչաց.

— Ջարդե՛ք սրան, ջարդե՛ք։

Արցունքները հորդեցին նրա աչքերից, նա ամաչեց և օրորվելով վազեց դեպի գումակ։ Թե ինչ տպավորություն գործեց իր ճիչը, ինքը չտեսավ։ Հակի վրա պառկած լալով՝ նա ցնցում էր ոտքերն ու ձեռքերը և շշնջում։

— Մայրի՛կ, մայրի՛կ...

Ե՛վ այդ մարդիկ, և՛ խարույկի շուրջ եղած ստվերները, և՛ մթին հակերն ու հեռավոր կայծակը, որ ամեն րոպե փայլատակում էր հեռվում, այդ ամենն այժմ նրան պատկերանում էր ահավոր ու սոսկալի։ Նա սարսափում էր և հուսահատաբար ինքն իրեն հարց տալիս, թե այս ինչպե՞ս և ինչո՞ւ է ինքը ընկել այս անծանոթ աշխարհը, զարհուրելի գյուղացիների մեջ։ Որտե՞ղ են այժմ քեռին, հայր Խրիստաֆորը և Դենիսկան։ Ինչո՞ւ այսքան երկար ժամանակ չեն գալիս։ Արդյոք չե՞ն մոռացել իրեն։ Այն մտքից, թե ինքը կարող է մոռացված լինել

ու բախտի քմահաճույքին թողնված. նրա մարմինը սառում էր և այնուհետև սարսուռ էր պատում, որ մի քանի անգամ ուզեց վայր ցատկել հակից ու առանց ետ նայելու ամբողջ թափով դեպի ետ վազել ճանապարհով, բայց մթին ու մոայլ խաչերի հիշողությունը, որոնք անպայմանն կհանդիպեին նրան ճանապարհին և հեռվում փայլատակող կայծակը զսպում էին նրան... Եվ միայն այն ժամանակ, երբ նա շշնջում էր՝ «Մայրի՜կ, մայրի՜կ», նրա սիրտն ասես թեթևանում էր...

Երևի սայլապաններն էլ սարսուռ էին զգում։ Երբ Եգորուշկան հեռու փախավ խարույկից, սկզբում նրանք երկար ժամանակ լուռ էին, հետո խուլ ու կիսաձայն խոսեցին ինչ-որ բանի մասին, թե նա գալիս է, ուստի հարկավոր է շուտ պատրաստվել ու հեռանալ նրանից... Նրանք արագ ընթրեցին, հանգցրին կրակը և լուռ սկսեցին ձիերը լծել։ Նրանց իրարանցումից ու կցկտուր խոսքերից երևում էր, որ ինչ-որ դժբախտություն են նախատեսում։

Ճանապարհ ընկնելուց առաջ Դիմովը մոտեցավ Պանտելեյին ու կամացուկ հարցրեց.

— Ի՞նչ է նրա անունը։

— Եգորի...— պատասխանեց Պանտելեյը։

Դիմովը մի ոտքը գրեց անիվի վրա, բռնեց այն պարանից, որով կապված էր հակը, վեր բարձրացավ։ Եգորուշկան տեսավ նրա երեսը և գանգրահեր գլուխը։ Դիմովի դեմքը գունատ էր, հոգնած ու լուրջ, բայց այլևս չարություն չէր արտահայտում։

— Յորա՛,— ասաց նա կամացուկ,— արի խփի՛ր։

Եգորուշկան զարմանքով նայեց նրան, այդ ժամանակ կայծակը փայլատակեց։

— Ոչինչ, խփի՛ր,— կրկնեց Դիմովը։

Եվ չսպասելով, թե Եգորուշկան երբ կխփի իրեն կամ կխոսի իր հետ, նա ներքև ցատկեց ու ասաց.

— Ի՞նչ տխուր եմ։

Հետո օրորվելով ու թիակները շարժելով նա ծուլորեն քայլեց գումակի երկարությամբ և ոչ այն է լալագին, ոչ այն է սրտնեղած ձայնով կրկնեց.

— Ի՞նչ տխուր եմ, աստվա՜ծ իմ։ Իսկ դու, Եմելյա՛, մի՛ նեղանա,— ասաց նա Եմելյանի կողքով անցնելիս։— Մեր կյանքը կորած է, դաժան...

Աջ կողմում կայծակ փայլատակեց և ասես հայելու մեջ արտացոլվելով՝ իսկույն շողաց նաև հեռվում։

— Եգորի, վերցրո՛ւ,— գոչեց Պանտելեյը ներքևից մի ինչ-որ մեծ ու մթին բան վերև նետելով։

— Այս ի՞նչ է,— հարցրեց Եգորուշկան։

— Խսիր է։ Որ անձրև գա, կծածկվես։

Եգորուշկան փոքր-ինչ բարձրացավ և շուրջը նայեց։ Հեռուն նկատելիորեն սևացել էր և թարթում էր դժգույն լույսով ավելի հաճախ, քան ցոպեն մեկ անգամ։ Նրա սևությունը ասես ծանրությունից թեքվում էր դեպի աջ։

— Պապի, փոթորի՞կ է լինելու,— հարցրեց Եգորուշկան։

— Ա՜խ, իմ հիվանդ, ցրտատա՜ր ոտքեր,— ծոր տալով ասում էր Պանտելեյը, լսելով Եգորուշկային և ոտքերը դոփելով գետնին։

Ձախ կողմում կարծես մեկը լուցկի շրթացրեց, երկնքում փայլատակեց ֆոսֆորային դժգույն մի շերտ և մարեց։ Լսվեց, թե ինչպես հեռու ինչ-որ մի տեղ մեկն անցավ թիթեղյա տանիքի վրայով։ Հավանորեն տանիքի վրայով ոտաբոբիկ էին քայլում, որովհետև թիթեղը շատ խուլ դղրդաց։

— Տեղատարափ է, հա՜,— գոչեց Կիրյուխան։

Հեռվում, հորիզոնի աջ կողմը կայծակը փայլատակեց այնպես պայծառ, որ լուսավորեց տափաստանի մի մասը և այն տեղը, որտեղ պայծառ երկինքը սահմանազատվում էր խավարից։ Զարհուրելի ամպն առաջ էր շարժվում դանդաղ, համատարած զանգվածով։ Նրա եզրին կախված էին խոշոր, սև-սև ծվեններ։ Ճիշտ նույնպիսի ծվեններ իրար ճզմվելով կուտակվում էին հորիզոնի աջ ու ձախ կողմերում։ Ամպի այդ պատառոտուն, ցնցոտիավոր տեսքը նրան ինչ-որ հարբած, կովարար արտահայտություն էր տալիս։ Շանթը որոտաց բարձր ու սուր։ Եգորուշկան երեսին խաչ հանեց և սկսեց արագորեն վերարկուն հագնել։

— Տխո՜ւր եմ,— առջևի սայլերից լսվեց Դիմովի ճիչը, և նրա ձայնից կարելի էր դատել, որ նա արդեն նորից սկսում է չարանալ։— Տխո՜ւր եմ։

Հանկարծ քամին փչեց այնպիսի ուժով, որ քիչ մնաց Եգորուշկայից փախցներ կապոցն ու խսիրը։ Խսիրը ցնցվելով փռվեց բոլոր կողմերի վրա և խփեց հակին ու Եգորուշկայի երեսին։ Քամին սուլոցով տարածվեց տափաստանում, անկա-

նոն պտույտներ գործեց և այնպիսի աղմուկ բարձրացրեց, որ չէր լսվում ո՛չ որոտը, ո՛չ անիվների ճռինչը։ Նա փչում էր սև ամպի կողմից՝ իր հետ բերելով փոշու ամպեր և անձրևի ու թաց հողի բուրմունք։ Լուսնի լույսը մշուշապատվեց, ասես կեղտոտվեց, աստղերն է՛լ ավելի մռայլվեցին, և երևում էր, թե ինչպես ճանապարհի եզրով դեպի հետ ինչ-որ տեղ էին շտապում փոշու ամպերը և նրանց ստվերները։ Այժմ ամենայն հավանականությամբ պտույտ էր գալիս մրրիկը՝ իր հետ միապին գետնից տանելով փոշի, չոր խոտ ու փետուրներ, բարձրանում էր մինչև երկինք։ Հավանորեն հենց այն սև ամպի մոտ թռչում էին երնջնակները, և պետք է որ սարսափելի լիներ նրանց համար։ Սակայն աչքերը լցվող փոշու պատճառով ոչինչ չէր երևում, բացի կայծակի փայլից։

Եգորուշկան, կարծելով, թե հենց այս րոպեին անձրև կտեղա, ծունկ չոքեց և խսիրով ծածկվեց։

— Պանտելե՛յ, — գոռաց մեկը առջևում։ — Ո՛... ա՛... վա՛...

— Չեմ լսո՛ւմ,— բարձր ու ծոր տալով պատասխանեց Պանտելեյը։

— Ա՛... ա՛... վա՛... Վա... րյա՛...

Շանթը ցասումով որոտաց երկնքում, գլորվեց աջից դեպի ձախ, ապա՝ դեպի հետ ու լռեց առջևի սայլերի մոտ։

— Սո՛ւրբ, սո՛ւրբ, սուրբ տեր Սաբաո՛վթ,— շշնջաց Եգորուշկան երեսը խաչակնքելով, եղիցի փառք քո և հերկինս և երկրի...

Երկնքի խավարը բաց արեց երախը և սպիտակ հուր փչեց. ամպրոպն իսկույն նորից որոտաց։ Դեռ նոր էր որոտը դադարել, երբ կայծակը փայլատակեց այնպես լայնորեն, որ Եգորուշկան խսիրի ճեղքից հանկարծ տեսավ ամբողջ մեծ ճանապարհը մինչև հեռո՛ւ-հեռո՛ւն, բոլոր սայլապաններին և նույնիսկ Կիրյուխայի ժիլետը։ Սև ծվենները ձախ կողմում արդեն վեր էին բարձրանում, և նրանցից մեկը, որ կոպիտ էր, անճոռնի մատներով թաթի նման, ձգվեց դեպի լուսինը։ Եգորուշկան որոշեց աչքերը պինդ փակել, ուշադրություն չդարձնել և սպասել, մինչև ամեն ինչ վերջանա։

Անձրևը, չգիտես ինչու, երկար ժամանակ չէր սկսվում։ Եգորուշկան հուսալով, թե գուցե ամպը անցնում է հեռու, դուրս նայեց խսիրի տակից։ Զարհուրելի խավար էր։ Եգորուշ-

կան չտեսավ ո՛չ Պանտելեյին, ո՛չ հակը, ո՛չ ինքն իրեն։ Նա հայացքը դարձրեց այն կողմը, որտեղ քիչ առաջ լուսինն էր երևում, բայց այնտեղ էլ սևին էր տալիս նույնպիսի խավար, ինչպես սայլի վրա։ Իսկ կայծակը խավարի մեջ ավելի սպիտակ ու ավելի կուրացուցիչ էր թվում, այնպես, որ մարդու աչք էր ցավում։

— Պանտելե՛յ,— ձայն տվեց Եգորուշկան։

Պատասխան չեղավ։ Բայց ահա, վերջապես, քամին վերջին անգամ ձիգ տվեց խսիրը ու փախավ։ Միալար, հանդարտ աղմուկ լսվեց։ Մի մեծ, պաղ կաթիլ ընկավ Եգորուշկայի ծընկին, մի ուրիշը սահեց նրա ձեռքի վրայով։ Նա նկատեց, որ իր ծնկները ծածկված չեն, ուզեց խսիրն ուղղել, բայց հենց այդ ժամանակ ինչ-որ բան թափվեց ու թկթկաց ճանապարհին, ապա՝ լծափայտերին, հակերի վրա։ Այդ անձրևն էր։ Ասես անձրևն ու խսիրը հասկացան իրար, ինչ-որ բանի մասին խոսել սկսեցին արագ, ուրախ ու տհաճ, ինչպես երկու կաշաղակ։

Եգորուշկան դեռ չոքած էր կամ ավելի ճիշտ՝ նստած էր իր սապոգների վրա։ Երբ անձրևը թկթկաց խսիրին, նա ամբողջ մարմնով առաջ թեքվեց, որպեսզի ծածկի իր ծնկները, որոնք հանկարծ թրջվել էին։ Ծնկները ծածկել հաջողվեց, բայց դեռ մի րոպե էլ չանցած՝ սուր, անդուր խոնավություն զգացվեց նրա թիկունքում, մեջքից ցած ու սրունքներին։ Նա ընդունեց իր նախկին դիրքը, ծնկները թողեց անձրևի տակ և սկսեց մտածել, թե ինչ անի, խավարի մեջ ինչպես ուղղի անտեսանելի խսիրը։ Բայց նրա ձեռքերն արդեն թաց էին, թևքերի մեջ ու օձիքում ջուր էր հոսում, թիակները սառչում էին։ Եվ նա որոշեց ոչինչ չանել, այլ անշարժ նստել ու սպասել, թե երբ կվերջանա այս ամենը։

— Սո՛ւրբ... սո՛ւրբ... սո՛ւրբ...— շշնջում էր նա։

Հանկարծ հենց ուղիղ նրա գլխավերևում երկինքը պատռվեց զարհուրելի, խլացուցիչ ճայթյունով։ Եգորուշկան կռացավ և շունչն իրեն պահած սպասում էր, թե բեկորները երբ կթափվեն իր ծոծրակին ու մեջքին։ Աչքերը հանկարծ բացվեցին, և նա տեսավ, թե ինչպես իր մատների վրա, թաց թևքերից ու խսիրից հասող ջրի շիթերի մեջ, հակի վրա ու ցածը՝ գետնին բռնկեց ու մի հինգ անգամ կուրացուցիչ փայլատակեց լույսը։ Հնչեց մի նոր հարված, նույնքան ուժեղ ու զարհուրելի։ Երկին-

քրն արդեն չէր որոտում, չէր դղրդում, այլ արձակում էր ճրթճրթան ձայներ, որոնք նման էին չոր ծառի ճռճռոցի։

«Թրա՜խ, թա՜խ-թա՜խ-թա՜խ»,— բարձր որոտում էր շանթը, գլորվում երկնքով, սայթաքում և առջևի սայլերի մոտ ինչ-որ մի տեղ կամ հեռու հետևում ընկնում սոսկալի ճայթյունով — «թրա՜խ»...

Առաջ կայծակները միայն զարհուրելի էին, իսկ այսպիսի որոտի ժամանակ նրանք թվում էին չարագուշակ։ Նրանց դիվային լույսը թափանցում էր փակ կոպերի միջով, և ամբողջ մարմնին սարսուռ էր պատում։ Ի՞նչ անել այդ կայծակները չտեսնելու համար։ Եգորուշկան որոշեց երեսը շուռ տալ։ Զգուշությամբ, ասես վախենալով, թե իրեն հսկում են, նա չորեքթաթ արեց ու թաց հակի վրայով սահելով շուռ եկավ դեպի հետ։

«Թրա՜խ, թա՜խ, թա՜խ» — սլացավ նրա գլխավերևում, ընկավ սայլի տակ ու ճայթեց — «Հը՜ռռ...»։

Հանկարծ աչքերը նորից բացվեցին, և Եգորուշկան տեսավ մի նոր վտանգ. սայլի հետևից քայլում էին երեք վիթխարի հսկաներ՝ երկար նիզակները ձեռքներին։ Կայծակը փայլատակեց նրանց նիզակների սայրերին և պարզ լուսավորեց նրանց կերպարանները։ Դրանք վիթխարահասակ մարդիկ էին՝ երեսները ծածկած, գլուխները կախ ու ծանր քայլվածքով։ Թվում էր, թե նրանք տխուր են, վհատ, մտքերի մեջ խորասուզված։ Գուցե գումակի հետևից քայլում էին ո՛չ նրա համար, որ վնաս պատճառեին, բայց և այնպես նրանց մոտիկությունը մի տեսակ սարսափ էր ազդում։

Եգորուշկան արագ շուռ եկավ դեպի առաջ և ամբողջ մարմնով դողալով գոռաց.

— Պանտելե՜յ։ Պապի՜։

«Թրա՜խ, թա՜խ, թա՜խ»,— պատասխանեց նրան երկինքը։

Եգորուշկան աչքերը բաց արեց, որ տեսնի այդտե՞ղ են սայլապանները։ Կայծակը փայլատակեց երկու տեղ և լուսավորեց ճանապարհը մինչ հեռուները, ամբողջ գումակը, բոլոր սայլապաններին։ Ճանապարհի վրայով առվակներ էին հոսում և պղպջակներ ոստոստում։ Պանտելեյը քայլում էր սայլի կողքով, նրա բարձր գլխարկը և ուսերը ծածկված էին մի կտոր խսիրով։ Նրա կերպարանքը ո՛չ վախ էր արտահայտում, ո՛չ անհանգստություն, ասես, ծերունին խլացել էր որոտից և կուրացել կայծակից։

— Պապի՜, հսկանե՜րը,— գոչեց Եգորուշկան լացակումած։

Բայց պապը չէր լսում։ Քիչ ավելի հեռու քայլում էր Եմելյանը։ Նա ոտքից գլուխ ծածկված էր մի մեծ խսիրով և այժմ եռանկյան ձև ուներ։ Վասյան, որ ծածկված չէր ոչնչով, քայլում էր փայտացածի պես, ինչպես միշտ ոտքերը շատ վեր բարձրացնելով և ծունկը չծալելով։ Կայծակի փայլի տակ թվում էր, թե գումակը չի շարժվում, իսկ սայլապանները քարացել են, Վասյայի ոտքը անշարժացել է հենց բարձրացրած պահին...

Եգորուշկան նորից կանչեց պապին։ Պատասխան չստանալով՝ նա անշարժ նստեց և այլևս չէր սպասում, թե երբ կվերջանա այդ ամենը։ Նա հավատացած էր, թե հենց այս րոպեին շանթը կսպանի իրեն, թե աչքերը հանկարծ կբացվեն, և ինքը կտեսնի զարհուրելի հսկաներին։ Եվ նա այլևս չէ՛ր խաչակնքում, չէ՛ր վախենում, չէ՛ր կանչում պապին, չէ՛ր մտածում մոր մասին, այլ միայն փայտացել էր ցրտից և այն համոզմունքից, թե փոթորիկը երբեք չի վերջանալու։

Բայց հանկարծ ձայներ լսվեցին։

— Եգորի, այդ ինչ է, քնա՞ծ ես,— ցածից ձայն տվեց Պանտելեյը։— Իջի՜ր։ Խլացե՞լ ես, խենթո՜ւկ...

— Ա՛յ թե փոթորիկ է, հա՜,— ասաց մի ինչ-որ բամբ ձայն և այնպես կլթացրեց, կարծես մի մեծ բաժակ օղի կուլ տվեց։

Եգորուշկան աչքերը բացեց։ Ցածում, սայլի մոտ կանգնած էին Պանտելեյը, եռանկյունի—Եմելյանը և հսկաները։ Վերջիններս այժմ բավական ցածրահասակ էին, և երբ Եգորուշկան ուշադիր նայեց նրանց, պարզվեց, որ դրանք սովորական գեղջուկներ էին, իսկ ուսերին ոչ թե նիզակներ էին, այլ՝ երկաթե եղաններ։ Պանտելեյի ու եռանկյունու միջև ընկած տարածությունում երևում էր մի ցածրիկ խրճիթի լուսավոր պատուհանը։ Նշանակում է գումակը կանգնած էր գյուղում։ Եգորուշկան խսիրը ցած գցեց իր վրայից, կապոցը վերցրեց և շտապեց սայլից վայր իջնել։ Այժմ, երբ իր կողքին մարդիկ էին խոսում և լուսավոր պատուհան էր երևում, նա այլևս չէր սարսափում, թեև, շանթը ճայթում էր առաջվա պես և կայծակը ճեղքում էր երկինքը։

— Լավ փոթորիկ է, ոչինչ...— մոթմոթաց Պանտելեյը։— Փա՜ռք աստծո... Ոտքերս մի քիչ թրջվեցին անձրևից, բայց

ոչինչ... Իշե՞լ ես, Եգորի։ Դե մտիր այս խրճիթը... Ոչինչ...

— Սո՜ւրբ, սո՜ւրբ, սո՜ւրբ...— շշնջաց Եմելյանը։ — Անպայման մի տեղ խփել է կայծակը... Դուք այստեղացի՞ եք,— հարցրեց նա հսկաներին։

— Չէ, Գլինովից... մենք գլինովցի ենք։ Պլատերովների մոտ ենք աշխատում։

— Կալսո՞ւմ եք։

— Այս էլ, այն էլ։ Հիմա դեռ ցորենն ենք հնձում։ Բայց կայծակ էր, հա՜... Վաղուց այսպիսի փոթորիկ չէր եղել...

Եգորուշկան խրճիթ մտավ։ Նրան դիմավորեց սուր կզակով մի նիհար, կուզիկ պառավ։ Նա ձեռքին բռնել էր մի ճարպամոմ, աչքերը կկոցում էր ու ծոր տալով հառաչում։

— Ա՜յ թե փոթորիկ տվեց աստված,— ասաց նա։— Իսկ մերոնք գիշերները տափաստանում են մնում. ի՜նչ օրի կլինեն խեղճերը... Շորերդ հանի՛ր, սիրելիս, շորերդ հանի՛ր...

Ցրտից դողալով ու տհաճությամբ կծկվելով՝ Եգորուշկան հանեց իր թրջված վերարկուն, ապա ձեռքերն ու ոտքերը լայն տարածած երկար ժամանակ անշարժ մնաց։ Ամենափոքր շարժումն անգամ նրա մեջ թրջվածության ու ցրտի տհաճ զգացողություն էր առաջացնում։ Վերնաշապկի թևքերն ու մեջքը թաց էին, շալվարը ոտքերին էր կպել, գլխի վրայից ջուր էր հոսում։

— Ի՜նչ ես ոտքերդ չռել ու կանգնել, տղաս,— ասաց պառավը։— Արի նստիր։

Եգորուշկան հենց այդպես էլ ոտքերը լայն չռած մոտեցավ սեղանին և նստեց նստարանին, ինչ-որ մեկի գլխի մոտ։ Գլուխը շարժվեց, քթով ֆսսացրեց, ատամները կրճտացրեց ու հանգստացավ։ Այդ գլխից նստարանի երկարությամբ ձգված էր մի թումբ՝ ծածկված ոչխարի մորթու քուրքով։ Մի կին էր քնած այդտեղ։

Պառավը հառաչելով դուրս եկավ և շուտով վերադարձավ՝ բերելով մի ձմերուկ ու մի սեխ։

— Կեր, սիրելիս, ուրիշ ոչինչ չունեմ հյուրասիրելու...— ասաց նա հորանջելով, ապա սեղանի դարակի մեջ պտտելով՝ հանեց մի երկար, սուր դանակ, որ շատ նման էր այն դանակներին, որոնցով ավազակները մորթում են վաճառականներին իջևաններում։

— Կե՛ր, սիրելիս։

Եգորուշկան տենդ ունեցողի պես դողալով մի կտոր սեխ կերավ սև հացով, ապա կերավ մի կտոր ձմերուկ և դրանից նա ավելի սառեց։

— Մերոնք գիշերը տափաստանումն են մնում...— հառաչելով ասաց պառավը, երբ Եգորուշկան ուտում էր։— Քրիստոսի՜ շարչարանք... Լավ կլիներ մի մոմ վառել սրբի առաջ, բայց չեմ իմանում՝ որտեղ է դրել մոմերը Ստեպանիդան։ Կե՛ր, սիրելիս, կե՛ր...

Պառավը հորանջեց և աջ ձեռքը ետ տանելով՝ քորեց իր ձախ ուսը։

— Երևի ժամը երկուսը կլինի հիմա,— ասաց նա։— Շուտով վեր կենալու ժամանակն է։ Մերոնք էլ գիշերը տափաստանում են մնում... Հիմի բոլորը թրջված կլինեն...

— Տատիկ,— ասաց Եգորուշկան,— քնել եմ ուզում։

— Պառկիր, սիրելիս, պառկիր...— հորանջելով ու հառաչելով ասաց պառավը։— Տե՜ր Հիսուս Քրիստոս։ Պառկած-քնած էի ու մեկ էլ լսում եմ՝ ոնց որ թե դուռը ծեծում են։ Վեր կացա, նայում եմ՝ ի՜նչ փոթորիկ է ուղարկել աստված... Հարկավոր է մոմ վառել, բայց չեմ գտնում։

Այսպես ինքնիրեն խոսելով, պառավը նստարանի վրայից ինչ-որ լաթ քաշեց, որ երևի իր անկողինն էր, վառարանի մոտի մեխից երկու քուրք իջեցրեց և սկսեց Եգորուշկային համար տեղ պատրաստել։

— Փոթորիկն էլ չի մեղմանում,— մոթմոթաց նա։— Չարը խափանի, չլինի՞ թե մի փորձանք բերի։ Ախր մերոնք տափաստանումն են... Պառկիր, սիրելիս, քնիր... Քրիստոսը քեզ հետ, բալիկս... Սեխը ես չեմ հավաքի, գուցե, որ վեր կենաս, կուտես։

Պառավի հառաչանքներն ու հորանջելը, քնած կնոջ համաչափ շնչառությունը, խրճիթի կիսախավարը և անձրևի աղմուկը լուսամուտից դուրս. այս ամենը տրամադրում էին քնի։ Եգորուշկան անհարմար զգաց պառավի մոտ շորերը հանել։ Նա հանեց միայն սապոգները, պառկեց և ծածկվեց քուրքով։

— Տղան պառկե՞ց,— մի բոպե անց լսվեց Պանտելեյի շշուկը։

— Պառկեց,— նույնպիսի շշուկով պատասխանեց պառավը։— Աստծու պատիժն է, աստծու պատիժը։ Դղրդում է, դղրդում ու վերջը չի երևում։

— Հիմա կդադարի, — շշնջաց Պանտելեյը նստելով։— Մեղմացել է... Տղերքը ցրվեցին տները, իսկ երկուսը մնացին ձիերի մոտ... Տղերքը, այսինքն... Չի կարելի թողնել... Ձիերը կտանեն... Այ, մի քիչ կնստեմ ու կգնամ նրանց փոխարինելու... Չի կարելի, կտանեն...

Պանտելեյը և պառավը նստած էին կողք-կողքի, Եգորուշկայի ոտքերի մոտ և խոսում էին սվսվացող շշուկով, մերթ-ընդմերթ իրենց խոսքն ընդհատելով, հորանջով ու տնքոցով։ Իսկ Եգորուշկան ոչ մի կերպ չէր կարողանում տաքանալ։ Նրա վրա տաք, ծանր քուրք էր գցված, բայց ամբողջ մարմինը ցնցվում էր, ձեռքերն ու ոտքերը, ամբողջ ներսը դողում էր... Նա քուրքի տակ շորերը հանեց, բայց այդ էլ չօգնեց։ Դողը ավելի ու ավելի էր ուժեղանում։

Պանտելեյը գնաց ձիերը պահողներին փոխարինելու և ապա վերադարձավ, իսկ Եգորուշկան դեռ չէր քնել և դողում էր ամբողջ մարմնով։ Ինչ-որ մի բան ճնշում էր նրա գլուխն ու կուրծքը, ծանրանում էր նրա վրա, և նա չգիտեր ինչ է այդ, արդյոք ծերունիների փսփսո՞ցն էր, թե՞ ոչխարի մորթու հոտը։ Ջմերուկից ու սեխից բերանում տհաճ, մետաղի համ էր մնացել։ Մյուս կողմից էլ լվերն էին կծում։

— Պապիկ, մրսո՞ւմ եմ,— ասաց նա և ինքն էլ իր ձայնը չճանաչեց։

— Քնի՛ր, բալիկս, քնի՛ր...— հառաչեց պառավը։

Տիտը բարակ ոտքերով մոտեցավ անկողնին ու ձեռքերը թափահարեց, ապա երկարեց մինչև առաստաղը և դարձավ հողմաղաց։ Հայր Խրիստաֆորը ոչ այնպես, ինչպես նստած էր կառքում, այլ լրիվ զգեստավորված և ցողամանը ձեռքին պտտվեց հողմաղացի շուրջ, սուրբ ջուր ցողաց նրա վրա, և հողմաղացը դադարեց թևերը թափահարել։ Եգորուշկան իմանալով, որ զառանցանք է, աչքերը բացեց։

— Պապի՛,— կանչեց նա։— Ջո՞ւր տուր։

Պատասխան չեղավ։ Եգորուշկան անտանելի շոգում էր և պառկել չէր կարողանում։ Նա վեր կացավ, շորերը հագավ և խրճիթից դուրս գնաց։ Արդեն լույսը բացվում էր։ Երկինքն ամպամած էր, բայց այլևս անձրև չկար։ Դողալով ու թաց վերարկուի մեջ փաթաթվելով, Եգորուշկան անցավ ցեխոտ բակի միջով, ականջ դրեց լռությանը։ Նրա աչքով ընկավ մի փոքրիկ

գոմ, որի եղեգնյա դռնակը կիսաբաց էր։ Եգորուշկան ներս մտավ ու նստեց, մի անկյունում, աթարի վրա։

Նրա ծանրացած գլխում մտքերը խռնվում էին, բերանը ցամաքել էր, մետաղի զզվելի համ էր զգում։ Նա նայեց իր գլխարկին, ուղղեց նրա վրայի սիրամարգի փետուրը և հիշեց, թե մայրիկի հետ ինչպես գնացին այդ գլխարկն առնելու։ Նա ձեռքը գրպանը խրեց և այնտեղից հանեց գորշագույն, կպչուն մածիկի մի գունդ։ Ինչպե՞ս էր այդ մածիկը իր գրպանն ընկել։ Նա մտածեց, հոտ քաշեց. մեղրի հոտ էր գալիս։ Ա՜, դա հրեուհու տված բլիթն է. ինչպե՞ս է թրջվել խեղճը։

Եգորուշկան նայեց իր վերարկուին։ Իսկ նրա վերարկուն մոխրագույն էր, ոսկե խոշոր կոճակներով, կարված սերթուկի ձևով։ Որպես նոր ու թանկագին բան՝ տանը այդ վերարկուն կախում էին ոչ թե նախասենյակում, այլ՝ ննջարանում, մայրիկի զգեստների կողքին։ Հագնել թույլատրվում էր միայն տոն օրերին։ Նայելով այդ վերարկուին՝ Եգորուշկան խղճաց դրան, հիշեց, որ ինքն ու վերարկուն երկուսն էլ թողնված են բախտի քմահաճույքին, որ իրենք այլևս տուն չեն վերադառնա, և հեկեկաց այնպես ուժեղ, որ քիչ մնաց ցած ընկներ աթարի վրայից։

Անձրևից թրջված մի խոշոր, սպիտակ շուն բրդի փնջերը դնչից կախված մտավ գոմը և հետաքրքրությամբ հայացքը հառեց Եգորուշկայի վրա։ Ըստ երևույթին, նա մտածում էր հաչե՞լ, թե՞ չէ։ Ու որոշելով, որ հաչել հարկավոր չէ, նա զգուշությամբ մոտեցավ Եգորուշկային, մածիկը կերավ ու դուրս գնաց։

— Սրանք Վառլամովինն են,— գոռաց մեկը փողոցում։

Կուշտ լալուց հետո Եգորուշկան դուրս եկավ գոմից և ջրափոսը շրջանցելով քայլեց դեպի փողոց։ Հենց դարպասի առաջ ճանապարհին կանգնած էին սայլերը։ Ցեխոտ ոտքերով, թրջված սայլապանները հոգնած ու քնատ շրջում էին սայլերի մոտ աշնան ճանճերի պես կամ նստած էին լծափայտերի վրա։ Եգորուշկան նայեց նրանց ու մտածեց. «Ի՞նչ տխուր ու անհարմար բան է գեղջուկ լինելը»։ Նա մոտեցավ Պանտելեյին և նստեց նրա կողքին, լծափայտի վրա։

— Պապի, մրսում եմ,— ասաց նա դողալով ու ձեռքերը թևքերի մեջ խրելով։

— Ոչինչ, շուտով տեղ կհասնենք,— հորանջեց Պանտելեյը։— Ոչինչ, կտաքանաս։

Գումակը վաղ ճանապարհ ընկավ, որովհետև շոգ չէր։ Եգորուշկան պառկել էր հակի վրա ու դողում էր ցրտից, թեև արևը շուտով երևաց երկնքում ու չորացրեց նրա շորերը, հակը և գետինը։ Հենց որ նա աչքերը փակեց, նորից տեսավ Տիտին ու հողմաղացը։ Սրտխառնոց և ամբողջ մարմնում ծանրություն զգալով՝ Եգորուշկան լարում էր ուժերը, որպեսզի իրենից հեռու վանի այդ պատկերները, բայց հենց որ դրանք չքանում էին, մոնչոցով Եգորուշկայի վրա էր հարձակվում կովարար Դիմովը՝ կարմրած աչքերով, բռունցքները բարձրացրած, կամ թե լսվում էր, թե ինչպես է թախծում նա. «Տխո՜ւր եմ»։ Կազակական ձին նստած անցավ Վառլամովը, ժպիտը դեմքին ու արոսը ձեռքին անցավ նաև Կոնստանտինը։ Եվ ինչպե՞ս այդ բոլոր մարդիկ ծանր էին, անտանելի ու ձանձրացնող։

Մի անգամ, այդ արդեն իրիկնապահին էր, Եգորուշկան գլուխը բարձրացրեց, որ խմելու ջուր խնդրի։ Գումակը կանգնած էր լայն գետով ձգվող մի մեծ կամրջի վրա։ Ցածում, գետի վրա սևին էր տալիս ծուխը, իսկ ծխի միջով երևում էր մի շոգենավ, որը մի բարժա էր քաշում։ Գետի այն կողմը երևում էր մի հսկա սար, որի վրա ցրված էին տներ ու եկեղեցիներ։ Լեռան ստորոտում ապրանքատար վագոնների մոտ վազում էր մի շոգեքարշ...

Առաջ Եգորուշկան երբեք չէր տեսել ո՛չ շոգենավ, ո՛չ շոգեքարշ և ո՛չ էլ մեծ գետ։ Այժմ այդ ամենին նայելով՝ նա ո՛չ վախեցավ, ո՛չ էլ զարմացավ. նրա դեմքին նույնիսկ հետաքրքրության նման բան չարտահայտվեց։ Միայն վատ էր զգում իրեն և շտապեց կրծքի վրա պառկել հակի եզրին։ Սիրտը խառնում էր։ Պանտելեյն այդ տեսնելով, տնքաց և գլուխն օրորեց։

— Հիվանդացել է մեր տղան,— ասաց նա։— Երևի փորն է մրսացրել... տղան... Օտարության մեջ... Վատ է բանը։

VIII

Գումակը կանգ առավ նավահանգստից ոչ հեռու, մի մեծ առևտրական իջևանում։ Սայլից իջնելիս Եգորուշկան մի շատ

ծանոթ ձայն լսեց։ Մեկը նրան օգնում էր իջնել և ասում էր.

— Իսկ մենք դեռ երեկ երեկոյան ենք տեղ հասել... Այսօր ամբողջ օրը ձեզ էինք սպասում։ Երեկ ուզում էինք ձեր հետևից հասնել, բայց չհաջողվեց, ուրիշ ճանապարհով էինք գնացել։ Տես ո՞նց ես տրորել քո վերարկուն։ Քեռիդ լավ կշշպոի քեզ դրա համար։

Եգորուշկան ուշադիր նայեց խոսողի մարմարանման դեմքին և հիշեց, որ դա Դենիսկան է։

— Քեռին ու հայր Խրիստաֆորը հիմա հյուրանոցումն են,— շարունակեց Դենիսկան,— թեյ են խմում։ Գնանք։

Եվ նա Եգորուշկային տարավ դեպի մթին ու մռայլ երկհարկանի մի խոշոր շենք, որ նման էր N-ի աղքատանոցին։ Անցնելով նախասրահը, մթին սանդուղքն ու երկար, նեղ միջանցքը՝ Եգորուշկան և Դենիսկան մտան մի փոքրիկ համար, որտեղ, իրոք, թեյի սեղանի առաջ նստած էին Իվան Իվանիչն ու հայր Խրիստաֆորը։ Տղային տեսնելով՝ երկու ծերունիներն էլ զարմանք և ուրախություն արտահայտեցին։

— Ա-ա՜, Եգոր Նիկոլա-ա՜յիչ,— ծոր տվեց հայր Խրիստաֆորը,— պարոն Լոմոնո՜սով։

— Ա՜, պարոնայք ազնվականներ,— ասաց Կուզմիչովը։— Խնդրե՜մ, համեցեք։

Եգորուշկան վերարկուն հանեց, քեռու և հայր Խրիստաֆորի ձեռքը համբուրեց և սեղան նստեց։

— Է, ինչպե՞ս տեղ հասար, puer bone[1],— հարցերի տարափ տեղաց հայր Խրիստաֆորը թեյ լցնելով նրա համար և ըստ իր սովորության ճաճանչափայլ ժպիտով։— Երևի հոգնե՞լ ես։ Աստված մի՛ արասցե, որ մարդ գումակով կամ եզան սայլով ճամփա գնա։ Գնո՜ւմ ես, գնո՜ւմ, տերը փրկի. նայում ես առաջ, իսկ տափաստանը էլի նույնն է, ինչպես առաջ, ո՛չ վերջն է երևում, ո՛չ վախճանը։ Դա ճամփորդություն չի, այլ՝ սիրտմաշոց։ Այդ ինչ է, թեյ չե՞ս խմում։ Խմի՛ր։ Իսկ մենք այստեղ առանց քեզ, երբ դու գումակի հետ քարշ էիր գալիս, բոլոր գործերը վերջացրել ենք ոնց որ պետք է։ Փառք աստծու։ Բուրդը ծախեցինք Զերեպախինին և այնպես ծախեցինք, որ թող աստված ամեն մեկին այդպիսի հաջողություն տա... Լավ օգուտ արինք։

[1] Լավ տղա։

Յուրայիններին տեսնելուն պես Եգորուշկան գանգատվելու մի անհաղթահարելի պահանջ զգաց։ Նա չէր լսում հայր Խրիստաֆորին և մտածում էր, թե ինչից սկսի և հատկապես ինչից գանգատվի։ Բայց հայր Խրիստաֆորի ձայնը, որ սուր ու անդուրեկան էր թվում, խանգարում էր նրան կենտրոնանալ և խառնում էր նրա մտքերը։ Դեռ հինգ րոպե էլ չնստած՝ նա վեր կացավ սեղանից, մոտեցավ բազմոցին ու պառկեց։

— Այ քեզ բա՜ն,— զարմացավ հայր Խրիստաֆորը։— Իսկ թե՞յը։

Մտածելով, թե ինչից գանգատվի, Եգորուշկան ճակատը դեմ տվեց բազմոցի մեջքին և հանկարծ սկսեց հեկեկալ։

— Այ քեզ բա՜ն,— կրկնեց հայր Խրիստաֆորը տեղից վեր կենալով և բազմոցին մոտենալով։— Գեորգի, ի՞նչ է եղել։ Ինչո՞ւ ես լալիս։

— Ես... ես հիվանդ եմ...— խոսեց Եգորուշկան։

— Հիվա՞նդ ես,— շփոթվեց հայր Խրիստաֆորը։— Այ, այդ արդեն լավ չի, ախպերս... Բա կարելի՞ է ճանապարհին հիվանդանալ։ Ա՛յ-ա՛յ-ա՛յ, ի՞նչ տղա ես դու, ախպերս... հը՞։

Նա ձեռքը դրեց Եգորուշկայի գլխին, այտը շոշափեց ու ասաց։

— Այո, գլուխդ տաք է... Երևի մրսել ես կամ որևէ բան ես կերել... Դու աստված կանչիր։

— Խինին չտա՞նք դրան,— շփոթված ասաց Իվան Իվանիչը։

— Չէ, լավ կլինի որևէ տաք բան ուտի... Գեորգի, սուպ կուզե՞ս, հա՞։

— Չեմ... չեմ ուզում...— պատասխանեց Եգորուշկան։

— Դողացնո՞ւմ ես թե ինչ։

— Առաջ դողացնում էի, իսկ հիմա... Հիմա տաքություն եմ տալիս։ Ամբողջ մարմինս ցավում է...

Իվան Իվանիչը մոտեցավ բազմոցին, ձեռքը դրեց Եգորուշկայի ճակատին, շփոթված տնքաց ու վերադարձավ սեղանի մոտ։

— Լսիր ինձ,— ասաց հայր Խրիստաֆորը,— դու շորերդ հանիր ու պառկիր քնելու, քեզ քնել է հարկավոր։

Նա Եգորուշկային օգնեց շորերը հանել, մի բարձ տվեց նրան և ծածկեց վերմակով, իսկ վերմակի վրայից էլ գցեց Իվան Իվանիչի վերարկուն, ապա մատների ծայրերի վրա հեռացավ և նստեց սեղանի մոտ։ Եգորուշկան աչքերը փակեց և իսկույն նրան այնպես թվաց, թե ինքը հյուրանոցում չէ, այլ՝ մեծ ճանապարհին, խարույկի մոտ։ Եմելյանը ձեռք թափ տվեց, իսկ Դիմովը կարմրած աչքերով պառկել է փորի վրա և ծաղրաբար նայում է Եգորուշկային։

— Խփե՛ք, դրան, խփե՛ք դրան,— գոչեց Եգորուշկան։

— Զառանցում է,— կիսաձայն խոսեց հայր Խրիստաֆորը։

— Գլխացավանք է,— հառաչեց Իվան Իվանիչը։

— Հարկավոր է մարմինը ձեթով ու քացախով տրորել։ Աստված տա՝ մինչև վաղը կլավանա։

Ծանր տեսիլքներից ազատվելու համար Եգորուշկան աչքերը բաց արեց և սկսեց նայել կրակին։ Հայր Խրիստաֆորն ու Իվան Իվանիչն արդեն թեյը վերջացրել էին և շշուկով ինչ-որ բան էին խոսում։ Առաջինը երջանիկ ժպտում էր և երևի ոչ մի կերպ չէր կարողանում մոռանալ, որ բրդից լավ օգուտ է արել։ Նրան ուրախացնում էր ո՛չ այնքան օգուտը, որքան այն միտքը, որ տուն գնալով կհավաքի իր ամբողջ բազմանդամ ընտանիքը, խորամանկորեն աչքով կանի ու կքրքջա։ Սկզբում բոլորին կխաբի ու կասի, որ բուրդը իր գնից պակաս է վաճառել, իսկ հետո տռուզ թղթապանակը կտա իր փեսա Միխայլոյին ու կասի. «Ա՛ռ, ստացի՛ր։ Ա՛յ թե ինչպես պետք է գործ անել»։ Այնինչ Կուզմիչովը գոհ չէր։ Նրա դեմքն առաջվա պես արտահայտում էր գործարար չորություն ու հոգս։

— Է՛հ, թե որ իմանայի Զերեսլախինն այդպիսի գին կտա՛,— ասում էր նա կիսաձայն,— այն երեք հարյուր փութը ես տանը Մակարովին չէի ծախի։ Ափսո՜ս։ Բայց ո՞վ կիմանար, որ այստեղ գինը բարձրացրել են։

Սպիտակ վերնաշապկով մի մարդ ինքնաեռը հավաքեց և անկյունում, սրբապատկերի առջև վառեց կանթեղը։ Հայր Խրիստաֆորը ինչ-որ բան փսփսաց նրա ականջին։ Մարդը դավադրի նման խորհրդավոր արտահայտություն տվեց իր դեմքին, իբր թե հասկանում եմ, դուրս գնաց և քիչ հետո վերադառնալով բազմոցի մոտ դրեց մի աման։ Իվան Իվանիչը հատակին տեղ փռեց իր համար, մի քանի անգամ հորանջեց, ծուլորեն աղոթեց ու պառկեց։

— Իսկ վաղը ես մտածում եմ մայր եկեղեցի գնալ...— ասաց հայր Խրիստաֆորը։— Այնտեղի լուսարարն ինձ ծանոթ

է։ Կուզենայի պատարագից հետո սրբազանի մոտ գնալ, բայց, ասում են, հիվանդ է։

Նա հորանջեց և լամպը մարեց։ Այժմ լույս էր տալիս միայն կանթեղը։

— Ասում են՝ չի ընդունում,— շարունակեց հայր Խրիստաֆորը, շորերը հանելով։— Այդպես էլ կգնամ առանց տեսնվելու։

Նա կապան հանեց, և Եգորուշկան իր առջև տեսավ Ռոբինզոն Կրուզոյին։ Այդ Ռոբինզոնն ինչ-որ բան խառնեց պնակի մեջ, մոտեցավ Եգորուշկային և շշնջաց։

— Լոմոնոսով, քնա՞ծ ես։ Հապա մի վեր կաց։ Մարմնիդ յուղ ու քացախ քսեմ։ Կօգնի, դու միայն աստված կանչիր։

Եգորուշկան արագ վեր կացավ ու նստեց։ Հայր Խրիստաֆորը նրա շապիկը հանեց և, կուչ-կուչ գալով ու ծանր շնչելով, ասես հենց ինքն էր խուտուտ գալիս, սկսեց Եգորուշկայի կուրծքը շփել։

— Հանուն հոր և որդու և հոգույն սրբո...— շշնջում էր նա։— Մեջդ վերև պառկիր... Ա՛յ, այդպես։ Վաղն առողջացած կլինես, միայն թե էլ մեղք չգործես... Կրակի պես տաք ես։ Երևի փոթորկի ժամանակ ճանապարհի՞ն եք եղել։

— Ճանապարհին էինք։

— Դե, իհարկե, կհիվանդանայիր։ Հանուն հոր և որդո և հոգույն սրբո... Դե, իհարկե, կհիվանդանայիր։

Ջեթ ու քացախ քսելուց հետո հայր Խրիստաֆորը Եգորուշկայի շապիկը հագցրեց, նրան ծածկեց, խաչակնքեց ու հեռացավ։ Հետո Եգորուշկան տեսավ, թե ինչպես էր նա աղոթում աստծուն։ Երևի ծերունին շատ սաղմոսներ անգիր գիտեր, որովհետև երկար ժամանակ սրբապատկերի առաջ կանգնած շշնջում էր։ Աղոթքը վերջացնելով, նա խաչակնքեց լուսամուտները, դուռը, Եգորուշկային, Իվան Իվանիչին, առանց բարձի պառկեց բազմոցին և ծածկվեց իր կապայով։ Նախասենյակում ժամացույցը տասը խփեց։ Եգորուշկան հիշեց, թե դեռ որքան շատ ժամանակ է մնացել մինչև առավոտ, տխուր-տրտում երեսը կպցրեց բազմոցի մեջքին և այլևս չէր աշխատում ազատվել մռայլ, հոգեմաշ տեսիլքներից։ Բայց առավոտը շատ ավելի շուտ բացվեց, քան նա կարծում էր։

Նրան թվում էր, թե երկար չի պառկել ճակատը բազմոցի մեջքին սեղմած, բայց երբ աչքերը բացեց, սենյակի երկու

լուսամուտներից արդեն դեպի հատակն էին ձգվել արեգակի շեղ ճառագայթները։ Հայր Խրիստաֆորը և Իվան Իվանիչը չկային։ Սենյակը հավաքված էր, լուսավոր ու դուրեկան և հայր Խրիստաֆորին հատուկ բուրմունք էր կանգնած. հայր Խրիստաֆորը միշտ նոճիի ու տերեփուկի բուրմունք էր արձակում (տանը նա տապանակների համար զարդ էր շինում և տերեփուկից՝ ցողիչ, ուստիև հագեցած էր այդ բուրմունքով)։ Եգորուշկան նայեց բարձին, շեղ ճառագայթներին, իր սապոգներին, որոնք այժմ մաքրված, դրված էին բազմոցի մոտ, և ծիծաղեց։ Նրան տարօրինակ թվաց, որ ինքը հակի վրա չի, որ շուրջն ամեն ինչ չոր է և առաստաղին ոչ կայծակ կա, ոչ որոտ։

Նա ցատկեց բազմոցից և սկսեց հագնվել։ Տրամադրությունը հիանալի էր, երեկվա հիվանդությունից միայն մի թեթև թուլություն էր մնացել ոտքերում և պարանոցում։ Նշանակում է՝ ձեթն ու քացախն օգնել էին։ Նա հիշեց շոգենավը, շոգեքարշը, լայնահուն գետը, որոնք աղոտ կերպով տեսել էր երեկ, և այժմ շտապում էր շուտ հագնվել, որպեսզի վագի նավահանգիստ և նայի նրանց։ Երբ լվացվելուց հետո նա իր դումաշե վերնաշապիկն էր հագնում, հանկարծ դռան փակը չբխկաց, և շեմքում երևաց հայր Խրիստաֆորը՝ լայնեզր ցիլինդրը գլխին, գավազանը ձեռքին, մետաքսե դարչնագույն պարեգոտը պարուսինե կապայի վրայից հագած։ Ժպտալով ու շողալով (հենց նոր եկեղեցուց վերադարձած ծերունիները միշտ էլ շողշողում են), նա սեղանին դրեց նշխարքը և ինչ-որ մի կապոց, աղոթեց ու ասաց.

— Աստված ողորմացել է քեզ։ Ինչպե՞ս է առողջությունդ։

— Հիմա լավ եմ,— պատասխանեց Եգորուշկան՝ նրա աջը համբուրելով։

— Փա՜ռք աստծո... Իսկ ես պատարագից եմ գալիս... Գնացել էի իմ ծանոթ լուսարարին տեսնելու։ Ինձ թեյի հրավիրեց, բայց չգնացի։ Ջեմ սիրում առավոտը վաղ-վաղ հյուր գնալ։ Աստված իրենց հետ։

Նա պարեգոտը հանեց, ձեռքով կուրծքը շփեց և առանց շտապելու բաց արեց կապոցը։ Եգորուշկան տեսավ մի թիթեղյա ման խավիար, զուրգելի մի կտոր և մի ֆրանսիական հաց։

— Անցնում էի ձկան խանութի մոտով ու գնեցի,— ասաց հայր Խրիստաֆորը։— Լի օր է, շռայլություն անել չի կարելի,

բայց մտածեցի՝ տանը հիվանդ կա, ուրեմն՝ ներելի է։ Իսկ խավիարը շատ լավն է, թառափի խավիար է...

Սպիտակ վերնաշապկով մարդը բերեց ինքնաեռը և ամանները։

— Կեր,— ասաց հայր Խրիստաֆորը մի կտոր հացի վրա խավիար քսելով և Եդորուշկային տալով։— Հիմա կեր ու ման արի, իսկ երբ ժամանակը գա՝ կսկսես սովորել։ Բայց տե՛ս, սովորելիս ուշադիր եղիր ու ջանասեր, որպեսզի բան դուրս գա։ Ինչ անգիր է հարկավոր, անգիր սովորիր, իսկ ինչ հարկավոր է մտքում պահել քո խոսքերով, այն էլ քո խոսքերով սովորիր։ Եվ այնպես արա, որ բոլոր գիտությունները սովորես։ Մարդ կա՝ մաթեմատիկան շատ լավ գիտե, բայց Պյոտր Մոգիլի մասին չի էլ լսել, մարդ էլ կա՝ Պյոտր Մոգիլի մասին գիտե, բայց լուսնի մասին ոչ մի բան բացատրել չի կարող։ Չէ՛, դու այնպես սովորիր, որ ամեն բան հասկանաս։ Սովորիր լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն... աշխարհագրություն, իհարկե, պատմություն, աստվածաբանություն, փիլիսոփայություն, մաթեմատիկա... Իսկ երբ ամեն բան կսովորես, առանց շտապելու, աղոթքներով, ջանասիրությամբ, այն ժամանակ ծառայության կմտնես։ Երբ ամեն ինչ իմանաս, քեզ համար ամեն ճամփա հեշտ կլինի։ Դու միայն սովորիր ու շնորհք հավաքիր, աստված ինքը կասի, թե ինչ դառնաս, բժիշկ, դատավոր թե ինժեներ...

Հայր Խրիստաֆորը մի փոքրիկ կտոր հացի վրա մի քիչ խավիար քսեց, դրեց բերանը և ասաց.

— Պողոս Առաքյալն ասում է. մի՛ հետևեք խորթ և օտար ուսմունքներին։ Իհարկե, եթե գրքացներին, վայրահաչներին դիմես, կամ ոգիներ կանչես այն աշխարհից, ինչպես Սավուղը, կամ այնպիսի գիտություններ սովորես, որ ո՛չ քեզ է օգուտ, ո՛չ ուրիշներին, ավելի լավ է չսովորել։ Պետք է սովորել միայն այն, ինչ աստված օրհնել է։ Դու մտածիր... Սուրբ առաքյալները խոսում էին բոլոր լեզուներով, դու էլ լեզուներ սովորիր։ Վասիլի Մեծը մաթեմատիկա ու փիլիսոփայություն է սովորեցրել, դու էլ սովորիր, սուրբ Նեստորը պատմություն է գրել, դու էլ սովորիր ու պատմություն գրիր։ Սրբերին նմանվիր...

Հայր Խրիստաֆորը պնակից թեյ կում արեց, բեղերը սրբեց և գլուխն օրորեց։

— Լավ է,— ասաց նա,— ես հին ձևով եմ սովորել, շատ բան արդեն մոռացել եմ, բայց էլի այլ կերպ եմ ապրում, քան ուրիշները։ Նույնիսկ համեմատել չի կարելի։ Օրինակ, որևէ տեղ, մի մեծ հասարակության մեջ, ճաշի ժամանակ կամ ժողովում որևէ բան ես ասում, լատիներեն, կամ թե պատմությունից, կամ փիլիսոփայությունից, և մարդկանց հաճելի է լինում, և հենց ինձ էլ հաճելի է լինում... Կամ թե ասենք՝ երբ գալիս է գավառական դատարանը և հարկավոր է երդում տալ, մյուս բոլոր քահանաները քաշվում են, իսկ ես դատավորների հետ, դատախազի հետ, փաստաբանների հետ ոնց որ ախպեր. ուսումնականների պես եմ խոսում, թեյ եմ խմում նրանց հետ, կատակներ եմ անում, ինչ չեմ իմանում՝ հարցնում եմ... Եվ նրանց դուր է գալիս։ Բա՛, այդպես է, ախպերս... Ուսումը լույս է, տգիտությունը՝ խավար։ Սովորիր։ Իհարկե, հեշտ բան չի, հիմիկվա ժամանակ ուսումը թանկ է նստում... Քո մայրը որբևայրի է, թոշակով է ապրում, բայց ոչինչ...

Հայր Խրիստաֆորը վախեցած նայեց դռանը և շշուկով շարունակեց.

— Իվան Իվանիչը կօգնի։ Նա քեզ չի թողնի։ Ինքը երեխաներ չունի և քեզ կօգնի։ Մի՛ վախենա։

Նա դեմքին լուրջ արտահայտություն տվեց և ավելի կամաց շշնջաց.

— Միայն թե տե՛ս, Գեորգի, աստված քեզ պահապան, մորդ ու Իվան Իվանիչին չմոռանաս։ Պատվիրանն ասում է՝ հարգիր մորդ, իսկ Իվան Իվանիչը քո բարերարն է և հորդ տեղն է։ Թե որ դու ուսում առնես և, աստված չանի, սկսես փքվել ու մարդկանց արհամարհել, որ նրանք քեզնից անխելք են, այն ժամանակ վա՛յ քեզ։

Հայր Խրիստաֆորը ձեռքը վեր բարձրացրեց և բարակ ձայնով կրկնեց.

— Վա՛յ քեզ, վա՛յ քեզ։

Հայր Խրիստաֆորի լեզուն բացվել էր և, ինչպես ասում են. համի էր ընկել։ Նա մինչև ճաշ էլ չէր վերջացնի, բայց դուռը բացվեց, և ներս մտավ Իվան Իվանիչը։ Քեռին շտապ բարևեց, սեղան նստեց և սկսեց արագ-արագ թեյ խմել։

— Դե՛հ, բոլոր գործերս պրծա,— ասաց նա։— Հենց այսօր էլ կարելի էր տուն գնալ, բայց դեռ Եդորի մասին պիտի հո-

գալ։ Հարկավոր է սրան տեղավորել։ Քույրս ասում էր, որ այստեղ ապրում է իր ընկերուհին՝ Նաստասյա Պետրովնան, գուցե հենց նա իր մոտ ընդունի սրան։

Նա իր թղթապանակը պտտեց, այնտեղից մի տրորված նամակ հանեց ու կարդաց.

— «Մալայա Նիժնյայա փողոց, Նաստասյա Պետրովնա Տոսկունովա, սեփական տուն»։ Հարկավոր է հենց հիմա գնալ սրան գտնել։ Գլխացավանք է հա՜։

Շուտով թեյից հետո Իվան Իվանիչը ու Եգորուշկան դուրս եկան բակից։

— Գլխացավանք է,— մոթմոթաց քեռին,— կպել ես ինձ կռատուկի պես, է՜հ, աստված քեզ հետ։ Դու ուսում պիտի առնես. անուն հանես, իսկ ես շարշարվում եմ քո ձեռքին...

Երբ նրանք բակի միջով անցնում էին, սայլերն ու սայլապաններն արդեն չկային, դեռ վաղ առավոտյան նրանք բոլորը գնացել էին նավահանգիստ։ Բակի մի հեռավոր անկյունում սևին էր տալիս ծանոթ բրիչկան։ Ձիերը նրա մոտ կանգնած վասակ էին ուտում։

«Մնա՜ս բարով, բրիչկա»,— մտածեց Եգորուշկան։

Սկզբում երկար ժամանակ բարձրանում էին լեռնիվեր, հետո անցան շուկայի մեծ հրապարակը։ Այդտեղ Իվան Իվանիչը քաղաքապահ ոստիկանին հարցրեց, թե որտե՞ղ է Մալայա Նիժնյայա փողոցը։

— Է՜,— ծիծաղեց ոստիկանը,— հեռո՜ւ, այն կողմն է, որտեղ դաշտն է։

Ճանապարհին կառքեր էին հանդիպում, բայց այնպիսի թուլություն, ինչպիսին կառքով մի տեղ գնալն է, քեռին իրեն թույլ էր տալիս միայն բացառիկ դեպքերում և մեծ տոներին։ Երկար ժամանակ նա և Եգորուշկան քայլում էին սալարկած փողոցներով, հետո սկսեցին գնալ այն փողոցներով, որտեղ միայն մայթերն էին սալարկած, իսկ փողոցները քարած չէին, վերջապես ընկան այնպիսի փողոցներ, որտեղ ո՜չ սալհատակ կար, ո՜չ մայթ։ Երբ ոտքերն ու լեզուն նրանց հասցրեց Մալայա Նիժնյայա փողոցը, երկուսն էլ կարմրել էին հոգնածությունից և գլխարկները վերցրած՝ ճակատներն էին սրբում։

— Ասացեք խնդրեմ,— դիմեց Իվան Իվանիչը մի ծերունու, որը նստած էր դարպասի մոտ նստարանի՛ն,— որտե՞ղ է Նաստասյա Պետրովնա Տոսկունովայի տունը։

— Այստեղ ոչ մի Տոսկունովա չկա,— պատասխանեց ծերունին մի պահ մտածելով։— Գուցե Տիմոշենկո՞։

— Ո՜չ, Տոսկունովա...

— Ներեցեք, Տոսկունովա չկա...

Իվան Իվանիչը ուսերը թոթվեց և առաջ գնաց։

— Իզուր մի՜ ման եկեք,— կանչեց նրա հետևից ծերունին։— Ասում եմ՝ չկա, ուրեմն չկա։

— Լսեցեք, մորքուր,— դիմեց Իվան Իվանիչը մի պառավի, որ փողոցի անկյունում տանձ ու արևածաղկի սերմ էր ծախում, — որտե՞ղ է Նաստասյա Պետրովնա Տոսկունովայի տունը։

Պառավը զարմացած նայեց նրան ու ծիծաղեց։

— Նաստասյա Պետրովնան հիմա իր տա՞ունն է ապրում որ,— ասաց նա։— Աստվա՜ծ իմ, արդեն ութ տարի է, ինչ նա իր աղջիկը մարդու է տվել և տունն էլ փեսային է թողել։ Հիմա այնտեղ փեսան է ապրում։

Իսկ նրա աչքերն ասում էին. «Ա՜խ դուք, հիմարնե՛ր, ինչպե՞ս է որ այս հասարակ բանը չեք իմանում»։

— Իսկ ինքը որտե՞ղ է ապրում հիմա,— հարցրեց Իվան Իվանիչը։

— Աստվա՜ծ իմ,— ասաց պառավը զարմանքի ծափ զարկելով,— վաղուց է նա ուրիշի տանն ապրում, վարձով։ Արդեն ութ տարի է, ինչ իր տունը փեսին է թողել, ի՜նչ եք ասում։

Նա երևի սպասում էր, որ Իվան Իվանիչը նույնպես կզարմանա ու կգոչի. «Չի՜ կարող պատահել», բայց սա շատ հանդիստ հարցրեց.

— Իսկ որտե՞ղ է նրա բնակարանը։

Պառավը թևքերը վեր քաշեց և մերկ ձեռքով ցույց տալով սկսեց գոռալ սուր, բարակ ձայնով.

— Գնացեք շարունակ ուղիղ, ուղի՜ղ առաջ... Մի կարմիր տուն կա, հենց որ այդ տունն անցնեք, ձախ կողմը մի նեղ փողոց կլինի։ Դուք այդ փողոցով գնացեք և մտեք աջ կողմի երրորդ դարպասը։

Իվան Իվանիչն ու Եգորուշկան հասան կարմիր տանը, շուռ եկան դեպի ձախ, մտան նեղ փողոցը, մոտեցան աջ կողմի երրորդ դարպասին։ Այդ մոխրագույն շատ հին դարպասի երկու կողմերում ձգված էր մոխրագույն ցանկապատ, որ մեծ-մեծ ճեղքեր ուներ։ Ցանկապատի աջ կողմը խիստ առաջ էր

թեքվել և սպառնում էր ընկնել, ձախ կողմը թեքվել էր հետ, դեպի բակը, իսկ դարպասը կանգնած էր ուղիղ և թվում էր, թե դեռ մտածում է ո՞ր կողմը թեքվի, առա՞ջ, թե հետ։ Իվան Իվանիչը դռնակը բացեց և Եգորուշկայի հետ տեսավ մի մեծ բակ, որ ծածկված էր կռատուկով ու այլ մոլախոտերով։ Դարպասից մի հարյուր քայլի վրա կանգնած էր մի փոքրիկ տնակ՝ կարմիր տանիքով և կանաչ փեղկերով։ Մի ինչ-որ հաստլիկ կին թևքերը վեր քշտած և գոգնոցը բարձրացրած կանգնել էր բակի մեջտեղը, ինչ-որ բան էր թափում գետնին և գոռում նույնպիսի բարակ, սուր ձայնով, ինչպես փողոցում արևածաղկի սերմ ծախող պառավը։

— Ջո՛ւ-ջո՛ւ, ջո՛ւ։

Նրա հետևը նստած էր սուր ականջներով մի շեկ շուն։ Հյուրերին տեսնելով՝ շունը վազեց դեպի դռնակը և հաչեց տենոր ձայնով (բոլոր շեկ շները տենորով են հաչում)։

— Ո՞ւմ եք ուզում,— ձայն տվեց կինը, ձեռքով հով անելով աչքերին։

— Բարև ձեզ,— նույնպես ձայն տվեց Իվան Իվանիչը՝ ձեռնափայտով հետ քշելով շեկ շանը։— Ասացեք խնդրեմ, այստե՞ղ է ապրում Նաստասյա Պետրովնա Տոսկունովան։

— Այստեղ է, ի՞նչ կա որ։

Իվան Իվանիչը և Եգորուշկան մոտեցան նրան։ Նա կասկածանքով նայեց նրանց և կրկնեց։

— Ի՞նչ կա։

— Գուցե հենց դո՞ւք եք Նաստասյա Պետրովնան։

— Հա, ես եմ։

— Շատ հաճելի է... Գիտե՞ք ինչ, ձեզ բարև է ուղարկել ձեր վաղուցվա ընկերուհի Օլգա Իվանովնա Կնյազևան։ Ահա, այս էլ նրա որդին է։ Իսկ ես, գուցե կհիշեք, նրա հարազատ եղբայրն եմ, Իվան Իվանիչը... Ախր դուք մեր N-ից եք... Մեզ մոտ եք ծնվել ու ամուսնացել...

Լռություն տիրեց։ Հաստլիկ կինը աչքերը չռեց Իվան Իվանիչի վրա, կարծես չհավատալով կամ չհասկանալով, թե ինչ է ասում նա, ապա հանկարծ վեր թռավ, ձեռքերն իրար զարկեց, նրա գոգնոցից վարսակը թափվեց, աչքերը լցվեցին արցունքով։

— Օլգա Իվանովնա՛ն,— ճչաց նա՝ հուզմունքից ցածր շնչելով։ Իմ հարազա՛տը։ Ա՜խ, աստվա՜ծ իմ. ի՜նչ եմ քարացել հիմարի պես։ Ա՜խ, իմ անուշիկ հրեշտակս...

Նա գրկեց Եգորուշկային, նրա երեսը թրջեց արցունքով ու սկսեց լաց լինել։

— Տե՜ր իմ աստված,— ասաց նա մատները ճմռթելով։— Օլգայի տղա՞ն է։ Ա՜յ քեզ ուրախություն։ Իսկևիսկ մայրն է։ Ինչքա՞ն է նման։ Դե ինչո՞ւ եք այդտեղ կանգնել։ Եկե՛ք, ներս համեցեք։

Լալով, հեծկլտալով ու շարունակ խոսելով, նա շտապեց դեպի տուն։ Հյուրերը հետևեցին նրան։

— Դեռ տունը չեմ հավաքել,— ասաց նա հյուրերին տանելով փոքրիկ, տոթ դահլիճը, որ ամբողջովին զարդարված էր սրբապատկերներով ու ծաղկամաններով։— Ա՜խ, սուրբ տիրամեր։ Վասիլիսա, արի գոնե փեղկերը բաց արա։ Հրեշտա՜կս, անմա՜ն տղա։ Ես բոլորովին չգիտեի, որ Օլեչկան այսպիսի տղա ունի։

Երբ նա հանգստացավ և հյուրերին վարժվեց, Իվան Իվանիչը ուզեց նրա հետ խոսել առանձին։ Եգորուշկան անցավ մյուս սենյակը։ Այդտեղ դրված էր մի կարի մեքենա, լուսամուտում կախված էր մի վանդակ՝ մեջը մի սարյակ, և կային նույնքան շատ սրբապատկերներ ու ծաղիկներ, որքան դահլիճում։ Մեքենայի մոտ անշարժ կանգնած էր մի ինչ-որ աղջիկ՝ արևախանձ, թմբլիկ թշերով, ինչպես Տիտը, և մաքուր չթե հագուստով։ Նա աչքերը չէր թարթում, նայում էր Եգորուշկային և, ըստ երևույթին, իրեն շատ անհարմար վիճակում էր զգում։ Եգորուշկան նայեց նրան, մի պահ լռեց, ապա հարցրեց.

— Անունդ ի՞նչ է։

— Ատկա...

Այդ նշանակում էր՝ Կատկա։

— Նա ձեզ մոտ կապրի,— մյուս սենյակում շշնջում էր Իվան Իվանիչը,— եթե դուք այնքան բարի լինեք, իսկ մենք ամսական տասը ռուբլի կվճարենք ձեզ։ Տղան խելոք տղա է, երես առած չի...

— Ա՜խ, չեմ իմանում, թե ինչ ասեմ ձեզ, Իվան Իվանիչ,— լացակումած հառաչում էր Նաստասյա Պետրովնան։ — Տասը ռուբլին լավ փող է, բայց ուրիշի երեխան վերցնելը դժվար բան է։ Հանկարծ հիվանդանա, կամ ով գիտի...

Երբ Եգորուշկային կանչեցին այդտեղ, Իվան Իվանիչն արդեն ոտքերին կանգնած հրաժեշտ էր տալիս։

— Դե լավ, ուրեմն հենց ձեզ մոտ էլ կմնա,— ասում էր նա։— Մնաք բարով։ Դե, դու մնա, Եգոր,— ասաց նա դառնալով իր քրոջ որդուն։— Զարություն չանես, Նաստասյա Պետրովնային կլսես... մնաս բարով։ Ես վաղն էլ կգամ։

Եվ նա գնաց։ Նաստասյա Պետրովնան մի անգամ էլ գրկեց Եգորուշկային, նրան հրեշտակ անվանեց և արտասվալից աչքերով սկսեց սեղան պատրաստել։ Երեք րոպե չանցած՝ Եգորուշկան արդեն Նաստասյա Պետրովնայի կողքին սեղան նստած պատասխանում էր նրա անվերջ հարցերին և ուտում յուղալի, տաք շչին։

Իսկ երեկոյան էլի նույն սեղանի մոտ նստած, գլուխը թևին դրած լսում էր Նաստասյա Պետրովնային։ Նա մերթ լալով, մերթ ծիծաղելով պատմում էր Եգորուշկային նրա մոր ջահելությունը, իր ամուսնությունը, իր երեխաների մասին... Վառարանի մեջ ծղրտում էր ծղրիդը և հազիվ լսելի դժժում էր լամպը։ Տանտիրուհին խոսում էր կիսաձայն և շուտ-շուտ հուզմունքից ցած էր գցում մատնոցը, իսկ Կատկան, նրա թոռնիկը, մտնում էր սեղանի տակ մատնոցը բերելու և ամեն անգամ երկար նստում էր այնտեղ, հավանորեն Եգորուշկայի ոտքերն էր դիտում։ Իսկ Եգորուշկան լսում էր, ննջում և դիտում պառավի դեմքը, նրա մազմզոտ խալը, արցունքի հետքերը... Եվ նա տխուր էր, շատ տխուր։ Նրան քնելու պառկեցրին սնդուկի վրա և նախազգուշացրին, որ եթե գիշերը սոված լինի, դուրս գա նախասենյակ և վերցնի լուսամուտում դրված ճուտը, որ ծածկված է պնակով։

Մյուս օրն առավոտյան Իվան Իվանիչը և հայր Խրիստաֆորը եկան մնաս բարևի։ Նաստասյա Պետրովնան ուրախացավ և ուզում էր ինքնաեռը գցել, բայց Իվան Իվանիչը, որը շատ էր շտապում, ձեռք թափ տվեց և ասաց.

— Թեյի ժամանակ չունենք։ Մենք հիմա գնալու ենք։

Հրաժեշտից առաջ բոլորը նստեցին և մի րոպե լուռ մնացին։ Նաստասյա Պետրովնան խոր հառաչեց և արտասվալից աչքերով նայեց սրբապատկերներին։

— Դե՛հ,— սկսեց Իվան Իվանիչը տեղից վեր կենալով,— նշանակում է՝ դու մնում ես...

Հանկարծ նրա դեմքից չքացավ գործարար չորությունը, նա մի քիչ կարմրեց, տխուր ժպտաց և ասաց.

— Դե տե՛ս, լավ սովորիր... Մայրիկիդ չմոռանաս և Նաստասյա Պետրովնային լսիր... Եթե լավ սովորես, Եգոր, ես քեզ անտեր չեմ թողնի։

Նա գրպանից քսակը հանեց, մեջքը դարձրեց Եգորուշկայի կողմը, մանր դրամի մեջ երկար պտտելով գտավ մի տասը կոպեկանոց և տվեց Եգորուշկային։ Հայր Խրիստաֆորը հառաչեց ու առանց շտապելու Եգորուշկային օրհնեց։

— Հանուն հոր և որդու և հոգույն սրբո... Սովորիր,— ասաց նա։— Զարշարվիր, ախպերս... Եթե մեռա, հիշիր ինձ։ Ահա, ինձնից էլ մի տասը կոպեկանոց ստացիր...

Եգորուշկան նրա ձեռքը համբուրեց և լաց եղավ։ Հոգու խորքում ինչ-որ մի բան նրան շշնջում էր, որ այլևս այդ ծերունուն չի տեսնելու։

— Ես, Նաստասյա Պետրովնա, արդեն խնդիր եմ տվել գիմնազիա,— ասաց Իվան Իվանիչը այնպիսի ձայնով, ասես սենյակում ննջեցյալ կար։— Օգոստոսի յոթին դուք սրան կտանեք քննության... Դեհ, մնաք բարով։ Աստված ձեզ հետ։ Մնաս բարով, Եգոր։

— Դե գոնե թեյ խմեիք,— հառաչելով ասաց Նաստասյա Պետրովնան։

Աչքերը լցված արցունքի միջով Եգորուշկան չտեսավ, թե ինչպես դուրս եկան քեռին ու հայր Խրիստաֆորը։ Նա նետվեց լուսամուտի մոտ, բայց բակում էլ նրանք արդեն չկային, և դարպասի մոտից իր պարտքը կատարածի արտահայտությամբ վազելով հետ էր գալիս շեկ շունը, որը հենց նոր հաչել էր։ Եգորուշկան, ինքն էլ չիմանալով ինչու, տեղից պոկվեց ու սենյակներից դուրս վազեց։ Երբ նա դարպասից դուրս թռավ, Իվան Իվանիչն ու հայր Խրիստաֆորը, թափահարելով առաջինն իր կեռագլուխ ձեռնափայտը, երկրորդը՝ գավազանը, արդեն շուռ էին գալիս փողոցի անկյունից։ Եգորուշկան զգաց, որ այդ մարդկանց հետ իր համար ծխի պես ընդմիշտ չքացավ այն ամենը, ինչ ինքն ապրել էր մինչև այժմ։ Նա ուժասպառ նստեց նստարանին և դառն արցունքներով ողջունեց այն նոր, անծանոթ կյանքը, որ այժմ սկսվում էր նրա համար...

Ինչպիսի՞ն է լինելու այդ կյանքը։

ԻՄ ԿՅԱՆՔԸ

I

Մի գավառացու պատմություն

Կառավարիչն ասաց. «Ձեզ պահում եմ միայն ձեր պատվելի հոր նկատմամբ ունեցած հարգանքիս պատճառով, թե չէ վաղուց կթողնեի այստեղից»։ Ես պատասխանեցի. «Ձե՛ր դերազանցություն, դուք չափից ավելի եք շոյում ինքնասիրությունս, կարծելով, թե ես կարող եմ թռչել»։ Հետո լսեցի, թե ինչպես նա ասաց. «Դո՛ւրս տարեք այս պարոնին, նա ազդում է ջղերիս վրա»։

Մի երկու օր հետո ինձ հեռացրին։ Եվ այսպես, ամբողջ ժամանակ, ինչ արդեն չափահաս եմ, ի մեծ դառնություն քաղաքի ճարտարապետ իմ հոր, փոխել եմ ինը պաշտոն։ Ճանապարհորդություններում եմ ծառայել, բայց բոլոր այդ ինը պաշտոններն էլ ջրի կաթիլների պես նման են եղել մեկը մյուսին. պարտավոր էի նստել, գրել, ականջ դնել տխմար կամ բռի նկատողություններին ու սպասել, թե ինձ երբ կհեռացնեն։

Երբ զնացի հորս մոտ, նա նստած էր բազկաթոռի մեջ խոր թաղված, աչքերը փակ։ Նրա նիհար ու սմքած, ածիլված մասերում կապտավուն բծերով դեմքը (հայրս նման էր կաթոլիկ ծեր երգեհոնահարի) հեղություն ու խոնարհություն էր արտահայտում։ Չպատասխանելով իմ բարևին և աչքերը խուփ, նա ասաց.

— Եթե իմ թանկագին կինը՝ մայրդ, ողջ լիներ, քո կյանքը նրա համար կդառնար մշտական վշտի աղբյուր։ Նրա վաղաժամ մահվան մեջ ես աստվածային նախախնամություն եմ տեսնում։ Թշվառակա՛ն,— աչքերը բացելով ասաց նա,— խնդրում եմ սովորեցնես՝ ինչպե՞ս վարվեմ քեզ հետ։

Առաջ, երբ ավելի ջահել էի, հարազատներս ու ծանոթներս գիտեին, ինչպես վարվեն ինձ հետ. ոմանք խորհուրդ էին տալիս հոժարակամ զինվոր դառնալ, մյուսները՝ ծառայության ընդունվել դեղատուն, ոմանք էլ՝ հեռագրատուն մտնել։ Իսկ հիմա, երբ քսանհինգս արդեն լրացել է և քունքերիս նույնիսկ ճերմակ մազեր են երևացել, ու երբ ես արդեն եղել եմ և՛ հոժարակամ զինվոր, և՛ դեղագործ, և՛ հեռագրատան ծառայող, ամբողջ երկրայինն արդեն ինձ համար կարծես սպառված է, և այլևս խորհուրդներ չեն տալիս, այլ հառաչում են միայն կամ օրորում գլուխները։

— Դու ի՞նչ ես մտածում քո մասին,— շարունակեց հայրս։— Քո տարիքում երիտասարդ մարդիկ արդեն ունեն հասարակական կայուն դիրք, իսկ դու մի քե՛զ նայիր՝ պրոլետա՛ր, աղքա՛տ, ապրում ես հորդ վզին նստած։

Իր սովորության համաձայն, նա սկսեց խոսել այն մասին, թե ինչպես հիմիկվա երիտասարդները կործանվում են, կործանվում են անհավատությունից, շահամոլությունից և ավելորդ մեծամտությունից, և որ հարկավոր է սիրողական ներկայացումներն արգելել, քանի որ դրանք երիտասարդ մարդկանց շեղում են կրոնից ու իրենց պարտականություններից։

— Վաղը մենք միասին կգնանք, և դու կառավարչից ներողություն կխնդրես ու կխոստանաս բարեխղճորեն ծառայել,— եզրափակեց նա։— Դու ոչ մի օր չպետք է մնաս առանց հասարակական դիրքի։

— Խնդրում եմ լսեք ինձ,— ասացի ես դժկամորեն, ոչ մի լավ բան չսպասելով այդ խոսակցությունից։— Այն, ինչ դուք հասարակական դիրք եք անվանում, կապիտալի և կրթության արտոնությունն է։ Զուտևոր ու անուսում մարդիկ ֆիզիկական աշխատանքով են ճարում իրենց մի պատառ հացը, ու չեմ հասկանում, թե ինչու պետք է բացառություն կազմեմ։

— Երբ դու սկսում ես ֆիզիկական աշխատանքից խոսել, անմիտ ու դռեհիկ է ստացվում,— գրգռված ասաց հայրս։— Հասկացի՛ր, բթամիտ հասկացիր, անուղե՛ղ գլուխ, որ ֆիզիկական բիրտ ուժից բացի, դու ունես նաև աստվածային ոգի, սրբազան կրակ, որը խստագույնս տաբբերում է քեզ անվանակից կամ սողունից և մոտեցնում աստվածությանը։ Մարդկանցից լավագույններն այդ կրակը ձեռք են բերել հազար տարում։ Քո ապուպապ Պոլոզնևը գեներալ էր, կռվեց Բորոդինոյում, քո պա-

ար բանաստեղծ էր, հռետոր և աղնվականության պաշտպան, հորեղբայրդ՝ մանկավարժ և, վերջապես, ես՝ քո հայրը ճարտարապետ եմ։ Բոլոր Պուշկինները սրբազան կրակը պահպանեցին նրա համար, որ դու հանգցնե՞ս։

— Պետք է արդարամիտ լինել,— ասացի ես։— Ֆիզիկական աշխատանք կատարում են միլիոնավոր մարդիկ։

— Եվ Թող կատարեն։ Նրանք ուրիշ բան անել չեն կարող։ Ամեն մեկն էլ ֆիզիկական աշխատանքով կարող է զբաղվել, նույնիսկ հիմարներից հիմարը և հանցագործը, այդ աշխատանքը ստրուկի և բարբարոսի բնորոշ հատկությունն է, մինչդեռ կրա՞կը վիճակված է միայն քեզանից։

Անօգուտ բան էր շարունակել այդ խոսակցությունը։ Հայրս ինքն իրեն աստվածացնում էր, և նրա համար համոզիչ էր միայն ի՛ր ասածը։ Եվ հետո, ես շատ լավ գիտեի, որ այդ մեծամտությունը, որով նա խոսում էր սև աշխատանքի մասին, գալիս էր ոչ այնքան սրբազան կրակի վերաբերյալ նկատառումներից, որքան այն դաղտնի երկյուղից, թե ես բանվոր կդառնամ և ամբողջ քաղաքին կստիպեմ խոսել իմ մասին։ Իսկ գլխավորն այն էր, որ իմ բոլոր հասակակիցները վաղուց արդեն համալսարան էին վերջացրել և լավ ճանապարհի վրա էին, պետական բանկի գրասենյակի կառավարչի տղան արդեն կոլեգիական ասեսոր էր, իսկ ես՝ միակ որդիս, դեռ ոչինչ էի։ Շարունակել խոսակցությունը ապարդյուն էր ու տհաճ, բայց ես դեռ նստած մեղմ առարկում էի, հուսալով, թե վերջապես ինձ կհասկանան։ Ամբողջ խնդիրը չէ՞ որ պարզ էր ու հասարակ և վերաբերում էր միայն այն բանին, թե ինչ կերպ մի պատառ հաց վաստակեմ, սակայն պարզություն չէին տեսնում, այլ քաղցր-մեղցր կլորացնելով խոսքերը՝ պատմում էին Բորոդինոյի, սրբազան կրակի և հորեղբորս մասին, մի մոռացված բանաստեղծի, որն առաջնորդում վատ և շինծու ոտանավորներ էր գրել, կոպիտ կերպով ինձ անվանում էին անուղեղ գլուխ և բութ մարդ։ Իսկ ինչքա՞ն կուզենայի, որ ինձ հասկանան։ Չնայած այդ ամենին, հորս ու քրոջս սիրում եմ և մանկությունից իմ մեջ նստած է նրանցից թույլտվություն խնդրելու սովորությունը, այնքան ուժեղ է նրստած, որ հազիվ թե երբեք ազատվեմ դրանից։ Արդար եմ թե մեղավոր, միևնույն է, շարունակ վախենում եմ դառնացնել նրանց, վախենում եմ, որ հուզմունքից հորս բարալիկ վիզն ահա կարմրեց և չինի թե հանկարծ կաթված ստանա։

— Իմ տարիքի մարդու համար,— ասացի ես,— ամոթ է և վիրավորական նստել տոթ սենյակում, զբաղվել արտագրությամբ ու մրցել գրամեքենայի հետ։ Այս դեպքում կարո՞ղ է արդյոք խոսք լինել սրբազա՞ն կրակի մասին։

— Այնուամենայնիվ դա մտավոր աշխատանք է,— ասաց հայրս։— Բայց հերիք է, թողնե՛նք այս խոսակցությունը, և, համենայն դեպս, զգուշացնում եմ. եթե դու նորից ծառայության չմտնես և հետևես քո վատ հակումներին, ես ու իմ դուստրը մեր սիրուց կզրկենք քեզ, ճշմարիտ աստծով երդվում եմ՝ ես կզրկե՛մ քեզ ժառանգությունից։

Հակումներիս ամբողջ մաքրությունը ցույց տալու համար, որոնցով առաջնորդվել էի ուզում իմ ամբողջ կյանքում, ես կատարյալ անկեղծությամբ ասացի.

— Ժառանգության հարցը ինձ համար կարևոր չէ։ Նախապես հրաժարվում եմ ամեն ինչից։

Բոլորովին անսպասելի, այդ բառերը, չգիտես ինչու, թունդ վիրավորեցին հորս։ Նա ամբողջովին կարմրատակեց։

— Չհամարձակվե՛ս այդպես խոսել ինձ հետ, հիմա՛ր,— գոռաց նա բարակ, ճղճղան ձայնով։— Անպե՛տք արարած,— և արագ ու ճարպիկ, սովոր շարժումով, մի քանի անգամ ապտակեց ինձ։— Դու կորցնո՞ւմ ես քեզ։

Երեխա ժամանակս, երբ հայրս ծեծում էր ինձ, պարտավոր էի կանգնել ուղիղ, ձեռքերս կողքիս ձգած. ու նայել նրա դեմքին։ Հիմա էլ, երբ նա ինձ ծեծում էր, բոլորովին շփոթվեցի և, ասես իմ մանկությունը դեռ շարունակվում էր, ձգվեցի ու ճիգ էի անում ուղիղ նայել նրա աչքերին։ Հայրս ծեր էր և շատ նիհար, բայց բարակ ձեռքերը հավանաբար կաշեփոքի պես ամուր էին, որովհետև ծեծում էր սաստիկ ցավեցնելով։

Ես ետ-ետ գնացի դեպի նախասենյակ, իսկ նա հենց տեղնուտեղը խլեց իր հովանոցը և մի քանի անգամ խփեց գլխիս ու ուսերիս։ Այդ պահին քույրս բացեց հյուրասենյակի դուռը իմանալու համար, թե ինչ աղմուկ է, բայց սարսափի ու խղճահարության արտահայտությունը դեմքին, իսկույն հետ շրջվեց, իմ օգտին ոչ մի խոսք չասելով։

Գրասենյակ չվերադառնալու և բանվորական նոր կյանք սկսելու մտադրությունս անխախտ էր։ Մնում էր միայն զբաղմունքի տեսակն ընտրել, իսկ դա մի առանձին դժվարություն չէր ներկայացնում, քանի որ ինձ թվում էր, թե ես՝ շատ ուժեղ

էի, դիմացկուն, ամենածանր աշխատանքի ընդունակ։ Ինձ սպասում էր աշխատավարձի և մի պատառ հացի մասին մշտական մտահոգությամբ զբաղված բանվորական կիսաքաղց ու միապաղաղ կյանքն իր գարշահոտությամբ և ապրելակերպի կոպտությամբ։ Եվ, ո՞վ գիտե, Բոլշայա Դվորյանսկայա փողոցով աշխատանքից վերադառնալիս, ես, կարող է պատահեր, դեռ շատ պիտի նախանձեի մտավոր աշխատանքով ապրող ինժեներ Դոլժիկովին, սակայն այդ ժամանակ ապագա բոլոր ձախորդություններիս մասին մտածելն ինձ համար զվարճալի էր։ Կար ժամանակ, որ ես երազում էի հոգևոր գործունեության մասին՝ ինքս ինձ մերթ երևակայելով ուսուցիչ, մերթ՝ բժիշկ, մերթ՝ գրող, սակայն երազներս այդպես էլ երազներ մնացին։ Մտավոր հաճույքներից, օրինակ՝ թատրոնի և ընթերցանության նկատմամբ իմ սերը չափազանց մեծ էր, բայց ունեի՞ արդյոք մտավոր աշխատանքի ընդունակություն, չգիտե՞մ։ Գիմնազիայում անհաղթահարելի մի հակակրանք էի զգում դեպի հունարենը, այնպես որ չորրորդ դասարանից ինձ ուզում էին հանել։ Երկար ժամանակ գնում-գալիս էին ռեպետիտորները[1] և նախապատրաստում ինձ հինգերորդ դասարանի համար։ Հետո, օրվա մեծ մասն անցկացնելով միանգամայն աննպատակ, ես ծառայեցի զանազան գերատեսչություններում, և ինձ ասում էին, թե դա մտավոր աշխատանք է։ Ուսման ու ծառայության բնագավառի իմ գործունեությունը չէր պահանջում ո՛չ մտքի լարում, ո՛չ տաղանդ, ո՛չ անձնական ընդունակություններ, ո՛չ էլ հոգու ստեղծագործական ոգևորություն։ Դա մի տեսակ անգիտակից մեքենական գործունեություն էր, իսկ մտավոր այդպիսի աշխատանքը ես ֆիզիկականից ցածր եմ դասում, արհամարհում և չեմ կարծում, որ թեկուզ մի բոպե դա կարողանա աննպատակ ու անհոգ կյանքի արդարացումը լինել, քանի որ այդ աշխատանքը հենց խաբեություն է, պարապության ձևերից մեկը։ Շատ հավանական է, որ մտավոր իսկական աշխատանք ես երբեք չեմ տեսել։

Վրա հասավ իրիկունը։ Մենք ապրում էինք Բոլշայա Դվորյանսկայա փողոցում. դա քաղաքի գլխավոր փողոցն էր, և քանի որ քաղաքում մի կարգին զբոսայգի չկար, երեկոներն այդտեղ զբոսնում էր մեր beau monde[2]։ Այդ սքանչելի փողոցը մա-

[1] Ռեպետիտոր — ուսուցչի օգնական, որն օգնում է աշակերտներին կրկնել դասը (՝. Բ.)։

[2] Բարձր խավ, ընտրյալ հասարակություն (ֆրանս.)։

սամբ փոխարինում էր զբոսայգու, քանի որ դրա երկու կողմում բարդիներ էին աճում, որոնք, հատկապես անձրևից հետո, անուշահոտ բուրում էին, և ցանկապատերից ու նախասրահներից դուրս էին թափվում ակացիաները, յասամանի բարձր թփերը, թզենիները, խնձորենիները։ Մայիսյան մթնշաղը, դալար նուրբ կանաչը՝ իր բազմագույն երանգներով, յասամանի բուրմունքը, բզեզների դղրդոցը, անդորրը, չերմությունը՝ որքա՜ն նոր էին այս ամենը և որքա՜ն անսովոր, թեև ամեն տարի գարունը կրկնվում է։ Կանգնել էի պարտեզի դռնակի մոտ և նայում էի զբոսնողներին։ Մեծացել էի նրանցից շատերի հետ և մի ժամանակ հեռները շարություն արել, իսկ այդ օրերին իմ մոտիկությունը կարող էր նեղել նրանց, որովհետև ես հագնված էի խղճուկ ու հնաձև, և իմ նեղ շալվարի ու մեծ, անճոռնի սապոգների մասին ասում էին, թե դրանք նավակների մեջ ցցված ձողեր են։ Բացի այդ ,քաղաքում ես վատ համբավ էի վայելում նաև այն պատճառով, որ չունեի հասարակական դիրք և էժանագին պանդոկներում հաճախ բիլիարդ էի խաղում, ու մեկ էլ գուցե նրա համար, որ առանց որևէ առիթի երկու անգամ ինձ տարել են ժանդարմական սպայի մոտ։

Դիմացի մեծ շենքում, Դոլժիկովների տանը, դաշնամուր էին նվագում։ Մութն ընկնում էր, աստղերը թարթում էին երկնքում։ Դանդաղ քայլերով ու պատասխանելով ողջույններին, ահա երևաց հայրս՝ լայն եզրերը դեպի վեր ծալված ցիլինդրը գլխին, թևանցուկ արած քրոջս։

— Նայի՛ր,— ասում էր նա քրոջս, երկինքը ցույց տալով հենց նույն հովանոցով, որով քիչ առաջ ծեծել էր ինձ։— Նայի՛ր երկինք։ Աստղերը, ամենափոքրերը նույնիսկ՝ դրանք բոլորն աշխարհներ են։ Տիեզերքի համեմատությամբ ինչքա՜ն չնչին է մարդը։

Եվ դա ասում էր այնպիսի մի շեշտով, որ կարծես իր համար արտակարգ դուրեկան ու հաճելի էր, որ ինքն այդքան չնչին է։ Նա շատ ապաշնորհ մարդ էր։ Դժբախտաբար, նա մեր միակ ճարտարապետն էր և, որքան հիշում եմ, վերջին տասնհինգ-քսան տարում մեր քաղաքում խելքը գլխին ոչ մի տուն չկառուցեց։ Երբ նրան պատվիրում էին տան նախագիծը, սկզբում սովորաբար գծում էր դահլիճն ու հյուրասենյակը։ Ինչպես անցած-գնացած ժամանակներում ինստիտուտի միամիտ սանուհիները կարողանում էին պարել, սկսելով միայն ձախ ոտքից, այնպես էլ

նրա դեղարվեստական մտահղացումը սկիզբ էր առնում ու ծավալվում միայն դահլիճից և հյուրասենյակից։ Գծագրվածի վրա նա ավելացնում էր սեղանատունը, մանկական սենյակը, աշխատասենյակը՝ միացնելով դրանք դռներով. և հետո բոլոր սենյակներն անխուսափելիորեն ստացվում էին միջանցուկ և ամեն մեկում լինում էր երկու, նույնիսկ երեք ավելորդ դուռ։ Նրա մտահղացումը երևի անորոշ էր, ծայրահեղ խճճված ու պոչատ։ Եվ ամեն անգամ, մի տեսակ զգալով, որ ինչ-որ բան պակասում է, հայրս դիմում էր տարբեր տեսակի լրացուցիչ կառուցումների՝ կցմցելով դրանք մեկը մյուսին, և ինչպես հիմա, ես տեսնում եմ նեղլիկ հաշտերն ու նեղլիկ միջանցքները, ծուռումուռ սանդուղքը, որ տանում էր տան վերևի կիսահարկը, որտեղ կարելի է կանգնել միայն կռացած և ուր հատակի փոխարեն բաղնիքի թարեքների նման երեք հսկայական աստիճաններ են։ Իսկ խոհանոցն անպայման տան նկուղում էր լինում՝ աղյուսաշար հատակով և կամարակապ։ Տան ճակատն ունենում էր հաստակող, բութ արտահայտություն, գծերը չոր ու ցամաք, ճզմված, ցածր տանիք, իսկ հաստ ու կարճլիկ ծխնելույզների վրա անպայման մային մետաղալարե ցանցեր՝ սև, ճռճռան հողմացույցներով։ Ու չգիտես ինչու, հորս կառուցած մեկը մյուսի նման բոլոր այդ տները աղոտ կերպով ինձ հիշեցնում էին նրա ցիլինդրը, նրա սմքած ու կամակոր ծոծրակը։ Ժամանակի ընթացքում հորս ապաշնորհությանը քաղաքացիներն ընտելացան. դա արմատացավ և դարձավ մեր ոճը։

Այդ ոճն իմ հայրը մտցրեց նաև քրոջս կյանքում։ Սկսվեց այն բանից, որ քրոջս անունը դրեց Կլեոպատրա (ինչպես իմը՝ Միսայիլ)։ Երբ քույրս դեռ փոքր էր, հայրս վախեցնում էր նրան աստղերի, հին իմաստունների և մեր նախնիների մասին հիշեցնելով, երկար ու բարակ բացատրում, թե ի՞նչ բան է կյանքը, ի՞նչ բան է պարտքի զգացումը։ Հիմա էլ, երբ քույրս արդեն քսանվեց տարեկան էր, հայրս շարունակում էր նույնը, թույլ տալով նրան թևանցուկ արած ման գալ միայն իր հետ, ու չգիտես ինչու, երևակայում էր, որ վաղ թե ուշ կհայտնվի մի երիտասարդ բարեկիրթ մարդ, որը կուզենա ամուսնանալ քրոջս հետ՝ ի՞ր անձնական արժանիքները հարգելով։ Իսկ Կլեոպատրան պաշտում էր հորս, վախենում նրանից և հավատում նրա արտակարգ խելքին։

Բոլորովին մթնեց, և փողոցը կամաց-կամաց դատարկվեց։

Դիմացի տան նվագը դադարեց։ Դարպասը կրնկի վրա բացվեց, և մեր փողոցով արագ անցավ եռաձի կառքը՝ մեղմ ծլնգացնելով զանգակները։ Դա ինժեներն էր աղջկա հետ գնում զբոսնելու։ Քնելու ժամանակն էր։

Տանը ես իմ սենյակն ունեի, բայց ապրում էի բակի փոքրիկ խրճիթում, որ աղյուսե ցախատան հետ մի ընդհանուր տանիքի տակ էր։ Այդ ցախատունը շինել էին վաղուց, հավանաբար, լծասարք պահելու համար, քանի որ պատերի մեջ մեծ-մեծ ցցեր էին իրված։ Հիմա դա ավելորդ էր, և հայրս արդեն երեսուն տարի էր ահա այնտեղ իր ստացած լրագիրն էր դարսում, որը ինչ-որ բանի համար կազմում էր կիսամյակներով և ոչ ոքի չէր թողնում ձեռք տալ։ Ապրելով այդտեղ, հորս և նրա հյուրերի աչքին ես քիչ էի երևում, ու ինձ թվում էր, որ եթե ապրում եմ ոչ իսկական սենյակում և ամեն օր ճաշելու համար տուն չեմ գնում, ուրեմն հորս խոսքը, թե ես ապրում եմ իր վզին նստած, արդեն հնչում էր կարծես ոչ այնքան վիրավորական։

Քույրս ինձ էր սպասում։ Հորիցս գաղտնի նա ընթրիք էր բերել՝ հորթի մսի մի փոքրիկ սուր կտոր ու մի պատառ հաց. Մեր տանը հաճախ կրկնում էին «Փողը հաշիվ է սիրում», «Կոպեկը ռուբլի կխնայի» և նման բաներ, ու քույրս, այդ տափակություններից ճնշված, հենց միայն մտահոգված էր այն բանով, թե ինչպես ծախսերը կրճատի, և դրա համար էլ մենք վատ էինք սնվում։ Ափսեն սեղանին դնելով, նա նստեց անկողնուս վրա և լաց եղավ։

— Միսայի՜լ,— ասաց նա,— դու այս ի՞նչ բերիր մեր գլուխը...

Նա դեմքը չէր ծածկել, արցունքներն ընկնում էին կրծքին ու ձեռքերին, և արտահայտությունն էլ թախծոտ էր։ Նա ընկավ բարձին և արցունքներին ազատություն տվեց. ամբողջ մարմնով ցնցվում էր ու հեծկլտում։

— Դու նորից թողել ես ծառայությունդ...— ասաց նա։— Օ՜, դա սարսափելի է։

— Բայց հասկացիր, քույրի՜կս, հասկացիր...— ասացի ես և, որովհետև նա լալիս էր, հուսահատությունն ինձ պաշարեց։

Հակառակի պես իմ փոքրիկ լամպի ամբողջ նավթն այրվել պրծել էր. ծուխ էր անում՝ հանգչելու վրա էր, և պատերի հին ցցերը նայում էին խոժոռ, ու դրանց ստվերները թրթռում էին։

— Խնայի՜ր մեզ,— վեր կենալով ասաց քույրս։— Հայրիկը

ռանկուի վշտի մեջ է, իսկ ես հիվանդն եմ, խելքս թողնում եմ։ Ի՞նչ կլինի քո վիճակը,— հարցրեց նա հեկեկալով և ձեռքերը պարզելով ինձ։— Խնդրում եմ, աղաչում, մեր հանգուցյալ մոր անունից խնդրո՞ւմ եմ ջեզ՝ նորից ծառայության մտիր։

— Չեմ կարող, Կլեոպա՜տրա,— ասացի ես, զգալով, որ մի քիչ էլ՝ ու կհանձնվեմ։— Չե՛մ կարող։

— Ինչո՞ւ,— շարունակեց քույրս,— ինչո՞ւ Դե՛, եթե պետիդ հետ լեզու չես գտել, քեզ համար մի ուրիշ տեղ փնտրիր։ Ինչո՞ւ, օրինակ, չգնաս երկաթուղում ծառայելու։ Ես հենց նոր խոսում էի Անյուտա Բլագովոյի հետ. նա ասում է, որ քեզ այնտեղ անպայման կընդունեն, և խոստացավ նույնիսկ բարեխոսել։ Ի սե՞ր աստծո, Միսայիլ, մտածիր, աղաչում եմ, մտածի՞ր։

Մենք էլի մի քիչ խոսեցինք, և ես անձնատուր եղա։ Ասացի, որ կառուցվող երկաթուղում ծառայելու մտադրությունը դեռ ոչ մի անգամ մտքովս չի անցել, և, ինչ կա որ, պատրաստ եմ փորձել։

Քույրս արցունքն աչքերին ուրախ ժպտաց ու սեղմեց ձեռքս և հետո էլի շարունակեց լաց լինել. իրեն չէր կարողանում զսպել, իսկ ես դուրս եկա խոհանոց նավթ բերելու։

II

Բարեգործական նպատակով տրվող սիրողական թատերախաղերի, համերգների և կենդանի պատկերների սիրահարների մեջ քաղաքում առաջին տեղը պատկանում էր Աժոգիններին, որ ապրում էին Բուշայա Դվորյանսկայա փողոցում՝ իրենց սեփական տանը։ Նրանք ամեն անգամ տրամադրում էին շենքը և իրենց վրա վերցնում բոլոր հոգսերն ու ծախսերը։ Կալվածատիրական այդ հարուստ ընտանիքը գավառում մոտ երեք հազար դեսյատին հող ուներ շքեղ դաստակերտով, բայց գյուղ չէր սիրում և ձմեռն ու ամառը անց էր կացնում քաղաքում։ Ընտանիքը բաղկացած էր մորից ու երեք աղջիկներից, մայրը՝ բարձրահասակ, նիհարավուն, նրբազգաց մի կին էր, որ կարճ մազեր ուներ, հագնում էր կարճ բաճկոնակ և անգլիական ձևի հարթ շրջազգեստ, և երեք աղջիկներ, որոնց մասին երբ խոսում էին, անվանում էին ոչ թե անուններով, այլ ուղղակի՝ մեծը, միջնեկը և փոքրը։ Աղջիկները սուր, տգեղ կզակներ ունեին, կարճատես էին, կռացած ուսերով. հագնվում էին իրենց մոր նման, խոսում

անգուր շշշվոցով, բայց, այնուամենայնիվ, չնայած դրան, ամուսնության մասնակցում էին բոլոր ներկայացումներին և բարեգործական նպատակով մշտապես որևէ բան անում՝ նվագում, արտասանում կամ երգում էին։ Նրանք շատ լուրջ էին ու երբեք չէին ժպտում և նույնիսկ երգախառն վոդևիլների մեջ խաղում էին առանց նվազագույն զվարթության, այսպիսի մի գործարար տեսքով, ասես զբաղվում էին հաշվապահությամբ։

Ես սիրում էի մեր թատերախաղերը և առանձնապես փոքրինչ անիմաստ, աղմկոտ, հաճախակի կրկնվող փորձերը, որոնցից հետո մեզ միշտ ընթրիք էին տալիս։ Պիեսներ ընտրելու և դերեր բաշխելու մեջ ես ոչ մի մասնակցություն չունեի։ Ինձ վրա ընկած էր անդրկուլիսային գործը։ Նկարում էի դեկորացիաները, դերերն էի արտագրում, հուշարարություն ու գրիմ էի անում։ Ինձ էր հանձնարարված նաև տարբեր էֆեկտներ ստեղծելը, ինչպես՝ ամպրոպը, սոխակների դայլայլը և այլն։ Քանի որ ես հասարակական դիրք և կարգին զգեստ չունեի, փորձերի ժամանակ քաշվում էի մի կողմ, կուլիսների խորքը, և, ամոթխած, լռում էի։

Աժոգինների մոտ դեկորացիաները նկարում էի ցսխատանը կամ բակում։ Ինձ օգնում էր ներկարար կամ, ինչպես ինքն էր իրեն անվանում, ներկարարական աշխատանքների կապալառու Անդրեյ Իվանովը՝ հիսունին մոտ մի մարդ, բարձրահասակ, շատ լղարիկ ու դունատ, ներս ընկած կրծքով, ներս ընկած քունքերով և աչքերի տակ կապտավուն բծերով, իր տեսքով նույնիսկ մի փոքր երկյուղալի։ Նա տառապում էր մի ինչ-որ հյուծող հիվանդությամբ, և նրա մասին ամեն աշնան ու գարնան ասում էին, թե կմահանա, բայց նա որոշ ժամանակ պառկելուց հետո վեր էր կենում և ապա զարմացած ասում. «Իսկ ես էլի՛ չմեռա»։

Քաղաքում նրա անունը կնքել էին Ռեդկա[1], և ասում էին, թե դա նրա իսկական ազգանունն է։ Ռեդկան ինձ նման սիրում էր թատրոնը, և լուրը հազիվ առած, թե ձեռնարկվում է ներկայացում, իր բոլոր աշխատանքները թողնում գալիս էր Աժոգինների մոտ դեկորացիաներ նկարելու։

Քրոջս հետ խոսելու հաջորդ օրը առավոտից իրիկուն աշխատում էի Աժոգինների մոտ։ Փորձը նշանակված էր երեկոյան

[1] Ռեդկա։

ժամը յոթին, բայց սկսվելուց մեկ ժամ առաջ դահլիճում արդեն հավաքվել էին բոլոր սիրողները, և մեծը, միջնեկն ու փոքրը քայլում էին բեմում ու տետրակներին նայելով արտասանում։ Կարմրագույն երկար վերարկուով և վզկապը վզին փաթաթած՝ Ռեդկան արդեն կանգնել էր, քունքը պատին դեմ արած, և բարեպաշտ մի արտահայտությամբ բեմին էր նայում։ Մայր Աժոգինան մոտենում էր մեկ այս, մեկ այն հյուրին և ամեն մեկին հաճելի ինչ-որ բան ասում։ Նա սովորություն ուներ սեեռուն նայել մարդու դեմքին և ցածր խոսել, կարծես գաղտնիք էր հայտնում։

— Դեկորացիաներ նկարելը, հավանաբար, դժվար է,— կամացուկ ասաց նա, մոտենալով ինձ։— Իսկ մենք տիկին Մուֆկեի հետ հենց նոր խոսում էինք նախապաշարմունքների մասին, ու ես տեսա, թե ինչպես դուք ներս մտաք։ Աստվա՜ծ իմ, ես ողջ, ո՜ղջ իմ կյանքում պայքարել եմ նախապաշարմունքների դեմ։ Որպեսզի սպասավորներիս համոզեմ, թե ի՜նչ դատարկ բան է նրանց այդ սարսափը, ես միշտ վառում եմ երեք մոմ և իմ բոլոր կարևոր գործերն սկսում եմ ամսի տասներեքին։

Եկավ ինժեներ Դոլժիկովի դուստրը՝ գեղեցիկ, շիկահեր, փարթամ մի օրիորդ, զգեստը, ինչպես ընդունված էր ասել, ոտից գլուխ փարիզյան։ Նա չէր խաղում, բայց փորձերի ժամանակ բեմում նրա համար աթոռ էին դնում և խաղը չէին սկսում, քանի դեռ առաջին կարգում նա չէր հայտնվում՝ փայլելով ու բոլորին զարմացնելով իր շքեղ զգեստով։ Նրան, որպես մայրաքաղաքից եկածի, թույլ էր տրվում փորձի ժամանակ դիտողություններ անել, և նա այդ ամենն անում էր սիրունիկ, ներողամիտ մի ժպիտով, երևում էր, որ մեր ներկայացումները համարում էր մանկական զվարճանք։ Նրա մասին ասում էին, թե երգել սովորել է Պետերբուրգի կոնսերվատորիայում և իբր նույնիսկ ամբողջ մի ձմեռ երգել է մասնավոր օպերային թատրոնում։ Նա ինձ շատ էր դուր գալիս, փորձերի ու ներկայացման ժամանակ սովորաբար ես աչքս չէի կտրում նրանից։

Արդեն վերցրել էի տետրակը, որ սկսեմ հուշել, երբ անսպասելի հայտնվեց քույրս։ Գլխարկն ու մանտոն չհանելով, նա մոտեցավ ինձ ու ասաց.

— Գնանք, խնդրում եմ։

Ես գնացի։ Բեմի հետևում, դռան մեջ, կանգնած էր Անյուտա Բլագովոն՝ մուգ, փոքրիկ քողացանցով գլխարկը գլխին։ Նա

դատարանի նախագահի օգնականի աղջիկն էր։ Հայրը մեր քաղաքում ծառայում էր վաղուց, երևի նահանգական դատարանի հիմնադրման հենց սկզբից։ Քանի որ Անյուտա Բլագովոն բարձրահասակ էր և լավ կազմվածք ուներ, կենդանի պատկերներին նրա մասնակցությունը պարտադիր էր, ու երբ նա խաղում էր որևէ հավերժահարսի կամ Սլավայի դերը, ամոթից երեսը վառվում էր։ Բայց թատերախաղերին նա չէր մասնակցում. փորձի գալիս էր միայն մի բոպեով, եթե գործ էր ունենում, ու չէր գնում դահլիճ։ Հիմա էլ երևում էր, որ նա եկել էր միայն մի բոպեով։

— Հայրս խոսել է ձեր մասին,— ինձ չնայելով ու կարմրելով, շոր-շոր ասաց նա։— Դոլժիկովը ձեզ համար տեղ է խոստացել երկաթուղում։ Վաղը գնացեք նրա մոտ, տանը կլինի։

Ես խոնարհ գլուխ տվի և շնորհակալություն հայտնեցի անհանգստության համար։

— Իսկ սա դուք կարող եք թողնել,— ասաց նա, ցույց տալով տետրակը։

Նա և քույրս մոտեցան Աժոգինային և, իմ կողմը նայելով, մի երկու բոպե փսփսացին նրա հետ։ Նրանք ինչ-որ բանի մասին խորհրդակցում էին։

— Իսկապես որ,— կամացուկ ասաց Աժոգինան, մոտենալով ինձ և անթարթ նայելով դեմքիս,— իսկապես, եթե սա շեղում է ձեզ լուրջ զբաղմունքից,— նա հեռքիցս քաշեց տետրը,— ապա դուք կարող եք հանձնել ուրիշ որևէ մեկին։ Մի՜ անհանգստացեք, աստված ձեզ հետ։

Ես հրաժեշտ տվի նրան և շփոթված դուրս եկա։ Աստիճաններով իջնելիս տեսա, թե ինչպես հեռանում էին քույրս և Անյուտա Բլագովոն։ Նրանք աշխույժ խոսում էին ինչ-որ բանի մասին, հավանաբար, երկաթուղում իմ ծառայության մտնելու մասին, և շտապում էին։ Առաջներում քույրս փորձերին երբեք չէր լինում և հիմա, ըստ երևույթին, խեղճը տանջվում էր, վախենում, չլինի թե հանկարծ հայրս իմանա, որ նա առանց իր թույլտվության եղել էր Աժոգինների տանը։

Դոլժիկովի մոտ ես գնացի հաջորդ օրը, ժամը մեկին։ Սպասավորն ինձ առաջնորդեց շատ գեղեցիկ մի սենյակ, որ ինժեների հյուրասենյակն էր և միևնույն ժամանակ նրա աշխատանքային սենյակը։ Այդտեղ ամեն ինչ փափուկ էր, նուրբ և ինձ նման անսովոր մարդու համար նույնիսկ օտարոտի։ Թանկարժեք դոր-

դեր, հսկայական բազկաթոռներ, բրոնզյա իրեր, նկարներ, ոսկեզօծ և թավշապատ շրջանակներ. պատերին սփռված լուսանկարներում՝ շատ գեղեցիկ կանայք, խելացի, սիրունիկ դեմքերով և անկաշկանդ կեցվածքներով։ Հյուրասենյակից մի դուռ բացվում էր դեպի այգի, դեպի պատշգամբ. երևում էին յասամանի թուփը, նախաճաշի սեղանը, վրան՝ բազմաթիվ շշեր, վարդերի մի փունջ. զգացվում էր գարնան և թանկարժեք սիգարի բուրմունքը, երջանկություն էր բուրում, և այդ ամենը կարծես ասում էր, թե ահա տե՛ս մարդն ապրեց, շարշարվեց և վերջապես հասավ երկրի վրա հնարավոր երջանկությանը։ Գրասեղանի մոտ նստած էր ինժեների աղջիկը և լրագիր էր կարդում։

— Հորս մո՞տ եք եկել,— հարցրեց նա։— Ցնցուղի տակ լողանում է, հիմա կգա։ Առայժմ նստեք, խնդրում եմ։

Նստեցի։

— Դուք, կարծեմ, մեր դիմա՞ցն եք ապրում, այնպես չէ՞,— որոշ լռությունից հետո կրկին հարցրեց նա։

— Այո։

— Ձանձրույթից ամեն օր նստում եմ պատուհանի մոտ, դե՛, ներեցեք ինձ,— շարունակեց նա, լրագրին նայելով,— հաճախ տեսնում եմ ձեզ և ձեր քրոջը։ Նա միշտ այնքան բարի, լուրջ արտահայտություն ունի։

Ներս մտավ Դոլժիկովը։ Նա երեսսրբիչով վիզն էր սրբում։

— Պապա, monsieur Պոլոզնևը,— ասաց աղջիկը։

— Այո, այո, ինձ Բլագովոն ասել է,— նա աշխուժորեն դիմեց ինձ, ձեռք չմեկնելով։— Բայց, սպասեցեք, ես ի՞նչ կարող եմ ձեզ առաջարկել, ի՞նչ տեղ ունեմ որ։ Տարօրինակ մարդիկ եք, պարոնա՛յք,— շարունակեց նա բարձրաձայն և մի այնպիսի ձևով, կարծես ինձ նկատողություն էր անում։— Օրական ձեզպես քսան մարդ է գալիս, կարծում են ինձ մոտ դեպարտամե՛նտ է։ Ինձ մոտ երկաթգի՛ծ է, պարոնայք, տաժանակիր աշխատա՛նք. ինձ հարկավոր են մեխանիկներ, փականագործներ, հող փորողներ, ատաղձագործներ, ջրհոր փորողներ, իսկ դուք ա՞խր կարող եք միայն նստել և գրոտել, ուրիշ ոչի՞նչ։ Բոլորդ էլ գրոտողներ եք։

Ես նրանից էլ երջանկության նույն հոտն էի առնում, ինչ որ նրա զորգերից ու բազկաթոռներից։ Մարմնեղ, առողջ, կարմիր այտերով, լայն կրծքով, լողացած, չթե բլուզով ու շալվարով, իսկական ճենապակե խաղալիք կառապան։ Նա շրջանակաձև,

խուճուճ կարճ մորուք ուներ ու ոչ մի հատիկ ճերմակ մազ, քիթը փոքրիկ սապատով էր, իսկ աչքերը մուգ էին, ջինջ ու անմեղ հայացքով։

— Դուք ի՞նչ կարող եք անել,— շարունակեց նա։— Դուք ոչինչ էլ չե՛ք կարող։ Ես ինժեներ եմ, ապահովված մարդ, բայց մինչև ինձ ճանապարհ հարթելը, երկար ժամանակ ես ծանր աշխատանք եմ կատարել, եղել եմ մեքենավար, որպես հասարակ յուղող երկու տարի աշխատել եմ Բելգիայում։ Դատեցեք ինքներդ, սիրելի՛ս, ինչպիսի՞ աշխատանք կարող եմ ձեզ առաջարկել։

— Իհարկե, այդպես է — փնթփնթացի ես բոլորովին շփոթված՝ չդիմանալով նրա պարզ ու հստակ հայացքին։

— Գոնե ապարատից կկարողանա՞ք գլուխ հանել,— հարցրեց նա, մի փոքր մտածելով։

— Այո, ծառայել եմ հեռագրատանը։

— Հը՛մ... Դե՛ լավ, կտեսնենք։ Առայժմ գնացեք Դուբեչնյա։ Այնտեղ մեկն արդեն կա, բայց ահավոր անպետքություն է։

— Իսկ ի՞նչ պարտականություն պետք է կատարեմ,— հարցրի ես։

— Դե՛, կտեսնենք, էլի։ Առայժմ ճանապարհ ընկեք, ես կկարգադրեմ։ Միայն, տեսնք հա՛, հարբեցողությամբ չզբաղվեք և շնչին խնդրանքներով ինձ չանհանգստացնեք։ Կվռնդե՛մ։

Նա հեռացավ ինձնից և նույնիսկ գլխով էլ չարեց։ Իսկ ես գլուխ տվի ինժեներին ու նրա աղջկան, որ լրագիր էր կարդում, և դուրս եկա։ Հոգիս այն աստիճան էր ծանրացած, որ երբ քույրը սկսեց հարցուփորձ անել, թե ինժեներն ինչպես ընդունեց ինձ, ոչ մի բառ չկարողացա արտասանել։

Դուբեչնյա գնալու համար վեր կացա վաղ առավոտյան, արևածագի հետ։ Մեր Բոլշայա Դվորյանսկայա փողոցում ոչ ոք չկար, բոլորը դեռ քնած էին, և իմ քայլերը հնչում էին մենավոր ու խուլ։ Ցողաթաթախ բարդիները օդը լցրել էին անուշ բուրմունքով։ Տխուր էի և չէի ուզում հեռանալ քաղաքից։ Սիրում էի իմ հայրենի քաղաքը։ Նա ինձ թվում էր այնքա՛ն գեղեցիկ ու ջերմ։ Սիրում էի այդ կանաչ ծառերը, արևոտ, խաղաղ առավոտները, մեր զանգերի զողանջը, սակայն մարդիկ, որոնց հետ ապրում էի այդ քաղաքում, ինձ համար ձանձրալի էին, օտար և երբեմն նույնիսկ զզվելի։ Ես չէի սիրում ու չէի հասկանում նրանց։

Չէի հասկանում, թե ինչի համար և ինչով է ապրում այդ վախսունհինգ հազար մարդը։ Ես, օրինակ, գիտեի, որ Կիմրին իր հոչակավոր սապոգներով է հայթայթում իր ապրուստը, որ Տուլան սարքում է ինքնաեռ ու զենք, որ Օդեսան նավահանգստային քաղաք է, բայց թե ի՞նչ բան է մեր քաղաքը և ի՞նչ է անում՝ չգիտեի։ Բոլշայա Դվորյանսկայան և էլի մի երկու փողոց առավելապես ապրում էին պատրաստի դրամագլխով և ոռնիկով, որ ստանում էին չինովնիկները պետական գանձարանից, բայց ինչով էին ապրում մնացած ութ փողոցները, որոնք զուգահեռ ձգվում էին մի երեք վերստ ու կորչում բլրի հետևում, ինձ համար միշտ էլ անհասկանալի առեղծված էր։ Իսկ թե ինչպես էին ապրում այդ մարդիկ, ասելն էլ ամոթ է։ Ո՛չ զբոսայգի, ո՛չ թատրոն, ո՛չ կանոնավոր նվագախումբ։ Քաղաքային և ակումբի գրադարաններ հաճախում էին միայն դեռահաս հրեաները, այնպես որ, հանդեսներն ու նոր գրքերն ամիսներով մնում էին չթերթած։ Հարուստներն ու մաքավորականները քնում էին հեղձուկ, նեղ ննջարաններում, փայտոջլոտ տախտակե մահճակալների վրա, երեխաներին պահում էին գարշելի, կեղտոտ սենյակներում, որ հորջորջվում էին մանկական սենյակներ, իսկ ծառաները, անգամ ծերունի ու պատկառելի մարդիկ, քնում էին խոհանոցի հատակին և ծածկվում քրջերով։ Ուտիսի օրերին տներից բորշչի, իսկ պասի ժամանակ արևածաղկի յուղով տապակած թառափի հոտ էր գալիս։ Անհամ ու անսնունդ կերակուրներ էին ուտում, խմում վնասակար ջուր։ Դումայում, նահանգապետի և հոգևոր առաջնորդի մոտ, բոլոր տներում տարիներ շարունակ խոսում էին այն մասին, որ մեր քաղաքում յավ և էժան ջուր չկա, որ անհրաժեշտ է ջրմուղի համար պետական գանձարանից երկու հարյուր հազար ռուբլի փոխ առնել։ Շատ հարուստ մարդիկ, որոնց մեր քաղաքում կարելի էր հաշվել մոտ երեք տասնյակ և որոնք, պատահել է, թրթռախաղում տանուլ էին տվել ամբողջ կալվածքներ, նույնպես անպետք ջուր էին խմում և կրակ կտրած ողջ կյանքում խոսում փոխառության մասին։ Դա ես չէի կարողանում հասկանալ. ինձ թվում էր, թե ավելի հեշտ կլիներ այդ երկու հարյուր հազարը վերցնեին ու դնեին իրենց գրպանից։

Ամբողջ քաղաքում ես ոչ մի ազնիվ մարդ չէի ճանաչում։ Հայրս կաշառք էր վերցնում ու երևակայում էր, թե դա իրեն տալիս են իր հոգևոր արժանիքների պատվին։ Գիմնազիստները

դասարանից դասարան փոխադրվելու համար, որպես գիշերաթիկներ, վարձով ապրում էին իրենց ուսուցիչների մոտ, և սրանք մեծ գումարներ էին վերցնում նրանցից։ Զինվորական պետի կինը հավաքագրման ժամանակ գալիս էր նորակոչիկներին և նույնիսկ թույլ տալիս, որ իրեն հյուրասիրեն, ու մի անգամ եկեղեցում ինչ արեց-չարեց չկարողացավ ոտքի ելնել, որովհետև հարբած էր։ Զինվորական հավաքագրման ժամանակ կաշառք էին վերցնում նաև բժիշկները, իսկ քաղաքային բժիշկն ու անասնաբույժը հարկ էին դնում մսի խանութների և պանդոկների վրա։ Գավառական ուսումնարանում վկայագրեր էին ծախում, որոնք երրորդ կարգի արտոնություններ էին տալիս։ Քահանաները վերցնում էին եկեղեցու ստորադաս սպասավորներից և եկեղեցական երեցփոխներից։ Քաղաքային, մեշչանական, բուժական և մնացած բոլոր վարչություններում ամեն մի խնդրատուի հետևից բղավում էին՝ «Պետք է շնորհակալությո՛ւն հայտնել», և խնդրատուն հետ էր դառնում, որպեսզի երեսուն-քառասուն կոպեկ տա։ Իսկ նրանք, ովքեր կաշառք չէին վերցնում, ինչպես օրինակ, դատական գերատեսչության պաշտոնյաները, գոռոզ էին, բարևում էին երկու մատով, աչքի էին ընկնում սառը անտարբերությամբ և դատողությունների նեղմտությամբ, միշտ թուղթ էին խաղում, անչափ խմում, ամուսնանում էին հարուստ հարսնացուների հետ և շրջապատի վրա, անկասկած, ունեին վտանգավոր, ապականող ազդեցություն։ Միայն աղջիկներից էր, որ բարոյական մաքրության հոտ էր գալիս։ Նրանցից շատերը բարձր ձգտումներ, ազնիվ, մաքուր հոգի ունեին։ Բայց նրանք էլ կյանքը չէին հասկանում և հավատում էին, որ կաշառք են տալիս հոգևոր արժանիքների հարգանքից, և մարդի գնալով, շուտով պառավում էին, անկում ապրում և անհուսալիորեն խրվում գռեհիկ, քաղքենիական կյանքի տիղմի մեջ։

III

Մեր կողմերում երկաթգիծ էր կառուցվում։ Տոների նախօրյակին քաղաքում քրջոտ մարդկանց մեծ խմբեր էին ման գալիս, որոնց անվանում էին «չուգունկա» և վախենում դրանցից։ Հաճախ է պատահել, տեսել եմ, թե ինչպես այդ թափառաշրջիկ ցնցոտիավոր մեկին արյունլվիկ եղած քիթ ու մռութով գլխաբաց

բարշ են տվել ոստիկանատուն, իսկ նրա հետևից, որպես իրեղեն ապացույց, բերել են ինքնաեռ կամ քիչ առաջ լվացած, դեռ թաց սպիտակեղեն։ «Զուգունկան» սովորաբար խռնվում էր պանդոկների շուրջ և շուկաներում՝ հարբում էր, լափում, լկտի հայհոյանքներ թափում և մոտիկից անցնող թեթև վարքի տեր ամեն մի կնոջ ուղեկցում ականջ ծակող սուլոցով։ Անոթի այդ սրիկաներին զվարճացնելու համար մեր խանութպանները օղի էին խմեցնում շներին ու կատուներին կամ շան պոչից կապում թիթեղե նավթման, շվվացնում էին, և շունը վազում էր փողոցով՝ զնգզնգացնելով նավթամանը, սարսափից վնգստալով։ Շանը թվում էր, թե իրեն կրնկակոխ հետապնդում է ինչ-որ հրեշ, և նա վազում էր քաղաքից դուրս, հասնում դաշտ ու այնտեղ էլ ուժասպառ ընկնում։ Մեր քաղաքում շարունակ դողդողացող մի քանի շներ կային, պոչերը ոտքերի արանքը քաշած, որոնց մասին ասում էին, թե չեն դիմացել այդ զվարճությանը և խելագարվել են։

Կայարանը կառուցվում էր քաղաքից հինգ վերստ հեռու։ Ասում էին, թե ինժեներները հիսուն հազար կաշառք են ուզել, որպեսզի ճանապարհը քաղաքի մոտով անցնի, սակայն քաղաքային վարչությունը համաձայնել է տալ միայն քառասունը, տասը հազարի համար լեզու չեն գտել, իսկ հիմա բնակիչները փոշմանել են, քանի որ մինչև կայարան հարկավոր էր խճուղի անցկացնել, որը նախահաշվով ավելի թանկ էր նստում։ Ամբողջ գծի երկարությամբ արդեն դրված էին փայտակոճերն ու ռելսերը, և շինանյութ ու բանվորներ տեղափոխող հատուկ գնացքներ գնում-գալիս էին, ձգձգվում էր միայն կամուրջների շինարարությունը, որ կառուցում էր Դոլժիկովը, մեկ էլ տեղ-տեղ պատրաստ չէին կայարանները։

Մեր առաջին կայարանը, որը կոչվում էր Դուբեչնյա, գտնվում էր քաղաքից տասնյոթ վերստ հեռու։ Ես գնում էի ոտքով։ Առավոտվա արևով բռնված աշնանացանի ու գարնանացանի արտերը պայծառ կանաչին էին տալիս։ Հարթ ու սրտաբաց տեղ էր, և հեռվում պարզորոշ երևում էին կայարանը, բլուրները, հեռավոր դաստակերտները... Որքա՜ն լավ էր այդ ազատության մեջ։ Եվ ինչպե՞ս էի ուզում գոնե այդ առավոտ համակվել ազատության գիտակցումով, որպեսզի չմտածեմ, թե ինչ է կատարվում քաղաքում, չմտածեմ իմ հոգսերի մասին, ուտելու պահա՜նջ չունենամ։ Ինձ ոչինչ այնպես չէր խանգարում ապրել,

ինչպես քաղցի սուր զգացումը, երբ իմ լավագույն մտքերին տարօրինակ կերպով խառնվում միանում էր ձավարի շիլա, կուլետներ ու տապակած ձկներ ուտելու ցանկությունը։ Ա՛յ, մեն-մենակ դաշտում կանգնած նայում էի արտույտին, որ միևնույն տեղում կարծես կախվել էր օդում և անհանգիստ ծվծվում էր, իսկ ինքս մտածում էի. «Լավ կլիներ հիմա կարագ ու հա՜ց ուտեի»։ Կամ ահա նստում եմ ճանապարհի եզրին ու փակում աչքերս, որպեսզի հանգստանամ, ականջ դնեմ մայիսյան սքանչելի այդ ձայներին, և հանկարծ հիշում եմ, թե ինչպես է բուրում տաք կարտոֆիլը։ Խոշոր մարմին և ամուր կազմվածք ունենալով հանդերձ, ինձ վիճակված էր ընդհանրապես քիչ ուտել, ուստի օրվա ընթացքում իմ գլխավոր զգացումը քաղցն էր, և գուցե դա էր պատճառը, որ շատ լավ հասկանում էի, թե ինչու մարդկանց այդպիսի մեծ բազմություն աշխատում է միայն մի պատառ հացի համար և կարող է խոսել միայն ուտելու մասին։

Դուբեչնյայում ծեփում էին կայարանի ներսը և կառուցում ջրհան կայանի վերին փայտե հարկը։ Շոգ էր, կրի հոտ էր ընկել, բանվորները ծույլ-ծույլ թափառում էին տաշեղի և աղբի կույտերի մեջ։ Իր փայտաշեն տնակի մոտ քնած էր սլաքավարը, և արևն ուղիղ ընկել էր նրա դեմքին։ Ոչ մի ծառ չկար։ Թույլ դզզում էր հեռագրալարը, ու դրա վրա այս ու այնտեղ թառած հանգստանում էին ճուռակները։ Անելիքս չիմանալով, այդ նույն աղբակույտերի մեջ թափառելիս հիշեցի, թե ինչպես իմ հարցին՝ ինչ պարտականություն պետք է կատարեմ, ինժեները պատասխանեց. «Դե՛, կտեսնենք, էլի»։ Բայց ի՞նչ կարելի է տեսնել այդ անապատում։ Մեփազործները խոսում էին տասնապետի և ինչ-որ Ֆեդոտ Վասիլևի մասին. ես ոչինչ չէի հասկանում, և կամաց-կամաց ինձ պաշարեց ձանձրույթը՝ ֆիզիկական այն ձանձրույթը, երբ զգում ես ձեռքերդ, ոտքերդ ու հսկայական մարմինդ և չգիտես, թե ինչ անես դրանք, ուր կորչես։

Ամենաքիչը երկու ժամ չափչփելուց հետո նկատեցի, որ կայարանի մոտից, երկաթգծից դեպի աջ, հեռագրասյուներ են շարված, որոնք վերջանում են մեկուկես-երկու վերստ այն կողմ, սպիտակ քարե ցանկապատի մոտ։ Բանվորներն ասացին, որ այդտեղ գրասենյակն է, ու ես վերջապես գլխի ընկա, որ հենց այդտեղ էլ պետք է գնամ։

Դա շատ հին, վաղուց լքված մի դաստակերտ էր։ Սպիտակ չեչաքարե պարիսպն անձրևից ու քամուց արդեն քայքայվել էր ու տեղ-տեղ փլուլ եկել, իսկ խուլ պատով դեպի դաշտ նայող ֆլիգելի տանիքը ժանգոտ էր, ու վրան էլ այս ու այն կողմում թիթեղյա կարկատաններ էին պսպղում։ Դարպասից երևում էին մոլախոտով ծածկված ընդարձակ բակը, շերտափեղկավոր պատուհաններով և ժանգից կարմրած բարձր տանիքով տերունական հնամենի տունը։ Տան աջ ու ձախ կողքերին միանման երկու ֆլիգելներ կային։ Մեկի պատուհաններին տախտակներ էին մեխված, իսկ մյուսի պատուհանները բաց էին, և դրա մոտ պարանին լվացք էր փռած ու հորթեր էին ման գալիս։ Բակում ցցված էր վերջին հեռագրասյունը, որի լարերը ձգվում էին դեպի խուլ պատով ֆլիգելի պատուհանը։ Դուռը բաց էր, ներս մտա։ Հեռագրական ապարատի սեղանի մոտ նստած էր մուգ, գանգուր մազերով ու քաթանե պիջակով մի ինչ-որ պարոն։ Նա հոնքերի տակով խեթ-խեթ նայեց ինձ, բայց անմիջապես ժըպտաց ու ասաց.

— Բարև, փոքրի՛կ օգուտ։

Իվան Չեպրակովն էր՝ գիմնազիայի իմ ընկերը, որին ծխելու համար երկրորդ դասարանից վռնդեցին։ Մի ժամանակ, աշնանը, միասին մենք բռնում էինք կարմրակատարներ, սարեկներ, փայտփորիկներ և առավոտ ծեգին վաճառում շուկայում, քանի դեռ մեր ծնողները քնած էին լինում։ Դարան մտած սպասում էինք չվող սարյակների երամին և մանր կոտորակով խփում, հետո վիրավորվածներին հավաքում էինք, դրանց մի մասը սոսկալի տանջանքներով սատկում էր (մինչև հիմա էլ հիշում եմ, թե գիշերը ինչպես էին իմ վանդակի մեջ տնքում), իսկ ողջ մնացածներին ծախում էինք ու հետո էլ անաստված կերպով երդվում, թե դրանք բոլորը արուներ են։ Մի անգամ շուկայում մոտս մի սարյակ մնաց, որը շատ երկար առաջարկում էի գնորդներին, վերջապես մի կոպեկով սաղացրի։ «Էլի փոքրիկ օգուտ է»,— կոպեկանոցը գրպանս դնելով, ասացի ինքս ինձ մխիթարելու համար, և այդ օրվանից փողոցի երեխաներն ու գիմնազիստները անունս կնքեցին փոքրիկ օգուտ։ Պատահում է, հիմա էլ երեխաներն ու խանութպանները հետևիցս այդպես բղավում են, թեև ինձնից բացի ոչ ոք արդեն չի հիշում, թե որտեղից է առաջացել այդ մականունը։

Չեպրակովը վտիտ կազմվածք ուներ, նեղ կուրծք, երկար ու

բարակ ոտքեր, ուսերն էլ կորացած էին։ Փողկապը պարանի պես ոլորված էր, ժիլետ իսկի չուներ, իսկ սապոգները իմից վատն էին՝ ծռմռված կրունկներով։ Նա աչքերը քիչ էր թարթում, հայացքը շեշտակի էր, ասես պատրաստվում էր ինչ-որ բան փոխըցնել, և միշտ անհանգիստ էր։

— Սպասիր, սպասիր,— ասաց նա իրար անցնելով,— սպասի՛ր... Ինչի՞ մասին էի հենց նոր խոսում։ Հա՜...

Խոսքի տուտը բացվեց։ Իմացա, որ կալվածքը, ուր այդ պահին գտնվում էի, դեռ վերջերս պատկանել է Չեպրակովներին և միայն անցյալ աշնանն է անցել ինժեներ Դոլժիկովի ձեռքը, որի կարծիքով, դրամագլուխը հողի մեջ պահելն ավելի ձեռնտու էր, քան թղթերի, և նա պարտքի դիմաց մեր կողմերում արդեն երեք կարգին կալվածք էր առել։ Վաճառքի ժամանակ Չեպրակովի մայրը պայմանագրով ստացել էր կողաշենքերից մեկում դարձյալ երկու տարի ապրելու իրավունք և ինժեներից տղայի համար գրասենյակում աշխատանքի տեղ էր խնդրել։

— Ինչո՞ւ չէր առնի որ,— ասաց Չեպրակովն ինժեների մասին։— Միայն կապալառուների՞ց ինչքան է գլուխ, գիտե՞ս... Բոլորի՛ց էլ գլուխ է։

Հետո նա տարավ ինձ ճաշի, հենց ոտքի վրա որոշելով, որ ես պետք է իր հետ միասին ապրեմ ֆլիգելում և ճաշեմ իր մոր մոտ։

— Նա ժլատ է,— ասաց Չեպրակովը,— բայց քեզնից թանկ չի վերցնի։

Փոքրիկ սենյակներում, որտեղ ապրում էր նրա մայրը, շատ նեղվածք էր։ Բոլոր սենյակները, նույնիսկ սրահն ու նախասենյակը, լեփ-լեցուն էին խիստ հնատիպ, կարմիր փայտից պատրաստված կահույքով, որ մեծ տնից այստեղ էին բերել կալվածքը վաճառելուց հետո։ Տիկին Չեպրակովան, որ շատ դեռ տարիքն առած ու չինացու շեղ աչքերով կին էր, նստած էր պատուհանի մոտ դրված ընդարձակ բազկաթոռին և գուլպա էր գործում։ Նա ինձ ընդունեց հանդիսավոր։

— Մայրի՛կ, սա Պոլոզնևն է,— ներկայացրեց ինձ Չեպրակովը։— Այստեղ պետք է ծառայի։

— Դուք ազնվակա՞ն եք,— տարօրինակ ու տհաճ ձայնով հարցրեց Չեպրակովան, և ինձ թվաց, թե նրա կոկորդում հալած յուղ էր խլթխլթում։

— Այո,— պատասխանեցի ես։

— Նստեցնք։

Ճաշը մի բանի նման չէր։ Մատուցեցին միայն դառնահամ շորով կարկանդակ և կաթնապուր։ Ելենա Նիկիֆորովնան՝ տանտիրուհին, անընդհատ ինչ-որ տարօրինակ թարթում էր մեկ այս, մեկ այն աչքը։ Խոսում էր, ուտում, սակայն նրա ողջ կերպարանքի մեջ արդեն ինչ-որ մեռելային բան կար, և նույնիսկ դիակի հոտ էր կարծես փչում։ Նրա մեջ կյանք հազիվ էր մնացել, բայց շատ թույլ պահպանվել էր նաև այն գիտակցությունը, որ ինքը կալվածատեր է, տիրուհի, որ ճորտեր է ունեցել, որ ինքը եղել է գեներալի կին, և սպասավորը պարտավոր է եղել մեծարել իրեն «ձերդ գերազանցություն» ասելով։ Ու երբ անցածգնացած կյանքի այդ ողորմելի մնացուկները նրա մեջ մի ակնթարթ բոցավառվում էին, տղային ասում էր.

— Ժա՜ն, դու դանակը ճիշտ չես բռնել։

Կամ էլ, դժվարությամբ շնչելով, բայց հյուրին զբաղեցնել ցանկացող տանտիրուհու սեթևեթանքով, ինձ պատմում էր.

— Իսկ մենք, գիտե՞ք, վաճառեցինք մեր կալվածքը։ Իհարկե ափսոս էր, մենք այս տեղին այնպե՞ս սովորել ենք, սակայն Դոլժիկովը խոստացել է Ժանին դարձնել Դուբեչնյայի կայարանապետը, այնպես որ այստեղից չենք հեռանա, կապրենք կայարանում, իսկ դա նույնն է թե կալվածքում։ Ինժիներն այնքան բարի՜ է։ Դուք չե՞ք համարում, որ նա շատ գեղեցիկ տղամարդ է։

Մինչ այդ Չեպրակովները շատ լավ են ապրել, բայց գեներալի մահից հետո ամեն ինչ փոխվել է։ Ելենա Նիկիֆորովնան սկսել է հարևանների հետ գժտվել, դատարան ընկնել, պակաս վճարել կապալառուներին ու բանվորներին, շարունակ վախենալով, չլինի՞ թե իրեն թալանեն, և ինչ-որ մի տասը տարում Դուբինչյան դարձել է անճանաչելի։

Մեծ տան հետևում արդեն խոպանացած մի հին այգի կար, որ լցված էր մոլախոտով ու մացառներով։ Ես անցա դեռ անվնաս ու գեղեցիկ սանդղավանդով. ապակեպատ դռան միջից երևում էին պարկետած հատակով սենյակը, որ երևի հյուրասենյակն էր, հնամենի դաշնամուրը, պատերին էլ կարմիր փայտից լայն շրջանակների մեջ փորագրանկարներ... և ուրիշ ոչինչ։ Նախկին ծաղկանոցից մնացել էին միայն քաջվարդն ու կակաչը, որոնք խոտի միջից բարձրացրել էին իրենց ճերմակ և վառ կարմիր գլխիկները։ Ծառուղիներում բոյ քաշելով ու իրար խանգարելով, աճել էին մատղաշ թխկիներն ու կնձիները, որոնց տերևները կովերն արդեն պոկոտել էին։ Ծառերը խիտ էին, և այգին թվում էր անանցանելի, բայց դա միայն տան մոտերքում էր, ուր դեռ կանգուն էին բարդիները, սոճիները և նախկին ծառուղիներից անվնաս մնացած հին լորկները, իսկ դրանցից այն կողմ այգին մաքրել էին խոտհարքի համար, և այդտեղ արդեն տոթ չէր, քամի էր խաղում, սարդոստայնն էլ չէր մտնում բերանդ ու աչքերդ։ Ինչքան այգու խորքն էիր գնում, այնքան ավելի ընդարձակվում էր, և արդեն աղաս-արձակ աճում էին փտախտից ու խշմարներից այլանդակված բալենիները, սալորենիները, ճյուղատարած խնձորենիները, իսկ տանձենիներն այնքան բարձր էին, որ նույնիսկ չէիր էլ հավատում, թե դրանք իրոք տանձի ծառեր են։ Այգու այդ մասը վարձակալել էին մեր քաղաքի առևտրական կանայք, իսկ գողերից ու սարյակներից դա պաշտպանում էր մի խենթուկ ծերունի, որն ապրում էր հոլիկում։

Այգին, որ գնալով նոսրանում էր ու դառնում իսկական մարգագետին, իջնում էր դեպի գետը, որի ափերը ծածկված էին կանաչ եղեգնով և ուռիներով։ Ջրաղացի ամբարտակի մոտ գետի միջընթացքն էր, խորունկ ու ձկնառատ։ Ողոտե տանիքով փոքրիկ ջրաղացը զայրացած աղմկում էր, անդադար կոկռում էին գորտերը։ Ձկների խայտանքից հայելանման հարթ ջրի երեսին երբեմն շրջանակներ էին գոյանում, դողդողում էին ջրաշուշանները։ Գետակի մյուս ափին Դուբեչնյա գյուղակն էր։ Գետի խաղաղ, կապույտ միջընթացքը հրապուրում էր մարդու՝ ղովությունն և անդորր խոստանալով։ Ու հիմա այդ ամենը՝ և՛ գետը, և՛ ջրաղացը, և՛ գեղեցիկ ափերը պատկանում էին ինժիներին։

Եվ ահա սկսվեց իմ նոր ծառայությունը։ Ես հեռագրեր էի ստանում և ուղարկում, զանազան տեղեկագրեր կազմում և մաքուր արտագրում պահանջագրերը, բողոքներն ու զեկուցագրերը, որոնք մեր գրասենյակն էին ուղարկում անգրագետ տանտերերն ու վարպետները։ Սակայն օրվա մեծ մասը ոչինչ չէի անում, այլ հեռագրի սպասելով, սենյակում հետ ու առաջ էի քայլում կամ փոքրիկ մի տղա էի նստեցնում կողաշենքում, իսկ ինքս գնում էի այգի զբոսնելու, մինչև նա վազելով գալիս էր ու հայտնում, որ ապարատը տկտկում է։ Ճաշում էի տիկին

Չեպրակովայի մոտ։ Միս շատ քիչ էր լինում, կերակուրները մեծ մասամբ կաթով էին, իսկ չորեքշաբթի և ուրբաթ օրերին մատուցում էին պասուց կերակուրներ ու սեղանին դնում վարդագույն ափսեներ, որոնք հենց պասուց էլ կոչվում էին։ Չեպրակովան շարունակ աչքով էր անում. դա նրա համար արդեն սովորություն էր դարձել, և նրա ներկայությամբ ես ամեն անգամ ինձ վատ էի զգում։

Քանի որ գրասենյակում աշխատանքը մեկ հոգու համար էլ քիչ էր, ապա Չեպրակովը ոչինչ չէր անում, այլ միայն քնում էր կամ հրացանն առած գետափ գնում բադեր որսալու։ Երեկոները գյուղում կամ կայարանում նա հարբում էր և քնելուց առաջ, նայելով փոքրիկ հայելու մեջ, կանչում էր.

— Բարև՛, Իվան Չեպրակով։

Հարբած ժամանակ շատ էր գունատվում և անընդհատ շփում էր ձեռքերն ու ծիծաղում, կարծես խրխնջում էր՝ հի-հի-հի-հի՛։ Ծուխը որ բռնում էր, ոտից գլուխ մերկանում էր և դաշտով մեկ վազում։ Ճանճեր էր ուտում և ասում, որ թթվաշ են։

IV

Մի անգամ ճաշից հետո Չեպրակովը շնչակտուր ներս ընկավ տուն ու ասաց։

— Գնա, քույրդ եկել է։

Ես դուրս եկա։ Մեծ տան նախամուտքի առաջ իրոք որ կանգնած էր քաղաքային թեթև մի կառք։ Եկել էր քույրս, իսկ նրա հետ՝ Անյուտա Բլագովոն ու զինվորական կիտելով էլի մի պարոն։ Մոտենալով, զինվորականին ճանաչեցի՝ Անյուտայի եղբայրն էր՝ բժիշկը։

— Մենք ձեզ մոտ եկել ենք զբոսախնջույքի,— ասաց նա։— Ոչի՞նչ։

Քույրս և Անյուտան ուզում էին հարցնել, թե ինչպես եմ այստեղ ապրում, բայց երկուսն էլ միայն լռությամբ ինձ էին նայում։ Ես նույնպես լուռ էի։ Նրանք հասկացան, որ այստեղ ինձ դուր չի գալիս, և քրոջս աչքերին արցունք երևաց, իսկ Անյուտա Բլագովոն շիկնեց։ Գնացինք այգի։ Բժիշկը քայլում էր առջևից և ոգևորված ասում.

— Ի՞նչ օդ է, տե՛ր աստված, ի՞նչ օդ...

Արտաքինով նա դեռ բոլորովին ուսանող էր։ Խոսում ու քայլում էր ուսանողի պես, և նրա մոխրագույն աչքերի հայացքն այնպես կենդանի էր, սովորական ու պարզ, ինչպես լավ ուսանողինը։ Իր բարձրահասակ և գեղեցիկ քրոջ կողքին նա թվում էր վտիտ ու փոքրամարմին. նրա պստիկ մորուքը նոսր էր, իսկ ձայնը՝ թույլ տենորիկ, սակայն բավական հաճելի։ Ինչ-որ տեղ ծառայում էր զինվորական գնդում և հիմա արձակուրդ էր եկել հարազատների մոտ, ասում էր, թե աշնանը մեկնելու է Պետերբուրգ՝ բժշկության դոկտորի աստիճանի համար քննություն հանձնելու։ Նա արդեն իր ընտանիքն ուներ՝ կին և երեք երեխա։ Շուտ էր ամուսնացել, երբ դեռ երկրորդ կուրսում էր, և քաղաքում նրա մասին խոսում էին, թե ընտանեկան կյանքում դժբախտ է և այլևս կնոջ հետ չի ապրում։

— Ժամը քանի՞սն է,— անհանգստացավ քույրս։— Լավ կլինի մի քիչ շուտ վերադառնանք. հայրս թույլատրել է ինձ մնալ եղբորս մոտ մինչև ժամը վեցը։

— Ա՛հ, ձեր հայրն է՞լ,— հառաչեց բժիշկը։

Ես ինքնաեռ գցեցի։ Մեծ տան պատշգամբի առաջ, գորգի վրա, մենք թեյ խմեցինք, իսկ բժիշկը, ծնկի եկած խմում էր ափսեով ու ասում, որ երանության մեջ է։ Հետո Չեպրակովը գնաց բանալին բերեց և բացեց ապակեպատ դուռը, բոլորս ներս մտանք։ Այդտեղ խորհրդավոր կիսախավար էր, սունկի հոտ էր գալիս, և մեր ոտնաձայները աղմուկով թնդում էին, ասես հատակի ներքևում դատարկ նկուղ կար։ Բժիշկը, կանգնած, ձեռք տվեց դաշնամուրի ստեղներին, որոնք պատասխանեցին խուլ, թրթռացող ու կերկերուն, սակայն դեռևս ներդաշնակ մի ակորդով։ Նա մաքրեց կոկորդը և երգեց ինչ-որ սիրերգ, դեմքը կնճռոտելով ու անհամբերությամբ դոփելով, երբ ստեղներից որևէ մեկը ձայն չէր հանում։ Քույրս արդեն չէր ուզում տուն գնալ, այլ հուզված քայլում էր սենյակում և կրկնում.

— Ես ուրա՛խ եմ, անչափ, անչա՛փ ուրախ եմ։

Նրա ձայնի մեջ զարմանք կար, կարծես թե չէր հավատում, որ իր հոգին էլ կարող է այդպես թեթև լինել։ Կյանքումս առաջին անգամ էի տեսնում նրան այդքան ուրախ։ Նույնիսկ լավացել էր։ Կողքից նա տգեղ էր, քիթը և շրթունքները մի տեսակ դուրս էին պրծած և թվում էր, թե փչում է, բայց գեղեցիկ մուգ աչքեր ուներ, դեմքի գունատ, շատ նրբին գույն և բարության ու տրտմության մի սրտաշարժ արտահայտություն, իսկ երբ խոսում էր, ավելի քնքշագեմ էր երևում և նույնիսկ գեղեցիկ։ Ես

էլ, նա էլ մեր մորն էինք քաշել՝ լայնաթիկունք, ուժեղ, համբերատար, բայց քրոջս գունատությունը հիվանդությունից էր, հաճախակի հաղում էր, և նրա աչքերում ես երբեմն նկատում էի մի արտահայտություն, որը բնորոշ է այն մարդկանց, ովքեր տառապում են լուրջ հիվանդությամբ, սակայն, չգիտես ինչու, թաքցնում են իրենց այդ հիվանդությունը։ Նրա այդ ուրախության մեջ ինչ-որ երեխայական միամտություն կար, և կարծես դա մեր մանկական տարիներին դաժան դաստիարակությամբ ճնշված ու մեռած այն ուրախությունն էր, որ հիմա հանկարծ արթնացել էր քրոջս հոգում և դուրս ժայթքել։

Բայց երեկոյան, երբ կառքը եկավ կանգնեց դռանը, քույրս սկվեց, խեղճացավ ու կառք նստեց այնպիսի տեսքով, որ կարծես դա մեղադրյալի աթոռ էր։

Նրանք գնացին, աղմուկը դադարեց... Ու ես հիշեցի, որ Անյուտա Բլագովոն ամբողջ ժամանակ ինձ հետ ոչ մի բառ չփոխանակեց։

«Զարմանալի աղջիկ է,— մտածեցի ես,— զարմանալի աղջիկ»։

Եկավ խոտհնձի պաղը, և արդեն ամեն օր մեզ սկսեցին կերակրել պաղուց ուտելիքներով։ Անբանությունից ու վիճակիս անորոշությունից ինձ պաշարել էր ֆիզիկական ձանձրույթը, և ես, ինքս ինձնից դժգոհ, ալարկոտ ու քաղցած թրև էի գալիս կալվածքում և սպասում միայն հարմար տրամադրության, որպեսզի հեռանամ։

Մի անգամ իրիկնամուտին, երբ մեզ հետ ֆլիգելում նստած էր նաև Ռեդկան, անսպասելի ներս մտավ Դոլժիկովը՝ արևից կաս-կարմիր կարած ու փոշու մեջ կորած։ Նա երեք օր անց էր կացրել իր տեղամասում և հիմա էլ շոգեքարշով Դուբեչնյա էր եկել, իսկ կայարանից մեզ մոտ՝ ոտքով։ Մինչև քաղաքից կառք կգար, նա իր գործակատարի հետ կալվածքում ման եկավ, բարձրը ձայնով հրամաններ արձակեց, հետո մի ամբողջ ժամ նստեց գրասենյակում ու ինչ-որ նամակներ գրեց։ Նրա ներկայությամբ իր անունով հեռագրեր ստացվեցին, և հենց ինքն էլ ակտիվացրեց պատասխանը։ Երեքս էլ կանգնել էինք ձգված ու լուռ։

— Ինչպիսի՜ անկարգություն է,— ասաց նա, զզվանքով նայելով տեղեկագրերին։— Երկու շաբաթ հետո ես գրասենյակը տեղափոխում եմ կայարան և նույնիսկ չգիտեմ, թե ինչպե՞ս վարվեմ ձեզ հետ, պարոնայք։

— Ես ջանք չեմ խնայում, ձե՛րդ բարեծնություն,— ասաց Զեպրակովը։

— Հը՛, տեսնո՞ւմ եմ, թե ինչպե՛ս չեք խնայում։ Միայն աշխատավարձ կարող եք ստանալ,— նայելով ինձ շարունակեց ինժեները։— Հույսներդ դրել եք հովանավորության վրա, թե ինչպես հեշտ ու արագ faire la carrière[1]։ Դե՜, ես հովանավորության-մովանավորության չեմ նայի։ Իմ մասին ոչ ոք չի բարեխոսել։ Մինչև ինձ ճանապարհ հարթելը, ես մեքենավար եմ եղել, որպես հասարակ յուղող աշխատել եմ Բելգիայում։ Իսկ դու, Պանտելեյ, այստեղ ի՞նչ ես անում,— հարցրեց նա շրջվելով Ռեդկայի կողմը։— Սրանց հետ հարբեցողությա՞մբ ես զբաղվում։

Բոլոր հասարակ մարդկանց չգիտես ինչու նա Պանտելեյ էր անվանում, իսկ այնպիսիներին, ինչպես ես ու Զեպրակովը, արհամարհում էր ու հենց երեսներին էլ շպրտում՝ հարբեցողներ, անասուններ, սրիկաներ։ Մանր ծառայողների նկատմամբ ընդհանրապես դաժան էր, անխիղճ տուգանում էր ու աշխատանքից վռնդում շատ անտարբեր, առանց բացատրության։

Վերջապես կառք եկավ նրանց տանելու։ Մեկնելուց առաջ ինժեները խոստացավ երկու շաբաթ հետո վճարել բոլորիս, գործակատարին անվանեց հիմարի գլուխ և ապա հարմար տեղավորվելով կառքի մեջ, շարժվեց դեպի քաղաք։

— Անդրե՛յ Իվանիչ,— ասացի ես Ռեդկային,— ինձ վերցրեք ձեզ մոտ բանվոր։

— Դե՜, ի՞նչ կա որ։

Եվ միասին մենք քայլեցինք դեպի քաղաք։ Երբ կայարանն ու դաստակերտը մնացին մեր հետևում՝ հեռու, ես հարցրի.

— Անդրե՛յ Իվանիչ, քիչ առաջ դուք ինչո՞ւ էիք Դուբեչնյա եկել։

— Նախ, որ իմ տղաներն աշխատում են գծի վրա, իսկ հետո՝ եկել էի գեներալի կնոջը տոկոսներ վճարելու։ Անցյալ տարի նրանից հիսուն ռուբլի էի վերցրել և հիմա վերադարձնում եմ ամսական մեկ ռուբլի։

Ներկարարը կանգ առավ և բռնեց կոճակիցս։

[1] Հասնել կարիերայի (ֆրանս.)։

— Միսայիլ Ալեքսեիչ, հրեշտա՜կս,— շարունակեց նա,— ես այսպես եմ հասկանում՝ թե որ հասարակ մի մարդ կամ էլ մի պարոն վերցնում է թեկուզ ամենաքիչ տոկոսը, նա արդեն շարագործ է։ Այդպիսի մարդու մեջ ճշմարտություն չի կարող լինել։

Լղարիկ, գունատ ու երկյուղալի Ռեդկան փակեց աչքերը, գլուխն օրորեց ու փիլիսոփայի տոնով արտասանեց.

— Որդը խոտ է փչացնում, ժանգը՝ երկաթ, իսկ կեղծիքը՝ մարդու հոգին։ Տե՜ր աստված, փրկիր մեղավորներիս։

V

Ռեդկան ճարպիկ մարդ չէր և գործից բան չէր հասկանում. ավելի շատ աշխատանք էր վերցնում, քան կարող էր կատարել և հաշիվների մեջ սխալվում էր, գլուխը կորցնում և համարյա միշտ էլ վնաս էր անում։ Նա ներկում էր, ապակի գցում, պատերին պաստառ քաշում և նույնիսկ իր վրա վերցնում թիթեղագործական աշխատանք, և հիշում եմ, թե ինչպես չնչին պատվերի համար էլ, պատահել է, երեք օր դեսուդեն է ընկել թիթեղագործ գտնելու։ Նա հիանալի վարպետ էր, մեկ-մեկ օրական նույնիսկ տասը ռուբլու չափ վաստակում էր, և եթե ամեն գնով գլխավորը լինելու և կապալառու կոչվելու այդ ձգտումը չիներ, նա հավանաբար փող շատ կունենար։

Ինքը գործավարձ էր ստանում, իսկ ինձ ու մյուս տղաներին վճարում օրավարձ՝ յոթանասուն կոպեկից մինչև մեկ ռուբլի։ Քանի դեռ շոգ ու չոր եղանակ էր, մենք դրսի զանազան աշխատանքներ էինք կատարում, մեծ մասամբ տանիքներ ներկում։ Ոտքերս տաքի սովոր չէին, և կարծես քայլում էի շիկացած վառարանի վրայով, իսկ երբ վալենկա էի հագնում, ոտքերս խաշվում էին։ Բայց դա միայն առաջին օրերին, հետո վարժվեցի և ամեն ինչ կարգի ընկավ։ Այդ ժամանակ ես ապրում էի այնպիսի մարդկանց հետ, որոնց համար աշխատանքը պարտադիր էր ու անխուսափելի, և որոնք աշխատում էին բեռնակիր ձիերի պես, հաճախ չհասկանալով աշխատանքի բարոյական նշանակությունը և նույնիսկ խոսելիս երբեք չէին գործածում «աշխատանք» բառը։ Նրանց կողքին ես ինձ բեռնաձի էի զգում, ավելի ու ավելի համակվելով այն բանի անհրաժեշտությամբ ու անխուսափելիությամբ, ինչ անում էի, և դա թեթևացնում էր կյանքս, ինձ ազատում ամեն մի երկմտանքից։

Սկզբնական շրջանում ամեն ինչ հետաքրքրում էր ինձ, ամեն ինչ նոր էր, ասես նորից էի ծնվել։ Կարողանում էի քնել գետնին, քայլել բոբիկ, իսկ դա շատ հաճելի է. առանց քաշվելու կարողանում էի կանգնել հասարակ ամբոխի մեջ, ու երբ փողոցում սայթաքելով ընկնում էր կառքի ձին, վազում էի և օգնում ոտքի կանգնեցնելու, չվախենալով կեղտոտել հագուստս։ Իսկ գլխավորն այն էր, որ ես ապրում էի իմ սեփական՝ միջոցների հաշվին և ոչ ոքի համար բեռ չէի։

Տանիք ներկելը, հատկապես մեր օլիֆով ու ներկով, անչափ ձեռնտու գործ էր համարվում և դրա համար էլ այդ կոպիտ ու ձանձրալի աշխատանքից չէին խուսափում նույնիսկ այնպիսի լավ վարպետները, ինչպիսին Ռեդկան էր։ Կարճ շալվարով, բարալիկ, բաց կարմրավուն ոտքերով, նա արագիլի պես քայլում էր տանիքի վրա, և ես լսում էի, թե ինչպես վրձինը քսքստացնելով, Ռեդկան խոր հոգոց էր հանում ու ասում.

— Վա՜յ մեզ, վա՜յ մեզ, մեղավորներիս։

Տանիքի վրա էլ Ռեդկան քայլում էր այնպես ազատ, ինչպես հարթ գետնին։ Թեև հիվանդ էր ու մեռելի նման գունատ, սակայն արտակարգ ժիր էր։ Ջահելների նման նա էլ առանց լաստակների՝ միայն աստիճանի ու պարանի օգնությամբ, կարողանում էր ներկել եկեղեցիների գմբեթներն ու կտուրները, և փոքրինչ սարսափելի էր, երբ հենց այդտեղ, ահավոր բարձրության վրա կանգնած, Ռեդկան հասակով մեկ շտկվում էր ու չգիտես ում համար արտասանում.

— Որդը խո՜տ է փչացնում, ժանգը՝ երկաթ, իսկ կեղծիքը՝ մարդու հոգի՜ն։

Կամ էլ որևէ բանի մասին մտածելով՝ բարձրաձայն պատասխանում էր ինքն իրեն.

— Ամեն ինչ կարող է պատահել, ամե՜ն ինչ կարող է պատահել։

Երբ աշխատանքից տուն էի վերադառնում, խանութների դռների մոտ նստոտած մարդիկ՝ բոլոր այդ գործակատարները, աշակերտներն ու սրանց տերերը, իմ հետևից ծաղրանքով ու շարախնդությամբ ինչ ասես ասում էին. սկզբում դա վրդովում էր ինձ և թվում ուղղակի հրեշավոր։

— Փոքրիկ օգո՜ւտ,— լսվում էր ամեն կողմից։— Ներկա-բա՜ր, ժանգո՜տ։

Եվ ոչ ոք ինձ հետ այնքան անխիղճ չէր վարվում, ինչքան հատկապես նրանք, ովքեր դեռ վերջերս իրենք էլ հասարակ մարդիկ էին և իրենց մի պատառ հացը վաստակում էին սև աշխատանքով։ Երբ առևտրականների շարքի առջևից անցնում էի, երկաթավաճառի խանութի մոտ, իբրև թե միամտաբար, վրաս ջուր էին ցփնում ու մի անգամ նույնիսկ փայտի մի կտոր շպրտեցին։ Իսկ ձկնավաճառ ճերմակամազ մի ծերուկ, առաջս կտրեց և չարությամբ նայելով ինձ՝ ասաց.

— Հիմար, քեզ չենք խղճում, քո հա՜յրն է մեղք։

Իսկ իմ ծանոթներն ինձ հանդիպելիս մի տեսակ շփոթվում էին։ Ոմանք ինձ խեի ու ծաղրածուի տեղ էին դնում, մյուսները խղճում էին, երրորդները չգիտեին էլ, թե ինչպես վարվեն հետս, և դժվար էր նրանց հասկանալ։ Մի անգամ, ցերեկը, Բոլշայա Դվորյանսկայա փողոցին մոտիկ նրբանցքներից մեկում հանդիպեցի Անյուտա Բլագովոյին։ Ես աշխատանքի էի գնում և ձեռքիս բռնած տանում երկարապոչ երկու վրձին ու մի դույլ ներկ։ Ճանաչելով ինձ՝ Անյուտան բռնկվեց։

— Խնդրում եմ փողոցում ինձ չբարևեք...— ասաց նա հուզված, խիստ դողդողացող ձայնով, ձեռքը չպարզելով ինձ, և աչքերում հանկարծ արցունք փայլեց։— Ձեր կարծիքով, եթե այս ամենը այդքան հարկավոր է, թող լինի... թող լինի, միայն խնդրում եմ, ինձ մի՛ հանդիպեք։

Ես արդեն ապրում էի ոչ թե Բոլշայա Դվորյանսկայա փողոցում, այլ Մակարիխա արվարձանում, իմ դայակ Կարպովնայի մոտ, բարի, բայց մռայլ մի պառավի, որ միշտ ինչ-որ վատ բան էր կանխազգում, ընդհանրապես վախենում էր բոլոր երազներից և նույնիսկ մեղուների ու պիծակների մեջ էլ, որոնք թռչելով մտնում էին նրա սենյակը, տեսնում էր վատ նախանշաններ։ Նրա կարծիքով, իմ բանվոր դառնալը ոչ մի լավ բան չէր խոստանում։

— Գլուխդ կորցրե՞լ ես,— տխուր-տրտում ասում էր նա, օրորելով գլուխը,— կորցրե՞լ...

Տնակում Կարպովնայի հետ ապրում էր նրա հոգեորդի մսագործ Պրոկոֆին, երեսուն տարեկան հսկայամարմին մի անճոռնի՝ շեկ մազերով ու կոշտ բեղերով մի տղամարդ։ Նախասենյակում ինձ հանդիպելիս նա լուռ ու հարգալից զիջում էր ճանապարհը, իսկ երբ հարբած էր լինում, հինգ մատներն էլ մոտեցնելով գլխարկի հովարին, ողջունում էր։ Երեկոյան ընթրում էր, և փայտե միջնորմի հետևից ես լսում էի, թե ինչպես նա անքում էր ու փնչում, բաժակ-բաժակի հետևից դատարկելով։

— Մայրի՜կ,— կանչում էր նա կիսաձայն։

— Հը՜,— ձայն էր տալիս Կարպովնան, որն անչափ սիրում էր իր հոգեորդուն։— Ի՞նչ կա, տղաս։

— Ես քեզ, մե՛րս, կարող եմ լավություն անել։ Այս երկրավոր աշխարհքում քեզ կկերակրեմ մինչև խոր ծերություն, մինչև աշխարհքից հեռանալդ, ու երբ մեռար, իմ հաշվին կթաղեմ։ Ասում եմ, ուրեմն հաստատ է։

Ամեն օր վեր էի կենում արևածագից առաջ, շուտ էլ քնում էի։ Մենք՝ ներկարարներս, շատ էինք ուտում և խոր քնում, միայն չգիտես ինչու գիշերները սիրտս խփում էր։ Ընկերներիս հետ չէի ընդհարվում։ Ամբողջ օրը չէին դադարում հայհոյանքը, թունդ երդումներն ու, օրինակ, այնպիսի անեծքները, ինչպես՝ քոռանան աչքերդ կամ խոլերա ընկնես, բայց ինչ էլ լիներ, այնուամենայնիվ, իրար հետ ապրում էինք հաշտ ու խաղաղ։ Տղաները կասկածում էին, թե ես աղանդավոր եմ, և բարեհոգաբար կատակում էին հետս, ասելով, որ նույնիսկ հարազատ հայրս կհրաժարվեր ինձնից, և անմիջապես էլ պատմում էին, որ իրենք քիչ են մտնում աստծո տաճարը, որ իրենցից շատերը տասը տարի կլինի ինչ խոստովանության չեն եղել, և այդ անառակությունը արդարացնում էին նրանով, թե ներկարարը մարդկանց մեջ նույնն է, ինչ որ ագռավը՝ թռչունների մեջ։

Տղաները հարգում էին ինձ և հետս պատկառանքով վարվում։ Նրանց երևի դուր էր գալիս, որ ես չէի խմում, չէի ծխում և սուսիկ-փուսիկ, ծանրաբարո կյանք էին վարում։ Միայն թե նրանց համար խիստ տհաճ էր, որ օլիֆի գողությանը ես չէի մասնակցում և իրենց հետ պատվիրատուների մոտ չէի գնում թեյանվեր խնդրելու։ Գործատիրոջից օլիֆ ու ներկ գողանալը ներկարարների մոտ սովորություն էր ու գողություն չէր համարվում. և հետաքրքրական էր, որ նույնիսկ Ռեդկայի նման ազնիվ մարդը, ամեն անգամ աշխատանքից գնալիս, հետը մի քիչ սպիտակ ներկ կամ օլիֆ էր տանում։ Իսկ թեյանվեր խնդրել չէին ամաչում նույնիսկ հարգարժան ծերունիները, որոնք Մակարիխայում սեփական տներ ունեին, և ինձ համար վիրավորական էր ու ամոթալի, երբ տղաները, գործն սկսելիս կամ ավարտելիս,

խմբով շնորհավորում էին մի ինչ-որ ոչնչության և սրանից տասը կոպեկ ստանալուց հետո, նվաստանալով, շնորհակալություն հայտնում։

Պատվիրատուների մոտ ներկարարներն իրենց պահում էին խորամանկ պալատականների նման, և համարյա ամեն օր ես հիշում էի շեքսպիրյան Պոլոնիոսին։

— Երևի անձրև գա,— երկինք նայելով ասում էր պատվիրատուն։

— Կգա, անպայմա՛ն կգա,— համաձայնում էին ներկարարները։

— Ասենք, ամպերն անձրևաբեր չեն, գուցե անձրև չգա։

— Չի գա, ձերդ բարեծնություն։ Ճիշտ եք ասում, չի գա։

Աչքից հեռու նրանք ընդհանրապես հեգնանքով էին խոսում պատվիրատուների մասին, իսկ երբ, օրինակ, պատվիրատու տիրոջը տեսնում էին պատշգամբում նստած լրագիր կարդալիս, ակնարկում էին.

— Թե՞րթ է կարդում, իսկ ուտելու բան երևի չտա։

Մերոնց մոտ ես չէի գնում։ Աշխատանքից վերադառնալիս տանը հաճախ գտնում էի կարճ ու տագնապալի գրություններ, որոնց մեջ քույրս գրում էր հորս մասին. մերթ ճաշի ժամանակ նա ինչ-որ առանձնապես մտազբաղ էր և ոչինչ չկերավ, մերթ կանգնած տեղը ոտքի վրա երերաց, մերթ փակվեց իր սենյակում և երկար ժամանակ դուրս չեկավ։ Այդ լուրերն անհանգստացնում էին ինձ, ես չէի կարողանում քնել և նույնիսկ պատահել է, որ գիշերով գնացել եմ Բոլշայա Դվորյանսկայա փողոցը, անցել մեր տան մոտով, նայել մութ պատուհաններին և փորձել եմ գուշակել, թե արդյոք ամեն ինչ կարգի՞ն է։ Կիրակի օրերը քույրս գալիս էր ինձ մոտ, սակայն ցույց էր տալիս, թե իբր եկել է դայակին տեսնելու։ Ու երբ մտնում էր սենյակս, խիստ գունատված էր լինում, լացակումած աչքերով, և անմիջապես էլ սկսում էր լացը։

— Մեր հայրը սրան չի՛դիմանա,— ասում էր նա։— Աստված ոչ անի, եթե նրան որևէ բան պատահի, ամբողջ կյանքում խիղճդ կտանջի քեզ։ Դա սոսկալի՛ է, Միսայիլ։ Մեր մոր անունից աղաչում եմ՝ դարձի՛ եկ։

— Քույրիկ, սիրելի՛ս,— ասում էի ես,— ինչպե՞ս ուղղվեմ, երբ համոզված եմ, որ վարվում եմ խղճի մտոք։ Հասկացի՞ր։

— Գիտեմ, որ խղճով է, բայց երևի դա կարելի է անել ինչ-որ ուրիշ ձևով, որպեսզի ոչ ոք չվշտանա։

— Ա՛խ, տե՛ր աստված,— դռան հետևում հառաչում էր պառավը։— Գլուխդ կորցրե՛լ ես։ Փորձա՛նք կգա, հարազատներս, փորձա՛նք։

VI

Մի կիրակի օր անսպասելիորեն ինձ մոտ հայտնվեց բժիշկ Բլագովոն։ Նա կիտելով էր, որ հագել էր մետաքսե վերնաշապիկի վրա, և լաքած սապոգներով։

— Ես ձեզ մոտ եմ եկել,— սկսեց նա, ուսանողի պես կոշտ ու կոպիտ սեղմելով ձեռքս։— Ամեն օր լսում եմ ձեր մասին և հա պատրաստվում եմ գալ, ինչպես ասում են, սրտաբաց զրուցելու։ Քաղաքում խիստ ձանձրալի է, ոչ մի կենդանի մարդարարած չկա, չկա մեկը, որի հետ մի երկու խոսք փոխես։ Ո՞վ տիրամայր, ի՞նչ շոգ է,— շարունակեց նա հանելով կիտելն ու մնալով միայն մետաքսե վերնաշապիկով։— Աղավնյա՛կս, թույլ տվեք խոսել ձեզ հետ։

Ես էլ էի ձանձրացել և վաղուց է ինչ ուզում էի չլինել ներկարարների շրջանում։ Անկեղծորեն ուրախացա նրա գալու համար։

— Կսկսեմ այն բանից,— անկողնուս վրա նստելով, ասաց նա,— որ ամբողջ հոգով համակրում եմ ձեզ և խորապես հարգում ձեր այս կյանքը։ Այստեղ, քաղաքում, ձեզ չեն հասկանում, դե հասկացող էլ չկա, քանի որ ինքներդ գիտեք, շատ չնչին բացառությամբ, բոլորն այստեղ գոգոլյան խոզի մուրթներ են։ Բայց ես հենց մեր զբոսախնջույքի ժամանակ միանգամից հասկացա ձեզ։ Աղնիվ հոգի ունեք, շիտակ, վե՛հ մարդ եք։ Հարգում եմ ձեզ և մեծ պատիվ եմ համարում սեղմել ձեր ձեռքը,— շարունակեց նա ոգևորությամբ։— Իր կյանքն այսպես կտրուկ ու վճռական փոխելու համար, ինչպես վարվեցիք դուք, մարդ պետք է վերապրեր բարդ մի հոգեվիճակ, և որպեսզի հիմա այդ կյանքը շարունակեք ու մշտապես գտնվեք ձեր համոզմունքների բարձրության վրա, օրավուր պետք է լարված աշխատեք և՛ մտքով, և՛ սրտով։ Այժմ, մեր զրույցի հենց սկզբից, խնդրում եմ ասացեք, չե՞ք գտնում արդյոք, որ կամքի ուժը, այդ լարվածությունը, ողջ այդ պոտենցիան, եթե դուք ծախսեիք

մեկ այլ բանի վրա, օրինակ, այն բանի, որպեսզի ժամանակի ընթացքում մեծ գիտնական կամ նկարիչ դառնայիք, ապա ձեր կյանքն ավելի լայն և խոր ընդգրկում կունենար և շատ ավելի արդյունավետ կլիներ։

Երկար-բարակ զրուցեցինք, ու երբ խոսք բացվեց ֆիզիկական աշխատանքի մասին, ես այսպիսի մի միտք արտահայտեցի. հարկավոր է, որպեսզի ուժեղները չճնշեն թույլերին, որպեսզի մեծամասնության համար փոքրամասնությունը մակաբույծ կամ տգրուկ չդառնա, որը մշտապես ծծում է նրա լավագույն հյութերը, այսինքն՝ հարկավոր է, որպեսզի բոլորն, առանց բացառության, և՛ ուժեղները, և՛ թույլերը, հարուստներն ու աղքատները, հավասարապես մասնակցեն գոյության կռվին, յուրաքանչյուրն իր համար, իսկ այդ դեպքում համահարթման ավելի լավ միջոց չի գտնվի, քան ֆիզիկական աշխատանքը, որպես բոլորի համար ընդհանուր և անհրաժեշտ պարտականություն։

— Ձեր ասելով, դուրս է գալիս, որ ֆիզիկական աշխատանքով պետք է զբաղվեն բոլորն առանց բացառությա՞ն,— հարցրեց բժիշկը։

— Այո։

— Իսկ չե՞ք կարծում, որ եթե բոլորը, այդ թվում և լավագույն մարդիկ՝ մտածողներն ու մեծ գիտնականները, ամեն մեկն իր համար գոյության կռվին մասնակցելով, խճաքար ջարդոտելու և տանիք ներկելու վրա սկսեն ժամանակ վատնել, ապա դա կարող է առաջադիմությանը լուրջ վտանգ սպառնալ։

— Ո՞րն է այդ վտանգը,— հարցրի ես։— Առաջադիմությունը չէ՞ որ սիրո գործերում է, բարոյական օրենքների կատարման մեջ։ Եթե դուք ոչ ոքի չճնշեք, չդառնաք մյուսների համար բեռ, ապա ուրիշ էլ ի՞նչ առաջադիմություն եք ուզում։

— Սակայն թո՛ւյլ տվեք,— հանկարծ տաքացավ Բլագովոն վեր կենալով,— թո՛ւյլ տվեք։ Եթե խխունջն իր խեցու մեջ զբաղվում է անձնական ինքնակատարելագործմամբ և փորփրում բարոյական օրենքները, դուք դա անվանում եք առաջադիմությո՞ւն։

— Իսկ ինչո՞ւ «փորփրում»,— վիրավորվեցի ես։— Եթե դուք չստիպեք ձեր մոտիկներին կերակրել ձեզ, հագցնել, շալակած ման ածել, պաշտպանել թշնամիներից, ապա մի՞թե սա առաջադիմություն չէ այն կյանքի համար, որն ամբողջովին ստրկության

վրա է կառուցված։ Իմ կարծիքով, դա ամենախսկական առաջադիմությունն է և գուցե միակ հնարավորն ու անհրաժեշտը մարդու համար։

— Համամարդկային, համաշխարհային առաջադիմության սահմաններն անվերջ են, և խոսել ինչ-որ «հնարավոր» առաջադիմության մասին, որը սահմանափակված է մեր կարիքներով կամ ժամանակային ըմբռնումներով, այդ մեկը, ներեցեք, նույնիսկ տարօրինակ է։

— Եթե առաջադիմության սահմանները վերջ չունեն, ինչպես դուք եք ասում, ուրեմն նշանակում է, որ նրա նպատակներն էլ անորոշ են,— ասացի ես։— Ապրել և որոշակի չիմանալ, ինչո՞ւ ես ապրում։

— Թող այդպես լինի։ Բայց այդ «չիմանալն» այնքան ձանձրալի չէ, որքան ձեր «իմանալը»։ Ես բարձրանում եմ մի սանդուղքով, որը կոչվում է առաջադիմություն, քաղաքակրթություն, կուլտուրա, բարձրանում եմ ու բարձրանում, որոշակի չիմանալով, թե ուր եմ գնում, սակայն հենց միայն հրաշալի այդ սանդուղքի համար, իրոք որ, արժե ապրել։ Իսկ դուք գիտեք ինչի համար եք ապրում՝ հանուն նրա, որպեսզի մեկը չճնշի մյուսին, որպեսզի նկարիչը և նրա համար ներկեր պատրաստողը ուտեն միատեսակ ճաշեր։ Բայց չէ՞ որ դա կյանքի քաղքենիական, խոհանոցային գորշ կողմն է և մի՞թե զզվելի չէ ապրել սոսկ դրա համար։ Եթե միջատներից մի քանիսը ճնշում են մյուսներին, ապա գրողի ծո՞ցը, թող ուտեն իրար։ Դրանց մասին չէ, որ պետք է մտածենք. միևնույն է, միջատները կսատկոտեն ու կնեխվեն, ինչքան էլ ստրկությունից փրկես։ Հարկավոր է մտածել այն մեծ իքսի մասին, որն ամբողջ մարդկությանը սպասում է հեռավոր ապագայում։

Բլոգովոն ինձ հետ վիճում էր տաքացած, բայց միևնույն ժամանակ նկատելի էր, որ նրան զբաղեցնում էր մի ինչ-որ կողմնակի միտք։

— Ձեր քույրը երևի չի գա,— ասաց նա ժամացույցին նայելով։— Երեկ մերոնց մոտ էր և ասում էր, թե այստեղ կլինի։ Դուք մի գլուխ կրկնում եք՝ ստրկություն, ստրկություն...— շարունակեց նա։— Բայց ախր դա մասնավոր հարց է, և բոլոր այդպիսի հարցերը մարդկությունը լուծում է աստիճանաբար, ինքնըստինքյան։

Խոսեցինք այդ աստիճանականության մասին։ Ասացի, որ

բաքիք կամ չարիք գործելու հարցը յուրաքանչյուրը վճռում է ինքն իր համար, չսպասելով, թե մարդկությունը աստիճանական զարգացման ճանապարհով երբ կմոտենա այդ հարցի լուծմանը։ Եվ հետո, աստիճանական ասածդ՝ երկծայր մի փայտ է։ Մարդասիրական գաղափարների աստիճանական զարգացմանը զուգընթաց նկատվում է նաև այլ բնույթի գաղափարների աստիճանական աճ։ Ճորտատիրական իրավունք չկա, սակայն զարգանում է կապիտալիզմը։ Եվ ազատագրական գաղափարների այս եռուզեռի մեջ, նույն ձևով, ինչպես Բաթու-խանի ժամանակ, մեծամասնությունը կերակրում, հագցնում և պաշտպանում է փոքրամասնությանը՝ ինքը մնալով քաղցած, մերկ ու անպաշտպան։ Այսպիսի կարգը հիանալի հարմարվում է ամեն տեսակի գաղափարների ու հոսանքների, որովհետև ստրկացման արվեստը նույնպես մշակվում ու կատարելագործվում է աստիճանաբար։ Ախոռներում մեր ծառաներին այլևս մենք չենք ձաղկում, բայց ստրկությանը տալիս ենք ավելի նրբավարի ձևեր, համենայն դեպս, կարողանում ենք ամեն մի առանձին դեպքում դրա համար արդարացում գտնել։ Մեզ մոտ գիղափարները սոսկ գաղափարներ էլ մնում են, իսկ եթե հիմա, 19-րդ դարի վերջերին, հնարավոր լիներ բանվորների ուսերին բարդել նաև ֆիզիոլոգիական անախորժ մեր արարքները, ապա կբարդեինք, և հետո, իհարկե, մեզ արդարացնելու համար կասեինք, որ իբր, եթե լավագույն մարդիկ՝ մտածողներն ու մեծ գիտնականները, սկսես իրենց ոսկե ժամանակը վատնել այդ արարքների վրա, ապա առաջադիմությանը կարող է լուրջ վտանգ սպառնալ։

Եկավ քույրս։ Բժշկին տեսնելով նա իրար անցավ, հուզվեց և անմիջապես սկսեց խոսել այն մասին, թե պետք է տուն գնա, հորս մոտ։

— Կլեոպատրա Ալեքսեևնա,— ձեռքերը կրծքին սեղմելով՝ թախանձագին ասաց Բլագովոն,— ձեր հայրիկին ի՞նչ կպատահի, եթե դուք ինձ և ձեր եղբոր հետ անցկացնեք ընդամենը կես ժամ։

Նա պարզասիրտ էր և կարողանում էր իր աշխուժությունը հաղորդել նաև ուրիշներին։ Մի պահ մտածելով, քույրս անսպասելի ծիծաղեց ու զվարթացավ, ինչպես այն զբոսանքի ժամանակ։ Մենք դաշտ գնացինք և, խոտերին նստելով, շարունակեցինք խոսակցությունն ու նայեցինք դեպի քաղաք, ուր արևմուտք դարձած բոլոր պատուհանները թվում էին վառ ոսկեգույն, որովհետև մայրամուտ էր։

Դրանից հետո ամեն անգամ, երբ քույրս գալիս էր ինձ մոտ, հայտնվում էր նաև Բլագովոն, և երկուսն էլ իրար բարևում էին մի այնպիսի տեսքով, կարծես իրենց այդ հանդիպումը պատահական էր։ Քույրս լսում էր, թե ինչպես ես ու բժիշկը վիճում էինք, և այդ ժամանակ նրա դեմքի արտահայտությունը դառնում էր երջանիկ, խանդաղատանքով լի ու հետաքրքրասեր, և ինձ թվում էր, թե նրա աչքերի առջև կամաց-կամաց բացվում էր մի ուրիշ աշխարհ, որի նմանը նա առաջ չէր տեսել նույնիսկ երազում և ձգտում էր հիսա ճանաչել։ Առանց բժշկի նա սկսվում էր ու տխրում, և եթե հիմա անկողնուս վրա նստած երբեմն լալիս էր, պատճառներն արդեն ուրիշ էին, որոնց մասին չէր խոսում։

Օգոստոսին Ռեդկան մեզ՝ ներկարարներիս, կարգադրեց հավաքվել երկաթգծում։ Քաղաքից մեզ «հանելուց» մի երկու օր առաջ ինձ մոտ եկավ հայրս։ Նստեց և ինձ չնայելով, առանց շտապելու սրբեց իր կարմրած դեմքը, հետո գրպանից հանեց մեր քաղաքային «Վեստնիկը» և դանդաղ, ամեն մի բառը շեշտելով, կարդաց այն մասին, որ իմ հասակակիցը՝ պետական բանկի գրասենյակի կառավարչի որդին, նշանակվել է պետական ատյանի բաժանմունքի պետ։

— Իսկ հիմա մի քեզ նայիր,— ասաց նա, ծալելով լրագիրը,— աղքա՞տ, քրջո՞տ, անպիտա՞ն։ Նույնիսկ քաղքենիներն ու գյուղացիները կրթություն են ստանում, որպեսզի մարդ դառնան, իսկ դու, Պոլոզնև՞, անվանի ու ազնվազարմ նախնիներ ունենալով հանդերձ, խրվում ես ցեխի՞ մեջ։ Սակայն ես այստեղ չեմ եկել քեզ հետ խոսելու համար. քեզնից արդեն ձեռ եմ քաշել,— ոտքի ելնելով, հեռապատ շարունակեց նա։— Ես եկել եմ, որպեսզի իմանամ՝ որտե՞ղ է քույրդ, անզգա՞մ։ Տանից դուրս է եկել ճաշից հետո, հիմա արդեն ժամը ութն է, իսկ նա չկա։ Առանց ինձ ասելու քույրդ սկսել է հաճախակի բացակայել, վարվել ավելի պակաս ակնածանքով, և ես այստեղ տեսնում եմ քո չար, վատ ազդեցությունը։ Ո՞ւր է նա։

Ձեռքին ինձ ծանոթ հովանոցն էր, և աշակերտի նման ես արդեն շփոթվեցի ու ձգվեցի, սպասելով, որ հայրս կսկսի ծեծել

ինձ, սակայն նկատեց հովանոցին ուղղված հայացքս, և դա հավանաբար զսպեց նրա զայրույթը։

— Ապրիր ինչպես ուզում ես,— ասաց նա։— Ես զրկո՞ւմ եմ քեզ իմ օրհնությունից։

— Տե՛ր աստված,— դռան հետևում թնկթնկում էր դայակը։— Խեղճ, դժբախտ մարդ, վա՜յ քո գլխին։ Ախր, սիրտս վկայում էր, չէ՞։

Աշխատում էի երկաթգծում։ Ամբողջ օգոստոսին անընդհատ անձրև թափվեց, խոնավ էր ու ցուրտ։ Դաշտերից հացը չէին հավաքել, և մեքենաներով հունձ անող մեծ տնտեսություններում էլ ցորենը բարդոցների փոխարեն շաղ էր տված փոքրիկ կույտերով, ու հիշում եմ, թե ինչպես խղճուկ այդ կույտերը օր-օրի վրա ավելի սևանում էին, և հատիկը ծլում էր դրանց մեջ։ Աշխատելը դժվար էր։ Տեղատարափ անձրևը փչացնում էր մեր արած գործը։ Կայարանի շենքերում մեզ չէին թողնում ապրել և քնել, այնպես որ պատսպարվում էինք կեղտոտ ու խոնավ գետնատներում, որտեղ ամռանը ապրում էր «չուգունկան»։ Մրսելուց և երեսիս ու ձեռքերիս վրա վխտացող ճիճուներից գիշերը չէի կարողանում քնել։ Իսկ երբ աշխատում էինք կամուրջների մոտ, երեկոները խմբով մեզ մոտ էր գալիս «չուգունկան»՝ հենց միայն ներկարարներին ծեծելու նպատակով. քրջոտների համար դա սպորտի մի ձև էր։ Մեզ ծեծում էին, գողանում մեր վրձինները և, որպեսզի մեզ ջղայնացնեն ու կռիվ սարքեն, փչացնում էին մեր աշխատանքը, օրինակ, պահակատնակներին կանաչ ներկ էին քսմսում։ Ի լրումն մեր բոլոր ձախորդությունների, Ռեդկան սկսեց շատ անկանոն վճարել։ Տեղամասի ներկարարական ամբողջ աշխատանքը հանձնվեց մի կապալառուի, սա տվեց մեկ ուրիշի, իսկ սա էլ իր հերթին հանձնեց Ռեդկային, եկամուտի քսան տոկոսն իրեն վերցնելով։ Աշխատանքն ինքնին ձեռնտու չէր, անձրևն էլ մյուս կողմից վրա տվեց. ժամանակն իզուր կորչում էր, չէինք աշխատում, իսկ Ռեդկան պարտավոր էր տղաներին օրավարձ վճարել։ Սոված ներկարարները քիչ էր մնում դնգստեին նրան, խաբեբա էին անվանում, արյունախում, հուդա-տիրավաճառ, իսկ այդ խեղճուկրակ մարդը հառաչում էր, հուսահատորեն երկինք պարզում ձեռքերը և ամեն անգամ գնում տիկին Չեպրակովայի մոտ փող խնդրելու։

VII

Վրա հասավ անձրևոտ, ցեխոտ ու մռայլ աշունը։ Անգործություն սկսվեց, և ես երեք օրով պարապ-սարապ նստում էի տանը կամ էլ կատարում ոչ ներկարարական ամեն տեսակի աշխատանք, օրինակ, հող էի կրում ճանապարհները հարթելու համար, ստանալով օրական քսան կոպեկ։ Բժիշկ Բլագովոն մեկնեց Պետերբուրգ։ Քույրս չէր գալիս ինձ մոտ։ Իսկ Ռեդկան տանը հիվանդ պառկած էր՝ օր օրի սպասելով մահվան։

Աշնանային էր նաև տրամադրությունս։ Գուցե դրա պատճառն այն էր, որ, դառնալով բանվոր, ես արդեն տեսնում էի մեր քաղաքային կյանքի միայն աստառը և համարյա ամեն օր ստիպված էի նորանոր բաներ հայտնագործել, որոնք ուղղակի հուսահատեցնում էին ինձ։ Իմ համաքաղաքացիներից նրանք, որոնց մասին առաջներում ոչ մի կարծիք չունեի կամ որոնք արտաքնապես միանգամայն օրինավոր էին երևում, հիմա պարզվեց, որ ստոր, դաժան ու ամեն տեսակ կեղտոտության ընդունակ մարդիկ են։ Մեզ նման հասարակ մարդկանց խաբում էին, հաշվի մեջ գուփում, ստիպում ժամերով սպասել ցուրտ հաշտում կամ խոհանոցում, մեզ վիրավորում էին ու հետներս վարվում անչափ կոպիտ։ Աշնանը պաստառեցի մեր ակումբի ընթերցարանը և երկու ուրիշ սենյակներ. պաստառի ամեն մի փաթեթին յոթ կոպեկ վճարեցին, սակայն ստիպեցին տասներկու կոպեկով ստորագրել, ու երբ հրաժարվեցի դրանից, ոսկեշրջանակ ակնոցավոր բարետես պարոնը, որը երևի ակումբի ավագներից մեկն էր, ասաց.

— Սրիկա՛, եթե դու շարունակես շատ խոսել, ես քո քիթ ու մռութը կչարդեմ։

Իսկ երբ սպասավորը նրա ականջին փսփսաց, թե սա ճարտարապետ Պոլոզնևի որդին է, ակնոցավորը շփոթվեց, կարմրեց, բայց իսկույն ևեթ ուշքի եկավ ու ասաց.

— Ա՜հ, գրողի ծո՜ցը։

Խանութներում մեր՝ բանվորներիս, գլուխն էին կապում հոտած միս, մգլած ալյուր և արդեն գործածված թեյ, եկեղեցում մեզ հրմշտում էին ոստիկանները, հիվանդանոցներում պլոկում էին բուժակներն ու հիվանդապահները, և եթե մեր աղքատության պատճառով սրանց կաշառք չէինք տալիս, ապա իրրև վրեժ մեզ կեղտոտ ամաններով էին կերակրում։ Փոստի ամենա-

աննշան չինովնիկն անգամ իրավունք էր վերապահում մեզ հետ վարվել ինչպես անասունների հետ և կոպիտ ու լրբավարի գոռալ՝ «Կա՛ց, ո՞ւր ես խցկվում»։ Նույնիսկ բակի շները մեր նկատմամբ թշնամությամբ էին տրամադրված ու մի տեսակ ավելի չարությամբ էին վրա պրծնում։ Բայց ամենագլխավորը, որ ամեն ինչից շատ էր զայրացնում ինձ նոր վիճակիս մեջ, արդարության բացարձակ բացակայությունն էր, հենց այն, ինչ ժողովուրդը որակում է «ուրացել են աստծուն» բառերով։ Հազվագյուտ օր էր լինում, որ անցներ առանց խարդախության։ Խարդախում էին և՛ օլիֆ ծախող վաճառականները, և՛ կապալառուները, և՛ մեր տղաները, և՛ իրենք պատվիրատուները։ Հասկանալի է, որ մեր որևէ իրավունքի մասին խոսք լինել չէր կարող, և մեր վաստակած փողն ամեն անգամ պետք է խնդրեինք իբրև ողորմություն, գլխարկներս հանած կանգնելով բակի նախամուտքի մոտ։

Ես պաստառում էի ակումբի սենյակներից մեկը, որ պատկից էր ընթերցարանին։ Երեկոյան, երբ արդեն պատրաստվում էի գնալ, այդտեղ մտավ ինժեներ Դոլժիկովի աղջիկը՝ ձեռքին մի խուրձ գրքեր։

Ես ողջունեցի նրան։

— Ա՜, բարև ձեզ,— անմիջապես ճանաչելով ինձ, ասաց նա և մեկնեց ձեռքը։— Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս համար։

Ժպտաց և հետաքրքրությամբ ու տարակուսանքով սկսեց զննել իմ բլուզը, սոսնձի դույլը, հատակին փռված պաստառները։ Ես շփոթվեցի, նա էլ մի տեսակ անհարմար վիճակի մեջ ընկավ։

— Ներեցեք, որ ձեզ այսպես նայում եմ,— ասաց նա։— Ինձ շատ են պատմել ձեր մասին, հատկապես բժիշկ Բլագովոն. ուղղակի սիրահարված է ձեզ։ Ձեր քրոջ հետ ես արդեն ծանոթացել եմ. սիրալիր, հաճելի աղջիկ է, սակայն ոչ մի կերպ չկարողացա համոզել նրան, որ ձեր վարքագծի մեջ ամոթալի ոչինչ չկա։ Ընդհակառակը, հիմա դուք քաղաքի ամենահետաքրքրական մարդն եք։

Նա նորից նայեց սոսնձի դույլին, պաստառներին ու շարունակեց.

— Բժիշկ Բլագովոյին խնդրել էի ինձ մոտիկից ծանոթացնել

ձեզ հետ, բայց երևի մոռացել է կամ չի հասցրել։ Ինչևիցե, համենայն դեպս, մենք արդեն ծանոթներ ենք, և եթե բարեհաճեք մի անգամ հենց այնպես թեկուզ գալ մեր տուն, ապա չափազանց պարտավորված կզգայի։ Թե որքա՜ն եմ ուզում մեկի հետ ասել, խոսել։ Ես հասարակ մարդ եմ,— ձեռքը պարզելով ինձ, ասաց նա,— և հուսով եմ, որ մեր տանը դուք չեք քաշվի։ Հայրս այստեղ չի, գնացել է Պետերբուրգ։

Նա անցավ ընթերցարան, խշխշացնելով զգեստը, իսկ ես, վերադառնալով տուն, երկար ժամանակ չկարողացա քնել։

Հենց այդ տխուր-տրտում աշնանը ինչ-որ բարի մի ոգի, երևի ցանկանալով թեկուզ մի փոքր թեթևացնել իմ գոյությունը, երբեմն ուղարկում էր թեյ ու լիմոն, երբեմն թխվածքներ, երբեմն տապակած անտառահավ։ Կարպովնան ասում էր, թե ամեն անգամ դրանք բերում է մի զինվոր, բայց ումից, հայտնի չէ։ Եվ զինվորը միշտ հարցուփորձ է արել, արդյոք առո՞ղջ եմ ես, ամեն օր ճաշո՞ւմ եմ և ունե՞մ արդյոք ձմեռային զգեստ։ Երբ վրա հասան սառնամանիքները, նույն կերպ՝ իմ բացակայության ժամանակ, զինվորի հետ ուղարկել էին նուրբ գործած վզկապ, որից օծանելիքի քնքուշ, հազիվ զգացվող հոտ էր բուրում, և ես գլխի ընկա, թե ով էր իմ բարի հրեշտակը։ Վզկապից հովտաշուշանի՝ Անյուտա Բլագովոյի սիրած օծանելիքի, բուրմունքն էր գալիս։

Ձմեռնամուտին բավական աշխատանք կուտակվեց, և մենք ուրախացանք։ Ռեդկան կրկին աշխուժացավ, ու միասին սկսեցինք աշխատել գերեզմանատան եկեղեցում, որտեղ ծեփում էինք պատկերակալները ոսկեզօծման համար։ Դա մաքուր, հանգիստ և, ինչպես մերոնք էին ասում, հաջողակ աշխատանք էր։ Մեկ օրում կարելի էր շատ վաստակել, և հետո ժամանակն էլ անցնում էր արագ ու աննկատելի։ Ո՛չ հայհոյանք կար, ո՛չ հոհոռոց, ո՛չ էլ բարձրաձայն խոսակցություն։ Հենց միայն տեղը անդորր ու հանդարտություն էր պահանջում և տրամադրում խաղաղ, լուրջ մտքերի։ Աշխատանքով տարված, մենք կանգնում կամ նստում էինք արձանի նման անշարժ։ Մեռելային լռություն էր տիրում, որը հատուկ է գերեզմանատներին, այնպես որ եթե մի գործիք էր ընկնում կամ մոմակալի մեջ թույլ ճարճատում էր կրակը, ապա այդ ձայները հնչում էին թնդյունով ու զիլ, և մենք շրջվում էինք ձայնի կողմը։ Երկար լռությունից հետո

հանկարծ լսվում էր մի խուլ աղմուկ, ասես մեղուներ էին թրռչում եկեղեցու գավթում, առանց շտապելու, կիսաձայն երգելով, նորածին մանկան հուղարկավորության կարգ էին կատարում. կամ նկարիչը, որ գմբեթի առաստաղին աղավնի և դրա շուրջն էլ աստղեր էր նկարում, սկսում էր մեղմ սուլել և սթափվելով միանգամից լռում էր. կամ Ռեդկան էր, որ պատասխանում էր ինքն իրեն և հառաչելով ասում՝ «Ամեն ինչ կարող է պատահել, ամեն ինչ կարող է պատահել». կամ մեր գլխավերևվում հնչում էր զանգերի դանդաղածոր թախծոտ ձայնը, և ներկարարներն ասում էին, թե երևի հարուստ ննջեցյալ են բերում...

Ցերեկներն անց էի կացնում այդ լռության մեջ, եկեղեցու կիսախավարում, իսկ երկար ու ձիգ երեկոները բիլիարդ էի խաղում կամ գնում թատրոն, հագնելով հասարակ կտորից իմ նոր կոստյումը, որն առել էի վաստակածս դրամով։ Աժոգինների տանն արդեն սկսվել էին ներկայացումներն ու համարգները։ Դեկորացիաները հիմա Ռեդկան մենակ էր նկարում։ Նա ինձ պատմում էր սլիեսների և կենդանի պատկերների բովանդակությունը, որոնք նայում էր Աժոգինների տանը, ու ես նրան նախանձով էի լսում։ Փորձերին շատ էի կարոտել, սակայն չէի համարձակվում գնալ Աժոգինների մոտ։

Բժիշկ Բլագովոն վերադարձավ ծննդյան տոնից մեկ շաբաթ առաջ։ Կրկին մենք վիճում էինք ու երեկոները միասին բիլիարդ խաղում։ Խաղալիս նա հանում էր սերթուկն ու արձակում վերնաշապիկի կրծքի կոճակները և, չգիտես ինչու, միշտ աշխատում էր իրեն թունդ քեֆ անողի տեղ դնել։ Խմում էր չափավոր, բայց հարայ-հրոցով, և խելքին փչել էր ամեն երեկո քսան ռուբլի թողնել այնպիսի վատ ու էժանագին պանդոկում, ինչպիսին «Վոլգան» էր։

Քույրս նորից սկսեց գալ ինձ մոտ։ Նրանք երկուսն էլ իրար տեսնելիս ամեն անգամ զարմանում էին, սակայն քրոջս զվարթ դեմքից և փոքր-ինչ մեղավոր հայացքից երևում էր, որ այդ հանդիպումները պատահական չէին։ Մի անգամ երեկոյան, երբ բիլիարդ էինք խաղում, բժիշկն ինձ ասաց.

— Լսեք, ինչո՞ւ Դոլժիկովային չեք այցելում։ Մարիա Վիկտորովնային դուք չեք ճանաչում, նա խելոք կին է, տեղովը հրապույր, հասարակ, բարեհոգի։

Պատմեցի նրան, թե դաբնանը ինչպես էր ինձ ընդունել ինժեները։

— Դատարկ բան է,— ծիծաղեց բժիշկը։— Ինժեներ՝ իր համար, իսկ աղջիկն՝ իր։ Իսկապես, աղավնյակս, մի՛ նեղացրեք նրան, ոնց էլ լինի մի անգամ մտեք նրա մոտ։ Ա՛յ, օրինակ, եկեք հենց վաղը երեկոյան գնանք։ Ուզո՞ւմ եք։

Նա համոզեց ինձ։ Հաջորդ օրը երեկոյան, հագնելով իմ նոր կոստյումը, հուզմունքով գնացի Դոլժիկովայի մոտ։ Այս անգամ սպասավորն այնքան էլ գոռոզ ու սարսափելի չթվաց, իսկ կահույքը՝ այնպես շքեղ, ինչպես այն առավոտյան, երբ ես այստեղ էի եկել իբրև խնդրատու։ Մարիա Վիկտորովնան սպասում էր ինձ ու դիմավորեց որպես հին ծանոթի, ամուր, բարեկամաբար սեղմելով ձեռքս։ Նա հագել էր մոխրագույն մահուդից կարված լայն թևքերով զգեստ և մազերի այնպիսի սանրվածքով էր, որ մեկ տարի հետո, երբ տարածվեց մեր քաղաքում, կոչվեց «շան ականջ»։ Քունքերից մազերը սանրված էին ականջների վրա. դրանից Մարիա Վիկտորովնայի դեմքը կարծես ավելի էր լայնացել, ու ինձ թվաց, թե այս անգամ նա շատ էր նմանվել իր հորը, որի դեմքը լայն էր, վարդագույն, իսկ արտահայտության մեջ էլ կառապանային ինչ-որ բան կար։ Մարիա Վիկտորովնան գեղեցիկ էր ու նրբագեղ, սակայն երիտասարդ չէր, տեսքով երեսունին մոտ, թեև իրականում քսանհինգից ավել չէր լինի։

— Սիրելի՞ բժիշկ, ինչքան երախտապարտ եմ նրան,— ասաց ինձ նստեցնելով։— Եթե նա չլիներ, դուք ինձ մոտ չէիք գա։ Մահու չափ ձանձրանում եմ։ Հայրս գնացել է և մենակ թողել ինձ, ու ես չգիտեմ, թե ինչ անեմ այս քաղաքում։

Հետո սկսեց ինձ հարցեր տալ, թե որտեղ եմ հիմա աշխատում, ինչքան եմ ստանում, որտեղ եմ ապրում։

— Դուք ձեզ վրա ծախսում եք միայն այնքան, ինչքան վաստակո՞ւմ եք,— հարցրեց նա։

— Այո։

— Երջանի՞կ մարդ,— հառաչեց նա։— Կյանքում եղած բոլոր չարիքներն իմ կարծիքով անգործությունից, ձանձրույթից ու հոգու դատարկությունից են բխում, իսկ սրանք անխուսափելի են, երբ վարժվում ես ապրել ուրիշների հաշվին։ Մի՞ կարծեք, թե ես ձևացնում եմ, անկեղծորեն եմ ասում, որ անհետաքրքիր ու տհաճ է հարուստ լինելը։ Բարեկամներ ձեռք բերեք անար-

դար հարստությամբ. այսպես է ասվում, որովհետև ընդհանրապես չի եղել և չի կարող լինել արդար հարստություն։

Նա մտահոգ, սառը հայացքով զննեց կահույքը, ասես ուզում էր հաշվել, և շարունակեց.

— Փարթամ կյանքն ու հարմարավետությունը կախարդական ուժ ունեն, դրանք կամաց-կամաց քաշում, կլանում են նույնիսկ ամուր կամքի տեր մարդկանց։ Կար ժամանակ, որ հայրս և ես ապրում էինք համեստ ու պարզ, իսկ հիմա ինքներդ եք տեսնում։ Լավ՞ծ բան է,— ասաց նա ուսերը թոթվելով,— մենք տարեկան վատնում ենք մոտավորապես քսան հազար, այն էլ գավառո՞ւմ։

— Փարթամ կյանքի ու հարմարավետության վրա պետք է նայել որպես կապիտալի և կրթության անխուսափելի արտոնության,— ասացի ես,— և ինձ թվում է, որ կյանքի հարմարավետությունը կարելի է զուգակցել ցանկացած, նույնիսկ ամենածանր ու ստորին աշխատանքի հետ։ Ձեր հայրը հարուստ է, սակայն ինչպես ինքն է ասում, նրան վիճակվել է լինել և՛ մեքենավար, և՛ հասարակ յուղող։

Նա ժպտաց և տարակուսանքով օրորեց գլուխը։

— Հայրիկը երբեմն ուտում է նաև կվասով հացաբրդոշ,— ասաց նա։— Հենց այնպես, քեֆի՛ համար։

Այդ ժամանակ լսվեց զանգի ձայնը, և Մարիա Վիկտորովնան վեր կացավ։

— Կրթվածներն ու հարուստները բոլորի նման պետք է աշխատեն,— շարունակեց նա,— իսկ թե փարթամ կյանք է, թող որ հավասար լինի բոլորի համար էլ։ Ոչ մի արտոնություն չպետք է լինի։ Դե լա՛վ, ասված դրա հետ՝ այդ փիլիսոփայության։ Ինձ որևէ զվարճալի բան պատմեք։ Պատմեք ներկարարների մասին։ Ինչպիսի՞ մարդիկ են, ծիծաղելի՞ են։

Եկավ բժիշկը։ Ես սկսեցի պատմել ներկարարների մասին, բայց անսովորությունից նեղվում էի և խոսում ազգագրագետի նման լուրջ ու ծանրաբարո։ Բժիշկը նույնպես արհեստավորների կյանքից մի քանի անեկդոտներ պատմեց։ Նա ճոճվում էր, լալիս, ծունկի իջնում և հարբածի պես նույնիսկ պառկում հատակին։ Դա իսկական դերասանական խաղ էր, և Մարիա Վիկտորովնան, նայելով նրան, արցունքոտվելու աստիճան քրքջում էր։ Հետո բժիշկը դաշնամուր նվագեց և իր հաճելի բարակ ձայնով

երգեց, իսկ Մարիա Վիկտորովնան կանգնել էր կողքին ու նրա համար երգեր էր ընտրում, ուզելով բժշկի սխալները։

— Լսել եմ, որ դուք նույնպես երգում եք, ճի՞շտ է,— հարցրի ես։

— Նո՛ւյնպես,— բացականչեց բժիշկը։— Մարիա Վիկտորովնան հրաշալի երգչուհի է, արտիստուհի, իսկ դուք ասում եք՝ նույնպես։ Այ թե բա՜ն ասացիք։

— Մի ժամանակ լրջորեն զբաղվում էի,— պատասխանեց նա իմ հարցին,— բայց հիմա թողել եմ։

Ցածր աթոռակին նստած, Մարիա Վիկտորովնան մեզ պատմեց պետերբուրգյան իր կյանքի մասին և փորձեց նմանվել հայտնի երգիչներին՝ ընդօրինակելով նրանց ձայնն ու երգելու ձևերը։ Այբոմում նկարեց բժշկին, հետո՝ ինձ, վատ էր նկարում, բայց երկուսս էլ նման դուրս եկանք։ Նա ծիծաղում էր, կատակում, սիրունիկ դիմախաղեր սարքում, և դա ավելի էր սազում նրան, քան անարդար հարստության մասին խոսելը, ու ինձ թվում էր, թե քիչ առաջ նա հարստության ու փարթամ կյանքի մասին հետս խոսում էր ոչ թե լուրջ, այլ ընդօրինակելով ինչ-որ մեկին։ Նա հիանալի կոմիկ դերասանուհի էր։ Մտքով ես նրան դնում էի մեր օրիորդների կողքին, և նույնիսկ գեղեցիկ ու պատկառելի Անյուտա Բլագովոն չէր դիմանում այդ համեմատությանը. տարբերությունը հսկայական էր, ինչպես տնային լավ վարդի և վայրի մասրենու միջև։

Մենք ընթրեցինք երեքով։ Բժիշկը և Մարիա Վիկտորովնան խմում էին կարմիր գինի, շամպայն և կոնյակով սուրճ։ Դավաթները ծնգացում էին և խմում հանուն բարեկամության, մտքի, առաջադիմության ու ազատության, և չէին հարբում, այլ կարմրատակել էին միայն և առանց որևէ առիթի արցունքոտվելու աստիճան հաճախ քրքջում էին։ Ջանձրալի չերևալու համար ես էլ խմեցի կարմիր գինի։

— Տաղանդները, շռայլորեն օժտված բնավորությունները,— ասաց Դոլժիկովան,— գիտեն, թե ինչպես պետք է ապրել և գնում են իրենց ճանապարհով։ Իսկ միջակ մարդիկ, ինչպես, օրինակ, ես, ոչինչ չգիտեն և իրենք էլ ոչինչ չեն կարողանում։ Սրանց ուրիշ բան այլևս չի մնում անել, քան գտնել հասարակական որևէ մեծ հոսանք և լողալ դրա հետ, ուր էլ որ քշի տանի։

— Մի՞թե կարելի է գտնել այն, ինչ չկա,— հարցրեց բժիշկը։

— Ոչ, որովհետև մենք չենք տեսնում։

— Այդպե՞ս է որ։ Հասարակական հոսանքնե՞ր— դա նոր գրականությունն է հնարել։ Այդպիսի բաներ մեզանում չկան։

Վեճն սկսվեց։

— Հասարակական մեծ հոսանքներ մեզ մոտ չկան և չեն եղել,— բարձրաձայն ասաց բժիշկը։— Նոր գրականությունը ի՞նչ ասես որ չի հնարել։ Հնարել է նաև գյուղի ինչ-որ ինտելիգենտ աշխատավորներ, սակայն խուզարկեք մեր բոլոր գյուղերն ու կգտնեք միայն պիջակով կամ սև սերթուկով փայտե գլուխներ, որոնք «еще» բառի մեջ չորս տառասխալ են անում։ Մեզ մոտ դեռ չի սկսվել կուլտուրական կյանքը։ Նույն վայրենությունը, համատարած նույն գյադայությունն ու նույն ոչնչությունը, ինչ որ հինգ հարյուր տարի առաջ էր։ Հոսանքնե՞ր, գաղափարնե՞ր... սակայն չէ որ այդ բոլորն էլ շնչին են ու խղճուկ՝ ուղղված գռեհիկ, կոպեկանոց մանր-մունր շահերի, և մի՞թե դրանց մեջ կարելի է որևէ լուրջ բան տեսնել։ Եթե ձեզ թվում է, թե դուք գտել եք հասարակական մեծ հոսանք և դրան հետևելով, նվիրել ձեր կյանքը ժամանակակից ճաշակի այնպիսի խնդիրների, ինչպիսիք են միջատների ազատագրությունը ստրկությունից կամ հրաժարումը կովի մսից պատրաստված կոտլետներից, ապա շնորհավորում եմ ձեզ, օրիո՞րդ։ Մեզ հարկավոր է սովորել, սովորել և սովորել, իսկ հասարակական մեծ հոսանքներին առայժմ սպասենք։ Մենք դեռ այդքան չենք հասունացել և, խըղճով ասած, ոչինչ էլ այդ հոսանքներից չենք հասկանում։

— Դուք չեք հասկանում, իսկ ես հասկանում եմ,— ասաց Մարիա Վիկտորովնան։— Աստվա՞ծ իմ, որքան դուք այսօր ձանձրալի եք։

— Մեր գործն է սովորել և սովորել, ձգտել հնարավորին չափ ավելի գիտելիքներ կուտակել, որովհետև հասարակական լուրջ հոսանքներն այնտեղ են, ուր գիտելիքներ կան, և ապագա մարդկության երջանկությունը միայն գիտելիքների մեջ է։ Խմում եմ գիտությա՛ն կենացը։

— Մի բան անկասկած է. պետք է մեր կյանքը դասավորել ինչ-որ այլ կերպ,— ասաց Մարիա Վիկտորովնան մի պահ լուռ խորհելուց հետո,— իսկ այն կյանքը, որ մինչև հիմա էր, ոչինչ չարժե։ Չխոսենք այդ մասին։

Երբ դուրս եկանք Դոլժիկովայի մոտից, եկեղեցու ժամացույցը զարկում էր ժամը երկուսը։

— Հավանեցի՞ր,— հարցրեց բժիշկը։— Ճիշտ չէ՞, լավի՞կն է։

Ննդյան տոնի առաջին օրը մենք ճաշեցինք Մարիա Վիկտորովնայի մոտ, և հետո, տոների ընթացքում, համարյա ամեն օր գնում էինք նրանց տուն։ Մեզնից բացի, նրա մոտ ոչ ոք չէր լինում, ու իրավացի էր, երբ ասում էր, թե բացի ինձնից ու բժշկից, քաղաքում ինքն ուրիշ ծանոթներ չունի։ Ժամանակը մեծ մասամբ անցկացնում էինք խոսակցություններով. երբեմն բժիշկը հետը բերում էր մի որևէ գիրք կամ հանդես և բարձրաձայն կարդում։ Ըստ էության, դա առաջին կրթված մարդն էր, որին կյանքումս հանդիպում էի։ Արդյոք շատ բան գիտեր նա թե քիչ, դժվարանում եմ ասել, սակայն շարունակ ցուցադրում էր իր գիտելիքները, քանի որ ուզում էր, որպեսզի մյուսներն էլ մի բան իմանան։ Երբ խոսում էր բժշկությանը վերաբերող որևէ հարցի մասին, չէր նմանվում քաղաքային մեր բժիշկներից ոչ մեկին, այլ թողնում էր ինչ-որ նոր, առանձնահատուկ տպավորություն, ու ինձ թվում էր, որ եթե նա ցանկանար, կարող էր իսկական գիտնական դառնալ։ Բժիշկը թերևս միակ մարդն էր, որ այդ ժամանակ ինձ վրա լուրջ ազդեցություն ուներ։ Հաճախակի տեսնվելով նրա հետ ու կարդալով նրա տված գրքերը, սակավ առ սակավ սկսեցի գիտելիքների պահանջ զգալ, որոնք կիմաստավորեին տխուր իմ աշխատանքը։ Ինձ համար արդեն անսովոր էր, որ առաջ, օրինակ, ես չգիտեի, թե երկրագունդը բաղկացած է վաթսուն հասարակ մարմիններից, չգիտեի, թե ինչ բան է օլիֆը, ինչ բան է ներկը, և մի կերպ գլուխ էի հանում առանց այդ գիտելիքների։ Բժշկի հետ ծանոթությունը ինձ բարձրացրեց նաև բարոյապես։ Հաճախ վիճում էի նրա հետ, ու թեև սովորաբար մնում էի իմ տեսակետին, բայց և այնպես նրա շնորհիվ ես քիչ-քիչ սկսեցի նկատել, որ ինձ համար էլ ամեն ինչ դեռ հասկանալի չէր, և արդեն ձգտում էի իմ մեջ հնարավորին չափ որոշակի համոզմունքներ մշակել, որպեսզի խիղճս հանգիստ լիներ, և խառնաշփոթ զգացմունքներ չունենայի։ Սակայն քաղաքի ամենակրթված ու ամենալավ այդ մարդը բոլորովին էլ կատարելություն չէր։ Նրա շարժուձևի, ամեն մի խոսակցություն վեճի հասցնելու սովորության, հաճելի ձայնի և նույնիսկ սիրալիրության մեջ ինչ-որ կոպտություն ու անկրթություն կար, և երբ բժիշկը հանում էր սերթուկն ու մնում միայն մետաքսե վերնաշապիկով կամ պանդոկում սպասավորին թեյանվեր էր գցում, ապա ամեն անգամ ինձ թվում էր, որ քաղաքա-

վարությունը քաղաքավարություն, բայց թաթարը նրա մեջ դեռ շարունակում էր մնալ։

Բժիշկը սուրբ մկրտության տոներին նորից մեկնեց Պետերբուրգ։ Նա գնաց առավոտյան, իսկ ճաշից հետո ինձ մոտ եկավ քույրս։ Մուշտակն ու գլխարկը չհանելով, նա լուռ նստեց. սաստիկ գունատված էր, իսկ հայացքն էլ հառել էր մի կետի։ Նա դողում էր և ինչ-որ բանից ընկճված երևում։

— Դու երևի մրսել ես,— ասացի ես։

Աչքերն արցունքով լցվեցին, նա վեր կացավ գնաց Կարպովնայի մոտ, ինձ ոչ մի բառ չասելով, կարծես վիրավորել էի իրեն։ Մի քիչ հետո լսեցի, թե ինչպես նա դառնացած ասում էր.

— Կա՛րպովնա, ինչի՞ համար ապրեցի մինչև հիմա, ինչի՞ համար։ Ասա, մի՞թե ես չկործանեցի իմ ջահելությունը։ Կյանքիս լավագույն տարիներին գիտեի միայն ծախսերը գրանցել, թեյ լցնել, կոպեկները հաշվել ու զբաղեցնել հյուրերին և մտածել, թե դրանից բարձր աշխարհում ոչինչ չկա։ Հասկացիր, դայակս, ախր ես էլ մարդկային պահանջներ ունեմ, ես էլ եմ ուզում ապրել, իսկ ինձ դարձրել են մի ինչ-որ դոնապան։ Չէ՞ որ դա սարսափելի է, սարսափելի՜։

Նա բանալիները շպրտեց դեպի դուռը, որոնք զրնգոցով ընկան իմ սենյակը։ Դրանք բուֆետի, խոհանոցի պահարանի, մառանի և թեյասպասքի գզրոցի բանալիներն էին. նույն այն բանալիները, որոնք մի ժամանակ դեռ մայրս էր գործածում։

— Օֆ, օֆ, տե՛ր-աստված,— մղկտաց պառավը։— Ջորավո՛ր սրբեր։

Տուն գնալիս քույրս մտավ ինձ մոտ բանալիները վերցնելու և ասաց.

— Ներիր ինձ. վերջին ժամանակներս իմ հոգում ինչ-որ արտասովոր բան է կատարվում։

VIII

Մի անգամ Մարիա Վիկտորովնայի մոտից ուշ երեկոյան վերադառնալով, իմ սենյակում տեսա նոր մունդիրը հագին երիտասարդ թաղային ոստիկանին։ Նա նստել էր սեղանիս մոտ և գիրք էր թերթում։

— Վերջապե՛ս,— ասաց նա վեր կենալով և ձգվելով։— Արդեն երրորդ անգամ եմ գալիս այստեղ։ Նահանգապետը հրամայել է, որ դուք իր մոտ գաք վաղը առավոտյան ուղիղ ժամը իններին։ Անպայմա՛ն։

Նա ինձնից ստորագրություն վերցրեց, որ ճշտությամբ կկատարեմ նորին գերազանցության հրամանը, և գնաց։ Թաղային այդքան ուշ ժամի այցելությունն ու անսպասելիորեն նահանգապետի մոտ հրավիրելը ինձ վրա ճնշող ներգործություն ունեցան։ Վաղ մանկությունից ես վախենում էի ժանդարմներից, ոստիկաններից, դատավորներից, ու հիմա ինձ տանջում էր անհանգստությունը, կարծես թե իրոք ինչ-որ բանում մեղավոր էի։ Ոչ մի կերպ չկարողացա քնել։ Դայակն ու Պրոկոֆին նույնպես անհանգստացած էին և չքնեցին։ Սրա հետ էլ դայակի ականջի ցավն էր բռնել, տնքտնքում էր ու մի քանի անգամ ցավից լաց եղավ։ Տեսնելով, որ քնած չեմ, Պրոկոֆին լամպը ձեռքին կամացուկ մտավ սենյակս ու նստեց սեղանի մոտ։

— Դուք մի պղպեղոզի խմեիք...— ասաց նա մտմտալով։— Այս աշխարհքում հենց որ խմում ես, եղած-չեղած բոլոր բաները մոռանում ես։ Ու թե Մաշայի ականջի մեջ էլ այդ օղուց լցնենք, մե՞ծ օգուտ կլինի։

Ժամը երեքին մոտ նա պատրաստվեց սպանդանոց գնալ մսի։ Ես գիտեի, որ մինչև առավոտ այլևս չեմ քնելու, և, որպեսզի մի կերպ կրճատեմ ժամանակը մինչև ժամը ինը, նրա հետ գնացի։ Մենք գնում էինք լապտերով, իսկ նրա աշակերտ Նիկոլկան՝ տասներեք տարեկան մի տղա, երեսին դողէրոցքից մնացած կապույտ բծեր, տեսքով կատարյալ ավազակ, սահնակին նստած գալիս էր մեր հետևից, խռպոտ ձայնով շտապեցնելով ձիուն։

— Նահանգապետի մոտ ձեզ երևի պատժեն,— ճանապարհին ասաց ինձ Պրոկոֆին։— Նահանգապետն իր խրատն ունի, վարդապետն իր խրատը, սպան ու բժիշկն էլ իրե՛նց խրատն ունեն, ու ամեն մի պաշտոն ունի իր խրա՛տը։ Իսկ դուք չե՞ք հետևում դրան, ու դա էժան չի նստի ձեզ վրա։

Սպանդանոցը գերեզմանոցից այն կողմ էր, որն առաջ միայն հեռվից էի տեսել։ Սպանդանոցը մոխրագույն ցանկապատով շրջապատված երեք մռայլ մարագներ էին, որոնց կողմից, ամառվա շոգ օրերին հենց որ քամի էր փչում, շատ ծանր հոտ էր գալիս։ Հիմա բակ մտնելով, կիսախավարի մեջ ես մարագները չնկատեցի։ Անընդհատ հանդիպում էին ձիեր և դատարկ կամ մսով արդեն բեռնված սահնակներ, մարդիկ ման էին գալիս

լապտերներով և զզվելի հայհոյանքներ անում։ Նույն անճոռնի ձևով՝ հայհոյում էին և՛ Պրոկոֆին, և՛ Նիկոլկան, ու չորս կողմից լսվում էր անվերջ հայհոյանքի, հաղի ու ձիու խրխնջոցի անդադար աղմուկ։

Լեշի և գոմաղբի հոտ էր փչում։ Հալհլոց էր, ձյունն արդեն խառնվել էր ցեխին, և մթության մեջ թվում էր, թե քայլում եմ արյունով լցված փոսորակների միջով։

Սահնակը լիքը միս բարձելով, մենք շարժվեցինք դեպի շուկայի մսավաճառների կրպակը։ Լուսանալու վրա էր։ Ձամբյուղներով իրար հետևից եկան խոհարարուհիները և սալոպ[1] հագած տարիքով կանայք։ Արնաբծերով կեղտոտված սպիտակ գոգնոցով, կացինը ձեռքին, Պրոկոֆին անխիղճ երդվում էր, եկեղեցու անունը տալով խաչակնքում, շուկայով մեկ բղավում, հավատացնելով, թե իբր ինքը միսը տալիս է իր գնով ու նույնիսկ մի բան էլ վնաս է անում։ Նա թերակշռում էր, փողի մեջ խաբում, խոհարարուհիները դա տեսնում էին, սակայն նրա բղավոցից խլացած, չէին բողոքում, այլ միայն անվանում էին նրան գահիճ։ Երբ իր ահավոր կացինը բարձրացնելով ու իջեցնելով, Պրոկոֆին բեմական կեցվածք էր ընդունում և ամեն անգամ էլ վայրենի արտահայտությամբ բացականչում «հրը՛», ես վախենում էի, չլինի թե հանկարծ նա իրոք կտրի մեկնումեկի գլուխը կամ ձեռքը։

Մսի խանութում անցկացրի ամբողջ առավոտը, և երբ վերջապես գնացի նահանգապետի մոտ, մուշտակիցս մսի ու արյունի հոտ էր գալիս։ Հոգեկան վիճակս այնպիսին էր, կարծես ինչ-որ մեկի հրամանով գեղարդը ձեռքիս արջի դեմ էի գնում։ Ես հիշում եմ զոլավոր ուղեգորգով ծածկված բարձր աստիճանները և փայլուն կոճակներով ֆրակը հագին երիտասարդ չինովնիկին, որը լուռումունջ երկու ձեռքով ցույց տվեց ինձ դուռը և վազեց զեկուցելու։ Մտա մի դահլիճ, ուր կահավորանքը ճոխ էր, սակայն սառն ու անճաշակ, և հատկապես անդուր կերպով աչք էին ծակում միջնապատերի նեղ ու երկար հայելիներն ու լուսամուտների վառ դեղնագույն վարագույրները։ Երևում էր, որ նահանգապետները փոխվել էին, իսկ կահավորանքը մնացել էր նույնը։ Երիտասարդ չինովնիկը երկու ձեռքով կրկին ցույց տվեց դուռը, և ես քայլեցի դեպի կանաչ սեղանը, որի մյուս կողմում կանգնած էր զինվորական գեներալը՝ Վլադիմիրի խաչը վզից կախ։

— Պարոն Պոլոզնև, ես խնդրեցի ձեզ ներկայանալ,— սկսեց նա ձեռքին ինչ-որ նամակ բռնած և բերանը օ տառի նման լայն ու կլոր բացելով,— ես խնդրեցի ձեզ ներկայանալ, որպեսզի հայտնեմ ձեզ հետևյալը։ Ձեր հարգարժան հայրը գրավոր և բանավոր դիմել է նահանգի ազնվականության առաջնորդին, խնդրելով կանչել ձեզ և տեղեկացնել ձեզ ձեր վարքագծի ողջ անհամատեղելիությունը ազնվականի կոչման հետ, որը դուք պատիվ ունեք կրելու։ Նորին գերազանցություն Ալեքսանդր Պավլովիչը իրավացիորեն ենթադրելով, որ ձեր վարքագիծը կարող է գայթակղել նաև ուրիշներին, և գտնելով, որ միայն իր համոզելն այստեղ անբավարար կլինի, այլ հարկավոր է ադմինիստրատիվ լուրջ միջամտություն, ահա այս նամակում ներկայացրել է ինձ իր նկատառումները ձեր վերաբերյալ, որոնք ես բաժանում եմ։

Նա ասում էր դա անվրդով, հարգալից և ուղիղ կանգնած, կարծես թե ես էի իր պետը, և ինձ էր նայում բոլորովին էլ ոչ խիստ հայացքով։ Նրա դեմքը ճլորված էր, մաշված, ամբողջովին կնճռապատ, աչքերի տակ կաշետոպրակներ էին կախ ընկել, մազերը ներկված էին, և ընդհանրապես արտաքինից չէր կարելի որոշել՝ քանի տարեկան էր՝ քառասուն թե վաթսուն։

— Հուսով եմ,— շարունակեց նահանգապետը,— որ դուք կգնահատեք պատվելի Ալեքսանդր Պավլովիչի նրբավարությունը, որը դիմել է ինձ ոչ թե պաշտոնական, այլ մասնավոր ձևով։ Ես նույնպես ձեզ հրավիրել եմ ոչ պաշտոնական, և խոսում եմ ձեզ հետ ոչ որպես նահանգապետ, այլ որպես ձեր ծնողի անկեղծ բարեկամը։ Եվ այսպես, խնդրում եմ կամ փոխել ձեր վարքագիծը և վերադարձեք ձեր ազնվական կոչմանը վայել պարտականությունների, կամ թե գայթակղությունից խուսափելու համար տեղափոխվեք մեկ ուրիշ տեղ, ուր ձեզ չեն ճանաչում և ուր կարող եք զբաղվել ինչով որ կամենաք։ Հակառակ դեպքում ստիպված կլինեմ ծայրահեղ միջոցների դիմել։

Գեներալը մի պահ բերանը բաց լուռ կանգնեց, նայելով ինձ։

— Դուք բուսակե՞ր եք,— հարցրեց նա։

— Ոչ, ձերդ գերազանցություն, ես միս ուտում եմ։

Նա նստեց և մոտ քաշեց ինչ-որ թուղթ։ Խոնարհվեցի և դուրս եկա։

[1] Կանացի վերարկուի մի տեսակ (ծ. թ.)։

Մինչև ճաշ էլ չարժեր աշխատանքի գնալ։ Գնացի տուն քնելու, բայց սպանդանոցի միջավայրի և նահանգապետի հետ խոսելու պատճառով ինձ պաշարած անդուր ու հիվանդագին զգացումից քնել չկարողացա, և սպասելով մինչև մութը կընկներ, շփոթված ու մռայլ գնացի Մարիա Վիկտորովնայի մոտ։ Պատմեցի, թե ինչպես եղա նահանգապետի մոտ, իսկ Մարիա Վիկտորովնան տարակուսանքով նայեց ինձ, ասես չէր հավատում, և հանկարծ ուրախ, բարձր ու չարաճճիորեն քրքջաց, ինչպես կարողանում են քրքջալ միայն բարեհոգի, ծիծաղկոտ մարդիկ։

— Եթե այս ամենը պատմեն Պետերբուրգում,— ծիծաղից թուլանալով ու սեղանին ընկնելով, ասաց նա։— Եթե Պետերբուրգում պատմե՞ն այս ամենը...

IX

Հիմա մենք արդեն տեսնվում էինք հաճախակի՝ օրը մեկ-երկու անգամ։ Համարյա ամեն օր Մարիա Վիկտորովնան ճաշից հետո գալիս էր գերեզմանատուն և ինձ սպասում՝ կարդալով խաչերի ու հուշարձանների վրայի մակագրությունները։ Երբեմն մտնում էր եկեղեցի և մոտս կանգնելով նայում, թե ինչպես եմ աշխատում։ Լռությունը, նկարիչների ու ոսկեզրողների պարզ աշխատանքը, Ռեդկայի խոհեմությունը և այն, որ տեսքով ես բոլորովին չէի տարբերվում մյուս արհեստավորներից ու նրանց նման աշխատում էի միայն բաճկոնակով ու հնամաշ ոտնամաններով, և որ ինձ դիմում էին «դու»-ով՝ Մարիա Վիկտորովնայի համար նորություն էր և հուզում էր նրան։ Նրա ներկայությամբ մի անգամ նկարիչը, որ վերևում աղավնի էր նկարում, բղավեց.

— Միսայի՛լ, սպիտակ ներկը մի տուր տեսնեմ։

Ես ներկը տարա, ու հետո, երբ նեղլիկ փայտամածով ներքև իջա, նա լաց լինելու չափ հուզված նայում էր ինձ ու ժպտում։

— Ի՞նչ լավն եք դուք,— ասաց նա։

Մանկությունից հիշողությանս մեջ մնացել էր, թե ինչպես մեր հարուստներից մեկի վանդակից թռել փախել էր կանաչ թութակը, և ինչպես հետո սիրունիկ այդ թռչունը ամբողջ մի ամիս, միայնակ ու անօթևան, թափառեց քաղաքում, անտրամադիր թռչելով այգուց այգի։ Մարիա Վիկտորովնան ինձ հիշեցնում էր այդ թռչնակը։

— Գերեզմանատնից բացի, ես հիմա ուրիշ ոչ մի տեղ չեմ գնում,— ասաց նա ծիծաղելով։— Քաղաքը զզվեցնելու չափ ձանձրացրել է։ Աժոգինների մոտ արտասանում են, երգում, շվշվացնում. վերջին ժամանակներս նրանք ինձ հիասթափեցրել են։ Ձեր քույրը մարդամոտ չէ, mademoiselle Բլագովոն էլ ինչ-որ բանի համար ատում է ինձ, թատրոն չեմ սիրում։ Ո՞ւր կհրամայեք չքվել։

Երբ ես գնում էի նրա մոտ, ինձնից ներկի և բենզինայուղի հոտ էր փչում, ձեռքերս էլ սևացած էին, և դա նրան դուր էր գալիս։ Ուզում էր նաև, որ իրենց տուն գնամ ոչ այլ կերպ, քան սովորական բանվորական հագուստով։ Բայց շքեղ հյուրասենյակում այդ հագուստն ինձ նեղում էր, ես շփոթվում էի, կարծես մունդիրով լինեի, ու դրա համար էլ նրա մոտ գնալիս ամեն անգամ հագնում էի իմ նոր կոստյումը։ Դա դուր չէր գալիս նրան։

— Իսկ դուք, խոստովանանք լինի, դեռ լրիվ չեք ընտելացել ձեր նոր գործին,— մի անգամ ասաց նա։— Բանվորական հագուստը ճնշում է ձեզ, դրա մեջ անհարմար եք զգում։ Ասացեք, դա նրանից չէ՞ արդյոք, որ դուք անվստահ եք և զոհացում չեք ստացել։ Աշխատանքի այն տեսակը, որ ընտրել եք, ձեր այդ ներկարարությունը, մի՞թե զոհացնում է ձեզ,— հարցրեց նա ծիծաղելով։— Ես գիտեմ, ներկը իրերն ավելի գեղեցիկ ու դիմացկուն է դարձնում, բայց չէ՞ որ դրանք պատկանում են քաղաքացիներին, հարուստներին և վերջին հաշվով դառնում են փարթամ կյանքի մի մասը։ Եվ հետո ինքներդ շատ անգամ ասել եք, որ յուրաքանչյուրն իր հացը պետք է վաստակի սեփական ձեռքերով, մինչդեռ դուք փող եք վաստակում և ոչ թե հաց։ Ինչո՞ւ նույնությամբ չհետևել ձեր խոսքերին։ Հենց հա՛ց պետք է վաստակել, այսինքն՝ պետք է վարել, ցանել, հնձել, կալսել կամ անել այնպիսի մի բան, որն անմիջական կապ ունենա գյուղատնտեսության հետ, օրինակ, կով արածացնել, վար անել, խրճիթ շինել...

Նա բացեց իր գրասեղանի մոտ դրված գեղեցիկ պահարանը և ասաց.

— Ձեզ այս ամենն ասում եմ նրա համար, որովհետև ուզում եմ հայտնել իմ գաղտնիքը։ Voilà! Սա իմ գյուղատնտեսական գրադարանն է։ Այստեղ կա և՛ արտի, և՛ բանջարանոցի, և՛ այգու, և՛ գոմի, և՛ մեղվանոցի մասին։ Ես կարդում եմ ագահու-

թյամբ և տեսականորեն ամեն բան արդեն ուսումնասիրել եմ մինչև վերջին կաթիլը։ Իմ երազանքն է, մեծ ցանկությունը՝ հենց որ մարտը գա, կգնամ մեր Դուբեշնյան։ Այնտեղ սքանչելի՜ է, հրաշալի՜, այնպես չէ՞։ Առաջին տարին ուշադրությամբ կհետևեմ գործին ու կընտելանամ, իսկ արդեն հաջորդ տարվանից ես էլ կսկսեմ քրտնաջան աշխատել պետք եղածի նման, ինչպես ասում են, չխնայելով ինքս ինձ։ Հայրս խոստացել է Դուբեշնյան ինձ նվիրել, և ես այնտեղ կանեմ այն ամենը, ինչ ցանկանում եմ։

Շառադունած դեմքով, արցունքոտվելու աստիճան հուզված ու ծիծաղելով, նա բարձրաձայն երազում էր, թե ինչպես է ապրելու Դուբեշնյայում, և որքան հետաքրքրական է լինելու այդ կյանքը։ Իսկ ես նախանձում էի նրան։ Մարտն արդեն մոտենում էր, օրերն ավելի ու ավելի էին երկարում, և արևոտ, պայծառ կեսօրին տանիքներից կաթկթում էր ու գարուն էր բերում։ Ինքս էլ էի ուզում գյուղ գնալ։

Եվ երբ նա ասաց, թե տեղափոխվում է Դուբեշնյա ապրելու, պարզ պատկերացրի, թե ինչպես քաղաքում մենակ կմնամ և ասացի, որ խանդում եմ Մարիա Վիկտորովնային գրքերով լի պահարանի և գյուղատնտեսության նկատմամբ նրա վերաբերմունքի համար։ Գյուղատնտեսություն ես չգիտեի և չէի սիրում ու քիչ էր մնում նրան ասեի, թե դա ստրկական զբաղմունք է, սակայն հիշելով, որ հայրս այդպիսի բան մի քանի անգամ արդեն ասել է, լռեցի։

Վրա հասավ մեծ պասը։ Պետերբուրգից վերադարձավ ինժեներ Վիկտոր Իվանիչը, որի գոյությունն սկսել էր մոռանալ։ Նա եկավ անսպասելի. չէր նախազգուշացրել նույնիսկ հեռագրով։ Սովորականի պես երեկոյան եկա և տեսա, որ նա լվացված, մազերը հարդարած ու մի տասը տարով ջահելացած՝ քայլում էր հյուրասենյակում և ինչ-որ բան պատմում։ Նրա աղջիկը չոքել էր և ճամպրուկներից հանում էր տուփեր, սրվակներ, գրքեր և դրանք տալիս սպասավոր Պավելին։ Ինժեներին տեսնելով, ես ակամա մի քայլ հետ գնացի, իսկ նա պարզեց ինձ երկու ձեռքերը և, ժպտալով ու ցուցադրելով կառապանի ատամների պես ճերմակ, ամուր իր ատամները, ասաց.

— Ահա և նա, ահա և նա։ Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար, պարո՜ն ներկարար։ Մաշան ամեն ինչ պատմեց, ձեր օգտին նա այստեղ մի ամբողջ ներբող կարդաց։ Ձեզ լրիվ հաս-

կանում եմ և հավանություն տալիս,— թևանցուկ անելով ինձ, շարունակեց նա։— Կարդին բանվոր լինելը շատ ավելի խելացի է ու ազնիվ, քան պետական թղթեր խզմզելը և ճակատին գդականշան կրելը։ Ես ինքս աշխատել եմ Բելգիայում, ահա այս ձեռքերով, հետո երկու տարի մեքենավար եմ եղել...

Նա կարճ պիջակով էր և տնավարի հագել էր հողաթափեր, քայլում էր հոդացավով հիվանդի պես, ոտքից ոտք թեթև օրորվելով, և շփում ձեռքերը։ Ինչ-որ բան երգելով, նա քթի տակ մեղմ մոլտում էր և հաճույքից թոթվում ուսերը, որ վերջապես տուն է վերադարձել և ցնցուղի տակ հաճելի լողացել։

— Խոսք չկա,— ասաց ինձ ինժեները ընթրիքի ժամանակ,— խոսք չկա, դուք բոլորդ լավ, համակրելի մարդիկ եք, սակայն չգիտես ինչու, պարոնայք, հենց որ զբաղվում եք ֆիզիկական աշխատանքով կամ սկսում եք փրկել մուժիկին. վերջ ի վերջո դա հագնում է աղանդավորության։ Մի՞թե դուք աղանդավոր չեք։ Ա՛յ, դուք օղի չեք խմում. իսկ դա ի՞նչ է, եթե ոչ աղանդավորություն։

Նրան բավականություն պատճառելու համար ես օղի խմեցի։ Գինի էլ խմեցի։ Մենք համտես արինք պանիր, երշիկ, մսով կարկանդակ, մանր վարունգի թթու և զանազան խորտիկներ, որ իր հետ բերել էր ինժեները, ինչպես նաև նրա բացակայության ժամանակ արտասահմանից ստացված գինին։ Հիանալի գինի էր։ Չգիտես ինչու գինի և սիգարներ ինժեներն արտասահմանից ստանում էր առանց մաքսի։ Ձկնկիթ ու ապխտած թառափ ինչ-որ մեկը նրան ձրի էր ուղարկում. բնակարանի վարձ էլ չէր տալիս, քանի որ տանտերը երկաթգծին նավթ էր մատակարարում։ Եվ ընդհանրապես, ինժեներն ու իր աղջիկն ինձ վրա այն տպավորությունն էին թողնում, կարծես աշխարհի բոլոր լավ բաները նրանց էին ծառայում և տրվում էին միանգամայն ձրի։

Ես շարունակում էի գնալ նրանց մոտ, բայց արդեն ոչ այնքան հաճույքով։ Ինժեներն ինձ նեղում էր, նրա ներկայությամբ ես մի տեսակ կապ էի ընկնում։ Չէի դիմանում նրա ջինջ ու հստակ հայացքին, նրա դատողություններն ինձ համար տհաճ էին ու հոգեհան էին անում ինձ, ճնշում էր և այն հիշողությունը, որ դեռ բոլորովին վերջերս ես այդ կուշտ ու կարմրաթուշ մարդուն էի ենթարկվում, և նա ինձ հետ վարվում էր անխիղճ կոպտությամբ։ Ճիշտ է, նա գրկում էր մեջքս, քնքշորեն թփթփաց-

նում ուսիս, հավանություն տալով իմ վարքագծին, բայց զգում էի, որ առաջվա նման արհամարհում է իմ ոչնչությունը և ինձ հանդուրժում է միայն ի հաճույս իր դստեր։ Ես արդեն չէի կարողանում ծիծաղել ու ասել այն, ինչ որ մտածում էի, հեռու էի քաշվում նրանից և շարունակ սպասում, որ նա, մեկ էլ տեսար, ինձ ևս Պանտելեյ կանվանի, ինչպես իր սպասավոր Պավելին։ Ինչպե՞ս էր վրդովվում իմ գավառական, քաղքենիական հպարտությունը... Ես՝ պրոլետարի, ներկարարի մեկը, ամեն օր գնում էի ինձ համար խորթ այդ հարուստ մարդկանց մոտ, որոնց ամբողջ քաղաքը նայում էր որպես օտարերկրացիների, և ամեն օր նրանց տանը խմում էի թանկարժեք գինին ու արտասովոր բաներ ուտում։ Իմ խիղճը դրա հետ չէր հաշտվում։ Նրանց մոտ գնալիս, նոթերս կիտած՝ խուսափում էի անցորդներից ու հոնքերի՝ տակով խեթ-խեթ նայում, ասես իսկական աղանդավոր լինեի, իսկ երբ ինժեների մոտից տուն էի վերադառնում, ամաչում էի, որ կուշտ եմ։

Գլխավորն այն էր, որ վախենում էի հրապուրվել։ Փողոցով քայլեի, աշխատեի, թե տղաների հետ խոսեի, միևնույն է, շարունակ մտածում էի միայն այն մասին, թե երեկոյան ինչպես պետք է գնամ Մարիա Վիկտորովնայի մոտ, և պատկերացնում էի նրա ձայնը, ծիծաղը, քայլվածքը։ Պատրաստվելով այցելել նրան, փողկապս կապելու համար ես ամեն անգամ երկար կանգնում էի դայակիս ծուռտիկ հայելու առջև, հասարակ կտորից իմ կոստյումը աչքիս զզվելի էր երևում, և տանջվում էի ու միևնույն ժամանակ արհամարհում ինքս ինձ, որ այդքան մանրախնդիր եմ։ Երբ մյուս սենյակից Մարիա Վիկտորովնան ինձ ասում էր, թե ինքը հագնված չէ ու խնդրում էր սպասել, ես լսում էի ինչպես էր նա հագնվում։ Դա ալեկոծում էր ինձ, կարծես զգում էի, թե ինչպես հատակն իջնում է ոտքերիս տակ։ Իսկ երբ փողոցում, թեկուզև հեռվից, տեսնում էի կանացի մի կերպարանք, անպայման համեմատում էի նրա հետ։ Այդ ժամանակ ինձ թվում էր, թե մեր բոլոր կանայք ու աղջիկները գռեհիկ են, անհեթեթ հագնված, իրենց պահել չգիտեն, և այդ համեմատությունը արթնացնում էր հպարտության զգացում՝ Մարիա Վիկտորովնան բոլորի՛ց լավն է։ Իսկ գիշերները ինձ և նրան ես տեսնում էի երազում։

Մի անգամ ընթրիքին ես ու ինժեները ծովային մի ամբողջ խեցգետին կերանք։ Հետո տուն վերադառնալով հիշեցի,

որ ինժեներն ընթրիքի ժամանակ երկու անգամ ինձ ասաց «սիրելիս», և ես հասկացա որ այդ տանն ինձ փաղաքշում են ինչպես իր տիրոջից հալածված դժբախտ մի շան, որ ինձնով զվարճանում են, ու երբ ձանձրացնեմ, դուրս կշպրտեն շան նման։ Ես ամաչեցի և ցավ զգացի. արտասվելու չափ ցավալի էր, ասես անպատվել էին ինձ, ու երկինք նայելով, երդվեցի վերջ տալ այդ ամենին։

Հաջարդ օրը ես Դոլժիկովների տուն չգնացի։ Ուշ երեկոյան, երբ բոլորովին մթնել էր ու անձրև էր գալիս, անցա Բոլշայա Դվորյանսկայա փողոցով, նայելով պատուհաններին։ Աժոդինները արդեն քնել էին, և միայն ծայրի պատուհաններից մեկում էր լույս երևում. պառավ Աժոդինան իր սենյակում ձեռագործ էր անում երեք մոմի լույսի տակ ու երևակայում, թե կոլում է նախապաշարմունքների դեմ։ Մերոնց տանը լույս չկար, իսկ դիմացը՝ Դոլժիկովների պատուհանները լուսավորված էին, բայց ծաղկամանների ու վարագույրների միջից ոչինչ չէր երևում։ Ես հետ ու առաջ էի քայլում փողոցում. մարտ ամսի սառն անձրևը թրջում էր ինձ։ Լսեցի, թե ինչպես ակումբից վերադարձավ հայրս, թակեց դարպասը, և մի րոպե հետո պատուհանում լույս երևաց, ու ես տեսա քրոջս, որը շտապով քայլում էր լամպը բռնած և մի ձեռքով էլ ուղղում խիտ մազերը։ Հետո հայրս ձեռքերը շփելով քայլեց հյուրասենյակի մի անկյունից մյուսը, խոսելով ինչոր բանի մասին, իսկ քույրս անշարժ նստել էր բաղկաթոռին և ուրիշ մտքերով տարված՝ նրան չէր լսում։

Ահա նրանք էլ գնացին, լույսը մարեց... Նայեցի ինժեների տան կողմը՝ այստեղ էլ արդեն մութ էր։ Խավարի մեջ, անձրևի տակ ես ինձ անհուսալիորեն մենակ էի զգում, բախտի քմահաճույքին թողնված, զգում էի, թե ինչպես իմ այդ մենակության, ունեցածս և դեռ կյանքում ինձ էլի սպասվող տառապանքների համեմատությամբ մանր էին իմ բոլոր գործերը, ցանկություններն ու այն ամենը, ինչ դրանից առաջ մտածել կամ խոսել էի։ Ավաղ, կենդանի արարածների գործերն ու մտքերն ամենևին էլ այնքան նշանակալից չեն, որքան նրանց վշտերը։ Ինքս ինձ պարզորոշ հաշիվ չտալով, թե ինչ եմ անում, ամբողջ ուժով քաշեցի պոկեցի Դոլժիկովենց տան դարպասի զանգի լարը և երեխայի պես փախա փողոցով, վախենալով ու մտածելով, որ հիմա անպայման դուրս կգան ու կճանաչեն ինձ։ Փողոցի ծայրին երբ կանգ առա, որպեսզի շունչ քաշեմ, լսեցի միայն, թե

ինչպես էր աղմկում անձրևը, մեկ էլ հեռվում ինչ-որ տեղ պահակը խփում էր երկաթի կտորին։

Մի ամբողջ շաբաթ Դոլժիկովների տուն չգնացի։ Կոստյումս ծախել էի։ Ներկարարական աշխատանքներ չկային, կրկին կիսաքաղց էի ապրում, օրական ձեռքս էր ընկնում հազիվ 10—20 կոպեկ՝ ամեն տեսակ ծանր ու անհաճելի գործ կատարելով՝ որտեղ պատահեր։ Մինչև ծնկներս խրված սառը ցեխի մեջ, հոգնած ու ջարդված քարշ էի գալիս և ուզում էի հիշողություններս մեռցնել, ասես ինձնից վրեժ էի լուծում բոլոր այն պանիրների ու պահածոների համար, որոնցով հյուրասիրում էին ինձ ինժեների տանը։ Բայց և այնպես, սոված ու թրջված հենց որ անկողին էի մտնում, մեղավոր երևակայությունս անմիջապես սկսում էր հրաշալի ու գայթակղիչ տեսարաններ ստեղծել, և ես զարմանքով ինքս ինձ խոստովանում էի, որ սիրում եմ, սիրում կրքոտ, և պինդ-պինդ ու հանգիստ քնում էի, զգալով, որ այդ տաժանակիր կյանքից իմ մարմինն ավելի ամրանում ու ջահելանում է։

Մի երեկո անսպասելի ձյուն եկավ և հյուսիսից քամի փչեց, կարծես ձմեռը նորից սկսվել էր։ Այդ երեկոյան աշխատանքից վերադառնալով՝ իմ սենյակում տեսա Մարիա Վիկտորովնային։ Նա նստած էր մուշտակը հագին, ձեռքերը խրած ձեռնամուշտակի մեջ։

— Ինչո՞ւ ինձ մոտ չեք գալիս,— հարցրեց նա, դեմքիս հառելով իր խելացի, ջինջ աչքերը, իսկ ես ուրախությունից սաստիկ շփոթվել էի ու ձգված կանգնել, ինչպես սովորաբար կանգնում էի հորս առջև, երբ նա պատրաստվում էր ծեծել ինձ։ Մարիա Վիկտորովնան նայում էր երեսիս, և նրա աչքերից երևվում էր, որ հասկանում է, թե ինչու եմ շփոթվել։

— Ինչո՞ւ ինձ մոտ չեք գալիս,— կրկնեց նա։— Եթե դուք չեք ուզում գալ, ահա ես ինքս եկա։

Նա կանգնեց և մոտեցավ ինձ։

— Մի՛ լքեք ինձ,— ասաց նա, և աչքերը լցվեցին արցունքով։— Ես մենակ եմ, բոլորովի՛ն մենակ։

Նա ձեռնամուշտակով ծածկեց դեմքը, լաց եղավ ու ասաց։

— Մենա՜կ եմ։ Ծանր է ինձ համար ապրելը, անչափ ծանր, և աշխարհում ձեզնից բացի ես ոչ ոք չունեմ։ Մի՛ լքեք ինձ։

Փնտրելով թաշկինակը, որ արցունքները սրբի, նա ժպտաց։

Մենք մի փոքր լռեցինք, հետո ես գրկեցի նրան ու համբուրեցի։ Այդ միջոցին նրա գլխարկն ամրացնող քորոցը այտս քերծեց, արյունոտեց։

Ու մենք սկսեցինք խոսել այնպես, կարծես միմյանց հետ մտերիմ էինք վաղուց, շատ վաղուց...

X

Մի երկու օր հետո նա ուղարկեց ինձ Դուբեչնյա, ու ես դրա համար անասելի ուրախացա։ Երբ կայարան էի գնում, հետո էլ վագոնում նստած, առանց որևէ պատճառի ծիծաղում էի. մարդիկ ինձ հարբածի տեղ էին դնում։ Ձյունը էր գալիս և առավոտները սառնամանիք անում, բայց ճանապարհներն արդեն բացվել էին, և դրանց վերևում կոկռալով թռչում էին ագռավները։

Սկզբում մտադրվել էի ինձ ու Մաշայի համար բնակարան ընտրել կողքի կողաշենքում, տիկին Չեպրակովայի կայարանի դիմաց, սակայն, ինչպես պարզվեց, այդտեղ վաղուց ի վեր բնակություն էին հաստատել աղավնիներն ու սագերը, և առանց շատ բներ քանդելու դա հնարավոր չէր մաքրել։ Ուզած-չուզած պետք է տեղավորվեինք շերտափեղկեր ունեցող պատուհաններով մեծ տան անհարմար սենյակներում։ Մուժիկներն այդ տունը պալատ էին անվանում. քսանից ավելի սենյակներ կային այդտեղ, իսկ եղած-չեղած կահույքը մի դաշնամուր էր ու մեկ էլ ձեղնահարկում ընկած մանկական մի աթոռակ, և եթե Մաշան քաղաքից իր ունեցած ամբողջ կահույքն էլ բերեր, միևնույն է, մեզ դարձյալ չէր հաջողվի վերացնել այդ մռայլ դատարկության ու սառնության տպավորությունը։ Ես ընտրեցի պատուհանները դեպի այգի բացվող երեք փոքր սենյակ և վաղ առավոտից մինչև գիշեր կարգի էի բերում դրանք՝ նոր ապակիներ գցում, պաստառ քաշում, հատակի ճեղքերն ու անցքերը փակում։ Դա թեթև, հաճելի աշխատանք էր։ Շարունակ վազում էի գետափ նայելու, թե սառցահոսքն արդյոք չի՞ սկսվել. ինձ թվում էր, թե արդեն թռել եկել են սարյակները։ Իսկ գիշերը, Մաշայի մասին մտածելով, չտեսնված քաղցր մի զգացում էի ապրում ու հրապուրիչ բերկրությամբ ականջ դնում, թե ինչպես են քստքստացնում առնետները և առաստաղից վերև ինչպես է ոռնում ու շխկշխկացնում քամին։ Թվում էր, թե ձեղնահարկում հազում էր տնային պառավ ոգին։

Ձյունը նստել էր հաստ շերտով. մարտի վերջերին շատացել

էր, բայց հալվեց արագ, ասես կախարդանքով, անզուսպ հոսելն գարնան ջրերը, այնպես որ ապրիլի սկզբներին սարյակներն արդեն աղմկում էին և այգում թռչում էին դեղին թիթեռնիկները։ Հրաշալի եղանակ էր։ Ամեն օր երեկոյան դեմ ես ոտքով գնում էի քաղաքի կողմը Մաշային դիմավորելու, և ինչպիսի՜ հաճույք էր շորացող, դեռ փափուկ ճանապարհով բոկոտն քայլելը։ Կես ճանապարհին նստում ու նայում էի քաղաքին, սիրտ չանելով ավելի մոտենալ։ Քաղաքի տեսքը շփոթեցնում էր ինձ։ Միշտ մտածում էի, ինչպե՞ս կվերաբերվեն ծանոթներս, երբ լսեն իմ սիրո մասին։ Ի՞նչ կասի հայրս։ Ինձ առանձնապես շփոթեցնում էր այն միտքը, որ կյանքս դժվարացել է, որ ես բոլորովին կորցրել եմ այդ կյանքը կառավարելու ունակությունը, և դա կարծես օդապարիկի նման ինձ քշում-տանում է աստված գիտե թե ուր։ Ես այլևս չէի մտածում, թե ինչպես ինձ համար ուտելիք ճարեմ, ինչպես ապրեմ, այլ ուղղակի չեմ կարողանում հիշել, թե ինչի մասին էի մտածում այն ժամանակ։

Մաշան գալիս էր կառքով, ես նստում էի նրա կողքին, և միասին, ուրախ ու անհոգ, գնում էինք Դուբեչնյա։ Կամ մինչև արևամուտ սպասելով, դժգոհ ու սրտնեղած տուն էի վերադառնում, մտահոգվելով, թե ինչու չեկավ Մաշան, իսկ դաստակերտի դարպասի մոտ կամ այգում ինձ անսպասելի դիմավորում էր թանկագին տեսիլքը՝ նա։ Պարզվում էր, որ վերադարձել է գնացքով և կայարանից ոտքով է եկել։ Ինչպիսի՜ ցնծություն էր։ Հազին բրդյա սովորական զգեստ, գլխաշորով, հասարակ մի հովանոց բռնած, արտասահմանյան թանկարժեք կոշիկներ ոտքերին, սակայն ձգված ու բարեկազմ. նման էր տաղանդավոր մի դերասանուհու, որ խաղում է քաղքենի կնոջ դեր։ Ծանոթացանք մեր տնտեսությանը և որոշեցինք, թե որտեղ ում սենյակը պետք է լինի, որտեղ պետք է գցվեն ծառուղիները, բանջարանոցը, մեղվանոցը։ Մենք արդեն ունեինք հավեր, բադեր ու սագեր, որոնց սիրում էինք, որովհետև դրանք մերն էին։ Ցանելու համար արդեն պատրաստել էինք վարսակ, երեքնուկ, սիզախոտ, հնդկացորեն ու բանջարանոցային սերմեր, և ամեն անգամ դրանք զննում էինք ու երկար բարակ խոսում, թե ինչպիսի բերք կարող է ստացվել, և ինչ էլ որ Մաշան ասում էր, ինձ թվում էր արտակարգ խելացի ու դեղեցիկ։ Դա իմ կյանքի ամենաերջանիկ ժամանակն էր։

Թովմաս Առաքյալի մեկշաբաթյա տոնից անմիջապես հետո մենք պսակվեցինք Կուրիլովկա գյուղի ծխական եկեղեցում, որը Դուբեչնյայից հեռու էր երեք վերստ։ Մաշան ուզում էր, որպեսզի ամեն ինչ կատարվի համեստ։ Նրա ցանկությամբ մեր խաչեղբայրները դարձան գյուղացի տղաներ, մի տիրայու էք երգում, և եկեղեցուց մենք վերադարձանք դիսկիսկիան փոքրիկ մի ուղեկառքով, որը հենց ինքն էլ վարում էր։ Քաղաքից հրավիրվել էր միայն իմ քույրը Կլեոպատրան, որին նորաստեղծից երեք օր առաջ Մաշան մի երկտող էր ուղարկել։ Քույրս ուշիուշ զգեստով էր և ձեռնոցներով։ Պսակադրության ժամանակ նա հուզմունքից և ուրախությունից կամացուկ արտասվում էր, դեմքի արտահայտությունը մայրական էր, անասելի բարի։ Քույրս արբել էր մեր երջանկությամբ ու ժպտում էր, դարձյալ անուշ բույր էր շնչում, և պսակադրության ժամանակ նրան նայելով, ես հասկացա, որ քրոջս համար այնքան դարձյալ ոչինչ չկար, եղբայրին սիրուց, հասկացա, որ դրա մասին նա երազում էր գաղտնաբար, երկչոտ, սակայն մշտապես ու կրքոտ։ Կլեոպատրան գրկեց և համբուրեց Մաշային ու, չմանալով ինչպես արտահայտեր հիացմունքը, իմ մասին ասաց.

— Նա բարի՜ է, շա՜տ բարի է։

Նախքան Դուբեչնյայից հեռանալը, նա զգեստը փոխեց, հագավ իր սովորական շորը և տարավ ինձ այդի, որպեսզի հետո առանձին խոսի։

— Հայրիկը խիստ վշտացած է, որ դու ոչինչ չարեցիր իրեն,— ասաց նա,— Հարկավոր էր նրա օրհնությունը խնդրեիր։ Բայց ինչ էլ լինի, նա շատ դո՛ է։ Ասում է, որ այս ամուսնությունը քեզ հանրակությունի աչքում կթարձրացնի, որ Մարիա Վիկտորովնայի աղդեցությամբ դու կտկնես կյանքին լրջորեն մոտենալ։ Երեկոները մենք հիմա խոսում ենք միայն քո մասին, և երեկ նա՝ նույնիսկ այսպես ասաց՝ մեր Միսայիլը։ Դա ինձ ուրախացրեց։ Երևում է ինչ-որ բան է մտքին դրել, և ինձ թվում է, թե նա ուզում է քեզ մեծահոգության օրինակ ցույց տալ։ Ուստի առաջինը խոսել հաշտության մասին։ Շատ հնարավոր է, որ նա մոտ օրերս դա այստեղ ձեզ մոտ։

Նա շտապ-շտապ մի քանի անգամ խաչակնքեց ինձ ու ասաց.

— Դե՛, աստված քեզ հետ, երջանիկ եղիր։ Անդրեյ Բլագովոն շատ խելացի տղաքիկ է, նա քո ամուսնության մասին ասում է, որ աստված քեզ նոր փորձություն է ուղարկում։ Ի՞նչ

արած։ Ընտանեկան կյանքը ոչ միայն երջանկություն է, այլև չարչարանք։ Առանց դրան չի լինի։

Ճանապարհ դնելով քրոջս, ես ու Մաշան ոտքով անցանք մոտ երեք վերստ. հետո, վերադարձին, քայլում էինք դանդաղ ու լուռ, կարծես հանգստանում էինք։ Մաշան բռնել էր ձեռքս, հոգիս թեթև էր և սիրո մասին արդեն չէի ուզում խոսել. պսակվելուց հետո մենք իրար ավելի մոտեցանք ու հարազատացանք, ու թվում էր, թե ոչ մի բան այլևս մեզ չի կարող բաժանել։

— Քո քույրը համակրելի անձնավորություն է,— ասաց Մաշան,— բայց ոնց որ թե նրան երկար ժամանակ տանջել են։ Հայրդ երևի զարհուրելի մարդ է։

Սկսեցի պատմել նրան, թե ինչպես են դաստիարակել ինձ ու քրոջս, և իրոք, որքան տանջալից ու անիմաստ է անցել մեր մանկությունը։ Լսելով, որ հայրս դեռ վերջերս ծեծել էր ինձ, Մաշան ցնցվեց ու սեղմվեց թևիս։

— Այլևս մի՛ պատմիր,— ասաց նա,— դա սոսկալի է։

Այժմ արդեն նա չէր հեռանում ինձնից։ Ապրում էինք մեծ տան երեք սենյակներում և երեկոներն ամուր փակում էինք այն դուռը, որը տանում էր դեպի տան դատարկ մասը, կարծես այնտեղ բնակվում էր ինչ-որ մեկը, որին չէինք ճանաչում և վախենում էինք նրանից։ Ես վեր էի կենում վաղ առավոտյան, աշխատանքի հետ, և անմիջապես զբաղվում որևէ աշխատանքով։ Վերանորոգում էի սայլերը, այգում ճանապարհ էի բաց անում, մարգերը փորում և ներկում տանիքը։ Երբ եկավ վարսակ ցանելու ժամանակը, փորձեցի կրկնավար անել, փոցխել, ցանել, և այդ բոլորն անում էի բարեխղճորեն, այգու աշխատողից հետ չմնալով։ Հոգնում էի, անձրևից և ուժեղ սառը քամուց երկար նվվում էին դեմքս ու ոտքերս, գիշերները երազիս վարած հող էի տեսնում։ Սակայն դաշտային աշխատանքներն ինձ չէին գրավում։ Գյուղատնտեսություն չգիտեի և չէի սիրում. դրա պատճառը գուցե այն էր, որ նախնիներս հողագործներ չէին եղել և իմ երակներում հոսում էր քաղաքացու արյուն։ Քնքշորեն սիրում էի բնությունը, սիրում էի և՛ դաշտերը, և՛ մարգագետինները, և՛ բանջարանոցները, սակայն ցնցոտիավոր, քրտնքի մեջ կորած ու ձգված վզով մուժիկը, որ արորով փորում էր հողը, բզելով իր խղճուկ ձիուն, ինձ համար հանդիսանում էր բիրտ, վայրի ու տգեղ ուժի արտահայտություն, և նրա անճոռնի շարժումներին նայելով, ամեն անգամ ակամա սկսում էի մտածել վաղուց

անցած-գնացած առասպելական այն կյանքի մասին, երբ մարդիկ դեռ կրակ գործածել չգիտեին։ Գյուղական նախրի մռայլ ցուլը և ձիերը, երբ նրանք սմբակները թփթփացնելով անցնում էին գյուղամիջով, սարսափեցնում էին ինձ, և ամեն մի քիչ թե շատ խոշոր, ուժեղ ու բարկացկոտ արարած, լիներ դա խոյ, սագ կամ շղթայով կապված շուն, ինձ թվում էր այդ նույն բիրտ, վայրի ուժի արտահայտությունը։ Իմ մեջ այդ համոզմունքը հատկապես ուժեղ արթնանում էր վատ եղանակին, երբ վարած սև դաշտի վրա կախվում էին մթամած ամպերը։ Գլխավորն այն էր, որ երբ ես վարում կամ ցանում էի, իսկ երկու-երեք հոգի էլ կանգնած նայում էին, թե ինչպես եմ գործ անում, ապա իմ ներսում չէր առաջանում այդ աշխատանքի անխուսափելիության ու անհրաժեշտության գիտակցումը, ու ինձ թվում էր, թե ես զվարճանում եմ։ Եվ գերադասում էի բակում որևէ բան անել, ու ոչինչ այնքան ինձ դուր չէր գալիս, որքան տանիք ներկելը։

Այգու և մարգագետնի միջով գնում էի մեր ջրաղացը։ Դա վարձով վերցրել էր Ստեպանը՝ Կուրիլովկա գյուղից մի մուժիկ, գեղեցիկ, թխահեր, սև, թավ մորուքով, տեսքով՝ աժդահա։ Ջրաղացպանություն չէր սիրում, և դա համարում էր ձանձրալի ու անշահաբեր, սակայն աշխատում էր ջրաղացում միայն այն բանի համար, որպեսզի տանը չպրծեր։ Նա թամբագործ էր, և նրանից միշտ կուպրի ու կաշու դուրեկան հոտ էր գալիս։ Խոսել չէր սիրում, ալարկոտ էր, դանդաղաշարժ ու առվի ափին կամ ջրաղացի շեմքին նստած, շարունակ մմռռում էր՝ ու-լյու-լյու-լյու։ Երբեմն նրա մոտ Կուրիլովկայից գալիս էին կինն ու զոքանչը, երկուսն էլ ճերմակերես, հոգնատանջ, հլու հնազանդ։ Նրանք խոնարհ գլուխ էին տալիս Ստեպանին և անվանում «Դուք, Ստեպան Պետրովիչ»։ Իսկ սա նրանց ողջույնին չպատասխանելով ոչ որևէ շարժումով, ոչ էլ խոսքով, նստում էր ջրի ափին, մի կողմ քաշված, ու կամացուկ երգում՝ ու-լյու-լյու-լյու։ Լռությամբ անցնում էր մի երկու ժամ։ Զոքանչն ու կինը իրար հետ փսփսալով, վեր էին կենում ու որոշ ժամանակ նայում նրան, սպասելով, որ իրենց կողմը շրջվի, հետո խոնարհ գլուխ էին տալիս և ասում քաղցր, երգեցիկ ձայնով.

— Մնաք բարո՛վ, Ստեպա՛ն Պետրովիչ։

Եվ գնում էին։ Դրանից հետո, վերցնելով նրանց թողած օղաբլիթներով լիքը կապոցը կամ շապիկը, Ստեպանը հառաչում էր և, աչքով անելով նրանց կողմը, ասում.

— Կանանց ցե՜ղ։

Ջրաղացի երկու քարերն էլ աշխատում էին գիշեր-ցերեկ։ Ես օգնում էի Ստեպանին. դա ինձ դուր էր գալիս, ու երբ որևէ տեղ էր գնում, սիրով մնում էի նրա փոխարեն։

XI

Հաճելի, պարզ եղանակներից հետո օրերը խառնվեցին։ Ամբողջ մայիսը անձրևային էր, ցուրտ։ Ջրաղացքարերի և անձրևի աղմուկը ծուլություն ու քնկոտություն էր առաջացնում։ Հատակը դողդողում էր, ալյուրի հոտ էր գալիս, ու դա էլ նինջ էր բերում։ Կարճ կիսամուշտակը հագին, բարձր, տղամարդու կրկնակոշիկներով, կինս օրական մի երկու անգամ հայտնվում էր և միշտ միևնույն բանն ասում.

— Սա էլ կոչվում է ամա՜ռ։ Ավելի վատ է, քան հոկտեմբերը։

Միասին թեյ էինք խմում, շիլա եփում կամ էլ ժամերով լուռ նստում սպասում, թե երբ կկտրվի անձրևը։ Մի անգամ, երբ Ստեպանը ինչ-որ տոնավաճառ գնաց, Մաշան ամբողջ գիշերը մնաց ջրաղացում։ Երբ վեր կացանք, չէր կարելի որոշել, թե ժամը քանիսն է, որովհետև անձրևաբեր ամպերը ծածկել էին ողջ երկինքը։ Միայն քնատ աքլորներն էին կանչում Դուբեչնյայում, իսկ մարգագետիններում ծղրտում էին մարգահավերը. դեռ շատ վաղ էր... Կնոջս հետ միասին իջանք գետափ և դուրս քաշեցինք ձկնորսակողովը, որը նախօրյակին մեր ներկայությամբ դրել էր Ստեպանը։ Կողովի մեջ մի մեծ պերկես ձուկ էր թփրտում, և չանչերը վեր պարզած, շովել էր խեղգետինը։

— Բաց թող դրանց,— ասաց Մաշան։— Թող դրանք էլ երջանիկ լինեն։

Քանի որ մենք շատ վաղ էինք արթնացել և հետո էլ ոչինչ չէինք արել, ուստի այդ օրը շատ երկար թվաց՝ ամենաերկարն իմ կյանքում։ Երեկոյան կողմ վերադարձավ Ստեպանը, իսկ ես գնացի տուն, մեր կալվածքը։

— Այսօր եկել էր հայրդ,— ասաց ինձ Մաշան։

— Ո՞ւր է նա,— հարցրի ես։

— Գնաց։ Ես նրան չընդունեցի։

Տեսնելով, որ կանգնել ու լռում եմ և խղճում եմ հորս, Մաշան ասաց.

— Պետք է հետևողական լինել։ Ես չընդունեցի նրան և պատվիրեցի հաղորդել, որ այլևս չանհանգստանա և չգա մեզ մոտ։

Մի բոպե հետո ես արդեն դարպասից դուրս էի եկել և քաղաք էի գնում, որպեսզի խոսեմ հորս հետ։ Ճանապարհը ցեխոտ էր, սայթաքուն, ցուրտ էր։ Հարսանիքից հետո առաջին անգամ ես հանկարծ տխրեցի, և այդ երկար ու գորշ օրից թմրած գլուխս փայլատակեց մի միտք, թե կարող է պատահել ապրում եմ ոչ այնպես, ինչպես պետք է։ Հոգնեցի, կամաց-կամաց թուլակամությունն ու ծուլությունը ինձ պաշարեցին, չէի ուզում շարժվել, մտածել, և մի քիչ էլ գնալով, հուսահատ թափ տվի ձեռքս ու հետ դարձա։

Բակի կենտրոնում կաշվե կնգուղավոր վերարկուն հագին կանգնել էր ինժեները և բարձր-բարձր ասում էր.

— Ո՞ւր է կահույքը։ Հրաշալի կահույք էր empire[1] ոճով, նկարներ ու սկահակներ էլ կային, իսկ հիմա դափ-դատարկ է։ Ես կալվածքն առել եմ կահույքո՜վ, գրողը տանի։

Նրա կողքին կանգնել ու ձեռքում պահած գլխարկն էր ճմրթում գեներալի կնոջ գործավոր Մոիսեյը՝ մոտ քսանհինգ տարեկան մի լղար տղա, դեմքը ծաղկատար, մանր, լկտի աչքերով, և մի այտը մյուսից մի քիչ ուռած, կարծես երկար պառկելուց թմրել էր։

— Դուք, ձերդ բարեծնություն, բարեհաճեցիք գնել առանց կահույքի,— անվճռական տոնով ասաց նա։— Ես հիշում եմ։

— Լռե՛լ,— գոռաց ինժեները, կարմրատակելով ու զայրույթից դողալով, և արձագանքն այգում կրկնեց նրա բղավոցը։

XII

Երբ այգում կամ բակում ես որևէ գործ էի անում, Մոիսեյը կանգնում էր կողքիս և ձեռքերը հետևը դրած, ալարկոտ ու լպիրշ հայացքով ինձ էր նայում իր մանր աչքերով։ Եվ դա այն աստիճան էր ինձ գրգռում, որ աշխատանքը թողնում ու հեռանում էի։

Ստեփանից մենք, իմացանք, որ այդ Մոիսեյը գեներալի կնոջ սիրեկանն էր։ Ես նկատել էի, որ երբ դրամ ուզելու համար

[1] Ամպիր (Ֆրանս.)՝ իմպերատորական — 19-րդ դարի սկզբներին Ֆրանսիայում տարածված ոճ (Ծ. Թ.)։

գալիս էին գեներալի կնոջ մոտ, սկզբում դիմում էին Մոիսեյին, ու մի անգամ էլ տեսա, թե ինչպես ոտից գլուխ մրի մեջ կորած մի մուժիկ, որ երևի ածխավաճառ էր, նրա ոտքերն էր ընկել։ Երբեմն, խնդրատուի հետ փսփսալով, առանց տիրուհուն ղեկուցելու ինքն էր փող տալիս, որից կռահեցի, թե առիթ եղած դեպքում նա ինքնուրույն գործարքներ էր անում իր հաշվին։

Նա այգում կրակում էր մեր պատուհանների տակ, մեր մառանից ուտելիք էր թոցնում, առանց հարցնելու տանում էր ձիերը։ Իսկ մենք զայրանում էինք, դադարում էինք հավատալ, որ Դուբեչնյան մերն է, և Մաշան գունատվելով ասում էր.

— Մի՞թե մենք այս գարշելիների հետ պետք է տարիուկես էլ դեռ ապրենք։

Գեներալի կնոջ տղան՝ Իվան Զեպրակովը, կոնդուկտոր էր մեր երկաթուղում։ Ձմեռվա ընթացքում նա շատ նիհարեց ու թուլացավ, այնպես որ հենց առաջին բաժակով արդեն հարբում էր և նույնիսկ ստվերոտ տեղում էլ մրսում։ Զզվանքով էր կրում կոնդուկտորական զգեստը և ամաչում դրանից, բայց իր տեղը շահավետ էր համարում, որովհետև կարող էր մոմեր գողանալ ու ծախել։ Իմ նոր վիճակը նրա մեջ զարմանքի, նախանձի և աղոտ հույսի խառնշփոթ մի զգացում էր առաջացնում, որ իր հետ էլ նման ինչ-որ բան կարող էր պատահել։ Նա Մաշայի հետևից նայում էր զմայլված աչքերով, հարցնում էր, թե հիմա ճաշին ինչ եմ ուտում, ու նրա լղարիկ, տգեղ դեմքին հայտնվում էր թախծոտ ու երանելի մի արտահայտություն, և նա այնպես էր շարժում իր մատները, ասես շոշափում էր իմ երջանկությունը։

— Լսիր, փոքրիկ օգուստ,— ասաց նա անհանգիստ, յուրաքանչյուր բոպե ծխելով. նա ուր էլ որ կանգներ, այդտեղ միշտ կեղտոտվում էր, որովհետև մի ծխախոտի համար փչացնում էր լուցկու տասնյակ հատիկներ։— Լսիր, իմ կյանքը հիմա գարշելի է։ Գլխավորն այն է, որ ամեն մի սլրապորշիկ կարող է բղավել՝ «Դու կոնդուկտոր ես, դո՛ւ»։ Վագոնների մեջ, ախպերս, ես ամեն տեսակ բան տեսա ու իմացա, և գիտես, հասկացա, որ կյանքը զզվելի է։ Մա՛յրս կործանեց ինձ։ Վագոնում մի բժիշկ ինձ ասաց, որ եթե ծնողները փչացած են, ապա նրանց երեխաները հարբեցողներ ու հանցագործներ կդառնան։ Ահա թե ի՞նչ։

Մի անգամ նա բակ մտավ օրորվելով։ Աչքերն անիմաստ այս ու այն կողմ էին նայում, ծանր էր շնչում. ծիծաղում էր,

լաց լինում ու ջերմախտի մեջ զառանցողի պես ինչ-որ բան ասում, և նրա խառնաշփոթ խոսքի մեջ ես հասկանում էի միայն «մա՛յրս, ո՞ւր է մայրս» բառերը, որոնք նա արտասանում էր լաց լինելով, ինչպես ամբոխի մեջ մորը կորցրած երեխան։ Նրան տարա մեր այգին ու պառկեցրի ծառի տակ, և հետո ամբողջ ցերեկն ու գիշերը ես ու Մաշան հերթով նստեցինք նրա կողքին։ Զեպրակովը վատ էր զգում, իսկ Մաշան զզվանքով նայում էր նրա գունատ, խոնավ դեմքին ու ասում.

— Մի՞թե այս գարշելիները մեր բակում կապրեն ևս մեկ ու կես տարի։ Դա սարսափելի՜ է, սարսափելի՜։

Իսկ որքա՜ն դառնություն էին պատճառում մեզ գյուղացիները։ Ինչպիսի՜ հիասթափություն հենց սկզբից, գարնանային ամիսներին, երբ այդքան ուզում էինք երջանիկ լինել։ Կինս դպրոց էր կառուցում։ Ես վաթսուն երեխայի համար դպրոցի պլան գծեցի, և զեմստվոյի վարչությունը հավանեց, սակայն խորհուրդ տվեց դպրոցը կառուցել Կուրիլովկայում, որը մեծ գյուղ էր և մեզնից ընդամենը երեք վերստ հեռու։ Ի միջի այլոց, Կուրիլովկայի դպրոցը, որտեղ սովորում էին չորս գյուղի երեխաներ, այդ թվում նաև մեր Դուբեչնյայից, խարխուլ էր, նեղվածք, և փտած հատակին արդեն վախվխելով էին քայլում։ Մարտի վերջին Մաշային իր ցանկությամբ նշանակեցին Կուրիլովկայի դպրոցի հոգաբարձուհի, իսկ ապրիլի սկզբներին մենք երեք անգամ հավաքեցինք գյուղացիներին և փորձեցինք համոզել նրանց, որ իրենց դպրոցը խարխուլ է ու նեղվածք, հարկավոր է կառուցել նորը։ Եկան զեմստվոյի վարչության մի անդամ ու ժողովրդական ուսումնարանների տեսուչը և նույնպես համոզեցին։ Ամեն մի հավաքից հետո մեզ շրջապատում էին և մի դույլ օղու փող պահանջում. մենք ամբոխի մեջ նեղվում էինք, արագ հոգնում և վերադառնում դժգոհ ու մի քիչ էլ շշմած։ Վերջապես մուժիկները դպրոցի համար հող առանձնացրին և խոստացան իրենց սայլերով քաղաքից բերել ամբողջ շինանյութը։ Եվ հենց որ գարնանացանը վերջացրին, առաջին իսկ կիրակի օրը Կուրիլովկայից և Դուբեչնյայից ձիասայլերը գնացին հիմքի համար աղյուս բերելու։ Դուրս եկան լույսը հազիվ բացված և վերադարձան ուշ երեկոյան։ Մուժիկները հարբած էին ու ասում էին, թե կարգին տանջվել են։

Հակառակի պես անձրևներն ու ցրտերը շարունակվեցին ամբողջ մայիսին։ Ճանապարհը վատացավ, ցեխ էր։ Քաղաքից

վերադարձող ձիասայլերը սովորաբար մտնում էին մեր բակը. դա մի սոսկալի բան էր։ Դարպասի մեջ ահա երևում էր առջևի ոտքերը լայն բացած ու փորն ուռած ձին. բակ մտնելուց առաջ նա գլխով էր անում. դրոգի վրա դրված տասներկու արշինանոց թաց, լայծուն գերանը ներս էր սողում. կողքից, անձրևից պաշտպանվելով ու ոտքերի առաջը չնայելուց ջրափոսերն ընկնելով, քայլում էր մուժիկը կացինը գոտու տակ խրած։ Երևում էր մյուս ձիասայլը՝ տաշած տախտակները վրան, հետո երրորդը՝ գերաններով, չորրորդը... և տան առաջ բակը կամաց-կամաց խիտ լցվում էր ձիերով, գերաններով ու տախտակներով։ Մուժիկները և գլուխները փաթաթված ու փեշերը վեր քշտած կանայք խեթ-խեթ նայում էին մեր պատուհաններին, աղմկում, պահանջում, որ կալվածատիրուհին դուրս գա։ Լսվում էին կոպիտ հայհոյանքներ։ Իսկ մի կողմ քաշված կանգնում էր Միոսեյը, ու մեզ թվում էր, թե ուրախանում է մեր խայտառակությամբ։

— Էլ չենք կրի,— բղավում էին մուժիկները։— Հոգիներս դուրս եկավ։ Հալա մի ինքդ գնա բեր։

Մաշան, գունատված ու շփոթված, մտածելով, որ հիմա ամբոխը տուն կլցվի, ուղարկում էր կես դույլ օղու։ Դրանից հետո աղմուկը դադարում էր, և երկար գերանները մեկը մյուսի հետևից դուրս էին սողում բակից։

Երբ ես պատրաստվում էի շինարարություն գնալ, կինս հուզմունքով ասաց.

— Մուժիկները չարանում են։ Հանկարծ քեզ մի բան չանեն։ Ո՛չ, սպասիր, ես էլ քեզ հետ կգամ։

Մենք Կուրիլովկա գնացինք միասին, և այնտեղ ատաղձագործները մեզնից թեյանվեր ուզեցին։ Փայտային մասն արդեն պատրաստ էր, հիմքը լցնելու ժամանակն էր, բայց որմնադիրները չէին եկել. գործը ձգձգվում էր, ատաղձագործները փընթփընթում էին։ Իսկ երբ վերջապես որմնադիրները եկան, պարզվեց, որ ավազ չկա. ինչ-որ աչքաթող էին արել, որ ավազ է պետք։ Մեր անելանելի վիճակից օգտվելով, մուժիկները պահանջեցին սայլը երեսուն կոպեկով վճարել, թեև շինարարությունից մինչև գետը, որտեղից ավազ էին կրում, քառորդ վերստ էլ չկար, իսկ հարկավոր էր հինգ հարյուր սայլից ավելի։ Վեճերին, հայհոյանքներին և ավել դրամ շորթելուն վերջ չկար. կինս զայրանում էր, իսկ կապալառու որմնադիր Տիտ Պետրովը, յոթանասուն տարեկան մի ծերուկ, բռնում էր նրա ձեռքն ու ասում.

— Մի էստե՛ղ նայիր, մի նայիր, է՛։ Դու ինձ մենակ ավազ տուր, միանգամից տասը մարդ կբերեմ, ու երկու օրից պատրաստ կլինի։ Դու մի նայի՛ր, է։

Ավազը բերեցին, բայց երկու օր էլ անցավ, չորս օր էլ, մի շաբաթ էլ, իսկ ապագա հիմքի տեղում դեռ էլի խոր փոսեր էին։

— Այսպես որ գնա, մարդ կխելագարվի,— հուզվում էր կինը։— Ի՞նչ մարդիկ են, ի՞նչ մարդիկ։

Այս խառնակ օրերին մեզ մոտ եկավ ինժեներ Վիկտոր Իվանիչը։ Նա իր հետ փաթեթներով գինիներ ու խորտիկներ էր բերել, պինդ կերավ և հետո պառկեց պատշգամբում ու քնեց այնպես խռմփացնելով, որ բանվորներն օրորում էին գլուխներն ու ասում։

— Տես, է՛։

Մաշան չէր ուրախանում նրա այցելությամբ, չէր հավատում նրան, բայց և միևնույն ժամանակ խորհրդակցում էր հետը։ Երբ ինժեները, ճաշից հետո քունն առած, վեր էր կենում անտրամադիր ու մեր տնտեսության մասին վատ խոսում կամ էլ ափսոսում Դուբեչնյան առնելու համար, որն արդեն իրեն այդքան վնաս էր տվել, խեղճ Մաշայի դեմքին թախիծ էր հայտնվում։ Նա գանգատվում էր հորը, իսկ սա հորանջում էր ու ասում, թե մուժիկներին հարկավոր է պատժել։

Մեր ամուսնությունն ու կյանքը ինժեները համարում էր կատակերգություն, ասում էր, թե դա քմահաճույք է, երեսառածություն։

— Նման մի բան աղջկաս արդեն պատահել է,— պատմում էր ինձ Մաշայի մասին։— Մի անգամ իրեն երևակայեց օպերային երգչուհի և հեռացավ ինձնից։ Երկու ամիս փնտրեցի նրան և, սիրելիս, միայն հեռագրերի վրա հազար ռուբլի ծախսեցի։

Նա արդեն ինձ չէր անվանում ո՛չ աղանդավոր, ո՛չ էլ պարոն ներկարար և բանվորական իմ կյանքին հավանություն չէր տալիս, ինչպես առաջներում, ու միայն ասում էր.

— Դուք տարօրինակ մարդ եք, դուք նորմալ մարդ չեք։ Ձեմ համարձակվում գուշակել, սակայն ձեր գործը շատ վատ կվերջանա։

Մաշան գիշերները վատ էր քնում և մեր ննջասենյակի պատուհանի մոտ նստած անընդհատ մտածում էր ինչ-որ բանի մասին։ Ընթրիքի ժամանակ այլևս չէր ծիծաղում, ոչ էլ սիրունիկ դիմախաղեր սարքում։ Ես տանջվում էի, և երբ անդրև էր գա-

լիս, ամեն մի կաթիլը կոտորակի պես խրվում էր սիրտս. ես պատրաստ էի ընկնել Մաշայի ոտքերը և եղանակի համար ներողություն խնդրել։ Երբ բակում աղմկում էին մուժիկները, ապա ե՞ս էլ ինձ մեղավոր էի զգում։ Ժամերով նստում էի միևնույն տեղում ու մտածում միայն այն մասին, թե ի՞նչ հրաշալի կին է Մաշան, ի՞նչ սքանչելի կին։ Ես անչափ սիրում էի նրան, ինձ հիացմունք էր պատճառում այն ամենը, ինչ անում կամ ասում էր նա։ Մաշան հակված էր կաբինետային խաղաղ զբաղմունքի, սիրում էր երկար կարդալ, որևէ բան ուսումնասիրել։ Նա, որ գյուղատնտեսությունը գիտեր միայն գրքերից, բոլորիս զարմացնում էր իր գիտելիքներով, և նրա տված բոլոր խորհուրդները պետք էին գալիս, ու տնտեսության մեջ դրանցից ոչ մեկն անտեղի չէր կորչում։ Եվ այս ամենի հետ որքա՜ն ազնվություն, ճաշակ ու բարեսրտություն, հենց այն բարեսրտությունը, որ ունենում են միայն հիանալի դաստիարակված մարդիկ։

Առողջ ու սթափ մտքի տեր այդ կնոջ համար տանջալից էր մանր-մունր հոգսերով և ճղճիմ վեճերով այդ անկանոն կյանքը, որի մեջ մենք հիմա ապրում էինք։ Ես տեսնում էի դա և ինքս էլ գիշերները չէի կարողանում քնել, գլուխս պայթում էր, արցունքները խեղդում էին ինձ։ Անճարակ դարձած՝ ես չգիտեի, թե ինչ անեմ։

Զի նստած թռչում էի քաղաք և Մաշայի համար գրքեր, լրագրեր, կոնֆետներ ու ծաղիկներ բերում, Ստեպանի հետ ձուկ էի որսում և, անձրևի տակ մինչև վիզս ժամերով մնալով սառը ջրի մեջ, շերեփաձուկ բռնում, որպեսզի բազմազան դարձնեմ մեր ճաշասեղանը։ Ստորանալով, մուժիկներին աղաչում էի չաղմկել, նրանց օգի էի խմեցնում, կաշառում, զանազան խոստումներ տալիս։ Ինչպիսի՜ հիմարություններ ասես արել եմ։

Անձրևները վերջապես դադարեցին, հողը չորացավ։ Վեր ես կենում առավոտյան, ժամը չորսին մոտ, դուրս գալիս այգի, ծաղիկների վրա փայլում է ցողը, թռչուններն ու միջատներն աղմկում են, երկնքում ամպի ոչ մի ծվեն չի երևում։ Ե՛վ այգին, և՛ մարգագետինները, և՛ գետը անչափ գեղեցիկ են, սակայն մուժիկների, սայլերի ու ինժեների մասին այդ հիշողությունները... Մաշայի հետ միասին երկանիվ կառքով դաշտ էինք գնում վարսակի ցանքը նայելու։ Նա քշում էր կառքը, իսկ ես նստում էի հետևում։ Մաշայի ուսերը վեր էին բարձրանում, քամին խաղում էր նրա մազերի մեջ։

— Աջ քաշվի՛ր,— բղավում էր նա անցորդներին։

— Դու նման ես կառապանի,— ասացի նրան մի անգամ։

— Կարող է պատահել։ Չէ՞ որ պապս՝ ինժեների հայրը, կառապան էր։ Դու չգիտե՞ի,— շրջվելով իմ կողմը, հարցրեց Մաշան և տեղնուտեղը ցույց տվեց, թե ինչպես են բղավում ու երգում կառապանները։

«Փա՜ռք աստծո,— մտածում էի ես, նայելով նրան։— Փա՜ռք աստծո»։

Ու նորից մուժիկների, սայլերի ու ինժեների մասին այդ հիշողությունները...

XIII

Հեծանիվով եկավ բժիշկ Բլագովոն։ Քույրս սկսեց հաճախ երևալ։ Դարձյալ խոսք ու զրույց ֆիզիկական աշխատանքի, առաջադիմության, խորհրդավոր այն իքսի մասին, որը հեռավոր ապագայում սպասվում է մարդկությանը։ Բժիշկը չէր սիրում մեր տնտեսությունը, որովհետև դա խանգարում էր մեր վեճերին, և ասում էր, թե վարուցանքը, հունձը, հորթ արածացնելը վայել չէ ազատ մարդուն, և գոյության պայքարի բոլոր այդ կոպիտ ձևերը ժամանակի ընթացքում մարդիկ կթողնեն անասուններին ու մեքենաներին, իսկ իրենք կզբաղվեն բացառապես գիտական ուսումնասիրություններով։ Իսկ քույրս ամեն անգամ խնդրում էր իրեն տուն թողնել մի քիչ ավելի շուտ, ու եթե մնում էր մեզ մոտ մինչև ուշ երեկո կամ էլ գիշերելու, ապա հուզմունքին վերջ չկար։

— Աստվա՜ծ իմ, դուք բոլորովին երեխա եք,— ասում էր Մաշան կշտամբանքով։— Դա նույնիսկ ծիծաղելի է։

— Այո, ծիծաղելի է,— համաձայնում էր քույրս,— խոստովանում եմ, որ դա իրոք ծիծաղելի է, սակայն ի՞նչ անեմ, եթե ուժ չունեմ ինքս ինձ հաղթելու։ Ինձ միշտ թվում է, թե ես վատ եմ վարվում։

Խոտհնձին սովոր չլինելուց ամբողջ մարմինս ջարդվում էր։ Երեկոյան մերոնց հետ պատշգամբում նստած զրուցելիս, մեկ էլ տեսար քնում էի, ու ինձ վրա քահ-քահ ծիծաղում էին։ Զարթեցնում էին և սեղանի մոտ ընթրիքի նստեցնում, նինջը հաղթում էր ինձ, և ասես թմրության մեջ տեսնում էի կրակներ, դեմքեր, ափսեներ, ձայներ էին լսում և ոչինչ չէի հասկանում։

Իսկ առավոտ վաղ վեր կենալով, անմիջապես ձեռքս էի առնում դերանդին կամ էլ գնում շինարարություն ու աշխատում ամբողջ օրը։

Տոներին մնալով տանը, նկատում էի, որ կինս ու քույրս ինչ-որ բան թաքցնում են և նույնիսկ մի տեսակ խուսափում ինձնից։ Կինս ինձ հետ առաջվա նման սիրալիր էր, սակայն ինչ-որ մտքեր ուներ, որոնք ինձ չէր հայտնում։ Կասկած չկար, որ գյուղացիների նկատմամբ նրա զայրույթն աճել էր, կյանքը նրա համար դարձել էր ավելի ու ավելի դժվար, սակայն նա այլևս ինձ չէր գանգատվում։ Ավելի հաճույքով հիմա խոսում էր բժշկի, քան ինձ հետ, և չէի հասկանում, թե դա ինչից էր։

Մեր նահանգում սովորություն կար, որ խոտհնձի և հացի հավաքելու ժամանակ երեկոները տերունական տան բակն էին գալիս աշխատողները, ու նրանց օղի էին հյուրասիրում, նույնիսկ ջահել աղջիկները մի-մի բաժակ խմում էին։ Այդ սովորությանը մենք չէինք հետևում. հնձվորներն ու կանայք, մինչև ուշ երեկո կանգնելով մեր բակում, սպասում էին օղու և հետո հայհոյելով հեռանում էին։ Իսկ Մաշան այդ ժամանակ խիստ մռայլվում էր ու լռում կամ էլ գրգռված, կիսաձայն ասում էր բժշկին.

— Վայրենինե՛ր, պեչենեգնե՛ր։

Նորեկներին գյուղում սիրալիր չեն ընդունում, համարյա թշնամաբար, ինչպես դպրոցում է։ Այդպես ընդունեցին նաև մեզ։ Սկզբում մեզ հիմար ու միամիտ մարդկանց տեղ էին դրել, որոնք իրենց համար կալվածք են առել հենց միայն այն պատճառով, որ չգիտեն, թե ինչ անեն դրամը։ Մեզ ծաղրում էին։ Մեր անտառակում և նույնիսկ այգում մուժիկները տավար էին արածացնում, մեր կովերն ու ձիերը քշում-տանում էին գյուղ և հետո գալիս փող էին պահանջում, թե իբր մեր անասուններն ապօրինի արածել են իրենց հողերում։ Ամբողջ համայնքով լցվում էին մեր բակը և աղմուկ-աղաղակով հայտարարում, որ հնձելիս իբր թե մեջ ենք առել մեզ չպատկանող ինչ-որ Բիշևկայի կամ Սեմենիխայի եզրահողերը։ Ու քանի որ դեռ չգիտեինք մեր հողի իսկական սահմանները, հավատում էինք նրանց խոսքին ու տուգանք վճարում. հետո միայն պարզվում էր, որ ճիշտ ենք հնձել։ Մեր անտառակում պոկոտում էին մատղաշ լորիների կեղևը։ Դուբեչնյայից մի մուժիկ, որ առանց արտոնագրի օղի վաճառող կուլակ էր, կաշառել էր մեր աշխատուղներին ու նրանց

հետ ամենաստոր ձևով խաբեց մեզ, սայլերի նոր անիվները փոխեց հներով, գողացավ վար անելու մեր ունեցած խամութներն ու նորից մեզ ծախեց և նման շատ բաներ արեց։ Բայց ամենից վիրավորականն այն էր, ինչ կատարվում էր Կուրիլովկայի շինարարությունում. կանայք այստեղից գիշերով տաշած տախտակը, աղյուս, հախճասալիկ ու թիթեղ էին գողանում։ Գյուղապետը վկաների հետ խուզարկեց նրանց տները, ժողովն ամեն մեկին երկու ռուբլի տուգանեց, և հետո տուգանքի այդ փողերը ամբողջ համայնքով էլ խմեցին։

Երբ Մաշան լսեց դա, խիստ վրդովվեց։ Բժշկին կամ քրոջն նա ասում էր.

— Ի՞նչ անասուններ են։ Սարսափելի է, սարսափելի՞։

Շատ անգամ լսել եմ, թե ինչպես նա ափսոսանքով էր հայտնում, որ սկսել էր դպրոց կառուցել։

— Հասկացեք,— համոզում էր նրան բժիշկը,— հասկացեք, որ եթե դուք կառուցում եք այդ դպրոցը և ընդհանրապես բարություն եք անում, ապա դա մուժիկների համար չէ, այլ հանուն կուլտուրայի, հանուն ապագայի։ Եվ որքան այդ մուժիկները վատ են, այնքան ավելի շատ պատճառներ կան դպրոց կառուցելու։ Հասկացե՞ք։

Նրա ձայնի մեջ սակայն անվստահության շեշտ կար, ու ինձ թվաց, թե նա էլ Մաշայի նման ատում էր մուժիկներին։

Մաշան հաճախ գնում էր ջրաղաց և քրոջս էլ հետը տանում, ու երկուսն էլ ծիծաղելով ասում էին, թե գնում ենք Ստեպանին տեսնելու, շա՜տ գեղեցիկն է։ Պարզվեց, որ Ստեպանը դանդաղկոտ ու չխոսկան էր միայն տղամարդկանց հետ, իսկ կանանց մոտ իրեն ազատ էր պահում և անընդհատ խոսում էր։ Մի անգամ գնացել էի գետը լողանալու և ակամա ականջ դրի նրանց խոսակցությանը։ Մաշան ու Կլեոպատրան, երկուսն էլ ճերմակագեստ, նստած էին գետափին, ուռենու լայն ստվերի տակ, իսկ Ստեպանը կանգնել էր նրանց մոտ ու ձեռքերը հետևը դրած ասում էր.

— Իբր մուժիկն էլ մա՞րդ է։ Մարդ չէ, այլ, կներեք, գազան է ու խաբեբա։ Ի՞նչ կյանք ունի մուժիկը։ Մենակ ուտել ու խմել գիտե, այն էլ էժանագին բաներ, գինետանը՝ թողնես խելքը կորցրած կոկորդ կճղի։ Մի կարգին խոսք չես լսի, մի վարմունք ու շնորհք չես տեսնի՝ այնքան որ անտաշ են։ Համ ինքն է կեղտի մեջ, համ կինն ու երեխեքը, ինչ որ հագին կա, այդպես

էլ անկողին է մտնում, ապուրի միջից կարտոֆիլը մատներով է հանում, կվասն էլ խմում է միջատը հետը՝ գոնե մի անգամ փչեր մաքրեր։

— Ախր խե՜ղճ են,— միջամտեց քույրս։

— Ի՞նչ խեղճ։ Այդ մեկը ճիշտ է, կարիքը կա, բայց կարիքը կարիքի վրա էլ տարբեր է, օրիորդ։ Ա՛յ, եթե մարդուն բանտ են դրել կամ, ասենք, կույր է, կամ թե առանց ոտքի, այդ արդեն, ճիշտ որ, աստված ոչ անի, իսկ եթե, փա՜ռք աստծու, ազատ է, խելքը գլխին, աչք ու ձեռք ունի, ուժն էլ տեղը, էլ ի՞նչ է ուզում։ Երես են առել, օրիորդ, բռի են, ոչ թե խեղճ։ Կամ թե՝ դուք, ասենք, ուսումնական լավ մարդիկ եք, շնորհ արիք ու մուժիկին մի բան տվիք, ձեր այդ փողը նա իր անպետքության պատճառով կխմի կամ, ավելի վատ, հենց ինքը բաց կանի գինետուն ու ձեր փողով կսկսի ժողովրդին թալանել։ Դուք բարեհաճում եք ասել՝ խե՜ղճ են։ Իսկ հարուստ մուժիկն ինչ է, լա՞վ է ապրում։ Նա նույնպես, կներեք, ապրում է խոզի նման։ Մուժիկը կոպիտ է, աղմկարար, հաստագլուխ, լայնքին է տվել, քիթ ու մռութն էլ կարմիր, ասես մեկը մի լավ հասցրել է այդ սրիկային։ Ա՛յ, Լարիոնը՝ Դուբեչնյա գյուղից, նույնպես հարուստ է, բայց էլի ձեր անտառակից այդ խեղճերի պես լորու տախտակ է թոցնում։ Ինքն էլ, երեխեքն էլ հայհոյում են, իսկ հենց որ մի քիչ շատ է կոնծում, քիթը կոխում է ցեխաջրի մեջ ու շնթռում։ Դրանք բոլորն էլ, օրիորդ, արժեք չունեցող մարդիկ են։ Գյուղում հետներն ապրում ես, ոնց որ դժոխքում լինես։ Այդ գյուղ ասածդ վզիս էր փաթաթվել, ու գոհ եմ աստծուց՝ երկնային թագավորից, և՛ կուշտ եմ, և՛ շոր ունեմ հագիս, դրագունների[1] մոտ իմ ժամկետը ծառայեցի պրծա, երեք տարի ավագ եմ եղել, հիմա ես ազատ կազակ եմ. որտեղ ուզեմ, այնտեղ էլ կապրեմ։ Գյուղում չուզենամ ապրել, ոչ ոք իրավունք չունի ինձ ստիպել։ Ասում են՝ կի՜ն ունես։ Դու, ասում են, պարտավոր ես կնոջդ հետ մի խրճիթում ապրել։ Ինչո՞ւ, նա հո ինձ չի՞ վարձել։

— Ասացեք, Ստեպան, դուք ամուսնացել եք սիրելո՞վ,— հարցրեց Մաշան։

— Մեզ մոտ գյուղում ի՞նչ սեր,— պատասխանեց Ստեպանը քմծիծաղով։— Ճիշտը որ ասեմ, տիկին, թե որ ուզում եք իմանալ, ես ամուսնացած եմ երկրորդ անգամ։ Ինքս Կուրիլովկայից

[1] Դրագուն— հեծյալ զորամասի մի տեսակ, վիշապազոր (ծ. թ.)։

չեմ, այլ Զալեգոշչա գյուղից, իսկ Կուրիլովկան ինձ հետո են տնփեսա բերել։ Այսպես էր, ընդամենը հինգ եղբայր էինք, հայրս չուզեց մեզ բաժանել, իսկ ես մնաս բարով ասի ու գնացի օտար գյուղ տնփեսա։ Առաջին կինս ջահել հասակում մեռավ։

— Ինչի՞ց։

— Հիմարությունից։ Պատահում էր, որ լաց էր լինում, անտեղի միշտ լաց էր լինում ու լաց, այդպես էլ հալումաշ եղավ։ Շարունակ ինչ-որ խոտեր էր եփում ու ջուրը խմում, ուզում էր սիրունանալ, դե՜, երևի, իր ներսը փչացրեց։ Իսկ երկրորդ կինս՝ Կուրիլովկա գյուղինը, բանի նման չէ։ Գյուղական կին է, գեղջկուհի, ուրիշ ոչինչ։ Երբ նրան հետս պսակեցին, հավանեցի, ասի ջահել է, անարատ, մաքուր ապրած։ Նրա մայրը աղանդավորի նման էր և սուրճ էր խմում, իսկ գլխավորը՝ ուրեմն մաքուր են ապրում։ Այսպես՝ պսակվեցի, իսկ մյուս օրը, որ նստեցինք ճաշի, զոքանչիս հրամայեցի գդալ բերել, նա վեր կացավ բերեց, տեսնեմ, մատով է սրբում։ Ա՛յ քեզ բան, մտածում եմ, լա՞վ մաքրություն է, խոսք չկա։ Հետներն ապրեցի մի տարի ու հեռացա։ Գուցե լավ կլիներ ես քաղաքացի կին պոնեի,— շարունակեց նա փոքր-ինչ լռելուց հետո։— Ասում են, կինը իր մարդու օգնականն է։ Ինչիս է պետք օգնականը, ինքս էլ ինձ կօգնեմ, իսկ դու լավ կլինի հետս խոսիր ոնց որ հարկն է, սրտանց, թե չէ ինչ է, շարունակ՝ տա-տա-տա-տա։ Առանց լավ խոսք ու զրույցի էլ ի՞նչ կյանք։

Ստեպանը հանկարծ լռեց, և իսկույն լսվեց ձանձրացնող, միապաղաղ նրա «ու-լյու-լյու-լյու»-ն։ Դա նշանակում էր, որ նկատել էր ինձ։

Մաշան հաճախ էր լինում ջրաղացում, և հավանաբար Ստեպանի հետ զրուցելը նրան բավականություն էր պատճառում։ Ստեպանն այնքան սրտանց ու համոզված էր նախատում մուժիկներին, որ կինս հակվում էր դեպի նա։ Երբ Մաշան վերադառնում էր ջրաղացից, համարյա ամեն անգամ այգու պահակ խենթ մուժիկը բղավում էր նրա վրա։

— Օրիո՜րդ Պալաշկա, բարևնե՜րս, օրիորդ Պալաշկա,— ու շան պես հաչում էր՝ հա՜ֆ, հա՜ֆ, հա՜ֆ։

Իսկ Մաշան կանգ էր առնում և ուշադիր նայում նրան, կարծես խենթուկի այդ հաչոցի մեջ գտնում էր իր մտքերի պատասխանը, ու երևի այդ հաչոցն էլ նրան այնպես էր գրավում, ինչ-

պես Ստեպանի լուտանքները։ Իսկ տանը կնոջս սպասում էր մի որևէ լուր, օրինակ, ասենք, այսպիսի, որ գյուղի սագերը մեր բանջարանոցում տորոել են կաղամբը, կամ որ Լարիոնը սանձերն է գողացել, և Մաշան ուսերը թոթվելով, քմծիծաղով ասում էր.

— Այդ մարդկանցից դուք ուրիշ էլ ի՞նչ եք ուզում։

Նա վայրանում էր, հոգին պղտորվում, իսկ ես, իմիջիայլոց, արդեն ընտելացել էի մուժիկներին, և նրանք ինձ ավելի ու ավելի էին ձգում իրենց կողմը։ Նրանցից շատերը ջղային, գրգռված ու դառնացած մարդիկ էին, ճնշված երևակայությամբ ու անուսում մարդիկ, իրենց աղքատիկ, տարտամ մտահորիզոնով, բոլորն էլ գորշ հողի, գորշ օրերի ու սև հացի մասին միշտ միևնույն մտքերով պաշարված, մարդիկ, որոնք խորամանկում էին, սակայն թռչունի նման ծառի հետևում թաքցնում էին միայն գլուխները, մարդիկ, որոնք հաշվել չգիտեին։ Նրանք քսան ռուբլով մոտդ խոտհնձի չէին գա, բայց կես դույլ օղի որ տայիր, կվազեին, թեև քսան ռուբլով կարող էին չորս դույլ առնել։ Ճիշտ է, կար և՛ կեղտոտություն, և՛ հարբեցողություն, և՛ տգիտություն, և՛ խարդախություն, բայց սրանց կողքին էլի զգացվում էր, որ մուժիկի կյանքն ընդհանրապես հիմնված է մի ինչ-որ ամուր ու առողջ առանցքի վրա։ Իր արորի հետևից գնալիս մուժիկն ինչքան էլ բիրտ գազան թվա և օղիով ինչպես էլ թմրեցնի իրեն, միևնույն է, մոտիկից ճանաչելով նրան, զգում ես, որ մուժիկի մեջ կա այն պետքականն ու շատ կարևորը, ինչ չկա, օրինակ, Մաշայի ու բժշկի մեջ, այսինքն այն, որ նա հավատում է, թե երկրի երեսին գլխավորը ճշմարտությունն է, որ իր և ողջ ժողովրդի փրկությունը միայն ճշմարտության մեջ է, ու դրա համար էլ աշխարհում ամենից շատ սիրում է արդարությունը։ Կնոջս ասում էի, որ ինքը ապակու վրայի կեղտաբիծն է միայն նկատում, սակայն չի տեսնում ապակին։ Պասասխանի փոխարեն նա լռում էր կամ էլ Ստեպանի նման երգում՝ ու-լյու-լյու-լյո՛ւ... Երբ բարի, խելացի այդ կնոջը ջղայնությունից գունատվում էր և բեկբեկվող ձայնով բժշկի հետ խոսում հարբեցողության ու խաբեությունների մասին, նրա մոռացկոտությունն ինձ տարակուսանք էր պատճառում և ապշեցնում։ Նա ինչպե՞ս կարող էր մոռանալ, որ իր հայրը՝ ինժեները, նույնպես խմում էր, շատ էր խմում, և այն դրամը, որով առել

էին Դուբեչնյան, ձեռք էր բերված մի ամբողջ շարք լկտի, անխիղճ խաբեությունների ճանապարհով։ Նա ինչպե՞ս կարող էր մոռանալ։

XIV

Քույրս էլ ապրում էր մի առանձին կյանքով, որը խնամքով թաքցնում էր ինձնից։ Նա հաճախ փսփսում էր Մաշայի հետ։ Երբ մոտենում էի, նա ամբողջովին կուչ էր գալիս, ու հայացքը դառնում էր մեղավոր, աղերսական, երևում էր, որ նրա հոգում ինչ-որ բան էր կատարվում, որից վախենում կամ ամաչում էր։ Որպեսզի այդում հանկարծ չհանդիպենք իրար կամ մենակ չմնա ինձ հետ, ամբողջ ժամանակ լինում էր Մաշայի կողքին, և ես ստիպված էի հազվադեպ խոսել նրա հետ՝ միայն ճաշի ժամանակ։

Մի անգամ երեկոյան, շինարարությունից վերադառնալիս, դանդաղ անցնում էի այգու միջով։ Արդեն սկսել էր մթնել։ Ցնկատելով ինձ ու չլսելով քայլերիս ձայնը, քույրս ման էր գալիս հինավուրց, փարթամ խնձորենու մոտ, բոլորովին անձայն, կարծես ուրվական լիներ։ Նա սև զգեստով էր, քայլում էր արագ, միշտ նույն ուղղությամբ՝ հետ ու առաջ, հայացքը գետնին։ Ծառից մի խնձոր ընկավ, ձայնից նա ցնցվեց, կանգ առավ և ձեռքերը սեղմեց քունքերին։ Հենց այդ ժամանակ էլ մոտեցա նրան։

Սիրտս հանկարծ լցվեց քնքուշ սիրո զգացմունքով, արցունքն աչքերիս, և չգիտես ինչու հիշելով մեր մորն ու մեր մանկությունը, ես գրկեցի նրա ուսերն ու համբուրեցի։

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես։— Դու տանջվում ես, դա վաղուց եմ նկատել։ Ասա, ի՞նչ է պատահել։

— Ես վախենում եմ...— ասաց նա դողալով։

— Ասա, քեզ ի՞նչ է պատահել,— համառեցի ես։— Ի սեր աստծո, անկե՛ղծ եղիր։

— Կլինեմ, ես անկեղծ կլինեմ, քեզ կասեմ ամբողջ ճշմարտությունը։ Քեզնից թաքցնելն այնքա՞ն ծանր է, տանջալից, Միսայիլ, ես սիրում եմ...— շարունակեց նա շշուկով։— Սիրում եմ, սիրում... Ես երջանիկ եմ, բայց ինչո՞ւ եմ այսպես վախենում։

Ոտնաձայն լսվեց, ծառերի արանքում երևաց բժիշկ Բլաղո-

վոն մետաքսե բլուզը հագին, երկար սապոգներով։ Հավանաբար այստեղ, խեձորենու մոտ, նրանք տեսակցություն էին նշանակել։ Տեսնելով բժշկին, քույրս նետվեց նրա կողմը այնպես հիվանդագին ճչալով, կարծես նրան խլում էին իրենից։

— Վլադի՜միր, Վլադի՜միր։

Նա սեղմվել էր բժշկի կրծքին ու անհագ կարոտով նայում էր նրա դեմքին, և հիմա միայն նկատեցի, թե վերջին ժամանակներս Կլեոպատրան ինչքան էր նիհարել ու գունատվել։ Դա հատկապես երևում էր ինձ վաղուց ծանոթ նրա զգեստի ժանեկավոր օձիքից, որը հիմա, քան երբևէ, ավելի ազատ էր շրջանակել նրա բարակ ու երկար վիզը։ Բժիշկը շփոթվեց, բայց իսկույն ուշքի եկավ և քրոջս մազերը շոյելով ասաց.

— Դե՜, բավական է, բավակա՜ն է... Ինչո՞ւ ես այդպես հուզվում... Տեսնում ես, ես վերադարձա։

Մենք լուռ էինք, ամոթխած նայում էինք իրար։ Հետո երեքս միասին քայլեցինք, ու ես լսեցի, թե ինչպես էր բժիշկն ինձ ասում.

— Մեզանում դեռևս կուլտուրական կյանք չի սկսվել։ Մերները մխիթարվում են նրանով, որ եթե հիմա ոչինչ չկա, գոնե քառասնական կամ վաթսունական թվականներին ինչ-որ բան եղել է։ Այդպես մտածում են տարիք առած մարդիկ, սակայն մենք հո երիտասարդ ենք, չէ՞, մեր ուղեղին դեռ չի վնասել marasmus senilis-ը[1], մենք չենք կարող մեզ մխիթարել այդպիսի պատրանքներով։ Ռուսիան սկիզբ առավ 862 թվականին, սակայն կուլտուրական Ռուսիայի սկիզբը, ես գոնե այսպես եմ հասկանում, մինչև հիմա չի դրվել։

Բայց ես չէի խորանում այդ խորհրդածությունների մեջ։ Մի տեսակ տարօրինակ էր, չէի ուզում հավատալ, որ քույրս սիրահարված է, որ ահա նա գնում է մի օտար մարդու ձեռք բռնած և քնքշությամբ նայում նրան։ Իմ քույրը՝ ջղային, վախվորած, մոռացված ու կուշկանդված այդ արարածը, սիրում է մի մարդու, որն արդեն ամուսնացած է և երեխանե՛ր ունի։ Ինչ-որ բանի ափսոսացի, իսկ թե հատկապես ինչի՝ չգիտեմ։ Բժշկի ներկայությունը մի տեսակ արդեն տհաճ էր, ու ոչ մի կերպ ես չէի կարողանում հասկանալ, թե նրանց այդ սիրուց ինչ կստացվի։

[1] Ծերունական թուլություն (լատ.)։

XV

Նորաբաց դպրոցի օրհնանքին ես ու Մաշան գնացինք Կուբիլովկա։

— Աշո՜ւն, աշո՜ւն, աշո՜ւն...— ցածր ձայնով ասում էր Մաշան, չորս կողմը նայելով։— Ամառն անցավ։ Թռչունները չվեցին, կանաչ են միայն ուռիները։

Այո, ամառն արդեն անցել էր։ Պարզ ու տաք օրեր էին, բայց առավոտները օդը սառն էր լինում, հովիվներն արդեն քուրք էին հագնում, իսկ մեր այգում աստղածաղիկների վրայի ցողը ամբողջ օրը չէր չորանում։ Անընդհատ լսվում էին սրտաճմլիկ ձայներ, ու չէիր հասկանում, փեղկերն էին արդյոք նըվվում իրենց ժանգոտ ծխնիների վրա, թե՞ արագիլներն էին լվում. հոգիդ թեթևանում էր և ապրել էիր ուզում։

— Ամառն անցավ...— ասաց Մաշան։— Հիմա ես ու դու կարող ենք արդյունքներն ամփոփել։ Մենք շատ աշխատեցինք, շատ մտածեցինք, որից ավելի լավացանք, փառք ու պատիվ մեզ, մենք առաջադիմեցինք ինքնակատարելագործման մեջ։ Սակայն մեր այդ հաջողությունները ունեցա՞ն արդյոք շրջապատի կյանքի վրա նկատելի ազդեցություն, թեկուզ որևէ մեկին մի օգուտ բերեցի՞ն։ Ո՛չ։ Տգիտությունը, աղտոտությունը, հարբեցողությունը, երեխաների մահացության ապշեցուցիչ մեծ քանակը՝ ամեն ինչ մնաց այնպես, ինչպես առաջ էր, և որ դու վարուցանք էիր անում, իսկ ես էլ փող էի ծախսում ու գրքեր կարդում, դրանից ոչ ոք չշահեց։ Մենք երևի աշխատեցինք միայն մե՛զ համար և մտածեցինք մե՛ր մասին։

Այդ դատողություններն ինձ մոլորեցնում էին, և ես չգիտեի, ինչ անեմ։

— Սկզբից մինչև վերջ մենք անկեղծ եղանք,— ասացի ես,— իսկ ով անկեղծ է, նա էլ ճշմարիտ է։

— Իսկ ո՞վ է առարկում։ Մենք ճշմարիտ էինք, սակայն սխալ իրագործեցինք այն, ինչի մեջ որ ճշմարիտ էինք։ Ամենից առաջ, մեր գործելու հենց արտաքին եղանակները. մի՞թե դրանք սխալ չէին։ Մարդկանց ուզում ես օգտակար լինել, բայց նրանով իսկ, որ կալվածք ես առնում, սկզբից ևեթ կանխում ես նրանց համար օգտակար որևէ բան անելու քո բոլոր հնարավորությունները։ Այնուհետև, եթե աշխատում ես, հագնվում և ուտում մուժիկի պես, ապա քո հեղինակությամբ դու մի տեսակ

օրինական ես դարձնում նրանց այդ ծանրաբեռ, անհարմար հագուստն ու ահավոր խրճիթները, նրանց այդ հիմար մորուքները... Մյուս կողմից, ենթադրենք, թե դու աշխատում ես երկար, շա՜տ երկար, ամբողջ կյանքումդ, որից վերջիվերջո ինչ-որ գործնական արդյունքներ են ստացվում, բայց ի՞նչ են դրանք՝ ըստ այդ արդյունքները, դրանք ի՞նչ կարող են անել այնպիսի տարերային ուժերի դեմ, ինչպիսիք են համատարած տգիտությունը, սովը, ցուրտը, այլասերումը։ Ծովի մեջ՝ մի կաթիլ։ Այստեղ հարկավոր են պայքարի ուրի՜շ միջոցներ, որ լինեն ուժեղ, համարձակ, արագորեն ազդո՜ղ։ Եթե իրոք ուզում ես օգտակար լինել, ապա սովորական գործունեության նեղ շրջանակներից դուրս արի և ձգտիր ներգործել անմիջապես մասսայի վրա։ Ամենից առաջ բարձրաձայն, եռանդուն քարոզ է պետք։ Ինչո՞ւ արվեստը, օրինակ, երաժշտությունը, իրոք այդքան կենսունակ է, տարածված ու այդքան հզոր։ Որովհետև երաժիշտն ու երգիչը միանգամից ներգործում են հազարների վրա։ Սիրելի, սիրելի՜ արվեստ,— երազկոտ դեպի երկինք նայելով, շարունակեց նա։— Արվեստը թևեր է տալիս և տանում հեռո՜ւ-հեռու։ Ում ձանձրացրել են կեղտը, կոպեկանոց մանր-մունր շահերը, ով վրդովված է, անարգված, ու զայրացած, նա կարող է հանգիստ ու բավարարություն գտնել գեղեցիկի մեջ։

Երբ մենք մոտենում էինք Կուրիլովկային, եղանակը պարզ էր, դուրեկան։ Տեղ-տեղ բակերում կալ էին անում, հաճարի ծղոտի հոտ էր գալիս։ Ցանկապատերի հետևում վառ կարմրին էր տալիս արոսենին, շորս կողմը, ուր էլ նայեիր, ծառեր էին՝ բոլորը ոսկեվորված կամ կարմիր։ Ջարկում էին եկեղեցու զանգերը, դեպի դպրոց սրբապատկերներ էին տանում, լսվում էր, թե ինչպես են «Ջերմեռանդ հովանավորուհի» երգում։ Իսկ ի՜նչ թափանցիկ օդ էր, որքա՜ն բարձր էին թռչում աղավնիները...

Դասարանում աղոթում էին։ Հետո Կուրիլովկայի գյուղացիները Մաշային սրբապատկեր նվիրեցին, իսկ Դուբեչնյայի մագիկ՝ մի մեծ քաղցրահաց և ոսկեզօծ մի աղաման։ Մաշան արտասվեց։

— Թե ավել-պակաս բան է ասվել կամ թե դժգոհություն եղել, այդ էլ ներեք,— ասաց մի ծերունի և խոնարհվեց ինձ ու Մաշային։

Երբ տուն էինք վերադառնում, Մաշան շրջվեց ու նայեց դպրոցին։ Իմ ներկած կանաչ տանիքը, որն արևի տակ հիմա

փայլփլում էր, երկար ժամանակ երևում էր։ Եվ ես զգացի, որ Մաշան իր հայացքով հիմա հրաժեշտ էր տալիս։

XVI

Երեկոյան նա պատրաստվեց քաղաք գնալ։

Վերջերս նա հաճախ էր գնում քաղաք և այնտեղ էլ գիշերում էր։ Նրա բացակայությամբ չէի կարողանում աշխատել, ձեռքերս թուլանում էին։ Մեր մեծ բակը թվում էր ձանձրալի, անտանելի դատարկ ու ամայի, այգին էլ աղմկում էր զայրացած, և նրա բացակայությամբ տունը, ծառերը, ձիերը ինձ համար արդեն «մերը» չէին։

Ես տնից դուրս չէի գալիս, այլ միշտ նստում էի նրա սեղանի մոտ, նրա նախկին սիրելիների՝ գյուղատնտեսական գրքերի պահարանի կողքին, որոնք հիմա արդեն անպետք էին և նայում էին ինձ այդպես շվարած։ Ժամեր շարունակ, մինչև զարկում էր յոթը, ութը, ինը, մինչև դրսում թանձրանում էր սև մրի նման աշնանային գիշերը, ձեռքիս բռնած պահում էի նրա հին ձեռնոցը կամ գրիչը, որով միշտ գրում էր, կամ նրա փոքրիկ մրկրատը։ Ես ոչինչ չէի անում ու շատ պարզ հասկանում էի, որ եթե առաջ ինչ-որ բանով զբաղվում էի՝ վարում, հնձում, փայտ կոտրում, ապա միայն նրա համար, որ դա ցանկանում էր Մաշան։ Ու եթե նա ինձ ուղարկեր խորունկ ջրհորը մաքրելու, որտեղ մինչև գոտկատեղս պիտի կանգնեի ջրի մեջ, ապա կմտնեի այդտեղ առանց մտածելու՝ հարկավո՞ր է արդյոք դա, թե՞ ոչ։ Իսկ հիմա, երբ նա կողքիս չէր, Դուբեչնյան իր ավերակներով, թափթփվածությամբ, պատուհանների ճռռացող փեղկերով, գիշերային ու ցերեկային իր զողերով ինձ համար արդեն մի քաոս էր, ուր ամեն մի աշխատանք անօգուտ կլիներ։ Սակայն հանուն ինչի՞ ես պետք է այդտեղ աշխատեի, ինչի՞ համար էին ապագայի մասին հոգսերն ու մտքերը, երբ զգում էի, որ ոտքերիս տակի հողը գնում է, որ այստեղ՝ Դուբեչնյայում, իմ դերն արդեն ավարտվել է, որ ինձ էլ, մի խոսքով, նույն ճակատագիրն է սպասում, ինչ բաժին ընկավ գյուղատնտեսական գրքերին։ Օ՜, որքա՜ն էի տխրում գիշերները մենակ, երբ ամեն րոպե տագնապով ականջ էի դնում, ասես սպասում էի, թե ուր որ է ահա մեկը կբղավի, որ իմ հեռանալու ժամանակն է։ Դուբեչնյան չէի ափսոսում, այլ ափսոսում էի ես իմ սերը, որի համար էլ, երևի,

նույնպես արդեն աշուն էր եկել։ Ինչպիսի՜ մեծ երջանկություն է սիրելն ու սիրված լինելը, և որքա՜ն սարսափելի է զգալ, որ սկսում ես գահավիժել այդ բարձր աշտարակից։

Մաշան քաղաքից վերադարձավ մյուս օրը երեկոյան։ Ինչ-որ բանից դժգոհ էր, սակայն թաքցնում էր ու միայն ասաց, թե այդ ինչո՞ւ են պատուհանների ձմեռային բոլոր շրջանակները դրված, այդպես խեղդվել կարելի է։ Շրջանակներից երկուսը ես հանեցի։ Ուտել չէինք ուզում, բայց սեղան նստեցինք և ընթրեցինք։

— Գնա ձեռքերդ լվա,— ասաց կինս։— Քեզնից մածկանի հոտ է գալիս։

Նա քաղաքից պատկերազարդ նոր հանդեսներ էր բերել, և մենք ընթրիքից հետո միասին դրանք նայեցինք։ Պատահում էին նորաձև տարազների ու դրանց գծագրերի ներդիրներ։ Մաշան դրանք թեթևակի աչքի էր անցկացնում ու մի կողմ դնում, որպեսզի հետո ինչպես հարկն է ուշադիր նայի։ Սակայն զանգի նման լայն ու հարթ փեշերով և երկար թևքերով մի զգեստ գրավեց նրա ուշադրությունը, և Մաշան մի բոպեի չափ լուրջ ու կենտրոնացած նայեց այդ նկարին։

— Սա վատը չէ,— ասաց նա։

— Այո, այդ զգեստը քեզ անչափ կսազի,— ասացի ես,— անչա՜փ։

Մի սրտաշարժ հայացք նետելով նկարին ու հիանալով այդ գորշությամբ միայն այն բանի համար, որ դա դուր էր եկել կնոջս, ես քնքշորեն շարունակեցի.

— Հրաշալի, սքանչելի՜ զգեստ է։ Իմ գեղեցիկ, հիանալի Մաշա, սիրելի՜ Մաշա։

Եվ արցունքներս ընկան նկարին։

— Իմ հիանալի Մաշա...— ցածրաձայն ասացի ես,— իմ սիրելի՜, թանկագի՜ն Մաշա...

Նա դնաց պառկեց, իսկ ես դեռ մի ժամի չափ նստել ու նայում էի նկարները։

— Շրջանակները իզուր հանեցիր,— ասաց նա ննջարանից։— Վախենում եմ հանկարծ ցուրտ լինի։ Տեսնում ես, չէ՞, ինչ քամի է։

«Խաղը լուրեր»-ից ես մի քանի-բան կարդացի՝ էժանագին թանաքների պատրաստման և աշխարհի ամենամեծ ադամանդի մասին։ Կրկին աչքիս ընկավ Մաշայի հավանած նորաձև զգեստի նկարը, ու ես պատկերացրի նրան պարահանդեսում՝ հովհարը ձեռքին, մերկ ուսերով, շողշողուն ու չքեղ, որ գիտե երաժշտության, գեղանկարչության և դրականության արժեքը, և ինձ այնքա՜ն ինչին ու կարճ թվաց իմ դերը...

Մեր հանդիպումը, մեր այս ամուսնությունը մի միջադեպ էր միայն, որի նմանները դեռ շատ կլինեն կենսասեր, անչափ շնորհալի այդ կնոջ կյանքում։ Աշխարհում եղած ամենալավ բաները, ինչպես արդեն ասել եմ, Մաշայի համար էին ստեղծված և ձեռք էին բերվում բոլորովին ձրի, նույնիսկ գաղափարներն ու մտավոր նորաձև շարժումը ծառայում էին նրա հաճույքներին, բազմազան դարձնելով կյանքը, իսկ ես միայն կառապան էի, որ նրան մի հրապույրից մյուսն էի տանում։ Հիմա ես այլևս պետք չեմ իրեն, նա վանդակից դուրս կթռչի, իսկ ես կմնամ մենակ։

Եվ որպես իմ մտքերի պատասխան բակում լսվեց հուսահատ մի ճիչ.

— Օգնեցե՛ք... Կա-րա-ո՜ւ։

Դա կանացի բարակ ձայն էր, և ասես ծաղրելով դրան, ծլխնելուզի մեջ էլ քամին նույնպիսի բարակ ձայնով աղմկեց։ Մի կես բոպե հետո, բայց արդեն կարծես բակի մյուս ծայրից, քամու աղմուկի մեջ կրկին լսվեց.

— Կա-րա-ո՜ւ։

— Միսայի՛լ, լսո՞ւմ ես,— կամացուկ հարցրեց կինս,— լսո՞ւմ ես։

Ննջարանից նա հենց գիշերանոցով էլ դուրս եկավ ինձ մոտ՝ մազերը քանդված, ու ականջ դրեց, խավար պատուհանից դուրս նայելով։

— Ինչ-որ մեկին խեղդում են,— ասաց նա։— Սա՛ էր պակաս։

Վերցրի հրացանս և դուրս եկա։ Բակում շատ մութ էր, ուժեղ քամի էր փչում, այնպես որ դժվար էր ոտքի վրա մնալ։ Գնացի դեպի դարպասը, ականջ դրի. ծառերը խշշում էին, սուլում էր քամին, և այգում, երևի խենթ մուժիկի տնակի մոտ, ծույլ-ծույլ կլանչում էր շունը։ Դարպասից այն կողմ զարհուրելի խավար էր, երկաթգծի վրա լույս չէր երևում։ Եվ այն կողաշենքի մոտից, որտեղ անցյալ տարի գրասենյակն էր, հանկարծ լսվեց նույն խեղդվող ճիչը.

— Կա-րա-ո՜ւ։

— Ո՞վ է,— ձայն տվի ես։

Երկու հոգի կռվում էին։ Մեկը հրում էր, մյուսը՝ դիմադրում, և երկուսն էլ ծանր հևում էին։

— Բա՛ց թող,— ասաց մեկը, և ես ճանաչեցի Իվան Չեպրակովին՝ հենց նա էլ բղավել էր կանացի բարակ ձայնով։— Բա՛ց թող, անիծված, թե չէ ձեռքդ կկծոտեմ։

Մյուսը Մոիսեյն էր։ Բաժանեցի նրանց և չդիմացա ու Մոիսեյին երկու անգամ ապտակեցի։ Նա ընկավ, հետո վեր կացավ, ու ես նորից մի անգամ էլ հասցրի։

— Սա ուզում էր ինձ սպանել,— մոթմոթաց Մոիսեյը։— Մոր պահարանին էր աչք դրել... Ապահովության համար սրան ուզում եմ փակել կողաշենքում։

Իսկ Չեպրակովը հարբած էր, ինձ չճանաչեց ու անվերջ խոր շունչ էր քաշում, կարծես օդ էր հավաքում նորից «կարաուլ» բղավելու համար։

Թողեցի նրանց և տուն վերադարձա։ Կինս անկողին էր մտել արդեն հագնված։ Ես պատմեցի նրան այն ամենը, ինչ կատարվում էր բակում, ու չթաքցրի նույնիսկ, որ Մոիսեյին ծեծել եմ։

— Սարսափելի է գյուղում ապրել,— ասաց նա։— Եվ գիշերն էլ ինչ երկար է, գրո՛ղը տանի։

— Կա-րա-ո՛ւլ,— մի փոքր հետո նորից լսվեց։

— Գնամ խելքի բերեմ դրանց,— ասացի ես։

— Ո՛չ, թող իրար կոկորդ կրծեն,— զզվանքով ասաց Մաշան։

Նա նայում էր առաստաղին և ականջ դնում, իսկ ես չհամարձակվելով նրա հետ խոսել, նստել էի կողքը այնպիսի մի զգացումով, ասես ես էի մեղավոր, որ բակում «կարաուլ» էին բղավում, և գիշերն էլ այդքան երկար էր։

Մենք լուռ էինք, ու անհամբերությամբ ես սպասում էի, թե երբ պատուհաններում լույս կխաղա։ Իսկ Մաշան անընդհատ այնպես էր նայում, որ ասես սթափվել էր թմրությունից և հիմա էլ զարմանում էր, թե այդ ինչպես ինքը, լինելով այդքան խելացի, կրթված, այդքան մաքրասեր, կարող էր ընկնել գավառական այդ խուլ անկյունը, մանր ու չնչին մարդկանց շրջապատի մեջ, և այդ ինչպես ինքն իրեն այնքան կորցրեց, որ նույնիսկ հրապուրվեց այդ մարդկանցից մեկով ու կես տարուց ավելի եղավ նրա կինը։ Ինձ թվում էր, թե կնոջս համար արդեն միևնույն էինք և՛ս էլ, Մոիսե՛յն էլ, Չեպրակո՛վն էլ. նրա համար ամեն ինչ խառնվել-շաղախվել էր այդ հարբած, վայրենի «կարաուլ»-ում՝ և՛ ես, և՛ մեր ամուսնությունը, և՛ մեր տնտեսությունը, և՛ աշնանային ցեխը։ Ու երբ հոգոց էր հանում կամ տեղում շրջվում ավելի հարմար պառկելու համար, նրա դեմքին ես կարդում էի՝ «Օ՜հ, երբ պիտի լույսը բացվի»։

Առավոտյան նա մեկնեց։

Սպասելով նրան, Դուբեչնյայում ես մնացի էլի մի երեք օր, հետո մեր բոլոր իրերը տեղավորեցի սենյակներից մեկում, դիմոը կողպեցի և գնացի քաղաք։ Երբ ինժեների դռան զանգը քաշեցի, արդեն երեկո էր, ու մեր Բոլշայա Դվորյանսկայա փողոցում վառվում էին լապտերները։ Պավելն ինձ ասաց, որ տանը ոչ ոք չկա. Վիկտոր Իվանիչը գնացել է Պետերբուրգ, իսկ Մարիա Վիկտորովնան երևի Աժոգինների տանը փորձի է։ Հիշում եմ, թե հետո ինչպիսի՜ հուզմունքով ես գնացի Աժոգինների մոտ, ինչպես էր բաբախում ու մերթ էլ նվաղում սիրտս, երբ բարձրանում էի աստիճաններով և երկար կանգնեցի վերևի հարթակում, չհամարձակվելով մտնել մուսաների այդ տաճարը։ Դահլիճի փոքրիկ սեղանի և դաշնամուրի վրա ու բեմում մոմեր էին վառվում, ամեն տեղ երեք հատ, և առաջին ներկայացումը նշանակված էր ամսի տասներեքին, ու հիմա էլ առաջին փորձն անում էին երկուշաբթի՝ այդ ձախորդ օրը։ Պայքա՛ր նախապաշարմունքների դեմ։ Բեմարվեստի բոլոր սիրահարներն արդեն հավաքվել էին։ Մեծը, միջնեկն ու փոքրը քայլում էին բեմում և տետրակներին նայելով՝ արտասանում իրենց դերերը։ Բոլորից մի կողմ քաշված անշարժ կանգնել էր Ռեդկան, քունքը դեմ արել պատին և հիացմունքով նայում էր բեմին, սպասելով փորձի սկսվելուն։ Ամե՛ն ինչ էլի առաջվանն էր։

Ես ուղղվեցի տանտիրուհու կողմը. հարկավոր էր ողջունել, բայց հանկարծ բոլորը սը՜ս արին, ձեռքով նշան անելով, որ աղմուկով չքայլեմ։ Լռություն տիրեց։ Բարձրացրին դաշնամուրի կափարիչը, մոտ եկավ նստեց ինչ-որ օրիորդ, կարճատես աչքերը կկոցելով նա նայեց նոտաներին, և դաշնամուրին մոտեցավ իմ Մաշան՝ զուգված-զարդարված, գեղեցկացած, բայց ինչ-որ մի ուրիշ տեսակ, նոր ձևով գեղեցիկ, բոլորովին տարբեր այն Մաշայից, որը գարնանը գալիս էր ինձ մոտ ջրաղաց։ Նա երգեց.

Ինչո՞ւ եմ սիրում քեզ, պայծառ դու գիշեր...

Մեր ծանոթության ամբողջ ընթացքում առաջին անգամ էի լսում, թե նա ինչպես էր երգում։ Նա լավ, հյութեղ ու հնչեղ

ձայն ուներ, և քանի դեռ երգում էր, ինձ թվում էր, թե հասած, քաղցր ու բուրավետ սեխ եմ ուտում։ Մաշան ավարտեց երգը, ծափահարեցին, և աչքերը խաղացնելով նա շատ գոհունակ ժպտաց, թերթելով նոտաներն ու ուղղելով զգեստը, ասես մի թռչնակ լիներ, որ վերջապես դուրս էր պրծել վանդակից և ազատության մեջ թևերն էր կարգի բերում։ Մազերը սանրված էին ականջների վրա, և դեմքին էլ անբարեհամբույր, հանդուգն արտահայտություն կար, կարծես ուզում էր բոլորիս ձեռքից նետել կամ բղավել մեզ վրա, ինչպես կբղավեր իր ձիերի վրա. «Հե՜յ, դուք, սիրելինե՜ր»։

Այդ ժամանակ երևի նա շատ էր նման իր կառապան պապին։

— Դու է՞լ ես այստեղ,— հարցրեց նա, ձեռքը մեկնելով ինձ։— Լսեցի՞ր ինչպես երգեցի։ Դե՞, հավանո՞ւմ ես,— և պատասխանիս չսպասելով, շարունակեց։— Ի դեպ, շատ լավ է, որ եկար։ Այսօր գիշեր մի քանի օրով մեկնում եմ Պետերբուրգ։ Կթողնե՞ս։

Կեսգիշերին ես նրան ուղեկցեցի կայարան։ Մաշան ինձ քնքշորեն գրկեց, հավանաբար, ի երախտագիտություն այն բանի, որ ավելորդ հարցեր չտվի, և խոստացավ գրել, իսկ ես, հազիվ զսպելով արցունքներս, երկար սեղմում էի նրա ձեռքերն ու համբուրում դրանք, ոչ մի բառ չասելով։

Իսկ երբ նա գնաց, ես կանգնել նայում էի հեռացող կրակներին, գուրգուրում Մաշային իմ երևակայության մեջ և կամացուկ ասում.

— Իմ սիրելի Մաշա, հիանալի՜ Մաշա...

Գիշերեցի Մակարիխայում, Կարպովնայի մոտ, իսկ առավոտյան արդեն ես ու Ռեդկան երեսապատում էինք մի հարուստ վաճառականի կահույքը, որն իր աղջկան ամուսնացրել էր մի բժշկի հետ։

XVII

Կիրակի օրը ճաշից հետո ինձ մոտ եկավ քույրս և հետս թեյ խմեց։

— Հիմա ես շատ եմ կարդում,— ասաց նա, ցույց տալով գրքերը, որ ինձ մոտ գալիս վերցրել էր քաղաքային գրադարանից։— Շնորհակալ եմ կնոջիցդ և Վլադիմիրից, նրանք իմ մեջ արթնացրին ինքնագիտակցություն։ Նրանք փրկեցին ինձ, կատարեցին այն, որ այժմ ես ինձ մարդ եմ զգում։ Առաջ, պատահում էր, որ գիշերները չէի քնում զանազան հոգսերից՝ «Ա՜խ, շաբաթվա մեջ շաքար շատ գործածվեց... վա՜յ, հանկարծ վարունգի աղը շատ չլինի»։ Հիմա էլ չեմ քնում, սակայն մտքերս արդեն ուրիշ են։ Տանջվում եմ, որ այդքան հիմար ու անիմաստ անցավ կյանքիս կեսը։ Անցյալս արհամարհում եմ, դրանից ամաչում, իսկ հորս հիմա նայում եմ որպես իմ թշնամուն։ Օ՜, որքան երախտապարտ եմ քո կնոջը։ Հապա Վլադիմի՜րը. հրաշալի՜ մարդ է։ Նրանք բաց արին իմ աչքերը։

— Դա վատ է, որ գիշերները չես քնում,— ասացի ես։

— Կարծում ես, հիվա՞նդ եմ. բոլորովի՜ն։ Վլադիմիրը քընեց ինձ ու ասաց, որ ես կատարելապես առողջ եմ։ Սակայն բանն առողջությունը չէ, դա այնքան էլ կարևոր չէ... Դու պսա ինձ՝ ես իրավացի՞ եմ։

Նա բարոյական աջակցության կարիք ուներ. դա հաստատ էր։ Մաշան գնացել էր, բժիշկ Բլագովոն Պետերբուրգում էր, իսկ քաղաքում ինձնից բացի, ոչ ոք չէր մնացել, որ կարողանար ասել նրան, թե ինքն իրավացի է։ Նա սևեռուն նայում էր դեմքիս, ձգտելով կարդալ իմ գաղտնի մտքերը, և եթե նրա ներկայությամբ ես այդ մտքերով տարվեի ու լռեի, ապա դա քույրս իրեն կվերագրեր և կվշտանար։ Ամբողջ ժամանակ ստիպված էի զգույշ լինել, ու երբ նա հարցրեց ինձ, թե ինքն իրավացի՞ է արդյոք, շտապեցի պատասխանել, որ իրավացի է և որ խորապես հարգում եմ իրեն։

— Գիտե՞ս, Աժոգիններին մոտ ինձ մի դեր են տվել,— շարունակեց նա։— Ուզում եմ բեմում խաղալ։ Ուզում եմ ապրել, մի խոսքով, ուզում եմ խմել կյանքի լիքը բաժակից։ Ես ոչ մի տաղանդ էլ չունեմ, իսկ դերն ընդամենը տասը տող է, բայց ինչ էլ որ լինի, դա անհամեմատ բարձր ու ազնիվ է, քան օրական հինգ անգամ թեյ լցնելը և ժամանակ առ ժամանակ ստուգելը, թե հանկարծ չլինի՞ աղախինը մի պատառ ավել ուտի։ Սակայն ամենից գլխավորն այն է, որ հայրիկը տեսնի, թե ես էլ բողոքելու ընդունակ եմ։

Թեյից հետո նա պառկեց իմ անկողնուն և որոշ ժամանակ մնաց աչքերը փակ. չափազանց գունատված էր։

— Որքա՜ն թույլ եմ,— վեր կենալով արտասանեց նա։— Վլադիմիրն ասում է, որ անգործությունից քաղաքի բոլոր աղջիկներն ու կանայք սակավարյուն են դառնում։ Ի՜նչ խելոք

մարդ է Վլադիմիրը։ Նա ճիշտ է ասում, անչափ ճիշտ։ Հարկավոր է աշխատել։

Երկու օր հետո, տետրակը ձեռքին, քույրս եկավ Աժոգինների մոտ փորձի։ Սև զգեստով էր, մարջանե ուլունքները վզին, կրծքազարդով, որը հեռվից նման էր շերտավոր կարկանդակի, իսկ ականջներին մեծ օղեր էին, որոնց վրա փայլփլում էին մեկական ադամանդ։ Երբ նայեցի նրան, անհարմար զգացի. ինձ ապշեցրեց անճաշակությունը։ Որ նա անտեղի էր կախել օղերն ու ադամանդները և հագնված էր տարօրինակ ձևով. նկատեցին նաև ուրիշները։ Մարդկանց դեմքին ես ժպիտ տեսա և լսեցի, թե ինչպես մեկը ծիծաղելով ասաց.

— Կլեոպա՛տրա Եգիպտացի։

Նա ձգտում էր նրբակիրթ երևալ, անկաշկանդ, հանգիստ, և դրանից դարձել էր ավելի սեթևեթ ու տարօրինակ։ Պարզությունն ու արտաքին բարեհեսությունը լքել էին նրան։

— Հենց հիմա ես հայրիկին վճռականորեն ասացի, որ գնում եմ փորձի,— մոտենալով ինձ, ասաց քույրս,— և նա բղավեց, որ ինձ զրկում է օրհնությունից, և նույնիսկ քիչ մնաց ապտակեր։ Պատկերացնում ես, դերս չգիտեմ,— ասաց նա տետրակին նայելով։— Ես անպայման կտապալվեմ։ Եվ այսպես, վիճակը նետված է,— շարունակեց նա սաստիկ հուզված։— Վիճակը նետվա՛ծ է...

Նրան թվում էր, թե բոլորն իրեն են նայում և հիացած են այն վճռական քայլով, որ համարձակվել էր անել ինքը, որ բոլորն իրենց ինչ-որ արտակարգ մի բան են սպասում, և անհնար էր նրան համոզել, որ ինձ ու իր նման մանր և անհետաքրքիր մարդկանց վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնում։

Մինչև երրորդ արարը քույրս անելիք չուներ, և հյուրի նրա դերը՝ զավառացի քավորկնոջ, այն էր միայն, որ պետք է կանգներ դռան մոտ, իբր թե ականջ է դնում, ու հետո արտասաներ կարճ մի մենախոսություն։ Մինչև իր մուտքը, ամենաքիչը մոտ մեկուկես ժամ, քանի դեռ բեմում ման էին գալիս, արտասանում, թեյ խմում, վիճաբանում, նա կողքիցս չհեռացավ և ամբողջ ժամանակ մռմռում էր դերն ու նյարդայնացած ճմռթում տետրակը։ Եվ երևակայելով, որ բոլորն իրեն են նայում ու սպասում իր մուտքին, նա դողդողացող ձեռքով ուղղեց մազերը և ասաց ինձ.

— Ես անպայման կտապալվեմ... Եթե միայն իմանայիր, թե հոգիս ինչքա՜ն անհանգիստ է։ Ես այնպես եմ վախենում, կարծես հիմա ինձ տանելու են մահապատժի։

Վերջապես հասավ նրա հերթը։

— Կլեոպատրա Ալեքսեևնա, հիմա դուք եք,— ասաց ռեժիսորը։

Նա դուրս եկավ բեմի կենտրոն սարսափի արտահայտությունը դեմքին, տգեղացած, անդուրեկան և փայտացածի նման մոտ կես րոպե կանգնեց բոլորովին անշարժ. միայն մեծ օղերն էին ճոճվում ականջներից կախ։

— Առաջին անգամ կարելի է տետրակով,— ասաց ինչ-որ մեկը։

Ինձ համար պարզ էր, որ քույրս դողում էր և դողալուց չէր կարողանում բաց անել տետրակն ու խոսել, որ նա այլևս չի կարող խաղալ, և հենց այն է ուզում էի գնալ մոտն ու որևէ բան ասել, երբ հանկարծ նա չոքեց բեմի մեջտեղում և բարձր սկսեց հեկեկալ։

Ամեն ինչ խառնվեց, չորս կողմն աղմկեցին, միայն ես էի կանգնել կուլիսների պատին հենված, շշմել էի կատարվածով, չհասկանալով ու չիմանալով, թե ինչ անեմ։ Ես տեսա, թե ինչպես բարձրացրին քրոջս ու տարան։ Տեսա, թե ինչպես մոտեցավ ինձ Անյուտա Բլագովոն. դահլիճում դրանից առաջ նրան չէի նկատել, իսկ հիմա ասես գետնի տակից բուսնեց։ Նա փոքրիկ քողացանցավոր գլխարկով էր և, ինչպես միշտ, այնպիսի տեսք ուներ, կարծես եկել էր միայն մի րոպեով։

— Ես նրան ասում էի, որ չխաղա,— գրգռված ասաց նա, ելկտուր արտասանելով յուրաքանչյուր բառն ու կարմրելով։— Դա անմտությո՛ւն էր։ Դուք նրան պետք է հե՛տ պահեիք։

Անմիջապես մոտեցավ նիհար ու սմքած մայր Աժոգինան՝ կարճաթև բաճկոնակը հագին, կրծքի վրա էլ քթախոտի փոշի։

— Բարեկամս, դա սարսափելի է,— խոսեց նա մատները կոտրատելով և, ըստ սովորության, ուշադիր նայեց դեմքիս։— Դա սարսափելի՛ է։ Ձեր քույրը հղի է... հղի՛ է։ Խնդրում եմ, տարե՛ք նրան...

Հուզմունքից նա ծանր էր շնչում։ Իսկ մի կողմ քաշված կանգնել էին նրա երեք աղջիկները՝ իրենց մոր նման նիհար ու սմքած, և վախեցած սեղմվել էին իրար։ Նրանք անհանգստացած էին, շփոթված, ասես հենց նոր իրենց տանը մի տժժանակիր աքսորական էին բռնել։ Ինչպիսի՜ խայտառակություն։ Ի՜նչ

սոսկալի բան։ Բայց ախր պատվավոր այդ ընտանիքն իր ողջ կյանքում պայքարել էր նախապաշարմունքների դեմ։ Հավանաբար նա ենթադրել էր, որ մարդկության բոլոր նախապաշարմունքներն ու մոլորությունները միայն երեք մոմերի, տասներեք թվի և անհաջողակ երկուշաբթի օրվա մեջ են։

— Խնդրում եմ... խնդրում եմ ձեզ...— կրկնում էր տիկին Աժոդինան, «բում» վանկի վրա շրթունքները սրտաձև կլորացնելով և արտասանելով «բյում»։— Խնդրյում եմ, տարեք նրան տուն։

XVIII

Քիչ հետո ես ու քույրս իջնում էինք աստիճաններով։ Վերարկուիս փեշով ծածկել էի նրան։ Մենք շտապում էինք, գնում այն նրբանցքներով, որտեղ լապտերներ չկային, թաքնվում անցորդներից, և դա նման էր փախուստի։ Քույրս արդեն լաց չէր լինում, այլ նայում էր ինձ ցամաքած աչքերով։ Մինչև Մակարիխա, ուր տանում էի նրան, ոտքով ընդամենը քսան բոպեի ճանապարհ էր, և տարօրինակն այն էր, որ այդ կարճ ժամանակում մենք հասցրինք վերհիշել մեր ամբողջ կյանքը, խոսեցինք ամեն ինչի մասին, գնահատեցինք մեր վիճակը, շատ բան հասկացանք...

Որոշեցինք, որ այդ քաղաքում այլևս չենք կարող մնալ, ու երբ ես մի քիչ փող վաստակեմ, կփոխադրվենք որևէ այլ տեղ։ Մի քանի տներում արդեն քնել էին, մյուսներում թուղթ էին խաղում։ Մենք ատում էինք այդ տները, դրանցից վախենում և խոսում պատվավոր այն ընտանիքների, թատերական արվեստի այդ սիրահարների մոլեռանդության, քարսրտության ու ոչնչության մասին, որոնց մենք այդպես վախեցրինք, և ես ինքս ինձ հարցնում էի, թե ախր ինչով են լավ այդ հիմար, դաժան, անբան ու անազնիվ մարդիկ Կուրիլովկայի հարբեցող ու սնահավատ մուժիկներից կամ էլ ինչով են նրանք տարբերվում անասուններից, որոնք նույնպես կորցնում են իրենց, երբ պատահական որևէ բան խանգարում է բնազդներով սահմանափակված անասնական կյանքի միապաղաղությունը։ Ի՞նչ կպատահեր շրջոս, եթե նա շարունակեր տանն ապրել։ Բարոյական ինչպիսի՞ տանջանքներ կունենար հորս հետ խոսելիս, ամեն օր ծանոթների հանդիպելիս։ Ես պատկերացրի դա, և անմիջապես

հիշողությանս մեջ հայտնվեցին մարդիկ՝ իմ բոլոր ծանոթները, որոնց հետքը աշխարհից դանդաղորեն ջնջել էին իրենց մոտիկներն ու հարազատները, հիշեցի խելագարվող, տանջամահ եղած շներին, կենդանի ճնճղուկներին, որոնց փետրահան էին անում երեխաները և ջուրը շպրտում. հիշեցի և խուլ ու սովորական դարձած տառապանքների երկար, անվերջանալի շարքը, որոնք այդ քաղաքում անընդհատ տեսել էի հենց մանկությունից։ Եվ ես չէի հասկանում, թե ինչով են ապրում այդ քաղաքի վաթսուն հազար բնակիչները, ինչու են ավետարան կարդում, ինչու են աղոթում, գրքեր ու հանդեսներ կարդում։ Նրանց ի՞նչ օգուտ է տվել այն ամենը, որ մինչև հիմա ասվել ու գրվել է, եթե նրանց հոգում էլի նույն խավարն է և ազատության նկատմամբ նույն զզվանքը, ի՛նչ որ կար սրանից և՛ հարյուր, և՛ երեք հարյուր տարի առաջ։ Ատաղձագործ կապալառուն ամբողջ կյանքում այդ քաղաքում տներ է կառուցել, սակայն մինչև իր մահը «գալերեա»-ի տեղակ «գալդարեա» է ասում, այդպես էլ վաթսուն հազար բնակիչները սերնդե սերունդ կարդում են ու լսում ճշմարտության, գթասրտության և ազատության մասին, բայց և այնպես մինչև կյանքի վերջը առավոտից իրիկուն կեղծում են, տանջում են իրար, իսկ ազատությունից վախենում են և ատում, ինչպես իրենց թշնամուն։

— Եվ այսպես, իմ ճակատագիրը որոշված է,— ասաց քույրը, երբ տուն հասանք։— Կատարվածից հետո ես արդեն չեմ կարող վերադառնալ այնտեղ։ Աստվա՛ծ իմ, ի՛նչ լավ է հոգիս թեթևացավ։

Նա անմիջապես անկողին մտավ։ Թարթիչների վրա արցունքի կաթիլներ էին փայլփլում, սակայն արտահայտությունը երջանիկ էր. նա քնեց քաղցր ու խոր, և երևում էր, որ հոգին իրոք թեթև էր ու հանգստանում էր։ Վաղուց, շա՜տ վաղուց նա այդպես չէր քնել։

Եվ ահա մենք սկսեցինք միասին ապրել։ Քույրս շարունակ երգում էր ու ասում, որ ինքը շատ լավ է զգում իրեն, և գրագարանից մեր վերցրած գրքերը ես հետ էի տանում առանց կարդալու, որովհետև այլևս չէր կարողանում կարդալ։ Նա ուզում էր միայն երազել ու խոսել ապագայի մասին։ Իմ սպիտակեղենը կարկատելիս կամ վառարանի մոտ Կարպովնային օգնելիս, նա մեկ երգում էր, մեկ խոսում էր Վլադիմիրի մասին, նրա խելքի, գեղեցիկ շարժուձևի, բարության, նրա արտակարգ գիտունության

մասին, ու ես համաձայնում էի հետը, թեև նրա բժշկին արդեն չէի սիրում։ Ուզում էր աշխատել, ապրել ինքնուրույն՝ իր հաշվին, և ասում էր՝ հենց որ առողջությունս ների, ուսուցչուհի կդառնամ կամ բուժակ, հատակն էլ ինքս կլվանամ, լվացք կանեմ։ Քույրս արդեն կրքոտ սիրում էր իր պստիկին. սա դեռ լույս աշխարհ չէր եկել, բայց ինքը գիտեր, թե նա ինչպիսի աչքեր կունենա, ինչպիսի թաթիկներ և ինչպես կծիծաղի։ Սիրում էր խոսել դաստիարակությունից, և քանի որ աշխարհում ամենալավ մարդը Վլադիմիրն էր, ապա այդ մասին նրա բոլոր դատողությունները հանգում էին միայն այն բանին, որպեսզի տղան էլ իր հոր նման սքանչելի լինի։ Նրա զրույցներին վերջ չկար, և այն ամենը, ինչ ասում էր, իրեն զվարթ մի բերկրանք էր պատճառում։ Երբեմն ուրախանում էի նաև ես, ինքս էլ մտածելով թե ինչու։

Իր երազկոտությամբ քույրս երևի ինձ էլ էր վարակել։ Ես նույնպես ոչինչ չէի կարդում և միայն երազում էի։ Երեկոները, թեև հոգնած էի լինում, բայց ձեռքերս գրպաններս դրած ու խոսելով Մաշայի մասին, քայլում էի սենյակի մի անկյունից մյուսը։

— Ինչ ես կարծում,— հարցրեցի քրոջս,— նա ե՞րբ կվերադառնա։ Ինձ թվում է, թե կգա ծննդյան տոներին, ոչ շուտ։ Ի՞նչ գործ ունի անելու։

— Եթե նա քեզ նամակ չի գրում, հավանաբար շուտ կվերադառնա։

— Ճիշտ է,— համաձայնում էի ես, թեև շատ լավ գիտեի, որ Մաշան այլևս կարիք չուներ մեր քաղաքը վերադառնալու։

Սաստիկ կարոտել էի նրան և արդեն չէի կարող ինքս ինձ չխաբել ու աշխատում էի, որպեսզի ուրիշներն էլ ինձ խաբեն։ Քույրս իր բժշկին էր սպասում, իսկ ես՝ Մաշային, երկուսս էլ անվերջ խոսում էինք, ծիծաղում և չէինք նկատում, որ խանգարում էինք Կարպովնային քնել, որը պառկում էր վառարանին ու շարունակ փնթփնթում.

— Ախր ինքնաեռը թշշաց առավոտ կանուխ, թը՛շ-թը՛շաց։ Օհ, լավ նշան չէ, սիրելիներս, լավ նշան չէ՛։

Մեզ մոտ ոչ ոք չէր գալիս, բացի փոստատարից, որը քրոջս նամակ էր բերում բժշկից, մեկ էլ Պրոկոֆին էր երեկոները երբեմն մանում և լուռ նայելով քրոջս, հեռանում էր ու արդեն իրենց խոհանոցում ասում.

— Ամեն մարդ պետք է իր չափը ճանաչի, իսկ թե մեկը գոռոզությունից չի հասկանում սա, նրա բանը բուրդ է։

Նա շատ էր սիրում կրկնել՝ «բանը բուրդ է»։

Մի անգամ ծննդյան տոներին, երբ անցնում էի շուկայով, Պրոկոֆին ինձ կանչեց իր մսի խանութը և, ձեռք չտալով ինձ, հայտնեց, թե պետք է հետս խոսի մի ինչ-որ շատ կարևոր գործի մասին։ Նա ցրտից ու օդուց կարմրատակել էր։ Վաճառասեղանի հետևում նրա կողքին կանգնած էր Նիկոլկան՝ ավազակաբարո դեմքով ու ձեռքին էլ արյունոտ մի դանակ։

— Ես ցանկանում եմ ձեզ մի երկու խոսք ասել,— սկսեց Պրոկոֆին։— Այս վիճակը չի կարող երկար շարունակվել, քանի որ ինքներդ հասկանում եք, այդպիսի վատ բանի համար մարդիկ չեն գովի ո՛չ մեզ, ո՛չ էլ ձեզ։ Մայրիկն, իհարկե, խղճալուց չի կարողանում ձեզ այդքան տհաճ բան ասել, որ ձեր քույրիկն իր ներկա այս դրության պատճառով մի ուրիշ բնակարան տեղափոխվի, իսկ ես այլևս չեմ հանդուրժի, քանի որ նրա վարմունքին չեմ կարող հավանություն տալ։

Ես նրան հասկացա և դուրս եկա խանութից։ Եվ հենց նույն օրը ես ու քույրս տեղափոխվեցինք Ռեդկայի մոտ։ Կառքի փող չունեինք, գնում էինք ոտքով. ես շալակել էի մեր իրերի կապոցը, քրոջս ձեռքին ոչինչ չկար, բայց շնչասպառ էր լինում, հազում և շարունակ հարցնում, թե արդյոք շո՞ւտ ենք հասնելու։

XIX

Վերջապես Մաշայից նամակ ստացվեց։

«Սիրելի, իմ լավ Մ. Ա.— գրում էր նա,— բարի ու հեզ «մեր հրեշտակ», ինչպես ձեզ անվանում էր ծեր ներկարարը, մնաք բարով, ես հորս հետ մեկնում են Ամերիկա ցուցահանդես։ Դժվար է հավատալ, սակայն մի քանի օրից հետո ես կտեսնեմ օվկիանոսը՝ Դուբեչնյայից այդքա՜ն հեռու։ Դա հեռու է ու երկընքի պես անեզր, ես թռչում եմ այնտեղ, դեպի ազատություն, ես ցնծում եմ, խենթանում, և տեսնում եք, թե նամակս ինչքան անկապ է։ Սիրելիս, իմ լա՜վ, ինձ ազատություն տվեք, շուտ կտրեք այն թելը, որը դեռ պահպանվում է, կապելով ինձ և ձեզ։ Այն, որ ես հանդիպեցի ու ճանաչեցի ձեզ, երկնային ճառագայթ էր, որը լուսավորեց իմ գոյությունը։ Բայց որ դարձա ձեր կինը, մի սխալ էր, դուք դա հասկանում եք, և հիմա ինձ ճնշում է այդ

սխալի գիտակցումը, ու ծնկաչոք աղաչում եմ, մեծահոգի բարեկամս, շո՜ւտ շո՜ւտ, մինչև օվկիանոս դուրս գալս հեռագրեք, որ համաձայն եք շտկել մեր ընդհանուր սխալը, իմ ուսերից վերցրեք այդ միակ բեռը, և հայրս, որ իր վրա կառնի բոլոր ծախսերը, ինձ խոստանում է ձևականություններով ձեզ շատ չծանրաբեռնել։ Ուրեմն հողմերի նման ազա՞տ եմ։ Այո՞։

Երջանիկ եղեք, թող աստված օրհնի ձեզ, ներեցեք ինձ, մեղավորիս։

Ողջ-առողջ եմ։ Աջ ու ձախ փող եմ շաղ տալիս, շատ հիմարություններ անում և ամեն բոպե փառաբանում աստծուն, որ ինձ նման անխելք կինը երեխաներ չունի։ Ես երգում եմ և հաջողություն ունեմ, սակայն դա հրապուրանք չէ, ո՛չ, դա իմ հանգրվանն է, խուցը, ուր հիմա հանգստանալու եմ գնում։ Դավիթ թագավորը մի մատանի է ունեցել «Ամեն ինչ անցողիկ է» մակագրությամբ։ Երբ տխուր ես, այս բառերն ուրախացնում են, իսկ երբ ուրախ ես՝ տխրեցնում։ Ես էլ հրեական գրերով մի այդպիսի մատանի եմ պատվիրել ինձ համար, ու այդ թալիսմանն ինձ հետ կպահի հրապուրանքներից։ Ամեն ինչ անցողիկ է, կանցնի նաև կյանքը, նշանակում է, ոչինչ պետք չէ։ Կամ պետք է միայն ազատության գիտակցումը, որովհետև երբ մարդն ազատ է, ապա նրան ուրիշ ոչինչ, ոչինչ, ոչի՜նչ պետք չէ։ Դե, կտրե՛ք թելը։ Ձեզ և ձեր քրոջը ամուր գրկում եմ։ Ներեցեք և մոռացեք ձեր Մ-ին»։

Քույրս մի սենյակում էր պառկած, իսկ Ռեդկան, որ կրկին հիվանդ էր և սկսել էր արդեն լավանալ՝ մյուսում։ Հենց այն ժամանակ, երբ ստացա այդ նամակը, քույրս անձայն վեր կացավ գնաց ներկարարի մոտ, նստեց կողքին և սկսեց գիրք կարդալ։ Ամեն օր նա Ռեդկայի համար կարդում էր Օստրովսկի կամ Գոգոլ, իսկ նա լսում էր հայացքը հառած մի կետի, չէր ծիծաղում, օրորում էր գլուխն ու մեկ-մեկ էլ իրեն-իրեն խոսում.

— Ամե՛ն ինչ կարող է պատահել։ Ամե՛ն ինչ կարող է պատահել։

Թե պիեսում նկարագրվում էր որևէ տգեղ ու այլանդակ բան, նա մատը խփում էր գրքին և մի տեսակ չարախնդությամբ ասում.

— Ահա սա՛ է կեղծիքը։ Ահա՛ թե ինչ է անում այդ կեղծիքը։

Պիեսները հետաքրքրում էին նրան և՛ բովանդակությամբ, և՛

բարոյախոսությամբ, և՛ իրենց բարդ ու վարպետ կառուցվածքով, ու նա զարմանում էր նրա վրա, երբեք չտալով նրա ազգանունը։

— Ոնց էլ ճարպկությամբ նա ամե՛ն ինչ իր տեղն է դրել։

Քույրս ցածրաձայն կարդաց միայն մեկ էջ և չկարողացավ շարունակել՝ շունչը հերիք չարեց։ Ռեդկան բռնեց նրա ձեռքը և, չորացած շրթունքները շարժելով, հազիվ լսելի ու խոպոտած ձայնով ասաց.

— Արդար մարդու հոգին մաքուր է ու հղկված, ինչպես կավիճը, իսկ մեղավորի հոգին չեչաքարի պես է։ Արդար մարդու հոգին զուլալ օլիֆ է, իսկ մեղավորինը՝ կուպր։ Հարկավոր է աշխատել, հարկավոր է տրտմել ու սրտացավ լինել,— շարունակեց նա,— իսկ այն մարդը, որ չի աշխատում ու չի վշտանում, երկնային թագավորություն չի տեսնի։ Վա՛յ, վա՛յ կուշտ մարդկանց, վա՛յ ուժեղներին, ունևորներին, վա՛յ պարտատերերին։ Դրանք չեն տեսնի երկնային թագավորությունը։ Որդը խոտ է փչացնում, ժանգը՝ երկաթ...

— Իսկ կեղծիքը՝ հոգին,— շարունակեց քույրս և ծիծաղեց։

Ես մի անգամ էլ կարդացի նամակը։ Այդ ժամանակ խոհանոց մտավ զինվորը, որ շաբաթը մեկ-երկու անգամ, հայտնի չէր թե ումից, մեզ համար բերում էր թեյ, ֆրանսիական բուլկի ու կաքավներ, որոնցից օծանելիքի հոտ էր բուրում։ Աշխատանք չկար, ստիպված ամբողջ օրերով նստում էի տանը, և հավանաբար նա, ով ուղարկում էր մեզ այդ բուլկիները, գիտեր, որ կարիքի մեջ էինք։

Ես լսեցի, թե ինչպես Կլեոպատրան խոսում էր զինվորի հետ և ուրախ-ուրախ ծիծաղում։ Հետո պառկած՝ քույրս բուլկի էր ուտում և ասում ինձ.

— Երբ դու ծառայել չուզեցիր և դարձար ներկարար, ես ու Անյուտա Բլագովոն հենց սկզբից էլ համոզված էինք, որ դու իրավացի ես, բայց սարսափում էինք այդ մասին բարձրաձայն խոսել։ Ասա ինձ, այդ ի՞նչ է, որ խանգարում է խոստովանել այն, ինչ մտածում ես։ Վերցնենք թեկուզ Անյուտա Բլագովոյին։ Նա քեզ սիրում է, պաշտում, գիտե, որ իրավացի ես. նա ինձ էլ է սիրում, որպես քրոջ, և գիտե, որ ես ճշմարիտ եմ, ու երևի հոգով նախանձում է ինձ, սակայն ինչ-որ ուժ նրան խանգարում է մեզ այցի գալ, խուսափում է մեզնից, վախենում։

Քույրս թևերը խաչեց կրծքին ու հափշտակված շարունակեց.

— Որ իմանայիր, թե նա ինչպե՜ս է քեզ սիրում... Այդ սիրո

մասին նա միայն ինձ է խոստովանել, այն էլ թաքուն, մթանը։ Պատահել է, ինձ քաշել տարել է այգու մութ ծառուղիները և սկսել փսփսալ, թե դու ինչքան ես իր համար թանկ։ Կտեսնես, նա երբեք մարդու չի գնա, որովհետև քեզ է սիրում։ Դու խրդճո՞ւմ ես նրան։

— Այո։

— Այդ նա է ուղարկել բուլկիները։ Ծիծաղելի է, չէ՞, ախր ինչո՞ւ թաքնվել։ Ես նույնպես հիմար էի ու ծիծաղելի, բայց ահա հեռացա այնտեղից և հիմա ոչ ոքից չեմ վախենում, մտածում եմ ու բարձրաձայն էլ ասում այն, ինչ որ ուզում եմ, և ես երջանիկ դարձա։ Երբ ապրում էի մեր տանը, երջանկության մասին գաղափար չունեի, իսկ հիմա թագուհու հետ էլ տեղս չեմ փոխի։

Վերադարձավ բժիշկ Բլագովոն։ Նա դոկտորի աստիճան էր ստացել ու հիմա ապրում էր մեր քաղաքում, հոր մոտ, հանգրստանում էր և ասում, թե շուտով կրկին Պետերբուրգ է գնալու։ Նա ուզում էր զբաղվել տիֆի և մեկ էլ, կարծեմ, խոլերայի պատվաստումով։ Ուզում էր արտասահման մեկնել, որպեսզի կատարելագործվի և հետո էլ ամբիոն ստանձնի։ Զինվորական ծառայությունն արդեն թողել էր, հագնում էր շեվիոտե ընդարձակ պիջակներ, շատ լայն շալվարներ և կապում հիանալի փողկապներ։ Քույրս հիացած էր նրա քորոցներով, ճարմանդներով ու կարմիր մետաքսե թաշկինակով, որ բժիշկը, հավանաբար, կոկետությունից, դնում էր պիջակի փոքրիկ կրծքագրպանը։ Մի անգամ, պարապությունից, ես ու քույրս սկսեցինք հիշողությամբ նրա բոլոր կոստյումները հաշվել և տեսանք, որ նա առնվազն տասը ձեռք կոստյում ունի։ Պարզ էր, որ բժիշկն առաջվա նման սիրում էր քրոջս, սակայն նույնիսկ կատակով ոչ մի անգամ չասաց, թե նրան իր հետ կտանի Պետերբուրգ կամ արտասահման, ու ես չէի կարողանում պարզ պատկերացնել, թե ինչ կլինի քրոջս, եթե ողջ մնա, ինչ կպատահի նրա երեխային։ Իսկ Կլեոպատրան անվերջ միայն երազում էր ու լրջորեն չէր մտածում ապագայի մասին, ասում էր, թող Վլադիմիրը գնա ուր ուզում է, նույնիսկ լքի իրեն, միայն թե երջանիկ լինի, իսկ ինքը գոհ է նաև եղածով։

Մեզ այցելելիս, բժիշկը սովորաբար չափազանց ուշադիր քննում էր քրոջս և պահանջում, որ նա իր ներկայությամբ դեղակաթիլներով կաթ խմի։ Նույն բանը կատարվեց նաև այս անգամ։ Նա նայեց քրոջս ու ստիպեց մի բաժակ կաթ խմել, ու դրանից հետո մեր սենյակներում կրեոզոտի հոտ ընկավ։

— Ա՛յ, խելացի աղջիկ ես,— ասաց Բլագովոն, վերցնելով նրանից բաժակը։— Քեզ չի կարելի շատ խոսել, իսկ վերջերս դու կաչաղակի պես շատախոսում ես։ Լռիր, խնդրում եմ։

Քույրս ծիծաղեց։ Հետո բժիշկը մտավ Ռեդկայի սենյակը, որտեղ ես էի նստած, և սիրալիր թփթփացրեց ուսիս։

— Հը՛, ի՞նչ կա, ծերուկ,— հիվանդի վրա կռանալով, հարցրեց նա։

— Ձերդ բարեծնություն...— ասաց Ռեդկան, կամացուկ շարժելով շրթունքները,— ձերդ բարեծնություն, համարձակվում եմ զեկուցել... բոլորս աստծո աչքի առաջ ենք ապրում, բոլորս էլ պետք է մեռնենք... թույլ տվեք ճշմարտությունն ասել... Ձերդ բարեծնություն, դուք չե՞ք տեսնի երկնային թագավորությունը։

— Ի՞նչ արած,— կատակեց բժիշկը,— դժոխքում էլ որևէ մեկը պետք է լինի։

Հանկարծ գիտակցությունս մի տեսակ խառնվեց. ասես երազում լինեի, տեսա, թե իբր ձմռան մի գիշեր կանգնած էի սպանդանոցի բակում, իսկ կողքիս Պրոկոֆին էր, որից պղպեղոդու հոտ էր փչում։ Ճիգ արի, տրորեցի աչքերս, ու անմիջապես ինձ թվաց, թե գնում եմ նահանգապետի մոտ բացատրության։ Նման բան ինձ հետ առաջներում չէր պատահել, և ոչ էլ հետո եղավ, ու երազանման տարօրինակ այդ հիշողությունների հայտնվելը ես բացատրում եմ նյարդերիս գերհոգնածությամբ։ Ես վերապրեցի և՛ սպանդանոցը, և՛ նահանգապետի հետ խոսակցությունը, բայց և միևնույն ժամանակ աղոտ կերպով հասկանում էի, որ իրականում դրանք չկան։

Երբ ուշքի եկա, տեսա, որ տանը չեմ, այլ փողոցում, ու բժշկի հետ միասին կանգնել եմ լապտերի մոտ։

— Տխուր է, տխուր,— ասաց նա, և արցունքները հոսեցին աչքերի վրայով։— Նա ուրախ է, միշտ ծիծաղում է, իրեն հուսադրում, սակայն, սիրելիս, նրա վիճակն անհուսալի է։ Ձեր Ռեդկան ատում է ինձ և շարունակ ուզում է հասկացնել, որ Կլեոպատրայի հետ ես վատ եմ վարվել։ Նա իր տեսակետից իրավացի է, սակայն ես էլ ի՛մ սկզբունքն ունեմ, և բոլորովին չեմ զղջացել պատահածի համար։ Պետք է սիրել, մենք բոլորս պետք է սիրենք, այնպես չէ՞, առանց սիրո կյանքը չէր լինի։ Ով վախենում և փախչում է սիրուց, նա ազատ չէ։

Կամաց-կամաց նա անցավ ուրիշ թեմաների, խոսեց գիտության մասին, իր դիսերտացիայի մասին, որը Պետերբուրգում հավանել էին։ Նա խոսում էր հափշտակությամբ և արդեն չէր հիշում ո՛չ քրոջս, ո՛չ իր վիշտը և ո՛չ էլ ինձ։ Կյանքը հրապուրել էր նրան։ Մեկի համար կարևոր էին մատանին ու Ամերիկան, մտածում էի ես, իսկ սրա համար՝ դոկտորի աստիճանն ու գիտական կարիերան, միայն ես ու քույրս էինք մնացել առաջվանը։

Հրաժեշտ տալով նրան, մոտեցա լապտերին ու մի անգամ էլ կարդացի նամակը։ Եվ հիշեցի, շատ լավ հիշեցի, թե ինչպես գարնանային մի առավոտ Մաշան եկավ ինձ մոտ՝ ջրաղաց, պառկեց և ծածկվեց կիսամուշտակով. հասարակ կնոջ էր ուզում նմանվել։ Իսկ մի ուրիշ անգամ, էլի առավոտյան, երբ ջրից հանեցինք ձկնորսակողովը, առափնյա ուռիներից մեզ վրա ցողը թափվեց անձրևի խոշոր կաթիլների նման, ու մենք ծիծաղեցինք...

Բոլշայա Դվորյանսկայա փողոցի մեր տանը լույս չէր վառվում։ Ես մագլցելով անցա ցանկապատը և, ինչպես առաջ էի անում, բակի մուտքից մտա խոհանոց, որպեսզի լամպ վերցնեմ։ Խոհանոցում ոչ ոք չկար, վառարանի մոտ, հորս սպասելով, թշշում էր ինքնաեռը։ «Հիմա տեսնես որևէ մեկը հորս համար թեյ լցնո՞ւմ է,— մտածեցի ես։ Լամպը վերցնելով, գնացի իմ տնակը և հենց այդտեղ ինձ համար հին լրագրերով անկողին սարքեցի ու պառկեցի։ Պատին խփված ցցերը առաջվա պես խոժոռ էին նայում, ու դրանց ստվերները թրթռում էին։ Ցուրտ էր։ Թվում էր, թե քույրս հիմա պետք է գար և ինձ համար ընթրիք բերեր, բայց անմիջապես էլ հիշեցի, որ նա հիվանդ է և Ռեդկայի տանը պառկած, ու տարօրինակ երևաց, որ ես մագլցելով անցել եմ ցանկապատն ու պառկել այդ ցուրտ տնակում։ Գիտակցությունս շաղվեց, և աչքիս առաջ հայտնվեցին անմիտ ու անիմաստ զանազան տեսարաններ։

Զանգը տվին։ Մանկուց ծանոթ էին այդ հնչյունները. սկզբում զանգակի մետաղալարը խզզալով ձգվում էր պատի վրա, ապա խոհանոցում հնչում էր կարճ ու սրտաճմլիկ մի զնգոց։ Հայրս վերադարձավ ակումբից։ Վեր կացա գնացի խոհանոց։ Աղախին Աքսինյան ինձ տեսնելով, ձեռքերն իրար զարկեց ու չգիտես ինչու լաց եղավ։

— Հարազա՜տս,— ասաց նա կամացուկ,— թանկագի՜նս։ Օ, աստվա՜ծ իմ։

Եվ հուզմունքից ձեռքերի մեջ սկսեց ճմռթել իր գոգնոցը։ Պատուհանի գոգին շարված էին պտղահյութերի և օղու քառորդանոց շշերը։ Ես լցրի մի լիքը թեյի բաժակ և ագահությամբ խմեցի, որովհետև շատ էի ուզում խմել։ Աքսինյան քիչ առաջ էր լվացել սեղանն ու նստարանները, և խոհանոցում այնպիսի մի հոտ էր ընկել, ինչպես լինում է մաքրասեր աղախինների մոտ՝ լուսավոր ու հարմար խոհանոցներում։ Մի ժամանակ, երբ դեռ երեխա էինք, մեզ հրապուրում, խոհանոց էին ձգում-բերում, ինչպես այդ հոտը, այնպես էլ ծղրիդների ձայնը ու տրամադրում հեքիաթներ լսելու, թագավոր-թագավոր խաղալու...

— Իսկ ո՞ւր է Կլեոպատրան,— կամացուկ ու արագ հարցրեց Աքսինյան, շնչատվելով։— Աստվա՜ծ իմ, իսկ ո՞ւր է գըլխարկդ։ Կինդ, ասում են, Պիտեր է գնացել, հա՞։

Նա ծառայում էր դեռ մեր մայրիկի օրով ու մի ժամանակ ինձ ու Կլեոպատրային տաշտի մեջ լողացրել էր, ու նրա համար հիմա մենք էլի երեխաներ էինք, որոնց հարկավոր էր խրատել։ Ընդամենը մի քառորդ ժամում նա իմ առաջ բացեց իր բոլոր մտքերը, որոնք հին ծառայի խոհեմությամբ, ամբողջ ժամանակ, ինչ մենք չէինք տեսնվել, կուտակել էր այդ խոհանոցի լռության մեջ։ Նա ասաց, որ բժշկին կարելի է ստիպել Կլեոպատրայի հետ ամուսնանալ. բավական է միայն վախեցնել նրան, ու եթե խնդրագիրը լավ գրվի, ապա հոգևոր առաջնորդը կքանդի նրա առաջին ամուսնությունը։ Լավ կլինի կնոջիցս թաքուն վաճառեմ Դուբեչնյա, իսկ փողերն էլ բանկում պահեմ իմ անունով, և եթե ես ու քույրս հորս ոտքերն ընկնենք ու մի լավ խնդրենք, ապա կարող է պատահել՝ ների մեզ. միայն թե հարկավոր է երկնային թագուհուն աղոթել...

— Դե՛, զավակս, գնա խոսիր հորդ հետ,— ասաց նա, երբ լսվեց հորս հազի ձայնը։— Գնա խոսիր, խոնարհվիր, գլուխդ չի ընկնի վրայիցդ։

Ես գնացի։ Հայրս արդեն նստել էր սեղանի առաջ և գոթական լուսամուտներով ու հրշեջ գիտանոց հիշեցնող հաստաբետ աշտարակով մի ամառանոցի նախագիծ էր նկարում. արտակարգ անդուր ու անշնորհք մի բան։ Առանձնասենյակ մտնելով, կանգնեցի այնպես, որ տեսնում էի այդ գծագիրը։ Ես չգիտեի, թե ինչու էի եկել հորս մոտ, բայց հիշում եմ, երբ տեսա նրա

լղարիկ գեմքը, կարմրած վիզը, պատի վրա ընկած նրա ստվերը, մեջս ցանկություն առաջացավ փաթաթվել նրա վզով և, ինչպես սովորեցրել էր Աքսինյան, ոտքերն ընկնել։ Սակայն գոթական պատուհաններով և հաստաբետոն աշտարակով ամառանոցի տեսքը հետ պահեց ինձ։

— Բարի երեկո,— ասացի ես։

Նա նայեց ինձ և անմիջապես աչքերն իջեցրեց գծագրին։

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց նա, մի քիչ սպասելով։

— Եկել եմ ձեզ ասելու, որ քույրս ծանր հիվանդ է։ Նա շուտով կմահանա,— խուլ ձայնով ավելացրի ես։

— Է՞, հետո՞ ինչ,— ակնոցը հանելով, հառաչեց հայրս ու ակնոցը դրեց սեղանի վրա։— Ինչ որ ցանես, այն էլ կհնձես։ Ինչ որ ցանես,— կրկնեց նա վեր կենալով,— այն էլ կհնձես։ Խնդրում եմ հիշես, թե ինչպես երկու տարի սրանից առաջ դու եկար ինձ մոտ, և ահա հենց այս նույն տեղում ես խնդրեցի քեզ, աղաչեցի թողնել մոլորություններդ, հիշեցրի պարտքիդ, պատվիդ ու նախնիներիդ նկատմամբ քո պարտականությունների մասին, նրանց ավանդների, որոնք պարտավոր ենք սրբությամբ պահպանել։ Դու լսեցի՞ր ինձ։ Բանի տեղ չդրի՞ր իմ խորհուրդները և համառորեն շարունակեցիր հետևել քո կեղծ հայացքներին։ Դա դեռ քիչ էր, քրոջդ նույնպես քաշեցիր քո մոլորությունների մեջ և ստիպեցիր նրան կորցնել բարոյականությունն ու ամոթը։ Հիմա երկուսիդ վիճակն էլ լավ չէ։ Ի՞նչ արած։ Ինչ որ ցանես, այն էլ կհնձես։

Նա ասում էր այդ ամենը և հետ ու առաջ քայլում առանձնասենյակում։ Երևի կարծում էր, թե եկել եմ իր մոտ մեղանչելու, և, ով գիտե, սպասում էր, թե ինձ ու քրոջս համար կսկսեմ խնդրել։ Մրսում էի, տենդով բռնված հիվանդի պես դողում և խոսում էի դժվարությամբ, խռպոտված ձայնով։

— Ես նույնպես խնդրում եմ հիշեք,— ասացի ես,— ինչպես հենց նույն այս տեղում աղաչեցի ձեզ հասկանալ ինձ, լրջորեն խորհել, միասին որոշել, թե ինչպես և ինչի համար մենք պետք է ապրենք, սակայն դուք պատասխանի փոխարեն խոսեցիք իմ նախնիներից, իմ պապից, որը ոտանավորներ է գրել։ Հիմա ձեզ ասում են, թե ձեր միակ աղջիկը անհույս հիվանդ է, իսկ դուք դարձյալ նախնինե՞ր, ավանդնե՞ր... Եվ այսքա՞ն թեթևամտություն ծերունական օրերում, երբ մահը յոթ սարի հետևում չէ, ու երբ ինչ-որ հինգ կամ տասը տարի է մնացել ապրելու։

— Ինչո՞ւ ես եկել այստեղ,— խստորեն հարցրեց հայրս, հավանաբար վիրավորված, որ երեսով էի տվել իր թեթևամտությունը։

— Չգիտեմ։ Ես սիրում եմ ձեզ, ինձ համար անասելի ծանր է, որ այսքան մենք հեռու ենք իրարից. դրա համար էլ եկա։ Ես դեռ սիրում եմ ձեզ, սակայն քույրս վերջնականապես արդեն երես է դարձրել ձեզնից։ Նա ձեզ չի ներում և երբեք էլ չի ների։ Հենց միայն ձեր անունը նրա մեջ անցյալի և կյանքի նկատմամբ զզվանք է առաջացնում։

— Իսկ ո՞վ է մեղավոր,— գոռաց հայրս։— Հենց ի՛նքդ էլ մեղավոր ես, անամոթ։

— Թող ե՛ս մեղավոր լինեմ,— ասացի ես։— Խոստովանում եմ, մեղավոր եմ շատ բաներում, բայց ինչի՞ նման է ախր ձեր այս կյանքը, որը պարտադիր եք համարում նաև մեզ համար, ինչո՞ւ նա այդքան ձանձրալի է, այդքան անշնորհք, ինչո՞ւ այդ տներից և ոչ մեկում, որոնք կառուցում եք դուք արդեն երեսուն տարի, չկան մարդիկ, որոնցից կարողանայի սովորել, թե ինչպես ապրեմ, որ մեղավոր չլինեմ։ Ամբողջ քաղաքում մի ազնիվ մարդ չկա։ Ձեր այդ տներն անիծված բներ են, ուր աշխարհից դուրս են քշում մայրերին, աղջիկներին, տանջում են երեխաներին... Խե՛ղճ իմ մայր,— շարունակեցի ես հուսահատ։— Իմ խե՛ղճ քույր։ Պետք է օղիով, թղթախաղով ու բամբասանքներով բթացնել իրեն, պետք է ստորանալ, ձևանալ կեղծ բարեպաշտ կամ տասնյակ տարիներ գծել ու գծել, չնկատելու համար ամբողջ այն սարսափելին, որ թաքնված է այդ տներում։ Մեր քաղաքը հարյուրավոր տարիներ է ինչ արդեն գոյություն ունի, սակայն այդ ամբողջ ժամանակ հայրենիքին չտվեց օգտակար ոչ մի մարդ, ո՛չ մի մարդ։ Դուք հենց սաղմում խեղդե՛լ եք քիչ թե շատ կենդանի ու լուսավոր ամեն մի բան։ Խանութպանների, պանդոկատերերի, գրագիրների ու կեղծ բարեպաշտների քաղաք, անպետք, անօգուտ մի քաղաք, որի համար չէր ափսոսա ոչ ոք, եթե դա հանկարծ գետնի տակն անցներ։

— Ես չեմ ցանկանում լսել քեզ, անզգա՛մ,— ասաց հայրս և սեղանի վրայից վերցրեց քանոնը։— Դու հարբա՛ծ ես։ Զհամարձակվե՛ս այսպիսի տեսքով հայտնվել հորդ աչքին։ Վերջին անգամ եմ ասում, և սա հաղորդիր նաև անբարոյական քրոջդ, որ դուք ինձնից ոչի՛նչ չեք ստանա։ Անհնազանդ զավակներին ես պոկել եմ իմ սրտից, ու եթե նրանք տառապում են իրենց

անհնազանդությունից և համառությունից, ապա ես չեմ խղճում նրանց։ Կարող ես գնալ որտեղից եկե՛լ ես։ Աստված կամեցավ պանծել ինձ ձեր միջոցով, բայց ես հնազանդությամբ եմ կրում այդ փորձությունը և Հոբ երանելու նման մխիթարություն եմ գտնում տանջանքների ու մշտական աշխատանքի մեջ։ Դու իմ շեմքը պիտի չկոխես, քանի դեռ չես ուղղվել։ Ես իրավացի եմ, և այն ամենը, ինչ ասում եմ, օգտակար է, ու եթե դու քո լավն ես ուզում, ապա պարտավոր ես ողջ կյանքումդ հիշել, ինչ ասել եմ քեզ և ասում եմ։

Ես ձեռքս թափ տվի ու հեռացա։ Հետո չեմ հիշում, թե ինչ եղավ գիշերը և հաջորդ օրը։

Ասում են, թե գլխաբաց, օրորվելով քարշ եմ եկել փողոցներում և բարձրաձայն երգել, իսկ հետևիցս խմբով քայլել են երեխաներն ու բղավել.

— Փոքրիկ օգո՜ւտ, փոքրիկ օգո՜ւտ։

XX

Եթե ցանկություն ունենայի ինձ համար մատանի պատվիրել, ապա այսպիսի մակագրություն կընտրեի՝ «Ոչինչ անցողիկ չէ»։ Ես հավատում եմ, որ ոչինչ անհետք չի անցնում, որ մեր ամեն մի չնչին քայլը ներկա և ապագա կյանքի համար նշանակություն ունի։

Այն, ինչ վերապրեցի ես, իզուր չանցավ։ Իմ մեծ դժբախտությունը, համբերատարությունս քաղքենիների սրտերը հուզեցին, և հիմա արդեն հետևիցս չեն բղավում փոքրիկ օգուտ, չեն ծաղրում ինձ, և երբ անցնում եմ առևտրականների խանութների շարքով, ջուր չեն ցփնում վրաս։ Իմ բանվոր դառնալուն արդեն ընտելացան և տարօրինակ ոչինչ չեն տեսնում, որ ես՝ ազնվականս, ներկի դույլ եմ պտտեցնում և ապակի գցում։ Ընդհակառակը, սիրով ինձ պատվերներ են տալիս, և ես համարվում եմ արդեն լավ վարպետ ու ամենալավ կապալառուն Ռեդկայից հետո, որը թեև առողջացել է և առաջվա պես զանգակատների գմբեթները ներկում է առանց լաստակների, սակայն այլևս ուժ չունի տղաների հետ գլուխ դնելու։ Նրա փոխարեն հիմա ես եմ քաղաքում վազվզում ու պատվերներ փնտրում, վարձում տղաներին ու նրանց հետ հաշիվ փակում և մեծ տոկոսներով պարտքով փող վերցնում։ Եվ հիմա, կապալառու դառնալով,

հասկանում եմ, թե ինչպես կոպեկանոց մի պատվերի համար կարելի է մի երեք օր քաղաքով մեկ վազվզել և թիթեղագործներ փնտրել։ Ինձ հետ քաղաքավարի են, «դուք»-ով են դիմում, իսկ այն տներում, որտեղ աշխատում եմ, ինձ թեյ են հյուրասիրում և ուղարկում են իմանալու, թե արդյոք չեմ ուզում ճաշել։ Երեխաներն ու աղջիկները հաճախ գալիս և հետաքրքրությամբ ու սխուր-տխուր ինձ են նայում։

Մի անգամ աշխատում էի նահանգապետի այգում, ներկում էի տաղավարը մարմարի երանգով։ Նահանգապետը զբոսնելիս տաղավար մտավ ու պարապությունից սկսեց հետս խոսել, և նրան ես հիշեցրի, թե ինչպես մի անգամ ինձ հրավիրել էր իր մոտ բացատրության։ Նա մի բոպե զննեց իմ դեմքը, հետո բերանը օ-ի նման կլորացրեց, տարածեց ձեռքերն ու ասաց.

— Չեմ հիշում։

Ես ծերացել եմ, դարձել լռակյաց, մռայլ ու խստաբարո, ծիծաղում եմ հազվադեպ ու, ասում են, Ռեդկային եմ նմանվել և տղաներին նրա նման ձանձրացնում եմ իմ անօգուտ խրատներով։

Մարիա Վիկտորովնան՝ իմ նախկին կինը, հիմա ապրում է արտասահմանում, իսկ հայրը՝ ինժեները, արևելյան նահանգներում ինչ-որ տեղ ճանապարհ է կառուցում և այնտեղ էլ կալվածքներ առնում։ Բժիշկ Բլագովոն նույնպես արտասահմանում է։ Դուբեչնյան նորից անցավ տիկին Չեպրակովայի ձեռքը, որն ինժեներից կալվածքը վերագնեց քսան տոկոսի զիջումով։ Մոր-սեյն արդեն ման է գալիս կոտելոկ գլխարկով. նա ինչ-որ գործերով, երկանիվ կառք նստած, հաճախակի քաղաք է գալիս և կանգ առնում բանկի մոտ։ Ասում են, թե ստանալիք պարտքի փոխանցումով նա արդեն կալվածք է առել և մշտապես էլ բանկում հարցուփորձ է անում Դուբեչնյայի մասին, որը նույնպես պատրաստվում է գնել։ Խեղճ Իվան Չեպրակովը քաղաքում երկար քարշ եկավ, ոչինչ չանելով ու հարբելով։ Ես փորձեցի նրան տեղավորել մեզ մոտ, և որոշ ժամանակ հետներս տանիք էր ներկում և ապակի գցում ու նույնիսկ ձեռքն էլ բացվեց՝ իսկական ներկարարի պես օլիֆ էր գողանում, թեյանվեր ուզում, հարբում։ Սակայն շուտով աշխատանքը նրան ձանձրացրեց, նա սրտնեղեց ու վերադարձավ Դուբեչնյա, իսկ հետո տղաներն ինձ խոստովանեցին, որ Չեպրակովը փորձել է իրենց համոզել իր

հետ միասին գիշերով մի կերպ սպանել Մոիսեյին և գեներալի կնոջը կողոպտել։

Հայրս շատ է ծերացել, կուզը դուրս է եկել, և երեկոները զբոսնում է իր տան մոտերքում։ Նրա տանը ես չեմ լինում։

Պրոկոֆին խոլերայի ժամանակ պղպեղոդիով ու կուպրով բուժում էր խանութպաններին ու դրա համար փող վերցնում, և նրան, ինչպես իմացա մեր թերթից, ճիպոտահար անելով պատժել էին, որ նստած մսավաճառի իր խանութում, բժիշկների մասին վատ էր խոսել։ Նրա գործակատար Նիկոլկան մեռավ խոլերայից։ Կարպովնան դեռ ապրում է և առաջվա նման սիրում իր Պրոկոֆիին ու վախենում նրանից։ Ամեն անգամ ինձ տեսնելիս, նա տխուր օրորում է գլուխն ու հառաչելով ասում.

— Գլուխդ կորցրե՞լ ես։

Լի օրերը, վաղ առավոտից երեկո, զբաղված եմ լինում։ Իսկ տոներին, երբ լավ եղանակ է անում, բռնում եմ իմ պստլիկ ազգականի թաթիկը (քույրս տղա էր սպասում, բայց աղջիկ ունեցավ) և առանց շտապելու գնում գերեզմանատուն։ Կանգնում կամ նստում եմ ու երկար-երկար նայում ինձ համար թանկ դերեզմանին և աղջկան ասում եմ, որ այստեղ պառկած է քո մայրը։

Երբեմն գերեզմանի մոտ հանդիպում եմ Անյուտա Բլագովոին։ Մենք լուռ բարևում ենք իրար ու գլխահակ կանգնում կամ խոսում ենք Կլեոպատրայի ու նրա աղջկա մասին, այն մասին, թե որքա՞ն տխուր է այս աշխարհում ապրելը։ Հետո, հեռանալով գերեզմանատնից, մենք լուռ գնում ենք, ու նա դիտավորյալ դանդաղեցնում է քայլերը, որպեսզի կողքիցս ավելի երկար քայլի։ Ուրախ ու երջանիկ աղջիկը, ցերեկվա պայծառ լույսից աչքերը կկոցելով ու ծիծաղելով, Անյուտային է պարզում իր թաթիկները, և մենք կանգ ենք առնում ու միասին գուրգուրում այդ սիրելի աղջկան։

Իսկ երբ մտնում ենք քաղաք, Անյուտա Բլագովոն, հուզվելով ու կարմրելով, հրաժեշտ է տալիս ինձ և շարունակում է քայլել մենակ՝ պատկառելի ու խստաբարո։ Եվ անցորդներից ոչ ոք, նայելով նրան, այլևս չի էլ մտածում, թե հենց նոր նա քայլում էր ինձ հետ կողք-կողքի և նույնիսկ գուրգուրում էր երեխային։

1896

ՊԻԵՍՆԵՐ

ԵՐԵՔ ՔՈՒՅՐ

Դրամա չորս գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՊՐՈՁՈՐՈՎ ԱՆԴՐԵՅ ՍԵՐԳԵԵՎԻՉ։
ՆԱՏԱԼՅԱ ԻՎԱՆՈՎՆԱ, նրա հարսնացուն, հետո՝ կինը։
ՕԼԳԱ
ՄԱՇԱ Անդրեյի քույրերը։
ԻՐԻՆԱ
ԿՈՒԼԻԳԻՆ ՖԵՈԴՈՐ ԻԼՅԻՉ, գիմնազիայի ուսուցիչ, Մաշայի ամուսինը։
ՎԵՐՇԻՆԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՎԱՆՈՎԻՉ, փոխգնդապետ, մարտկոցի հրամանատար։
ՏՈՒԶԵՆԲԱԽ ՆԻԿՈԼԱՅ ԼՎՈՎԻՉ, բարոն, պորուչիկ։
ՍՈԼՅՈՆԻ ՎԱՍԻԼԻ ՎԱՍԻԼԵՎԻՉ, շտաբս կապիտան։
ՉԵԲՈՒՏԻԿԻՆ Իվան Ռոմանովիչ, զինվորական բժիշկ։
ՖԵՂՈՏԻԿ ԱԼԵՔՍԵՅ ՊԵՏՐՈՎԻՉ, կրտսեր պորուչիկ։
ՌՈԴԵ ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԼՈՎԻՉ, կրտսեր պորուչիկ։
ՖԵՐԱՊՈՆՏ, զեմստվոյական վարչության պահակ, ծերունի։
ԱՆՖԻՍԱ, դայակ, ութսուն տարեկան զառամյալ կին։

Գործողությունը կատարվում է գավառական մի քաղաքում։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Գրոզորովների տունը: Հյուրասենյակի սյուներից այն կողմ ընդարձակ դահլիճն է: Կեսօր է. բակում արև է, ուրախ տրամադրություն: Դահլիճում նախաճաշի սեղան են բացում: Օրիորդաց գիմնազիայի ուսուցչուհու կապույտ համազգեստով՝ Օլգան ստուգում է աշակերտական տետրերը: Մաշան սև շրջազգեստով է, խյենզր գլխարկը ծնկներին՝ գիրք է կարդում: Սպիտակ հագած Իրինան կանգնել է մտախոհ:

ՕԼԳԱ — *Հայրիկը մահացավ ուղիղ մեկ տարի առաջ, հենց այս օրը՝ մայիսի հինգին, քո անվանակոչության օրը, Իրինա: Սաստիկ ցուրտ էր, ձյուն էր գալիս, և ինձ թվում էր, թե չեմ դիմանա վշտին: Իսկ դու ուշաթափվել էիր, պառկել մեռածի պես: Բայց տես, անցել է ընդամենը մեկ տարի, և մենք այս ամենը հիշում ենք ինչպիսի հանգստությամբ: Դու արդեն սպիտակ ես հագել, դեմքդ էլ փայլում է...*

Ժամացույցը խփում է տասներկու անգամ:

Այն ժամանակ էլ ժամացույցը խփեց...

Դադար:

Հիշում եմ, հայրիկին տանելիս նվագում էին, իսկ գերեզմանոցում՝ կրակեցին: Գեներալ էր, բրիգադի հրամանատար, բայց հուղարկավորները շատ չէին: Ասենք, անձրև էր գալիս այդ օրը: Տեղատարափ անձրև ու ձյուն:

ԻՐԻՆԱ — *Պետք չէ հիշել:*

Սյուներից այն կողմ, դահլիճում, սեղանի մոտ նայտնվում են բարոն Տուզենբախը, Չեբուտիկինը և Սոլյոնին:

ՕԼԳԱ — *Այսօր տաք է, կարելի է պատուհանները բացել, իսկ կեչիները դեռ չեն բողբոջել: Ստանձնելով բրիգադի հրամանատարությունը, հայրիկը մեզ հետ դուրս եկավ Մոսկվայից տասնմեկ տարի առաջ. ես շատ լավ եմ հիշում, մայիսի սկիզբն էր, ճիշտ այս օրերին, բայց Մոսկվայում տաք էր, արև, ամենուր ծաղկունք: Տասնմեկ տարի է անցել, իսկ ես հիշում եմ այնպես, կարծես երեկ է եղել: Աստված իմ, առավոտյան արթնացա, տեսա լույսը, տեսա գարունը, և հրճվանքը թրթռաց հոգումս, ցանկացա թռչել Մոսկվա:*

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — *Ո՞նց չէ, կթռչես:*

ՏՈՒԶԵՆԲԱԽ — *Իհարկե, անմտություն է:*

Մաշան, գլուխը գրքին ճակած, մտքերի մեջ ընկած, սուլում է կամացուկ:

ՕԼԳԱ — *Մի՛ սուլիր, Մաշա: Ինչպե՞ս ես կարողանում:*

Դադար:

Մշտապես ցավում է գլուխս, որովհետև ամեն օր գիմնազիա եմ գնում և դաս տալիս մինչև երեկո, և ինձ տանջում է այն միտքը, թե արդեն պառավել եմ: Եվ, իրոք, գիմնազիայում աշխատելուս այս չորս տարիների ընթացքում, ես զգացել եմ, թե ինչպես է ամեն օր, կաթիլ առ կաթիլ ինձնից դուրս հոսում ուժն ու ջահելությունը: Եվ միայն երազանքն է աճել ու ամրացել...

ԻՐԻՆԱ — *Մոսկվա մեկնել է պետք: Վաճառել տունը, ամեն ինչի հետ փակել հաշիվներն ու մեկնել...*

ՕԼԳԱ — *Այո: Մեկնել Մոսկվա: Եվ շուտ:*

Չեբուտիկինը և Տուզենբախը ծիծաղում են:

ԻՐԻՆԱ — *Մեր եղբայրը, հավանաբար, պրոֆեսոր կդառնա և, ուրեմն, չի կարող ապրել այստեղ: Միակ կաշկանդողը խեղճ Մաշան է:*

ՕԼԳԱ — *Մաշան ամեն տարի, ամռանը, Մոսկվա կգա:*

Մաշան կամացուկ սուլում է:

ԻՐԻՆԱ — *Տա՜ աստված՝ ամեն ինչ կարգավորվի:* (Լուսամուտից դուրս է նայում): *Հրաշալի եղանակ է: Ես չգիտեմ, թե ինչու*

է ներսում այսքան լուսավոր։ Առավոտյան հիշեցի, որ անվանակոչությանս օրն է, և իսկույն ուրախություն ապրեցի, հիշեցի մանկությունս, երբ դեռ կար մայրիկը։ Եվ ինչ հրաշալի մտքեր հուզեցին ինձ, ինչ հրաշալի մտքեր։

ՕԼԳԱ — Այսօր դու ոտքից գլուխ փայլում ես և գեղեցիկ ես արտակարգ։ Եվ Մաշան է գեղեցիկ։ Անդրեյն էլ լավիկը կլիներ, եթե այդպես չցվեր։ Նրան չի սազում գիրությունը։ Իսկ ես պառավել եմ, նիհարել, որովհետև գիմնազիայում շատ եմ բարկանում աղջիկների վրա։ Այ, այսօր ազատ եմ, տանն եմ և գլուխս չի ցավում ու ինձ ավելի ջահել եմ զգում, քան երեկ։ Ես ընդամենը քսանութ տարեկան եմ... Ամեն ինչ լավ է, ամեն ինչ աստծո տված է, բայց ինձ թվում է, որ եթե ես ամուսնանամ ու ամբողջ օրը նստեմ տանը, ավելի լավ կլինի։

Դադար։

Ես շատ կսիրեմ իմ ամուսնուն։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (Սոլյոնիին) Այնպիսի անհեթեթություն եք դուրս տալիս, որ ձեզ լսելը ձանձրալի է։ (Մտնում է ֆյուրասենյակ)։ Մոռացա հայտնել, որ ձեզ այսօր այցելության պիտի գա մարտկոցի մեր նոր հրամանատար Վերշինինը։ (Նստում է դաշնամուրի առջև)։

ՕԼԳԱ — Թող գա։ Շատ ուրախ եմ։

ԻՐԻՆԱ — Նա ծե՞ր է։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Չէ, շատ ծեր չէ։ Ամենաշատը քառասուն—քառասունհինգ տարեկան։ (Կամացուկ նվագում է)։ Ըստ երևույթին հիանալի մարդ է։ Մի բան անկասկած է, որ հիմար չէ։ Միայն թե շատ է խոսում։

ԻՐԻՆԱ — Գրավի՞չ մարդ է։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Կարծես թե, բայց դե կին ունի, զոքանչ և երկու դուստր։ Ըստ որում՝ երկրորդ ամուսնությունն է։ Նա այցելում է բոլոր տները և ամենուր հայտնում, որ կին ունի, երկու դուստր։ Ձեզ էլ կհայտնի։ Կինը կիսախելագար է՝ երկար, աղջկական հյուսքով, խոսում է վերամբարձ բառերով, փիլիսոփայում է և հաճախակի ինքնասպանության փորձեր անում։ Հավանորեն ամուսնուն տանջելու համար։ Նման կնոջից ես վաղուց հեռացած կլինեի, իսկ նա համբերում է և միայն բողոքում։

ՍՈԼՅՈՆԻ — (Չեբուտիկինի հետ ֆյուրասենյակ մտնելով) Մի ձեռքով ես բարձրացնում եմ մեկուկես փութ, իսկ երկուսով՝ հինգ, նույնիսկ, վեց փութ։ Այստեղից էլ եզրակացությունը. երկուսը մեկից ուժեղ են ոչ թե երկու, այլ երեք, նույնիսկ վեց անգամ...

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (ֆայլելիս լրագիր է կարդում) Եթե թափվում են մազերը... Երկու մսխալ նավթալինը լցնել կես լիտր սպիրտի մեջ, լուծել և օգտագործել ամեն օր... (Գրի է առնում ծոցատետրում)։ Նշենք։ (Սոլյոնիին) Ահա, ես ձեզ ասում եմ, որ խցանը պետք է խցկել շշի բերանը և նրա միջով անցկացնել ապակյա խողովակ... Հետո վերցնում եք մեկ պտղունց ամենահասարակ, ամենասովորական շիբ...

ԻՐԻՆԱ — Իվան Ռոմանիչ, սիրելի Իվան Ռոմանիչ...

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Ի՞նչ է, աղջիկս, ուրախությունս։

ԻՐԻՆԱ — Ասեք ինձ, խնդրում եմ, ինչի՞ց է, որ այսօր ես այսպես երջանիկ եմ։ Կարծես առագաստների վրա լինեմ, իսկ գլխավերևումս ընդարձակ, կապույտ երկինքն է, ուր թևածում են մեծ, ճերմակ թռչունները։ Ինչից է, հը՞։ Ինչի՞ց։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (համբուրելով նրա ձեռքը, ճնշշուրեն) Ճերմակ իմ թռչուն...

ԻՐԻՆԱ — Երբ այսօր արթնացա, վեր ելա ու լվացվեցի, հանկարծ ինձ թվաց, թե այս երկնքի տակ ամեն ինչ հասկանալի է, և ես գիտեմ՝ ինչպես ապրել։ Սիրելի Իվան Ռոմանիչ, թվաց, թե գիտեմ ամեն-ամեն ինչ։ Մարդը պետք է աշխատի, աշխատի քրտինք թափելով... Ով ուզում է լինի։ Աշխատանքի մեջ է կյանքի, երջանկության, հիացմունքի իմաստը։ Ի՞նչ հրաշալի բան է՝ լինել բանվոր, արթնանալ դեռ լույսը չբացված, կամ հովիվ, կամ ուսուցիչ, որ ուսուցանում է երեխաներին, կամ մեքենավար։ Տեր իմ աստված, ավելի լավ է լինել եղ, քան մարդ, սովորական մի եղ կամ ձի, միայն թե աշխատես... Այո, սովորական ձի և ոչ թե երիտասարդ մի կին, որն արթնանում է ցերեկվա տասներկուսին, հենց անկողնում սուրճ խմում, հետո երկու ժամ վատնում հագնվելու վրա... Օ՜, ինչ սարսափելի է։ Ինչպես շոգ օրերին ես ցանկանում խմել, այ այդպես էլ ես ցանկանում եմ աշխատել։ Եվ եթե առավոտ շուտ չարթնանամ

ու շաշխատեմ, հրաժարվեք ինձ հետ բարեկամություն անելուց, Իվան Ռոմանիչ։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — (ֆեֆշորեն) Կհրաժարվեմ, անպայման կհրաժարվեմ։

ՕԼԳԱ — Հայրիկը սովորեցրել է մեզ արթնանալ ժամը յոթին։ Իրինան արթնանում է յոթին, բայց ամենաքիչը մինչև ժամը ինը մնում է անկողնում պառկած։ Մտածում է։ Տեսեք՝ ինչպես լրջացավ դեմքը։ (Միծաղում է)։

ԻՐԻՆԱ.— Դու վարժվել ես ինձ նայել որպես աղջնակի, և քեզ համար տարօրինակ է թվում իմ լուրջ դեմքը։ Իսկ ես քսան տարեկան եմ։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Աշխատանքի կարոտ... Օ՜, աստված իմ, ինչպես եմ ես դա հասկանում։ Կյանքումս ես ոչ մի օր չեմ աշխատել։ Ծնվել եմ ցուրտ ու դատարկ Պետերբուրգում, մի ընտանիքում, որին անծանոթ է եղել հոգսը, աշխատանքը։ Հիշում եմ, երբ տուն էի դառնում կորպուսից, սպասյակը ոտքերիցս քաշում էր կոշիկները։ Ես կամակորություններ էի անում, իսկ մայրս հիանում էր ինձնով ու զարմանում, որ ուրիշներն այլ կերպ էին վարվում։ Ինձ պահպանում էին աշխատանքից։ Բայց դե պահպանել կլինի՞։ Հասել է ժամը, մեզ բոլորիս վրա գալիս է հեղեղը, ուր որ է պայթելու է առողջ, ուժեղ փոթորիկը, որն արդեն մոտ է, և շուտով մեր հասարակությունից կքշի-կտանի ծուլությունը, անտարբերությունը, արհամարհանքը աշխատանքի նկատմամբ, թարախակալած ձանձրույթը։ Ես պիտի աշխատեմ, իսկ մի քսանհինգ-երեսուն տարի անց արդեն կաշխատի ամեն ոք։ Ամեն ոք։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Ես չեմ աշխատի։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Դուք հաշվի մեջ չեք։

ՍՈԼՅՈՆԻ — Քսանհինգ տարի անց, բարեբախտաբար, դուք այլևս չեք լինի։ Երկու-երեք տարի հետո դուք կմեռնեք կաթվածից, և կամ ես կկատաղեմ ու կկրակեմ ուղիղ ձեր ճակատին։ (Գրպանից հանում է օծանելիքի սրվակը և ցանում է կրծքին, ձեռքերին)։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — (ծիծաղում է) Ես, իրոք, երբեք ոչինչ չեմ արել։ Համալսարանն ավարտելուց հետո մատը մատիս չեմ խփել, նույնիսկ գիրք չեմ կարդացել... Միայն լրագրեր...։ (Գրպանից մի ուրիշ լրագիր է հանում)։ Լրագրերից, ահա

իմանում եմ, որ եղել է, ասենք, ոմն Դոբրոլյուբով, իսկ թե ինչ է նա գրել, չգիտեմ։ Աստված գիտե...

Լսվում է, ինչպես են թակում հատակը ներքևի հարկից։

Ահա... ինձ ներքև են կանչում, այցելու ունեմ, երևի։ Հիմա կգամ... սպասեք... (Հապշտապ հեռանում է՝ սանրելով մորուքը)։

ԻՐԻՆԱ — Նրա մտքինն ուրիշ բան է։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Այո։ Հանդիսավոր արտահայտությամբ հեռացավ։ Ակնհայտ է, որ ձեզ համար նվեր է բերելու։

ԻՐԻՆԱ — Ինչ տհաճ է։

ՕԼԳԱ — Այո, սարսափելի է։ Նա միշտ էլ հիմարություններ է անում։

ՄԱՇԱ — Ծովախորշի մոտ կանաչ կաղնի կա, ոսկե շղթա է այդ կաղնուց կախ... Ոսկե շղթա է այդ կաղնուց կախ... (Ոտքի է ելնում ու քթի տակ կամացուկ երգում)։

ՕԼԳԱ — Այսօր տխուր ես, Մաշա։

Քթի տակ երգելով՝ Մաշան հագնում է գլխարկը։

Ո՞ւր։

ՄԱՇԱ — Տուն։

ԻՐԻՆԱ — Տարօրինակ է...

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Անվանակոչության օր չէ՞...

ՄԱՇԱ — Միևնույն է... Երեկոյան կգամ։ Յտեսություն, քաղցրիկը։ (Համբուրում է Իրինային)։ Կրկին ցանկանում եմ քեզ առողջություն։ Երջանիկ եղիր։ Մի ժամանակ, երբ դեռ ողջ էր հայրիկը, անվանակոչության օրերին մեր տուն էին գալիս երեսուն-քառասուն սպա, աղմուկ էր լինում, եռուզեռ... Իսկ այսօր եկել են մեկուկես մարդ, և լռություն է, ինչպես անապատում։ Ես գնում եմ... Մոայլ տրամադրություն ունեմ, տխուր եմ, դու ինձ մի լսիր։ (Արցունքների միջից ծիծաղում է)։ Հետո կզրուցենք, քաղցրիկս, իսկ հիմա ուզում եմ գնալ։

ԻՐԻՆԱ — (դժգոհ) Ինչ վատն ես...

ՕԼԳԱ — (արտասվելով) Ես հասկանում եմ քեզ, Մաշա։

ՍՈԼՅՈՆԻ — Երբ փիլիսոփայում է տղամարդը՝ երևույթը կոչվում է փիլիսոփայություն կամ պարզապես՝ սոփեստություն, իսկ երբ կինն է փիլիսոփայում կամ, որ ավելի վատ է, երբ

երկու կին են փիլիսոփայում, երևույթը կոչվում է՝ քարշ տուր ինձ՝ մատիցս բռնած։

ՄԱՇԱ — Ի՞նչ եք ուզում ասել, սարսափելի մարդ։

ՍՈՂՅՈՆԻ — Ոչինչ։ Նա չհասցրեց ախ ասել, արջը վրան պինդ նստեց։

Դադար։

ՄԱՇԱ — (Օլգային, բարկացած) *Կտրիր լացդ...*

Ներս են գալիս Անֆիսան և Ֆերապոնտը՝ տորբը ձեռին։

ԱՆՖԻՍԱ — Այստեղ բեր, հերս։ Ներս եկ, ոտքերդ մաքուր են։ (Իրինային)։ *Վարչությունից է, Միխայիլ Իվանիչ Պրոտոպոպովից։*

ԻՐԻՆԱ — Շնորհակալ եմ։ Շնորհակալություն հայտնեք նրան։ (Վերցնում է տորբը)։

ՖԵՐԱՊՈՆՏ — Ի՞նչ։

ԻՐԻՆԱ — (բարձր) *Շնորհակալություն հայտնեք։*

ՕԼԳԱ — Դայակ, հյուրասիրիր նրան։ Գնա, Ֆերապոնտ, քեզ թխվածք կտան։

ՖԵՐԱՊՈՆՏ — Ի՞նչ։

ԱՆՖԻՍԱ — Գնանք, հերս, գնանք, Ֆերապոնտ Սպիրիդոնիչ։ (Գնում է Ֆերապոնտի հետ)։

ՄԱՇԱ — Չեմ սիրում Պրոտոպոպովին, այդ Միխայիլ Պոտապիչին կամ Իվանիչին։ Պետք չէ նրան հրավիրել։

ԻՐԻՆԱ — Ես չեմ հրավիրել։

ՄԱՇԱ — Եվ ճիշտ ես վարվել։

Ներս է գալիս Չեբուտիկինը. նրան հետևում է մի զինվոր՝ արծաթյա իճճաները գրկած։ Ջարմանքի և դժգոհության ձայներ։

ՕԼԳԱ — (դեմքը ծածկում է ձեռքերով) *Ինքնաեռ... Սոսկալի է։* (Մտնում է դահլիճ)։

ԻՐԻՆԱ — Սիրելի Իվան Ռոմանիչ, այս ի՞նչ եք անում։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (ծիծաղում է) *Ես ասում էի, չէ՞։*

ՄԱՇԱ — Իվան Ռոմանիչ, դուք պարզապես ամոթ չունեք։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Թանկագիններս, սիրունիկներս, դուք իմ միակն եք, դուք ինձ համար ամենաթանկն եք այս աշխարհում։ Շուտով ես վաթսուն տարեկան կդառնամ... Ծեր եմ, միայնակ, անպետք... Իմ մեջ ոչ մի լավ բան չկա, բացի ձեր նկատմամբ ունեցածս սիրուց, և եթե դուք չլինեիք, ես վա-

ղուց հրաժեշտ տված կլինեի կյանքիս։ (Իրինային) *Սիրելիս, դստրիկս, ես ձեզ գիտեի ձեր ծննդյան օրից... Այնքան եմ ձեզ գրկած ման ածել։ Ես սիրում էի ձեր հանգուցյալ մորը։*

ԻՐԻՆԱ — Բայց ինչո՞ւ համար են այսպիսի թանկարժեք նվերները։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (արցունքների միջից, բարկացած) *Թանկարժեք նվերներ... Դե դուք էլ...* (սպասյակին) *Տար ինքնաեռը...* (Տնազ է անում)։ *Թանկարժեք նվերներ...*

Սպասյակը իճճաները տանում է դահլիճ։

ԱՆՖԻՍԱ — (հյուրասենյակով անցնելիս) *Մի անծանոթ գնդապետ է եկել։ Արդեն հանել է վերարկուն, ներս է գալիս։ Արի-նուշկա, քնքուշ եղիր, բարեհամբույր...* (հեռանում է)։ *Եվ նախաճաշելու ժամն է արդեն։ Տեր աստված...*

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Երևի Վերշինինն է։

Ներս է գալիս Վերշինինը։

Փոխգնդապե՛տ Վերշինին։

ՎԵՐՇԻՆԻՆ — (Մաշային և Իրինային) *Պատիվ ունեմ ներկայանալու. Վերշինին։ Շատ-շատ ուրախ եմ, որ վերջապես այցելեցի ձեզ։ Ինչքա՞ն եք մեծացել... Այ-այ-այ...*

ԻՐԻՆԱ — Նստեցեք, խնդրեմ։ Շատ հաճելի է։

ՎԵՐՇԻՆԻՆ — (ուրախ) *Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ։ Բայց դուք երեքն եք, չէ՞։ Հիշում եմ՝ երեք քույր էիք։ Դեմքներդ չեմ հիշում արդեն, բայց որ ձեր հայրը՝ գնդապետ Պրոզորովը երեք աղջիկ ուներ, գերազանց եմ հիշում։ Ինչպես է անցնում ժամանակը, օ՜յ, օ՜յ, օ՜յ, ինչպես է անցնում...*

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ալեքսանդր Իգնատիևիչը Մոսկվայից է։

ԻՐԻՆԱ — Մոսկվայի՞ց։ Դուք Մոսկվայի՞ց եք։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այո, այնտեղից։ Ձեր հանգուցյալ հայրն այնտեղ մարտկոցի հրամանատար էր, իսկ ես նույն բրիգադում՝ սպա։ (Մաշային)։ *Ահա, ձեր դեմքը փոքր-ինչ հիշեցի։*

ՄԱՇԱ — Իսկ ես ձեզ չեմ հիշում։

ԻՐԻՆԱ — Օլյա, Օլյա... (Բղավում է դահլիճի կողմը)։ *Օլյա, շուտ արի...* (Օլգան հյուրասենյակ է մտնում)։ *Պարզվում է, որ փոխգնդապետ Վերշինինը Մոսկվայից է։*

ՎԵՐՇԻՆԻՆ — Ուրեմն, դուք Օլգա Սերգեևնան եք՝ ավագը, իսկ դուք՝ Մարիան։ Դուք էլ Իրինան՝ կրտսերը...

ՕԼԳԱ — Դուք Մոսկվայի՞ց եք։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այո։ Սովորել եմ Մոսկվայում, ծառայությունս սկսել այնտեղ... Երկար եմ ծառայել Մոսկվայում։ Վերջապես մարտկոց ստացա և, ահա, ինչպես տեսնում եք, այստեղ եմ։ Ես ձեզ չեմ հիշում, միայն հիշում եմ, որ երեք քույր էիք։ Ձեր հայրն է մնացել հիշողությանս մեջ. եթե փակեմ աչքերս, իսկույն կտեսնեմ նրան։ Ես Մոսկվայում եղել եմ ձեր տանը...

ՕԼԳԱ — Ինձ թվում էր, թե հիշում եմ բոլորին և հանկարծ...

ՎԵՐՇԻՆԻՆ — Ինձ կոչում են Ալեքսանդր Իգնատևիչ...

ԻՐԻՆԱ — Ալեքսանդր Իգնատևիչ, դուք Մոսկվայից եք... Այ քեզ անակնկալ...

ՕԼԳԱ — Մենք տեղափոխվում ենք Մոսկվա։

ԻՐԻՆԱ — Կարծում ենք՝ աշնանը այնտեղ կլինենք։ Մեր հարազատ քաղաքում։ Մենք այնտեղ ենք ծնվել։ Ստարայա Բասմաննայա փողոցում։ (Երկուսով ծիծաղում են ուրախությունից:

ՄԱՇԱ — (աշխույժով) Հիմա հիշեցի... Հիշո՞ւմ ես, Օլգա, մեր տանը մեկին «սիրահարված մայոր» էին կոչում։ Դուք այն ժամանակ պորուչիկ էիք, և չեմ հիշում, թե ում վրա սիրահարված։ Եվ ձեզ բոլորը ձեռք էին առնում, չգիտես ինչու «մայոր» էին կոչում։

ՎԵՐՇԻՆԻՆ — (ծիծաղում է) Այո, այո, «սիրահարված մայոր», ճիշտ այդպես...

ՄԱՇԱ — Այն ժամանակ դուք միայն բեղ ունեիք... Օ, ինչպես եք ծերացել։ (Արցունքների միջից): Ինչպե՞ս եք ծերացել։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այո, երբ ինձ կոչում էին սիրահարված մայոր, ես ջահել էի ու սիրահարված։ Հիմա այն չեմ։

ՕԼԳԱ — Դուք ոչ մի ճերմակ մազ չունեք։ Դուք ծերացել եք, բայց դեռ ծեր չեք։

ՎԵՐՇԻՆԻՆ — Արդեն քառասուներեք տարեկան եմ։ Վաղո՞ւց եք դուրս եկել Մոսկվայից։

ԻՐԻՆԱ — Տասնմեկ տարի առաջ։ Ինչո՞ւ ես լալիս, Մաշա, գժուկ... (Արցունքների միջից): Ես էլ լաց կլինեմ...

ՄԱՇԱ — Ոչինչ, ոչինչ... Իսկ դուք ո՞ր փողոցում էիք ապրում։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ստարայա Բասմաննայա։

ՕԼԳԱ — Մենք էլ՝ այնտեղ...

ՎԵՐՇԻՆԻՆ — Մի ժամանակ ապրում էի Նեմեցկայա փողոցում։

Այնտեղից էի գնում Կարմիր զորանոցներ։ Ճանապարհին մոտալ մի կամուրջ կար, կամրջի տակ աղմկում էր ջուրը։ Միայնակ մարդու համար շատ տխուր էր։

Դադար:

Իսկ այստեղ ինչ լայն, ինչ շռայլ գետ է։ Հրաշալի գետ է։

ՕԼԳԱ — Այո, միայն թե ցուրտ է։ Ցուրտ է և շատ մոծակներ կան։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ի՞նչ եք ասում... Այնքան առողջ, գեղեցիկ, սլավոնական բնություն է այստեղ։ Անտառ, գետ... Կեչիներ կան... Քնքուշ, համեստ կեչիներ... Ծառերից ամենաշատը ես կեչին եմ սիրում։ Այստեղ հրաշալի կարելի է ապրել։ Միայն տարօրինակ է, որ երկաթուղային կայարանը քսան կիլոմետրի վրա է։ Եվ ոչ ոք չգիտե, թե ինչու է այդպես։

ՍՈԼՅՈՆԻ — Իսկ ես գիտեմ։

Բոլորը նրան են նայում։

Որովհետև՝ եթե կայարանը մոտիկ լիներ, ապա չէր լինի հեռու։ Բայց քանի որ հեռու է, նշանակում է՝ մոտիկ չէ։

Անհարմար լռություն:

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Կատակում ես, Վասիլի Վասիլիչ։

ՕԼԳԱ — Հիմա ես ձեզ հիշեցի, հիշեցի։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ես ձեր մորը գիտեի։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Լավ կին էր, աստված հոգին լուսավորի։

ԻՐԻՆԱ — Մայրիկը Մոսկվայում է թաղված։

ՕԼԳԱ — Նովոդեվիչյե գերեզմանատանը։

ՄԱՇԱ — Պատկերացնո՞ւմ եք, ես արդեն սկսում եմ մոռանալ նրա դեմքը։ Ճիշտ այդպես էլ մեզ չեն հիշի։ Կմոռանան։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այո, կմոռանան։ Այդպիսին է մեր ճակատագիրը։ Եվ ոչինչ չես կարող փոխել։ Այն, ինչ մեզ թվում է լուրջ, կարևոր, երբ ժամանակը գա, կմոռացվի կամ կդառնա անկարևոր։

Դադար։

Եվ հետաքրքիր է, չէ՞. հիմա մենք բոլորովին չենք կարող գուշակել, թե ինչն է համարվելու վեհ, կարևոր, ինչը՝ խրոխտ, անհեթեթ։ Կոպեռնիկոսի և կամ, ասենք, Կոլումբոսի

հայտնագործությունները մի՞թե ժամանակին անօգտակար և ծիծաղելի չէին։ Իսկ ինչ-որ մի խելառի գրած դատարկաբանությունը ճշմարտության համարում ուներ։ Եվ հնարավոր է, որ այսօրվա մեր կյանքը, ինչին մենք հաշտվել ենք, ժամանակի ընթացքում թվա տարօրինակ, անհարմար, անգիտակից, ոչ բավարար մաքուր, գուցեև մեղսալի...

ՏՈՒՉԵՆԲԱԽ — Ո՞վ գիտե։ Գուցեև մեր կյանքը կոչեն բարձր, վեհ և հիշեն մեզ հարգանքով։ Հիմա չկան մարմնական պատիժներ, մահապատիժներ, ավերիչ արշավանքներ, բայց և այնպես, որքան շատ է տառապանքը։

ՍՈԼՅՈՆԻ — (բարակ ձայնով) Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ... Բարոնին շիլա մի տուր, թույլ տուր միայն փիլիսոփայել։

ՏՈՒՉԵՆԲԱԽ — Վասիլի Վասիլիչ, խնդրում եմ ինձ հանգիստ թողնեք։ (Նստում է մի այլ աթոռի)։ Վերջապես ձանձրալի է այս ամենը։

ՍՈԼՅՈՆԻ — (բարակ ձայնով) Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ...

ՏՈՒՉԵՆԲԱԽ — (Վերշինինին)։ Տառապանքը, որ նկատելի է այսօր, այնուամենայնիվ մատնանշում է բարոյական այն մակարդակը, ինչին հասել է հասարակությունը։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այո՛, այո՛, իհարկե՛։

ՋԵՖՈՒՏԻԿԻՆ — Դուք քիչ առաջ ասացիք, բարոն, թե մեր կյանքը կհամարեն բարձր, վեհ, բայց մարդիկ, առայժմ ցածր են։ (Ոտքի է կանգնում)։ Տեսեք, թե ինչ ցածրահասակն եմ ես։ Ինձ մխիթարելու համար է պետք ասել, թե կյանքս բարձրը է, վեհ։

Թեմից այն կողմ ջութակի նվագ է լսվում։

ՄԱՇԱ — Անդրեյն է նվագում, մեր եղբայրը։

ԻՐԻՆԱ — Նա գիտության մարդ է։ Հավանաբար, պրոֆեսոր կդառնա։ Հայրը զինվորական էր, իսկ որդին ընտրեց գիտության ուղին։

ՄԱՇԱ — Հայրիկի ցանկությամբ։

ՕԼԳԱ — Այսօր մենք փոքր-ինչ խաղացել ենք նրա հոգու հետ։ Նա կարծես թե սիրահարված է։

ԻՐԻՆԱ — Տեղացի մի օրիորդի։ Ամենայն հավանականությամբ նա այսօր մեր հյուրը կլինի։

ՄԱՇԱ — Ախ, ինչպես է նա հագնվում։ Ոչ թե տգեղ, անճաշակ, այլ, պարզապես՝ խղճուկ։ Վառ, դեղնավուն, գռեհիկ ծոպե-

բով մի տարօրինակ փեշ է հագնում և կարմիր կոֆտա։ Իսկ այտերն այնպես մաքուր են, այնպես մաքուր... Անդրեյը սիրահարված չէ, անհնար է երևակայել, չէ, նա ճաշակ ունի, նա մեզ պարզապես ձեռ է առնում։ Ես երեկ լսեցի, որ մեր հարսնացուն ամուսնանալու է նախագահ Պրոտոպոպովի հետ։ Եվ հրաշալի կլինի... (Կողքի դռան կողմը)։ Անդրեյ, մեզ մոտ արի։ Մի բոպեով, սիրելիս...

Գալիս է Անդրեյը։

ՕԼԳԱ — Իմ եղբայրն է, Անդրեյ Սերգեևիչը։

ՎԵՐՇԻՆԻՆ — Վերշինին։

ԱՆԴՐԵՅ — Պրոզորով։ (Մաքրում է քրտնած դեմքը)։ Դուք մեր մարտկոցի հրամանատա՞րն եք։

ՕԼԳԱ — Պատկերացնո՞ւմ ես. Ալեքսանդր Իգնատիչը Մոսկվայից է։

ԱՆԴՐԵՅ — Այո՞։ Դեհ, շնորհավորում եմ։ Հիմա քույրերս ձեզ հանգիստ չեն տա։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ես արդեն հասցրեցի ձանձրացնել նրանց։

ԻՐԻՆԱ — Տեսեք, թե այսօր նկարի ինչպիսի շրջանակ է նվիրել ինձ Անդրեյը։ (Ցույց է տալիս շրջանակը)։ Ինքն է պատրաստել։

ՎԵՐՇԻՆԻՆ — (պահելով շրջանակը և շիմանալով ինչ ասի) Այո, լավ գործ է...

ԻՐԻՆԱ — Եվ, այ, այն շրջանակը, որ դաշնամուրի տակ է, էլի ինքն է պատրաստել։

Անդրեյը թափ է տալիս ձեռքը, հեռանում է։

ՕԼԳԱ — Նա և՛ գիտնական է, և՛ ջութակ է նվագում, և՛ հազար ու մի տեսակ բաներ է պատրաստում, մի խոսքով, ոսկի ձեռքեր ունի։ Անդրեյ, մի գնա։ Անվերջ փախչում է։ Մո՛տ արի։

Մաշան և Իրինան բռնում են եղբոր ձեռքերից, նետ են բերում։

ՄԱՇԱ — Արի, արի։

ԱՆԴՐԵՅ — Թողեք, խնդրում եմ։

ՄԱՇԱ — Ինչ ծիծաղելին ես։ Ալեքսանդր Իգնատիչին մի ժամանակ անվանում էին սիրահարված մայոր, և նա բոլորովին չէր բարկանում։

ՎԵՐՇԻՆԻՆ — Բոլորովին։

ՄԱՇԱ — Իսկ քեզ ես ուզում եմ կոչել սիրահարված ջութակահար։

ԻՐԻՆԱ — Կամ՝ սիրահարված պրոֆեսոր։

ՕԼԳԱ — Նա սիրահարված է։ Անդրյուշան սիրահարված է։

ԻՐԻՆԱ — Բրա՜վո, բրա՜վո, բի՜ս։ Անդրյուշան սիրահարված է։ (Ծափահարում է)։

ՋԵԲՈՒՏԻԿԻՆ— (ետևից մոտենում է Անդրեյին ու բռնում նրա կոնֆիթը)։ Սիրո համար է միայն մայր բնությունը մեզ աշխարհ բերել։ (Քրքջում է։ Նա անբաժան է լրագրից)։

ԱՆԴՐԵՅ — Դե, բավական է, բավական է։ (Մաքրում է գեմմի քրտինքը)։ Ես ողջ գիշերը չեմ քնել և հիմա լավ չեմ զգում ինձ։ Մինչև չորսը կարդում էի, հետո պառկեցի, բայց չկարողացա քնել։ Մտածում էի հազար ու մի հարցի շուրջ, իսկ այս կողմերում լույսը շուտ է բացվում, արևը պարզապես ննջարանդ է խցկվում։ Ամառվա ընթացքում, քանի դեռ այստեղ եմ, ցանկանում եմ թարգմանել անգլիական մի գիրք։

ՎԵՐՇԻՆԻՆ — Դուք կարդո՞ւմ եք անգլերեն։

ԱՆԴՐԵՅ — Այո։ Հայրս, աստված հոգին լուսավորի, նեղում էր մեզ դաստիարակությամբ։ Ասածս երևի ծիծաղելի է և հիմարություն, բայց պետք է խոստովանեմ, որ նրա մահից հետո ես սկսեցի լցվել, գիրացա մեկ տարվա ընթացքում, կարծես թե մարմինս ազատագրվել էր ճնշումից։ Հորս շնորհիվ ես և քույրերս գիտենք ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն, իսկ Իրինան նաև՝ իտալերեն։ Բայց ի՞նչ գնով...

ՄԱՇԱ — Այս քաղաքում երեք լեզու իմանալն ավելորդ շռայլություն է։ Նույնիսկ, ոչ թե շռայլություն, այլ մի տեսակ անպետք հավելուկ։ Վեցերորդ մատի պես մի բան։ Մենք ավելորդ շատ բան գիտենք։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ա՜յ քեզ բան։ (Ծիծաղում է)։ Ավելորդ շա՞տ բան գիտեք։ Ես կարծում եմ, որ չկա մի այնպիսի ձանձրալի ու խուլ քաղաք, որտեղ պետք չլինի խելոք, կրթված մարդ։ Ասենք թե իսկապես հետամնաց ու կոպիտ այս քաղաքի հարյուր հազար բնակիչներից միայն դուք եք ձեզ նման։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ դուք չեք հաղթի շրջապատի խավարի դեմ պայքարում։ Ձեր կյանքի ընթացքում դուք աստիճանաբար պետք է դիջեք և լուծվեք հարյուրհազարանոց ամբոխի մեջ։ Կյանքը ձեզ կխլացնի։ Բայց և այնպես դուք չեք անհետանա, կթողնեք ձեր ազդեցությունը։ Ձեզանից հետո ձեր նմանները կլինեն դուցե վեց հոգի, հետո՝ տասներկուսը և այդպես շարունակ, մինչև որ թվով կսկսեք գերակշռել։ Երկու, երեք հարյուր տարի անց կյանքը երկրի վրա կլինի աներևակայելիորեն գեղեցիկ, հրաշալի։ Մարդուն այդպիսի կյանք է պետք, բայց քանի դեռ չկա, պիտի նախազգալ այդ կյանքը, պիտի սպասել, երազել, պատրաստվել։ Ահա թե ինչու մարդը պիտի տեսնի ու իմանա ավելին, քան տեսել և իմացել են նրա պապն ու հայրը։ (Ծիծաղում է)։ Իսկ դուք բողոքում եք, թե ավելորդ շատ բաներ գիտեք։

ՄԱՇԱ — (ճանում է գլխարկը) Ես մնում եմ նախաճաշին։

ԻՐԻՆԱ — (խոր շունչ քաշելով)— Այս խոսքերը պետք էր գրի առնել։

Անդրեյը չկա, նա աննկատ հեռացել է։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Շատ տարիներ հետո, ասում եք, կյանքը երկրի վրա կլինի գեղեցիկ, հրաշալի։ Ճիշտ է։ Բայց որպեսզի մասնակցես այդ կյանքին, հիմա, թեկուզև հեռվից, հարկավոր է նախապատրաստվել, հարկավոր է աշխատել...

ՎԵՐՇԻՆԻՆ — (ոտքի է ելնում) Այո։ Որքա՜ն ծաղիկներ ունեք։ (Շուրջն է նայում)։ Եվ բնակարանն է հարմարավետ։ Նախանձում եմ։ Իմ ողջ կյանքում ես բնակարանից բնակարան եմ տեղափոխվել երկու աթոռով, մեկ բազմոցով և անվերջ ծխացող վառարանով։ Իմ ամբողջ կյանքում ես միշտ այ հենց այս ծաղիկների պակասն եմ զգացել։ Էհ, ինչ արած...

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Այո, հարկավոր է աշխատել։ Դուք, հավանաբար, մտածում եք, թե հուզվեց գերմանացին։ Բայց ես, ազնիվ խոսք, ռուս եմ և գերմաներեն չգիտեմ էլ։ Հայրս ուղղափառ էր...

Դադար։

ՎԵՐՇԻՆԻՆ — (քայլում է բեմում) Ես հաճախ եմ մտածում. ի՞նչ կլիներ, եթե մենք նորից սկսեինք կյանքը՝ այս անգամ գիտակցորեն։ Եթե մի կյանքը, այն, որ արդեն ապրված է,

լիներ, ինչպես ասում են, սեագիր, իսկ մյուսը՝ մաքրագիր։ Կարծում եմ, մեզանից յուրաքանչյուրը կչանար նախ և առաջ չկրկնել իրեն, կստեղծեր կյանքի այլ պայմաններ, կկահավորեր մի այսպիսի լուսավոր բնակարան՝ ծաղիկներով... Ես կին ունեմ, երկու դուստր, ըստ որում, կինս վատառողջ է և այլն, և այլն, բայց այ, եթե կյանքս սկսեի նորից, ապա չէի ամուսնանա... Ոչ... Ոչ...

Ներս է գալիս Կուլիգինը՝ ֆրակը հագին։

ԿՈՒԼԻԳԻՆ — (մոտենում է Իրինային)։ *Թանկագին քույրս, թույլ տուր շնորհավորել քեզ, իմ հրեշտակին, և անկեղծ, սրտանց ցանկանալ առողջություն ու այն ամենը, ինչ կարելի է մաղթել քո տարիքի աղջկան։ Եվ հետո թույլ տուր նվիրել քեզ ահա այս գրքույկը։* (Տալիս է գիրքը)։ *Ձեր գիմնազիայի հիսնամյա տարեգրությունն է՝ իմ հեղինակությամբ։ Դատարկ գիրք է, գրված պարապությունից, բայց դու, այդուհանդերձ, կարդա։ Բարև, պարոնայք։* (Վերջինիներին)։ *Կուլիգին, տեղիս գիմնազիայի ուսուցիչ։ Արքունի խորհրդական։* (Իրինային)։ *Այդ գրքում դու կգտնես հիսուն տարում գիմնազիան ավարտածների ցուցակը։* Feci, quod potui, faciant meliora potentes[1]։ (Համբուրում է Մաշային)։

ԻՐԻՆԱ — *Բայց անցած զատիկին դու արդեն նվիրել ես ինձ այս գրքից։*

ԿՈՒԼԻԳԻՆ — (ծիծաղում է)։ *Չի կարող պատահել։ Այդ դեպքում հետ տուր կամ, ավելի լավ է, նվիրիր գնդապետին։ Վերցրեք, գնդապետ։ Օրերից մի օր ձանձրույթից կկարդաք։*

ՎԵՐՇԻՆԻՆ — *Շնորհակալ եմ։* (Պատրաստվում է գնալ)։ *Ես արտակարգ ուրախ եմ ծանոթության համար...*

ՕԼԳԱ — *Գնո՞ւմ եք։ Ոչ, ոչ։*

ԻՐԻՆԱ — *Դուք կնախաճաշե՞ք մեզ հետ։ Խնդրում եմ։*

ՕԼԳԱ — *Խնդրում եմ։*

ՎԵՐՇԻՆԻՆ — (գլուխ է տալիս)։ *Ես, ինչպես երևում է, անվանակոչության եմ եկել։ Ներեցեք, չգիտեի ու չշնորհավորեցի ձեզ...* (Օլգայի հետ մտնում է դահլիճ)։

[1] *Արեցի ինչ կարող էի, ով կարող է, թող ավելին անի (լատ.)։*

ԿՈՒԼԻԳԻՆ — *Այսօր, պարոնայք, կիրակի է, հանգստյան օր, եկեք, ուրեմն, հանգստանանք ու զվարճանանք յուրաքանչյուրս մեր տարիքին ու դիրքին համապատասխան։ Գորգերն ամռանը պետք է հավաքել ու պահել մինչև ձմեռ։ Պարսկական փոշի կամ նավթալին ցանել վրան... Հռոմեացիները առողջ էին, որովհետև թե աշխատել գիտեին և թե՝ հանգստանալ։ Նրանք ունեին* mens sana in corpore sano[1]։ *Նրանց կյանքը հոսում էր ծանոթ հունով։ Մեր դիրեկտորն ասում է. գլխավորը կյանքի ձևն է։ Ամեն բան ավարտվում է, երբ կորցնում է իր ձևը։ Մեր առօրյա կյանքում էլ նույնն է։* (Ծիծաղելով բռնում է Մաշայի կոնքից)։ *Մաշան ինձ սիրում է։ Իմ կինը սիրում է ինձ։ Լուսամուտի վարագույրները նույնպես պետք է գորգերի հետ պահել մինչև ձմեռ... Այսօր ես ուրախ եմ, գերազանց տրամադրությամբ։ Մաշա, ժամը չորսին հավաքվում ենք դիրեկտորի մոտ։ Մանկավարժների և նրանց ընտանիքների զբոսանք է նախատեսված։*

ՄԱՇԱ — *Ես չեմ գա։*

ԿՈՒԼԻԳԻՆ — (վշտացած)։ *Թանկագինս... Ինչո՞ւ...*

ՄԱՇԱ — *Բացատրությունը հետո...* (բարկացած)։ *Լավ, կգամ, միայն թե, խնդրում եմ, հանգիստ թող ինձ։* (Հեռանում է)։

ԿՈՒԼԻԳԻՆ — *Երեկոն շարունակելու ենք դիրեկտորի տանը։ Ձնայած իր տկար վիճակին, այդ մարդը ջանում է առաջին հերթին պիտանի լինել հասարակությանը։ Հրաշալի, լուսավոր անձնավորություն է։ Հոյակապ մարդ։ Երեկ, խորհրդից հետո նա ինձ ասաց. «Հոգնել եմ, Ֆյոդոր Իլյիչ, հոգնել եմ»։* (Նայում է պատի ժամացույցին, հետո իր թևի կապածին)։ *Ձեր ժամացույցը շտապում է ուղիղ յոթ րոպեով։ Հա, ասաց, հոգնել եմ։*

Թեմի հետևում ջութակ են նվագում։

ՕԼԳԱ — *Պարոնայք, հրամեցեք նախաճաշի։ Կարկանդակ է մատուցվելու։*

ԿՈՒԼԻԳԻՆ — *Ախ, թանկագին իմ Օլգա։ Երեկ ես աշխատել եմ*

[1] *Առողջ հոգի՝ առողջ մարմնի մեջ (լատ.)։*

առավոտից մինչև երեկոյան տասնմեկը, հոգնել եմ, իսկ այսօր ինձ երջանիկ եմ զգում։ (Մտնում է դանլիճ, ուր սեղանն է)։ Թանկագինս...

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — (լրագիրը գրպանն է խցկում, սաճառում է մորուքը) Կարկանդա՞կ։ Հրաշալի է։

ՄԱՇԱ — (Ձեբուտիկինին, խիստ) Տեսեք, հա՜, այսօր ոչինչ չխմեք։ Լսո՞ւմ եք։ Ձեզ չի կարելի։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Էվա... Ամեն ինչ անցել է։ Երկու տարի է գինարբուքի մեջ չեմ ընկել։ (Անհամբեր)։ Էհ, քույրս, մի՞թե միևնույն չէ։

ՄԱՇԱ — Ինչ որ է, չհամարձակվեք խմել։ Չփորձեք։ (Բարկացած, բայց այնպես, որ ամուսինը չլսի)։ Սատանան տանի, էլի ամբողջ մի երեկո պիտի ձանձրանամ դիրեկտորի տանը։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ես ձեր փոխարեն լինեի՝ չէի գնա։ Չէի գնա ու վերջ։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Մի գնացեք, անուշիկս։

ՄԱՇԱ — Հա, մի գնացեք... Այս անիծած, անտանելի կյանքը... (Մտնում է դանլիճ)։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — (գնում է նրա հետևից) Նո՜ւ...ո՜ւ...

ՍՈԼՅՈՆԻ — (դանլիճ մտնելով) Ջու-ջու-ջու...

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Բավական է, Վասիլի Վասիլիչ։ Վե՛րջ տվեք։

ՍՈԼՅՈՆԻ — Ջու-ջու-ջու...

ԿՈՒԼԻԳԻՆ — (ուրախ) Ձեր կենացը, գնդապետ։ Ես մանկավարժ եմ և այս տանը՝ յուրային։ Մաշայի ամուսինն եմ... Նա բարի, շատ բարի կին է...

ՎԵՐՇԻՆԻՆ — Ես կխմեմ այ այս մուգ օդին... (խմում է) Ձեր կենացը։ (Սոլյային) Ձեր տանը շատ հաճելի է։

Հյուրասենյակում մնում են Իրինան և Տուզենբախը։

ԻՐԻՆԱ — Մաշան այսօր մոայլ է։ Նա ամուսնացավ տասնյոթ տարեկանում, և այն ժամանակ Կուլիգինը ամենախելացի տղամարդն էր թվում նրան։ Իսկ հիմա ուրիշ է։ Կուլիգինը ամենաբարին է, բայց ամենախելացին չէ...

ՕԼԳԱ — (անհամբեր) Անդրեյ, դե արի վերջապես...

ԱՆԴՐԵՅ — (բեմից դուրս) Հիմա։ (Մտնում է ներս և մոտենում սեղանին)։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ի՞նչ եք մտածում։

ԻՐԻՆԱ — Հենց այնպես։ Ես չեմ սիրում ձեր այդ Սոլյոնիին. և

վախենում եմ նրանից։ Նա միայն հիմարություններ է դուրս տալիս։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Տարօրինակ մարդ է։ Ես և խղճում եմ նրան և ցավում նրա համար, բայց ամենից շատ ափսոսում եմ։ Ինձ թվում է՝ նա ամաչկոտ է։ Երբ երկուսով ենք լինում, շատ խելոքն է ու քնքուշ, իսկ հասարակության մեջ կոպիտ է գռեհիկ, կովազան։ Մի գնացեք, քանի դեռ սեղան չեն նստել։ Թույլ տվեք մնալ ձեզ մոտ։ Ի՞նչ եք մտածում։

Դադար։

Դուք քսան տարեկան եք, իմ երեսունը դեռ չի լրացել։ Քանի՞ տարի է մնացել առջևում, ձեր նկատմամբ իմ սիրով լեցուն քանի՜-քանի՜ օրերի երկար շարան։

ԻՐԻՆԱ — Նիկոլայ Լվովիչ, ինձ հետ մի խոսեք սիրուց։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (չլսելով) Ես ապրելու, պայքարելու, աշխատելու կրքոտ ծարավ ունեմ և այդ ծարավը հիմա խառնված է ձեր նկատմամբ ունեցածս սիրո հետ, Իրինա, իսկ դուք, հակառակի պես, շատ եք գեղեցիկ, և կյանքն էլ հիասքանչ է թվում։ Ի՞նչ եք մտածում։

ԻՐԻՆԱ — Դուք ասում եք՝ հիասքանչ է կյանքը։ Այո, բայց եթե թվում է թե այդպիսին է։ Մեր երեք քրոջ համար կյանքը դեռ չի եղել հիասքանչ, կյանքը, մոլախոտի պես, խեղդել է մեզ... (Արագորեն սրբում է դեմքը, ժպտում) Աշխատել է պետք, աշխատել։ Տխուր ենք և կյանքին նայում ենք մռայլորեն, որովհետև չգիտենք, թե ինչ բան է աշխատանքը։ Մենք ծընվել ենք աշխատանքն արհամարհող մարդկանցից...

Ներս է գալիս Նատալյա Իվանովնան։ Նա վարդագույն զգեստով է և կանաչ գոտիով։

ՆԱՏԱՇԱ — Արդեն սեղան են նստել... Ուշացա... (Նայում է հայելուն, շտկում է մազերը, զգեստը) Կարծես վատ չեմ սանրված։ (Տեսնելով Իրինային) Թանկագին Իրինա Սերգեևնա, շնորհավորում եմ ձեզ։ (Համբուրում է ամուր և երկար) Դուք շատ հյուրեր ունեք, ես անհարմար եմ զգում... Բարև ձեզ, բարոն...

ՕԼԳԱ — (հյուրասենյակ մտնելով) Ահա և Նատալյա Իվանովնան։ Բարև, սիրելիս։

Համբուրվում են։

ՆԱՏԱԼՅԱ — Շնորհավորում եմ։ Այնքան մեծ հասարակություն է հավաքվել, որ ես շփոթվում եմ...

ՕԼԳԱ — Հանգստացիր, բոլորն էլ մերոնք են։ (Կիսաձայն, վախեցած) Կանաչ գոտի՞ եք կապել։ Լավ չէ, սիրելիս։

ՆԱՏԱՇԱ — Ինչ է, վա՞տ նշան է։

ՕԼԳԱ — Չէ, պարզապես, չի սազում։ Եվ մի տեսակ տարօրինակ է։

ՆԱՏԱՇԱ — (լալկան ձայնով) Այո՞։ Բայց այնքան էլ կանաչ չի։ Ավելի ճիշտ՝ փայլատ է։ (Օլգայի ետևից դանլին է մտնում):

Դանլինում սեղան են նստում: Հյուրասենյակում ոչ ոք չկա:

ԿՈՒԼԻԳԻՆ — Քեզ, Իրինա, ցանկանում եմ մի լավ փեսացու։ Ժամանակն է քեզ պսակելու։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Նատալյա Իվանովնա, ձեզ էլ ենք փեսացու ցանկանում։

ԿՈՒԼԻԳԻՆ — Նատալյա Իվանովնան արդեն ունի փեսացու։

ՄԱՇԱ — (պատառամաղով խփում է ափսեին) Մի գավաթ գինի եմ խմելու։ Ի՞նչ ունենք կորցնելու։

ԿՈՒԼԻԳԻՆ — Վարքիդ համար ես քեզ երեքից հանած եմ նշանակում։

ՎԵՐՇԻՆԻՆ — Թրմօղին համեղ էր։ Ինչի՞ թուրմ է։

ՍՈԼՅՈՆԻ — Փայտաճճվի։

ԻՐԻՆԱ — (լալկան ձայնով) Թու-թու... ի՜նչ զզվելի բան...

ՕԼԳԱ — Ընթրիքին կհյուրասիրեմ տապակած հնդուհավով և խընձորի քաղցր կարկանդակով։ Փառք աստծո, այսօր տանն եմ, երեկոյան էլ... Պարոնայք, երեկոյան համեցեք...

ՎԵՐՇԻՆԻՆ — Եթե թույլ տաք՝ ես էլ կգամ։

ԻՐԻՆԱ — Խնդրեմ։

ՆԱՏԱՇԱ — Նրանց դուռը միշտ բաց է։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Սիրո համար է մեզ մայր բնությունը լույս աշխարհ բերել։ (Միծաղում է):

ԱՆԴՐԵՅ — (բարկացած) Վե՛րջ տվեք, պարոնայք։ Չձանձրացա՞ք։

Ֆեդոտիկն ու Ռոդեն ներս են բերում մի մեծ ծաղկեզամբյուղ:

ՖԵԴՈՏԻԿ — Արդեն նախաճաշում են։

ՌՈԴԵ — (բարձրաձայն և թլվատ) Նախաճաշո՞ւմ են։ Այո, արդեն ուտում են։

ՖԵԴՈՏԻԿ — Մի բոպե սպասիր։ (Հանում է լուսանկարչական սարքը) Մե՛կ։ Մի քիչ էլ սպասիր։ (Մի անգամ էլ է նկարում) Երկո՛ւ... և... պատրաստ է...

Վերցնում են զամբյուղը, մտնում դանլին: Նրանց դիմավորում են աղմուկով:

ՌՈԴԵ — (բարձրաձայն) Շնորհավորում եմ, ցանկանում ամենայն, ամենայն... Եղանակն այսօր հրաշալի է, հոյակապ... Առավոտյան զբոսնել եմ գիմնազիստների հետ։ Ես գիմնազիայում մարմնամարզություն եմ դասավանդում։

ՖԵԴՈՏԻԿ — Կարող եք շարժվել, Իրինա Սերգեևնա, կարող եք։ (Նկարում է) Այսօր դուք շատ գրավիչ եք։ (Գրպանից հոլ է հանում) Ահա, ձեզ հոլ եմ բերել... Զարմանալի ձայն է արձակում։

ԻՐԻՆԱ — Ինչ լավն է։

ՄԱՇԱ — Ծովախորշի մոտ կանաչ կաղնի կար, ոսկե շղթա էր այդ կաղնուց կախ... Ոսկե շղթա էր այդ կաղնուց կախ... (Լալկան): Ախր, ինչո՞ւ եմ ես սա ասում... Առավոտից կպել է լեզվիս, պոկ չի գալիս...

ԿՈՒԼԻԳԻՆ — Սեղանի շուրջ տասներեք հոգի ենք։

ՌՈԴԵ — (բարձրաձայն) Պարոնայք, մի՞թե դուք կարևորություն եք տալիս նախապաշարմունքներին։

Միծաղ:

ԿՈՒԼԻԳԻՆ — Եթե տասներեք հոգի ենք, նշանակում է մեր մեջ սիրահարներ կան։ Արդյոք դուք չե՞ք, Իվան Ռոմանիչ։

Միծաղ:

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Ես հին մեղսագործ եմ, իսկ, այ, թե ինչու է Նատալյա Իվանովնան հուզված, գլխի չեմ ընկնում։

Բարձր ծիծաղ. Նատալյան փախչում է դանլինից հյուրասենյակ, նրա ետևից՝ Անդրեյը:

ԱՆԴՐԵՅ — Հանգստացեք, ուշադրություն մի դարձրեք։ Սպասեք, սպասեք, խնդրում եմ...

ՆԱՏԱՇԱ — Ես ամաչում եմ... Ես չգիտեմ, թե ինչ է կատարվում ինձ հետ, իսկ նրանք ծիծաղում են վրաս։ Ճիշտ է,

լավ չստացվեց, որ վեր կացա սեղանից, փախա, բայց ես չեմ կարող, չեմ կարող։ (Ձեռքերով ծածկում է դեմքը)։

ԱՆԴՐԵՅ — *Թանկագինս, խնդրում եմ, աղաչում եմ, մի՛ հուզվեք։ Հավատացնում եմ՝ նրանք կատակում են բարեհոգաբար։ Թանկագինս, լավս, նրանք բոլորը բարի, սրտաբաց մարդիկ են և սիրում են ինձ ու ձեզ։ Եկեք այստեղ, լուսամուտի մոտ, այստեղից չենք նկատվի։* (Շուրջն է նայում)։

ՆԱՏԱՇԱ — *Ես սովոր չեմ հասարակության մեջ լինել։*

ԱՆԴՐԵՅ — *Ջահելություն, հրաշալի, գեղեցիկ ջահելություն։ Թանկագինս, լավս, մի՛ հուզվեք այդպես... Հավատացեք ինձ, հավատացեք... Ես այնպես լավ եմ ինձ զգում, հոգիս այնպես լիքն է սիրով, հիացմունքով... Մեզ չեն տեսնում... Չեն տեսնում... Ինչո՞ւ ձեզ սիրեցի... Ե՞րբ սիրեցի, ոչինչ չեմ հասկանում։ Թանկագինս, լավս, մաքուրս, դարձիր իմ կինը։ Ես ձեզ սիրում եմ, սիրում եմ... Երբեք չեմ սիրել այսպես...*

Համբուրվում են։

Երկու սպա են ներս մտնում և, նկատելով համբուրվողներին, ապշած կանգ են առնում։

Վարագույր

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին գործողության կահավորանքը։ Երեկոյան ժամը ութն է։ Թեմից դուրս, փողոցում հարմոն են նվագում։ Լույս չկա։ Մոմը ձեռքին, տնային շորերով հայտնվում է Նատալիա Իվանովնան։ Նա կանգնում է Անդրեյի սենյակի դռան մոտ։

ՆԱՏԱՇԱ — *Ինչո՞վ ես զբաղված, Անդրյուշա։ Կարդո՞ւմ ես։ Ոչինչ, ոչինչ, ես հենց այնպես...* (Քայլում է, բաց է անում մյուս դուռը, ներսը նայելով, կրկին փակում)։ *Կրակ չկա՞...*

ԱՆԴՐԵՅ — (գիրքը ձեռքին դուրս է գալիս) *Ի՞նչ է պատահել, Նատաշա։*

ՆԱՏԱՇԱ — *Հետևում եմ՝ կրակ չկա՞, արդյոք... Բարեկենդան է, սպասուհու խելքը գլխին չէ, պետք է չորս աչքերով հետևես, որ փորձանք չպատահի։ Երեկ, կեսգիշերին անցնում էի ճաշասենյակով, իսկ այնտեղ մոմ էր վառվում։ Թե ով էր վառել, այդպես էլ չիմացա։* (Ամրացնում է մոմը)։ *Ժամը քանի՞սն է։*

ԱՆԴՐԵՅ — (ժամացույցին նայելով) *Ութ անց տասնհինգ րոպե։*

ՆԱՏԱՇԱ — *Իսկ Օլգան և Իրինան դեռ չկան։ Չեն վերադարձել։ Առավոտից աշխատում են խեղճերը։ Օլգան մանկավարժական խորհրդում է, Իրինան՝ հեռագրատանը։* (Հառաչում է)։ *Առավոտյան ասում եմ քրոջդ. «Պահպանիր քեզ, Իրինա, աղավնյակս»։ Չի էլ լսում։ Ութ անց է տասնհինգ, ասում ես։ Մեր Բոբիկը ոնց որ հիվանդ լինի։ Ինչո՞ւ է նա այդպես պաղ։ Երեկ ջերմություն ուներ, իսկ այսօր պաղ է։ Շատ եմ վախենում...*

ԱՆԴՐԵՅ — *Մի մտահոգվիր, Նատաշա։ Տղան առողջ է։*

ՆԱՏԱՇԱ — *Այնուամենայնիվ նա խնամքի կարոտ է։ Ես վախե-*

նում եմ։ Ժամը տասին էլ, ասում են, ծաղրաթափորն է գալու։ Լավ կլիներ չգային այդ դիմակավորները, Անդրյուշա։

ԱՆԴՐԵՅ — Ճիշտն ասած, չգիտեմ... Նրանք, ախր, հրավիրված են։

ՆԱՏԱՇԱ — Այսօր երեխան զարթնեց, նայեց վրաս և հանկարծ ժպտաց։ Նշանակում է՝ ճանաչեց։ «Բոբիկ,— ասում եմ,— Բա՛րև։ Բա՛րև, թանկագինս»։ Իսկ նա ծիծաղում է։ Երեխաներն ամեն ինչ էլ հասկանում են։ Այսպես, ուրեմն, Անդրյուշա, ես կասեմ, որ դիմակավորներին չընդունեն։

ԱՆԴՐԵՅ — (անվճռական) Դա քույրերիս գործն է։ Նրանք են այստեղ տիրուհիները։

ՆԱՏԱՇԱ — Նրանք էլ են, այո։ Ես նրանց էլ կասեմ։ Նրանք բարի են... (Գնում է)։ Ընթրիքին պատվիրել եմ մածուն տալ։ Բժիշկն ասում է, որ քեզ միայն մածուն է պետք, այլապես չես նիհարի։ (Կանգ է առնում)։ Բոբիկը պաղ է։ Նա երևի մրսում է իր սենյակում։ Հարկավոր է, մինչև օրերը տաքանալը, փոխել նրա սենյակը։ Իրինայի սենյակը, օրինակ, իսկը երեխայի համար է։ Եվ չոր է, և ամբողջ օրն արևոտ։ Հարկավոր է ասել Իրինային. նա առայժմ կարող է տեղավորվել Օլգայի սենյակում... Միևնույն է, ցերեկով տանը չի լինում, միայն քնում է այնտեղ...

Դադար։

Անդրյուշանչիկ, ինչո՞ւ ես լռում։

ԱՆԴՐԵՅ — Հենց այնպես... Մտքերի մեջ ընկա... Ասելու բան էլ չկա...

ՆԱՏԱՇԱ — Հա... Ինչ-որ բան էի ուզում ասել քեզ... Հա, վարչությունից Ֆերապոնտն է եկել, քեզ էր հարցնում։

ԱՆԴՐԵՅ — (ճորանջում է) Կանչիր նրան։

Նատաշան գնում է։ Անդրեյը մոմի լույսի տակ կարդում է գիրքը։ Ներս է մտնում Ֆերապոնտը։ Հին, քրքված վերարկու է հագին, վեր ցցված օձիքով, ականջները կապած։

Բարև, հոգյակս։ Ի՞նչ կհրամայես։

ՖԵՐԱՊՈՆՏ — Նախագահը գիրք է ուղարկել և մի գրություն։ Ահա... (Տալիս է գիրքն ու գրությունը)։

ԱՆԴՐԵՅ — Շնորհակալ եմ։ Ապրես։ Բայց ինչո՞ւ ես այսքան ուշ եկել։ Արդեն ինն է դառնում։

ՖԵՐԱՊՈՆՏ — Ի՞նչ։

ԱՆԴՐԵՅ — (բարձրաձայն) Ասում եմ՝ ուշ ես եկել, արդեն ինն է դառնում։

ՖԵՐԱՊՈՆՏ — Ճիշտ այդպես։ Երբ եկա, դեռ լույս էր, բայց ինձ ներս չթողեցին։ Աղան, ասացին, զբաղված է։ Էհ, ինչ արած, զբաղված է, ուրեմն, զբաղված է։ Շտապելու տեղ չունեմ։ (Կարծելով թե Անդրեյը հարց է տալիս)։ Ի՞նչ։

ԱՆԴՐԵՅ — Ոչինչ։ (Գրքին է նայում)։ Վաղն ուրբաթ է, ազատ օրս է, բայց ես, միևնույն է, կգնամ գործի... Զբաղմունք է... Տանը ձանձրալի է...

Դադար։

Սիրելի պապիկ, ինչ տարօրինակորեն է փոխվում և ինչպես է խաբում կյանքը։ Այսօր ձանձրույթից, պարապությունից ձեռքս առա այս գիրքը,— համալսարանական հին դասախոսություններն են,— և... ամեն ինչ աչքիս դարձյալ ծիծաղելի է։ Աստված իմ, ես զեմստվոյական վարչության քարտուղարն եմ, այն վարչության, որտեղ նախագահում է Պրոտոպոպովը։ Քարտուղար եմ, և ամենաշատը, որ կարող եմ հուսալ, վարչության անդամ դառնալն է։ Վարչության անդամ... Ես, որ ամեն գիշեր երազում տեսնում եմ ինձ Մոսկվայան համալսարանի պրոֆեսոր, անվանի գիտնական, որով հպարտանում է ողջ Ռուսաստանը...

ՖԵՐԱՊՈՆՏ — Չգիտեմ... Ես, ախր, վատ եմ լսում...

ԱՆԴՐԵՅ — Եթե լավ լսեիր, ես թերևս չխոսեի։ Ինձ անհրաժեշտ է խոսել որևէ մեկի հետ... Կինս չի հասկանում ինձ, քույրերիցս, չգիտես ինչու, վախենում եմ, թվում է, թե նրանք ձեռք կառնեն, ամոթանք կտան... Ես չեմ խմում, պանդոկներ չեմ սիրում, բայց հիմա ինչպիսի մեծ բավականությամբ կնստեի Մոսկվայան որևէ ռեստորանում, Տեստովի մոտ կամ, ասենք, Մեծ Մոսկվայանում...

ՖԵՐԱՊՈՆՏ — Վարչությունում մի կապալառու ինձ պատմեց, թե ինչպես էին Մոսկվայում մի քանի վաճառականներ բլիթներ կերել։ Մեկը, որ քառասուն հատ էր կերել, իբր մեռել է։ Քառասո՞ւն թե հիսուն... Լավ չեմ հիշում։

ԱՆԴՐԵՅ — Նստած ես ռեստորանի ընդարձակ սրահում և ոչ մե-

էին չգիտես, և քեզ էլ ոչ ոք չգիտե, բայց դու, միևնույն է, օտար չես... Իսկ այստեղ գիտես բոլորին և քեզ գիտեն բոլորը, բայց օտար ես, օտար... օտար և միայնակ։

ՖԵՐԱՊՈՆՏ — Ի՞նչ։

Դադար։

Նույն կապալառուն ասաց նաև,— կարող է և սուտ էր ասում,— թե, իբր, Մոսկվայի լայնքով մի ճոպան է կապված։

ԱՆԴՐԵՅ — Ինչո՞ւ համար։

ՖԵՐԱՊՈՆՏ — Չգիտեմ։ Կապալառուն ասաց։

ԱՆԴՐԵՅ — Հիմարություն է։ (Գիրքն է կարդում)։ Երբևէ եղի՞լ ես Մոսկվայում։

ՖԵՐԱՊՈՆՏ — (դադարից հետո) Չեմ եղել։ Աստված չի կամեցել։ Ես գնա՞մ։

ԱՆԴՐԵՅ — Կարող ես գնալ։ Ողջ եղիր։

Ֆերապոնտը գնում է։

Ողջ եղիր։ (Կարդում է)։ Առավոտյան կգաս, կվերցնես այս թղթերը... Դե, գնա...

Դադար։

Գնաց։

Զանգ։

Հանգիստ չկա... (Զգվում է և անշտապ մոտենում իր սենյակը)։

Բեմից այն կողմ երգում է դայակը, մանկանն է օրորում։ Ներս են գալիս Մաշան և Վերշինինը։ Մինչ նրանք զրուցում են, սպասուհին վառում է լամպը և մոմերը։

ՄԱՇԱ — Չգիտեմ։

Դադար։

Չգիտեմ։ Իհարկե, մեծ ուժ է սովորությունը։ Հորս մահից հետո, օրինակ, մենք երկար ժամանակ զգում էինք սպասյակի պակասը։ Բայց սովորությունից բացի, ինձ թվում է, ներսումս հոսում է նաև արդարամտությունը։ Գուցե այլ վայրերում այդպես չէ, բայց մեր քաղաքում ամենակարգին, ամենաազնիվ և կրթված մարդիկ զինվորականներն են։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ես խմել եմ ուզում։ Թեյ, եթե կարելի է։

ՄԱՇԱ — (ժամացույցին նայելով) Շուտով կտան։ Ինձ ամուսնացրին, երբ տասնյոթ տարեկան էի։ Ես վախենում էի ամուսնուցս, որովհետև նա ուսուցիչ էր, իսկ ես դեռ նոր էի ավարտել դասընթացը։ Այն ժամանակ նա ինձ թվում էր գիտուն, խելոք, իսկ հիմա, ցավոք, այդպես չէ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այդպես, այո...

ՄԱՇԱ — Ամուսնուս թողնենք, ես վարժվել եմ նրան, բայց տեսնք, թե քաղաքացիականների մեջ որքան շատ են կոպիտ, անսիրալիր, անկիրթ մարդիկ։ Ինձ հուզում, վիրավորում է զուսպությունը, ես տառապում եմ նրբանկատության, մեղմության պակասից։ Երբ լինում եմ ամուսնուս ընկերների՝ ուսուցիչների շրջապատում, ես, իրոք, տառապում եմ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այո՞ս... Բայց ինձ թվում է, թե քաղաքացիականն էլ, զինվորականն էլ մեկ են, նույնն են։ Համենայն դեպս այս քաղաքում երկուսն էլ նույն կերպ են ապրում։ Եթե լսես տեղիս մտավորականին՝ քաղաքացիական լինի թե զինվորական, մեկ է, նույն բողոքն է. կամ կնոջ պատճառով է տառապում, կամ տան, կալվածքի, և կամ՝ ձիերի... Ռուս մարդուն հատուկ է վեհ մտածելակերպ, բայց կյանքում, ասացեք խնդրեմ, ինչո՞ւ է նա այդպես քարշ գալիս ներքևում։ Ինչո՞ւ։

ՄԱՇԱ — Ինչո՞ւ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ինչո՞ւ է նա տառապում երեխաների պատճառով, կնոջ պատճառով։ Եվ ինչո՞ւ են կինն ու երեխաները տառապում նրա պատճառով։

ՄԱՇԱ — Դուք այսօր անտրամադի՞ր եք։

ՎԵՐՇԻՆԻՆ — Հնարավոր է։ Այսօր ես չեմ ճաշել, ոչինչ չեմ կերել։ Աղջիկս է հիվանդացել, իսկ երբ հիվանդանում են աղջիկները, ինձ տագնապ է պատում, ինձ տանջում է խիղճը, որ նրանք այդպիսի մայր ունեն։ Օ՜, եթե միայն դուք տեսնեիք նրան այսօր։ Ինչպիսի մանրախնդրություն։ Մենք սկսեցինք կռվել առավոտյան ժամը յոթից, իսկ ժամը ինն էին ես շրխկացրի դուռը ու հեռացա։

Դադար։

Ես երբեք չեմ խոսում այդ մասին, և, տարօրինակ է, լեզուս բացվում է միայն ձեզ մոտ։ (Համբուրում է ձեռքը)։ Մի բարկացեք, խնդրում եմ։ Ձեզանից բացի, ինձ համար ուրիշ մեկը չկա...

ՄԱՇԱ — (դադարից հետո) Ինչպես է աղմկում վառարանը։ Հորը մահից քիչ առաջ խողովակը աղմկում էր ճիշտ այսպես։

ՎԵՐՇԻՆԻՆ — Դուք նախապաշարվա՞ծ եք։

ՄԱՇԱ — Այո։

ՎԵՐՇԻՆԻՆ — Տարօրինակ է։ (Համբուրում է ձեռքը)։ Դուք հրաշալի, զարմանալի կին եք։ Հրաշալի և զարմանալի։ Այստեղ մութ է, բայց ես տեսնում եմ ձեր աչքերի փայլը։

ՄԱՇԱ — (նստում է ուրիշ նստարանին) Այստեղ ավելի լուսավոր է...

ՎԵՐՇԻՆԻՆ — Ես սիրում եմ, սիրում եմ, սիրում եմ... Սիրում եմ ձեր աչքերը, ձեր շարժումները, որ միշտ տեսնում եմ երազում... Հրաշալի, զարմանալի կին։

ՄԱՇԱ — (կամացուկ, ծիծաղելով) Երբ դուք խոսում եք ինձ հետ այդպես, ես, չգիտես ինչու, ծիծաղում եմ, թեև սարսափ եմ ապրում։ Մի՛ կրկնեք, խնդրում եմ... (Կիսաձայն)։ Այսինքն, խոսեք, ինձ համար միևնույն է... (Դեմքը ծածկում է ձեռքերով)։ Միևնույն է։ Գալիս են, խոսեք մի այլ բանից...

Իրինան և Տուզենբախը հայտնվում են դռնից։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ես եռահարկ ազգանուն ունեմ. ինձ կոչում են Տուզենբախ-Կոռնե-Ալտշաուեր, բայց ես ուղղափառ ռուս եմ, ինչպիսին և դուք։ Գերմանական շատ քիչ բան կա իմ մեջ, թերևս, միայն համբերատարությունը և համառությունը, որով ձանձրացնում եմ ձեզ։ Ես ամեն երեկո ուղեկցում եմ ձեզ։

ԻՐԻՆԱ — Ինչպես եմ հոգնել։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Եվ ամեն օր էլ պիտի գամ հեռագրատուն ու պիտի ուղեկցեմ ձեզ տուն, տասը-քսան տարի, մինչև... վերընդեք... (Տեսնելով Մաշային ու Վերշինինին, ուրախացած)։ Այդ դո՞ւք եք։ Բարևներս։

ԻՐԻՆԱ — Ահա և տանն եմ, վերջապես։ (Մաշային)։ Քիչ առաջ մի կին եկավ հեռագրելու Սարատով՝ եղբորը, հայտնելու որ որդին է մահացել։ Բայց ոչ մի կերպ չկարողացավ հիշել հասցեն։ Այդպես անհասցե էլ ուղարկեցինք հեռագիրը, ուղղակի՝ Սարատով ու վերջ։ Լաց էր լինում։ Իսկ ես, չգիտես ինչու, կոպտեցի նրան։ «Ժամանակ չունեմ»— ասացի։

Հիմար բան դուրս եկավ։ Այսօր պիտի դա՞ն դիմակավորները։

ՄԱՇԱ — Այո։

ԻՐԻՆԱ — (նստում է բազկաթոռին) Հանգստանամ։ Հոգնեցի։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (ժպտալով) Աշխատանքից հետո դուք ջահելանում եք, բայց դժբախտ եք երևում։

ԻՐԻՆԱ — Հոգնած եմ... Չէ, չեմ սիրում այդ հեռագրատունը, չեմ սիրում։

ՄԱՇԱ — Նիհարել ես... (Սուլում է)։ Եվ ջահելացել ես ու ճղճիմի նմանվել։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Սանրվածքից է։

ԻՐԻՆԱ — Հարկավոր է այլ աշխատանք փնտրել։ Սա ինձ համար չէ։ Ինչ ցանկանում ու երազում էի, չկա այս աշխատանքում։ Առանց պոեզիայի, առանց մտքերի գործ է...

Հատակի թակոց է լսվում։

Բժիշկն է թակում։ (Տուզենբախին)։ Սիրելիս, թակեք... Ես չեմ կարող... Հոգնած եմ...

Տուզենբախը թակում է հատակը։

Հիմա կգա։ Հարկավոր է որևէ միջոց գտնել։ Երեկ բժիշկն ու մեր Անդրեյը եղել են ակումբում և կրկին տանուլ տվել։ Անդրեյն, ասում են, երկու հարյուր ռուբլի է տարվել։

ՄԱՇԱ — (անտարբեր) Ի՞նչ պիտի անենք։

ԻՐԻՆԱ — Երկու շաբաթ առաջ տանուլ է տվել, դեկտեմբերին՝ նույնպես։ Գոնե ամեն ինչ տանուլ տար, գուցե թե հեռանայինք այս քաղաքից։ Տեր իմ աստված, ամեն գիշեր երազում Մոսկվան եմ տեսնում, կարծես խելագար լինեմ։ (Միծաղում է)։ Մենք տեղափոխվելու ենք հունիսին, իսկ մինչև հունիսը մնացել է... Փետրվար, մարտ, ապրիլ, մայիս... Համարյա կես տարի։

ՄԱՇԱ — Հարկավոր է այնպես անել, որ Նատաշան չիմանա տանուլ տվածի մասին։

ԻՐԻՆԱ — Նրա համար, կարծում եմ, միևնույն է։

Հետաձգյա ճնից նոր արթնացած Չեբուտիկինը մոռումբ սանրելով մտնում է դռնից, հետո նստում սեղանի մոտ ու գրպանից հանում է լրագիրը։

ՄԱՇԱ — Ահա եկավ... Նա վճարե՞լ է բնակարանի վարձը։

ԻՐԻՆԱ — (ծիծաղում է). Ոչ։ Ութ ամսվա ընթացքում ոչ մի կոպեկ։ Հավանաբար, մոռացել է։

ՄԱՇԱ — (ծիծաղում է) Ինչ հանդիսավոր է նստած։

Բոլորը ծիծաղում են։ Դադար։

ԻՐԻՆԱ — Ինչո՞ւ եք լռում, Ալեքսանդր Իգնատիչ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Չգիտեմ։ Թեյ եմ ուզում։ Մի բաժակ թեյի համար կյանքիս կեսը կտամ։ Առավոտից ոչինչ չեմ կերել։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Իրինա Սերգեևնա։

ԻՐԻՆԱ — Ի՞նչ եք կամենում։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Խնդրում եմ՝ մոտ եկեք։ Venez ici[1]

Իրինան գնում, նստում է կողքին։

Ես առանց ձեզ չեմ կարող։

Իրինան սեղանին է փռում խաղամարտերը։

ՎԵՐՇԻՆԻՆ — Էհ, ինչ արած, եթե թեյ չեն տալիս, եկեք փիլիսոփայենք։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Եկեք։ Ինչի՞ շուրջ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Եկեք երազենք։ Օրինակ, այն կյանքի մասին, որը կլինի մեզանից հետո, երկու-երեք հարյուր տարի անց։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Երազենք։ Մեզանից հետո մարդիկ կթռչեն օդապարիկներով, կփոխվեն բաճկոնակները, կբացահայտվի, գուցե, վեցերորդ զգայարանը, բայց կյանքը կմնա նույնը՝ դժվար, գաղտնիքներով լի և երջանիկ։ Հազար տարի անց էլ մարդը կհառաչի. «Ա՜խ, ինչ ծանր է կյանքը»,— բայց և, ինչպես հիմա, պիտի սարսափի ու փախչի մահից։

ՎԵՐՇԻՆԻՆ — (մտածելով) Ինչպե՞ս ձեզ ասեմ։ Ինձ թվում է, երկրի վրա աստիճանաբար ամեն ինչ պիտի փոխվի և արդեն, մեր աչքի առաջ, փոխվում է։ Երկու-երեք հարյուր տարի անց կամ՝ հազար,— հարցը ժամկետը չէ,— վրա կհասնի նոր, երջանիկ կյանքը։ Այդ կյանքին մենք չենք լինի, անշուշտ, բայց հանուն դրա ենք ապրում հիմա։ Աշխատում ենք, այո, տառապում ենք նաև, ստեղծում այդ կյանքը և հենց դա է մեր կյանքի նպատակը, եթե կուզեք, մեր երջանկությունը։

Մաշան կամացուկ ծիծաղում է։

[1] Եկեք այստեղ (ֆրանս)։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ի՞նչ պատահեց։

ՄԱՇԱ — Չգիտեմ։ Այսօր առավոտից ծիծաղում եմ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ես սովորել եմ այնքան, որքան դուք, ակադեմիաներում չեմ եղել։ Կարդում եմ շատ, բայց գիրք ընտրել չգիտեմ և կարդում եմ գուցե ոչ այն, ինչ անհրաժեշտ է, և այնուամենայնիվ, որքան ապրում եմ, այնքան ավելին եմ ուզում իմանալ։ Մազերս ճերմակում են, ես գրեթե ծերունի եմ, բայց շատ քիչ բան գիտեմ, շատ քիչ։ Այսուհանդերձ, ինձ թվում է, թե ամենակարևորը և ամենաէականը ես գիտեմ, շատ հստակ գիտեմ։ Եվ որքան կուզենայի ապացուցել ձեզ, որ մեզ համար չկա, չի կարող լինել և չպիտի լինի երջանկություն... Մենք պիտի միայն աշխատենք ու աշխատենք, իսկ երջանկությունը մեր հեռավոր սերունդների համար է սահմանված։

Դադար։

Եթե ոչ ես, ապա թող սերնդիս սերունդները երջանիկ լինեն։

Ֆեդոտիկն ու Ռոդեն են հայտնվում դանլիճում։ Նստում են և կամացուկ երգում կիթառի նվագակցությամբ։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ձեր կարծիքով, երջանկության մասին նույնիսկ երազե՞լ չի կարելի։ Իսկ եթե ես երջանի՞կ եմ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ոչ։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (ձեռքերն իրար զարկելով և ծիծաղելով) Հավանորեն մենք չենք հասկանում մեկմեկու։ Ո՞նց համոզեմ ձեզ։

Մաշան կամացուկ ծիծաղում է։

Ծիծաղեք, ծիծաղեք։ (Մատ է թափ տալիս)։ (Վերշինինին)։ Ոչ թե երկու-երեք հարյուր, այլ միլիոն տարի հետո էլ կյանքը կմնա նույնը։ Նա չի փոխվում, մնում է նույնը, ենթարկվելով իր իսկ օրենքներին, որոնց հետ դուք գործ չունեք, համենայն դեպս դրանք ձեզ համար մնալու են անհայտ։ Չվող թռչունները, կռունկներն, ասենք, թռչում են ու թռչում, և նրանց գլուխներում ինչ մտքեր էլ ծագեն՝ մեծ, փոքր, միևնույն է, նրանք պիտի թռչեն ու չիմանան՝

թե ինչու և ուր են թռչում։ Նրանք թռչում են և պիտի թռչեն, անկախ այն բանից, երամում փիլիսոփաներ հայտնվե՞լ են, թե ոչ։ Եվ թող փիլիսոփայեն, ինչքան ուզում են, միայն թե թռչեն...

ՄԱՇԱ — Բայց իմաստ, իմաստ չկա՞...

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Իմա՞ստ... Ահա, ձյուն է գալիս. ի՞նչ իմաստ ունի այս ձյունը։

Դադար։

ՄԱՇԱ — Ինձ թվում է, մարդը պետք է հավատացյալ լինի և կամ հավատ փնտրի, այլապես կյանքը կդառնա դատարկ, ճղճիմ։ Ապրել և չիմանա՞լ, թե ինչու են թռչում կռունկները, ինչու են ծնվում երեխաները, ինչի համար են երկնքի աստղերը... Կամ պետք է իմանաս, թե ինչու ես ապրում և կամ ամեն ինչ հիմարություն է...

Դադար։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այնուամենայնիվ, ափսոս, որ անցավ երիտասարդությունը։

ՄԱՇԱ — Գոգոլը գրել է. պարոնայք, ձանձրալի է ապրելը այս երկնքի տակ։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Իսկ ես կասեմ. դժվար է ձեզ հետ վիճելը, պարոնայք։ Սատանան ձեզ հետ։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (լրագիր կարդալով) Բալզակը պսակվել է Բերդիչևում։

Իրինան կամացուկ երգում է։

Ես սա կգրեմ ծոցատետրումս։ (Գրի է առնում)։ Բալզակը պսակվել է Բերդիչևում։ (Լրագիր է կարդում)։

ԻՐԻՆԱ — (խաղաթղթեր փռելով, մտախոհ) Բալզակը պսակվել է Բերդիչևում։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Վիճակը գցված է։ Դուք, գիտե՞ք, Մարիա Սերգեևնա, ես պաշտոնաթող եղա։

ՄԱՇԱ — Լսել եմ։ Եվ ոչ մի լավ բան չեմ տեսնում ձեր արարքի մեջ։ Չեմ սիրում քաղաքացիականներին։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Միևնույն է։ (Ոտքի է ելնում)։ Ես գեղեցիկ չեմ, ինձանից ի՞նչ զինվորական։ Այո, միևնույն է... Կաշխատեմ։ Գոնե մի օր կյանքումս աշխատեմ այնպես, որ տուն դառնալուն պես հոգնությունից ընկնեմ մահճակալին ու նույն պահին էլ քնեմ։ (Դանլիճ է մտնում)։ Բանվորներն անպայման խոր են քնում։

ՖԵԴՈՏԻԿ — (Իրինային) Քիչ առաջ Մոսկովյան փողոցից, Պիժիկովի մոտից, ձեզ համար գունավոր մատիտներ գնեցի։ Եվ այս դանակը...

ԻՐԻՆԱ — Դուք վարժվել եք ինձ հետ վարվել որպես փոքրի, բայց չէ՞ որ ես արդեն մեծ եմ։ (Վերցնում է մատիտները, դանակը, ուրախ է)։ Հրաշալի է։

ՖԵԴՈՏԻԿ — Ինձ համար էլ եմ դանակ գնել... Ահա, տեսեք... Դանակ, էլի մեկ ուրիշը, երրորդը, այս մեկով ականջ են քչփորում, սրանով՝ եղունգ մաքրում, իսկ սրանք՝ խարտոցներ են...

ՌՈԴԵ — (բարձրաձայն) Բժիշկ, դուք քանի՞ տարեկան եք։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Ե՞ս։ Երեսուներկու։

Ծիծաղ։

ՖԵԴՈՏԻԿ — Ես ձեզ խաղաթղթերի ուրիշ դասավորություն ցույց կտամ (խառնում է խաղաթղթերը)։

Բերում են ինֆեաերը. Անֆիսան ինֆեաերի մոտ է։ Քիչ անց գալիս է Նատաշան և զբաղվում սեղանով։ Գալիս է Սոլյոնին և, ողջունելով, նստում է սեղանի մոտ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Ի՞նչ քամի է...

ՄԱՇԱ — Այո։ Ձանձրացրեց այս ձմեռը։ Ես արդեն մոռացել եմ, թե ինչպիսին է լինում ամառը։

ԻՐԻՆԱ — Այս անգամ հաջող է դասավորությունը։ Կստացվի, ես զգում եմ։ Ուրեմն, կտեղափոխվենք Մոսկվա։

ՖԵԴՈՏԻԿ — Չէ, չի ստացվի։ Տեսնում եք, ութանոցն ընկավ ագռավի երկուսանոցի վրա։ (Ծիծաղում է)։ Նշանակում է՝ Մոսկվա չեք գնա։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (լրագիր է կարդում) Ցիցիկար։ Այստեղ մոլեգնում է ծաղկախտը։

ԱՆՖԻՍԱ — (մոտենալով Մաշային) Մաշա, քաղցրիկս, թեյ խմիր... (Վերշինինին)։ Հրամեցեք, ձերդ բարեծնություն... Ներող կլինեք, ձեր անուն-հայրանունը...

ՄԱՇԱ — Բեր այստեղ, դայակ։ Սեղանի մոտ չեմ գա։

ԻՐԻՆԱ — Դայակ...

ԱՆՖԻՍԱ — Գալիս եմ։

ՆԱՏԱՇԱ — (Սոլյոնիին) Ծծկեր երեխաները ամեն ինչ էլ հասկանում են։ «Բարև,— ասում եմ,— Բոբիկ, բարև, սիրելիս»։ Իսկ նա ինձ է նայում ամեն ինչ հասկացողի նման։ Կարծում եք՝ իմ մեջ միայն մա՞յրն է խոսում։ Ո՛չ։ Հավատացնում եմ, ո՛չ։ Նա արտասովոր երեխա է։

ՍՈԼՅՈՆԻ — Եթե այդ երեխան իմը լիներ, ես նրան կտապակեի թավայի վրա ու կխժռեի։ (Բաժակը ձեռքին գնում է նյուրասենյակ և նստում մի անկյունում)։

ՄԱՇԱ — Երջանիկ է նա, ով չի նկատում՝ ամա՞ռ է հիմա թե ձմեռ։ Ինձ թվում է, որ եթե ես Մոսկվայում լինեի, բոլորովին չէի նկատի եղանակների տարբերությունը։

ՎԵՐՇԻՆԻՆ — Վերջերս ֆրանսիական մի մինիստրի օրագիրը կարդացի, որ գրվել էր բանտում։ Մինիստրը դատապարտված էր Պանամայի կապակցությամբ։ Ինչպիսի՜ հաճույքով և հիացմունքով է նա գրում բանտախցի լուսամուտից երևվացող թռչունների մասին, որոնց նա չէր նկատել նախկինում, երբ մինիստր էր։ Հիմա ազատության մեջ է նա և, իհարկե, սովորականի նման էլի չի նկատում թռչուններին։ Այդպես էլ, ահա, դուք չեք նկատի Մոսկվան, եթե բնակվեք այնտեղ։ Մենք երջանկություն չունենք և չենք ունենա։ Մենք միայն ձգտում ենք երջանկության։

ՏՈՒՋԵՆԲԱԽ — (սեղանից վերցնում է տուփը) Ո՞ւր են կոնֆետները։

ԻՐԻՆԱ — Սոլյոնին կերավ։

ՏՈՒՋԵՆԲԱԽ — Բոլո՞ր։

ԱՆՖԻՍԱ — (թեյ հրամցնելով) Ձեզ նամակ են ուղարկել։

ՎԵՐՇԻՆԻՆ — (վերցնում է նամակը) Աղջկանիցս է։ (Կարդում է)։ Այո, իհարկե... Ես, Մարիա Սերգեևնա, ներող կլինեք, աննկատ կհեռանամ... Թեյ չեմ խմի... (Հուզված ոտքի է կանգնում)։ Վերջ չկա այս պատմություններին...

ՄԱՇԱ — Ի՞նչ է պատահել... Եթե գաղտնիք չէ...

ՎԵՐՇԻՆԻՆ — (կամացուկ) Կինս է կրկին թունավորվել։ Պետք է գնալ։ Ես աննկատ կհեռանամ։ Անտանելի տհաճ է այս ամենը։ (Համբուրում է Մաշայի ձեռքը)։ Սիրելիս, հրաշալիս, լավս... Ես աննկատ կհեռանամ... (Հեռանում է)։

ԱՆՖԻՍԱ — Ո՞ւր գնաց։ Իսկ ես թեյ տվեցի... Այ քեզ մարդ...

ՄԱՇԱ — (բարկացած) Վերջացրու։ Որ կպչում ես, էլ հանգիստ չկա... (Բաժակը ձեռքին մոտենում է սեղանին)։ Զզվեցրեց այս պառավը...

ԱՆՖԻՍԱ — Ինչո՞ւ ես նեղանում, սիրելիս...

Անդրեյի ձայնը.

«Անֆիսա»։ (Տնազ է անում)։ Անֆիսա... Նստել է իր համար... (Հեռանում է)։

ՄԱՇԱ — (սեղանի մոտ, բարկացած) Տեղ տվեք նստելու։ (Խառնում է խաղաթարտերը)։ Խաղում եք, խաղում եք... Վերջ տվեք... Թեյ խմեք...

ԻՐԻՆԱ — Մաշա, ինչ չարն ես։

ՄԱՇԱ — Չար եմ, մի խոսեք հետս։ Մի քսվեք ինձ։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — (ծիծաղելով)— Մի քսվեք նրան, մի քսվեք...

ՄԱՇԱ — Դուք վաթսուն տարեկան եք, բայց կաթնակեր տղայի նման, սատանան գիտե, թե ինչ եք դուրս տալիս։

ՆԱՏԱՇԱ — (հառաչելով) Սիրելի Մաշա։ Պետք չէ նման արտահայտություններ անել խոսելիս։ Հավատա ինձ, սիրելիս, դու քո գեղեցիկ արտաքինով ազնվական հասարակության մեջ պարզապես հրաշք կարող ես լինել, եթե չլինեն բառերդ։ Je vous prie pardonnez moi, Marie, mais vous avez des manières un peu grossières[1]։

ՏՈՒՋԵՆԲԱԽ — (ծիծաղը զսպելով) Տվեք, տվեք ինձ... Այնտեղ կարծեմ կոնյակ կա...

ՆԱՏԱՇԱ — Il parait, que mon Բոբիկ déjà ne dort pas[2], արթնացել է։ Այսօր նա տկար է։ Ես նրա մոտ գնամ, ներող կլինեք... (Հեռանում է)։

ԻՐԻՆԱ — Իսկ ո՞ւր գնաց Ալեքսանդր Իգնատիչը։

ՄԱՇԱ — Տուն։ Նրա կնոջ հետ էլի ինչ-որ բան է պատահել։

ՏՈՒՋԵՆԲԱԽ — (գնում է Սոլյոնիի մոտ, ձեռքին կոնյակի գրաֆինը) Ամբողջ ժամանակ նստած եք միայնակ, մտածում եք, աստված գիտե, թե ինչ։ Եկեք հաշտվենք։ Եկեք խմենք։

Խմում են։

---

[1] Խնդրում եմ ներեք ինձ, Մարի, բայց ձեր վարվելակերպը որոշ չափով գռեհիկ է (ֆրանս.)։

[2] Կարծես իմ Բոբիկը քնած չէ (ֆրանս.)։

Այսօր ես, հավանաբար, մինչև լուսաբաց դաշնամուր եմ նվագելու։ Զանազան հիմարություններ...

ՍՈԼՅՈՆԻ — Ասում եք՝ հաշտվե՞նք։ Բայց ես չեմ էլ գժտվել։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Դուք միշտ էլ այնպիսի զգացում եք առաջացնում, կարծես մեր միջև ինչ-որ տհաճ բան է պատահել։ Պետք է խոստովանել՝ դուք տարօրինակ բնավորություն ունեք։

ՍՈԼՅՈՆԻ — (արտասանում է) Տարօրինակ եմ, իսկ ո՞վ չի տարօրինակ։ Զբարկանաս, Ալեկո։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ի՞նչ կապ ունի Ալեկոն։

Դադար։

ՍՈԼՅՈՆԻ — Երբ ես որևէ մեկի հետ եմ, երբ երկուսով ենք, ոչինչ, բոլորի նման եմ, իսկ հասարակության մեջ դառնում եմ ձանձրալի, ամաչկոտ և... հիմարություններ եմ դուրս տալիս... Բայց և այնպես, ես շատ շատերից թե ազնիվ եմ և թե բարի... Եվ կարող եմ ապացուցել ասածս...

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ես հաճախ բարկանում եմ ձեզ վրա, որովհետև դուք անվերջ խայթում եք ինձ, բայց և այնպես ես ձեզ համակրում եմ։ Եվ չգիտեմ թե ինչու։ Ինչևէ... Այսօր ես կհարբեմ։ Խմենք։

ՍՈԼՅՈՆԻ — Խմենք։

Խմում են։

Ձեր դեմ, բարոն, ես ոչինչ չունեմ։ Բայց իմ բնավորությունը լերմոնտովյան է։ (Կամացուկ)։ Ես նույնիսկ փոքրինչ նման եմ Լերմոնտովին... Այդպես են ասում։ (Գրպանից հանում է օծանելիքի սրվակը, օծում է ձեռքերը)։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Թոշակի եմ գնում։ Վերջ։ Հինգ տարի է մտմտում եմ և վերջապես վճռեցի։ Պիտի աշխատեմ։

ՍՈԼՅՈՆԻ — (արտասանում է) Զբարկանաս, Ալեկո... Մոռացիր, մոռացիր երազները քո...

Մինչ նրանք խոսում են, դուրս է գալիս Անդրեյը և գիրքը ձեռքին նստում մոմի մոտ։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Պիտի աշխատեմ։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — (հյուրասենյակ է մտնում Իրինայի հետ) Հյուրասիրությունն էլ էր իսկական կովկասյան, սուպը սոխով էր, իսկ երկրորդը՝ չխրթմա, մսով։

ՍՈԼՅՈՆԻ — Ղանձիլը միս չէ, այլ բույս, մեր սոխի պես մի բան։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Օ, ոչ, հրեշտակս։ Չխրթման սոխ չէ, այլ տապակած ոչխարի միս։

ՍՈԼՅՈՆԻ — Իսկ ես ասում եմ՝ ղանձիլ է, այսինքն՝ սոխ։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Իսկ ես ասում եմ՝ չխրթման ոչխարի միս է։

ՍՈԼՅՈՆԻ — Ես ձեզ ասում եմ՝ ղանձիլ է։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Այսինքն, ինչո՞ւ եմ ձեզ հետ վիճում։ Դուք երբեք չեք եղել Կովկասում և չեք կերել չխրթմա։

ՍՈԼՅՈՆԻ — Չեմ կերել, որովհետև չեմ սիրում։ Ղանձիլից ճիշտ նույն հոտն է փչում, ինչ և սխտորից։

ԱՆԴՐԵՅ — (աղերսանքով) Բավական է, պարոնայք, խընդրում եմ։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ե՞րբ են գալու դիմակավորները։

ԻՐԻՆԱ — Խոստացել են՝ ժամը իններին։ Նշանակում է՝ հիմա։

ՏՈՒԶԵՆԲԱԽ— (գրկում է Անդրեյին) Ах, вы, сени, мои сени, сени новые мои...

ԱՆԴՐԵՅ — (պարում է ու երգում) Сени новые кленовые...

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — (Պարում է) Решетчатые։

Ծիծաղում են։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (համբուրում է Անդրեյին) Գրողի ծոցը թող կորչի ամեն բան, Անդրյուշա... Արի խմենք, մի կուշտ խմենք ու իրար էլ «դուքով» չդիմենք։ Ես էլ քեզ հետ, Անդրյուշա, Մոսկվա կգամ, համալսարան։

ՍՈԼՅՈՆԻ — Ո՞ր համալսարանը։ Մոսկվայում երկու համալսարան կա։

ԱՆԴՐԵՅ — Մոսկվայում մի համալսարան կա։

ՍՈԼՅՈՆԻ — Իսկ ես ասում եմ՝ երկո՛ւսը։

ԱՆԴՐԵՅ — Թող երեքը լինի։ Ավելի լավ։

ՍՈԼՅՈՆԻ — Մոսկվայում երկո՛ւ համալսարան կա։

Շշուկներ, բողոքի, դժգոհության ձայներ։

Մոսկվայում երկո՛ւ համալսարան կա՝ հինը և նորը։ Իսկ եթե դուք չեք ցանկանում լսել ինձ, եթե իմ խոսքերը բարկացնում են ձեզ, կարող եմ և չխոսել։ Ես կարող եմ, նույնիսկ, մի այլ սենյակ տեղավորվել... (Հեռանում է)։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Բրա՜վո, բրա՜վո... (Ծիծաղում է)։ Պարոնայք, սկսեք, ես նստում եմ նվագելու։ Ծիծաղելին է այդ Սոլյոնին։ (Նստում է դաշնամուրի դիմաց, վալս է նվագում)։

ՄԱՇԱ — (միայնակ պարելով) *Բարոնը հարբած է, բարոնը հարբած է։*

Ներս է մտնում Նատաշան։

ՆԱՏԱՇԱ — (Զերուտիկինին) *Իվան Ռոմանիչ։* (Ինչ-որ բան է ասում Զերուտիկինին, հետո կամացուկ հեռանում։)

Զերուտիկինը ձեռքը դնում է Տուզենբախի ուսին և ինչ-որ բան շշնջում։

ԻՐԻՆԱ — *Ի՞նչ է պատահել։*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Մեր գնալու ժամն է։ Ողջ եղեք։*

ՏՈՒԶԵՆԲԱԽ — *Բարի գիշեր։ Ժամն է գնալու։*

ԻՐԻՆԱ — *Ինչպե՞ս թե... Իսկ դիմակավորնե՞րը...*

ԱՆԴՐԵՅ — (շփոթված) *Նրանք չեն գա... Գիտեք ինչ, իմ սիրելի Նատաշան ասում է, թե Բոբիկը հիվանդ է և այդ պատճառով... Մի խոսքով, ես չգիտեմ, ինձ համար միևնույն է...*

ԻՐԻՆԱ — (ուսերը թոթվելով) *Բոբիկը հիվա՞նդ է...*

ՄԱՇԱ — *Մենք ի՞նչ չենք կորցրել այս աշխարհում... Վռնդում են, ուրեմն՝ պետք է գնալ* (Իրինային)։ *Ոչ թե Բոբիկը, այլ նրա մայրն է հիվանդ։ Ահա։* (Մատով թմբկահարում է ճակատը)։ *Քաղքենի։*

Անդրեյն իր սենյակն է մտնում, Զերուտիկինը հետևում է նրան։ Դանլիհնում նրաժեշտ են տալիս։

ՖԵԴՈՏԻԿ — *Հազար ափսոս։ Իսկ ես մտադիր էի ամբողջ երեկոն այստեղ անցկացնել։ Բայց եթե հիվանդ է երեխան, իհարկե... Վաղը ես նրան խաղալիքներ կբերեմ...*

ՌՈԴԵ — (բարձրաձայն) *Ճաշից հետո ես դիտավորյալ քնեցի, որ ամբողջ գիշերը պարեմ։ Հիմա, ախր, ժամը ինն է։*

ՄԱՇԱ — *Փողոց դուրս գանք, պարոնայք։ Այնտեղ կխոսենք։ Կորոշենք անելիքներս։*

Լսվում են՝ *«Ցտեսություն», «Ողջ եղեք»։* Լսվում է Տուզենբախի ուրախ ծիծաղը։ Բոլորը հեռանում են։ Անֆիսան և սպասուհին հավաքում են սեղանը, մարում են մոմերը։ Լսվում է Անֆիսայի երգը։ Վերակուսով և գլխարկով Անդրեյն ու Զերուտիկինն կամացուկ դուրս են գալիս։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Ես չհասցրեցի ամուսնանալ, որովհետև կյանքս անցավ կայծակի նման և որովհետև խելագարի պես սիրում էի ամուսնացած մորդ...*

ԱՆԴՐԵՅ — *Պետք չէ ամուսնանալ... Ձանձրալի է...*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Դա այդպես է, իհարկե, բայց կա նաև մենությունը... Ինչպես էլ փիլիսոփայես, մեկ է, մենությունը սոսկալի է, աղավնյակս... Թեև, ըստ էության, ամեն ինչ նույնն է...*

ԱՆԴՐԵՅ — *Գնանք, շուտ։*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Ինչո՞ւ եք շտապում։ Կհասնենք։*

ԱՆԴՐԵՅ — *Կինս հանկարծ չնկատի։*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Ա՜...*

ԱՆԴՐԵՅ — *Այսօր ես չեմ խաղա։ Միայն կնստեմ։ Առողջ չեմ։ Ի՞նչ անեմ, Իվան Ռոմանիչ, այս շնչահեղձության դեմ։*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Չեմ հիշում, աղավնյակս, մի հարցրու, չգիտեմ։*

ԱՆԴՐԵՅ — *Խոհանոցով գնանք։*

Զանգ, հետո էլի զանգ։ Աղմուկ է լսվում, ծիծաղ։ Հեռանում են։

ԻՐԻՆԱ — (ներս գալով) *Ովքե՞ր են։*

ԱՆՖԻՍԱ — (շշուկով) *Դիմակավորները։*

Զանգ։

ԻՐԻՆԱ — *Ասա դայակ, տանը ոչ ոք չկա։ Թող ներող լինեն։*

Անֆիսան գնում է։ Իրինան մտածմունքների մեջ քայլում է սենյակով։ Նա հուզված է։ Մտնում է Սոլյոնին։

ՍՈԼՅՈՆԻՆ — (տարակուսած) *Ոչ ոք չկա... Իսկ ո՞ւր են։*

ԻՐԻՆԱ — *Տուն գնացին։*

ՍՈԼՅՈՆԻ — *Տարօրինակ է։ Դուք մենա՞կ եք։*

ԻՐԻՆԱ — *Այո։*

Դադար։

Ցտեսություն։

ՍՈԼՅՈՆԻ — *Ես ինձ բավականաչափ անզուսպ և անկիրթ պահեցի։ Բայց դուք բոլորի նման չեք, դուք մաքուր եք, վեհանձն, ձեզ տեսանելի է ճշմարտությունը։ Միայն դուք կարող եք հասկանալ ինձ։ Ես սիրում եմ՝ խոր, անսահման սիրով...*

ԻՐԻՆԱ — *Ցտեսություն։ Հեռացեք...*

ՍՈԼՅՈՆԻ — Առանց ձեզ ես չեմ կարող ապրել։ (Գնում է նրա հետևից)։ Օ՜, իմ երջանկություն։ (Արցունքների միջից)։ Օ՜, երջանկություն։ Հրաշալի, զարմանալի աչքեր... Նման աչքեր ես դեռ չեմ տեսել...

ԻՐԻՆԱ — (սառը) Վերջ տվեք, Վասիլի Վասիլիչ։

ՍՈԼՅՈՆԻ — Առաջին անգամ եմ խոսում իմ սիրուց, և ես կարծես երկրի վրա չեմ, կարծես մի այլ մոլորակի վրա լինեմ։ (Շփում է ճակատը)։ Էհ, ինչ արած։ Բռնությամբ սիրելի չես դառնա։ Բայց և երջանիկ մրցակից չեմ հանդուրժի։ Չե՛մ հանդուրժի։ Երդվում եմ բոլոր սրբերով, որ ես կսպանեմ մրցակցիս... Օ՜, հրաշք...

Հայտնվում է Նատաշան՝ մոմը ձեռին։

ՆԱՏԱՇԱ — (մեկ այս, մեկ այն դուռն է բացում, ներս նայում, հետո անցնում է ամուսնու սենյակի դռան մոտով) Այստեղ Անդրեյն է։ Թող կարդա։ Ներեցեք ինձ, Վասիլի Վասիլիչ, ես չգիտեի, որ դուք այստեղ եք... Տնային շորերով եմ...

ՍՈԼՅՈՆԻ — Ինձ համար մեկ է... Մնաք բարով։ (Հեռանում է)։

ՆԱՏԱՇԱ — Իսկ դու հոգնել ես, սիրելիս, իմ խեղճ աղջիկս։ (Համբուրում է Իրինային)։ Պառկիր՝ քնելու։

ԻՐԻՆԱ — Բոբիկը քնա՞ծ է։

ՆԱՏԱՇԱ — Քնած է։ Բայց անհանգիստ քնով։ Ի դեպ, սիրելիս, վաղուց էի մտադիր ասել քեզ, բայց կամ դու չէիր լինում, կամ ես ժամանակ չէի գտնում... Բոբիկի սենյակը ցուրտ է և խոնավ։ Իսկ քոնը այնքան հարմար է երեխայի համար։ Սիրելիս, հարազատս, տեղափոխվիր առայժմ Օլյայի մոտ։

ԻՐԻՆԱ — (շճասկանալով) Ո՞ւր։

Լսվում է տանը մոտեցող եռածի կառքի աղմուկ։

ՆԱՏԱՇԱ — Առայժմ կապրես Օլյայի սենյակում, իսկ քոնը կտանք Բոբիկին։ Նա այնպես լավիկն է... Այսօր ասում եմ նրան. «Բոբիկ, դու իմն ես, իմը»։ Իսկ նա նայում է ինձ իր հրաշք աչիկներով։

Զանգ։

Երևի Օլգան է։ Ինչ ուշ է նա գալիս։

Սպասուհին մոտենում է Նատաշային, ականջին ինչ-որ բան ասում։

Պրոտոպոպո՞վը։ Ինչ խելառ մարդ է։ Պրոտոպոպովն է եկել, հրավիրում է ինձ զբոսնելու կառքով։ (Ծիծաղում է)։ Շատ տարօրինակ են այս տղամարդիկ...

Զանգ։

Տեսնես՝ ո՞վ եկավ։ Զգնա՞մ մի քառորդ ժամ թարմանամ... (Սպասուհուն)։ Հայտնիր, որ հիմա գալիս եմ...

Զանգ։

Զանգում են։ Օլգան է, երևի... (Հեռանում է)։

Սպասուհին գնում է։ Իրինան նստում է մտանոց։ Ներս են գալիս Կուլիգինը, Օլգան, նրանց հետևից՝ Վերշինինը։

ԿՈՒԼԻԳԻՆ — Այ քեզ բա՜ն... Հապա ասում էին, թե երեկո՞ է լինելու...

ՎԵՐՇԻՆԻՆ — Տարօրինակ է։ Ես քիչ առաջ գնացի, կես ժամ առաջ, և բոլորը սպասում էին դիմակավորներին։

ԻՐԻՆԱ — Գնացին բոլորը։

ԿՈՒԼԻԳԻՆ — Մաշան է՞լ։ Ե՞րբ գնաց նա։ Իսկ ինչո՞ւ է Պրոտոպոպովը ներքևում սպասում։ Ո՞ւմ է նա սպասում։

ԻՐԻՆԱ — Հարցեր մի տվեք։ Ես հոգնած եմ։

ԿՈՒԼԻԳԻՆ — Էլի սկսեց քմահաճությունները...

ՕԼԳԱ — Խորհուրդը քիչ առաջ ավարտվեց։ Ես տառապած եմ։ Պետը հիվանդ է, հիմա ես եմ նրան փոխարինում։ Գլուխս, գլուխս է ցավում։ (Նստում է)։ Անդրեյը երեկ տանով է տվել երկու հարյուր ռուբլի։ Ողջ քաղաքն է խոսում...

ԿՈՒԼԻԳԻՆ — Ես էլ եմ հոգնել մանկավարժական խորհրդում։ (Նստում է)։

ՎԵՐՇԻՆԻՆ — Կինս վճռել էր մի անգամ էլ վախեցնել ինձ, քիչ մնաց իսկապես մեռներ։ Ամեն ինչ բարեհաջող անցավ, և ես ուրախ եմ ու հիմա կարող եմ հանգստանալ։ Ուրեմն, պիտի գնա՞նք։ Ինչ արած, թույլ տվեք ցանկանալ ձեզ ամենայն բարիք։ Ֆեոդոր Իլյիչ, եկեք միասին որևէ տեղ գնանք։ Տանը նստել չեմ կարող, բոլորովին... Գնանք։

ԿՈՒԼԻԳԻՆ — Հոգնած եմ։ Չեմ գա։ (Ոտքի է ելնում)։ Հոգնած եմ։ Կինս տո՞ւն գնաց։

ԻՐԻՆԱ — Հավանորեն։

ՆՈՒԼԻԳԻՆ — (ճամբուրում է իրինայի ձեռքը) *Ցտեսություն։ Վաղը և մյուս օրը կհանգստանամ։* (Գնում է)։ *Շատ եմ թեյ ուզում։ Կարծում էի երեկոս հաճելի հասարակության մեջ կանցկացնեմ և* o' fallacem hominum spem[1]! *Հայցական հոլովը բացականչության ժամանակ...*

ՎԵՐՇԻՆԻՆ — *Ուրեմն՝ մենակ կգնամ։* (Սուլելով գնում է Կուլիգինի հետ)։

ՕԼԳԱ — *Գլուխս է ցավում, գլուխս... Անդրեյը տանուլ է տվել... Ողջ քաղաքն է խոսում... Գնամ պառկեմ...* (Գնում է)։ *Վաղն ազատ եմ... Օ, աստված իմ, ինչ հաճելի է։ Վաղն ազատ եմ, մյուս օրը՝ նույնպես... Գլուխս է ցավում, գլուխս։* (Հեռանում է)։

ԻՐԻՆԱ — (մենակ մնալով) *Բոլորը գնացին։ Ոչ ոք չկա։*

Փողոցում ճարմոն են նվագում, դայակը երգ է երգում։

ՆԱՏԱՇԱ — (մուշտակը և գլխարկը ճագին անցնում է դահլիճով։ Հետևից՝ սպասուհին) *Կես ժամից տանը կլինեմ։ Մի պտույտ միայն։* (Գնում է)։

ԻՐԻՆԱ — (մենակ մնալով, տխուր) *Մոսկվա գնալ եմ ուզում, Մոսկվա գնալ եմ ուզում...*

Վարագույր

[1] *Օ՜, մարդկային, ցնորական հույսեր (լատ.)։*

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Օլգայի և Իրինայի սենյակը։ Աջ և ձախակողմեռում շիրմայով բաժանված անկողիններեռ են։ Գիշերվա ժամը երեքն է։ Բեմից այն կողմ, վաղուց արդեն սկսված հրդեհի աճազանգն է լսվում։ Նկատելի է, որ տանը դեռ չեն պառկել քնելու։ Բազմոցին պառկել է Մաշան՝ սովորականի պես սևազգեստ։ Ներս են գալիս Օլգան և Անֆիսան։

ԱՆՖԻՍԱ — *Նստած են այնտեղ, սանդուղքի տակ... Ես ասում եմ՝ «Վերև համեցեք, մի՞թե,— ասում եմ,— կարելի է այդպես...»։ Իսկ նրանք լալիս են։ «Հայրիկն,— ասում են,— չգիտենք, թե ուր է։ Հանկարծ,— ասում են,— վառված չլինի՞»։ Բակում էլ են հավաքվել, ու էլի՝ տկլոր...։*

ՕԼԳԱ — (պահարանից զգեստներ է հանում) *Ահա այս մոխրագույնը վերցրու... Սա էլ... Այս կոֆտան էլ։ Եվ այս փեշը վերցրու, դայակ... Սա ի՞նչ փորձանք էր, աստված իմ... Կիրսանովյան նրբանցքն ամբողջովին այրվել է, հավանաբար... Սա էլ վերցրու... Սա էլ...* (Դայակի ձեռքին է գցում շորերը)։ *Խեղճ Վերշինինները սարսափի մեջ են։ Քիչ մնաց նրանց տունն էլ այրվեր։ Թող մեր տանը գիշերեն։ Խեղճ Ֆեդոտիկի ամբողջ ունեցվածքն այրվեց...*

ԱՆՖԻՍԱ — *Ֆերապոնտին կանչեիր, Օլյուշկա, թե չէ ո՞նց եմ տանելու...*

ՕԼԳԱ — (զանգ է տալիս) *Չեն լսում...* (Դռան կողմը)։ *Ներս եկեք, ո՞վ կա այնտեղ։*

Բաց դռնից երևում է հրացոլքից կարմրած լուսամուտը, լսվում է սլացող հրշեջ մեքենայի աղմուկը։

Սոսկալի է... Եվ որքան է ձանձրացրել։

Ներս է գալիս Ֆերապոնտը։

Ահա, վերցրու, ներքև տար... Այնտեղ, սանդուղքի տակ կանգնած են Կոլոտիլինների աղջիկները... Տուր նրանց։ Սա էլ տուր...

ՖԵՐԱՊՈՆՏ — Լսում եմ։ Տասներկու թվականին Մոսկվան էլ վառվեց։ Տեր իմ աստված։ Ֆրանսիացիները ապուշ էին կտրել։

ՕԼԳԱ — Գնա, գնա։

ՖԵՐԱՊՈՆՏ — Լսում եմ։ (Գնում է)։

ՕԼԳԱ — Դայակ, սիրելիս, բոլորը տար։ Մեզ ոչինչ պետք չէ, բոլորը տար։ Ես հոգնել եմ, հազիվ եմ ոտքերիս վրա մնում։ Վերշինիններին չթողնեք տուն գնան... Աղջիկները կքնեն հյուրասենյակում, իսկ Ալեքսանդր Իգնատիչը՝ ներքևում, բարոնի մոտ։ Ֆեդոտիկին էլ տեղավորեք բարոնի մոտ կամ թող վերևում՝ դահլիճում գիշերի... Բժիշկը, հակառակի պես, հարբած է, սարսափելի հարբած, և նրա մոտ ոչ մեկին չի կարելի ուղարկել։ Վերշինինի կնոջը նույնպես հյուրասենյակում տեղավորեք...

ԱՆՖԻՍԱ — (հոգնած) Օլյուշկա, սիրելիս, մի վոնդիր ինձ, մի վոնդիր, խնդրում եմ...

ՕԼԳԱ — Հիմարություններ ես ասում, դայակ, ո՞վ է քեզ վոնդում։

ԱՆՖԻՍԱ — (գլուխը դնում է նրա կրծքին) Հարազատս, անգինս, ես աշխատում եմ, շարշարվում... Հենց թուլանամ, բոլորը կասեն՝ չքվիր... Իսկ ո՞ւր պիտի գնամ։ Ո՞ւր։ Ութսուն տարեկանում։ Ութսուներկու տարեկանում...

ՕԼԳԱ — Նստիր, դայակ... Հոգնել ես, խեղճս... (Նստեցնում է նրան)։ Հանգստացիր, պառավս... Գունատվել ես...

Ներս է մտնում Նատաշան։

ՆԱՏԱՇԱ — Այնտեղ ասում են, որ շտապ կարգով հարկավոր է տուժածներին օգնող ընկերություն ստեղծել։ Ինչ կա որ։ Հրաշալի գաղափար է։ Առհասարակ անհրաժեշտ է օգնել աղքատներին. դա հարուստների պարտականությունն է։ Բոբիկն ու Սոֆոչկան քնած են և ամեն ինչից անտեղյակ։ Մեր տունը լեփ-լեցուն է մարդկանցով։ Հիմա քաղաքում ինֆլյուենցիա կա, վախենում եմ երեխաները վարակվեն։

ՕԼԳԱ — (նրան շլսելով) Այս սենյակից հրդեհը չի երևում... խաղաղ է այստեղ...

ՆԱՏԱՇԱ — Այո... Ես, ամենայն հավանականությամբ, պատշաճ տեսք չունեմ։ (Հայելու դիմաց)։ Ասում են՝ գիրացել եմ։ Կեղծիք է։ Բոլորովին էլ ոչ։ Իսկ Մաշան քնած է, հոգնել է խեղճը։ (Անֆիսային, սառը)։ Իմ ներկայությամբ չհամարձակվես նստել։ Ոտքի։ Հեռացի՛ր այստեղից։

Անֆիսան գնում է, դադար։

Թե ինչո՞ւ ես պահում այդ պառավին, չեմ հասկանում։

ՕԼԳԱ — (սթափվելով) Ներիր, ես էլ չեմ հասկանում։

ՆԱՏԱՇԱ — Նրա հարկը բոլորովին չկա։ Գեղջկուհի է, թող գյուղում ապրի։ Երես է առել։ Ես սիրում եմ, որ տանը կարգ ու կանոն լինի։ Ավելորդ շունչ տանը պիտի չլինի։ (Շոյում է Օլգայի դեմքը)։ Դու էլ ես հոգնել։ Հոգնել է մեր պետուհին։ Երբ իմ Սոֆոչկան մեծանա ու գիմնազիա ընդունվի, ես կսկսեմ սարսափել քեզանից։

ՕԼԳԱ — Ես պետ չեմ դառնա։

ՆԱՏԱՇԱ — Քեզ կընտրեն, Օլեչկա։ Դա վճռված հարց է։

ՕԼԳԱ — Ես կհրաժարվեմ։ Չեմ կարող... Իմ ուժերից վեր է... (Ջուր է խմում)։ Դու շատ կոպիտ վարվեցիր դայակի հետ... Ներիր, ես նման վարմունք չեմ կարող տանել... Աչքերիս առաջ սևացավ...

ՆԱՏԱՇԱ — (հուզված) Ներիր, Օլյա, ներիր... Ես չէի կամենում քեզ վշտացնել։

Մաշան ոտքի է ելնում, վերցնում է բարձը ու բարկացած հեռանում։

ՕԼԳԱ — Հասկացիր, սիրելիս...Մենք գուցե տարօրինակ դաստիարակություն ենք ստացել, բայց ես չեմ կարող տանել նման վարվելաձև։ Նման վերաբերմունքն ինձ ճնշում է։ Ես հիվանդանում եմ... Ես, պարզապես, հոգեկան անկում եմ ապրում։

ՆԱՏԱՇԱ — Ներիր, ներիր։ (Համբուրում է նրան)։

ՕԼԳԱ — Ամեն մի, թեկուզև աննշան կոպտություն, աննրբանկատորեն ասված ամեն մի բառ տառապանք է պատճառում ինձ...

ՆԱՏԱՇԱ — Ես հաճախ եմ ավելորդ խոսում, դա ճիշտ է, բայց համաձայնիր, սիրելիս, որ նա կարող է և ցյուղում ապրել։

ՕԼԳԱ — Նա արդեն երեսուն տարի մեր տանն է ապրում։

ՆԱՏԱՇԱ — Բայց հիմա նա այլևս չի կարողանում աշխատել։ Կամ ես ոչինչ չեմ հասկանում, կամ դու չես կամենում հասկանալ ինձ։ Նա այլևս ընդունակ չէ որևէ գործի։ Նա կամ քնում է և կամ՝ նստում։

ՕԼԳԱ — Է, թող նստի։

ՆԱՏԱՇԱ — Ինչպե՞ս թե՝ թող նստի։ Բայց չէ՞ որ նա սպասուհի է։ (Արցունքների միջից): *Ես քեզ չեմ հասկանում, Օլգա։ Ես թե դայակ ունեմ, թե ծծմեր, մենք թե սպասուհի ունենք և թե՝ խոհարար... Մեր ինչի՞ն է պետք այլևս այդ պառավը։*

Բեմից այն կողմ անազանգ է:

ՕԼԳԱ — Այս գիշերվա ընթացքում ես ծերացա տասը տարով։

ՆԱՏԱՇԱ — Մենք պիտի պայմանավորվենք, Օլգա. դու՝ գիմնազիայում, ես՝ տանը։ Քոնը գիտությունն է, իմը՝ տնտեսությունը։ Եվ եթե ես որևէ բան եմ ասում սպասուհու վերաբերյալ, ապա գիտեմ, թե ինչ եմ ասում։ Վաղը կեթ չպիտի լինի այդ հին գողը, այդ քավթառը... (Ոտքով խփում է հատակին): *Այդ վհուկը... Չհամարձակվեք ինձ բարկացնել... Չհամարձակվեք...* (Իրեն հավաքելով): *Իրավ, եթե դու չտեղափոխվես ներքին հարկ, մենք միշտ էլ կվիճաբանենք։ Դա սոսկալի է...*

Ներս է գալիս Կուլիգինը:

ԿՈՒԼԻԳԻՆ — Որտե՞ղ է Մաշան։ Պետք է տուն գնալ։ Հրդեհն, ասում են, մարում է։ (Զգվում է): *Այրվել է միայն մի թաղամաս, այնինչ քամի էր փչում և սկզբում թվում էր, թե այրվում է ողջ քաղաքը։* (Նստում է): *Հոգնել եմ։ Օլեչկա, սիրելիս... Ես հաճախ եմ մտածում. եթե չլիներ Մաշան, ես քեզ հետ կամուսնանայի։ Դու շատ լավն ես... Ուժասպառվել եմ...* (Ականջ է դնում):

ՕԼԳԱ — Ի՞նչ է։

ԿՈՒԼԻԳԻՆ — Հակառակի պես էլ, բժիշկը սարսափելի հարբած է։ Կարծես՝ դիտավորյալ։ (Ոտքի է ելնում): *Ահա, նա այստեղ է գալիս... Լսո՞ւմ եք։ Այո, գալիս է...* (Ծիծաղում է):

Ես թաքնվեմ։ (Գնում է դեպի պահարանը, կանգնում է մի անկյունում): *Ավազակի նման...*

ՕԼԳԱ — Երկու տարի էր, չէր խմում, իսկ այսօր, ըհը, հարբեց... (Նատաշայի հետ գնում է սենյակի խորքը):

Ներս է գալիս Չեբուտիկինը. առանց ճանվելու, սրաֆ տեսքով անցնում է սենյակով, կանգնում է, նայում, ապա մոտենում է լվացարանին ու լվանում ձեռքերը:

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (մռայլ) Գրողի ծոցն ամեն բան... Համա թե կոնծել եմ... Կարծում են, թե բժիշկ եմ, բուժում եմ ամեն ցավ, իսկ ես չգիտեմ ոչինչ, իմացածս էլ մոռացել եմ... Ոչինչ չեմ հիշում...

Օլգան և Նատաշան անկյան հետևում են նրան:

Գրողի ծոցն ամեն բան... Անցած չորեքշաբթի, Զասիպում, հիվանդներիցս մի կին մեռավ, և ես մեղավոր եմ նրա մահվան համար։ Այո... Ինչ-ինչ բաներ գիտեի քսանհինգ տարի առաջ։ Իսկ հիմա ոչինչ չեմ հիշում։ Ոչինչ։ Հնարավոր է, որ ես մարդ էլ չեմ, միայն ցույց եմ տալիս, թե ձեռքեր ունեմ, ոտքեր և գլուխ։ Հնարավոր է, որ ես գոյություն էլ չունեմ, միայն թվում է ինձ, թե քայլում եմ, ուտում, քնում։ (Լաց է լինում): *Օ, եթե միայն այդպես լիներ...* (Դադարեցնում է լացը, մռայլ): *Սատանան գիտե... Երեք օր առաջ ակումբում ասուլիս էր... Շեքսպիր, Վոլտեր... Ես չեմ կարդացել, ոչ մի տեղ չեմ կարդացել նրանցից, բայց դեմքիս այնպիսի արտահայտություն էի հաղորդել, թե իբր կարդացել եմ... Եվ բոլորն էլ ինձ նման... Ինչպիսի ստորություն... Ճղճիմություն... Հետո այն կնոջը հիշեցի, որին սպանեցի չորեքշաբթի օրը, ամեն ինչ հիշեցի, և հոգիս մթնեց, խառնվեց, տակնուվրա եղավ... Եվ... խմեցի...*

Իրինան, Վերշինինը, Տուզենբախը ներս են գալիս: Տուզենբախի ճակին քաղաքացիական շորեր են՝ նոր, ժամանակակից:

ԻՐԻՆԱ — Նստենք։ Այստեղ ոչ ոք չի գա։

ՎԵՐՇԻՆԻՆ — Եթե չլինեին զինվորները, ամբողջ քաղաքը կայրվեր։ Կեցցե՛ն։ (Բավականությունից շփում է ձեռքերը): *Ոսկի ժողովո՛ւրդ են։ Կեցցե՛ն հազար անգամ, կեցցեն։*

ԿՈՒԼԻԳԻՆ — (մոտենալով) Ժամը քանի՞սն է, պարոնայք։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Երեքն անց է։ Լուսանում է։

ԻՐԻՆԱ — Բոլորը նստած են դահլիճում, ոչ ոք չի հեռանում։ Եվ ձեր այդ Սոլյոնին է նստած (Չեբուտիկինին)։ Գոնե դուք գնացեք քնելու, բժիշկ։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Շ... շնորհակալ եմ... Մի անհանգստացեք։ (ՍաՀրում է մորուքը)։

ԿՈՒԼԻԳԻՆ — (ծիծաղում է) Կոնծե՞լ ես, Իվան Ռոմանիչ։ (Թրփ-թրփացնում է ուսը)։ Կեցցես։ In vino veritas[1],— ինչպես ասում էին հնում։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Բոլորն ինձ խնդրում են համերգ կազմակերպել տուժածների օգտին։

ԻՐԻՆԱ — Ո՞վ է մասնակցելու համերգին։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ջահելություն թե լինի՝ համերգ էլ կլինի։ Իմ կարծիքով, Մարիա Սերգեևնան դաշնամուր հրաշալի է նվագում։

ԿՈՒԼԻԳԻՆ — Այո, հրաշալի է նվագում։

ԻՐԻՆԱ — Նա մոռացել է... Երեք տարի է չի նվագում... Գուցեև չորս։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Այս քաղաքում բացարձակապես ոչ ոք չի հասկանում երաժշտություն։ Ոչ մեկը, բացի ինձանից, և ես հավաստում եմ իմ ազնիվ խոսքով, որ Մարիա Սերգեևնան հրաշալի է նվագում։ Կարելի է նաև ասել՝ տաղանդավոր է նվագում։

ԿՈՒԼԻԳԻՆ — Իրավացի եք, բարոն։ Ես Մաշային շատ եմ սիրում։ Նա հրաշալի է։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Նվագել այդքան կատարյալ և միևնույն ժամանակ գլուխկոտրել, որ քեզ ոչ ոք չի հասկանում...

ԿՈՒԼԻԳԻՆ — (ճառաչում է) Այո... Բայց պատշա՞ճ է, որ նա մասնակցի համերգին։

Դադար։

Ես, պարոնայք, չէ՞ որ ոչինչ չգիտեմ։ Հնարավոր է, որ պատշաճ է։ Պիտի խոստովանեմ. մեր դիրեկտորը լավ մարդ է, նույնիսկ շատ լավը, խելացի, բայց նրա հայացքները... Իհարկե, դա նրա գործը չէ։ Բայց և այնպես, եթե պնդում եք, գուցե ես խոսեմ հետը։

[1] Ճշմարտությունը գինու մեջ է (լատ.)։

Չեբուտիկինը ձեռքն է առնում նենապակուց պատրաստած ժամացույցը և տնտղում։

ՎԵՐՇԻՆԻՆ — Հրդեհի ժամանակ փոշոտվել եմ, մրոտվել...

Դադար։

Երեկ, ականջիս պոչով լսեցի, որ մեր բրիգադը ցանկանում են տեղափոխել այստեղից։ Մեկն ասում է՝ Լեհաստան, մյուսը թե՝ Չիտա։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Ես էլ եմ լսել։ Կտեղափոխեն ու քաղաքս լրիվ կդատարկվի։

ԻՐԻՆԱ — Մենք էլ կմեկնենք։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (զցում է ժամացույցը) Փշուր-փշուր եղավ...

Դադար։ Բոլորը շփոթված են և վշտացած։

ԿՈՒԼԻԳԻՆ — (փշրանքները հավաքելով) Ջարդել նման թանկարժեք իր... Ախ, Իվան Ռոմանիչ։ Ձեզ վարքից զրույից հանած եմ նշանակում։

ԻՐԻՆԱ — Դա մեր հանգուցյալ մոր ժամացույցն էր։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Հնարավոր է... Մայրիկինն է, ուրեմն թող մայրիկինը լինի... Հնարավոր է՝ ես չեմ ջարդել, միայն թվում է, թե ջարդել եմ։ Հնարավոր է՝ մեզ թվում է, թե գոյություն ունենք, իսկ իրականում՝ չկանք։ Ես ոչինչ չգիտեմ, ոչ ոք ոչինչ չգիտե։ (Դռան մոտ)։ Ի՞նչ եք նայում։ Նատաշան սիլի-բիլի է անում Պրոտոպոպովի հետ, իսկ դուք չեք տեսնում... Այ, դուք նստած եք այստեղ և ոչինչ չեք տեսնում, իսկ Նատաշան սիլի-բիլի է անում Պրոտոպոպովի հետ... (Երգում է).

Не угодно ль этот финик вам принять··· (Հեռանում է)։

ՎԵՐՇԻՆԻՆ — Այո... (Ծիծաղում է)։ Ըստ էության, տարօրինակ է այս ամենը։

Դադար։

Երբ սկսվեց հրդեհը, ես իսկույն տուն վազեցի։ Մոտենում տեսնում եմ՝ մեր տունը կանգուն է, անվնաս, վտանգից զերծ բայց երկու դուստրերս կանգնած են շեմին ներքնաշորերով, իսկ նրանց մայրը չկա։ Ժողովուրդ է խռնվել, վազվզում են ձիերը, շները։ Դուստրերիս դեմքին տագնապ է, սարսափ, աղերսանք, էլ ինչ գիտեմ թե ինչ... Սիրտս կծկվեց, երբ տեսա նրանց դեմքերը։ Տեր իմ աստված, մտածում եմ, դեռ ինչեր են տեսնելու, ապրելու այս աղջիկներն իրենց երկար

կյանքի ընթացքում։ Ես գրկեցի նրանց, վազեցի և անվերջ մտածում էի նույնը՝ գեռ ինչե՞ր են տեսնելու, ապրելու այս երկնքի տակ...

Անազանգ. դադար։

Եկա ձեզ մոտ, իսկ մայրն արդեն այստեղ է՝ բղավում է, բարկանում։

Մաշան բարձր ձեռքին գալիս, նստում է բազմոցին։

Եվ երբ դուստրերս միայն ներքնաշորերով կանգնած էին տան շեմին և փողոցը կարմրել էր կրակից ու սարսափելի աղմուկ էր չորսբոլորը, ես մտածեցի, որ նման մի բան արդեն կատարվել է տարիներ առաջ... Երբ անսպասելիորեն թշնամին էր հարձակվել՝ այրում էր, թալանում... Եվ ինչ տարբերություն անցածի և այսօրվա կատարվածի միջև... Կանցնի որոշ ժամանակ, մի երկու-երեք հարյուր տարի, և մեր այսօրվա կյանքին կնայեն վախով ու հեգնանքով, մեր ամեն ինչը կթվա գռեհիկ, կոպիտ, տարօրինակ... Օ՜, ինչպիսի կյանք է լինելու։ (Ծիծաղում է)։ *Ներեցեք, ես էլի փիլիսոփայեցի։ Թույլ տվեք շարունակել, պարոնայք։ Շատ եմ ուզում փիլիսոփայել, տրամադրությունս է այդպիսին։*

Դադար։

Կարծես քնել են բոլորը։ Ուրեմն, ես ասում եմ՝ ինչպիսի կյանք է լինելու։ Դուք չեք էլ կարող երևակայել։ Ձեզ նմանները քաղաքում հիմա երեքն են, բայց ապագայում կլինեն ավելի շատ և կգա ժամանակը, երբ ամեն ինչ կփոխվի ձեր ուզածի պես, մարդիկ կապրեն ձեզ նման, հետո... Դուք էլ կհնանաք, կծնվեն նոր մարդիկ, ովքեր կապրեն ձեզանից գեղեցիկ։ (Ծիծաղում է)։ *Այսօր տրամադրությունս մի տեսակ ուրիշ է... Ձափից ավելի ապրել եմ ուզում...* (Երգում է)։ Любви все возрасты покорны, ее порывы благотворны... (Ծիծաղում է)։

ՄԱՇԱ — Տրամ-տամ-տամ...

ՎԵՐՇԻՆԻՆ — Տրամ-տամ-տամ...

ՄԱՇԱ — Տրա-րա-րա՞...

ՎԵՐՇԻՆԻՆ — Տրա-տա-տա։ (Ծիծաղում է)։

Ներս է գալիս Ֆեդոտիկը։

ՖԵԴՈՏԻԿ — (պարում է)։ Այրվեց, այրվեց, ողջ ունեցվածքս այրվեց։

Ծիծաղ։

ԻՐԻՆԱ — Ի՞նչ չար կատակ է։ Ամե՞ն ինչ այրվեց։

ՖԵԴՈՏԻԿ — (ծիծաղում է) Ամեն ինչ։ Ոչինչ չմնաց։ Եվ կիթառը այրվեց և լուսանկարչական սարքը և իմ բոլոր նամակներն այրվեցին։ Ձեզ ծոցատետր պիտի նվիրեի, դա էլ այրվեց...

Ներս է գալիս Սոլյոնին։

ԻՐԻՆԱ — Խնդրում եմ հեռանաք, Վասիլի Վասիլիչ։ Այստեղ չի կարելի։

ՍՈԼՅՈՆԻ — Ինչո՞ւ բարոնին կարելի է, իսկ ինձ՝ ոչ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Իրոք, պետք է հեռանալ։ Ի՞նչ լուր հրդեհից։

ՍՈԼՅՈՆԻ — Ասում են՝ մարում է։ Ոչ, ինձ համար տարօրինակ է, թե ինչու բարոնին կարելի է, իսկ ինձ՝ ոչ։ (Հանում է օծանելիքի սրվակը և օծում է իրեն)։

ՎԵՐՇԻՆԻՆ — Տրամ-տամ-տա՞մ։

ՄԱՇԱ — Տրամ-տամ։

ՎԵՐՇԻՆԻՆ — (ծիծաղում է, Սոլյոնիին) Գնանք դահլիճ։

ՍՈԼՅՈՆԻ — Լավ... Հենց այդպես էլ կգրանցենք։ Սույն միտքը կարելի է և ավելի պարզաբանել, բայց վախենում եմ, թե եփած հավերի ծիծաղն էլ գա... (Նայում է Տուզենբախին)։ *Ջու-ջու-ջու...* (Հեռանում է Վերշինինի և Ֆեդոտիկի հետ)։

ԻՐԻՆԱ — Այս ինչ հոտեր գցեց Սոլյոնին... (Դժկամորեն)։ *Բարոնը քնել է։ Բարո՛ն, բարո՛ն...*

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (սթափվելով) Հոգնած եմ... Աղյուսի գործարան... Չէ, ես չեմ զառանցում, իրոք շատ շուտով աղյուսի գործարան եմ գնալու։ Պիտի աշխատեմ։ Արդեն պայմանավորվել եմ։ (Իրինային, ֆետշոռեն)։ *Դուք այնպես գունատ եք, գեղեցիկ ու հրապուրիչ... Ինձ թվում է, թե ձեր գունատությունը լույսի նման ճեղքում է խավարը։ Դուք վշտացած եք, դուք դժգոհ եք կյանքից... Օ՜, եկեք ինձ հետ, գնանք մեկտեղ աշխատելու։*

ՄԱՇԱ — Նիկոլայ Լվովիչ, հեռացեք այստեղից։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (ծիծաղում է) Դուք այստե՞ղ եք։ Ես ձեզ չեմ տեսնում։ (Համբուրում է Իրինայի ձեռքը)։ *Ցտեսություն, ես*

գնում եմ... Նայում եմ ձեզ և հիշում ձեր անվանակոչության հեռավոր այն օրը. դուք առույգ էիք, ուրախ, խոսում էիք աշխատանքից, երջանկությունից... Եվ այն ժամանակ ես էլ էի անրջում երջանիկ կյանք։ Որտե՞ղ է այդ կյանքը։ (Համբուրում է ձեռքը)։ Ձեր աչքերում արցունքներ կան։ Պառկեք քնելու, արդեն լուսանում է։ Բացվում է առավոտը... Եթե ինձ միայն թույլ տրվեր զոհել կյանքս հանուն ձեզ...

ՄԱՇԱ — Նիկոլայ Լվովիչ... Սա ի՞նչ բան է... Դե, հեռացեք...

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Հեռանում եմ... (Գնում է)։

ՄԱՇԱ — (պառկում է) Դու քնա՞ծ ես, Ֆյոդոր։

ԿՈՒԼԻԳԻՆ — Հը՞։

ՄԱՇԱ — Գուցե տուն գնայիր։

ԿՈՒԼԻԳԻՆ — Սիրելիդ իմ Մաշա, թանկագինդ իմ Մաշա...

ԻՐԻՆԱ — Նա ուժ չունի... Հանգիստ թող նրան, Ֆեդյա։

ԿՈՒԼԻԳԻՆ — Հիմա կգնամ... Իմ կինը լավն է, հրաշք է... Սիրում եմ քեզ, միակս...

ՄԱՇԱ — (բարկացած) Amo, amas, amat, amamus, amatis, amant[1].

ԿՈՒԼԻԳԻՆ — (ծիծաղում)) Չէ, իրոք, նա զարմանահրաշ կին է։ Յոթ տարի է, ինչ ամուսնացել ենք, իսկ ինձ թվում է, թե երեկ պսակվեցինք։ Ազնիվ խոսք։ Դու, իրոք, զարմանահրաշ կին ես։ Ես գոհ եմ, գո՜հ եմ, գո՜հ եմ։

ՄԱՇԱ — Ձանձրացրիր, ձանձրացրիր, ձանձրացրիր... (Ելնում է տեղից ու խոսում նստած)։ Ահա դուրս չի գալիս գլխիցս... Պարզապես զայրացուցիչ է... Մեխի նման խրվել է գլխումս ու լռել այլևս չեմ կարողանում։ Անդրեյի մասին է խոսքը... Գրավ է դրել տունը, իսկ գումարն ամբողջությամբ վերցրել է նրա կինը։ Բայց տունը չէ՞ որ միայն իրենը չէ, բոլորինս է։ Նա պետք է իմանա դա, եթե կարգին մարդ է։

ԿՈՒԼԻԳԻՆ — Սիրտ ունե՞ս, Մաշա։ Ինչի՞դ է պետք։ Անդրյուշան խրվել է պարտքերի մեջ, դե, աստված նրան օգնական...

ՄԱՇԱ — Ամեն դեպքում դա զայրացուցիչ է։ (Պառկում է)։

ԿՈՒԼԻԳԻՆ — Մենք՝ ես ու դու, աղքատ չենք։ Ես աշխատում եմ, դասեր եմ տալիս... Ազնիվ մարդ եմ... Հասարակ... Omnia mea mecum porto[2], ինչպես ասում են...

[1] Սիրում եմ, սիրում ես, սիրում է և այլն (լատ.)։

[2] Իմ ամեն ինչը ինձ հետ է (լատ.)։

ՄԱՇԱ — Ինձ ոչինչ պետք չէ, ինձ զայրացնում է անարդարությունը։

Դադար։

Գնա, Ֆյոդոր։

ԿՈՒԼԻԳԻՆ — (համբուրում է նրան) Դու հոգնած ես։ Հանգստացիր մի կես ժամ, ես այնտեղ կնստեմ-կսպասեմ... Քնիր... (Գնում է)։ Ես գոհ եմ, գոհ եմ, գոհ եմ... (Հեռանում է)։

ԻՐԻՆԱ — Իսկապես, ինչպես մանրացավ մեր Անդրյուշան, ինչպես խեղճացավ ու ծերացավ այդ կնոջ ձեռքին։ Ժամանակին պրոֆեսոր էր ուզում դառնալ, իսկ երեկ պարծեցավ, թե վերջապես խցկվեց զեմստվոյական վարչության մեջ։ Նա անդամ է, իսկ Պրոտոպոպովը՝ նախագահ... Ամբողջ քաղաքը խոսում է, ծիծաղում, միայն նա է, որ ոչինչ չգիտե ու ոչինչ չի տեսնում... Բոլորը վազեցին հրդեհը հանգցնելու, իսկ նա այնպես էր նստած իր սենյակում, ասես ոչինչ էլ չէր եղել։ Ջութակ էր նվագում։ (Ձայնին)։ Օ՜, սոսկալի է, սոսկալի, սոսկալի... (Լաց է լինում)։ Ես չեմ կարող, այլևս չեմ կարող... Չեմ կարող...

Օլգան դուրս է գալիս շիրմայի հետևից։

(Բարձր հեծկլտում է)։ Դո՜ւրս շպրտեք ինձ լուսամուտից, դո՜ւրս շպրտեք, ես այլևս չեմ կարող...

ՕԼԳԱ — (վախեցած) Ի՞նչ պատահեց, սիրելիս...

ԻՐԻՆԱ — (հեկեկալով) Ի՞նչ եղան... Ո՞ւր գնացին... Աստված իմ, աստված իմ... Ես ամեն ամեն ինչ մոռացել եմ... Գլխումս խառնաշփոթ է։ Ես չեմ հիշում, թե ինչպես է իտալերեն լուսամուտը, կամ, ասենք՝ առաստաղը... Ամեն ինչ մոռանում եմ, ամեն օր մոռանում եմ, իսկ կյանքը փախչում է ու երբեք հետ չի դառնա, երբեք, երբեք մենք չենք գնա Մոսկվա... Ես զգում եմ, որ չենք գնա...

ՕԼԳԱ — Սիրելիս, սիրելիս...

ԻՐԻՆԱ — (զուսպ) Օ՜, ես շատ դժբախտ եմ։ Ես չեմ կարող աշխատել ու չեմ աշխատի։ Բավակա՜ն է, բավակա՜ն է։ Հեռագրավարուհի էի, իսկ հիմա ծառայում եմ քաղաքային վարչությունում և ատում, արհամարհում եմ այն ամենը, ինչ ստիպված եմ կատարել... Ես քսանչորս տարեկան եմ, աշխատում եմ վաղուց և ուղեղս արդեն չորացել է... Ես նիհարել եմ, տգեղացել, ծերացել, և ոչ մի բավականություն, ոչ

մի հաճույք չունեմ... Իսկ ժամանակը թռչում է, և ինձ անվերջ թվում է, թե իսկական, գեղեցիկ կյանքից հետզհետե հեռանում եմ ու սուզվում անդունդը։ Ես հուսահատության մեջ եմ և չեմ հասկանում, թե ինչպես է, որ մինչև օրս դեռ ողջ եմ ու ինքնասպան չեմ եղել...

ՕԼԳԱ — Մի լար, քաղցրիկս, մի լար... Ես տառապում եմ...

ԻՐԻՆԱ — Չեմ լալիս, չեմ լալիս... Բավական է... Տես, էլ չեմ լալիս... Բավական է... Վերջ...

ՕԼԳԱ — Սիրելիս, ասում եմ քեզ որպես քույր, որպես բարեկամ. եթե ինձ լսես՝ կամուսնանաս բարոնի հետ։

Իրինան կամացուկ լալիս է։

Դու նրան հարգում ես, չէ՞, բարձր գնահատում։ Ճիշտ է, նա գեղեցիկ չէ, բայց օրինավոր մարդ է ու մաքուր... Չէ՞ որ ամուսնանում են ոչ թե սիրուց, այլ որպեսզի կատարեն իրենց պարտքը։ Ես, գոնե, այդպես եմ մտածում և կամուսնանայի առանց սիրո։ Ով էլ ձեռքս խնդրեր՝ կամուսնանայի, միայն թե օրինավոր մարդ լիներ։ Նույնիսկ ծերունու հետ կպսակվեմ...

ԻՐԻՆԱ — Ես անվերջ սպասում էի, թե կտեղափոխվենք Մոսկվա, և այնտեղ կհանդիպեմ բախտիս, նրան, ում երազել եմ, սիրել։ Բայց ամեն ինչ ցնորք է... ամեն ինչ ցնորք է...

ՕԼԳԱ — (գրկելով Իրոջը) Սիրելիս, գեղեցկուհիս, ես քեզ հասկանում եմ։ Երբ բարոնը թողեց զինվորական ծառայությունը և եկավ մեզ մոտ քաղաքացիական բաճկոնակով, ինձ այնքան տգեղ թվաց, որ լաց եղա։ Նա հարցրեց. «Ինչո՞ւ եք լալիս»։ Ի՞նչ պատասխանեի նրան։ Բայց եթե աստված կամենա միացնել ձեզ, ես ուրախ կլինեմ։

Մոմը ձեռին Նատաշան լուռ անցնում է բեմով՝ աջ դռնից դեպի ձախ։

ՄԱՇԱ — (նստում է) Նա այնպես է քայլում, կարծես ինքն է հրդեհել քաղաքը։

ՕԼԳԱ — Մաշա, դու հիմար ես։ Մեր ընտանիքի ամենահիմարը։ Ներիր, խնդրում եմ։

Դադար։

ՄԱՇԱ — Ես խոստովանել եմ ուզում... Հոգիս ճզմվում է։ Կխոստովանեմ ձեր առջև և վերջ, ուրիշ ոչ մեկին ոչ մի

խոսք... Հիմա, այս րոպեին կասեմ... (Կամացուկ)։ Սա իմ գաղտնիքն է։ Բայց դուք պիտի իմանաք... Չեմ կարող լռել...

Դադար։

Ես... սիրում եմ... Սիրում եմ այդ մարդուն... Դուք նրան տեսաք քիչ առաջ... Մի խոսքով, սիրում եմ Վերշինինին...

ՕԼԳԱ — (մտնում է շիրմայի հետև) Վերջ տուր։ Միևնույն է, ես չեմ լսում։

ՄԱՇԱ — (բռնում է գլուխը) Ի՞նչ անեմ ես, ինչպե՞ս անեմ... Սկզբում նա ինձ տարօրինակ թվաց, հետո խղճացի նրան... Հետո սիրեցի... Սիրեցի նրան իր ձայնի համար, բառերի, դժբախտությունների, դուստրերի համար...

ՕԼԳԱ — (շիրմայի հետևից) Ես ոչինչ չեմ լսում։ Ինչ հիմարություն էլ դուրս տաս, մեկ է, չեմ լսում։

ՄԱՇԱ — Է, հիմար ես դու, Օլյա։ Սիրում եմ, ուրեմն դա է իմ ճակատագիրը։ Նշանակում է՝ բախտս է։ Նա էլ է ինձ սիրում։ Սարսափելի է, հա՞։ Լավ չի, հա՞։ (Քաշում է Իրինայի ձեռքից, դեպի իրեն է ձգում)։ Օ՜, սիրելիս, ինչպես ենք ապրելու մեր կյանքը, ինչ է մեզ սպասվում... Երբ որևէ սիրավեպ ես կարդում, թվում է, թե ամեն ինչ ապրված է, հասկանալի, իսկ երբ ինքդ ես սիրում, զգում ես, որ ոչ ոք ոչինչ չգիտե և ամեն մեկն ինքը պիտի վճռի իր անելիքը։ Սիրելի քույրերս... խոստովանեցի, հիմա կլռեմ... Հիմա կդառնամ Գոգոլի խելագարը... Լռություն, լռություն...

Անդրեյը, ապա՝ Ֆերապոնտը։

ԱՆԴՐԵՅ — (բարկացած) Ի՞նչ ես ուզում։ Չեմ հասկանում։

ՖԵՐԱՊՈՆՏ — (դռան մեջ, անշտապ) Ես, Անդրեյ Սերգեևիչ, արդեն տասներորդ անգամն եմ կրկնում։

ԱՆԴՐԵՅ — Նախ և առաջ ես քեզ համար Անդրեյ Սերգեևիչ չեմ, այլ՝ ձերդ բարձր բարեծնություն։

ՖԵՐԱՊՈՆՏ — Հրշեջները, ձերդ բարեծնություն, խնդրում են թույլ տաք, որ այգու միջով դեպի գետը գնան։ Թե չէ՝ շրջանցելով ժամանակ են կորցնում և իզուր շարշարվում։

ԱՆԴՐԵՅ — Լավ։ Ասա՝ թույլ եմ տալիս։

Ֆերապոնտը հեռանում է։

Հոգի հանեցին։ Ո՞ւր է Օլգան։

Օլգան դուրս է գալիս շիրմայի հետևից։

Ես քեզ մոտ եմ եկել, Տուր ինձ պահարանի բանալին։ Իմս կորցրել եմ։ Դու էլ ունես։

Օլգան անխոս տալիս է բանալին։ Իրինան մտնում է իր շիրմայի հետևը։

Դադար։

Ինչ ահավոր հրդեհ էր։ Հիմա հանգչում է։ Սատանան տանի, բարկացրեց ինձ այդ Ֆերապոնտը, և ես նրան հիմար բան ասացի... ձերդ բարձր բարեծնություն...

Դադար։

Ինչո՞ւ ես լռում, Օլգա։

Դադար։

Վաղուց ժամանակն է վերջ տալ հիմարություններին և չխռովել երեխայի նման։ Ըհը, Մաշան էլ այստեղ է։ Իրինան էլ, եկեք բացատրվենք... Մեկընդմիշտ։ Ի՞նչ ունեք իմ դեմ։ Ի՞նչ ունեք։

ՕԼԳԱ — *Վերջ տուր, Անդրյուշա։ Վաղը կբացատրվենք։* (Հուզված)։ *Ի՞նչ տառապալից գիշեր է...*

ԱՆԴՐԵՅ — (շփոթված) *Մի՛ հուզվիր... Ես շատ սառնասրտորեն եմ հարցնում. ի՞նչ ունեք իմ դեմ։ Ասեք առանց կեղծելու։*

Վերշինինի ձայնը. «*Տրա՛մ-տա՛մ-տա՛մ*»։

ՄԱՇԱ — (ոտքի է ելնում, բարձրաձայն) *Տրա՛-տա՛-տա՛։* (Օլգային)։ *Մնաս բարով, Օլյա, աստված քեզ հետ։* (Մտնում է շիրմայի հետև, ճամբուրում է Իրինային)։ *Հանգիստ, խաղաղ քուն քեզ... Մնաս բարով, Անդրեյ։ Հեռացիր, նրանք ուժասպառված են... Վաղը կբացատրվես...* (Հեռանում է)։

ՕԼԳԱ — *Իսկապես, Անդրյուշա, հետաձգենք վաղվան...* (Մտնում է շիրմայի հետև)։ *Պետք է քնել...*

ԱՆԴՐԵՅ — *Հիմա... Ասեմ միայն ու գնամ... Հիմա... Նախ և առաջ դուք ինչ-ինչ դժգոհություններ ունեք Նատաշայից, և ես դա նկատել եմ հարսանիքի օրվանից։ Նատաշան հրաշալի, ազնիվ մարդ է։ Շիտակ ու անկեղծ. ահա իմ կարծիքը։ Կնոջս ես սիրում եմ ու հարգում, հասկանում եք, հարգում եմ և պահանջում, որ հարգեն նաև ուրիշները։ Կրկնում եմ՝ նա ազնիվ, շիտակ մարդ է, իսկ ձեր բոլոր դժգոհությունները, ներեցեք, պարզապես քմահաճություններ են...*

Դադար։

Երկրորդ. դուք կարծես թե բարկանում եք, որ ես պրոֆեսոր չեմ ու չեմ զբաղվում գիտությամբ։ Բայց ես ծառայում եմ, ես զեմստվոյական վարչության անդամ եմ և իմ ծառայությունը ես համարում եմ նույնքան պատվարեր, որքան գիտական ծառայությունը։ Ես զեմստվոյական վարչության անդամ եմ և, եթե ուզում եք իմանալ, հպարտանում եմ դրանով...

Դադար։

Երրորդ, ես էլի ասելիք ունեմ... Ես գրավ եմ դրել տունը՝ առանց ձեզ տեղյակ պահելու։ Մեղավոր եմ ձեր առաջ ու ներում եմ խնդրում։ Ես ստիպված էի... Պարտքերս են հարկադրել... Երեսունհինգ հազար... Ես այլևս չեմ խաղում, վաղուց եմ թողել, բայց գլխավորը, որպես արդարացո՛ւմ, պիտի ասեմ, որ դուք աղջիկներ եք, թոշակ եք ստանում, իսկ ես, այսպես ասած, ոչ մի քոռ կոպեկ...

Դադար։

ԿՈՒԼԻԳԻՆ — (դռան մոտ) *Մաշան չկա՞։* (Անհանգիստ)։ *Ո՞ւր է նա։ Տարօրինակ է։* (Հեռանում է)։

ԱՆԴՐԵՅ — *Ձեն լսում... Նատաշան հրաշալի, ազնիվ մարդ է։* (Քայլում է բեմով, հետո կանգ է առնում)։ *Երբ ամուսնացա, կարծում էի՝ երջանիկ կլինենք... Բոլորս... Բայց, աստված իմ...* (Լալիս է)։ *Սիրելի քույրեր, թանկագիններս, մի հավատացեք ինձ, չհավատաք իմ ոչ մի խոսքին...* (Հեռանում է)։

ԿՈՒԼԻԳԻՆ — (դռան մոտ, անհանգիստ) *Ո՞ւր է Մաշան։ Այստեղ չէ՞։ Տարօրինակ է։* (Հեռանում է)։

Անհազանգ։ Բեմը դատարկ է։

ԻՐԻՆԱ — (շիրմայի հետևից) *Օլյա, այդ ո՞վ է թակում հատակը։*

ՕԼԳԱ — *Բժիշկ Իվան Ռոմանիչը։ Հարբած է։*

ԻՐԻՆԱ — *Ինչ անհանգիստ գիշեր է։*

Դադար։

ՕԼԳԱ — (գլուխը դուրս է հանում շիրմայի հետևից) *Լսեցի՞ր։ Բրիգադը տեղափոխում են, տանում ուրիշ, հեռու մի տեղ։*

ՕԼԳԱ — Դատարկ լուրեր են։

ԻՐԻՆԱ — Բոլորովին մենակ կմնանք... Օլյա...

ՕԼԳԱ — Ի՞նչ, սիրելիս...

ԻՐԻՆԱ — Ես, թանկագինս, հարգում, գնահատում եմ բարոնին, նա հրաշալի մարդ է, ես կամուսնանամ նրա հետ, համաձայն եմ, միայն թե... մեկնենք Մոսկվա... Աղաչում եմ, մեկնենք... Մոսկվայից լավ տեղ չես գտնի այս աշխարհում։ Գնա՛նք, հա՞, Օլյա... Գնա՛նք...

Վարագույր

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պ ր ո զ ո ր ո վ ն ե ր ի տան դիմացի ճիճ այգին։ Եղևնիներով երիզված ծառուղու վերջում երևում է գետը։ Գետի մյուս ափին անտառն է։

Աջ կողմում տան բաց պատշգամբն է. սեղանին շշեր կան և բաժակներ. ինչ առաջ շամպայն են խմել։ Ցերեկվա ժամը տասներկուսն է։ Դեպի գետը տանող փողոցում երբեմն մարդիկ են երևում։ Առագորեն անցնում են ճինգ գինվոր։ Չ ե բ ո ւ տ ի կ ի ն ը բարենոգի տրամադրության մեջ է. այս տրամադրությունը մնում է մինչև գործողության ավարտը։ Նա նստած է բազկաթոռին՝ այգու մեջ, սպասում է նրավերի։ Գլխին գլխարկ կա, ձեռքին՝ ձեռնափայտ։ Ի ր ի ն ա ն, անբեղ Կ ո ւ լ ի գ ի ն ը, որի վզից չքանչան է կախված, և Տ ո ւ զ ե ն բ ա խ ը կանգնած են պատշգամբում։ Ճանապարհ են գցում Ֆ ե դ ո տ ի կ ի ն և Ռ ո դ ե ի ն, որոնք իջնում են սանդուղքով։ Երկու սպան էլ երթային համազգեստով են։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (համբուրվում է Ֆեդոտիկի հետ) Դուք լավն եք... Մենք բարեկամների պես ապրեցինք։ (Համբուրվում է Ռոդեի հետ)։ Էլի մի անգամ՝ գնաք բարով, թանկագինս...

ԻՐԻՆԱ — Ցտեսություն։

ՖԵԴՈՏԻԿ — Ոչ թե ցտեսություն, այլ՝ մնաք բարով... Մենք այլևս չենք հանդիպի։

ԿՈՒԼԻԳԻՆ — Ո՞վ գիտե։ (Սրբում է աչքերը, ժպտում)։ Ահա, ես էլ լաց եղա։

ԻՐԻՆԱ — Օրերից մի օր կհանդիպենք։

ՖԵԴՈՏԻԿ — Տասը-տասնհինգ տարի ա՞նց։ Բայց այն ժամանակ մենք հազիվ թե ճանաչենք մեկմեկու... սառը կբարևենք... (Հանում է լուսանկարչական սարքը)։ Կանգնեք... Մի վերջին անգամ...

ՌՈԴԵ — (գրկում է Տուզենբախին) *Ձենք հանդիպի այլևս...* (Համբուրում է Իրինայի ձեռքը): *Շնորհակալ եմ ամե՛ն, ամե՛ն ինչի համար։*

ՖԵԴՈՏԻԿ — *Սպասիր։*

ՏՈՒԶԵՆԲԱԽ — *Ասված բարի է, կհանդիպենք։ Գրեք մեզ, անպայման նամակ գրեք։*

ՌՈԴԵ — (ճայացքն ուղղում է այգուն) *Մնաք բարով, ծառեր։* (Բղավում է): *Հոպ-հոպ։*

Դադար։

Մնաս բարով, արձագանք...

ԿՈՒԼԻԳԻՆ — *Դուք կամուսնանաք Լեհաստանում... Լեհուհի կինը ձեզ կգրկի ու կասի՝ «կոխայնե»։* (Միծաղում է):

ՖԵԴՈՏԻԿ — (ժամացույցին նայելով) *Մի ժամ էլ չմնաց։ Մեր մարտկոցից միայն Սոլյոնին է բեռնանավով գնալու, իսկ մենք՝ շարաքայլով։ Այսօր կգնան երեք մարտկոց, վաղը՝ նույնպես երեքը և քաղաքում կտիրի լռություն ու խաղաղություն։*

ՏՈՒԶԵՆԲԱԽ — *Եվ սոսկալի ձանձրույթ։*

ՌՈԴԵ — *Իսկ որտե՞ղ է Մարիա Սերգեևնան։*

ԿՈՒԼԻԳԻՆ — *Մաշան այգում է։*

ՖԵԴՈՏԻԿ — *Պետք է հրաժեշտ տալ։*

ՌՈԴԵ — *Մնաք բարով... Շուտ հեռանանք, թե չէ լաց կլինեմ։* (Արագորեն գրկում է Տուզենբախին և Կուլիգինին, համբուրում է Իրինայի ձեռքերը): *Մենք այստեղ հրաշալի ապրեցինք...*

ՖԵԴՈՏԻԿ — (Կուլիգինին) *Սա ձեզ հիշատակ, ի սրտե... Ծոցատետր է՝ մատիտով... Մենք այսպես կգնանք, դեպի գետը...*

Գնում են, հետ են նայում։

ՌՈԴԵ — (բղավում է) *Հոպ-հոպ։*

ԿՈՒԼԻԳԻՆ — (բղավում է) *Գնաք բարո՞վ։*

Բեմի խորքում Ֆեդոտիկը և Ռոդեն հանդիպում են Մաշային, հրաժեշտ են տալիս, Մաշան գնում է նրանց հետ։

ԻՐԻՆԱ — *Գնացին...* (Նստում է սանդուղքի ստորին աստիճանին)։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Իսկ ինձ մոռացան հրաժեշտ տալ։*

ԻՐԻՆԱ — *Իսկ դո՞ւք ինչու լռեցիք։*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Դե ես էլ մոռացա... Այսինքն, շուտով ես կհանդիպեմ նրանց։ Վաղը մեկնում եմ... Այո... Մի օր մնաց։ Մի տարի անց կազատեն ինձ ծառայությունից, և ես կրկին այստեղ կգամ ու վերջին օրերս կապրեմ ձեզ հետ... Մինչև թոշակս մեկ տարի է մնացել...* (Գրպանն է խցկում լրագիրը, հանում է մեկ ուրիշը): *Կվերադառնամ ձեզ մոտ և արմատապես կփոխեմ ապրելակերպս։ Կդառնամ սուսիկ-փուսիկ, բարեհամբույր, դուրեկան։*

ԻՐԻՆԱ — *Դուք, իրոք, պետք է փոխեք ձեր ապրելակերպը, աղավնյակս։ Պետք է։*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Այո։ Զգում եմ։* (*Կամացուկ երգում է*)։ Тарара... бумбия... сижу на тумбе я...

ԿՈՒԼԻԳԻՆ — *Անուղղելին ես դու, Իվան Ռոմանիչ, անուղղելին...*

ԻՐԻՆԱ — *Ֆեոդորը սափրել է բեղը։ Նայել չեմ կարողանում դեմքին։*

ԿՈՒԼԻԳԻՆ — *Ինչ է, վա՞տ է։*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Քիչ է մնում ասեմ, թե ինչի է նման ձեր դեմքը։*

ԿՈՒԼԻԳԻՆ — *Ի՞նչ արած։ Այդպես է ընդունված,* modus vivendi[1]. *Մեր դիրեկտորը բեղ չունի, և ես էլ, ուրեմն, հենց դարձա տեսուչ, սափրեցի ավելորդ բեղս։ Ոչ մեկին դուր չի գալիս, իսկ ինձ համար, միևնույն է։ Ես գոհ եմ։ Բեղով թե անբեղ, մեկ է, գոհ եմ։* (Նստում է)։

Այգու խորքում Անդրեյը սայլակով տանում է ֆնած երեխային։

ԻՐԻՆԱ — *Իվան Ռոմանիչ, աղավնյակս, հարազատս, ես... անհանգիստ եմ... Դուք երեկ եղել եք զբոսայգում, ասացեք, ի՞նչ է կատարվել այնտեղ։*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Ինչ է կատարվե՞լ։ Ոչինչ։ Դատարկ բաներ են։* (Լրագիր է կարդում): *Միևնույն է։*

ԿՈՒԼԻԳԻՆ — *Պատմում են, թե իբր Սոլյոնին ու բարոնը երեկ հանդիպել են զբոսայգում, թատրոնի մոտ...*

ՏՈՒԶԵՆԲԱԽ — *Վերջ տվեք... Ի՞նչ կարիք կա...* (Ձեռքը թափ է տալիս ու մտնում տուն):

ԿՈՒԼԻԳԻՆ — *Թատրոնի մոտ... Սոլյոնին կպչում է բարոնին, սա էլ չի համբերում, վիրավորական ինչ-ինչ խոսք է ասում...*

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — *Ես չգիտեմ։ Հիմարություն է ամեն ինչ...*

ԿՈՒԼԻԳԻՆ — *Ասում են, թե Սոլյոնին սիրահարված է Իրինային*

---

[1] *Այդպես է սահմանված (լատ.)։*

և այդ պատճառով է ատում բարոնին... Դա հասկանալի է... Իրինան հրաշք աղջիկ է։ Նա նույնիսկ նման է Մաշային, նրա նման խոհուն է... Միայն թե քո բնավորությունը, Իրինա, ավելի փափուկ է, մեղմ։ Թեև Մաշային էլ շատ լավն է։ Ես նրան սիրում եմ։ Իմ Մաշային։

Այգու խորքում լսվում են՝ «Աու... հոպ-հոպ»։

ԻՐԻՆԱ — (ցնցվում է) Ինձ այսօր ամեն բան վախեցնում է։

Դադար։

Ճաշից հետո ես կուղարկեմ բոլոր իրերս։ Արդեն կապկպել եմ։ Բարոնի հետ մենք վաղը պսակվում ենք և մեկնում աղյուսի գործարան, իսկ հաջորդ օրը ես արդեն դպրոցում կլինեմ, և կսկսվի նոր կյանքը։ Երբ ես ուսուցչուհի դառնալու քննություն հանձնեցի, նույնիսկ լաց եղա ուրախությունից...

Դադար։

Ուր որ է կգա իրերը տեղափոխող սայլը...

ԿՈՒԼԻԳԻՆ — Այդ ամենն այդպես է, այդպես, բայց... մի տեսակ լուրջ չէ։ Միայն գաղափարներ են, իսկ լրջություն չկա։ Այնուհանդերձ, սրտանց հաջողություն եմ մաղթում։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (ֆնֆշոռեն) Հրաշալիս, լավս, ոսկիս... Շատ առաջ ընկաք, ձեր հետևից արդեն հասնել չի լինի... Ես շատ հետ մնացի, ճիշտ և ճիշտ պառաված չվող հավքի նման... Թռեք, սիրելիներս, թռեք, ու աստված ձեզ օգնական։

Դադար։

Իզուր եք սափրել ձեր բեղը, Ֆեոդոր Իլիչ։

ԿՈՒԼԻԳԻՆ — Դե լավ, բավական է։ (Հոգոց է հանում)։ Այսօր, ահա, կգնան զինվորականները, և ամեն ինչ կընկնի իր հունի մեջ։ Ինչ էլ որ ասեն, Մաշան լավ, ազնիվ կին է։ Ես նրան շատ եմ սիրում և շնորհակալ եմ իմ բախտից... Մարդկանց ճակատագիրը տարբեր է լինում։ Մեր հարկային վարչությունում մի ոմն Կոզիրյով է ծառայում։ Ինձ հետ է սովորել, վռնդեցին գիմնազիայի հինգերորդ դասարանից։ Ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ ut consecutivum[1]-ը։ Հիմա նա ծայրաստիճան աղքատության մեջ է, հիվանդ... Երբ հանդիպում եմ նրան, ասում եմ. «Բարև, ut consecutivum!»։ Այո, ասում է, հենց consecutivum, և հազում է ամբողջ։ Իսկ իմ բախտը միշտ էլ բերել է։ Ես երջանիկ եմ, ահա, նույնիսկ Ստանիսլավի երկրորդ աստիճանի շքանշան ունեմ և ինքս եմ հիմա ուրիշներին դասավանդում այդ ut consecutivum-ը։ Ես, անշուշտ, խելացի մարդ եմ, շատերից եմ խելոք, բայց երջանկությունն այլ բան է...

Տաքը դաշնամուր են նվագում՝ «Կույսի աղոթքը»։

ԻՐԻՆԱ — Վաղը երեկոյան ես արդեն չեմ լսի այդ «Կույսի աղոթքը» և չեմ հանդիպի այլևս Պրոտոպոպովին...

Իսկ այդ Պրոտոպոպովը նստած է հյուրասենյակում. այսօր էլ է եկել...

ԿՈՒԼԻԳԻՆ — Պետուհին դեռ չի՞ եկել։

ԻՐԻՆԱ — Ոչ, նրան շտապ կանչել էին։ Եթե միայն կարողանաք երևակայել, թե որքան դժվար է ինձ համար ապրել այստեղ մենակ, առանց Օլյայի։ Նա ապրում է գիմնազիայում։ Պետ է, ամբողջ օրը զբաղված է գործերով, իսկ ես մենակ եմ, ձանձրանում եմ, անելիք չկա և արդեն ատելի է դարձել ինձ իմ սենյակը։ Ահա թե ինչու որոշեցի. եթե ինձ վիճակված չէ ապրել Մոսկվայում, թող այդպես լինի։ Նշանակում է՝ ճակատագիր է։ Ոչինչ անել չես կարող... Աստծո կամքն է։ Նիկոլայ Լվովիչն ինձ առաջարկություն արեց... Մտածեցի և վճռեցի։ Նա լավ մարդ է, զարմանալիորեն լավ մարդ... Եվ հանկարծ, հոգուս վրա ասես թևեր բուսեցին... Ես ուրախացա, թեթևացա և կրկին ցանկացա աշխատել, աշխատել... Միայն թե երեկ ինչ-ինչ բան է պատահել, ինչ-որ գաղտնիք է հիմա կախված իմ գլխավերևում...

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Հիմարություն է...

ՆԱՏԱՇԱ — (լուսամուտից) Պետուհին եկավ։

ԿՈՒԼԻԳԻՆ — Օլգան է եկել։ Գնանք։

Իրինայի հետ տուն է մտնում։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (լրագիր է կարդում, կամացուկ երգում) Та-ра-ра... бумбия... сижу на тумбе я...

Մաշան է մոտենում։ Խորքում Անդրեյն է՝ սայլակով։

ՄԱՇԱ — Իր համար նստած է, բազմած...

Դադար։

[1] Շարահյուսական դարձվածք լատիներենում։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Ի՞նչ կա որ...

ՄԱՇԱ — (նստում է) Ոչինչ...

Դուք սիրո՞ւմ էիք իմ մորը։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Շատ։

ՄԱՇԱ — Իսկ նա՞։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — (դադարից հետո) Ես արդեն չեմ հիշում։

ՄԱՇԱ — Մինուճարս այստե՞ղ է։ Մի ժամանակ մեր խոհարար Մարֆան էր այդպես կոչում իր ոստիկանին։ Մինուճարս։ Մինուճարս եկե՞լ է։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Դեռ ոչ։

ՄԱՇԱ — Երբ երջանկությունդ մեկ-մեկ ես ճանկում և պատառ-պատառ, հետո էլ կորցնում, ինչպես ես, ապա աստիճանաբար կոպտանում ես, դառնում չար։ (Մատով կուրծքն է ցույց տալիս). Ահա այստեղ եռում է... (Նայում է սայլակով մոտեցող Անդրեյին)։ Ահա և Անդրեյը, մեր սիրասուն եղբայրիկը... Բոլոր հույսերը կորան... Հազարավոր մարդիկ վեր բարձրացրին զանգը, որի ձուլման համար վիթխարի աշխատանք ու դրամ էր վատնվել և հանկարծ զանգը ընկավ ու փշրվեց... Այդպես էլ, ահա, Անդրեյը...

ԱՆԴՐԵՅ — Ե՞րբ է, վերջապես, այս տունը խաղաղվելու։ Ինչ աղմուկ է...

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Շուտով։ (Նայում է ժամացույցին)։ Իմ ժամացույցը հին է, զարկերով... (Լարում է։ Լսվում են զարկերը)։ Առաջին, երկրորդ և հինգերորդ մարտկոցները կմեկնեն ժամը մեկին։

Դադար։

Իսկ ես՝ վաղը կմեկնեմ։

ԱՆԴՐԵՅ — Ընդմի՞շտ։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Չգիտեմ։ Հնարավոր է, մեկ տարուց վերադառնամ։ Թեև, սատանան գիտե... Միևնույն է...

Հեռվից լսվում է տավղի և ջութակի նվագ։

ԱՆԴՐԵՅ — Կդատարկվի քաղաքը։ Կխլանա, կփակվի ասես կապարիչով։

Դադար։

Ինչ-որ բան է պատահել՝ երեկ, թատրոնի մոտ։ Բոլորը խոսում են, իսկ ես ոչինչ չգիտեմ։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Ոչինչ չի պատահել։ Հիմարություն է։ Սոլյոնին խայթել է բարոնին, սա էլ տաքացել ու վիրավորել է նրան, ի վերջո, ստացվել է այնպես, որ Սոլյոնին պարտավոր էր մենամարտի հրավիրել։ (Նայում է ժամացույցին)։ Կարծես թե ժամանակն է... Տասներկուսն անց կեսին, պետական անտառակում, այ, գետից այն կողմ, երևում է այստեղից... Տրաք-տրաք։ (Ծիծաղում է)։ Սոլյոնին երևակայում է, թե ինքը Լերմոնտովն է և նույնիսկ ոտանավորներ է գրում։ Կատակը՝ կատակ, բայց նա երեք անգամ մենամարտել է։

ՄԱՇԱ — Ո՞վ։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Սոլյոնին։

ՄԱՇԱ — Իսկ բարո՞նը։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Բարոնն ի՞նչ։

Դադար։

ՄԱՇԱ — Գլխումս խառնաշփոթ է... Ամեն դեպքում, կարող եմ ասել, որ պետք է արգելել։ Նա կարող է վիրավորել բարոնին կամ, նույնիսկ, սպանել...

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Լավ մարդ է բարոնը, բայց դե մեկ բարոնով պակաս կլինենք կամ ավել՝ ի՞նչ տարբերություն։ Թող կրակեն։ Միևնույն է։

Այգուց այն կողմ ճչում են՝ «Ա՜... հոպ-հոպ»։

Կսպասես... Սկվորցովն է կանչում՝ մարտավիկան... նստած է նավակում...

Դադար։

ԱՆԴՐԵՅ — Իմ կարծիքով մենամարտին մասնակցելը, նույնիսկ որպես բժիշկ ներկա լինելը, անբարոյականություն է։

ՁԵԲՈՒՏԻԿԻՆ — Դա միայն թվում է... Մենք չկանք, ոչինչ չկա այս երկնքի տակ... Մենք գոյություն չունենք, միայն թվում է, թե կանք... Եվ՝ մի՞թե միևնույն չէ...

ՄԱՇԱ — Ահա. այսպես, օրերով խոսում են, խոսում... (Գնում է)։ Ապրում ես այնպիսի մի վայրում, ուր մեկ էլ տեսար ձյուն թափվեց գլխիդ, իսկ սրանք խոսում են, խոսում... (Կանգ է առնում)։ Ես տուն չեմ մտնի, ես չեմ կարող մտնել այս տունը... Երբ Վերշինինը գա, հայտնեք ինձ...(Քայլում է ծառուղիով)։ Արդեն հեռանում են չվող թռչունները...

(Նայում է վեր)։ Կարապներ են կամ բադեր... Սիրելիներս, դուք ինձնից երջանիկ եք... (Հեռանում է)։

ԱՆԴՐԵՅ — Կդատարկվի մեր տունը։ Կմեկնեն սպաները, կմեկնեք և դուք, քույրս կամուսնանա, և ես կմնամ մենակ։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Բայց դուք կի՛ն ունեք։

Ֆերապոնտը գալիս է՝ ձեռքին թղթեր։

ԱՆԴՐԵՅ — Կինը՝ կին է։ Նա ազնիվ, օրինավոր, դե, բարի կին է, բայց նրա ներսում իրեն մանրացնող, կույր, կուշտուկավոր ու անասնային մի ինչ-որ բան կա։ Համենայն դեպս, նա մարդ չէ։ Ասում եմ ձեզ որպես բարեկամի, միակ բարեկամի, որի առջև կարող եմ բացել սիրտս։ Ես սիրում եմ Նատաշային, դա այդպես է, բայց, երբեմն նա չափից ավելի գռեհիկ է լինում, և այդ պահերին ես ինձ կորցնում եմ, չեմ հասկանում, թե ինչու և ինչի համար եմ սիրում նրան, կամ, ավելի ճիշտ, ինչու եմ սիրել...

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (ոտքի է ելնում) Ես, եղբայրս, մեկնում եմ վաղը, գուցեև այլևս չհանդիպենք և ահա քեզ իմ խորհուրդը. գիտե՞ս ինչ արա... հագիր գլխարկդ, ձեռքդ առ մահակն ու... հեռացիր... Հեռացիր, գնա առանց հետ նայելու։ Ինչքան հեռու գնաս, այնքան ավելի լավ...

Բեմի խորքում երևում է Սոլյոնին՝ երկու սպաների հետ։ Տեսնելով Չեբուտիկինին, նա շրջվում է։ Սպաները շարունակում են գնալ։

ՍՈԼՅՈՆԻ — Բժիշկ, ժամանակն է։ Տասներկուսն անց կես է։ (Բարևում է Անդրեյին)։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Գալիս եմ... Հիմա... Զզվել եմ բոլորիցդ էլ... (Անդրեյին)։ Եթե որևէ մեկն ինձ հարցնի, Անդրյուշա, ասա, շուտով կվերադառնա... (Հառաչում է)։ Ա՛խ, ա՛խ, ա՛խ...

ՍՈԼՅՈՆԻ — Նա «ախ» քաշել էլ չհասցրեց, արջը վրան պինդ նստեց։ (Գնում է նրա հետ)։ Ի՞նչ ես տնքտնքում, պառավ։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Հենց այնպես։

ՍՈԼՅՈՆԻ — Ո՞նց է առողջությունդ։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (բարկացած) Բողկի պես։

ՍՈԼՅՈՆԻ — Իզուր ես հուզվում։ Ես համը չեմ հանի... Ես միայն կսպանեմ նրան, ինչպես կտցար են սպանում։ (Հանում է օծանելիքի սրվակը, շփում է ձեռքերը)։ Այսօր մի ամբողջ սրվակ եմ օգտագործել, բայց ձեռքերս չեն փոխել իրենց հոտը։ Դիակի հոտ են փչում...

Դադար։

Այսպես... Հիշո՞ւմ եք այս բանաստեղծությունը...

Իսկ նա խռված փոթորիկ էր փնտրում,
Կարծես հանգիստ կա փոթորիկներում...

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ— Այո։ Նա «ախ» քաշել էլ չհասցրեց, արջը վրան պինդ նստեց։ (Գնում է Սոլյոնիի հետ)։

Լսվում են ճիչեր՝ «Ա՜խ, Հո՛պ-հո՛պ, ա՜խ։ Գալիս են Անդրեյն ու Ֆերապոնտը։

ՖԵՐԱՊՈՆՏ — Թղթերը պիտի ստորագրել...

ԱՆԴՐԵՅ — (ջղային) Հանգիստ թող ինձ։ Աղաչում եմ։ (Հեռանում է սայլակով)։

ՖԵՐԱՊՈՆՏ — Թղթերը նրա համար են, որ ստորագրվեն։ (Հեռանում է բեմի խորքը)։

Գալիս են Իրինան ու Տուզենբախը՝ ծղոտե գլխարկով։ Կուլիգինն անցնում է բեմի յայնքով և բղավում՝ «Ա՜խ, Մաշա ա՜խ...»։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Նա քաղաքում երևի միակն է, որ ուրախացել է զինվորականների մեկնումով։

ԻՐԻՆԱ — Դա հասկանալի է։

Դադար։

Հիմա մեր քաղաքը կդատարկվի։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (ժամացույցին նայելով) Սիրելիս, ես շատ-շուտով հետ կգամ...

ԻՐԻՆԱ — Ո՞ւր եք գնում։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — Քաղաք պիտի գնամ... հետո... ընկերներիս եմ ճանապարհելու...

ԻՐԻՆԱ — Ճիշտ չէ... Նիկոլայ, ինչո՞ւ ես այսօր այդպես ցրված։

Դադար։

Ի՞նչ է պատահել երեկ, թատրոնի մոտ։

ՏՈՒԶԵՆԲԱԽ — (անհամբեր շարժումներով) Երկու ժամից հետ կգամ և մենք միասին կլինենք։ (Համբուրում է նրա ձեռքը)։ Աննմանս... (Նայում է նրա դեմքին)։ Հինգ տարի է արդեն,

Ես սիրում եմ քեզ և չեմ կարողանում ընտելանալ, որովհետև դու անվերջ գեղեցկանում ես... Ի՞նչ հրաշալի, զարմանալի մազեր ունես դու... ինչպիսի՜ աչքեր... Վաղը ես քեզ կտանեմ... Մենք կաշխատենք, կհարստանանք, իմ բոլոր երազանքները շունչ ու մարմին կառնեն. դու երջանիկ կլինես։ Միայն մի բան է ինձ տանջում... Դու ինձ չես սիրում...

ԻՐԻՆԱ — *Ես մեղք չունեմ... Ես կդառնամ քո կինը... հավատարիմ կլինեմ ու հնազանդ, բայց ինչ կարող ես անել, որ սեր չկա։* (Լալիս է)։ *Ես կյանքումս ոչ մի անգամ չեմ սիրել։ Օ՜, ես այնպես եմ երազել... Երազել եմ վաղուց, օր ու գիշեր, բայց իմ հոգին ոնց որ թանկարժեք դաշնամուր լինի. փակ է, իսկ բանալին՝ կորած։*

Դադար։

Քո հայացքն անհանգիստ է։

ՏՈՒՋԵՆԲԱԽ — *Ողջ գիշերը չեմ քնել։ Ինձ սարսափեցնող ոչ մի բան չկա, միայն կորսված այդ բանալին է քրքրում իմ հոգին, չի թողնում քնել... Ասա ինձ որևէ մի բան...*

Դադար։

Մի բառ ասա...

ԻՐԻՆԱ — *Ի՞նչ ասեմ։ Ի՞նչ ասեմ...*

ՏՈՒՋԵՆԲԱԽ — *Որևէ մի բան...*

ԻՐԻՆԱ — *Բավակա՛ն է... Բավակա՛ն է...*

Դադար։

ՏՈՒՋԵՆԲԱԽ — *Ինչ դատարկ, ընչին բաներ են, երբեմն, կյանքում մեծ նշանակություն ստանում... Սովորականի պես ծիծաղում ես դրանց վրա, առաջվա նման համարում դրանց դատարկ, ընչին, և, այնուամենայնիվ, գնում ես ու զգում, որ ուժ չունես կանգնելու։ Օ՜, չխոսենք այդ մասին... Ես ուրախ եմ։ Ասես առաջին անգամ եմ տեսնում այս եղևնիները, լորենիները, կեչիները, և այս ամենը հետաքրքրասիրությամբ նայում են վրաս ու սպասում։ Ինչ գեղեցիկ ծառեր են և ինչ գեղեցիկ կյանք է պետք հյուսել սրանց շուրջը...*

Բղավոց՝ «*Ա՜ռ... հո՛պ-հո՛պ*»։

Գնալ է պետք։ Ժամն է... Այս ծառը, տես, չորացել է, բայց

քամու տակ մյուսների պես օրորվում է, ճոճվում։ Ճիշտ դրա պես, թվում է, ես էլ, եթե մեռնեմ, պիտի այս կամ այն կերպ մասնակցեմ կյանքին։ Մնաս բարով, սիրելիս... (Համբուրում է ձեռքը)։ *Քո փաստաթղթերը, որ տվեցիր ինձ, սեղանի վրա են, օրացույցի տակ։*

ԻՐԻՆԱ — *Ես կգամ քեզ հետ։*

ՏՈՒՋԵՆԲԱԽ — (տագնապով) *Ոչ, ոչ...* (Արագորեն գնում է, ծառուղում կանգնում)։ *Իրինա՜...*

ԻՐԻՆԱ — *Ի՞նչ է...*

ՏՈՒՋԵՆԲԱԽ — (շիմանալով ինչ ասի) *Այսօր սուրճ չեմ խմել։ Պատվիրիր՝ եփեն։* (Արագորեն հեռանում է)։

Իրինան կանգնած է մտախոհ, հետո գնում է բեմի խորքը ու նստում նոնը։ Գալիս է Անդրեյը՝ մանկան սայլակով։ Երևում է Ֆերապոնտը։

ՖԵՐԱՊՈՆՏ — *Անդրեյ Սերգեիչ, թղթերն, ախր, իմը չեն, պետական են։ Ե՞ս հո չեմ հորինել դրանք։*

ԱՆԴՐԵՅ — *Ո՞ւր է, ո՞ւր գնաց իմ անցյալը, երբ ջահել էի, ուրախ, խելացի, երբ թե երազանքներս էին փայլուն, թե միտքս... Երբ ներկան ու ապագան լուսավորված էր հույսով։ Ինչի՞ց է տեսնես, որ մենք կյանքներս դեռ կարգին չսկսած, դառնում ենք ձանձրալի, գորշ, անհետաքրքիր, ծույլ, անտարբեր, անպետք, դժբախտ... Մեր քաղաքը գոյություն ունի արդեն երկու հարյուր տարի, հարյուր հազար բնակիչ կա քաղաքում, բայց չկա մեկը, որ նման չլինի մյուսներին. ոչ մի մեծություն՝ ոչ անցյալում, ոչ էլ հիմա, ոչ մի գիտնական կամ նկարիչ, կամ քիչ թե շատ աչքի ընկնող անհատականություն, որը նախանձ կամ նմանվելու կրքոտ ցանկություն բորբոքի... Միայն ուտում են, խմում, քնում, հետո՝ մեռնում... Ծնվում են ուրիշները, և էլի ուտում են, խմում, քնում, և որպեսզի չբթանան ձանձրույթից, կյանքն աշխուժացնում են ճղճիմ բամբասանքներով, օղիով, թղթախաղով... Կանայք խաբում են ամուսիններին, սրանք էլ կեղծում են, ցույց տալիս, թե ոչինչ չեն տեսնում, ոչինչ չեն լսում, և անդիմադրելի ու ստոր այս մթնոլորտը թունավորում է երեխաներին, մարում նրանց ներսի աստծո կրակը, և նրանք դառնում են նույնպիսի ողորմելիներ, ինչպիսին ծնողներն են, դառնում են մեկը մեկից չվանաղանվող դիակներ...* (Ֆերապոնտին, բարկացած)։ *Ի՞նչ ես ուզում։*

ՖԵՐԱՊՈՆՏ — Ինչ եմ ուզում... Թղթերն է պետք ստորագրել։

ԱՆԴՐԵՅ — Ձզվեցրիր դու ինձ։

ՖԵՐԱՊՈՆՏ — (թղթերը տալով) Քիչ առաջ պետական պալատի դռնապանն ասաց, թե, իբր, անցած ձմեռ Պետերբուրգում սառնամանիքը հասել է երկու հարյուր աստիճանի։

ԱՆԴՐԵՅ — Ներկան զզվելի է, բայց երբ մտածում եմ ապագայի մասին... Հրաշալի է... Այնքան թեթևություն է լցվում ներսս, այնպիսի տարածություն է բացվում... Հեռվում լույս է առկայծում, ես տեսնում եմ ազատությունը, տեսնում եմ, թե ինչպես ենք մենք՝ ես ու երեխաներս, ազատագրվում պարապ-սարապությունից, կվասից, կաղամբով տրվող սագից, հետճաշյա քնից, նվաստացուցիչ անբանությունից...

ՖԵՐԱՊՈՆՏ — Իբր երկու հազար մարդ է սառել... Ասում են՝ ժողովուրդը սարսափի մեջ էր ընկել... Կամ՝ Պետերբուրգում է եղել, կամ՝ Մոսկվայում... Լավ չեմ հիշում։

ԱՆԴՐԵՅ — (ֆնֆշացած) Սիրելի իմ քույրեր, հրաշալի իմ քույրեր։ (Արտասվում է)։ Մաշա, քույրիկս...

ՆԱՏԱՇԱ — (լուսամուտից) Ո՞վ է այստեղ այդպես բարձր խոսում։ Դո՞ւ ես, Անդրյուշա։ Սոֆոչկային կարթնացնես։ Il ne faut pas faire du bruit' la Sophie est dormée déjà· Vous êtes un ours[1]։ (Բարկացած)։ Խոսել ես ուզում՝ տուր սայլակը մեկ ուրիշին։ Ֆերապոնտ, վերցրու աղայից սայլակը։

ՖԵՐԱՊՈՆՏ — Լսում եմ։ (Վերցնում է սայլակը)։

ԱՆԴՐԵՅ — (շփոթված) Ես կամաց եմ խոսում։

ՆԱՏԱՇԱ — (լուսամուտից այն կողմ, զգվելով դուրսն) Բոբիկ։ Զարաճճի Բոբիկ... Հիմար Բոբիկ...

ԱՆԴՐԵՅ — (թղթերը զննելով) Լավ, կնայեմ, ու որտեղ պետք է, կստորագրեմ, իսկ դու էլի վարչություն կտանես... (Տուն է մտնում՝ կարդալով թղթերը։ Ֆերապոնտը սայլակը քշում է այգու խորքը)։

ՆԱՏԱՇԱ — (լուսամուտից այն կողմ) Ինչպե՞ս է իմ անունը, Բոբիկ։ Սիրելիս, քաղցրիկս... Իսկ սա՞ ով է։ Սա հորաքույր Օլյան է։ Հորաքրոջդ ասա՝ բարև, Օլյա։

Թափառական երաժիշտներ՝ մի տղամարդ, մի աղջիկ ջութակ ու տավիղ են նվագում։ Տնից դուրս են գալիս Վերշինինը, Օլգան և Անֆիսան, մի պահ լսում են նվագը։ Մոտենում է Իրինան։

[1] Մի աղմկեք, Սոֆին արդեն քնած է։ Դուք արշ եք (աղավաղված ֆրանս.)։

ՕԼԳԱ — Մեր այգին կարծես միջանցիկ բակ լինի՝ գնում են, գալիս... Դայակ, երաժիշտներին որևէ բան տուր...

ԱՆՖԻՍԱ — (մանրադրամ է տալիս երաժիշտներին) Հեռացեք, աստված ձեզ հետ։

Երաժիշտները գլուխ տալով հեռանում են։

Դառնացած ժողովուրդ են։ Կուշտ փորով չես նվագի։ (Իրինային)։ Բարև, Արիշա։ (Համբուրում է նրան)։ Տես, աղջիկս, ապրում եմ, կամ։ Գիմնազիայում՝ պետական բնակարանում, Օլյուշկայի հետ... Այդպես դասավորեց վերջին տարիներս, տեր աստված... Մնված օրից նման կյանքով չեմ ապրել... Բնակարանը մեծ է, պետական, ես մի առանձին սենյակ ունեմ ու մահճակալ... Ամեն ինչ պետական է։ Զարթնում եմ գիշերով և, տեր իմ աստված, սուրբ աստվածածին, զգում եմ, որ ինձանից երջանիկ մարդ այս աշխարհում չկա։

ՎԵՐՇԻՆԻՆ — (նայում է ժամացույցին) Գնալու ժամն է, Օլգա Սերգեևնա։ Պիտի գնամ։

Դադար։

Ես ձեզ ցանկանում եմ ամենա, ամենա... Որտե՞ղ է Մարիա Սերգեևնան։

ԻՐԻՆԱ — Այգում է, երևի... Գնամ՝ փնտրեմ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Բարի եղեք։ Ես շտապում եմ։

ԱՆՖԻՍԱ — Ես էլ գնամ՝ փնտրելու։ (Բղավում է) Մաշենկա, առ՜ւ... (Հեռանում է Իրինայի հետ)։ Ա՜ռ-ո՜ւ...

ՎԵՐՇԻՆԻՆ — Ամեն ինչ վերջ ունի։ Ահա և հրաժեշտի ժամը հասավ։ (Նայում է ժամացույցին)։ Մեր պատվին սեղան էին բացել, շամպայն էինք խմում, քաղաքագլուխը ճառ արտասանեց։ Ես ուտում էի ու լսում, բայց հոգով այստեղ էի, ձեզ մոտ... (Նայում է այգու կողմը)։ Ընտելացել եմ ես ձեզ։

ՕԼԳԱ — Կհանդիպե՞նք երբևէ։

ՎԵՐՇԻՆԻՆ — Հավանաբար՝ ոչ։

Դադար։

Կինս և դուստրերս դեռ երկու ամիս կմնան այստեղ։ Խնդրում եմ, եթե որևէ բան պատահի, եթե հարկ լինի...

ՕԼԳԱ — Այո, այո, իհարկե... Հանգիստ եղեք։

Դադար։

Քաղաքում վաղը ոչ մի զինվորական չի մնա, ամեն ինչ կդառնա հիշողություն և, ձեզ համար, իհարկե, կսկսվի նոր կյանք...

Դադար:

Ամեն ինչ մեր ցանկության հակառակ է լինում։ Ես չէի ուզում պետ դառնալ, բայց դարձա։ Չէ, մենք չենք տեսնի Մոսկվան...

ՎԵՐՇԻՆԻՆ — Դե, շնորհակալություն ամեն ինչի համար... Նեբող կլինենք, եթե որևէ բան այնպես չեմ արել... չափից ավելի եմ խոսել, դրա համար էլ ներեք և բարի հիշեք։

ՕԼԳԱ — (արբում է աչքերը) Ինչո՞ւ է Մաշան ուշանում...

ՎԵՐՇԻՆԻՆ — Էլ ի՞նչ ասեմ բաժանումից առաջ։ Ինչի՞ շուրջ ֆիլիսոփայեմ։ (Ծիծաղում է): *Ծանր է կյանքը։ Շատերիս է կյանքը դատարկ ու անհույս թվում, բայց այսուհանդերձ, պետք է գիտակցել, որ գնալով ավելի պարզվում է ու թեթևանում, և, հավանաբար, հեռու չէ այն ժամանակը, երբ լիովին կպայծառանա...* (Նայում է ժամացույցին): *Ժամանակն է։ Նախկինում մարդկությունը տարված է եղել պատերազմներով, իր ողջ գոյությունը լցրել արշավանքներով, հարձակումներով... Անցել են հիմա այդ ժամանակները, իրենց հետևից թողնելով վիթխարի դատարկ տարածություններ, որ առայժմ չգիտես ինչով լցնես... Մարդկությունը կբրբոտ փնտրում է և, անշուշտ, կգտնի։ Ա՜խ, միայն թե շուտ գտնի։*

Դադար:

Եթե միայն աշխատասիրությանը գումարվեր կրթությունը, իսկ կրթությանը՝ աշխատասիրությունը։ (Նայում է ժամացույցին): *Ուշանում եմ...*

ՕԼԳԱ — Ահա, գալիս է...

Մտնում է Մաշան:

ՎԵՐՇԻՆԻՆ — Եկել եմ... հրաժեշտ տալու...

Օլգան ֆիշ հեռանում է, որ չխանգարի:

ՄԱՇԱ — (նայելով նրա դեմքին) Գնաս բարով...

Երկարատև համբույր:

ՕԼԳԱ — Դե լավ, լավ...

Մաշան սաստիկ հեկեկում է։

ՎԵՐՇԻՆԻՆ — Գրիր ինձ... Ջմոռանաս... Թող ինձ, ուշանում եմ... Օլգա Սերգեևնա, տարեք նրան։ Ես արդեն ուշացա... (Հուզված համբուրում է Օլգայի ձեռքը, հետո կրկին գրկում է Մաշային ու արագորեն հեռանում):

ՕԼԳԱ — Դե լավ, Մաշա... Վերջացրու, սիրելիս...

Հայտնվում է Կուլիգինը:

ԿՈՒԼԻԳԻՆ — (շփոթված է) Ոչինչ, թող լաց լինի, ոչինչ... Իմ լավ, բարի Մաշա... Դու իմ կինն ես, և ես երջանիկ եմ, ինչ էլ որ պատահած լինի... Ես չեմ բողոքում և ոչ էլ հանդիմանում եմ քեզ... Ահա, Օլյան թող լինի վկա... Կապրենք առաջվա նման, և ես քեզ ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ...

ՄԱՇԱ — (հեկեկոցը զսպելով) Ծովախորշի մոտ կանաչ կաղնի կա, ոսկե շղթա է այդ կաղնուց կախ... Ոսկե շղթա է այդ կաղնուց կախ... Ես խենթանում եմ...

ՕԼԳԱ — Հանգստացիր, Մաշա... Խաղաղվիր... Ջուր տվեք...

ՄԱՇԱ — Ես այլևս չեմ լալիս...

ԿՈՒԼԻԳԻՆ — Նա այլևս չի լալիս... Նա բարի է...

Հեռավոր, խուլ կրակոց է լսվում:

ՄԱՇԱ — Ծովախորշի մոտ կանաչ կաղնի կա, ոսկե շղթա է այդ կաղնուց կախ... Կանաչ կատուն... Կանաչ կաղնին... Ես խառնում եմ, շփոթում... (Ջուր է խմում): *Անհաջող կյանք... Ինձ հիմա ոչինչ պետք չէ... Ես հիմա կխաղաղվեմ... Միևնույն է... Ինչ է նշանակում՝ ծովախորշի մոտ... Ինչո՞ւ է այդ բառը մտել գլուխս։ Մտքերս խառնվում են...*

Գալիս է Իրինան:

ՕԼԳԱ — Հանգստացիր, Մաշա։ Այ, այդպես, խելոքս... Տուն մըտնենք։

ՄԱՇԱ — (բարկացած) Չեմ մտնի ես տուն... (Հեկեկում է և իսկույն էլ դադարեցնում): *Ես այս տունը չեմ մտնում ու չեմ մտնի։*

ԻՐԻՆԱ — Եկեք գոնե նստենք միասին, լռենք։ Ես չէ՞ որ վաղը մեկնում եմ։

Դադար:

ԿՈՒԼԻԳԻՆ — Երեկ, երրորդ դասարանում մի մանչուկից խլեցի ահա այս բեղն ու մորուքը... (Հագնում է կեղծամը): Նման եմ գերմաներենի ուսուցչին, այնպես չէ՞, (Միծաղում է): Միծաղելի տղաներ են...

ՄԱՇԱ — Իրոք, նմանվեցիր ձեր գերմանացուն։

ՕԼԳԱ — (ծիծաղում է) Այո։

Մաշան լալիս է:

ԻՐԻՆԱ — Վերջ տուր, Մաշա...

ԿՈՒԼԻԳԻՆ — Շատ է նման։

Գալիս է Նատաշան:

ՆԱՏԱՇԱ — (սպասումուն) Ինչպե՞ս։ Սոֆոչկայի մոտ կնստի Պրոտոպոպովը, Միխայիլ Իվանիչը, իսկ Բորիկին թող զբոսնելու տանի Անդրեյ Սերգեևիչը։ Ինչ մեծ հոգս են այս երեխաները... (Իրինային): Վաղը մեկնում ես, հա՞, Իրինա։ Ափսոս... Գոնե մի շաբաթ մնայիր... (Տեսնելով Կուլիգինին, ճչում է: Կուլիգինը ծիծաղում և ճանում է կեղծամը): Վախեցրիք, մի՞թե կարելի է այդպես կատակել... (Իրինային): Ես քեզ ընտելացել եմ, կարծում ես՝ հե՞շտ է քեզանից բաժանվելը։ Քո սենյակը ես կտամ Անդրեյին՝ իր ջութակի հետ, թող սղոցի, որքան սիրտն ուզում է, իսկ նրա սենյակում կապրի Սոֆոչկան։ Զարմանալի երեխա է։ Քաղցր աղջիկ է։ Այսօր նա ինձ հառեց իր խոշոր աչիկներն ու ասաց. «Մամա»։

ԿՈՒԼԻԳԻՆ — Այո, գեղեցիկ երեխա է։

ՆԱՏԱՇԱ — Վաղը, ուրեմն, ես մենակ կլինեմ։ (Հառաչում է): Կպատվիրեմ կտրել այս ծառուղու եղևնիները, հետո՝ այս լորենին... Երեկոյան շատ տգեղ տեսք ունի։ (Իրինային): Սիրելիս, քեզ բոլորովին չի սազում այդ գոտին... Անճաշակություն է... Առավել բաց գույնն է հարմար... Եվ ամենուր ծաղիկներ տնկել կտամ՝ թող ծաղկեն ու բուրեն։ (Խիստ): Ո՞վ է պատառաքաղը գցել նստարանին։ (Մտնելով տուն, սպասումուն): Քեզ եմ հարցնում, ո՞վ է պատառաքաղը գցել նստարանին։ (Գոռում է): Լռե՞լ։

ԿՈՒԼԻԳԻՆ — Փրփրեց։

Բեմից այն կողմ ֆայերոգ են նվագում: Բոլորն ականջ են դնում:

ՕԼԳԱ — Գնում են։

Հայտնվում է Չեբուտիկինը:

ՄԱՇԱ — Գնում են մերոնք... էհ, ինչ արած... Բարի ճանապարհ։ (Ամուսնուն): Տուն գնանք։ Որտե՞ղ է գլխարկս, թիկնոցս...

ԿՈՒԼԻԳԻՆ — Ներսում... Հիմա կբերեմ։ (Տուն է մտնում):

ՕԼԳԱ — Այո, հիմա կարելի է և ցրվել... Ժամանակն է։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Օլգա Սերգեևնա...

ՕԼԳԱ — Ի՞նչ է, բժիշկ...

Դադար:

Ի՞նչ կա...

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Ոչինչ... Չգիտեմ, թե ինչպես ասեմ... (Շշնջում է ականջին):

ՕԼԳԱ — (վախեցած) Չի՞ կարող պատահել...

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Այո... Այդպիսի պատմություն... Հոգնեցի ես, տառապեցի, չեմ ուզում այլևս խոսել... (Վշտացած): Ասենք՝ միևնույն է...

ՄԱՇԱ — Ի՞նչ է պատահել...

ՕԼԳԱ — (գրկում է Իրինային) Սարսափելի օր է... Չգիտեմ, թե ինչպես ասեմ։

ԻՐԻՆԱ — Ասեք, շտապ... Ամոթու սիրուն, ասեք։ (Լալիս է):

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — Քիչ առաջ մենամարտում սպանվեց բարոնը։

ԻՐԻՆԱ — (կամացուկ լալիս է) Ես գիտեի, ես գիտեի...

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (բեմի խորքում նստում է նստարանին) Հոգնել եմ... (Գրպանից լրագիր է հանում): Թող լաց լինեն... (Կամացուկ երգում է): Тара-ра-ра-бумбия... сижу на тумбе я... Մի՞թե միևնույնը չէ...

Երեք ֆայերոգ կանգնած են՝ ամուր սեղմված մեկմեկու:

ՄԱՇԱ — Օ՜, ինչպես են նվագում։ Նրանք հեռանում են մեզանից։ Իսկ մեկը հեռացավ բոլորովին, բոլորովին, ընդմիշտ, ու մենք մնացինք մենակ, որպեսզի ամեն ինչ սկսենք նորից։ Ապրել է պետք... Ապրել է պետք...

ԻՐԻՆԱ — (գլուխը դնում է Օլգայի կրծքին) Կգա ժամանակը, բոլորը կիմանան, թե հանուն ինչի են այս տառապանքները.... Ոչ մի գաղտնիք չի լինի... Իսկ առայժմ հարկավոր է ապրել... Հարկավոր է աշխատել, միայն աշխատել։ Վաղը ես մենակ կմեկնեմ, դպրոցում դաս կտամ և ամբողջ կյանքս

կնվիրեմ նրանց, ում պետք է։ Հիմա աշուն է, շուտով ձմեռ կլինի ու շատ ձյուն կգա... Իսկ ես պիտի աշխատեմ, պիտի աշխատեմ...

ՕԼԳԱ — (գրկում է Ֆույրերին) *Երաժշտությունն այնպես ուրախ է, առույգ, որ ուզում ես ապրել։ Օ՜, աստված իմ... Ժամանակ կանցնի, մենք էլ ընդմիշտ կհեռանանք, մեզ էլ կմոռանան... Մեր դեմքերը կմոռանան, մեր ձայները, չեն հիշի, թե քանիսն ենք եղել, բայց մեր տառապանքները կվերածվեն ուրախության բոլոր նրանց համար, ովքեր կապրեն մեզանից հետո։ Երջանկություն և խաղաղություն կիջնի երկրի վրա, և մեզ կհիշեն բարի խոսքով ու օրինակով։ Օ՜, սիրելի քույրեր, մեր կյանքը դեռ ավարտված չէ։ Պիտի ապրենք։ Երաժշտությունն այնպես ուրախ է հնչում, այնքան կենսախինդ, որ, թվում է, էլի մի փոքր, էլի մի քիչ, և մենք կըմբռնենք, թե ինչու ենք ապրում, ինչու ենք... տառապում... Երանի ըմբռնենք... Երանի հասկանանք...*

Երաժշտությունն աստիճանաբար ճեռանում է։ Կուլիգինը ուրախ, ժպտալով բերում է Մաշայի գլխարկն ու թիկնոցը։ Անդրեյը քշում է մանկան սայլակը, որի մեջ նստած է Բոբիկը։

ՉԵԲՈՒՏԻԿԻՆ — (կամացուկ երգում է) Тара-ра-ра-бумбия... сижу на тумбе я... (Լրագիր է կարդում)։ *Միևնույն է։ Միևնույն է։*

ՕԼԳԱ — *Երանի ըմբռնենք... Երանի հասկանանք...*

Վարագույր

1900

ԲԱԼԻ ԱՅԳԻՆ

Դրամա չորս գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ ՌԱՆԵՎՍԿԱՅԱ, կալվածատիրուհի
ԱՆՅԱ, դուստրը, 17 տարեկան
ՎԱՐՅԱ, հոգեզավակը, 24 տարեկան
ԼԵՈՆԻԴ ԱՆԴՐԵԵՎԻՉ ԳԱԵՎ, Ռանևսկայայի եղբայրը
ԵՐՄՈԼԱՅ ԱԼԵՔՍԵԵՎԻՉ ԼՈՊԱԽԻՆ, վաճառական
ԳՅՈՏՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ ՏՐԻՖՈՄՈՎ, ուսանող
ԲՈՐԻՍ ԲՈՐԻՍՈՎԻՉ ՍԻՄԵՈՆՈՎ — ՊԻՇՉԻԿ, կալվածատեր
ՇԱՐԼՈՏԱ ԻՎԱՆՈՎՆԱ, տնային դաստիարակչուհի
ՍԵՄՅՈՆ ՊԱՆՏԵԼԵԵՎԻՉ ԵՊԻԽՈԴՈՎ, գործավար
ԳՈՒՆՅԱՇԱ, աղախին
ՖԻՐՍ, սպասավոր, 87 տարեկան
ՅԱՇԱ, երիտասարդ սպասավոր
ԱՆՅՈՐԴ
ԿԱՅԱՐԱՆԱՊԵՏ
ՓՈՍՏԱՏԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐ
ՀՅՈՒՐԵՐ, ՇԱՌԱՆԵՐ

Գործողությունը կատարվում է Լ. Ա. Ռանևսկայայի կալվածքում

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սենյակ, որը մինչև այժմ մանկական է կոչվում: Դռներից մեկը տանում է Անյայի սենյակը: Լուսադեմ է, շուտով արևը կծագի: Մայիս ամիսն է, բալենին ծաղկել է, բայց այգում ցուրտ է, վաղորդյան զով: Սենյակի պատուհանները փակ են:

Ներս են մտնում Դունյաշան՝ մոմը բռնած և Լոպախինը՝ գիրքը ձեռքին:

ԼՈՊԱԽԻՆ — Փառք աստծուն, գնացքն եկավ։ Ժամը քանի՞սն է։

ԴՈՒՆՅԱՇԱ — Երկուսին մոտ։ (Մոմը հանգցնում է): *Լուսացավ արդեն։*

ԼՈՊԱԽԻՆ — Ինչքա՞ն ուշացավ գնացքը։ Ամենաքիչը՝ մի երկու ժամ։ (Հորանջում է և ձգմզվում): *Բայց ես էլ՝ ոչինչ, հիմարություն արեցի։ Հատկապես եկա, որ կայարանում դիմավորեմ, ու քնեցի-մնացի... Նստած տեղս։ Ափսոս... Գոնե դու զարթնեցնեիր։*

ԴՈՒՆՅԱՇԱ — Կարծեցի՝ գնացել եք։ (Ականջ է դնում): *Ըհը, ոնց որ գալիս են արդեն։*

ԼՈՊԱԽԻՆ — (ականջ դնելով) *Չէ... Մինչև բեռները ստանան, դես-դեն...*

Դադար:

Հինգ տարի արտասահմանում էր Լյուբով Անդրեևնան, չգիտեմ հիմա ինչ տեսակ է դարձել... Լավ կին է։ Պարզ, հասարակ։ Հիշում եմ՝ տասնհինգ տարեկան տղա էի, լուսահոգի հերը,— էն ժամանակ Էստեղ գյուղում մի պստիկ խանութ ուներ,— բռունցքով խփեց երեսիս, քթիցս արյուն եկավ... Ջեմ իմանում, ինչի էինք եկել Էստեղ, հերը էլ խմած էր։ Լյուբով Անդրեևնան, հիմիկվա պես հիշում եմ՝

ջահել, նիհար-միհար. ինձ տարավ լվացարանի մոտ, այ հենց է՛ս, մանկական սենյակում։ «Լաց մի լինի, ասեց, մուժիկի տղա, կմեծանաս, կմոռանաս...»։

Դադար:

Մուժիկի տղա... ճիշտ որ, հերը մուժիկ էր, բայց ես, ըհը՝, սպիտակ ժիլետ եմ հագել, դեղին ոտնաման։ Խոզի մուրթով մարդամեջ մտանք... Մենակ թե հարուստ եմ, փող շատ ունեմ, բայց որ լավ մտածելու լինես, մուժիկ եղել, մուժիկ էլ մնացել եմ... (Թերթում է գիրքը): *Էս գիրքը կարդացի ու բան չհասկացա։ Կարդացի ու քնեցի։*

Դադար:

ԴՈՒՆՅԱՇԱ — Գիշերը շները քնած չէին, զգում են, որ տանտերերը գալիս են։

ԼՈՊԱԽԻՆ — Մի տեսակ ես, Դունյաշա...

ԴՈՒՆՅԱՇԱ — Ձեռներս դողում են։ Ուշքս հիմի կգնա։

ԼՈՊԱԽԻՆ — Շատ ես նուրբ, է՛, Դունյաշա։ Օրիորդի պես էլ հագնվում ես, ասեմ՝ մազերդ էլ։ Էդպես չի կարելի։ Տեղդ պիտի իմանաս։

Մտնում է Եպիխոդովը՝ ծաղկեփունջը ձեռքին, պիջակ է հագել և լավ փայլեցված սապոգներ, որոնք սաստիկ ճռճռում են: Ներս մտնելիս գցում է ծաղկեփունջը:

ԵՊԻԽՈԴՈՎ — (բարձրացնում է ծաղկեփունջը) *Սա այգեպանն ուղարկեց, ասաց, որ ճաշասենյակում դնեք։* (Դունյաշային է տալիս ծաղկեփունջը):

ԼՈՊԱԽԻՆ — Կվաս կբերես ինձ։

ԴՈՒՆՅԱՇԱ — Լսում եմ։ (Գնում է):

ԵՊԻԽՈԴՈՎ — Հիմա լուսադեմ է, երեք աստիճան ցուրտ, իսկ բալերը լրիվ ծաղկել են։ Ջեմ կարող հավանություն տալ մեր կլիմային։ (Հոգոց է հանում): *Ջեմ կարող։ Մեր կլիման չի կարող նպաստել ըստ ամենայնի։ Ահա, Երմոլայ Ալեքսեյիչ, թույլ տվեք դրան ավելացնել, երեք օր առաջ սապոգ առա ինձ, իսկ դրանք, կարող եմ ձեզ հավատացնել, այնպես են ճռճռում, որ այլևս անհնար է։ Ինչո՞վ կարելի է յուղել։*

ԼՈՊԱԽԻՆ — Ձեռ քաշիր։ Գլուխ չունեմ։

ԵՊԻԽՈԴՈՎ — *Ամեն օր մի որսիցե փորձանք ինձ կպատահի։ Ու չեմ տրտնջում, սովորել եմ և նույնիսկ ժպտում եմ։*

Մանում է Դունյաշան, կվաս է տալիս Լոպախինին։

Ես գնամ։ (Դիպչում է աբոռին, որն ընկնում է)։ *Հրամեցեք...* (Ասես ցնծալով)։ *Հրամեցե՛ք, ահա, ներեցեք արտահայտությանս, թե ինչն է հանգամանքը, իմիջիայլոց... Սա պարզապես նույնիսկ հիանալի է։* (Գնում է)։

ԴՈՒՆՅԱՇԱ — *Երմոլայ Ալեքսեևիչ, ասեմ ձեզ, որ Եպիխոդովն ինձ առաջարկություն է արել։*

ԼՈՊԱԽԻՆ — *Ա՜...*

ԴՈՒՆՅԱՇԱ — *Չգիտեմ ինչ անեմ... Լուրջ մարդ է, բայց մեկ-մեկ որ սկսում է խոսել, բան չեմ հասկանում։ Լավ է խոսում, սրտալի, մենակ թե՝ անհասկանալի։ Կարծես թե դուրս էլ գալիս է։ Խելագարի պես է սիրում ինձ։ Անբախտ մարդ է, ամեն օր մի բան լինում է։ Անունն էլ հենց քսաներկու փորձանք են դրել մեզ մոտ...*

ԼՈՊԱԽԻՆ — (ականջ է դնում) *Ըհը, կարծես թե գալիս են...*

ԴՈՒՆՅԱՇԱ — *Գալի՞ս են։ Էս ինչ եղավ ինձ... լրիվ սառեցի։*

ԼՈՊԱԽԻՆ — *Իսկականից գալիս են, գնանք դիմավորենք։ Տեսնես կճանաչի՞։ Հինգ տարի չենք տեսնվել։*

ԴՈՒՆՅԱՇԱ — (նուզված) *Հիմա կընկնեմ... Ահ, կընկնեմ։*

Լսվում է, թե ինչպես երկու կառք մոտեցան տանը, Լոպախինը և Դունյաշան արագ հեռանում են։ Բեմը դատարկ է։ Հարևան սենյակում աղմուկ է ծայր առնում։ Բեմը նատելով շտապ-շտապ անցնում է ձեռնափայտին հենված Ֆիրսը, որը գնացել էր Լյուբով Անդրեևնային դիմավորելու։ Հնատարազ լիվրե է նագիները և բարձակող շլյապա, խոսում է ինքն իրեն, բայց ոչ մի բառ զանազանել չի կարելի։ Բեմի հետևում աղմուկը գնալով սաստկանում է։ Ձայն. «Ա՛յ, այստեղով անցեք...» Լյուբով Անդրեևնան, Անյան և Շառլոտա Իվանովնան՝ շղթայիկով շունը առջևից, ճամփորդական զգեստներով, Վարյան՝ վերարկուով և գլխաշորով, Գաևը, Սիմեոնով-Պիշչիկը, Լոպախինը, Դունյաշան՝ կապոցով և անձրևանոցով, ծառաները՝ իրերով, բոլորն անցնում են սենյակի միջով։

ԱՆՅԱ — *Այստեղով։ Մամա, հիշո՞ւմ ես, ինչ սենյակ է սա։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (բերկրալի, լացակումած) *Մանկա՜ն։*

ՎԱՐՅԱ — *Ինչ ցուրտ է, ձեռքերս սառեցին։* (Լյուբով Անդրեևնային)։ *Ձեր սենյակները՝ սպիտակն ու մանուշակագույնը, նույնն են մնացել, մամա։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Իմ սիրելի, սքանչելի մանկական սենյակ... Ես այստեղ էի քնում, երբ փոքր էի...* (Արտասվում է)։ *Հիմա էլ կարծես փոքր եմ...* (Համբուրում է եղբորը, Վարյային, ապա՝ նորից եղբորը)։ *Իսկ Վարյան էլի նախկինն է, միանձնուհու է նման։ Դունյաշային էլ ճանաչեցի...* (Համբուրում է Դունյաշային)։

ԳԱԵՎ — *Գնացքը երկու ժամ ուշացավ։ Ի՞նչ կասեք, հը՞։ Սա ի՞նչ կարգ է։*

ՇԱՐԼՈՏԱ — (Պիշչիկին) *Իմ շունը ընկույզ էլ է ուտում։*

ՊԻՇՉԻԿ — (զարմացած) *Մի տեսեք, է՞։*

Բոլորը գնում են, Անյայից և Դունյաշայից բացի։

ԴՈՒՆՅԱՇԱ — *Շատ սպասեցինք...* (Հանում է Անյայի վերարկուն, գլխարկը)։

ԱՆՅԱ — *Ճանապարհին չորս գիշեր չեմ քնել... հիմա շատ եմ սառած։*

ԴՈՒՆՅԱՇԱ — *Դուք գնացիք մեծ պասին, ձյուն ու սառնամանիք էր, իսկ հիմա՞։ Սիրունս։* (Գիծաղում է, համբուրում նրան)։ *Աչքս ձեր ճամփին մնաց, հոգիս, անուշս... Հիմա եմ ասելու ձեզ, որ մի բոպե չեմ կարող դիմանալ...*

ԱՆՅԱ — (ծուլորեն) *Էլի՞ բան է եղել...*

ԴՈՒՆՅԱՇԱ — *Գործավար Եպիխոդովը ջրօրհնեքից հետո ինձ առաջարկություն արեց։*

ԱՆՅԱ — *Միշտ նույն բանից ես խոսում...* (Մազերն ուղղելով)։ *Բոլոր ծամկալներս կորցրել եմ...* (Շատ հոգնած է, նույնիսկ օտարվում է)։

ԴՈՒՆՅԱՇԱ — *Չգիտեմ ինչ մտածեմ։ Նա ինձ սիրում է, էնպես է սիրում։*

ԱՆՅԱ — (նայում է իր դռանը, ֆնֆշորեն) *Իմ սենյակը, իմ պատուհանները, կարծես չեմ էլ գնացել։ Ես տա՜ն եմ։ Վաղն առավոտյան կարթնանամ, կվազեմ այգի... Օ՜, եթե կարողանայի քնել։ Ամբողջ ճանապարհը չեմ քնել, անհանգստությունից տանջվում էի։*

ԴՈՒՆՅԱՇԱ — *Երեք օր առաջ Պյոտր Սերգեևիչը եկավ։*

ԱՆՅԱ — (ուրախացած) *Պե՞տյան։*

ԴՈՒՆՅԱՇԱ — *Բաղնիքում է քնած, էնտեղ էլ ապրում է։ Վախե-*

նում եմ նեղություն տամ՝ ասեց։ (Նայելով գրպանի ժամացույցին)։ Պետք է նրան զարթնեցնել, բայց Վարվառա Միխայլովնան չթողեց։ Մի զարթնեցրու՝ ասեց։

Մտնում է Վարյան, բանալիների կապուկը գոտուց կախ։

ՎԱՐՅԱ — Դունյաշա, շուտ սուրճ դիր... Մայրիկը սուրճ է ուզում։

ԴՈՒՆՅԱՇԱ — Էս բոպեիս։ (Գնում է)։

ՎԱՐՅԱ — Էհ, փառք աստծո տեղ հասաք։ Նորից տանն ես։ (Փաղաքշելով)։ Հոգիս եկավ տեղ հասավ։ Գեղեցկուհիս եկավ տեղ հասավ։

ԱՆՅԱ — Ինչե՞ր եմ քաշել։

ՎԱՐՅԱ — Պատկերացնում եմ։

ԱՆՅԱ — Ավագ շաբաթ էր, որ դուրս եկանք, դեռ ցուրտ էր։ Շառլոտան ամբողջ ճանապարհին խոսում էր, ֆոկուսներ անում։ Թե ինչի՞ համար գլխիս կապեցիր Շառլոտային...

ՎԱՐՅԱ — Քեզ չէր կարելի մենակ գնալ, հոգիս։ Տասնյոթ տարեկա՞ն։

ԱՆՅԱ — Հասանք Փարիզ, այնտեղ էլ՝ ցուրտ, ձյուն։ Ֆրանսերեն շատ վատ եմ խոսում։ Մաման հինգերորդ հարկում էր ապրում, գնում էի նրա մոտ, ինչ-որ ֆրանսիացիներ էին լինում, տիկնայք, մի կաթոլիկ ծեր քահանա՝ գիրքը ձեռքին, լիքը ծուխ, թափթփված։ Հանկարծ խղճացի մամային, այնպես խղճացի, գրկեցի գլուխը, սեղմեցի ու չէի կարողանում բաց թողնել։ Հետո մաման շարունակ շոյում էր ինձ, լաց լինում...

ՎԱՐՅԱ — (արտասվելով) Մի խոսիր, մի խոսիր...

ԱՆՅԱ — Մենտոնայի մոտի իր ամառանոցն արդեն վաճառել էր, ոչինչ չէր մնացել, ոչինչ։ Ես էլ ոչ մի կոպեկ չունեի, հազիվ տեղ հասանք։ Իսկ մաման չի հասկանում։ Նստում էինք ճաշելու կայարանում, ամենաթանկ բաներն էր պահանջում, սպասավորներին մեկական ռուբլի բաշխում։ Շառլոտան՝ նույնը։ Յաշան էլ իր բաժինն էր ուզում, ուղղակի սարսափելի էր։ Չէ որ մաման սպասավոր ունի՝ Յաշան, այստեղ բերեցինք...

ՎԱՐՅԱ — Տեսա սրիկային։

ԱՆՅԱ — Ի՞նչ եղավ։ Տոկոսները վճարեցի՞ք։

ՎԱՐՅԱ — Որտեղի՞ց։

ԱՆՅԱ — Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ...

ՎԱՐՅԱ — Օդոստոսին կալվածքը վաճառելու են...

ԱՆՅԱ — Աստվա՜ծ իմ...

ԼՈՊԱԽԻՆ — (դռնից ներս է նայում ու մնչում) Մե-ե-ե՜... (Գնում է)։

ՎԱՐՅԱ — (լաց լինելով) Այ թե կհասցնեի դրան... (Բռունցքն է բաք տալիս)։

ԱՆՅԱ — (գրկում է Վարյային, ցածրաձայն) Վարյա, նա առաջարկություն արե՞լ է։ (Վարյան ժխտաբար շարժում է գլուխը)։ Բայց չէ՞ որ սիրում է քեզ... Ինչո՞ւ չեք բացատրվում, ինչի՞ եք սպասում։

ՎԱՐՅԱ — Իմ կարծիքով, ոչինչ էլ չի ստացվի։ Գործերը՝ շատ, ինձ համար ժամանակ չունի... ուշադրություն էլ չի դարձնում։ Աստված իր հետ, տեսնել չեմ կարողանում... Բոլորը մեր հարսանիքից են խոսում, բոլորը շնորհավորում են, իրականում ոչինչ էլ չկա, ամեն ինչ երազի պես է... (Ուրիշ տոնով)։ Կրծքիդ զարդը կարծես մեղու լինի։

ԱՆՅԱ — (տրտում) Մաման գնեց։ (Գնում է իր սենյակը, խոսում է մանկավարի, ուրախ). Իսկ Փարիզում ես օդապարիկ նստեցի։

ՎԱՐՅԱ — Հոգիս եկավ տեղ հասավ։ Գեղեցկուհիս եկավ տեղ հասավ։

Դունյաշան արդեն ներս է եկել՝ սրճամանով, և սուրճ է եփում։

(Դռան մոտ կանգնած)։ Ամբողջ օրը տան գործերին եմ հետևում, հոգիս, ու շարունակ երազում։ Մի հարուստ մարդու հետ քեզ պսակեինք, ես էլ հանգիստ կլինեի, ինձ համար կգնայի մենաստան, հետո՝ Կիև... Մոսկվա, ու այդպես էլ մաման կգայի սուրբ տեղերով... Մաման կգայի ու մաման կգայի։

ԱՆՅԱ — Այգում թռչունները երգում են։ Հիմա ժամը քանի՞սն է։

ՎԱՐՅԱ — Երեքը պիտի լինի։ Քնելուդ ժամանակն է, հոգիս։ (Մտնելով Անյայի սենյակը)։ Հոյակա՜պ է...

Ներս է մտնում Յաշան՝ ծածկոցը և ճամփորդական պայուսակը ձեռքին։

ՅԱՇԱ — (կտրում է բեմը, քաղաքավարի) Կարելի՞ է այսպես անցնել։

ԴՈՒՆՅԱՇԱ — Քեզ ճանաչել չի լինի, Յաշա։ Շատ եք փոխվել արտասահմանում։

ՅԱՇԱ — Հըմ... Իսկ դո՞ւք ով կլինեք։

ԴՈՒՆՅԱՇԱ — *Երբ էստեղից գնում էիք, ես էսքան էի...* (Ցույց է տալիս հատակից բիչ վեր): *Դունյաշան եմ, Ֆյոդոր Կոզոյեդովի աղջիկը։ Չե՞ք հիշում։*

ՅԱՇԱ — *Հը՛մ... Մատղաշ։* (Շուրջն է նայում ու գրկում Դունյաշային, սա բղավում է ու գցում ափսեն: Յաշան արագ հեռանում է):

ՎԱՐՅԱ — (դռան մեջ, դժգոհ ձայնով) *Ի՞նչ եղավ էլի։*

ԴՈՒՆՅԱՇԱ — (արտասվախառը) *Ափսե ջարդեցի...*

ՎԱՐՅԱ — *Ջարը խափանվեց։*

ԱՆՅԱ — (ելնելով սենյակից) *Հարկ է մայրիկին զգուշացնել, որ Պետյան այստեղ է։*

ՎԱՐՅԱ — *Ասել եմ, չարթնացնեն նրան։*

ԱՆՅԱ — (մտախոհ) *Վեց տարի առաջ հայրիկը մահացավ, մեկ ամիս անց գետում խեղդվեց եղբայրս՝ Գրիշան, շատ լավ տղա էր, յոթ տարեկան։ Մայրիկը չդիմացավ, գնաց, առանց հետ նայելու...* (Ցնցվում է): *Ինչպե՞ս եմ հասկանում նրան, եթե իմանար։*

Դադար:

Իսկ Պետյա Տրոֆիմովը Գրիշայի ուսուցիչն էր, կարող է հուշեր արթնացնել...

Մտնում է Ֆիրսը՝ պիջակով և սպիտակ ժիլետով:

ՖԻՐՍ — (մոտենում է սրճամանին, մտաճոգված) *Տիրուհին էստեղ է խմելու...* (Քաշում է սպիտակ ձեռնոցը): *Պատրաստ է սուրճը։* (Խստությամբ՝ Դունյաշային): *Լսի՛ր։ Հապա սերո՞ւցքը։*

ԴՈՒՆՅԱՇԱ — *Ահ, աստված իմ...* (Արագ գնում է):

ՖԻՐՍ — (բնբնում է սրճամանի մոտ) *Թափթփվածի մեկը...* (մրմնջում է բերանի տակ): *Փարիզից եկան... Պարոնն էլ էր Փարիզ գնում մեկ-մեկ կառքով...* (Միծաղում է):

ՎԱՐՅԱ — *Ֆիրս, ի՞նչ ես խոսում։*

ՖԻՐՍ — *Հրամեցե՞ք։* (Ուրախացած): *Տիրուհիս է եկել։ Աչքս լուր կտրեց։ Հիմի որ մեռնեմ էլ, ոչինչ...* (Ուրախությունից լաց է լինում):

Գալիս են Լյուբով Անդրեևնան, Գաևը և Սիմեոնով-Պիշչիկը, վերջինս՝ բարակ մահուդից անթև բանկոնով է, լայն շալվարով: Գաևը ներս մտնելիս մարմնով և իրանով այնպիսի շարժումներ է անում, կարծես բիլիարդ է խաղում:

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Ինչպե՞ս էր։ Թող հիշեմ... Դեղինն՝ անկյունն։ Դուպլետ՝ մեջտեղը։*

ԳԱԵՎ — *Կտրելո՛վ՝ անկյունն։ Ժամանակին, քույրիկս, ես և դու քնում էինք այ, այս սենյակում, իսկ հիմա արդեն հիսունմեկ տարեկան եմ, որքան էլ տարօրինակ լինի...*

ԼՈՊԱԽԻՆ — *Այո, ժամանակը գնում է։*

ԳԱԵՎ — *Ո՞ւմ։*

ԼՈՊԱԽԻՆ — *Ասում եմ՝ ժամանակը գնում է։*

ԳԱԵՎ — *Իսկ այստեղից անանուխի հոտ է գալիս։*

ԱՆՅԱ — *Ես գնամ քնեմ։ Բարի գիշեր, մամա։* (Համբուրում է մորը):

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Աննման զավակս։* (Համբուրում է ձեռքերը): *Ուրա՞խ ես, որ տանն ես։ Ուշքի չեմ գալիս դեռ։*

ԱՆՅԱ — *Ցտեսություն, քեռի։*

ԳԱԵՎ — (ճամբուրում է երեսը, ձեռքերը): *Աստված քեզ պահապան։ Ինչքա՞ն ես նման մորդ։* (Քրոջը): *Լյուբա, իր տարիքին ճիշտ այսպես էիր։* (Անյան ձեռքը մեկնում է Լոպախինին և Պիշչիկին, գնում է, դուռը հետևից փակելով):

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Նա շատ հոգնեց։*

ՊԻՇՉԻԿ — *Երկար ճանապարհ էր, հապա ի՞նչ։*

ՎԱՐՅԱ — (Լոպախինին և Պիշչիկին) *Է, ինչ, պարոնայք։ Երեքը է դառնում, խիղճն էլ լավ բան է։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (ծիծաղում է) *Էլի նույնն ես, Վարյա։* (Քաշում է իր կողմն ու ճամբուրում): *Սուրճս խմեմ, բոլորս էլ կգնանք։*

Ֆիրսը ճրա ոտքի տակ բարձիկ է դնում:

Շնորհակալ եմ, հարազատս։ Վարժվել եմ սուրճին։ Գիշեր թե ցերեկ՝ խմում եմ։ Շնորհակալ եմ, ծերուկս։ (Համբուրում է Ֆիրսին):

ՎԱՐՅԱ — *Գնամ նայեմ իրերը լրի՞վ բերեցին...* (Հեռանում է):

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Մի՞թե ես եմ նստած։* (Միծաղում է): *Ուզում եմ թռչկոտել, ձեռքերս թափահարել։* (Դեմքը ծածկում է ձեռքերով): *Գուցե քնած եմ։ Աստված է վկա, սիրում եմ հայրենիքս, շատ եմ սիրում, վագոնից դուրս նայել չէի կարողանում, շարունակ լաց էի լինում։* (Արտասվախառը): *Բայց դե, պետք է խմել սուրճը։ Շնորհակալ եմ քեզ-*

նից, Ֆիրս, շնորհակալ եմ, ծերուկս։ Այնքան ուրախ եմ, որ դեռ կենդանի ես։

ՖԻՐՍ — Երեկ չէ առաջին օրը։

ԳԱԵՎ — Նա վատ է լսում։

ԼՈՊԱԽԻՆ — Քիչ հետո, առավոտյան ժամը հինգին Խարկով եմ գնալու։ Շատ ափսոս։ Ուզում էի ձեզ նայել, խոսել... էլի նույն հոյակապն եք մնացել։

ՊԻՇՉԻԿ — (ծանր շնչելով) Նույնիսկ լավացել է... Փարիզի հագուստներով...

ԼՈՊԱԽԻՆ — Ձեր եղբայրը՝ Լեոնիդ Անդրեևիչն, ահա, իմ մասին ասում է, թե բոի եմ, թե կուլակ եմ, բայց ինձ համար մեկ է։ Թող ասի։ Կուզեի մենակ, որ առաջվա պես ինձ հավատայիք, որ ձեր զարմանալի աչքերն առաջվա պես ինձ նայեին։ Ողորմած աստված։ Հայրս ձեր պապի ու հոր ճորտն է եղել, բայց դուք, հատկապես դուք, ժամանակին ինձ համար էնքան բան եք արել, որ ամեն ինչ մոռացել ու ձեզ սիրում եմ, հարազատի պես... Հարազատից էլ շատ։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Նստել չեմ կարողանում, ի վիճակի չեմ... (Վեր է թռչում և սաստիկ հուզված գնում-գալիս)։ Այս ուրախությանը չեմ դիմանա... ծիծաղեք վրաս, ես հիմար եմ... Իմ սիրելի՜ պահարան... (Համբուրում է պահարանը)։ Իմ սեղանի՜կ։

ԳԱԵՎ — Որ այստեղ չէիր, դայակը մեռավ։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (նստում է և սուրճ խմում) Այո, ասված հոգին լուսավորի։ Ինձ գրել էին։

ԳԱԵՎ — Անաստասին էլ մեռավ։ Շիլ Պետրուշկան ինձնից գնաց ու հիմա քաղաքում է մնում, պրիստավի մոտ։ (Գրպանից հանում է սառնաշաքարի տուփը, գցում բերանը)։

ՊԻՇՉԻԿ — Աղջիկս, Դաշենկան... ձեզ խոնարհ բարև էր անում...

ԼՈՊԱԽԻՆ — Ուզում եմ մի շատ հաճելի, ուրախ բան ասել ձեզ։ (Ժամացույցին նայելով)։ Հիմա գնալու եմ, խոսելու ժամանակ չկա... մի երկու խոսքով ասեմ։ Ձեզ արդեն հայտնի է, ձեր բալի այգին ծախվում է պարտքերի դիմաց, օգոստոսի քսաներկուսին աճուրդ է նշանակված, բայց մի անհանգստացեք, թանկագինս, ձեզ համար հանգիստ քնեք, ելք կա... Ահա իմ ծրագիրը։ Մի բոպե ուշադրություն։ Ձեր կալվածքը քաղաքից ընդամենը քսան վերստ է հեռու, երկաթուղին անցել է կողքով, և եթե բալի այգին ու գետափի հողերը բաժանեք հողամասերի, հետո վարձով տաք որպես ամառանոց, ամենաքիչը տարեկան քսանհինգ հազար եկամուտ կունենաք։

ԳԱԵՎ — Ներեցեք, ինչ հիմարություն էր դա։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ես ձեզ լավ չհասկացա, Երմոլայ Ալեքսեյիչ։

ԼՈՊԱԽԻՆ — Վարձակալներից ամենաքիչը տարեկան քսանհինգ ռուբլի կվերցնեք՝ դեսյատինի դիմաց, և եթե հենց հիմա հայտարարություն տաք, ապա ինչով ուզեք, երաշխավորում եմ, մինչև աշուն մի ազատ կտոր հող չեք ունենա, կխլխլեն։ Մի խոսքով, շնորհավորում եմ, դուք փրկված եք։ Տեղը՝ հրաշալի, գետը՝ խոր։ Մենակ թե, իհարկե, պետք է մի քիչ հավաքել, մաքրել... օրինակ, ասենք, բոլոր հին շինությունները քանդել է պետք, այ, էս տունը, որն արդեն բանի պետք չէ, կտրել հին բալի այգին...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Կտրե՞լ։ Սիրելիս, ներեցեք, դուք ոչինչ չեք հասկանում։ Եթե ամբողջ նահանգում մի հետաքրքիր, նույնիսկ երևելի բան կա, դա մեր բալի այգին է միայն։

ԼՈՊԱԽԻՆ — Այդ այգու երևելին մենակ շատ մեծությունն է։ Երկու տարին մեկ բալ է բռնում, էն էլ չգիտեք ինչ անեք, ոչ ոք չի առնում։

ԳԱԵՎ — «Հանրագիտական բառարանում» էլ է հիշատակված այս այգին։

ԼՈՊԱԽԻՆ — (ժամացույցին նայելով) Եթե ոչինչ չմտածենք ու մի կարծիքի չգանք, ապա օգոստոսի քսաներկուսին բալի այգին էլ, ամբողջ կալվածքն էլ աճուրդի կհանեն։ Ուրեմն, վճռե՛ք։ Ուրիշ ելք չկա, երդվում եմ։ Չկա, չկա։

ՖԻՐՍ — Առաջներում մի քառասուն-հիսուն տարի առաջ, բալը չորացնում էին, թրջում, թթու դնում, մուրաբա եփում, մեկ-մեկ էլ...

ԳԱԵՎ — Սուս մնա, Ֆիրս։

ՖԻՐՍ — Մեկ-մեկ էլ չորացրած բալը սայլերով ուղարկում էինք Մոսկվա ու Խարկով։ Փող էր բերում։ Չորացրած բալը շատ փափուկ էր լինում, հյութը մեջը, քաղցր, հոտով... էն ժամանակ ձևը գիտեին...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Իսկ հիմա՞ ինչ եղավ այդ ձևին։

ՖԻՐՍ — Մոռացել են։ Ոչ ոք չի հիշում։

ՊԻՇՉԻԿ — (Լյուբով Անդրեևնային): Ի՞նչ կար Փարիզում։ Ինչպե՞ս էր։ Գորտ կերա՞ք։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Կոկորդիլոս կերա։

ՊԻՇՉԻԿ — Մի տեսեք, է՛...

ԼՈՊԱԽԻՆ — Մինչև հիմա գյուղում մենակ հողատերեր են եղել ու մուժիկներ, հիմա հովեկներ էլ են հայտնվել։ Բոլոր քաղաքները, նույնիսկ ամենափոքրերը, հիմա ամառանոցներով են շրջապատված։ Ու կարելի է ասել, որ մի քսան տարի հետո հովեկներն արտակարգ կբազմանան։ Հիմա նա ընդամենը պատշգամբում նստած թեյ է խմում, բայց կարող է պատահել, որ սկսի իր մի դեսյատինի վրա տնտեսությամբ զբաղվել, էդ ժամանակ ձեր բալի այգին կդառնա երջանիկ, հարուստ, փարթամ...

ԳԱԵՎ — (բարկանալով) Ի՞նչ հիմարություն։

Ներս են մտնում Վարյան և Յաշան:

ՎԱՐՅԱ — Մայրիկ, երկու հեռագիր ունեք։ (Հանում է բանալին և շրխկոցով բացում ճամեմեի պահարանը) Ահա՛, սրանք են։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Փարիզից է։ (Առանց կարդալու, պատռում է հեռագրերը): Փարիզը վերջացավ...

ԳԱԵՎ — Լյուբա, իսկ գիտե՞ս, թե քանի տարեկան է այս պահարանը։ Մի շաբաթ առաջ ներքևի դարակը քաշեցի, տեսնեմ՝ թվեր են խարանած։ Պահարանը պատրաստված է ճիշտ հարյուր տարի առաջ։ Ի՞նչ կասեք։ Հը՞։ Կարելի է հոբելյանը նշել։ Անշունչ առարկա է, բայց և այնպես, ինչ էլ լինի, գրքի պահարան է։

ՊԻՇՉԻԿ — (զարմացած) Հարյուր տարի... Մի տեսեք, է՛...

ԳԱԵՎ — Այո...։ իր եմ ասել է՛... (Շոշափում է պահարանը)։ Թանկագին, մեծարգո պահարան։ Ողջունում եմ քո գոյությունը, որն ահա ավելի քան հարյուր տարի ուղղված է բարու և արդարության լուսավոր իդեալներին։ Արգասաբեր աշխատանքի քո լռին կոչը չի թուլացել հարյուր տարվա ընթացքում. մեր տոհմի սերունդների մեջ (արտասվախառն)՝ ամատար լինելով առույգությանը, լավագույն ապագայի հավատին, և մեզ դաստիարակել է բարության ու հասարակական ինքնագիտակցության իդեալներով։

Դադար:

ԼՈՊԱԽԻՆ — Այո՛...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Նույնն ես մնացել, Լյոնյա։

ԳԱԵՎ — (փոքր-ինչ շփոթված) Խաղագնդից՝ դեպի աջ անկյունը։ Կտրում եմ՝ մեջտեղը։

ԼՈՊԱԽԻՆ — (ժամացույցին նայելով) Է, ժամանակն է։

ՅԱՇԱ — (Լյուբով Անդրեևնային դեղ է տալիս) Գուցե հիմա՞ ընդունեք հաբերը...

ՊԻՇՉԻԿ — Հարկ չկա դեղորայք ընդունել, սիրելիս... դրանցից ոչ օգուտ կա, ոչ վնաս... Հապա տվեք տեսնեմ... անչափ հարգելիս։ (Վերցնում է հաբերը, լցնում ափի մեջ, փչում վրան, գցում է բերանը, վրայից կվաս խմում): Ահավասիկ։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (վախեցած) Դուք խելագարվե՞լ եք։

ՊԻՇՉԻԿ — Բոլոր հաբերը խմեցի։

ԼՈՊԱԽԻՆ — Հոր է, հո փոր չի։

Բոլորը ծիծաղում են:

ՖԻՐՍ — Ջրօրհնեքին մեզ մոտ էր, կես դույլ վարունգ կերավ... (Մոթմոթում է):

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ի՞նչ է ասում։

ՎԱՐՅԱ — Արդեն երեք տարի խոսում է այդպես։ Սովորել ենք։

ՅԱՇԱ — Ջառամյալ տարիք է։

Շառլոտա Իվանովնան՝ ճերմակ զգեստով, անչափ նիհար, ձգված, լոռնեռը գոտուց կախ, անցնում է բեմով:

ԼՈՊԱԽԻՆ — Ներեցեք, Շառլոտա Իվանովնա, չհասցրեցի ձեզ ողջունել։ (Ուզում է ձեռքը համբուրել):

ՇԱՐԼՈՏԱ — (ձեռքը հետ քաշելով) Եթե ձեզ թույլ տան ձեռքը համբուրել, հետո կցանկանաք բազուկը համբուրել, հետո՝ ուսը...

ԼՈՊԱԽԻՆ — Այսօր բախտս չի բերում։

Բոլորը ծիծաղում են:

Շառլոտա Իվանովնա, մի ֆոկուս արեք։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Շառլոտա, ֆոկուս արեք։

ՇԱՐԼՈՏԱ — Հարկավոր չէ։ Ես քնել եմ ուզում։ (Գնում է):

ԼՈՊԱԽԻՆ — Երեք շաբաթ հետո կհանդիպենք։ (Համբուրում է Լյուբով Անդրեևնայի ձեռքը): Առայժմ, մնաք բարով։ Ժամանակն է։ (Գաևին): Յոհ։ Յոհ։ (Պիշչիկի հետ համ-

բուրվում է): *Ցտեսություն։* (Ձեռք է տալիս Վարյային, ապա Ֆիրսին և Յաշային): *Չեմ ուզում գնալ։* (Լյուբով Անդրեևնային): *Ամառանոցների մասին եթե մտածեք ու որոշեք, իմաց տվեք, պարտքով հիսուն հազար կգտնեմ։ Լուրջ մտածեք։*

ՎԱՐՅԱ — (բարկացած) *Վերջապես գնալո՞ւ եք թե չէ։*

ԼՈՊԱԽԻՆ — *Գնում եմ, գնում եմ...* (Հեռանում է):

ԳԱԵՎ — *Բռի մարդ է։ Թեև, պարզոն... Վարյան ամուսնանում է նրա հետ, մեր Վարյայի փեսացուն է։*

ՎԱՐՅԱ — *Ավելորդ բաներ մի խոսեք, քեռի։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Ինչ կա որ, Վարյա, ես շատ ուրախ կլինեի։ Լավ մարդ է։*

ՊԻՇՉԻԿ — *Ճիշտը պետք է ասել... արժանավորագույն մարդ է... Իմ Դաշենկան էլ է... ասում, որ... տարբեր բաներ է ասում։* (Խոմփացնում է, սակայն տեղնուտեղը սթափվում): *Այդուհանդերձ, անչափ հարգելիս, ինձ... երկու հարյուր քառասուն ռուբլի... պարտք տվեք... վաղը գրավաթղթի տոկոսներ պետի վճարեմ...*

ՎԱՐՅԱ — (վախեցած) *Չկա, չկա...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Իսկապես ես ոչինչ չունեմ։*

ՊԻՇՉԻԿ — *Կգտնվի։* (Միծաղում է): *Երբեք հույսս չեմ կորցնում։ Ըհը, մտածում եմ, ամեն ինչ կորած է արդեն, կործանվեցի, բայց արի ու տես, երկաթուղին հողերիս վրայով անցավ ու... վճարեցին ինձ։ Մեկ էլ տեսար, մի ուրիշ բան կլինի վաղը, մյուս օրը... Դաշենկան երկու հարյուր հազար կշահի... տոմս ունի։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Սուրճը խմեցինք, կարելի է գնալ հանգըստանալու։*

ՖԻՐՍ — (խոզանակով մաքրում է Գաևի զգեստը, կշտամբանքով) *Էլի ուրիշ շալվար եք հագել։ Ինչ եմ անելու ձեր ձեռը։*

ՎԱՐՅԱ — (կամացուկ) *Անյան քնեց։* (Զգուշորեն բացում է պատուհանը): *Արևն արդեն ծագել է, ցուրտ չէ։ Մամա, նայեք, ի՞նչ հրաշալի են ծառերը։ Աստված իմ, հապա օդը։ Սարյակները երգում են։*

ԳԱԵՎ — (բացում է մյուս պատուհանը) *Այգին լրիվ ճերմակել է։ Լյուբա, չե՞ս մոռացել։ Այ, այս երկար ծառուղին գնում է ուղիղ, ուղիղ, ձիգ լարի պես, փայլփլում է լուսնյակ գիշերներին։ Հիշո՞ւմ ես։ Չե՞ս մոռացել։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (պատուհանից այգուն է նայում) *Օ՜, իմ մանկություն, իմ մաքրությո՜ւն։ Մանկական այս սենյակում քնել եմ, այստեղից նայել եմ այգուն, ամեն առավոտ երջանկությունն արթնանում էր ինձ հետ, և այն ժամանակ ճիշտ նույնն էր այգին, ոչինչ չի փոխվել։* (Ուրախությունից ծիծաղում է): *Լրիվ ճերմակ է, օ՜, իմ այգի։ Մռայլ ու ամպամած աշնանից, ցուրտ ձմռանից հետո նորից ջահել ես, լի երջանկությամբ, երկնային հրեշտակները չեն լքել քեզ... Եթե սրտիս, ուսերիս վրայից ցած բերել լիներ ծանր քարը, եթե կարողանայի անցյալս մոռանալ։*

ԳԱԵՎ — *Այո, այգին էլ կվաճառեն պարտքերի դիմաց, որքան էլ տարօրինակ լինի...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Նայեք, հանգուցյալ մայրիկն է քայլում այգում... ճերմակ հագուստով* (Ուրախությունից ծիծաղում է): *Նա՜ է։*

ԳԱԵՎ — *Ո՞ւր է։*

ՎԱՐՅԱ — *Աստված սիրեք, մայրիկ։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Ոչ ոք չկա, ինձ թվաց։ Աջ կողմում, տաղավարի մոտ, մի սպիտակ ծառ կա թեքված, նման է կնոջ...*

Ներս է մտնում Տրոֆիմովը՝ ուսանողական մաշված մուճակներով, ակնոցով։

Ի՜նչ սքանչելի այգի է։ Ճերմակ-ճերմակ ծաղիկներ, կապույտ երկինք...

ՏՐՈՖԻՄՈՎ — *Լյուբով Անդրեևնա։*

Վերջինս շրջվում է նրա կողմը։

Միայն ողջունեմ ձեզ և իսկույն կգնամ։ (Ջերմորեն համբուրում է ձեռքը): *Ինձ կարգադրել էին սպասել մինչև առավոտ, բայց էլ չդիմացա...*

Լյուբով Անդրեևնան նայում է տարակուսած։

ՎԱՐՅԱ — (արտասվախառը) *Պետյա Տրոֆիմովն է...*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Պետյա Տրոֆիմովն եմ, ձեր Գրիշայի նախկին ուսուցիչը... Մի՞թե այդքան փոխվել եմ։*

Լյուբով Անդրեևնան գրկում է նրան և անձայն լաց լինում։

ԳԱԵՎ — (շփոթված) *Դե լավ, Լյուբա, լավ։*

ՎԱՐՅԱ — (լաց է լինում)։— *Ասացի, չէ՞, Պետյա, որ սպասեիք մինչև առավոտ։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Գրիշա... տղաս... Գրիշա... զավակս...*

ՎԱՐՅԱ — *Ինչ արած, մայրիկ։ Աստծո կամքն էր։*

ՏՐՈՖԻՄՈՎ — (մեղմորեն, արտասվախառն) *Պետք չէ, պետք չէ...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (մեղմաձայն լաց է լինում) *Չկա տղաս, խեղդվեց... Ինչի՞ համար։ Ինչի՞ համար, բարեկամս։* (Ավելի մեղմաձայն)։ *Անյան քնած է այնտեղ, իսկ ես բարձր եմ խոսում... աղմկում... է, հետո՞, Պետյա։ Ինչո՞ւ եք այդպես գեշացել։ Ինչի՞ց եք ծերացել։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Վագոնում մի կին այսպես անվանեց ինձ՝ քնձոտ պարոն։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Այն ժամանակ դուք լրիվ երեխա էիք, փոքր ու սիրունիկ ուսանող, իսկ հիմա մազերդ են նոսրացել, ակնոց եք դնում։ Մի՞թե դեռ ուսանող եք։* (Գնում է դռան կողմը)։

ՏՐՈՖԻՄՈՎ — *Թերևս հավերժական ուսանող էլ մնամ։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (ճամբուրում է եղբորը, հետո Վարյային)։ *Դե, գնացեք քնելու... Դու էլ ես ծերացել, Լեոնիդ։*

ՊԻՇՉԻԿ — (գնում է նրա հետևից) *Ուրեմն՝ հիմա քնեք... Օ՜հ, հոգացավս... Ես ձեզ մոտ կմնամ... Լյուբով Անդրեևնա, հոգիս, վաղն առավոտյան... ինձ երկու հարյուր քառասուն ռուբլի...*

ԳԱԵՎ — *Էլի իրենն է քշում...*

ՊԻՇՉԻԿ — *Երկու հարյուր քառասուն ռուբլի... գրավաթղթերի տոկոսներն եմ վճարելու...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Ես փող չունեմ, հոգյակս։*

ՊԻՇՉԻԿ — *Վերադարձնելու եմ, սիրելիս... Ջնչին գումար է...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Դե լավ, Լեոնիդը կա... Դու տուր, Լեոնիդ։*

ԳԱԵՎ — *Իհարկե կտամ, գրպանդ լայն բաց արա։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Իսկ ինչ անենք, տուր... Նրան պետք է... կվերադարձնի...*

Լյուբով Անդրեևնան, Տրոֆիմովը, Պիշչիկը և Ֆիրսը գնում են։ Մնում են Գաևը, Վարյան և Յաշան։

ԳԱԵՎ — *Քույրս դեռ հետ չի վարժվել փողերը քամուն տալուց։* (Յաշային)։ *Մի կողմ քաշվիր, պատվելիս, քեզնից հավի հոտ է գալիս։*

ՅԱՇԱ — (ճմծիծաղով) *Լեոնիդ Անդրեևիչ, դուք էլի նույնն եք մնացել։*

ԳԱԵՎ — *Ո՞ւմ։* (Վարյային)։ *Ինչ ասա՞ց։*

ՎԱՐՅԱ — (Յաշային) *Մայրդ գյուղից եկել, երեկվանից ծառայատանը նստած՝ քեզ է ուզում տեսնել...։*

ՅԱՇԱ — *Աստված իր հետ։*

ՎԱՐՅԱ — *Անամոթի մեկը։*

ՅԱՇԱ — *Շատ պետքս էր։ Վաղն էլ կարող էր գալ։* (Գնում է)։

ՎԱՐՅԱ — *Մայրիկը նույնն է մնացել, մազաչափ չի փոխվել։ Ազատ որ թողնես, եղած-չեղածը կբաժանի։*

ԳԱԵՎ — *Այո...*

Դադար։

Եթե որևէ հիվանդության դեմ շատ դեղեր են առաջարկում, ուրեմն, հիվանդությունն անբուժելի է։ Մտածում եմ, ուղեղս լարում, ձևեր շատ ունեմ, անչափ շատ, ասել է թե՝ իրականում և ոչ մի։ Լավ կլինի մեկնումեկից ժառանգություն ստանալ, լավ կլինի մեր Անյային մի շատ հարուստ մարդու հետ ամուսնացնել, լավ կլինի Յարոսլավլ գնալ ու կոմսուհի մորաքրոջ մոտ բախտը փորձել։ Չէ որ նա շատ-շատ հարուստ է։

ՎԱՐՅԱ — (լաց է լինում) *Եթե աստված օգներ։*

ԳԱԵՎ — *Մի նվնվա։ Մորաքույրը շատ հարուստ է, բայց մեզ չի սիրում։ Նախ, քույրն ամուսնացավ երդվյալ հավատարմատարի և ոչ թե ազնվականի հետ...*

Դռան մեջ նայտնվում է Անյան։

Ամուսնացավ ոչ ազնվականի հետ ու չի կարելի ասել, թե իրեն շատ առաքինի պահեց։ Լավ, բարի, հիանալի կին է, նրան շատ եմ սիրում, բայց ինչքան էլ մեղմացուցիչ հանգամանքներ հորինենք, այնուամենայնիվ, հարկ է խոստովանել՝ զգացմունքի հարցերում՝ այնքան էլ... Դա զգացվում է նրա ամենաչնչին շարժումից։

ՎԱՐՅԱ — (շշնջալով) Անյան դռան մոտ կանգնած է։
ԳԱԵՎ — Ո՞ւմ։

Դադար։

Տեսնես, ի՞նչ ընկավ աչ աչքս... Վատ եմ տեսնում։ Եվ հինգշաբթի օրը, երբ նահանգային դատարանում էի...

Անյան մոտենում է։

ՎԱՐՅԱ — Ինչի՞ չես քնում, Անյա։
ԱՆՅԱ — Քունս չի տանում։ Չեմ կարողանում։
ԳԱԵՎ — Փոքրի՜կս։ (Համբուրում է Անյայի դեմքը, ձեռքերը)։ Դստրի՜կս... (Արտասվախառն)։ Ինձ համար դու քրոջ աղջիկ չես, դու իմ հրեշտակն ես, ինձ համար ամեն ինչ ես։ Հավատա ինձ, հավատա...
ԱՆՅԱ — Ես քեզ հավատում եմ, քեռի։ Քեզ բոլորը սիրում, հարգում են... բայց, սիրելի քեռի, դու չպետք է խոսես, մենակ չպետք է խոսես։ Հենց նոր ի՞նչ էիր ասում մայրիկիս, քո քրոջ մասին։ Ինչի՞ համար էիր ասում։
ԳԱԵՎ — Այո, այո... (Անյայի ձեռքով ծածկում է դեմքը)։ Իսկապես, սարսափելի է։ Տե՜ր աստված։ Տե՜ր աստված, փրկիր ինձ։ Այսօր էլ ճառ ասացի պահարանի առաջ... շատ տրխմար բան էր։ Հենց վերջացրեցի, հասկացա, որ տխմար բան էր։
ՎԱՐՅԱ — Ճիշտ որ, քեռի, դուք չպետք է խոսեք։ Սուս մնացեք ու վերջ։
ԱՆՅԱ — Եթե չխոսես, հենց քեզ համար ավելի հեշտ կլինի։
ԳԱԵՎ — Լուռ եմ, լուռ։ (Համբուրում է Անյայի և Վարյայի ձեռքերը)։ Բայց գործից խոսենք։ Հինգշաբթի օրը նահանգային դատարանում էի, հավաքվել էինք, խոսք բացվեց գեսից-դեսից, ու կարծեմ թե կարելի է մուրհակով փոխառություն դասավորել, բանկի տոկոսները վճարելու համար։
ՎԱՐՅԱ — Եթե աստված օգներ...
ԳԱԵՎ — Երեքշաբթի գնալու եմ մի հատ էլ խոսեմ։ (Վարյային)։ Մի նվնվա։ (Անյային)։ Մայրիկդ կխոսի Լոպախինի հետ, իհարկե, նա նրան չի մերժի... Դու էլ, հանգստացար թե չէ, կգնաս Յարոսլավլ, կոմսուհու, տատիկիդ մոտ։ Այ, այդպես էլ կգործենք, երեք կողմից, ու գործը գլուխ կգա։ Համոզված եմ, որ տոկոսները կվճարենք... (Սառնաշաքար

է գցում բերանը)։ Պատվով եմ երդվում, ինչով ուզես, կալվածքը չի վաճառվի։ (Ոգևորված)։ Կյանքս վկա։ Ահա իմ ձեռքը, ինձ անպետք, անպատիվ մարդ համարիր, եթե թողնեմ բանը աճուրդի հասնի։ Երդվում եմ իմ ամբողջ էությամբ։
ԱՆՅԱ — (հանգստացել է արդեն, երջանիկ է) Ի՞նչ լավն ես, քեռի, ի՞նչ խելացի ես։ (Գրկում է քեռուն)։ Հիմա հանգիստ եմ։ Երջանիկ եմ։

Մտնում է Ֆիրսը։

ՖԻՐՍ — (կշտամբանքով) Լեոնիդ Անդրեիչ, աստված սիրեք։ Ե՞րբ եք քնելու։
ԳԱԵՎ — Հիմա, հիմա։ Դու գնա, Ֆիրս։ Ոչինչ, ինքս կհանվեմ մի կերպ։ Դե, երեխեք, բայ-բայ... Մանրամասնությունները՝ վաղը, հիմա գնացեք քնելու։ (Համբուրում է Անյային ու Վարյային)։ Ես ուրբանականների մարդ եմ... Այդ ժամանակները հարգի չեն, բայց և այնպես կասեմ, որ համոզմունքների պատճառով քիչ բան չեմ քաշել իմ կյանքում։ Մուժիկներն ինձ իզուր չեն սիրում։ Մուժիկին ճանաչել է պետք։ Պետք է իմանալ, որ կողմից...
ԱՆՅԱ — Էլի սկսեցի՞ր, քեռի։
ՎԱՐՅԱ — Սուս մնացեք, էլի, քեռի։
ՖԻՐՍ — (բարկացած) Լեոնիդ Անդրեիչ։
ԳԱԵՎ — Եկա, եկա... Քնեք։ Երկու եզրերից՝ մեջտեղը։ Մաքուր՝ մեջը... (Գնում է, հետևից խոսխոսացնելով Ֆիրսն է գնում)։
ԱՆՅԱ — Հիմա ես հանգիստ եմ։ Յարոսլավլ գնալ չեմ ուզում, չեմ սիրում տատիկին, բայց և այնպես հանգիստ եմ։ Ապրի քեռին։ (Նստում է)։
ՎԱՐՅԱ — Քնել է պետք։ Գնամ։ Որ այստեղ չէիր, դժգոհություններ եղան։ Հին ծառայատանը, գիտես, մենակ հին ծառաներն են ապրում։ Եֆիմուշկան, Պոլյան, Եվստիգնեյը, մեկ էլ՝ Կարպը։ Գիշերները սկսել էին ինչ մարդու ասես քնելու տեղ տալ. ձայն չհանեցի։ Մեկ էլ, լսեմ, որ խոսում են, իբր ասել եմ, որ մենակ սխեռով ճաշ տան դրանց։ Իբր՝ ժլատությունից... Ու ամեն բան այդ Եվստիգնեյից է գալիս։ Լա՜վ՝ ասացի։ Թե որ այդպես է, սպասեք։ Կանչեցի Եվստիգնեյին... (Հորանջում է)։ Եկավ... Այդ ինչպե՞ս եղավ, ասացի

Եվստիգնեյ... անխելքի մեկը... (Անյային նայելով)։ *Անեչկա...*

Դադար։

Քնեց... (Թևանցուկ անելով)։ *Գնանք, անկողին մտնենք... Գնանք* (Տանում է նրան)։ *Հոգյակս քնեց։ Գնանք...*

Գնում են։

Տան հետևում, հեռվում ճովվի արնգի ձայն է լսվում։ Բեմը հատում է Տրոֆիմովը, Վարյային և Անյային տեսնելով, կանգնում է.

ՎԱՐՅԱ — *Սրսսս... Քնած է... քնած... Գնանք, հարազատս։*

ԱՆՅԱ — (մեղմաձայն, ճի մեջ) *Այնպես եմ հոգնած... զանգակները... Քեռի... սիրելիս... մայրիկն էլ, քեռին էլ...*

ՎԱՐՅԱ — *Գնանք, հարազատս, գնանք...* (Մտնում են Անյայի սենյակը)։

ՏՐՈՖԻՄՈՎ — (խանդաղատանքով) *Իմ արև։ Իմ գարուն։*

Վարագույր։

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Դաշտ։ Հին, թեքված, վաղուց ի վեր լքված ժամատուն, կողքը՝ ջրհոր, խոշոր քարեր, որոնք ժամանակին թերևս գերեզմանաքարեր են եղել, մի հին նստարան։ Երևում է Գաևի դաստակերտ տանող ճանապարհը։ Մի կողմում սևին են տալիս վեր ելնող բուդիները, այնտեղից սկսվում է բալի այգին։ Հեռվում հեռագրասյուների շարքն է, և շատ հեռվում, հորիզոնի վրա տարտամորեն գծագրվում է մեծ քաղաքը, որը երևում է միայն շատ լավ, պարզ եղանակին։ Արևը շուտով մայր կմտնի։ Շառլոտան, Յաշան և Դունյաշան նստած են նստարանին։ Եպիխոդովը, կանգնած նրանց կողքին, կիթառ է նվագում։ Բոլորը նստած են մտազբաղ, Շառլոտայի գլխին մի հին, տղամարդու գլխարկ կա, նա ուսից իջեցրել է հրացանը և ուղղում է փոկի ճարմանդը։

ՇԱՐԼՈՏԱ — (մտքերի հետ) *Իսկական անձնագիր չունեմ, չգիտեմ քանի տարեկան եմ, ու միշտ թվում է, թե ջահել եմ։ Որ փոքր աղջիկ էի, հայրիկս ու մայրիկս տոնավաճառներ շրջելով ներկայացումներ էին տալիս, շատ լավ ներկայացումներ։ Ես* saltomortale *էի անում, զանազան բաներ։ Հայրիկս ու մայրիկս որ մահացան, մի գերմանացի տիկին ինձ տարավ իր տուն ու սկսեց սովորեցնել։ Լավ։ Մեծացա, հետո սկսեցի դաստիարակչուհու գործ անել։ Բայց որտեղից եմ, ով եմ՝ չգիտեմ... Ովքեր էին ծնողներս, գուցե ամուսնացած չէին... չգիտեմ* (Գրպանից վարունգ է հանում և սկըսում ուտել)։ *Ոչինչ չգիտեմ։*

Դադար։

Շատ եմ ուզում խոսել, բայց մեկը չկա... Ոչ ոք չունեմ։

ԵՊԻԽՈԴՈՎ — (կիթառ է նվագում և երգում) *«Ինչիս են պետք սրահներն աղմկոտ, ինչիս են պետք բարեկամ ու թշնամի...»։ Որքան հաճելի է մանդոլին նվագելը։*

ԴՈՒՆՅԱՇԱ — Դա կիթառ է, մանդոլին չի։ (Հայելուն է նայում, դիմափոշի fսելով)։

ԵՊԻԽՈԴՈՎ — Սիրահարված խելագարի համար սա մանդոլին է... (Երգում է)։ «Միայն սիրտս պարուրվեր փոխադարձ սիրով թանկագին...»։

Յաշան ծայնակցում է։

ՇԱՌԼՈՏԱ — Սարսափելի են երգում այս մարդիկ... Ֆո՛ւյ։ Բոբենիների պես։

ԴՈՒՆՅԱՇԱ (Յաշային) Ինչ ուզում ես ասա, բախտավոր բան է արտասահմանում լինելը։

ՅԱՇԱ — Ճիշտ է։ Չեմ կարող ձեզ հետ չհամաձայնվել։

ԵՊԻԽՈԴՈՎ — Ասելու բան չէ։ Արտասահմանում արդեն վաղուց ամեն ինչ տեղը տեղին է։

ՅԱՇԱ — Անշուշտ։

ԵՊԻԽՈԴՈՎ — Ես զարգացած մարդ եմ, տարբեր հրաշալի գրքեր եմ կարդում, բայց ոչ մի կերպ չեմ կարողանում ուղղությունը բռնել, թե իրականում ինչ եմ ուզում՝ ապրե՞մ, թե՞ ինքնասպան լինեմ, ճիշտն ասած, բայց և այնպես միշտ մոտս եմ պահում ատրճանակը։ Ահավասիկ... (Ցույց է տալիս ատրճանակը)։

ՇԱՌԼՈՏԱ — Վերջացրեցի։ Հիմա գնամ։ (Հրացանը գցում է ուսին)։ Եպիխոդով, դու շատ խելոք ու շատ սարսափելի մարդ ես, կանայք պետք է խելագարի պես քեզ սիրեն։ Ո՛ւ-ուուո՛ւ։ (Գնում է)։ Այս խելքի տոպրակներն այնքան տխմար են, մարդ չկա, հետը խոսեմ... Միշտ մենակ եմ, մենակ, ոչ ոք չունեմ ու... թե ով եմ ես, ինչի համար, հայտնի չէ... (Անշտապ հեռանում է)։

ԵՊԻԽՈԴՈՎ — Ճիշտն ասած, ուրիշ նյութեր չշոշափելով, ես պիտի արտահայտվեմ իմ մասին, որ իմիջիայլոց, ճակատագիրն անողոք է իմ նկատմամբ, ինչպես փոթորիկը ոչ մեծ նավի նկատմամբ։ Եթե ընդունենք, թե սխալվում եմ, այդ դեպքում ապա ինչո՞ւ այսօր առավոտյան արթնացա, օրինակի համար ասեմ, ու տեսնեմ՝ կրծքիս վրա մի սարդ՝ զարհուրելի մեծության... Ա՜յ այսքա՜ն։ (Ցույց է տալիս երկու ձեռքով)։ Կամ թե չէ՝ կվաս եմ վերցնում, որ խմեմ, մեկ էլ տեսար, մեջը վերին աստիճանի անհարմար մի բան, ասենք՝ բլոճ։

Դաղար։

Դուք Բոկլ կարդացե՞լ եք։

Դաղար։

Ավդոտյա Ֆյոդորովնա, ձեզ մի թեթև անհանգստացնելու ցանկություն ունեմ, մի երկու խոսք։

ԴՈՒՆՅԱՇԱ — Ասեք։

ԵՊԻԽՈԴՈՎ — Ինձ համար ցանկալի կլիներ՝ առանձին... (Հոգոց է հանում)։

ԴՈՒՆՅԱՇԱ — (շփոթված) Լավ... մենակ թե սկզբից անթև բաճկոնս բերեք... Պահարանի մոտ է գցած... մի քիչ խոնավ է...

ԵՊԻԽՈԴՈՎ — Շատ լավ... բերեմ... Հիմա գիտեմ, թե ինչ եմ անելու ատրճանակս... (Վերցնում է կիթառը և նվագելով հեռանում)։

ՅԱՇԱ — Քսաներկու փորձանք։ Հիմար մարդ է, մեր մեջ ասած։ (Հորանջում է)։

ԴՈՒՆՅԱՇԱ — Աստված չանի ինքնասպան լինի։

Դաղար։

Սրտիս մեջ վախ կա, միշտ անհանգիստ եմ։ Աղջիկ էի, փոքրը, որ բերեցին էս տուն, հիմա հասարակ կյանքից հետ եմ սովորել, ձեռքերս՝ սպիտակ-սպիտակ, օրիորդի ձեռք։ Շատ նուրբն եմ դառել, քաղաքավարի, ազնվական, ամեն ինչից վախենում եմ... Շատ եմ վախենում։ Ու եթե ինձ խաբեք, Յաշա, չեմ իմանում, թե ինչ կլինի իմ ջղերի վիճակը։

ՅԱՇԱ — (ճամբուրում է նրան) Մատղաշս։ Խոսք չկա, ամեն մի աղջիկ պետք է իր տեղն իմանա, ու ես ամենից շատ չեմ սիրում, որ աղջիկը վարքից վատ է լինում։

ԴՈՒՆՅԱՇԱ — Ես շատ ուժեղ սիրեցի ձեզ, դուք կրթված մարդ եք, ամեն ինչից կարող եք խոսել։

Դաղար։

ՅԱՇԱ — (հորանջում է) Այո... Իմ կարծիքով էսպես է, թե որ աղջիկը մեկին սիրեց, ուրեմն, բարոյականը լավ չի։

Դաղար։

Հաճելի բան է մաքուր օդում սիգար ծխելը... (Ականջ է դնում): Էստեղ են գալիս... Տանտերերն են...

Դունյաշան թափով գրկում է նրան։

Գնացեք տուն, իբր թե գնացել էիք գետը՝ լողանալու, էս ճամփով գնացեք, թե չէ կտեսնեն ու իմ մասին կմտածեն, թե ժամադրված էի ձեզ հետ։ Էդ մի բանը տանել չեմ կարողանում։

ԴՈՒՆՅԱՇԱ — (կամացուկ ճազում է) Սիգարից գլուխս ցավեց... (Հեռանում է):

Մնում է Յաշան, ժամատան մոտ նստած: Ներս են գալիս Լյուբով Անդրեևնան, Գաևը և Լոպախինը։

ԼՈՊԱԽԻՆ — Վերջնական որոշել է պետք՝ ժամանակը չի սպասում։ Ախր, շատ փուչ հարց է։ Համաձա՞յն եք հողը տալ՝ ամառանոցներ սարքելու թե ոչ։ Մի խոսք ասեք՝ հա՛ կամ չէ՛։ Մենակ մի խոսք։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Այստեղ ո՞վ է գարշելի սիգարներ ծխում... (Նստում է):

ԳԱԵՎ — Ահա, երկաթուղին կառուցեցին, և հարմարությունը շատացավ։ (Նստում է): Գնացինք քաղաք ու նախաճաշեցինք... դեղինը՝ մեջտեղ։ Գուցե թե նախ տուն գնամ, մի պարտիա խաղամ...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Կհասցնես խաղալ։

ԼՈՊԱԽԻՆ — Մենակ մի խոսք։ (Աղերսական): Մի պատասխան տվեք ինձ։

ԳԱԵՎ — (հոռանջելով) Ո՞ւմ։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (նայում է ձեռքի պայուսակի մեջ) Երեկ ահագին դրամ կար, իսկ այսօր՝ շատ քիչ։ Իմ խեղճ Վարյան, հանուն խնայողության բոլորին կաթնապուրով է կերակրում, խոհանոցում ծերունիներին միայն սիսեռ են տալիս, իսկ ես ծախսում եմ մի տեսակ անմտորեն։ (Գցում է պայուսակը, ոսկեդրամներ են շաղ գալիս): Ըհը, ցրիվ եկան... (Բարկացած է):

ՅԱՇԱ — Թույլ տվեք, ես կհավաքեմ։ (Հավաքում է ոսկեդրամները):

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Բարի եղեք, Յաշա։ Եվ թե ինչու գնացի նախաճաշելու... Վատն էր ձեր ռեստորանը, երաժշտությամբ հանդերձ, սփռոցներից օճառի հոտ էր գալիս... Կարիք կա՞ր այդքան խմելու, Լյոնյա, կարիք կա՞ր այդքան ուտելու։ Կարիք կա՞ր այդքան խոսելու։ Այսօր ռեստորանում էլի շատ խոսեցիր և բոլորը՝ անտեղի։ Յոթանասունական թվականների մասին, դեկադենտների մասին։ Եվ ո՞ւմ էիր ասում։ Սպասավորներին պատմել դեկադենտների՞ մասին։

ԼՈՊԱԽԻՆ — Հա՛։

ԳԱԵՎ — (ձեռքով է անում) Ես անուղղելի եմ, դա ակնհայտ է... (Բորբոքված՝ Յաշային): Սա՞ ինչ բան է, շարունակ պտույտ ես գալիս քթիս տակ...

ՅԱՇԱ — (ծիծաղում է) Չեմ կարողանում առանց ծիծաղելու ձեր ձայնը լսել։

ԳԱԵՎ — (Բոջը) Կամ ես, կամ՝ նա...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Հեռացեք, Յաշա գնացեք...

ՅԱՇԱ — (Լյուբով Անդրեևնային է տալիս խակը) Հիմա կգընամ։ (Ծիծաղը ճազիվ է զսպում): Էս բոպեիս... (Գնում է):

ԼՈՊԱԽԻՆ — Ձեր կալվածքը պատրաստվում է գնել մեծահարուստ Դերիգանովը։ Ասում են, աճուրդին անձամբ է գալու։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Իսկ դո՞ւք որտեղից եք լսել։

ԼՈՊԱԽԻՆ — Քաղաքում էին խոսում։

ԳԱԵՎ — Յարոսլավլի մորաքույրը խոստացել է ուղարկել, իսկ թե երբ ու ինչքան կուղարկի, հայտնի չէ...

ԼՈՊԱԽԻՆ — Ինչքա՞ն պիտի ուղարկի։ Հարյո՞ւր հազար։ Երկո՞ւ...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Չէ... Մի տասը-տասնհինգ հազար։ դրա համար էլ ենք շատ շնորհակալ։

ԼՈՊԱԽԻՆ — Ներեցեք, ձեզ պես թեթևամիտ մարդիկ, պարոնայք, այսքան անգործնական, տարօրինակ մարդիկ ես դեռ չեմ հանդիպել։ Մայրենի լեզվով ձեզ ասում են՝ ձեր կալվածքը վաճառվում է, իսկ դուք կարծես չեք հասկանում։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Իսկ ի՞նչ անենք։ Սովորեցրեք՝ ի՞նչ։

ԼՈՊԱԽԻՆ — Ամեն օր ձեզ սովորեցնում եմ։ Ամեն օր նույն բանն եմ ասում։ Բալի այգին էլ, հողն էլ անհրաժեշտ է վարձով տալ որպես ամառանոց, դա պետք է անել հենց հիմա, անմիջապես՝ աճուրդը քթներիս տակ է։ Հասկացեք։ Հենց վերջ-

նական որոշեք, որ ամառանոցներ լինեն, որքան ուզեք ձեզ փող կտան, այդ ժամանակ կփրկվեք։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ամառանոցներ, հովեկներ, այնքան գռեհիկ է դա, ներեցեք։

ԳԱԵՎ — Միանգամայն համաձայն եմ քեզ հետ։

ԼՈՊԱԽԻՆ — Ես կամ լաց կլինեմ, կամ կբղավեմ, կամ ուշագնաց կընկնեմ։ Չեմ կարող։ Դուք ինձ տանջեցիք։ (Գանգատվում է)։ Դուք կնիկ եք։

ԳԱԵՎ — Ո՞ւմ։

ԼՈՊԱԽԻՆ — Կնի՞կ։ (Ուզում է հեռանալ)։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (վախեցած) Ոչ, մի հեռացեք, մնացեք, սիրելիս։ Խնդրում եմ ձեզ։ Թերևս մի բան մտածենք։

ԼՈՊԱԽԻՆ — Ինչ կա մտածելու։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Մի՞ գնացեք, խնդրում եմ։ Ձեզ հետ ավելի հետաքրքիր է համենայն դեպս...

Դադար։

Շարունակ ինչ-որ բան եմ սպասում, կարծես տունը փուլ է գալու գլխներիս։

ԳԱԵՎ — (խորունկ մտորումների մեջ) Դուպլետ՝ անկյունը... Կրուազե՝ մեջտեղը...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Անչափ շատ մեղքեր ունենք մենք...

ԼՈՊԱԽԻՆ — Ի՞նչ մեղքեր ունեք...

ԳԱԵՎ — (սառնաշաքար է դնում բերանը) Ասում են, թե ամբողջ կարողությունս սառնաշաքարի եմ տվել... (Ծիծաղում է)։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Օ՜, իմ մեղքերը... Փողը միշտ ցրիվ եմ տվել, խելագարի պես անզուսպ, ամուսնացել եմ մի մարդու հետ, որը միայն պարտք էր անում։ Ամուսինս շամպայնից մահացավ՝ զարհուրելի խմող էր, և դժբախտաբար մեկ ուրիշին սիրեցի, կապվեցի, և հենց այդ ժամանակ՝ առաջին պատիժն էր, հարվածն ուղիղ գլխիս իջավ, ահա այստեղ, գետում... խեղդվեց տղաս ու ես արտասահման գնացի, գնացի ընդմիշտ, որ չվերադառնամ, այլևս չտեսնեմ այս գետը... Աչքերս փակել, փախչում էի գլխապատառ, իսկ նա՝ իմ հետևից... անխղճորեն, կոպտությամբ։ Մենտոնայի մոտ ամառանոց գնեցի, քանի որ նա հիվանդացավ այնտեղ, և

երեք տարի շարունակ դադար չունեցա՝ ոչ ցերեկը, ոչ գիշերը. հիվանդը տանջեց ինձ, հոգիս ցամաքեց։ Իսկ անցյալ տարի, երբ ամառանոցը վաճառեցինք՝ պարտքերը տալու համար, գնացի Փարիզ, այնտեղ էլ կողոպտեց ինձ, լքեց, ուրիշի հետ կապվեց, փորձեցի թունավորվել... Ի՞նչ հիմարություն, ի՞նչ ամոթալի բան... Եվ հանկարծ Ռուսաստանը ձգեց, հայրենիքը ձգեց, ազգկաս մոտ ուզեցա լինել... (Սրբում է արտասուքը)։ Տեր աստված, տեր աստված, ողորմած եղիր, ներիր ինձ՝ մեղքերիս համար։ Մի պատժիր ինձ այլևս։ (Գրպանից հեռագիրը հանում է)։ Այսօր եմ ստացել Փարիզից... ներողություն է խնդրում, աղաչում է վերադառնալ (Պատռում է հեռագիրը)։ Ինչ-որ տեղ կարծես նվագում են։ (Ականջ է դնում)։

ԳԱԵՎ — Դա մեր նշանավոր հրեական նվագախումբն է։ Հիշո՞ւմ ես՝ չորս ջութակ, ֆլեյտա և կոնտրաբաս։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Դեռ գոյություն ունի՞։ Մի առիթով մեզ մոտ կանչեինք, երեկույթ անեինք։

ԼՈՊԱԽԻՆ — (ականջ է դնում) Չի լսվում... (Կամացուկ երգում է)։ «Փողը կտա գերմանացին, ու ռուս մարդու կֆրանսիացնի»։ (Ծիծաղում է)։ Երեկ ի՞նչ պիես եմ նայել թատրոնում, շատ ծիծաղելի էր։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Հավանորեն, ոչ մի ծիծաղելի բան չի էլ եղել։ Ձեզ պետք չէ պիեսներ նայել, այլ ավելի հաճախ՝ ինքներդ ձեզ։ Ինչքան գորշ եք ապրում բոլորդ, ինչքան անհարկի բաներ եք ասում։

Դադար։

ԼՈՊԱԽԻՆ — Ճիշտ է։ Հարկավոր է ուղղակի ասել՝ հիմար կյանք է մեր կյանքը։ Հայրս մուժիկ էր, ապուշ, բան չէր հասկանում, ուսումի չտվեց, մենակ ծեծում էր խմած-խմած, էն էլ փետով։ Որ ասենք, նույն անբանն ու ապուշն էլ ես եմ։ Ոչինչ չսովորեցի, ձեռագիրս՝ խայտառակ, էնպես եմ գրում, որ մարդկանցից ամաչում եմ, խոզի պես։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ձեզ ամուսնանալ է պետք, բարեկամս։

ԼՈՊԱԽԻՆ — Հա... Ճիշտ է։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ասենք, մեր Վարյան հետ լավ աղջիկ է։

ԼՈՊԱԽԻՆ — Հա։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Հասարակ ընտանիքից է, ամբողջ օրը տան գործերով է, գլխավորը՝ սիրում է ձեզ։ Ձեզ էլ է վաղուց դուր գալիս։

ԼՈՊԱԽԻՆ — Է, ինչ։ Ես դեմ չեմ... Լավ աղջիկ է։

Դադար։

ԳԱԵՎ — Բանկում ինձ պաշտոն են առաջարկում։ Տարեկան վեց հազարով... (Քրոջը)։ Լսե՞լ ես։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Գործ չունես։ Հանգիստ մնա...

Մտնում է Ֆիրսը, վերակու է բերել։

ՖԻՐՍ — (Գաևին) Բարի եղեք հագնել, պարոն, եղանակը խոնավ է։

ԳԱԵՎ — (հագնում է վերարկուն) Հոգիս հանեցիր։

ՖԻՐՍ — Էլ մի սկսեք... Առավոտյան առանց ասելու գնացիք։ (Զննում է նրան)։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ինչքա՞ն ես ծերացել, Ֆիրս։

ՖԻՐՍ — Հրամեցե՞ք։

ԼՈՊԱԽԻՆ — Ասում է՝ շատ ես ծերացել։

ՖԻՐՍ — Երբվանից եմ է՞, ապրում։ Ինձ որ պսակում էին, ձեր հայրիկը դեռ չէր ծնվել... (Ծիծաղում է)։ Ազատություն էլ որ տվեցին, արդեն ավագ սենեկապան էի։ Ու չհամաձայնվեցի, որ ազատվեմ, մնացի ծառա...

Դադար։

Ու հիշում եմ՝ բոլորն ուրախ էին, թե ինչի՞ էին ուրախ, իրենք էլ չգիտեին։

ԼՈՊԱԽԻՆ — Առաջ շատ լավ էր։ Համենայն դեպս ծեծը կար։

ՖԻՐՍ — (չի լսել) Հապա ինչ։ Մուժիկները տերերի հետ էին, տերերը՝ մուժիկների, հիմա ամենքը ցրիվ եկած, բան հասկանալ չի լինում։

ԳԱԵՎ — Ֆիրս, սուս արա։ Վաղը քաղաք պիտի գնամ։ Խոստացել են մի գեներալի հետ ծանոթացնել, որը կարող է մուրհակով պարտք տալ։

ԼՈՊԱԽԻՆ — Բան դուրս չի գա։ Տոկոսներն էլ չեք վճարի, հանգիստ եղեք։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Զառանցում է։ Ոչ մի գեներալ էլ չկա։

Ներս են մտնում Տրոֆիմովը, Անյան և Վարյան։

ԳԱԵՎ — Ահա և եկան մերոնք։

ԱՆՅԱ — Մայրիկը նստած է։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (ճնշոտեն) Արի, արի... Հարազատներս... (Անյային և Վարյային գրկելով)։ Եթե միայն իմանայիք երկուսդ էլ, թե ինչպես եմ ձեզ սիրում։ Կողքս նստեք, այ այդպես։

ԼՈՊԱԽԻՆ — Մեր հավերժական ուսանողը էլի օրիորդների հետ զբոսնում է։

ՏՐՈՖԻՄՈՎ — Ձեր գործը չէ։

ԼՈՊԱԽԻՆ — Շուտով հիսուն կլինի, բայց դեռ ուսանող է։

ՏՐՈՖԻՄՈՎ — Թողեք ձեր տխմար կատակները։

ԼՈՊԱԽԻՆ — Ինչի՞ ես ջղայնանում, այ անխելք։

ՏՐՈՖԻՄՈՎ — Ինձ հանգիստ թող։

ԼՈՊԱԽԻՆ — (ծիծաղում է) Թույլ տվեք ձեզ հարցնել, թե ինչ մտքեր ունեք իմ վերաբերյալ։

ՏՐՈՖԻՄՈՎ — Այսպես եմ մտածում, Երմոլայ Ալեքսեիչ. դուք հարուստ մարդ եք, շուտով միլիոնատեր կդառնաք։ Ահա և, ինչպես նյութերի փոխանակության իմաստով գիշատիչ գազան է պետք, որը խժռում է դեմն եկած ամեն ինչ, այնպես էլ դու ես պետք։

Բոլորը ծիծաղում են։

ՎԱՐՅԱ — Պետյա, ավելի լավ է պատմեք մոլորակների մասին։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ոչ, եկեք երեկվա խոսակցությունը շարունակենք։

ՏՐՈՖԻՄՈՎ — Ինչի՞ մասին էր։

ԳԱԵՎ — Հպարտ մարդու։

ՏՐՈՖԻՄՈՎ — Երեկ երկար խոսեցինք, բայց ոչնչի չհանգեցինք։ Ձեր տեսակետով, հպարտ մարդու մեջ ինչ-որ միստիկ բան կա։ Թերևս դուք իրավացի եք յուրովի, բայց եթե դատելու լինենք պարզ, անխարդախ, ապա էլ ինչ հպարտություն, միտք ունի՞ արդյոք, եթե մարդս ֆիզիոլոգիապես անկատար

է ստեղծված, եթե ճնշող մեծամասնությամբ կոպիտ է, խելագարկ, խորապես դժբախտ։ Հարկ է, որ դադարենք մեզնով սքանչանալուց։ Հարկ է աշխատել միայն։

ԳԱԵՎ — Մեկ է՝ մեռնելու ես։

ՏՐՈՖԻՄՈՎ — Ո՞վ գիտե։ Եվ ի՞նչ ասել է՝ մեռնելու ես։ Միգուցե մարդս հարյուր զգայարան ունի և մեռնելիս միայն հինգն են ոչնչանում, որոնք մե՛զ են հայտնի, իսկ մնացած ինն-սունհինգը մնում են։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ինչ խելացի եք, Պետյա...

ԼՈՊԱԽԻՆ — (ճեգնաբար) Չտեսնվա՞ծ։

ՏՐՈՖԻՄՈՎ — Մարդկությունն առաջ է գնում՝ իր ուժերը կատարելագործելով։ Այն ամենը, ինչ անհասկանալի է նրա համար, երբևիցե կդառնա հարազատ, հասկանալի, միայն թե հարկավոր է աշխատել, բոլոր ուժերով օգնել նրանց, ովքեր ճշմարտությունն են որոնում։ Մեզ մոտ՝ Ռուսաստանում, առայժմ շատ քչերն են աշխատում։ Այն մտավորականների ճնշող մեծամասնությունը, ում գիտեմ, ոչինչ չի որոնում, ոչինչ չի անում և առայժմ սովոր չէ աշխատանքի։ Իրենց մտավորականություն են կոչում, բայց ծառաներին «դու» են ասում, մուժիկների հետ վարվում են անասունների պես, վատ են սովորում, լրջորեն ոչինչ չեն կարդում, ոչնչից ոչինչ չեն անում, գիտության մասին միմիայն խոսում են, արվեստից քիչ են հասկանում։ Բոլորը լուրջ են, բոլորի դեմքերը խիստ են, բոլորը միայն կարևոր բաներից են խոսում, փիլիսոփայում են, այնինչ բոլորի աչքերի առաջ բանվորները շատ վատ են կերակրվում, քնում են անբարձ, երեսուն—քառասուն հոգով մի սենյակում, ամենուրեք մլակներ են, գարշահոտություն, փտածություն, բարոյական անմաքրություն... Եվ հավանորեն, մեր բոլոր լավ-լավ խոսակցությունները նրա համար են հենց, որ թե մենք, թե ուրիշները չտեսնելու դնենք։ Ցույց տվեք ինձ, թե ուր են մանկամսուրները, որոնց մասին այնքան հաճախ ու շատ են խոսում, ո՞ւր են ընթերցարանները։ Դրանց մասին միայն վեպերում են գրում, իրականում բոլորովին չկան։ Միայն կեղտ կա, գռեհկություն, ասիականություն... Ես վախենում եմ ու չեմ սիրում շատ լուրջ անձնավորություններ, վախենում եմ լուրջ խոսակցություններից։ Ավելի լավ է լռենք։

ԼՈՊԱԽԻՆ — Գիտեք, ես վեր եմ կենում առավոտը հինգին, առավոտից իրիկուն աշխատում եմ, է՛, մոտս մշտական փող է լինում՝ սեփական, ուրիշի, և տեսնում եմ, թե չորս կողմս ինչ մարդիկ կան։ Պետք է միայն ինչ-որ բան անել սկսել, հասկանալու համար, թե ինչքան քիչ են ազնիվ ու օրինավոր մարդիկ։ Մեկ-մեկ, քունս որ չի տանում, մտածում եմ. «Տեր աստված, դու մեզ տվել ես հսկայական անտառներ, անծայր դաշտեր, խոր-խոր հորիզոններ, և այստեղ ապրելով, ինքներս պիտի իսկականից հսկաներ լինեինք...»։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ձեզ հսկաներ են հարկավոր... Միայն հեքիաթներում են նրանք լավ, այնպես՝ վախեցնում են։

Բեմի խորքով անցնում է Եպիխոդովը՝ կիթառ նվագելով։

(Մտազբաղ) Եպիխոդովն է գալիս...

ԱՆՅԱ — (մտազբաղ) Եպիխոդովն է գալիս...

ԳԱԵՎ — Արևը մայր մտավ, պարոնայք։

ՏՐՈՖԻՄՈՎ — Այո։

ԳԱԵՎ — (մեղմաձայն, ասես արտասանելով) Օ՜, բնություն զարմանահրաշ, հավերժական շողարձակումով ես դու փայլում՝ սքանչելի և անտարբեր, դու, որին մենք մայր ենք անվանում, ամփոփում ես քո մեջ թե կեցություն և թե մահ, դու ապրում ես ու կործանում։

ՎԱՐՅԱ — (ադեռսական) Քեռի՜։

ԱՆՅԱ — Էլի սկսեցիր, քեռի։

ՏՐՈՖԻՄՈՎ — Ավելի լավ է, դուք դեղինը դուպլետով մեջտեղը գցեք։

ԳԱԵՎ — Ես լուռ եմ, լուռ։

Բոլորը նստած են մտախոհ։ Լռություն է։ Լսվում է միայն Ֆիրսի մեղմ մթմթոցը։ Հանկարծ հեռավոր մի հնչյուն է լսվում, ասես երկնքից. կտրված լարի մեռնող, տրտմագին հնչյուն։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Դա ի՞նչ էր։

ԼՈՊԱԽԻՆ — Չգիտեմ։ Մի հեռու տեղ, հանքերում ճոպան կտրված կլինի։ Բայց շատ հեռուներում։

ԳԱԵՎ — Իսկ գուցե թռչո՞ւն էր... ասենք, ձկնկուլ։

ՏՐՈՖԻՄՈՎ — Կամ բվեճ...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (ցնցվում է) Տհաճ է մի տեսակ։

Դադար։

ՖԻՐՍ — Փորձանքից առաջ էլ էր էսպես՝ բուն էլ կոնչաց, ինքնաեռն էլ էր թշթշում մի գլուխ։
ԳԱԵՎ — Ո՞ր փորձանքից առաջ։
ՖԻՐՍ — Ազատություն տալուց առաջ։

Դադար։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Եկեք գնանք, բարեկամներս, արդեն մթնում է։ (Անյային)։ Աչքերդ արցունքոտ են... Ի՞նչ է եղել, աղջիկս։ (Գրկում է նրան)։
ԱՆՅԱ — Հենց այնպես, մամա։ Ոչինչ։
ՏՐՈՖԻՄՈՎ — Մարդ է գալիս։

Հայտնվում է անցորդը՝ սպիտակ, ճմռթված գլխարկով, վերարկուով, մի թեթև գինովցած է։

ԱՆՑՈՐԴ — Թույլ տվեք հարցնել, այստեղով կարո՞ղ եմ ուղիղ կայարան հասնել։
ԳԱԵՎ — Կարող եք։ Այս ճամփով գնացեք։
ԱՆՑՈՐԴ — Հոգաչափ շնորհակալ եմ։ (Հազալով)։ Հիանալի եղանակ է... (Արտասանում է)։ Եղբայր իմ, տառապյալ եղբայր... հասիր Վոլգա, հառաչանքը որի... (Վարյային)։ Մադմուազել, երեսուն կոպեկ շնորհ արեք անոթի ռուսորդուն...

Վարյան վախեցած ճչում է։

ԼՈՊԱԽԻՆ — (բարկացած) Այլանդակություն էլ պիտի մի քիչ մարդավարի լինի։
ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (կարկամելով)— Վերցրեք... ահա... (Փնտրում է պայուսակի մեջ)։ Արծաթ դրամ չունեմ... Միևնույն է, ոսկեդրամ վերցրեք...
ԱՆՑՈՐԴ— Հոգաչափ շնորհակալ եմ ձեզնից։ (Հեռանում է)։

Սիծաղ.

ՎԱՐՅԱ — (Վախեցած) Ես գնամ... գնամ... Ահ, մայրիկ, տանը մարդիկ ուտելու բան չունեն, իսկ դուք ոսկեդրամ եք տալիս։
ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Խելք չկա գլխումս։ Մոտիս փողը քեզ կտամ տանը։ Երմոլայ Ալեքսեյիչ, ինձ էլի՛ պարտք կտաք։
ԼՈՊԱԽԻՆ — Լսում եմ...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Գնանք, պարոնայք, ժամանակն է։ Վարյա, իսկ մենք համարյա նշանեցինք քեզ այստեղ, շնորհավորում եմ։
ՎԱՐՅԱ — (արտասվախառն) Դա կատակի բան չէ, մամա։
ԼՈՊԱԽԻՆ — Օխմելիա, մտիր կուսանոց...
ԳԱԵՎ— Ձեռքերս դողում են, վաղուց բիլիարդ չեմ խաղացել։
ԼՈՊԱԽԻՆ — Օխմելիա, ով հավերժահարս, հիշիր ինձ քո աղոթքներում։
ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Գնանք, պարոնայք։ Շուտով ընթրելու ժամանակն է։
ՎԱՐՅԱ — Վախեցրեց ինձ։ Սիրտս շատ արագ է խփում։
ԼՈՊԱԽԻՆ — Հիշեցնում եմ, պարոնայք, օգոստոսի քսաներկուսին բալի այգին վաճառելու են։ Մտածեք այդ մասին... Մտածեք...

Բոլորը գնում են, Տրոֆիմովից և Անյայից բացի։

ԱՆՅԱ — (ծիծաղելով) Ապրի անցորդը, Վարյային վախեցրեց, մենակ մնացինք։
ՏՐՈՖԻՄՈՎ — Վարյան վախենում է, թե հանկարծ չսիրահարվենք, ու ամբողջ օրը չի հեռանում մեզնից։ Իր կարճ խելքով չի կարող հասկանալ, որ մենք վեր ենք սիրուց։ Շրջանցել ճղճիմ ու խաբուսիկ այն ամենն, ինչ խանգարում է ազատ ու երջանիկ լինելուն՝ սա է մեր կյանքի նպատակն ու իմաստը։ Հառա՜ջ։ Մենք գնում ենք հաստատակամ դեպի հեռուներում վառվող լուսաշող աստղը։ Հառա՜ջ։ Հետ մի մնացեք, բարեկամներս։
ԱՆՅԱ — (ձեռքերն իրար զարկելով) Ինչ լա՜վ եք խոսում։

Դադար։

Այսօր սքանչելի է այստեղ։
ՏՐՈՖԻՄՈՎ — Այո, զարմանալի լավ եղանակ է։
ԱՆՅԱ — Ինչ արեցիք ինձ հետ, Պետյա, որ արդեն նախկինի պես չեմ սիրում բալի այգին։ Այնքան քնքուշ էի սիրում, որ թվում էր, թե մեր այգուց ավելի լավ տեղ աշխարհում չկա։
ՏՐՈՖԻՄՈՎ — Ամբողջ Ռուսաստանն է մեր այգին։ Երկիրը վիթխարի է ու գեղեցիկ, բազում հրաշալի տեղեր ունի։

Դադար։

Մտածեք հապա, Անյա. ձեր պապը, ապուպապը և բոլոր նախնիները ճորտատերեր են եղել, որոնք տեր են եղել կենդանի հոգիների, և մի՞թե այգու ամեն մի բալից, ամեն տերևից, ամեն մի բնից ձեզ չեն նայում կենդանի ոգիներ, մի՞թե ձայներ չեք լսում... Տեր լինել կենդանի մարդկանց. չէ որ սա վերասերել է բոլորիդ՝ նախկինում ապրածներին և ներկայումս ապրողներին, այնպես որ ձեր մայրը, դուք, ձեր քեռին արդեն չեք նկատում, որ պարտքով եք ապրում, ուրիշի հաշվին, այն մարդկանց հաշվին, ում նախասենյակից այն կողմ չեք ընդունում... Մենք առնվազն երկու հարյուր տարով հետ ենք մնացել, մենք դեռ ոչնչից ոչինչ չունենք, որոշակի վերաբերմունք չունենք անցյալի նկատմամբ, միայն փիլիսոփայում ենք, դժգոհում ձանձրույթից կամ օդի խմում։ Չէ որ այնքան պարզ է՝ ներկան ապրելու համար սկզբից պետք է քավել մեր անցյալի մեղքերը, վերջ տալ նրան, իսկ քավել կարելի է միայն տառապանքով, միայն արտասովոր, անընդմեջ աշխատանքով։ Հասկացեք դա, Անյա։

ԱՆՅԱ — *Տունը, ուր մենք ապրում ենք, վաղուց արդեն մերը չէ, և ես կգնամ, ձեզ խոսք եմ տալիս։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Եթե տունուտեղի բանալիները ձեզ մոտ են, ապա գցեք ջրհորն ու հեռացեք։ Ազատ եղեք, քամու պես։*

ԱՆՅԱ — (*զմայլված*) *Ինչ լավ ասացիք։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Հավատացեք ինձ, Անյա, հավատացեք։ Երեսուն տարեկան դեռ չկամ, երիտասարդ եմ, դեռևս ուսանող, բայց այնքան բան եմ տարել։ Ձմեռը գալուն պես քաղցած եմ, հիվանդ, անհանգիստ, մուրացկանի պես աղքատ, և ուր ասես չի նետել ճակատագիրն ինձ, որտեղ ասես չեմ եղել։ Այնուամենայնիվ, իմ հոգին միշտ, ամեն մի րոպե, գիշեր թե ցերեկ լի է եղել անբացատրելի կանխազգացումներով։ Ես երջանկություն եմ կանխազգում, Անյա, ես արդեն տեսնում եմ դա...*

ԱՆՅԱ — (*մտախոհ*) *Լուսինը դուրս է գալիս։*

Լսվում է Եպիխոդովի կիթառի նվագը՝ նույն տրտում երգն է նվագում։ Լուսինը դուրս է գալիս։ Բարդիների մոտ, հեռվում Վարյան փնտրում է Անյային, ձայն է տալիս. «*Անյա՜, որտե՞ղ ես։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Այո, լուսինը դուրս է գալիս։*

Դադար։

Ահավասիկ, երջանկությունը, ահա, գալիս է, ավելի ու ավելի է մոտենում, արդեն լսում եմ նրա ոտնաձայնը։ Եվ եթե մենք չտեսնենք, չճանաչենք նրան, ապա ի՞նչ փույթ։ Ուրիշները կտեսնեն...

Վարյայի ձայնը. «*Անյա՜, ո՞ւր ես։*

Էլի այս Վարյան։ (Բարկացած)։ *Ձայրացուցիչ է։*

ԱՆՅԱ — *Է, ինչ։ Գնանք գետափ։ Այնտեղ լավ է։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Գնանք։*

Գնում են։ Վարյայի ձայնը. «*Անյա՜, Անյա՜*»։

Վարագույր

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սրահից կամարով բաժանված հյուրասենյակ: Ջահը վառված է: Նախասենյակից լսվում է հրեական նվագախմբի նվագը, որի մասին հիշատակվեց երկրորդ գործողության մեջ: Երեկո է: Սրահում grand-rond են պարում: Սիմեոնով-Պիշչիկի ձայնը. «Promenade à une paire!»: Մտնում են հյուրասենյակ. առաջին զույգը Պիշչիկն է, Շառլոտա Իվանովնան, երկրորդը- Տրոֆիմովը և Լյուբով Անդրեևնան, երրորդը Անյան և փոստատատան ատաղձագործը և այլն: Վարյան անձնվեր է լինում և արցունքներն է սրբում պարելիս: Վերջին զույգը՝ Դունյաշան է: Անցնում են հյուրասենյակով: Պիշչիկը բղավում է. «Grand-rond, balancez!» և «Les cavaliers à genoux et remerciez vos dames!»: Ֆրակ հագած Ֆիրսը մատուցարանով փոքրիկ ջուր է բերում: Հյուրասենյակ են մտնում Պիշչիկը և Տրոֆիմովը:

ՊԻՇՉԻԿ — Արյունս շատ է, երկու կաթված ստացել եմ արդեն, պարելը դժվար է, բայց ինչպես ասում են՝ շրջան մտար, պար արի: Չէ որ ձիու առողջություն ունեմ: Հանգուցյալ հայրը կատակասեր մարդ էր, աստված հոգին լուսավորի, մեր ծագման մասին ասում էր, իբր թե Սիմեոնով-Պիշչիկների մեր հին տոհմը գալիս է հենց այն ձիուց, որը Կալիգուլան սենատ էր բերել... (Նստում է): Բայց ցավն այն է, որ փող չունեմ: Սոված հավը երազում կուտ է տեսնում... (Խումփում ու իսկույն աչքերը բացում է): Ես էլ նույնն եմ... մենակ փողից կարող եմ խոսել:

ՏՐՈՖԻՄՈՎ — Ձեր կազմվածքի մեջ իսկապես ձիական մի բան կա:

ՊԻՇՉԻԿ — Է՛, ինչ... ձին լավ կենդանի է... ձին ծախել կլինի...

Լսվում է, թե ինչպես հարևան սենյակում բիլիարդ են խաղում: Սրահում, կամարի տակ երևում է Վարյան:

ՏՐՈՖԻՄՈՎ — (ձեռ առնելով) Տիկին Լոպախի՜նա: Տիկին Լոպախի՜նա...

ՎԱՐՅԱ — (բարկացած) Քնձոոտ պարոն:

ՏՐՈՖԻՄՈՎ — Այո, ես քնձոոտ պարոն եմ ու հպարտ եմ դրանով:

ՎԱՐՅԱ — (դառն մտքերի մեջ) Երաժիշտ են վարձել. բայց ի՞նչ փողով: (Գնում է):

ՏՐՈՖԻՄՈՎ — (Պիշչիկին) Եթե այն եռանդը, որ ամբողջ կյանքում ծախսել եք տոկոսները վճարելու փող գտնելու համար, մեկ ուրիշ բանի համար ծախսեիք, ապա հավանորեն կարողանայիք վերջիվերջո երկրագունդը շուռ տալ:

ՊԻՇՉԻԿ — Նիցշեն... Փիլիսոփա Նիցշեն... մեծագույն, ամենանշանավոր... հսկայական խելքի տեր մի մարդ. իր գրքերում ասում է՝ իբր կեղծ թղթադրամ սարքել կարելի է:

ՏՐՈՖԻՄՈՎ — Իսկ դուք Նիցշե կարդացե՞լ եք:

ՊԻՇՉԻԿ — Է՞... Ինձ Դաշենկան է ասել: Իսկ հիմա մի գրքի մեջ եմ, որ մնացել է կեղծ թղթադրամ սարքելը: Հենց այս օրը երեք հարյուր տասը ռուբլի պիտի վճարեմ... Հարյուր երեսունը ճարել եմ արդեն... (Շոշափում է գրպանները, տագնապած): Կորել է: Փողը կորցրել եմ: (Արտասվելիս) Ո՞ւր է փողը: (Ուրախացած): Ահը, աստուծի տակ էր: Մի անգամ քրտինք տվեց վրաս:

Մտնում են Լյուբով Անդրեևնան և Շառլոտա Իվանովնան:

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (լեզգինկա երգելով) Ինչո՞ւ է աղջիկը ուշանում Լեոնիդը: Ի՞նչ է անում քաղաքում: (Դունյաշային) Դունյաշա, երաժիշտներին թեյ առաջարկիր...

ՏՐՈՖԻՄՈՎ — Ամենայն հավանականությամբ անուրջը չի գալացել:

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Երաժիշտներն էլ անպատեհ եկան. գրահանդեսն էլ անպատեհ արեցինք... Լավ, ոչինչ... (Նստում է և կամացուկ երգում):

ՇԱՌԼՈՏԱ — (Պիշչիկին թղթախաղերի կապուկ տալով) Ահա մի կապ խաղաթուղթ, մեկնումեկը մտքում պահեք:

ՊԻՇՉԻԿ — Պահեցի:

ՇԱՌԼՈՏԱ — Հիմա խառնեք։ Շատ լավ խառնեք։ Տվեք այստեղ, օ՜, իմ սիրելի պարոն Պիշչիկ։ Այն, ցվայ, դրայ։ Հիմա փընտրեք, ձեր կողքի գրպանում է...

ՊԻՇՉԻԿ — (կողքի գրպանից խաղաթուղթը հանելով). Ագռավի ութնոցը, միանգամայն ճիշտ է։ (Զարմացած): Մի տեսեք, է՜։

ՊԻՇՉԻԿ — (խաղաթղթերը ձեռքի ափի մեջ, Տրոֆիմովին), Ի՞նչ թուղթ է վրայից, շուտ ասեք։

ՏՐՈՖԻՄՈՎ — Է, ինչ։ Ագռավի աղջիկը։

ՇԱՌԼՈՏԱ — Լավ։ (Պիշչիկին): Հը՞։ Ի՞նչ թուղթ է վրայից։

ՊԻՇՉԻԿ — Փոսիկի մեկանոցը։

ՇԱՌԼՈՏԱ — Լավ։ (Խփում է ափին, խաղաթղթերի կապուկն անհետանում է): Իսկ ինչ լավ եղանակ է այսօր։

Ի պատասխան կանացի խարճրդավոր մի ձայն է լսվում, ասես գետնի տակից — «Օ, տիկին, այո, հոյակապ եղանակ է»։

Դուք իմ շատ լավ իդեալն եք...։

Ձայն— «Դուք նույնպես ինձ շատ դուր եկաք, տիկին»։

ԿԱՅԱՐԱՆԱՊԵՏ — (ծափահարում է) Բռավո՜ տիկին որովայնախոս։

ՊԻՇՉԻԿ — (զարմանալով) Մի տեսեք, է՜։ Սքանչելի Շառլոտա Իվանովնա... ուղղակի սիրահարված եմ...։

ՇԱՌԼՈՏԱ — Սիրահարվա՞ծ։ (Ուսերը թոթվելով)։ Մի՞թե դուք կարող եք սիրել։ Guter Mensch, aber schlechter Musikant...

ՏՐՈՖԻՄՈՎ — (խփում է Պիշչիկի ուսին) Ձիու մեկը, ձի...

ՇԱՌԼՈՏԱ — Ուշադրություն, մի ֆոկուս ևս։ (Աքոռի վրայից վերցնում է շալը): Ահա մի շատ լավ շալ, ուզում եմ վաճառել... (Թափ է տալիս): Գնել ցանկացող չկա՞։

ՊԻՇՉԻԿ — (զարմանալով) Մի տեսեք, է՜։

ՇԱՌԼՈՏԱ— Այն, ցվայ, դրայ։ (Արագ բարձրացնում է իջեցրած շալը, շալի հետևում կանգնած է Անյան, որը ուերանս է անում, վազում մոտ մոտ, գրկում է նրան ու հետ վազում սրահ՝ համբնդհանուր հիացմունք հարուցելով):

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (ծափահարելով) Բռա՜վո, բռա՜վո...

ՇԱՌԼՈՏԱ — Հիմա մի հատ էլ։ Այն, ցվայ, դրայ։ (Բարձրացնում է շալը, հետևում կանգնած է Վարյան և գլուխ է խոնարհում):

ՊԻՇՉԻԿ — (զարմանալով) Մի տեսեք, է՜։

ՇԱՌԼՈՏԱ — Վե՜րջ։ (Շալը նետում է Պիշչիկի վրա, ուերանս անում և դուրս վազում սրահից):

ՊԻՇՉԻԿ — (շտապում է նրա հետևից) Կախարդի մեկը... Ի՞նչ կախարդն է։ Ի՞նչ կախարդ... (Հեռանում է):

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Լեոնիդը չկա ու չկա։ Թե ինչ է անում քաղաքում այսքան ժամանակ, չեմ հասկանում։ Չէ որ այնտեղ ամեն ինչ վերջացել է, կալվածքը վաճառվել է կամ աճուրդը չի կայացել, ինչի՞ համար տեղյակ չի պահում այսքան ժամանակ։

ՎԱՐՅԱ — (աշխատելով նրան սփոփել) Քեռին գնել է, ես վստահ եմ։

ՏՐՈՖԻՄՈՎ — (ծաղրաբար) Այո։

ՎԱՐՅԱ — Տատիկը նրան լիազորագիր է ուղարկել, որ նրա անունով գնի՝ պարտքի փոխանցումով։ Տատիկն Անյայի համար է արել։ Եվ ես վստահ եմ, աստծո օգնությամբ քեռին կգնի։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Յարոսլավլի տատիկը տասնհինգ հազար էր ուղարկել՝ կալվածքը իր անունով գնելու համար. մեզ չի հավատում նա, իսկ ուղարկածը չէր բավականացնի նույնիսկ տակոսները վճարելու համար։ (Դեմքը ծածկում է ձեռքերով): *Այսօր իմ ճակատագիրն է վճռվում, ճակատագիրը...*

ՏՐՈՖԻՄՈՎ — (Վարյային զայրացնելով) Տիկին Լոպախի՞նա։

ՎԱՐՅԱ — (բարկացած) Հավերժական ուսանող։ Արդեն երկու անգամ համալսարանից հանել են։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Իսկ ինչո՞ւ ես բարկանում, Վարյա։ Լոպախինո՞վ է քեզ ձեռ առնում, հետո՞ ինչ։ Կուզես՝ ամուսնացիր Լոպախինի հետ, լավ, հետաքրքիր մարդ է։ Չես ուզում, մի ամուսնացիր, քեզ ոչ ոք չի ստիպում, հոգիս։

ՎԱՐՅԱ — Ես լուրջ եմ նայում խնդրին, մայրիկ, պետք է ուղղակի ասեմ, նա լավ մարդ է, ինձ դուր է գալիս։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Է, ամուսնացիր։ Սպասելու ի՞նչ կա, չեմ հասկանում։

ՎԱՐՅԱ — Մայրիկ, հո չե՞մ կարող ինքս առաջարկություն անել նրան։ Արդեն երկու տարի բոլորն ինձ ահա ասում են նրա մասին, բոլորը խոսում են, իսկ նա կամ լռում է, կամ կատակի տալիս։ Հասկանում եմ։ Հարստանում է, գործով է զբաղված, ինձ հետ գլուխ չունի։ Եթե մի քիչ փող լիներ,

գոնե հարյուր ռուբլի, ամեն ինչ կթողնեի ու կգնայի։ Կմրտնեի կուսանոց։

ՏՐՈՖԻՄՈՎ — Հոյակա՜պ։

ՎԱՐՅԱ — (Տրոֆիմովին) *Ուսանողը մի քիչ էլ խելացի պիտի լինի։* (Մեղմորեն, արտասվախառն)։ *Ոնց եք գեշացել, Պետյա, ոնց եք պառավել։* (Լյուբով Անդրեևնային, արդեն լաց չլինելով)։ *Մենակ թե անգործ մնալ չեմ կարող, մայրիկ։ Ամեն րոպե մի բան պիտի անեմ։*

Ներս է մտնում Յաշան։

ՅԱՇԱ — (ծիծաղը ճազիվ զսպելով) *Եպիխոդովը բիլիարդի կիյը ջարդեց...* (Գնում է)։

ՎԱՐՅԱ — *Իսկ Եպիխոդո՞վն ինչու է այստեղ։ Ո՞վ է նրան թույլ տվել բիլիարդ խաղալ։ Չեմ հասկանում այս մարդկանց...* (Գնում է)։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Մի բարկացրեք նրան, Պետյա, տեսնում եք, առանց այդ էլ վշտացած է։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Ախր շատ է եռանդուն, իրեն չվերաբերող գործերի է խառնվում։ Ամբողջ ամառ հանգիստ չի թողել ոչ Անյային, ոչ ինձ, վախենում էր, թե հանկարծ չսիրահարվենք։ Նրա՞ ինչ գործն է։ Բացի այդ, առիթ էլ չեմ տվել, ես այնքան եմ հեռու տափակությունից։ Մենք վեր ենք սիրուց։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Պետք է որ ես էլ ցածր լինեմ սիրուց։* (Սաստիկ անհանգստացած)։ *Լեոնիդն ինչո՞ւ չեկավ։ Միայն թե իմանայի. կալվածքը վաճառվել է թե ոչ։ Դժբախտությունն այն աստիճան անհավանական է թվում ինձ, որ մի տեսակ նույնիսկ չգիտեմ ինչ մտածեմ, շփոթվում եմ... կարող եմ հիմա բղավել... հիմարություն կարող եմ անել։ Փրկեցեք ինձ, Պետյա։ Մի բան ասեք, դե, խոսեք...*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Վաճառված է այսօր կալվածքը, թե չի վաճառված՝ մեկ չէ՞։ Խնդիրը վաղուց արդեն վերջացած է, հետ ճանապարհ չկա, ճամփին խոտ է բուսել։ Հանգստացեք, թանկագինս։ Հարկ չկա ինքնախաբեությամբ զբաղվել, կյանքում գոնե մի անգամ պիտի ճշմարտության աչքերին նայել։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Ո՞ր ճշմարտության։ Դուք տեսնում եք։ Թե որտեղ է ճշմարտությունը և որտեղ՝ չէ, իսկ ես կարծես կորցրել եմ տեսողությունս, ոչինչ չեմ տեսնում։ Կարևոր բոլոր հարցերը համարձակ լուծում եք, բայց ասացեք, սիրելիս, ո՞չ այն պատճառով, որ ջահել եք, որ դեռ չեք տառապել ձեր և ոչ մի հարցով։ Դուք համարձակ առաջ եք նայում, և ո՞չ այն պատճառով, որ սարսափելի ոչինչ չեք տեսնում ու սպասում, քանի որ կյանքը դեռևս թաքնված է ձեր երիտասարդ աչքերից։ Դուք մեզնից ավելի համարձակ եք, աղնիվ, խորը, սակայն լավ մտածեք, թեկուզ մազաչափ մեծահոգի եղեք, խնայեցեք ինձ։ Չէ որ ես այստեղ եմ ծնվել, այստեղ են ապրել իմ հայրը, իմ պապը, ես սիրում եմ այս տունը, առանց բալի այգու չեմ ընկալում իմ կյանքը, և եթե այդքան անհրաժեշտ է վաճառել, ապա ինձ էլ վաճառեք այգու հետ...* (Գրկում է Տրոֆիմովին, ճակատը համբուրում)։ *Չէ որ իմ զավակն է այստեղ խեղդվել...* (Լաց է լինում)։ *Խղճացեք ինձ, լավ ու բարի մարդ։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Գիտեք, ես ձեզ կարեկցում եմ ամբողջ հոգով։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Բայց հարկ է ուրիշ, ուրիշ կերպ դա ասել...* (Հանում է թաշկինակը, հատակին մի հեռագիր է ընկնում)։ *Այսօր նեղված է հոգիս, դուք չեք կարող պատկերացնել։ Ինձ համար այստեղ աղմկոտ է, յուրաքանչյուր ձայնից հոգիս ցնցվում է, դողում եմ ամբողջ մարմնով, բայց չեմ կարող իմ սենյակը գնալ, սարսափելի է մենակ մնալ լռության մեջ։ Ինձ մի դատապարտեք, Պետյա... Ես ձեզ հարազատի պես եմ սիրում։ Անյային սիրով ձեզ կտայի, միայն թե, սիրելիս, սովորել է պետք, դասընթացներն ավարտել է պետք։ Դուք ոչինչ չեք անում, ճակատագիրը ձեզ տեղից տեղ է շպրտում, դա շատ տարօրինակ է... Այդպես չէ՞։ Այո՞։ Եվ ձեր մորուքն էլ մի բան արեք, որպեսզի ինչ-որ ձևով աճի...* (Սիծաղում է)։ *Սիծաղելի եք։*

ՏՐՈՖԻՄՈՎ — (վերցնում է հեռագիրը) *Ես չեմ ցանկանում գեղեցկատես լինել։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Փարիզից է այս հեռագիրը։ Ամեն օր ստանում եմ։ Երեկ էլ, այսօր էլ։ Այդ վայրենի մարդը նորից է հիվանդացել, նորից վատ է զգում... Ներումն է խնդրում, աղաչում է, որ գնամ, և իսկապես հարկ էր, որ Փարիզ գնայի, նրա մոտ լինեի։ Ձեր դեմքը խստացավ, Պետյա, բայց ինչ անեմ, սիրելիս, նա հիվանդ է, միայնակ, դժբախտ, իսկ ո՞վ պիտի հետևի նրան այնտեղ, ով պետք է հետ պահի սխալներից, ո՞վ պետք է ժամանակին դեղ տա*

նրան։ Եվ ի՞նչ կա այստեղ թաքցնելու կամ լռության տալու. ես նրան սիրում եմ, դա պարզ է։ Սիրում եմ, սիրում... Դա մի քար է՝ իմ վզից կախ, և ինձ խորտակում է, բայց ես սիրում եմ այդ քարն ու չեմ կարող առանց դրա ապրել։ (Սեղմում է Տրոֆիմովի ձեռքը)։ *Վատ բան մի մտածեք, Պետյա, ինձ ոչինչ մի ասեք, մի՛ ասեք...*

ՏՐՈՖԻՄՈՎ — (արտասվախառն) *Ի սեր աստծո, ներեցեք անկեղծությունս՝ չէ որ նա կողոպտել է ձեզ։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Ոչ, ոչ, պետք չէ այդպես ասել...* (Փակում է ականջները)։

ՏՐՈՖԻՄՈՎ — *Չէ որ նա սրիկա է, միայն դո՛ւք չգիտեք։ Նա ողորմելի սրիկա է, ոչնչություն...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (բարկացած, սակայն զուսպ) *Դուք քսանվեց կամ քսանյոթ տարեկան եք, բայց դեռևս՝ գիմնազիայի երկրորդ դասարանցի։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Թող այդպես լինի։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Տղամարդ է պետք լինել, ձեր տարիքում հարկ է հասկանալ նրանց, ովքեր սիրում են։ Եվ հարկ է սիրել... սիրահարվել է պետք ձեզ։* (Բարկացած)։ *Այո, այո։ Ձեր մեջ մաքրություն չկա, միայն մաքրությունից եք խոսում, դուք ծիծաղելի ցանցառ եք, անճոռնի...*

ՏՐՈՖԻՄՈՎ — (սարսափած) *Ինչե՞ր է ասում։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *«Ես վե՞ր եմ սիրուց»։ Դուք վեր չեք սիրուց, այլ ուղղակի, ինչպես մեր Ֆիրսն է ասում, դմբոյի մեկն եք։ Ձեր տարիքում սիրուհի չունենա՞լ...*

ՏՐՈՖԻՄՈՎ — *(սարսափած) Սարսափելի է։ Ինչե՞ր է ասում։* (Արագ-արագ գնում է սրահ, գլուխը բռնած)։ *Սարսափելի՛ է... Ես չեմ կարող, ես կգնամ...* (Գնում է, բայց և իսկույն հետ գալիս)։ *Մեր մեջ ամեն ինչ վերջացած է։* (Դուրս է ելնում նախասենյակով)։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (բղավում է հետևից) *Պետյա, սպասեք։ Ինչ հետաքրքիր մարդ է, ես կատակ արեցի։ Պետյա՛։*

Լսվում է, թե ինչպես նախասենյակում մեկն արագ-արագ իջնում է աստիճաններով և հանկարծ դղրդացով ցած է ընկնում։ Անյան և Վարյան ճչում են, բայց իսկույն էլ ծիծաղ է լսվում։

Ի՞նչ եղավ այդտեղ։

Ներս է վազում Անյան։

ԱՆՅԱ — (ծիծաղելով) *Պետյան ընկավ աստիճաններից։* (Հետ է վազում)։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Ինչ խելառն է այդ Պետյան...*

Կայարանապետը կանգնում է սրահի կենտրոնում և արտասանում Ա. Տոլստոյի «Մեղավոր կինը»։ Նրան լսում են, բայց մի քանի տող շարտասանած, նախասենյակից վալսի ճենչյուններ են լսվում, և արտասանությունն ընդհատվում է։ Բոլորը պարում են։ Նախասենյակից գալիս են Տրոֆիմովը, Անյան, Վարյան և Լյուբով Անդրեևնան։

Լավ, Պետյա... լավ, մաքուր հոգու տեր տղա... ես ներողություն եմ խնդրում... Գնանք պարենք... (Պարում է Պետյայի հետ)։

Անյան և Վարյան պարում են։

Գալիս է Ֆիրսը, ձեռնափայտը դնում կողքի դռան մոտ։ Յաշան նույնպես մտնում է հյուրասենյակից, նայում է պարողներին։

ՅԱՇԱ — *Ի՞նչ կա, պապի։*

ՖԻՐՍ — *Լավ չեմ։ Առաջ մեր պարահանդեսներին գեներալներ, բարոններ ու ադմիրալներ էին պար գալիս, հիմա ուղարկում ենք փոստատան աստիճանավոր ու կայարանապետ կանչելու, դրանք էլ նազուտուզով են գալիս։ Մի տեսակ թուլացել եմ։ Լուսահոգի պարոնը, պապը, բոլորին զմուռսով էր բուժում, ամեն տեսակ հիվանդությունից։ Քսան տարի կլինի, գուցե ավել, ամեն օր զմուռս եմ խմում, վայ թե դրանից է, որ ողջ եմ։*

ՅԱՇԱ — *Գլուխ տարար, պապի։* (Հորանջում է)։ *Գոնե դու շուտ սատկեիր։*

ՖԻՐՍ — *Դմբո ես, է՛... դմբո։* (Մոթմոթում է բքի տակ)։

Տրոֆիմովը և Լյուբով Անդրեևնան պարում են սրահում, հետո՝ հյուրասենյակում։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Մերսի։ Մի քիչ նստեմ...* (Նստում է)։ *Հոգնեցի։*

Ներս է գալիս Անյան։

ԱՆՅԱ — (հուզված) Խոհանոցում նոր մի մարդ ասում էր, թե բալի այգին արդեն վաճառվել է այսօր։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ո՞ւմ է վաճառվել։

ԱՆՅԱ — Չասաց, թե ում։ (Պարում է Տրոֆիմովի հետ, երկուսն էլ անցնում են սրահ)։

ՅԱՇԱ — Մի ծեր մարդ էր դուրս տալիս այնտեղ։ Մերոնցից չէր։

ՖԻՐՍ — Իսկ Լեոնիդ Անդրեիչը չկա, չի եկել։ Հագի վերարկուն՝ թեթև, աշնանային, մեկ էլ տեսար մրսեց։ Էհ, ջահել են, է՜...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Հենց հիմա կմեռնեմ։ Յաշա, գնացեք իմացեք, թե ում է վաճառվել։

ՅԱՇԱ — Ախր վաղուց գնացել է այն մարդը։ (Ծիծաղում է)։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (թեթևակի զայրացած) Հեռո՞, ինչի՞ համար եք ծիծաղում։ Ինչի՞ վրա եք ուրախացել։

ՅԱՇԱ — Շատ ծիծաղելի մարդ է Եպիխոդովը։ Փուչ ու դատարկ։ Քսաներկու փորձանք։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ֆիրս, կալվածքը եթե վաճառեն, ո՞ր ես գնալու։

ՖԻՐՍ — Ուր հրամայեք, էնտեղ էլ կգնամ։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Դե՞մքդ ինչու է այդպես։ Վատառո՞ղջ ես։ Գնայիր, պառկեիր, հա՞...

ՖԻՐՍ — Հա... (Քմծիծաղով)։ Ես գնամ պառկեմ, առանց ինձ էստեղ ո՞վ պիտի մատուցի, ո՞վ գլուխ կհանի։ Մի տուն, մի Ֆիրս։

ՅԱՇԱ — (Լյուբով Անդրեևնային) Լյուբով Անդրեևնա։ Թույլ տվեք մի խնդիրքով դիմել ձեզ, բարի եղեք։ Եթե նորից Փարիզ եք գնալու, ինձ էլ տարեք հետներդ, ողորմած եղեք։ Այստեղ մնալ ինձ կտրականապես չի կարելի։ (Շուրջը նայելով, կիսաձայն)։ Էլ ինչ ասեմ, ինքներդ եք տեսնում, երկիրը՝ անկիրթ, ժողովուրդը՝ բարոյազուրկ, հետո ձանձրալի է, խոհանոցում այլանդակ են կերակրում, չհաշված, որ Ֆիրսն էլ գնում-գալիս, զանազան անհարմար բառեր է մրթմրթում։ Ձեզ հետ տարեք ինձ, բարի եղեք։

Գալիս է Պիշչիկը։

ՊԻՇՉԻԿ — Թույլ տվեք խնդրել ձեզ... վալսի, գեղեցկագույն... (Լյուբով Անդրեևնան գնում է նրա հետ)։ Իմ հմայիչ, այնուամենայնիվ, հարյուր ութսուն ռուբլի ես ձեզնից կվերցնեմ...

Կվերցնեմ... (Պարում է)։ Հարյուր ութսուն ռուբլի...

Անցնում են սրահ։

ՅԱՇԱ — (կամացուկ երգում է) «Կհասկանա՞ս խռովքն իմ հոգու...»։

Սրահում մոխրագույն ցիլինդրով և վանդականախշ շալվարով մեկը ձեռքերն է թափահարում ու ցատկոտում։ Բացականչություններ՝ «Բռա՜վո, Շարլոտա Իվանովնա»։

ԴՈՒՆՅԱՇԱ — (դիմափոշի խելու համար կանգ առնելով) Օրիորդն ինձ ասաց, որ պարեմ, կավալերները շատ են, դամաները՝ քիչ, իմ գլուխն էլ պարելուց պտտվում է, սիրտս խփում է, Ֆիրս Նիկոլաևիչ, նոր էլ փոստի աշխատողը մի տեսակ բան ասեց ինձ, որ շունչս կտրվեց։

Երաժշտությունը մեղմանում է։

ՖԻՐՍ — Ի՞նչ ասաց։

ԴՈՒՆՅԱՇԱ — Ասեց՝ ոնց որ ծաղիկ լինեք։

ՅԱՇԱ — (հոռանչում է) Բռինե՜ր... (Գնում է)։

ԴՈՒՆՅԱՇԱ — Ոնց որ ծաղիկ... Ես էնքան զգայուն աղջիկ եմ, շատ եմ սիրում էդպիսի խոսքեր։

ՖԻՐՍ — Դլխիդ մի բան ես բերելու։

Գալիս է Եպիխոդովը։

ԵՊԻԽՈԴՈՎ — Ավդոտյա Ֆյոդորովնա, դուք չեք կամենում ինձ տեսնել... կարծես միջատ լինեմ կամ մի ուրիշ բան։ (Հոգոց է հանում)։ Էհ, կյանք, կյանք։

ԴՈՒՆՅԱՇԱ — Ի՞նչ եք ուզում։

ԵՊԻԽՈԴՈՎ — Անկասկած, դուցեև դուք իրավացի եք։ (Հոգոց է հանում)։ Սակայն, անշուշտ, եթե նայեք տեսակետի առումով, ապա դուք, թույլ տվեք այսպես արտահայտվել, նեսրեցեք անկեղծության համար, ինձ բացարձակապես հասցրել եք վիճելի... Հոգեկան։ Ես իմ ճակատագիրը գիտեմ, ամեն օր մի որևէ փորձանք ինձ պատահում է, և վաղուց վարժվել եմ դրան, այնպես որ ժպիտով եմ նայում իմ ճակատագրին։ Դուք ինձ խոսք էիք տվել, ու չնայած ես...

ԴՈՒՆՅԱՇԱ — Խնդրեմ, հետո կխոսենք, հիմա հանգիստ թողեք։

Հիմա ես երազում եմ։ (Խաղացնում է հովհարը)։

ԵՊԻԽՈԴՈՎ — *Փորձանքն ինձնից անպակաս է ամեն օր, և ես, ինձ թույլ կտամ այսպես արտահայտվել, միայն ժպտում եմ, նույնիսկ ծիծաղում։*

Սրահից ելնում է Վարյան։

ՎԱՐՅԱ — *Սեմյոն, դու դեռ չե՞ս գնացել։ Իրոք, ինչ անհարգալից մարդ ես։* (Դունյաշային)։ *Գնա այստեղից, Դունյաշա։* (Եպիխոդովին)։ *Կամ բիլիարդ ես խաղում ու կիյը ջարդեցիր, կամ էլ ման ես գալիս հյուրասենյակում, կարծես հյուր լինես։*

ԵՊԻԽՈԴՈՎ — *Թույլ տվեք արտահայտվել, որ կշտամբել ինձ դուք չեք կարող։*

ՎԱՐՅԱ — *Ես քեզ չեմ կշտամբում, ասո՛ւմ եմ։ Բանուգործդ մի տեղից մի ուրիշ տեղ գնալն է, գործով զբաղվիր։ Գործավար ենք պահում, հայտնի չէ, թե ինչի համար։*

ԵՊԻԽՈԴՈՎ — (վիրավորված) *Աշխատում եմ, թե ման եմ գալիս, ուտում եմ, թե բիլիարդ եմ խաղում, դրա մասին դատել կարող են միայն հասկացող ու տարիքով մարդիկ։*

ՎԱՐՅԱ — *Դու համարձակվում ես ինձ դա ասե՛լ։* (Բորբոքվելով)։ *Սի՞րտ արեցիր։ Ուրեմն, ես ոչինչ չե՞մ հասկանում։ Դե, դուրս կորի էստեղից։ Էս րոպեիս։*

ԵՊԻԽՈԴՈՎ — (վախենալով) *Խնդրում եմ ձեզ քաղաքավարի կերպով արտահայտվել։*

ՎԱՐՅԱ — (իրեն շտիրապետելով) *Էս րոպեիս դո՛ւրս կորի էստեղից։ Դո՛ւրս։*

Եպիխոդովը գնում է դռան կողմը, Վարյան՝ հետևից։ *«Քսաներկու փորձանք։ Չտեսնեմ քեզ այլևս այստեղ։ Աչքիս չերևաս»։* Եպիխոդովը դուրս է եկել, դռան հետևից լսվում է նրա ձայնը. *«Ձեր վրա ես կբողոքեմ»։*

Ա՜, հե՞տ ես գալիս (Վերցնում է դռան մոտի ձեռնափայտը, որ Ֆիրսն էր բռնել)։ *Արի... Արի... Արի, ես քեզ ցույց կտամ... Ա՜, գալի՞ս ես։ Գալի՞ս ես։ Դե, կեր...* (Բարձրացնում է, այդ ժամանակ ներս է մտնում Լոպախինը)։

ԼՈՊԱԽԻՆ — *Հոգաչափ շնորհակալ եմ։*

ՎԱՐՅԱ — (բարկացած ու ծաղրական) *Ներող կլինեք։*

ԼՈՊԱԽԻՆ — *Ոչինչ։ Հոգաչափ շնորհակալ եմ հաճելի հյուրընկալության համար։*

ՎԱՐՅԱ — *Չարժի։* (Հեռանում է, ապա հետ նայում ու մեղմորեն հարցնում)։ *Հո շատ չցավե՞ց։*

ԼՈՊԱԽԻՆ — *Չէ, ոչինչ։ Բայց մի մեծ կտոր կբուսնի։*

Ձայներ սրահում. *«Լոպախինը եկավ։ Նիկոլայ Ալեքսեևիչը»։*

ՊԻՇՉԻԿ — *Ձայնը լսեցինք, երեսը տեսանք։* (Համբուրվում է Լոպախինի հետ)։ *Կոնյակի հոտ է գալիս, սիրելիս, հոգիս։ Մենք էլ ենք այստեղ ուրախանում։*

Մտնում է Լյուբով Անդրեևնան։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Դո՞ւք եք, Երմոլայ Ալեքսեևիչ։ Ինչո՞ւ այսքան ուշացաք։ Լեոնի՞դն ուր է։*

ԼՈՊԱԽԻՆ — *Լեոնիդ Անդրեիչն ինձ հետ եկավ, գալիս է...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (հուզվելով) *Դե, ի՞նչ։ Աճուրդը եղա՞վ։ Ասացեք։*

ԼՈՊԱԽԻՆ — (շփոթված, վախենալով երևցնել իր ուրախությունը) *Աճուրդը վերջացավ ժամը չորսին մոտ... Գնացքից ուշացանք, ստիպված սպասեցինք մինչև ինն անց կես։* (Մաքրը հոգոց հանելով)։ *Ո՛ւֆֆ։ Գլուխս մի թեթև պտտվում է...*

Ներս է գալիս Գաևը, աջ ձեռքում՝ գնումներ, ձախով արցունքներն է սրբում։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Լյոնյա, ի՞նչ է եղել։ Լյոնյա, հը՞։* (Անհամբեր, աչքերին՝ արցունք)։ *Դե, շուտ ասա, ի սեր աստծո...*

ԳԱԵՎ — (ոչինչ չի պատասխանում, միայն ձեռքն է թափ տալիս։ Ֆիրսին՝ լաց լինելով) *Սա վերցրու... Անչոուս է, կերչի տառեխ... Այսօր ոչինչ չեմ կերել... Շատ տառապեցի...*

Բիլիարդանոցի դուռը բաց է, լսվում է խաղացողների շրխկոցն ու Յաշայի ձայնը. *«Յոթն ու տասնյոթը»։* Գաևի դեմքի արտահայտությունը փոխվում է, նա այլևս չի լալիս։

Սարսափելի հոգնած եմ։ Ֆիրս, գնանք շորերս փոխեմ։ (Սրահի միջով գնում է իր սենյակը, Ֆիրսը հետևում է նրան)։

ՊԻՇՉԻԿ — *Ի՞նչ կար աճուրդում, դե պատմիր։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Բալի այգին վաճառվա՞ծ է։*

ԼՈՊԱԽԻՆ — *Վաճառված է։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Ո՞վ գնեց։
ԼՈՊԱԽԻՆ — Ես գնեցի։

Դադար:

Լյուբով Անդրեևնան ճնշված է. նա կրնկեր, եթե կանգնած չլիներ սեղանի և բազկաթոռի մոտ: Վարյան գոտուց արձակում է բանալիների կապուկը, շպրտում հատակին, ելնում սենյակի մեջտեղ ու գնում:

Ես գնեցի։ Համբերեք, պարոնայք, բարի եղեք, գլուխս շըշմեց, խոսել չեմ կարողանում... (Միծաղում է)։ *Եկանք աճուրդի տեղը, Դերիգանովն արդեն այնտեղ էր։ Լեոնիդ Անդրեիչը միայն տասնհինգ հազար ուներ, իսկ Դերիգանովը, պարտքից ավել միանգամից երեսուն դրեց։ Տեսա, որ գործն այդպես է, մեջ մտա, քառասուն դրեցի։ Նա՝ քառասունհինգ։ Ես՝ հիսունհինգ։ Ուրեմն, նա հինգ-հինգ էր ավելացնում, ես՝ տասը-տասը... Է՛, վերջացավ։ Պարտքից ավելի իննսուն դրեցի, մնաց ինձ։ Բալի այգին հիմա իմն է։ Ի՞մը։* (Քրքրջում է): *Տեր աստված, բալի այգին իմն է, աստվա՞ծ իմ։ Ասացեք, որ հարբած եմ...* (Ոտքերը գետին է խփում): *Մի ծիծաղեք վրաս։ Եթե հայրս ու պապս դագաղներից դուրս գային ու տեսնեին կատարվածը, թե ինչպես իրենց Երմոլայը՝ ծեծված-ջարդված, կիսագրագետ Երմոլայը, որը ձրմռանը ոտաբոբիկ էր ման գալիս, թե ինչպես էդ նույն Երմոլայը գնեց կալվածքը, որից գեղեցիկ աշխարհում ոչ մի բան չկա։ Ես գնեցի կալվածքը, որտեղ պապս ու հայրս ճորտ էին, որտեղ նրանց խոհանոց անգամ չէին թողնում։ Քնած եմ, սա աչքիս է երևում միայն, ինձ թվում է միայն... Սա ձեր երևակայության պտուղն է՝ ծածկված անհայտության իավարով...* (Վերցնում է հատակից բանալիները, մեղմ ժպտալով): *Շպրտեց բանալիները, ուզեց ցույց տալ, թե ինքն արդեն տիրուհի չէ էստեղ...* (Զնգզնգացնում է բանալիները): *Է՛հ, մեկ է։*

Նվագախումբը լարում է գործիքները:

Էյ, երաժիշտներ, նվագեք, ես ուզում եմ ձեզ լսել։ Բոլորդ կդաք նայելու, թե ինչպես Երմոլայ Լոպախինը, կացինն առած, բալի այգին է մտնելու, ինչպես են ծառերը գետին ընկնելու։ Ամառանոցներ կկառուցենք, մեր թոռներն ու ծոռներն էստեղ նոր կյանք կտեսնեն... Նվագեք։

Նվագում են: Լյուբով Անդրեևնան ընկել է աթոռին և լալիս է դառնաղի:

(Կշտամբանքով): *Հապա ինչո՞ւ, ինչո՞ւ ինձ չլսեցիք։ Խեղճ Լյուբով Անդրեևնա, բարի Լյուբով Անդրեևնա, էլ հետ չի՛ գա։* (Արտասվախառն): *Օ՜, գոնե շուտ անցներ էս ամեն ինչը, գոնե մի կերպ փոխվեր մեր անճոռնի, անբախտ կյանքը։*

ՊԻՇՉԻԿ — (թևանցուկ է անում նրան, կիսաձայն) *Նա լալիս է։ Գնանք սրահ, թող նա մենակ մնա... Գնանք...* (Թևանցուկ սրահ է տանում նրան):

ԼՈՊԱԽԻՆ — *Իսկ ի՞նչ է եղել։ Էյ, կարգին նվագեք։ Ամեն ինչ իմ ուզածով թող լինի։* (Հեգնանքով): *Նոր կալվածատերն է գալիս, բալի այգու տերը։* (Պատահմամբ հրում է սեղանիկը, ֆիչ է մնում աշտանակն ընկնի): *Ամեն ինչի համար կվճարեմ։* (Գնում է Պիշչիկի հետ):

Սրահում և հյուրասենյակում ոչ ոք չկա, Լյուբով Անդրեևնայից բացի, որը նստած է կծկված, լալիս է դառնաղի: Մեղմ ընչում է երաժշտությունը: Արագ ներս են մտնում Անյան և Տրոֆիմովը: Անյան մոտենում է մորը և ծնկի գալիս նրա առաջ: Տրոֆիմովը մնում է սրահի մուտքի մոտ:

ՎՆՅԱ — *Մամա... Մամա, լա՞ց ես լինում։ Իմ սիրելի, իմ բարի, իմ լավ մամա, իմ գեղեցկուհի մամա, ես քեզ սիրում եմ... ես քեզ օրհնում եմ։ Բալի այգին վաճառվեց, այլևս չկա, դա ճիշտ է, ճիշտ, բայց մի լա, մամա, քեզ մնացել է կյանքը, մնացել է քո լավ, մաքուր հոգին... Գնանք ինձ հետ, գնանք, սիրելիս, գնանք այստեղից... Մենք նոր այգի կառնենք, սրանից փարթամ, դու կտեսնես, կհասկանաս, և մեղմ ու խորունկ ուրախություն կիջնի քո հոգուն, ինչպես արևն է իջնում իրիկնամուտին, և դու կժպտաս, մամա։ Գնանք, սիրելիս։ Գնանք...*

Վարագույր

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին գործողության դեկորացիան: Պատուհաններին վարագույր չկա, նկարներ՝ ևս, մեկ-երկու կտոր կարասի է մնացել՝ դարսված անկյունում, ասես վանառոի համար: Դատարկություն է զգացվում: Մուտքի դռան մոտ և բեմի խորքում ճամպրուկներ են դրված, ճանապարհի կապոցներ և այլն: Զախ դուռը բաց է, որտեղից լսվում են Վարյայի և Անյայի ձայները: Լոպախինը կանգնած, սպասում է: Յաշան մատուցարան է բռնել, շամպայնով լի բաժակը վրան: Նախասենյակում Եպիխոդովը արկղ է կապկպում: Բեմի հետևում ժխոր է: Մուժիկներն են եկել՝ նրաժեշտ տալու: Գաևի ձայնը. «Շնորհակալություն, եղբայրներ, շնորհակալություն»:

ՅԱՇԱ — Հասարակ ժողովուրդն է եկել հրաժեշտ տալու: Երմոլայ Ալեքսեիչ, ես այն կարծիքին եմ, որ ժողովուրդը բարի է, բայց քիչ բան է հասկանում:

Ժխորը մեղմանում է: Նախասենյակից մտնում են Լյուբով Անդրեևնան և Գաևը: Լյուբով Անդրեևնան չի լալիս, բայց դեմքը գունատ է, ցնցվում է, նա խոսել չի կարող:

ԳԱԵՎ — Լյուբա, քսակդ նրանց տվեցիր: Այդպես չի կարելի: Այդպես չի կարելի:

Երկուսն էլ հեռանում են:

ԼՈՊԱԽԻՆ — (դռան կողմը, նրանց հետևից) Հրամեցեք, անչափ խնդրում եմ: Մի-մի բաժակով մնաս բարով անենք: Խելքս չկտրեց քաղաքից բերեմ, կայարանում էլ մի շիշ գտա ընդամենը: Հրամեցեք:

Դադար:

Էս ի՞նչ է, պարոնայք: Չե՞ք կամենում: (Հեռանում է դռնից): Իմանայի, չէի առնի: Լավ, ես էլ չեմ խմի:

Յաշան զգուշորեն մատուցարանը դնում է աթոռին:

ՅԱՇԱ — Գնացողներին՝ բարի ճանապարհ: Մնացողներին՝ հաջողություն: (Խմում է): Կարող եմ ձեզ հավատացնել, խակական չէ շամպայնը:

ԼՈՊԱԽԻՆ — Շիշն ութ ռուբլի էր:

Դադար:

Խայտառակ ցուրտ է էստեղ:

ՅԱՇԱ — Չեն վառել այսօր, մեկ է՝ գնում ենք: (Ծիծաղում է):

ԼՈՊԱԽԻՆ — Ի՞նչ ես ծիծաղում:

ՅԱՇԱ — Հաճույքից:

ԼՈՊԱԽԻՆ — Հոկտեմբեր ամիսն է, բայց ամառվա պես արևոտ է ու խաղաղ: Շինարարության համար լավ է: (Ժամացույցին նայելով, ապա՝ դռանը): Պարոնայք, նկատի ունեցեք, ընդամենը քառասունվեց րոպե է մնացել գնացքին: Ուրեմն, քսան րոպեից կայարան պիտի գնանք: Շտապեցեք:

Տրոֆիմովը՝ վերարկուով, գալիս է բակից:

ՏՐՈՖԻՄՈՎ — Ինձ թվում է, գնալու ժամանակն է: Կառքերը եկել են: Սատանան գիտե, թե ուր են կրկնակոշիկներս: Կորել են: (Դռան կողմը): Անյա, կրկնակոշիկներս չկան: Չգտա:

ԼՈՊԱԽԻՆ — Ես խարկով պիտի հասնեմ: Ձեզ հետ նույն գնացքով եմ գալիս: Ամբողջ ամեռը խարկովում կապրեմ: Ձեզանով ընկա էսքան ժամանակ, անգործությունից ցնդեցի: Անգործ մնալ չեմ կարողանում, չեմ իմանում, թե ինչ անեմ էս ձեռքերս: Կարծես ուրիշինը լինեն, մի տեսակ տարօրինակ են:

ՏՐՈՖԻՄՈՎ — Շուտով կգնանք, ու դուք նորից ձեր օգտավետ գործին կանցնեք:

ԼՈՊԱԽԻՆ — Մի բաժակ բան խմիր:

ՏՐՈՖԻՄՈՎ — Չեմ խմի:

ԼՈՊԱԽԻՆ — Ուրեմն, հիմա՝ Մոսկվա՞:

ՏՐՈՖԻՄՈՎ — Հա, իրենց կուղեկցեմ քաղաք, իսկ վաղը՝ Մոսկվա:

ԼՈՊԱԽԻՆ — Հա՞... է, ինչ, պրոֆեսորները վայ թե դասախոսություն-բան չեն կարդում, սպասում են, գնաս՝ նոր:

ՏՐՈՖԻՄՈՎ — Քո գործը չէ:

ԼՈՊԱԽԻՆ — Քանի՞ տարի ես սովորում համալսարանում:

ՏՐՈՖԻՄՈՎ — Մի նոր բան հնարիր: Ասածդ հին էր ու տափակ:

(Կրկնակոշիկներն է փնտրում): *Գիտես ինչ, գուցե էլ չհան-*

դիպենք, այնպես որ թող մի խորհուրդ տամ քեզ՝ մնաս բարով ասելիս ձեռքերդ թափ մի տուր։ Թափ տալու սովորությունից հրաժարվիր։ Ամառանոցներ սարքելը, գցել-բռնելը, որ ժամանակին նրանցից առանձին հողատերեր դուրս գան՝ այդ ամենը նույնպես թափ տալ է նշանակում։ Ինչ էլ լինի, ես քեզ սիրում եմ համենայն դեպս։ Բարակ ու նուրբ մատներ ունես, դերասանի պես, նուրբ ու մեղմ հոգի ունես...

ԼՈՊԱԽԻՆ — (գրկում է նրան) Մնաս բարով, հոգիս։ Շնորհակալ եմ ամեն ինչի համար։ Թե պետք ունես, ճամփի փող վերցրու։

ՏՐՈՖԻՄՈՎ — Ինչի՞ս է պետք։ Հարկավոր չէ։

ԼՈՊԱԽԻՆ — Ախր, չունեք։

ՏՐՈՖԻՄՈՎ — Կա։ Շնորհակալ եմ։ Թարգմանության համար ստացել եմ։ Այստեղ են, գրպանումս։ (Տագնապած)։ Իսկ կրկնակոշիկներս չկան։

ՎԱՐՅԱ — (մյուս սենյակից) Վերցրեք ձեր անտերները։ (Բեմ է շպրտում մի զույգ ռետինե կրկնակոշիկ)։

ՏՐՈՖԻՄՈՎ — Իսկ ինչո՞ւ եք բարկանում, Վարյա։ Հըմ... Սրանք իմ կրկնակոշիկները չեն։

ԼՈՊԱԽԻՆ — Գարնանը մի հազար դեսյատին խաշխաշ էի ցանել, ու հիմա քառասուն հազար մաքուր շահ ունեցա։ Բայց ի՞նչ պատկեր էր, որ խաշխաշս ծաղկել էր։ Էնպես որ, ասում եմ՝ քառասուն հազար շահել եմ, ուրեմն, քեզ պարտք եմ առաջարկում, քանի որ կարող եմ։ Ինչի՞ համար ես քիթդ ցցում։ Ես մուժիկ եմ... պարզ սրտով եմ ասում։

ՏՐՈՖԻՄՈՎ — Քո հայրը մուժիկ էր, իմը՝ դեղագործ, ու դրանից բացարձակորեն ոչինչ չի հետևում։

Լոպախինը նստում է դրամապանակը։

Վե՛րջ տուր, վե՛րջ տուր... Թեկուզ երկու հարյուր հազար տաս, չեմ վերցնի։ Ես ազատ մարդ եմ։ Եվ այն ամենը, ինչ այնպես բարձր ու թանկ եք գնահատում բոլորդ՝ հարուստ թե աղքատ, ինձ վրա նվազագույն իշխանություն իսկ չունի, օդով թռչող փետուրի նման։ Ես կարող եմ առանց ձեզ ապրել, կարող եմ անցնել ձեր կողքով, ես ուժեղ եմ ու հպարտ։ Մարդկությունը գնում է դեպի վերին ճշմարտություն, դեպի վերին երջանկություն՝ որպիսին միայն հնարավոր է երկրիս երեսին, և ես առաջին շարքերում եմ։

ԼՈՊԱԽԻՆ — Տեղ կհասնե՞ս։

ՏՐՈՖԻՄՈՎ — Կհասնեմ։

Դադար։

Չհասնեմ էլ, ուրիշներին ցույց կտամ հասնելու ճանապարհը։

Հեռվից ծառին զարկվող կացնի ձայն է լսվում։

ԼՈՊԱԽԻՆ — Դե, գնաս բարով, հոգիս։ Գնալու ժամանակն է։ Մեկը մյուսի առաջ քիթ ենք ցցում, կյանքն իր ճամփով գնում է։ Երկար ժամանակ որ աշխատում եմ, առանց հոգնելու, մտքերս պարզվում են, ու թվում է, ես էլ եմ հասկանում թե ինչի համար գոյություն ունեմ։ Իսկ Ռուսաստանում ինչքան մարդ կա, ախպերս, որոնք հայտնի չէ, թե ինչի համար գոյություն ունեն։ Էհ, մեկ է, գործի շրջանառությունը դա չէ։ Ասում են՝ Լեոնիդ Անդրեիչը գործն ընդունել է, բանկում պիտի լինի, տարեկան վեց հազար... Բայց, ախր, մնացողը չի, շատ է ալարկոտ...

ԱՆՅԱ — (դռան մեջ) Մայրիկը ձեզ խնդրում է՝ քանի դեռ չի մեկնել, այգին թող չկտրեն։

ՏՐՈՖԻՄՈՎ — Իսկապես, մի՞թե այդքան տակտ չունեք... (Գնում է նախասենյակով)։

ԼՈՊԱԽԻՆ — Հիմա, հիմա... Ինչ մարդիկ են, ճիշտ որ... (Գնում է նրա հետևից)։

ԱՆՅԱ — Ֆիրսին հիվանդանոց ուղարկեցի՞ք։

ՅԱՇԱ — Առավոտյան ասել եմ։ Պետք է որ ուղարկած լինեն։

ԱՆՅԱ — (սրահով անցնող Եպիխոդովին) Սեմյոն Պանտելեիչ, խնդրում եմ, հարցրեք՝ Ֆիրսին տարե՞լ են հիվանդանոց։

ՅԱՇԱ — (նեղացած) Առավոտյան ասել եմ Եգորին։ Ինչ կարիք կա տասն անգամ հարցնելու։

ԵՊԻԽՈԴՈՎ — Բազմամյա Ֆիրսը, ըստ իմ վերջնական կարծիքի, նորոգման համար պիտանի չէ, նրան հարկավոր է նախնիների գիրկն ուղարկել։ Իսկ ես կարող եմ միայն նախանձել նրան։ (Ճամպրուկը դնում է գլխարկի ստվարաթղթե տուփի վրա և ճմլում տուփը)։ Ահավասիկ, իհարկե։ Այդպես էլ գիտեի։ (Գնում է)։

ՅԱՇԱ — (ծաղրաբար) Քսաներկու փորձանք...

ՎԱՐՅԱ — (դռան հետևից) Ֆիրսին ուղարկե՞լ են հիվանդանոց։

ԱՆՅԱ — Ուղարկել են։

ՎԱՐՅԱ — Իսկ ինչո՞ւ չեն տարել բժշկին գրված նամակը։

ԱՆՅԱ — Ուրեմն, հարկավոր է հետևից ուղարկել... (Գնում է)։

ՎԱՐՅԱ — (ճարևան սենյակից) Ո՞ւր է Յաշան։ Ասեք՝ մայրն է եկել, ուզում է մնաս բարով անել։

ՅԱՇԱ — (ձեռքն է թափ տալիս) Թողնես մենակ՝ մարդու համբերությունից հանեն։

Դուենյաշան շարունակ բնքնում է իրերի մոտ, ճիմա, երբ Յաշան մենակ է մնում, մոտենում է նրան։

ԴՈՒՆՅԱՇԱ — Գոնե մի անգամ երեսիս նայեիք, Յաշա։ Դուք գնում եք... ինձ թողնում... (Լալիս է և կախվում Յաշայի վզով)։

ՅԱՇԱ — Ի՞նչ կա լաց լինելու։ (Շամպայն է խմում)։ Վեց օր հետո նորից Փարիզում կլինեմ։ Վաղը կնստենք ճեպընթաց ու՝ էսօր ես տեսել թե երեկ։ Մի տեսակ հավատս էլ չի գալիս։ Վիվ լը Ֆրանս... էստեղ իմ տեղը չի, ապրել չեմ կարող... ինչ արած։ Ինչքան բոհություն տեսա, հերիք էր։ (Շամպայն է խմում)։ Ի՞նչ կա լաց լինելու։ Ձեզ կարգին պահեք, այն ժամանակ լաց չեք լինի։

ԴՈՒՆՅԱՇԱ — (փոքր ճայելուն ճայելով, դիմափոշի է քսում երեսին) Փարիզից նամակ ուղարկեք։ Չէ որ ես ձեզ սիրում էի, Յաշա, ինչպես էի սիրում։ Ես քնքուշ արարած եմ, Յաշա։

ՅԱՇԱ — Մարդ է գալիս։ (Զբաղվում է ճամպրուկներով, կամացուկ երգելով)։

Մտնում են Լյուբով Անդրեևնան, Գաևը և Շառլոտա Իվանովնան։

ԳԱԵՎ — Գնալ է պետք։ Արդեն քիչ ժամանակ է մնացել։ (Յաշային ճայելով)։ Ո՞ւմ վրայից է տառեխի հոտ գալիս։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Մի տասը րոպե հետո եկեք նստենք կառքերը... (Հայացքով ընդգրկում է սենյակը)։ Մնաս բարով, սիրելի իմ տուն, իմ հին օթևան։ Ձմեռը կանցնի, գարուն կգա, և դու արդեն չես լինի, կքանդեն։ Ինչքան բան են տեսել այս պատերը։ (Ջերմորեն ճամբուրում է դստերը)։ Գանձս, դու փայլում ես, աչքերդ կրակվում են ադամանդի պես։ Դու գո՞հ ես։ Շա՞տ։

ԱՆՅԱ — Շա՜տ։ Նոր կյանք է սկսվում, մամա։

ԳԱԵՎ — (ուրախ) Իսկապես, հիմա ամեն ինչ լավ է։ Մինչ բալի այգին վաճառելը բոլորս հուզվում էինք, տառապում, իսկ հետո, երբ հարցը վերջնականապես վճռվեց՝ անվերադարձ, բոլորս հանգստացանք, ուրախացանք նույնիսկ... Ես բանկային ծառայող եմ, հիմա ֆինանսիստ եմ... դեղինը՝ անկյուն, և դու, Լյուբա, ինչ էլ լինի, ավելի լավ տեսք ունես, կասկածից վեր։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Այո։ Նյարդերս ավելի լավ են, ճշմարիտ է։

Գլխարկը և վերարկուն մատուցում են նրան։

Լավ եմ քնում։ Իրերս դուրս տարեք, Յաշա։ Ժամանակն է։ (Անյային)։ Աղջիկս, շուտով մենք կտեսնվենք... Ես Փարիզ եմ մեկնում, կապրեմ այնտեղ Յարոսլավլի տատիկի ուղարկած փողով, որը կալվածքը գնելու համար էր, կեցցե քո տատիկը, իսկ այդ գումարը երկար ժամանակ չի բավականացնի։

ԱՆՅԱ — Մամա, դու շուտով, շուտով կվերադառնաս... չէ՞։ Ես կնախապատրաստվեմ, գիմնազիայի քննությունը կտամ, հետո կաշխատեմ, քեզ կօգնեմ։ Տարբեր-տարբեր գրքեր կկարդանք իրար հետ, մամա... Չէ՞։ (Համբուրում է մոր ձեռքերը)։ Կկարդանք աշնան երեկոներին, շատ գրքեր կկարդանք, և մեր առաջ մի նոր, սքանչելի աշխարհ կբացվի... (Անրջում է)։ Մամա, վերադարձիր...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Կվերադառնամ, անգինս։ (Գրկում է աղջկան)։

Մտնում է Լոպախինը։ Շառլոտան մեղմաձայն երգում է։

ԳԱԵՎ — Երջանիկ Շառլոտա՝ երգում է։

ՇԱՐԼՈՏԱ — (Վերցնում է բարուրած մանկան նմանվող մի կապոց) Քնիր, բալիկս, բա՛յ-բա՛յ...

Երեխայի լաց է լսվում՝ ուա՜, ուա՜...

Մի լացիր, իմ քաղցր, իմ անուշ բալիկ։

Երեխայի լացը՝ ուա՜, ուա՜...

Ինչ մեղք ես, ինչ մեղք։ (Կապոցը շպրտում է տեղը)։ Այնպես որ, խնդրում եմ ինձ համար գործ գտեք։ Ես այսպես չեմ կարող։

ԼՈՊԱԽԻՆ — Կգտնենք, Շառլոտա Իվանովնա, մի անհանգստացեք։

ԳԱԵՎ — Բոլորը մեզ լքում են, Վարյան գնում է... հանկարծ դարձանք անհարկավոր։

ՇԱՌԼՈՏԱ — Քաղաքում ապրելու տեղ չունեմ։ Հեռանալ է պետք... (Երգում է)։ Միևնույն է։

Գալիս է Պիշչիկը։

ԼՈՊԱԽԻՆ — Բնության հրաշքը...

ՊԻՇՉԻԿ — (շնչասպառ) Օհ, թողեք շունչ առնեմ... հոգիս դուրս եկավ... Իմ հարգելի... Ջուր տվեք...

ԳԱԵՎ — Ջլինի՞ պարտք անելու է եկել։ Ես գնամ, փորձանքից հեռու... (Գնում է)։

ՊԻՇՉԻԿ — Վաղուց չէի եղել ձեզ մոտ... իմ սքանչելագույն... (Լոպախինին)։ Այստեղ ես... ուրախ եմ քեզ տեսնել... վիթխարի խելքի տեր մարդ... ահա... ստացիր... (Փող է տալիս Լոպախինին)։ Չորս հարյուր ռուբլի... Պարտք եմ մնում ութ հարյուր քառասուն։

ԼՈՊԱԽԻՆ — (տարակուսած ուսերն է թոթվում) Երազ լինի կարծես... Որտեղի՞ց ես վերցրել։

ՊԻՇՉԻԿ — Համբերիր... Շոգ է... խիստ արտասովոր դեպք եղավ։ Մոտս անգլիացիներ էին եկել ու հողի մեջ մի տեսակ սպիտակ կավ գտան... (Լյուբով Անդրեևնային)։ Ձեզ նույնպես՝ չորս հարյուր... Իմ գեղեցիկ ու զարմանալի... (Տալիս է փողը)։ Մնացածը՝ հետո։ (Ջուր է խմում։)։ Վագոնում նոր մի երիտասարդ պատմում էր, իբր ինչ-որ... մի խոշոր փիլիսոփա խորհուրդ է տալիս տանիքից ցած ցատկել... «Ցատկիր»՝ ասում է, և ամբողջ խնդիրը դա է։ (Զարմացած)։ Տեսնեք, է՞։ Ջուր...

ԼՈՊԱԽԻՆ — Ի՞նչ անգլիացիներ էին։

ՊԻՇՉԻԿ — Կավով հողակտորը քսանչորս տարով իրենց հանձնեցի... Իսկ հիմա, ներեցեք, ժամանակ չունեմ... պիտի շտապեմ... Գնամ Զնոյկովի մոտ... Կարդամանովի մոտ... Բոլորին պարտք եմ... (Խմում է)։ Ողջություն եմ ցանկանում... Հինգշաբթի կանցնեմ...

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Մենք հիմա քաղաք ենք տեղափոխվում, իսկ վաղը՝ արտասահման...

ՊԻՇՉԻԿ — Ի՞նչ (Տագնապած)։ Ինչի՞ համար՝ քաղաք... Ես եմ

ասում՝ կահույքը... ճամպրուկները... էհ, ոչինչ... (Արտասվախառն)։ Ոչինչ... Հսկայական խելքի տեր մարդիկ են... այդ անգլիացիները... Ոչինչ... Բախտավոր եղեք... Աստված ձեզ կօգնի... Ոչինչ... Այս աշխարհում ամեն ինչ վերջ ունի... (Համբուրում է Լյուբով Անդրեևնայի ձեռքը)։ Իսկ եթե ձեզ լուր հասնի, որ վերջս եկել է, հիշեցեք՝ այդ ինչ էր... ձին ու ասացեք. «Աշխարհում էսպես-էսպես մեկը կար... Սիմեոնով-Պիշչիկը... աստված հոգին լուսավորի»... Սքանչելագույն եղանակ է... Այո... (Հեռանում է սաստիկ շփոթված, բայց իսկույն վերադառնում է և դռան միջից ասում)։ Դաշենկան ողջույններ էր ուղարկել ձեզ։ (Գնում է)։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Հիմա կարելի է և գնալ։ Գնում եմ՝ երկու հոգս սրտիս մեջ։ Առաջինը՝ հիվանդ Ֆիրսն է։ (Ժամացույցին նայելով)։ Հինգ րոպե ևս կարելի է...

ԱՆՅԱ — Մամա, Ֆիրսին ուղարկել են հիվանդանոց։ Յաշան է ուղարկել առավոտյան։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Երկրորդ հոգսս՝ Վարյան է։ Նա սովոր էր վաղ վեր կենալ ու գործ անել, իսկ հիմա գործ չունի և ջրից հանած ձկան պես է։ Նիհարել է, գունատվել ու լալիս է խեղճը...

Դադար։

Դուք շատ լավ գիտեք, Երմոլայ Ալեքսեիչ, ես շատ էի ուզում... նրան ձեզ կնության տալ, ասենք, ամեն ինչից պարզ էր, որ պիտի ամուսնանաք։ (Շշնջում է Անյայի ականջին, վերջինս գլխով է անում Շառլոտային, երկուսն էլ ճեռանում են)։ Նա ձեզ սիրում է, ձեր սրտովն է նա, և չգիտեմ, չգիտեմ, թե ինչու կարծես փախչում եք միմյանցից։ Ձեմ հասկանում։

ԼՈՊԱԽԻՆ — Ճիշտն ասած, ես էլ չեմ հասկանում։ Ամեն ինչ մի տեսակ տարօրինակ է... Եթե դեռ ժամանակ կա, ապա թեկուզ հիմա պատրաստ եմ... Միանգամից վերջացնենք, ու վերջ, իսկ առանց ձեզ, զգում եմ, որ առաջարկություն անողը չեմ։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — Եվ շատ լավ։ Չէ որ մի րոպե է պետք միայն։ Հիմա կկանչեմ նրան...

ԼՈՊԱԽԻՆ — Շամպայն էլ կա։ (Նայելով բաժակներին)։ Դատարկ են, մեկնումեկը խմած կլինի։

Յաշան հազում է։

Ավելի ճիշտ կլինի, ասենք՝ լակել է։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (ոգևորված) *Շատ լավ։ Մենք դուրս կգանք... Յաշա,* allez։ *Ես նրան էկանչեմ...* (Դռան կողմը)։ *Վարյա, ամեն ինչ թող, այստեղ արի։ Արի։* (Գնում է Յաշայի հետ)։

ԼՈՊԱԽԻՆ — (ժամացույցին նայելով) *Այո...*

Դադար։

Դռան հետևում՝ զուսպ ծիծաղ, շշնջոց, վերջապես ներս է մտնում Վարյան։

ՎԱՐՅԱ — (երկար զննում է իրերը) *Տարօրինակ բան է, չեմ գտնում ու չեմ գտնում։*

ԼՈՊԱԽԻՆ — *Ի՞նչ եք փնտրում։*

ՎԱՐՅԱ — *Ինքս դրեցի ու չեմ հիշում։*

Դադար։

ԼՈՊԱԽԻՆ — *Հիմա ո՞ւր պիտի գնաք, Վարվառա Միխայլովնա։*

ՎԱՐՅԱ — *Ե՞ս։ Ռագուլինների մոտ... Պայմանավորվեցինք, որ տնտեսությանը հետևեմ... տնտեսուհու պես մի բան։*

ԼՈՊԱԽԻՆ — *Յաշնևոյո՞ւմ։ Մի յոթանասուն վերստ կլինի։*

Դադար։

Ահա և վերջացավ այս տան մեջ կյանքը...

ՎԱՐՅԱ — (իրերը զննելով) *Ուր է, տեսնես... Թե՞ կարող է սնդուկն եմ դրել... Հա, կյանքն էս տան մեջ վերջացավ... ու էլ չի լինի...*

ԼՈՊԱԽԻՆ — *Իսկ ես հիմա խարկով եմ գնում... Նույն գնացքով։ Շատ գործ կա։ Էստեղ էլ թողնում եմ Եպիխոդովին... Գործի եմ դրել։*

ՎԱՐՅԱ — *Է, ինչ։*

ԼՈՊԱԽԻՆ — *Անցյալ տարի էս ժամանակ արդեն ձյուն էր գալիս, իսկ հիմա արևոտ, հանգիստ սենյակ է։ Մենակ ցուրտ է մի քիչ... Երեք աստիճան ցուրտ կլինի։*

ՎԱՐՅԱ — *Չնայեցի։*

Դադար։

Ասենք, ջերմաչափն էլ ջարդվել է...

Դադար։

Բակից ձայն է լսվում. «*Երմոլա՛յ Ալեքսեևիչ*»։

ԼՈՊԱԽԻՆ — (կարծես վաղուց դրան էր սպասում)։ *Էս րոպեին։* (Արագ հեռանում է)։

Վարյան, հատակին նստած, գլուխը դրած հագուստի կապոցին, անձայն հեկեկում է։ Բացվում է դուռը, զգուշորեն ներս է մտնում Լյուբով Անդրեևնան։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Ի՞նչ եղավ։*

Դադար։

Պետք է գնալ։

ՎԱՐՅԱ — (արդեն չի լալիս, աչքերը սրբել է) *Հա, ժամանակն է, մայրիկ։ Այսօր կհասցնեմ Ռագուլինների մոտ գնալ, մենակ թե գնացքից չուշանամ...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — (դռան կողմը) *Անյա, հագնվիր։*

Գալիս է Անյան, հետո՝ Գաևը, Շառլոտա Իվանովնան։ Գաևի հագին տաք վերարկու է՝ կնգուղով։ Մտնում են ծառաները, կառապանները։ Իրերի մոտ տնօրինում է Եպիխոդովը։

Հիմա կարելի է ճանապարհ ընկնել։

ԱՆՅԱ — (ուրախ) *Ճանապարհ ընկնենք։*

ԳԱԵՎ — *Բարեկամներ, իմ սիրելի, թանկագին բարեկամներ։ Հավերժ թողնելով այս տունը, կարո՞ղ եմ արդյոք լռել, կարո՞ղ եմ արդյոք ինձ զսպել՝ ի հրաժեշտ չարտահայտելու այն զգացումները, որոնք հիմա լցրել է ամբողջ էությունս...*

ԱՆՅԱ — (աղերսական) *Քեռի՛...*

ՎԱՐՅԱ — *Այո, քեռի, պետք չէ։*

ԳԱԵՎ — (վհատված) *Դուպլետով՝ դեղինը մեջտեղ... Լռեցի...*

Գալիս է Տրոֆիմովը, ապա՝ Լոպախինը։

ՏՐՈՖԻՄՈՎ — *Է, ինչ, պարոնայք, գնալու ժամանակն է։*

ԼՈՊԱԽԻՆ — *Եպիխոդով, վերարկուս։*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Մի րոպե էլ նստեմ։ Կարծես առաջ երբեք չեմ տեսել, թե ինչ պատեր ունի այս տունը, ինչ առաստաղներ, և հիմա նայում եմ դրանց անհագորեն, շատ քնքուշ սիրով...*

ԳԱԵՎ — *Հիշում եմ, երբ վեց տարեկան էի, հոգեգալստյան օրը նստած էի այս լուսամուտին ու նայում էի, թե հայրս ինչպես է գնում եկեղեցի...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Բոլոր իրերը վերցրե՞լ եք։*

ԼՈՊԱԽԻՆ — *Կարծես թե՝ բոլորը։* (Եպիխոդովին, վերարկուն հագնելով)։ *Իսկ դու՝ Եպիխոդով, հետևիր, որ ամեն ինչ կարգին լինի։*

ԵՊԻԽՈԴՈՎ — (խոպոտաձայն) *Ապահով եղեք, Երմոլայ Ալեքսեիչ։*

ԼՈՊԱԽԻՆ — *Նոր ջուր խմեցի, բան կուլ տված կլինեմ։*

ՅԱՇԱ — (արհամարհանքով) *Բուի...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Կգնանք, և այստեղ ոչ մի շունչ չի մնա...*

ԼՈՊԱԽԻՆ — *Մինչև գարուն։*

ՎԱՐՅԱ — (կապոցից հովանոց է հանում, կարծես թափ է առնում խփելու, Լոպախինը ձեռացնում է, թե վախեցավ) *Չէ, չէ... Մոքովս էլ չանցավ։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Պարոնայք, գնանք կառքերը նստենք... Արդեն ժամանակն է։ Գնացքը հիմա կգա։*

ՎԱՐՅԱ — *Պետյա, ձեր կրկնակոշիկները ճամպուկի մոտ են։* (Արտասվախառը)։ *Ինչ էլ կեղտոտ են, հին...*

ՏՐՈՖԻՄՈՎ — (կրկնակոշիկները հագնելով) *Գնանք, պարոնայք...*

ԳԱԵՎ — (սաստիկ հուզված է, վախենում է լաց լինել) *Գնացք... կայարան... Կրուազե՝ մեջտեղը, սպիտակը դուպլետով՝ անկյուն...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Գնանք։*

ԼՈՊԱԽԻՆ — *Բոլո՞րն են էստեղ։ Էնտեղ ոչ ոք չկա՞։* (Կողպում է ձախակողմյան դուռը)։ *Իրեր կան, հարկավոր է կողպել։ Գնացինք...*

ԱՆՅԱ — *Մնաս բարով, տուն։ Մնաս բարով, հին կյանք։*

ՏՐՈՖԻՄՈՎ — *Ողջույն, նոր կյանք...* (Գնում է Անյայի հետ)։

Վարյան հայացքը տանում է սենյակի վրայով և անշտապ հեռանում։ Գնում են Ցաշան և Շառլոտան՝ շների հետ։

ԼՈՊԱԽԻՆ — *Ուրեմն, մինչև գարուն։ Դուրս եկեք, պարոնայք... Ցտեսություն։* (Գնում է)։

Լյուբով Անդրեևնան և Գաևը մնացել են երկուսով։ Նրանք կարծես սպասում էին դրան, փաթաթվում են և զուսպ հեկեկում, կամացուկ, վախենալով, որ չլսեն իրենց։

ԳԱԵՎ — (հուսաբեկ) *Քույրի՛կս, քույրի՛կս...*

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Օ՜ իմ սիրելի, իմ նուրբ ու սքանչելի այգի... Իմ կյանք, իմ ջահելություն, իմ երջանկություն, մնաս բարով... Մնաս բարով...*

Անյայի ձայնը՝ ուրախ, կանչող. «*Մամա՜...*»։
Տրոֆիմովի ձայնը՝ ուրախ, ոգևորված. «*Ահո՜...*»։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Վերջին անգամ նայեմ պատերին, պատուհաններին... Հանգուցյալ մայրս սիրում էր քայլել այս սենյակում...*

ԳԱԵՎ — *Քույրի՛կս, քույրի՛կս...*

Անյայի ձայնը. «*Մամա՜...*»։
Տրոֆիմովի ձայնը. «*Ահո՜...*»։

ԼՅՈՒԲՈՎ ԱՆԴՐԵԵՎՆԱ — *Գալիս ենք...*

Գնում են։ Բեմը դատարկ է։ Լսվում է, թե ինչպես բանալիով փակում են բոլոր դռները, թե ինչպես գնում են կառքերը։ Լռություն է տիրում։ Լռության մեջ լսվում է կացնի բութ հարվածը ծառին՝ միայնակ ու տրտում։ Ոտնաձայն է լսվում։ Աջակողմյան դռնից հայտնվում է Ֆիրսը։ Հագնված է, ինչպես միշտ՝ պիջակ և սպիտակ ժիլետ, ոտնամաններ։ Նա հիվանդ է։

ՖԻՐՍ — (մոտենում է դռանը, ձեռք տալիս բռնակին) *Փակ է։ Գնացին...* (Նստում է բազմոցին)։ *Ինձ մոռացան... Ոչինչ... կնստեմ էստեղ... Լեոնիդ Անդրեիչը վայ թե մուշտակը չհագավ, վերարկուով գնաց...* (Մտահոգ հոգոց է հանում)։ *Աչքաթող արեցի... Ջահել են, է՜, ջահել...* (Մրթմրթում է, ոչինչ հասկանալ չի լինի)։ *Կյանքս անցավ, կարծես չեմ էլ ապրել։* (Պառկում է)։ *Մի քիչ պառկեմ... էլ ուժ չմնաց մեջս, բան չմնաց, ոչ մի բան... էհ, ինչդ եմ ասել... դմբո...* (Պառկում է անշարժ)։

Հեռավոր ձայն է լսվում, կարծես երկնքից կտրված լարի ձայն է դա, մառող ու առումագին։ Լռություն է տիրում, միայն լսվում է, թե ինչպես հեռվում, այգում կացնով կտրում են ծառերը։

Վարագույր

ՄՈՒՐՃԸ ՋԵՌՔԻՆ ՄԱՐԴԸ*

Որքան նա ավելի շատ էր մտածում, այնքան ջուրակն ավելի տիտոր էր երգում:

Ա. Պ. Չեխով

Ա. Պ. Չեխովը մահացել է շատ վաղ, երբ ընդամենը 44 տարեկան էր (1860—1904)։ Իր գրական գործունեությունը նա սկսել է 1880 թվականին, որպես թեթև ու զվարճալի երգիծական պատմվածքների հեղինակ։ Ավելի ուշ նա Ի. Ա. Բունինին ասել է. «Է՜հ, ինչպիսի դատարկ բանից ես սկսեցի։ Տէ՛ր աստված, ինչպիսի՜ դատարկ բանից»։

Բայց և այնպես 80-ական թվականների առաջին կեսին արդեն գրվել էին «Չինովնիկի մահը» (1883), «Քամելեոն»-ը (1884), «Զարամիտը» (1885), «Ունտեր Պրիշիբեև»-ը (1885)։ Նույնիսկ «Նամակ գիտնական հարևանին» պատմվածքում, որը նրա առաջին տպագրված գործն է, գունեղ ու ցայտուն ձևով ընդգծված է ազնվական Սեմի-Բուլատովների տոհմից սերող, կատարյալ տգետ, պաշտոնաթող ուրյադնիկի կերպարը։ Սեմի-Բուլատովի որոշ կարծիքներ ուշագրավ են իրենց տիպականությամբ։ Անկրկնելի է Սեմի-Բուլատովի ըմբռնումներից եկող եզրակացությունը՝ «Այդ չի կարող լինել, որովհետև այդ երբեք չի կարող լինել», որը մտել է ռուս գրականության մեջ, դարձել թևավոր խոսք։

Չեխովի վաղ շրջանի ամենից ավելի հաջողված պատմվածքներում հանդիպում ենք բացառիկ ուժի ու դիպուկության հասնող արտահայտությունների. «Գեներալ է, բայց չի կարողանում հասկանալ» («Չինովնիկի մահը»), «Հիմի կենալն օրենք չէ» («Քամելեոն»), «Երգեր երգելու համար օրենք չկա» («Ունտեր Պրիշիբեև»)։

Դեռևս երիտասարդ Չեխովի մոտ նկատվում էր նրա արտասովոր տաղանդը։ Ինչպես վկայում է Բունինը, Չեխովին «երկար ժամանակ անտեսել են, ճանաչել ու գնահատել են շատ ուշ»։

«Ցնծություն» ֆելիետոնում, որը նրա վաղ շրջանի գործերից է, (պատմվածքի հերոսը՝ Կուլդարովը, ընկնում է ձիու ոտքերի տակ, այդ մասին հաղորդում է թերթը, և նա անսահման երջանիկ է. «Չէ՞ որ հիմա իմ մասին գիտի ողջ Ռուսաստանը»), Չեխովը պատմում է այն մանրոգի մարդկանց փառասիրության մասին, որոնք ծարավի են փառքի, ինչպիսին էլ որ այն լինի։ Կուլդարովի հիվանդությամբ հակված են հիվանդանալու նաև որոշ գրողներ։ Բայց քիչ է ասել, թե Չեխովը այսպիսի գրողների ուղղակի հակադրությունն էր։ Լինել աշխարհի նշանավոր նովելիստը և չունենալ ոչինչ «նշանավոր»՝ ո՛չ կյանքում, ո՛չ սովորություններում ու հակումներում, ոչ էլ գրքերում։ Ամեն ինչ առօրեականության չափ պարզ է ու հստակ։ Չեխովի մեծ պարզությունը, իսկապես որ, դժվար է ըմբռնել։

Մի առիթով Չեխովը Ա. Ի. Կուպրինին ասել է. «Պետք է պարզ գրել։ այն մասին, թե ինչպես Պյոտր Սեմյոնիչը ամուսնացավ Մարյա Իվանովնայի հետ։ Ահա և բոլորը»։ Նա մեծ նորարար էր, բայց Չեխովի նորարարությունը, ինչպես ասում են, աննշմարելի էր, ցցուն ու ճչացող չէր։ Սերգեյ Չալիգինը նրան

* Տպագրված է կրճատումներով։

անվանել է նորաձևության հանճար։ Ոչ կյանքում և ոչ էլ գրքերում նա չկարողացավ իրեն թույլ տալ որևէ խիստ, որևէ աչք ծակող բան անելու։ Այդպիսին են նաև նրա այն հերոսները, որոնց նա սիրում է։ Օրինակ, Օսիպ Ստեպանովիչ Դիմովը («Թռչ-վռին»)։

...Օլգա Իվանովնան փնտրում էր մեծ մարդու, փնտրում էր ոչ այնքան մարդուն, որքան արտաքին այն նշանները, որոնք, ինչպես ինքը հավատացած էր, ցույց են տալիս, որ մարդը մեծ է։ Նա երկրպագում էր միջակությունը, բայց Դիմովին, որը զուրկ էր արտաքին փայլից, նա չնկատեց կամ, ինչպես ինքն էր ասում, ձեռքից փախցրեց։ Չէ՞ որ «նա իրոք արտասովոր, հազվագյուտ և իր ճանաչած մարդկանց համեմատությամբ մեծ մարդ էր»։

Իսկապես մեծը պարզ է։ Եթե մարդն այդ չի հասկանում, նա չի կարող հասնել կյանքի ներքին իմաստի ըմբռնմանը։ Չեխովին ժամանակակից քննադատները համարում էին առանց գաղափարների ու տենդենցների գրող. այդ մասին բազմիցս արդեն գրվել է։ Ճիշտ է, գրողներին ուղղված նամակներում Չեխովը պահանջում էր գրողից «ամենուրեք դուրս նետել իրեն, երբեք իրեն չդարձնել վեպի հերոս, հրաժարվել ինքն իրենից գոնե մեկ-երկու ժամով» (1883)։ «Գրականությունը,— ասում էր նա,— պետք է նույնքան անկողմնակալ լինի, որքան քիմիկոսը, նա պետք է հրաժարվի կենցաղային սուբյեկտիվությունից... (1887). «Արվեստագետը ոչ թե իր գործող անձերի ու նրանց ասածների դատավորը պետք է լինի, այլ միայն անկողմնակալ վկան» (1888). «Աշխատեցեք լինել սառնասիրտ... Թե չէ և՛ ձեր հերոսներն են լալիս, և՛ դուք եք սիրաքաշում»։ Այո, եղեք սառնասիրտ... (1892)։

Բայց եթե ստուգելու լինենք, կտեսնենք, որ խոսքը վերաբերում է ոչ թե անկողմնակալությանը, այլ նրան, ինչ մենք ժամանակակից գրականագիտության մեջ անվանում ենք բազմաձայնություն։

Չի կարելի և ճիշտ չէ սեփական ձայնով խեղդել հերոսներիդ ձայները։ Ահա թե ինչ առումով է Չեխովը խոսել անկողմնակալության մասին։ «... Այո, մի առիթով ես Ձեզ գրել եմ, որ սրտաշարժ պատմվածքներ գրելիս կարելի է և՛ հուզվել, և՛ լալ, սակայն այդ պետք է արվի այնպես, որպեսզի ընթերցողը չնկատի։ Որքան անկողմնակալ ես, այնքան ուժեղ է տպավորությունը...»։

Չեխովի գրքերում «յուրաքանչյուր տող, ինչպես հյութը, ներծծված է նպատակի գիտակցությամբ»։ Նրա պատմվածքների ու պիեսների անկողմնակալությունն ու սառնասրտությունը, ինչպես կասեր Մ. Բախտին, այդ պատմվածքների բազմաձայնության պայմանն են։

Չեխովի հեղինակային դիրքորոշումը, նրա համակրություններն ու հակակրությունները ցայտուն կերպով արտահայտված են նրա ստեղծագործություններում։ Նույնիսկ նրա հերոսների ազգանունները որոշ դեպքերում խոսում են նրանց նկատմամբ ունեցած Չեխովի վերաբերմունքի մասին. Օչումելով, Պրիշիբեև, Սիգաև, Չեչեվիցին, Ջիմշա-Հիմալայսկի...

Այն անուններն ու ազգանունները, որոնցում ինչ-որ չափով, նեգատիվ ձևով արտահայտված է դրանց գունային ու իմաստային բնութագիրը, դուր էին գալիս Չեխովին։ Այդ մասին կարելի է դատել նրա «Նոթագրություններից». «Ռոզալիա Օսիպովնա Արոմատ» (էջ 371)։ «Հրեայի ազգանունն է՝ Չեպչիկ» (էջ 371), «Պստլիկ աշակերտի ազգանունը՝ Տրախտենբաուեր» (էջ 377), «Ռիցեբորսկի» (էջ 386), «Շապչերդ!ն, Ցամբիզեմբուլսկի, Սվինչուտկա, Ջեմբուրակլիա» (էջ 388)... Որոշ պատմվածքներում Չեխովը ուղղակիորեն խոսում է

այն դերի մասին, որ ունի ազգանունը իր հերոսի կյանքում. «Իմ կեցվածքով հեռու չես գնա, ազգանունս էլ ստորագրյուն՝ Նեվիրազիմով» («Մանրուք»)։

Չեխովը դիմանկարի վարպետ է։ Նրա պատմվածքների անսովոր սեղմությունը նրա տաղանդի առանձնահատկություններից մեկն է։ «Տարօրինակ է,— գրում է նա,— ես հիմա սեղմ գրելու նկատմամբ մոլություն ունեմ։ Ինչ էլ որ ես կարդամ՝ լինի դա իմը, թե ուրիշինը, ամեն ինչ թվում է ինձ բավականաչափ երկար»։ Երիտասարդ տարիներից սկսած Չեխովը իր մեջ մշակել էր այդ գրելաձևը, որը նրա տաղանդի կարևորագույն առանձնահատկությունն է։ Սեղմ գրելու չեխովյան գրելաձևը անզուգական է, որովհետև այն ուրիշ ոչ ոքի մոտ այդպես խոր ու արտահայտիչ չէ։

Իր հերոսի՝ Աստրովի շուրթերով («Քեռի Վանյա») Չեխովն ասում էր. «Մարդու մեջ ամեն ինչ պիտի գեղեցիկ լինի. և դեմքը, և հագուստը, և հոգին, և մտքերը...»։ Այս նշանավոր խոսքերում, որոնք շատ հաճախ ու շատերի կողմից են օրինակ բերվում (ես էլ չկարողացա խուսափել այդ խոսքերից), դրսևորված է ամբողջ Չեխովը։ Ե՛վ իր գրքերով, և՛ իր կյանքով նա պայքարում էր հանուն մարդու։ Եվ որքան տարիներ էլ անցնեն (իսկ Չեխով և՛ հարյուր, և՛ հազար տարի հետո էլ կկարդան), ընթերցողները փակելով նրա գրքերը, կխորհրդածեն մի ոչ ավելորդ հարցի մասին՝ արդյոք ճի՞շտ են իրենք ապրում։

Չեխովին երբեք չէին գրավում «ճչացող» սյուժեները։ Նա չէր գրում համաշխարհային աղաղակող խնդիրների մասին։ Նա գերադասում էր հանգիստ առաջին հայացքից ոչնչով աչքի չընկնող սյուժեները։ Գյուղացին ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե իրեն ինչու են դատում։ «Պետք է գիտենալով դատել, ոչ թե իզուր...»,— բողոքում է նա («Չարամիտը»)։ Մահացել է կառապանի որդին, նա ցանկանում է որևէ մեկի հետ կիսել իր վիշտը, բայց ոչ ոք չի ուզում լսել նրան, և նա իր վիշտը պատմում է ձիուն («Վիշտը»)։ Մարդը խաբում է փոքրիկ տղային, խոստանում է և խոստումը չի կատարում («Կենցաղային մանրուք»)։ Ցինովնիկը ամբողջ կյանքում երազել է գյուղում կալվածք ունենալ։ Եվ վերջապես իրականանում է նրա երազանքը. («Հաղարջը»)։ Լիզան՝ ֆաբրիկայի տիրուհու միակ աղջիկը, հիվանդանում է, նրա մոտ է գալիս բժիշկը («Մի դեպք պրակտիկայից»)։ Տղամարդն իր ընտանիքն ունի, կինը՝ իրենը, բայց նրանք սիրեցին իրար («Շնիկով տիկինը»)...

Պարզվում է, որ հենց այս չափից դուրս պարզ սյուժեներում միահյուսվել են իսկապես համաշխարհային, իսկապես բարդ ու աղաղակող խնդիրներ, միահյուսվել են մարդկանց ցավն ու տառապանքը։ Չեխովը գրում էր մարդկանց ամենօրյա տառապանքների մասին։ Եվ այն, ինչ կենցաղային մանրուք էր (այն պատմվածքը, որտեղ փոքրիկ տղային խաբում է մեծահասակը, Չեխովը բանավիճական ձևով անվանել է «Կենցաղային մանրուք»), իր մեջ լուրջ ողբերգություն է պարունակում։ Տղային խորապես ցնցում է մարդկային ստորությունը, որի հետ բախվում է առաջին անգամ, ու իմանում մի բան, որ «մանկական լեզվում անուն չունի»։

Երկու աշխարհներ՝ մանկական աշխարհ և իրական աշխարհ։ Որքան ավելի մեծ է խզումն այս երկու աշխարհների միջև, այնքան ավելի մեծ ողբերգություն են վերապրում մարդիկ։ Ահա թե ինչպիսի կենցաղային մանրուքների մասին է խորհրդածում Չեխովի ընթերցողը. «Եվ կարող է պատահել, որ մեր

այժմյան կյանքը, որի հետ մենք այսպես հաշտվում ենք, ժամանակով կթվա ստորություն, անհարմար, անմիտ,— ասում էր Վերշինինը» («Երեք քույր»)։ Չեխովը տեսնում էր, որ մարդիկ սխալ ու անխոհեմ են ապրում։ Հասուն տարիքում նա գրում էր քաղաքների մասին, որտեղ տասնյակ հազարավոր մարդիկ չեն կարողանում դասավորել իրենց կյանքը, ենթարկվում են հայտնի չէ թե երբ և ում կողմից հիմնված անմիտ, բայց և բոլորի կողմից ընդունված բարոյական նորմաներին։

«Ինչո՞ւ մարդիկ միշտ անում են հատկապես ոչ այն, ինչ պետք է... Ինչո՞ւ ընդհանրապես մարդիկ խանգարում են միմյանց ապրել» («Ռոտշիլդի ջութակը»)։

«Իսկ այն, որ մենք ապրում ենք նեղ ու խեղդուկ քաղաքներում, անպետք թղթեր ենք մրոտում, վինտ ենք խաղում,— մի՞թե դա պատյան չէ։ Իսկ այն, որ ամբողջ կյանքն անց ենք կացնում անգործների, կռվարարների, հիմարների ու անբան կանանց շրջանում, խոսում ու լսում ենք ամեն տեսակ անմտություններ,— մի՞թե դա պատյան չէ» («Պատյանով մարդը»)։

«Նայեցեք այս կյանքին. ուժեղների լկտիություն ու անգործունեություն, թույլերի տգիտություն ու անասնակերպություն, շորս կողմը անասելի աղքատություն, նեղություն, այլասերում, հարբեցողություն, կեղծավորություն... Մինչդեռ բոլոր տներում լռություն է, անդորր. քաղաքում ապրող հիսուն հազարի մեջ չկա մեկը, որ ճչա, բարձրաձայն վրդովվի» («Հաղարջը»)։

Այն միտքը, որ մարդիկ ապրում են ոչ այնպես, ինչպես պետք է, խորապես հուզում էր Չեխովին, և նա անընդհատ գրում էր այդ մասին։ Չեխովն ուզում էր, որ այդ միտքը հասնի մարդկանց, ամրապնդվի նրանց գիտակցության մեջ։

Սաշան («Հարսնացուն» պատմվածքը Չեխովը գրել է մահվանից մի տարի առաջ) ասում է Նադյային. «Ցույց տվեք բոլորին, որ այս անշարժ, գորշ ու մեռելային կյանքը ձանձրացրել է ձեզ»։ Սաշան ուզում է, որպեսզի Նադյան, և ոչ միայն Նադյան, «շուտ տա իր կյանքը»։

Այդ է ուզում նաև Չեխովը։ Դրա համար էլ նա այդպիսի սիրով կերտել է Ֆիֆարյովի կրակոտ կերպարը, որն անդադար փնտրում էր կյանքի ճշմարտությունը («Ճանապարհին»)։ Չեխովը համեմատել է նրան մեծ, օվկիանոսային նավի հետ և նրան է ուղղել Լերմոնտովի հայտնի տողերը.

Ոսկե ամպիկը գիշերեց
Վիթխարի ժայռի կրծքին...

Իրականությունը վերափոխելու, կյանքը շուտ տալու միտքը Չեխովի ստեղծագործության մեջ ամենակարևոր մտքերից մեկն է։ Նա չի ընդունում հանգստացնող ու խաբող տեսություններ։ Ոչ թե պետք է հանգստացնել մարդուն, այլ պետք է փոխել կյանքն ու նրա հիմքերը։ Երբ բժիշկ Ռագինը Գրոմովին ասում է. «Տաք, հարմարավետ առանձնասենյակի և այս հիվանդասենյակի միջև ոչ մի տարբերություն չկա... Մարդու հանգստությունն ու բավականությունը ոչ թե իրենից դուրս է, այլ իր մեջ»,— Գրոմովը նրան պատասխանում է. «Գնացեք այդ փիլիսոփայությունը քարոզեցեք Հունաստանում, որտեղ տաք է և նարնջի հոտ է բուրում, իսկ այստեղ՝ այդ մեր կլիմային հարմար չէ»։

Ռագինի հանգստացնող ու թմրեցնող մտքերն այն մասին, որ երջանիկ

կարելի է լինել նաև ցանկապատի այն կողմում, պսակազերծվում է միայն այն ժամանակ, երբ ինքն էլ է ընկնում № 6 հիվանդասենյակը։

«Աքսորում», ինչպես նաև «Հիվանդասենյակ № 6» պատմվածքները գրվել են 1892 թվականին և ուղղված են փիլիսոփայական այն ուղղության դեմ, որ փորձում էր միմյանց հետ հաշտեցնել մարդուն և դաժան իրականությունը։ «Ասում եմ, եթե ձեզ համար երջանկություն եք ցանկանում, ուրեմն, ամենից առաջ ոչինչ մի ցանկացեք»։ Սեմյոնը, որն ամեն ինչից հրաժարվելու գաղափարն էր քարոզում, իր մեջ սպանում է կյանքն ու մարդուն։ Մեռած մարդուն ոչինչ պետք չէ։ «Ընդունված է ասել, որ մարդուն միայն երեք արշին հող է պետք։ Բայց երեք արշին հողը պետք է գիակին և ոչ թե մարդուն»— ասում էր Չեխովը («Հաղարջը»)[1]։ Թաթարը, որը հակադրված է Սեմյոնին, առարկում է նրան. «Քարին ոչինչ պետք չէ, քեզ էլ ոչինչ պետք չէ... Դու քար ես և աստված քեզ չի սիրում...»։

Չեխովը երբեք չի հանգում փոխզիջման (ինքնակատարելագործում, հարմարվողականություն, ինքդ քո մեջ ամփոփվելու և կյանքի ամենօրյա հարցերից հեռանալու) որոշումներին։ Նա չափից ավելի էր սիրում կյանքն ու մարդկանց, որպեսզի համաձայնվեր փոխզիջման. «Մարդուն ոչ թե երեք արշին հող է պետք, այլ ողջ երկրագունդը, ուր ազատության մեջ նա կարող է դրսևորել իր ազատ հոգու բոլոր հատկություններն ու առանձնահատկությունները»։

Չեխովը սիրում էր մարդկանց և ատում այն ամենը, ինչ ճնշում ու ստորացնում էր նրանց։

... Աշխատություններից մեկում ես գրել եմ Չեխովի «Իմ կյանքը» վիպակի բեռլինյան հրատարակության մասին (1921)։ Այս հրատարակության օրինակներից մեկը պահպանվել է Ավ. Իսահակյանի գրադարանում, բանաստեղծի բազմաթիվ նշումներով[2]։ Իսահակյանը հետևողականորեն ընդգծել է վիպակի գլխավոր հերոսի՝ Միսաիլի, որը «փոքրիկ գործերի» կողմնակից էր (Միսաիլին այդպես էլ անվանում են՝ «փոքրիկ գործ), և բժիշկ Բլագովոյի միջև ծագած վեճերը։ Ընդգծված է նաև վիպակի այն հատվածը, որտեղ Չեխովը Մաշայի շուրթերով մերկացնում է Միսաիլի գաղափարները։ Այն էջերը, որտեղ Չեխովը ծաղրում է քաղբենիությունը, հենց իրենց կողմից հորինված «բարոյականության կանոններով» ու «առողջ բանականության» օրենքներով ապրող քաղբենիական բարքերի դոհեկությունը, վիպակի ամենաուժեղ հատվածներն են և, իհարկե, հենց դրանց վրա էլ հատկապես կանգ է առել Իսահակյանի հայացքը։

Եվ ինչպես չհուսահատվել ու չափսոսալ, եթե հազարավոր, տասնյակ հազարավոր մարդիկ ապրում են այնպես, կարծես թե աշխարհում չեն եղել աշխարհի մեծագույն հանճարները. բանաստեղծները, արձակագիրները, երգահանները, նկարիչները, քանդակագործները, որոնք հոգեպես հարստացնում են մարդուն։ Մարդիկ սխալ են ապրում, եթե նրանք անմասն են ազգային ու համաշխարհային մշակույթի գլուխգործոցներից, անհաղորդ են, որովհետև նրանց չի հասել մշակույթի ազդեցությունը, նրանց ավելի լավ ու մարդկային չի դարձրել ու չի թևավորել նրանց։ Նրանք ապրում են սարսափելի անիմացության մեջ՝ հոգեպես կողոպտված ու աղքատ, նրանց ոչինչ չեն սովորեցրել նշանավոր հույները, ոչինչ չի սովորեցրել Վերածննդի արվեստը...

Մշակույթը մարդկանց բարոյական առողջության պայմանն է։ Այնտեղ, որտեղ չի եղել գրավոր գրականություն և պրոֆեսիոնալ արվեստ, եղել է բանավոր գրականություն և ժողովրդական արվեստ։ Ժողովրդական կամ պրոֆեսիոնալ մշակույթի հետ չառնչվող մարդը բարոյապես կործանվում է։

Չեխովը գրում է այն մարդկանց հոգեկան խավարի մասին, ովքեր գիտեն Աստվածաշունչը, կարդում են ու համարվում գրագետ մարդիկ։ Շատ բնորոշ է «Երեք քույրեր»-ի մեջ գիմնազիայի ուսուցիչ Կուլիգինի խոստովանությունը. «Ահա, թերթից գիտեմ, որ եղել է, ասենք, Դորրոլյուբով, իսկ թե ինչ է նա գրել՝ չգիտեմ... Աստված գիտի...»։

Մարդկությունը հազարամյակների ընթացքում ստեղծել է մշակութային արժեքներ։ Չեխովը սրտի ցավով է գրում այն մարդկանց մասին, որոնք իրենց կամքով կամ կամքից անկախ արհամարհում կամ ավելորդ են համարում այդ հարստությունը, դրանով իսկ աղքատացնելով իրենց ու իրենց կյանքը, նշանակում է, նաև ուրիշների կյանքը։

Չեխովը նախազգուշացնում է իր ընթերցողներին։

Եվ ինչպես է պատահել, որ աշխարհում ապրում են մարդիկ, որոնք անտարբեր են նույնիսկ դեպի բնությունը՝ գույների, ձայների ու երաժշտության այդ վիթխարի ու հավերժ կենդանի աշխարհը...

«Երբ մի քանի խոսքով Ա. Պ. պատմեց «Անտառի ոգին» պիեսի ընդհանուր պլանը,— հիշում է Գ. Արսը,— ինձ հետաքրքրեց այն բանը, թե ինչու պիեսի կենտրոնում հանդես է գալիս մի մարդ, որն անդառնալիորեն սիրահարված է անտառներին։

— Դա ամենացավոտ հարցն է,— կտրուկ պատասխանեց Չեխովը, և դադարեցրեց խոսակցությունը»։

Այդ հարցը դեռ Չեխովից առաջ հուզել է նաև մյուս ռուս գրողներին։ Օրինակ՝ Տյուտչևին.

Նրանք չեն տեսնում ու չեն լսում,
Ապրում են կարծես խավարում անվերջ,
Արևներն, ասես, լույսով չեն շնչում,
Կյանք չկա ծովի ալիքների մեջ։

Նրանց մութ հոգուն շողեր չեն հասել,
Գարուն չի ծաղկել կրծքի տակ նրանց,
Նրանց վոտ ծառերն, ասես, չեն խոսել,
Գիշեր ու աստղունք եղել են պապանձ*...

Եզումը մարդու և բնության միջև նրան ճակատագրական հետևանքների է հանգեցնում։ Չեխովի համար դժբախտություն է այն, որ «ֆաբրիկայի տի-

[1]. Լ. Ն. Տոլստոյը, որի հետ բանավիճում է Չեխովը, խոսում էր երեք արշին հողի մասին՝ ցույց տալու համար մարդկային ագահությունն ու անհաղորդությունը։ Նա խրատական նպատակներ էր հետապնդում։ Երեք արշին հողի մասին առակով նա կարծես ուզում էր ասել. հիշեցեք, որ աշխարհում մեռնել կա և մի եղեք ագահ ու գիշատիչ...

[2]. Չեխովը թանկ ու հարազատ էր Իսահակյանին։ Տե՛ս, Չեխովի մասին նրա հոդվածը. Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 281—294։

* Թարգմանությունը Մ. Մկրտչյանի։

բուհին, ընտանիքի մայրն ու ռուս կինը, Ռուսաստանում երբեք եղբևանի չի տեսել» («Նոթագրություններ», էջ 371)։

...Կործանվում է բալի այգին։ Տերը չեն կարողանում փրկել այն։ Այգու կործանումը նրա տերերի դատավճիռն է։ «Տեր աստված, դու մեզ հըսկայական անտառներ ես տվել, անծայրածիր դաշտեր, խորունկ հորիզոններ,— ասում է Լոպախինը,— ապրելով այստեղ, մենք ինքներս պետք է որ իսկական հսկաներ լինենք... Իսկ որքան մարդիկ կան, եղբա՛յր, Ռուսաստանում, որ հայտնի չէ, թե ինչի համար գոյություն ունեն («Բալի այգին»)։

Բնությունը, ինչպես մշակույթը, մարդու վրա հսկայական բարոյական ազդեցություն ունի և ինչպես մշակույթը, այնպես էլ բնությունը մարդուն շատ բաներում է պարտավորեցնում։ Բնությունից կտրված մարդը նույն հողից կտրված Անթեյն է։

Ժամանակն ավելի է սրել այս խնդիրը՝ մարդու և բնության փոխհարաբերության հարցը։ Եվ երբ այսօր «Սրինգը» պատմվածքում մենք կարդում ենք. «Արևն էլ, երկինքն էլ, անտառներն էլ, գետերն էլ— էդ բոլորը ստեղծած, դասավորած, մեկը մեկի մոտ դրած։ Ամեն բան սարքի է գցված և իր տեղն ունի։ Ու էդ բոլորը պիտի փչանա գնա», ապա այդ բոլորն ընկալում ենք շատ ավելի խոր կերպով, քան Չեխովի ժամանակակիցները։ Բնության մեջ, ինչպես ասում է Չեխովի հերոսը. «ամեն ինչ դասավորված, մեկը մեկի մոտ է դրված»։ Այսօր մենք գիտենք, թե որքան թանկ նստեց մարդկության վրա երբեմն անտեսված այդ ճշմարտությունը։

Եվ շատ ժամանակակից են հնչում Հովվի այն գանգատները, որ անտառները կտրատում են, իսկ նորերը չեն աճում. «Ինչ էլ աճում է, ձեռաց կտրում են. էսօր դուրս է գալիս՝ վաղը տեսնում ես կտրեցին— և էսպես շարունակ, մինչև որ տեղը բան չի մնում»։

Մեր մեկնաբանությամբ Չեխովի պատմվածքը որոշ չափով արդիականացվում է։ Բայց չէ որ այն բոլորը, ինչ մենք կարդում ենք, այս կամ այն ձևով կապում ենք այսօրվա հետ, այն ամենի հետ, ինչ մեզ հիմա հուզում է։ Իսկ մի՞թե կարելի է չմտածել այսօրվա չարիքի մասին, երբ նույն այդ հովիվը, այն հարցին, թե բնությունը կործանվում է, չնայած մարդիկ ավելի խելացի են դարձել, պատասխանում է. «Խելացի դառնալը՝ դարձել են, էդ ճիշտ է, որդի՛, բայց օգո՞ւտն ինչ... Որսորդի ինչին է պետք խելքը, թե որ որսի կենդանի չկա»։

Չեխովին տանջում էին ժամանակի այրող խնդիրները։ Այդ մասին են վկայում նրա տխուր պատմվածքները դժբախտ ընտանիքների մասին, որոնց դրոները «փակ» են սիրո առջև։ «Իրարանցում» պատմվածքում Չեխովը պատկերում է միմյանց ատող ամուսիններ։ Եվ երբ տնային դաստիարակչուհին (նրան վիրավորել էին կասկածելով գողության մեջ) հեռանում է այդ ընտանիքից, «չհասկանալով, թե ինչպես է ինքն առաջ կարողացել ապրել այդ տանը», տանտերը, որը թուլակամ և կնոջ ձեռքին տանջված մի մարդ է, ասում է նրան. «Դուք էլ որ գնաք, ամբողջ տանը ոչ մի մարդկային դեմք չի մնա։ Ախր դա սոսկալի է»։

Ընտանեկան մոտիկությունը մի մարդու հետ, որին չես սիրում իսկական սեր փնտրող կնոջ հուսախաբություն, առողջ սիրո զգացում. այս բոլորը դառնում են այնպիսի պատմվածքների թեմաներ, ինչպիսիք են «Վհուկը» և «Կնանիք» պատմվածքները։

Նիրքը ուժեղ է բանականությունից։ Եթե արգելված է կյանքի զգացումը, սիրո զգացումը, եթե նրա համար փակ են բոլոր ճանապարհները, ապա այն հրաբխի նման դուրս է ժայթքում, և այն ժամանակ դժբախտությունն անխուսափելի է։ «Կանոններին» ու «կյանքի օրենքներին» չենթարկվող այդ զգացման համար քեզ չեն ների ո՛չ շրջապատը, ոչ էլ հարազատները։

Չեխովն անդրադարձել է կյանքի այդ բոլոր անիմաստ օրենքներին. «... Եվ հանգամանքների մի ինչ-որ տարօրինակ բերումով, գուցե պատահական դիպվածով, այն բոլորը, ինչ Գուրովի համար կարևոր, հետաքրքիր, անհրաժեշտ էր, ինչի մեջ ինքն անկեղծ էր ու չէր խաբում իրեն, ինչը նրա կյանքի կորիզն էր կազմում ուրիշներից գաղտնի էր արվում, իսկ այն բոլորը, ինչ նրա կեղծիքն էր, նրա կեղեը, որի մեջ նա թաքնվում էր՝ ճշմարտությունը՝ ծածկելու համար, ինչպես, օրինակ, բանկում ծառայելը, ակումբի վիճաբանությունները, նրա «ստորին ցեղը», կնոջ հետ հոբելյաններին այցելելը,— այդ բոլորը հայտնի էր կատարվում («Շնիկով տիկինը»)։

Կարող է կյանքում ավելի մեծ դաժանություն լինել։ Ակներև է այն (ատելությունը, կեղծիքը), որ պետք է թաքցնել, իսկ գաղտնի է այն (սերը), ինչը պետք է բացահայտ լինի։ Մի՞թե այս ամենը չի ասում այն մասին, որ բարոյականությունը գիտակցաբար ոտնահարված է, իսկ անբարոյականությունը՝ օրինականացված։

Եթե ընտանիքում չկա սեր ու միաբանություն, ապա այնտեղ հեշտությամբ հաստատվում է կեղծիքը։ Եվ մարդիկ խաբում են իրար ու տանուլ տալիս կյանքը։

Չեխովը խորհում է, հարցեր առաջադրում։ Նա ուզում է, որ մարդիկ ապրեն ազատ ու առանց կեղծիքի։

«Հաղարջը» պատմվածքում Իվան Իվանիչը ասում է Բուրկինին ու Ալյոխինին. «Պետք է, որ յուրաքանչյուր գոհ, երջանիկ մարդու դռան հետևը կանգնի որևէ մեկը մուրճը ձեռքին և թակոցով շարունակ հիշեցնի, որ կան դժբախտներ, որ ինչքան էլ նա երջանիկ լինի՝ կյանքը վաղ թե ուշ ցույց կտա նրան իր մագիլները, մի փորձանք կպայթի՝ հիվանդություն, աղքատություն, կորուստներ, և նրան ոչ ոք չի տեսնի ու չի լսի, ինչպես նա հիմա չի տեսնում ու չի լսում ուրիշներին։ Սակայն մուրճը ձեռքին այդ մարդը չկա...»։

Այդպիսի մարդ էր Չեխովը։ Նրան վատ էին հասկանում կամ էլ չէին ուզում հասկանալ, ինչպես չէին հասկանում Իվան Իվանիչին. «Իվան Իվանիչի պատմությունը չբավարարեց ո՛չ Բուրկինին, ոչ էլ Ալյոխինին»։

Բայց չէ՞ որ այնպես չի լինում, որ մուրճը ձեռքին մարդուն բոլորը միանգամից հասկանան և ընդունեն։

Չեխովն այսօր ճանաչված է ամբողջ աշխարհում։ Մուրճը ձեռքին մարդը օգնում է մարդկանց ապրել։ Մուրճի թակոցը անընդհատ հիշեցնում է մարդկանց իրենց բարձր՝ մարդկային պարտականությունների մասին, ապրել արժանավայել, առանց կեղծիքի, ապրել գեղեցիկ, այսինքն՝ քո աշխատանքով չճնշելով ոչ մեկին...

«Ես նայեցի շուրջս,— գրում է Ռադիշչևը,— և հոգիս խոցվեց մարդկային տառապանքներից»։ Մարդկային տառապանքների և իր հոգու վշտի մասին է գրել նաև Չեխովը։ Ռադիշչևից հետո, առանց բացառության, այդ մասին գրել են ռուս գրականության բոլոր դասականները։

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Զիեռվնիկի մահը— թարգմ. Ա. Փալանջյան 5
Հաստլիկն ու նիհարը— թարգմ. Ա. Փալանջյան 8
Խիրուրգիա— թարգմ. Ա. Խոնդկարյան 10
Քամելեոն— թարգմ. Լ. Հախվերդյան 15
Մանրուք— թարգմ. Էդ. Խոնիկ 18
Շերեփաձուկ— թարգմ. Էդ. Խոնիկ 22
Զիու ազգանունը — թարգմ. Հ. Մազմանյան 27
Զարամիտը—թարգմ. Մ. Աբմեն 31
Ունտեր Պրիշիբեև— թարգմ. Ստ. Զորյան 36
Դժբախտություն — թարգմ. Դ. Դեմիրճյան 40
Վիշտը— թարգմ. Ս. Պայազատ 46
Իրարանցում— թարգմ. Հ. Հարությունյան 52
Վհուկը— թարգմ. Դ. Դեմիրճյան 60
Կատակ— թարգմ. Լ. Հախվերդյան 72
Ագաֆյան— թարգմ. Հ. Հարությունյան 77
Դատարկ դեպք— թարգմ. Ա. Վարդապետյան 88
Զաշանակը— թարգմ. Լ. Հախվերդյան 99
Կենցաղային մանրուք— թարգմ. Հ. Հարությունյան 103
Անուրջներ— թարգմ. Վ. Միքայելյան 109
Վայնկա— թարգմ. Հ. Մազմանյան 118
Ճանապարհին— թարգմ. Լ. Դանիելյան 122
Պոլինկա— թարգմ. Ա. Պայազատ 141
Բախտ— թարգմ. Ա. Փալանջյան 147
Դրամա— թարգմ. Ս. Պայազատ 157
Ծովահարս— թարգմ. Դ. Դեմիրճյան 163
Սբինգ— թարգմ. Դ. Դեմիրճյան 169
Վրիժառուն— թարգմ. Դ. Դեմիրճյան 178
Փոստը— թարգմ. Դ. Դեմիրճյան 183
Գեղեցկուհիներ— թարգմ. Ս. Պայազատ 190
Կնանիք— թարգմ. Վ. Միքայելյան 198
Թոի-վոին — թարգմ. Ա. Վարդապետյան 212
Աքսորում— թարգմ. Ս. Պայազատ 240
Հարեաններ— թարգմ. Ստ. Զորյան 250
Հիվանդասենյակ № 6— թարգմ. Ա. Խոնդկարյան 270
Ռոտշիլդի ջութակը— թարգմ. Վ. Միքայելյան 333
Աննան վզից կախ— թարգմ. Ա. Վարդապետյան 344
Վերնահարկով տունը— թարգմ. Վ. Միքայելյան 358
Պատյանով մարդը— թարգմ. Ս. Պայազատ 379
Հաղարջը— թարգմ. Վ. Միքայելյան 394
Սիրո մասին— թարգմ. Վ. Միքայելյան 405
Իոնիչ— թարգմ. Ս. Պայազատ 416
Մի դեպք պրակտիկայից— թարգմ. Ա. Վարդապետյան 437
Հոգյակը— թարգմ. Ա. Խոնդկարյան 450
Շնիկով տիկինը— թարգմ. Ս. Պայազատ 464
Հարսնացուն — թարգմ. Հ. Հարությունյան 484

ՎԻՊԱԿՆԵՐ

Տափաստանը — թարգմ. Հ. Հարությունյան 507
Իմ կյանքը— թարգմ. Հ. Հակոբյան 614

ՊԻԵՍՆԵՐ

Երեք քույր— թարգմ. Ռ. Հովսեփյան 717
Բալի այգին— թարգմ. Ա. Հովհաննիսյան 793

Անտոն Պավլովիչ Չեխով
ԸՆՏԻՐ ԵՐԿՆՐ

Антон Павлович Чехов
ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1987

Խմբագիր՝ Է. Բ. Թոռունյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջալիանյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ե. Վ. Ազատյան

ИБ № 5685

Հանձնված է շարվածքի 06.02.87։ Ստորագրված է տպագրության 28.07.87։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր 45,36. պայմ. տպ. 42,8 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50 000։ Պատվեր 1019։ Գինը՝ 3 ռ. 90 կոպ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
Полиграфкомбинат им. А. Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.